ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Ս ՎՐԱՑԵԱՆ




1928
ՓԱՐԻԶ

5 OCT 2011

ՀՐԱՏ· Հ· Ց· Դ· ԱՄԵՐԻԿԱՑԻ Կ· Կ·–Ի

ՀԱՑԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Ս. ՎՐԱՑԵԱՆ



Printed in France

1928

Paris



3462-2002

(252-59)

Զի թէպէտ և եմք ածու փոքր, և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, և զօրութեամբ տկար, և ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորութեամբք, սակայն, բազում գործ արութեան գտանին գործեալ և ի մերում աշխարհիս:

Մովսէս Խորենացի

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Այս հատորը լոյս է տեսնում Հայաստանի Հանրապետութեան հիմնադրութեան տասնամեակի առթիւ: Հանրապետութեան ամբողջական պատմութիւնը չէ նա: Նման աշխատանք կատարելու համար ես ոչ բաւականաչափ ժամանակ եմ ունեցել տրամադրութեանս տակ, ոչ էլ, մանաւանդ, պահանջուած ազբիւրները — Երեւանի պետական դիւանները: Իմ նպատակն էր, տարեդարձի առթիւ, հաւաքել ի մի Հայաստանի Հանրապետութեան ծագման ու կեանքին վերաբերուղ տեղեկութիւնները, որքան այդ հնարաւոր էր տարագրութեան պայմաններում, տալ ամփոփ գաղափար Հայաստանի Հանրապետութեան մասին: Դիրքը գրելիս ես չեմ ունեցել միտում՝ անպատճառ արձանագրել լուրը և խուսափել վատից: Իմ միակ միտումը եղել է պատմական ճշմարտութիւնը, առարկայական արձանագրութիւնը դէպքերի՝ ջանալով հաւասար պատասխանատուութեամբ ներկայացնել կեանքի բոլոր արտայայտութիւնները:

Հանրապետութեան հակառակորդների կողմից կայ մի յամառ ձգտում՝ ջնջել մարդկանց մտքից ամէն մի յիշատակ, որ կապուած է Հայաստանի անկախութեան շրջանի հետ, մոռացնել տալ Հայաստանի Հանրապետութեան գոյութիւնը, անացնել նրան: Աշխատում են մոռայ ցոյց տալ անցեալը, որպէսզի ներկան երեայ լուսաւոր: Չէ՞ որ՝ որքան խոտոր է գիշերը, այնքան պայծառ են աստղերը: Այս գրքի կոչումն է՝ յիշեցնել մոռացողներին, թէ որ չպէտք է մոռանալ, ցոյց տալ նոր սերնդին թէ կեանք տուեց Հայաստանի Հանրապետութիւնը:

Դիրքը գրելիս ինձ համար ազբիւր են ծառայել նաեւ՝ իմ, տարիների քաղաքական աշխատութիւնը, հաւաքած նիւթերը, երկրորդ՝ Հ.Հ.Փարիզի Պատւիրակութեան Հոդուածները, երրորդ՝ Անդրկովկասի Սէյմի արձանագրութիւնները ու վաւերագրերը, չորրորդ՝ Կովկասի ու Հայաստանի մամուլը, հինգերորդ՝ Հայաստանի Հանրապետութեան նիւրւսե հրատարակութիւնները և, վերջապէս, վեցերորդ՝ Հանրապետութեան շրջանի գործիչներից ոմանց տւած գրաւոր կամ բանաւոր տեղեկութիւնները ու լուսաբանութիւնները, մասնաւորապէս, Ա. Ֆիլխանդանեանի, Դրօի, Ս. Արարատեանի, Կառո Թարխանեանի, Ա.Ասատուրեանի, Ա.Խոնդկարեանի, Լ.Շանթի, Լ.Նազարեանի, Ց. Ջէրմէյի, Ղազար Գոչարեանի, Ա. Մարգարեանի, Դ. Բալայեանի, Մ. Օզանեանի, Մ. Թանադոսի, Բէճօի, Ա. Աթեդեանի և ուրիշների:

Պէտք է ցաւով արձանագրել, որ Հայաստանի Հանրապետութեան Գաւառիրականութեան «Գործ»–երը բաւական ուշ անցան իմ ձեռքը, երբ արդէն գրքի խոշոր մասը պատրաստ էր, որով մի շարք կարևոր վաւերագրեր մնացին չօգտագործուած: Բացի այդ, գրքի ծաւալի և մի շարք ուրիշ պատճառներով պէտք եղաւ սկզբնական ծրագիրը փոփոխել· — Գաւառութեան վերջին շրջանը կրճատել և մի շարք գլուխներ դուրս թողնել: Ցատկապէս, դուրս մնացին ծրագրուած տեսութիւնները Հայաստանի պետական կարգութեան ու զարգացման, բաղաքական կուսակցութիւնների, երկրի տնտեսութեան, մշակոյթի, ժամուլի և այլնի մասին, որոնց համար հաւաքուած առատ նիւթը մնաց չօգտագործուած: Պէտք եղաւ դուրս թողնել և կենսագրականների մասը: Իսկ արտասահմանեան գործունէութիւնը շօշափուեց ամենանեղ սահմաններում:

Այս գրքի նախաձեռնութիւնը և հրատարակութեան ծախսը ամբողջապէս պատկանում է Հ.Յ.Դաշնակցութեան Ամերիկայի Կենտր.Կոմիտէին: Բացի այդ, եթէ գիրքը լոյս է տեսնում ներկայ ստուար ծաւալով, այդ գլխաւորապէս այդիւիսի է «Նաւարի» տպարանի ընդհ. տնօրէն Պ. Ց. Զաւրեանի բարեացակամ վերաբերմունքին: Թանգագին օժանդակութիւն ցոյց տւեց ինձ և օր. Ս. Ցակոբեանը (տղաշշար), որի թափած ջանքերի շնորհիւ գիրքը հրապարակ եկաւ Հայաստանի Հանրապետութեան տարեդարձի օրերին: Գրքի ամբողջ սրբագրութիւնը — տաժանելի աշխատանք — անտրտունջ իր վրա առաւ Ա. Տէր–Օհանեանը: Ֆ. Բալայեանը մեծապէս օգնեց ինձ նիւթերի և նկարների հաւաքման և, առհասարակ, գրքի պատրաստութեան գործում: Երիտասարդ արուեստագէտ Գր. Թադէոսեանը պատրաստեց գրքի բարեձեւը: Շնորհալի լուսանկարիչ Ց. Սեմերճեանը (Phébus) սիրով տրամադրեց իր նկարների ճոխ հաւաքածուն: Գրքի պատրաստութեան հետ կապւած աշխատանքներում կարևոր աջակցութիւն ցոյց տւեց ինձ և Աշտը: Օգնեցին և ուրիշ ընկերներ և բարեկամներ: Ամենքին՝ իմ սրտագին շնորհակալութիւնը:

Ս. Վ.

1 Մայիս 1928

Փարիզ

ՀԱՅԱՍՏԱՆ ՄԱՍ

ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Ա.

ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ՀԱՑ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Ինչպէս կայծակը անամպ երկնքից, 1914 Յունի յուլիսին, պայթեց համաշխարհային պատերազմը: Ազգեր ելան ազգերի դէմ: Աշխարհ իրար խառնուեց: Եւ քաղաքակրթութեան զարգացումն ու մարդկութեան յառաջդիմութիւնը կանգ առաւ երկար ժամանակով:

Պատերազմը ահաւոր փորձութիւն եղաւ ամբողջ երկրագնդի, բայց, մանաւանդ, հայ ժողովրդի համար: Նա բռնկուեց այն պահուն, երբ հայ—քրքական յարաբերութիւնների լարումը հասել էր նախընթաց աստիճանի, երբ հայը թիւրքիայում նորից դարձել էր «հայկին» ազգ, «պետական դաւանանոն», «հոյր գործիք մեծ պետութիւնների ձեռքին»...

Նոր էր ստորագրել բարենորոգումների ծրագիրը: Օսմանեան սահմանադրութեան յայտարդող հայ—քրքական համերաշխութեան մեղրամիսը հարբ ասևց: Կիլիկիայի ջարդը, ներքին ճնշումները, կառավարութեան կառածոտ վերաբերումը դէպի հայ տարրը, հողային հայակործան քաղաքականութիւնը Արևելեան վիլայէթներում, քիւրք ազգայնամոլութեան յարաճուն զարգացումը ի՞րքհատի ծոցում — այս և ուրիշ բազմաթիւ պատճառներ վերջնապէս համոզեցին հայերին, որ առանց արտաքին օգնութեան, միայն քիւրքական միլոցներով անկարելի է ձեռք բերել կեանքի բարելաւում: Եւ նորից ամենքի հայեացքը ուղղուեց դուրս՝ դէպի Եարդապէտ Եւրոպան:

Սահմանադրութեան օրերին ամբողջ քիւրքահայութիւնը, չնչին բացառութեամբ, կանգնել էր օսմանեան պետականութեան հողի վրայ: Հ. Ը. Դաշնակցութիւնը, հայ ժողովրդի մեծագոյն կուսակցութիւնը՝ գործակցելով ի՞րքհատի հետ՝ ձգտում էր բռակամացնել համապետական նպատակները: Երեսուն տարիների յեղափոխական մաքառումներից յետոյ, հայը անվերապահ կերպով դառնում էր օսմանեան քաղաքացի, հաւատարիմ տարր օսմանեան վերածնուող հայրենիքին: Ի՞նչ աւելի յարմար առիթ քիւրք գործիչների համար՝ օգտագործելու հայ ժողովրդի այս ինքնարուխ զգացմունքները:

Մահտեան յեսաչրջիկան օրերին հայ ժողովուրդը, մի մարդու պէս, ոտքի կանգնեց՝ պաշտպանելու համար հասարակաց հայրենիքն ու նոր ոչ—

ժիմբ: Եւ Լրիտասարդ–Թիւրքերի յաղթանակը գաւալի չափով արդիւնք էր նաև հայերի օժանդակութեան:

Երբ Իտալիան յարձակեցաւ Տրիպոլիի վրա, Թրքահայ ժողովուրդը, հակառակ Ատանայի արիւնոտ յիշատակներէն, նորից կառավարութեան կողքին էր՝ անվարան նպաստելով երկրի պաշտպանութեան գործին: Գետնքեան սպառնացող վտանգը հայութիւնն ընդունում էր վտանգ և իրեն համար:

Եւ, սակայն, Թիւրքերը ոչ միայն չգնահատեցին հայ ժողովրդի այս անկեղծ զգացմունքները, ո՛չ միայն չաշխատեցին նրա մէջ խորացնելու և ամրացնելու օսմանեան պետականութեան գաղափարը, այլ, կարծես դիտաւորեալ կերպով, թափեցին ամէն ճիգ ու ջանք՝ ատոգնելու համար հայերի նման վերաբերումը, յետ մղելու նրանց իրենցից ու Թիւրքիայից: Երբ սկսւեց Թիւրք–բալկանեան պատերազմը, հայերի մէջ այլևս հաւատ ու խանդավառութիւն չէր մնացել: Գաւորիաբերքան, կուսակցութիւններ, հանրային կարծիքը, բովանդակ ժողովուրդը եկել էին այն համոզման, որ առանց դրսի միջամտութեան հայերի վիճակը չի բարեփոխուի: Այս տրամադրութեան հետևանքով էր, որ, օրինակ, պատերազմի ընթացքին բուլղարահայութիւնը կազմակերպից Թիւրքիայի դէմ Անդրանիկի կամաւորական խումբը:

Նոյն տրամադրութեան հետևանքով ծնունդ առաւ նաև կաթուղիկոսական պատւիրակութիւնը Եւրոպայում՝ Գողտ Նուպարի գլխաւորութեամբ: Հայերը նորից բռնեցին քաղաքական այն ուղին, որով ընթացել էին Բերլինի վեհաժողովից ի վեր — փշոտ, վտանգաւոր, թէ՛ հայերի և թէ՛ Թիւրքերի համար հաւասարապէս փորձութիւններով հարուստ ուղի: Սակայն, ուրիշ հեռանկար չէր տեսնում. վերոյիշեալ Թիւրքիան էլ, ինչպէս առաջները սուլթանական Թիւրքիան, հայերին մղում էր դէպի մ՛յդ ուղին:

Եւ այս անգամ, կարծես, յաջողութիւնը ժպտում էր հայերին. մեծ պետութիւնների կամ, աւելի ճիշտ, ռուս–գերմանական երկար ու տաղտկալի վէճերից ու սակարկութիւններից յետոյ, որոնց ընթացքին Գերմանիան ոգի ի բուին պաշտպանում էր Թիւրքերին, իսկ Ռուսաստանը պնդում էր հայկական բարենորոգումների վրա, վերջ ի վերջոյ, 1914Թ. յունւար 26–ին, մեծ–վեզիր Սայիտ–Հալիմի և Ռուսաստանի Պոլսի գործակատար Գուլեվիչի միջև ստորագրուեց բարենորոգումների ծրագիրը: Գերմանիան հրաժարուեց դնել իր ստորագրութիւնը այդ թղթի տակ:

Համաձայն այդ ծրագրի հայկական վեց վիլայէթներին պետի կցւէր Տրապիզոնի նահանգն եւս և այդ ամբողջ չորքը պետի բաժանուէր երկու ընդհանուր քննչութիւնների, կամ, ինչպէս սերում էին ասել հայերը, մարզպանութիւնների: Առաջին չորքը պետի բաղկանար Էրզրումի, Տրապիզոնի և Սրվազի վիլայէթներից, երկրորդը՝ Վանի, Բիթլիսի, Մարրերդի և Տիգրանակերտի: Ընդհանուր քննիչները պէտք է լինէին եւրոպացիներ: Նրանց նշանակումը կատարելու էր Բ. Դուռը՝ համաձայն մեծ պետութեանց առաջարկելիք թեկնածուների:

Ընդհանուր-քննիչների հսկակիչին պիտի ենթարկվին չրջանի վարչութիւնը, արդարադատութիւնը, ոստիկանութիւնն ու ժանդարմերիան։ Ի հարկին, տեղական զօրքերն ևս պիտի տրամադրվին նրանց՝ հանրային անդորրութեան պահպանութեան համար։ Նրանք իրաւունք պիտի ունենային նշանակել, հեռացնել և դատի ենթարկել պաշտօնեաներին. բարձր պաշտօնեաներ նշանակելիս պիտի առնէին սուլթանի հաւանութիւնը։ Հողային վէճերը պիտի լուծվին քննիչների անմիջական հսկողութեան տակ։ Օրէնքներն ու կառավարական կարգադրութիւնները պիտի հրատարակվին տեղական լեզուներով, և ազգաբնակութիւնը իրաւունք պիտի ունենար գործածել իր լեզուն վարչութեան ու դատարանի մէջ։ Իւրաքանչիւր ազգ պիտական բիւրջէից կրթական գործի համար պիտի ստանար որոշ գումար՝ համեմատ իր վճարած հարկի, այլև իրաւունք պիտի ունենար նոյն նպատակով նշանակել ազգային տուրք։ Զինւորական ծառայութիւնը պիտի կատարվի իր վարքում։ Համիդիէ գնդերը պիտի վերակազմվէին։ Ժողովուրդների, կրօնների և լեզուների իրական փոխյարաբերութիւնները պիտի ճշտվին մարդահամարով, որը պիտի կատարվի ընդհանուր-քննիչների հսկողութեան տակ։ Վիլայէթներում դոյութիւն պիտի ունենային ժողովրդից ընտրուած ընդհանուր և վարչական խորհուրդներ։

Այսպիսով, յուն. 26-ի բարենորոգումների ծրագիրը Հայաստանում հաստատում էր համաթևա նոյն դրութիւնը, ինչ որ կար արդէն Լիբանանում, ա՛յն հիմնական տարբերութեամբ, որ Լիբանանի ընդհանուր նահանգապետը Քիւրքահպատակ էր, մինչդեռ այստեղ՝ պէտք է լինէին եւրոպացիներ։*)

Այս ծրագիրը լիովին չէր համապատասխանում հայերի բաղձանքներին։ Նրանք դժգոհ էին հայկական նահանգները երկու չրջանի բաժանելուց։ Բացի այդ, նրանց չատ էր անհանգստացնում ծրագրի չուրջ յարուցած հակամարտութիւնն ու Քիւրք կառավարութեան քոնած բացայայտ քշնամական դիրքը, մի փաստ, որի վրա մատնանչում էր և Գուլկևիչը իր կառավարութեան ներկայացրած հաղորդագրութեան մէջ։ «Հայկական հարցի մասին Բարձր Դրան հետ համաձայնութեան յանգելու համար, հետագրում էր նա ծրագրի ստորագրութեան յաջորդ օրը, յուն. 27-ին, կայսերական դեսպանին պէտք եղաւ յաղթահարել մեծ դժւարութիւններ։ Մի կողմից նա ստիպված էր հաշւի առնել հայերի բնական ձգտումը, ըստ կարելւոյն, աւելի լայն բարենորոգումներ ստանալու, միւս կողմից՝ Բ. Դրան յամառ դիմադրութիւնը, որով նա աչքատում էր ի չիք դարձնել առաջարկած բարենորոգումները և այդ նպատակով ծառանում էր մեր նախագծի բոլոր էական կէտերի դէմ։ Իսկ ինչ վերաբերում է Գերմանիային, նա մնց հետ հայկական հարցի մասին համաձայնութեան մտաւ երկու նպատակով. նախ՝ որպէսզի կարողանայ ասել Բ. Դրան, որ ինքը Թուատտոնին չետ է պահել լայն բարենորոգումներից՝ տալով իր համաձայնութիւնը Քիւրքիայի համար վտանգ

*) Сборник дипломатических документов . Реформы в Арменіи. Изд. министерства иностр. дѣл. Петроград. 1915.

չեր կայացնող համեստ դերագրի· երկրորդ՝ որպէսզի ձեռք բերէ հայերի համակրանքը, հայերի, որոնք չատ քանդ են Գերմանիայի համար, երբեւ ժեմամանութիւն կիլիկեայում, որը Գերմանիան համարում է իր ագդեցութեան շրջան։ Այդ պատճառով, Գերմանիայի վարմունքը, ամբողջ ժամանակ, աչքի էր գարնում անկեղծութեան բացակայութեամբ և նրա աջակցութիւնը դուս ցուցական բնոյթ (հայերի համար)։ Իրապէս, գերման դիւանագէտները թիւրքերի հաւատարիմ խորհրդատուներն էին։)

Այս բոլորը տեսնում էին և հայերը, եւ նրանցից խորատեսները յուրջ անհանգստութեամբ էին նայում ապագային։ Բայց լայն հասարակութիւնը և, մանաւանդ, բարենորոգումների աշխատանքը տանող շրջանները՝ փարիզից մինչև Էջմիածին՝ համակուած էին յաղթողի զոհունակութեամբ։

1914 թւի գարունը և ամառը անցան բարենորոգումների դործի կազմակերպման աշխատանքների մէջ։ Գեռութիւնների առաջարկած թեկնածուներից, Բ. Դուռը ապր. 2 (15)–ին ընդհանուր քննիչներ ընտրեց Հոյանդացի Վէստենենկին և նորվեգացի Հոֆին ու մայիս 10(23)–ին սոսրագրեց նրանց հետ վերջնական պայմանը։ Եւ նախնական անհրաժեշտ աշխատանքները լրացնելուց յետոյ Հոֆը մեկնեց իր պաշտօնատեղին՝ Վան. կարճ ժամանակից յետոյ պիտի մեկնէր և Վէստենենկը։

Ճիշտ է, թիւրք կառավարութիւնը և ԻԲՔհետը չէին ծածկում իրենց դժգոհութիւնը հայերից եւ հակառակութիւնը բարենորոգումների դերագրեց։ Ճիշտ է, ճանապարհին և Վանում թիւրք իշխանութիւններն ու հասարակութիւնը քշմամանով ընդունեցին Հոֆին, իսկ Վանում թիւրք պաշտօնեաները նոյնիսկ հրաժարուեցին նրան ենթարկուելուց, բայց և այնպէս «բարենորոգումները սկսել էին գործադրուել», իսկ այս ինքնին արդէն կարևոր նշանակութիւն էր։ Պատճառ չկար կասկածելու, որ, վերջ ի վերջոյ, թիւրքերը տեղի կը տան, և բարենորոգումները կը մտնեն ոյժի մէջ։ Հայ ժողովրդի առջեւ բացուում էին նոր, անսահման, հրապուրիչ հորիզոններ...

Այսպէս էր դրութիւնը, երբ յուլիսին, էրզրումում, բացուեց Հ. Ը. Դաշնակցութեան 8–րդ ընդհանուր ժողովը։ Մեծ կարևորութիւն էր տրուում այդ ժողովին ո՛չ միայն դաշնակցականների, այլ և դրսի խաւերի կողմից. բարենորոգումների գործադրութեան նախօրեակին, հայրենի երկրի կենսրոններից մէկում գումարուած հայ կեանքին գոյն և թովանքակութիւն տուող կուսակցութեան ընդհանուր ժողովը, անկասկած, ունենալու էր խոշոր նշանակութիւն, մասնաւորապէս բնազաւառի համար։ Եւ, յիրաւի, Հ. Ը. Դ. 8–րդ ընդհանուր ժողովը իր ուշադրութեան և աշխատանքի գլխաւոր մասը նւիրեց երկրին — նրա ներքին կազմակերպութեան, հոդային խնդրին, արտագաղթին, կառավարութեան վարած հակահայ քաղաքականութեան, ինքնապաշտպանութեան, բարենորոգումներին և այլն։

Վերջին հարցի մասին ընդունեց հետեւեալ բանաձեւը. —

«Ընդհանուր ժողովը՝ լսելով բարենորոգումներու մասին տրուած գե-

*) Նոյն տեղը էջ 173—174։

կուցումը և վիճաբանութեան ենթարկելով, առհասարակ, կուսակցութեան բարենորոգչական գործունէութիւնը, դիւանագիտական և քաղաքական ճանապարհով, ընդունեց, որ կուսակցութիւնը սկզբունքով կարող է որդեգրել բարենորոգչական այդ գործունէութիւնը, իբրև նպատակայարմար, սակայն, պարտք կը դնէ ձեռնհաս մարմիններու վրա աւելի քիչ տարբել դիւանագիտական ուղղութեամբ՝ մէկու չարունակելով գերակշռութիւնը տալ կազմակերպական իրական ուժի գործացման:

Գալով 1914թ. յունուար 26–ի բարենորոգմանց Ծրագրին, այն ձևով, որ ընդունուած է Գոլոյ եւրոպական դեսպաններու, թիւրք կառավարութեան և ընդհանուր քննիչներու կողմէ, կը նկատէ զայն իբր ամբողջութեան մէկ անբաւարար և օգտակար չի գտներ, որ նոյն ծրագրի գործադրութեան ժամանակ կազմակերպութիւնը կուսակցօրէն աջակցութիւն ցոյց տայ և այդպիսով որոշ պատասխանատուութիւն ստանձնէ. կը թելադրէ միխամտութեան գործը թողուլ ազգային պաշտօնական մարմիններու:

Ասոր հետ միասին, չթացասելով հանդերձ, որ յիշեալ բարենորոգմանց ծրագիրը կը պարունակէ կարգ մը կէտեր՝ համապատասխան մեր նպատակին պահանջներուն, և որ, իրօք, կառավարութիւնը կը ջանայ իր բոլոր հնարաւոր միջոցներով ըլլատել նոյնիսկ այդ համեստ ծրագրին իրագործումը, ինչպէս նախապէս առաջարկած բարենորոգչական սկզբունքները, ընդհանուր ժողովը կը հրահանգէ, որ կուսակցութիւնը, անհրաժեշտութեան պարագային, ընդդիմանայ կառավարութեան կողմէ նոյն ծրագրին իրագործման դէմ հանուած խափանարար մէկոցներուն և պաշտպանէ հայ ժողովուրդին իրաւունքները:

Ինչպէս տեսնում ենք, առանձին խանդավառութիւն չկայ դէպի բարենորոգումների ծրագիրն ու դիւանագիտական գործունէութիւնը: Ընդհանուր ժողովը անհրաժեշտ էր համարում նէրբել ներքին աշխատանքի ու սեփական ուժերի կազմակերպման:

Օրակարգի հարցերը սպառուած չէին դեռ, երբ ստացուեց եւրոպական պատերազմի լուրը, որը արտակարգ եռուզեռ առաջ բերեց թիւրք դևկավար շրջաններում, որոնց առաջին գործն եղաւ, ի հարկէ, բարենորոգումների խափանումը: Ընդհանուր քննիչ Հոֆը անմիջապէս մեկնեց Վանից: Թիւրքահայոց յարտարարեց ընդհանուր զօրահաւաք, և ամէն կողմ սկսեցին տեսնուել չտապ նախապատրաստութիւններ: Թիւրքիան սկսեց տնդողալին պատրաստուել պատերազմի:

Այս ընդհանուր կացութեան հանդէպ, այլ և այլի առաջ ունենալով թիւրք իշխանութիւնների կասկածոտ ու թշնամիր վերաբերմունքը՝ Հ.Ց.Դ. ընդհանուր ժողովը կարճ կապեց իր օրակարգը և ցրուեց՝ նախօրօք քննութեան առնելով թիւրքիայի պատերազմի մէջ մտնելու հաւանականութիւնը և այդ առթիւ որոշելով հրահանգել իր մարմիններին և ընկերներին մնալ օրինապահ իրենց տպրած երկրի վերաբերմամբ և կատարել իրենց բաժին հասած քաղաքացիական պարտականութիւնները: Միաժամանակ, ընդհանուր ժողովը ընտրեց 7 հոգինոց յատուկ մի մարմին, որին և յանձնուեց, պատերազմի դէպքում, լուծել ծագելիք բոլոր գործնական խնդիրները: Իբրեւ ընդհանուր հրահանգ, որուեց ամէն գնով թիւրքիան չեմ պահել պատերազմին մասնակցելուց՝ նկատելով, որ նման քայլը կործանարար կը լինի ո՛չ միայն հայ ժողովրդի, այլ և օսմանեան պետութեան համար:

Ընդհանուր ժողովն արդէն փակուած էր, երբ էջմիածնի Հասան Խաբէթհասի լիազօրներ Բէհպուտին Շաքիրը և Նալի բէյը՝ իրենց հետ բերելով մի քանի սասունեան կովկասցի և պարսկ-ազրբէյճանցի գործակալներ ու մարտիկներ: Նրանց նպատակն էր կազմակերպել հակառուս քարոզչութիւն ու պայքար կովկասում և Հիւսիսային Պարսկաստանում, այլ եւ պատերազմական նախապատրաստութիւններ տեսնել Արեւելեան հանգոյնների: Նրանց յանձնարարած էր նաև բանակցութիւններ վարել Հ. Յ. Դ. ընդհանուր ժողովի հետ Թուսաստանի դէմ մէկ ճակատ ստեղծելու համար:


ԻԲՔԻհատի լիազօրները առաջարկեցին Հ.Յ.Դ. ներկայացուցիչներին, որ դաշնակցականները ռուս-Քիւրքական պատերազմի ընթացքում միանան Քիւրքերին՝ աշխատելով ուսների դէմ ապստամբեցնել կովկասահայերին: Նրանք պնդում էին, որ վրացիք ու կովկասեան Քիւրքերը արդէն ուել են իրենց համաձայնութիւնը և սկսել են պատրաստուել ապստամբութեան: Եւ, յիրաւի, ԻԲՔիհատական լիազօրների հետ էջմիածնում էին եկել և կովկասցի Քիւրքերը, որոնք հաւաստիացնում էին, Թէ գնում են Կովկաս՝ խռովութիւններ և ապստամբութիւններ առաջ բերելու եւ, պատերազմի պարագային, ռուս բանակը քիկունքից կազմալուծելու նպատակով:

Բէհպուտին Շաքիրն ու Նալի բէյը համաձում էին վարչկանը հասած, երբ կովկասեան ժողովուրդները պէտք է ապատուն ռուսական լծից: Նրանց ասելով՝ Քիւրքիան մտադիր չէ գրաւելու կովկասը, այլ ձգտում է վերածել Քիւրքական հովանաւորութեան տակ դնուող ինքնավար պետութեան, որ պատեաը լինի իր և ռուսների միջեւ, մասնաւորապէս, հայերին խոստանում էին ստեղծել հայկական ինքնավար մի իշխանութիւն ռուսահայ և նաեւ Քիւրքահայ որոշ հողամասերից: Ընդհակառակը, հայերի չմիանալը վրացիներին և կովկասեան Թուրքերին կարող է առալ բերել ծանր հետեւանքներ:

Հ. Յ. Դաշնակցութեան ներկայացուցիչները յայտնեցին, որ իրենց կուսակցական դէմ են Քիւրքիայի պատերազմի խառնուելուն, որովհետեւ իրենք համոզուած են, որ վերջնական յաղթանակը պատկանելու է դաշնակիցներին, իսկ այդ դէպքում պատերազմող կողմ դարձած Քիւրքիան կարող է չարաչար տուժել: Նրանք ապացուցանում էին, որ Քիւրքիայի չհաները պահանջում են պահպանել չէզոքութիւն. չէզոք Քիւրքիան անհամեմատ աւելի չատ կը չահի, քան պատերազմող Քիւրքիան: Պատերազմի մասնակցել՝ նշանակում է երկիրը նետել աններելի արկածախնդրութեան գիրկը:

ԻԲՔիհատի լիազօրները, սակայն, անյողդողդ էին իրենց առաջարկի վրա: Նրանց համար պատերազմի հարցը որոշուած էր. յանցանք կը լինէր ձեռքից վախցնել յարմար առիթը և մէկ անգամ ընդ միշտ չազատուել ռուսական մղձաւանջից: Գերմանիայի յաղթութիւնը կասկածի առարկայ չէր, իսկ յաղթական Գերմանիա՝ նշանակում էր յաղթական Քիւրքիա: Նրանք համոզում էին հայերին ևս միանալ իրենց և ձեռք-ձեռքի տուած կռւել հասարակաց թշնամու դէմ: Բայց Դաշնակցութեան ներկայացուցիչները յայտարարեցին, որ ԷՔէ, այնուամենայնիւ, իրենց կամքի հակառակ, պատերազմը պայթի, Դաշնակցութեան Քիւրքիոյ հատւածի բոլոր անդամները

ՀԱՅ ԿԱՐԱՒԱՆ ՆՐԲՈՑՈՒ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԵԱՆ ՀԻՒՐԵՐԸ



Ա. ՊԱՐՍԱՄԵԱՆ Բ. ՉՈՒԽԱՋԵԱՆ Ց. ՊԱՐԹՈՒՄԵԱՆ
Ե. ՎԱՐԴԱՆԵԱՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՅԱՐԵԱՆ Զ. ՊՂՏԻՃԵԱՆ
Ը. ՏԷՐՏԷՐԵԱՆ

լրիւ կերպով կը կատարեն իրենց պարտքը հանդէպ պետութեան։ Ինչ վերաբերում է կովկասահայերին՝ Դաշնակցութիւնը չի կարող յանձնաուրեքեան առանձնել նրանց ապաստամբեցնելու, մանաւանդ որ Քիւրքերը իրենց վերջին հինգ տարուայ քաղաքականութեամբ Քիւրքահայերի վերաբերմամբ այնպիսի վիճակ չստեղծեցին, որ կարողանային գրաւել ռուսահայերի համակրանքը։

Այս պատասխանը Քիւրքերի ուզածը չէր։ Նրանք պահանջում էին աւելի չօչափելի ապացոյցներ «օսմանեան հայրենասիրութեան», մանաւանդ բաժնորոշումներ դարպրի առքեր իրենց և հայերի միջեւ առաջ եկած պատերազմից յետոյ։ Հայերը չէին կարող խոստանալ աւելին։ Հոգեբանօրէն, մարդկայնօրէն հնարաւոր չէր այդ։ Մէյ միայն կովկասահայերին ապաստամբեցնել, Քիւրքահայերին իսկ դժուար էր ոգևորել «օսմանեան հայրենասիրութեամբ» — այնքա՜ն վարկաբեկած էր Քիւրքական ոճիրմը հայ ժողովրդի աչքին։

Ընդհակառակը, պատերազմի պարագային, աւելի հաւանական էր հակաքիւրք զգացմունքների պոռթկումը ռուսահայերի մէջ։ Այդպէս էլ պատահեց։ Դեռ Քիւրք–ռուսական պատերազմը չհասած կովկասում ծայր առ ուժեղ, բաոի իսկական իմաստով համաժողովրդական սարերային կամաւորական շարժում, որը կլանեց հայ ժողովրդի համարեա բոլոր խաւերն ու կազմակերպութիւնները։ Կարճ ժամանակամիջոցում կազմակերպուեցին 4 կամաւորական խմբեր, որոնց մէջ մտնել փափագողների թիւը պահանջածից մի քանի անգամ աւելի էր։ Ասպարէզ եկան հայդուկային կուիների մէջ Քրծած խմբապետներ — Անդրանիկը, Վարդանը, Քեռին, Համազասպը, Դրօն, Խլեղն և շատ ուրիշներ, որոնք կանգնելիս խմբերի գլուխը։ Իրրեւ կամաւորական շարժման ընդհանուր ղեկավար հրապարակ եկաւ Ազգային Բիւրօն։ գուտ վարչական–կազմակերպական գործը ամփոփելց Կարդադրիչ Մարմնի ձեռքը։ Շարժման քաղաքական նշանաբանն էր՝ ֆիդեքսավարութիւն 6 վիլայէթների և նրանց անբաժան մասը կազմող Կիլիկիայի Ռուսաստանի հետ հովանաւորութեան տակ։ Ռուս դիւանագիտութիւնն ու զօրահրամանատարութիւնը այժ էին տալիս այս տրամադրութեան և ուղղակի կամ անուղղակի կերպով զգացնել էին տալիս, որ հայերի բաղձանքները կը կատարուեն լիովին։

Կամաւորական խմբերը սկզբում 4 էին — Անդրանիկի, Քեռիի, Դրօի, Համազասպի—որոնց մէջ մտնում էին մօտ 2500 կռուողներ։ Ապա՝ աւելացաւ մի նոր խումբ՝ գնդ. Զամփոլագեանի հրամանատարութեան տակ։ 1915–ի գարնանը Քեռիի, Դրօի և Համազասպի խմբերը միացեցին Արարատեան գնդի մէջ, Վարդանի ընդհանուր հրամանատարութեան ներքոյ, և Վանի գրաւման գլխաւոր ոյժը հանդիսացան։ Նոյն 1915–ին կազմակերպուեց Իչխան — Յովսէփ Արղութեանի խումբը։ Ի վերջոյ, հայ կամաւորական խմբերի Քիւրք հասաւ եօթը։ 1916 Քիւրի այդ խմբերը վերակազմեցին հայկական հրացանաձիգ գնդերի, կանոնաւոր սպաների հրամանատարութեան տակ և մոցեցին ռուսական կանոնաւոր բանակի մէջ։

կամաւորական խմբեր կազմակերպելով՝ կովկասի հայ ղեկավար շրջանները նպատակ ունէին՝ մի կողմից մասնակցելով պատերազմին թիւրքիայի դէմ՝ արագացնել թիւրքահայերի ազատութիւնը, միւս կողմից՝ զինւած ուժեր ունենալով ռազմաճակատի առաջաւոր մասերում՝ նպաստել այնտեղի հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան գործին: Ենթադրւում էր, որ կամաւորական խմբերը արագ չարժումներով կարող էին առաջն առնել կամ մեղմացնել կոտորածները:

Իրականութեան մէջ, կամաւորական խմբերը խաղացին, գլխաւորապէս, զինւորական դեր և, այս տեսակէտից, անդնահատելի ծառայութիւն մատուցեցին ռուս բանակին: Նրանք ո՛չ միայն յառաջապահ-հետախուզական պաշտօններ էին կատարում, այլ և մասնակցում էին ընդհանուր ճակատամարտների կամ լուծում էին զինւորական ուրոյն խնդիրներ: Կովկասեան ռուս բանակի տարեգրութեան մէջ հայ կամաւորական խմբերն ունեն իրենց պատւաւոր տեղը՝ կատարած հերոսական գործերով և մի տւած բազմաթիւ ու թանգագին զոհերով: Բացի հարեւրաւոր պարզ մարտիկներից, պատերազմի դաշտում ընկան չատ քաջ ու ժողովրդական խմբապետներ, որոնց չարքին և Քեւորկ ու Ալչօն:) Մեծապատիւներից ու կամաւորներից չատերը վարձատրւեցին քաջութեան նշաններով: Մի ահագին թիւ հայ երիտասարդների խմբերի մէջ ձեռք բերեց զինւորական փորձառութիւն և յետագային, մանաւանդ, Հայաստանի անկախութեան չրջանում, մեծ չափով օգտակար եղաւ հայ ժողովրդի և հանրապետութեան պաշտպանութեան գործին:*

Կամաւորական խմբերը, սակայն, մի կաթիլ էին համեմատած այն ահագին օժանդակութեան հետ, որ հայ ժողովուրդը բերեց Ռուսաստանին պատերազմի ընթացքին: Ըստ պաշտօնական հաչւի, հայերի 13%-ը զինւոր էր զանազան ռազմաճակատներում: Ուրիչ խօսքով, 2 միլիոնանոց ռուսահայութիւնը աւելի քան 250,000 զինւոր տւեց ռուս բանակին: Բացի այդ, նա իր ուժերը հասցրեց զենադոյն լարման և Քիւրքիզում՝ մանաւանդ ռազմաճակատի օգնութեան չատկացող բազմապիսի ձեռնարկների: Եւ այդ ամենը կատարւում էր մէկ նպատակով՝ թիւրքահայկական դատի լուծման, Թիւրքահայաստանի ազատագրութեան համար:

Պատերազմի սկզբին հայկական չրջաններում տիրում էր ընդհանուր համոզում՝ մի քանի ամսւայ մէջ ռուսները կը գրաւեն Վանն ու Էրզրումը, և հայկական չրջանները կազատւեն թիւրքական լծից: «Ինչի՞ պէտք են կօչիկ ու մուչտակ, ասում էր Անդրանիկը պատերազմի սկզբին, զինւորին կուտամ չարոխ ու հալա — և հինգ օրից Վան եմ...»

Այս հաւատն էր, անչուչտ, պատճառ այն համագործչին խանդավառութեան, որ առաջ բերեց կամաւորական չարժումը: Սակայն, օրեր ու ամիսներ անցան, և հայկական հաճախները մնացին չգրաււած: Աւելին

---

*) Հայ կամաւորական չարժումը դեռ սպասում է իր պատմագրին: Նրա մասին ամփոփ գաղափար է տալիս գոր· Գ· Ղազարեանի գիրքը՝ «La Participation des Arméniens à la Guerre Mondiale sur le Front du Caucase (1914—1918)», Paris, 1927, որ հրատարակւեց նաև հայերէն լեզւով «Հայրենիք» ամսագրի 1926—27թ· համարներում:

դեռ. 1914–ի դեկտեմբերին քիչ մնաց Թուսահայաստանի մի մասն էլ վրա գնար. Հնչէքի դեղերը հասել էին արդէն Սարըղամիշի բարձունքները, և կովկասի մայրաքաղաքը մտանուել էր խուճապի։ Փոխարքան պատրաստւում էր փախչելու դէպի լեռները ա՛յն կողմը, և կովկասեան Բրքութիւնը ցնծութեան մէջ էր···

Հրաշքը միայն փրկեց կովկասը Թիւրքական ներխուժումից։ Զարդւած Սարըղամիշի ուակ՝ Էնվէրն իր գայրոյթի բովանդակ թոյնը թափեց Թիւրքահայ ժողովրդի գլխին։ Հայերի բնաջինջման գաղափարը վաղուց էր նիւթած ԻՔՔԻՀատի որջում։ Ահաւոր էր հարկաւոր — ահա և առիթը. հայերն էին Թիւրքերի պարտութեան պատճառը։ Հարկաւոր էր մաքրել ռազմադաշտը այդ վնասակար տարրից։ Եւ ահա առաջ է քաշւում տեղահանութեան ծրագիրը։ Գրաւական ու բելգիական ճակատներում տեղահանութիւն նշանակում էր անտեսական քայքայում, Թիւրքիայում՝ կարգ ու կոտորած էր։ Եւ 1915Թ. սպրիլից սկսած, ամիսներ շարունակ, Թիւրքերը գրաււեցին հայերի ծրագրւած բնակնիստով։ Ապրիլ 11–ին զանգւածօրէն ձերբակալւելով՝ դէպի մահ քշւեց Գիւղհայ մտաւորականութիւնը։ Ապա՝ գիւղեր ու քաղաքներ գատարելեցին և աւարի ու աւերի ենթարկւեցին։ Մի մելիոնից աւելի ժողովուրդ ծարթուեց կամ մեռաւ տեղահանութեան ճանապարհին և արաբական անապատների աւազներում։ Դարերով կուտակւած անհաչիւ հարստութիւն, անտեսական ու մշակութային քանդագին նիւթեր կորտեան մատնւեցին։ Մի ամբողջ քաղաքակիրթ ժողովուրդ խաչ հանւեց ու նահատակւեց վայրագօրէն՝ աչխարհի աչքի առջև — ոչ ոք չըմթոտացաւ ու չմիջամտեց։ Եւ ո՞վ կարող էր, ո՞վ սիրտ ու կամք ունէր միջամտելու. երկրագունդը խեղդւում էր արեան մէջ։ Մարդկութեան խիղճը քար էր կտրել···

Թիւրքահայկական խնդիրը լուծւում էր Թիւրքերի ձեռքով։ Թիւրքահայաստան առանց հայերի — այս համապատասխանում էր և ռուսների հաչիւներին։ Մինչ Թիւրքերը կլանած էին հայկական տեղահանութիւնների ու կարդերով, ասդին ռուս զօրավարները կաղդրել էին խաղում Թիւրքական ռազմաբնմում։ Մէկ քայլ առաջ, երկու քայլ յետ—ռուս բանակը անվերջ յատակչոպաղուժներ և նահանջներ էր անում, որոնց ընթացքին խպատ քար ու քանդ եղան և ԻՔՔԻՀատական գահիճներից ազատ մնացած Ալաչկերտն ու Վասպուրականը։ Դիտում կա՞ր այդ նահանջների մէջ, Թէ՞ նրանք ռազմական անհրաժեչտութիւններ էին — միեւնոյնը չէ՞ հայ ժողովրդի համար։ Նա գաղթում, տնաքանդ էր լինում և ամէն գաղթի հետ կորցնում էր ե՛ր իր տնտեսական ու բարոյական կորովը, ե՛ւ մարդկային հաւաքական կերպարանքը։

Թիւրքահայկական նահանգների պարպումից յետոյ հետզհետէ փոխւեց և ռուսների վերաբերումը դէպի հայերը։ 1916 Թւին այլևս հայկական ինքնավարութեան մասին խօսք չէր լսւում։ կամաւորական խմբերը լուծւեցին։ Կովկասում իչխում էր մեծ իչխան Նիկոլայ Նիկոլայևիչը՝ հակահայ քաղաքականութեան ներչնչողներից մէկը։ Մտածւում էր գրաւած վայրերը յանձնել ռուս գաղթականներին։ Ծրագրւում էր Ալաչկերտի ու Եփրատեան

կազակութիւն հաստատել: Թիւրքահայ գաղթականների վերադարձը արգելուց իրենց տևելը: Ինչ որ մութ, այն օրերին դեռ ևս անհասկանալի դաս էր լարում հայ ժողովրդի դէմ: Ցեղասպանին, սակայն, յայտնի դարձաւ, որ դաշնակից պետութիւնները հայերի ջլին խաղացել էին ամենանենգ խաղերից մէկը:

1916 թուի գարնանը, Լոնդոնում ու Պետրոգրադում կատարւած բանակցութիւնների հետևանքով, Ֆրանսիան, Մեծ-Բրիտանիան և Ռուսաստանը ստորագրել էին Թիւրքիայի անդամահատման գաղտնի համաձայնութիւներ, ըստ որի հայերին խոստացւած հողերը բաժանւում էին երկու մասի· Էրզրում, Վանի, Բիթլիսի ու Տրապիզոնի վիլայէթները տանում էր Ռուսաստանը, Սիւրեան ու Կիլիկիան մինչև Մարքերզ տանում էր Ֆրանսիան: Այսպէսով, իրագործւում էր Գալիցիններ ու Լոթրանով-Ռոստովսկիների երազը — Հաստատուն առանց հայերի:

Համաձայն այս նոր պայմանների ու մտայնութեան ձևակերպւեց և ռուսական քաղաքականութիւնը Թիւրքահայկական վիլայէթների նկատմամբ. «Հնարաւոր է, գրում էր 1916թ· 14(27) յունիսին Կովկասի փոխարքային արտաքին գործոց նախարար Սազոնովը, հնարաւոր է տրամադրել հայերին, որոշ չրջանակում, զարգացման և եկեղեցական ինքնուրոյնութիւն, լծւելից օգուտներ, այլև քաղաքային ու գիւղական ինքնավարութիւն՝ պայմանով, որ ընտրութիւնների ժամանակ յարգւի ազգաբնակութեան տոկոսային համեմատութիւնը: Ոչ-քրիստոնեայ տարրերի վերաբերմամբ պէտք է կիրառել նոյն սկզբունքները, որքան այդ թոյլ կը տան տեղական պայմանները ու նրանց մշակութային զարգացման աստիճանը»:

Ի պատասխան այս գրութեան, Կովկասի փոխարքայ Նիկոլայ Նիկոլայեւիչը 3(16) յուլ· նամակով նոյնպէս դնում է «խիստ ցանկալի, որ մինչև պատերազմի վերջը մշակւեն այն դրկավարող սկզբունքները, որոնցով պէտք է Ռուսական կայսրութեան սահմանների մէջ մտցւեն մեր կողմից պատերազմի իրաւունքով գրաււած Թիւրքական հողերը», և մերժելով Թիւրքահայաստանի ինքնավարութեան գաղափարը՝ «կատարելապէս համամիտ» է Սազոնովին, որ հարկի է հայերին տրամադրել զգրոցական ու եկեղեցական ինքնուրոյնութիւն, եկեղեցական դոյքերն ու գրամագլուխները կառավարելու և լծւելից օգուտներ իրաւունք, պայմանով, սակայն, որ բոլոր պաշտօնական գէպքերում առաջնութիւնը պատկանի ռուսական բարբառին...»)

Այս սկզբունքների համեմատ էլ կազմւեց Թիւրքիայից գրաււած վայրերի կառավարութեան ծրագիրը 1916թ· յունիս ե-ին, որից յետոյ հատուածց գոր· Փէչկովի հռչակաւոր ընդհանուր-նահանգապետութիւնը իր հայկիկ պաշտօնէութեամբ ու գործելակերպով:

Ահա ձեզ հինքնավարութիւն վեց վիլայէթների և նրանց անբաժան մաս Կիլիկիայի՝ Ռուսաստանի հզօր հովանաւորութեան տակ»: Ինչ դառն հեգնանք: Ինչ չնութիւն...

---

*) Раздѣл Азіатской Турціи по секретным документам б. мин. ин. дѣл, под ред. Е. А. Адамова. Изд. Литиздата НКИД, Москва, 1924.



ԿԱՐԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



ԱՐՏԱՍՏԵՆԵՑ ՀԱՅՈՒՀԻ



ՄԱՐՏԱՆՑ ՀԱՅՈՒՀԻ

Արժատական փոփոխութեան ենթարկուեց ռուսների հայկական քաղաքականութիւնը և ներքին կեանքում. հայերն այլևս բարեհաճ ուշադրութեան առարկայ չէին: Վերակազմուում էր նախապատերազմեան վերաբերումը: Կատաղում էր դրաքննութիւնն ու ոստիկանական հսկողութիւնը քաղաքական կուսակցութիւնների և ազգային-բարեգործական կազմակերպութիւնների գործունէութեան վրա: Մանաւորապէս, անքաղցրացի տարր էին դառնում Քիւրքահայ գաղթականները և կամաւորական խմբերից հետացած զինուորները: Ոստիկանութիւնը նրանց դէմ կիրառում էր խիստ միջոցներ — այլևս պէտք չունէր նրանց:

Եւ, հասկանալի է, հայ ժողովրդին համակում էր դառն հիասթափութիւնն ու վիշտը: Ի՞նչ էր սպասում, ինչ դուրս եկաւ: Քիւրքահայաստանի ինքնավարութեան փոխարէն՝ ահա ռուս բանակի կողմից գրաւուած ու ռուսացման ենթակայ ամայի հողեր: Քիւրքահայ գիւղերն ու քաղաքները՝ աւերակ: Ժողովուրդը կա՛մ ոչնչացած, կա՛մ տարագիր ու բնաջնջման ենթակայ և կա՛մ — աւելի քան 300.000 հոգի — գաղթական վիճակում՝ ապաստանած Անդրկովկաս: «Մեծ դաշնակիցները» Հայաստանը բաժանել էին իրենց միջև, իբրեւ պատերազմական աւար: Հայերին վճռանձնօրէն, շնորհում էր...

«Ընկերցական ինքնուրոյնութիւնը»: Փա՛ուչ ամեն դաշնակիցներին...

Միեւնոյն դառն ապրումներն ունէր և գաղութահայութիւնը, որ նոյնպէս խանդավառուած էր պատերազմից ստացելիք բարիքներով: Ամերիկայի և Բալկանների հայերը լայն մասնակցութիւն էին բերել կամաւորական շարժման՝ դրամով ու մարդկային ուժերով և ապասում էին, որ, իբրև հետևանք հայերի մատուցած ծառայութեանց, Հայաստանին կը տրուի ինքնավարութիւն:

Արտաքսմանի հայութեան իղձերի քարգմանն և քաղաքական գործունէութեան կենտրոն չարունակում էր մնալ Գօդոս Նուպարի պատերազմութիւնը, Փարիզում, որ գործում էր Ազգային Պատերազմութեան անունով: Նա ներկայացնում էր հայկական դասը պետութիւնների առջեւ և յենուած Ամենայն Հայոց Կաթուղիկոսից ստացած լիազօրութեան և համահայկական վստահութեան վրա՝ գործում էր ի նպաստ Հայաստանի ինքնավարութեան: Ինչպէս Ազգ. Բիւրօն Կովկասում, Ազգ. Պատերազմութիւնն եւս արտաքսմանում մեծ պետութիւնների պետական գործիչներից ու կառավարութիւններից ստանում էր խոստումներ ու հաւաստիացումներ, որ հայկական բաղձանքները լիովին կը գոհացուեն դաշնակիցների յաղթութիւնից յետոյ:

Այս հաւաստիացումների հիման վրա էր, որ Ազգ. Պատերազմութիւնը նախաձեռնեց — կովկասեան կամաւորական շարժման հաւելեալ ուժից յետոյ — հայկական լեգէոնի կազմակերպութեան դաշնակիցների արեւելեան բանակում: Հայկական լեգէոնը, իր հեղինակների գաղափարով, պէտք է ապագային կազմէր ինքնավար կամ անկախ Հայաստանի բանակի կորիզը: Եւ ինչպէս կամաւորական խմբերը Կովկասում, հայկական լեգէոնն եւս գտնեսուիի ճակատի վրա և ապա կելիկիայում երեսան բերից մարտական ոգու հերոսական արտայայտութիւններ, մանաւանդ մեծ ճակատամարտների, կատաղի պատահանատու դերերը, չշափելի կերպով նպաստեց դաշնակից

բանակների զէնքի յաղթութեան և արժանացաւ անգլիական ու Ֆրանսական հրամանատարութեան գովասանքին ու բարձր գնահատութեան:

Բացի զուտ ազգային ձեռնարկներից՝ հայ կամաւորական խմբեր և անհատ մարտիկներ մասնակցեցին պատերազմին և ուրիշ ճակատներում՝ դաշնակիցների գանգան զօրամասերի մէջ — Ֆրանսական և ամերիկեան բանակներում: Եթէ հաչւելու լինենք բոլոր ճակատներում և բոլոր բանակներին մասնակցող հայ զինուորների ու կամաւորների ընդհանուր թիւը, հայ ժողովուրդը, ամենահամեստ հաչւով, մօտ 300,000 կուռղ տրամադրեց դաշնակիցներին պատերազմի ամբողջ տեւողութեան ընթացքին: Եւ վարձատրութի՞ւնը...

Ռուսաստանում տեսանք այդ վարձատրութիւնը—բացարձակ խաբէութիւն ու զրկանք: Նոյնը կատարուեց և Եւրոպայում: Մի կողմից Ֆրանսական և անգլիական կառավարութիւնները հրապարակով յայտարարում էին, որ պատերազմի նպատակներից մէկն էլ Հայաստանի ազատագրութիւնն է, միւս կողմից, դիւանագիտական առանձնասենեակներում, գաղտնի կերպով բանակցում էին Հայաստանի բաժանման մասին: Հայաստանի անդամահատութեան ծրագրերն, ի վերջոյ, հաստատուեց առանց հաչւի առնելու հայ ժողովրդի չահերն ու բաղձանքները:

Այսպիսով, թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում հայ ժողովրդի բոլոր յոյսերն ի դերեւ ելան: Խաբուած ու լքուած դաշնակիցներից, աւերուած ու կարիւած իր հայրենիքում, ծանրաբեռնուած հարիւր հազարաւոր գաղթականներով ու պատերազմի զոհերով, առանց հեռանկարի, հայ ժողովուրդը նմանը չունէր ոչ մի ուրիշ ազգ, որ կռնեց 1917 թուականը: Եւ ով գիտէ ի՞նչ կը լինէր վաճառը, եթէ վրա չհասնէր հրաչքը —

1917 թուի փետրուարին, բոլորովին անսպասելի կերպով, պայթեց Ռուսական Մեծ Յեղափոխութիւնը:

ԳԼՈՒԽ Բ.

ՕԶԱԿՈՄԻ ՕՐԵՐԸ

Ցեղափոխութիւնը չբջնեց ամէն բան։

Յաթական գահի փլատակներէ հետ միասին յեղափոխութեան ալիքը դուրս չպրտեց և կովկասեան սատրապներին։ Անփառունակ ու դղրտալով՝ փախաւ Թիֆլիսէն փոխարքայ Նիկոլայ Նիկոլայեւիչը իր բոլոր արբանեակներով ու ուուսացման ծրագիրներով։ Ցեղափոխական իշխանութիւնը հետ բերից նոր գաղափարներ, նոր ոգի ու նոր գործելակերպ։

Ժամանակաւոր կառավարութեան մարտ 9-ի որոշումով Անդրկովկասի համար կազմուեց յատուկ իշխանութիւն Անդրկովկասեան Առանձին Կոմիտէ, կամ, կրճատուած, Օզակոմ անունով։ Ցետագային, սեպտ. 3-ին գրի առնուցին նրան տրուած դեկավար հրահանգները, որոնք հետեւեալն էին. «1. Իր գործունէութեան մէջ Առանձին Կոմիտէն անմիջապէս ենթարկելու է ժամ. կառավարութեան։ 2. Առանձին Կոմիտէի մէջ կենտրոնանում է Անդրկովկասի բոլոր քաղաքական գործերի տեղական բարձր վարչութիւնը։ 3. Կոմիտէին յանձնուած իշխանութեան էութիւնը բացառապէս գործադիր է։ Առանձին Կոմիտէն չի կարող իր իշխանութեամբ սահմանել ո՛չ մի նոր օրէնք կամ վերացնել գոյութիւն ունեցող որև է օրէնք։ 4. Առանձին Կոմիտէի իրաւունքների և պարտականութիւնների չբջնոր երկրի կառավարութեան գործում որոշում են կովկասեան փոխարքայութեան օրէնքները, այն սահմանափակումով, որ Առանձին Կոմիտէի իշխանութիւնը տարածւում է միայն Անդրկովկասեան նահանգների ու չբջանների վրայ։

Սկզբում, Օզակոմը ունէր աւելի անորոշ ծրագիր. «Ապահովել իրականացումը խղճի ազատութեան՝ կազմակերպելով բոլոր դաւանանքների հաւասար գործերը։ 2. Սահմանել երկերը կառավարելու կարգ՝ նրա կեանքի բոլոր չբջաններում՝ հայթնելի ծաւալութեան կոչելով տեղական հասարակական ուժերը։ 3. Նոր կարգի պահանջների համապատասխան՝ վերակազմել քաղաքային ինքնավարութիւնը և միջոցներ ձեռք առնել, որպէսզի անմիջապէս ամենայն սկզբունքներով գաւառական ինքնավարութիւններ մտցուեն, ընտրովի հաւտարար դատավարութիւն հաստատուի և վերակազմուի գիւղական խնամ Քերի դատաքանը։ Այլ և միջոցներ ձեռք առնուեն՝ կարգաւորելու հողային, աշխատանքի, հաղորդակցութեան և այլ խնդիրները։

Այսպիսի լիազօրութիւններով օժտուած՝ Անդրկ. Առանձին Կոմիտէն, մարտ 16-ին, հասաւ Թիֆլիս, ուր դուռ արտակարգ խանգավառ ընդունելութիւն ազգաբնակութեան բոլոր խաւերի ու կազմակերպութիւնների

կողմից։ Նա բաղկացած էր 5 հոգուց. նախագահ՝ Ֆարլամով, անդամներ՝ Ա.Զիմնկևիչ, Ֆիթա Աքաչիձ, Մ.Ջաֆարով և Մ.Գապաքանեան։ Վերջինները ամէն մէկից գործ էին դրել, որ իրենք ունենան աւելի անդամ, մի բան, որ սաստիկ դժգոհութիւն առաջ բերեց բոլորի մէջ։

Հայկական լայն խաւերը գոհ չէին մանաւորապէս Օգակոմի հայ ներկայացուցիչներից։ Մինչ վրացի ու թուրք անդամները հարազատօրէն ներկայացնում էին իրենց ազգի ընկերային–քաղաքական ձգտումներն ու տրամադրութիւնները, Մ. Գապաքանեանը արտայայտիչ էր հայկական չատ նօսր բուրժուական խաւերի, այն էլ միայն կազմակերպութեան փոքրաթիւ խմբակի։ Այդ պատճառով նա կտրած էր հայ իրականութիւնից։ Այս փաստը լաւնօրէն օգտագործուեց իր վրացի և թուրք պաշտօնակիցների կողմից, որոնք Օգակոմի կեանքի առաջին օրերից հէնց բռնեցին ազգային ուղղութիւն և համապետական իշխանութիւն լինելուց աւելի՝ ներկայացնում էին իրենց ազգը, աշխատում էին նախ և առաջ կարգադրել իրենց ազգին վերաբերուող գործերը։ Աչխատանքի բաժանումն էլ այդ հաշուով էր կատարուած։ Հայ պատգամաւորին տրուել էր արդարադատութեան և նման, այն օրերի համար, անարժէք գործերի դէկավարութիւնը, մինչ ներքին գործերը վերցրել էր Ջհնկևիչին, հաղորդակցութիւնը՝ Ջաֆարովը և այլն։

Հասկանալի է, որ այս ձեւով կազմուած և նման մտայնութեամբ առաջնորդող մի իշխանութիւն չէր կարող լինել հեղինակաւոր։ Եւ, յիրաւի, նրա կազմած յանձնաժողովները մնացին մեռած մարմիններ։ Նրա հրատարակած կարգադրութիւններից քչերն էին կատարւում։ Քանի գնաց, նրա ազդեցութիւնն ընկաւ ժողովրդի աչքին և, վերջ ի վերջոյ, նրա իշխանութիւնը սահմանափակուեց Թիֆլիսի պալատով։

Դժբախտ կազմ ու տխուր վախճան ունեցաւ Անդրկովկասեան Առանձին Կոմիտէի գործունէութիւնը, բայց սկզբի օրերին նրա հետ մեծ յոյսեր էին կապւում։ Սպասւում էր, որ նա կը դարմանէ հին ռեժիմի բացած վէրքերը, կեանքի կը կոչէ նոր հիմնարկութիւններ, կանգկացնէ բարենորոգումներ, կը մեղմացնէ պարենաւորման տագնապը, ազգային հակամարտութիւնները, երկրին կը տայ արդարամիտ ու կորովի իշխանութիւն, կուժեղացնէ ռազմաճակատի պաշտպանութեան գործը։ Դրանցից և ո՛չ մէկը տեղի չունեցաւ։ Ընդհակառակը, քաչքայումն ու կեանքի պայմանների դժուարացումը աճեց ու զարգացաւ անընդհատ։

Ցեղափոխութեան առաջին չրջանում կուսակցութիւնների ու կովկասեան ժողովուրդների, ընդհանուր առմամբ, ասպարէզ էին գալիս համապետական գաղափարներով և աչխատում էին իրենց ազգային ձգտումները հաշտեցնել համառուսական պետական չահերի հետ։ Ազգային ուրոյն խնդիրներ յարուցանելուն դէմ էր և բանակը։ Այսպէս, կովկասեան բանակի համադումարը, որ բացուեց Թիֆլիսում մարտ 5–ին, մերժեց զրաւել ազգային հարցով՝ դռնելով, որ ազգային հարցի լուծումը իր ամբողջութեան մէջ հնարաւոր է միայն Սահմանադիր ժողովում։ Այս հարցը լուծելու միւս բոլոր փորձերը մինչեւ Սահ. ժողով վտանգաւոր են և անթոյլատրելի։ Իսկ բան-



ՀԱՅՐԱՊԱՏՈՒ ՔԵՌԻՒ ՎԱՐԴԱՆ



ՍՊԵՐՔԻՆԳ



Մ. ՊԱՊԱԶԱՆԵԱՆ



ՄՈՒՐԱՑ

տրնեբի և գիւղացիների չբլանային ժողովուրդ, յուշեին, Ն. Ժորդանիան հանեւնալ ձեւով էր ներկայացնում ազգային խնդիրը։

Նա ազգային չարժումը համարում էր հետեւանք մի ազգի քաղաքական իշխանութեան տիրանալու ձգտումի, ինչպէս նաև ազատականութեան՝ իր նախկին գիրքերը պահելու ցանկութեան։ Բանւորութեան և գիւղացիութեան ազգային խնդիրը իր լեզուն ազատ գործածելու ցանկութեան մէջ է։ «Մինչդեռ բուրժուազիան և ազատականութիւնը ձգտում են քաղաքական տիրապետութեան, բանւորութիւնն ու գիւղացիութիւնը հետապնդում են գուտ մշակութային նպատակներ։ Այս հիման վրա բուրժուա և ազատական կուսակցութիւնները պահանջում են ազգային հարցի լուծումը պետական ինքնօրինութեան իմաստով, իսկ բանւորութիւնը պահանջում է ազգային ինքնավարութիւն»։

«Ազգային ինքնավարութիւնը հնարաւոր է որոշ բնաշխարհի մէջ, այն որև է ազգ այնտեղ մեծամասնութիւն է կազմում։ Անդրկովկասեան երեք խոշոր ժողովուրդներ կան — վրացիներ, հայեր և թուրքեր։ Այն բնաշխարհների համար, ուր որևէ ազգ մեծամասնութիւն ունի, կազմւում է ազգային-բնաշխարհիկ ինքնավարութիւն. ազգային տեռակէտով խառն չբլանների մէջ՝ խառն ինքնավարութիւն՝ ամէն ազգի տալով ինքնօրինութիւն մշակոյթի խնդրում։

«Ֆեդերացիան, իբրև ազգային հարցի լուծում ընդունելի չէ, որովհետեւ նա չի համապատասխանում տնտեսական և հասարակական զարգացման։ Ֆեդերացիա նշանակում է պետութիւնների միութիւն, մինչդեռ մի պետութեան կազմութիւնը անկատար պետութիւնների՝ չի համապատասխանում պատմութեան ընթացքին։ Ռուսաստանի համար հնարաւոր է մի ճանապարհ— կենտրոնական ուսական հանրապետութիւն և ազգա—շրջանային ինքնավարութիւններ։ Այդ ինքնավարութեանց իրաւասութիւնները պէտք է լինեն հետեւեալը։

1) Դպրոց (ստորին, միջին, բարձր)։ 2) Ժողովրդական առողջապահութիւն, անասնաբուժութիւն։ 3) Տեղական բնոյթ ունեցող հաղորդակցութեան միջոցներ։ 4) Ալկոգութիւն տեղական գիւղատնտեսական և առևտրա-արդիւնաբերական ձեռնարկների։ 5) Հողերի չահագործում։ 6) Դատարան։ 7) Քաղաքային ձեռնարկներ։ 8) Տեղական կարիքների համար հարկեր հաւաքելու իրաւունք։ 9) Կառավարութիւն, գործադիր իշխանութիւն։ 10) Կենտրոնում հրատարակւած օրէնքների գործադրութիւն։ 11) Օրէնդրական նախաձեռնութիւն։

Այս ծրագիրը կազմեց վրաց սոցիալ—դեմոկրատիայի ա՛յն ժամանակւայ գործունէութեան հիմքը։ Նա, ըստ ամենայնի, համապատասխանում էր ֆեդերատիական դեմոկրատիային ցանկութիւններին։ Սակայն, որքան էր պրակտիկում վրաց ժողովրդի իրական բաղձանքները և վրաց սոցիալ—դեմոկրատիայի գործնական քաղաքականութիւնը — այդ կարելի է ըմբռնել, եթէ ի նկատի առնենք նրանց ներքին—ազգային աշխատանքը։ Թւում է, թէ վրաց ազգի քաղաքական ապրումներն աւելի ճիշտ և անկեղծ ներկայացնում



էին վրաց ազգային–դեմոկրատները, որոնք իրենց համագումարում, յունիսին, քանաձեւել էին հետեւեալ պահանջները· 1· Վրաստանում պէտք է հաստատուի քաղաքական–հոգային ինքնավարութիւն՝ ռամկավար–հանրապետական կազմի սկզբունքներով: 2·Ինքնավար Վրաստանի ահմանադրութիւնը մշակուած է Թիֆլիսում գումարած Ազգային Սէյմը: 3· Վրաց Սահմանադիր ժողովի ընտրութեան մասնակցում են Վրաստանի բոլոր չափահաս քաղաքացիները, առանց սեռի, դաւանանքի և ազգի խորութեան, ընդհանուր, հաւասար, ուղղակի, գաղտնի և համեմատական քւեարկութեան սկզբունքով: 4· Վրաց ինքնավար օրէնդրութեան և կառավարութեան են ենթարկուում, Վրաստանի հողի սահմանները, բոլոր հարցերը, բացառութեամբ հետեւեալների. ա) պատերազմ և խաղաղութիւն· բ) արտաքին քաղաքականութիւն և պետական բիւղէջ:

Սա այն սամն է, որից ամենց ու զարգացաւ Վրաստանի անկախութիւնը և որին, սկզբում գաղտնի, ամաչելով, իսկ յետոյ բացայայտ կերպով մեացան և վրաց սոցիալ–դեմոկրատները: Առհասարակ, պէտք է նկատել, որ յեղափոխութեան սկզբի ամիսներին, վրացի սոցիալ–դեմոկրատները վրաց ազգային խնդիրներում, յօժարութեամբ առաջ էին քշում ազգայնականներին, իսկ իրենք՝ պահելով միջազգային ու համառուսական դիրքն ու լեզուն՝ բաւականանում էին ձեռքի տակի օգնութեամբ: Ազգային–դեմոկրատների ջանքերով և վրացի սոցիալ–դեմոկրատների աջակցութեամբ, չատ չուտով, յատաբաւեց վրաց եկեղեցու անջատումը համառուսական ուղղափառ եկեղեցուց և վրաց կաթուղիկոսութեան վերահաստատումը:)

Համալուսական ոճ էին գործածում և մահմետականները, բէկ, վրաց ազգայնականների նման, նոյնպէս դնում էին ազգային կամ, աւելի ճիշտ, համխալամական պահանջներ: Ռուսաստանի յեղափոխութիւնը նրանց համար երկնքից ընկած պարգեւ էր, որ գալիս էր ազատագրելու մահմետական ազգին: Այս տրամադրութեան ցայտուն արտայայտիչը հանդիսացաւ կովկասեան մահմետականութեան ներկայացուցիչների առաջին համագումարը, որ բացւեց Բագուում, մարտ· 15–ին: Այդ համագումարում հանդիսաւորապես յայտարարուեց մահմետական չիա և սիւննի աղանդների մերձիութիւն, որ աննկատելի խանդավառութիւն առաջ բերեց ժողովականների մէջ: Ջնջ–ձնջի՝ բեմ բարձրացան Մուֆթին ու Շէյխ–Ուլ–Իսլամը և ամենքի աչքի առջեւ հանդիսաւորապէս համբուրւեցին: Արտասանւեցին կրակոտ ճառեր մահմե–

) Քիչ յետոյ, վրաց սոց·–դեմոկրատները դէն շպրտեցին այս թղթեան տերեւն էլ: Նոյեմբեր ամսին, Թիֆլիսում գումարուեց վրաց ազգային համագումարը բոլոր դասակարգերի և կուսակցութիւնների կատարեալ համերաշխութեամբ: Ն· Ժորդանիան զեկուցում տւեց հազաւական կացութեան և վրաց ազգի հազաւականութեան մասին: Եւ համագումարը, միաձայնութեամբ ու խանդավառ ծափերով, ընդունեց նրա առաջարկած կէտերը.—1)վրաստանը, սեփական հողի վրա, պէտք է լինի իմքնավար և ունենայ ազգային օրէնդրական մարմին· 2) Պէտք է որոշւեն Վրաստանի սահմանները՝ հարեւան երկրների հետ· 3) վրաստանում ապրող ազգային փոքրամասնութիւնների պէտք է տրւեն մշակութային զարգացման հնարաւորութիւններ· 4) Համառուսական Սահմ· ժողովի չգումարելու պարագային հրաւիրել համագաղութային և առանձին ազգային սահմանադիր ժողովներ: Եւ այլն:

Ի՞նչ տարբերութիւն ազգային–դեմոկրատների ու այս ծրագրի միջև:

տական ցեղերի եղբայրության մասին: Առանձնապէս ուժեղ տպաւորութիւն թողից համագումարի նախագահ Ալի Մարդան բէյ Թոփչիբաշևի մահմեդականութեան միութիւնը դրաստող ճառը:

Ազգային–քաղաքական հարցի մասին համագումարում զեկուցում ներկայացից «Ա.յ.ղ Սէդ» թերթի խմբագիր և ապագայ Մուսաւաթի պարագլուխ Մահմէդ Էմին Ռասուլ Զադէն, որ պաշտպանից Ռուսաստանը գաղնակցական հանրապետութեան վերածելու անհրաժեշտութիւնը: Դաշնակցութեան, իբրև հիմք, պէտք է դրւէր ազգային սկզբունքը, ազգային ամենալայն ինքնորոշման իրաւունքը: Ռուսաստանը պէտք է կազմէր ինքնավար ազգերի միութիւն, որի կենտրոնական իշխանութեան պէտք է վերապահւէր միայն արտաքին քաղաքականութիւնը, երկրի պաշտպանութեան գործը, հաղորդակցութեան միջոցները:

Ռասուլ–Զադէի զեկուցման վրա՝ համագումարը միաձայնութեամբ որոշից. «1. Ռուսաստանի ապագայ պետական–քաղաքական կազմը պէտք է լինի ոամկավար հանրապետութիւն՝ հողային–ազնւականական սկզբունքներով, որպէսի կազմով միայն հնարաւոր է լայնօրէն ապահովել մահմեդական ժողովուրդների ազգային չահերը: 2. Ընդունելով, որ մահմեդական կրօն դաւանող բոլոր ժողովուրդները կապած են իրար հետ հոգեւոր–մշակութային կեանքով՝ մահմեդականների համագումարը անհրաժեշտ է համարում ամբողջ Ռուսաստանում առաջ բերել ընդհանուր մահմեդականութեան կենտրոնական մի մարմին՝ օրէնդրական իրաւասութիւններով՝ պաշտպանելու համար վերն առաջադրւած նպատակները»:

Պատերազմի խնդրում համագումարը որոշից. «համրողջութեամբ յարել Ռուսաստանի դեմոկրատիային, որը պահանջում է պատերազմը վերջացնել առանց հողաղրաւումի և ռազմատուգանքի»:

«... Կովկասեան ազգութիւնների նկատմամբ համագումարը անհրաժեշտ է գտնում սերտ ու համերաշխ յարաբերութիւն ստեղծել ամենքի հետ՝ նպատակ դնելով իրականացնել կեանքում փոխադարձ համերաշխութեան և յարգանքի վրա հիմնւած ոամկավար իդէականը»:

Կովկասեան ժողովուրդների մէջ, ըստ էութեան, ամենից աւելի համապետական հողի վրա կանգնած էին հայերը: Յեղափոխութեան սկզբին երկու խնդիր էր զրաղեցնում նրանց. Թէւրքահայկական հարցի լուծումը և Անդրկովկասի վարչական վերաբաժանումը՝ ազգագրական սկզբունքով:

Առհասարակ, վարչական նոր սահմանագծման խնդիրը կովկասեան ժողովուրդներին ամենից չատ զրաղեցնող ու փոխադարձ դժգոհութիւն պատճառող խնդիրներից մէկն էր: Տակաւին հին ոեժիմի օրով, փոխարքայութեան կից գումարւած զեմատուրական խորհրդակցութիւնների միջոցին, 1916թ. ապր. 26—մայիս 7–ին, հայ ներկայացուցիչները զրել էին նոր ձեւերով տնտեսական շրջաններ կազմելու առաջարկը, բայց մնացել էին փոքրամասնութեան մէջ. վարչական նոր բաժանման թաղուն ծրագիրը էր այդ: Յեղափոխութիւնից յետոյ, երբ զեմատուռ մոգնելու հարցը առաւել գործնական նշանակութիւն, հայերը նորից առաջ քաշեցին վարչական վերաբաժան-

ման պահանջը, առանց որի նոր գնմաւոյի մէջ հայերը, գրեթէ ամէն տեղ, կը կազմէին փոքրամասնութիւն: Ցեղափոխութիւնը պարտաւոր էր որքազրել հին իշխանութեան գործած չարիքները՝ վերացնելով կամայականօրէն գնւած անորոշ սահմանները: Օգոստի հայ անդամի կողքին կազմւած միքնաւակական մարմինը, գիւղատնտեսներ Ց. Փիրալեանի, Ս. Կամսարականի և Աւ. Շահխաթունեանի ու Գ. Խատիսեանի աշխատանքով, մշակել էր Ազգերկոմկան վարչական բաժանման նոր ծրագիր, որ և Աւ. Շահխաթունեանի միջոցով ուղարկւեց Պետրոգրադ պատշաճ իշխանութիւններին ընդունելու տալու համար:

Ցեղափոխութիւնից յետոյ Պետրոգրադում կազմւել էր Սահմանադիր ժողովի գումարման նախապատրաստական աշխատանքները կատարող մի յանձնախումբ, որի մէջ ներկայացուցիչներ ունէին Ռուսաստանի բոլոր ազգերը: Հայերի կողմից այդ աշխատանքներին մասնակցում էր Գ.Խատիսեանը: Նոյն ժամանակ ներքին գործոց նախարարութեան կից գործում էր տեղական ինքնավարութիւնների յանձնախումբը Բ. Վլասլովսկիի նախագահութեան տակ: Օգուտլով առիթից՝ Բ. Վլասլովսկին հրաւիրեց խորհրդակցութեան Պետրոգրադ գտնւող անդրկովկասցի գործիչներին՝ Անդրկովկասի գնմատնւական հարցը քննելու նպատակով: Հայերից այդ խորհրդակցութեան մասնակցելին Աւ. Շահխաթունեանը և Գ.Խատիսեանը, որոնք կարողացան համոզել, գնմատւս մոցնելուց առաջ, Անդրկովկասը ենթարկել վարչական նոր բաժանման: Պնդութեան առնւեց Հ. Ց. Դաշնակցութեան ներկայացուցչի առաջարկած նախագիծը, որը, երկու խօսքով հետեւեալն էր. —

Արեւելեան Անդրկովկասը բաժանւում էր երկու մասի՝ Քրքական և հայկական: Հայկական մասի մէջ մտնելու էին Ղազախ, Գանձակ, Ջիւանշիր և Շուշի գաւառների լեռնային հայաբնակ մասերը և ամբողջ Զանգեզուրը, բացի Բարգուշատի հովտի մի քանի Թուրք գիւղական համայնքներից, որոնք միացւելու էին կարեւորնի Քրքական գաւառին: Գանձակ քաղաքը բաժանւելու էր երկու մասի՝ Քրքական և հայկական: Ախալքալաքը, Լոռին և Ծալկայի հայկական մասը պէտք է միացւէին նոր կազմւելիք Ալեքսանդրապոլի նահանգին:

Այսպիսով, առնդնւելու էր հոծ հայ ազգաբնակութիւն ունեցող մի չրջան՝ բաժանւած 4 նահանգի՝ Գանձակի, Երեւանի, Ալեքսանդրապոլի և Կարսի: Համապատասխան ձեւով կազմւելու էր և հոծ Քրքական չրջան:

Այս ծրագրի դէմ յանձնախմբում, ըստ էութեան, առարկեցին միայն վրացի ազգային-դեմոկրատները, որոնք գտնում էին, որ Ախալքալաքն ու Լոռին, իբրև վրացական սեփականութիւն, պէտք է մտնեն Վրաստանի սահմանների մէջ: Թուրք ներկայացուցիչները յայտարարեցին, թէ իրենք լաւ ուսումնասիրած չեն խնդիրը, համապատասխան լիազօրութիւն չունեն և, հետեւաբար, չեն կարող մասնակցել հարցի լուծման: Յանձնախումբը, իր ամբողջութեան մէջ, հաւանութիւն տւեց հայկական նախագծին, որը յետոյ նախարարութեան կողմից ընդունւեց իբրեւ հիմք կառավարական օրինագծի: Այս վերջինը ուղարկւեց Թիֆլիս՝ Օգոստին, որը, մի ամսւայ

ընթացքում, իր կարծիքի հետ միասին պէտք է վերադարձնէր նախաբարեքեան: Օգակոմը նախագծի քննութիւնը յանձնեց միջագային մի յանձնախմբի, որը ունեցաւ երկար խորհրդակցութիւններ, բայց կարելի չեղաւ յանդել ընդհանուր եզրակացութեան: Առանձին ազգերի ներկայացուցիչների դիրքը յանձնախմբում լրովին երևան բերեց քաղաքական այն ձգտումները, որոնցով տոգորւած էին այդ ազգերը: Հայերը, բացի հայ սոցիալ-դեմոկրատներից, որոնք ինքնուրոյն կարծիք չունէին, պաշտպանում էին կառավարական նախագիծը. վրացի սոցիալ-դեմոկրատները, յանձին Ժորդանիայի և Իամիչվիլիի, համաձայն էին հայկական ծրագրին. միւս կուսակցութիւնները չարունակում էին պնդել Ախալքալաքն ու Լոռին Վրաստանին միացնելու պահանջի վրա: Թուրքերը հիմքից մերժում էին նախաբարեական նախագիծը. նրանք առաջարկում էին Անդրկովկասը բաժանել աւելի մանր վարչական-դեմոկրատական միութիւնների՝ այդ միջոցով կամենալով ապահովել մահմեդական տարրերի գերակշռութիւնը Կովկասում: Այս տեսակարծութիւնները ու վէճերը մինչև վերջ էլ մնացին չլուծւած և, ի վերջոյ, ճակատագրական դեր կատարեցին կովկասեան ժողովուրդների կեանքում:

Պէտք է նկատել, որ թէ վարչական սահմանազծման և թէ այլ հարցերում, հէնց սկզբից, նկատելի դարձաւ Թուրք-վրացական ընդհանուր հասկացողութիւն ու գործակցութիւն: Բոլոր կարևոր խնդիրներում, երբ հրապարակ էր գալիս կովկասեան ժողովուրդներին վերաբերւող ընդհանուր մի խնդիր, Թուրք ու վրացի ներկայացուցիչները դուրս էին գալիս համերաշխ ու միացեալ ճակատով: Յեղափոխութեան առաջին օրերից սկսած մինչև վերջ Թուրք-վրացական ընդհանուր ճակատը հայերի հետ առընչութիւն ունեցող բոլոր դէպքերում մնաց փաստ, և այս հանգամանքը դարձաւ անդրկովկասեան կեանքի կարևոր գործօններից մէկը: Այդ գաղտնի թէ բացայայտ գործակցութիւնը ունեցաւ չափազանց ազէտաւոր հետևանքներ կովկասեան ժողովուրդների համերաշխ մէկ ընտանիք կազմելու տեսակէտից: Վրաց-Թրքական գործակցութիւնը, մանաւորապէս այլանդակ ձևերով արտայայտւեց անդրկովկասեան գիւղացիական համագումարում, երբ վրացի սոցիալ-դեմոկրատները և Թուրք թէֆերն ու աղալարները, ձեռք-ձեռքի տւած, պայքար մղեցին սոցիալիստ-յեղափոխականների և Հ.Յ.Դաշնակցութեան հողային բանաձեւի դէմ և կամենում էին հայ գիւղացիութեան պարտադրել սոցիալ-դեմոկրատական հողային ծրագիրը:

ԳԼՈՒԽ Գ.

ԱՐԵՒՄՏԱՀԱՅՈՑ ԳՈՐԾԵՐԸ

Ասացինք արդէն, որ յեղափոխութիւնը չրջնց ամէն բան: Նոր գաղափարներ էր սկսում:

Կովկասը, ինչպէս և ամբողջ Ռուսաստանը, խելայեղ քայլով մօնց բռնապետութեան անկումը: Հանդէսները, քաֆօրները, ժողովներն ու հաւաքումները իրար էին յաջորդում: Մամուլը արբեցած էր ազատութիւնից: Եւ ապագան ամենքին թւում էր այնպէս վարդագոյն: «Երբե՛ք, երբե՛ք, գրում էր «Հորիզոն»-ը մայիս 1-ի խմբագրականում, ապագան չի թացել մեզ այնպէս գեղեցիկ, յաղթութիւնը՝ այնքան մօտ, ինչպէս այսօր՝ յոյսի ու յոյզի այս լուսե օրերին... Դահճեր են խորտակւում ու չղթաներ քանդւում, և քաջակիր աւազակները դողում են աչխարհի անողոք դատաստանի առջեւ»:

«Յոյսի ու յոյզի օրեր» էին, մանաւանդ մահւան տաճնապում գալաթուղ արեւմտահայութեան համար:

Ապրիլ 27-ին ժամանակաւոր կառավարութիւնը, յատուկ կարգադրութեամբ, որոշեց Թիւրքահայկական գրաւեալ վայրերի վիճակը, որ կատարելագոյն համապատասխանում էր հայերի այն ժամանակւայ բաղձանքներին: Այդ կարգադրութիւնը, որ լոյս տեսաւ «Ժամ. կառավարութեան Լրատուի» պաշտօնաթերթի մէջ, հետեւեալն էր.

ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Թիւրքահայաստանի մասին

Ժամանակաւոր կառավարութիւնը, համաձայն յօդ. 42 և 43-ի Լահէյի հոկտ. 5/18 կօնվէնցիայի ցամաքային պատերազմի օրէնքների և սովորոյթների մասին, մինչեւ խաղաղութեան դաշնագրով Թիւրքահայաստանի վիճակի վերջնական որոշումը՝ կարգադրեց.

Ցօդս. 1. — Թիւրքահայաստանի հողը՝ Ռուսաստանի զօրքերի գրաւեալ քաղաքացիական կառավարութեան տեսակէտից՝ վերացւում է կովկասեան իշխանութիւնների, այլ և կովկասեան ռազմանակատի գլխաւորական իշխանութիւնների տնօրինութիւնից և անմիջապէս ենթարկւում է Ժամ. կառավարութեան:

Ցօդս. 2. — Առաջին յօդւածում յիշած լիազօրութեանց, ինչպէս և Թիւրքահայաստանի չրջանների կառավարութեան 5 յունիս 1916թ. ժամանակաւոր օրէնքով այս չրջանների ընդհանուր նահանգապետին յանձնած





իրաւունքների իրագործումը ժամ. կառավարութեան կողմից վստահւում է իր նշանակած Թիւրքահայաստանի ընդհանուր կոմիսարին։

Յօդ. 3. — Թիւրքահայաստանի ընդհանուր կոմիսարի մօտ գտնւում է քաղաքացիական մասի օգնականը։

Յօդ. 4. — Ընդհանուր կոմիսարը, իր քաղաքացիական մասի օգնականի գիտողման համաձայն, անմիջապէս ներկայացնում է ժամ. կառավարութեան իր նկատումները Թիւրքահայաստանի չրջանների կառավարութեան 5 յունիս 1916թ. ժամանակաւոր օրէնքի ցանկալի լրացումների և փոփոխութիւնների մասին։

Ստորագրեցին՝ Նախարարապետ Լվով
Արտաքին գործերի նախարար Պ. Միլիւկով
Ժամ. կառավարութեան գործերի վարիչ Վլադ. Նաբօկով

26 ապր. 1917թ.

Այսպիսով, Թիւրքահայաստանի խնդիրը նորից գրւում էր միջազգային հողի վրա, հանւում էր կովկասեան միջնեղային կրճատ փոխյարաբերութիւնների միջավայրից և կապւում ուղղակի կենտրոնական կառավարութեան հետ։ Սա ինքնին մեծ յաջողութիւն էր հայերի համար։

Բացի այդ, նախատեսւում էր, որ ընդհանուր կոմիսարի օգնականը լինելու էր հայ և, ուրեմն, գրաւած վայրերի վարչական կազմակերպումը և, մանաւանդ, փաստական կառավարութիւնը ընթանալու էր ըստ ամենայնի հայկական ցանկութիւնների համաձայն։ Այդպէս էլ եղաւ։ Թիւրքահայաստանի ընդհանուր կոմիսար նշանակւեց մի պարկեշտ դիւանագէտ՝ գօր. Ալեքսեևովը, իսկ նրա քաղաքացիական մասի օգնական՝ բժ. Ց. Չաւրեանը — մէկը այն լուսամիտ ու գաղափարական գործիչներից, որոնք իրենց ամբողջ կեանքը նւիրել էին հայկական գաղափ։ Չաւրեանը աչքի ընկնող դեր էր կատարել և 1913թ. բարենորոգումների չրջանում, գործակցել էր Պօղոս Նուպարին պատերազմի ընթացքին, աշխատել ռուս դիւանագիտութիւնը չհամոզելուն հայկական հարցով և լայն ծանօթութիւններ ու կապեր ունէր, ինչպէս համակրանք էր վայելում ռուս քաղաքական չրջաններում։ Նա մտերմական կապերով կապւած էր ռուսական յեղափոխութիւնը անմեղադրող Ա. Քերենսկիի հետ։ Նրա նշանակումը գրաւած վայրերի վարչութեան դեկավարութեան պաշտօնին գրաւական էր, որ այս անգամ խօսքը կարող է վերածւել գործի։

Եւ գործը չուշացաւ։ Արագ կերպով մշակւեց Թիւրքահայաստանի գրաւած վայրերի վերաբնակեցման ծրագիրը, նշանակւեց վարչութեան նոր կազմ, խոշոր չափով հայերից, յատկացրեցին մեծաթւոմար վարկեր և մեծ առնւազն միլիոններ, որ գաղթականութիւնը վերադառնայ իր տեղերը։ Ասենք, առանձին միլիոններ էլ պէտք չկար, քանի որ ժողովուրդը ինքը, երբ վերացան կապանքները, տարերային քաշով մղւեց դէպի երկիր։

Կարճ ժամանակամիջոցում, Թիւրքահայաստանը, մանաւանդ, Վասպուրականի և Տարօն-Տուրուբերանի չրջանները վերակենդանացան։ Աչքէն

տեղ քոնել էր հայ ազգաբնակութիւնը: Գիւղերը վերաշինւում էին: Մշակած արտերը ծածկւում էին կանաչով: Աշխատանքը եռում էր: Մի ժեղր հրացան, մի ւսում մաճ ու քար՝ հայ գիւղացին ողողում էր ջրտիպող հայրենի հողը և անօրինակ ոգևորութեամբ ու եռանդով վերաշինում այն, որ քանդել էր բարբարոս թշնամին կամ պատերազմի դաժան չաստւածը:

Բացի կառավարական հիմնարկութիւններից, գրաւած վայրերում աշխատւում էին և բարեգործական ու մշակութային մարմիններ՝ կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը, Եղբայրական Օգնութեան կոմիտէն, Քաղաքների Միութիւնը, Գաղթ. կենտր. կոմիտէն, Մոսկւայի կոմիտէն, զանազան հայրենակցական ընկերութիւններ, որոնց ներկայացուցիչներն ու գործակիցները գրաւած էին զանազան վայրերում: Բազմաթիւ գործիչներ հետզհետէ անցան գրաււած վայրերը՝ լծւելով աշխատանքի՝ պետական ու հասարակական ասպարէզներում: Նրանց մէջ էին Խաչ.կարճիկեանը, Ռ.Տէր Մինասեանը, թէ. Ա. Գօղոսեանը, Կ. Համբարձումեանը, Վ. Քրմոյեանը, Կ. Մասունին, Տ. Զօրեանը, Սասունցի Մանուկը, Սասունցի Մուշեղը, Մ. Դարմանեանը, Մ. Տէր Գրիգորեանը, Բ. Աբոյեանը, Տ. Ազամալեանը, Հ. Մակաբեանը և չատ ուրիշներ՝ բժիշկներ, գիւղատնտեսներ, դեղագործներ, գործուեան քոյրեր, որբահաւաքներ ու որբ խնամողներ, վարչական պաշտօնեաներ, մարտիկներ:

1918 Յունւարի ամսւան վեր—Մուշ—Բասէն տարածութիւնը բնակեցւած էր հայ ազգաբնակութեամբ, հարկաւ, ոչ խիտ գիւղերով, և հայկական վիլայէթները դարձել էին իսկական մաքով Հայաստան: Մօտաւոր հաշւով, գրաւած վայրերի բնակչութիւնը գասաւորւած էր հետևեալ ձևով. Բայազէտ և չորսկայքը՝ 10,000 մարդ, Դիատին՝ 5,000, Ալաշկերտ՝ 30,000, Բասէն՝ 22,000, Խնուս՝ 28,000, Կարին և գաչտը՝ 6,000, Դերջան՝ 4,000, Երզնկա՝ 3,000, Ճորոխի հովիտը՝ 3,000, Բուլանըխ-Մանագկերտ՝ 4,500, Տրապիզոն՝ 1,500, Վանի նահանգ՝ 25,425 — ընդամենը՝ 142,425 մարդ*): Տեղական վարչութիւնը կրում էր գրեթէ գուտ հայկական կերպարանք. տեղ-տեղ գոյութիւն ունեցող ռուս պաշտօնեութիւնը ձևական դիրք ունէր և չատ քիչ էր ազդում գործերի վրա: Բացի վարչութիւնից, կային ինքնապաշտպանութեան խմբեր, որոնք պահակի դեր էին կատարում: Ժողովուրդն ինքն էլ զինւած էր և ի վիճակի պաշտպանելու իրեն: Բացի այդ, Վանում, Մուշի չրջանում, Խնուսում, Ալաշկերտում, Էրզրումի և Երզնկայի կողմերը գործում էին զուտ հայկական զօրամասեր: Որոշ վայրերում հիմնւած էին որբանոցներ, որոնց մէջ հաւաքւում ու խնամւում էին որբերը: Կարևոր կէտերում կային աննդակայաններ, հիւանդանոցներ, բուժարաններ: Մի խօսքով, Թիւրքահայաստանը յարութիւն էր առնում մոխիրների տակից, եռանդով վերաշինւում ու պատրաստւում էր նոր կեանքով ապրելու համար**):

---

*) Տես՝ «Արիքզոն», 1917թ. յունւ. 1·

**) Թիւրքահայ գրաւած հողերի մասին տեղեկութիւններ կարելի է ստանալ կ·



ԲԱՆԱՁՈՐ ԱՌԱՔԱՒԱՆՑ ՅԱՐՁԱԿԸ



ՈՐԲԵՐՔ ԼՅՈՒՒԱԾՔ



ՊՈՒՊԱՆՑԻՆ Ի ՓԵՐԱԼԱՆՑ

Այս առթիւ հետաքրքրական են Թիֆլիսի այն օրերի հայ Թերթերի հաղորդած տեղեկութիւնները։ Այսպէս, «Հորիզոն»-ի մէջ կարդում ենք. «Երկրի մէջ այս տարի կրթական-կուլտուրական կեանքը աւելի փայլուն չըլնի ունեցաւ, քան անցեալ տարիներուն։ Վանի մէջ գոյութիւն ունեն մօտ 16 դպրոցներ։ Դպրոցներ կան նաև Երկրի ամէն մէկ անկիւնը։ Կան նաև օրթանոցներ։ Դպրոցական-օրթանոցային հակողութիւնը կը գտնւի Արեւմտահայ Նորհուրդին ձեռքը, բայց տեղական երիտասարդ ուժերն են գլխաւորաբար, որ կը վարեն գործը։ Երկրի որոշ վայրերու մէջ բացած են նոյնպէս գրատարան-ընթերցարաններ։ Մէկ-մէկ կը պատահինն նոյնպէս երեկոյթներ, ներկայացումներ և այլն։

1917 Թւի վերջերին, Թիֆլիսի «Ազատամարտ»-ում գրաււած վայրէջքից վերադարձած մի ճանապարհորդ գրում էր. «Ամանակ վերսուերով համբայ կտրեցինք, Թիմարի ամրոցի երկարութեամբ և չտանք ո՛չ մէկ Թիկ հող առանց վարելու. միայն մէկ տեղ հանդիպեցանք անվար հողի, երբ, ասկայն, քիչ ետք նկատեցինք, որ հետևն հայ ծեր գիւղացին խոհեմ ձգած էր հողին մէջ և ակած էր վարել միակ անիւերի հողերը։

Նոյնն էր պատկերը, ընդհանրապէս, և միւս չորքանների համար։ Հ. Գիւղատնտ. Ընկերութիւնը և Հայաստանի կոմիսարիատը գէմարդկային ճիգ գործ դրին ժողովրդին սերմացու ու լծկան հասցնելու համար, և երկիրը ծածկուեց կանաչ արտերով։

Թուսական խչնութիւններն ու գօրահրամանատարները էլ օժանդակում էին հայերին։ Առաջւայ Թշնամական վերաբերմունք հետզհետէ չքանում էր։ Դեռ պատահում էին անհատ պաշտօնեաներ կամ հրամանատարներ, որոնք խէթ աչքով էին նայում այս «Հայաստանի կառուցմանը վրա», բայց ընդհանուր քաղաքականութիւնը հայանպատ էր։ Հրամանատարութեան համար հայերի ներկայութիւնը ուրա բանակի Թիկունքում օգտակար էր Թէ ռազմագիտական տեսակէտով և Թէ, մանաւանդ, այն պատճառով, որ հայերի մշակած արտերից գօրքը կը ստանար պարէն և անասուններ կերի։ Հաղորդակցութեան մէջոցների խանգարումով՝ Թուսաստանից հացահատիկ ու խոտ հասցնելը դառնում էր աւելի և աւելի դժւար։ Հայերի մշակած հողերը, ժամամբ, կը լրացնէին այդ պակասը։

Առհասարակ, գարմանալի կենսունակութեան և ձեռներկութեան ոգի յայտնաբերեց արեւմտահայ ժողովուրդը։ Ամենաժամանակի պայմաններում, Նիկոլայ Նիկոլայեվիչի ուժի տակ, նա պահեց իր հոգեկան արիութիւնը և կռպմակերպեց իր հասարակական կեանքը։ Ցեղափոխութիւնից յետոյ, նա փութաց ամբողջապէս իր ձեռքն առնել սեփական ճակատագրի տնօրինումը։ Այդ տեսակէտից ահագին դեր կատարեց Արեւմտահայ Առաջին Համագումարը, *տե՛ս* 2—11-ին, *երեւոյթում*։

Համագումարը հրաւիրեց մի*ջ*ազգային կազմակերպիչ մարմնի կողմից և բաղկացած էր 80 պատգամաւորներից և խորհրդակցական ձայնի իրաւունք ունեցողներից, որոնցից 15 հոգին Թիւրքահայաստանից, 27 կովկասս ապատաանած գաղթականներից, 14 ընկերութիւններից ու մ*իութիւն*-

---

Սաստիկ «Տեղեկատուի» Թուսական Տիրապետութեան Տակ (1914—1918), Բոստոն, 1927ն. գրքից։

ներից, 8 կուսակցություններից, 3 քիւրքահայ ժամուլից, 6 հրապիրեալներ և 11 խորհրդակցական ձայնով կանչուածներ։ Համագումարին ներկայացուցիչ էր ուղարկել և Ամենայն Հայոց Կաթուղիկոսը։ Հանդիսաւոր բացումը կատարեց Անդրանիկը, իսկ բացման խօսքը ասաց Արամը, որի ճառը թողեց խորունկ տպաւորութիւն ամենքի վրա։

Համագումարը հրաւիրուած էր միայն զաղթականական խնդիրներ լուծելու նպատակով, բայց անհրաժեշտօրէն առացաւ նաև քաղաքական գումաւորում։ Նրա հանած որոշումներն ու, մանաւանդ, ստեղծած մթնոլորտը յետագային խոչոչի խոչոր գործնական դեր պիտ խաղալիք կենդանի։

Համագումարը երկարօրէն զբաղուեց զաղթականական ու նպաստաբաշխման գործի քննադատութեամբ և ապագայ գործունէութեան ծրագրի մշակումով։ Ի վերջոյ, ընդունեցին հետեւեալ երկու բանաձեւերը, որոնցից երկրորդը, դէպքերի բնական զարգացումով, դարձաւ մի տեսակ սահմանադրութիւն։

Առաջին բանաձեւը, որ առաջարկեց վ.Ս. Փափազեանը և ընդունեց 51 քւէով 8-ի դէմ, արտայայտում էր համագումարի վերաբերմունքը դէպի զաղթականական կամ, ինչպէս այն ժամանակ ասում էին, փախստականական մարմինների անցեալ գործունէութիւնը։

Բանաձեւը ասում էր. «Քիւրքահայ համագումարը լսելով պատգամաւորներու զեկուցումները և փախստականական ազգային մարմիններէ ոմանց ներկայացուցիչներու բացատրութիւնները փախստականներու օգնութեան գործի կազմակերպման և վիճակի մասին, կը նկատէ, որ փախստականներու օգնութեան գործը վարող ազգային մարմիններու գործունէութիւնը՝ չնայած անոնց նպատակներու և միջոցներու բացարձակ համամասնութեան՝ չէ ունեցած մէկ ընդհանուր ուղեղիծ և գործելակերպ, ինչպէս նաև միջոցներու ու գործերու կենտրոնացում և ներքաշնակութիւն։

Որ օգնութեան գործին մէջ տեղի են ունեցած խոչոր քերութիւններ, ինչպէս՝ անմիջօք գործելակերպ, իրական քննութօքի բացակայութիւն, պաշտօնական կողմէ անփոյթ ընտրութիւն, փախստականներու իրաւական մասնակցութիւնը չէ յարգուած, կանոնաւոր հաչեստութեան բացակայութիւն, որոնք տուիճ են բազմաթիւ բողոքներու և կասկածներու։

Որ փախստականներու օգնութեան գործը ընդհանուր առմամբ նկատուած է իբր սոսկ մարդասիրական ձեռնարկ և տարուած է ըստ այնմ՝ զնկատվարութիւով գլխաւորապէս նպաստ տալու սկզբունքով, փոխանակ աշխատանք տալու, մինչդեռ հայածական քրքահայութեան գոյութեան պահպանման գործը պիտի նկատուէր զերազանցապէս ազգային-հասարակական նչանակութիւն ունեցող գործ։

Միևս կողմէ, սակայն, բոլոր յիշեալ քերութիւններով հանդերձ քրքահայ համագումարը փախստականական կազմակերպութիւններու գոյութիւնը օգտակար կը համարէ հետեւեալ նկատումներով.

Որ անոնք ցարդ ձեռք բերած են գործին անհրաժեշտ փորձառութիւնը, հաստատած են կապեր և ծանոթ են ռուս միլիտարիստրին ու պայմաններուն։

Որ արդէն ստեղծած և ընթացք տուած են որոչ հիմնարկութիւններու։

Որ փախստականներու գոյութիւնը պահելու գործը համագումարը կը նկատէ իբր համազգային գործ. հետեւաբար անոր օգնութիւնը պիտի կատարուի բոլոր հատուածներու կողմէ հաւասարաբար, և

Թերքահաւաքիչը ասահանդական և տնտեսական քայքայման այս վիճակին մէջ չատ տեսակէտներով հնարաւոր և ցանկալի չի համարեր միասնակ վարելու իր երկրագործութեան գործը առանց փախստականներու մասնիններու գործակցութեան։

Գործակցութեան առյն հիմերու համաձայն ծրարդի մը պատրաստութեան համար համագումարը այդ խնդիրը կը յղէ համապատասխան յանձնաժողովին։

Երկրորդ բանաձեւը ընդունեց միաձայնութեամբ և ձեւարկերպում կր ստացաւ անելիքները. —

«Համաշխարհային պատերազմի հետևանքով մեր քայքայած ժողովրդի վերածնունդին նուիրած աշխատանքները պիտի ունենան՝ 1) Թերքահաւ ժողովրդի ֆիզիքական գոյութեան պահպանումը և անոր քայքայած տրտեսութեան վերականգնումը։ 2) Հայրենիքի վերաշինութիւնը։ 3) Նոր սերնդի կրթական, ֆիզիքական և քաղաքացիական դաստիարակութիւնը։

Այդ նպատակներուն իրագործման համար համագումարը նկատի ունի հետեւեալ երեք հիմնական սկզբունքները։ 1) Տեղական կազմակերպութիւններ յառաջացնել գրաւեալ վայրերու հայութեան, ինչպէս նաև Ռուսաստան և Պարսկաստան ապաստանած հայ փախստականութեան մէջ։ 2) Փախստականական գործերու մէջ իրագործել արևելահայերու և արևմտահայերու սերտ համագործակցութիւնը։ 3) Օգնութեան գործի ղեկավարութիւնը և դրամական միջոցները կենտրոնացնել մէկ կենտրոնական մարմնի ձեռք։

Սոյն սկզբունքներու իրագործման գործօններն են՝ համագումար և կեդրոնական խորհուրդ։

Կեդր. խորհուրդի անդամներու կէսը կընտրի Թերքահաւ համագումարի կողմէ, իսկ մնաց կէսը ռուսահայ փախստականական գլխաւոր մարմիններու և կամ ռուսահայ համագումարի կողմէ։ Այժմ խորհրդի համար կընտրուի 15 անդամ և 10 փոխանդամ։ Իսկական անդամներու մէջ վերջնական ճշտումը կը Թողնի ռուսահայ մարմիններու ընտրութեան ժամանակ։

Խորհուրդը փախստականական ընթացիկ գործերը կը վարէ իրմէ ընտրուած բիւրօի միջոցով, որու անդամները վճարովի պիտի ըլլան։

Խորհուրդը իրեն կից կը կազմէ կրթական, որթանոցային, առողջապահական, պարենաւորման, իրաւաբանական, աշխատանքի և տեղեկատու բիւրօներ և յանձնաժողովներ։

Թերքահաւ համագումարը կընտրէ վերստուգիչ յանձնախմբի երեք անդամներ՝ առաջարկելով կեդր. խորհրդին ռուսահայ անդամներ ուղղ մարմիններուն և կամ ռուսահայ համագումարին՝ լրացնել գայն երկու կամ երեք անդամներով։

Վերստուգիչ մարմինը պիտի հակ խորհրդի դրամական գործառնութեանց վրայ՝ համաքառտու ըլլալով համագումարիդեմ։

Միաձայնութեամբ ընտրուեցին խորհրդի 15 անդամներ՝ Անդրանիկ, Սմբատ Բօրոյեան, Հրանտ Դալիկեան, Արտակ Դարբինեան, Զապէլ Եսայեան, Ա.-Թէոդիկպաշեան, Գ.Հայկունի, Հմ.Մանուկեան, Լ.Շանթ, Վարդ. Գապիկեան, դր.Գոնափարքեան, Կարօ Սասունի, Սեպուհ, Ծակ.Տէր-Զաքարեան, Վահ.Փափազեան։

Վերստուգիչ յանձնախումբ՝ Սերովբէ Կիւլպենկեան, Աբրահ Սաֆրաեան, Թգնիկ Քալուստի։

Համագումարի փակումէն յետոյ Արևմտահայ Խորհուրդն իր մէջէն ընտրեց 5 հոգինոց բիւրօ, որ և առանձնեց համագումարի որոշումներէն

իրազործումն ու արևմտահայ գործերի ղեկավարութիւնը։ Բիւրօի անդամներ ընտրեցին Վահ. Փափազեանը, Արտ. Դերբինեանը, Ց. Տէր-Զաքարեանը, Կ. Մասունին և Հ. Թալիկեանը։ Հետզհետէ գրաւեած վայրերի և Անդրկովկասի զանազան կենտրոններում կազմուեցին Արևմտահայ Բիւրոյի մասնաճիւղեր, որոնք դարձան արևմտահայութեան իրական ներկայացուցիչները։ Մի տեսակ արտահողային պետութիւն էր ստեղծուում՝ կենտրոնական և տեղական իշխանութիւններով։ Ապագային, երբ Թիւրքահայաստանը դառնար ազատ, կառավարական մեքենան արդէն պատրաստ էր։

Բիւրօին յաջողուեց համախմբել գաղթականների օգնութեան գործով զբաղուող մարմինները ևս — Կովկ. Հայոց Բարեգործական Ընկերութիւնը, Հայոց Ցիւրատանեսական Ընկերութիւնը, Եղբայրական Օգնութեան Կոմիտէն, Կենտրոնական Նպաստամատոյցը և այլն, որոնց գործունէութիւնը կենտրոնացուեց և դրուեց ընդհանուր հսկողութեան տակ։ Այս մարմինները ահագին ծառայութիւն մատուցին արևմտահայ ժողովրդին։



Գ. ՓԻՓԱՅԵԱՆ



Ե. ԱՓԻՍՈՓՅԱՆ



ՀՐ. ԱՐՇԱՒԻՐՅԱՆ



ՄԱՐԱԼ



Գ. ԼԵՒՈՆՅԱՆ

ԳԼՈՒԽ Դ.

ՌՈՒՍԱՀԱՅՈՑ ԳՈՐԾԵՐԸ

Իրերի բերումով, արևմտահայերի և ռուսահայերի կեանքը յեղափոխութիւնից յետոյ տարբեր ճանապարհներով։ Արևմտահայերը ապրում էին սեփական, ազգային–տեղական կեանքով։ Նրանց հետաքրքրութիւնը ամփոփուած էր Թիւրքահայաստանի և գաղթականական գործերի սահմաններում։ Ռուսահայութիւնը, ընդհակառակը, ամբողջապէս տարուեց համապետական ընդհանուր հարցերով և ընկերային գաղափարներով։ Յեղափոխութեան մրրիկը յափշտակեց նրան և մի պահ մոռացնել ուեց զուտ ազգային ցաւերը։

Ռուսահայոց ակնկալութիւնները յեղափոխութիւնից ամբողջապէս տեղաւորուում էին Ռուսաստանի համապետական հարցերի մէջ — նոր՝ ժողովրդական իշխանութեան հաստատում, հին ոճիրի մեղադրանքի վերացում, ընդհանուր ներում, քաղաքացիական ազատութիւններ, ռազմահակաի ամրացում ու պատուաւոր հաշտութիւն ևայլն. այս վերջին պահանջի մէջ հակացուում էր և Թիւրքահայաստանի ինքնավարութիւնը։ Եւ, իրրև ազգային պահանջ, մանր ազգերին ևս տալ այն իրաւունքները, որոնք մինչև այդ վերապահուած էին միայն տիրող ցեղին։

Նոյն ոգին տևանում ենք և մայիս ամսի ընթացքին գումարուած գաւառական ու նահանգային ուսուցչական և գիւղացիական բազմաթիւ համագումարների մէջ — Երևանում, Կարսում, Ալէքսանդրապոլում և այլուր։ Ամէն տեղ դրւում էին ընդհանուր–պետական խնդիրներ, իսկ տեղական–ազգային պահանջները դուրս չէին գալիս լեզւի և տեղական մշակոյթի համեստ սահմաններից։

Նոյնչի համար՝ ահա Երևանի նահանգային գիւղացիական համագումարի մայիս 12–ի նիստում, Աւ. Շահխաթունեանի զեկուցումից յետոյ ընդունուած բանաձևը, որ տիպար կարող է համարուել և միւս համագումարների բանաձևերի համար և որը լիովին արտայայտում է ռուսահայերի ա՛յն օրերի քաղաքական ապրումները։

«Երևանի Նահանգի Գիւղացիական համագումարը՝ քննելով Ռուսաստանի ապագայ կարգերի խնդիրը, գտնում է։

Ռուսաստանում վերնականապէս ոչնչացած է հին կարգը և նրա տեղ պէտք է հաստատուի հանրապետութիւն։ Այդ հանրապետութիւնը պէտք է լինի ռամկավար, որովհետև միայն ռամկավար հանրապետութեան մէջ կարող է աշխատաւոր ժողովուրդը իր չահերը պաշտպանել։

Այդ ռամկավար հանրապետութիւնը պէտք է լինի դաշնակցական,

որպեսին միայն կարող է համապատասխանել Ռուսաստանի պէս բազմազգու մի երկրի և նպաստել պետութեան բոլոր տարբեր մասերի տնտեսական ու մշակութային զարգացմանը:

Անդրկովկասը պէտք է կապուած լինի Ռուսաստանի հետ դաշնակցական կերպով: Ինքը Անդրկովկասը պէտք է ներկայացնի մի ոմանավար դաշնակցական հանրապետութիւն՝ բաժանուած կանտոնների՝ տեղադրական ու մշակութային պայմանների համաձայն:

Դիւղացիական Համագումարը գտնում է, որ մինչև Սահմ. Ժողով՝ կենտր. կառավարութիւնը և նրա կովկասեան ներկայացուցիչները պարտաւոր են·

Նախապատրաստել Սահմ. Ժողովի գործը, նոր նահանգական ու գաւառական բաժանումներ մտցնել Անդրկովկասում, այնպէս, որ նրանք համապատասխանեն աշխարհագրական և տնտեսական պայմաններին և հաւասար ու արդար պայմանների մէջ դնեն բոլոր ազգերին:

Անմիջապէս մտցնել տեղական լեզուները բոլոր վարչական և դատական հիմնարկութիւնների մէջ, որի համար անհրաժեշտ է փոխել պաշտօնեաների կազմը:

Սեպտեմբերից բոլոր ստորին դպրոցները կատարելապէս ազգայնացնել, միշտակարգ դպրոցները՝ նոյնպէս: Որտեղ այդ հնարաւոր չի լինի ամբողջովին, ազգայնացնել գէթ ստորին դասարանները:

Նոր վարչական բաժանումները մտցնելուց յետոյ, տալ երկրին գէմստուային ինքնավարութիւն և երդուեալների դատարան:

Այս գործը թեթևացնելու համար նահանգի դիւղացիների համագումարը արտաքին կոչ է ուղղում Ռուսաստանում ցրուած բոլոր կովկասցի ինտելլիգենտ հայրենակիցներին՝ վերադառնալ հայրենիք և հնչտացնել դպրոցների ու այլ հիմնարկութիւնների ազգայնացման գործը:

Նոյն այդ տրամադրութիւնները ունենում ենք և քաղաքային ինքնավարութիւնների, ապա և Սահմանադիր ժողովի ընտրութիւնների ժամանակ: Այս վերջինի արդիւնքը խիստ բնորոշ է Անդրկովկասի քաղաքական ուժերի դասաւորութեան տեսակէտից:

*Սահմանադիր ժողովի ընտրութիւններին իրար հետ մրցող ու պայքարող կողմերն էին սոցիալ-դեմոկրատները (№ 1), որոնք դեռ գործում էին համառուսական կուսակցութեան անունով և բացի Վրաստանի քէնէրից ստացան նաև հայ, ռուս, թուրք և այլ քէնէներ, ինչպէս նաև զօրամասերի սոց.-դեմոկրատ գիւղերների ու սպաների ձայները, Մուսաւաթն ու թուրք անկուսակցական խմբակը (№ 10), որ ներկայացնում էր մահմեդական ազգաբնակչի խաւերը, և Հ. Յ. Դաշնակցութիւնը (№ 4): Ընտրութեան հետևանքը եղաւ հետեւեալը· սոցիալ-դեմոկրատները ստացան 661,934 քէչ և տուին 12 պատգամաւոր, մուսաւաթականները՝ 615,816 քէչ — 10 պատգամաւոր և Հ. Յ. Դաշնակցութիւնը՝ 558,400 քէչ — 9 պատգամաւոր: 62,044 քէչն տալիս էր մէկ պատգամաւոր: Հ. Յ. Դաշնակցութեան ցանկով ընտրուած պատգամաւորներն էին՝ Ռոստոմ Զօրեան, Մ. Յովհաննիսեան, Հ. Օհանջանեան, Յ. Ջաւրեան, Կ. Համբարձումեան, Աւ. Շահխաթունեան, Յ. Քաջազնունի, Սէր. Տէրտեանան, Կ. Ղազագեան: Այսպիսով, առանց չափազանցութեան, Անդրկովկասի հայ ժողովրդի աւելի քան 95% իր քէչն տուեց, հետեւաբար և վստահութիւն յայտնեց Հ. Յ. Դաշնակցութեան:

Այս համապետական տրամադրություններին ու լաւատեսութեան գուշեցիաց զգացում էր և ներքին անհանգստութիւն կատաղում դէպքերի հանդէպ։ Որքան և յեղափոխութիւնը արբեցրած լինէր ամէնքին, անկարելի էր չնկատել, որ որոշ խաւերում աճում էր ձգտումը յեղափոխութիւնը օգտագործելու ռազմաճակատի գործերը ի նպաստ Թիւրքիայի չրկելու համար։ Դիտւում էր մակարդի պահանջների հանդէպ խիստ անփոյթ վերաբերում վրացական չրկաններում և քոշարկած հակառուս աշխատանք մահմեդականների կողմից։ Բազուի Մահմ. Բարեգործական Ընկերութիւնը բազմապատկել էր իր գործակալների և նիւթական յատկացումների քանակը կարսի նահանգում և էրզրումի ու յարակից չրկաններում։ Պաշտօնապէս նրանք գրաւած էին մահմեդական որբերի ու գաղթականների հոգատարութեամբ։ Իրապէս՝ ռուս բանակի թիկունքում գործում էին յօգուտ Թիւրքիայի։

Այս աշխատանքը, ուրիշներից աւելի, տեսնում էին հայերը, և յեղափոխութեան առաջին օրերից հէնց ճակատի պաշտպանութեան, ազգային ինքնապաշտպանութեան և հայկական ներքին ուժերի համախմբման պահանջը չատերի համար դարձաւ լուրջ մտահոգութեան առարկայ։ Այս պահանջի հետեւանքով առաջ եկաւ ազգային ներքին կազմակերպութեան անհրաժեշտութեան գիտակցութիւնը։

Ապրիլ 10—13, Թիֆլիսում, Ազգային Բիւրօի հրաւէրով գումարւեց մի[լ]կուսակցական մի խորհրդակցութիւն, որին մասնակցում էին Ազգային Բիւրօի և կամաւորական խմբերի կարգադրիչ մարմնի անդամները, նախկին կամաւորական խմբերի հրամանատարները, դաշտականին բիւրօների և կոմիտէների ներկայացուցիչները, Թիֆլիսի Մի[լ]կուսակցական մարմինը, Աբեմատակ Խորհրդի անդամները և այլն — Թիֆլիսից 75 և գաւառներից 20 գործիչ։ Այդ ժողովում ներկայացուցիչն մանրամասն զեկուցումներ ընդհանուր և ազգային–քաղաքական դրութեան, [ի]նչպէս և ռազմաճակատի ու գաւառների վիճակի մասին։ Եւ անհրաժեշտ տեսնւեց, երկու ամսից ոչ աւել, հրաւիրել ազգային համագումար՝ ռուսահայերի կեանքին վերաբերւող խնդիրների լուծման համար։ Որոշւեց, որ համագումարը կազմւելու է քառանդամ ընտրական եղանակով՝ երկու սեռերի մասնակցութեամբ։ 10.000 հոգին տէկտ է տար մէկ պատգամաւոր։ Ընտրութիւնների մասնակցելու էին միայն ռուսահայերը։ Համագումարը պէտք է գումարւէր Երեւանում։ Ընտրութիւնների կազմակերպումն ու դիտակարգումը, համագումարի օրակարգի մշակումը և այլ խնդիրների կարգադրութիւնը յանձնւեց Թիֆլիսի Մի[լ]կուսակցական Մարմնին, որը իրաւունք պիտի ունենար իր կազմը ուժեղացնել նոր անդամներով։

Այս որոշումը, սակայն, ժամանակի ընթացքում, ենթարկւեց որոշ փոփոխութեան, և համագումարը հրաւիրւեց կէս–ընտրական, կէս–նշանակովի սկզբունքով։ որոշ քանակութեամբ պատգամաւորներ ուղարկեցին հայկական քաղաքները, հասարակական կազմակերպութիւններն ու քաղաքական կուսակցութիւնները, և սեպտ. 29–ին, Թիֆլիսի Արտիստական Թատ—

բոնի ընդարձակ սրահում, Միլիկուսակցական Մարմնի ներկայացուցիչ Հ. Օհանջանեանի կողմից, հանդիսաւորապէս բացուեց հայոց ազգային համագումարը, կամ, ինչպէս անւանում էին այն ժամանակ, ազգային խորհրդաժողովը:

Համագումարին մասնակցում էին ընդամենը 203 պատգամաւորներ— 113 հոգի դաշնակցական, 43 ժողովրդական, 23 սոցիալիստ–յեղափոխական, 9 սոցիալ–դեմոկրատ (մենշևիկ, բոլշևիկ, հնչակեան) և 7 անկուսակցականներ: Արեւմտահայ Կորուստն ևս ունէր յատուկ ներկայացուցչութիւն: Բոլշևիկները, մի քանի օր յետոյ, առանձին գրութեամբ յայտարարեցին, որ իրենք ներկայացուցիչ չունեն համագումարում:

Համագումարի կազմը պատկառելի էր: Համախմբած էր ուսանողութեան ընտրանին, ամենէն աչքի ընկնող գործիչները: Բոլոր կուսակցութիւններն ուղարկել էին իրենց լաւագոյն ուժերը: Նախագահութեան մէջ ընտրւեցին Ե. Քալաշնունին, Ա. Պատխանեանը, Ա. Ահարոնեանը (դաշն.), բժ. Այվազեանը (ժող.), Լ.Աթաբէգեանը (սոց.–յեղ.), Ղ.Տէր–Ղազարեանը (սոց.–դեմ.), Ստ. Մամիկոնեանը (անկուս.):

Համագումարը տեւեց մօտ երկու շաբաթ և հանգամանօրէն քննեց մի շարք չափազանց կարեւոր հարցեր — հայ ժողովրդի վարելիք ընդհանուր քաղաքականութիւնը, կովկասեան իշխանութեան կազմն ու Առանձին Կոմիտէի գործունէութիւնը, Անդրկովկասի վարչական վերաբաժանման խնդիրը, գոյքոցների ազգայնացման ծրագիրը, պաշտպանութեան տագնապը և այլն: Ի վերջոյ, կուսակցութիւնների համաձայնութեամբ, որոշուեց կեանքի կոչել երկու մարմին. 1) Մեծ Կորուստը կամ Կորստյաժողով, որ պէտք է ներկայացնէր համագումարի պատկերը՝ իւրաքանչիւր հոսանքին տեղ տալով իր թիւի համեմատ: Կորստյաժողովը պէտք է գումարուէր պարբերաբար և, մի տեսակ, համագումարը փոխարինող մարմին պիտի լինէր: 2) Գործադիր Մարմին կամ Ազգային Կորուստ, որ պէտք է բաղկանար 15 անդամից — 6 դաշնակցական, 2–ական սոց.–յեղափոխական, սոց.–դեմոկրատ ու ժողովրդավար, 3 անկուսակցական և կատարէր պիտի գործադիր իշխանութեան դեր: Համագումարից նշանակուած Ազգային Կորուստը ունեցաւ հետեւեալ կազմը. Աբամ, Ա. Ահարոնեան, Ն. Ադրաբեան, Ռ. Կարճիկեան, Ռ. Տէր Մինասեան, բժ.Ա.Բաբայեան (դաշն.), Ա.Ստամբոլցեան, Ե .Տէր–Օհանեան (ս.–յ.), Մ.Ղարաբէգեան, Ղ.Տէր–Ղազարեան (ս.–դ.), Ս. Ճարուքճեան, Մ.Գապալճեան (ժող.), Ս. Մամիկոնեան, Տ. Բէգզատեան և Գ.Զաքարեան (անկ.): Նախագահ ընտրուեց Ա. Ահարոնեանը: Ճեմագային, այս ցանկի մէջ տեղի ունեցան որոշ փոփոխութիւններ. կուսակցութիւնները իրաւունք ունէին իրենց մէկ անդամին յետ կանչել և տեղը նշանակել ուրիշը:

Համագումարի որոշումով Ազգային Կորուստը պէտք է լինէր սոսկ գործադիր մարմին: Դէպքերի բերումով, նա դարձաւ ազգային գերագոյն մարմին, ու մի տեսակ հայկական կամ ուսահայկական կառավարութիւն. հովկաս ապաստանած արեւմտահայերի համար՝ նոյն դերը կատարում էր Արեւմտահայ Բիւրօն, յետոյ՝ Ապահովութեան Կորուստը: Ընդհանուր

թնոյթ կրող բոլոր կաբեւոր հարցերում Ազգային Խորհուրդը և Արեւմտահայ Բիւրօն գործում էին համախոհ ու համերաշխ, մանաւանդ, ճակատի պատգամաւորների գործում*):

Թագմաճակատի դրութիւնը երթալով՝ բարդանում ու ծանրանում էր: Թիկունքում, երկրի զանազան կողմերում գազգազանում և ամրանում էին կենսարոնախոյս ուժերը, որոնք ձգտում էին արտաքին պատերազմը վերածել ներքին՝ քաղաքացիական կռւի: Այս աշխատանքը աւելի աստկացաւ, մանաւանդ, Լենինի և ընկերների, Գերմանիայի վրայով, Ռուսաստան հասնելուց յետոյ: Բոլշեւիկները յայտնապէս աշխատում էին քայքայել ռազմաճակատը և Թիկունքի պաշտպանութեան գործը: Ցոգնած ժողովրդին ուղղելով հրապուրիչ խօսքեր ու գայթակղեցնող խոստումներ, անսանձ խուժանավարութեամբ ու մէջոցների մէջ խտրութիւն չդնող գործելակերպով՝ նրանք յայդնում էին իրենց կողմը քաշել պատերազմից դգուած ու պարզնի նեղութիւն կրող տգէտ զանգուածները և նրանց միջոցով պաշտպել կառավարութեան դէմ: Բոլշեւիկների ձեռքին մանաւորապէս սուր զէնք էր անջատ հաշտութեան և ազգային ինքնորոշման պահանջը: Ի զուր Բանե. և Զինե. Ցորհրդում Մերենթելին ջանքեր էր թափում համոզելու, որ հանջատ հաշտութիւնը ո՛չ միայն ցանկալի չէ, այլ և անիրագործելի է, որովհետեւ, այդ դէպքում, ռուսական յեղափոխութիւնը հարկադրւած կը լինի անյապաղ նոր պատերազմի ելնել այս անգամ արդէն գերմանական կօալիցիայի պատկանող երկրների կողմը: Ի զուր Քերենսկին հակաճառում էր յանուն ազգերի ինքնորոշման սկզբունքի խուժանավարօրէն Թիւրքահայաստանի պարտւումը պահանջող Լենինին, Քէ՝ «մենք չենք կարող պարպել Հայաստանը, որովհետեւ այդ դէպքում Հայաստանից ոչինչ չի մնայ. նա կը կորչի գիւղերի և Թիւրքերի դանակների տակ». — ամբոխային հոգեբանութիւնը կատարում էր իր քա՛յքայիչ գործը: Եւ անգամ հայերի մէջ գտնւում էին մարդիկ, որոնք ծառանում էին Քերենսկիի այդքա՛ն բնական ու մարդկային յայտարարութեան դէմ. «Մա չափազանց վնասակար յայտարարութիւն է հայ ժողովրդի շահերի տեսակէտից, գրում էր Թիֆլիսի «Պայքար» Թերը (սոց. դեմ.): Այս յայտարարութիւնը չի համապատասխանում դեմոկրատիայի իրական քաղաքականութեան և չափազանց վնասակար է հայ ժողովրդի շահերի տեսակէտից: Կրկին զօրքին, բազմաշարչար բանւորութեանն ու գիւղացիութեան յայտարարում են, որ նրանք չարունակեն ապրել դժոխային պայմաններում հայերի համար»: Եւ Ռուսաստանի բոլշեւիկների հետ միասին՝ հայ սոցիալ–դեմոկրատներն էլ գերազատում էին վարել մի քաղաքականութիւն, որ հայ ժողովուրդը ապրի դժոխային պայմաններում, միայն թէ ռուս էրազմաշարշար բանւորութիւնն ու գիւղացիութիւնը պատճառ չունենայ դժգոհ լինելու:

Սակայն, քանի ժամանակն անցնում էր, այնքան կատաւարութեան համար դառնում էր դժւար երկրում ամող անիշխանութեան, պարենաւորման

*) Ազգային Համագումարի և Ազգային Խորհրդի մասին աւելի մանրամասն տեղեկութիւններ կարելի է գտնել Ս. Ճ. Դ. Փարիզի Շրջ. Կոմիտէի հրատարակած «Մայիս 28», Փարիզ, 1926թ. գրքում:

տաքնապի, ճակատի քաշքշման և բոլշևիկների դրդռիչ գործունեության առաջն առնել։ Դաշնակից պետությունների ճիգերն էլ այս ուղղությամբ չօչափելի օգուտ չկարողացան տալ։ Փորձ եղավ, յունիսին, երկրի ու բանակի տրամադրությունը բարձրացնելու նպատակով, արևմտեան ճակատում ընդհանուր յարձակման անցնելու, բայց յաղողությունն չունեցավ։ Այդ փորձը ցոյց տւեց, թէ որքան խորն էր բարոյալքումը երկրի և բանակի մէջ։ Օգտւելով զօրքի դժգոհութիւնից, յուլիսին, բոլշևիկները փորձեցին առաջ բերել զինւած ապստամբութիւն, որ թէև ճնշւեց, բայց ցոյց տւեց, թէ որքան լայն ծաւալ է ստացել անիշխանութիւնը։

Դրանից յետոյ յարաբերութիւնները ւսւէլի ևս սրւեցին։ Գետական խորհրդակցութիւնը, որ հրաւիրւեց ամառը Մոսկւայում, է՛լ ւսւէլի չէր տեց արտաքին ու ներքին քաոսը և յեղափոխութեան համար ստեղծած անտանելի կացութիւնը։ Տագնապն ու դժգոհութիւնը արտայայտւում էր բազմաթիւ ձևերով. բանակի ոգին արագ ընկնում էր, դասալքութիւնը դառնում էր տարերային երեւոյթ, հաղորդակցութիւնը խանգարւում էր, ապրուստը սղում տարապայմանօրէն, խանութների առջև կազմւում էին երկար ու ջղայնացնող հերթեր։ Խորանում էր վիհը արդիւնաբերող ու բանւորական խաւերի միջև։ բանւորութիւնը գժգոհ էր իր տնտեսական և իրաւական վիճակից։ Գիւղացիութիւնը տրտնջում էր, որ հողաբաժանումը ուշանում է։ Այստեղ ու այնտեղ բռնկւում էին գիւղացիական անկազմակերպ շարժումներ և կալւածատէրերի արտաքսումներ։ Կառավարութիւնը հեղինակութիւն և ոյժ չունէր այս բոլորի առաջն առնելու, անգամ վարչապետ Լվովի հրաժարումից և ա՛յն ժամանակւայ հոգիների վեհապետ Ա. Քերենսկիի վարչապետ դառնալուց յետոյ։

Իրրեւ հակազդեցութիւն այս դրութեան, բանակի սպայութեան և բուրժուական շրջանների մէջ աճում էր անբաւականութիւնն ու գայթոյքը երկրի զեկավարներից։ Պահանջւում էր ուժեղ ու կարուկ իշխանութիւն։ Այդ պահանջի արտայայտութիւն հանդիսացաւ, այսպէս կոչւած, կորնիլովեան չարժումը, երբ բանակի որոշ զօրամասեր զօր. Կորնիլովի գլխաւորութեամբ քայլեցին մայրաքաղաքի վրա՝ իշխանութեան բռնի փոփոխութիւն կատարելու դիտաւորութեամբ։

Այդ չարժումը թէև ճնշւեց, բայց իր հերթին ուժեղացրեց ծայրայեղ ձախ տարրերը, բոլշևիկներին, որոնց ձեռքին ուժեղ դէնք էր և՛ Սահմ. ժողովի գումարման ձգձգումը։ Լայնածաւալ և պատերազմական կեանքով ապրող կայսրութեան մէջ այնքան էլ հեշտ չէր ամենակատարեալ ձեւով ընտրութիւններ կատարելը։ Սահմ. ժողովի պակասը լրացնելու մտահղացքեամբ հրաւիրւեց դեմոկրատական խորհրդակցութիւն։ Հրապարակ գրւեց նախապարլամենտ կազմելու ծրագիրը։ Բայց այդ բոլորը արդէն ուշացրած փորձեր էին։ Երկիրը հասունացել էր ուրիշ դէպքերի համար։ Հոկտ. 25-ին, Պետրոգրադում տեղի ունեցաւ բոլշևիկեան յեղաշրջում։ Կազմւեց ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ։ Ժամանակաւոր Կառավարութիւնը ցրւեւ եկաւ։ Նրա անդամներից ոմանք, ինչպէս և նոր ընտրւած Սահմ. ժողովի

պատգամաւորներէն չատերը, քաղաքական կուսակցութիւններն ու կազմակերպութիւնները անցան դիմադրութեան կազմակերպման։ Առաջ եկաւ Վահէ. Ծողովի ճակատը և բազմաթիւ ուրիչ մանր ու խոշոր ճակատներ։ Բանակ ու ժողովուրդ, ոգեմաճակատ ու քիկունք իրար խառնուեցին։ Երկիրը ընկաւ քաղաքացիական պատերազմների անդունդը։ Գաւառական նոր չրջան էր սկսւում Ռուսաստանի և նրա սահմաններում ապրող ժողովուրդների համար։

ԳԼՈՒԽ Ե·

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՈՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ ՌԱԶՄԱՁԱԿԱՏԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՑԵՂԱՇՐՋՈՒՄԻՑ ՑԵՏՈՑ

Հոկտեմբերեան յեղաշրջումը հիմնովին փոխեց դէպքերի ընթացքը ինչպէս ամբողջ Ռուսաստանում, այնպէս և Կովկասում: Եւ ամենից առաջ անդրադարձաւ պատերազմի և խաղաղութեան վրա:

Ժամանակաւոր կառավարութիւնը պատերազմի վերաբերմամբ ընդունել էր միանգամայն որոշ ուղղութիւն — ընդհանուր և պատուաւոր հաչտութիւն: Մարտ 14–ին, բանուորական և Զինուորական Խորհուրդը դիմելով ամբողջ աչխարհին՝ յայտարարել էր, թէ ազատ Ռուսաստանը հրաժարւում է ցարիզմի նաճախական քաղաքականութիւնից: Իսկ մարտ 27–ին, ժամ. կառավարութիւնը ձեւակերպել էր իր քաղաքական դաւանանքը. «Ազատ Ռուսաստանի նպատակը չէ տիրել ուրիչ ժողովուրդներին, խլել նրանց ազգային արժէքները, ուժով գրաւել օտար երկրներ, այլ հաստատել տեւական խաղաղութիւն՝ հիմնուած ժողովուրդների ինքնորոշման վրա: Ռուս ժողովուրդը չի ձգտում ուժեղացնել իր ներքին կացմը ի հաչիւ ուրիչ ժողովուրդների. նրա նպատակի մէջ չկայ նուաստացման ու սորկացման և ո՛չ մի հակում»:

Ժամ. կառավարութիւնը այս ուղեգծին հետեւեց իր յետագայ բոլոր քայլերում: Նոյն ոգով դործեց և Պետրոգրադի Բանուորական ու Զինուորական Խորհուրդը՝ ժամ.կառավարութեան ներչնչողն ու յենարանը և յեղափոխական դեմոկրատիայի կամքի արտայայտիչը: Խորհուրդը, հակառակ բոլշեւիկների բուռն դիմադրութեան, ապրիլ 26–ին որոշեց չկռիւ մի վայրում դումարել միչգդային ընկերվարական խորհրդաժողով և այնտեղ լուծել պատերազմի և խաղաղութեան հարցը միչգդային ծաւալով: Այս որոչումը միանգամայն համապատասխանում էր և Եւրոպայում, մանաւանդ, պատերազմին չմասնակցող երկրներում տիրող տրամադրութեան: Այնտեղ հերքիւ էր դրւած նման խորհրդաժողովի գումարումը և կապւած էր, այսպէս կոչւած, Հոլանդ–Սկանդինաւական կոմիտէն, որ կատարում էր համագումարի հրաւիրման նախապատրաստական աչխատանքները:

Ընդհանուր համաձայնութեամբ, խորհրդաժողովը նչանակւեց 1917թ. յուլիս 8–ին Սթոկհոլմում: Օրակարգի մէջ գրւում էին պատերազմի հետ կապ ունեցող բոլոր հարցերը, որոնց չարքում և հայկական խնդիրը: Հայաստանի կողմից խորհրդաժողովին պիտի մասնակցէր Հ.Յ.Դաշնակցութիւ–

նը, որի լիազօր ներկայացուցիչ Ռուսոտ Զօրեանը Թիֆլիսից մեկնել էր Սթոկհոլմ՝ նախօրօք բաժին ունենալով Գետրգրադի խորհուրդների և ընկերվարական շրջանների նախապատրաստական աշխատանքներում: Գետրգրադի Բանկ. և Զինվ. Կոոպերատիվ Միության համար մշակած հրահանգներում դրել էր և Թիւրքահայաստանի ինքնավարութեան պահանջը:

Հ. Յ. Դաշնակցութիւնը կազմակերպիչ մարմնին ներկայացրեց մի ընդարձակ յուշագիր, որի մէջ մանրամասնօրէն նկարագրում էր հայերի վիճակը պատերազմի նախօրեակին ու պատերազմի ընթացքին, հայկական ռեւոլուցիոնական ուժերն ու կազմակերպութիւնները, և ձեւակերպում հայկական պահանջները — վիլսոնհայաստանը Վանայ և Թաւրեզի (Անդրկովկասի) հետ պէտք է լինի ինքնավար՝ դաշնակցական ու հանրապետական Ռուսաստանի ծոցում». Թիւրքահայաստանը պէտք է ազատագրուի Թիւրքական տիրապետութիւնից. վիլայեթ Հայաստանը բովանդակելու է հայկական 6 վիլայէթները և Կիլիկիան. ի բաց առեալ 1877–78 թուականների պատերազմից յետոյ հայկական նահանգներին միացուած մահմետական շրջանները. «Հայաստանի չէզոքութիւնը պէտք է երաշխաւորի միջազգայնօրէն, «Թիւրքական կառավարութիւնը պէտք է հատուցանի հայերի վնասները» և այլն:

Ինչպէս յայտնի է, Սթոկհոլմի խորհրդաժողովը դաշնակից պետութիւնների բացասական վերաբերումի և Ռուսաստանի ներքին դէպքերի զարգացման հետևանքով չգումարուեց: Հետաքրքրական է, որ Թիւքիհայաստանի Թիւրքիան էլ ներկայացուցիչներ էր ուղարկել Սթոկհոլմ՝ Ն. Մասալիա էֆ. և դր. Հիւսէյին Զադէ Ալի բէյ, որոնք իրենց յուշագրի մէջ, առանց որևէ ակնարկ անելու հայկական խնդրի մասին, «յանուն Թիւրք դեմոկրատիայի», պահանջում էին «ազգերի ինքնորոշման իրաւունք՝ առանց խորհրդաժողովական և այլն*):

Հակառեւոլուցիոներների յետոյ խաղադրութեան գործը ստացաւ նոր ընթացք. բոլշեւիկները դիմեցին անձատ հաշտութեան՝ յայտարարելով «ժողովրդավարական» սկզբունքը ռազմամասամբ հակառակորդ դիւանագիտների հետ և պատերազմող կողմերին առաջարկելով անցնել անմիջական բանակցութիւնների: Այս քաղաքականութեան, ինչպես և երկրի ներսը բռնկած անիշխանութեան ու քաղաքացիական կատաղի կռիւների հետևանքով՝ սեւեռից համաժողով քաղաքում ռազմամասնակցութիւն. գործամասերը քոռնում էին դիւթերը և հրացանը առած՝ չտապում դէպի տուն, որպէսզի օր առալ բաժին առնան բոլշեւիկների խոստացած հողից ու բուրժուաների գոյքից»: Ու. Բալիկի նոտից մինչև Թերմանչոհ, ամբողջ տապաժութեան վրա, մեկնաբանութ դիւանագիտ մարդիկ՝ խուժեցին դէպի Բիկուզը:

---

*) Սթոկհոլմի խորհրդաժողովին վերաբերուող ամբողջ նիւթը հրատարակած է տասնմեայ հատորով՝ «Stockholm», **Ed. Tidens Förlag, Stockholm**, 1918, որի մէջ ամբողջովին գետնդած է և Հ. Յ. Դաշնակցութեան յուշագիրը:

Այս գանգրածային դասալքությունը առանձնապես հիւանդագին անդրադարձում ունենալ կովկասեան ճակատում, ուր ընդհանուր պատճառներից զատ՝ ուժեղ էին և ազգային հակամարտութիւնները և Թիւրքիայի ու կովկասեան մահմետականների իւրայատուկ փոխյարաբերութիւնները:

Հոկտեմբերեան յեղաշրջումը Թիֆլիսում հանդիպեց խիստ բացասական վերաբերմունքի: Բացի ընդհանուր պատճառներից, որով բոլշևիկեան կոմունեմքը նկատում էր ցնորական մի ճիգ պատմութիւնը դիտական ընկերվարութիւնից դէպի ուտոպիա տանելու և, հետեւաբար, աշխատաւոր մարդկութեան քնաջրումը առողջ ճանապարհից չեղելու, Անդրկովկասում կային և յատուկ պատճառներ. վրացի սոցիալ–դեմոկրատ մենշևիկների համար բոլշևիզմը, նախ և առաջ, կուսակցական հակառակորդ էր: Այն յարատեւ պայքարը, որ սոցիալ–դեմոկրատ մենշևիկ ու բոլշևիկ հատւածները վարել էին միմեանց դէմ գաղափարական ճեւերով, այժմ փոխադրւում էր գործօն քաղաքականութեան ասպարէզ: Շատ խոշոր տեղ էին գրաւում այս պայքարում և անձնական համակրանքներն ու հակակրանքները, երբեմն վէճերն ու զրպարտութիւնները: Հայերի համար հոկտեմբերեան յեղաշրջումը անընդունելի էր, ամենից առաջ, բոլշևիկների դէպի պատերազմն ու ճակատի պաշտպանութեան գործը բոնած դիրքի պատճառով. բոլշևիկների մէջ նրանք տեսնում էին քայքայող ոյժ, մինչդեռ վայրկեանը պահանջում էր ռուսաստանի հզօրութիւնը: Մահմետականների աչքին բոլշևիզմը դասակարդային թշնամի էր. մահմետական ներկայացուցիչների մեծ մասը խաներ ու բէկեր էին:

Այսպէս թէ այնպէս, Անդրկովկասը հէնց առաջին օրից բացասական դիրք բոնց խորհրդային իշխանութեան վերաբերմամբ: Եւ քանի որ Սահմ. ժողովի գոյութիւնը դառնում էր խնդրական, կապը կենտրոնի հետ վերացած էր, և, մեւս կողմից, Անդրկովկասի Առանձին կոմիտէն խպատ կորցրել էր հեղինակութիւնը ժողովրդի աչքին, իսկ կորնիլովեան յետաշրջական փորձից յետոյ ստեղծւած ինքնապաշտպանութեան մարմինը նոյնպէս հմայք չունէր լայն զանգւածների մէջ, բնական կերպով, առաջ էր գալիս տեղական իշխանութիւն ունենալու պահանջը: Այդ նպատակով, նոյեմբ. 27–ին, հրաւիրւեց մի խորհրդակցութիւն Անդրկովկասի Բանւորական, Զինւորական և Գիւղացիական խորհուրդների, Թիֆլիսի Բանւ. ու Զինւորական խորհրդի, Թիֆլիսի քաղաքային խորհրդի, Հանրային Ապահովութեան Կոմիտէի, Անդրկ. Առանձին Կոմիտէի, քաղաքական կուսակցութիւնների ներկայացուցիչների ու Սահմ. ժողովի անդամների, որը մանրագնին քննութեան առնելով տիրող կացութիւնը՝ որոշեց Անդրկովկասի համար ստեղծել տեղական իշխանութիւն՝ Անդրկովկասեան Սէյմ և Անդրկովկասեան Կոմիսարիատ, իրրև Սէյմի գործադիր մարմին: Սէյմի կազմութեան հիմք ընդունւեց Սահմ. ժողովի համար ընտրած պատգամաւորների քանակը. որոշւեց եռապատկել կուսակցական ցանկերով ընտրած պատգամաւորների քիւը:

Անդրկովկասեան Կոմիսարիատը կազմւեց ազգային–կուսակցական ներկայացուցչութեան սկզբունքով: Կոմիսարիատի մէջ մտան. — Ե. Գեգեչ–

գոբի՝ նախագահ և արտաքին գործոց կոմիսար, Ն. Ռամիշվիլի՝ ներքին, Դ. Դոնսկոյ՝ զինուրական, Ա. Կարմիկեան՝ ելևմտական, Հ. Օհանջանեան՝ խնամատարութեան, Ներուչեւ՝ երկրագործութեան, Մելիք-Ալաւոով՝ հաղորդակցութեան, Ռամ-Ռոյսկի՝ արդարադատութեան, Լ. Բերութով՝ պետական վերահսկիչ։ Զինուրական կոմիսարի օգնականներ նշանակուեցին Գոբեչիան և Գ. Լևոնեանը։ Երկրագործութեան կոմիսարի օգնականներ՝ Աւ. Շահխաթունեանը և Գ. Գելէչվիլին։

Բայց Անդրկովկասեան կոմիսարիատն ևս չդարմանեց դրութիւնը։ Ընդհակառակը, նա ինքը հէնց դարձաւ կուսակցական պայքարի առարկայ և բոլշեւիկների ձեռքին՝ պայքարի ուժեղ գէնք։

Ժողով։ Կոմիսարների Ռորհուրդը Ստ. Շահումեանին նշանակել էր Անդրկովկասի կոմիսար, և սա աշխատում էր յեղաշրջում առաջ բերել Բիֆլխում։ Բոլշեւիկները ձգտում էին օգտագործել զօրքը, որի մէջ նրանց ազդեցութիւնը օրէցօր աւելանում էր և որոնց գրգռում էին Անդրկ. կոմիսարիատի դէմ, որը, իբր Թէ, Անդրկովկասը անջատել էր Ռուսաստանից։ Փոխանակ բանակի մէջ վարելուն համակրանքից օգուտ քաղելով՝ Բիւրքերի դէմ պատւար կանգնեցնելու՝ Շահումեանը և իր ընկերները ճգնում էին գինուրութիւնը մանակից դարձնել Անդրկ. կոմիսարիատի դէմ մղած իրենց պայքարին և սաստիկանաբար ճակատից յետ էին քաշում զօրամասերը։ Այս հողի վրա, հոկտ. 20–ին, լքելով դիրքերը, դէպի Քիսլունք խուժեց հռչակաւոր 39–րդ դիվիզիան։

Ասենք, բանակը առանց այդ էլ չէր հետաքրքրւում ռազմաճակատով։ Նրա ուշն ու միտքը Ռուսաստանն էր, ուր «հող էին բաժանում»։ Ուստի առանց սպասելու վերջին հրամանատարութեան սահմանած կարգին, մասմաս, հազարներով ու տասնեակ հազարներով լքում էին դիրքերը, Թողնում բազմամիլիոն հարստութիւններ, ռազմամթերքի ու պարէնի անհաշիւ պաշար, մթերքներով լիքը պահեստներ և հրացանը գրկած՝ նետւում վագոններըը, չոապում հէնցի տունն՝ ճանապարհին, մորթելի պէս, աւերելով ու խժռելով ամէն բան։

Ահա մի–երկու քաստաՔղթեր, որոնք ցոյց են տալիս, հոկտեմբերեան յեղաշրջման հետեւանքով, կովկասեան ռազմաճակատում ստեղծւած դրութիւնը։ Կովկասեան բանակի հրամանատարը հետագրում է ճակատի ընդհանուր հրամանատարին, դեկտ. 25–ին. «Հնարաւոր առաջին կորպուսի նահանջի համար նշտորոշւած ժամանակամիջոցին, վերջինս ինքնագլուխ Թողնում է դիրքերը, և այս նահանջը սպառնում է ճակատը խզել մեր կացին։ Այս հանգամանքներում հայկական զօրամասերի ճակատ ուղարկելու յապաղումը և, իբրև հնարաւոր հետեւանք, երզնկայի գրաւումը ոչ միայն Քիւրթերի, այլ և քիւրդերի կողմից ինձ կը հարկադրէ, հաւանաբար, պարզել ամբողջ չորնաը, որով մենք անխուսափելիօրէն կը կորցնինք Քիւրթահայաստանը»։

1918Թ. յունւար 8–ին կովկասեան բանակի սպայակոյտը տեղեկագրում է. «6–րդ կորպուսը լքեց իր դիրքերը և ամբողջապէս քաշւեց դէպի Սարըղամիշ։ Այս պահուն, վերջինն գունդն է հեռանում և յուն. 13–ին ոչ մի գինւոր չէ լինի Շէյթան–Դաղից դէպի հարաւ, և այս կողմից ճակատը

բոլորովին կը մերկացուի։ Առաջին կորպուսն էլ մեծ մասով սկսել է չարժուիլ դէպի Քիլիւնջ։ Ես վախենում եմ, որ կորպուսի վերջին զօրամասերը կը Թողնեն երգնկան նշանակած ժամանակից առաջ։ Եւ մեր զօրամասերի հեռացումը այս կէտից և գրաւումը քիւրդերից ճակատագրական կերպով առաջ կը բերեն գինադադարի խախտում Քիւրդերի կողմից և ընդհանուր յառաջխաղացում ամբողջ ճակատում։ Կասկածից վեր է, որ երգնկայի շրջանի Քիւրդական գրաւման հետեւանքը կը լինի այն, որ մենք կը պարտպենք ամբողջ արեւմտեան ռազմաճակատը։ Թուրքահայաստանի Շրջ կորպուսը և կովկասեան 5րդ կորպուսը նոյնպէս ճակատից մեկնելու հարց են յարուցել։ Մեր զօրքերի հեռանալը արեւմտեան ճակատից, աչքի առաջ ունենալով կովկասեան բանակի ներկայ վիճակը, անխուսափելի կերպով առաջ կը բերէ մեր գրաւած Քիւրք հողամասերի պարպումը։ Ուրիշ խօսքով, երգնկայի շրջանի պարպումը հաւասար է ամբողջ Թիւրքահայաստանի պարպումին, այսինքն՝ նշանակում է կորցնել այն ամէնը, որ մենք ձեռք ենք բերել Թիւրքիայի դէմ մղած երեքամեայ յաղթական կռիւներով։ Այս պարագան իրաւունք է տալիս ինձ մի անգամ ևս խնդրելու, որ չտապով ուշադրէք հայկական զօրամասեր, որոնք հնարաւոր կը դարձնեն կայունացնել մեր դրութիւնը»։

Ռուս. 10–ին Ալաչկերտի կոմիսար Գվոզդեվը Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Ա. Խատիսեանին, ուղիղ հեռագրալարով, հետեւեալ ձեւով է պատկերացնում կացութիւնը. «Ղարաքլիսեան Թոդիում է Քշնամու յարձակումից առաջ դատարկած քաղաքի տպաւորութիւն։ Ճակատից հեռացող վերջին գունդը իր հետ տանում է շրջանի բոլոր հեմարկութիւնները, անգամ փոստն ու հեռագիրը։ Հրամանատարական կազմ չկայ։ կան մի քանի 150 անձանոթ դէատրներ։ տեղական բնակչութիւնն է պահում պարէնի պահեստները, դիւղական գոյքերը, հրանտու, ինժեներական և ռազմամթերքի պահեստներն ու վառօդաբանները։ Ճանապարհների կայանները լքուած են։ Դժբարութիւնից, մեր տեղական ուժերով պահւում է հեռագրական կապը։ Կոմիսարիատն ընդունել է Կղզ կորպուսի և հասարակական հիմնարկութիւնների անհաչիւ գոյքը։ Միայն ձիեր ընդունած են մի քանի հազար հատ։ Մենք անգօր ենք տեղաւորել Թոզնած հարստութիւնները։ Խիստ վախենում ենք արիւնոտ ընդհարումներից և ապագներութիւններից։ Քիւրդերն սկսեցին իրենց յարձակումներն ու թալանները դիւղերի, պահակախմբերի և մեկուսի երկթուղու վրա, որը հազիւ չնչում է։ Հեռագրական հաղորդակցութիւնը երեւանի հետ կորած է»։

Զօրորդ կորպուսի հրամանատարը հեռագրում է յուն. 13–ին. «Կորպուսի փոխադրական մասերը, կայանների զօրքերը, դիւերները, հիմնարկութիւնները հեռանում են անկարգ կերպով։ Անկարգութիւնները սաստկանում են օրէց օր։ Հայկական զօրամասերը ուժասպառուած են հիմնարկութիւնների և կայանների պահակութիւնից։ Առանց թիկունքից Թարմ ուժերի առաքման կարելի չէ պատասխանատու լինել հետեւանքների համար»։

«Ինուս գիւղորնները ահաբեկում են տեղացիներին (հայերին) և բռնաբնամբ ստիպում հեռանալ իրենց հետ», հեռագրում է կովկասեան բանակի սպայակոյտը։

Ռուս. 16–ին սպայակոյտից գրում են զօր. Նազարբեկեանին. «Ճակատի գրութիւնը ողբերգական է։ ամբացած չրջանների լքումը առաջ է բերում առանձնապէս ողբալի կացութիւն և ինձ հարկագրում է տալ հետեւեալ հրահանգները ամրութիւնների պահերին։ Կովկասեան բանակի գլխաւոր հրամանատարը հրամայում է ձեզ, որ, աչքի առաջ ունենալով

ռուս սպաների և զինուորների հեռանալը ճակատից՝ ամբացած չրշանների պահակութիւնը յանձնելք ազգային զօրամասերին:

Կարս–Մէրզիֆոնք երկաթուղագծի վարչութիւնը հետագրում է յունւ. 21–ին. «Երկաթուղային բրիգադի Կարս–Մէրզիֆոնք գծի վրա ծառայող ռուս զինուորները լքում են միլիոնաւոր ռուբլիներ արժող նիւթերը և կանդնեցնում շարժումը: Ինդրում ենք կազմել հայկական երկաթուղային զումարտակ և նրան փոխանցել այս բրիգադի և Կարս–Մէրզիֆոնք գոյքը»:*)

Սրանք պատահական օրինակներ են լոկ մի՛ օրերի ռազմաճակատի քայքայումը պատկերացնող առատ նիւթից: Իրապէս գրութիւնը անհամեմատ աւելի մռայլ էր: Ռազմաճակատը հալչում էր արևից տաքացած ձեան պէս. ռուս զօրքը խելայեղ՝ խուճում էր դէպի Քիկունք, Կովկասեան Լեռնաշղթայի մեւս կողմը:

Այս խուճուճը տեղի էր ունենում ցաւագին պայմանների մէջ, մասնաւորապէս մահմեդական չրշաններում: Անկասկած, Քիւրքերի ներչնչումով, Կովկասեան մահմեդականները աչխատում էին մի կողմից արագացնել ռուս զօրքերի փախուստը, մեւս կողմից՝ խլել նրա դէնքն ու ռազմամթերքը: Զինուրութեան հողի վրա պատահում էին արիւնոտ ընդհարումներ ու ճակատամարտներ նահանջող ռուս զօրամասերի ու Քուրք ազատարկութեան մէջև: Այդ կարգի արիւնոտ դէպքերից առանձնապէս մեծ յուզում առաջ բերից Շամքորի կոտորածը, յունւ. 8–10–ին:

Ցունւ. 8–ին, ճակատից հեռացող բազմաթիւ զինուորական գնացքներ հասն–կանգնեցին Շամքոր կայարանի մօտ: Ճանապարհը կորած էր և առաջ երթալը անհնար: Գնացքները բերնի բերան լեցուած էին զինուորներով, ձիերով, կառնացով ու երեխաներով, Քնդանօթներով, ռազմամթերքով, մեծաքանակ փամփուշտով ու մթերքով: Զինուորները հարուստ ասար ։ին առանում իրենց հետ:

Եւ, յանկարծ, գիշերւայ մթութեան մէջ, ամէն կողմից սկսուց հրադանձգութիւն: Գնացքները ենթարկուցին Քնդանօթային կրակի: Առաջ եկաւ աննկարագրելի իրարանցում: Զինուորներն էլ, իրենց հերթին, դրաւեցին դիրքեր և գործի դրին գնդացիրները: Ցետի ունեցաւ յուսահատական կռիւ: Ցարձակւողներին յաջողուց վառել գնացքների մի մասը: Զինուորները անձնատուր եղան:

Պարզուց, որ յարձակւողները եղել են վրացի Աբխազաււի դրաշապատ գնացքը, զօր. Մազուովի «Վայրենի դիվիզիանեց և հազարաւոր դինւած քուրք խուժան Գանձակի Մահմ. Ազգային Խորհրդի դեկավարութեամբ:

Բոլոր գնացքները խուզարկուցին ու թալանուցին: Զինուորներից խլուց ամէն ինչ — դէնք, ռազմամթերք, պարէն, մանաւանդ գոյքը. անգամ վրաների հագուստը հանեցին քուրք հրոսախմբերը: Գրաւուած Քնդանօթներն ու դէնքերը սեփականացրեց Գանձակի Մահմ. Ազգ. Խորհուրդը: Մեծ չուքով ասպրը տարուց Գանձակ: Քուրք ազ.–յեղափոխական պարագլուխ

*) Կովկասեան ճակատ այդ ժամանակւայ վիճակի մասին տես՝ ի մէջի այլոց, և զօր. Ղօրղանձեանի գիրքը:

Ասան բէգ Սաֆիքէւրդսկին, հեծած առջևի քնդանօքը՝ յաղթական մուտք գործեց Գանձակ։

Ցետագային յայտնի դարձաւ, որ այդ յարձակմանը անմասն չէին և վրացի վարիչներից ոմանք։ Ցունւ. 6-ին Ն. Ռամիչվիլին զեկուցանում էր այդ մասին Անդրկ. հոմխաբրատի Նիտին, թէ՝ «Անհրաժեշտ էր գինաթափել ծարսկի կուղդից մեկնած զօրամասը և գէնքը յանձնել վրացական կողմնակին։ Ուղարկեց մի զրահապատ և մի զօրամաս... Բոլոր միջոցները ձեռք են առնւած»։ Իսկ Զուղկիլին մատնանշում էր «Աբխազաւայի և իր զօրամասի կատարած տխուր դերը։ Զինաթափում չէր այդ, այլ գինւորների թալան։ Դժբախտ ու տանջւած, իրենց տան կարօտը քաշող մարդկանցից խլում էին ամէն ինչ, անգամ կօշիկները։ Եւ հէնց տեղն ու տեղն էլ ծախում էին։ Աւազակախմբերը ծախում էին գէնքերը։ Ինչ որ գաբզելի բան էր տեղի ունենում»։)

Ցունւ. 26-ին, Երկրային կենտրոնում, Նոյն Զուղկիլին յայտարարեց. «Իսկ ինչ վերաբերւում է Շամքորի դէպքերին, ես յայտարարում եմ, որ ընկ. Նոյ Ռամիչվիլին որոշ կապ ունի նրանց հետ։ Միայն մի քանի օր այդ տխուր դէպքերից առաջ ընկ. Ռամիչվիլին, ինձ հետ ունենալ խօսակցութեան մէջոցին, ասում էր, որ գինաթափութեան համար ամենայարմարը ինքը համարում է Աբխազաւայի զօրամասը։ Իմ ցուցմունքները, թէ Աբխազաւան այլ նպատակի համար պահանջւած վարկը չունի, բատ երեւոյթին, չզգնեցին, և մենք տեսնում ենք, որ Աբխազաւան իր զօրամասով ուղարկւել է այդ նպատակով։ Ըստ երեւոյթին, այդ ուղարկւելը չի եղել առանց ընկ. Ռամիչվիլիի մասնակցութեան»։

Ռուս զօրքերի փախուստի հետեւանքով ամէն կողմից պահանջում էին հայկական զօրամասեր։ Պարզ էր դառնում, որ ճակատի պահպանութեան գործում այսուհետև առաջին տեղը բռնելու էին հայերը։ Կարո՞ղ էին նրանք կատարել այդ պատմական դերը։ Ի՞նչ վիճակ ունէին հայերը գինւորական տեսակէտից։

Դեռ հոկտեմբերեան յեղաշրջումից առաջ, Թիֆլիսի և Պետրոգրադի հայկական կազմակերպութիւնները հարց էին յարուցել, որ ժամ. կառավարութիւնը հրահանգէ արեւմտեան ճակատի զօրամասերում գտնւող հայ գինւորներին փոխադրել կովկասեան ճակատ և կազմակերպել հայկական զօրամասեր։ Արեւմտեան ճակատում, այն ժամանակւայ հաշւով, կար չուրջ ութսուն հազար հայ գինւոր։ Այդ քանակութիւնը՝ միացած կովկասում գտնւող զրեթէ նոյնչափ հայ գինւորների հետ, լաւ կազմակերպւած ու մարզւած, տրւած հմուտ հրամանատարութեան ձեռքը, կարող էր վճռական դեր կատարել Թիւրքիայի դէմ։

Զինւորական նախարարն ու բարձր հրամանատարութիւնը ընդառաջ գնացին այս առաջարկութեան և կարգադրեցին հայ գինւորներին համախմբել Թիւրքական ռազմաբեմում, իսկ յուլիս 2 ու 11 հրամաններով կովկասեան ճակատի գլխաւոր հրամանատարը արտօնեց հայկական հրացանա-

*) «Заря Востока», 1927г. янв. 8, № 6.

ձեզ գումարտակները վերածել գնդերի։ Կարճ ժամանակում կազմվեցին վեց հայկական գնդեր՝ իւրաքանչիւրը բաղկացած 2 գումարտակից։

Արագ թափով գարգացող դէպքերը, սակայն, անհրաժեշտ դարձրին հայկական ուժի խոշոր զինուորական միութիւնների առնելուն, և հոկտեմբերին Հայոց Ազգային Խորհուրդը նոր դիմում արաւ՝ խնդրելով հայկական զօրագնդերի թիւը հասցնել 8-ի, իւրաքանչիւր գունդը դարձնել 3 գումարտակից, և այդ 8 գնդերը բաժանել չորական գնդանոց երկու դիվիզիաների, մէկ բրիգադ այրուձիով, 15 մարտկոց հրետանիով ու յարակից տեխնիկական մասերով։

Կառավարութեան ոչինչ չէր մնում, բայց նրան բաւարարել այդ դիմումը, քանի որ ռազմամկատի փլուզումը ստանում էր աղէտաւոր ձևեր, և հայկական զօրամասերը կարող էին որոշ չափով մեղմացնել դրութիւնը։ 1917 թ. դեկտ. 13-ին, կովկասեան բանակի գլխաւոր հրամանատարը № 136 հրամանով արտօնեց կազմել հայկական կորպուս՝ հրամանատար նշանակելով ռուսական բանակի լաւագոյն զինուորականներից մէկին՝ զօր. Թովմաս Նազարբէգեանին և սպայակոյտի պետ՝ զօր. Վիչինկինին։

Սկսուեց կազմակերպական եռուն աշխատանք։ Ազգային Խորհուրդը իր մէջից կազմեց առանձին մի մարմին Սէմ. Մամիկոնեանի գլխաւորութեամբ, որ զբաղւում էր կորպուսի գործերով։ Զօր. Նազարբէգեանի մօտ զինուրական նախարար Դոնսկոյի կողմից նշանակուեց յատուկ կոմիսար՝ Դրօն և վերջինիս օգնական՝ Սարգիս Մանասեանը։ Հետզհետէ հաւաքուեցին ռուս բանակի հայ սպաները ու զինուորները և իրար յետևից վերակազմուեցին հին մասերն ու կազմեցին նորերը։ Ազգ. Խորհրդին և կորպուսի հրամանատարութեան գալիք օժանդակութիւն էր ցոյց տալիս և Հայ Զինուորական Միութիւնը սպայ Արսէն Շահմազեանի նախագահութեամբ և մի շարք եռանդուն սպաների անդամութեամբ—Դ.Տէր-Օհանեան, Տ.Անէեան և այլն։

Հայկական կորպուսի կազմակերպութեան գուգընթաց զօրահաւաքման ու զինուրական ուժերի կազմակերպումի գործով զբաղւած էր և արեւմտահայութիւնը, որը, ասելի բան ուրիշը, սեթևեթում էր կազմալուծումից և ձիլոցներ էր խորհում ճակատի փլուզումի առաջն առնելու համար։

Արեւմտահայ բիւրօի նախաձեռնութեամբ, 1917 թ. դեկտեմբերի ընդհզդեղերին, Թիֆլիսում, գումարուեց արեւմտահայութեան ամբողջների ու քաղաքական հոսանքների ներկայացուցիչներից ու գործիչներից կազմւած մի խորհրդակցութիւն, որը մանրամասն քննութեան առնելով ճակատի պաշտպանութեան խնդիրը՝ որոշից իր վրա առնել արեւմտահայկական մարտական ուժերի կազմակերպումը։ Այդ նպատակով ընտրւեց յատուկ մի մարմին՝ Ազգահովութեան Խորհուրդը, որի մէջ մտան՝ Վահ. Փափազեանը (նախ.), Սեպուհը, Ա.Թերզիպաշեանը, Ճ.Տէր-Զաքարեանը, և Ծ.Մերտիրոսեանը։ Խորհրդակցութիւնը որոշից նաև յայտարարել պարտադիր զօրակոչ բոլոր արեւմտահայերի համար։ Կազմելու էր արեւմտահայկական առանձին դիվիզիա։ Ենթադրւում էր առեղծել 15–20 հազարանոց մի զօրամաս։

Պէտք է ասել, որ դեռ այս որոշումից առաջ, դանազան վայրերում,

արգէն գոյութիւն ունէին զուտ արեւմտահայկական զօրամասեր: Վանում կար Վանի կուռը՝ Տ.Բաղդասարեանի հրամանատարութեան տակ՝ Գրիգոր Բուլղարացու ու Լեւոն Շաղոյեանի անմիջական գործակցութեամբ: Նոյնպէս Մուշի շրջանում գործում էր Սասունի գունդը Մանուկի և Մուշեղի զեկավարութեամբ: Ալաշկերտում կազմւած էին տեղական զօրամասեր Սմբատի ջանքերով: Երզնկայի շրջանում էր Մուրատը իր գործակիցների հետ, Բաբերդում՝ Մեսրոպը և այլն:

Ապահովութեան Նորհրդի առաջին աշխատանքը եղաւ՝ համախմբել այս բոլոր ուժերը և կապել իր հետ: Այդ նպատակով մարդիկ ուղարկեցին չբլաններըը, և մասամբ յաջողուեց ցաք ու ցրիւ եղած զօրախմբերի մէջև հաստատել որոշ կապ:

Ապահովութեան Նորհուրդը ձեռնարկեց արեւմտահայ դիվիզիայի կազմութեան: Այդ գործին ջերմ աջակցութիւն ցոյց տուին կովկասի բարձր հրամանատարութիւնը, յանձին զօր. Լէբեդինսկու, գնդ. Զենկեւիչի, գրաւած վայրերի ընդհանուր նահանգապետութիւնը, մասնաւորապէս բժ. Ե. Զաւրեանը և դաշնակից պետութիւնից Թիֆլիս գտնուղ ներկայացուցիչները: Այս վերջինները Ապահ.Նորհրդին տրամադրեցին և որոշ գումար —մի քանի միլիոն ռուբլի — կազմակերպչական նախնական կարիքների համար:

Ապահ. Նորհուրդը անմիջապէս դիմեց զօրահաւաքի, ամէն կողմ ուղարկեց գործակալներ, կարճ ժամանակում կարողացաւ առաջ բերել կենդանի ոգեւորութիւն և հիմքը դրեց մի չարք զօրամասերի, որոնց համար առացաւ պահանջւած հագուստը, զէնքը, պարէնաւորումն ու նիւթական միջոցները:

Ապահ. Նորհուրդը իր բոլոր կարեւոր ձեռնարկները կատարում էր համախորհուրդ Ազգային Նորհրդի հետ: Երկու Նորհուրդների մէջև տիրում էր կատարեալ ներդաշնակութիւն, և Ապահ. Նորհուրդն ու Ազգ. Նորհրդի զինուորական մարմինը գործում էին ձեռք ձեռքի տւած: Որոշ անհամաձայնութիւն առաջ եկաւ արեւմտահայ դիվիզիայի հրամանատար նշանակելիս. Ապահ. Նորհուրդը կամենում էր այդ պաշտօնին կոչել Անդրանիկին՝ օգտւելու համար նրա քէ՛ հայերի մէջ և քէ՛ դուրսը վայելած հմայքից: Ազգ. Նորհուրդը դէմ էր արտայայտւում այդ ձեռնածութեան՝ առարկելով, որ Անդրանիկը չի կարող կառավարել դիվիզիայի պէս մի խոշոր զօրամաս, որի համար, բացի անձնական քաջութիւնից, պահանջւում էր և մասնագիտական պատրաստութիւն, որից զուրկ էր Անդրանիկը: Սակայն, Ապահ. Նորհրդի պնդումի վրա Ազգ. Նորհուրդը տեղի տւեց, և Անդրանիկը նշանակւեց արեւմտահայ դիվիզիայի պետ՝ առաջուց, բժ. Զաւրեանի միջնորդութեամբ և Գ. Լեւոնեանի ջանքերով ստանալով գաւրեակ–զօրավարի աստիճան:

Արեւմտահայ դիվիզիան մտցւեց Հայկական կորպուսի մէջ, իբրև նրա մի մասը, և այսպէսով, ի վերջոյ, Հայկական կորպուսը ձեւակերպւեց ու ստացաւ հետեւեալ կազմը.

Կորպուսի հրամանատար՝ զօր.Թ.Նազարբէգեան, սպայակոյտի պետ՝ Վէշհնակի:

Առաջին դիվիզիա — 4 գունդ՝ լեռնաքանչիւրը 3–ական մարտկոցով և 1 հրետանիի բրիգադ 6 մարտկոցով· հրամանատար՝ զօր· Արեշեան։

Երկրորդ դիվիզիա — նոյն կազմով, հրամանատար՝ գնդ· Սիլիկեան։

Այրուձիի բրիգադ — երկու գունդ չորսական հարիւրեակով և մէկ ձիաւոր հրետանի· հրամանատար՝ գնդ· Ղորղանեան։

Արեւմտահայ դիվիզիա· Ա· բրիգադ — Էրզրումի գունդ՝ 2 գումարտակ, Երզնկայի գունդ՝ 2 գումա·, 2 լեռնային մարտկոց, ձիաւոր գունդ՝ 3 հարիւրեակ· Բ· բրիգադ — Խնուսի գունդ՝ 2 գումա·, Ղարաքիլիսայի գունդ՝ 2 գումա·, 2 լեռնային մարտկոց· Գ· բրիգադ — առաջին Վանի գունդ՝ 2 գումա·, 2 լեռնային մարտկոց, Զէյթունի ձիաւոր գունդ՝ 3 հարիւրեակ· Դիվիզիայի հրամանատար՝ զօր· Անդրանիկ, սպայակոյտի պետ՝ գնդ· Զեննէվիչ։

Տեղական զօրամասեր· — Լոռիի, Շուշիի, Ախալքալաքի և Ղազախի գնդերը՝ 2–ական գումարտակներով և Նուխիի, Ախալցխայի, Լոռիի, Իգդիրի և Խանասօրի գումարտակները։

Ցարակից մասեր· — բերդային մասեր, բերդային հրետանի, կապի ու հաղորդակցութեան մասեր, պայքուշիկ, առողջապահական, պաբենաւորման, հրետանիի, երկաթուղային և այլ մասեր*)։

Այս զօրամասերին անցաւ ռուս բանակի ժառանգութիւնը հայկական հակառուսմ, այլ և, ապագային, հայ հանրապետական բանակի կորիզը կազմելու պատիւը։

---

*) Հայկական կորպուսի մասին տե՛ս զօր· Ղորղանեանի վերնիչուած գիրքը, այլ և **A. Poidebard «Rôle Militaire des Arméniens». 1920 Paris**· և **Commandant M. Larcher, «La Guerre Turque dans la Guerre Mondiale», 1926, Paris**·

ԳԼՈՒԽ Զ·

ԶԻՆԱԴԱԴԱՐ ԵՒ «ՄՈՒԽ ՁԵՌԻ» ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Ռուս բանակի քայքայումը և Քիկունքում կատարուող դէպքերը, բնականաբար, չէին կարող վրդիպել Քիւրքերի ուշադրութիւնից: Թիւրք հրամանատարութիւնը բոլորովին այլ հետանկարի առջև էր կանգնած· ռուս բանակը պատրաստւում էր, 1918 Թւի սկզբին, անցնելու ընդհանուր յարձակման՝ անգլիացիներին միանալու ծրագրով, և Քիւրքերը ոյժ չունէին դիմադրելու: 1917 Թւի սարեւելքին Քիւրքերի արեւելեան բանակը բոլորովին կազմալոյծ ու թարոյալքւած վիճակի մէջ էր՝ անընդունակ ռազմագործական լուրջ խնդիրներ լուծելու: Եւ, յանկարծ, ոչ միայն յարձակումն է կանգնեցւում, այլ և ճակատը սկսում է արագօրէն մերկանալ: Թիւրք զէկավարների առջև բացւում էին նոր, արբեցնող հորիզոններ:

Նոյնմ· 17–ին կովկասեան ռուս բանակի հրամանատարը Քիւրքական 3րդ բանակի հրամանատար Ֆերիկ–Վէհբի փաշային նամակ ուղարկեց գինադադար կնքելու առաջարկութեամբ: Նոյն օրերին, բոլշեւիկների նախաձեռնութեամբ, գինադադարի բանակցութիւններ էին սկսւած և ռուս–աւստրեւ գերման ռազմաճակատում: Անդրկ·կոմիսարիատը, յեղափոխական կենտրոնի ու հրամանատարութեան համաձայնութեամբ, ընդունեց Քիւրքական առաջարկը և ռազմաճակատ ուղարկեց 5 հոգինոց մի յանձնախումբ — 2 ռուսներ հրամանատարութեան կողմից և Ա· Ջամալեան, վրացի Թևզայա և ռուս Սմիրնովը, որպէս Անդրկ· կոմիսարիատի ներկայացուցիչներ: Հանդիպումը երկու պատւիրակութիւնների միջև տեղի ունեցաւ դէկտ·2–ին, Երզնկայում, իսկ դէկտ· 5–ին ստորագրուեց գինադադարի համաձայնութիւնը, ըստ որի գինւորական գործողութիւնները վերջ էին գտնում կովկասեան ամբողջ ռազմաճակատի վրա՝ Սև ծովից մինչև Վանի լճի հարաւային եզերքը, կողմերը պարտաւորւում էին գինւորական ընոյթ կրող որև է գործողութիւն չանել, զօրքերի տեղափոխութիւն կամ քացում չկատարել և մնալ գինադադարի պայմաններով նախատեսւած դիրքերում: Եթէ կողմերից մէկն ու մէկը, մինչև հաստատեան կնքումը, վճռէր գինադադարը խախտել, պարտաւորւում էր միւս կողմին իմաց տալ 14 օր առաջ: Իսկ եթէ գինադադար կնքէր նաև կենտրոնական պետութիւնների և Թուրաստանի միջեւ, նրա բոլոր պայմանները պէտք է լինէին պարտադիր կովկասեան ճակատի համար ևս: Եւ որովհետեւ· դեկտ· 5–ին լուր էր ստացւել, որ

նախորդ օրը զինադադար էր կնքել և Թուսաստանի ու կենտրոնական պետությունների միջև, պատերազմական գործողությունները կանգ առին ոչ միայն կովկասեան, այլ և ամբողջ պարսկական գծի ու Սև ծովի վրա: Հաստատուեցին 5 խոսն մարմիններ՝ հսկելու համար զինադադարի պայմաններէն գործադրութեան վրա: Անդրկ. Կոմիսարիատը իր քաղբ մասին անմիջապէս տեղեկացրեց և Միջազգային անգլիական հրամանատարութեան ու Թիֆլիսի դաշնակից ներկայացուցիչներին:

Զինադադարի կնքման պահուն, ռուս–Թուրքական ռազմաճակատը տարածուում էր աւելի քան 500 կիլոմետր երկարութեամբ—Սև–ծով—Քելկիթ—Երզնկա—Թորս—Վան ուղղութեամբ: Բետագային, Ուրմուլուի իրանաբարութեան ժամբ և Սևերի դաշնագրով հայերին յանձնուելիք ամբողջ Հայաստանը գտնուում էր ռուս բանակի գրաւման չրջանում:

Զինադադարի կնքումից յետոյ, 1918թ. յունս. 1–ին, կովկասեան բանակի հրամանատար զօր. Օդիշելիձէն Վեհիր փաշայից ստացաւ մի նոր նամակ, որով, յանուն Թուրքական բանակի սպարապետ Էնվէր փաշայի, հարցնում էր, Թէ ի՞նչ միջոցով կարելի է վերականգնել յարաբերութիւնները կովկասի կառավարութեան հետ ու հաշտութիւն կնքել երկու երկրների միջև: Ծուսս. 15–ին Վեհիր փաշան հաղորդեց, որ կենտրոնական պետութիւնների բլեսս–Լիտովսկ հաւաքած պատգամաւորները պատրաստ են ճանաչելու Անդրկովկասի անկախութիւնը, և որ վերջինս, ամենայն վստահութեամբ, կարող է ուղարկել իր ներկայացուցիչները:

Անդրկ. Կոմիսարիատը, յեղափոխական կենտրոնի և ազգային խորհուրդների ներկայացուցիչների հետ միասին, քննելով Վեհիր փաշայի առաջարկը՝ պատասխանեց, Թէ ինքը պէտք ունի խորհրդակցելու Թուսաստանի ուրիչ ինքնավար չրջանների հետ ևս և չի հաւանիլ կը յայտնէ իր վերջնական որոշումը: Միաժամանակ կոմիսարիատը Քիւրքերի առաջարկութեան մասին իմացրեց խորհրդային իշխանութիւնը չճանաչող Ուկրաինայի և Հարաւ—Արեւելեան Դաշնակցութեան կառավարութիւններին՝ հրաւիրելով նրանց խորհրդաժողովի, փետրս. 1–ին, Թիֆլիսում: Սակայն, Ուկրաինական կենտրոնական Ռադայից պատասխան չստացուեց, իսկ Հարաւ–Արեւելեան Դաշնակցութեան կառավարութիւնը Թէև խորհրդաժողովի մասին մանրամասներ չտեղեկացրեց, բայց ներկայացուցիչ չուղարկեց, որով Անդրկովկասը ստիպուած էր մենակ վճռել պատերազմի և խաղաղութեան հարցը: Եւ փետրս. 1–ի նիստում, Անդրկ. Կոմիսարիատը, համախորհուրդ յեղափոխական կենտրոնի, ազգային խորհուրդների և բանակի հրամանատարութեան հետ, որոշեց տեղեկացնել Վեհիր փաշային, Թէ ինքը պատրաստ է սկսելու հաշտութեան բանակցութիւնները և խնդրում է հաղորդել տեղն ու վայրը, ուր կարող են հանդիպել իրար երկու կողմերի պատասխանատուները: Նոյն նիստում որոշեց, որ հաշտարար պատասխանութեան կազմն ու հրահանգները կը մշակէ Սէյմը, որ պիտի բացուէր մի քանի օրից յետոյ: Փետրս. 3–ին հեռագրեց Վեհիր փաշային համաձայնութեան մասին, իսկ փետրս. 10–ին

ստացել Գոլոփ պատասխանը, որով հաշտութեան բանակցութիւնների վերջ նշանակւում էր Տրապիզոնը:

Այս բոլոր բանակցութիւնների ընթացքին Թիւրք հրամանատարութիւնը հանգիստ նստած չէր, այլ գանւում էր տենդոտ գործունէութեան մէջ: Հանկառակ ձիւնազարդ պայմանների, կատարւում էին թիւրքական զօրամասերի տեղափոխութիւններ ու լրացումներ. արեմտեան ճակատներից չտապով Թարմ զօրամասեր էին բերւում: Ռազմաճակատի ամբողջ տարածութեան վրա, մերձաւոր թիկունքում, նկատւում էին չտասլ պատրաստութիւններ պատերազմական նոր գործողութիւնների համար: Գարգ էր. թիւրքերը մտածում էին օգուտ նպաստաւոր ղրութիւնից՝ իրականացնելու համար դեռ պատերազմի սկզբին նախագծած ծրագիրները. Կովկասի դռները իրենք իրենց բացւում էին նրանց առջև:

Այս ծրագիրները Կովկասի ազգաբնակութեան որոշ մասի կողմից էլ դիտւում էին խանդավառութեամբ. կովկասեան մահմեդականութիւնը պատրաստ էր գրկաբաց ընդունելու թիւրքական բանակը: Հին ուժխմի օրերի զգացած ու լուռ թիւրքասիրութիւնը այժմ ստանում էր հրապարակային արտայայտութիւն, և կովկասեան մահմեդականների ու թիւրքերի ևթէ ոչ պաշտօնական գործակցութիւնը, գէթ փոխադարձ համակրանքը այլ ևս անհերքելի փաստ էր ամենքի համար: Այդ փաստը երևան էր գալիս ո՛չ միայն յեղափոխական ու կառավարական հիմնարկութիւնների մէջ, ժողովներում ու մամուլում, այլ և չօշափելի գործերով, որոնց շարքին, առաջին տեղը բռնում էին, անկասկած, այն լայն մահմեդական շարժումները, որոնք յեղափոխութեան յաջորդ օրն իսկ Թաւրիզ տարածուեցան և Աղբրկովկասի զանազան կողմերում և յարաճուն զարգանալով՝ անբլսանութեան ու քաոսի մատնեցին ամբողջ երկիրը: Այդ շարժումները ներշնչուած էին թիւրքերի կողմից, սակայ կին բերւում ու հրահրւում թիւրք գործակալների ձեռքով և նպատակ ունէին դժուարութիւններ հանել ռուսական, իսկ յետոյ՝ հայկական զօրքերի առջև:

Մահմեդական խռովութիւնները, ազգակային յարձակումները գինւորական դնացքների, պարենային խմբերի, խաղաղ հայ ազգաբնակութեան և իրենց ծննդավայրը վերադարձող զաղթականների վրա՝ սկսեցին յեղափոխութենից անմիջապէս յետոյ և սաստկացան, մանաւանդ, մայիս ամսին: «Ինչ որ մի մուճ ձեռք, գրում էր «Հորիզոն»-ը մայիս 19-ին, պատերազմի ու խռովութեան սերմեր է փորձում ցանել հայ և թուրք ժողովուրդների մէջ... Երբ օդը յագեցած է գազերով, հարկաւոր է ծայր աստիճանի զգոյշ լինել և կամ չձգել այնտեղ, թէ չէ պայթուցը անխուսափելի կը դառնայ»:

«Մուճ ձեռքին», այսինքն Թիւրքիային ձեռնտու էր խռովութիւնը: Եւ ահա նրա գործակալների ղրդումով, այստեղ ու այնտեղ, սկսում են առաջ դալ «պայթիւններ»: Շարժումներ են տեղի ունենում Կարսի, Երևանի, Գանձակի, Էրզրումի չրջաններում: Խռովութիւնների ալիքը տարածւում է ամէն կողմ: Երկրի բոլոր ծայրերից ու ճակատից Թիֆլիս են տեղում հեռագրներ կատարուող անկարգութիւնների և հակակառական քայլերի մասին:

Մայիս 9-ին Ալեքսանդրապոլի գինուորական գործադիր կոմիտէի նախագահ Գրեգորովը հեռագրում է Օգոկոմի նախագահ Խաբլամովին, որ Քուրքերը գողացել են պահակախմբի զէնքերը, և այդ պատճառով մի վաշտ գինուորներ խուզարկել են Քուրքական Քաղը:

Մայիս 13-ին Ալեքսանդրապոլի գաւառական կոմիտասը 101րդ երկրապահ հարիւրեակի գինուորների ու մէկիցիոների հետ խուզարկում է Կարսի չրջանի Օղլի–Օղլի գիւղը և բռնում 2 սայլ՝ 7 արկղ պետական հրացան ու փամփուշտ: Քուրք գիւղացիք կրակում են և վիրաւորում մի գինուոր:

Մայիսի առաջին երկու–երեք չաբաթների ընթացքում բազմաթիւ յարձակումներ եղան Օղնուտ—Երզնկայի չրջանի և Հաւնի հայ գիւղերի վրայ: Յարձակման ու թալանի զոհերը, մեծ մասամբ, գաղթականները կամ գինուորական պահեստներն ու կայանները էին:

Մայիս 29-ին քիւրդերը յարձակուեցին Սուուկ Սուի գօրակայանի վրայ. եղաւ բուռն կռիւ:

Յունիս 1-ին յարձակման ենթարկուեց Գաւրիչամիի կառավարական պահեստման խումբը: Յունիս 8-ին քիւրդերը յարձակուեցին կազակների վրայ Բայազետի մօտ: Յարձակումներ եղան Արագածի չրջանում, Նոր-Բայազետում, Սուրմալուում...

Յունիս 1—2-ին, Գեաւրիչամիի մօտ սպանուեցին 3 հայեր, վիրաւորուեց մէկը, գչուեց 80 թեռնակիր եզ, 2 ձի:

Յունիս 2-ին, Արհաջ գիւղի մօտ Վան վերադարձող 50–60 գաղթականներ կողոպտուեցին քիւրդերից, սպանուեց մի մարդ, գչուեց 60 եզ և 40 այլ անասուններ:

Յունիս 6-ին Արծափի և Մոսունի միջև քիւրդերը մորթեցին 6 հայեր:

Յունիս 15-ին 300 քիւրդեր գչեցին իգդիրցիների անասուինները՝ սպանելով մէկ և վիրաւորելով 9 մարդ:

Յունիս 14-ին քիւրդերը գչեցին դամբլուցիների տաւարը՝ սպանելով ու վիրաւորելով մի քանի հայեր:

Զանազան տեղեր յարձակման էին ենթարկուում երկիր վերադարձող գաղթականները կամ թիկունք մեկնող գինուորները:

«Օգուտով ժամ. կառավարութեան ժամանակաւոր թուլութիւնից և պրովոկացիոն մութ ուժերի դրդումից, գրում էր յունիս 8-ին «Հորիզոն»-ը, Սուրմալուից Հայոց Զոր ու Հայոց Զորից մինչև Մամախաթուն քրդական աւազակաբարոյ, մինչև առաջները գինուած հրոսակմբերը յարձակուում են խաղաղ բնակչութեան վրա, կողոպտում են, վիրաւորում ու սպանում...Չնչ քաչուում անգամ գինուորների ու պարէնատար գօրամասերի վրա էլ յարձակւելուց»:

Ի հարկէ, կարելի է ասել, որ քրդական աւազակութիւնները առաջ էլ սովորական երեւոյթ էին և քիւրքական սադրանքներով չպէտք է բացատրել, բայց փաստը ցոյց է տալիս, որ աւազակութիւններն ու յարձակումները կատարւում էին, մեծ մասամբ, ռազմավարական նչանակութիւն ունեցող վայրերում, գաղթականների վերադարձի ճանապարհների վրա, գօրքի քիւնքում: Դժւար չէր տեսնել, որ այդ չարժումների ունէն ներքին ծրագիր

և ուղղած են, ամենից առաջ, պատերազմին աջակցող ուժերի, և կազմա-
կերպութիւնների դէմ:

Նման դէպքերը յուզում էին հանրային միտքն ու կառավարական
շրջանները: Տարածւում էին հազար տեսակ լուրեր, որ իբր Քէ, Կովկասի
Թուրքերը չտապով գինւում են, որ նրանք պատրաստում են մխանալու
Քիւրքերին, որ Քիւրքերն արդէն որոշել են գրաւել Կովկասը և այլն և այլն:
Իշխանութիւնը անգօր էր իրական դարման հասցնելու: Նա, աւելի չուտ,
աշխատում էր ծեփել աւելի ու աւելի բացող ճեղքը կամ չտեսնել ձեւանալ
օրը ցերեկով կատարւող դէպքերը:

Ապրիլ 24-ին, Անդրկ. Առաձգին կոմիտէն քննեց Թուրքերի գինման
լուրերը և լսելով Թուրք ներկայացուցիչներին՝ եկաւ այն եզրակացութեան,
որ դրանք անհիմն բաներ են ու որոշեց այդ մասին հաղորդել հասարակու-
թեան: Որոշեց նաև ուսա-հայ-վրացի-Թուրք խառն պատւիրակութիւններ
ուղարկել այն վայրերը, ուր տեղի կունենան միջնեթնային խռովութիւններ:
Բացի այդ, կարգադրեց արգելել քաղաքացիներին գինւորական զէնք կրել:

Նոյն հարցը, քիչ յետոյ, մայիս 12-ին, քննեց և Առաձգին կոմիտէին
Ձէյ գործող խորհրդակցութեան և գինւորական ու բանւորական խորհուրդ-
ների պատգամաւորների խառն նիստում, Ալրլամովի նախագահութեամբ:
Այս վերջինը հաղորդեց, որ զանազան վայրերից յուզումնալից լուրեր են
հասնում ազգաբնակութեան գինւելու մասին և որ անհրաժեշտ է միջոցներ
ձեռք առնել երկիրը միջնեղային կուիւների սպառնալիքից փրկելու համար:
Խորհրդակցութիւնը, այս անգամ, հաստատեց գինման փաստը և որոշեց՝
1) հրատարակել ուսներէն և տեղական լեզուներով կոչեր՝ բացատրելով
ժողովրդին գինման վնասակարութիւնը, 2) չրջաններն ուղարկել պատգա-
մաւորներ և պրովոկացիայի առնչ առնել. 3) հրատարակել օրէնք՝ զէնք
կրելու իրաւունքի մասին. 4) հիմնել հաշտարար մարմիններ՝ հասարակու-
թեան մէջ առաջ եկող Թիւրիմացութիւնները վերացնելու համար. 5) արգե-
լել ինքնակամ խուզարկութիւնները, 6) պատժել սուտ լուրեր տարածողնե-
րին, 7) հիմնել յատուկ մարմին ազգային հողի վրա ծագող վէճերը քննելու
համար:

Նշանակում է պաշտօնապէս հաստատւում էր, որ Թուրքերը գինւում
են: Հաստատւում էր նաև, որ արգելւած միջոցներով պետական զէնք են
ձեռք բերում ու փոխադրում. այդ նպատակով յարձակումներ են կատարում
պետական պահեստների ու կայանների վրա: Նման մտանհանգստութիւնը սաս-
տիկ վրդովում էին մահմեդականներին: Նրանք պնդում էին, որ այստեղ
գործում է հայկական պրովոկացիան: Կատարւող խռովութիւններն ու հա-
կապետական շարժումները բարկում էին հայերի, մանաւանդ, Քիւրքահայ
գաղթականների վրա:

Այսպէս, Բագւի Մահմեդական կոմիտէն, մայիսին, հեռագրեց
Մոսկւա, համառուսական մահմեդական համագումարին, Քէ՝ «վերջերս
Բագւում, Կարսում, Երեւանում և Կովկասի այլ քաղաքներում եռանդուն
պրովոկացիա է արւում մահմեդականների դէմ և գրոյցներ տարածւում,

որ, իբր Քէ, մահմետականները փութով գինւում են կառավարութեան և քրիստոնեայ բնակչութեան դէմ ոտնձգութիւններ անելու մտադրութեամբ: Որոչ ծրագրով կազմակերպւած և գործադրւող զրգռումի հետեւանքով՝ մի քանի օրուայ ընթացքում, Ախալցխայում, Կարսում և Թիւրքիայից գրաււած վայրերում ոտնձգութիւններ են կատարել խաղաղ մահմետականների նկատմամբ: Բացու քաղաքն ևս գտնւում է պրովոկատորների զգալի գործունէութեան սպառնալիքի տակ: Այդպիսի խառնակիչ գործունէութիւնը կարող է տալ վատ հետեւանքներ Քէ՛ մահմետականների և Քէ՛ հովկասի ու նոր ինուասատնի բոլոր այլ ազգութիւնների համար: Շուտափոյթ պէտք է ձեռք առնել ամենազօրական միջոցներ չարամիտ պրովոկացիայի դէմ»:

Նոյն խմասող մի բողոք էլ կոմիտէն ուղարկեց Անդրկ. Առանձին կոմիտէին, ուր, ի միջի այլոց, ասւում էր. «Կոմիտէն համարում է իրեն անպատւած, որ պրովոկացիան արատաւորում է մահմետականներին, որոնք կողմնակից են ներկայի և ապագայի ռամկավար իդէալներին և համակարծիք են բոլոր բանւորական կուսակցութիւնների հետ: Միութիւնը պահանջում է վերջ տալ պրովոկատորական խայտառակութեան»:

Իսկ Բաքւի վերի Իկթալ Քերքը, մասին 3-ին, չտապում էր բանալ փակագծերը՝ յայտարարելով, Քէ մահմետականների դէմ դաւեր լարողը հայերն են. «Պրովոկացիա սարքողը կովկասեան ազգերից մէկն է... Եթէ ուզենանք խմասել, Քէ ո՞րն է այդ ազգը, ցաւելով պէտք է ասենք, որ այդ ազգը մեր մօտիկ հարեւան ազդայնամոլ հայերն են»:

Որ հայերի կողմից էլ բռնութիւններ ու կամայականութիւններ տեղի էին ունենում, այդ, ի հարկէ, անհերքելի է: Մանաւանդ, Քիւրքական սրաժոլութիւնից ու կոտորածներից հրաշքով ազատւած արեւմտահայ գաղթականները երբեմն փորձում էին վրէժ լուծել մահմետականներից: Տեղ-տեղ Թուրքերին հալածում ու ճնշում, երբեմն նաև սպանում էին և կամայական խմբերը: Գաւերազմի և իթթիհատական վայրագութեանց առաջ բերած դժբախտ երեւոյթներ էին սրանք, որոնք, յաճախ, տարերային ձև էին ստանում և որոնց առաջն առնելը վեր էր մարդկային կարողութիւնից: Սակայն, անճշտ կը լինէր ասել, որ 1917 և յաջորդ 1918 Քւի մահմետական շարժումները հովկասում արդիւնք էին հայկական պրովոկացիայի կամ հայ գաղթականների ու խմբերի առաջացրած անկարգութիւնների: Ո՛չ, այդ այդպէս չէ: Երեւոյթն աւելի խորն էր. նրա բացատրութիւնը պէտք է որոնել Քւբրք քաղաքականութեան և կովկասեան մահմետականների ա՛յն ժամանակւայ տրամադրութիւնների մէջ: Անպայման, դէպքերի պատճառը Քիւրքական ժողովի ձեռքն էր, որ պատրաստ էր մոքերը և խռովութիւն առաջ բերած այնտեղ, որտեղ անհրաժեշտ էր գտնում իր շահերի համար: Այդ ժողով ձեռքն գործակալներ ունէր և՛ Թիֆլիսում, և՛ Կովկասի ուրիշ կենտրոններում, որոնք չատ անգամ պրովոկացիոն խաղեր էին խաղում հանրային անդորրութիւնը խանգարելու համար:

Այսպէս, մայիս 23-ին Թիֆլիսի Բանւ. և Զինւ. Ներկայացուցիչների պաշտօնաթերթում, ինչպէս և ուրիշ Թերթերում հրատարակւեց Բաքւի չրճանի ժամանակաւոր կոմիսար և գինւ. գործ. կոմիտէի նախագահ Սպիրանսկու մի գրգռիչ հեռագիրը, Քէ՝ «վերջին երկու-երեք չաբաթւայ ընթացքին Բաքւէնի հովտի գիւղերը գաղթում են Քիկուռքից բազմաքիւ փախստական

հայեր, մեծ մասամբ ռուսահպատակներ, որոնք ինքնակամ կերպով գրաւում են Քիւրք բնակիչների տները՝ գուրս քշելով տեղական բնակիչ Քիւրքերին։ Հայերին բնակեցնում են Հասան-Ղալայի չրջանում առանց չրջանային կոմիսարիատի գիտութեան՝ արգելք լինելով Օգնուս—Երզնկայի չրջանից տեղահանուող ժողովրդի գաղթեցման գործին։ Ինքնում եմ չուտով կարգադրել՝ դադարեցնել հայկական մասնաւոր ընկերութիւնների կազմակերպած այդ գաղթը՝ տալով ինձ այդ մասին զեկուցող ցուցմունքներ։

Ինքերը ինքնին պարզ էր. արևմտահայ կազմակերպութիւնները, Քիւրքահաւատների ընդհանուր կոմիսարութեան գիտութեամբ ու հաւանութեամբ և գիւղական ու քաղաքացիական իշխանութիւնների աջակցութեամբ կատարում էին գաղթականների տեղաւորում, որի ժամանակ, հնարաւոր է, որ բռնութիւններ էլ կատարւած լինեն բաւական չրջանում։ Բայց պէտք էր տեսնել, թէ ինչ աղմուկ բարձրացրին մահմեդական չրջանները, ինչ ծանր մեղադրանքներ ուղղեցին հայերի հասցէին։

Մայիս 23-ին Թիֆլիսի Բանւ. և Զինւ. Նորհուրդը Դանձակից ստացաւ հետեւեալ հեռագիրը. «Դանձակ քաղաքում մահմեդականներն ու հայերը բաժանւել են երկու մասի. մէջտեղը կանդնած է օրքը։ Արդևանիձէ»։ Բնականաբար հասարակութեան ու կառավարական չրջաններում առալ եկաւ սաստիկ իրարանցում։ Անմիջապէս հեռախօսով հարցում արւեց Դանձակ, և քաղաքագլուխ Ասամամեդովը զարմանքով պատասխանեց, թէ քաղաքում ոչինչ չի պատահել, հայերն ու Քուրքերը ապրում են հաչտ, և օրքը մնում է իր տեղը։ Ո՞ւմ էր հարկաւոր այդ չարամիտ խաղը։ — մնաց չպարզած։

Անհանգստացաւ, իլագրկիո վիճակ էր տիրում ամէն տեղ։ մութ ձևոքը գործում էր անարգել և ոչ մի ճիգ, կառավարական կամ հասարակական ո՛չ մի ոյժ չկարողացաւ զսպել կամ առաջն առնել մահմեդական չարժումների։ Նրանք հետզհետէ ծաւալեցին, ստացան յարատև բնոյթ և 1917թ. վերջերին արդէն դարձել էին կովկասեան կեանքի ամենաողևոտուր երևոյթը։ Մահմեդական հոծ զանգւածներ ունեցող չրջաններում, յաճախ, կտրւում էր երկաթուղային հաղորդակցութիւնը, և պէտք էր լինում դիմել արտակարգ միջոցների՝ զինւորական ուժի ու զրահապատների օգնութեան, որպէսզի բացուի ճանապարհը։ Ջրգրական չարժումները նոր թափով բռնկւեցին 1918թ. յունւարի կէսերին, երբ ճակատի զանազան մասերում ուղղակի ճակատամարտներ մղւեցին քիւրդ հրոսախմբերի և կանոնաւոր զօրքերի միջև։ Միևյն յունւ. 15—16-ին, և միայն Երզնկայի չրջանում, պաչտօնական հաղորդագրութեամբ, քիւրդերի ձևոքով սպանւեց չուրջ 200 մարդ։

Այս ամէնը, ի հարկէ, անդնահատելի ծառայութիւն էր Քիւրքերին։ Երբ Կովկասն արդէն բաւական խառնւել էր ներքին խնդիրներով, իսկ, միւս կողմից, Քիւրք բանակն արդէն վերստացած էր նախկին ռազմունակութիւնը, Քիւրք հրամանատարութիւնը դիմից վճռական քայլերի։ գեկտ. 16-ին կովկասեան բանակի հրամանատարը Վեհիբ փաչայից ստացաւ մի նամակ, որի մէջ ասւում էր, թէ սպարապետ ենվէր փաչան նկատել է, որ գրաււած վայրերում բռնութիւններ են գործադրւում Քիւրքահպատակների վերաբերմամբ և պահանջում է վերջ տալ դրանց։ Մի քանի օր յետոյ, յունւ. 23-ին,

Վեհիր փաշայից ստացուեցին մի քանի հեռագիրներ, որոնք նորից բողոքում էին Քիւրքճպատակների նկատմամբ գործադրուող բռնութիւնների դէմ և պահանջում էին խիստ պատժի ենթարկել յանցաւորներին: Զօր. Ոզիչելիժէն, յունե. 31-ին և փետրուարի սկզբին, երկու անգամ, պատասխանեց, որ Վեհիր փաշայի ստացած տեղեկութիւնները խիստ չափազանցուած են, որ, ճիշտ է, Եբգնկայի ու Տրապիզոնի շրջաններում տեղի են ունեցել մի քանի բռնութիւններ, բայց նրանք արդիւնք են քրդական հրոսախմբերի յարձակումների և բնաւ չեն համապատասխանում Քիւրք հրամանատարութեան ցոյց տուած չափերին: Ի պատասխան սրան, փետր. 6-ին զօր. Ոզիչելիժէն ստացաւ Վեհիր փաշայից մի նոր հեռագիր, որով Քիւրք հրամանատարը յայտնում էր, Թէ ինքը՝ երկու կողմերի համար պատուաւոր հաշտութեան երկրպագու լինելով հանդերձ՝ ստիպուած է, մահմետական բնակչութեան պաշտպանութեան նպատակով, առաջ շարժել իր զօրքերը մինչև ուռա զօրամասի հետ չփման մտնելը:

Ուրիշ խօսքով, վերսկսում էր պատերազմը:

ԳԼՈՒԽ Ը.

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՍԿԶԲԸ ԵՒ ՆԵՐՔԻՆ ԱՆՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Բայց ի՞նչ էր ներկայացնում այդ ժամանակ Անդրկովկասը: Որքա՞ն ընդունակ էր նա դիմադրելու Թիւրքերին:

Տեսանք արդէն, որ նոյեմբ. 27–ին Անդրկ. Առանձին Կոմիտէն փոխարինուեց Անդրկ. Կոմիսարիատով: Այս փոփոխութիւնը, սակայն, իրական բաթելաւում չբերեց: Ձակատի ու Թիկունքի քայքայումը չարունակուեց անարգել՝ մինչ ընդարձակուելով ու խորանալով: Գրեթէ ամբողջ ժամանակ կառավարութիւնը զբաղուած էր բանակի նահանջի ու մահմեդական չարժումների հետ կապած խնդիրներով, պարենատրման ու եւլմտական տագնապի դէմ կուռելով, պատերազմի հաշւեյարդարին վերաբերուղ և նման հարցերով: Կազմակերպական և չինարար աշխատանք կատարելու հնարաւորութիւն չէր մնում: Միակ չինարար աշխատանքը նրաւ անդրկովկասեան բոների հրատարակութիւնը փետր. 6–ին, որ մասամբ մեղմացրեց դրամական ապրը:

Անդրկ. Կոմիսարիատը ներքնապէս էլ ներդաշնակ ու հաչտ չէր: Ազգային ներհակութիւնները մաչում էին նրա հիմքը: Իչխանութեան իրական ոյժը աւելի և աւելի տեղափոխւում էր ազգային խորհուրդների մէջ, որոնցից իւրաքանչիւրը իր ազգի չահերն էր պաչտպանում: Դրան մեծապէս նպաստում էր և կովկասեան ժողովուրդների քաղաքական հակումի՝ օրիենտացիայի տարբերութիւնը: Մինչ հայերը և, որոչ չափով, վրացիները համարւում էին հակաթիւրքական կողմ, մահմեդականները չէչտած Թիւրքասէրներ էին և Թիւրքիայի գործերը չատ մօտ էին ընդունում իրենց սրտին: Հակումի ներհակութիւնից առաջ էին գալիս և Անդրկ. Կոմիսարիատի ներսում անող սուր անհամաձայնութիւնները պատերազմի խնդրում. Կոմիսարիատի մահմեդական անդամները ամէն գնով աչխատում էին արագացնել հաչտութիւնը Քիւրքերի հետ՝ Թիւրքիայի համար նպաստաւոր պայմաններով, նոյնիսկ գովկասի չահերին ի վնաս:

Այսպիսի հանդամանքներում գործող մի իչխանութիւն, ի հարկէ, չէր կարող երևան բերել ոյժ ու հեղինակութիւն, իսկ նրա կառավարած երկիրը չէր կարող լինել խաղաղ ու բարգաւաճ: Եւ, իրօք, երկիրը ներկայացնում էր քաօսային մի վիճակ:

Սէյմի փետր. 13–ի նիստում Գեգեչկորին այսպէս էր բնորոչում Անդրկովկասի դրութիւնը դեկտեմբեր–յունւար ամիսներին. «Մեր ընդարձակ և թոյլացեղ երկրի բոլոր կէտերում, բոլո՛ր չրջաններում առաջ էին գալիս Քիւրմացութիւններ ու բռնութիւններ Թէ ազգային հողի վրա և Թէ հեռա–

ցող զօրքերի ու տեղական բնակչութեան միջև պատահող ընդհարումների պատճառով։ Այստեղ ու այնտեղ բռնկւում էին հրդեհներ, որ սոխլատի էնիք հանդցնել մեր փոքրիկ ուժերով, որովհետեւ Անդրկ. Դոմխաբիատը, պնդում եմ, չունէր այն, որ կազմում է հիմքը իւրաքանչիւր իշխանութեան — հարկադրող ոյժ։ Անդրկ. Դոմխաբիատը հնազանդութիւն ու միմոց չունէր անշապաղ և անչեղ գործադրել տալու իր պահանջները, որովհետեւ քէկե գոյութիւն ունէին ազգային զօրամասեր, բայց նրանք ո՛չ մի ոյժ չէին ներկայացնում։ Մի մասը բռնւած էր ճակատում, միւս մասը անկազմակերպ էր, իսկ երրորդը՝ գոյութիւն ունէր միայն քաղքի վրայ»։

Ի՞նչ կարելի էր պահանջել այսպիսի իշխանութիւնից։ Շատ քիչ բան։ Աւելի եւ անյոյս էր, որ նա ի վիճակի կը լինի կազմակերպելու և վարելու պատերազմի գործը։ Այդ պատճառով, վեհէր փաշայի դիմումը հաշտութեան բանակցութիւնների սկսելու մասին, Թիֆլիսում նկատուեց իբրև մի նէք առեղծուած անսահմանի կացութիւնից։ Փետր։ 1-ին, Թիւրքերի հաշտութեան բանակցութիւնների առաջարկն ընդունելուց յետոյ, Անդրկ. Դոմխաբիատը կազմից մի յանձնախումբ՝ հաշտութեան խորհրդաժողովի համար նիւթեր պատրաստելու նպատակով։ Եւ միաժամանակ միջոցներ ձեռք առաւ՝ արագացնելու Սէյմի գումարումը։

Անդրկ. Սէյմը գումարուեց փետր. 10-ին հետեւեալ կազմով. —

Ամենամեծ ֆրակցիան սոցիալ-դեմոկրատ մենշեւիկներինն էր — 32 անդամ, որից 25ը վրացի, 4 հայ (Ա. Ջոհրաբեան, Ճ. Ռէֆգրատեան, Ղ. Տէր Ղազարեան, Մ. Փիրումեան), 2 ռուս և 1 գերմանացի։ Այս ֆրակցիան հարուստ էր փորձած քաղաքական գործիչներով, որոնցից չատերը աչքի ընկնող դեր էին կատարել Պետական Դումաներում և համառուսական քաղաքական կեանքում — Մերեթկեվիչ, Դեգեէվորի, Ջոհրաբեան, Սկորլեւ, Չխենկելի, Ժորդանիա և այլն։

Պատգամաւորների թւով երկրորդ տեղը գրաւում էր «Մուսաւաթ և անկուսակցականների խմբակ» ֆրակցիան՝ 30 անդամ, որի մէջ մտնում էին Ադրբէյնցի ամենաչքի ընկնող գործիչները — Թոփչիբաշև, Ջաֆարով, Թաուշ-Ջադէ, Ուսուպբէկով, Աղայեւ, դր. Սուլթանով, Խան-Խոյսկի, Մելիք-Ասլանով։

Հ. Ճ. Դաշնակցութեան ֆրակցիան ունէր 27 պատգամաւոր — Ռոստոմ Զօրեան, Մ. Ճովհաննիսեան, Կ. Համբարձումեան, Հ. Օհանջանեան, թժ. Ճ. Զաւրեան, Աւ. Շահխաթունեան, Ճ. Քալանթարեան, Ս. Տիգրանեան, Կ. Ղազարեան, Ս. Վրացեան, Ա. Խատիսեան, Ա. Նալչաճեան, Գ. Խատիսեան, Ս. Խաչատրեան, Գ. Զամոյեան, Խ. Կարճիկեան, Մ. Ճարուքինեան, Հ. Եղոյեան, Խ. Համասփիւռ, Հ. Զոլոեան, Ա. Զիլինգարեան, Գ. Տէր-Ճարուքինեան, Վ. Տոլէնի, Մ. Արզումանեան, Տ. Աւետիսեան, Ա. Սահակեան, Գ. Լեւոնեան, Գ. Մանդալեան։ Առաջին երեքը, ինչպէս և Ա. Զիլինգարեանը, բացակայ էին Թիֆլիսից, ոչ մի նիստ չմասնակցեցին և յետագային փոխարինուեցին ուրիշներով։

7 պատգամաւոր ունէր մահմետական ընկերվարական բլոկը, 5՝ Սոց.-Յեղափոխականների կուսակցութիւնը, 4՝ Սոց.-Դեմ. Հումմէթը, 3՝ Ռուս-

սահանի մահմեդականութեան իբր հիմնական–Իսլամ կազմակերպութիւնը, 1՝ Ռուս ժողովրդ. Ազատութեան կուսակցութիւնը, 1՝ վրացի սոց.–ֆեդերալիստները, 1՝ վրացի ազգային–դեմոկրատները:

Սկզբի երկրորդ (15 փետր.) նիստում կուսակցութիւններն արին իրենց յայտարարութիւնները: Հ. Ց. Դաշնակցութեան բաղմանդներն արտայայտուց Ց. Քալանտարն, հետեւեալ յայտարարութեամբ. «Հ. Ց. Դաշնակցութիւնը ողջունում է հայ դեմոկրատիայի կողմից Անդրկովկասեան Սէյմը:

Սերտողների երազը — Համաուռւսական Սահմանադիր ժողովը մի օրւայ համար դարձաւ իրական փաստ: Ժողովրդի ընտրեալները հաւաքուեցին արդէն, որպէսզի իրականացնեն նրա վէհ կամքը և դնեն պետական և ընկերային կեցուածքեան նոր հիմքերը: Բայց, ընդհանրապէս, բոլոր ընկերային–քաղաքական խորունկ շարժումներին յատուկ անխուսափելի հիւանդագին թեքումը պատահումի մտցրեց յեղափոխական շարժման առողջ ընթացքի մէջ և թոնութեամբ ընդհատեց Սահմ. ժողովի աշխատանքը հէնց սկզբից: Քանի որ կենտրոնական համապետական իշխանութիւնը բացակայ է, ժողովուրդները ու երկիրները հարկադրուած են տեղերում սեփական ուժերով լուծելու կեանքի հրամայական ընթացքով առաջ եկած ամենէն անյետաձգելի խնդիրները: Կարգաւորելով իրենց կեանքը տեղերում՝ ժողովուրդներն ու երկիրները դրանով հէնց դնում են ամուր հիմքը մեծ ամբողջի՝ մէկ համաուռւսական ոմանքավար դաշնակցական հանրապետութեան կառուցման: Նման կազմակերպող կենտրոններից մէկը պէտք է դառնայ Անդրկովկասեան Սէյմը:

Կանգնած լինելով անդրկովկասեան դեմոկրատիայի մէկ և ընդհանրական չահերի պահպանութեան տեսակէտի վրա և յենւելով նրա յեղափոխական մարմինների՝ գինւորական, բանւորական ու գիւղացիական խորհուրդների վրա՝ Անդրկ. Սէյմը կոչւած է, մի կողմից, վերականգնել երկրի կարգն ու անդորրութիւնը, դուրս բերել նրան յարձուռւմ, քայքայող անիշխանութեան չրջանից և դնել յեղափոխական նւաճումների ամրապնդման ճանապարհի վրա, միւս կողմից՝ յենարան տալ Ռուսաստանի հանրապետութեան, որի մէջ Անդրկովկասը, իբրև մասնիկը հզօր ամբողջութեան, պէտք է գտնի արժանաւոր տեղ:

Մեկնելով Անդրկ. Սէյմի նպատակների նման հանգամանքից՝ Դաշնակցութեան ֆրակցիան դնում է հերթից դուրս պատերազմը վերջացնելու և Ռուսաստանի յեղափոխական դեմոկրատիայի ազգաբաժան ակզբունքները հաչտութիւն կնքելու հարցը — հաչտութիւն առանց բռնագրաւումի և ռազմատուգանքի՝ ժողովուրդների ինքնորոշման հիման վրայ: Մեր ճանապարհի այս ակզբունքը պէտք է յանգի Թիւրքահայաստանի ինքնավարութեան ստեղծման:

Պատերազմի հաչւեյարդարի խնդրի հետ միասին անչապաղ պէտք է լուծւի Անդրկովկասի կենտրոնական իշխանութեան և տեղական իշխանութիւնների կազմակերպման հարցը, իշխանութիւնը պէ՛տք է լինի միաւորը— ընկերվարական, որովհետև միայն այդպիսի՛ իշխանութիւնը կարող է իրականացնել աչխատաւոր ժողովրդի ակնկալութիւնները և անհնար դարձնել քաղաքական պատեհապաչտութեան և ընկերային ճահճացման ակզբունքների վերադարձը: Եւ հաչւի առնելով օրւայ ամենաանյետաձգելի պահանջները՝ երկրի իշխանութիւնը պէտք է ձեռք առնէ չտապ և իրական մի՛ջոցներ՝ վերականգնելու հաղորդակցութիւնը, լուծելու պարենաւորման ու ելեմտական տագնապը:

Վաղուց ի վեր հասունացած հողային խնդիրը պէտք է լուծում ստանայ հողային մասնատութեան խաչաո վերացումով և բոլոր հողերը անչապաղ

և անվճար աշխատուժ ժողովրդին յանձնելով՝ հողից հաւասարաբար օգուտներ ակռնելով (ծափեր):

Ցեսար, նոյն ընկերային օրինադրութեան ասպարէզում, Դաշնակցութեան ֆրակցիան ձգտելու է իր նպատակն ծրագրի իրականացման նրա բովանդակ ծաւալով՝ առաջին հերթին դնելով օրհնդրական կարգով 8 ժամ-ւոյ աշխատանքի օրւայ հաստատման, աշխատանքի պետական հովանաւորութեան և բանւորների ապահովութեան պահանջը (ծափեր):

Քաղաքա-տնտեսական բարենորոգումների բնագաւառում ֆրակցիան պահանջելու է պետական նշանակութիւն ունեցող և ընկերվարական արտադրելակերպի համար բաւականաչափ հասունացած խոշոր ֆինանսական, արդիւնաբերական և առևտրական ձեռնարկութիւնների հասարակութեան սեփականութիւն դարձնել, այլ և արդիւնաբերութեան վերահսկողութեան և ընդհանուր աշխատաւորական պարտաւորութեան հաստատում:

Վերոյիշեալների գուգընթաց, օրւայ մեծագոյն քաղաքական խնդիրն է հանդիսանում Անդրկովկասի ճիշտ սահմանաբաժանումը, ժողովուրդների ինքնուրոյն կանոնների առեղծումը և նրանց միացումը Անդրկովկասեան ընդհանուր դաշնակցութեան մէջ: Նոր կարգի ամրութիւնն ու կայունութիւնը, երկրի ներքին խաղաղութիւնն ու բովանդակ բարեկեցութիւնը ամենասերտ կերպով կապւած են այս բարդ խնդրի բաւարար լուծման հետ, ուստի և պահանջում է նրա հանդէպ առանձնապէս ուշադիր վերաբերում:

Ցիշած խնդիրների իրականացման Հ. Ց. Դաշնակցութիւնը կը ների իր բոլոր ուժերը՝ երկրի բոլոր դեմոկրատների հետ կատարեալ համերաշխութեան և բարեկամական գործակցութեան մէջ:

Միաժամանակ Դաշնակցութիւնը, իբրև միջազգային ընկերվարական բնոտնէքի անդամներից մէկը, անյողդող հաւատն ունի, որ Անդրկովկասեան Սէյմը իր յետագայ գործունէութեան ընթացքին կը դառնայ ընկերվարական մտքի ու ստեղծագործութեան հնոց և միևնոյն Անդրկովկասեան Ընկերվարական միկազգային (ծափեր)»:*)

Այսպիսով, Դաշնակցութիւնը առաջադրում էր օրւայ հրատապ նշանակութիւն ունեցող չորս խնդիրներ. 1) Ինքնուրոյն Անդրկովկասը համարւում է մասնիկը Ռուսաստանի. 2) պատերազմը վերջացնելու պայման դրւում է Թիֆլիսում ստանալ ինքնավարութիւնը. 3) Անդրկովկասի վերաբաժանումը ազգային կանոնների և 4) միասար-ընկերվարական իշխանութեան կազմակերպումը:

Այս չորս պայմաններն էլ հանդիպեցին Ադրբէջանի ներկայացուցիչների բուռն դիմադրութեան: Նրանց կողմից յայտնարարութիւն անող Ադաչիւը գտնում էր, որ Սէյմը պէտք է լինի Սահմանադիր ժողով՝ լուծելու համար Անդրկովկասի ճակատագիրը, որը կարող է Ռուսաստանի ընդհանուր ճակատագրից: Ճիշտ է, Ադաչիւը դեռ խօսում էր «ազատ ժողովուրդների Ռուսաստանի», «դաշնակցութեան», «Ադրբէջանի ազգային-քաղաքական ինքնավարութեան մասին, բայց այդ, անելի չուտ, տուրք էր օրւայ ընդհանուր տրամադրութիւններին:

Գատերազմի խնդրում Ադաչին ևս պահանջում է «համեմատական հաշտութիւն, առանց բռնագրաւումների և ռազմատուգանքի, ժողովուրդների

*)Закавказскій Сейм. Стеногр. отчет. Сессія первая. засѣданіе третье. 1918. Тифлис, стр. 15.

ինքնորոշման հիմունքով», բայց և չտապում է աւելացնել, Թէ «չպէտք է խառնուել հարեւան պետութիւնների ներքին գործերին», այսինքն՝ ձեռք քաշել Թրքահայկական գաղից։

Կառավարութեան կազմութեան հարցում Աղայեւը դնում է «խիստ կօալիցիայի» պահանջը՝ հաշւի առնելով «զգոյշ խմբերի իրական համեմատութիւնը»։ Միաապարտ–ընկերվարական իշխանութիւնը անընդունելի է միանգամայն։ Պատճառը հասկանալի է. մահմեդականների մէջ տիրող տարրը բէկերն ու կալւածատէրերն էին։

Անդրկովկասի վարչական բաժանման վրայից Աղայեւը անցնում է լռութեամբ, բայց ազգբէչանցիների ընդհանուր քաղաքականութիւնից զինանց, որ նրանք վճռականապէս հակառակ էին հայկական ծրագրին, որի դէմ պայքարում էին 1916–ի գէմատւոյական խորհրդակցութիւններից սկսած։

Վերջ բաղձանքները արտայայտեց Ժորդանիան, որ իր առաջադրած խնդիրներով աւելի մօտենում էր ազգբէչանցիներին, Թէև խօսքերով աշխատում էր ցոյց տալ հակառակը։

Ռուսաստանի հարցում նա, ըստ էութեան, կանգնեց Աղայեւի տեսակէտի վրա. «Ժողովրդական կոմիսարների խորհրդի ընդունած հաշտութեան վերջին պայմանները, որոնք ամբողջ Ռուսաստանը մատնեցին գերման իմպերիալիստների քաղաքական ու տնտեսական գերութեան, Է՛լ աւելի կտրեցին մեզ Ռուսաստանի հետ կապող թելերը։ Եւ մեր Սէյմը այժմ իրեն համար հիմնական նպատակ պէտք է դնէ սեփական ուժերով այս երիտասարդ երկիրը՝ Անդրկովկասը վերածել իրաւականօրէն կազմակերպւած Անդրկովկասեան Հանրապետութեան»։ Այս կէտում տարբերութիւն չկայ Ժորդանիայի և Աղայեւի միջև։

Ցետոյ, Անդրկ. Հանրապետութեան Սէյմը, առաջին հերթին, պէտք է հաշտութիւն կնքի Թրքերի հետ, բայց ո՛չ այնպիսի հաշտութեան, որպիսին ստորագրեցին բոլշեւիկները. «Մենք այդպիսի հաշտութիւն չենք ստորագրի և կարծում ենք, որ աւելի լաւ է մեռնել պատով դիրքերում, քան խայտառակուել և տերունդների անէծքին ենթարկուել»։ Այս կէտում, Ժորդանիան հաճախնոնու հետ է. նա պահանջում է «պատւաւոր հաշտութիւն», Թէեւ յետագայ դէպքերը ցոյց տուին, որ Ժորդանիայի «պատւաւոր հաշտութիւնը» չատ քիչ է տարբերւում Աղայեւի «անպատիւ» հաշտութիւնից։

Իշխանութեան կազմութեան խնդրի վրայից Ժորդանիան անցաւ լռութեամբ. փափուկ դրութիւն էր. եԹէ պահանջէր միատարր–ընկերվարական կառավարութիւն, ինչպէս պահանջում էր յեղափոխական խորհուրդների կենտրոնում, դժգոհ կը լինէին ազգբէչանցիները. եԹէ պահանջէր կօալիցիոն կառավարութիւն, ինչպէս դործնականօրէն անց էր կացնում Սէյմի կուլիսներում, դժգոհ կը մնային յեղափոխական խորհուրդները։ Ահա մի տեղ, որտեղ լռութիւնը խնայում էր։

Անդրկովկասի սահմանների վերաբաժանման հարցում Ժորդանիան պաշտպանում էր Դաշնակցութեան տեսակէտը.«յետնելով հողային սկզբունքների վրա՝ մենք պէտք է գոյութիւն ունեցող ազգերը սահմանաբաժանենք այնպէս, որ միմեանց չխանգարեն, ընդհակառակը, որ նրանք կարողանան աջակցել միմեանց և միացեալ ու ընդհանուր ջանքերով դուրս բերեն մեր

երկիրը քաղաքակրթության և ազատության հանապարհի վրայ։ Բայց սահմանների վերաբաժանումը Ժողդանեան հասկանում էր բոլորովին հակառակ Դաշնակցության պաշտպանած ծրագրի, այնպէ՛ս, որ Կովկասում միայն Վրաստանն էր դառնում ազգային միութիւն. «Մենք տեսչած պիտի լինենք Անդրկովկասի հողից ձեւել ահմանափակ միջուկին ունեցող ազգային հողային միաւորներ, այսինքն, թերեւս, պէտք լինի, որ մի ազգ, (օրինակ, հայերը, վրացիները կամ թաթարները), կտրատուն մի քանի ինքնավար մասերների և որ այդ ազգը ապրի իր ազգային չատ կանոնները։ Եթէ առնենք Արեւելեան Անդրկովկասը, կը տեսնենք, որ այստեղ այդպէս պէտք պիտի լինի վարել, որովհետեւ ոչ մի կերպ կարելի չէ ձեւել այնպիսի միապաղաղ ազգային–հողային միաւոր, որը ընդգրկէր մէկ ազգութիւն և չընդգրկէր մեծ քանակութեամբ ուրիշ ազգութիւն»։

Այսպիսով, Սէյմի գոյութեան առաջին իսկ օրից երեւան եկաւ Անդրկովկասի երեք գլխաւոր ժողովուրդների մտածողութեան ու ձգտումների ներհակութիւնը։ Եւ այն անհամաձայնութիւնները, որ կային Սէյմից առաջ, Անդրկ. Կոմխարհաժի մէջ, վէճի ու պայքարի բոլոր առարկաները, կիրքն ու նախանձը, չհամաձայնութիւնն ու թշնամանքը մեքենայօրէն մուտք գործեցին և Սէյմ։ Ճեռագայ դէպքերը և միացեալ աշխատանքը Սէյմում ո՛չ միայն չմեղմացրին, այլ աւելի եւ աաստկացրին հակամարտութիւնը։

Տարակարծութեանց հրատապ առարկաներից մէկն էր Անդրկովկասի քաղաքական կազմակերպութեան՝ անկախութեան խնդիրը, որով Սէյմը զբաղուեց փետր. 22–ի նիստում։

Այդ առթիւ երկար ճառեր արտասանեցին վրացիների կողմից Ն. Ժորդանիան, ազրբէյանցիներից Խան–Խոյսկին։ Երկուսն էլ անվերապահ վճռականութեամբ պաշտպանում էին Անդրկովկասը անկախ յայտարարելու պահանջը։ Ժորդանիան չեշտում էր, որ Ռուսաստանը ինքն է հեռացել կովկասից, և կովկասեան ժողովուրդները պէտք է իրենք տնօրինեն իրենց ճակատագիրը, որի համար ուրիշ ելք չի մնում, բայց եթէ անկախութիւն յայտարարելը, այլապէս կը գան քիւրդերը և կը գրաւեն Անդրկովկասը։ Քիւրդերի հետ հաշտութիւն կնքելու միակ միջոցը Անդրկովկասը անկախ հռչակելն է, պնդում էր և Խան Խոյսկին։ Նրանց պատասխանեց ռուս Սեմիոնովը. «Անդրկովկասը Ռուսաստանից անջատելով՝ դուք կերթաք աւելի առաջ, դուք ստիպուած կը լինէք Արեւելեան Անդրկովկասը Ազրբէյանը և Վրաստանը անջատել Անդրկովկասից, Հայաստանը անջատել Անդրկովկասից, իսկ յետոյ, գուցէ, Վրաստանն էլ բաժանել մասերի՝ Իմերեթիայի, Քարթալինիայի և կը վերադառնաք 13րդ դարին... Անկախութիւն յայտարարելուց յետոյ, դուք կը մտնէք Քիւրքական օրիենտացիայի մէջ, ակամայ կը դառնաք Թիւրքիայի մէկ մասը կամ՝ նրանից կախուած, նրա հովանաւորութեան տակ... Թիւրքական օրիենտացիա ընդունելով՝ դուք կրնկնէք պետութիւնների այն խմբի մէջ, որը պատերազմում է Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դէմ»։

Սեմիոնովը ճիշտ էր արտայայտում իրերի ընթացքը։ Անդրկովկասը արագ քայլերով չարժւում էր Թիւրքիայի գիրկը։ Հայերը պայքարում էին դրա դէմ, և նրանց ընդդիմութեան պատճառով անկախութեան հարցի լուծումը յետաձգւեց։

ԳԼՈՒԽ Ը.

ՏՐԱՊԻԶՈՆԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ

Տարակարծութեան միւս լուրջ աղբիւրը պատերազմի և խաղաղութեան հարցն էր, որը, ինչպէս արդէն բազմիցս նկատեցինք, անդրկովկասեան ժողովուրդներին բաժանել էր տարբեր, յաճախ, միմեանց քշնամի հատւածների։ Այս հարցում կովկասեան ժողովուրդների տեսակէտը բաւական տարբեր էր իրարից։ վրացիք և, մանաւանդ, հայերը ձգտում էին «պատւաւոր հաշտութեան»։ «Այնպիսի հաշտութեան, որպիսին ստորագրեցին բոլշեւիկները, մենք չե՛նք ստորագրի։ աւելի լաւ է պատուով մեռնել դիրքերում, քան թէ խայտառակել և սերունդների անէծքին մատնուել»,—Ն. Ժորդանիայի այս յայտարարութիւնը ընդունեց բուռն ծափերով Սէյմի կողմից, փետր. 15–ի նիստում։

Նոյնքան և աւելի վճռական էին հայերը։ Սէյմի նոյն նիստում Ց. Քաջազնունին Հ. Ց. Դաշնակցութեան ֆրակցիայի անունից յայտարարեց. «Դաշնակցութիւնը հերքից դուրս դնում է պատերազմը վերջացնելու և Թուրաստանի յեղափոխական դեմոկրատիայի ազգարարած սկզբունքներով հաշտութիւն կնքելու հարցը — հաշտութիւն առանց բռնագրաւումի և ռազմատուգանքի՝ ժողովուրդների ինքնորոշման հիմունքով։ Մեր ճակատում այս սկզբունքը պէտք է յանգի Թիւրքահայաստանի ինքնավարութեան առեղծմանն։ Այսպիսով, հայկական տեսակէտը անհամեմատ աւելի որոշ էր, քան վրացիների անորոշանգամ «պատւաւոր հաշտութիւն» խօսքը։

Աւելի կտրուկ էր ադրբէջանցիների բանաձեւը։ Նրանք պահանջում էին անմիջապէս վերջ տալ պատերազմին, բաւականանալ 1914 թի սահմաններով և չխանգարել Թիւրքիայի ներքին գործերին։ Բրքահայկական խնդիրը, նրանց համար, Թիւրքիայի ներքին գործ էր։

Ադրբէջանցիների կողմից յայտարարութիւն անող Ադախէը դեռ վաղուց ու չափազանց գոյչ արտայայտութիւններով էր ձեւակերպում այս տեսակէտը։ «Ինչո՞ւ կերպով անցկացնել հարեւան պետութիւնների ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը»։ Բայց հետզհետէ լեզուները բացւեցին, և Ադրբէջանի գործիչներն այլեւս պէտք չէին զգում ծածկելու, որ իրենց համար «եղբայրական Թիւրքիայից» չհեռը աւելի Քանգ են, քան իրենց հարեւան հայերի ազգային բազձանքները։

Ցաջորդ նիստում, փետր. 16–ին, Սէյմը արդէն գործնականօրէն զբաղւեց հաշտութեան խնդրով։ Յանձնախմբի զեկուցաբեր Ն. Ռամիշվիլին

ժամբաման պարզից այն սկզբունքները, որոնք պէտք է հիմք կազմեն Թիւրքերի հետ կնքելիք դաշնագրի։ Այդ սկզբունքներն են. հաշուեքիւնը պէտք է լինի վերջնական, դաշնագիր կողմերի միջև պէտք է պահուին 1914 Յուլիսի սահմանները, Արեւելեան Անատոլիայի ժողովուրդներուն — հայերուն, ասորիներուն, յոյներուն — պէտք է տրուի ինքնավարութիւն Թիւրքիայի վերահսկողութեան ներքոյ։ Հայկական հարցի մասին Ռոմինկիլի ասաց. «Ամէնին հարցը, որ կը կանգնի մեր պատերազմին առջև և այժմ կանգնած է Անդրկ։ Սէյմի առջև, Թիւրքահայաստանի բարեկարգութեան հարցն է։ Չպէտք է այստեղ երկար խօսենք, Քէ այդ ժողովուրդը ինքնորոշման ի՞նչ իրաւունքներ ունի։ Ես կարծում եմ, որ այդ իրաւունքները ամրապնդած են հայ ժողովրդի մղած զարաւոր պայքարով այն ճնշումների դէմ, որոնց այդ ժողովուրդը ենթարկուած էր Թիւրքական կայսրութեան սահմաններում, և մենք պէտք է յայտարարենք, որ Թիւրքահայկական հարցը մի հարց է, որի լուծումով չհագրգռուած է ո՛չ միայն Թիւրքական կայսրութիւնը, այլ և անպայման ոչ պակաս չափով նաև անդրկովկասեան ժողովուրդները։ Չեզ յայտնի է, որ հայ ժողովրդի ամէն մի շարժում Թիւրքիայում լիովին արժանանք էր ստանում և արտասահմանում, և այսեղ, Անդրկովկասում։ Եւ այդ, քաղաքացի պատգամաւորնե՛ր Սէյմի, մեծագոյն բնական է։ Լիբիւնակից եղբայրներ՝ այստեղ գտնուողները չէին կարող այս կամ այն ձեւով չարտայայտուել Թիւրքիայի սահմաններում ապրող իրենց ցեղակիցների վիճակի մասին։ Այդ դեռ քիչ է։ այդ հարցի ամէն մի խճողում Թիւրքիայում միշտ առաջ է բերել միջազգային յարաբերութիւնների բարդացում այստեղ, Անդրկովկասում։ Արժէ յիշել այդ տեսակէտից մի փաստ։ 1895 Թուի ապրիլ-մայիսի ընթացքում, որը այստեղ այս կամ այն ձեւով արձագանգ գտաւ։ Մենք ենթարկում այս դրութիւնից, բոլորովին բնական է, որ ի պաշտպանութիւն Թիւրքահայկական իրաւունքների դուրս է եկել ո՛չ Քէ բռնապետական Ռուսաստանը, ո՛չ այն երկիրը, որը ինքն էլ ոչ պակաս չափով ճնշում էր հպատակ ժողովուրդներին, այլ ահա դուրս է գալիս համաչափ մի երկիր և համահաւասար երկրի ներկայացուցիչը՝ Անդրկովկասեան Սէյմը։ Թիւրքական կայսրութեան չհաջողեց Քնդադրում են լուծել մէկ անգամ ընդմիշտ այդ բարդ ու ցաւոտ հարցը։ Եւ մենք կարծում ենք, որ Թիւրքիայում էլ կան հասուն պետական գործիչներ — մենք կուզէինք, իհարկ կուզէինք հաւատալ, որ կան — որոնք իրենց հինգ մէջոցներ ձեռք կառնեն, որ մէկ անգամ ընդմիշտ լուծուի հայ ազգաբնակութեան և Թիւրքական կայսրութեան մէջև մշտական կուսակցութեան եղող այդ հարցը։ Եւ մենք կարծում ենք, համաձայն Դաշնակցութեան յայտարարութեան, որ եթէ այդ հարցը լուծուի, բախումները մէկ անգամ ընդմիշտ կը սպասուեն և կը վերջանան։

Եւ Սէյմի ֆրակցիաների ներկայացուցիչների արտայայտութուց յետոյ, միաձայնութեամբ ընդունուեցին հետեւեալ հիմնական պայմանները.

1. Ստեղծուած պայմաններում Անդրկ. Սէյմը իրեն համարում է իրաւասուէր՝ կնքելու հաշուութիւն Թիւրքիայի հետ։

2. Սկսելով հաշուութեան բանակցութիւններ՝ Անդրկ. Սէյմը նպատակ է դնում կնքել Թիւրքիայի հետ հիմնական հաշուութիւն։

3. Կնքելիք հաշուութեան դաշնագրին իրրև հիմք պէտք է դրուի 1914 Թուի, պատերազմի յայտարարութեան վարչկեանին, Ռուսաստանի և Թիւրքիայի միջև գոյութիւն ունեցող պետական սահմանների վերականդնումը։

4. Պատերազմութիւնը կանխելու է ձեռք բերել Արեւելեան Անատոլիայի ժողովուրդների համար ինքնորոշման իրաւունք և, ի մասնաւորի, Թիւրքա-

հայաստանի համար ինքնավարութիւն՝ քիւրք պետականութեան չրջանակներուն»։

Հայերի համար առանձնապէս ծանր էր վերջին կէտը. այնքա՞ն յոյսերից յետոյ նորից մնալ «քիւրք պետականութեան չրջանակներուն» — սարսափելի էր։ Բայց այդքան համեստ պահանջին էլ մեծ դժուարութեամբ կարելի եղաւ մտցնել հաշտութեան «հիմնական պայմանների» մէջ։ Ուժերի փոխյարաբերութիւնը չատ էր փոխուած...

Սէյմի հինգերորդ նիստում, փետր. 17-ին, մեծամասնութեամբ հաստատուեց յանձնախմբի մշակած հաշտաբար պատւիրակութեան կազմը, ինչպէս նաև պատւիրակութեան ներքին կանոնագիրը։ Պատւիրակութեան անդամ նշանակուեցին Աբաչիձէ (սոց.-դեմ.), Հայդարով (մահմ.սոց.-բլոկ), Գվազաւա (վրացի ազգ.-դեմ.), Գաղինսկի (մուս.), Քաջաճունի (գաշն.), Լախիչվիլի (վրացի սոց.-ֆեդ.), Մեհրքիև (Ռուս. մահմ. կուս.), Ասաև-Մամեդով (մուս.), Ա. Ամտիևան (գաշն.), Զրկալին (սոց.-յեղ.), Զհանկելի (սոց.-դեմ.), Շէյխ-Իւլ-Իսլամով (Հումմէթ)։ Պատւիրակութեան նախագահ՝ Զհանկելի։

Բացի այդ, պատւիրակութեան մէջ մտան բազմաթիւ խորհրդականներ, մանաւանդ՝ քարտուղարներ, այլ և այլ պաշտօնեաներ։ Հայերից՝ պատմաբան Լէօն, Ռ. Տէր-Մինասեանը և ուրիշները։

Իրրև պատւիրակութեան գլխաւոր կանոններ, Սէյմի կողմից հաստատուեց հետեւեալ բանաձեւը։

«1. Պատւիրակութիւնը հանդէս է գալիս, որպէս մէկ ամբողջութիւն իր նախագահի կամ իւրաքանչիւր առանձին դէպքի համար յատուկ լիազօրուած անձի միջոցով, Սէյմի ընդունած հիմնական պայմանների սահմանում, և ո՛չ մի անձնա քայլ չի թոյլատրւում։

2. Պատւիրակութիւնը մանրամասն կերպով հաղորդում է Սէյմին բանակցութիւնների ընթացքի մասին՝ նախօրօք առնելով Սէյմի ցուցմունքները բոլոր կարեւոր հարցերի համար»։

Ըստ որոշման, փետր. 17-ին պատւիրակութիւնը պէտք է մեկնէր Թիֆլիսից, բայց նոյն օրը ստացւեց մի անկել հետագիր Բրեստ-Լիտովսկի բոլշեւիկեան պատւիրակութեան քարտուղար Կարախանից, որը ասում էր. «Համեմատած փետր. 21) վերջնագրի հետ նոր առաջարկը պարունակում է վերջնագրի ժամանակէտ։ Այդ պատճառով, այլ և որովհետև գերմանացիները մերժեցին մինչեւ գաշնագրի ստորագրութիւնը դադարեցնել պատերազմական գործողութիւնները, մենք վճռեցինք ստորագրել գաշնագիրը, որի քննութեան մէջ մենք դեռ, և ստորագրելուց յետոյ՝ մեկնել։ 21 փետր. պայմանների ամենալուրջ կէտն է՝ Արդահանի, Կարսի, և Բաթումի անջատումը Ռուսաստանից՝ ինքնորոշման ձևի տակ»։*

Այս հետագիրը խորին զարմանք ու վրդովում առաջ բերեց Սէյմի չրջանններում։ Նոյն օրն իսկ գումարւեց բոլոր ֆրակցիաների և կոմիսարիա-

---

*) Պետք է նկատի, որ Անդրկովկասում դեռ գործում էր հին տոմարը և Անգրկ. Սէյմին ու կոմիսարիատին վերաբերող ժամանակագրութիւնը նշանակւած է հին տոմարով. այստեղից է և կարախանի հեռագրի մէջ յիշւած ժամանակի տարբերութիւնը։ Նոր տոմարն ընդունւեց Սէյմի 13 ապր. օրէնքով։

ան անգամների արտակարգ մի ժողով, որը միաձայնութեամբ ընդունեց բողոքի հետեւեալ հեռագիրը, որ և ուղարկեց անմիջապէս. «Ընտրատ–Լիտտվսկի՝ հաշտութեան խորհրդաժողովին, Պետրոգրադ՝ Սովնարկոմին, Լոնդոն, Փարիզ, Ուաշինկթոն, Հռոմ, Թոքիօ, Կ. Գալիս, Բերլին, Վիէննա՝ արտաքին գործոց նախարարներին. Քիւ՝ Կենտրոնական Ռադային, Օդեսա՝ Սովդեպին. — Համաձայն Սէյմի վճռի, անդրկովկասեան կառավարութեան, Անդրկովկասին և նրա սահմաններին վերաբերող ամէն մի պայմագիր, որ կնքւում է առանց իր գիտութեան ու մասնակցութեան, համարւում է զուրկ միջազգային արժէքից և պարտաւորեցուցիչ ուժից իրեն համար։ Այսու յայտնում է նաև ի գիտութիւն հանրութեան, որ Անդրկ. Սէյմը արգէն բնարել է հաշտութեան պատւիրակութիւն, որը, բոլ Թիւրքիայի հետ կայացած նախնական համաձայնութեան, պատրաստւում է մեկնել Տրապիզոն վերջնական հաշտութիւն կնքելու նպատակով։

Որոշ վարանումից ու սպասումից յետոյ, պատւիրակութիւնը մեկնեց Բիթլիսից և փետր. 23–ին արդէն Տրապիզոնի նաւահանգստում էր։ Տեղ հասնելուն պէս հաղորդեց Պոլիս, որ սպասում է Թիւրքական պատւիրակութեան, սակայն, մի քանի օր պատասխան չէկաւ, և անդրկ. պատւիրակութիւնը մնաց նաւի վրա, առանց ցամաք իջնել կարողանալու, անորոշ վիճակի մէջ, բոլորովին կորւած աշխարհից։

Միայն փետր. 27–ին, Տրապիզոն հասաւ Թիւրքական պատւիրակութիւնը, որ բաղկացած էր 5 անդամից, նախկին ծովային նախարար Ռէուֆ բէյի նախագահութեամբ, և նոյն օրը անդրկովկասեան պատւիրակութիւնը նաւից իջաւ ցամաք։ Մի քանի նախնական բանակցութիւններից յետոյ, հաշտութեան խորհրդաժողովը բացւեց մարտ 1–ին և հէնց առաջին նիստում պարզւեց, որ կողմերը եկել էին ներկայ ծրագրերով և խօսում տարբեր լեզուներով։ Բանալով նիստը՝ Ռէուֆ բէյը պատասխանեց ողջոյնի հետեւեալ ճառը. «Երախտապարտ եմ երկնքին, որ ինձ տալիք ընծայից իմ երկրի և իմ պաշտօնակիցների անունից դիմելու բարեմաղթական խօսքերով անդրկովկասեան ժողովուրդների յարկելի ներկայացուցիչների պատւական առթիւ, Անդրկովկասի, որը, ցարիզմի անկումից յետոյ, հետզհետէ յաջողւում է անկախութեան ճանապարհով։ պատիւ ունեմ դիտել այս քանդպատին դէպքը, երբև իմ կեանքի ամենահաճելի ուրախութիւններից մէկը։ Ողջունելով այսօր յանձին մեր մեր երկիրը, թնաւ ո՛չ միայն ծեռակատարութեան և դիւանագիտութեան աւանդութիւնների հետեւելու անհրաժեշտութիւնից դրդուած, ես ուելի չուտ ոգեւորւած եմ յարգանքի զգացմունքներով և աջակցելու բաղձանքով ա՛յն արթագան գործին, որի ներկայացուցիչն էք հանդիսանում դուք։ Քանի որ 200 տարուց ի վեր ցարիզմի դէմ մղած բոլոր մեր պատերազմները մեր երկրների համար ինքնապաշտպանական պատերազմներ էին, ես կարծում եմ, որ մեր ընդհանուր ճակատագրերը ուելի և ուելի էին կապւում միմեանց այդ ընդհանուր փառաւոր պատմութեան ընթացքին։ Ջեր ապրած վերջին չրջանը, որը, դժբախտաբար, արգելք եղաւ մեզ չօչափելի կերպով կատարել մեր պատմական պարտքը օգնելու ձեզ, մի չարք ծանր փորձութիւններով ապացուցեց մեր ճակատագրերի այդ մերձեցման ամբողջ կարեւորութիւնը։ Ցաւենայն դէպս, ես համոզուած եմ, որ մենք ամենքս այստեղ մեզ բաժանող արգելքի խորտակումը համարում ենք մեզ համար ուելի կարեւոր երեւոյթ, քան ամենամեծ դիւանագիտական յաջողութիւնները, որովհետեւ մեզ չաղկապող կապերը հանդիսանում են ո՛չ միայն սոսկ

պատմական ու աշխարհագրական յարաբերութիւններ, այլ, աւելի լոտ, մեր ընդհանուր անցեալից բխող ազգակցական կապեր։ Եւ հէնց այդ պատճառով կովկասեան և թիւրքական ժողովուրդները այժմ կազմած են մեկնոյն կրօններից ու մեկնոյն ազգերից և ունեն գրեթէ միեւնոյն պատմութիւնը։ Ուզևորուած այս գաղտմունքներով՝ ես մաղթում եմ բախտաւոր վաճառ մեր խորհրդակցութիւնների համար և յայտարարում առաջին ընդհանուր ժողովը բացուած»։

Այս, արեւելեան չողոքորթութեամբ համեմուած, ճոռոմ ու մանուածապատ, բայց յստակ մտքեր պարունակող ճառին անդրկ· պատւիրակութեան նախագահը պատասխանեց ընդհանուր, խուսափողական խօսքերով։ Այնուհետև Ռէուֆ բէյը դիմեց աւելի կարուկ մէկոցի։ Նա դրեց Անդր· պատւիրակութեան առջեւ հետեւեալ հարցումը· «Օսմանեան պատւիրակութիւնը խնդրում է անդրկովկասեան պատւիրակութեան անել ստոյգ յայտարարութիւններ յիշեալ հանրապետութեան էութեան, ձեւի, քաղաքական ու վարչական կազմակերպութեան մասին և հարցնում է, թէ արդեօք վերջինս կատարե՞լ է այն պայմանները, որոնք պահանջւում են միջազգային իրաւունքով պետութիւն կազմելու համար»։

Այս հարցումին անդրկովկասեան պատւիրակութիւնը պատասխանեց, յայտնրզ, մասն Շ-ի նիստին, թէ՝ «Անդրկովկասի էութեան, կառավարութեան ձեւի, քաղաքական և վարչական կազմակերպութեան հարցը հերթի է դրւած այդ հարցերը լուծելու մեկ իրաւազօր մարմնի՝ Անդրկ· Սէյմի մէջ, որը առնդծած է ժողովուրդների ազատ կամարտայայտութեամբ և ընդհանուր ընտրական իրաւունքի սկզբունքով։ Բոլշեւիկեան յեղաշրջումից սկսած Անդրկովկասի հողի վրա դադարեց կենտրոնական ռուսական իշխանութեան գործունէութիւնը, և մի նոր, իւքնուրոյն կառավարութիւն ծագեց, որը այժմ պատասխանատու է Սէյմի առջև։ Անդրկովկասի այս կառավարութիւնը մտել է միջազգային յարաբերութիւնների չրջանը՝ ընդունելով օսմանեան կառավարութեան առաջարկը՝ սկսելու իր հետ ինքնուրոյն բանակցութիւններ հաշտութիւն կնքելու նպատակով։ Ցետագային, Սէյմն ու Անդրկ· կառավարութիւնը այս ուղղութեամբ արին մի նոր քայլ եւ՝ ուղարկելով պատերազմող պետութիւնների արտաքին գործոց նախարարներին հեռագրական բողոք Բրեստ-Լիտովսկի դաշնագրի Անդրկովկասին վերաբերող մասի դէմ և յայտարարելով, որ առանց իրենց գիտութեան և հաւանութեան կնքւած դաշնագիրը միջազգային իրաւունքի տեսակէտից զուրկ է որևէ արժէքից և պարտադիր չէ իրենց համար։ Սակայն, այս խաղաղութեան խորհրդաժողովը Տրապիզոնում նոյնպէս հանդիսանում է միջազգային-իրաւական կեանքի մի ակտ։ Այսպիսով, Անդրկովկասը de facto՝ իրապէս արդէն պետութիւն է, թէև դեռ չի յայտարարել ու չէ տեղեկացրել պետութիւններին իր անկախութիւնը»։

Այս պատասխանի մէջ էլ որոշութիւն չկար· Թիւրքերը ձգտում էին ստանալ յստակ պատասխան, թէ Անդրկովկասը անկախ պետութիւն է· անդրկովկասցիք այդ պատասխանը չէին տալիս։ Այդ պատճառով Ռէուֆ բէյը սկսեց Անդր· պատւիրակութեան դնել մի շարք հարցումներ վերջինիս պատասխանի զանազան կէտերի մասին և երբ մէտս օրւայ, մարտ Շ-ի նիստում պատչաւ պատասխանները, արաւ հետեւեալ յայտարարութիւնը· «Օսմանեան կայսերական պատւիրակութիւնը, անդրկովկասեան պատւիրակութեան նախագահի տրած յայտարարութիւնների ծանօթանալուց յետոյ,

հաստատում է, որ այդ պատերազմը բաղկացած է Սէյմի պատերազմներից, որ յիշեալ պետութեան կազմակերպութիւնը չի համապատասխանում միջազգային հանրային իրաւունքին և որ այդ պետութիւնը դեռ յայտարարութիւն չի արել իր անկախութեան մասին։ Օսմանեան կայսերական կառավարութիւնը անկեղծօրէն բաղձալով Անդրկովկասի ժողովուրդների ազատ զարգացումը և կամենալով բարի հարեւանական յարաբերութիւնների մէջ մտնել այդ ժողովուրդների հետ՝ խնդրում է անդրկովկասեան կառավարութիւնից որոշել ու պաշտօնապէս յայտարարել ձեր այն կառավարութեան, որի կազմութեան մասին խօսում է ինքը, հողի սահմանները, պետական լեզուները և կրօնը, այլ և ճշտորոշել յիշեալ կառավարութեան վիճակն ու դիրքը օսմանեան կայսրութեան նկատմամբ։

Մարտ 1–ին, Հոդ նիստում, Չխենկելին նորից յայտարարեց, որ Բրեստ–Լիտովսկի դաշնակիրը պարտաւորեցուցիչ և ընդունելի չէ Անդրկովկասի համար՝ կրկնելով արդէն մի անգամ արած յայտարարութիւնը Անդրկովկասեան Սէյմի և կառավարութեան մասին՝ աւելացնելով նաև, որ ժամնաշ հաւանականութեամբ Անդրկովկասը կը լինի ռամկավար, դաշնակցական հանրապետութիւն։ Անդրկովկասի հողը բաղկացած է Բաքուի, Գանձակի, Երեւանի, Թիֆլիսի, Քութայիսի, Բաթումի ու կարսի նահանգներից և Սուխումի ու Զաքաթալայի շրջաններից։ Դաղստանի և Սեւծովեան շրջանի մէացումը Անդրկովկասին կախած է իրենցից։ Պետական լեզուն առ այժմ առնւսրլէնն է, բայց պիտի դառնան վրացերէնը, հայերէնն ու թուրքերէնը։ կրօնական տեսակէտից՝ Անդրկովկասում տերում է խղճի ազատութիւն։ Միջազգային տեսակէտից Անդրկովկասը բանակցութիւններ է Թուրքիայի հետ և պատրաստում է կնքել տւեական հաշտութիւն։

Այս յայտարարութեան է պատասխան Ռէուֆ բէյը նորից կրկնեց, որ օսմանեան պատիրակութիւնը պնդում է Բրեստ–Լիտովսկի դաշնագրի վրայ։ Լենինի կառավարութիւնը՝ տապալելով նախկին կառավարութիւնը՝ կատարած գործողութեամբ իսկ բռնել է նրա տեղը։ Սակայ. ժողովը աւելի կամ պակաս հնազբրրական միջնադէպ է լոկ, որ մի աւելորդ անգամ ապացուցանում է Լենինի կառավարութեան ոյժը։ Այն հանգամանքը, որ Անդրկովկասը չի ճանաչում այդ կառավարութիւնը, ունի ներքին պետական նշանակութիւն և չի կարող անդրադառնալ արտաքին յարաբերութիւնների վրա, քանի երկրի որև է մի մասը չի անկաւել և միջազգային իրաւունքի սկզբունքներով չի յայտարարել իր անկախութիւնը և չի ստացել ուրիշ պետութիւնների ճանաչումը։ Ներկայ բանակցութիւնները միայն մէկ նպատակ ունեն. պատրաստել և ընդունել տնտեսական, առեւտրական և ուրիշ տեխնիկական մանրամասնութիւնների վերաբերող և Բրեստ–Լիտովսկի դաշնագրից բխող պայմաններ — մի դաշնագիր, որը պարտադիր է և Անդրկովկասի համար։ Միաժամանակ Ռէուֆ բէյը աւելացրեց, որ բանակցութիւնները սկսելուց առաջ Անդրկովկասը պէտք է յայտարարէ իր անկախութիւնն ու կառավարութեան ձեը։

Հինգերորդ նիստում, մարտ 8–ին, Չխենկելին նորից ու նորից պնդեց, որ Բրեստ–Լիտովսկի դաշնագիրը պարտաւորեցուցիչ չէ Անդրկովկասի համար և հաղորդեց Սէյմի փետր. 22 նիստի որոշումը, թէ հակընդդէմ հնա-

քաւար է» Անդրկովկասի անկախութեան յայտարարութիւնը, որից յետոյ Փէյնի թէյը վճռական կէտերով յայտարարեց, որ կովկասեան հանրապետութեան անկախութեան ճանաչումը հնարաւոր կը լինի միայն մի առանձին կէտով Անդրկովկասի և Թիւրքիոյ միջև հնգնկիզք դաշնագրի մէջ, իսկ նման դաշնագիր կնքելու համար բանակցութիւնները կարող են սկսել ա՛յն ժամանակ միայն, երբ անդրկ. պատւիրակութիւնը հրաժարուի բաժանմէ, կարգի և Արգահանի սանջակների վրա ունեցած յատկութիւններից: Իսկ ինչ որ վերաբերում է Անատոլիայի ժողովուրդների ինքնորոշման և Թիւրքահայաստանի ինքնավարութեան հարցին, այդ Թիւրքական ներքին խնդիր է և չի կարող քննութեան առնուել. օսմանեան պատւիրակութիւնը թոյլ չի տայ միջամտելու իր ներքին գործերին:

Սրա վրա երկու պատւիրակութիւնները որոշեցին դիմել իրենց կառավարութիւններին նոր հրահանգներ ստանալու համար, և բանակցութիւնները մի առ ժամանակ կանգ առին:

Ստեղծուած փակուղուց դուրս գալու նպատակով անդրկովկասեան պատւիրակութիւնը իր անդամներից մի քանիսին, որոնց մէջ և Քալանթարեանն, ուղարկեց Թիֆլիս՝ բերանացի զեկուցում տալու և նոր հրահանգներ բերելու համար: Մինչդեռ ժամանակ պատւիրակութիւնը հարց յարուցեց, որ նախադահին տրուն արտակարգ լիազօրութիւններ՝ ազատ և ինքնուրոյն գործելու համար: Այս պահանջը հիմնաւորում էր նրանով, որ պատւիրակութիւնը շատ բազմանդամ է, դանդաղաշարժ և դժուարացնում է գործը: Իրօք, պատճառը ուրիշ էր. այդ միջոցով ուզում էին առաջը առնել այն դրութեան, որ Բիւրքերը միշտ իրագեկ էին անդրկ. պատւիրակութեան մէջ անցած–դարձներին, և այդ բացատրւում էր նրանով, որ ազրբէյնցի պատւիրակները դաշտի կերպով տեղեկութիւններ էին տանում նրանց: Յետագային յայտնի դարձաւ, որ այդ հարտակարգ լիազօրութիւնները» հարկաւոր են եղել և վրացիների համար:

Սկզբը իր մարտ 13 նիստում քննութեան առաւ Տրապիզոնից բերուած տեղեկութիւնները և Չխենկելիին հարտակարգ լիազօրութիւններ» տալու առաջարկը և ընդունեց հետեւեալ բանաձեւը. «Լսելով զեկուցումը Թիւրքիայի հետ վարուղ հաշտութեան բանակցութիւնների ընթացքի մասին և կռնդնած մնալով իր 1918 թ. փետր. 16 որոշման վրա ի մասին հաշտութեան պայմանների Թիւրքիայի հետ, բայց կամենալով հնարել պատեսւորը հաշտութեան՝ ընդունելի Անդրկովկասի և Թիւրքիայի համար, Սէյմը վճռում է. տալ հաշտարար պատւիրակութեան նախագահ և Անդրկովկասի արտաքին գործոց նախարար Ա. Ի. Չխենկելիին արտակարգ լիազօրութիւններ՝ ինքնուրոյն կերպով այդ ուղղութեամբ անհրաժեշտ քայլեր անելու համար»:

Այս լիազօրութիւնը անժխտական ուղարկեց Տրապիզոն:

ԳԼՈՒԽ Թ.

ՀԱՑ — ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Թողնենք մի առ ժամանակ Տրապիզոնի բանակցութիւնները և դառնանք, թէ այդ օրերին ինչ էր կատարւում ռազմաճակատում:

Տեսանք արդէն, որ Քիւրքիւրի դրգռմով, դեկտեմբեր ու յունուար ամիսներին, Անդրկովկասի ամբողջ սահմանագծի վրա և գրաւած վայրերում տեղի էին ունենում մահմեդական չարժումներ, իսկ յունւարի կէսերին վեհիր փաշան բողոքից հայկական զօրամասերին դէմ՝ հաղորդելով, թէ ինքը հրամայել է իր բանակին չարժուել մինչև ուրշ օրքի հետ չժամն մէջ ժամնելը:

Փետր. 25-ի երեկոյեան, Անդրկովկասեան կոմիսարիատը վեհիր փաշայից ստացաւ մի նոր հեռագիր, որ առում էր. «Թիֆլիս, գլխաւոր հրամանատարին, պատճէն Անդրէ. կառավարութեան նախագահին: — Հաղորդում եմ քառասի հէնց հիմա ստացած երկու ֆրանսերէն հեռագրերը: Առաջինը՝ կովկասեան ռուս բանակի ղէներալ հրամանատար զօր. Լեբեդինսկիին: Ձերդ գերազանցութիւն, Թուսասատանի փառապանծ հաճրապետութիւնը՝ համամայնքով պարզել բաթումի, կարսի և Արգահանի չրջանները՝ հէնց նոր այդ մասին ստորագրեց հաշտութեան դաշնագիրը: Ի հետևանս այդ բանի պատիւ ունիմ հաղորդել ձերդ գերազանցութեան, որ ես այս պահուս ստացայ իմ պարապանդից մի հրաման, որի հիման վրա խնդրում եմ ձեզ ամենակարճ ժամանակում դադարեցնել յիշեալ չրջանները: Սպասելով ձերդ գերազանցութեան պատասխանին՝ խնդրում եմ ընդունել ամենախորին յարգանքս հատատքը. Վեհիր Մէհմէդ»:

Երկրորդ հեռագիրը. «Կովկասեան ռուս բանակի հրամանատարին: Ձերդ գերազանցութիւն, հիմնուելով ձեր նեդկայութեան վրա իշդրումով՝ ես ենթադրում էի, որ հայերը յանդգնութիւն չեն ունենայ գործելու դադատնութիւններ այդ քաղաքում ու չրէկայ գիւղերում և սկզբում հրամայեցի կանգնեցնել մեր զօրքերի յառաջխաղացումը յիշեալ գծերի վրա: Այսօր ստացած տեղեկութիւնների հիման վրա, ձերդ գերազանցութեան հետաքրքրութեամբ յետոյ իշդրումով և քաղաքի չրէկայեցի տեղի են ունեցել անհանդիստ դադատնութիւններ հայերի կողմից, այդ պատճառով ես ինձ պարտաւորած եմ զգում հաղորդելու ձերդ ազնուութեան, որ մենք հարկադրանքի տակ ենք, ըստ կարելւոյն չուտ, ազատելու ազատնալիքի ներքոյ գտնուղ չրէկանները: Այդ ատիթ խնդրում եմ, ձերդ գերազանցութիւն, այս կամ այն ձեւով յայտարարել այդ բռնաւորներին, որ նրանց գործադրութիւնը կարող է ունենալ իրրև հետեւանք խիստ ճնշումներ և անապատի արդիւնք: Ծանուցած եմ ատիքից, ձերդ գերազանցութիւն, տեղեկացնելու ձեզ, որ մեր զօրքերի վերադարձը Տրապիզոն ձեր զօրքերի կողմից ընդունուց անկնդ ու արտագին: Ես երջանիկ եմ վկայ լինելու այդ հազւադիւտ պատմական տնա-

քանին։ Տրապիզոնի պայքարը, որ, անկասկած, տեղի է ունեցել չնորհիվ պատահականութեան, մեծ ցաւ պատճառեց ինձ, և ես չտապում եմ ներկայացնել ռուս բանակին իմ ցաւակցութիւնները ու խնդրել ձերդ գերագանցութեան ընդունել իմ բարձր յարգանաց հաւաստիքը։ Վեհիր Մեհմետ»։

Այսպէս, ուրեմն, անդրկովկասեան կառավարութիւնը վհատը փաշայից էր իմանում, որ Տրապիզոնը գրաւած է թիւրքերի կողմից և որ, բացի այդ, թիւրք հրամանատարութիւնը նոր պատրաստներ է որոնում, որովհետև «հայերի զազանութիւնները» նորութիւն չէին նրա համար։

Նոր տեղեկութիւնները հաստատում էին, որ թիւրքերը չարունակում են արագօրէն ուժեղացնել ռազմամասկատը։ Անդրկ. բանակի ընդհանուր հրամանատար զօր. Ողիչելիձէն Սէյմի փետր. 26-ի նիստում հաղորդեց, որ ձվերջին երկու-երեք օրւայ ընթացքին Տրապիզոնի չրջանում թիւրքերի վերաբերմամբ դէպի մեզ փոխած է։ Մեր զօրքերը Քողել էին ռազմամթերքի ու պարէնի ահագին պաչար։ Թիւրքերի առաջարկով կազմուել էր մի յանձնաժողով, որը պէտք է պահպաններ դէպը, և նետհետէ ամբողջ պաչարը պիտի փոխադրուէր։ Ստացած տեղեկութիւններից այժմ դուրս է գալիս, որ թիւրքերը ներս չէն քողնում մեր ընդունողներին և ամէն կերպ արդելք են հանդում մեզ ստացածքը դուրս տանելուն։ Դրանից զատ, մեզ հաղորդում են, որ բացի Տրապիզոնը գրաւող 37 դիւիզիայի մասերից ևւրոպական Իուաստանից հասնում են 42րդ դիւիզիայի մասերը։ Տեղեկութիւններ կան, որ այնտեղ եվևացող զնդերը բոլշևիկեան կոչ չունեն։ լաւ և առոյգ տրամադրութեան տէր մարդիկ են։ Երեւացել են ռազմամթերք կրող բաժանթիւ առագաստանաւեր»։

Միաժամանակ սաստկանում էին մահմետական չարժումները Կարսի և Արդահանի չրջաններում։ Մերդինեցի ու Արդահանը պաչարել էին գինեւած ամրոխի կողմից։ Կարս, Արդահան, Օլթի հաղորդակցութիւնը խորել էր, աւազակախմբեր էին երևացել Կարս-Ալէքսանդրապոլ ճանապարհի վրա, Ջըղըրում, Գէղում և ուրիչ կողմեր։ Կարսից, Արդահանից ստացած էին պաչտօնական հեռագրներ, որոնք ամենամռայլ գոյներով էին ներկայացնում կացութիւնը։ «Դրութիւնը չափից աւելի տագնապալից է, հեռագրում էին Արդահանի քաղաքային ու զաւառական գործադիր կոմիտէի նախագահ Սամարիձէն և կոմիսար Շաքալովը։ Կազմակերպւած ու համաչափ գործող հաղթաթուր հրոսակների կողմից իրար յետևից կողոպտւում ու գինաթափւում է քրիստոնեայ բնակչութիւնը։ Երկչ նոյնիսկ Քալանւեց ու Տրացանի բանւեց մերդինեցը, ուր հաւաքւել է չրջանից 6 գիւղերի ողջ քրիստոնեայ բնակչութիւնը։ Արդահանի չուրջ հաւաքւում է քրիստոնեայ ազգաբնակութիւնը, որ երկու անդամ որոշել է արտագաղթել, բայց չի կարողանում իրականացնել, որովհետև պահակ չունի և վստահ չէ, թէ կը կարողանայ ձեղքել-անցնել։ Քրիստոնեայ ապդարնակութեան մէջ սերում է կատաբել խուճապ»։

Նոյն չրջանի յունական Ազգ. Խորհրդի նախագահ Կորխանիդին հեռագրում էր, որ «Արդահանի բոլոր քրիստոնեայ գիւղերը աւերւած ու քալանւած են քրդերի և թուրքերի ձեռքով, տաւարը քշւած-տարւած է, բնակչութիւնը խայտառ ձերկացւած, արտագաղթին արդելք են լինում քիւրդ հրոսակմերը... Շրջանի յոյն բնակչութիւնը զտատպատւած է մահւան սոսկից ու ցրտից»։

Ի վերջոյ, Արդահանը գրաւեց գինւած թուրք խուժանի կողմից,

քրեատենեայ և, մանաւանդ պէս, հայ տարրը մասամբ ջարդուեց, մասամբ հարդագաղ փրկուել փախուստի միջոցով:

Աջդահակի չրջանի այդ դէպքերը քանի վչնեերի առիթ աւին Սէյմի մարտ 5 նիստում: Հայերը և վրացիների մի մասը մեղադրում էին մահմետականներին, որ գէնք են ձառայում ժամի ուժէն ձնորհին, որը ձգտում է կործանել հոգևոր: Մահմետական պատգամաւորները չդադարացան պաչպանում էին և, իրենց հերթին, յարձակում Դաչնակցութեան վրա, որը, իբր թէ, պատճառ է դառնում մահմետական չրջանների ապերուժին:

Նոյն օրերին Սէյմում քննութեան նիւթ եղան և Գանձակի ընդհարումները, որոնք միևնոյն ատաուն ունէին — Քուրքական պրովոկացիան:

Փետրարին Քուրքերը յարձակուեցին կայսրանից հայկական մասը անցեալ մի խումբ, պատերազմի դաչտից վերադարձող, հայ դինուորների վրա և նրանցից 12ին սպանեցին: Զինուորները դիմացին ինքնապաչտպանութեան և նոյնպէս սպանեցին մի քանի Քուրքեր: Իսկոյն, Գանձակում հայ և Քուրք Քաղերը զէրքեր բռնեցին միմեանց դէմ, և քաղաքը ստացաւ պատերազմական բանակի կերպարանք: Անդրկ· Սէյմը ուղարկեց պատերազմական՝ թեղերը տեղն ու տեղը կարգադրելու համար: Պատերազմական մէջ մտան Գեր· Մախարաձէն, Աւ· Սահակեանը, Շահխախտինսկին և Ռոր· Համաստիւը, իրրև գանձակեցի գործիչ: Մարտ 2-ին մի խառն պատերազմական ժողով էլ ուղարկեցին Բաքուի Հայոց և Մահմ· Ռոչհուրդները՝ բաղկացած Բեչերութ Զուլաչիրից ու թէ· Ռաֆիևից և Հայկ Տէր-Միքայէլեանից, Գ· Եամագուլեանից, Գեր· Շահնազարեանից, Ցակ· Մամանդեանից ու Մարտին Շաթիրեանից:

Պատերազմական առջև բացուց այսպիսի պատկեր· յունուարի կէսից սկսած, ինչպէս որ երկաթուղիներով երթեւեկութիւնը հայերի համար կտրուած էր, բոլորովին կտրել էր և Գանձակի հայերի և Քուրքերի փոխյարաբերութիւնը, որովհետև· կայարանում, չուկայում և, առհասարակ, Քուրքական Քաղում (որ քաղաքի մեծ մասն է) բոլոր պատահած հայերին անխտիր Քուրքերը սպանում էին: Դրանից յետոյ թէ Քուրքական և թէ հայկական մասերը պարզել էին երկու Քշնամի բանակներ, որոնք պաչտպանում էին խրամատներով սահմանի ամրոցի երկարութեամբ, մչտական պահակներով և պատերազմական բոլոր օրէնքներով: Կայարանը և երկաթուղին Քուրքերի մասում էին, ուստի վերջիններս ստատ կապած էին արտաքին աչխարհի հետ և օգտում էին ամէն յարմարութիւնից՝ ստանալով զինամթերք և ուտեստ: Իսկ հայերը, պաչարուած թերի նման, սպառում էին իրենց վերջին մթերքը· Նրանք չունեցանց դժուար և պատասխանատու կապ կարող էին պահպանել լեռների հայկական գիւղերի միջով Դիլիջանի և Շուշիի հետ:)*

Բացի ընդհանուր պատճառից, Գանձակում կար ընդհարումների և մի յատուկ առիթ· Թիֆլիսի կենտրոնական գինուորական իչխանութեան որոչումով Քուրքերը պէտք է տատնային ռուսական 269րդ գնդի ամրողջ գոյքը, որի մի մասը — ռումբ ու փամփուչտ — գտնւում էր Քուրքական Քաղում և Քուրքերն արգէն առել էին, իսկ մեա մասը — մի քանի հազար հրացան,

---

*) Մ· Շաթիրեան, «Երեւոյթներ Մօտիկ Անցեալից», «Հայրենիք» ամս· 1923թ· № 7:

բաղմաթիվ հազուստ, վրաններ, պայտ ու մեխ և այլն — հայկական թաղում էր, և հայերը չէին ուզում յանձնել: Այս հոդի վրա բաւան վէճ ու կռիւ էր առաջացել երկու կողմերի միջև:

Գաւուրբակուքիւններին մեծ դժուարութեամբ յաջողւեց հաշտեցնել կուռղ կողմերը:

Մահմետական չարժումների տեսակէտից, ինչպէս կը տեսնենք յետոյ, դրութիւնը անհամեմատ աւելի վատ էր Երևանի նահանգում, ուր արիւնահեղ ճակատամարտներ էին տեղի ունենում Թուրք զինւած խուժանի և հայկական կանոնաւոր զօրամասերի միջև:

Վէհիր փաշան ու կովկասեան մահմետականները չատ լաւ գիտէին, թէ ինչ են անում: Նրանք ձգտում էին խառնաշփոթել կովկասը, կազմալուծել ճակատն ու թիկունքը և այդպիսով հեշտացնել թիւրք զօրքերի յառաջխաղացումը, որը սկսւեց յունւարի վերջերին:

Մօտ երկու ամսւայ զինադադարից յետոյ, նորից հայկական նահանգները դառնում էին թաւելբաբմ պատերազմի, այս անգամ փաստօրէն թիւրքիայի և հայերի միջև. ռազմաճակատում այլեւս ռուսական մասեր զրեթէ չէին մնացել, և նրանց թողած դիրքերը գրաւել էր հայկական զորպուսը:

1918թ. տարեզլխին կովկասեան ճակատը ներկայացնում էր հետևեալ պատկերը:

Վանում կանգնած էր հայկական 5րդ հրացանաձիգ գունդը և վանէ երկու գնդերը՝ կազմւած տեղական բնակչութիւնից:

Խնուսում՝ հայկական 2րդ հրացանաձիգ գունդը, Ննուսի և Ղարաքիլիսայի գնդերը՝ նոյնպէս տեղացիներից:

Էրզրումում՝ Էրզրումի հետևակ գունդը, հայկական առաջին հրացանաձիգ գունդը և 4րդ հրացանաձիգ գնդի մէկ գումարտակը, ինչպէս նաեւ բեթդյային մասեր:

Երզնկայում՝ Երզնկայի հետեւակ գունդը՝ 3 գումարտակներով և կամաւորական խմբեր՝ Մուրատի դեկավարութեամբ:

Քեալիֆիքում՝ Սեպուհի կամաւորները:

Տրապիզոնի չրջանում դեռ մնացել էին ռուսական վախճ զօրամասեր, որոնք աստիճանաբար հետևում էին Ռուսաստան: Գլխաւոր հրամանատարութեան կարգադրութեամբ Գիմիւչխանէ-Տրապիզոն գիծը պէտք է գրաւէին վրացական զօրամասերը, բայց չգրաւեցին:

Բացի այս մասերից, դանագան վայրերում ցրւած էին նաև փոքրիկ կամաւորական խմբեր, որոնք օժանդակ ուժ էին կատարում և օգնում էին ժողովրդի և թիկունքային հիմնարկութիւնների ու հաղորդակցութեան գծերի պաշտպանութեան:

Հայկական կորպուսի մի մասը դասաւորւած էր թիկունքի դանագան քաղաքներում. Երեւանում՝ հայկական 3րդ և 6րդ հրացանաձիգ գնդերը և 4րդ գնդի մէկ գումարտակը. կարսում՝ բեդրային մասերը, որոնք կազմակերպման փիճակում էին դեռ. Ալեքսանդրապոլում՝ հայկական 7րդ և 8րդ

հրացանակիր գնդերը և թերթային կազմակերպող մասերը։ Այլ և, գոնացան հետևում, կազմակերպում էին այրուձիի, հրետանիի և տեխնիկական որոշ մասեր։ Կարծի թերագնահատական էր գոր։ Ինչպես, որ համաձայնում էր կարծի թերագնին ամրությունների ամենից լավ ծանոթ դիմադրականներից մեկը։ Նրա կողքին կոմիտաս էր Մ։ Աբգարյանցանցը*)։

Ձախակի ընդհանուր հրամանատարությունը մնում էր նախկինը։ ընդհանուր հրամանատար էր գոր։ Ոսկիչեվսկին, որ նստում էր Էրզրումում։ Կովկասյան բանակի հրամանատարն էր՝ գոր։ Պրժևալսկին։ Բանակի կազմակերպության ու հրամանատարության մեջ պահվել էր անփոփոխ, բայց, քան էությունն, առաջվան բանակ այլևս գոյությունն չունէր։ կար, համեմատաբար կազմակերպված հայկական կորպուսը, կիսակազմակերպ վրացական կորպուսը և անանձական, տարօրեն ազգային վիճակի մեջ՝ մահմեդական զորամասը։

Թէ այս ուժերին ի՞նչ էին հանդարտում Քիւրդերը, դժուար է ասել։ Ըստ գեղ։ Լարչեի, 1918թ։ սկզբին վեհիր փաշայի հրամանատարության տակ կային (Այդ բանակը) շուրջ 10.000 կուռղներ, որոնց Քիւրդ մարդեն հասած 25.000-ի։ Նրան Լարչեի հաշուով, գոր։ Նազարբեկյանը վեհիր փաշայի բանակի դէմ ունէր ոչ աւելի, քան 17.000 գինուոր՝ կարս-Ալաքլուզովի ճակատի վրա։ Բացի թնականից, Քիւրդերն ունէին և մի չափ ուրիշ խոշոր առաւելութիններ։ Նախ նրանք չատ լաւ ծանօթ էին ժեր ճակատի ու Քիւրդստանի վիճակին։ մերձակա և հետևում Քիւրդստանում ունէին մահմեդականներից համակրանքն ու աջակցութիւնը։ Քիւրդ բանակի կորովը բարձր էր, մինչդեռ մեր զորամասերի մէջ դեռ քաղ էին ռուս բանակի քայքայման հետքերը։ Վերջապես, Քիւրդ զօրքը ունէր հմուտ հրամանատարութիւն ու մեկ կամք, մինչդեռ կովկասում սկրում էր բազմիշխանութիւն կամ անիշխանութիւն և չեռ միասնու ու ղեկավարող ուժեղ ձեռք։ (Ռազմամեքենայի ճարահատը տես էջ 76)։

Այս պրոբլեան մէջ, խախտելով գինադադարի պայմանները, յունւարի վերջերին Քիւրդերը անցան յարձակման երզնկայի ճակատում, որը ունէր աւելի քան 70 կիլոմետր երկարութիւն, էրզրումից կտրած էր մօտ 150 կիլոմետր տաքածութեամբ և բռնած էր հայկական ցանցառ զօրամասերով, որոնք սակայն էին պաշտպանել նաև ճանապարհները քիւրդ հրոսակմերների յարձակումներից։ Մեր զօրքերը ցոյց տուին կատաղի դիմադրութիւն։ Մի-ժամանակ բարձր հրամանատարութիւնը բողոքից գինադադարի խախտման դէմ, բայց վեհիր փաշան պատասխանեց, Թէ ինքը ստիպւած է առալ յարմարել միայն մահմեդականների կեանքը հայերից պաշտպանելու նպատակով։ «Ես կարող եմ ձեզ վստահացնել, աւելացնում էր նա, որ երզնկայի գինադադարի համաձայնութիւնը ամբողջապես մնում է իր ոյժի մէջ։ Իր

*) 1918 թւի կովկասեան ճակատի կռիւն, դասաւորութեան և պատերազմական գործողութիւնների մասին ամփոփ տեղեկութիւններ կարելի է գտնել գոր։ Ֆ։ Ղորդանիայի աշխատ յիշած գրքում և փրոֆեսոր Լարչեի վերևյիշւած մեծահատոր ուսումնասիրութեան մէջ։

արժէքը կորցրել է միայն երկու կողմերը բաժանող գիծը, իբրև հետեւանք ռուս զօրքերի հեռացմանն:

Թիւրքերի կողմից գործում էին 36րդ դիվիզիայի մասերը — 2 հետեւակ գունդ, 2 հարիւրեակ հեծելազօր և 2 լեռնային թնդանօթ՝ ունենալով օգնական զրպարեան հրոսախմբեր: Այս ուժերի դէմ հայերը ունէին հազիւ 1000 ուխտ, 120 ձիաւոր և 6 թնդանօթ. միւս ուժերը սոսկալած էին գրաւել Քիւրտնէքի և ճանապարհների պաշտպանութեամբ: Մի քանի օրւայ յաջողութիւնից յետոյ, յունւ. 31–ի երեկոյեան, հայկական զօրքերը հայ ազգաբնակութեան հետ պարպեցին Երզնկան և, անհնարին դէպքերով նահանջեցին Էրզրումի ուղղութեամբ: Թիւրքերը կրնկակոխ հետեւում էին նրանց. քիւրդերը յարձակւում էին աջից ու ձախից, և դժուարացնում հայերի նահանջը, որը, ասելի չուտ, անընդհատ ճակատամարտների մի շարք էր: Եւ միայն գնդ. Հասան–Փաշայեանի ու Մուրատի քաջութեան շնորհիւ Քշեմին յաջողութիւն չունեցաւ: Ճանապարհին միացան և մամախաթունի և միւս չրջանների հայկական կուռ ուժերն ու գաղթականները: Եւ այս բազմահազար զանգուածը, սարսափելի ցրտի ու սառնամանիքի մէջ, ահագին գոհեր տալով, չարժւեց դէպի յետ: Զօրքի մօտ 40%–ը և գաղթականների կէսը վնասւեց ցրտից. որի ձեռքն էր սառել, որի ոտքը կամ մարմնի ուրիշ անդամը: Սպանւածների ու վիրաւորների թիւը հաշււում էր հարիւրներով: Հասկանալի է, որ զաղազած բազմութիւնը, իր հերթին, ինչով կարող էր վնասում էր ճանապարհին պատահած մահմետականներին: Եւ երզնկայից մինչև էրզրում ո՛չ մի մահմետական գիւղ կանգուն չմնաց. այրւեցին ու քար ու քանդ եղան, բնակչութիւնը փախաւ կամ կոտորւեց:

Նոյն ձեւով նահանջը տեղի ունեցաւ, փետր. 3–ին, և Բաբերդի չըրջանից, Մեպուհի անմիջական ղեկավարութեան տակ:

Հայերի արած փոխվրէժի քայլերը ասելի ևս զրգռեցին թիւրքերին, և պատերազմը փաստօրէն ստացաւ հայ–թիւրքական կատրածի կերպարանք: Դէրձիներ չէին առնւում. երկու կողմն էլ իրենց ձեռքն ընկած հակառակորդին ոչնչացնում էր: Ինայել չկար: Գաւառապահական օրէնքները չէին յարգւում: Մարդը մարդուն իսկական մտքով դարձել էր գազան:

Փետր. 11–ին Երզնկայի զօրքն ու ժողովուրդը հասաւ Էրզրում: Թիւրքերը ասելի և ասելի զարգացնում էին իրենց գործողութիւնները և տարածւում ուրիշ ճակատների վրա:

Նոյն փետր. 11–ին թիւրքերը մտան Տրապիզոն և գրաւեցին ռուսների Քողած անհաւիւ ապրանքները, ռազմամթերքը, պարէնը, նաւահանգստի գործերը, երկաթուղային նիւթերը — տասնեակ միլիոնների արժողութեամբ հարստութիւններ:

Փետր. 18–ին Հայկ. կորպուսի սպայակոյտի պետ զօր. Վիլինսկին հեռագրում էր պլխաւոր հրամանատարութեան. «Կորչմայի զօրամասը հասաւ Իլիջա. ժամը 16–ի մօտերը, Կորչմայի կողմից, երեւացին ձիաւոր թիւրքեր, որոնք, մեր առաջապահների հետ հրացանաձգութիւն ունենալուց յետոյ, չուտով քաշւեցին: Ինուսի ուղղութեամբ, Սուլուխի կամուրջի մօտ, Իլիջը ներկայացուցիչը կանչեց մեզ սպային և հարցրեց, Թէ ինչո՞ւ չենք

հետաքրքրություններ: Թիւրք ներկայացուցչի ասելով՝ թիւրքերն արդէն բոլշեւիկներէն հետ կնքել են հաշտութիւն, որով մենք պէտք է քաշուինք մինչեւ Սաթըրամիչ՝ յանձնելով թիւրքերին ամբողջ պատերազմական նիւթերը:

*

Երզնկայի անկումը, յաջորդ հարւածի պէս, ցնցեց ամէնքին: Վերահաս վտանգը բացայայտ էր: Այնքա՞ն ծիրով և արիւն-քրտինքով բնակեցւած Թիւրքահայաստանը նորից դատարկւում էր: Երզնկայից մինչև Վան տեղահան եղած ժողովուրդը՝ գաղթում էր: Վախստականների հարանը սկսել էր հասնել Երևան ու Թիֆլիս: Նորից՝ աւեր ու քշտուութիւն ամէն կողմ: Թիւրքահայաստանը մահացու վտանգի առջև: Աւելին: Քշնամին մօտենում էր Ռուսահայաստանի դռներին: Եւ ամէնքի աչքերը յառած էին էրզրումին: Էրզրումը զարձել էր հայութեան յոյսի փարոսը: Ազգային Ինքնապաշտպանական Կորպուսի և Ազահովութեան Կորպուսի կանքերը ամբողջապէս ուղղուած էին այդ կողմը:

Բայց իրապէս ինչ էր ներկայացնում այդ ժամանակ էրզրումը: Այնտեղ համախմբւած էին հայկական կորպուսի առաջին բրիգադի հետևեալ զօրամասերը՝ — էրզրումի գունդ՝ 2 դումարտակ, 600 ուխտ, երզնկայի գունդ՝ 3 դումարտակ, 1400 ուխտ, 2 լեռնային մարտկոց 8 Քնդանօթով, առաջին հրացանաձիգ գունդը՝ 2 դումարտակ, 500 ուխտ, Գրի հրացանաձիգ գնդի մէկ դումարտակը 300 ուխտով, էրզրումի դումարտակը 300 ուխտ, 3 խումբ կամաւորներ՝ 400 ձիաւոր: Ընդամէնը, ուրեմն, 9 դումարտակ, 3 խումբ՝ 3100 ուխտով ու 400 ձիաւորով և 2 մարտկոցով՝ 8 Քնդանօթով:

Բացի այս ուժերից, էրզրումի ամրութիւնները ունէին բաւական ուժեղ հրետանի 400 բերդային և դաշտային Քնդանօթներով, որոնց մեծագոյն մասը, սակայն, անգործածելի վիճակի մէջ էր՝ լեւսած ու Քաղած խորունկ ձիւնի մէջ: Տպիւ մի-երկու տասնեակ Քնդանօթներ պահել էին իրենց ռազմունակութիւնը: Էրզրումի հրետանին վարում էին 40 ռուս սպաները և 400 գինւորները, որոնց մարտական ոգին ու բարոյականը այնքան էլ բարձր չէին: Ռուսական սպայակոյտը փետր. 12-ին էրզրումից տեղափոխւել էր Սաթըրամիչ և բերդի պաշտպանութիւնն ու օրգքերի հրամանատարութիւնը անցել էր հայերի ձեռքը:

Էրզրումի ամրացած չրջանի պետ նշանակւել էր Անդրանիկը: Գալ հայդուկ, հիանալի խմբապետ, պարտիզանական կռիւների հմուտ վարիչ՝ Անդրանիկը, զօրավարի ուսադիրներ դնելուց յետոյ, մեծ չափով կորցրել էր հմայքը: Ուսադիրները չէին արգելում, որ ռուսական բանակի սպաները չարունակէին համարել նրան խմբապետ՝ անձեռնհաս վարելու խոշոր զօրամասեր և բերդի պաշտպանութեան բարդ գործը: Անդրանիկը ինքն էլ, իր հերթին, լաւ չէր զգում իրեն նոր դերում. ո՛չ խմբապետ էր, ո՛չ դիւնորական: Ինքնաւարութիւնից հրաժարւել, զօրավար չէր դարձել: Այդ պատճառով, մինչև վերջ էլ չկարողացաւ կենտրոնացնել իր ձեռքը բերդի և զօրամասերի ղեկավարութեան գործը: Այս պարագան քիչ չնպաստեց էրզրումի արագ խորտակմանը:

Բայց առանց այդ էլ Էրզրումի օրերը հաչւսած էին: Նրա դէմ գործում էր ո՛չ միայն Վհիբ փաշայի օր ասւոր աճող բանակը, ո՛չ միայն հակառակորդի հրամանատարութեան առաւելութիւնը, ո՛չ միայն չբլհկայ քիւրթական հրոսախմբերը, այլ և ուժերի անհամաչափութիւնը — Քիւրթերը գնաչհուում էին Թոմ, Քիկունքի մահմեդական զանգւածները օգնում էին նրանց և Էրզրումի ասւելի քան 20,000 Քիւրթ ազգաբնակութեան համակրանքն ու գաղտնի օժանդակութիւնը նրանց հետ էր: Ձիչտ է, Անգրանիկը փորձեց ձեռք առնել կորուկ միլիցներ յայտնապէս Քչնամու օգտին ծառայող էմահմեդական Ազգային կոմիտէի» դէմ, բայց հիմնական չարիքը դրանով չվերացւսեց:

Փետր.14-ից Էրզրումը դարձաւ Քիւրթերի գինւորական գործողութիւնների անմիջական առարկայ, և հայկական առաջապահ մասերը, նրանց ճնշման տակ, քայլ առ քայլ, կուռվ քաչելցին մինչև Իլիջա: Համախմբելով իր ուժերը Իլիջայի դէմ՝ փետր. 26-ին Քչնամին դիմեց ուժեղ յարձակման: Սկսելին կատաղի կռիւներ, որոնք հետզհետէ տարածւեցին և ուրիչ չրիւններ: Թչնամու յարձակման գրոհի առջև մեզնից նահանջեցին՝ տալով ահագին զոհեր: Անգրանիկը ցոյց տւեց անձնական մեծ քաջութիւն և անվեհերութիւն, բայց բանակի ու բերդի պաչտպանութիւնը ղեկավարող չունէր: Որոչ զօրամասեր կուռչին հերոսաբար, ուրիչներ՝ չկատարեցին իրենց պարտականութիւնը: Երևկոյան դէմ արդէն պարզ էր, որ դրութիւնը անյոյս է: Անգրանիկի հրաւէրով գումարւեց գինւորական արտակարգ խորհրդակցութիւն, որը որոչեց պարզել քաղաքը և նահանջել:

Յաչորդ օր, փետր. 27-ի վաղ առաւօտից, սկսւեց Էրզրումի պարպումը, ամենաողբերգական պայմաններում: Զինւորներով ու գաղթականներով լեցւած դնաչքներ ու հետիոտն բազմութիւններ չարժւեցին դէպի Հասան-Ղալա: Ժամը 9-ին Քիւրթերն արդէն քաղաքում էին: Վերջին հեռացողը այստեղից էլ, բնչպէս և Երզնկայից, Մուրատն էր իր ձիաւորներով, որ պաչտպանում էր գաղթականութիւնը: Թիւրթերի ձեռքն ընկաւ անհաչիւ ռազմամթերք, պարենաւորում, հագուստ և ուրիչ հարստութիւններ: Գաղաքում մնացած հարիւրից ասւելի հայերը կոտորւեցին: Իրենց հերթին, նահանջող հայերն էլ Էրզրումում ու ճանապարհին կոտորեցին պատահած Քիւրթերին:

Ճանապարհին իրենց մի հարցնելով նաև Խնուսի կուռդների մի մասն ու գաղթականութիւնը՝ Էրզրումի ուժերը մարտ 2-ին հասան Սարըղամիչի ասժերին:

Էրզրումի անկումով փաստօրէն ամրողջ Քիւրքահայաստանը նորից անցաւ Քիւրքերի ձեռքը: Ձիչտ է, Ալաչկերտ-Մուշ-Վան տարածութիւնը դեռ գրաւած չէր, բայց նրա ճակատագիրն էլ որոչած պէտք էր համարել: Քիւրքահայկական գաւառները նորից դարձան ափրակի և անմարդաբնակ:

Գաւերգարդը փոխադրւում էր ռուսահայկական հողերի վրա: Բնակչման սպառնալիքը կախւում էր և Հայոց Քեան Էրկրորգ հաւատքի դլխին: Կռիւը ո՛չ միայն ըստ էութեան, ձևականօրէն էլ ստանում էր հայ-Քիւրթ-

քական թնաւորութիւն։ Այսուհետեւ բացառապէս հայ ժողովրդից էր կախուած պատերազմի վախճանը։ Անդրկովկասեան խշտութիւնը ո՛չ միայն չէր նպաստում պատերազմին, այլ և իր վարմամբ ու հակառական քայլերով ու ներքին հակամարտութիւններով առնչի էր Քուրդներում էր հակառակ պատասխանութեան գործը։ Թիֆլիսում տեղի բարերի ու միջնորդների բանակութիւնները, մանաւանդ, առաւել ազգում էին բանակի կազմութեան ու տրամադրութեան վրա։ Հայերը՝ Թիֆլիսում ու գաւառներում պահանջում էին յոյսարարել նոր գործակոչ, մինչ Անդրկ. Կոմիսարիատը, մահմեդական անձնակների ճնշման տակ և վրացիների յեղեղուկ դիրքի պատճառով, դժգոհ էր։ Բանը հասաւ այնտեղ, որ հայկական չրջանների մի քանի ազգային խորհուրդներ ուղիղ եղան յայտարարել տեղական գործակատար, որ ահագին իրարանցում ու գժգոհութիւն առաջ բերեց Թիֆլիսում։ Եւ միայն հայերի ուժգումով, անվերջ ու ըղայնացնող յետագոյումներից և երկու ամիս զինուորական յանձնախմբում պահելուց յետոյ, չատ ուշ, մարտ 24–ին Սէյմը ընդունեց զօրահաւաքի օրինագիծը, որով զինուորական նախարարութեան իրաւունք էր տրւում գէնքի տակ առնել, առաջին հերթին, մինչև 28 տարեկան զինապարտները, իսկ յետոյ, ի հարկին, նաև մինչև 32 տարեկանները։

Մարտ 2–ին Հայկական Կորպուսի հրամանատար զօր. Նազարբէկեանը նշանակուեց Հակատի հրամանատար՝ Օլթիից մինչև Մակու ընկած տարածութեան վրա։ Օլթի–Բաշում գիծը պէտք է պաշտպանէին վրացիները։ Հայ և վրացական հակառակների հրամանատարութիւնը կենտրոնացուց զօր. Լևթենինկին ձեռքը։

Զօր. Նազարբէկեանի տրամադրութեան տակ կար, մինչև Հայում, 36 դումարտակ զօրք, թերի կազմեալ — մօտ 15,000 զինուոր, որալ պէտք է դրուէր առնչի քան 250 կիլոմետր երկարութիւն ունեցող ռազմաճակատ և պահպանէր Քիւրդունքը։


Հայկական հակատի դէմ, համաձայն հետախուզական տեղեկութիւնների, գործում էին հետեւեալ թիւրքական ուժերը։ Յրդ, 11րդ և 36րդ դիվիզիաները էրզրում–Սարըղամիշ չրջանում, 1 դիվիզիա Ալաշկերտում և 1 դիվիզիա Վանի լճի չուրջը։ Թէ քեավ և քէ, մանաւանդ, կազմակերպութեամբ ու ներքին կորովի տեսակէտից թիւրք բանակը առնչի բարձր էր, քան հայկականը։

Բայց և այնպէս, հայերը ցոյց տուին ուժեղ դիմադրութիւն։ Կարաւրդանից այս կողմ թիւրքերը իւրաքանչիւր քայ հողը գրաւում էին կռւով և զոհեր տալով։

Ընդհարումները սկսեցին մարտի առաջին գէսերին՝ Կարա–Ուրզանի չրջանից։ Թիւրքական զորձողութիւնների հետ մէկտեղ գլուխ բարձրացրին և քրդերը քիկոնցում, մանաւանդ երկաթուղու չրջանում։ Մարտ 10–ին, Քիւրքերի ճնշող զրոհի տակ՝ հայ զօրքերը քաչելին դէպի Խան–Թերէ։ Մարտ 20–ին թիւրքերը, մօտ 6 դումարտակով, յայն տարածութեամբ, չարժեցին դէպի Կարաքուրտ, Բարդուս և այս կէտերը գրաւելուց յետոյ,

յարձակեցին Խան-Դերբէի վրա: Այս կէտի պաշտպանութիւնը յանձնուեց Դրօին, որ այդ օրերին Սարըղամիշ էր եկել: Սկսուց արիւնահեղ ճակատամարտների մի շարք, որ տևեց մի քանի օր: Մարտ 23-ին, Կարսից կտրուելու վտանգի տակ, գօր. Աբեկեանը տուեց Նահանջի հրաման, և մարտ 23 լոյս 24-ի գիշերը հայկական գօրքերը պարպեցին Սարըղամիշը՝ նախօրօք պայթեցնելով, այրելով ու փչացնելով պահեստները ու ռազմական նշանակութիւն ունեցող կէտերը:

Սարըղամիշի անկումով՝ մաքրուց և Ալաշկերտի հովիտը: Հայկական գօրքեր մնացին միայն Վանում, որտեղ մինչև ապրիլի կէսերը շարունակեցին պաշտպանել թիւրքերի դէմ և ապա, կռուով, Նահանջեցին դէպի Գարակամտան: Նահանջի ճանապարհին սպանուեց Կոստեա Համբարձումեանը՝ Գարոն Կոստին, ժողովրդական դաղափարական գործիչներից մէկը:



ԳԼՈՒԽ Ժ.

ՏՐԱՊԻԶՈՆԻ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱԶՈՒՄԸ. ԱՆԴՐԿՈՎԿԱՍԸ ԱՆԿԱԽ

Դառնանք, սակայն, Տրապիզոնի բանակցութիւններին և Անդրկովկասի ներսը կատարուող դէպքերին։

Ընթերցողը կը յիշէ, որ մարտ 13–ին Սկյմը տուեց հարտակարգ լիազօրութիւններ հաշտարար պատւիրակութեան նախագահ Զեքնկիլիին։ Այդ լիազօրութիւնը ստանալուց յետոյ, պատւիրակութիւնը, խորհրդաժողովի 6րդ նիստում, մարտ 23–ին յայտարարեց, որ Անդրկովկասեան կառավարութիւնը գիջում է Քիւրքերին ամբողջ Օլթիի չրջանը, Արդահանի չրջանի հարաւային մասը, կարսի չրջանի հարաւ–արեւմտեան մասն ու Կաղզուանի չրջանի արեւմտեան մասը և պատրաստակամութիւն է յայտնում Քիւրքերի հետ միասին Քիւրքահայկական խնդրի լուծման համար գտնել օսմանեան կայսրութեանը ընդունելի մի ձև, որը միաժամանակ հնարաւորութիւն տար Քիւրքահպատակ հայերին և ուրիշ ժողովուրդներին վերադառնալու իրենց տեղերը և ստանալու ապահովութեան որոշ երաշխիքներ։

Այսպիսով, Քիւրքահայկական ինքնավարութեան խնդիրը կովկասեան պատւիրակութեան առաջարկութիւնների մէջ դառնում էր զուտ դաղթականական մի հարց՝ զուրկ դործնական որև է արժէքից։ Բայց Քիւրքերը դրա դէմ էլ խիստ կերպով բողոքեցին։

Զեքնկիլիի այս յայտարարութիւնը լսելուց յետոյ, Ռուսի բոլոր պատասխանից, Քէ ինքը պէտք ունի կառավարութիւնից նոր հրահանգներ ստանալու և առաջարկեց ընդմիջում անել։ Միւս օրը, չուտր. 24–ին, Սարըղամիչի անկման յաջորդ օրը, երեկոյեան ժամը 9–ին Քիւրքերից ստացուեց հետեւեալ վերջնագիրը. «Պարոն նախագահ, Օսմանեան կայսերական կառավարութիւնը պնդում է 1918թ. 21 մարտ յայտարարութեան վրա և խնդրում է յարգելի Անդրկ. Պատւիրակութեան այդ առթիւ, 48 ժամուայ ընթացքում, տալ վերջնական պատասխանը, այսինքն՝ ընդունել Բրեստ–Լիտովսկի դաշնագիրը և Անդրկովկասը յայտարարել անկախ։ Մարտ 25–ի առաւօտեան Զեքնկիլիի յայտարարութիւնն ու վերջնագիրը հեռագրեց Թիֆլիս։ Մարտ 26–ին ստացուեց կառավարութեան պատասխանը, որով համաձայնութիւն էր տալիս գիջելու Կարսի նահանգը և Արդահանի չրջանը՝ մերժելով գիջել Բաթումը։ Պատւիրակութիւնը նոյն օրն իսկ, աչքի առաջ

ուձենալով ռազմանակատի վիճակը և թիւրքերի սպառնական դիրքը, միաժամն որոշումով հետագրեց Թիֆլիս՝ պնդելով Բրեստ-Լիտովսկի դաշնագիրն ընդունելու անհրաժեշտութեան վրա։ Եւ որովհետև մինչև մարտ 28-ի երեկոյեան ժամը 8-ը, թիւրքերի կողմից երկարաձգած նոր 48 ժամայ ընթացքում էլ Թիֆլիսից պատասխան չստացուեց, Զեներկլին, ի գործադրութիւն պատերազմութեան մի՛ամսեայ ուրշման, մարտ 28-ին (10 ապր.) հաղորդեց Ռէուճ բէյին հետեւեալ պատասխանը. «Ազգերովկասեան հավատարիմ պատերազմութիւնը, ի պատասխան Օսմանեան կայսերական պատերազմութեան 6 ապր. 1918թ. նամակի, պատրաստ է չարունակելու բանակցութիւնները՝ հիմնուելով նրա վրա»։ Պատերազմութեան հայ անդամներն էլ՝ Ե. Քաջազնունին ու Ա. Խատիսեանը հետագրեցին Սէյմի դաշնակցական ֆրակցիային, թէ՝ «Անհրաժեշտ ենք նկատում հրատրելու Հ. Ե. Դաշնակցութեան ամենայուրջ ուշադրութիւնը այն բանի վրա, որ ստեղծած պայմաններում Բրեստ-Լիտովսկի դաշնագրի ընդունումը պէտք է համարել փոքրագոյն չարիք»։

Երեք օր յետոյ Ռէուճ բէյը պատասխանից հետեւեալ դրութեամբ. «Էջմիածին, 13 ապր. 1918թ. Պարոն Նախագահ. Ժամանեան կոչտերական կառավարութիւնը տեղեկացաւ Անդրկովկասեան Պատերազմութեան 10 ապր. գրութեան, որ սառարգուած էր արտաքին գործոց նախարար և Ազգեր. Պատերազմութեան նախագահ պարոն Զեներկլիի կողմից։ Բայց որպէսզի կարողանայ մանաւանդ գործել իր դաշնակիցներին ևս բաւեկամութեան գաշինքի բանակցութիւններին, որ ինքը պատրաստ է քննելու, անհրաժեշտ է համարել, որ Անդրկովկասը յայտարարէ իր անկախութիւնը։ Ընդունեցէք, պարոն նախագահ, ամենաբարձր յարգանացս հաւաստիքը։ Ռէուճ»։

Յաջորդ օրը, ապր. 1-ին (ապր. 14) Անդրկ. կոմիսարիատի նախագահ Գեղեչկորիից ստացած հետագրով պատերազմութիւնը յայտ էր կանչւում Թիֆլիս, որովհետև Անդրկովկասի և Թիւրքիայի մէջ ևս փոխըլին չէր եղել կայացնել խաղաղ համաձայնութիւն Անդրկովկասի սահմանային հարցի մասին»։ Պատերազմութիւնը զգալով ինքզինքը առել կացութեան մէջ և վախենալով ապագայ աղէտներից՝ հաղորդեց Թիւրքական պատերազմութեան, թէ ինքը պարտաւորած է մինչեւ Թիֆլիս և որ այդ միջոցումը պէտք է նկատել օր թէ խզում, այլ բանակցութիւնների ժամանակաւոր ընդհատում։ Եւ նոյն օրը հետացաւ Տրապիզոնից։ Զեներկլին, որ միաժամանակ էրեն պահում էր և իրրև վրաց ժողովրդի ներկայացուցիչ և, ինչպէս յետոյ պարզուեց, մեւս պատգամաւորների թիկունքում վարում էր վրացական քաղաքականութիւն, Տրապիզոնում թողեց պատկին-գեներալների պատգուխ Վէչտալիին՝ գործելու համար յօգուտ վրաց ազգային չահերի։ Մնաց նաև պատկին-գեներալ մեւս պարպուխս Գվազաւան։

Իսկ ինչ՞ը էին կատարում այդ միջոցին Թիֆլիսում։ ինչո՞ւ, ընդ կարծ, պատերազմութիւնը չէր կանչւեց։

Պատերազմութեան հետագրերը և, մանաւանդ, Թիւրքերի ներկայացրած վերջնագիրը սաստիկ յուզում առաջ բերին անդրկովկասեան ղեկավար շրջանակներում։ Մարտ 31-ին գումարուեց Սէյմի նիստը, ուր կառավարութեան նախագահը զեկուցում տուեց Տրապիզոնի բանակցութեանց ընթացքի մասին։

Այդ փակուցմից պարզուեց, որ Բրնամ–Լիսովակի գաշնագրի համաձայն յայտարարութիւնից յետոյ Բաքուի համաձայնութիւնը, մարտ 29–ին, փեթակել էր պիտացագործ, որից յետոյ Բաքուի բերդապահի մօտ եկել էր Քիւրթ առաջնակ զօրամասի կողմից մի պատ և պահանջել՝ մինչև մարտ 31–ի կէսօրը, բացարձակ յանձնել Քիւրթերին՝ հակառակ պարագային սպառնալով գործել զէնքի ուժով։ Եւ որովհետև բերդապետը պատասխանել էր, թէ առանց կառավարութեան հրամանի չի կարող կատարել ներկայացած պահանջը, եկել կառավարութիւնն էլ բերդապահի հետագիրը ստացել էր միայն մարտ 31–ի ժամը 11–ին, Բաքուի համաձայնութիւնը վերակսւել էին կռիւները, և Քիւրթերը շաթուել էին Բաքուի վրա։

Տալով այս տեղեկութիւնները՝ վարչապետ Դեդեյկորին յայտարարեց, որ կառավարութիւնը չի կարող կատարել Քիւրթերի պահանջը։ «Կառավարութիւնը կարծում է, որ անդրկովկասեան դեմոկրատիայի ազատատենչ ոգին տակաւին մարած չէ, որ դեռ ջուր է վառոդը վառոդամանուկ և որ քէֆ մենք թոյլ ենք, բայց գեռ այնքան թոյլ չենք, որ գառնանք ատրուկ։ (Ձայներ՝ «ճիշտ է», ծափեր)։ Ուստի և կարծում ենք, որ Բրնամ–Լիսովակի գաշնագիրն ընդունելը պիտի նշանակէր, որ Անդրկովկասը, իրրև անկախ հանրապետութիւն, զաղարի գոյութիւն ունենալուց և պիտի դառնայ թիւրքական կայսրութեան մէկ նահանգ (ձայներ՝ «ճիշտ է», «ճիշտ է»)։ Ես կարծում եմ, որ այն կառավարութիւնը, որ վայելում է անդրկովկասեան դեմոկրատիայի իրաւատէր ներկայացուցչութիւնը հանդիսացող Սէյմի վստահութիւնը, չի կարող ընդունել այդպիսի խայտառակութիւն։ (Ձայներ՝ «ճիշտ է»։ ծափեր)։ Ես պէտք է ասեմ, որ կառավարութիւնը ձեռք կառնէ բոլոր միջոցները, կը քափէ ամէն հիգ, կր հաւաքէ բոլոր ուժերն ու բովանդակ զօրութիւնը, որ տայ արժանաւոր հակահարած այն բռնաւոնեչ յանգնութեան, որ գալիս է Քիւրթ կառավարութեան կողմից։ (Ձայներ՝ «ճիշտ է»։ ծափեր)։

Կառավարութեան ռազմաչունչ յայտարարութիւնները չեմ արձագանգ գտան Սէյմի դահլիճում։ Դեդեյկորիից յետոյ, յանուն սոցիալ–դեմոկրատական ֆրակցիայի, մի ռազմաչունչ ճառ էլ խօսեց Մեբեմիչին։ Նա ևս հրաւէր կարդաց դիմադրութեան, կուչ «Քիւրքական իմպերիալիզմին» դէմ։ «Բրնամ–Լիսովակում Քիւրքուից յեղափոխական Ռուսաստանի մահամերձ, և այդ մահամերձը մենք չենք սատրպրի մեր հարևնների համար։ (Քուռն, երկարատև ծափեր)»։ «Քիւրքիան ուզում է խեղդել անդրկովկասեան դեմոկրատիան։ Եւ ահա հասնում է ժամը, երբ մենք զէնքով պէտք է պաշտպանենք անդրկովկասեան ժողովուրդների ազատ զարգացումն ու գոյութիւնը։ Եւ «մենք համոզուած ենք, որ այդ կուռւմ մենք կարող ենք յաղթել միայն այն ժամանակ, երբ Քիւրքիայից չլինեն զաւայիր հարուածներ։ (Երկարատև ծափեր)»։

Ակնարկը պարզ էր։ Քիւրքիայից «զաւադիր հարուածը» կարող էր գալ միայն կովկասեան մահմեդականներից։ Եւ Մաւսումեաի ներկայացուցիչը վերջին Մեբեմիչիի նման ձեռնոցը։ «Պատերազմի Հարցում, ասաց նա, զուզ ինքնէդ էլ լաւ գիտէք, մահմեդական գնմոկրատիայի դիրքը բացառիկ է՝ նախ, որովհետև մինչև այժմ նա զինուրական պարտականութիւններ չի կատարել, երկրորդ՝ ի հետևանս Քիւրքիայի հետ ունեցած կրօնական կապի, որը թոյլ չի տալիս նրան գործօն մասնակցութիւն ունենալ Քիւրքիայի դէմ վարուող պատերազմական գործողութիւններին։ Այս խնդրի վրա էլ մենք

չենք նայում լաւատեսութեամբ: Մենք տեսնում ենք այն ներքին քայքայուժը, ներքին մխրճման բացակայութիւնը, որն, անկասկած, արդելք է հանդիսանում պատերազմական գործողութիւնների բարեյաջող ընթացքին: Մենչիկների ներկայացուցիչ քաղաքացի Մերլինքին մատնանշեց, նոյնպէս, որ այս պատերազմում մենք կարող ենք յաղթել միայն, եթէ լինենք բոլորովին միացած ու համերաշխ: Մեզ կասկածում են, որ կարելի կը լինի հասնել այդպիսի միութեան, եթէ սկսենք պատերազմական գործողութիւնները»:

Ուրիշ խօսքով, մահմեդականութեան ներկայացուցիչները բարձրաձայն յայտարարում էին, որ իրենք հակառակ են պատերազմին Թիւրքերի դէմ և որ չեն երաշխաւորում մահմեդական զանգուածների համակրանքն ու աջակցութիւնը պատերազմի դէպքում: Ճիշտ է, իրենց առաջարկած բանաձեւի մէջ նրանք խոստանում էին «բոլոր մասչելի միջոցներով ցոյց տալ հնարաւոր օժանդակութիւն մխրճ ժողովուրդներին», բայց այդ սոսկ առիթ էր հաթաւսանութեան: Յետագայ դէպքերը հաստատեցին, որ Ռուսաստանդովի յայտարարութիւնն աւելի անկեղծ էր և աւելի համապատասխան իրերի վիճակին:

Այնուամենայնիւ, ոգեշունչ ճառերը չարունակւեցին: Նոյն ոգով խօսեցին և Զուլչին, Փորպահան, Լորդկիպանիձէն, Սմմեռնովը: Մ. Ճարութիւնեանը յանուն Դաշնակցութեան յայտարարեց, որ «մենք և բոլոր այն զանգուածները, որոնք իրենց քէն տուլ են մեզ, ես կարող եմ ասել աւելին՝ ամբողջ հայ ժողովուրդը համոզուած է, որ իրեն համար չկայ ուրիշ փրկութիւն, քան այս մարտահրաւէրն ընդունելը և դէնքը ձեռքին ճակատ մեկնելը՝ հայրենի հողը պաշտպանելու համար: Մենք համոզուած ենք, որ այս միակ ճանապարհն է, որը կարող է փրկել մեր ժողովրդի ֆիզիքական գոյութիւնը: Մենք հաւատացած ենք, որ ժողովրդի միակ փրկութիւնը դէնքի մէջ է... Մենք կը չարունակենք պայքարը Թիւրքիայի դէմ, որովհետև մեզ համար դէնքից բացի ուրիշ փրկութիւն գոյութիւն չունի»...

Ռուսահպատակներից յետոյ ամենից անկեղծ և իր ժողովրդի տրամադրութիւնները ճիշտ արտայայտող պատգամաւորը, այդ օր, անշուշտ, Մ. Ճարութիւնեանն էր: Եւ հայ ժողովուրդը, որ յուսահատական կռիւ էր մղում վեհր փաշայի զօրքերի դէմ, կենդանի ապացոյց էր Դաշնակցութեան յայտարարութեան ճշմարտութեան Սէյմում:

Ի վերջոյ, բուռն վէճերից յետոյ, Սէյմը միաձայնութեամբ ընդունեց Փորպահայի առաջարկած բանաձեւը սոց.-դեմ. ֆրակցիայի կողմից. «Ելոյթ-հետեւ. Թիւրքիայի և Անդրկովկասի մէջև չի կայացել խաղաղ հաշտութիւն Անդրկովկասի սահմանների մասին, անդրկովկասեան պատւիրակութեան առաջարկում է անյապաղ մեկնել Թիֆլիս»: Այս բանաձեւն էր, որ ուղարկուեց Տրապիզոն պատւիրակութեան:

Ապա Փորպահան բացատրեց, որ այս որոշումով «մենք, ուրեմն, պաշտօնապէս մտնում ենք պատերազմի ասպարէզ, այսինքն՝ Անդրկովկասը պատերազմ է վարում Թիւրքիայի հետ: Այդ պատճառով, Սէյմը պէտք է երկրում զինուորական վիճակ յայտարարէ»: Ջւարկութեամբ և նոյնպէս միաձայն ընդունուեց այս առաջարկն էլ: Միաձայնութեամբ հաստատուեց Փորպահայի և Լերդոդ առաջարկը՝ կազմել արտակարգ լիագօրութիւններով

ծնուած 3 հոգինոց յատուկ մարմին՝ վարելու համար պատերազմի գործը։ Մարմնի անդամներ ընտրուեցին վաշտապետ ու զինուորական նախաբաք Ե. Գեղեչկորին, նիւեմտական նախաբար՝ Ռ. Կարմիկեանը և ներքին գործոց նախաբար՝ Ն. Ռամիչվիլին։ Ի վերջոյ, Սէյմը, վաւերացրեց նաև — մինչ մեծամասնութեամբ — ժողովրդական ներկայացրած նախագիծ-կոչը անդրկովկասեան ժողովուրդներին։ Առաջ ենք բերում այդ մարդկային վաւերագիրը ամբողջութեամբ, իբրև արտայայտութիւն այն ժամանակուայ տրամադրութիւնների։

Անդրկովկասեան Սէյմից՝ Անդրկովկասի բոլոր ժողովուրդներին։

Անդրկովկասի՛ քաղաքացիներ։

Հնչել է ժամը, երբ վճռուում է բախտը մեր ընդհանուր հայրենիքի։

Դուք գիտէք, թէ ինչ պահանջներ է ներկայացրել մեզ թիւրքը կառավարութիւնը։

Մեզանից պահանջում էին ընդունել Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը, որ կնքուել է առանց Անդրկովկասի ժողովուրդների դիտութեան, մի դաշնագիր, որը այժմ Թուսաստանում չի ճանաչում ոչ մի մարդ, որին քանդ է հայրենիքի երկրի ազատութիւնն ու պատիւը։

Մեզանից պահանջում էին մեր լաւագոյն բերդը՝ Կարսը և մեր ամենալաւ նաւահանգիստը՝ Բաթումը։

Մեզանից պահանջում էին պարպումը մեր երեք չրջանների՝ Կարսի, Արդահանի և Բաթումի։

Մենք արինք ամէն ինչ, որ խաղաղ հանապարհով, բանակցութիւնների միջոցով տեսկսենք թիւրք կառավարութեան՝ հրաժարուել այդ յաւակնութիւններից։ Զգալով խաղաղութեան պահպանման՝ մենք յանձն առինք մեծ զոհեր ու զիջումներ։ Մենք յայտնեցինք թիւրքիային, որ պատրաստ ենք զիջել համարեա բոլոր բաներում։ Բայց մենք չէինք կարող հրաժարուել բանութիւնից, մեր միակ ծովային ելքից, միակ հանապարհից։ Եւ մեր բոլոր ձիգերը՝ վէճը լուծելու խաղաղութեամբ՝ խորտակուեցին թիւրքերոյ յամառութեան առջև։

Թիւրքիան պնդում է իր սկզբնական պահանջների վրա։ Նրա նպատակն է՝ կտրել Անդրկովկասը արտաքին աշխարհից, խնդրել ու տարկացնել նրան։ Ցանուն այդ նպատակի են առաջ չարժուում թիւրք զօրքերը։ Կանգնեցնել նրանց կարող ենք միայն զէնքի ուժով։

Մեր առջև հարց է դրուած չարունակե՞լ բանակցութիւնները թիւրքիայի հետ այն միջոցին, երբ նրա զօրքերը մտնում են մեր երկրի խորքերը, թէ՞ ընդհատել և զէնքին յանձնել Անդրկովկասի ազատութեան պաշտպանութիւնը։

Թիւրքիայի հետ վարած մեր բանակցութիւնների սկզրին մենք ասում էինք։ Անդրկովկասի ժողովուրդները ծարաւի են հաչտութեան, բայց չեն համաձայնիլ գնել հաչտութիւնը ստրկութեան ու խայտառակութեան չնով։

Այժմ մենք ստիպված ենք ընտրել՝ խաչտառակ հաշտութիւնն ու տաքկուքիւն, քէ՞ պատերազմ:

Մենք պատասխանատուքեան դիտակցութեամբ հայրենիքի և գալիք սերունդների առջև՝ մենք առանց տատանուելու աջինը ընտրութիւն:

Մենք չտորթագրեցինք խաչտառակ հաշտութիւնը:

Հաշտութեան բանակցութիւնները Թիւրքիայի հետ խզուած են:

Այսուհետեւ վէճը լուծւում է զէնքի զօրութեամբ, պատերազմի դաշտում:

Եւ այս ժամին մենք դիմում ենք մեզ, որովհետեւ մեզանից, մեր արիութիւնից, մեր գրկունքի ու զոհաբերութեան պատրաստակամութիւնից է կախուած մեր և մեր զաւակների ապագան:

Քաղաքացինե՛ր: Թուսաստանի հետ մէկտեղ ցարիզմը տապալեցիք ա՞յն նպատակով, որ դառնաք Թիւրքիայի ստրկացած մի նահանգը:

Դիւրացինե՛ր: Ցեղափոխութիւնը նրա համա՞ր մեզ հող տւեց, որ նեաճողը այդ հողի վրա բնակեցնէ նոր կալւածատէրեր:

Բանւորնե՛ր: Արդեօք ա՞յն նպատակով բարձրացրեք յեղափոխութեան դրօշը, որ նրան ցեխի մէջ կոխկրտէ յաղթողի ոտքը:

Պայատատակութիւն ու ստրկութիւն կամ պատերազմ — ուրիշ ընտրութիւն չկայ մեր առջև: Թո՛ղ, ուրեմն, մեր երկրի բոլոր ժողովուրդների գլխին սպառնացող ահաւոր վտանգի հանդէպ լուն բոլոր վէճերը, վերջնական քննութեան ու պատակտումը, որոնք մինչև այսօր քայքայում էին մեր չաքգերը:

Ճակատագրական ստրկութեան պարանը ձգուած է մեր երկրի բոլոր ժողովուրդների վրայ: Թո՛ղ, ուրեմն, քննութեան գործը խորտակի՝ գարնելով մեր վճռակամութեան՝ մինչև վերջ պաշտպանելու այնքան սերունդների արիւնով ողողած մեր հողը:

Ի զէ՛ն ամենքդ:

Դէպի ճակա՛տ ամենքդ:

Ամենքդ՝ ի պաշտպանութիւն ազատութեան ու հայրենիքի»:

Այս կոչը տպւեց բոլոր լեզուներով և տարածւեց ժողովրդի մէջ:

Իսկապէս, Մէյմի որոշումը պատերազմը չարունակելու մասին նորութիւն էր միայն վրացիների համար, որովհետեւ հայերն արդէն իսկ պատերազմի մէջ էին: Այդ պատճառով, վրացի զինակարները դիմեցին ազմկոտ ալիատանքի: Շատերը նրանցից, որոնց մէջ և ժորդանիան ու Մերեթելին, հրացան առած, մեկնեցին ռազմաճակատ: Մի պահ Թիֆլիսում ստեղծւեց պատերազմական բարձր տրամադրութիւն:

Սակայն, այս ողևորութիւնը տեւեց չատ կարճ. հազիւ ծովի փրփուրի նմանը ունեցաւ: Դեռ նոր էին լուել ռազմատենչ ճառերը Թիֆլիսի պալատի կամարների տակ, երբ առաջւեց բաթումի անկման գործը: Ապրիլ 1-ին, առանց դիմադրութեան հանդիպելու, Թիւրքերը գրաւել էին Բաթումի ամ-

բալքիններըը, քաղաքն ու նահանգիսոը: Վրաց գործերի մի մասը փոխել էր խանապահոր, մի ահագին բաժանքին էլ մնացել էր գերի:

Բայտոի գործոն նոյնպես, որ Քիւրքերին միացել է ամբողջ Ալբերայի և Ախալցխայի մահմեդականութիւնը, որ Աբաս-Թուման էլ գրաւած է Քշտամն կողմից:

Այս ամենը չէր նպաստում վրացիների մարտական ոգու յարատևութեան: Մի անգամ միայն նրանք ունեցան զինուրական յաղթութիւն՝ Զոլջի մօտ, բայց այդ փոքրիկ ճակատամարտը պատահական միջադէպ էր: Իրապէս վրացիները նահանջում էին անընդհատ. նրանց մէջ սրագ զարգանում էր դասալքութիւնը, քայքայումն ու բարոյալքումը: Գալով էր, որ վրացի ժողովուրդը չէր ուզում կուել, թէև Քիւրքերն արդէն մտել էին գուն Վրասանի ներսերը՝ Գուրիան և գրաւել Օզուրգետին: Վրացի զօրիչները չատ չուտով հասկացան, որ ժողովուրդը չի հետևում իրենց և չսպասին փաստից հանել տրամաբանական եզրակացութիւններ:

Դրան նպաստեց և ապր. 3-ին Տրապիզոնից վերադարձած պատերազմութիւնը, մասնաւորապէս Ջեննկլիին, որը ոգի ի բուն աշխատում էր համոզել իր ընկերներին, որ մեկ փրկութիւնը Բրեստ-Լիտովսկի դաշնագիրն ընդունելու, Մեղրկովկասը անկախ յայտարարելու և հաշտութեան բանակցութիւնները վերսկսելու մէջ է: Եւ քանի հակառակ պարտութիւններն աւելանում էին, այնքան մեծանում էր Ջեննկլիլի կողմնակիցների թիւը:

Վրաց անյաղթութիւնները սուր ցաւ էին պատճառում հայերին, որոնք սարսափով էին դիտում քիւրքերի յառաջացումը: Նրանց ազատութիւնը ամբողջապես բևեռած էր կարսի չրջանում. Քշտամի ինքնավստահ քայլերով մօտենում էր կովկասի անպարտելի ամրութիւնն: Կարսի անկումը մահ էր հայ ժողովրդի համար, որը, փակած ծուղակի մէջ, չունէր փրկութեան ո՛չ մի ճանապարհ:

Էրզրումի ազգաժողովը անասելի խուճապ առաջ բերեց հայ ժողովրդի մէջ: Մարտ ամսից գաղափարութիւնը, որին է պատասխան զինուրական մարմինները թիֆլիսում, Ալէքսանդրապոլում և ուրիշ վայրերում կատարեցին մի չարք աշխատութիւններ, որոնք ցնցող տպաւորութիւն աբին հասարակութեան վրա: Ազգ. Խորհուրդն էլ, ճառերից ու կոչերից յոգնած, վերջապէս չարժւեց տեղից, և նախագահ Ա. Ահարոնեանը, անդամներ՝ Ս. Մամիկոնեանը, Տ. Բէզդոդեանը, Ն. Ազբալեանը, ինչպես նաև Թիֆլիսի զինուրական մարմինը, անցան ոգտագործման: Ազգ. Խորհրդի անդամները այցելեցին Ալէքսանդրապոլ, կարս, Սարըղամիշ, ամէն տեղ չխոսէ ունեցան զօրքի ու ժողովրդի հետ և իրենց ներկայութեամբ սիրտ տուին ամենքին: Խորհրդակցութիւններ ունեցան բանակի բարձր հրամանատարութեան և հասարակական ներկայացուցիչների հետ:

Ազգ. Խորհրդի անդամները Սարըղամիշում էին դեռ, երբ ակսւեց Քիւրքական յարձակումը կարուրդանից: Սարըղամիշի անկումից և Քիւրքական վերջնագիրը ստացուելուց յետոյ, Հ. Ց. Դաշնակցութեան Արևելեան

Բիւրօի նախաձեռնութեամբ, սպր. 7–8–ին, Ալէքսանդրապոլում գումարուեց, մի տեսակ, համազգային խորհրդաժողով, որին մասնակցեցին Ազգ. Խորհրդի և Ապահովութեան Խորհրդի անդամները. Սէյմի և Տրապիզոնի պատգիրքների հայ պատգամաւորները, քաղաքական կուսակցութիւնների, տեղական ազգային խորհուրդների, հասարակական կազմակերպութիւնների, երեւան, Ալէքսանդրապոլ ու կարս քաղաքների ներկայացուցիչները, և մի շարք հասարակական գործիչներ։ 1917թ. սեպտեմբերի ազգային խորհրդաժողովից յետոյ հայկական ամենապատկառելի և պատասխանատու հաւաքոյթն էր այս, որ պէտք է որոշէր հայերի վարքագիծը պատերազմի և խաղաղութեան հարցում։ Ներկայ էին բազմաթիւ պատասխանատու գործիչներ — Աբամբ, գօր. Նազարբէգեանը, գօր. Սիլիկեանը, Դրօն, Ա. Ահարոնեանը, Մ. Ռափայէլեանը, Մ. Պապաջանեանը, Ց. Քաջազունին, Ա. Խատիսեանը, Ա. Սահակեանը, Ղ. Տէր–Ղազարեանը, Ա. Երզնկեանը, Մ. Մանասեանը, Ռ. Տէր–Մինասեանը, Վահ. Փափազեանը, Ստ. Մատիկոեանը, Տ. Բէգզադեանը, Ն. Ադալեանը, Երեւանի ու Կարսի քաղաքագլուխները և այլն։

Պատերազմի և խաղաղութեան մասին զրուցը դեկուցում կարդաց Ց. Քաջազունին, որը, իբրեն յատուկ տրամաբանական կուռ բանաւարութիւններով, աշխատում էր համոզել՝ Բիւրքական պայմաններին համակերպուելու անհրաժեշտութիւնը։ Զեկուցումը առաջ բերեց յուզումնալից ու երկարատեւ վիճաբանութիւններ։ Հաշտութեան կողմնակիցների թիւը մեծ չէր — Ց. Քաջազունի, Մ. Պապաջանեան, Ղ. Տէր–Ղազարեան և մի քանի ուրիշներ։ Ահագին մեծամասնութիւնը ժողովականների, բանակի ներկայացուցիչներն ու հրամանատարութիւնը ոգի և բուն պատգամ էին թիւրքական պահանջները մերժելու և պատերազմը շարունակելու անհրաժեշտութիւնը[*]*։*

Թիֆլիսից ստացուող լուրերը, սակայն, քիչ էին ներդաշնակւում Ալէքսանդրապոլի տրամադրութիւններին։ Հաղորդում էին, որ Ազգ. Կառավարութեան թուրք նախարարները վերջնագիր են ներկայացրել՝ պահանջելով անյապաղ ընդունել Բրեստ–Լիտովսկի պայմանները և կնքել հաշտութիւն, այլապէս իրենք կը հեռանան Սէյմից ու կառավարութիւնից։ Զեկնկիլիին, կատարուող դէպքերի օգնութեամբ, յաջողւել էր համոզելու իր ընկերներին՝ ընդունել Բիւրքերի պայմանները։ Այդ պատճառով, Ալէքսանդրապոլի խորհրդակցութիւնը, առանց որոշ վճռի հանելու, քէֆ ու ժեժամասնաբար դէմ էր Բիւրքերի պահանջներն ընդունելուն, ցոյց՝ յանձնարարելով իր անդամներին լուծել խնդիրը Թիֆլիսում, ուր կացութիւնը աւելի պարզ էր։

Թիֆլիսում, սակայն, ամէն բան արդէն որոշած էր։ վրացիներն ու Բուրքերը վճռել էին՝ վերջ տալ պատերազմին, ընդունել Բիւրքական

---

*) Այս ժողովին մասնակցից և հայ բոլշեվիկ Պ. Մակինցեանը. սրբ. Ալամի յանձնարարութեամբ. Էրեւանից գնում էր Մոսկուա՝ յաջողացնելու համար վերջինիս ազգայնութիւնը հայ ժողովրդին։ Մակինցեանը անցաւ Ռուսաստան և փոխանակ կատարելու իր խնամուքը պաշտօնի մասւ. Չէկայի մէջ և միւս հայ բոլշեվիկների հետ սկսեց կատղի պայքար մղել Հայաստանի Հանրապետութեան դէմ։

վերջապիրը և յայտարարելով Ազգրկովկասի անկախութիւնը՝ վերսկսել հաշտութեան բանակցութիւնները: Այս քայլն անելիս վրացիները որոշ յոյսեր էին կապում Դևլմանթիայի հետ, որոնց ներկայացուցիչներն, Տրապիզոնում, Զաքենկելին տեսել էր մեւս պատգամաւորներից գաղտնի, իսկ Թուրքերի համար՝ Թիւրքիան ցանկալի բաղեկամ էր:

Այսպիսով, հայերի համար առեղծւում էր ահաւոր կացութիւն. մեհնալ վրացիներին ու Թուրքերին՝ նշանակում էր ձեռք քաշել ո՛չ միայն ամբողջ Թիւրքահայաստանից, այլ և Ռուսահայաստանի մի երրորդ մասից, և գեռ հարց էր՝ կը դոհանայի՞ն արդեօք Թիւրքերը միայն Բրևան–Լիտովսկի սահմաններով: Ձմիանալ՝ նշանակւում էր անջատուել հարեւաններից, մնալ մենակ, կտրած ամբողջ աշխարհից, չրջապատւած մահմեդական ծովով, Թիւրքական բանակի սպառնալիքի տակ՝ զատապարտւած ստոյգ մահուան: Գէշը էր ընտրել չարիքներից փոքրագոյնը, և հայերը մեացան հարեւանների որոշման:

Կային մարդիկ, որոնք, այդ օրերին, ցոյց էին տալիս Խորհրդային Ռուսաստանի համբան՝ առաջարկելով ձեռք մեկնել բոլշեւիկներին, որոնց առաջապահները դեռ մեում էին Բագւում ու Սուխումում: Այդ տրամադրութեան որոշ չափով նպաստում էին և Թիֆլիսում սաստկող ազգ ային լուրերը, որ, իբր Թէ, Լենինը առանձին դնկրեալ յայտարարել է Հայաստանի անկախութիւնը: Սակայն, այդ մտքի անհեթեթութիւնը այնքան էր ակներև, որ նոյնիսկ, նրա հեղինակները լուրջ քայլեր չարին այդ ուղղութեամբ: Ռուսաստանը շատ էր հեռու Հայաստանից, իսկ բոլշեւիկների ոյժը՝ աւելի քան խնդրական:

Ուրիշ ճանապարհ չկար: Ապրիլ 9–ին գումարւեց Սէյմի 22րդ նիստը, ուր գրւեց Ազգրկովկասի անկախութեան յայտարարութեան հարցը: Մեհնալտան էր նամանւում այդ օր Սէյմի գահլիճը: Մենակ հայերը չէին ազատր. վրացիներն էլ լաւ չէին գլում իրենց: Նրանց առաջնակարգ հոսւորներից ոչ ոք ամբոխն չթարմացաւ այդ օր: Մենչեւիկների կողմից ազդոյն ու անհամ ճառերը արտասանեցին մի ինչ որ Ոնիաչվիլի, Գևորգաձէն, Արսենիձէն, որոնք բռնազբօսիկ ոգևորութեամբ ու հակասական բացատրութիւններով աշխատում էին հիմնաւորել Ազգրկովկասի անկախութեան անհրաժեշտութիւնը: Ռուս Սեմեոնովի և ազ–յեղափոխական Լ. Թումանեանի համար դժւար չէր կռահելն նրանց խախուտ փաստերը և մերկացնել անկախութեան իսկական շարժառիթները: Մանաւանդ, պատնէշ էր վերջինիս ճառը. «Ձեզ համար պէտք է պարզ լինի, ասում էր նա՝ դիմելով վրաց մենչեւիկներին, որ Ազգրկովկասի ներկայ պայմաններում յայտարարած անկախութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ո՛չ դառնալ կատարեալ ստրուկ Թիւրքիային.... Անկախ Ազգրկովկասը ո՛չ միայն չի տայ մեզ հաշտութիւն Թիւրքերի հետ, ո՛չ միայն չի բարելաւի մեր դրութիւնը, այլ աւելի եւս կը վատթարացնի, կը կապ մեր ձեռքն ու ոտքը»:

Նոյն տեսակէտն էր պաշտպանում և Սեմեոնովը. «Ձեր անկախութիւնը կը փրկէ՞ ձեզ Թիւրք և գերման զօրքերից, հարցնում էր նա: Ես ի՞նչ երաշխիք էք ապաւում դուք.... Անկախութեան յայտարարութիւնից յետոյ,

երկրորդ քայլը կը լինի՝ բանակցութիւններ Թիւրքիայի հետ դաշնակցութեան կնքելու մասին, և դուք հարկադրած կը լինէք քայլ առ քայլ անել այն, ինչ որ հրամայեն ձեզ Թիւրքերը… Դուք Թիւրք զօրքերի օգնութեամբ կերբեք նւաճելու Բագուն և երբ Թիւրք զօրքերը անցնեն Անդրկովկասով, տեղի կունենայ Անդրկովկասի դրաւումը Թիւրք–գերմանական միութեան կողմից։ Եւ երբ Թիւրք–գերմանական զօրքերը գրաւեն ամբողջ Անդրկովկասը, դուք, ա՞յդ ժամանակ կարող կը լինէք խօսել յեղափոխութեան յաղթանակի մասին…

Տնտեսական տրամաբրութիւն ունէին միայն վրացի ազգայնականները, բայց, մանաւանդ, Թուրքերը։ Ռասուլ–Զադէն ցնծում էր։ Մուսաւաթական ֆրակցիան իրեն գտում էր նոր–փեսայի դերում։ Զէ՞ որ իրականում էր իրենց նախրական տենչը՝ մի քայլ դէպի Ռուսաստանի քաչքաչումը, մի քայլ դէպի հմուրք ազգերի դաշնակցութիւնը՝ Ղրիմից Վոլգա, Վոլգայից Թուրքեստան և Թուրքեստանից՝ Անատոլիա։

Իսկական սգի մէջ էին հայերը։ Սիրտ չկար խօսելու։ Եւ ի՞նչ խօսել։ բոլոր խօսքերն արդէն ասած էին։ Նրանց ապրումները արտայայտեց՝ Ց. Քալաջեանցին։ Ցուցած, մաքրը ցրիւ՝ բարձրացաւ ամբոխն ու կարգաց. «Զարտեայք, Սէյմի անդամներ։ Դաշնակցութեան ֆրակցիան՝ գիտակցելով չատ պարզ այն մեծ պատասխանատուութիւնը, որ առնում է իր վրա այս պատմական վայրկեանին, միանում է ինքնուրոյն Անդրկովկասեան պետութեան յայտարարութեան»։

Եւ ուրիշ ոչինչ։ Եւ այս մի քանի խօսքերը անհամեմատ աւելի տպաւորիչ էին, քան մեռ պատգամաւորների երկարապատում հռետորական մարգանքները։

Վճռաբանութիւնից յետոյ Սէյմը ընդունեց Օնիչվիլիի առաջարկած հետեւեալ բանաձեւը. «Անդրկովկասեան Սէյմը որոշեց՝ յայտարարել Անդրկովկասը ռամկավար դաշնակցական Հանրապետութիւն»։

Ապա Ջհննկիլին, հաշտարար պատւիրակութեան կողմից, գեկուցեց Տրապիզոնի բանակցութիւնների վերջին չրջանի իրագործութիւնները։ Այդ գեկուցման մէջ առանձնապես հետաքրքրական էր մի կէտ, որ շատ բնորոշ էր, առհասարակ, բոլոր վրացի գործիչների համար։ Խօսելով պատերազմական անյաղողդելիների մասին՝ նա նկատեց, որ «Անդրկովկասեան պետութիւնը, իբրև մէկ միաւոր, չէր կարող դուրս գալ դէնքի ուժով պատերազմելու Անդրկովկասը»։ Խօսքը մահմեդականների բռնած քնամական դիրքի մասին էր։ Ու չատպեց աւելացնել։ «Պատճառները, թէ ինչու մահմեդականները չէին կարող համաձայնել պատերազմելու Թիւրքիայի դէմ, կան ու կայնի բոլորովին տարբերական կերպով։ Նոյնը կարելի է ասել և քրիստոնեայ ժողովուրդների մասին, որոնք նման պարագաներում չէին պատերազմի Ռուսաստանի դէմ։ Հիմքերը միևնոյնն են։ Եթէ այժմ խօսքը մահմեդականների մասին է, նշանակում է ուրիշ նւք չկար նրանց համարյ։

Հոժարամտութիւնը մահմեդականների առնէ ակներև էր։ Ջհննկիլին չատ լաւ գիտէր, որ մահմեդականները գովկասում, ոչ թէ չէին կռւում Թիւրքերի դէմ, այլ դաւաճանում Անդրկովկասի միութեան, փորում էին նրա հիմքերը։ Բայց… կովկասեան մահմեդականների տեսակետը կչիռը օբէցօր բարձրանում էր, նրանք բարեկամ էին Թիւրքերին — և Ջհննկիլիները քննում ու սթրաչահում էին։

Ջեկուցումն ըստ նուիրեան առարկութիւն չէր վերցնում. պատասխանատու ֆրակցիաները նախօրօք համաձայնել էին բոլոր կէտերի մասին. Սէյմի կառաջածը ծէս էր միայն: Նա հաւանութիւն ուներ պատերազմական կառաջածին և յանձնաբարեց ջարդունակել բանակցութիւններն ու միջոցներ ձեռք առնել հաշտութեան յուսափոյթ կնքման համար:

Նոյն նիստում ընդունուեց Վեզենկրիքի «ռազմական» կառավարութեան հրաժարականը և նոր կառավարութիւն կազմելը յանձնուեց Ջեննինկլիին:

ԳԼՈՒԽ ԺԱ.

ԿԱՐՍԻՑ — ՂԱՐԱՖԻԼԻՍԱ

Անդրկովկասը դարձաւ անկախ հանրապետութիւն և Ձխենկելին՝ նրա կառավարութեան նախագահ: Այս հանգամանքը հայերի համար ունեցաւ ճակատագրական հետեւանքներ:

Կառավարութիւնը կազմուեց հետեւեալ անձերից. վարչապետ և արտաքին գործոց նախարար՝ Ձխենկելին, ներքին գործոց նախարար՝ Ն. Ռամիշվիլի, գինուորական՝ Գ. Գէորգաձէ, Էլիւմտական՝ Ա. Խատիսեան, հաղորդակցութեան՝ Ի. Մելիք-Ասլանով, արդարադատութեան՝ Ֆ. Խան-Խոյսկի, երկրագործութեան՝ Ն. Ժոմերկիի, հանրային կրթութեան՝ Ն. Ուսուպբեկով, առեւտրի և արդիւնաբերութեան՝ Հ. Գաջինսկի, պարենաւորման՝ Աւ. Սահակեան, խնամատարութեան՝ Ց. Քամալեանի, աշխատանքի՝ Ար. Երզընկեան, պետական վերահսկիչ՝ Ի. Հայդարով:

Այս կազմով Ձխենկելին ներկայացաւ Սէյմի 13 ապր. նիստին, կարգաց կառավարական յայտարարութիւնը, որի հիմնական միտքն էր Թիւրքիայի հետ հաշտութիւն կնքելու անվերապահ ընթացք, և ստացաւ Սէյմի վստահացումը: Ձխենկելիի յայտարարութեան առթիւ խօսեցին կուսակցութեանց ներկայացուցիչները — Ծերեթելին, Ռասուլ-Զադէ, Կարճիկեան և ուրիշներ: Ծերեթելին նորից վեր հանեց անկախութեան և կովկասեան ազգերի համերաշխութեան գաղափարը, «ԵՔԷ քայքայւի անդրկովկասեան ժողովուրդների ներքին միութիւնը, մենք ոտքի տակ կերթանք, այլևս տեղ չի մնայ, ուր հնչի անդրկովկասեան դեմոկրատիայի ազատ ձայնը»: Ռասուլ Զադէն չէր տեսել, որ Դաղստանն էլ մտնում է անդրկովկասեան հանրապետութեան մէջ, և պահանջեց, որ Հիւսիսային Կովկասն էլ մտցւի: Թուրքերը շատ էին մտահոգւած մահմետական երկրների ազատագրութեամբ ու հաւաքումով:

Հայերին յուզողը դլխաւորապէս պատերազմի ու հաշտութեան, թիւրքական վտանգի հարցն էր: Եւ այդ մտահոգութիւնները արտայայտեց բռնագատւած մի քայլ էր. «Այդ արտաքին ուժերի գոյութիւնը փաստ է՝ Թորհրդային Ռուսաստանի և արտաքին թշնամու (թիւրքերի) կողմից, և այդ արտաքին ուժերը հարկադրեցին յայտարարել Անդրկովկասի անկախութիւնն ու տատանում մտցրին անդրկովկասեան ժողովուրդների մէջ»: Մինչեւ որ անդրկովկասեան ժողովուրդները չմիանան ու համերաշխ չգործեն, ոչ մի ոյժ չի փրկի նրանց, և կառավարութեան խոստումներն էլ կը մնան դատարկ հնչիւններ:

վճռավաճառքեան առջև կանգնած երկրորդ կարեւոր խնդիրը հաշտութիւն կնքելն է։ Այն հանգամանքը, որ նոր կառավարութեան գլուխը նախկին հայտարար պատերազմական նախագահն էր՝ բնական աւտ է, որ նոր կառավարութեան կը ներկայացուէն չատ խիստ պահանջներ։ Տրապիզոնից վերադարձած պատերազմութիւնը լի էր հաւատով, թէ կարելի է կնքել հաշտութիւն, որը կր փրկէ Անդրկովկասը։ Պատերազմութիւնը ոչ միայն հաւատով վերադարձաւ, այլ իր այդ հաւատը ներշնչեց նաև դաշնակիցներին։ Այդ պատճառներից է ոչ միայն պատերազմութեան, այլ և կառավարութեան այդ մուրհակով կառավարութիւնը սոխալած կր լինի հաչիւ ներկայացնելը։

Հայերը համոզուած էին, որ Քիւրքերի հետ անկարելի է տանելի հաշտութիւն կնքել, և այդ համոզումն էր կարճիկևանի խիստ զգոյշ ճաոի իմաստը։ Նա չէր հաւատում, որ Ջեննկելիին կը յաջողւի կատարել իր խոստումը, մանաւանդ որ տեսնում էր շուրջը գտնւող մահմետական գործիչների մտայնութիւնը։ Չէ՞ որ նոյն նիստում առ—յեպափ։ Լորդ կիսպանիէն, Սէյմի ամբոխից, յայտարարում էր, թէ՝ եռմանք այսուղ, ա'յս գահլիճում, Սէյմի պատգամաւորների չարքերում ու լրագրողների օթեակում, արդէն խօսում են այն մասին, թէ՝ քանի որ անկախութիւնը յայտարաւուած է, պէտք է օգնութեան կանչել քիւրքական օրքերին և քիւրք սուիններով պաշտպանել Անդրկովկասի անկախութիւնը հնւսխից արշաւող բոլշեւիկների դէմ»։

Այո՛, խօսում էին, և հէնց ևստւել Ջաղէն իր ճառում չատ քաշածոյիկ ակնարկներով հրաւիրում էր Սէյմի ուշադրութիւնը Սուխումի և Բաքուի վրա, որոնք հատատում էին ինքնիշքը խորհրդային իշխանութեան գաղափարների ծատագրով համարող աւտոնոմների լծի տակ»։

Այսպէս, ուրեմն, պաշտօնապէս Ջեննկելիի կառավարութիւնը սկսեց գոյութիւն ունենալ ապր. 13–ից, բայց ապր. 9–ից արդէն Գեգեչկորիի դահլիճը, բոլորովին ապօրինի կերպով և աննւրւյի անփութութեամբ, քաշւել էր գործից և իշխանութեան զեկր փաստօրէն անցել էր Ջեննկելիի ձեռքը։ Այս վերջինը անմիջապէս անցաւ գործի և արաւ մի չարք ինքնագլուխ քայլեր։

Ապր. 10–ին Ջեննկելին հետազրով իմացրեց բոլոր պետութիւններին Անդրկովկասի անկախութեան յայտարարութիւնը։ Ապա Փոթիի ու Բաքուի գեռ նոյնը հետազրեց և Վեհիր փաշային՝ աւելացնելով, որ Անդրկ. Սէյմը ընդունել է Բրեստ–Լիտովսկի դաշնագիրը և որ ինքը կարգադրել է բոլոր ճակատների հրամանատարներին՝ կանգնեցնել պատերազմական գործողութիւնները և նոյնը խնդրում է նաև քիւրք հրամանատարներից։ Ջեննկելին աւելացնում էր, որ ինքը հրաման է տւել, որ կարսի պարպման պայմանները մշակելու համար բերդապետը պատւիրակներ ուղարկէ քիւրք հրամանատարութեան մօտ, և խնդրում էր տալ բաւարար ժամանակ, որպէսզի կարելի լինի պարպել բերդը։

Ցետոյ, հայկական և վրացական կորպուսների պետերին, զինւորական նախարարի պաշտօնակատար զօր. Օդիչելիձէի միջոցով, արաւ հետեւեալ հետազրական հրամանը. «Ձաղորդում եմ ձեզ ի գիտութիւն ձեր, որ Անդրկ. Սէյմը իր 9 ապրիլ նիստում յայտարարեց Անդրկովկասի կաւտրեալ անկախութիւնը։ Կազմւած է նոր կառավարութիւն Ջեննկելիի գլխաւորութեամբ,

որը լիազօրած է յաջողակ կերպով հաշտութեան բանակցութիւնները թիւրքերի հետ։ Կառավարութիւնը հրամայում է ձեզ՝ անմիջապէս հակազդեցութեան գալ ձեր առջեւ դրուող թիւրք գիւնուազական իշխանութիւնների հետ դաշնակցելու համար պատերազմական գործողութիւնները ամբողջ ճակատի վրա՝ սկսած այսօրւայ ժամը 17–ից։ Հետագրիցդ անմիջապէս ինձ այս դրամագի գործադրութեան ու քշամութեանց դադարեցման մասին և մի պահանջն էլ ուղարկեցիր ընդհանուր հրամանատարին։ Այս հետագրից յետոյ անմիջապէս կուղարկեմ ձեզ մի հետագիր Վեհիր փաշայի անունով, որը զօր։ Նազարբէկեանը պէտք է հաղորդէ բոլ պատկանելոյն անհրաժեշտ միջոցով և զօր։ Թաթաեւը մի ներկայացուցչի միջոցով՝ հետագրելով՝ բաքուից Տէպպոնոյ։

Այս հետագրին յաջորդեց Օղիւելիձէի մէկ ուրիշ հետագիրը, որը հանդասպաց պէտք է հաղորդէր Թիւրք հրամանատարութեան։ « Կովկասեան ճակատի թիւրք բանակների ընդհանուր հրամանատար Ֆերիկ Մէհմետ Վահիպ փաշային։ — Պատիւ ունեմ ծանուցանելու ձեզդ զերազանցութեան, որ համաձայն վարչակար Զեննկելիի 1918Թ. ապր։ 10–ին Փոթիի և Բաքուի վրայով ձեզ ուղարկուած և հասանօրէն արդէն առացած հետագրի, ես հաճոյքն ունեցայ հաղորդելու Անդրկովկասի զործող զօրքերին անդրկովկասեան նոր կառավարութեան հրամանը 10 ապր։ ժամը 17–ից սկսած ամբողջ անդրկովկասեան ճակատի վրա դադարեցնել պատերազմական գործողութիւնները՝ համաձայնութեան գալով հանդիպակաց Թիւրք իշխանութիւնների հետ։ Ցոյս ունեմ ձերդ զերազանցութիւն, որ յանուն հաշտութեան յառաջիկայ բանակցութիւնների յաջողութեան և մեր երկու ժողովուրդների ապագայ բարեկամութեան, դուք ևս կը հրամայիչք ձեր զօրքերին անմիջապէս դադարեցնել պատերազմական գործողութիւնները»։

Այս բոլոր հրամաններն ու կարգադրութիւնները կատարելցին կովկասեան բանակի ընդհանուր հրամանատար Լեբեդինսկից անկախ, մեչմից և հրաւիրած նոր նախարարներից գաղտնի, միայն Զեննկելիի անձնական պատասխանատուութեամբ։ Ոչ ոք տեղեկութիւններ չունէր Զեննկելիի ապատ քայլերի մասին։ Եւ, ինչ որ պակաս տաբօրինակ չէ, հետագրական սովորական կապն էլ հայկական կողմնակի և Հայոց Ազգ. Ժողովրդի միջև կոթւած էր, և թիֆլիսում ոչ ոք չգիտէր, թէ ինչ էր կատարւում հայկական ռազմաճակատում, մինչ այնտեղ գարգանում էին հայ ժողովրդի համար ողրերգական հետևանքներ ունեցող դէպքեր։

Ապրիլ 10–ին հայկական զօրամասերը բռնում էին հետևեալ ռազմական դիրքերը։ Սամաւար–Չարամ Վարդան–Բիւլուլ–Թեփէ բարձունքը — Գիւնէյ բարձունքը — Աղբաւա բարձունքը — Կանը Գէոյ գիւղը։ Բերգաչէն հրետանին կազմ ու պատրաստ վիճակի մէջ էր։ Զօրքի ոգին ու բարոյական վիճակը բարձր էր։ Հայկական բանակը պատրաստ էր դիմադրութեան, և հրամանատարութիւնը վստահ էր, թէ կարող ցոյց կը տայ յամառ դիմադրութիւն, կը դիմանայ առնւազն երկու չաբաթից մէկ ամիս։ Թիւրքերը աւելորդ ղոհեր չտալու համար՝ սոիպած պիտի լինէին դիրքերին անել Անդրկ. կառավարութեան՝ բերդը առանց կուի առանձնալու համար։

Այսպէս էր կացութիւնը, երբ իրար յետևից սկսան հասնել Զեննկելիի հետագիրները, որոնք խիստ բարոյալքող տպաւորութիւն աբին դիրքերում կանգնած գինուորների վրա։ Գանի որ որոշած է կնքել գինադադար, էլ

ֆինչու կուել — այս բնական միտքը կայծակի արագությամբ տարածւում էր ամէն կողմ, և զօրաբերքը արագօրէն քաջալայում էին։ Հակ. կօրպուսի պետ զօր. Վիչինսկին, ապր. 11-ին, ընդհանուր սպայակոյտին ուղած հաղորդագրութեան մէջ, զօր. Նազարբէգեանի յանձնարարութեամբ, հետեւեալ բնորոշումն էր տալիս տեղական դրութեան. «Երէկւայ-Ահմեդի զօրամասի կողմից գրաւուած առաջաւոր դիրքի բախտը որոշւել էր երէկ զօր. Օգիլվիզէի կորպուսի քաջութեամբ՝ պատերազմական գործողութիւնները գադրեցնելու և բանագնացներ ուղարկելու մասին։ Այդ կարգադրութիւնը բացասական տպաւորութիւն արաւ զօրքերի վրայ։ Սակայն, կարսի բերդապահ զօրքին չէր օգնւել։ Հաւանական է, որ կարսը դիմանար երկու շաբաթից ոչ պակաս, գուցէ և ամբողջ ամիս։ Եթէ ժամանակին մերժւէր թիւրքական պայմաններն այսօր առաւօտ ընդունելու առաջարկը, այդ դեռ կարող էր փրկել դրութիւնը, և կարսի բերդը, անտարակոյս, յետ կը մղէր թիւրքերին. այսօր էլ դեռ բերդը չատ լաւ պաշտպանւում էր, մինչև որ սասցեց վաչառիա Զեննկելիի և զօր. Օգիլվիզէի կարգադրութիւնը, որ բանագնացները ուղարկւեն՝ ճշտելու համար բերդի դաւարկման պայմանները։ Այս բանը բերդապահին յայտնելուց յետոյ՝ կռիւը դադարեց։ Զօրքերը ենթարկւելով հրամանի՝ հեռացան Ալաջ-Ադրաբատ-Հարամ վայրում առաջաւոր դիրքերից։

Այսպէսով, Զեննկելիի կարգադրութիւնը հոգուց հայկական բանակի դիմադրական թաքը և պատճառ դարձաւ սարսափելի աղէտի։

Զեննկելիի հրամանը ստանալուց յետոյ, զօր. Նազարբէգեանը և Ս. Մանասեանը ապարդիւն կերպով աշխատեցին ուղիղ հետագրութեամբ կապւել Թիֆլիսի Ապ. Կորչրդի հետ. կապը խզւած էր։ Դրանից յետոյ, Նազարբէգեանը հրամայեց էվլիաների չրջանում գործող հայկական շրջ. դիվիզիային պետ զօր. Մխիթեանին և կարսի բերդապետ զօր. Դէլիէին 10 ապրիլ ժամը 17-ից սկսած դադարեցնել պատերազմական գործողութիւնները, և թիւրք հրամանատարութեան հետ սկսեցին բանակցութիւններ երկու կողմերը գատորոշող գիծը ճշտելու համար։ Թիւրք առաջաւոր մասի հրամանատարը յայտնեց հայերի բանագնաց գնդ. Մորթլին, որ ինքը դինադադարի կարգադրութիւն չի ստացել, հայերի դիմումը կուզարկէ բարձր հրամանատարութեան, բայց մինչ այդ, Վեհիբ փաչայի հրամանի վրայ, ապր. 11-ին պիտի չարունակէ յառաջխազացումը, ուստի առաջարկում է, որ ի զուր ընդհարումներ չունենալու համար, հայկական զօրքերը քաչէլն բերդային ամրութիւնների մօտ։

Յաջորդ առաւօտ թիւրք առաջաւոր զօրքերի հրամանատարից ստացւեց մի նամակ, որով հաղորդւում էր, որ դինադադարի առաջարկը ընդունած է, թիւրք պատերազմներն արդէն նշանակած են, բայց մինչև բանակցութիւնների սկսուիը հայկական զօրքերը պիտք է նահանջեն ու կանգնեն բնական ամրութիւններից երկու վերստ վրա։ «Վեր զօրքերի ժամանելու միջոցին ձերոնք չպէտք է կրակեն, հակառակ դէպքում մենք ոյժ կը գործադրենք»։ Եւ, իրօք, ապր. 11-ին, թիւրքերը դիմեցին ընդհանուր յարձակման և սկսաւում էին գրաւել կարս-Ալեքսանդրապոլ երկաթուղագիծը՝ հայերի նահանջի ճանապարհը կտրելու նպատակով, բայց բերդի մարտկոցներից բացուած ուժեղ կրակը կանգնեցրեց նրանց, թէև կորուստները չդադարեցին։

Նոյն օրը Թիֆլիսից ստացուեց և գոր. Օվիչևիձէի հեռագրական հրամանը՝ ընդունելու Քիւրքերի պայմանները և դադարեցնելու պատերազմական գործողութիւնները՝ համաձայն այդ պայմաններէի։ Այս հրամանը հաւասար էր բացարձակ անձնատուութեան, որովհետև բերդի ամրութիւններից 2 վերստ վրա կեցած, այն էլ բարոյալքուած ու զազգած զօրքը անկարող պիտի լինէր պաշտպանուել Քնամուց, և կարելր, բոլոր զօրքերով ու ժողովրդով, պիտի անցնէր Քիւրքերի ձեռքը։ Այդ պատճառով, հայկական հրամանատարութիւնը նորից փորձեց դիւանագործի ուսելի նպատակով պայմաններ ստանալու։

Ապր. 11–ին և 12–ին կռիւները չարունակուցին անընդհատ։ Թիւրք զօրամասերն ու քրդական հրոսախմբերը աչխատում էին կտրել դէպի հիւսիս տանող երկաթուղին ու խճուղին և անվերջ յարձակումներ էին գործում հայկական զօրքերի վրա։ Թնդանօթները գոռում էին բերդի ամրութիւններից։ Հայ զօրքը ցոյց էր տալիս կատաղի դիմադրութիւն։ Իսկ նոյն այդ ժամանակ հայերի բանագնաց գնդ. Մորելը իրաւ յետևից գնում–գալիս էր Քիւրքական հրամանատարի մօտ, բանակցութիւններ վարում կարսի յանձնումի պայմանների մասին։ Թիւրք զօրքերի հրամանատար Քեազիմ բէյը վեհերը փաչայի կողմից դրեց ու մինչև վերջն էլ պնդեց հետեւեալ երեք պայմանի վրա։ 1։ Մինչև ապր.12–ի կէսօրը Քիւրքերին յանձնել կարս գետի ձախ ափին գտնուող բերդային ամրութիւնները, իսկ մնացեալ ամրութիւնները յանձնել մինչև նոյն օրւայ երեկոն։ 2։ Ապրիլ 12–ի ընթացքին անդրկովկասեան զօրքերը պէտք է հեռանան կարսից։ 3։ Իերդից դուրս գալուց յետոյ, 3 օրւայ ընթացքում, այդ զօրքերը պէտք է անցնեն Ախուրեան գետի միւս ափը։

Գնդ. Մորելը պնդում էր պայմանաժամի երկարաձգման վրա, բայց Քիւրքերը մնացին մինչև վերջ անզիջող և սպառնում էին, որ եթէ ժամանակը լրանալուց յետոյ, բերդը գրաւել դէնքի ուժով։ Միւս կողմից էլ Թիֆլիսի կառավարութիւնն էր չտապիցնում Քիւրքական պայմանների ընդունումը։ ապրիլ 11–ի դիշերը գօր. Նազարբէկեանը ստացաւ ընդհանուր հրամանատարի հետեւեալ հեռագրական կարգադրութիւնը, թէ՝ քանի որ կարսի ազարպման խնդիրը բացարձակ կերպով որոշուած է կառավարութեան կողմից, հրամայում եմ ձեզ իրաւունք տալ բերդապետին զօրքերը փոխադրելու Ալեքսանդրապոլի կողմը»։

Այս հեռագրի վրա, հայկական հրամանատարութիւնը մի անդամ էլ — չորրորդ անդամ — ուղարկեց գնդ. Մորելին Քիւրք հրամանատարի մօտ՝ խնդրելով պայմանաժամը դէթ մէկ օրով երկարաձգել։ Գատաստանը եղաւ կտրուկ մերժում։ Եւ մինչև 12 ապր. ժամը 2 կարսը պարպուեց։ Հեռացան զօրքերը։ Հեռացաւ բնակչութիւնը — մօտ 20,000 մարդ՝ նախօրօք այրելով քաղաքի լաւագոյն չէնքերը։ Բերդում մնացին միայն բերդապետ զօր. Դէյնբը, կոմիսար Մ. Արզումանեանը, գնդ. Մորելը և պայմանագրի ու վարչական հիմնարկութեանց սպաների ու պաշտօնէութեան մի մասը... բերդի դոյքերը փոխադրելու համար։ Զինեկելին միամտօրէն հաւատում էր,

որ Քիւրքերը Քոյլ կը տան իրեն բերդի պաշարն ու ռազմամթերքը տեղափոխելու Թիֆլիս…

Ապր. 12–ին, Երևկոյեան ժամը 9–ին կարս մտաւ Քիւրքական 11րդ դիվիզիայի առաջապահ մասը։

Կարսից հեռանալու պահուն գոր. Նազարբէգեանը Թիֆլիսից ստացաւ հետեւեալ հեռագիրը. «Ցաւոյնում եմ ձեզ ի գիտութիւն, որ կարսի նահանգը մինչև Ախուրեան գետի երկաթուղեամբ անցնող սահմանը պէտք է պարպուի մեր զօրքերից։ Ալէքսանդրապոլի՝ Ախուրեանի ալ ափին գտնուղ ամրութիւնները պէտք է ոչնչացուն։ Կառավարութիւնը հարց է յարուցել, որ Քիւրքիան մէկ ամիս ժամանակ տայ մեզ՝ դուրս տանելու համար կարսի բերդի ամրողջ գոյքը և մէկ շաբաթ՝ մեր զօրքը կարսի նահանգից հեռացնելու համար։ Անդրկովկասի վարչապետ՝ Զիսեվնեի։ Պատերազմ. նախարարի պաշտօնակատար՝ Օդիշելիձէ»։

Սակայն, հակառակ, որ Քիւրքերի բոլոր պայմաններն ընդունել էին, Քիւրք բանակը չդադարեցրեց դիւրորական գործողութիւնները, և մեր զօրքերը կուռվ նահանջեցին մինչև Ալէքսանդրապոլ։ Ապր. 15–ին, հայկական բանակը ամրողջովին անցաւ Ախուրեանի ձախ ափը՝ նախօրօք պայթեցնելով այ ափի ամրութիւնները։

Ինչ յետոյ, ապր. 17–ին, կարսից հեռացաւ և գօր. Դիլբեր իր շրջակրների հետ, ինչպէս նաև մնացած բնակչութիւնը։ Թիւրքերը վճռակամբերն մեծ եռանդով կարսի գոյքից որև է բան յանձնել։ Զինւորականներին ազատ թողին — դրա համար էլ պէտք էր չորշակալ լինեն…

Կարսի կուռնեղում ընկան չատ քաջ մարտիկներ։ Ապր. 9–ին, խեղաթիւրուած ժամանակ, սպանուեց սպայ Սուրէն Թադէոսեանը՝ յայտնի հասարակական գործիչ Արշակ Թադէոսեանի որդին, ապր. 12–ին, Մադրաչի մօտ, նահանջի ետնապարհը պաշտպանելիս, հերոսի մահով մեռաւ կարսի քաղաքագլխի որդին՝ կամաւոր Գէորգ Նոհրաեանը։

Կարսի դէպքերի լուրը Թիֆլիսում ստացուեց միայն ապր. 11–ի երեկոյեան յետոյ։ Հայկ. կորպուսի կոմիսար Ս. Մահասեանին մեծ դժուարութեամբ յաջողուել էր ուղիղ հեռագրագիծ մտ կանչել Մէյմի անգամ Ս. Վրացեանին ու հաղորդել Զինկիլիի հեռագրերի և տեղեկութեան մասին, ինչպէս նաև խնդրել, որ Ադգ. Խորհուրդը միջոցներ ձեռք առնի՝ երկաթուղագիծը կարսի պարպման ժամանակահիջորդը։

Այս տեղեկութիւնը ռումբի պէս պայթեց հայկական չրջաններում։ Ազգային Խորհուրդը դումարեց արտակարգ նիստ։ Հայ. կարճիկևանը և Սո. Մահիկեանները անմիջապէս հեռագրաթելով կապուեցին գօր. Նազարբեկեանի հետ՝ կամենալով փրկել կարսը։ Նազարբեկեանի պատասխանը եղաւ կարճ. այլեւս ուշ է։ «Ես զինւորական նախարար Օգիշելիձէի միջոցով տասից կառավարութիւնից բացորոշ հրաման՝ դադարեցնել կարսի մտ պահպանական գործողութիւնները և թոյլ տալ, որ Քիւրքական զօրամասերը մինչև երկու վերստ մտնեան կարսի ամրութիւններին. այժմ տեղի են ունենում բանակցութիւններ կարսը պարպելու մասին»։

Կարսի պարպումի լուրը ահագին փոթորիկ առաջ բերեց և Մէյմի ու

Նոքահավ կառավարութեան չրջաններում: Դաշնակցական նախարարներ Ա. Սահակեանը, Քալանթարեանն ու Խատիսեանը՝ ղողջելով Ձենկինլիի ապօրինի վարմունքի դէմ՝ հրաժարական տուին: Դաշնակցական ֆրակցիան պահանջեց հեռացնել Ձենկինլիին վարչապետութիւնից: Նրա արարքը համարում էր դաւաճանութիւն. անհանդուրժելի էր դաւաճանի վարչապետութիւնը:

Սոցիալ-դեմոկրատական ֆրակցիան, երկար խորհրդակցութիւններից յետոյ, Ժորդանիայի ու Սերեթլիի բերանով, պատասխանեց, որ ինքն էս վրդովված է պատահածից, դատապարտում է Ձենկինլիի վարմունքը, պատրաստ է վերացնել Ձենկինլիի բնկնածութիւնը, բայց այդ դէպքում վարչապետութիւնը պէտք է առանձնէ հայերից մէկը, օրինակ, Քալանթարեանին:

Այս առաջարկի անհեթեթութիւնը պարզ էր ամենքի համար: Ստեղծուած պայմաններում ի՞նչ կարող էր անել հայ վարչապետը: Նման քայլ մխայն կը փութացնէր Անդրկովկասի քայքայումը, և Դաշնակցութիւնը, բնականաբար, հրաժարուեց այդ «պատիւից»: Հանդամանքները ստիպեցին նրան համաձկրուել նաև Ձենկինլիի վարչապետութեան, որովհետև վրացիները բացէ ի բաց մերժեցին ուրիշի թնկնածութիւնն առաջ քաշել. կամ Ձենկինլին, կամ մենք կը հրաժարուենք կառավարութիւն կազմելուց:

Ձենկինլին մնաց կառավարութեան գլուխը և չարունակեց սկսած գործը: Սկզբի որոշման հիման վրա նա մտաւ թիւրքերի հետ նոր բանակցութիւնների մէջ, և, փոխադարձ համաձայնութեամբ, որոշուեց հաշտութեան նոր խորհրդաժողովը նշանակել Բաթումում: կազմուեց անդրկովկասեան նոր պատւիրակութիւն, այս անգամ ուեղի փոքրաթիւ կազմով: Պատւիրակութեան մէջ մտան՝ Ա. Ձենկինլին՝ նախագահ, Ն. Նիկոլաձէն, Ա.Խատիսեանը, Ց.Քալանթարեանն, Մ.Գաջինսկին, Խան-Խոյսկին և մի չարք խորհրդականներ ու քարտուղարներ — զօր. Օդիչելիձէ, զօր. Ղորդանեան, Ռաուշ-Ջադէ, Սաֆիքեւրդսկի, Մ.Բունեաթեան, Ս. Վրացեան, Զ.Աւալով և այլն:

Պատւիրակութիւնը Թիֆլիսից մեկնեց մայիս 5-ին*) և յաջորդ օրը, ուշ երեկոյեան, արդէն Բաթումում էր: Մայիս 11-ին ուղի ուեցաւ Բաթումի խորհրդաժողովի հանդիսաւոր բացումը:

Նեղկայ էին անդրկովկասեան պատւիրակութիւնը իր ամրողջ կազմով, Թիւրքերի կողմից՝ Խալիլ բէյը, Վէհիբ փաշան, Նուսրէթ բէյը, Օրհան բէյը և այլն, Գերմանիայի կողմից՝ զօր. Ֆոն-Լոսովը, կոմս Շուլենբուրգը և Օ Ֆոն-Վեգնդոնկը: Նիստի սկզբում դրուեց և Լեռնականների հանրապետութեան մասնակցութեան հարցը, և Հայդար-բէգ Բամբատը ընդունեց իրրև նրա պատւիրակ:

Ստանձնելով նախագահութիւնը՝ Խալիլ բէյը արտասանեց Թիւրքերէն լեզուով մի ճառ, որով ողջունում էր հազաւորեան զեղեցիկ առաղին ծա-

*) Սէյմի ապր. 13-ի օրենքով ապր. 17 յոյս 18-ի գիշերւանից մտցուեց նոր տոմար, և յետագայ ժամանակագրութիւնը այլևս հաշուած է նոր տոմարով:

դումը կովկասի գլխին: Ձմեռնկելչին պատասխանեց համապատասխան ոգ–տայատուԲիւններով:

Նիսան գործնական մասում Ձմեռնկելչին անդրկովկասեան պատւիրա–կուԲեան անունից յայտարարեց, որ բանակցուԲիւններին իբրև հիմք ընդունւում է Բրեստ–Լիտովսկի դաշնագիրը: Բայց Թալէ բէյը վճռական կերպով մերժեց այդ տեսակէտը: Տրապիզոնի բանակցուԲիւնների խզումից ի վեր նոր դէպքեր էին պատահել, պատերազմ էր եղել Թուրքիայի և Անդրկովկասի միջև, արիւն էր հոսել, հետեւաբար, անկարելի էր այլեւս դէնանել Տրապիզոնում ներկայացած պայմանների: Թուրքիան իրաւունք էր համարում դնել նոր պահանջներ, որոնք ամփոփւած են հաշտուԲեան նոր նախագծում: Եւ որպէսզի բանակցուԲիւնները չձգձգուեն, Թալէ բէյը տեղն ու տեղը յանձնեց Ձմեռնկելչին կնքւած մի ծրար, որի մէջ գտնւում էր նախագիծը «հաշտուԲեան և բարեկամուԲեան դաշնագրի Թուրքիայի և Անդրկովկասեան ՀանրապետուԲիւնների համագործակցուԲեան միջեւ»: Սրանով էլ վերջացաւ խորհրդաժողովի առաջին — և վերջին — նիստը:

ՀաշտուԲեան նախագիծը բաղկացած էր 12 յօդւածներից և 3 յաւել–ւածներից և տարբեր մեծ պայմաններ էր պարունակում ամբողջ Կովկասի, մանաւանդ, Վրաստանի, բայց ասելի ևս Հայաստանի համար: Վրաստանից առնւում էր Բաթումի չրջանը՝ նաւահանգստով հանդերձ, Ախալցխայի գաւառը: Հայաստանից խլւում էին Ալեքսանդրապոլը, Ախալ–քալաքը, Շերակի և Էջմիածնի գաւառի մեծ մասը, Սուրմալուն, Ալեքսան–դրապոլ–Կարս և Ալեքսանդրապոլ–Ջուլֆա երկաթուղագիծը: Հայաստան վաստօրէն չէր մնում. հայերին թողնւում էր հազիւ 11,000 քառ. վերստ լեռնոտ տարածուԲիւն Արագածի և Սևանի լճի միջեւ: Հողային պայմաններից գատ դրւում էին և չափազանց ծանր անտեսական, առեւտրական, ոսդմագի–տական և այլ պահանջներ:

Այսպիսով, Թուրքիան յախուռն քայլով մուտք էր գործում Կովկաս և իր ապգեցուԲեան տակ առնում Կովկասեան Լեռնաշղթայից հարաւ գտնւող բոլոր հողամասերը: Կարս–Սուրմալու–Նախիջեւան–Զանգեզուր–Ղարաբաղի վրայով միանում էր Գաբակական և Թուլական Ազրբէջանների, և Բագուից նրա առջեւ բացւում էին չէմեջնող հեռանկարներ դէպի Անդրկասպեան Թիւրք–Թուքանական ցեղերն ու կենտրոնական Ասիայի խալամական աշխար–հը: Եվրոպերէն համիսլամական ցնորքները իրականուԲեան էին դառնում...

Թուրքական պահանջները զարմանք ու զայրոյք առաջ բերին ո՛չ միայն վրացիների ու հայերի, այլ և գերմանացիների մէջ: Մայիս 12–ին գօր. Ֆոն–Լոսովը հետագրում էր իր կառավարուԲեան. «Թուրքական ամէն չոռ ու ծահճան անցած պահանջները՝ անվաւերու գուա հայական գաւառ–ները, որպիսիք են Ախալքալաքը, Ալեքսանդրապոլը և Երեւանի նահանգի մասերը, աղաղակով կերպով խախտում են Բրեստ–Լիտովսկի դաշնագիրը և նպատակ ունեն բնաջնջել հայերին Անդրկովկասում: Այսօր երեկոյեան Թուրքերը վերջնագիր ներկայացրին, որ Քոյլ տալի իրենց զօրքերին Ալեք–

սանդրապոլի վրայով անցնելու Ջուլֆա և այլ մասին ոչինչ չհաղորդեցին ինձ: Ես բողոքեցի նման ընթացքի դէմ»:)

Ալեքսանդրապոլ—Ջուլֆա երկաթուղագիծը իրենց տրամադրելու պահանջը Քիւրքերը հետապնդում էին չատ խիստ կերպով: Եւ մինչ Երկու պատւիրակութիւնների մէջև սկսւեց օրեր տևող դրաւոր վէճ բռնատիրական ձևի շուրջ, երկու կողմից կազմւած մի յատուկ գնդւորական յանձնախումբ քննում էր այս պահանջը: Քիւրքերը պնդում էին, որ երկաթուղին տալ իրենց, որպէսզի օր առաջ զօրք հասցնեն անդիւանգիների դէմ. Անդրկովկասի ներկայացուցիչները՝ զօր. Օղիլևիձէն և զօր. Ղորղանեանը հակառակում էին՝ առարկելով, որ այդ հարցը կարող է վճռւել միայն ընդհանուր դաշնագրի առորագրութեամբ:

Ծուսհատուած խաղաղ միջոցով երկաթուղին ստանալու մտքից՝ մայիս 14 լոյս 15-ի գիշերը Քիւրքերը ներկայացրին վերջնագիր, որ մայիս 15-ի առաւօտեան ժամը 7-ին Ալեքսանդրապոլը յանձնւի իրենց, և հայկական զօրքերը քաշւեն 25 կիլոմետր դէպի արեւելք: Եւ առանց պատասխան սպասելու, մայիս 15-ի առաւօտեան ժամը 2-ին, Ալեքսանդրապոլի դէմ գործող Քիւրք զօրքերի հրամանատարը վերջնագրի Քիւրքերէն պատճէնը ուղարկեց Ալեքսանդրապոլի հրամանատարին՝ պահանջելով մինչև ժամը 6 պատարկել քաղաքը: Հապէ մինչեւ ժամը 6 ու կէսը կարելի եղաւ թարգմանել Թուրքը, այն ինչ ժամը 6-ից սկսւեց քաղաքի ռմբակոծումն ու Քիւրքերի յարձակումը: Հայկական բանակը յանկարծակիի եկաւ և չտապով նահանջեց: Ալեքսանդրապոլն անցաւ Քիւրքերի ձեռքը:

Հայկական զօրքերի նահանջը, զօր. Նազարբէգեանի կարգադրութեամբ, կատարւեց երկու ուղղութեամբ. Հայկական առաջին դիվիզիան և 2րդ դիվիզիայի 7րդ և 8րդ գնդերը անցան դէպի Դէլո-Եոդուշ-Բէքճանդ-Աւդիբէկ-Փամբ գիւղպիծը: Չիւտր բրիգադը, իբրև յետապահ, մնաց Զրանչու գիւղում: Առաջին և երկրորդ բրիգադները 2րդ ձիաւոր գնդի հետ չարժւեցին Սարդարապատի ուղղութեամբ՝ օրօացնելու համար երևանի զօրամասը: Անդրանիկին, որ մայիս 1-ից ի վեր գտնւում էր Գիւլլի Բուլաղը, հրամայւեց պահպանել Ախալքալաք և Վորոնցովկա տանող ճանապարհները, սակայն, նա չմնաց այնտեղ և քաշւեց-դնաց Ջալալ-Օղլի:

Այսպիսով, տարածւած լուր ճակատով, հայ զօրքերը պաշտպանում էին հայկական լրջանները: Քիւրքերը քայլ առ քայլ յառաջանում էին և մայիս 22-ին գրաւեցին Համամլու կայարանը, որով բացւում էր երեւանի ճանապարհը: Երևանից չտապով նրանց դէմ ելաւ Քարաւն ուղարկւեց մի զօրամաս Դրօի գլխաւորութեամբ: Բայց այդ, միջոցներ ձեռք առնելուն ամբացնելու Ղարաքիլիսայի ճակատը: Զօր. Նազարբէգեանը մի կոչ ուղղեց զօրքին, որով գիմում էր նրանց հայրենասիրական զգացմունքներին և հրաւիրում կատարել իրենց պարտականութիւնները մոռովրդի հանդէպ: Վերջին եղաւ կոնդենցնել ու կարգի բերել նահանջող զօրամասերը: Ծուսաչքումը տեղի ունեց ոգեւորութեան:

---

*) I. Lepsius, Deutschland Und Armenia, Berlin, 1919.

Ջօր. Նազարբէկեանը օգտագործեց այս տրամադրութիւնը և մայիս 24–ին տուեց յարձակման հրաման։ Նոյն օրը Ղարաքիլիսայի մօտ տեղի ունեցաւ յաջող ճակատամարտ. Քիւրքերը կարգուկանոն խուճապով քաշուեցին դէպի Համամլու։ Սակայն, քշնամին սպառնում էր մեր աջ թեւին։ Անդրանիկը հետապնդել էր Ջալալ–Օղլիից դէպի Դսեղ՝ բանալով ահագին տարածութիւն քիւրքերի առջև։

Տաք և մեղ համար յաջող յարձակողականը չարունակուեց և մայիս 25–ու 26–ին։ Այդ երկու օրւայ ընթացքին տեղի ունեցան յաջող և արիւնահեղ ճակատամարտներ։ Մայիս 26–ի երեկոյեան քշնամին քշուած էր Գեղամ–Մայմեխ սարից։ Հայերը գրաւել էին Հալի–Վաթս գիւղը, Բեգորդալը։ Քիւրքերը տուին ահագին զոհեր։

Ստանալով օժանդակ նոր ուժեր ու թնդանօթներ՝ մայիս 27–ին քիւրքերը դիմեցին հակայարձակման և արիւնահեղ կռիւներից յետոյ նորից գրաւեցին Բեգորդալը։ Այդ թևից սպառնացող հարւածի պատճառով՝ տիպհամ հաճանիցին և հայերի կենտրոնական ուժերը ու մայիս 28–ին դիրքեր բռնեցին Բոզկիւղ և Նիկիտինօ գիւղերի մօտ՝ փակելով Երևանի ճանապարհը։ Անդրանիկը մայիս 30–ին Դսեղից անցաւ Դիլիջան։

Ղարաքիլիսայի ճակատամարտներում հայ գիւղերը երեւան բերեց ռազմական բարձր կարողութիւն և անահմանի հայրենասիրութիւն։ Բազմաթիւ գոհեր տուեց նա։ Շատերը ընկան հերոսական մահով։ Դրանց մէջ էր Քեդանօթային մարտկոցի հրամանատար հերոս Տէր–Մովսիսեանը։ Դրանց մէջ էր և Հայաստանի ապագայ վարչապետ Հ. Օհանջանեանի անդրանիկ զաւակը՝ Մոնթէր, որ մի խումբ զազափարական ուսանողների հետ գտնւում էր առաջաւոր դիրքերում, մասնակցել էր բազմաթիւ ճակատամարտների, ստացել քաջութեան նշան և որ անհետ կորաւ Ղարաքիլիսայի կռիւներում։

Ղարաքիլիսայի ճակատամարտը և նրան օրերին Սարդարապատ–Բաշ Աբարանում տեղի ունեցող կռիւները ահագին ապաւորութիւն թողեցին Բաքուում, Դրանից յետոյ էր, որ Վեհիր փաշան, ինվէր փաշայի կողմից դիւակցութիւն առաջարկեց հայ պատգամաւորներին և մերժում ստացաւ։

•

Ղարաքիլիսան գրաւելուց յետոյ, քիւրքերը արշաւեցին դէպի հիւսիս՝ Թիֆլիսի ուղղութեամբ։ Միաժամանակ ոտքի ելաւ և Սադախլու–Սանդարի չրջանի մահմետականութիւնը, որ կտրեց երկաթուղային հաղորդակցութիւնը և թալանում ու կոտորում էր փախստական հայերին։ Մայիս 22–ին Անդրկ. կառավարութիւնը որոշեց խնդրել Հ. Ց. Դաշնակցութեան և Մուսաւաթին՝ ուղարկել երեքական ներկայացուցիչներ այդ չրջանի քուրքերին հանգստացնելու համար, բայց ալեհոծւած տարերքը զսպելու հնարաւորութիւն չկար այլևս։ Հարաւից ղարդում ու կոտորում էին քիւրք ահեկաքները,

հիւսիսից՝ գինւած թուրք գիւղացիները: Հայ գաղթականութիւնն ու նահանջող զօրամասերը թալանւում ու կոտորւում էին ամէն կողմ:

Թիւրքերի հիւսիս չարժւելու հետեւանքով անասելի իրարանցում առաջ եկաւ Թիֆլիսում՝ վրաց և հայկական շրջաններում: Վրացիները սկսեցին պատրաստուել դիմադրութեան: Թիֆլիսը յայտարարուեց պաշարողական վիճակում. զօրաշարժի ենթարկուեց կարմիր գւարդիան: Գաղաքի շուրջը, բարձունքների վրա, դիրքեր փորուեցին, նշանակէտեր պահակներ:

Անտանելին, ասկայն, հայ ժողովրդի, Թիֆլիսում խռնւած կարսեցի, չիբուխեցի, արեւմտահայ բազմահազար գաղթականութեան վիճակն էր: Մահառնող, չատ էին ըղայնանում արեւմտահայերը, որովք, հասկանալի պատճառներով, աւելի էին սարսափում Թիւրքական արշաւից: Նրանց դրութիւնը ահռելի էր: Ի՞նչ անել: Ո՞ւր գնալ: Եւ ահա ծայր տւեց մի խուճապային փախուստ դէպի Հիւսիսային կովկաս: Հազարաւոր մարդիկ, ծեր ու երեխայ, գիւղացի ու քաղաքացի, աչխատաւոր ու մտաւորական, — ով ինչով կարող էր — խուժեցին դէպի ռազմավիրական ճանապարհը: Հոսանքի մի ծայրը հասել էր արդէն Վլադիկաւկաց ու Արմաւիր, մինչ միւսը դեռ նոր էր դուրս գալիս Թիֆլիսից: Օրեր անընդհատ, Թիֆլիսից չարժւում էին հազարաւոր սայլեր, կառքեր, ինքնաչարժներ, գրասեռներ, ֆուրգոններ՝ բեռնաւորւած տնային իրերով, կանանցով ու երեխաներով: Շատերը իրենց ունեցուածքը չնչին գնով ծախում էին Թիֆլիսի փողոցներում — գորգ, կապերտ, բարձ, անկողին, վերմակ, կարասիներ, ամանեղէն... Վլադիկաւկաց գնացող փոխադրութեան միջոցների սակագինը բարձրանում էր տասնեակ ու հարիւրաւոր անգամներ: Մի մարդու տեղը ֆուրգոնում արժէր մինչև 10,000 ռուբլի: Մարդիկ վերջին կոպէկն էին տալիս, միայն թէ կարողանան հեռանալ:

Թիֆլիսից Հիւսիսային կովկաս մեկնեց և Ապահովութեան Նորհրդը ամբողջ կազմով: Այս պարագան աւելի եւս աստիճացրեց ընդհանուր խուճապը: Գաղթը կատարւում էր անկազմակերպ, տարերային կերպով: Փարենաւորման գործը ճանապարհին չափազանց անբաւարար էր, ապահովութիւն չկար, և յարձակումները գաղթականների վրա սովորական էին: Այսպէս, միայն 23-ին Լարսից հեռագրում էին Հ. Ազգ. Նորհրդին. «Այսօր եկուղբները Նոր-Լարս կայարանում պահեցին աւելի քան 10,000 գաղթականներ, Քոյլ չտուին գնալու Վլադիկաւկաց և վերադարձրին Կարէնց, ուր նրանց սպասում է սով ու ցուրտ»:

Միայն 25-ին Ազգ. Նորհրդի ներկայացուցիչը հեռագրում էր Դուշէթից. «Հէնթրեր հազար սոված ու մերկ գաղթականներ հաւաքւել են Մցխեթի, Դուշէթի միջև և աւելի հեռուներ: Ո՛չ մի օգնութիւն և ո՛չ մի տեղից: Փախստականների մէջ սկսում են հիւանդութիւններ: Կան մահւան դէպքեր: Դիւղերում տեղ չկայ, և ամենքը գիշերում են բաց երկնքի տակ, ցրտին: Ձկայ ո՛չ հաց, ո՛չ եռացրած ջուր. չկան անպատաւոր կացարններ — ամենքը թողնւած են ճակատագրի կամքին: Բժշկական օգնութիւն էլ չկայ: Մարդիկ հազարներով գնում են ոտքով, առանց օգնութեան որև է յոյսի... կացութիւնը յուսահատական է»:

Թէ ինչ կը լինէր հետևանքը այս տնաքանդ փախուստի, դժուար է ասել, եթէ մէջտեղ չգար արտաքին միջամտութիւն. մայիս 24-ից Թերթերի ժողովրդական կառավարութիւնը փակեց գաղթականների առջև Հիւսիսային նավկաի ճանապարհը, որով հոսանքը կանգ առաւ, և գաղթել ցանկացողների մեծ մասը մնաց Անգրկովկասում: Բիւրքական եաթաղանից ազատւածները, Հիւս. Կովկասում, ընկան բոլշեւիկեան դժոխքը. այնտեղ նրանց սպասում էին նոր զրկանքներ, նոր տառապանքներ ու նոր հնաթափութիւններ:

ԴԼՈՒԽ ԺԲ.

ԴԷՊՔԵՐԸ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԴԱՇՏՈՒՄ

Ալէքսանդրապոլի անկումից յետոյ, հայկական զօրքերի մի մասը նահանջեց դէպի Սարդարապատ, Երևանի ուղղութեամբ: Այստեղ քիչ յետոյ տեղի էին ունենալու դէպքեր, որոնք բախտորոշ դեր էին կատարելու հայ ժողովրդի կեանքում: Նախ քան այդ դէպքերին անցնելը, սակայն, անհրաժեշտ է կանգ առնել ընդհանրապէս Արարատեան դաշտի անց ու գարձերի վրա — Արարատեան դաշտի, որը, չատ չանցած, կազմեց Հայաստանի Հանրապետութեան պատանդանը:

Ռուսական յեղափոխութիւնը Երևանում էլ ընդունւեց ցնծութեամբ: Հին իշխանութիւնը փոխարինւեց նորով, և նահանգի կառավարութիւնը անցաւ Նահանգական Գործադիր Կոմիտէին՝ նախագահութեամբ առաջին լրջանում՝ Սմբ.Այվազեանի, ապա՝ Սահ.Թորոսեանի, և Զինւորական Մորհրդի Գործադիր Կոմիտէին — նախագահ Սարգիս: Առաջինը զբաղուեց գլխաւորապէս գաղուտի էր քաղաքացիական գործերով, երկրորդը՝ զինւորական: Դանի ճակատը կայուն էր, գնդակոծում էր Զինւ.Մորհրդին: Այս երկու մարմինները գործում էին համերաշխ՝ աշխատելով ամուր պահել յեղափոխական կարգն ու ազգամիջեան խաղաղութիւնը և նպաստելով մեր ժամանակ ռազմամակատի ուժեղացումին: Ընտիր ամէն կազմեց և հայ Զինւորական Միութիւնը, բժ. Ե. Մելիքեանի նախագահութեամբ, որ բանական կարեւոր դեր կատարեց յետագային:

Յեղափոխութեան առաջին ամիսներին Երևան քաղաքի և նահանգի կեանքը ընթանում էր, համեմատաբար, խաղաղ): Տիրում էր համերաշխութիւն հայերի և Թուրքերի միջև. երկու ազգերի մտաւորական ներկայացուցիչները գործում էին ձեռք-ձեռքի: Սակայն, հետզհետէ դրութիւնը սկսեց փոխուել. Քիւրդերի և Թուրք ազգայնականների գրգռումով այստեղ ու այնտեղ սկսեցին գլուխ բարձրացնել քրդերը, յարձակուել ու թալանել երկաթուղին և խճուղիներով անցնող պարէնակիր սայլերը, կողոպտել ու սպանել հայերին: Սկսեցին չարժւել և Թուրք գիւղերը, մանաւանդ ռազմամակատ տանող ճանապարհների և հանգուցային կէտերի վրա:*

---

*) Ըստ 1 յունւ. 1916թ., պետական վիճակագրութեան համաձայն, երևանի նահանգում ապրում էր 1.120.242 բնակիչ, որից հայեր՝ 669.871, թուրքեր՝ 373.582, քրդեր՝ 36.508, ռուսներ՝ 16.103, եզդիներ՝ 12.624 և այլն: Երևան քաղաքում հաչււում էր 51.286 բնակիչ, որից 37.204 հայ, 12.557 թուրք, մնացածը՝ ռուս. վրացի. հրէա և այլն («Кавк. Календарь», 1917г., стр. 214—221):

Միւս կողմից, բոլշեւիկների քարոզչութեան ազդեցութեան տակ ծայր աւին գիւղական անկարգութիւններ ճակատում ու թիկունքում։ Ռուսիա ամբի երեանի գիւղերները փորձ արին կողոպտելու քաղաքի չուվան։ Քաղաքացին մի քանի խանութներ, և հազիւ յաջողուեց ազէտի առաջն առնել։ Նման, տեղական բնոյթ կրող խռովութիւններ եղան և ուրիշ վայրերում։

Սակայն, դրութիւնը սկսեց արւել և սպառնական բնոյթ ստանալ 1917 թւի աշնանը, մանաւանդ, հոկտեմբերեան յեղաշրջումից յետոյ, երբ բոլշեւիկները քաջալերեցին ռազմաճակատը և ռուս զօրքը քաշեցին դէպի թիկունք, որի պատճառով ճակատի պաշտպանութեան հզօր ամրոցները հայերի վրայ։ Իրրև հետեւանք այս գրութեան, իշխանութիւնը երեանի նահանգում հետզհետէ անցաւ հայերին, ռուս զօրամասերին փոխարինեցին հայկական մասեր, գանագան կէտերում սկսեցին կազմել նոր զօրամասեր և այլն։ Քաղաքացիական իշխանութիւնը ամփոփւեց երեանի Հայկ։ Ազգային Խորհրդի ձեռքը, իսկ զինւորական գործերը վարում էր Անդրկովկասեան հոմիսարիատի կողմից նշանակւած հայկական զօրքերի կոմիսար Դրօն, որի գլխաւոր հոգսն էր զօրամասերի առողջացումն ու մարտունակութեան բարձրացումը։

Երեանի Ազգ. Խորհուրդը, որ կազմւած էր Թիֆլիսի Հայոց Ազգ. Խորհրդի ձեւով՝ կուսակցութիւնների ներկայացուցիչներից, իր գոյութեան հէզերի չրջանում, անգոյն և անկիր մարմին էր, որ գնում էր գէպքերի հոսանքի յետեւից։ Ինքնուրոյն նախաձեռնութիւնից զուրկ՝ չարժւում էր Թիֆլիսից եկած հրահանգներով։ Նրա մէջ մտնում էին Քեմալեան առաջնորդ Խորէն Եպ–ր, Մ. Մուսխենեան (անկ.), Գր. Չէր–Աչուատրեան (ժող.), Դ. Ջուբեան (ս–յ.), բժ. Գր. Չէր–Ջակոբեան (ս–յ.), Մ. Ճարուխեանեան (դաշն.), Ա. Ասատուատրեան (դաշն.), Թ.Նիկողոսեան (դաշն.) և այլն։

Երեանի Ազգ. Խորհուրդը կեանք ստացաւ միայն 1917թ. դեկտեմբերի վերջերին, երբ Թիֆլիսից եկաւ Հ. Ազգ. Խորհրդի լիազօր ներկայացուցիչ Արամ։ Ազգ. Խորհրդի առաջին իսկ նիստում նա տւեց ընդարձակ զեկուցում ընդհանուր քաղաքական դրութեան ու Թիֆլիսում տիրող մտայնութեան մասին և յայտարարեց, որ ո՛չ մի տեղից չկայ և ո՛չ մի յոյս. պէտք է լարել սեփական ուժերը՝ ապահովելու համար ճակատն ու թիկունքը։ Եւ առաջարկեց անմիջապէս վերակազմել Ազգ. Խորհուրդը, ընտրել փոքրաքանակ ու գիւրաշարժ մի մարմին՝ տալով նրան արտակարգ իրաւունք գործելու Ազգ. Խորհրդի գծած սկզբունքների սահմանում։

Ազգ. Խորհուրդը միաձայնութեամբ ընդունեց Արամի առաջարկը և ընտրեց Ազգ. Խորհրդի իրաւունքներով մի մարմին՝ Բառուկ Կոմխէ՝ տալով նրան երեք ամսով գործելու կատարեալ ազատութիւն։ Երեք ամսից յետոյ նա զեկուցում էր ներկայացնելու Ազգ. Խորհրդին, և վերջինս, ի հարկին, կարող էր երկարաձգել նրա լիազօրութիւնները կամ լուծել։ Բառուկ Կոմխէի մէջ ընտրւեցին Երեանում մեծ յարգանք վայելող հասարակական գործիչ Մկրտիչ Մուսխենեանը, որ այն ժամանակ ո՛չ մի կուսակցութեան չէր պատկանում և միայն 1919 թւին մտաւ Հ. Ե. Դաշնակցութեան

չաբգքերը, Աբշալոյս Աստուածատրեանը, Սահակ Թորոսեանը, իրբև նահանգական կոմիտաբ, Հ. Զինւ. Մխուքեան ներկայացուցիչը և Արամը ի պաշտօնէ: Ցաւուկ Կոմիտէի նախագահ ընտրուեց Մ.Մուսինեանը, քարտուղարի պաշտօնով հրաւիրուեց Սարդ. Օհանջանեանը: Ցաւուկ Կոմիտէն դարձաւ Երեւանի փաստական իշխանութիւնը:

Ցաւուկ Կոմիտէի, ինչպէս և նրա հետ համերաշխ գործող գինւորական կոմիտաբ Դրօի ու Երեւանի նահանգի հայկական զօրքերի ընդհանուր հրամանատար զօր. Սիլիկեանի գլխաւոր մտահոգութիւնը ռազմաճակատի ամրացումն ու թիկունքի անդորրութեան պահպանումն էր: Այդ նպատակով, հէնց առաջին նիստում, Ցաւուկ Կոմիտէն որոշեց գէնքի տակ առնել մինչեւ 28 տարեկան բոլոր գինապարտներին: Այդ իմաստով Արամը գրեց մի կոչ, որ եղաւ Ցաւուկ Կոմիտէի № 1 կոչը: Նրա մէջ բացատրւում էր կացութեան լրջութիւնը և, յանուն Ազգ. Խորհրդի, հրաւէր ուղղւում գինապարտներին՝ երեք օրւայ պաշարով ներկայանալ տեղական գինուորական կենտրոններբը: Ժողովուրդը արտակարգ վստահութեամբ արձագանգ տւեց իրեն ուղղւած կոչին, և, հակառակ ծննդեան տօներին, ամենքը շտապեցին ներկայանալ պատշաճ իշխանութեան:

Միաժամանակ, Ցաւուկ Կոմիտէն կազմակերպում էր թիկունքը, աշխատում էր ապահովել ճանապարհների և հաղորդակցութեան միջոցները, ինչպէս նաև կարգադրել ինքնապաշտպանութեան գործը: Այս նպատակով կազմւում և որոշ վայրերում դասաւորւում էին մարտական խմբեր ու ոգժամբերք և նրանք էր թափւում, խաղաղ միջոցներով, առաջն առնելու հանրային անդորրութեան խանգարման: Այս տեսակէտից, խոյոր նշանակութիւն էր տրւում հայ և թուրք ղեկավարների համերաշխութեան և հարեւան երկու ժողովուրդների խաղաղ կենակցութեան: Թէ՛ Ցաւուկ Կոմիտէի, թէ՛ նահանգական կոմիտաբի և թէ գինւ. կոմիտաբի գործունէութիւնը զարգանում էր այդ ուղղութեամբ, մի բան, որ չատ էր դժւար ա՛յն ժամանակւայ պայմաններում:

Հէյտ չէր և ռազմաճակատի պաշտպանութեան և հայկական զօրամասերի կազմակերպութեան ու առողջացման գործը: Դեռ Երօն նոր էր նշանակւած հայկական զօրքերի կոմիտաբ, երբ ճակատի հայկական զօրամասերից սկսան Թիֆլիս հասնել պատւիրակներ՝ խնդրելու, որ իրենց մասերը յետ քաշւեն թիկունք. չէին ուզում մնալ առաջաւոր դիրքերում: Զօրամասերի ներկայացուցիչները իրենց պահանջը պատճառաբանում էին նախ՝ ընդհանուր բարոյալքումով և երկրորդ նրանով, որ միայն հայկական ուժերով անհնար է պաշտպանել ռուս բանակի թողած ընդարձակ ճակատը: Եւ, իրօք, նրանց ասածի մէջ կար որոշ իմաստ. հայկական ռազմաճակատը այդ օրերին երկարում էր Սև ծովից մինչև Վասպուրական, որի վրա 1917թ. վերջերին, կանգնած էին 200,000 հետեւակ գինւորներ և 30 գունդ ձիաւոր՝ համապատասխան հրետանիով և մօտ 120,000 հոգինոց թիկունքային մասերով: Այդ ուժերը այժմ պէտք է փոխարինւէին հայկական վոխտ մասերով:

Դրօն գործի անցնելուց առաջ, կազմել էր մի ծրագիր, որով առաջարկում էր կարճացնել ռազմաճակատը. գրաւած վայրերի ժողովուրդը և պաշարից այն մասը, որ հնարաւոր է, տեղափոխել Կովկաս, մնացած պաշարը ոչնչացնել և օրգքերը յետ քաշել ու գրաւել մօտաւորապէս Զիւխնա-Կարաքիբենա-Գյոլչ Դեաղուկ-Քափափեղ գիծը, ծայրայեղ դէպքում և Մակուն՝ Ալաշկերտի երկաթուղին պահելու նպատակով։ Դրօն համոզւած էր, որ դրանով առաջը կառնուի ճակատի զօրամասերի քայքայման և օր առուր աճող դասալքութեան, իսկ մեր կողմից, կոմբեղացւի կարող։ Բացի այդ, նա առաջարկում էր կազմել մի բրիգադ Դիլիջանի ուղղութեամբ, որպէսզի ապագայում, երբ ճակատի գործերը անյոյսող գնան, կարելի լինի չարժւել Դանձակի և Ղաբաղի ուղղութեամբ և միանալով Բագուին՝ ապահովել հայ ժողովրդի դէմ մարդկային զոհերից։

Այս առաջարկութիւնների չուրջ տեղի ունեցան բուռն վիճաբանութիւններ. դէմ արտայայտւեցին ո՛չ միայն քաղաքացիական գործիչները, այլ և զօր. Նազարբէգեանի ու զօր. Ղորղանեանի պէս զինւորական հեղինակութիւնները, որոնք կարծում էին, թէ երբեմն յանձնումը հոգեբանական ահագին հաբւած կը լինի հայ ժողովրդի ու հայկական բանակի համար։

Թիֆլիսից Դրօն անցաւ Երեւան, ուր այդ օրերին կազմակերպւում էր Հայկական Կորպուսի մէկ դիվիզիան, որի հրամանատար նշանակւած էր զօր. Սիլիկեանը։ Վերջինիս օգնական և բրիգադայի հրամանատար էր զօր. Դանիէլ բէգ Փիրումեանը։ Երեւանի Նահանգում էին գտնւում և Պարսկաստանից քաշւած հրդ գունդը հրամանատարութեամբ գնդ. Ովսէփեանի (էլմֆանտում), 6րդ գունդը՝ հրամ. գնդ. Մելիք-Մուրադեանի (Ալչատուկ), 3րդ գունդը՝ հրամանատարութեամբ գնդ. Ովսէփեանի (եղբայրը) Դիլիջանում էր։ Այս վերջինս յետոյ փոխադրւեց Թիֆլիս։ Գնդերում իշխում էին զինւորական կոմիտէները. բոլշեւիկեան ոգին տիրող էր և նրանց մէջ։ Ամէն օր պահանջներ էին ներկայացնում։

Թէ զօրամասերի մէջ տիրող անիշխանական տրամադրութեան վերջ տալու և թէ Նահանգում ծայր տւած անկարգութիւնները զսպելու նպատակով Աբամի ու Դրօն անհրաժեշտ գտան ստեղծել առողջ զինւորական մի կորիզ, որի վրա յետագայում մաքրագործման ու խաղաղութեան գործը դնել իրական հիմքերի վրա։ Այդ նպատակով Դրօին յանձնարարւեց կազմել մի հետեւակ բրիգադ և մի ձիաւոր դիվիզիօն։ Դրօն խնդրի գործի կանչեց հմուտ խմբապետներ Բաչ Գառնեցի Մարտիրոսին, Յոսրով Եզիազարեանին և յանձնարարեց նրանց՝ ստանձնելով ոստիների Ընդամէնը 800 մարդ՝ ձեռնարկել կամաւորների հաւաքման։ Երկու օրւայ ընթացքում հաւաքւեցին աւելի քան 200 զինւորներ, մեծ մասամբ կամաւորական շրջ գնդի նախկին մարտիկներից։ Միաժամանակ կոչ ուղղեց սուրմալուցիներին, և ահա դէպի Երեւան չարժւեցին զինւորներ ու սպաներ՝ սպայ Սահակեանի ու սպայ Շահրաչեանի գլխաւորութեան տակ։ Մի չարաթւայ մէջ կազմւեց 6 վաշտ հետեւակ՝ պարտիզանական գնդի, իւրաքանչիւր վաշտը 200 մարդ, և երկու ձիաւոր հարիւրեակ՝ Յոսրովի ու Մարտիրոսի, որոնցից առաջինը ուղարկւեց

Դաւալու, վերջինը՝ Ալի Ղզըլլ, իսկ վաշտերը յատկացուեցին երկաթուղու պաշտպանութեան:

Գնդ. Զալինեանին յանձնարարուեց՝ ընդունելով 2րդ սահմանապահ գնդի ՀանաքՀուում Քողաք գոյքը, ձիերն ու ռուս սպաների մի մասին՝ կոփ-մակերպել մի ձիաւոր գունդ: Այդ ռուս սպաների մէջ էր և գնդ. Կորոլկովը որը նշանակուեց պարտիզանական գնդի ձիաւոր դիվիզիոնի հրամանատար և կարգադրութիւն ստացաւ կազմելու 3րդ հարիւրեակը սպայ Փերսամեանի հրամանատարութեան տակ: Մի ուրիշ սպայ՝ փոխ-գնդ. Վերեկրեոտովը նշանակուեց հրամանատար պարտիզանական հետեւակ գնդի, որի մէջ պաշտօն ստացան և իրենց քաջութեամբ Քիւրքական ճակատում աչքի ընկած ուրիշ 10 ռուս սպաներ: 1918Թ. յունւարի կէսին գունդն արդէն պատրաստ էր՝ 3 գումարտակներով:


Մինչ այսպէս, Ազգ. Խորհուրդն ու զինուրական իշխանութիւնները կազմակերպում ու կարգաւորում էին իշխանութիւնն ու հայկական զօրամասերը, կացութիւնը հետզհետէ սկսում էր բարդանալ ու խճճուել: Մի կողմից՝ բոլշեւիկների գործունէութիւնն, միւս կողմից՝ ռազմաճակատի մերկացում, երրորդ կողմից՝ կովկասեան մահմեդականների հակապետական յարձակումներ: Եւ, վերջապէս, Քիւրթ գործակալները, որոնք վխտում էին ամէն կողմ և ամբի հանում կովկասի մահմեդականներին՝ ոուսների և հայերի դէմ՝ նպատակ ունենալով փակել ռազմագիտական ճանապարհները, կտրել հաղորդակցութեան բոլոր միջոցները և աջակցել Քիւրթ բանակի յաղթանակը: Արդէն 1918Թ. յունւարից սկսած երեւանեան նահանգը գրեթէ ամբողջապէս թատերաբեմ էր մահմեդական խռովութիւնների: Զուգընթացաբար Քրքական չարժումներ էին տեղի ունենում և Կարսի, Թիֆլիսի ու Գանձակի նահանգներում՝ բոլոր այն վայրերում, որոնք որև է կապ ունէին ճակատի պաշտպանութեան հետ:

Գարգելու համար ա՛յն օրերի դժոխային կացութիւնը՝ առաջ բերենք մի քանի նմոյշներ բաղմաթիւ նիւթերից: Այսպէս, յուլ. 14-ին Իդդիրից հեռագրում են, որ քրդերը յարձակել են ռազմաճակատ գնացող պետական պարենատար խմբի վրա՝ կարս—Օրգով ճանապարհին, տարել են մեծ քանակութեամբ հացի պաշար՝ բարձած ուղտերով: Սպանուած են չատ գիւղացիներ: Բայազետ—Մուսուն—էջմիածին ճանապարհները փակուել են. ամէն օր տեղի էին ունենում յարձակումներ, սպանութիւն ու կողոպուտ: Ալի-Ղըզըլ գիւղը տեղահանուում է Ղամարլու՝ ազատուելու համար պաշարող Քրքական ու քրդական հրոսախմբերից:

Ցունւ. 20-ին Ջուլֆայից հեռագրում են Անդրկ. կոմիսարիատին. Հերուքիւնը Ջուլֆայում սպառնական է. ուսերի ու արիւնի են ենթակայ ամէնքը. երկաթուղային ծառայողները խնդրում են փրկել իրենց ընտանիքներն կեանքը: Ամէն օր հրացանազդութիւն է տեղի ունենում. կան սպաներ ու վերատորներ: Ազգային քշնամութիւնը սուր բնոյթ է ստացել: Ամէնքը ենթակայ են վտանգի: Ուստ գիւղը համարեա չկայ. բոլորը գնացել են, Շուտասիոյլ կարգադրութիւն պէտք է անել փոստը Ալեքսանդրապոլ կամ Թիֆլիս փոխադրելու համար, հակառակ դէպքում բոլոր ծառայողները կը փախչեն:



Ի. ԱՒԱԽՈՒՄՅԱՆՑ



ՅՈՒՐ. ՏԱՆԱԿԱՆ ԲԱՆ ՓԱՐԻԶԻՑՆԵՐՈՒՆ



ԲԱՐ. Ն. ԱԳԱԼՅԱՆՑ



ԱՐՔԵՏԻՊՈՒ



Չ. ՄԱՐԱՆՑԻՆ

Ցուն. 29-ին հետագրում են Երևանից. «Ցացուքիանն օր ըստ օրէ վատթարանում է, որովհետև քրդերն ու Թուրքերը, առաջ պէս, խիստ գրգռիչ կերպով են պահում իրենց։ Հրացանապարկ են անում գնացքները։ Ճարձակում են պաբենակիր խմբերի և անհատ ճամբորդների վրա։ Ներկայումս նրանք փորձում են չրջապատել Ռեհանու գիւղը, որի չուրջը փուում են խրամատներ։ Ջօրքի և Հրոսախմբերի միջև տեղի ունեցած ընդհարումների ժամանակ առ այժմ սպանած են 2 սպայ և 11 զինուոր, վիրաւորած են 7 հոգի, անհետ կորած 3։ Բնակիչներից սպանուած է 34 հոգի, վիրաւորուած՝ 10։ ՇաՀախմէից եկող 400 փուրգոնոց պաբենակիր խումբը Ջանլուխալրի մօտ ենթարկուեց յարձակման, կան սպանուածներ և վիրաւորներ։ Բրդերն ու Թուրքերն, ըստ երեւոյթին, ձգտում են անգործութեան մատնել երկաթուղին։ Այս օրերս փորձ է եղել Արաքսաս կայարանի մօտ կամուրջն այրելու։ Դրուքիանը երթալով բարդանում է չրջանում»։

Փետր. 2-ին մօտ 3000 զինուած Թուրքեր կանգնեցրին Նորաչէնից Շահախէի գնացող պոստատար գնացքը։ Գնացքում եղած 11 հայ գինուորներին դուրս քաշի վագոնից և անցնելով չոգէլարժի վրա՝ պահանջեցին առաջ չարժուել։ Զինուորների և Թուրքերի միջեւ սկսեց տաք հրացանաձգութիւն։ Նոյն միջոցին Ղամարլուից դէպի Նորաչէն դուրս եկաւ հայ գինուորների թեռնաւորած մի գնացք, որ անուղեակ էր Նորաչէնում կատարուող դէպքին։ Նորաչէնի մօտ Թուրքերն առաջ բերին գնացքի խորտակում։ չոգէչարժն ու վեց վագոններ յարուցեցին։ Թուրք խումբն յարձակուեց երկու գնացքների վրա և սկսեց թալանել։ Եղան բաժանիչ վիրաւորներ ու սպանուածներ։ Գնացքում եղող ռուսներին ու վրացիներին ձերբ չուին։ Ուրտախաւած գնացքից Թուրքերը տարին 1000 հրացան, մեծ քանակութեամբ փամփուչտ։ Գերի առնուեցին 5–600 հայեր։ Ցաջորդ օրը, փետր. 3-ին հազարաւոր գինուած Թուրքեր Նորաչէնում չրկապատեցին Արագածեան կայարանից եկող № 25 մարքանար գնացքը, թալանեցին ամբողջը, կողոպտեցին կայարանի պետի գրասենեակն ու ճանապարհի վերանչնչին և մօրթուսեցին գնացքում ու կայարանում եղող բոլոր հայերին։

Փետր. 7-ին հաղորդակցութեան պետ Վէբլիովը հետագրում է Թիֆլիս, որ ինքը Շահախէի է եղել և վերադարձել է մեծ դժուարութեամբ՝ գինուորական գնացքի հետ։ Ճանապարհի վրա հետագիրը չի գործում, կամուրջները քանդած են, գիծը բռնած է քրդերով ու Թուրքերով, Ուլուխանլուում բոլոր տներն ու չինութիւնները այրուած են։

Նոյն մոայլ տեղեկութիւնները և Ալէքսանդրապոլից, փետր. 4-ին. «Ջուլֆա—երեւան դծի բոլոր գնացքներն անխտիր ենթարկուած են թալանի, հայ ճանապարհորդներին սպանում կամ մորթում են։ Թուրքերը չատ լաւ գինուած, կազմ ու պատրաստ են։ Ալէքսանդրապոլից երեւան, Նախիջեւան կամ թէ այն կողմից դէպի Ալէքսանդրապոլ ո՛չ մի գնացք չեն թողնում։ Ցկայ ո՛չ մի գինուորական ոյժ, իսկ խումբանի սանձարձակութիւնը բանի գնում մեծ չափերի է հասնում։ Քաղաքում ժողովուրդը խիստ զրգուած, յուզուած է այս բոլորի դէմ. անասելի իրարանցում է տիրում հէնց կայարանում։ Եկել են և գալիս են բաժմաթիւ գինուորականներ, որոնք անցնելու են Նախիջեւան, Երեւան, բայց ճանապարհ չլինելու պատճառով մնում են կայարանում»։

Փետր. 15-ին Ալէքսանդրապոլի մօտի Մոլլա—Մուսա գիւղի բնակիչները յարձակուեցին իրենց մօտ եկող պատգամաւորութեան վրա, սպանեցին գինուորական խորհրդի ներկայացուցիչ՝ համալրելի հասարակական գործիչ Աւերիէզեանին (ազգ.—ղեմ.) և ուրիշ վեց հոգու ու վիրաւորեցին վեց հոգի։ Այս դէպքը ահագին յուզում առաջ բերեց. Մոլլա—Մուսա գիւղը ենթարկուեց

Քնդանոթագնդության, կայարանում գտնւող 60 թուրքերը տաբեցին քաղաքից դուրս ու կոտորեցին, թրքական քաղը պաշարեց գրգռւած ամբոխի կողմից և փրկեց միայն Դաշնակցականների ջանքերով:

Փետր. 19–ին Երևանի նահանգային կոմիտաը Ս. Թորոսեանը ուղեղ հեռագրաքիով տեղեկագրում է Թիֆլիս. «Պայտնապաչս ինձ հաղորդել են հետեւեալը. փետր. 16–ին քրդերը Սուրմալուի պատուի խալայլիների և տեղական թուրքերի հետ յարձակեցին Ղամարլուի վրա, որտեղ կանգնած են հայկական զօրամասեր: Փետր. 17–ի առաւօտեան այնտեղ տեղի ունեցաւ ընդհարում: Ագռեցիկ թուրքերից կազմակերպեցի հաշտարար պատւիրակութիւն: Նրանք մեկնեցին Ղամարլու, բայց 17–ի գիշերը գաւառամասի կոմիսարը զեկուցեց, որ թուրքերի և հայ գիւղերների միջև տեղի է ունենում հրացանաձգութիւն. երկու կողմից էլ շատ զոհեր կան: Նոյն գիշերը Դաւալուից ստացւել են հեռագիրներ, որոնք յայտնում են, որ Ռեւազլու գիւղը չրջապատւած է թուրքերով... Պատգամաւորները տեղ չհասան, որովհետև Ազհամզալուի մօտ գինւած թուրքերը կոտել էին ճանապարհը և թոյլ չէին տալ առաջ գնալ: Ազհամզալուի մօտ կանգ էին առել նաև զօրամասեր, որոնք առաջ էին չարժւում չտաքի հրամանով: Երեկ երեւանից Ղամարլուի ուղղութիւամբ մեկնեցին զօրամասեր: Ազհամզալուի մօտ նրանց կանգնեցրել էին իսմուղուց ջիչ հեռու խրամատներ մուած թուրքերը: Այդտեղ զօրամասերը բռնեցին կուի: Թուրքերը Ուլուխանլուից օգնութիւն ստացան: Զօրամասը չարժւեց առաջ և փախցրեց նրանց ու ստիպւած եղաւ իր գործողութիւնները ուղղել Ուլուխանլուի ուղղ:

Մահմետական չարժումները ստացել էին տարբերային բնոյթ. ամէն տեղ կուի էր. յարձակւում էին թուրքերն ու քրդերը. պաշտպանւում՝ հայ զօրամասերն ու ինքնապաշտպանութեան խմբերը: Երկաթուղին հայերի համար կտրւած էր. գնացքից հանում էին հայ ճամբորդներին և ամենքի աչքի առջև մորթում: Դաւալուն կտրւել էր Երեւանից. յուն. 20–ին, մի ճակատամարտում, այնտեղ սպանւել էր Ռոստովը, և հարիւրհարիւր ու գիւղի բնակչութիւնը պաշարւել էին: Այլ Ղըզըլը նոյնպէս չրջապատւած էր թշնամիներով, և Մարտիրոսի հարիւրեակը կտրւել էր կենդրոնից: Շաբուր—Նախիջևանի ամբողջ գաւառում կռիւներ էին տեղի ունենում թուրքերի և հայերի միջեւ: Փակւեց նոյնիսկ Ելենովկա—Նոր–Բայազէտ ճանապարհը, ուր հազիւ 6–7 թուրք գիւղ կար, և Շուլու գնդի մասերը, Հալի–Մուխան գիւղի մօտ ենթարկւեցին յարձակման զաբանամուտ թուրքերի կողմից, որոնք սպանեցին 70 հայ գինւորներ ու մամանաւոր ճամբորդներ: Սուրմալուի խճուղին կտրւած էր, և կապը Երեւանի հետ պահւում էր հին ճանապարհով, եվ էլիլիարի վրայով: Գնացքները յարձակման էին ենթարկւում: Եւ Սարդարապատ—Ալագեոզի չրջանում, ապրանքատար մի գնացքի պաշտպանութեան ժամանակ, հերոսական մահով մեռաւ սպայ Շաւարչեանը մի խումբ գինւորների հետ:

Խռովութիւնները նահանգից աստիճանաբար մօտենում էին և քաղաքին. Ջանգիբասարը, 7–10 կիլոմետր հեռու Երեւանից, գրգռումի և ըմբոստութիւնների, աւազակային յարձակումների հնոց էր: Ուլուխանլու կայարանում հայերին դուրս էին բերում վագոններից ու գնդակահարում: Այս ամենը բարձրացնում էր և քաղաքի մահմետական խուժանի տրամադրու-

Քիւնը: Եւ ահա, փետր· 20–ին, երեւանն ևս դարձաւ քաոտերավայր յուզումնալից դէպքերէ: Ժամը 3–ին, առանց մի պատճառի, սկսաւ տաք հրացանաձգութիւն հայերի և Թուրքերի մէջև, որ տեւեց մինչեւ երեկոյեան ժամը 7–ը և յաջորդ օր առաւօտեան էլ: Միայն երկու կողմերի ներկայացուցիչների պաղատելութեան և Աբամի ու Դրօի ջանքերի շնորհիւ կարելի եղաւ փրկել քաղաքը անդարմանելի աչէտից· փետր· 21–ին նահանգի օրգքերի հրամանատար Փերուժանի նախագահութեամբ գումարուեց երկու ազգի ներկայացուցիչներից և քաղաքի ու զօրամասերի պատգամաւորներից մի ժողով, որը միաձայնութեամբ որոշեց քաղաքը յայտարարել պատերազմական գրութեան մէջ, կազմել ռազմա–յեղափոխական դատարան քաղաքացիների և զինուորների համար առանձին–առանձին, բանալ հանապարհները՝ ապահովելու համար զօրամասերի մեկնումը ռազմանակատ և այլն: Նեսաի վերլին, Մահմետ· Ազգ· Խորհուրդը պաչտօնապէս յայտարարեց, որ ինքը անկարող է զսպել Թուրքերին նահանգի մի քանի մասերում և խնդրում է հայ զինուորական մասերի ալակցութիւնը: Վերջից, զինուորական մասեր փոխադրելիս, հետները ուղարկել մահմետական պատւիրակներ՝ համոզելու համար Թուրքերին, որ բանան հանապարհները, և միայն չենթարկելու դէպքում գործադրել զէնքի ոյժ:

Այս առթիւ, հայ և Թուրք ներկայացուցիչները միասին, հեռագրեցին Անդրկ· Կոմխարհասին, Քէ —

Երեւանի նահանգի զէպքերի համար հայ և մահմետական ազգային խորհուրդներն ու պատասխանատու գործիչները խորհրդակցութիւն գումարեցին և միաձայնութեամբ որոշեցին ձեռք առնել ամէն միջոց՝ վերջացնելու համար անկարգութիւնները: Խորհրդակցութեան մասնակցում էին Աբամը, նահանգային կոմիսար Սահակ Թորոսեանը, նահանգային գործադիր կոմիտէի նախագահը, Երեւանի քաղաքագլուխ Թ· Թորեանը, նահանգային սխոնդ կազիւբը, Մերքա Հիւսէին Զադէն, Սէյիդ Քեազումովը, Մերքա Ալաքէր Աբունդ զադէն, Երեւանի մահմ· ազգ· ժողովի անդամներ Աղաբաբէկովը, Միր Սադրկովը, Ֆիգուլարկովը: Կոմիսերը համաձայնեցին՝ Թուրքերը՝ բանալ հանապարհները, Երեւան—Ջուլֆա երկաթուղին, իսկ հայերը խոստացան՝ վերջ տալ զօրամասերի գործողութիւններին:

Քաղաքի համաձայնութիւնը, սակայն, ո՛չ մի նշանակութիւն չունէր դաւառի համար: Այնտեղ դէպքերը ընթանում էին իրենց ճանապարհով· Թուրքերի սանձարձակութիւնները օր օրի վրա աասականում էին: Անհրաժեշտ էր ձեռք առնել վճռական միջոցներ: Աբամը, զօր· Սիլիկեանը, զօր· Փերուժեանը և Դրօն խորհրդակցութիւն արին և որոշեցին, օրինակ տալու համար, պատժել Ուլուխանլուն և բանալ երկաթուղային հաղորդակցութիւնը: Խորհրդակցութեան միջոցին լուր առացւեց, որ Կողբը պաշարած է, Դաշբունեի վիճակը չատ ծանր է, և Իպգիրի Ազգ· Խորհուրդը օգնութիւն է խնդրում:

Յաջորդ օր, փետրար 22–ի առաւօտեան, 6րդ և պարտիզանական գնդերից մի–մի գումարտակ և 2 Քեդանօթ կլիչի մարտկոցից լարժեցին դէպի Ուլուխանլու և դիրքեր բռնեցին գիւղի մօտ: Աբամի առաջարկու–

Քեամբ, գործողութեան դիմելուց առաջ՝ փաստաբան Գ. Ենգիբարեանից ու Երեւանի յայտնի վաճառական Հաճի Ռեհայից բազկացած մի պատւիրակութիւն ուղարկուեց՝ մի անգամ ևս համոզելու համար ուլուխանուլեցիներին, որ խաղաղութեամբ բանան ճանապարհը: Չնայած Քուրքերը ահագին բազմութեամբ ու զրօսկներով գրաւել էին դիրքերը և Քիւրքական ազգային քայլերգն էին երգում: Նրանք մերժեցին ընդունել պատւիրակութիւնը:

Այն ժամանակ Դրօն տուեց յարձակման հրաման: Որտեղից Քնգանօթները: Սկսուեց տաք կռիւ: Նոյն ժամանակ արիւնահեղ կռիւներ էին տեղի ունենում Սուրմալուում, Ղամարլուում, Իւվայի չրջանում:

Մինչև երեկոյեան ժամը 5–ը Քուրքերը ցոյց տուին կատաղի դիմադրութիւն: Ժամը 5–ին հայկական զօրամասերը դիմեցին ընդհանուր գրոհի: Հակառակորդը չդիմացաւ ու ջարդուած փախաւ, ցիր ու ցան եղաւ: Ուլուխանցու գիւղը մտանեց գրաւի: Ուլուխանուլեցիները յայտնեցին հպատակութիւն և այնուհետեւ մինչև վերջ մնացին հաւատարիմ Հայաստանի պետականութեան ու ո՛չ մի զրկանքի չենթարկուեցին:

Ուլուխանուլի դէպքի մասին Դրօն տուեց հետեւեալ հեռագիրը.

«Զօրամասը գնում էր Ղամարլու միանալու համար Ղամարլուի զօրամասին և բանալու Դաւալուում փակած Գրղ գնդի մէկ դումբարակի ճանապարհը: Մեկ օրուայ հրացանաձգութիւնից յետոյ Ազհամզալուում, ուղարկուած հայ–Քրքական պատւիրակութիւնը, որ Քուրքերը չեմ քաչէն ու չխանդարեն զօրքերին առաջ անցնելու, արդիւնք չուեց: Քուրքերը օգնութեան հասած քրդերի հետ դիմեցին յարձակման՝ կամենալով ջարդել մեր զօրամասը և գրաւել հրետանին: Քուրքերը ունէին ձեռքի ռումբեր: Այն ժամանակ մենք որոշեցինք վերջ տալ այդ ամէնին և օդնութիւն հասցրինք գնդ. Դուլխանեանին՝ հրամայելով յարձակուել ու գրաւել Ուլուխանուլուն, որ և կատարուեց: Ուլուխանուլն գրաւուած է, չրջանը մաքրուած: Մեր զոհերն են՝ 9 սպանուած, 32 վիրաւոր, որոնցից երկուսը՝ սպայ: Քուրք պատգամաւորները մեզ ազդում են իւրայիններին, որի համար կան փաստեր, և խնդրում են հաշտութիւն: Մեր գրած պայմաններն են. բանալ ճանապարհները, չխոչել հետագային քնկերը և հրացանի չքոնել գնացքները: 22 փետր.»:

Ուլուխանուլի գրաւումից յետոյ՝ բացուեց երկաթուղային հաղորդակցութիւնը Ալեքսանդրապոլի հետ, բացուեց և Ղամարլուի ճանապարհը: Ապա գալուեցին Կողթի, Սուրմալուի, Ղամարլուի Քուրքերը, պատւիրեցին Ալի Ղըզըլի բնակիչները, պատժուեցին Ալագեազի և Նոր–Բայազէտի Քուրքերը:

Առանձնապէս ուժեղ կռիւներ տեղի ունեցան Դաւալուի չրջանում, ուր, Խոսրովի մահից յետոյ, ձիաւոր հարիւրապետի հրամանատար էր նշանակուել սպայ Կուռօ Թարխանեանը, իսկ Դաւալուի զօրամասի — 1 գումարտակ, 1 հարիւրեակ — պետ՝ գնդ. Տէր–Սարգսեանը: Դաւալուն չրջապատուած էր Քչնամիներով և բոլորովին կտրուած էր Երեւանից: Շաքաթներ չարունակ պաշտպանուում էր 3000–ից աւելի Քլայլի քրդերից և Շարուրի, Վեդիբասարի, Արալըխի ու Բաչքենդի Քուրքերից, որոնք կատաղի յարձակումներով՝ աչքատում էին գրաւել Դաւալուն և զերի առնել հերոսական դիմադրութիւն ցոյց տուղ հայերին:

Այդ դէպքերի ընթացքին էր, որ Վարսկաստանից նահանջող Կուբանեան 2րդ դիվիզիան — 2 գնացքով, ձիաւորներով ու Քնդանօքներով — կուտ եկել–հասել էր Սադարակ, ուր և չրջապատուել էր Թուրքերի և քրդերի կողմից, որոնք մի վերջնագրով պահանջ էին ներկայացրել, որ կազակները յանձնեն իրենց գէնքերն ու ձիերը և այնպէս հեռանան: Կազակները մերժել էին և կուռւմ էին նրանց դէմ:

Քնդանօքների ու գնդացիրների ձայնը առնելով՝ Կուռօ Թարխանեանը դուրս եկաւ հետախուզութեան և փողի հնչիւններով ու համապարկներով նչաններ էր անում: Երեկոյեան դէմ, Քշտամու չղնաի ճեղքելով, Արարատ կայարանը հասաւ մի զրահապատ ինքնաշարժ՝ մի սպայով և գնդացիրներով ու ռումբերով զինուած 6 կազակներով: Ռուս զօրքերի հրամանատարը մի նամակով առաքելում էր յայտրդ օրը միասին յարձակում գործել Քշտամու վրա:

Միւս օր առաւօտեան ժամը 7–ին, գնդ. Տէր–Սարգսեանի հրամանով, 2 վաշտ ու ձիաւոր հարիւրեակը յարձակեցին դէպի Սադարակ: Սկսուեց կռտուղի կռիւ: Քրդերն ու Թուրքերը պաշտպանում էին ճակատից ու թիկունքից, բայց երկու կրակի մէջ առնուած՝ չդիմացան ու փախան՝ մի մասը Դարալագեազի ուղղութեամբ, միւսը՝ Արաքսի միւս ափը: Կէսօրւայ մօտ հայ և ռուս զօրամասերը փեցցէդ–ներով միացան իրար: Գրոհի ժամանակ երկու ոտքից վիրաւորուեց հարիւրեակի հրամանատար Թարխանեանը: Դաւալուի ժողովուրդը խանդավառ ընդունելութիւն արաւ կազակներին, որոնք հայերին տուին մի քանի վագոն հաց, գաբի, ռազմամթերք:

Յաջորդ օր, Դաւալուի բնակչութիւնը և հայկական զօրամասերը կազակների հետ միասին մեկնեցին դէպի Երևան:

Ղամարլուի և Դաւալուի չրջանի դէպքերի առթիւ Երեւանից Բիֆլիս ուղարկուեցին բաղմաթիւ հեռագրերներ. մահմետականները մեղադրում էին հայերին, հայերը՝ մահմետականներին: Հայերի կողմից հետևեալ ձևով էր ներկայացւում կացութիւնը:

Փետր. 21–ին Երեւանի զօրքերի հրամանատար գնդ. Փերումեանը հեռագրից ներքին գործերի նախարարին. «Մահմետականների անընդհատ յարձակումները գիւղական, մարզատար, բնակիչ և սանիտարական գնացքների վրա չեն դադարում՝ չնայած ձևը առնած միջոցների: Ււազակային յարձակումները մեծ չափերով տեղի են ունենում Երկաթուղու, խճուղու, հեռագրային գծերի վրա, կայարանները կողոպտուել են, կամուրջները՝ քանդուել, որի պատճառով կորած ենք ամբողջ աչխարհից. առանձնապէս ահաբեկուած է ռուս ազգաբնակութիւնը, որը թողնելով ամէն բան՝ հեռանում է կովկասի սահմաններից: Թուրքերը յարձակուել են Ղամարլուի վրա, ուղարկուեց պատգամաւորութիւն, որը ենթարկուելով հրացանաձգութեան՝ յետ դարձաւ: Թուրքերը իրենց ուժերը կենտրոնացրել են Ուլուխանլու և Ախմադալու կայարաններում, ուր և գինաթափ են անում գիւղական գնացքները: Երեւանի նահանգային կոմիսարիատը ստիպուած էր գինուած ուժերով վերականգնել կարգը նաև հեռագրային և երկաթուղային գծերի վրա: 48 ժամ ժամանակ է տրուած կապ հաստատելու համար Դաւալուի կայարանի հետ, որտեղ գտնւում է մի զօրամաս. այս պահանջը չկատարելու

դէպքում զօրք կուղարկեմ։ Մի քանի օրւայ կռիւներում կորցրել ենք երկու սպայ, 9 զինուոր։ վիրաւորւած են 2 սպայ և 37 զինուոր»։

Փետր. 27–ին երեանից Զինվ.Մինիստրի նախագահ թէ.Ճ.Մելիքթանը ուղղի հեռագրաթելով հաղորդում էր Թիֆլիս։ Վագուէիները նահանջում յուզումնալից է։ Դասալուից 70 գինուորներ ճանապարհներին Համարլու։ Ճանապարհին հրացանի բռնւեցին Թուրքերի կողմից։ 10 հոգի վերադարձան վիրաւորւած։ մնացած 60–ը կորել են յայտնի չէ Թէ ուր։ ենթադրւում է, որ սպանւած են։ Այդ բանից Համարլուի մեր զօրամասերը սաստափելի էլեկտրականացած են և պահանջում են անյապաղ գնալ մաքրել Համարլուից–Դասալու ճանապարհը։ Այսօր այնտեղ ուղարկւեց հայ–Քրջական մի պատգամաւորութիւն, բայց Օվչարի դիւղում Թուրքերը բռնել են պատգամաւորներին, գինաթափել նրանց պահակներին և ամենքին յետ գարձրել։ Դասալուն և Ռևհանլուն չրջապատւած են Թուրքերով, և խիստ հրացանաձգութիւն է տեղի ունենում... Այս առաւօտ եկաւ Թիֆլիսի պատգամաւորութիւնը և վաղը մեկնում է Համարլու ու Դասալու զրահապատ գնացքով, իսկ այսօր ձեռնկր Համարլու մեկնեց կոմիսար Դրօն դինուորներին հանդատացնելու համար, որովհետեւ նրանք վերջնագիր են ներկայացրել, որ ևթէ զօրամասերին Թոյլ չտուի յարձակման դիմելու, դինուորները ինքնադատաստանի կենթարկեն հրամանատար գլխաւոր Թարվէրդևանին։ Դրութիւնը չատ լուրջ էր։

Թիֆլիսում երեանից ստացող լուրերը առալ էին բերում ահագին իրարանցում։ Անդրկ. կոմիսարիատը ուղարկել էր մի պատւիրակութիւն՝ տեղն ու տեղը քննելու հայ–Քուրքական ընդհարումների պատճառը։ Պատւիրակութեան անդամներ են. Կարճիկեանի և Զաֆարովի բերած զեկուցումները բուռն վիճաբանութիւնների նիւթ գարձան Սէյմի փետր. 19—20–ի նիստերում։ Մահմետական պատգամաւորները մեղադրում էին հայերին, Թէ նրանք մաքրում են երեանի նահանգը մահմետական ազգաբնակութիւնից՝ հայկական հող պատրաստելու նպատակով։ Հայերն, ընդհակառակը, ընդհարումների պատճառ էին ցոյց տալիս Քուրքերին, որոնք արգելք էին յարուցանում ռազմանկատ մեկնող զօրամասերի առջև։ Այս առՔիւ էր, որ Ե. կարճիկեանը Սէյմում արտասանեց իր պատմական մէկ ճառը՝ հանդամանօրէն ներկայացնելով հայ–Քրջական կռիւների էութիւնը։

«Երբ Անդրկ. կոմիսարիատը, ասաց նա, յուրեր ստացաւ, որ երեանի նահանգի ու Բորչալուի գաւառի որոշ մասերում կատարւում են դէպքեր, որոնք ոչ միայն խանգարում են նահանգի ու գաւառի խաղաղ կեանքը, այլ և բոլորովին անդամալուծում են երկաթուղային հաղորդակցութիւնը. երբ յուր հասաւ, որ Ուլուխանլու—Ջուլֆա երկաթուղամասի վրա մի չարք անկարգութիւններ ու քրդական յարձակումներ կանգնեցրել են հաղորդակցութիւնը, երբ յայտնի գարձաւ, որ այնտեղ դնացքների արշեւատական խորտակումներ են արւում, քանանում են գնդ փոխադրող ամբողջ գնացքներ. երբ տեղեկութիւն նկաւ, որ գնացքներից մարդիկ են դուրս հանւում ու սպանւում. միւս կողմից, երբ յուր ստացւեց, որ երկաթուղագծի վրա այս ու այն կողմ փոխադրող հայ զօրամասերը գնդակահարում են խաղաղ բնակիչներին, — Անդրկ. կոմիսարիատի համար պարզ գարձաւ, որ կացութիւնը խիստ սպառնական է և անհրաժեշտ է ձեռք առնել անմիջական միջոցներ։ Եւ ահա ուղարկւեց յատուկ պատւիրակութիւն, որի վրա գրւեց պարտականութիւն քանալու Սանդար—Սագախլու երկաթուղին, որ փակել էին Թուրքերը, և խաղաղացնել երեանի նահանգը։

Ահդ՝ ինչ է տեսնում, ինչ է անում պատերազմը։

Սահեզարում պատերազմների ներկայանում են գիտերի պատերազմները, որոնք ամբարան յայտնեցին, թե աւելի համբերել այլևս չեն կարող, քէ այն, ինչ որ կատարւում է Բորչալուի գաւառում, այլևս անտանելի է։ Ջարդերը, կողոպուտ ու թալանը, սպանութիւնները, քաչաչումբը, հրկիզումները տեղական մահմեդական ազգաբնակութեան հասցրել են այնպիսի մի վիճակի, որ նրանք էլ չեն կարող համբերել։ Եւ պահանջեցին Ադդրկ. Համբարեան պատերազմութիւնից ձեռք առնել ամենաթիւռ ու չտեսած մէջոցները. պահանջում էին հաստատել ժողովրդական ոգեշունչ-յեղափոխական դատաբան, որ նա դիմէ կորուկ միջոցների և նոյնիսկ մահապատիժ։

Ուլուխանլուում պատերազմեան առնէն պարզուում է այսպիսի պատկեր. վերջինիս ներկայացնում է պատերազմական մի բանակ։ Նախ՝ պատերազմեան դիմաւորից այդ կայարանի գինուած պահակախումբը՝ մի քանի հարիւր գինուած գիւղացիներ, մի քանի հարիւր հոգի ձիաւորներ, ամենքը գինուած։ Այս մեծ հանգուցային կայարանը բոլորովին ոչրած է, այնպէս որ հետագրաքիլը վերականգնելու նպատակով էշմիածին կայարանից մեզ հետ առած ծառայողներին տեղ չկար տեղաւորելու։ Մենք իմացանք, որ մի քանի օր առաջ այնտեղից հեռացել էին բոլոր ծառայողները, որովհետև կայարանի վրա յարձակել էին ջրգերը, այրել, քար ու քանդ արել ու կողոպտել ամէն ինչ, կրակի մատնել կայարանի բոլոր չէնքերը։ Մահմեդականների ներկայացուցիչները յայտնեցին, որ նրանք թոյլ չեն տայ, որ պատերազմից մնացած պետական ստացուածքը բաժին հասնի բացառապէս հայերին կամ վրացիներին։ Նրանք պահանջում էին, որ այդ ստացուածքը հաւասարապէս բաժանուի Անդրկովկասի բոլոր ժողովուրդների միջեւ։ Մասնաւորապէս, պահանջում էին, որ մահմեդականներին տրուի այն քանակութեամբ գինք, ինչ քանակութիւն որ համապատասխան է իրենց ազգաբնակութեան թիւին։ Ցետոյ, մահմեդականները յայտնեցին, որ իրենք թոյլ չեն տայ երկաթուղային հաղորդակցութեան վերականգնումը մինչեւ որ իրենց հիմնական պահանջը չգոհացւի։ Թէ հայերը կամենում են խաղաղութեամբ կարգադրել այս բանումը, նրանք պարտաւոր են անյապաղ լուծել իրենց գօրագնդերը և դէնքերը յանձնել Քուրքերին, այլապէս իրենք թոյլ չեն տայ կազդի վերականգնումը...

Պատերազմիչները ընդունում է նաև ջրգերի ներկայացուցիչներին։ Նրանք յայտնում են, թէ, ճիշտ է, իրենք թալանում ու քանդում են և կը շարունակեն քանդել ու թոյլ չեն տայ, որ երկաթուղային հաղորդակցութիւնը վերականգնի, որովհետև քիւրդ բնակչութիւնը բոլորովին մատնուած է անուշադրութեան և դատապարտուած է սովի։ Մինչդ ու նպատակ ստանում են մահմեդականներն ու հայերը, բայց ոչ ջրգերը։ Եւ, հետեւաբար, քանի որ երկաթուղին գոյութիւն ունի միայն մահմեդականների ու հայերի համար, իրենց ուրիշ ոչինչ չի մնում, բացի թալանից և ճանապարհին հանդիպած ամէն բան փչացնելուց։

Ապա պատերազմութիւնը հասնում է Երևան, ուր իրար հետ կուռղ հայերն ու Քուրքերը նոր էին հաշտուել, իրրև նախապայման ընդունելով հայ-մահմեդական խառն զօրագնդերի կազմութիւնը։ Հաշտական կազմակերպութեանց ներկայացուցիչները յայտնեցին, որ ամէն բան, որ կատարւում է այժմ Անդրկովկասում, յանգում է որոշ մտքի։ Նախ՝ բոլոր այն երկաթուղագծերի վրա, ուր ապրում են մահմեդականներ, համարեա միաժամանակ սեռնում ենք որոշ բնոյթ կրող յուզումներ, որոնք վերջանում են երկաթուղային հաղորդակցութեան խափանումով։ Մասնակցում են

Սանդար—Սադախյու երկաթուղագիծը: Ուլուխանյու գիծը: Ճնշոյ, նրանք յայտնեցին, որ բոլոր խոովութիւնները տեղի են ունենում երկաթուղու մօտ երկաթուղային հաղորդակցութեան չուրջը... Նրանք կարծում էին, որ այս ամենը պատահական բան չէ, որ կան ինչ որ մութ տարրեր, որոնք առաջ են բերում այդ ամենը և գործում որոշ նպատակով, որպէսզի խանգարեն հաղորդակցութեան միլիցներըս, արգելք հանդիսանան ռազմամսակատի պաշտպանութեան, և որ այս բանում թէ՛ մահմեդական ու հայ և թէ ամբողջ Անդրկովկասի ազգաբնակութիւնը գործիք է այդ մութ ուժերի ձեռքին... Երևանի նահանգի արևելեան մասը, ուր ազգաբնակութիւնը խառն է, արդէն համարեա անծանօթ մի երկիր է. յայտի չէ, թէ ինչ է կատարւում այնտեղ. ոչ ոք ոչ մի լուր չի ստանում և այնտեղ մուտք գործելը բոլորովին անհնար է:

Միևս կողմից հայ հասարակութեան վիճակը չափազանց ծանր էր այնտեղ: Նախ, ինչպէս ձեզ յայտնի է, այնտեղ կազմակերպւում են հայկական զօրամասեր, որոնք պէտք է ուղարկէին ռազմաճակատ: Այդ զօրամասերը մի քանի շաբաթ ապասեցին ուղարկուելու օրին: Որոշ մասեր առաջ չարժուեցին, երկաթուղագծի վրա, գիծն ու պահնտներըը պահպանելու համար: Եւ ահա ստեղծուեց այնպիսի դրութիւն, որ անհնար էր ոչ ռազմաճակատ ուղարկել, ոչ էլ Շահթախթում, Դաւալուում և, կարծեմ, Նախիջևանում կանգնած զօրամասերին օգնութիւն հասցնել: Նրանք կտրւեցին էրսրից և ո՛չ մի հնար չկար նրանց միջև կապ հաստատելու: Հայ զօրամասերը չէին կարող հանգուրժել նման գրութիւն, չէին կարող հանգուրժել, որ շաբաթներով մնան նստած ու չկարողանան մնկնել ռազմաճակատ: Ինձ յայտնեցին հայ գործիչները, որ նրանք թախեցին ամէն ճիգ, որպէսզի գալած պահեն այդ զօրամասերը. նրանք գիտէ են, որ մուտ ուժերը դրժում են նրանց յարձակելու մահմեդական բնակչութեան վրա: Ես տեսել եմ հայ զօրամասերը թէ այստեղ և թէ ուրիշ տեղեր և պէտք է ասեմ, որ երեւոյթում նրանք բաւական կարգապահ են, բայց նրանց ա՛յս վիճակում պահելը կը լինի գրեթէ անհնար...

Մեր գլխաւոր նպատակն էր երկաթուղային հաղորդակցութեան վերականգնումը Ուլուխանյու և Ջուլֆա կայարանների միջև: Մենք այդ չկարողացանք կատարել, որովհետև չկարողացանք անցնել այնտեղ: Մեր առացած տեղեկութիւններով կամուրջներն ու գիծը այնտեղ բոլորովին փչացած են և եթէ մենք ուզենայինք գնալ, պէտք է մեզ հետ առնէինք չնչածանիւթերի մի ամբողջ գնացք, որպէսզի վերականգնէինք ճանապարհը: Մեզ ասում էին, թէ մեզ կը ձերբակալեն և թոյլ չեն տայ առաջ անցնելու: Պատերազմները վերաբերեալ առանց որևէ բան անելու:

Աւելի մոայլ պատկեր դժուար էր գտնել: Երկու ժողովուրդները՝ կռկորդ-կռկորդի՝ յօշոտում են միմեանց, իսկ երկրի կենտրոնական իշխանութիւնը դատարկ խօսքերից զատ ոչինչ չունի նրանց ասելիք: Այս պատճառներում մեծ պատասխանատուութիւն ու կամք պէտք էր տեղական գործիչներին՝ «մութ ուժերի» ազդեցին չենթարկուելու համար: Եւ դրա վրա էր հրատրում կարճրխկեանն իր գեկուցման վերջում՝ պատասխանելով միաժամանակ թուրք պատգամաւորների աղմկարար ու գրգռիչ ճառներին. «Ես մտնում եմ հայ ու մահմեդական տեղական գործիչների դրութեան մէջ. այնտեղ հրեղէն արշէն սկսած է, իսկ մենք չենք տալիս ոչ մի օգնութիւն և ոչ մի միջոց հանգցնելու համար այդ հրեղէնը: Բայց, քաղաքացի պատգամաւորներ Անդրկովկասեան Սէյմի, մի՛ խանգարէք նրանց, քո՛յլ տուէք, որ նրանք իրենք հանգցնեն հրեղէնը — մենք նրանց օգնել չենք կարող այժմ: Մի՛ հանէք փոթորիկ հրեղէնի ժամանակ: Մենք չպէտք է կորցնենք մեր պատրիս-

նութիւնը: Քաղաքական դիկտատոր մարդիկը, այսպէսի ահաւոր վարկեանին, երբ ամենքը կանգնած ենք անդունդի եզերքին, իրաւունք չունի կորցնելու հաւասարակշռութիւնը, իրաւունք չունի զգայելու միմեանց դէմ ամբաստանագրեր պատրաստելով: Մեզանից ամէն մէկը պատասխանատու է ո՛չ միայն իր համար, այլ և հայերի, մահմեդականների ու վրացիների — մենք պատասխանատու ենք ամբողջ ազգաբնակութեան համար: Մենք չպէ՛տք է դուրս գանք, իբրև միմեանց մեղադրողներ. մենք հանդէս պէտք է գանք, որպէս գաղափարական քաղաքական մի մարմին, որը այս յուզումնալից վարկեանին կոչուած է փրկելու երկիրը: Ես կոչ եմ անում պաղարիւնութեան ու սեփական պարտքի գիտակցութեան:

Ի՞նչ ազեր խօսքեր, որոնք, ահաւասիկ, հնչում էին անապատի մէջ:

Գագանական տարերքը խցել էր ամենքի ականջները:

Ուլուխանլուի և Ղամարլուի դէպքերի վրա, Երևան մեկնեց մի ուրիշ պատւիրակութիւն, այս անգամ Սէյմի կողմից, որի նախագահ Գէորգաձէն Սէյմի մարտ 7-ի նիստում ներկայացրեց մանրամասն զեկուցում, որի մէջ, ի միջի այլոց, ասում էր. «Երեւակայեցէք երկաթուղին, որի վրա մի ժամանակ եռում էր կեանքը, սուլում էին շոգեշարժները, գործում էին արհեստանոցները, տրւում էին հեռագրեր, ժողովուրդը օգտւում էր քաղաքակրթութեան պտուղներից: Իսկ այժմ այդ երկաթուղու վրա ոչինչ չէք գտնի. չկան կայարաններ, չկան չէնքեր, ամէն ինչ քայքայուած է, ամէն բան փչացած, կայարաններում չէք տեսնի ո՛չ մի կենդանի էակ, ո՛չ մի ծառայող — ամէն ոք հեռացել–կորել է, ոչինչ չի մնացել: Այս վիճակում են գտնւում Ուլուխանլու, Աբարան և ուրիշ կայարանները: Գաուբրախուեքեան ունեցած տեղեկութիւններով դէպի Զուլֆա տանող գծի վրա կանգուն է մնացել միայն Ղամարլու կայարանը, ուր կանգնած է հայկական մի հարիւրեակ: Այս վիճակում գտնւող երկաթուղու վրա, որև է շարժում, զօրամասերի որև է փոխադրութիւն — ինչ զօրամաս էլ ուղում է լինի՛ ռուս, թէ հայ—բոլորովին անհնար է: Ձիչա է, երկաթգծերը դեռ հանած չեն, փայտեղէն մասը դեռ իր տեղումն է, բայց կատարեալ անմարդաբնակ են և ճիգ է քաշւում, որ այդպէս էլ մնան: Եթէ այդ ճանապարհով անցնելու լինէք, ճանապարհ նրկու կողմը կր տեսնէք փորած դիրքերում նստած զրոհի կամ մահմեդականներ: Երբ մենք մտանում էինք մի աւերւած ու քար ու քանդ արած կայարանի, կայարանում ու ուրիշ չէնքերում նկատեցինք ինչ որ դինւած մարդկանց: Մահմեդականների պատւիրակութիւնը իմաց վազոնից, մտցրեց այդ դինւած անձանց և հարցրեց. ի՞նչ կայ, ինչո՞ւ են նստած այտեղ: Ձինւած մարդիկ սկզբում հեռացան մի կողմ, ապա յետ եկան և բացատրեցին, որ իրենք զրոհ են և եկել են տանելու մնացած զէրանները ու իրերը: Եւ երբ ջիչ հետու տեսանք դինւած մի հրոսախումբ, պատւիրակութիւնը առիւծած էր դառնալ յետ, բայց այդ դինւած ամբոխը ապիտակ դրօշակը ձեռքին հասաւ ու յայտնեց, որ այդ կամուրջները այլեւ են ոչ իրենց՝ մահմեդականները, այլ զրոհերը:

Սակայն, «Պատւիրակութիւնը լսեց և այլ կարգի զանգատներ. Հայկական զօրամասերը ճակատ են դնում. ճակատում Քողնած է հայկական, բաժամիլիոն արծէք ունեցող գոյք. այդ գոյքը անփականելիութեան է կատմում Անդրկովկասում ապրող բոլոր ժողովուրդների — և՛ հայերի, և՛ մահմեդականների ու վրացիների, այդ պատճառով, հայ զօրամասերը, որոնք զրահուած են այդ գոյքը և յայտարարում են իրենց անփականելիութեան, չպէ՛տք է Թոյլատրւեն անցնելու ռազմաճակատ... Այն օրը, որ մեր պատւիրակութիւնը հասաւ Երևան, չտապով հայերից ու մահմեդականներից բաղկացած

մի ուրիշ պատերազմներ էր ուղարկած։ Մերձաւոր մի գիւղում հայերի և մահմետականների միջեւ ընդհարում էր սպասւում, և այդ պատերազմները որոշ ժամանակից յետոյ վերադարձաւ ու յայտնեց, որ մահմետականները գուբս են եկել պատերազմական առվի, խլել են նրանցից հրացանները և ուրիշ զէնքերը։ Այս ամենը կատարւեց մեր ներկայութեամբ, մեր պատերազմական աչքի առվի, և կարելի է ըսել չատ զէնքեր, երբ հայ գիւղացիները սպանել են թուրքերին և, ընդհակառակը, թուրքերը սպանել են հայերին։ Միևս կողմից տեղի են ունենում մասնաւոր ընդհարումներ ու սպանութիւններ։ Ահա այսպիսի հանգամանքներում, երբ ոչ միայն ազատ հաղորդակցութիւն չկայ երկաթուղիներով, այլ և փակւած է երթեւեկը գիւղերի միջև — ա՛յս դրութեան մէջ հայկական զօրքերի կոմիսար Դրօն յայտարարեց,որ բոլոր ռազմագիտական ճանապարհները փակւած են հայկական զօրամասերի առվի։ Նա վճռական ու յամառ կերպով պահանջում էր, որ իրեն ցոյց տրւի որև է ճանապարհ, թէկուզ չատ վատ ու անյարմար, թէկուզ ամենաանանցանելի մի ճանապարհ։ Այդ պահանջին նրան պատասխանուեց, որ ռազմագիտական բոլոր ճանապարհները փակւած են ռազմաճակատ գնացող հայ զօրամասերի առվի։ Մահմետականների ներկայացուցիչները չառարկեցին»։

«Երբ մի կողմից, գիւղերում, կանգնած են կանոնաւոր զնդեր ու զումարտակներ, իսկ միւս կողմից կանգնած են գինւած անկազմակերպ մահմետական զանգւածները, —ատեղծւում է այնպիսի չպեղած մթնոլորտ, որ ամենաանչնչան առիթն իսկ բաւական է, որպէսզի բռնկւի ազգային հրդեհը։ Եւ ահա այդ ազգային հրդեհը տեղի ունեցաւ փետր. 17—21-ին։ Եթէ դուք նայէք Ղամարլու մեծ գիւղի վրա,,որի բնակիչները բաղկացած են մահմետականներից ու հայերից, կը տեսնէք, որ այդ գիւղի մահմետական մասը չկայ, անհետացել է։ չէք գտնի նրան, գոյութիւն չունի, բնակիչած է։ իսկ հայկական մասը կանգուն է, չի վնասւել։ Եթէ առնէք մի ուրիշ գիւղ՝ Ազհամզալուն, այդ գիւղում էլ բնակիչ չկայ։ Հեռացել, քաշուել են, մի մասն էլ գուցէ, բնաջինած է։ Ուլուխանլուն, ասւելի մեծ ու հարուստ մի գիւղ, նոյնպէս գատարկած է։ Դաւալու գիւղից մահմետական բնակչութիւնը, տեսնելով յուսահատական վիճակը, հեռացել է յօժարակամ, յայտնի չէ Թէ ուր։ Այսպիսի դրութեան մէջ են հայերի ասելով 18, իսկ մահմետականների տեղեկութիւններով 25 գիւղեր։ Ամենացաւալին այն է, որ գիւղերի մաքրագործումը, այս, Եթէ կարելի է ասել, գիւղերի ջարդ ու փչուր առնելը կատարւել է մասնակցութեամբ հայկական կանոնաւոր զօրամասերի, որոնք այս հրդեհի ժամանակ օգնութեան են կանչած երեւանից և, փոխանակ օգնելու, իրենք էլ մասնակցել են այդ հրդեհին՝ գործի մէջ մտցնելով գնդացիրներ ու հրեւոանիներ։ Երեսն քաղաքի զէպքերը արձագանգ եղան Դաւալուի զէպքերի։ Երեւանում սկսւել է հրացանաձգութիւն ու կոտորած։ Հետևանքը՝ 36 մահմետական գէրեզման և 56՝ հայկական... Հայ ու մահմետական խոնուիները բոլորովին չարդանդ են և Եթէ չլինէին մի քանի հասարակական գործիչներ մահմետականների ու հայերի կողմից, երեւանում ահաւոր չարդ ու կոտորած սեղի կունենար։ Բայց, ինչպէս վկայեց պատերազմական գործերի հանձնաժողովի ներկայացուցիչների առվի երեւանում, չնորհի. Երօի, Արամ փաշայի և երեւանի պարետ Շահխաթունեի եռանդուն միջամտութեան, կոտորածը լայն ծաւալ չի ստացել։ Նրանք ամբողջ օր չորում էին քաղաքում, հանգարտեցնում թշնամի կողմերը և, վերջ ի վերջոյ, փակցին այդ զէրքաո զէպքերո։

Այս զեկուցումը մի ամբողջ փոթորիկ առաջ բերեց Սէյմում, յատկապէս, մահմետական պատգամաւորների կողմից։ Նրանք իրար յետեւից

բաթթանում էին ամբոխն և արտասանում ցասումով լի, կրքոտ ճառեր՝ ուղղված հայերի ու Դաշնակցության դէմ։ Ամբողջ պատասխանատուութիւնը, նրանց կարծիքով, ընկնում էր հայերի վրա, որոնք բոլի մէջոցներով ձգտում էին ստեղծել հայկական հոգեմաշ։ Հայկական զօրամասերը չեն ենթարկւում կենտրոնական իշխանութեան և փոխանակ ոգեմասկատ մեկնելու՝ կուտում են խաղաղ ազգաբնակութեան դէմ։ Երեւանի ղէպքերի հեղինակները Դրօն, գնդ. Փիրումեանն ու մի շարք ուրիշ հայ գիւնորականներն են գործիչներն են։ Անհիմն է այն ամբաստանութիւնը, թէ մահմետականները փակում են ճանապարհը հայ զօրամասերի առջեւ և այլն և այլն։

Ի վերջոյ, Սէյմը ընդունեց մի բանաձեւ, որի հիմնական միտքն այն էր, թէ անմիջապէս պէտք է ձեռք առնուեն վճռական միջոցներ, որպէսզի զօրամասերը կարողանան առանց արգելքի անցնել դէպի սահմանագլուխ։ Սակայն, ի՞նչ արժէք ունէր նման բանաձեւը, երբ Անդրկովկասի իշխանութիւնը զուրկ էր ամենաստրկական գործադիր միջոցներից։ Ուրիշ անգամներէ պէս, այս բանաձեւն էլ մնաց մեռած տառ, իսկ կեանքը գնաց իր հանդարտ։ Մահմետական չրջանները չարունակեցին յուզել և ըմբոստանալ՝ նպաստելով թիւրքական ոգեմական գործիքներին։ Հաշտարար պատւիրակութիւնները ոչ մի օգուտ չէին տալիս, բացի աւելորդ ծախք պատճառելուց։ Թիւրքերի մօտ ուղարկւած խառն պատւիրակութիւններից մէկի մէջ պատճառ երեանցի հասարակական գործիչ փաստաբան Լևոն Մուշեղեանը։

Դրութիւնը ծանրանում էր և նրանով, որ նահանգը ապրում էր արտակարգ պաշտաւորման տակ։ Քաղաքների և պահեստների առջև կանգնած երկար հաւուերը—ը յուզում էին ժողովրդին, խռովում նրա միտքը։ Մարդիկ դեռ սովոր չէին մեծ զրկանքների և պահանջում էին հաց, նաւթ, շաքար...

Մարտ 12—ին նահանգային կոմիսար Ս. Թորոսեանը հեռագրում էր Թիֆլիս. «Պաշտաւորման հարցը Երեւանի նահանգում ահաւոր բնոյթ է ստացել։ Երեւանում հացի բաշխումը հասցուած է անտանելի փոքր չափի։ Ո՛չ մի պաշար չկայ։ Նոր—Բայազէտ, Նախիջևան, Օրդուբաթ քաղաքները մնացել են առանց հացի, նաւթի, շաքարի և առաջին անհրաժեշտութեան այլ կարգի նիւթերի, իսկ Նախիջևանի և Նոր—Բայազէտի զաւառները դեռևս են տոմսի խռովութիւնների ու բռնութիւնների նախօրեակին»։

Եւ խռովութիւնների ու բռնութիւնները չուշացան։ Այստեղ ու այնտեղ սկսան կատարւել յարձակումներ պետական պահեստների և մասնաւոր խանութների ու հացի փուռերի վրա։ Դրութիւնը դառնում էր սպառնական։ Անհրաժեշտ էր ուժեղ և արագ գործող, վճռական ու միակամ իշխանութիւն։ Այդ իշխանութիւնը Աբաբատեան դաշտը ունենալ չկարող Աբամի։

Այս պահանջի գիտակցութեամբ, Երեւանի ազգաբնակութիւնն ու գիւնորականութիւնը, էրզրումի անկման լուրի տպաւորութեան տակ, մի բազմամարդ ժողովում որոշեցին Աբամին յայտաբարել դիկտատոր և ամբողջ իշխանութիւնը կենտրոնացնել նրա ձեռքը։ Վաճառ Հայրենիքդ երեքնով հաղարաւոր բազմութիւնը չարժւեց դէպի Աբամի բնակարանը և յուզիչ հան—

դիվանագիտությամբ հռչակեց նրան դիվանագետը: Վրա հասան քաղաքի գործադիր մասերը և երդուեցին հնազանդ լինել նորընտիր դիվանագետին: Այդ քայլին իր անվերապահ հաւանութիւնը տուեց և Ազգ. Ժողովը: Այսպիսով, մարտի առաջին օրերից սկսած՝ Երեւանի բռնադատ իշխանութեան մարմնացումը դարձաւ Արամը, որ իր զարմանալի նրբամտութեան ու տակտի շնորհիւ կարողացաւ չեզոքապել չրջանի բոլոր գործօն տարրերը, աշխատանքի ձեւ ամենքին: Ձեռք-ձեռքի տուած Դրօի, գօր. Սիլիկեանի ու Փիրումեանի, նահանգական կոմիտար Ս. Թորոսեանի, քաղաքական կուսակցութիւնների և կառավարական ու հասարակական մարմինների հետ՝ նա երեւան բերեց արտակարգ եռանդ և, ամենատաղնապալի վայրկեանին, ձեռնհասութեամբ վարեց Արարատեան դաշտի հայ ժողովրդի ճակատագիրը:

Ըստ ձեւի, Արամի դիվտատոր նշանակութենէ յետոյ էլ իշխանութիւնը մնաց Ազգ. Ժողովրդի ձեռքին: Յատուկ կոմիտէի փոխարէն գործում էր առանձին մի մարմին, որի անդամները կոչւում էին վարիչներ: Այս մարմինը փաստօրէն Արարատեան դաշտի կառավարութիւնն էր, որի նախագահն ու դիւանապետ գործերի վարիչը Արամն էր, ներքին գործոց վարիչը՝ Սահակ Թորոսեանը, պարենաւորմանը՝ Մկ. Մուսխեանը, ելեւմտականը՝ Յովհ. Մելիքեանը, ինքնապաշտպանութեանը՝ Աբր. Աստուածատրեանը: Բացի յետոյ, մարմնի կազմի մէջ մտան նոր անձեր՝ Ալիքսանդրապոլի նախկին քաղաքագլուխ Կամսարականը, բժ. Ց. Տէր-Միքայէլեանը (Օվին) և այլն. եղան և ուրիշ փոփոխութիւններ: Այս մարմինը մնաց իշխանութեան գլուխ մինչեւ Հայաստանի Ժողովրդի ու կառավարութեան ժամանումը Թիֆլիսից:

Երեւանի կառավարութեան, ի վերջոյ յաջողուց, բանալ ռազմագործական նշանակութիւն ունեցող գլխաւոր ճանապարհները, մաքրել խռովութիւնների բոյն ծառայող մահմեդական վայրերը և որոշ կարգ ու կանոն հաստատել իրեն ենթակայ չրջաններում: Նա մի քանի ձեռք առաւ գաւառապետութեան և աւազակութիւնների դէմ: Նրա տրամադրութեան տակ կային 10—12,000 մարզուած ու բաւական կարգապահ զինուորներ: Դրամական գործիւնը կարգաւորելու համար պարտադիր տուրք դրեց ժողովրդի վրա, որը տալիս էր անտրտունջ, անգամ սիրով: Երբեք, գուցէ, հայ կեանքում իշխանութիւնն ու հասարակութիւնը այնպիսի համերաշխ մի ութիւն չեն կազմել, քան 1918 թուի գարնան և ամառւայ պատմական ամիսներին:

ԳԼՈՒԽ ԺԳ.

ՍԱՐԴԱՐԱՊԱՏ — ԲԱՇ–ԱՌԱՐԱՆ

Այսպէս էր կացութիւնը Արարատեան դաշտում, երբ, Ալէքսանդրապոլի անկումից յետոյ, հայկական բանակի մի մասը նահանջեց Երեւանի ուղղութեամբ և կուռ հասաւ Սարդարապատ, մայիս 19–ին: Թիւրքերը նրանց հետապնդեցին երկու ճանապարհով՝ երկաթուղու ուղղութեամբ և Արագածի հիւսիս–արեւելեան փէշերով:

Դրանից առաջ արդէն, Արարատեան դաշտում համախմբուած էին և Վանի ու Ալաշկերտի շրջաններից նահանջած զօրամասերը: Ապրիլի կէսերին երեւանեան նահանգում, հայկական 2րդ դիվիզիայի պետ զօր. Սիլիկեանի հրամանատարութեան տակ, գտնւում էին 5րդ և 6րդ գնդերը, 4րդ գնդի մէկ դումարտակը և Վանի առաջին ու 2րդ գնդերը, 28 Թնդանօթով:

Վանի երկու գնդերը, որոնք գրաւում էին Բարթողեան բարձունքները, ապր· 27–ին ենթարկուեցին յարձակման Թիւրքերի կողմից, որոնք, հակառակ կենսած զինադադարի, փորձեցին ա՛յս կողմից խուժել Արարատեան դաշտը: Հայկական զօրքերը ցոյց տուին բուռն դիմադրութիւն: 2րդ գունդը նահանջից մինչև Օթզով և Աբհաջ, բայց յաջորդ օր անցաւ ուժեղ հակայարձակման և արիւնահեղ ճակատամարտից յետոյ՝ յետ չպրտեց Քշտամուն: Սակայն, Թիւրքերը ստացան օգնական ուժեր և յետ մղեցին հայկական զօրամասը, որը ամրացաւ Խաֆթալու–Սուլթանապատ գծի վրայ: Կռիւները տեւեցին մօտ երկու շաբաթ: Այս կռիւներում մերոնք ունեցան մի քանի տասնեակ սպանուած և 80 վիրաւոր: Մայիս 9–ի ճակատամարտում, հերոսական մահով մեռաւ և Վանի 2րդ գնդի հրամանատար սերած գնդ· Լեւոն Զաքուխլեանը՝ հայ լաւագոյն զինուորականներից մէկը:

Ի վերջոյ, անդրկովկասեան կառավարութեան եռանդուն բողոքի վրա Թիւրքերը նորից քաշուեցին Զինգիլի մէս կողմը: Հայկական զօրքերը տեղաւորուեցին Իդդիրում՝ Օրգովում ունենալով առաջապահներ: Մէս Քեւը Սարդարապատ կայարանում էր՝ կողքի առաջապահներով: Մի մաս էլ գրուած էր Աբաքա կայարանում: Այսպէս մնաց գրութիւնը մինչև մայիս 15, երբ Թիւրքերը դիմեցին ընդհանուր յարձակման Ալէքսանդրապոլի և, Զինգիլի վրայից, Երեւանի ուղղութեամբ և յետ մղեցին մեր զօրքերը Իդդիրից ու կողքից մինչև Աբաքա: Միաժամանակ, ոտքի էլան Թուրքերն ու քրդերը, և 1918Թ· մայիսի կէսերին Արարատեան դաշտը բոլոր կողմերից չրջապատուեց Քշնամիներով:

Կացութիւնը առանձնապէս Ծանրանում էր և ընդհանուր դժոխային պայմաններով. Կարսի և Ալէքսանդրապոլի անկումից յետոյ, երկիրը բոլորովին կտրւած արտաքին աշխարհից՝ խճողւած էր բազմահազար գաղթականներով, որոնք Թափւած էին գիւղերում ու քաղաքներում և Ճանապարհների վրա: Էջմիածին–Երեւան, Երեւան–Դիլիջան խճուղու վրա խոնւում էին անվերջանալ չարժւող գաղթականներ, սայլեր և անասուններ: Երկաթուղին չէր գործում: Պարէնաւորման տագնապը օրէցօր սրւում էր. հացն ու ապրուստի այլ միլոցները դժւարութեամբ էին Ճարւում: Այստեղ ու այնտեղ երեւում էին համաճարակ հիւանդութիւններ: Ժողովրդի և օրքի հոգեկան վիճակը ընկճւած էր անսահման:

Այսպիսի դրութեան մէջ, Թիւրքերի ընդհանուր յարձակումը մի պահ երեւանում առաջ բերեց անասելի իրարանցում ու սարսափ: Դիմադրութիւնը չատերին Թւում էր անհնար և անիմաստ: Ցաղթութեան վստահութիւն չէին ներշնչում և մինչեւ այդ բանակից հասնող տեղեկութիւնները. գօր. Սիլիկեանի հաղորդագրութիւնները մոայլ գոյներով էին ներկայացնում օրւայ դիմադրական կարողութիւնը: Բնակչութիւնը պատրաստւում էր փախստի:

Բայց ո՞ր փախչել: Ճանապարհները դէպի Թիֆլիս ու Բաքու փակւած էին ամբոխ: Պարսկաստան տանող երկաթուղին չէր գործում. Շարուր–Նախիջեւանը մահմեդականների ձեռքին էր: Իսկ Հարաւից և արեւմուտքից Թիւրքն էր գալիս՝ կոտորելով հանդիպող հային: Փախուստը այս պայմաններում հաւասար էր մահւան, ինչպէս և անձնատուր լինելը: Ելք չկար: Ելքը դիմադրութիւնն էր, կռիւը. քանի որ մահը անխուսափելի է, դէթ պատուով մեռնել: Մա՛հ կամ ազատութիւն — ուրիշ փոքրութիւն չկայ: Եւ ահա կատարւում է հրաշքը՝ մէկը այն հրաշքներից, որոնք գալիս են բոլորովին չսպասւած և փրկում անյոյս համարւած կացութիւնները: Ժողովուրդը, նրա առաջնորդները, օրքը, ամենքը համակւում են մէկ գիտակցութեամբ. — յաղթել կամ մեռնել:

Եւ Աբարատեան դաշտի ժողովուրդը մի մարդու պէս ոտքի է կանգնում: Գործում են ամենքը: Ագգային Խորհուրդը վարում է բանակի լրացման, կազմակերպման ու մատակարարման գործը: Հրամանատարութիւնը կարգաւորում ու բարձրացնում է օրքի մարտական ոյժը: Զօր. Սիլիկեանը մի չարք հրամաններով ու կոչերով խրախոյս է ներշնչում գիւղորներին ու հասարակութեան: Ամենքը լծւում են Թիկունքային աշխատանքի: Կանայք, օրիորդներ՝ ուսուիլք, ծխախոտ, վիրակապներ են պատրաստում: Հոգեւոր–կանոնիչները խաչ ու քարոզով մտնում է ժողովրդի ու օրքի մէջ: Գարեգին եպ. Ծովսկեանը չորում է մի մտից միւսը և իր հրաշունչ ճառերով բարձրացնում է օրքի տրամադրութիւնը: Կրկնւում էին Վարդանանց պատմական օրերը...

Երբ մայիս 21–ին երկաթուղու ընթացքով չարժւող Թիւրքերը երեսունչ Մարդաբապատի մօտ, այլևս իրենց առջեւ գտան յաղթելու վճռակամութեամբ տոգորւած հայ գինւորին: Մօտաւոր հաշւով, գօր. Սիլիկեանի օրքի

քանակը, այդ օրերին, հասնում էր 10,000 հոգու՝ բաղկացած հետեւեալ մասերից· Երդ գունդը, 1,500 ուին, 5րդ գունդը՝ 800, պաշտպանական առաջին գունդը՝ 1,200, երգեկայի գունդը՝ 700, Մակուի գունդը՝ 300, ապայակոյտի պարէտի գումարտակը՝ 200, Վանի առաջին և երկրորդ գնդերը՝ 2,500 ուին, 2րդ ձիաւոր գունդը՝ 700, Զէյթունի ձիաւոր գունդը՝ 500, պաշտպանական ձիաւոր գունդը՝ 800, յատուկ ձիաւոր գունդը՝ 500, Սմբատի, Դալի Ղազարի, Մուրատի խմբերը՝ 500 ձիաւոր, և 4 մարտկոց 16 թնդանօթներով*)։

Այս ուժերը բաժանուած էին երկու մասի· մի մասը Դրօի հրամանատարութեան տակ Բաշ–Աբաքանի ճակատում, միւսը՝ զօր· Դանիէլ բէյ Փերումեանի հրամանատարութեան տակ Սարգարապատի դաշտում։ Զօրքերի ընդհանուր հրամանատարն էր զօր· Սիլիկեանը, սպայակոյտի պետ՝ գնդ· Վեքիլեանը, որ և գծել էր կուի ընդհանուր յատակագիծը։

Թիւրքերի կողմից, Սարգարապատի ճակատում, գործում էր 5րդ դիվիզիան և բազմաթիւ անկանոն խմբեր, իսկ Բաշ–Աբաքանի ուղղութեամբ՝ 3րդ դիվիզիան։

Կռիւները սկսեցին Սարգարապատում, ուր մեր զօրքերը գրաւել էին Ղարախանլու–Քեօրփալու–Զէյվա գիւղերի գիծը։ Մայիս 21—22–ին տեղի ունեցան մանակի ընդհարումներ։ Թշնամին որոնում էր հակառակորդի թոյլ տեղը՝ վճռական զրոհի դիմելու համար։ Մայիս 23–ին զօր·Սիլիկեանը ուժեց հակայարձակման հրաման։ Հայկական ուժերը նետուեցին առաջ։ Բռնկուեց կատաղի ճակատամարտներ երկար մի շարք։ Թիւրքերը ցոյց տուին յամառ դիմադրութիւն՝ անցնելով բազմաթիւ հակայարձակումների։ Ամբողջ օր, առաւօտից մինչև երեկոյ, որոնում էին Քնդանօթները, որոնց դոռոցը հասնում էր մինչև Երեւան, ուր նոյնպէս սիրում էր տենդոտ եռուզեռ։ Թիւրքերից սայլերով, էշերով, ձեռքերով ռազմամթերք էին հասցնում կուռդներին, հաց, ծխախոտ, խմելու ջուր··· Բազմաթիւ կամաւորներ՝ ծեր ու երիտասարդ՝ ռազմաճակատ էին չասպում։ Ճակատի գիծերը չէր միայն — ամբողջ երկիրը մի մարդ, մի չունչ դարձած՝ կուում էր ժահացու թշնամու դէմ։

Մայիս 24–ին Թիւրքերը դիմեցին փախուստի։ Մերոնք հալածեցին ոգեւորուած։ Թշնամին յուսահատական դիմադրութիւն էր ցոյց տալիս և աշխատում դիրքեր գրաւել, բայց մերոնց չեչտակի հարուածների տակ չարունակեց փախուստը։ Յաղթութիւնը մերն էր։

Այդ յաղթանակի առթիւ, նոյն օրը եկեղեցիների, զօր· Սիլիկեանը ժողովրդին ուղղեց հետեւեալ սրտառուչ կոչը·

«Հայե՛ր, չտապեցե՛ք հայրենիքն ազատելու։

Հասել է րոպէն, երբ իւրաքանչիւր հայ՝ ծոռանալով իր անձնականը, յանուն Մեծ Գործի՝ հայրենիքի փրկութեան և իր կնոջ ու աղջիկների պատուի պաշտպանութեան, պէտք է գործ դնի իր վերջին ճիգը՝ թշնամուն հաւասարելու համար։

*) Ե· Մելիքեան, «Երեան ճակատագրական», «Հայրենիք» ամս·, 1925թ· մայիս։

Մենք չէինք ուզում կուել. յանուն խաղաղութեան ու հաշտութեան, պատրաստ էինք ընդառաջ գնալու ամէն տեսակ զոհողութիւնների, սակայն, մեր նամարդ թշնամին ընթանում է իր ծրագրած ուղիով. նա, ըստ երևոյթին, տարկացնել է ուզում մեզ, բայց, իրօք, ուզում է ոչնչացնել մեր բազմաչարչար ազգը: Բայց քանի որ պիտի ոչնչանանք, աւելի լաւ չէ՞, որ գէնքը ձեռներիս փորձենք պաշտպանել մեզ: Գուցէ, յաղուլի մեղ կուռ ձեռք բերել ապրելու իրաւունքը:

Իսկ որ մենք կարող ենք պաշտպանել, այդ ցոյց աւին վերջին կռիւները մեր նախաստում, ուր մեզանից քիւով գերադասից թշնամին նահանջի է դիմել մեր հերոսական գրոհի առաջ:

Հարկաւոր է մի ճիգ ևս, և թշնամին վռնտուած կը լինի մեր երկրի սահմաններից, ուր մեր պապերն ու հայրերը երկար տարիներ արիւն-քրտինքով աշխատել են գէթ մի կերպ հայթայթել իրենց օրւայ ապրուստը:

Հայե՛ր, ժամանակ չէ դանդաղելու: Մինչև յիսուն տարեկան ունեցող բոլոր տղամարդիկ պարտաւոր են գէնքի տակ գալու. ես պահանջում եմ ամենքից ներկայանալ իրենց գէնքերով ու փամփուշտներով հայրենիքի պաշտպանութեան համար:

Հայուհինե՛ր, յիշեցէ՛ք հինգերորդ դարու փափկասուն տիկնանց, որոնք ոգևորեցին իրենց ամուսիններին դէպի Մեծ Գործը, անմահ Վարդանի կռիւների ժամանակ. հետեցէ՛ք նրանց օրինակին. եթէ չէք ուզում, որ ձեր պատիւը ոտնակոխ լինի, խրախուսեցէ՛ք այն վախկոտներին, որոնք զանազան պատրուակներով խուսափում են ճակատ գնալուց: Հաւաքեցէ՛ք ռազմամթերք, հաց, հագուստ և ուրիշ մթերքներ...

Ես խորապէս համոզուած եմ, որ իմ այս կոչը անարձագանգ չի մնայ, և երկու-երեք օրւայ ընթացքում կը կազմակերպւի մի այնպիսի քաջարի զօրաբանակ, որին կը յաղուլի վռնտել թշնամուն հայրենի հողի սահմաններից և ապահովել հայ ժողովրդի գոյութիւնը:

Ցանո՛ւն բազմաչարչար ժողովրդի ֆիզիքական գոյութեան,

Ցանո՛ւն ոտնակոխ եղած ճշմարտութեան —

Ոտքի՛ կանգնեցէ՛ք: Դէպի՛ սրբազան պատերազմ:

Բոլոր գէնքի ընդունակ տղամարդիկ պարտաւոր են ներկայանալ եբևանում զօր. Բէժանբէգին, իսկ բոլոր հաւաքւած մթերքները պէտք է յանձնել տեղական Ազգ. Մորհուրդներին»:

Իսկապէս որ հինգերորդ դարը յիշեցնող այս կոչը անարձագանգ չմնաց. զօր. Սիլիկեանը ստացաւ իր պահանջը:

Մայիս 23-ին, թշնամին, խոշոր ուժերով, յարձակման դիմեց և Բաշ-Ապարանի ճակատում: Սկսւեցին արիւնահեղ կռիւներ: Դրօրն յաղուլեց կանգնեցնել նրա յառաջխաղացումը՝ զգալի կորուստ պատճառելով նրան:

Ստանալով օժանդակ ուժեր, Թիւրքերը նորից անցան յարձակման՝ հանդիպելով մերոնց յամառ դիմադրութեան: Կռիւները տևեցին մի քանի օր: Այստեղ էլ մեր զօրքերը երեւան բերին արտակարգ տոկունութիւն ու քաջութիւն: Դրօի հմուտ ղեկավարութեան տակ նրանք յետ չպրտեցին թշնամու բոլոր գրոհները և մայիս 28-ին, մի խիզախ հակագրոհով փոխուտի ժամանեցին թշնամուն: Այդ ճակատամարտում հերոսական մահով ընկաւ հայ լաւագոյն հայդուկներից մէկը՝ Քիւրը խմբի հրամանատար Զեմլեակը:

Մայիս 28–ին ամբողջ ճակատի վրա, քիւրքերը նահանջում էին անկարգ։ Մեր ռազմակոյտ այդ օրւայ հաղորդագրութիւնը ասում է այդ մասին. «Քիւրքերը երեք օրւայ կռիւներից յետոյ, չարչած են և նահանջում են հապճեպով։ Նրանց զօրամասերը բաժանւած են երեք խմբերի։ Առաջինը՝ Ազաջով կայարանից նահանջում է դէպի Անի կայարանը, երկրորդը՝ Ղարզլու և երրորդը՝ Ազլա–կալա։ Մեր զօրամասերը քայլ առ քայլ հետապնդում են նրանց։ Ոգեւորութիւնը անբեկանելի է»։

Եւ, իրօք, ոգեւորութիւնը չատ մեծ էր։ Զօր. Սիլիկեանն այլեւս ժառանգ էր ուելի լայն գործողութիւնների մասին — չարժւել դէպի Ալեքսանդրապոլ։ Իր մտքում նա օրօրում էր ուրիշ ծրագիր, որ միայն մտերիմներին էր յայտնում. մի կողմ թողնել Ալեքսանդրապոլը և չարձակւել Կարսի վրա։ Եւ համոզւած էր, որ կը գրաւէ Կարսը, իսկ Կարսի գրաւումով անխուսափելիօրէն կը գրաււէր և Ալեքսանդրապոլը։ Քիւնէից կտրւած քիւրքերը չէին մտայ Շիրակում։

Սարգսապատի յաղթութեան յաջորդ օրը, մայիս 29–ին, զօր. Սիլիկեանը, դիմեց հայ ժողովրդին հետեւեալ կոչով.

«Հայե՛ր։ Մեր քաջարի զօրքերի հերոսական գործունէութիւնը չարունակւում է, և քիւրք զօրքերը նահանջում են։

Մենք պէտք է յետ առնենք Ալեքսանդրապոլը, որը այնպէս ննջօրէն գրաւեցին քիւրքերը։

Մեր բոլորիս մտքերը ամբողջովին պէտք է սեւեռած լինեն դէպի Ալեքսանդրապոլը։ Մենք պէտք է յետ առնենք այն և ապա միայն քիւրքերի հետ բանակցութեան մէջ մտնենք հաշտութիւն կնքելու համար։

Մեզ բոլորիս չատ լաւ պէտք է յայտնի լինի, թէ որ աստիճանի զգուշւել է անհրաժեշտ և միաժամանակ քոյլ քիւրք կառավարութեան ախորժակը։ Նա պահանջում է ամբողջ Ախալցխայի, Ախալքալաքի, Ալեքսանդրապոլի և Էջմիածնի գաւառները՝ Էջմիածին վանքի հետ միասին և Երեւանի, Նախիջեւանի գաւառների մեծ մասը։

Մի՛քէ՝ մենք պէտք է տանենք այդպիսի անարգանք։ Մի՛ւռ հէնց ու հանդիստ զբաղ պէտք է տանք Քշնամուն մեր հայրենի հողերը, որ կեսդրէել, կերակրում են և պիտի կերակրեն մեզ, և մեր սրբատեղին՝ Մայր Էջմիածինը։

Ո՛չ, երբեք, հա՛յ ժողովուրդ, դու չպիտի քոյլ տաս այդպիսի անարգանք։

Եւ այդ անարգանքը տեղի չի ունենայ, եթէ մենք հասնենք մինչեւ Ալեքսանդրապոլ։

Քէ՛յ է մնացել մինչև Ալեքսանդրապոլ։ Հարկաւոր է միայն օգնել խրամատներում գտնւող մեր քաջերին, և մի երեք–չորս օրից յետոյ մենք կը հասնենք մեր նպատակին։

Արդ, ուրեմն, մի՛ դանդաղէք, հայե՛ր։ չտապով խմբւեցէք խիտ ու համերաշխ չարքերով, վռնտեցէ՛ք Քշնամուն մեր հայրենի արիւնաներկ հողից, և Քո՛ղ ձեզ հետ լինի մեր յետնորդների օրհնութիւնը։

Դէպի՛ գէնք բոլորդ։

Դէպի՛ Ալեքսանդրապոլ»։

Դէպի՛ Ալէքսանդրապոլ... Այս մարտակոչը հարթատ էր ամէնքին— և՛ յաղթական ու հպարտ զօրքին, և՛ անխուսափելի մահից ազատուած ժողովըրդին: Ոգեւորուած՝ ամէնքն ապրում էին Ալէքսանդրապոլը վերագրաւելու գաղափարով: Եւ մինչ զօր. Սիլիկեանը պատրաստւում էր ընդհանուր յարձակողական, հեռագիր ստացւեց, որ բաթումում ստորագրւել է հաշտութեան դաշնագիրը. զօր. Նազարբէկեանը հրամայում էր կնքել զինադադարը...

Կարելի է երեւակայել, թէ այս լուրը թնդ տպաւորութիւն գործեց երեւանում ու բանակի մէջ. յուսահատութիւնը անսահման էր. Ազգային Պորհուրդը անընդհատ նիստեր էր գումարում, բայց որոշ եզրակացութեան չէր կարողանում յանգել. մեծամասնութիւն չէր կազմւում: Արամը գրեթէ չէր մասնակցում այդ նիստերին. նա ամփոփւել էր իր մէջ և սպասում էր զօր. Նազարբէկեանին: Ազգ. Պորհուրդն ալեկոծւում էր առանց նրան. ոմանք առաջարկում էին հաշտւել կացութեան և ընդունել բաթումի դաշնագրի պայմանները, ուրիշները —գլխաւորապէս, դաշնակցականները—պահանջում էին չեղեալ համարել զօր. Նազարբէկեանի հեռագիրը հաշտութեան մասին, զօրքերի ընդհանուր հրամանատար նշանակել զօր. Սիլիկեանին և չարունակել պայքարը: Այս առաջարկի կողմնակիցներին թւ էր տալիս և զօրքի խիստ բացասական վերաբերմունքը դէպի բաթումի դաշնագիրը. առաջւոր դիրքերից հեռագիրներ էին տեղում, որոնք բողոքում էին այդ դաշնագրի դէմ և խնդրում էին Ազգ. Պորհրդին՝ չարունակել պատերազմը: Այս տրամադրութեան ոյժ էր տալիս, մանաւանդ, այն հանգամանքը, որ, ըստ դաշնագրի պայմանների, երկրի ամենահարուստ մասերը յանձնում էին թշնամուն, և Ղամարլուն, որ դեռ չէր գրաււած թիւրքերի կողմից, բայց դաշնագրով պիտի անցնէր նրանց, հարիւրաւոր ներկայացուցիչներ էր ուղարկել երեւան, որոնք ցոյց արին Ազգ. Պորհրդի առջեւ՝ պահանջելով մերժել բաթումի դաշնագիրը: Ծուցաբարները — կանայք ու օրիորդները — դրօշակները ձեռներին՝ կանգնում էին Ազգ. Պորհրդի չէնքի առջեւ և ներկայացուցիչների բերանով յայտարարում, թէ իրենց չրջանը ամբողջ ունեցածքն ու կուռը ուժերը տրամադրում է Ազգ. Պորհրդին, միայն թէ թշնամու պայմանները չընդունւեն:

Վճռո տալը անչափ դժւար էր. վտանգը չատ էր մեծ: Հայկական զօրքերի ընդհանուր քանակը այդ օրերին հասնում էր 30 ոչ լրիւ դումարտակների, մինչդեռ թիւրքիան չարժման մէջ էր դրել 5 դիվիզիա (3րդ, 5րդ, 9րդ, 11րդ և 36րդ), այսինքն՝ 50 դումարտակ և ի վիճակի էր նորանոր ուժեր հասցնելու: Հայ դիւրների թիւը 12,000ը չէր անցնում. Քիւրքերն առաջ էին քաշել 35,000 կուռղ:

Ազգ. Պորհուրդը չկարողացաւ միակամութեան երեւան բերել, և զօր. Սիլիկեանին մնաց ենթարկւել զօր. Նազարբէկեանի հրամանին: Պատերազմը վերջացաւ: Ղամարլուի չրջանի բնակչութեան մի մասը անմիջապէս գաղթեց. միւսը հետացաւ քիւրքերի գալուց յետոյ:

Բաքուի դաշնագրի հետ կապած խնդիրները կարգադրելու համար Ազգ. Ընդհուրդը Ալեքսանդրապոլ ուղարկեց յատուկ պատւիրակութիւն՝ բաղկացած Մ. Մուսխեանից, Թամամշեանից, բժ. Ճ. Մելիքեանից, զօր. Տէր-Քաւորկեանց, գնդ. Քիւմիւլեանից և գնդ. Վեքիլեանից։ Պատւիրակութեան յանձնարարւած բանակցել Քեւրք հրամանատարութեան — Քեազիմ կարաբէքիրի հետ Բաքուի դաշնագրից բխող հետեւեալ հարցերի մասին. 1) Դադրեցնելու Քեան վերադարձը Իրենց տեղերը։ 2) Դերիների փոխանակումը։ 3) Թիւրքական զօրքի Հայաստանից անցնելու պայմանները։ 4) Երկաթուղու փոխանցման խնդիրը։ 5) Ղարաքիլիսայի պարպումը և յանձնումը հայերին։

Պատւիրակութիւնը Ալեքսանդրապոլում ընդունեց պատշաճ քաղաքավարութեամբ։ սկսեցին բանակցութիւնները, բայց հայերի դրած հարցերից և ո՛չ մէկը չընդունեց Թիւրքերի կողմից։ Նրանց գրագէցողը Հայաստանի վրայով զօրք փոխադրելու իրաւունքն էր և Ալեքսանդրապոլ—Ջուլֆա երկաթուղագծի անժխտական փոխանցումը։ Եւ ա՛յս պահանջներին էր, որ ամենից աւելի հակառակում էին հայերը։

Տեսնելով հայերի յամառութիւնը, առանց ընդհատելու Ալեքսանդրապոլի բանակցութիւնները, յուլիս 7-ին Թիւրքերն անցան յառաջխաղացման Սարդարաբադի ճակատում։ Զօր. Սիլիկեանը հրամայեց մեր զօրքերին Քողնել երկաթուղին և դիրքեր գրաւել Եղմիանդի լերնաշղթայում։ Ճուլիս 8-ին Թիւրքերը մեծ ուժերով յարձակուեցին Քեորպալու—Ջէյվա գծի վրայ, բայց յետ շպրտուեցին Յոր գնդի և կամաւորական խմբերի ուժգին հակահարւածով։ Թողնելով այս կէտում պահակ զօրամասեր՝ Թիւրքերը չարժւեցին դէպի արեւելք։ յուլ. 8-ին գրաւեցին Ջաքունաբի գիւղը Եղմիանդից 10 կիլոմետրի վրայ։ յուլիս 9-ին մտան Զորաքեւրաբ, Նէյլու, Թազաքենդ և Աղհամզալու գիւղերը։ Այսպիսով հաստատուեց Բաքուի դաշնագրի սահմանագիծը։

Թիւրքերը դիրքեր գրաւեցին Երեւանից 7 կիլոմետր հեռու՝ Քնգաւօթնեակ թերաններն ուղղելով դէպի Հայաստանի մայրաքաղաքը։

Գ. ԳԼՈՒԽ ԺԴ.

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՓԱՓԱՓԱՅՈՒՄԸ. — ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆՆԵՐ

Այսպէս, Հայոց աչխարհը աբեան ու կրակի մէջ էր: Իսկ ինչո՞ր էին կատարւում այդ մեղացին բաթումում ու Թիֆլիսում:

Մայիս 11–ին, Քիւրքերի պայմաններն ստանալուց յետոյ, Անդրկ. պատւիրակութիւնը գրաւոր պնդեց Բրեստ–Լիտովսկի պայմանների վրա, և այս առթիւ սկսւեց Քղթերի փոխանակութիւն Քիւրք և անդրկովկասեան պատւիրակութիւնների միջև. անդրկովկասցիք անշեղ կանգնած էին Բրեստ–Լիտովսկի պայմանների վրա, բողոքում էին այդ դաշնագրի սահմաններից դուրս ընկնող չրջանների գրաւման դէմ և պահանջում էին, բանակցութիւն–ներին մասնակցեն նաև Քիւրքիայի գինակիցները: Քիւրքերը հակաճառում ու սպառնում էին:

Այս բանակցութիւնների ընթացքին, մայիս 14–ին, Քիւրքերը պահան–ջեցին անմիջապես Բոյլ տալ Քիւրք գօրքերին Ալէքսանդրապոլի վրայով անցնել դէպի Ջուլֆա: Եւ դրա պատասխանը չստացած, ինչպէս տեսանք, յարձակեցին Ալէքսանդրապոլի վրա:

Բանակցութիւնները արագացնելու նպատակով, մայիս 19–ին Գեր–մանիայի ներկայացուցիչ գօր. Ֆոն Լոսովը առաջարկեց անդրկ. պատւի–րակութեան իր միջնորդութիւնը: Անդրկովկասեան պատւիրակութիւնը, հակառակ ազգրէլանցիների վարանումին, ընդունեց ուրախութեամբ:

Ցաջորդ օրը, մայիս 20–ին, բաթում հասան Հայոց Ազգային Խորհրդի ներկայացուցիչներ բժ. Համ. Օհանջանեանն ու Աբր. Զոհրաբեանը՝ գերման կառավարութեան հովանաւորութիւնը խնդրելու առաքելութեամբ: Մայիս 22–ին այդ իմաստով պաշտօնապէս դիմում արւեց գօր. Ֆոն Լոսովին, և այս վերջինը խոյսն հետագրեց Գոլոի գերման դէսպանին այդ դիմումի մասին՝ աւելացնելով միաժամանակ, որ հայ ժողովրդի վիճակը ողբերգական է և որ Քիւրքերը ձգտում են գրաւել հայկական գաւառներն ու բնաջինջել հայերին:

Մայիս 24–ին գօր. Ֆոն Լոսովը հաղորդեց անդրկովկասեան պատւի–րակութեան, որ Քիւրքերը մերժեցին միջնորդութեան իր առաջարկը, իսկ մայիս 25–ի երեկոյեան, մի առանձին նամակով, յայտնեց, Թէ իր ստացած ստոյգ տեղեկութիւնների համաձայն Անդրկովկասեան Հանրապետութիւնը քայքայման նախօրեակին է գտնւում, որով իր ներկայութիւնը դառնում է աւելորդ, և ինքը նոյն օրն և ևթ մեկնելու է բաթումից:

Եւ, հիշա որ, Անդրկովկասը արագ քայլերով գնում էր դէպի քայքայում։ Որ օրի վրա սասանկում էին հակամարտութիւնները կովկասեան ժողովուրդների միջև, որոնցից վրացիները գաղտնի, բայց տենդագին որոնում էին գերմանացիների հովանաւորութիւնը, ադրբէջանցիները քոնել էին Քիւրքերի փէշից և քաշում էին դէպի Բագու, որը այդ օրերին բոլշեւիկների ձեռքն էր։ Հայերը մտածել էին մենակ և օրհասական կռիւ էին մղում մահ ու աւեր սփռելով առաջ չարժւող Քիւրքական օրդաների դէմ։

Հայ ներկայացուցիչները բաթումում փորձեցին համաձայնութեան գալ ադրբէջանցիների հետ, բայց հանդիպեցին խիստ անդիմող վերաբերմունքի։ ադրբէջանցիները պահանջում էին ոչ միայն ամբողջ Ղարաբաղը, Զանգեզուրն ու Շարուր–Նախիջևանը, այլ և երեւանի ու Էջմիածնի գաւառների մեծ մասը՝ երևան քաղաքով հանդերձ։ Հայաստանի մայրաքաղաք կարող է լինել Էջմիածինը», ասում էր Հնականաչին Ուսուպբէկովը Խան–Խոյսկու և Թաուզ Ջաղէի հաւանութեամբ։ Եւ որպէս համաքաւում էին դեռ չափաւորները։ Անկին գործում էր դր. Մուլթանովը Գանձակի ու Բագուի Ազգ. Խորհուրդների խան ու բէգ անդամների հետ, որոնցից 30 հոգինոց մի պատւիրակութիւն նկել էր Բաթում և համոզում էր Քիւրքերին օր առաջ չաթիւել դէպի Անդրկովկասի խորքերը՝ ազատելու համար Բագուի մահմետական–ներին բոլշեւիկների և հայերի ձեռքից։ Ադրբէջանցի Քուրքերը անդրկ. պատւիրակութեան մէջ անվերապահ կերպով պաշտպանում էին Քիւրքերին և իրենց քայլերը յարմարեցնում վերջիններիս ծրագրերին։

Բան էուքեան, աւելի լաւ չէր և վրաց ներկայացուցիչների դիրքը։ Ինչպէս պարզուեց յետոյ, Ջիւննկելին և իր ընկերները՝ պատւիրակութեան մէջ անդամներից Բագուն, բանակցութիւններ էին վարում Գերմանացիների հետ՝ Վրաստանը նրանց հովանաւորութեան տակ դնելու նպատակով։

Ցաճախ բաթումում երեւում էին վրացի գործիչներ, որոնք նոյնպէս գաղտագողի խորհրդակցութիւններ էին անում, տեսնւում էին մերթ Քիւրքերի, մերթ գերմանացիների հետ և հայերի Քիկունքում ինչ որ մութ հաշիւներ էին կարգադրում։ Յետագայում յայտնի դարձաւ, որ նրանց Վրաստանի անկախութեան յայտարարութիւնն էին նախապատրաստում։ Վրաց պատւիրակութեան անդամներից մէկը՝ պրոֆ. Զ. Աւալովը հետևեալ ձևով է ներկայացնում այդ դէպքերը։

«Գերմանական պատւիրակութեան հետ ունեցած բաց ու անկեղծ զրոյցների ընթացքում պատրաստուեց Վրաստանի Ներող դիրքը՝ անդրկովկասեան մի ութեան անխուսափելի քայքայման նախատեսութեան հետևանքով։ Մեկն մի քանի մարդ տեղեակ էր գաղտնիքին։ Թիֆլիսից եկած Ն. Ժորդանիան Վրաց Ազգ. Խորհրդի նախագահն և Սէյմի ու Վրաստանի Սոց.–Դեմոկրատական կուսակցութեան պարագլուխի իր դիրքով հանդիսացաւ այն անձը, որին վիճակուեց Թիֆլիսում հիմնական ակտերը (Վրաստանի անկախութեան յայտարարութիւնը և Անդրկ. Սէյմի ինքնավերացումը) անցկացնելու դժւարին գործը։ Նա, ըստ երեւոյթին, տատանւում էր՝ միաեգամայն հանգանակի և օրինական պատճառներով։ Վրաստանի անկախութիւնը քիչ էր կապւում իր նախկին գործունէութեան ու հաւատամքի և

Ռուս. Սոց.–Դեմ. կուսակցությանը պատկանելու հետ: Բայց մի անգամ որ «հաւատացած», այլևս ճարպիկ ձեռքով սկսեց անցկացնել նոր ծրագիրը:

*Մայիս 22-ին Ժորդանիան վերադարձավ Բիֆլիս: «Ֆերմաններ–Վրացական» աշխատանքը ամբողջ թափով ընթանում էր «անդրկովկասեան–Քրջական» աշխատանքին զուգընթաց**):

Նոյն ևեսլովը այդ օրերի դէպքերը հետեւեալ ձևով է արձանագրում իր յուշատետրի մէջ.

«Բաթում, 21 մայիս 1918· — Առաւօտեան Ն·Ժորդանիայի և Նիկոլաձէի հետ քննում ենք քարտէզի վրա մեզ անհրաժեշտ սահմանները, ծայրայեղ դէպքում պատրաստ ենք «տալու» Ջաքաթալայի շրջանը: Ցօգուտ Ադրբէջանի սահմանային ուրիշ որևէ սրբագրութիւն չենք անի: Թիւրքերը դանակը կոկորդներիս դրած՝ պահանջներ են անում, բայց Ախալցխան, Ներքվիսը Վրաստանին պէտք է մնան:

Ցերեկը՝ խորհրդակցութիւն վրացիների ու թաթարների միջեւ: սահմանների մասին: Մի կողմից՝ Նիկոլաձէ, Ժորդանիա, Սուրգուլաձէ և եւ· միւս կողմից՝ Խան–Խոյսկի, Խասմամեդով, Սաֆիքիւրդսկի, Գևսկեով, Ռասուլբեկով, Ջաֆարով: Հայերը հրաժարւել են գանձակի նահանգի մասերից (Ղարաբաղ), իսկ մահմեդականները··· համաձայն են կազմել Անդրկովկասում առանձին հայկական կանտոն (օրինակ, դեմոկրատական «Ազիբջանդադոյլի նահանգ»–ի ձևով): Միւսներից էլ ուզում են դրաւել Սղղնախ, Թիֆլիս և Բորչալու գաւառների մասերը, բայց համաձայնութիւնը հնարաւոր է· նրանք կը գիջեն: Ախալցխայի խնդրի առթիւ Գևսկեովը առաջ է քաշում ընձեռողման պահանջը (հասկանալով կցումը Թիւրքիային):

Ընդհանուր առմամբ, մեր բարեկամ մահմեդականները հաւատացնում են, որ ամէն կերպ պաշտպանելու են «երբեակ Անդրկովկասը· բայց, ասում են, ինչ անել, եթէ թիւրքերը չհրաժարուեն իրենց պահանջներից, և ծրագրուող «կանտոններից» մէկը բացակայի: Նրանց փափաքն է, այդ դէպքում, պահպանել Անդրկովկասը դէթ որպէս վերնեակ միութիւն»:

«Մայիս 22· — Աչքի առաջ ունենալով «Անդրկովկասեան սպանեացող փլուզումը՝ վճռական խորհրդակցութիւն եղաւ Վրաստանի անկախութիւնը յայտարարելու անհրաժեշտութեան մասին: Տրագիրն այն է, որի մասին վաղուց է վէր, իբրև «խորհրդական», պնդում եմ այստեղ և որին Ջեհնեցին և ուրիշները համաձայն են: Վրաստանի անկախութիւնն ու հողային ամբողջութիւնը երաչխաւորւում է Գերմանիայի կողմից: Արևելեան Անդրկովկասը ստանում է գործելու ազատութիւն և կազմակերպւում է թիւրքերի օգնութեամբ: Հայերն էլ պարտաւորած պիտի լինեն յայտարարել իրենց անկախութիւնը···

Գրեցի Վրաստանի անկախութեան յայտարարութեան նախագիծը — ժամանակն է ճչտորչել, գործել: Ջեհնկելլին, Նիկոլաձէն, Ժորդանիան, Սուրգուլաձէն հաւանութիւն տուին: Ժորդանիան այդ նախագիծն իր հետ տարաւ Բիֆլիս: Մնաս բարովի ժամանակ մենք առանձնապէս սեղմում էինք նրա ձեռքերը: Նա ստիպած պիտի լինի բանալով մի չատ լուրջ քաղաքական: Մտածեցէ՛ք միայն գանազան կազմակերպութիւնների, խորհուրդների և էլ աւելի քանդր նախապատրաստների մեծութեան մասին: Բայց նա, երևի, արդէն նախապատրաստել է վերջին գործողութիւնը· մնում է քաշել քնը»:

---

*) З. Авалов. «Независимость Грузіи в международной политикѣ» 1918—21 г. Парижъ, 1924 г., стр. 5.

«Մայիս 23·····Այսօր, ի միջի այլոց, կարդում ենք համաձայնութեան նախագիծը, որով վրաց ժամանակաւոր կառավարութիւնը Գերմանիային իրաւունք է տալիս օգտուելու Վրաստանի նաւահանգիստներում գտնուղ բոլոր նաւերից։

«Մայիս 24· — Լաւատ աշխատանք։ Վեզենդոնքի հետ կարդում եմ վերջնական նախագծերը։ Շատերն ակում են գլխի ընկնել, որ բեմի յետևը կատարում է խուլ աշխատանք, որ բեմասրքը փոխում է։ Ուշ գիշերը կազմում եմ հետևեալ հեռագիրը, որը մայիս 25–ի գիշերը ուղարկում է Ջնեննկելի ստորագրութեամբ։

«Թիֆլիս, զօրավար Քվինիքսեէին։

«Հաղորդեցէ՛ք Վրաստանի Ազգային Խորհրդի նախագահութեան հետևեալը։ անկախութեան յայտարարութեան յետագայ յապաղումը կուսնանայ անուղղելի հետևանքներ։ Գերմանական միջնորդութեան փորձը չյաջողուեց։ Մնում է մէկ բան։ Թէրթ արշաւին հակադրել Գերմանիայի աջակցութիւնը վայելող անկախ Վրաստան։ Նրա ներկայացուցիչը վրաց կառավարութեան ժօո կը լինի կոմս Շուլենբուրգը, որին պէտք է անմիջապէս ճանաչել հէնց որ յայտարարութիւն արւի··· Արդէն ստորագրութեան համար պատրաստուած են մի շարք ժամանակաւոր համաձայնութիւններ Գերմանիայի հետ··· Սպասում ենք չուտափոյթ հաղորդագրութիւն ակտի մասին։

«Զօր.ի Ծդիչելիձէն սեփական ձեռքերով ծածկագրեց այս հեռագիրը»։

«Մայիս 25· — Ամբողջ Քաղաքում աւարտում ենք յետկուլիսային աշխատանքը··· Ուշ գիշերով Ջնեննկելի ու Նիկոլաձէի հետ խօսում ենք մեր հաւանականութիւնների մասին։ Թիֆլիսից հեռագիր ստացանք· անկախութիւնը կը յայտարարւի վաղը, մայիս 26–ին։ Հարցը անց է կացւած բոլոր ատեհձաններով։ Միայն Թուրքերը խնդրում են մի քիչ սպասել»*)։

Եւ մայիս 26–ին, Աւարտի զոհունակութեամբ արձանագրում է· «Մեր անգրկուկասեան աշխատանքը անցաւ աննկատելի։ Ոչ ոք, կարծես, չի կասկածում, Քէ ի՞նչ է կատարւելու այսօր և վաղը··· Մենք անկախութիւն ենք հռչակելու։ Գերմանիան բռնելու է Թուրքերի փէշը· դրա փոխարէն մեզանից բան–ման կառնէ։ Ազրբէյճանը մի ան ժամանակ կը լինի Թուրքիայի ազդեցութեան ներքոյ։ Հայաստանը կը մնայ Թուրքերի ճնշման տակ, որ կը մեղմացւի գերմանացիների ներկայութեամբ»**)։

Այսպէս, ուրեմն, ադրբէյճանցիները Թուրքերի հետ կարգադրում են իրենց ազգային խնդիրները· անդրկովկասեան պատերազմական նախագահ Ջնեննկելին Ժորդանիայի ու Նիկոլաձէի հետ, գերմանացիների փէշից բռնած, դաղտագողի դաւադրութիւն են սարքում Անդրկովկասեան մնութեան դէմ և նախապատրաստում Վրաստանի անկախութեան յայտարարութիւնը։ Հայերն են միայն մէջտեղը՝ մենակ, անբարեկամ, անպաշտպան, ամէնքից լքւած, գոհ հարևանների դաւաճանութեան···

Աւելի զարհուրելի վիճակ գժւար էր երևակայել։ Մի ազատ լոյս էր մնացել միայն հայերի համար՝ գերմանացիների պաշտպանութիւնը, բայց Ֆոն Լոսովը մէկից աւելի անգամներ յայտնել էր, որ Թուրքերը չեն լսում իրենց և, հակառակ Բերլինից եկած պահանջների, անում են իրենց գիտացածը։ Ի՞նչ անել։ Ո՞ւմ դիմել։ Ո՞ւր որոնել փրկութիւն։ Ֆոն Լոսովի խոր–

*) Այսոեղից երևում է, որ վրացիք միայն հայերից էին զգոյնի պահում իրենց թշնամիները· թուրքերին, ընդհակառակը, մոսեսակից էին դարձնում իրենց անելիքներին···

**) Աւուրվի մոյն գիրքը, էջ 57—61։

հրթռով Հ.Ադ.Միջհրդի ներկայացուցիչներ Օհանձանեան ու Զոհրաբեանը որուշեցին մեկնել Բերլին։ Ծոն Լոսովը խոստացաւ տանել իր նաւով, վերջ ներկայացուցիչների հետ միասին, Փոքիից։

Մայիս 25-ին գերման պատերազմութիւնը հեռացաւ Բաթումից, եւ միւս օրը, մայիս 26-ի երեկոյեան ժամը 8-ին օսմանեան պատերազմութիւնը անդրկ։ պատերազմութեան յանձնից հետեւեալ վերջնագիրը։

Անդրկովկասեան պատերազմական նախագահին։

Ցաւով հաստատում եմ, որ տակաւին ոչ մի որոշ պատասխան չի տրուած այն առաջարկութիւններին, որ ես պատիւ ունեցայ օսմանեան կայսերական կառավարութեան կողմից յանձնելու Անդրկովկասեան Դաշնակցական Հանրապետութեան պատերազմութեան բաթումի խորհրդաժողովի առաջին նիստում, մայիս 11-ին, չնայած որ բաւական երկար ժամանակ, այսինքն՝ երկու շաբաթ է անցել այն օրից, երբ նրանք ձեւակերպուեցին։ Մինչդեռ, ինչպէս յայտնի է ձերդ գերագանցութեան, Կովկասի վիճակը աւելի քան տագնապալի է ու երկրիմի եւ առանց յապաղելու պէտք է լուսաբանուի։

Շարիւր հազարաւոր թուրքեր եւ մահմետականներ Բաղում ու չրջակայքում տառապում են անխիղճ հրոսակների, այսպէս կոչուած յեղափոխականների արիւնոտ յծից, և անուղղելի ազէտը, որ սպառնում է այդ դժբաղեանների, գառնում է աւելի ու աւելի անխուսափելի։ Թուրք և մահմետական բնակիչների ճակատագիրը Կովկասի միւս մասերում էլ, ուր թաղանիների ու չարագործների բազմաթիւ կազմակերպուած հրոսակմբեր նրան պատճառում են անվերջ ու յարատեւ կերպով ամէն կարգի բռնութիւններ, աւելի հանդստացնող չէ ու չի կարող չհրաւիրել ամենայուրջ ուշադրութիւն։ Դուք կընդունէք, սակայն, պ.նախագահ, որ այդ անուեին արժանի և ո՛չ մի կառավարութիւն չի կարող դիտել անտարբեր աչքով, որ իր երկրին սահմանակից մի հողի վրա անպատիժ կերպով աճեն նման ոճրագործութիւններ, և կը դիտակցէք, անշուշտ, որ օսմանեան կայսերական կառավարութեան դրութիւնը առանձնապէս փափուկ է Կովկասը ծաւռող անիշխանութեան հանդէպ, որովհետեւ այդ վերաբերութեամբ է նոյնպէս և առաւելապէս ապահովութիւնները մի ազգաբնակութեան, որ ցեղի ու կրօնի ամենասերտ ազգակցութիւնն ունի կայսրութեան բնակչութեան հետ։ Միւս կողմից, ընդհանուր պատերազմի անխուսափելի պահանջները կայսերական կառավարութիւնը դնում են Կովկասի վրայով, երկաթուղիներով, ըստ կարելւոյն չուտ, դէպի պատերազմի ուրիշ ռազմաբեմ զօրքի ազատ փոխադրութիւնը ապահովելու անհրաժեշտութեան առջեւ։ Այդ եւս պահանջում է, որ անյապաղ վերջ տրւի ներկայ երկդիմի կացութեան։

Այս բոլոր պատճառներով, օսմանեան կայսերական պատերազմութիւնը պարտք է համարում պահանջել, որ անմիջապէս հաղորդուի իրեն անդրկովկասեան պատերազմութեան պատասխանը առանց աւելի արագ առաջարկութիւններին, այլ և սահմանների սրբագրութեան վերաբերող նոր առաջարկին, որի բնագիրը պատիւ ունեցայ ընդ սմին ուղարկելու ձերդ գերագանցութեան։

Այսպիսով, իմ կառավարութիւնը՝ ընդունելով, որ միայն վերոյիշեալ առաջարկութիւնների ճշտիւ և արագ ընդունումը Անդրկովկասեան Դաշնակցական Հանրապետութեան կառավարութեան կողմից կարող է Կովկասը հասցնել դադարացուիչ դրութեան և որ միայն այդ ընդունումը է վճռակի է ստեղծել կայուն դրութիւն և համաւուռում է բաւարար երաշխիք թուրք և մահմետական բնակչութեան ապահովութեան և անդորրութեան համար, —

յանձնաբարել է ինձ խնդրելու ձերդ գերագանցութեան՝ հաղորդել ինձ, այս օրուայ երեկոյեան ժամը 8-ից սկսած, 72 ժամուայ ընթացքում, ընդունո՞ւմ է արդեօք Հանրապետութեան կառավարութիւնը օսմանեան առաքելութիւնների իրենց բովանդակ ծաւալով:

Ես պէտք է աւելացնեմ նաև, որ այդ երեք օրուայ ընթացքում յարաբերութիւնները մեր երկու կառավարութիւնների միջև կարող են պահել բարեկամական բնոյթ, ա՛յն անտարակէլի պայմանով, որ թիւրք զօրքերի գործողութիւնները կովկասի հարաւում որև է դիմադրութեան չհանդիպին: Ընդունեցէք և այլն. Խալիլ»:

«Սահմանային օրթագրութիւնն» կոչւածը հոգայինն նոր պահանջ էր. թիւրքերն այժմ պահանջում էին Նախիջևանի ու Ախալցխայի գաւառներ, անշուշտ, ագրբէյճանցիների բացայայտ քնւադրանքով:

Իսկ ի՞նչ էր կատարւում այդ միջոցին Թիֆլիսում:

Նոյն օրը, մայիս 26-ին, գումարուեց Սէյմի վերջին, ողբերգական նիստը, որի մէջ վրաց սոցիալ-դեմոկրատ կուսակցութեան պարագլուխներից ի. Մերթվելին աթաւ հետեւեալ յայտարարութիւնը.

«Վրաց ժողովուրդը մնացել է մենակ. նրանից անջատուել են հայերը և կամովին՝ թուրքերը: Անդրկովկասի կեդծ անկախութիւնը խանգարում է նրան վարելու ազատօրէն և իր լիագօր ուժերը գործադրելու իր անկախութիւնը պաշտպանելու համար:

Այս հանգամանքներում մեր պարտքն է ասել վրաց ժողովրդին. —Դու մնացել ես մենակ, չունես պետական կազմ, չունես քո պատերազմութիւնը և, որքան էլ ծանր լինի խոստովանել, դու ապրում ես պատրանքներով. չէ՞ նրանք, չէ՞ Անդրկովկասի միութիւնը և, ուրեմն, եթէ ուզում ես փրկել քեզ, պաշտպանել քո չուները, ինչպես և քո հարեւանների չուները, պէտք է ունենաս քո ինքնուրոյն պետական կազմը:

...Դժբախտաբար, գոյութիւն չունի այլևս անդրկովկասեան միութիւնը և փաստօրէն չկայ մի ընդհանուր ներկայացուցչական կենտրոնական մարմին, ուստի Սէյմը պէտք է յայտարարէ, թէ ինքը հրաժարւում է իր վրա դրուած լիագօրութիւններից ու ցրւի»:

Նախընթաց դէպքերի ուշադիր հետեւողը կը տեսնէ առանց դժուարութեան, թէ Մերթվելիի յայտարարութիւնը սկզբից մինչև վերջ մտացածին փաստերի վրա է հիմնւած. ո՛չ հայերն էին հանկատւել վրացիներից և ո՛չ էլ վրացի ժողովուրդը մնացել էր մենակ: Անդրկովկասի անկախութեան գեղծութիւնը կամ միութեան գոյութիւն չունենալը նոր երևոյթ չէր. նա նոյնն էր, ինչ որ և անկախութեան սկզբում: «Կեղծը» Մերթվելիի մտայնութիւնն էր, այսինքն՝ վրաց վարիչ շրջանների մտայնութիւնը: Նրանք որոշել էին դուրս գալ Անդրկովկասեան միութիւնից և պատրաստ էին փնտռում՝ իրենց տգեղ վարմունքը արտաքին աշխարհի աչքին արդարացնելու համար:

Վրացիների պնդումի վրա Սէյմը ընդունեց մի բանաձև, որը ասում էր. «ի նկատի ունենալով, որ պատերազմի և խաղաղութեան խնդրում երևան եկան հիմնական տարաձայնութիւններ Անդրկովկասի անկախ հանրապետութիւնը կազմող ազգերի միջեւ, որով անհնար է դառնում ամբողջ Անդրկովկասի համար մի հեղինակաւոր իշխանութեան գոյութիւնը, Սէյմը արձանագրում է Անդրկովկասի քայքայման փաստը և յայտարարում չեղեալ իր լիագօրութիւնները»:

Մայիս 26–ի, կէսօրին, լուրեց Սէյմը, իսկ հինգ ժամ յետոյ, նոյն սրահում գումարեց Վրաց Ազգային Խորհրդի նիստը՝ Ն. Ժորդանիայի նախագահութեամբ, որ և բեմադրեց Վրաստանի անկախութեան յայտարարութիւնը:

Նոյն օրը, երեկոյեան, Բաթումում ստացուեց Անդրկովկասի Հանրապետական դաշնային և Վրաստանի անկախութեան յայտարարութեան հեռագրերը: Ն. Ժորդանիան ու Ն. Ռամիշվիլին հեռագրում էին Ջեննկելիին. «Այսօր, կէսօրից յետոյ ժամը 3–ին, Ազգային Խորհուրդը Վրաստանը յայտարարեց անկախ հանրապետութիւն: Վարչապետ է Ռամիշվիլին, արտաքին գործոց նախարար՝ Ջեննկելին: Անդրկովկասեան Սէյմը յայտարարեց իրեն լուծուած, և Անդրկովկասի միութիւնը վերջացաւ»:

Ինչու բէյը անմիջապէս՝ մայիս 26–ի իր վերշագիրը առանձին–առանձին ուղարկեց վրաց, հայկական և ադրբէյնեան պատուիրակներին:

*

Վրացիների վարմունքը սարսափելի կացութիւն առաջեցրեց հայերի համար: Հայ հասարակութեան վրդովմունքը անահման էր: Հայերը, ո՛չ առանց իրաւունքի, նենգ դաւադրութիւն ու դաւաճանութիւն էին տեսնում վրացիների վարմունքի մէջ: Նրանք զգում էին, որ մի վատ խազ է խաղացւել իրենց գլխին: Եւ մայիս 26–ի երեկոյեան, Հայոց Ազգային Խորհուրդը, բաւուն վհկաբանութիւններից յետոյ, ձայների ճնչիչ մեծամասնութեամբ, որոշեց բողոքել վրաց գործիչների ընթացքի և Վրաստանի անկախութեան դէմ: Այդ որոշումը, սակայն, չգործադրուեց յետագայ դէպքերի զարգացման հետեւանքով:

Հայ գործիչների մէջ ժամանակութիւն չկար այդ օրերին: Մայիս 26–ի նիստին մասնակցող Հ.Ազգ.Խորհրդի և Սէյմի անդամները՝ Ա.Ահարոնեան, Պո. Մամիկոնեան, Տ. Բէգզադեան, Ա. Բաբալեան, Ռ. Տէր–Մինասեան և սոցիալիստ–յեղափոխականները վճռական կերպով դէմ էին արտայայտւում անկախութեան: Ս.Կարճիկեանը, Ս.Յարութիւնեանը, Աւ. Շահխաթունեանը, Ս. Վրացեանը, Ա. Երզնկեանը և ուրիշները այլ ելք չէին տեսնում, բայց եթէ Հայաստանի անկախութեան յայտարարութիւնը և, առանց ուշացնելու, հայկական իշխանութեան կազմակերպումը: Հնարաւոր է, որ հայ սոց.–դեմոկրատները, անչուշտ, վրացի սոց.–դեմոկրատների թելադրանքով, թուղթ պաշտպաններ էին անկախութեան և չտապիցնում էին Ազգ. Խորհրդին օր առաջ կատարել անկախութեան յայտարարութիւնը: Նրանք անկախութեան մէջ էին տեսնում հայ ժողովրդի փրկութիւնը:

Այս հարցում էլ առաջին վճռական խօսքն առաջ եղաւ Հ. Ճ. Դաշնակցութիւնը, նրա չարքային ուժերը:

Սէյմի լուծման օրն իսկ, մայիս 26–ի երեկոյեան, տեղի ունեցաւ Հ. Ճ. Դաշնակցութեան Թիֆլիսի ներկայացուցչական ժողովի ու քաղաքին կոմիտէների արտակարգ նիստը, որ ընդունեց հետեւեալ բանաձեւը. «Ի նկատի ունենալով այն, որ Անդրկ. Սէյմի ինքնացրումից և Վրաստանի

անկախությունն յայտարարելուց չետոյ լուծելու է Անդրկ. կառավարությունը, և հայ ժողովուրդը մնալու է բախտի քմծիծաղին՝ ներկայացուցչական ժողովը դառնում է անհրաժեշտ, որ Հայոց Ազգային Խորհուրդը ուժեղացնելով իր կազմը՝ անցնի գործելու. հայությանն կենտրոնում՝ առանձնելով կառավարական ֆունկցիաները, օժտած զինուոռական իրաւունքներով հայ կեանքի բոլոր երեւոյթների և գործերի նկատմամբ»։

Շատ ճիշտ էր վարչկեանի գնահատությունը. — ղէպի՛ ինքնորոշում, ղէպի՛ ինքնակամավորում, ղէպի՛ հայրենի երկիր, ժողովրդի դիրքը։

Մայիս 27–ին Քուրքերի Ազգ. Խորհուրդն էլ որոշեց յայտարարել Ադրբէջանի անկախությունը. վարանումը այլևս անիմաստ էր։ Ինչքերը գահավէժ՝ իրենք էին գալիս ստիպելու անել այն, ինչից մարդկային բանականությունը չամաւորն աչխատում էր խուսափել։

Անկախության յայտարարության վրա պնդում էին և բաժումից վերադարձած ներկայացուցիչները՝ Քալաճունին, Խատիսեանը, Գասպարեանները, որոնք մայիս 27–ի երեկոյեան մանրամասն զեկուցում տուին բանակցութիւնների ընթացքի և Վրաստանի քայլերից չետոյ ստեղծած կացութեան մասին։ Յաջորդ օր, մայիս 28–ին Ազգային Խորհուրդը որոշեց Բաժում ուղարկել Ա. Խատիսեանից, Մ. Գասպարեանցից և Ց. Քալաճունուն՝ նոց բացատրած հանգամանքներում պատւիրակութիւնի՝ տալով նրան բացարձակ լիազորութիւն բանակցելու և հաշտութիւն կնքելու յանուն ամենայն Հայաստանի։ Անկախութեան յայտարարութիւնը, սակայն, նչաս ամբի ուշ, մայիս 30–ին, աւելի արագընթաց ճնշումների տակ, քան Ազգ. Խորհրդի ջոքոր կամքով։

Մայիս 29–ին գումարուեց Հ.Ց.Դ.Արևելեան և Արևմտեան Բիւրօներին, Հ.Ց.Դ. Թիֆլիսի կենտր.կոմիտէի և Սէյմի ու Ազգ.Խորհրդի դաշնակցական հատւածների միացեալ նիստը, ուր մի անգամ ևս քննութեան առնուեց քաղաքական կացութիւնը և որոշուեց Հայաստանը յայտարարել անկախ հանրապետութիւն, կազմել կառավարութիւն միկնուսակցական հիմքերով, մինչև օրինադրական ժողովի գումարումը Ազգ. Խորհուրդն ու կառավարութիւնը տեղափոխել Երևան, որը պէտք է դառնար Հայաստանի Հանրապետութեան մայրաքաղաքը։ Նոյն ժողովում Ց. Քալաճունին նչանակուեց վարչապետի թեկնածու։

Այս ժողովից չետոյ միայն Ազգ. Խորհուրդը արաւ վճռական քայլ և մայիս 30–ին հրատարակեց հետեւեալ յայտարարութիւնը, որը, թէև խակ ատումով անկախութեան հռչակում չէր, բայց դէպքերի բերումով դարձաւ այդպիսին։

ՑԱՑՑԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Անդրկովկասի բազմաճկան ամբողջութեան լուծումով և Վրաստանի ու Ադրբէջանի անկախութեան հռչակումով ստեղծուած նոր դրութեան համեմատ՝ Հայոց Ազգային Խորհուրդը իրեն յայտարարում է հայկական զաւառ-

ձերի գերագոյն և միակ իշխանութիւն: Որոշ ծանրակշիռ պատճառներով թոդճելով մօտիկ օրերը կազմել հայոց ազգային կառավարութիւն՝ Ազգային խորհուրդը ժամանակատրապէս ստանձնում է կառավարական բոլոր փուշկցիաները՝ հայկական գաւառների բաղաքական և վարչական դեկը վարելու համար:

Հայոց Ազգ· Խորհուրդ

1918թ· մայիս 30

Թիֆլիս·

Այսպիսով, Հայաստանի անկախութեան յայտարարութեան օրը խոկապէս պէտք է համարւէր մայիս 30ը: Հակառակ դրան, համաբւում է մայիս 28ը, այսինքն, այն օրը, երբ Ազգ· Խորհուրդը վճռեց հաչտութեան պատւիրակութիւն ուղարկել Բաթում: Անուղղակի կերպով, այս օրն էլ կարող է համարւել անկախութեան սկզբնաւորութիւն, որովհետև թիւրքերը հաչտութեան բանակցութիւններ վարելու համար նախապայման էին դրել անկախութեան յայտարարութիւնը: Ընդունելով թիւրքերի պայմանը՝ Ազգ· Խորհուրդը դրանով իսկ հաստատած էր լինում անկախութեան փաստը:

Այսպէս թէ այնպէս, Հայաստանի Հանրապետութեան ծագման օրը ընդունւեց մայիս 28ը: Այդ օրը դարձաւ նւիրական հայ ժողովրդի համար և մտաւ ազգային տօնացոյցի մէջ, իբրև սրբազան օրերից մէկը:

Մայիս 30–ին, Բաթումում, սկսւեցին բանակցութիւնները օսմանեան և հայկական պատւիրակութիւնների միջև: Մի չարք նիստերից յետոյ, կողմերը եկան համաձայնութեան, և յունիս 4–ին, օսմանեան և հայկական պատւիրակութիւնները, հանդիսաւոր նիստում, ստորագրեցին հաչտութեան դաշնագիրը թիւրքիայի և Հայաստանի Հանրապետութեան միջև: Առաջին միջազգային վաւերաթուղթն էր այդ, որ ստորագրում էին անկախ Հայաստանի ներկայացուցիչները:

Բաթումում ստորագրւած վաւերագրերն էին· — «Խաղաղութեան և բարեկամութեան դաչինքը Օսմանեան կայսերական կառավարութեան և Հայաստանի Հանրապետութեան միջև» և 3 յաւելւածներ, որոնցից առաջինը վերաբերւում էր Քրանգիտին, երկրորդը՝ առւտրին սահմանակից շրջաններում և երրորդը՝ կրօնական ազատութեան պայմաններին: Մի համաձայնութեամբ էլ կարգաւորւում էր վերինների փոխանակութեան հարցը: Նոյն օրը Հայաստանի պատւիրակութիւնը մի համաձայնագիր էլ ստորագրեց թիւրքերի և ադրբէջանցիների ու վրացիների հետ երկաթուղային գոյքերի բաշխման մասին՝ ըստ երկաթուղագծի երկարութեան:

Բաթումի հիմնական դաչնագիրը բաղկացած էր 14 յօդւածներից: Երկրորդ յօդւածը գծում էր սահմանը Թիւրքիայի ու Հայաստանի միջեւ: Պէտք է նկատել, որ մայիս 26–ի վերջնագրի համեմատութեամբ, այստեղ

կայ որոշ տաբերություն. հայ պատերակությանն պնդումի վրա քիւրքերը դիէնցին համաձայու—Աչտաբակ խճուղին, որով մոտ 1000 քառ. կիլոմետր տարածութիւն աւելացաց հայերին թողնած հողերի վրա:

Հայ–քիւրքական սահմանը որոշում էր հետեւեալ կերպով. «Թեև–դիբան լեռների գագաթներով անցնելով՝ սահմանագիծը փոխում է իր ուղղութիւնը դէպի հարաւ՝ անցնելով Ագրիքաբ, Բայբերան, Նուռուհման լեռների գագաթներով: Նուռուհման գագաթից յետոյ չարունակւում է հարաւային ուղղութեամբ և անցնելով չարունակ գագաթների գծով՝ հանդիպում է Ալեքանդրապոլ–Քիքիլիս երկաթուղուն Ագրուլոզ ասանից հինգ կիլոմետր դէպի արեւմուտք: Այստեղից գալիս է գագաթների գծով մինչ Քանւալի ասանը, որտեղից գրեթէ ուղիղ գծով հասնում է մինչև Ալաղեոզի սեւեռաբերգ գագաթը և հետեւելով, գարեաչ ուղիղ գծով, կտրում է Խզմիանին–Մարգարապատ խճուղին երկրաժնից 7 կիլոմետր դէպի արեւմուտք գտնւող կէտում: Ցետոյ, պատյտ է անում այդ քաղաքի շուրջը 7 կիլոմետր տարածութեան վրա, չարունակւում է գուգահեռական ուղղութեամբ Ալեքանդրապոլ–Ջուլֆա երկաթուղու գծին մոտ վեց կիլոմետր տարածութեան վրա այդ երկաթուղուց և 16 կիլոմետր դէպի հարաւ–արեւմուտք Բայբերան ասանից՝ կտրում է այդ ասանից դէպի երկաթուղու գիծը գնացող ճանապարհը: Ցետոյ, չրկում է դէպի հարաւ–արեւելք, անցնում է Ալաղի–Կարապաղլար գիւղից մի կիլոմետր դէպի արեւմուտք Շաղաթլու, Ղարախաչ, Ալաղի–Ջանախչի ասաններով և հասնում է մինչև Էլիխլիչաչը, որով չարունակում է մինչև Ագրիա ասանը: Այս վերջին ասանից խառնւում է Ագրիաչայի հովտի հետ, հասնում է մինչև Կայալու ասանը և հետեւելով գետիզ գետի ընթացքին՝ հասնում է մինչև Ազատաձոն լերան գագաթը. յետոյ անցնում է Ղարատարնա, Ալաչին, Ղարանլիկ լեռների գագաթներով, հասնում է մինչև Ռիլիանչայի իջեւանը, հետեւում է նրա հովտին, մինչև որ հասնում է Ագա ասանից դէպի հարաւ՝ ռուս–պարսկական նախկին սահմանագծի վրա գտնւող Ալիքին ասանը:

Ջորրորդ յօդւածով «Օսմ. կայսերական կառավարութիւնը պարտաւորւում էր գինքի ուժով օգնութիւն հասցնել Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան այն դէպքում, երբ վերջինս կը խնդրէր նրան այդ մասին՝ երկրում կարգը և անդորրութիւնը ապահովելու համար:

Վեցերորդ յօդւածը տեղի էր ունենում երբ Հայաստանում ապրող մահմետական ժողովրդի կրօնական և տնտեսական խնդիրները. տուրքանի անունը պէտք է յիշէր մահմետականների հատուկ հարկերի մէջ:

Եօթներորդ յօդւածը վերաբերում էր հիւպատոսական և առևտրական համաձայնութիւնների կնքման:

Ութերորդ յօդւածում խօսում էր երկաթուղային, բնական հարստութիւնների և տնտեսական հանրային աշխատանքների մասին:

Իններորդում՝ պոստ–հեռագրական, իսկ տասներորդում՝ մի երկրի սահմանամերձ բնակիչների միւս երկիրն անցնելու իրաւունքների մասին:

Ցոդւած 11–րդով «Հայկական Հանրապետութեան կառավարութիւնը պարտաւորւում էր գործ դնել իր բոլոր կանչերը, որպէսզի սոյն պայմանները ստոյգ կատարելուց անմիջապէս յետոյ հեռացնի Բաքու քաղաքից այնտեղ գտնւող հայկական ուժերը և ապահովէ, որ այդ հեռացումը ո՛չ մի ընդհատման տեղիք չտայ:

12րդ յօդուածը չօշափում էր Բրեստ-Լիտովսկի դաշնագրից բխող իրաւունքները:

13րդ յօդուածի համաձայն նեղկայ պայմանագրի սահմաններից դուրս եղող և գրաւուած հողերը պէտք է անմիջապէս պարպուէին:

Ըստ յատկացնելի, Քիւրքերն իրաւունք էին ստանում, պատերազմի դէպքում, Հայաստանի վրայով զօրք փոխադրել, Թիֆլիս-Երեւան-Ջուլֆա երկաթուղով ապահովում էր ազատ երթեւեկութիւնը Քիւրքերի և Հայերի համար, հայ գերի զինուորները իրաւունք պիտի ունենային վերադառնալ Հայաստան, կաթսի և Բաթումի չրջանների հայ գաղթականները կարող էին մի ամսուայ ընթացքում վերադառնալ իրենց տեղերը, մեւս վայրերի գաղթականները՝ դաշնագիրը ստորագրելուց անմիջապէս յետոյ, իսկ Քիւրքահայերի վերադարձի խնդրի լուծումը յետաձգում էր ընդհանուր պատերազմից յետոյ:

Այսպիսով, ըստ Բաթումի դաշնագրի, Հայաստանը դառնում էր անկախ պետութիւն: Ահ ու դողով մտնում էր նա ինքնիշխան ազգերի համակեցութեան մէջ, իրրև ազատ անձնատուրութիւն միջազգային իրաւունք: Նրա հողի տարածութիւնը, մօտաւորապէս, 12,000 քառակուսի կիլոմետր էր, բնակչութեան քիւրը, գաղթականներով միասին՝ մօտ մէկ միլիոն: Եւ... մայրաքաղաքից հեռու՝ նայում էին քիւրքական քղանցքները...

ԳԼՈՒԽ ԺԵ·

ԲԱԳՈՒԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ *)

Հայաստանի Հանրապետութեան նախապատմութիւնը վերջացնելու համար անհրաժեշտ է կանգ առնել և Բագուի դէպքերի վրայ, որոնք թէև Հայաստանի հետ անմիջական առընչութեան մէջ չէին գտնւում, բայց ահագին նշանակութիւն ունեցան նրա ճակատագրի համար· առանց Բագւի Հայաստանի դէպքերը կարող էին բոլորովին այլ ընթացք ստանալ:

Թիֆլիսի Հ· Ազգ· Խորհրդի օրինակով, 1917թ· վերջերը, Բագւում էլ կազմւեց Ազգային Խորհուրդ, որի մէջ մտան Աբր· Դիւլխանդանեան, Վարդան, Ե· Գարունակեան (դաշնակցականներ), Լևոն Ալթաբէգեան (սոց·-յեղ·), Նար· Տէր-Ղազարեան (ս·-դ·), Հայկ Տէր-Մինասեանն և Ս· Տէր Ղազարեան (ժողովրդականներ): Առաջին նիստում, դեկտ· 30-ին, նախագահ ընտրւեց Ա· Դիւլխանդանեանը, փոխ-նախագահ՝ Լ· Ալթաբէգեանը: Ազգ· Խորհրդին, ժամէն իրաւունքով, մասնակցում էին նաև Խոստոմը, Ց· Քալանտարն և թ·-Խախանեանը: Ազգ·Խորհուրդը գործադիր մարմին էր, որ ենթարկւում էր Ազգ· ժողովին՝ բաղկացած կուսակցութիւնների 32 ներկայացուցիչներից: Ցեւագային, Ընդհանրական երկիրը մեկնած Կ· Պալանդեանի տեղ անցաւ Ս·Աբրահամեանը, իսկ Լ·Ալթաբէդեանին փոխարինեց Ց·Տէր-Օհանեանը և, իրրև փոխ-նախագահ, յաջորդեց Ն·Տէր-Ղազարեանը: Լ· Ալթաբէգեանը Ազգ· Խորհրդի աշխատանքներին չարունակեց մասնակցել որպէս հրաւիրւած անդամ: Ազժամահայերի կողմից Ազգ· Խորհրդի նիստերին, փոփոխակի, ներկայ էին լինում Ռ· Քալբերեանն և Զ· Եսայեանը: 1918թ· սեպտեմբերին Ազգ· Խորհրդի մէջ մտան և առաջնորդ Բադրատ եպ·-ը, Մո· Թաղիեանսեանը, Ալ· Վաչեանը և Ա.բր· Դաւտեանեանը:

Ազգային Խորհուրդներ ունէին և Բագւի միւս ժողովուրդները — մահմետականները, ռուսները, վրացիները և այլն, որոնք բոլորն էլ, սկզբի չրջանում, կատարում էին սահմանափակ դեր· իրանց ինքնավարութիւնը պետական հիմնարկութիւնների և բանւորական խորհրդի մէջ էր, որը տիրող ոյժը ոտքի էր պատրաստ էին:

---

*) Այս գլուխը կազմելիս օգտւել եմ Աբր·-Դիւլխանդանեանի ձեռագիր հերոսամարտը վերտառութեամբ եւ վերնագրերով հատուած պատմագրութիւնից, որը, գրքախանութիւն, ես մնում է չհրատարակուած: Նրէն ուսոյ եմ ունեցել և գոր· Գ· Ղորգանեանի շնորհ գիրքը, ինչպէս նաև մի շարք անտիպ նիւթեր ու վաւերագրեր:

1918 Թւի յունւարի կէսերին, Շամքորի արիւնոտ դէպքերից յետոյ, ընդհատւեց երկաթուղային կապը, և Բագուն կտրւեց Թիֆլիսից ու Ղարաբաղից: Բագու–Գանձակ ճանապարհը մնաց Թուրքերի ձեռքը: Պատահաբար անցնող գնացքներով հայերը չէին կարող համբորդել. նրանց հանում էին վագոնից ու տեղն ու տեղը սպանում: Այդ պատճառով, Բագուում կուտակւում էին աւտարւեզրմանական ճակատից տուն վերադարձող հազարաւոր հայ վիւրոները, որոնք անգործ քաշխառում էին փողոցներում, չատ Թչւառ վիճակի մէջ: Նրանց ղեկավարում էին Ղարաբաղից, Գանձակից և հայաբնակ ուրիշ վայրերից հաճող լուրերը հայ–Թրքական ընդհարումների մասին: Բագուում նրանք պայԹուցիկ նիւԹ էին, որ հեչտութեամբ կարող էին գործիք դառնալ բոլչեվիկ և ուրիշ անիչխանական տարրերի ձեռքին: Ուստի, Ազգ. Խորհուրդը իր վրա առաւ նրանց հոգատարութիւնն ու կազմակերպումը՝ նպատակ ունենալով պատրաստել կանոնաւոր դիւուրական մասեր և ուղարկել ռազմաճակատ:

Հայկական զօրամասերի կազմակերպման գործը յանձնւեց Համազասպին: Որոչւեց կազմել 1200 հոգինոց մի գումարտակ: Այս քայլը առաջ բերեց պատակարգ ոգևորութիւն: Աբժանագրւել ցանկացողների Թիւը այնքան մեծ էր, որ չուտով ստեղծւեց 3 գումարտակից բաղկացած 3000 հոգինոց մի զօրամաս, այսպէս կոչւած, Համազասպի բրիգադը: Բացի այդ, Ազգ. Խորհուրդը կազմակերպեց 2րդ հայկական պահեստի գունդը գնդ. Ս. Եղիազարեանի հրամանատարութեան տակ: Այդ գնդի կարիքների համար, մեծ դժւարութեամբ, ստացւեց, ուռւական նախկին 279րդ գնդի զոյքերի մնացորդը: Զօրամասերի հագուստը, սարքաւորումը, ուտելիքը և այլն հայթայթւում էր Ազգ. Խորհուրդը:

Միաժամանակ, Բագւի Ազգ. Խորհուրդը իր վրա առաւ հայկական ներկայացուցչութեան դերը դաշնակիցների, Ռուսաստանի ու Պարսկաստանի նկատմամբ: Ապր. 20–ին նա Մոսկւա ուղարկեց Աբր. Զիլինգարեանին և Սիմ. Ճաւրբեանին՝ յանձնարարելով, որ առաջինը, Լիպ. Նազարեանի հետ միասին, յարաբերութեան մէջ մտնէ Բեռլինի հետ, իսկ երկրորդը աշխատէ Ռուսաստանում: Նպատակն էր՝ ապահովել խորհրդային իշխանութեան ալակցութիւնը՝ կազմակերպելու համար հայկական զօրամասեր, օժտելու նրանց նեւթական միջոցներով ու ռազմամթերքով, ճանապէլ Ազգ. Խորհրդի ներատուրութիւնը, ի հարկին, Թոյլ տալ անգլիացիների մուտքը Բագու և, առհասարակ, օժանդակել Կովկասի ինքնապաշտպանութեան գործին:

Խորհրդ. իշխանութիւնն ընդառաջ դնաց այս դիմումին. Սաալինը մի հրամանով պատճենց հայերի զօրաշարժ կատարել և տուրք գնել հայ հարուստների վրա. խոստացւեց ռազմամթերք և անպաշտօն կերպով համաձայնութիւն տրւեց, որ անգլիացիները մտնեն Բագու: Սակայն, քիչ յետոյ, այս բարեացակամ վերաբերմունքը փոխւեց, և յունիսին արդէն, նոյն Սաալինը, Լենինի անունից, հեռագրում էր Շահումեանին, որ Խորհրդ. Ռուսաստանի սահմանները պէտք է հասնեն մինչև Գանձակ և Բագուն

պաշտպանելի քիւրքերի աբլուխից և որ, պարտութեան դէպքում, բոլշևիկները պէտք է պրեն հանքերն ու հեռանան*)։

Բացի Ազգ. Ժողովի հիմնական նպատակներից մէկն էլ հայ–քրքական յարաբերութիւնների բարւոքումն էր։ Ճակատից փախչող ռուս զօրամասերի ու ռուս գաղթականների վրա գործած յարձակումներին զուգընթաց՝ Թուրքերը ասպատակում ու աւերում էին և հայկական շրջանները, Քաշտուում, կոտորում ու գերում հայերին։ Դեկտեմբերին աւերի ու աւարի ժամանեցին մի չարք հայաթափ գիւղեր Նուխիի ու Շամախիի գաւառներում։ Ցուլս. 2–ին սպանեցին Գանձակի քրքական մասից անցնող 14 հայեր։ Ընդհարումներ տեղի ունեցան և ուրիշ վայրերում։ Շատ յրշանները ճանապարհները փակեցին, և հայերը զրկեցին յարժելու հնարաւորութիւնից։ Օդը օրէցօր ելեկտրականանում էր։

Ազգ. Ժողովրդը, մի չարք խորհրդակցութիւններից յետոյ, որոշեց բանակցութիւնների մէջ մտնել Մահմետական Ազգ. Խորհրդի հետ։ Այդ նպատակով ընտրուեց 6 հոգինոց յանձնախումբ — Ց. Քալանթարեան, Ա. Ջիլինգարեան, Հ. Տէր–Մկրտչեան, Ս. Տէր–Ղազարեան, Լ. Ազատեգեան և Տ. Խաչատրեան — և յանձնարարուեց սկսել բանակցութիւնները։

Ցուլս. 15–ին գումարուեց Հայ և Մահմ. Ազգ. Խորհուրդների ներկայացուցիչների խորհրդակցական առաջին նիստը։ Թուրքերի կողմից մասնակցում էին Մահմ. Ազգ. Խորհրդի նախագահ Ալի Մարդան բէգ Թոփչիբաշևը, Մահմետ Հասան Գաջինսկին, Բեհբութ խան Ջէւանշիրը, Իբրահիմ բէգ Հայդարովը, Ա.Ի.Վեկիլովը և Բ.Ա.Բաթայեւը։ Մի չարք նիստերում քննութեան առնուեցին հետևեալ խնդիրները. ընդհանուր՝ 1) Վերաբերում դէպի ռուս կառավարութիւնը, 2) Ազգերովկասի ապագայ քաղաքական կազմը, 3) Ռազմամասկաի հարցը և պատերազմը վերջացնելու միջոցները, 4) Կովկասի վարչական բաժանումը։ Տեղական՝ 1) Բացի իշխանութեան կազմակերպումը, 2) երկաթուղու և մեւս հանապարհների բացումը, 3) Գաւառների անիշխանութիւնը։ Եւ այլն։

---

*) Ահաւ թերթիմ այստեղ այդ ուշագրաւ գրութեան էական մասերը։ Նամակը գրուած է Յարիգինից, օգ·8–ին և ուղղուած է Շահումեանին։ Ստացիզը գրում էր։ «··· Մեր ընդհանուր քաղաքականութիւնը Ազրերովկասի խնդրում այն է, որ սահմանը վերմանագիծերին պատնեշել հանուիլ, որ վրացական, հայկական և ազրերէյճանան հարցերը Թուրքասանի համար ներքին հարցեր են, որոնց լուծմանը վերմանագիծները չպիտք է մասնակցեն։ Հենց այդ պատճառով մենք չենք հանուում Վրաստանի անկախութիւնը, որ հանուած է վերմանագիծերի կողմից։

2· Հնարաւոր է, որ մենք սահմանը պիտի վերմանագիծերին Վրաստանի հարցում, բայց այդ պիտի լինի միայն պայմանով, որ Գերմանիան յետանէ Հայաստանի և Ազրերէյճանի դործերին։

4· Քէր յանդուգնութիւններ ուրախանում են մեզ, բայց մենք կը կամենայինք, որ վերմանագիծերի հետ բարդութիւններ ունենալուց խուսափելու համար, դուք Գանձակից ուժի հեռու չդնաք, այլապէս չմտնէք Վրաստանի սահմանները, որի անկախութիւնը պաշտպանել հանուում է Գերմանիայի կողմից»։

Եւ ահաւ այժ տալու համար իր խօսքերին, Ստալինը ասելացնում է· «Այս ամբողջ ասածը ընդհանրապէս ո՛չ իրրև իր անձնական կարծիք, այլ որպէս առաջարկ Լենինից, որի հետ նրանք խօսել ուղիղ հեռագրաթելով բոլոր չորեքշաբի հարցերի մասին» (С. Шаумян, «Статьи и речи», 1924, Баку, стр. 224—5)։

Նիսաների ժամանակ պարզուեց, որ կողմերը չատ են հեռու իրարից և ընդհանուր լեզու չունեն. նրանց բաժանում էին և ապրոյին ներկած ձգասուիները, և՛ տարբեր վերաբերումը դէպի պատերազմը, դէպի Թուրքիան ու Ռուսաստանը, և՛ փոխադարձ անվստահութիւնը։ Հորհրդակցութիւնները դրական արդիւնք չտուին։ Ու որովհետև չուզում էին բացել իրար Անդրկ. Սէյմը և խորհրդակցութեան մասնակցող մահմեդական ներկայացուցիչներն էլ Սէյմի անդամներ էին ու պիտի մեկնէին, վճռուեց այդ բոլոր հարցերի քննութիւնը տեղափոխել Թիֆլիս։ Մեկ գործնական օգուտը եղաւ այն, որ որոշուեց մի քանի խոսն պատերազմութիւնները ուղարկել Գանձակ, Նուխի, Ջաւշատ, որոնք մի պահ մեղմացրին արւած դրութիւնը, բայց կարճ ժամանակից յետոյ, կրքերը բռնկուեցին աւելի սուր ժոլեղութեամբ։

Հնուսպնդելով հանգերձ հաչտաբեր ու բարեկամական վերաբերում Թուրքերի նկատմամբ՝ Ազգ. Հորհուրդը ձեռնարկեց չրջանների ինքնապաշտպանութեան կազմակերպման գործին։ Այդ նպատակով դէպք ու ոստամաններ էր հայթայթւում, հայաբնակ վայրերին հրահանգիչներ ու մարտական դեկավարներ էին արւում, կազմակերպւում ու մարզւում էին դէնքի ընդունակ ուժերը։ Հիմնական նպատակն էր՝ որև է բախումի տեղիք չտալ և Թուրքերի գործած յարձակման դէպքում պաշտպանւել։

Միևնոյն ժամանակ, Ազգ. Հորհուրդը ճիգ էր թափում բանակցել երևաքուլին՝ բազում հաւաքւած զօրամասերը ռազմամեկամ ուղարկելու նպատակով, բայց այս ուղղութեամբ կատարւած բոլոր քայլերը անցան ապարդիւն։ Ապր. 13–ին Ազգ. Հորհուրդը վերջին անգամ ևս փոքթոց գաթակատանի ճակատից եկած 500 հայ և վրացի դինւորներին ուղարկել Թիֆլիս. Ալեաթ կայարանից հայերը յետ դարձնին։ Թուրքերը ճանապարհ տուին միայն վրացիներին...

Այդ առթիւ, Ազգ. Հորհուրդը մի անգամ էլ դիմեց Միհմ. Ազգ. Հորհրդին՝ բացատրելով, թէ ինչ վտանգ է սպառնում ձեռնարկների խոնարհը բազում։ Այս դիմումն էլ մնաց անհետևանք։ Նոյն հարցով դիմում արւեց և՛ Սէյմին—արդիւնքը եղաւ նոյնը։ Ազգ. Հորհուրդը զգում էր, որ հազարաւոր հայրենաքաղաք հայ գինւորների արգելափակումը բազում կարող է տալ ազէտաւոր հետևանքներ հէնց բազէ համար, զինամարդկային ոյժ էր թափում այդ գինւորներին հետացնելու համար, բայց չէր յաղողում։ Այդ պայմաններում, գինւորների ներկայութիւնը բազում նպաստաւոր կարող էր լինել միայն բոլշևիկներին. Թուրքերը կուրօրէն բռունցք էին պատրաստում հէնց իրենց դլխի համար։ Նրանց հաշիւն էլ, սակայն, այն էր, որ Թոյլ չտան մի քանի հազար հայ գինւորների մեկնումը ռազմամեկամ՝ Թուրքերի դէմ։

Ի տես այս անտանելի կացութեան և ճակատից հասնող աննպաստ լուրերի, մարտ 3–ի նիստում, Ռուսոմը Ազգ. Հորհրդի առջև դրեց հետևեալ խնդիրները. — ի նկատի ունենալով, որ մեր գրաւիչները օրէցօր ծանրանում է, որ Թուրքերը խաղում են մեզ հետ և աչքաոտում ժամանակ շահել, անհրաժեշտ է կանխել և նախաձեռնութիւնը առնել մեր ձեռքը։ Այդ նպա-

տակով հարկաւոր է. 1) անել ընդհանուր զօրակոչ մինչև 45 տարեկանները, 2) կարուկ քայլերով ապահովել զրամական միջոցները, 3) ռազմաճակատ ուղարկել մեր ուժերի մեծ մասը, 4) ապահովել Քիւնէսը՝ մեր ձեռքն առնելով իշխանութիւնը Բազումի և Գանձակում, որոնք դիմադրութիւն են և ամենաքաջ կէտերը Քիւրեքի:

Ազգ. Ժողովուրդը, հանգամանօրէն քննելով ստեղծուած դրութիւնը և Թուրքերի բացայայտ թշնամական դիրքը՝ ընդառաջ գնաց դրած հարցերին, յայտարարեց զօրաշարժ և մարտ 5-ին ընտրեց գերագոյն գինուորական մարմին՝ բաղկացած Վարդանից, դնդ. Բախտամեանից և գնդ. Ղազարեանից, որոնց դերն էր լինելու վարել ռազմական ինքնապաշտպանութիւնը, գինուորական ուժերի մարգանքը, դիակարութիւնն ու փոխադրութիւնը ուրէք վայրեր: Լուրջ մտահոգուած ժողովրդի ապահովութեան հարցով՝ Ազգ. Ժողովուրդը աշխատում էր պատրաստ լինել ամէն անակնկալի առջև. Նա տեսնում էր, որ Թուրքերը օրէցօր դառնում են սանձարձակ: Փաստեր ունէր իր ձեռքին, որ Թիֆլիսում կայացել էր Թուրք-վրացական գաղտնի համաձայնութիւն, և վրացիները օգնում էին Թուրքերին:

Բազէ հայերի համար անվիճելի էր, որ վրացիներն ու Թուրքերը Թիֆլիսում գործում էին համերաշխ և, հակառուչիկեան պայքարի անուղղակի, նեղ ազգային չահեր էին հետապնդում: Այս հաստատում էր և մուսաւաթականների գործունէութիւնը Բազում ու գաւառներում, ուր մի կողմից նրանք ձգտում էին գրաւել իշխանութիւնը, միւս կողմից՝ քար ու քանդ անել հայկական չրջաններում: Այսպէս, փետրուարին կոտորուեցին Արէչի 4 հայաբնակ գիւղերը, տևողութեամբ Ալչմագի և Լեռնքորանի բնակչութիւնը, գրեթէ համայնային դարձաւ Ղուբայի հայութեան վիճակը: Մարտին Թուրքերը աւերեցին Շամախիի հայկական Քաղը և 20–25 հայ գիւղեր, որոնց մօտ 25,000 մերկ ու անօթի բնակիչները Քաւուղեին Մարալ և միւս ուսեական գիւղերը: Շամախիի և Գեօքչայի հայ ազգաբնակութիւնը բոլորովին կորուեց տրտունքն աշխարհից:

Այս տարին Ազգ. Ժողովրդը բազմաթիւ դիմումներ արաւ Մահմ. Ազգ. Ժողովրդին և Մուսաւաթին, բայց ի զուր: Մուսաւաթը իր ծրագիրներն էր առաջ գլուխ և սուր ընդհարման մէջ էր բանւորական խորհրդի հետ, ուր, Սէյմի գումարումից յետոյ, ազդեցութիւնը բոլորովին անցել էր բոլշևիկներին, Ջամալեանին և Ջահուրեանի ձեռքը: Մուսաւաթը, վնասած վարչի դիմիգեայի վրայ, մեղադրում էր բանւ. խորհրդին ուսեական վհատութեան զգումների մէջ, աշխատում էր քշել ձեկերներին և պահանջում էր, որ իշխանութիւնը յանձնւի տեղական տարրերին, այսինքն՝ Թուրքերին: Իր հերթին, բանւ. խորհուրդը մուսաւաթականներին ամբաստանում էր բեզ-կալեանատիրական, բուրժուական, հակահեղափոխական և համիդեանական մեղքերի մէջ: Դրքերը լարուեցին ծայր աստիճանի ու բախումը դարձաւ անխուսափելի: Փոխարկիչը պայթել մարմին:

Ամիքը մի հատուած գնդ էր. Քրքական վարչի դիմիգեայի դիմադրեցին 120 հոգինոց գինեալ մի խումբ ձկել էր Բազում Թուրք միլիտա-

ակր և յայտնի բարեգործ Թագվեի գինւոր որդու յուղարկաւորութեանը մասնակցելու։ Յուղարկաւորութենից յետոյ խումբը նաւով վերադարձում էր Լենքորան։ Բանս. խորհուրդը բռնութեամբ գինաթախտ արաս նրան, որի տոհմով, մարտ 17–ին, սկսեցին աբխազների ընդհարումները։ Հայոց Ազգ. Ժողովրդոյ այդ դէպքերի ժամանակ մնաց բացարձակապէս չէզոք և աչքաթող հանգցնել աւերիչ հրդեհը՝ միմիոդ հանդիսանալով կուռ կողմերի միջև։

Դէպքերը, սակայն, տարերային մղումով կուի մէջ մտցրին որոշ հայ զօրամասեր, որոնք Բանս. Ժողովրդի կողմից ուղղուեցին մուսաւաթական գինւած խմբերի դէմ։ Դէպքերը դասաւորւած էին այնպէս, որ կա՛մ Բանս. Ժողովրդը պէտք է յաղթէր, կամ Մուսաւաթը։ Վերջինս չարժւում էր Թիւրք գործակալների ծրագրով և անմիջական աշակցութեամբ, որով Մուսաւաթի յաղթանակը պիտի նշանակէր Թիւրքիայի, այսինքն՝ հակահայեացփոխութեան յաղթանակ։ Եւ հասկանալի է, որ Մուսաւաթի դէմ մղւած պայքարում միանգամայն գիտակցորէն համերաշխ էին բոլոր կուսակցութիւնները։ Հ. Յ. Դաշնակցութիւնը, սակայն, հաշւի առնելով հայ–քրքական յարաբերութիւնների փափուկ խնդիրը, դործօն մասնակցութիւն չունէր այդ պայքարում, իսկ Հ. Ազգ. Ժողովրդը չնչ խնայում խաղաղութեան հաստատման համար։

Առանց մտնելու մարտնաւ արիւնոտ դէպքերի մանրամասնութիւնների մէջ, առաջ բերենք մի քանի քաղւածքներ Հ.Ազգ.Ժողովրդի ա՛յն օրերի նիստերի արձանագրութիւններից, որոնք բաւարար յստակութեամբ պատկերացնում են թէ ընդհարումների բնոյթը և թէ Հ. Ազգ. Ժողովրդի քաղաքական ուղեգիծը։

«Մարտ 17–ի երեկոյեան ժամը 8–ին սկսւեց հրացանաձգութիւն. «վայրի դիվիզիա»–յի գինւորների և «կարմիր գաւդուռ»–յի միջև։ Այդ առթիւ Ազգ.Ժողովրդն իր արտակարգ նիստն ունեցաւ և որոշեց միջամտել դադարեցնելու համար արիւնհեղութիւնը։ Ստեղծւած բախումը լուծելու համար որոշեց առաքարկել հակամարտ կողմերին հետևեալը։ «վայրի դիվիզիա»–յի գինւորները յանձնում են իրենց զէնքերը Թուրք ընկերվարական հեռակցութիւններին, իսկ Բանս. և Զինս. Ժողովրդը հրաժարւում է «վայրի դիվիզիա»–յի զէնքերը գրաւելու ցանկութենից։ Յանձնաժողով է Հ. Լ. Աթաթեկեանին դնալ Զինս.–Ցեղափոխական կոմիտէն և յայտնել Ազգ. Ժողովրդի որոշումը։

Բացի այդ, Ազգ. Ժողովրդը որոշեց յանձնաժողով թե՛ Լ.Աթաթեկեանին յայտնելու, որ կուռ կողմերից ո՛չ մէկը չի կարող յոյս ունենալ Հայոց Ազգ. Ժողովրդի գործօն աշակցութեան վրա, որովհետև մեր խորհուրդը դէմ է որև է ընդհարումի և կամենում է, որ փոխադարձ իրաւախոհութեամբ լուծւի դժւարութիւնը»։

«Ազգ.Ժողովրդի մարտ 19–ի նիստում զեկուցւում է գիշերւայ դէպքերի մասին. բախումը թէև յաղթուեց երկկ հարթել Թուրքերի գիշերմով, բայց այսօր մեծ խլրտում կայ Թուրքերի մէջ. քաղաքի զանազան մասերում Թուրքերը կազմակերպել են միխինգներ, որոնց հանած բանաձևերը բնաւ հաշտարար չեն։ Թուրքերը վերջնագիր են ներկայացրել Զինս.–Ցեղափ. Մարմնին՝ պահանջելով յետ տալ գրաււած զէնքերը։ Դրութիւնը շատ լուրջ

է, և ընդհարումը անխուսափելի է թուում, եթէ ժեռք չառնեն արտակարգ միջոցներ։

Ազգ. Ժողովրդը երկար քննութիւնից յետոյ որոշեց. 1) Ձեռք առնել բոլոր միջոցները, որ ընդհարում տեղի չունենայ՝ ազգերով երկու կողմերի վրա։ 2) Եթէ անհնար եղաւ ընդհարման առաջն առնել, ժեռք առնել բոլոր ինքնապաշտպանական միջոցները, որ հայ ազգաբնակութիւնը ընդհարման ժամանակ չտուժէ։

Երեկոյեան դէմ, ժամը 6–ին, չնայած ժեռք առնուած բոլոր միջոցների, ակսից հրացանաձգութիւնն։ Կռիւը սկսողը եղան Թուրքերը Շեմախինկայում,*) ուր յաջակում գործեցին կարմիր գւարդիայի մի խմբի վրա։ Այդ ազգասէր եղաւ կուի ամբողջ քաղաքում։ Շուտով սկսեցին կրակել և Թնգանօթները նաւերից։ Նկատի ունենալով, որ սկսած արիւնահեղ կռիւը անխուսափելիօրէն կարող է ազէատուր հետևանքներ ունենալ ամբողջ քաղաքի համար, Ժողովրդը իր արտակարգ նիստում որոշեց մի անգամ ևս մէջամտել՝ ազդելու համար երկու կողմերի վրա, որ դադարեցնեն կռիւը։

Որոշեց յանձնարարել նախագահին (Ա. Գիւլխանդանեան), Ս. Աբաթաեանին և Ն.Տէր–Ղազարեանին՝ խօսելու այդ նպատակով Ձինւ.–Ճեղափ. կոմիտէի հետ, իսկ թէ. Լ. Ազաթէլեանին, Տ. Իսախանեանին, Հ. Տէր–Մինասեանին և Ա. Զիլինգարեանին խօսել Թուրքական կոմիտէի հետ։

«Ճակատ (մարտ 20–ի) նիստում զեկուցում են ընտրած երկու պատգամաւորները իրենց աւաքելութեան անյաջողութեան մասին։ Կարդում է արդէն, որ Ճեղափ. կոմիտէի զօրքերը ամրոյծ գնի վրա առալ են չարժուում, և Թուրքերը նահանջում են սարասիանաբար։ Նկատի ունենալով այն հանգամանքը, որ քաղաքում հաւաքած չատ հայ անկազմակերպ դիւռորներ և մասամբ Ազգ. Ժողովրդին ենթակայ որոշ հայ դիւռորներ սարերային կէտերով դուռ ունեն մասնակցելու կուին, որոշեց ամենակարուչ միջոցներ ժեռք առնել, որ Ազգ. Ժողովրդին ենթակայ ոչ մի դիւռոր չմասնակցի կուին, և բոլոր հայկական զօրամասերը մնան ինքնապաշտպանական դերի մէջ։

2) Նկատի ունենալով այն հանգամանքը, որ կուի ժամանակ թաղամասերի մէջ Թուրքեր ենթարկում են չարձակման և որ այդ կատարում է հայկական թաղամասում, չաճախ, հայ դիւռորների կողմից, որոշեց կարուել միջոցներ ժեռք առնել հայ թաղամասերում ապրող կամ ապաստանած Թուրքերին Ժողովրդի հովանաւորութեան տակ առնելուց։ Այդ նպատակով որոշեց նչանակել Դ. Ամանունին ընդհանուր հոգաբարձու և լիազորեց [illegible] տալ նրան հաւաքելու Թուրքերին որոշ ապահով տեղերում ու [illegible] նրանց, մինչև որ վտանգը կը վերանայ, որից յետոյ բոլորն էլ կը փոխադրուեն Թուրքական մասը։ Այդ նպատակով պէտք եղած դիւռորական ո[illegible] Ազգ. Ժողովրդը որոշեց տրամադրել հոգաբարձուին։ Եթէ պատահարաբար Թուրքերի վրա որև է չարձակում լինի, որոշեց դիմել ծայրայեղ միջոցների՝ կանգ չառնելով նոյնիսկ զէնքի գործածութեան առաջ»։

«Ճեղափ. ժամը 3–ին Թուրքերը ընդունեցին Ձինւ.–Ճեղափ. կոմիտէի վերջագիրը։ Հաչտութեան նպաստելու համար որոշեց յանձնարարել Ս. Աբաթաեանին գնալ Ձինւ.–Ճեղափ. Կոմիտէ, ներկայ լինել հաչտութեան բնդման ժամանակ և հարկ եղած պարագաներում ցոյց տալ հաչտութեան գործը դիւրացնելու համար։ Որոշեց տալ Աբաթաեանին յետևեալ դիտողութիւնը, եթէ պէտք լինէր, յայտնելու, որ Հայոց Ազգ. Ժողովրդի Բարոյն մասնաճիւղն էս պատրաստ է ընդունել Թուրքերին ներկայացած վերջնագրի այն կէտը, որ վերաբերում է զգալի զօրամասերին»։

*) Բազում բրիտանի մէկ բառը։

Մորուսրը երիտասարդ գրաչից հրացանագործութիւնը, քաշանը և կոտրածը կանգնելու խնդրով: Չնայած հաշտութեան կնքուան և յաջողութեան, հրացանագործութիւնը չարտադրուում է և քանակը առանում ահաւոր չափերը: Թուրքերը չափազանց վատնողաբար կերպարանք կը տանային, եթէ Մորուսրը գործ չդներ հերթական ջանքեր՝ քաշանի և հրացանագործութեան առաջն առնելու համար: Որոշուց հրացանագործի անուն ալ բոլոր գիւղացիներին, որոնք, հակառակ բոլոր նախազգուշացումներուն, կը չարտադրէին գրաչով քաշանով կամ հրացանագործութեամբ: Որոշուց կուին վերջ գնելու համար յանձնարարել նահապետին և համազասպին գնալու առանձին գերդաստանը և անմիջապէս ազդելու գիւղացիներէն վրան, որ գործադրեցնեն կրակը, եթէ նոյնիսկ թուրքերէն կողմէ հատ ու կնճռ հրացանագործութիւն լինէր: Որոշուց հաստատուեցաւ մի կոչ, որով Ազգ. Մորուսրը հրաւիրում էր հայ քաղաքացիներին ամենախիստ կարգապահութեան՝ սպառնալով ամենածանր պատասխանատուութեան ենթարկել դանգատներին: Որոշուց կարգը պահպանելու համար քաղաքի հայկական մասը վրան նշանակել մի լիազօրաւոր հսկիչ, այդ պաշտօնը յանձնուեց Լ. Քալանթարեանին, իսկ վերջինիս հրաժարելուց յետոյ՝ Գ. Բալայեանին: Այդ նպատակով նշանակուեցին հայկական բոլոր քաղաքապետերի վրա նոյնպէս հսկիչներ:

Բացուէ Ազգ. Մորուսրդի նախագահ և համազասպ ամբողջ գիւղերը գրաւած էին Մորուսրդի որոշումներն իրագործելով — պատրաստեցնել անիւխանուելիները, կուիլ և հրդեհը: Ի մի կենտրոնացուցին բացուում գտնուած Հ. Ց. Դաշնակցութեան լաւագոյն մարտիկները՝ թէով մի քանի հարիւր հոգի. Համազասպ զօրամասից առնուցին մի քանի վաստակի և կազմապահական ենթարկուած վաշտեր: Գիւղերը ժամը 4-ին այդ զօրամասերը բռնելու էին այն սահմանագիծը, ուր կուիւ էր տեղի ունենում Մորուսրդին իշխանութեան և Մուսաւաթի միջև: Այդ զօրքերը թոյլ չտիւտ տային գինուած մարդկանց մի մասից միւս մասը անցնելու. Քրքանան մասից եղած հրացանագործութեան չսլիտի պատասխանէր:

Այդպէս էլ արուեց: Հայկական զօրամասերը բռնեցին գիւղերը կուռղ երկու կողմերի միջև: Այս գրութիւնը տեւեց գիւղերում ժամը 4-ից մինչեւ 21 մայիսի ցերեկուայ ժամը 12-ը:

Այդ երկու կողմերը վերջ տուին հրացանագործութեան, Քրքանան մասը ամբողջապէս ծածկուած էր ծխով. առաջնահերթաբար սկսեցին գուրս գալ կանայք, երեխաներ, երիտասարդներ, պառաւներ՝ իւրաքանչիւրը ձեռքին բռնած փայտի կտոր՝ վրան սպիտակ լաթ՝ ի նշան հաշտութեան: Այսպիսով, Քրքանան համարեա ամբողջ մասը դուրս եկաւ և յայտնեց իր հնազանդութիւնը: Հայ գիւղերները չարժուեցին նրանց ընդառաջ, խաղուեցին իրար, և մի օր առաջուայ հրացանագործութեան տեղ այժմ լսուում էր լաց ու կռաուչ, արցունք ու համբոյր:

Այսպիսով, վերջ ստացաւ մի քանի օր տեւող մղձաւանջը, և քաղաքը խաղաղեց:

Այս կռիւներում, Թուրքերի գնդակով, սպանուեց Լ. Աբաթէկեանը, որ, իբրև անդամ Ազգ. Մորուսրդի պատւիրակութեան, գնում էր Քրքանան Քաղը՝ բանակցելու համար: Լ. Աբաթէկեանի մահով Բագուի Բանւորական

Ռուսերը և Հ. Ազգ. Ռուսերը կորցնում էին իրենց ամենաձեռնհաս ու գործօն անդամներից մէկին:

Մարտեան դէպքերի առթիւ Հ. Ազգ. Ռուսերը հրատարակեց մի ընդարձակ հաղորդագրութիւն, որի մէջ տալիս էր դէպքերի մանրամասն նկարագրութիւնը:

Այս հաղորդագրութիւնից երևում էր, որ Ազգ. Ռուսերը ապառեց բազմաթիւ մահմեդականներ, որոնց պահել մի քանի օր, կերակրել և ապահով վերադարձրել իրենց տները: Այդ մահմեդականները գտնուած էին հետևեալ վայրերում. Մայիլեանների Քատրոնում՝ 3500 հոգի, որոնցից 70 պարսկահպատակներ. Ռեկորդ Քատրոնում՝ 2690, Ռամկէյ Քատրոնում՝ 579, Եփիմովի կրկէս-Քատրոնում՝ 800, Վոկզալնայա և Տէլեֆոննայա փողոցի անկիւնի տունը՝ 58, Բուլգարների դպրոցի շէնքում՝ 218, Միքոռովի քաղնիքում՝ 306. Մոսկովեան քաղնիքում՝ 263, ութերորդ միլիցիատունը՝ 117, եօթներորդ միլիցիատունը՝ 72, Մալայա-Մորսկայա փողոցի № 15 տունը՝ 95, երրորդ Գիմնազիայում՝ 201, Հայոց Կուլտուրական Միութեան տունը՝ 18, քաղաքային սայլանոցում՝ 2530, իններորդ միլիցիատունը՝ 200, Հայկաստանում՝ 79 — ընդամէնը 11,726 հոգի: Մօտ 1500 մարդ էլ ապաստանել էր հայերի մօտ առանձին տներում: Ահաւասիկ, Բագուի հայութիւնը ցոյց տուեց արտակարգ հոգատարութիւն: Նա, կարելի է ասել, փրկեց Բագուի Թուրքերի ամբողջ մտաւորականութիւնը: Եւ.... վերջաւորութիւնը ստացաւ վեց ամիս յետոյ, սեպտեմբերեան օրերին:

Մուսաւաթի ողնաշարը կոտրելուց յետոյ, Բանս. Ռուսերը ձեռք առաւ և գաւառի թուրք-մուսաւաթական գաւերի անձահարման գործը: Մարտ 27-ին Շեմախի ուղարկեց մի զօրամաս Ծադ. Ամիրեանի գլխաւորութեամբ, որի երևալը հեմնովին փոխեց գրութիւնը Շեմախիում: Ամբոխը զսպեց քաղաքի թուրքերին. կուռ ժամանակ հեծելից այրուց Թրքական թաղը: Հայ գաղթականները վերադարձան իրենց տեղերը, իսկ թուրքերը հեռացան: Ռազդուց նաև Գէոքչայի գաւառը, որտեղ թրքութիւնը նոյնպէս հեռացաս:

Մարտի դէպքերի վրա, Բագուն գրաւելու փորձեր արին և լեռնականները, որոնք փետրուարից սկսած՝ կորել էին Բագու—Պետրովսկ երկաթուղին և ասատ դէնք ու ռազմամթերք խլելով վերադարձող ռուս զօրամասերից՝ անվերջ յարձակումներ էին գործում իրենց լրջապատի վրա: Մարտ 21-ին Նրանց դիմած խմբերը հասան մինչև Բալախը, իսկ Նրանց պնո խմբ Գանձնակի Պետրովսկից ուած հետագիծերով պատռում էր պատժել հայերին: Ապրելի սկզբներին, սակայն, հայկական զօրամասերը լրջեցին ու քշեցին Նրանց խմբերը: Այս յաջողութիւնը խիստ բարձրացրեց հայ գինուորների բարոյական ոգին,

Ազգային Ռուսերը որոշեց համախմբել ու կազմակերպել բոլոր հայ զօրամասերը, ենթարկել նրանց մէկ հրամանատարութեան և այդ որոշումը իրագործելու համար յարմարութեան մէջ մտաւ. Զինւ.-Ցեկոպ. Խոմիակի հետ, սակայն, մարտի յաջողութիւններից արբեցած՝ բոլշեիկները

արդէն այնքան էին երես առել, որ մտածում էին Ազգ. Ժողովրդն ու Հ. Ց. Դաշնակցութիւնն էլ մէջտեղից վերացնելու մասին: Ի պատասխան Ազգ. Ժողովրդի դիմումի, Զինւ.–Ցեղապ. Կոմիտէն, ապր. 8-ին, յայտարարեց բոլոր ազգային օրգանները և հայկական Ազգ. Ժողովրդը լուծած: Վերջինս մերժեց ենթարկուել այդ կարգադրութեան, բայց, ի վերջոյ, ստիպուած եղաւ տեղի տալ, և ապր. 14-ին Զինւ.–Ցեղ. Կոմիտէի ու Ազգ. Ժողովրդի մէջև ստորագրուեց մի համաձայնութիւն, որով՝

«1. Հայկական 2րդ ապգ. հետևակ գունդը կազմալուծւում է. նրա մի մասը մտնում է Համազասպի գումարտակների մէջ, իսկ մնացածը Ժողովրդի կարմիր գումարտակների մէջ.

2. Համազասպի գումարտակները վերակազմւում են՝ ամբողջովին ենթարկւելով Ժողովրդի իշխանութեան և մտնում են կարմիր բանակի մէջ «16րդ և 17րդ գումարտակներ» անուն տակ.

3. 16րդ և 17րդ գումարտակների հրամանատար է նշանակւում Համազասպը, իսկ օգնական՝ Սերգո Մանուչարեանը...

4. Համազասպի գումարտակները նպատակ ունեն մօտիկ ապագայում դործողութիւնները սկսելու արևմտեան ուղղութեամբ, այսինքն՝ դէպի Գանձակ–Երևան»:

Համաձայնագիրը ստորագրեցին Ս. Շահումեանը, Մ. Կորկանեանը, Ա. Գիւլխանդանեանը, Ն. Տէր–Ղազարեանը և Ց. Տէր–Օհանեանը:

Այսպիսով, հայկական զօրամասերը ապր. 14-ից անցան բոլշևիկների ձեռքը: Նրանց թիւը հասնում էր 10–12 հազարի, 30-ի չափ թնդանօթներով: Նրանց մէջ էին հաշււում և Հ.Ց.Դաշնակցութեան ու սոց.–յեղափոխական մարտական խմբերը, որոնք փաստօրէն գտնւում էին այդ կուսակցութիւնների դեկավար մարմինների ձեռքին և հրապարակ էին բերւում միայն արտակարգ դէպքերում: Դաշնակցական զօրամասը բաղկացած էր 6—700 ընտիր մարտիկներից՝ Գ. Բալասանի հրամանատարութեան տակ:

Ապր. 25ին իշխանութիւնը վերջնականապէս անցաւ բոլշևիկներին: Այդ օրը բանւորական, գինւորական և նահանտական խորհուրդների համագումարը կազմեց Բաղուի ժողովրդական Գործավարների Ժողովուրդ՝ Ստ.Շահումեանի նախագահութեամբ: Միւս կուսակցութիւններն ու ազգային խորհուրդները յետ մղւեցին, թէև, անուղղակի կերպով, Հ. Ազգային Ժողովրդը չարունակում էր ազդեցութիւն ունենալ գործերի և հայկական զօրամասերի վրա: Առհասարակ, զօրքի կազմն ու դեկավարութիւնը հիմնական փոփոխութեան չենթարկւեց. գինւորական գործավար և ընդհանուր հրամանատար էր բոլշևիկ Ղորդանեանը, նրա սպայակոյտի պետ՝ գնդ. Ալեխսեանը, հայկական զօրամասերի պետ՝ Համազասպը, ճակատի հրամանատար՝ գնդ. Ղազարեանը, բանակի մատակարարման մասի վարիչ՝ Մ. Տէր–Պօղոսեանը և այլն:

Հայկական զօրամասերի վրա ձեռք դնելուց յետոյ, բոլշևիկները ձեռնարկեցին գինւորական ուժերի վերակազմութեան ու լրացման: Բայց այդ միջոցին հանգիստ նստած չէր և Քիշմաին: Նուրի փաշան Գանձակում կազմակերպում էր հռչակաւոր «իսլամական բանակը» թիւրք սպաների

ԲԱԺՈՒՆ ՀԵՐԻՈՒՄՐԱՐՏ



ՈՒՈՒՏՈՒ



ՈՏ ՀՈՂԱԲԵՐԵԱՆ



ՈՐ ՏԼՐ ՄՈՂԱՄՈՒՆԻՆ



ՀԱՄԵՄԱՏՈՒՄ

դիմավարությանը տակ՝ նպատակ ունենալով գրաւել Բագուն և առաջնալ դէպի Հիւսիս ու արեւելք։ Ծունիսի սկզբներին Գանձակ հասան և Քիւրք կառնաւոր զօրամասեր։ Ապրիլեանի կառավարութիւնը, դեռ Քիֆլիսեից, ուժեր էր հաւաքում Բագուի գրաւման համար։ ոտքի էին հանւած բոլոր զօրամասերն ու զինւած խմբերը և ուղղւած Բագուի վրա։ Նրանց առաջատը մասերն արդէն սկսել էին երկալ Հաջի-Կաբուլի մօտերը։ մի ուրիշ քիչ յարժւում էր դէպի Շամախի։ Անհրաժեշտ էր չտապել՝ նախապատրաստելու քիչմանուն չտալու համար։ Եւ Զինւ.-Ճեզաքոմ. կոմիսէն որոշեց անցնել վճռական գործողութիւնների — յետ չպրտել Քիւրքերին Հաջի-Կաբուլից և գրաւել ռազմական տեսակէտից կարևոր Ազսու-Քիւրդամիր գիծը՝ մօտ 160 կիլոմետր տարածութեամբ։

Ծունիս 5-ից Բագուի զօրքերը անցան յարձակման և մի շարք տաք ու յաջող ճակատամարտներից յետոյ, մինչև յունիս 26, գրաւեցին մի կողմից Կարամարդիան—Քիւրդամիր—Զուլոյկա և միւս կողմից՝ Զուլոյկա—Գեորգաւլովսկ գիծերը, այսինքն՝ աւելի, քան նախորոշւած էր արշաւանքի սկզբին։ Քիւրք-ադրբէյանեան ուժերը, ծանր կորուստներով, քաշւեցին յետ։ Բագուեցիների ձեռքը անցաւ Հարեւան ամբ-Քահաօներ ու գեղացիներ, հրացան ու փամփուշտ։ Կուի դաշտում մնացած դիակների քիւրը հաշւում էր հարիւրներով։

Ծունիս 25-ին յայտնի դարձաւ, որ Քիւրքական մի դիվիզիա չարժւում է դէպի Գէոքչայ, մի ուրիշն էլ՝ Նուխիի ուղղութեամբ և որ իսլամ բանակի սպայակոյտը փոխադրւում է Ուչարի կայարանը՝ աւելի վճռական գործողութիւնների գիծելու համար։ Բագուի հրամանատարութիւնը որոշից չեզոտակի հաւանծով խանգարել այդ ծրագիրը, և յունիս 27-ին չարժւեց Ուչարին ու Գէոքչայը գրաւելու դիտաւորութեամբ։ Սկսեցին կատաղի կռիւներ։ Ծունիս 27-28-ին Քիւրքերը մեծ զոհեր տալով՝ նահանջեցին և յունիս 29-ին անցան հակայարձակման։ 3 օրւայ արիւնահեղ կռիւների մէջ յաղնած, անօթի ու ծարաւ՝ դէրպանց ուժերի ճնշման տակ՝ Բագուի զօրամասերը սկսեցին նահանջել դէպի կարամերգևան՝ իրենց հետ տանելով և Գէոքչայի Հայ ազգաբնակութիւնը։

Այդ օրւանից Նախաձեռնութիւնը անցաւ Քիւրքերի ձեռքը։ Բագուի ուժերը օր աւուր հալչում էին. յունիս 10-ից սկսած նրանք կորցրել էին 7 սպայ և 265 զինւոր սպանւած, 16 սպայ և 534 զինւոր վիրաւոր։ Անառողջ կլիման, չրի պակասութիւնը, անբաւարար սնունդն ու հազուստը զարգացնում էին հիւանդութիւններ ու դասալքութիւն։ Մարտիկների թիւը, որ արշաւանքի սկզբին 4,400 էր, իջել էր 2,400-ի։ Այդ պատճառով, յուլիս 1-ից սկսած տեղի ունեցաւ անընդհատ նահանջ, որի ընթացքին քշմարին յարժակումներ էր կործում, աշխատում անջնել Քիւրքերը, կուի էր բռնւում բազեցիների հետ։ Ծուլիս 6-ին Բագուի ուժերը կանգնեցին Շամախի—Կարաասախկալ—Քիւրդամիր գծի վրա։

Ծուլիս 5-ին Գաբսկաստանից Բագու հասաւ գեղ. Բիլէթսխովը իր զօրամասով և նշանակւեց Բագուի պաշտպանութեան պետ, որ խիստ բարձ-

բացեց մարտիկների տրամադրությունը: Ցուլիս 8-ին Բիչերախովի զորամասը յասկ կռիվներ ունեցաւ Քիւրքամիրի ճակատում: Նոյն օրը Քիւրքերը յարձակեցին Շամախիի վրայ, բայց հանգիպելով սաստիկ գիմադրութեան: Ցուլիս 9-ին, բազուեցիները անցան հակայարձակման, և Քիւրքերը լուռի կորուստներ կրելով և խոշոր ատար Թողնելով՝ նահանջեցին: Ցուլիս 11-ին բազուեցիները գաղաթեցրին հետապնդումը՝ վերագրաւելով Շամախիի դիւղերը: Նոյն ժամանակ կռիւներ սկսեցին և Բագուի զօրքերի ձախ թեւում ու կենտրոնում: Երեք օր տևող ճակատամարտներից յետոյ՝ բազուեցիները չկրնացան ու յետ քաշուեցին՝ թունելով Կերաբ կայարանը: Ցուլիս 20-ից սկսեցին մի չարք նոր արիւնահեղ կռիւներ: Բագուի ուժերը նահանջեցին Շամախիից էլ: զօրքի հետ հեռացաւ և չրկնան ամբողջ հայ բնակչութիւնը: Թայլ առ թայլ, անվնաս կռիւներով՝ յուլիս 26-ին զօրքն ու ժողովուրդը հասան մինչև Ասլզպատ, իսկ կենտրոնի ուժերը՝ մինչև Ալեաք՝ ճանապարհին ոչնչացնելով ամէն ինչ:

Ցուլիս 26-ին խարբսիեամբ, լքելով իր դիրքերը, Դեբրենի չրջանը փախաւ զնչ. Բիչերախովը՝ տանելով հետը իր զօրամասը: Նոյն օրը Հայոց Ազգ. Ներկայացը Քիւրքերի արևելեան ճակատի պետ Մուրսել փաշայից ստացաւ մի գրութիւն, որով առաջարկում էր վերջ տալ կռիւն և քաղաքը յանձնել իրեն:

Միւս կողմից, անյաջողութիւնները ճակատում չարունակւում էին: Ցուլ. 27—28-ին Քիւրքերն արդէն քաղաքի տակ էին՝ Բերի–Հէյրաթում ու Խալաչաքում: Մի գրամ ևս, և Բագուն կընկնէր: Ցուլ. 28-ի գիշերը ժողովրդի մէջ ծայր էր տուել խուճապը: Հայերից և օտարներից ոմանք պատրաստում էին յանձնել քաղաքը:

Դրութիւնը դառնում էր յուսահատական: Ի՞նչ պնել, ո՞ւմ դիմել: Ռուսաստանից յոյս չկար: Մուսլինն ինքը, զոր յանձնեց, Քահրամանին ինդրում էր Շահումեանից համէն կերպ (գէնդով, մաղթով) օդնել Թուրքստանին, որի գլխին անպլիացիները, Ռոլինսոնի և Ալշանխոտնի վրայով, աշխատում են վատ խալ խազալ»: Միաում էր աղօտ հաւանականութիւն օգնութիւն ստանալ «լրրրող ուժից» անգլիացիներից, Պարսկաստանի վրայով: Եւ այդ հարցը դրուց բանս., գինս., նաւաստ. և գիւղացիական խորհուրդների պատգամաւորների և չբնակչեի խորհուրդների, նաւաչին կամխեների ու կովկասեան կամքեր բանակի Ռազմա–Գիզաքոխ. Համէնէի արտակարգ նիստում, յուլ. 27–ին: Շահումեանը մի ընդարձակ ճառով աչխատեց համոզել, որ անգլիացիներին հրաւիրելը հաւասար է յեզափախութեան պարտութեան, որ, ասելի լաւ է հաշտութիւն կնքել Քիւրքերի հետ, բայց անգլիացիների հրաւիրելու մտքից յետ կեռնալ: Սակայն և այնպէս, ժողովը մեծամասնութեամբ, ընդդէմ բոլշեվիկների, որոշեց օգտուել անգլիական ուժերից: Փաստօրէն այդ որոշումը խորհրդային իշխանութեան վերջն էր, բայց ժող. Գործ. Ներկայացը մի քանի օր էլ չհրաժարեց և, ամենքից գաղտնի, սկսեց ուղղակի փախուստի պատրաստութիւններ տեսնել: Ցուլիս 28–ից մինչև 30, գիշերները, նաւերի վրա փոխադրեցին

Ներկայացուցչական ժողովրդավարության ինստիտուտների զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (1991–2020 թթ.)

Եւ նոյն օրն էլ հեռացան։ Փախչողների մէջ էին, բացի Շահումեանից, և մի շարք ուրիշ հայ կոմունիստներ՝ Սմբ. Մարգարեանը, Աբո. Կարինեանը, Գ. Ղորղանեանը, Ս. Տէր-Գաբրիէլեանը, Ա. Ծովհաննիսեանը և ուրիշներ։

Բոլշևիկների փախուստից յետոյ առնգնուց նոր իշխանութիւն — Բազուի դիկտատուրան, որի մէջ մտան սոց.-յեղափ. Վէլոնցի ու Լ. Ջամանկին, դաշն. Ալ.-Առաքելեանն ու Ս. Մելիք-Եօլչեանը և 3 նաւաստիներ կապից նաւատորմիղից։ Դիկտատուրայի առաջին գործը եղաւ ռազմանաւեր ուղարկել ու յետ բերել փախստական բոլշևիկներին և նրանց տարած ապարը, որը և կատարուեց յաջողութեամբ։ Նաւերը վերադարձուեցին և բոլշևիկները բանտարկուեցին։ Նրանց դէմ յարուցուեց դատական հետապնդում։

Դիկտատուրայի ղեկավար մտաւորականութիւնը, սակայն, ճակատ էր, ուր դրութիւնը օր օրի վրա վատանում էր։ Պատերազմի ծանրութիւնը առանձնապէս ընկած էր հայերի և մանաւանդ, Հ. Յ. Դաշնակցութեան վրա, որ լարել էր ուժերը ճակատը պահելու համար։ Յուլիս 30-ի դիշերւայ նիստում Հ.Յ.Դ. բազուի կենտր. կոմիտէն քննեց ստեղծած ահարկու կացութիւնը։ Ելք չէր գտնւում։ Նոյնիսկ Թոստովը, որ, սովորաբար, յուսահատել չգիտէր, լսարել էր։ Ցանկարծ, պատմում է Ս. Մելիք-Եօլչեանը իր յուշերի մէջ,*) «դուռը բացւեց և սոց.-յեղ. Մելքայել Տէր-Պօղոսեանը ներս մտաւ՝ խնդրելու, որ Թոստովը դուրս գնայ։ Հարևան սենեակում Տէր-Պօղոսեանը յանձնել էր Թոստովին Պաքւոյ կապալի ենթակայ քաղաքից ստացած նոր ռադիօ-հեռագիրը, որով յայտնւում էր, թէ անգլիական հինգ հազարանոց մի զօրամաս այնտեղ պատրաստ է նաւեր նստելու և Բազուին օգնութեան հասնելու, եթէ մինչև քաղաքը երկու օր պաշտպանեն և պահեն։ Թոստովը վերադարձաւ բոլորովին փոխուած։ Նա, կարծես, նորին յարութիւնն էր առել...»։

Հ.Ազգ.Ժողովրդի ներկայացուցիչ Ս.Արշաուհեանի ջանքերի արդիւնքն էր այդ։ Հ. Ազգ. Ժողովրդը Աբշերանեանին ուղարկել էր Պաքւոյ տա՝ անգլիացիների հետ բանակցելու և Բազու բերելու համար։ Նրան յաջողուել էր համոզել անգլիական հրամանատարութեան՝ Բազու ուղարկել անգլիական զօրամասեր։ Այդ լուրն էր աւետում ռադիօ-հեռագիրը, որ անթելականելի ազդեցութիւն առաջ բերից Բակւում։ Հ. Յ. Դաշնակցութիւնը մի յատուկ կոչով զօրակոչ յայտարարեց և ճակատ ուղարկեց մի քանի հազար կուռնիներ։ Առաջուր դիրքերը գնացին և Մուրատ ու Սևպուէր, որոնք, յուլիսի վերջերին, Վոլգայի ափերից, հասել էին Բազու։ Եւ սկսեց յամառ դիմադրութիւն։

Օգոստոս 2-ին թիւրքերը նորից անցան կատարի յարձակման, այս անգամ Գաչլի Դրունքի չորհանում, և յամառ կռիւներից յետոյ առաջացան մօտ 500 քայլ։ Յաջորդ օր, Քնդաճօքների դրոտում էին ամբողջ ճակատի վրա։ Թիւրքական զրոհները իրար էին յաջորդում։ Բազուեցիները պաշտ-

---

բաց, իսկ դաշնակցականների հասցէին ուղղուած մեղադրանքը՝ ակների զրպարտութիւն։ Պատմական փաստերը բոլորովին հակառակ դեր են վերագրում դաշնակցականներին ու բոլշևիկներին։

*) «Հայրենիք», ամս., 1925թ. № 9, էջ 71։

պահում էին արտակարգ քաջությամբ. մեկը միւսի յետևից ընկնում էին լաւագոյն մարտիկները՝ Մուբարը, 16րդ դումարապետի հրամանատար Աբամ Դովլաթեանը, հեծելազօրի պետ Իսակը։ Վիրաւորների թիւը չատ մեծ էր...

Օգոստ. 4-ին թիւրքերը սկսեցին կենտրոնացնել իրենց ուժերը, և Հ. Ազգ. Ընդհուպը ստացաւ Մուրսել փաշայի երկրորդ, այս անգամ սպառնական, նամակը՝ քաղաքը յանձնելու պահանջով։ Նոյն օր Բագու հասաւ գնդ. Ստոկօը մի քանի տասնեակ անգլիացի գինուորներով և լուր բերից, որ իր յետևից գալու են 5000 անգլիացիներ։ Այս լուրը Բագուի պաշտպաններին նոր ոյժ ներշնչեց։ Եւ կռիւը չարունակւեց յուսահատ վճռականութեամբ։

Օգոստ. 4-ի գիշերը, թիւրքերը փորձեցին պատուել բագուեցիների չղթան և օգոստ. 5-ի լուսաբացին արդէն գրաւել էին Բիբի-Հէյբաթը։ Նրանց թնդանօթների ռումբերը ընկնում էի հայկական քաղաքամասում։ Աբիւնահեղ կռիւներ էին տեղի ունենում և միւս ճակատների վրա։ Բագուեցիները լարում էին իրենց վերջին ճիգը։ Հ. Ց. Դաշնակցութիւնը ճակատ ուղարկեց իր բոլոր ուժերը։ Թոստոմը չբերում էր դիբթից դիբք և քաշւելեբում կուղղներին։ Հ. Ազգ. Ընդհուպը իր բոլոր անդամներով աշխատում էր առաջ գնացքի։ Հրամանատարները անձնական քաջութեամբ իւ էին տալիս մարտիկներին։ Անձնահատելի ծառայութիւն էր մատուցանում և Նաւերի հրետանին։ Օրհասական վայրկեան էր. մա՛հ կամ ազատութիւն — ուրիշ ելք չկար։

Առաւօտեան ժամը 10-ին բագուեցիների մի գօրամաս յանդգնեց անցնել Քչնամու Քիփուչը. մեծամասնակ հակայարձակում սկսեց և ճակատից ու Քևերից։ Թիւրքերը առնւեցին երկու կրակի մէջ և, 3 ժամ յետոյ, արդէն փախչում էին գլխակորոյս՝ Թողնելով մօտ 1000 դիակ, 16 գնդացիր և մեծ քանակութեամբ ատար։ Շատ լուրջ էին և բագուեցիների գոհերը. 14 սպայ և 415 գինուոր սպանւած ու վիրաւոր։ Սպանւեց և Համազասպի օգնականը՝ Սերգօն, Բագուի հերոսամարտի ամենափայլուն մարտիկներից մէկը։ Ծանր վիրաւորւածների մէջ էր Մարտին Շաքիրեանի որդին՝ ուսանող Ռուբէնը, որ Քեդաօթամէից էր և ռումբի պայքունից կորցրեց մէկ ոտքը, մէկ աչքը, ծնօտը, բայց և այնպէս փրկւեց և ապագայում չարունակեց ծառայել Հայաստանի բանակում։

Օգոստ. 5-ին, երբ Քչնամին արդէն փախել էր, Բագու հասան և անդլիացիները, և մինչեւ օգոստ. 19 իրենց ուժերը հասցրին 2,700-ի, որոնցից 200-ը յետ գնաց, իսկ 150—200 հոգին կռիւներում սպանւեց կամ գերի ընկաւ։ Անգլիացիների գալը առաջ բերեց խիստ դժգոհութիւն Բագուի մահմետական և, մասամբ, ռուս ապստամբականների ու բոլշևիկների մէջ։ Գաղաքում սկսեցին երեւալ ռուսերէն կոչեր ու թռուցիկներ՝ «Կորչե՛ն հայերը, ջա՛ղ հայերին», «Կեցցե՛ թիւրքիան և Ռուսաստանը և այլ նշանաբաններով։

Օգոստ. 5-ի կռիւներից յետոյ, աւելի քան 3 շաբաթ, տիրեց խաղաղութիւն. թիւրքերը սպասում էին օգնական նոր ուժեր՝ պատրաստւելով վճռական գործողութեան։ Սկսեցին վերակազմել ու համախմբել իրենց

ուժերը և բազուկները։ Օգոստ. 5–ին Դիվիսաուրեայի կողմից ընդհանուր հրամանատար նշանակվեց զոր. Դակուլայնը. զինուրեական գործերի վարիչ՝ զոր. Բազդասարեան։ Սակայն, անդլիացիների հետ կարելի չեղաւ ուժերի ներգաշնակութիւն և ընդհանուր դիւանագործութիւն առալ բնթել։ Ներանք, զոր. Դընստերվիլլի հրամանատարութեան տակ, գործում էին բոլորովին անկախ։ Ներանք բունեցին ալ ճակատի 63 կիլոմետր հատուածը մասը։ Զոր. Դընստերվիլլը, առհասարակ, մասլլ աչքով էր նայում յաղթանակի հնարաւորութեան և հէնց սկզբից իրեն պահում էր այնպէս, որ ամենքը զգում էին, թէ առալին իակ լուրջ վտանգի դէպքում պիտի Բաղեի ու հետևայ։

Օգնական ուժեր սառնալուց և վիրակապելուց յետոյ, օգոստոս 29–ին, Քիւրքերը անցան յարձակման, անդլիացիների գրաւած ճակատում։ Վերջիններս ուժգին դիմադրութիւնից յետոյ՝ Քողին դիրքերի մի մասը։ Մեպտ. 1–ին Քիւրքերի համար յաջող յարձակումներ սկսեցին և ալ Քեռաւ։ Զոր. Դընստերվիլլը յայտնեց Դիվիսաուրային, որ դրութիւնը անյոյս է և պէտք է Քիւրքերի հետ բանակցութիւններ սկսել՝ պատսպարուելու վերջնանպատակ համար։ Դիվիսաուրան միաձայնութեամբ մերժեց այդ առալիքները և պատասխանեց, որ անդլիացիք մեկնեն ճակատ՝ սպառնալով, հակառակ պարագային, Քեռանօրի կրակի բանել նրանց նաւերը։ Անդլիացիները համակերպեցին։ Գործերը չարունակուեցին անընդհատ։ Քշտամին գանդաղ, բայց հաստատուն քայլերով մօտենում էր քաղաքին։

Մեպտ. 13–ի առաւօտեան, մօտ 3000 Քիւրքեր ու տեղացի մահմետականներ՝ ձիաւոր ու հետևակ՝ զրահ ուսին Մուրնիսների չրջանում և մինչեւ էքս գիշեր աշխատում էին ճեղքել բազուկների ճակատը։ Մեպտ. 13–14–ի գիշերը յարձակումները սկսեցին ամբողջ ճակատի վրա, և լուսաբացին Քիւրքերը գրաւեցին Գայլի Երուսնքի դիրքերը։

Արքենտո վախճանը մօտենում էր։

Մեպտ. 14–ի առաւօտից անդլիացիք սկսեցին Քողնել դիրքերը և նաւ Նտել։ պատրաստուում էին հետևելու թուլեհիների օրինակին. իրենց կաշին ատելի քանդ էր, քան Բազուն ու Բազուի ժողովուրդը։ Ժամը 5–ին նրանք յայտնեցին Դիվիսաուրային, որ հետևում են և առաջարկեցին քաղաքը յանձնել Քիւրքերին։ Հ. Ազգ. Ներկայացը խնդրեց նրանց քախանձագին, որ գէթ 3 օր էլ մնան, մինչև որ կարելի լինի զաղթեցնել ժողովուրդը։ զոր. Դընստերվիլը պատասխանեց. «2 ժամից յետոյ պիտի մեկնենք. ապիտակ դրօշակ բարձրացրէ՛ք»։ Եւ երեկոյեան ժամը 8–ին անդլիական նաւերը հեռացան Գաբալաստանի ուղղութեամբ։

Հայերը մնացին մենակ։ Դիվիսաուրան սկսեց պատւիրակութիւն պատրաստել հաշտութեան բանակցութիւնների համար։ Միւս կողմից, նաւերն էին բարձում ժողովուրդն ու զինուորները։ զօրամասերը քայլ առ քայլ նահանջում ու հետացում էին ծովափին։ Մրոշ մասեր, սակայն, չկարողացան հետանալ դիրքերից և մինչև վերջին վայրկեանը կռւելուց յետոյ՝ քոռուեցին կամ դերի ընկան։

Սկսած 15-ի առաւօտեան, Ագգ. Ժողովրդի անդամները, ինքնապաշտպանութեան կազմակերպիչներն ու զինավարները, զինուորներն ու քնակչութեան մի մասը, նաւերով, հեռացան Բագուից՝ ամանք դէպի Պարսկաստան, ամանք դէպի Գեորգիևսկ, ամանք Կրասնովոդսկի կողմը: Վերջին նաւ նաւոտղն էր Բագուի հերոսամարտի ոգին՝ Ռոստոմը՝ մոայլ, ընկճած ու յուսահատ...

Իսկ քաղաքում, այդ մէջոցին, սկսուում էր Մեծ Եղեռնը: Մահմետականն խուժանը թափուում էր ամէն կողմից: Հասան Ազրբէջանի կառավարութեան ներկայացուցիչներն էլ: Եւ երեք օր չարունակ, ամէն կողմ, կատաբեց սպանութիւն, թալան, բռնաբարութիւն և աննկարագրելի զազանութիւն. էնվէրի ու Թալէաթի աշակերտները սերտում էին իրենց վարպետների տուած դասը...

Թիւրք կառնաւոր զօրքը քաղաք մտաւ միայն սեպտ.16-ի երեկոյեան, և այդ ժամից զանգւածային թալանն ու կոտորածը վերջ գտաւ: Անհատական սպանութիւնները, սակայն, ձերբակալութիւններն ու կողոպուտը, այնուհետև էլ չարունակւեցին. հայերը Ազրբէջանում դուրսից օրէնքից դուրս:

Որքա՞ն էր Բագուի զոհերի գումարը: Ագգ. Ժողովրդի նախագահ Ա. Ֆիւլխանդանեանը այդ մասին տալիս է հետևեալ թւերը. սպանւածներ՝ 5,248 հոգի, անյայտացածներ՝ 3,572, գերւածներ՝ 3,396, բանտարկւածներ՝ 253, առևանգւածներ՝ 571, բռնաբարւածներ՝ 288:

Բ. Իշխանեանը իր կատարած վիճակագրութեան վրա յենւելով՝ հաղորդում է ուրիշ թւեր.*) սպանւածներ՝ 9,029, անյայտացածներ՝ 3,586, գերւածներ՝ 4,246, բանտարկւածներ՝ 253, առևանգւածներ՝ 1,142, բռնաբարւածներ՝ 572: Բացի այդ, Իշխանեանը հաստատում է, որ Բագուի 32,000 փախստականներից 10,235 հոգին մեռել է զանազան վայրերում: Եղել են և այլ կարգի մահացութիւններ: Զոհերի համագումարը Իշխանեանը ցոյց է տալիս 29,060, Բագուի 89,541 հոգի հայ բնակչութեան 32,45%:

Հայերի նիւթական կորուստը Իշխանեանը հաշւում է 945,724,017 րուբլի:

«29,060 հոգի մարդկային զոհեր և 945,724,017 կամ մօտ մի միլիարդ րուբլու նիւթական վնասներ ու կորուստներ — ահա Թիւրք-Քաթարական բարբարոսութեան և արիւնոտ բռնակալութեան արդիւնքը սեպտեմբերեան մեծ սարսափների օրերին» — եզրափակում է Բ. Իշխանեանը:

Ահա ա՛յս էջաղաքական հասունութեան վկայականով Ազրբէջանը ձեռք էր պետական անկախ կեանքը:

---

*) Բ. Իշխանեան, «Բագուի Մեծ Սարսափները», 1920թ. Թիֆլիս. էջ 184—185, 187:

ՂԿԿԺԿՍՈՏՈՆ

ՈՒՄ ՆՅՈՅԿՅՑ

ԳԼՈՒԽ Ա.

ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐ

Այսպէս ուրեմն, ընդ հարս և ընդ սուր անցնելով՝ Հայաստանը կորչեց անկախ պետական գոյութիւնից: Ծնունդեան ազդակներով ու ծոմերով չընդունեց նրա անկախութիւնը: Ընդհակառակը, չատերի համար նա նախատում էր դժբախտութիւն: Հետևող երեսուն սերունդ մօր պէս, հայ ժողովուրդը գլուխ էր ծնծում ազատը և չընդում սկանչին. «Քոնս իմ ուրախութիւնն եա, զոհ՝ դժբախտութիւնը իմ...»

Աւո՛, արցունքի ու տառապանքի ծովից ծնունդ Հայաստանի անկախութիւնը: Շատերը չէին հաւատում նրան. «անկախութիւն» ու «հանրապետութիւն» բառերը նրանք դնում էին չակերտի մէջ: Եւ այդպէս վարուելու հիմքերը չատ էին զօրաւոր. իրօք որ, զարհուրելի էին պայմանները, և անկախութիւնը այդ պայմաններում հեգնանք էր թւում:

Փաստօրէն հայերի ձեռքը մնացել էր մի փոքրիկ հողաշերտ՝ տարիս 12,000 քառ. կիլոմետր տարածութեան մի երկիր՝ կծկուած ցամաք լեռների մէջ, աշխարհի խուլ անկիւնում, ծանրաբեռնուած գաղթականներով ու որբերով, չբոլորուած տասը երեսուներորդ ինչամիներով, անհոգ, ամեղջ, անօգնական: Սով ու հիւանդութիւն, ատար ու ատեր, լաց ու թշուառութիւն, կատորածի տարափ: Իսկ մեռ կողմ՝ նիվլիբի բանակը յաղթական՝ համաթրքական երազներով տոգորուած, որ Հայաստանի մարմնի վրայով ձգտում էր դէպի Ապշերոն ու Թուրքեստան:

Այսպէս էր դրութիւնը Հայաստանում, իսկ Թիֆլիսում սկզբում էր կատարուել չիմի: Մայիս 26-ից յետոյ հայ-վրացական յարաբերութիւնները լարուել էին նոյր սասիճանի. վրացիները՝ արբեցած իրենց անկախութիւնից ու ազգամանական հովանաւորութիւնից՝ քչնամանքով էին նայում տուռանքի փնչից պոկ չկտղ հայերին, որոնք, իրենց հերթին վրացիներին համարում էին դաւագիր, դաւաճան, իրենց բարեկեցութիւնը հայ ժողովրդի դիակների վրա հաստատող, հայ ժողովրդի գոյութեան քչնամի...

Անկախութեան առաջին իսկ օրից, վրաց կառավարութիւնն ու հասարակական կարծիքը սկսեց պարմանք ու պայքար արտայայտել, որ գիերիշ-խան վրաստանին հողի վրա չարաչանչում է մնալ ասար պետութեան մի քչխանութիւն: Հայերին ուզղուած էին անընդհատ խօսքեր, թէ նրանց տեղը Քիֆլիսը չէ, այլ Երևանը: Եւ ապ այն պահուն, երբ ամեն հաղորդակցութիւն Երևանի հետ կտրուած էր և Լոռիի ու Փամբակի ճորերում քիչերկրեր ու տեղական մահմետականները մաքրագործում էին հայկական գիւղերը:

Մանր էր կացութիւնը: Եւ հէնց որ հաւտարար պատերազմութիւնը բաթումից վերադարձաւ, Հ. Ազգ. Խորհուրդը ձեւնարկեց Հայաստանի կառավարութեան կազմակերպման՝ հրաւիրելով վարչապետութեան Ե. Քալանդարեանին. այստեղ էլ բացւեց անակնկալ դժւարութիւն. ժողովրդական կուսակցութիւնը, մ. Գապաչանեանի գլխաւորութեամբ, կտրականապէս մերժեց Քանդունիի առաջարկը՝ մտնելու նախարարութեան մէջ: Ժողովրդականները բաց արին կատաղի պայքար Հ. Ե. Դաշնակցութեան դէմ՝ պահանջելով, որ սա քաչւի ասպարէզից, և իշխանութիւնը յանձնի իրենց: Երկու հիմնաւորում էին առաջ քաչում նրանք՝ մամուլի ու հրապարակային ժողովի մէջ. նախ՝ Դաշնակցութիւնը, իր վարած քաղաքականութեամբ, առհասարակ, պատասխանատու էր հայ ժողովրդի գլխին եկած աղէտների համար. երկրորդ՝ թիւրքերի հետ ընդհանուր լեզու գտնելու համար անհրաժեշտ էր նոր ոյժ հրապարակ հանել և այդ նոր ոյժը ժողովրդական կուսակցութիւնն էր, որին և պէտք էր յանձնել կառավարութիւն կազմելը:

Դժւար չէր տեսնել, որ նման խնդիրներ յարուցանելիս՝ ժողովրդական-ների մէջ խօսում էր, աւելի չուտ, կիրքը, քան պատասխանատու վայրկեանին, գործից խուսափելու ցանկութիւնը, որովհետև վերջին 10–15 տարւայ ազգային–քաղաքական բոլոր կարևոր գործերում Հ.Ե.Դաշնակցութեան կողքին, իսկ չատ անգամ և նրանից առաջ, քայլում էին հէնց ժողովրդականները:

Բայց վերջին տեսակէտը, անշուշտ, որոչ ճշմարտութիւն պարունակում էր իր մէջ: Ի հարկէ, չատ լաւ կը լինէր, եթէ այդ բոպէին մէջ տեղ գար ազգային մի նոր ոյժ, որ կարողանար, աւելի կամ պակաս ձեռնհասութեամբ, փոխարինել Հ. Ե. Դաշնակցութեան: Այդպիսի ոյժ գոյութիւն չունէր, դժբախտաբար. Հայ ժողովրդական կուսակցութիւնը — թիֆլիսցի ահամանահակ Քւով մտաւորականների ու քաղքենիների մի խմբակցութիւն — այդ ոյժը չէր:

Քաղաքունիի բոլոր ջանքերը՝ միկուսակցական կառավարութիւն ստեղծելու՝ ի դերև ելան. ժողովրդականները յամառ կերպով մնացին իրենց տեսակէտի վրա: Նրանց հաստատակամութեան նպաստում էր և այն հանգամանքը, որ Ազգ. Խորհուրդը չէբացրեց երևանի ու Թիֆլիսի համար յոկ–յոկ կառավարութիւններ կազմելու ծրագիրը. ժողովրդականները չէին ուզում հետանալ Թիֆլիսից:

Ի վերջոյ, երկար բանակցութիւններից յետոյ, Քաղաքունիին յաջողւեց կազմել հետևեալ կառավարութիւնը. վարչապետ՝ ինքը, Քաղաքունին, արտաքին գործերի նախարար՝ Ա. Ջամալեան, ներքին գործերի՝ Ափամ, Երևմտեան՝ Ա. Կարմիկեան, զինւորական՝ Ե. Հախվէրդեան: Վերջինը միայն անկուսակցական էր, մնացեալները անդամ էին Հ.Ե.Դաշնակցութեան:

Կառավարութիւնը կարգադրեց մի շարք ընթացիկ խնդիրներ. Վրաստանի կառավարութեան մօտ դիւանագիտական ներկայացուցիչ նշանակեց Ա. Ջամալեանին. յուլիս 2–ին վրաց կառավարութեան հետ կնքեց հաճաժամանակութիւն 200 միլիոն անդրկովկասեան նոր բոներ բաց թողնելու մասին,

որից 120 միլիոնը պիտի տրվէր Հայաստանին, իսկ ուիսունը՝ վրացիներին. դրից հայկական կորպուսի գոյքերը Երևան փոխադրելու, ինչպէս նաև անդրկովկասեան ընդհանուր գոյքերի բաժանման խնդիրը, կապեր հաստատած գերման, աւստրիական և Թիւրքական ներկայացուցիչների հետ. նշանակեց Գոլոի խորհրդաժողովի անդամներ և այլն։

Բաքումի խորհրդաժողովից յետոյ, Գերմանիայի ներկայացուցիչ գօր. Ֆոն-Քրեսը յայտնեց, որ յունիս 25-ին Գոլոում պէտք է գումարւի մի խորհրդաժողով՝ մասնակցութեամբ Գերմանիայի, Աւստրո-Հունգարիայի, Բուլղարիայի, Թիւրքիայի և կովկասեան հանրապետութիւնների ներկայացուցիչների՝ լուծելու համար կովկասի և Թիւրքիայի միջև առկախ մնացած բոլոր խնդիրները։ Հայ. Ազգային Խորհրդի կողմից այդ խորհրդաժողովին պատրաստւող նշանակեցին՝ Ա. Ահարոնեանը, Ա. Յասրխանեանը և Մ. Փաշայեանները։ Այս վերջինը, որ մեծ էր դաշնակցականների հետ մտնել կառավարութեան մէջ, դաշնակցականների հետ գնաց Գոլիս, իսկ ապագային, ինչպէս կը տեսնենք, նաև Փարիզ։ Յունիս 14-ին պատրաստութիւնը մէկնեց Թիֆլիսից։

Այս բոլոր աշխատանքները ուշացնում էին կառավարութեան մէկինումը, որ ջղայնութիւն էր առաջ բերում ո՛չ միայն վրացիների, այլ և հայ հասարակութեան մէջ։ Երևանից պահանջում էին փութացնել մեկնումը։ Այդ նպատակով նոյնիսկ պատրաստւում էին Թիֆլիս։ Թիֆլիսի մամուլն ու հասրային կարծիքը դատապարտում էին Հ. Ազգ. Խորհրդի ցոյց տւած դանդաղաշարժութիւնը. մեղադրում էին, որ Ազգ. Խորհրդի անդամները չէին ուզում բաժանել Թիֆլիսից, ինչ որ շատ էլ հեռու չէր ճշմարտութիւնից։

Այս միջնորդում Ազգ. Խորհուրդը չէր կարողանում երևան բերել մէկ վճռական կամք։ Իրար յաջորդող նիստերում տեղի էին ունենում բուռն վիճաբանութիւններ, որոնցից պարզ նկատւում էր, որ չատերի համար Երևան գնալը անճանապա անհանդուրժելի խնդիր էր, որ անձնական նկատումները քաղաքական էին սկզբունքային առարկութիւններով։

Ի վերջոյ, Երևան փոխադրելու հարցը կարուկ կերպով դրեց Ազգ. Խորհրդի և կառավարութեան յուլիս 13-ի միացեալ նիստում, ուր կուսակցութեանց ներկայացուցիչներն արին իրենց յայտարարութիւնները. Հ. Յ. Դաշնակցութիւնը պահանջում էր, որ Ազգ. Խորհուրդն ու կառավարութիւնը ամրողջ կազմով անմիջապէս մեկնեն Երևան։ Հայ Ժողովրդական կուսակցութիւնը առաջարկում էր Երևան ուղարկել մի պատրիարքութիւն և կազմել տեղական կառավարութիւն, իսկ Հ. Ազգ. Խորհուրդը, որպես համապետային մարմին և իշխանութեան աղբիւր, պահել Թիֆլիսում։ Սոցիալ-դեմոկրատները, որ առաջ կողմնակից էին Երևան փոխականները առաջարկում էին, որ Ազգ. Խորհուրդն ու կառավարութիւնը գնան Երևան, կազմեն այնտեղ Հայաստանի տեղական իշխանութիւն, ապա Ազգ. Խորհուրդը վերադառնայ Թիֆլիս ու մնայ, իբրև ընդհանուր ազգային իշխանութիւն։ Սոցիալ-դեմոկրատները, որ առաջ կողմնակից էին Երևան

փոխադրություն, այժմ յետ առին իրենց առաջարկը և տատանուում էին անվճռականութեան մէջ։

Այս բոլոր կարծիքները լսելուց յետոյ, Քալաշեանին յանձնարարեց, որ նախ Ազգ. Ժողովրդը մնայ Թիֆլիսում կամ կազմէնն երկու Ազգային խորհուրդներ, ինքը կը հրաժարի վարչապետութիւնից։ Որի վրա, 7 ջհզիզ նախ, որուհետ Ազգ. Ժողովրդն ու կառավարութիւնը սեպտեմբեր 6-ին, Ազգ. Ժողովրդի ներկայացուցիչները, Ս. Ալիխանեանց, Ս. Տէր-Մինասեանը, Ա. Խոնդկարեանը, Ր. Ա. Բաբալեանը, Հ. Այտաճեանը, Ա. Մխիթարեանը և ուրիշներ, այլ և զօրապահակ՝ Պալի Ղազարի գլխաւորութեամբ։ Նրանց հետ գնում էին և երկու դէմտասի սպաներ՝ լէյտենանտ Յոհ Մոմանեանը և օբեր-լէյտենանտ Այդինեանը՝ զոր. Յոհ-Քրեսի ներկայացուցչները, և մի խումբ ասյալ Վէհիբ փաշայի կողմից։

Մեհմետը կատարեց չատ տխուր պայմանները։ Վրացիները, որոնք, առհասարակ, երևելի վարպետներ են հանդիսաւոր ընդունելութիւններ ու հարքի երթ-եր կազմակերպելու, այս անգամ, կարծես դիտմամբ, արել էին ամէն բան, որպէսզի վիրաւորեն հայերի ինքնասիրութիւնը։ Հաւատակ նախօրօք հայերի կողմից արած դէմումի, վրաց կառավարութիւնը ո՛չ մի քայլ չէր արել դիւրացնելու համար գոյք հանրապետութեան կառավարութեան ճանապարհորդութիւնը։ Վրաց կառավարութեան կողմից ոչ մի ներկայացուցիչ չէր եկել կայարան։ Երկաթուղային վարչութիւնը, իր հերթին, անփութութեան թշնամութիւնով, դժուարութիւններ էր հանում. տրամադրել էր մի հին, կեղտոտ ու անյարմար վագոն, կարծես գաղթականներ էին ճամբորդողները։ Մենք դժուարութեամբ կարելի էր եղել արտօնութիւն ստանալ՝ մի-երկու կիսախարխուլ ինքնաշարժ տանելու։ Նաստատացած, դառն զգացումներով հեռացան Թիֆլիսից Հայաստանի վարիչները։ Կարծես, քշնամի երկրից էին հեռանում։ Փոյլի կայարանում վրաց սահմանապահները լրացրին պակասը՝ փորձելով նոյնիսկ խուզարկել Հայաստանի կառավարութեան վագոնը, և միայն դերման ասյալի միջամտութիւնը ազատց այդ խայտառակութիւնից։

Ընդհանուրակը, ինչքան տարբեր էր վերաբերմունք Ազրբէյանում։ Սահմանի վրա հայկական կառավարութիւնը ընդունեց պետական պատիւներով. ընդառաջ էին նկել նահանգապետը և Ազրբէյանի կառավարութեան ներկայացուցիչները։ Ազատաֆայում և Ղազախում արեց պաշտօնական ընդունելութիւն։ Ճաշ էր պատրաստած ի պատիւ հիւրերի։ Թուրք

դիւրացնելը համակրանքով էին դիմաւորում հայ ներկայացուցիչները, որոնք մինչև Հայաստանի սահմանը անցան բաժակաճառական ցոյցերով։

Հայաստանում, համապարբերին, ամէն տեղ Ազգ. Ժողովոյն ու կառավարութիւնը ընդունելին անվերապահ համակրանքով։

Առաջին հանդիսաւոր ընդունելութիւնը Հայաստանի հողի վրա տեղի ունեցաւ Դիլիջանում։ Հանդիսական անձրևոտ եղանակին, ձիաւոր մի հարիւրեակ սպասում էր հիւրերին դիւղից դուրս։ Երբ լսելի եղաւ ամպամռնգի առաջ, որը յատկացած էր հիւրերին դիմելու, դրւում էր պատրաստ պահակ։ Ազգ. Ժողովոյի նախագահի բաճկի վրա գինւորները պատասխանեցին հայերէն. «բարև՛, հազար բարի՛»։ Դիլիջանցիները պատրաստել էին հիւրասիրութիւն և չորեքշաբթի օր, հանդիսաւորութեամբ եանապարհ գրին նրանց։ Ջօրքերը բռնել էին եանապարհի երկու կողմերը։ Ժողովուրդը բարեմաղթութիւններ էր անում։

Մեծ եռեռվիկայում տղ ու հացով ընդառաջ եկան ուրախութիւնների ներկայացուցիչները և գնդ. Սամոյլովին իր գնդով։ Աև. Սահակեանը ընդունեց տղն ու հացը, դնեց գորքը և ողջոյնի խօսք ասաց հաւաքուածներին։

Ելեկտրիկայում խանում էր ահագին բազմութիւն մերկ ու քշտած դաղիականներ։ Ուրս բնակիչները հետացել էին Հիւսիսային Կովկաս և նրանց տները բռնել էին կաթսի, Շերիակի, Ղարաքիլիսայի հայ փախստականները։ Երեկոյի Ազգ. Ժողովոյը ոչոտեղ բաց էր տրել մի հաշտան և մի փոքրիկ էր տալիս ուժի գան 3,000 մարդու։

Ճանապարհին, երեկոյան դէմ հասան Ախտա։ Երեկոից սկսել էին դիմաւորել։ Աքսոր և տեղական կառավարութեան անդամները։ Փողոցի դլխին փակնած էին գորգ ու գինարական նշանակներ։ Աև. Սահակեանը ընդունեց հրամանատարի գեկուցումը. ապա գորամասերը, կանոնաւոր շարքերով, դրօշակները պարզած ու երաժշտութիւնով, անցան Ազդ. Ժողովոյի ու կառավարութեան անդամների առջևից։ Ծառասնը յուզել էր։

Հայկական Կորպուսի ապրանքատը գոր։ Ղարաքրդիանի գինուորական-քեմար հիւրերին ընդունելց Քանաքեռում, ուր պատրաստուած էր քէյֆասեղան, որի միջոցին արտասանուեցին հանդիսաւոր ճառեր։

Ուշ երեկոյան հասան Երևան։ Քաղաքը զարդարուած էր գրօշակներով, դորգերով և կանաչով։ Աղտաճեան փողոցը ճգուած էր բազմութեամբ։ Փողոցի երկու կողմը շարքերով կանգնած էին գորգերը՝ Մարզպետարանի ու Բաշ-Աբարանի հերոսները։ Հրամանատարի գեկուցումից յետոյ հնչեց երաժշտութիւնը և խանդավառ վիճցկ՛ն հագարաւոր բերաններից։

Հայոցարևութիւնը առանձնապէս ջերմ ընդունելութիւն ցոյց ուաց գերմանացի ազատներին։

Երեկոյեան տեղի ունեցաւ պաշտօնական ընդունելութիւն, որին ներկայ էին Թիֆլիսի և Երևանի Ազգ. Ժողովոյների և կառավարութեան անդամները, ռուս, ուկրաինցի ու մահմեդական ազգաբնակութեանց ներկայացուցիչները, պարսկական հիւպատոսը, գերմանական և Քիւրդ ազատները։ Արտասանուեցին բարբի կոզմից տղերի ճառեր, որոնց պատաս-

խանեց Ց. Քաղաքացուն. «Մեր պետութիւնը, ասաց նա, ի մէջի այլոց, կոչուած է ո՛չ թէ հայկական, այլ Հայաստանի Հանրապետութիւն։ Այդ ցոյց է տալիս, որ մեր պետութիւնը հայրենիք է նրա մէջ ապրող բոլոր ժողովուրդների համար»։

Հանդիսը տեւեց մինչև ուշ գիշեր։

Յաջորդ օր սկսեցին պետական աշխատանքները։ Կառավարութիւնը հայրենի հողի վրա անցաւ գործի։

*

Իսկ գործ չատ կար։ Վերից վար պէտք էր կառուցանել պետական մեքենան։ Երկիրը կատարեալ քաոսի և անիշխանութեան մէջ էր — պէտք էր կարգ ու օրէնք հաստատել։ Դաղթականութիւնը մնունդ ու քնակարան էր պահանջում — պէտք էր տալ։ Պէտք էր կարգադրել պարենաւորման ու դրամական հարցերը։ Սահմաններուն վրա ընդհարումներ էին տեղի ունենում, մահմետական խռովութիւնները երկրում չէին վերացած խպատ — պէտք էր հաշտութիւնը գործնականացնել արտաքին ու ներքին թշնամու հետ։ Մի խօսքով, պէտք էր ոչնչից պետութիւն ստեղծել։

Եւ Թիֆլիսից եկած գործիչները երևանում գտնուղների հետ համաձայնեց և համախորհուրդ՝ լծեցին աշխատանքի։

Թիֆլիսի և Երևանի Ազգ. Խորհուրդների մի չարք խոշոր նիստերում վերջնական ձև ստացան Ազգ. Խորհուրդն ու կառավարութիւնը։ Որոշուեց, հակառակ ժողովրդականների քէչի, նուազագոյնի Ազգ.-Խորհրդի անդամների թիւը և հրաւիրել այլազգիների՝ թուրքերի, եզիդների ու ռուսների ներկայացուցիչներին։ Այս ձևով կազմուեց Հայաստանի առաջին օրէնսդրական մարմինը՝ Հայաստանի Խորհուրդ անունով։

Կառավարութեան կազմը պահւեց նոյնը, ինչ որ նշանակուած էր Թիֆլիսում։ Բիչ յետոյ հրաւիրուեց մեայն մի նոր նախարար առևտրաքաղաքականութեան համար՝ տեղական անկուսակցական գործիչներից մէկը՝ Գ. Գևորսեանը։

Հաստատուեց Հայաստանի ազգային դրօշակը՝ հորիզոնական կարմիր, կապոյտ ու նարնջի գոյներով։ Դրօշակի ձևի և գոյների չուրջ եղան բաւական երկար խորհրդակցութիւններ. ի նկատի առնուեցին հայոց պատմական դրօշակները, լուսց հայկարան Ստ. Մալխասեանի հիմնաւորած գեկուցումը հայկական դրօշակի մասին և, ի վերջոյ, որոշուեց ընդունել վերոյիշեալ երեք գոյները՝ պայմանով, որ վերջնական հաստատումը կատարւի Սահմանադիր Ժողովի կողմից, որը պէտք է գումարուէր Հայաստանի երկու հատուածների մեացումից յետոյ։

Ի՞նչ քովանդակութիւն կամ խորհուրդ էր դրւում այդ գոյների կամ դրօշակի ամբողջութեան մէջ։

Առանձին պատգամաւորներ իրենց մտքում ունէին, անշուշտ, որոշ բացատրութիւն, ոմանք հատով էլ արտայայտեցին, բայց Հայ. Խորհուրդը

այդ մասին որև է որոշում չուներ, և գրօշակն իր ամբողջութեան մէջ, գոյներէն ընտրութիւնն ու դասաւորութիւնը, ասէլի չուտ, արդիւնք էր քէմալականութեան պատահականութեան։

Գաղաքամաւորներէն մի մասի կողմից մանաւոր առարկութիւն էր լսուում — գլխաւորապէս գործնական տեսակէտից — նարնջագոյնի դէմ — Հայաստանում դժուար էր այդ գոյնի կտոր գտնել։ Առաջարկուում էր փոխարէնը դնել կանաչ գոյն. ոմանք փաստ էին բերում, որ կանաչը մեր պատմական գոյներից մէկն է։ Բայց նարնջագոյնը առանձնապէս պաշտպանում էր Քալաքանեանն, որ դեկավարուում էր սոսկ գեղագիտական նկատումներով. կարմրերի, կապոյտի և նարնջագոյնի ներդաշնակութիւնը դուր էր գալիս նրա ճաշակին։

Կայէն, սակայն, հայկական եռագոյնի մէջ և գաղափար ու խորհուրդ գնողներ։ Այդ գոյները, կարծես, բնում էին մեր կեանքից, խոհրդանշում էին հայ պետականութեան ծագումն ու ապագան։ Կարմիրը հայ ժողովրդի թափած արիւնն էր. կապոյտը՝ Հայաստանի կապոյտ երկինքը և նարնջի կամ ոսկու գոյնը՝ խաղաղութիւնը աշխատանքի։ Հայ ժողովուրդը, որ արիւնով էր ձեռք բերել իր ազատութիւնը, հայրենի կապոյտ երկնքի տակ, իր համբաւաւոր աշխատասիրութեամբ՝ պիտի վերաշինէր երկիրը և ապրէր ազատ ու երջանիկ...

Հայաստանի Հորհրդի պաշտօնական բացումը նշանակուեց օգոստոս 1–ին։

Երկու օր առաջ, յուլիս 30–ին, Երեւան եկան վերմանական ներկայացուցիչ բարոն Ֆրանկենշտէյնը Հայաստանի դիւ. ներկայացուցիչ Ա. Ջամալեանի և մի քանի պաշտօնի ուղեկցութեամբ։ Կայարանում նրանց ցոյց տուեց հանդիսաւոր ընդունելութիւն։ Երեկոյեան տուեց հացկերոյթ քաղաքագլխի կողմից։

Յաջորդ օր նրանք այցելեցին վարչապետին ու Հայաստանի Հորհրդի նախագահին, ապա մեկնեցին Էջմիածին՝ տեսնելու համար կաթուղիկոսի հետ։ Ժամը 5–ին վերադարձան Էջմիածնից և ընդունեցին Հայաստանի Հորհրդի ու վարչապետի փոխայցելութիւնը և ունեցան նրանց հետ երկար խօսակցութիւն՝ հայկական գործերի մասին։ Նրանց այցելեցին և միւս նախարարները։ Երեկոյեան կառավարութիւնը հացկերոյթ տուեց ի պատիւ հիւրերի, որին ներկայ էին և Երեւանում գտնուող քիւրք պաշտօնը։ Արուսաանեցին Տաճեր։ Դիւրերը Ֆոն–Քրեսը մեկնեց Թիֆլիս, իսկ բարոն Ֆրանկենշտէյնը մնաց Հայաստանի Հորհրդի բացմանը ներկայ գտնելու համար։

Առաջին դիւանագիտական ընդունելութիւնն էր այս Հայաստանի հողի վրայ։

•

Օգոստ. 1–ին, Երեւանի քաղաքային ակումբի դահլիճում, հանդիսաւոր չափ բացուեց Հայաստանի Հորհրդի անդրանիկ նիստը։ Գաղաքը ընդունել էր տօնական կերպարանք։ Փողոցները զարդած էին բազմաթիւ նշաններով։ Ակումբի առջև երկարող շարած էր զօրքը։

Ակումբի սրահը յարմարեցված էր Ազգային Ժողովրդի նիստերին։ Մէջտեղը դրուել էին պատգամաւորները. բեմի վրայ՝ նախագահութիւնը։ Ներկայ էր կառավարութիւնը ամբողջ կազմով։ Ձախ թեւակը բռնում էին Գերմանիայի, Աւստրօ-Հունգարիայի, Թիւրքիայի ներկայացուցիչները, պարոնց հիւպատոսը և ուրիշ մահմեդական ազգ. խորհուրդների ներկայացուցիչները։ Աջ թեւակում նստած էին բանակի հրամանատար գօր. Նազարբէգեանը, գօր. Սիլիկեանը և ուրիշ զինուորականներ։ Մամուլի ներկայացուցիչներին յատկացուած էր առանձին տեղ։ Դահլիճի յետևի մասը և վերնայարկը բերնէ բերան բռնած էին հասարակութեամբ։

Հայաստանի Ազգային Ժողովրդի պատգամաւորները դասաւորուած էին նախօրօք սահմանած կարգով։ Այ կողմը նստած էին Հայ Ժողովրդական կառավարութեան անդամները և մահմեդականները, եզիդները ու ռուսների ներկայացուցիչները։ Կենտրոնում և ձախ կողմի մի մասում՝ գաղնակցականները, իսկ ձախակողմում՝ սոց.-դեմոկրատները ու սոց.-յեղափոխականները։

Հայաստանի անդրանիկ օրէնսդրական մարմնի առաջին նիստը բանալու պատիւը վիճակուեց Հ. Ազգ. Ժողովրդի նախագահ Ա. Սահակեանին։ Ներքին լուսաբեան մէջ բեմ ելաւ նա և արտասանեց բացման ճառը, որը տեղն ու տեղը թարգմանուեց ռուսերէն ու Թուրքերէն լեզուներով։

«Պատգամաւորներ Հայաստանի Ազգային Ժողովրդի։

Գերագոյն Հայոց Ազգային Ժողովրդի կողմից ես պատիւ ունեմ այսօր բաց անել անդրանիկ նիստը Հայաստանի Ազգային Ժողովրդի և յայտարարել, որ այսուհետև սա՛ է միակ լիազօր մարմինը՝ ամփոփող իր մէջ Հայաստանի Հանրապետութեան պետական իշխանութեան։

Այս օրը կը դառնայ մեզ համար պատմական և կը բանայ մի նոր լուսաւոր դարաշրջան մեր երկրասարը պետութեան կեանքում, ինքնուրոյն քաղաքական և տնտեսական զարգացման։

Այս օրը կը մնայ մշտա յիշատակելի և ա՛յն պատճառով, որ առաջին անգամ իրականացած ենք տեսնում մեր նեղ հորիզոնի սահմաններում գեղեցիկ երազանքն ու նուիրական տենչը ինքնորոշման, թէև անհնարին դժուարին պայմաններում։

Ենթարկելով, որ մեր երկրի անկախութեան հարցին չառերը ձեռնից յաւատեղեակ չեն՝ ես յոյժ կարևոր եմ գտնում այս բարձր ժողովին ներկայացնել այն փուլերը, որոնցով անցել է ակզբից մինչև իր վերջին ձևակերպումը անկախ պետութիւններ գաղափարը Անդրկովկասում։

Մեր հանրապետութիւնը, ինչպէս և մեանները, հանդէս եկան իբրև անկախ պետութիւններ ա՛յն օրից, երբ Անդրկովկասեան Սէյմը մայիս 26-ին իրեն յայտարարեց կազմալուծուած։ Վրաց սոցիալ-դեմոկրատ ֆրակցիայի նախաձեռնութեամբ և առաջարկութեամբ նոյն օրն իսկ Վրաստանը յայտարարեց իրեն անկախ։

Անդրկովկասի ամբողջութիւնը փլուզուց յետոյ մեր երկիրը ստիպուած էր իր թաթախին, ուստի Հայոց Ազգային Ժողովրդը չտապաց իր վրա վերցնել կառավարութեան բոլոր ֆունկցիաները։

Հենց այդ ժամանակն էր, որ առաջուց օսմանեան կառավարութեան բոլորին յայտնի վերջնագիրը նոր հոգսերի գլուխներ մեզ էր պահանջում էր պատասխան 48 ժամայ ընթացքում։ Գերագոյն Ազգային Ժողովրդի կողմից

անիմիջապես առանձին պատւիրակութիւն ուղարկեց Բաթում յանձինս Ե Քաջազնուու, Մ. Գազաչեանի և Ա. Խատիսեանի՝ առլով նրանց արտա կարգ լիագօրութիւններ բանակցութիւնները վարելու տաճկ պատւիրակութեան հետ:

Մեր պատւիրակութիւնը յանդգնեցրեց որոշ ուղղումներ մտցնել սահմանների մէջ, բայց և այնպէս ստիպուած էր ընդունել վերջնագիրը և խաղաղութեան գործնէք կեցել վեհերս փաշայի և Խալիլ բէյի հետ: Այսուհետ առաջին անգամ Հայոց Ազգային Սորհրդի պատգամաւորները պաշտօնապէս ճանաչուեցին իբրև ներկայացուցիչներ անկախ Հայաստանի և սորոգրելցին յունիս 4-ի գործերը:

Մեր պետութեան անկախութեան մասին յայտնի է նոյնպէս Տաճկաստանի դաշնակից պետութիւններին՝ Գերմանիային, Աւստրիային, Բուլղարիային: Գոյւում է մեր երկրորդ պատւիրակութիւնը, որի մէջ մտնում են Ա. Ահարոնեանը, Ա. Խատիսեանը և Մ. Պապաջանեանը, որոնք ուղեորուել են այնտեղ օսմանեան կառավարութեան հրաւէրով, բանակցութիւններ վարելու Տաճկաստանի և նրա դաշնակից պետութիւնների հետ:

Այսպիսով, բազմակողմանի ջնջելով մի կողմից երկրի ուժերը և այն հանգամանքները, որոնց մէջ գտնւում է հայ ժողովուրդը, և մեւս կողմից՝ քաղաքական և տնտեսական ստեղծած դրութիւնը, Հայոց Ազգային Սորհուրդը ստիպեց իր սերտ և անողոք դիտակցութեամբ որոշել վերջնականապէս բնդունել վերջնագիրը և ճանաչել Հայաստանի անկախութիւնը՝ իրեն յանձնելով պատմութեան անաչառ դատաստանին:

Այո՛, մեր հանրապետութիւնը փոքր է ու նեղ իր սահմաններով. նա զրկւել է իր ամենաձնահատուկ երկրամասերից ու չի կարող իր մէջ տեղաւորել ամբողջ ազգաբնակութիւնը և, կարծես թէ, պայմաններ չունի անկախ գոյութեան համար: Բայց ես կարծում եմ, որ երկրի սահմանները քարացած չեն կարող մնալ միշտ. ես հաւատում եմ, որ մեր երկրի սահմանները կընդարձակուեն կեանքի երկաթէ ուժով, մեր արդար և անփոխնելի իրաւունքները պաշտպանութեամբ գրաւած հոգամասնի վերաբերմամբ և նոր բարեկամական դաշինքով Տաճկաստանի և նրա դաշնակից պետութիւնների հետ, որոնց ներկայացուցիչները ներկայ են այստեղ: Մենք ընտրել ենք համաձայնութեան և խաղաղութեան ուղին, և ուզում եմ յուսալ, որ չենք սխալւում:

Միեւ այդ, մենք կը կատարենք արդութեամբ և անչեղ կերպով մեր այն պարտականութիւնները, որոնք բխում են խաղաղութեան դաշինքից: Թողնենք ապագայ հետաքրքրները, յամենայն դէպս, այսօր այստեղ առանց տատանուելիների և լիակատար վճռակամութեամբ մենք գտում ենք խափսիր մեր պետական նաւի և դնում ենք հիմքը պետական չէնքի՝ ձգտելով միշտ կատարելագործել նրան ի բարօրութիւն Հայաստանի Հանրապետութեան բոլոր ազգութիւնների, իրրև գաւակների մէկ հարազատ մայր հայրենիքին:

Սահակեանի ճառը լսւեց խորը յուզմունքով: Պատգամաւորները ու հասարակութիւնը, յաճախ, ընդհատում էին նրան բուռն ծափահարութիւններով:

Երբ, էր խօսքն ատարեալուց յետոյ, Սահակեանը արտասանեց՝ «Յայտարարում եմ Հայաստանի Սորհրդի նիստը բացւած», — դուրսը, Սորհրդարանի չէնքի գլխին, բարձրացաւ Հանրապետութեան եռագոյն դրօշակը և հազարաւոր բերաններ արտացէն՝ «կեցցէ՛». նախահարութիւնները Թնդացրին օդը: Հնչեց «Մեր հայրենիքը»-ը: Զօրքը պատւի կեցաւ:

Հայաստանի Հորհրդի անդամների ցանկը յայտարարելուց յետոյ, առց.—չեմ. պատգամաւորների ժեռնպահումքեամբ, նախագահ ընտրուեց Աւ. Սահակեանը (դաշն.), փոխ-նախագահներ՝ Գր. Տէր-Հաչատրեանը (ժող.) և Դ. Զուլբեանը (ս.-յ.): Քարտուղար՝ Գ. Զաքարեանը (անկ.), երկրորդ քարտուղար՝ Ե. Սարգսեանը (դաշ.):

Հորհրդի նիստից յետոյ, զօր. Նազարբէկեանի գլխաւորութեամբ, տեղի ունեցաւ զօրահանդէս, որին ներկայ էին օտար ներկայացուցիչները, Հորհրդի և կառավարութեան անդամները և խուռն բազմութիւն: Զօրքերը, երաժշտութեամբ ու կանոնաւոր շարքերով, անցան հանդիսատեսների առջևից և բարձրացան Ազատաթեան պողոտայով, հասարակութեան աննկարագրելի ցնծութեան ու ծափերի մէջով:

Տեսարանը յուզիչ էր: Շատերի աչքից արցունք էր հոսում: Հայաստանի Հորհրդարան, հայոց կառավարութիւն, հայկական բանակ... երբ չէ՞ր արդեօք:

Հայաստանի Հորհրդի երկրորդ նիստում, օգոստ. 3-ին, վարչապետ Քաջազնունին կարդաց կառավարական յայտարարութիւնը.

«Բացառիկ ծանր պայմանների մէջ է ղործի անցել իմ կազմած կառավարութիւնը: Նա կոչուած է իրականացնելու գործադիր իշխանութիւնն մի պետութեան մէջ, որ դեռ նոր է ծնունդ առել և տակաւին ղուրս չի եկել իր կազմակերպման առաջին շրջանից: Կառավարութիւնը չունի ո՛չ մի յենարան անցեալում. նա չի՛ յոյսդնում նախկին կառավարութեան՝ չարունակելու արդէն ընթացքի դրած պետական աշխատանքը. նա նոյնիսկ չի ժառանգում կենսարոնական իշխանութեան կարիքներին յարմարեցրած պատրաստի ապարատներ: Նա հարկադրուած է սկսելու ամէն բան սկզբից. անձև քաոսի և աւերակների կոյտից նա պէտք է ստեղծի կենսունակ և աշխատունակ մի մարմին:

Միւս կողմից, կառավարութիւնը գտնում է երկիրը այնպիսի վիճակի մէջ, որի բնորոշման համար մի բառ կայ միայն — կատաստրոֆիկ:

Ջորս տարի տևող պատերազմը, մեծ չեղափոխութիւնը, ռուսական զօրքերի անկանոն նահանջը մեր սահմաններից, կայսրութեան տարրալուծումը, պատերազմական ճակատի վրա կրած մեր պարտութիւնները, տերիտորիաների կորուստը, Անդրկովկասի բաժանումը անջատ պետութիւնների — այս խորին ցնցումները չէին կարող չբողնել իրենց հետից ահռելի հետքեր: Տնտեսական կեանքի ու ֆինանսական դրութեան կատարեալ քայքայում, դադարում ապրանքների արգիւնաբերութեան և փոխանակութեան, դժնամերձ ծայր աստիճանի պակասութիւն, ամենահնչաբաժէչտ ատաբկաների բացակայութիւն կամ սոսկալի թանգութիւն, ներմուծման բացարձակ ընդհատում, երկաթուղային հաղորդակցութեան դադարում, երթևեկութեան ուրիչ մի[illegible]ների պակասութիւն, ապա հարիւր հազարներով հաչուող անուն և անձնունդ գաղթականութիւն, անապահով կացութիւն սահմանների վրա և որպէս անխուսափելի հետևանք այս բոլորի—անիշխանութիւն: Ահա թէ ինչպիսի ծանր պայմանների մէջ կանչուել է աշխատանքի իմ կառավարութիւնը:

Այս բացառիկ դրութիւնը նախորոշում է արդէն կառավարութեան բնոյթը: Նա չի կարող ձգտել բազմակողմանի ու լրիւ գործունէութեան, չի կարող ունենալ լայն ծրագիր և ամէնատևական ու ամենահնչաբաժէչտ ուժ մխիթարական անյետաձգելի խնդիրների:

կասեցնել քայքայման պրոցեսը, հանել երկիրը անիշխանութեան վիճակից ու առեղծել պետական չինարարութեան համար պայմաններ — ահա թէ ինչպէս է ըմբռնում իր կոչումը ներկայ կառավարութիւնը:

Հաւաստիացն սրան, կառավարութիւնը դնելու է լուծման հետեւեալ խնդիրները·

Ա· Ներքին գործերի սահմանների մէջ·

1· *Հաստատել երկրում տարբական իրաւակարգ, կեանքի ու գոյքի ապահովութիւն:*

2· *Բանալ հաղորդակցութեան ճանապարհները անարգել երթեւեկութեան համար:*

3· *Վերականգնել պոստ–հեռագրական նորմալ հաղորդակցութիւն թէ երկրի մէջ և թէ հարեւան պետութիւնների հետ:*

4· *Եռանդուն մխիթարների դիմել կարելոյն չափ մեղմացնելու պարենաւորման տագնապը:*

5· *Ջնջոթեել գաղթականների և փախստականների վիճակը, մասամբ վերադարձնել իրենց տեղերը, մասամբ տեղաւորել նոր վայրերում:*

6· *Նախապատրաստել Հայաստանի Սահմանադիր Ժողովի հաւաքումը կարելոյն չափ չուտ:*

Բ· Ֆինանսների սահմանների մէջ·

Հոդ պատրաստել սեփական դրամական սիստեմի հիմքը դնելու համար: Ջեռնարկել անհրաժեշտ միջոցներ, որպէսզի երկիրը ապահովի դրամական նշաններով, վերականգնի արդիւնաբերական կեանքը և ապրանքների փոխանակութիւնը, ինչպէս նաև մշակի հարկերի առողջ սիստեմ:

Գ· Արդարադատութեան սահմանների մէջ·

Յարմարեցնել դատարանը երկրի քաղաքացիական իրաւահակացման և իրաւական սովորոյթների պայմաններին՝ միաժամանակ մասնակից անելով քրէական դատավարութեանը ժողովրդի ներկայացուցիչներին:

Դ· Զինուորական գործերի սահմանների մէջ·

Վերակազմել երկրի զինուորական ուժերը՝ նպատակ ունենալով առեղծել թէև ոչ մեծ, բայց ոգով ու կարգապահութեամբ ուժեղ բանակ:

Ե· Արտաքին գործերի սահմանների մէջ·

1· *Ամբացնել օսմանեան կառավարութեան հետ հաշտութիւնը և բարի դրացիական յարաբերութիւններ հաստատել նրա հետ: Ետին կատարել այն բոլոր պարտականութիւնները, որ մենք յանձն ենք առել օսմանեան կայսրութեան հանդէպ ու հետևել, որ օսմանեան կառավարութիւնը իր կողմից անի նոյնը մեր վերաբերմամբ: Մասնաւորապէս լուծել օսմանեան գօրքերի մեր երկրից դուրս բերելու հարցը և գաղթականների վերադարձը:*

2· *Ազգբէլեանի և Վրաստանի հետ փոխադարձ համաձայնութեան գալով՝ լուծել Հայաստանի և այլ պետութիւնների սահմանների հարցը՝ հիմք ունենալով ազգագրական սկզբունքը, իբրև միակը, որ համապատասխանում է ռամկավար պետութիւնների ոգուն ու նպատակներին:*

3· Լիկվիդացիայի ենթարկել, համաձայնության գալով Ազգբչնակի և Վրաստանի հետ, ընդհանուր հիմնարկությունները և գույքը, որ մնացել են Անդրկովկասեան հանրապետությից։

Այս է կառավարության ծրագիրը։ Սա կարելի է անւանել պետության գոյությունը ապահովող ամենաանհրաժեշտ գրաւականների ծրագիրը։ Պարզ է, որ նա չի ընդգրկում երկրի բարձրագոյն կարիքները իրենց ամբողջությամբ, որ նրա սահմաններից դուրս մնում են մի շարք կարևոր և արդեն հասունացած խնդիրներ։ Բայց կառավարությունը չի գնում հերքել այդ խնդիրները, որովհետև նրանց լուծումը այսօրւայ պայմանների մէջ համարում է անկարելի։ Կառավարությունը չի ուզում սխալների մէջ դնել երկիրը լոյն հեռանկարներով և անիրագործելի խոստումներով, չի ուզում վերցնել իր վրա պարտականութիւններ, որոնց կատարումը վեր է իր ուժերից։ Կառավարությունը համոզւած է, որ իր առաջադրած ծրագիրը մաքսիմումն է այսօրւայ հնարաւորութեան։ Կառավարությունը լսելու է իր ամբողջ ոյժն ու կարողությունը այդ մաքսիմումին հասնելու և յոյս ունի յաջողությամբ լուծելու դրւած խնդիրների զոնէ մի մասը, եթէ իր կողմն ունենայ Ժողովրդի անվիպաչ վստահութիւնն ու գործօն աջակցութիւնը»։

Ֆայսդոնների յայտարարութիւնից յետոյ, անմիջապէս խօսք առաւ Հ.Ժ.Դաշնակցության ներկայացուցիչ Սմբ. Խաչատրեանը, որ, ընդհանուր առմամբ, կառավարության ծրագիրը դտաւ ընդունելի և խոստացաւ իր կուսակցության վստահութիւնը։

Երկրորդ ճառախօսը՝ սոց.—յեղ. Ա.Ռոճդեբութեանը՝ կառավարության յայտարարութիւնը գտաւ ընդհանուր և անբովանդակ, անհամապատասխան անգրաքնիկ կառավարութեան կշռուածին. վերապահութիւն չունենք կառավարական գործունեության և քաղաքականի ապատութիւնների մասին։ Ա.Ռոճդեբութեանը առանձնապէս խիստ քննադատեց յայտարարութեան քաղաքականութեան մասը՝ զարմանք յայտնելով, որ նրա մէջ ոչ մի խօսք չի ասւած Ռուսաստանի մասին։ Եւ եզրափակեց, թէ կառավարական յայտագիրը սոց.—յեզափոխականներին չի գոհացնում, ուստի նրանք որոշել են սպասել գործի։

Ընդհակառակը, հայ ժող. կուսակցության կողմից գրաւոր ճառ կարդացող Ա. Մխիթարեանը գտնում էր կառավարական համեստ ծրագիրը միանգամայն գոհացուցիչ։ Աւելին, տիրող պայմաններում, կարելի չէր պահանջել։

Մրագրից գոհ էին և մահմետականների ներկայացուցիչն ու ռուս պատգամաւոր Ա. Զորինը։ Վերջինս, սակայն, անհրաժեշտ էր գտնում առաջ բերել աւելի սերտ գործակցութիւն ռուսների հետ։

Սոց.—դեմոկրատների կողմից խօսեցին երկու հոգի՝ մենշևիկ Հ. Ազատեանը և բոլշևիկ Ա. Մելիքեանը։ Երկուսն էլ դէմ արտայայտւեցին Հայաստանի անկախութեան և կառավարական ծրագրին*)։

---

*) Այստեղ պէտք է յիշել, որ սոց.—դեմոկրատ պատգամաւորները Հայաստանի հարցերի մասով էին ճշմարիտ դեռ ևս համառուսական մեծ պահող, բայց վաղուց վրաց Սոցիալ-Դեմոկրատ կուսակցութեան կողմից։ Հ. Ազատեանի լիազորագիրը ստորագրել էր Նոյ Ռամիշվիլի։ Սոց.—յեղափոխական պատգամաւորները ճշմարիտ էին իրենց կուսակցութեան Անդրկովկասեան կոմիտէի կողմից։

Օգոստ. 6-ի նիստում Ց. Ֆալիզունին պատասխանից եղած քննադատություններին: Նա յայտնեց, որ ինքը գիտակցաբար խուսափել է լայն ու անիրագործելի խոստումներից և կառավարական ծրագրի մէջ դրել է միայն օրւայ հրատապ կարևորութիւն ունեցող հարցեր: Իր քաղաքականութեան հիմքը կազմելու են քաղաքացիական ազատութիւնների ու ոտնձգութեանց սկզբունքները: Արտաքին քաղաքականութեան ասպարէզում մնալու է Բաքունի դաշնագրի տեսակէտի վրա և դրանից մաղաչափ չեղում չի թոյլատրելու: Ապա իրրև եզրափակում, դրեց հաւանութեան պահանջ:

Այդ պահանջին ընդառաջ գնացին միայն դաշնակցականներն ու ժահիստականները. մնւս պատգամաւորները դէմ եղան: Այսպիսով, դեռ գործի չսկսած, ծագեց կառավարական տագնապ:

Փափուկ դրութիւնից դուրս գալու համար յայտարարւեց ընդմիջում, որից յետոյ ժողովրդականների մի մասն էլ միացաւ դաշնակցականների բանակներին, և կառավարութիւնը ստացաւ վստահութեան քւէ: Օգոստ կառավարութեան քւէարկեցին դաշնակցականները, 4 ժողովրդականներ, ժահիստական և ռուս պատգամաւորները. ձեռնպահ մնացին 3 սոց.-դեմ., 3 սոց.-յեղ., 2 ժողովրդական և 1 անկուսակցական՝ Գ. Զաքարեանը, որը յետագային, համաձեա մէջտ, ընթացաւ սոց.-դեմոկրատների հետ միասին:

Այսպիսով, իր կեանքի առաջին իսկ օրից, Հայաստանի Հանրապետը դուրս եկաւ ներքին չաղախից զուրկ, ամուր մեծամասնութիւն չունեցող, հակամարտութիւններով և անակնկալներով հարուստ մի մարմին: Նրա այս հիւանդութիւնը բնածին էր և մինչև վերջ էլ կարելի չեղաւ բուժել:

ԳԼՈՒԽ Բ.

«ԱՆԶԵՒ ՓԱՕՍԻ» ՄԻՋԻՑ

Աբտակարդ դժւար պարտականութիւն էր դնում պատմութիւնը Հայաստանի գործիչների վրա: Իսկապէս որ, հանճն քաօսի և աւերակների կոյտ էրն Հայաստանը այդ օրերին: Եւ սարսափելին այն էր, որ չկար ոչ մի հեռանկար: Թիւրքերը ծեծում էին արդէն բադուի դռները: Գերմանացիք՝ յաղթական արևմուտքում: Ռուսաստանում քաղաքացիական կռիւն էր ծաւալւում իր բոլոր արհաւիրքներով: Դրսից պաշտպանութիւն, ապրուստի միջոց, դրամական օժանդակութիւն չկար: Ինչ որ աւելու էր՝ պէտք էր անել սեփական ուժերով:

Հայաստանը, աւելի շուտ, դաղթականական կայան էր: ամբողջ երկրում շուրջ 450,000 գաղթական էր թափւած, որից մօտ 40,000ը՝ Երևանում, չատերը՝ փողոցների և աւերակ չէնքերի մէջ: Հաց չէր ճարւում, ժողովուրդն ապրում էր ինչով որ պատահեց: Գետնախնձորով կամ լորիով խառն հացի փունջը քաղաքում, սկզբի օրերին, արժէր 5 րուբլի և այն էլ ճարւում էր դժւարութեամբ:

Սարսափելի էր որբերի վիճակը: Երևանի «Զանգ» թերթը գրում էր օգոստ. 3–ին. «Տասնեակ հազարաւոր որբեր այսօր ցրւած Հայաստանի Հանրապետութեան սահմաններում, մոռացւած ամենից՝ ենթակայ են ցրտի, քաղցի և համաճարակ հիւանդութիւնների... Մահացողներին վերջ չկայ. մեռնում են ամենը և ամենուրեք, գիւղերում քէ քաղաքներում, բացօդեայ ամենքի աչքի առաջ»:

Հացի, բնակարանների, հագուստի և դեղերի պակասն ու գաղթականութեան խնամածութիւնը առաջ բերին ու զարգացրին համաճարակ հիւանդութիւններ, սկզբում բոլերան, ապա բծաւոր տիֆը, որի դերանդին առատ հունձ էր անում ամէն կողմ: Տուն չկար, որ հիւանդ չունենար: Հիւանդները թափւած էին և՛ փողոցներում ու հրապարակներում: Միայն յունիս ամսի 12–18–ին Երևանի զինւորական հիւանդանոցը ընդունել էին 370 հիւանդներ, որից մեռել էր 142 հոգին, առողջացել 25: Օգոստ. 28–29–ին հիւանդանոցում կային 197 հիւանդներ, մեռան 17 հոգի: Զինւորական հիւանդանոցից դուրս, մասնաւոր բժիշկների տեղեկութիւններով օգոստ. 12—29–ին, Երևանում, մեռել էր 56 մարդ և հիւանդացել 157: Այս դեռ սկիզբն էր երկանց: Հապճեպով պատրաստւած հիւանդանոցներն անդօր էին իրական գարշան հասցնելու: դեղ չկար, վառելիք չկար, սնունդ չկար, սպիտակեղէն չկար: Եւ մարդիկ մեռնում էին անմռունչ, հարիւրներով, հազարներով: Ժողովուրդը սպառւում էր վաւող մոմի պէս:

Սովի ու համաճարակի հետ, երկրում խախտված էր և ապահովությունը: Դասալիք զինուորներ, ապրուստի միջոց չունեցող գաղթականներ ու անդացիներ, խմբերով և անհատ-անհատ, յուրձակում էին համբորդների վրա, թալանում տները, խանգարում հանրային անդորրությունը: Հասարակական չարիք էր դարձել, այսպէս կոչած «մաուզերիզմը» — մաուզերով զինված մարդիկ շահատակութիւններ էին անում նոյնիսկ մայրաքաղաքի փողոցներում, և խաղաղ բնակչութիւնը տառապում էր նրանց ձեռքին:

Դրութիւնը քանի գնաց ծանրացաւ: Մինչև հոկտեմբեր զրեթէ վերջացաւ Հայաստանի սահմաններում գտնւած հացի պաշարը: Երսից ոչինչ չէր գալիս: Գետնի և հասարակական սեբաստիները պարապ էին: Ստեղծւեց սարսափելի կացութիւն: Ո՛չ միայն գաղթականութիւնը, այլ և տեղացիներից չատերը մահանում էին սովամահութեան: Եւ այս գարհուրելի վիճակը տեւեց մինչև 1919թ. գարունը, երբ հասաւ ամերիկեան ալիւրը: Սովը առանձնապէս ահռելի ձևեր ընդունեց Սուրմալուի և Ալեքսանդրապոլի շրջաններում:

Վեց ամսւայ ընթացքում, սովից ու հիւանդութիւններից, Հայաստանում մեռաւ մօտ 180,000 մարդ: Թիւրքերը գտել էին կոտորածի նոր ձև՝ ասլնի իրական և ասլնի անաղմուկ: Մի վեց ամիս ևս և Ռուսահայաստանն էլ կը հասնէր Թիւրքահայաստանի օրին: Արժէ՞ր այդ պայմաններում կռիւ անել, օրամատեր գրաւեցնել, ի դուր տեղը արիւն թափել: Հայաստանի գործը յանձնելով սովին ու տիֆին՝ Թիւրքերն իրենց գլխաւոր ուժերը ուղղել էին Բաքուի դէմ:

Թիւրքիայի ներկայացուցիչը Երևանում՝ Մեհմէտ Ալի փաշան «մարդասիրաբար» օգնում էր կառավարութեան՝ մերթ ընդ մերթ «խնբելով» կամ ծախելով հայաստանին մի քանի վագոն ցորեն հայերից յափշտակած պահեստներից: Եւ միաժամանակ, մթնոցներ էր ձեռք առնում Հայաստանում ապրող մահմեդականութիւնը փոխադրելու Սուրմալուի ու Սարդարապատի շրջանները՝ ձգտելով մի կողմից սովից ու հիւանդութիւններից ազատել մահմեդական զանգւածները և միւս կողմից՝ նախկին հայկական վայրերը բնակեցնել մահմեդականներով:

Եւ, հակառակ այս դժոխային պայմաններին, հայ ժողովրդին ու նրա ղեկավարների յաջողւեց յաղթահարել դժւարութիւնները և, ճիշտ է մեծ զոհերով, կենդանի դուրս գալ օրհասական պայքարից:

Հայաստանի Հորհրդի և կառավարութեան առաջին գործը եղաւ լարել ու գործի դնել կառավարական մեքենան: Կազմակերպւեցին նախարարութիւնները: Վերակազմւեցին բանակն ու վարչական հիմնարկութիւնները: Կանոնաւորւեց դիւանդականների ու պետական պաշտօնեաների ռոճիկը: Մթերոցներ ձեռք առնւեցին պատսպարանների բարեկարգութեան ու դպրոցների բացման: Ոչոր գումարներ յատկացւեցին գաղթականների խնամատարութեան և աշխատանքի գործի կազմակերպութեան, որբերի հաւաքման ու պահպանման, պարենաւորման մթերքների հայթայթման համար: Մի առ ժամանակ, մինչև սեփական օրէնսդրութեան իրականացումը, Հայաստանի սահմաններում ընդունւեցին նախկին ռուսական օրէնքները՝ ժամանակաւոր

կառավարութեան, Անդրկ. Կոմիսարիատի ու Սէյմի և Հայաստանի Ռուրդի փոփոխութիւններով ու լրացումներով։

Առաջ բերենք այստեղ մի քանի օրինակներ Հայ. Ռուրդի առաջին շրջանի օրէնքներից ու կարգադրութիւններից, որոնք որոշ գաղափար կը տան այն ժամանակուայ պայմանների մասին։

Օգոստ. 8-ին յատկացուեց 6 միլիոն րուբլի գաղթականական, պարենաւորման ու օգնքի վերակազմութեան համար։

Օգոստ. 21-ին ամբողջ Հայաստանը յայտարարուեց ջուերայի կողմից վտանգուած և Հայ. Ռուրդի թժչկա-սանիտարական մասնաժողովը վերածուեց վարակիչ հիւանդութիւնների դէմ մաքառող բոլոր հիմնարկութիւնների վրա հսկող ամենաբարձր մարմնի։

Օգոստ. 29-ին հրատարակուեց օրէնք մասնաւոր սեփականութիւն կազմող դէնքի ու զինամթերքի պետականացման մասին։ Այս օրէնքի չուրջ, Ռուրդում տեղի ունեցան բուռն վիճաբանութիւններ. առանձնապէս ծառայան սոց.-դեմոկրատ պատգամաւորները, որոնք համարում էին անթոյլատրելի ժողովրդի զինաթափութիւնը և պահանջում էին ժողովուրդը թողնել զինուած։ Օրինագիծը ընդունուեց 15 քուէով ընդդէմ 7-ի։

Սեպտ. 11-ին յայտարարուեց բամբակի մենաւաճառ։ կառավարութիւնն իր ձեռքը առաւ բամբակի առևտրի մենաշնորհը՝ որոշ գնով) պետականացնելով երկրի ամբողջ բամբակը, որ, այն օրերին, միակ ապրանքն էր կառավարական հասոյթի։ Այս օրէնքն էլ կրքերի սաստիկ գրգռում առաջ բերեց Ռուրդի նիստերում և առաջ նրանք մատակարարեց կառավարութեան քննարարութեան համար։*

Նոյն տեսա. 11-ին հաստատուեց գալոցական օրէնքը, որով հերքաքանչիւր հասարակական կամ համայնական կազմակերպութիւն, խմբակցութիւն, ընկերակցութիւն, ինչպէս և առանձին անհատ, իրաւունք ունէին անարգել դպրոց բանալու և անվախօրէն վարելու սեփական միջոցներով։ Գեղութեան վերահսկում էր ընդհանուր հսկիչները։

Սեպտ. 28-ին ընդունեց կարիք ունեցող գաղթականներին հող և աշխատանք հայթայթելու օրէնքը։ կառավարութիւնը պարտաւոր էր ապրուստի միջոց չունեցող գաղթականներին տալ աշխատանք կամ հող կամ, հակառակ պարագային, բաց թողնել պետական նպաստ։

Հոկտ. 8-ին որոշեց. կարիքաւոր գաղթականներին, առաւելապէս կանանց համար, բանալ պետական ջուլհականոցներ՝ առաջին հերթին գործի դնելով 1,500 դազգահ և 20,000 ճախարակ։ Այդ նպատակին յատկացուեց 6,691,200 րուբլի։

Հոկտ. 11-ի օրէնքով, բոլոր գաղթական որքերի խնամատարութեան ու դաստիարակութեան գործը պետութիւնը վերցրեց իր վրա և անմիջական վարումը յանձնեց հանրային խնամատարութեան նախարարին։ Ինչպէս—

---

*) Ցետագային, դեկտ. 3-ին, Հայ. Ռուրդը պետականացուած բամբակի համար գին ճշտեց 45ռ. 50կ. փութը։

բուքիւններին, հասարակական կազմակերպութիւններին ու մասնաւոր անհատներին քողնում էր իրաւունք բանալու և պահելու որքանոցներ, միայն պետութեան հսկողութեան տակ:

Դարձեալ հոկտ. 11-ին յատկացուեց 12,736,250ր. որբերի, անճար և աննեցուկ գաղթականների օգնութեան և գաղթականներին տրամադրելիք բնակարանների վերաչինութեան համար:

Մորուրդը արձակեց նաև մի շարք վճիռներ աչխատաւորութեան ու պաշտօնեաների, հաշմանդամների և պետական ու հասարակական պարտականութիւններ կատարելիս մեռածների վիճակը բարելաւող, հարկային ու պարենաւորման դրութիւնը կարգաւորող: Վարկեր յատկացուեցին մեքենաների գնման, ոստիկանութեան ու նոր զօրամասերի կազմակերպման, քաղաքային ինքնավարութիւնների ու կօօպերատիւների օգնութեան և համանման ուրիչ կարիքների համար:

Պէտք է նկատել, որ Հայ. Մորհրդի աչխատանքը ամբողջապէս ուղղուած էր երկրի ընթացիկ սուր կարիքների մեղմացմանը: Հիմնական չինարարութեան մասին, ի հարկէ, խօսք լինել չէր կարող: Նոյնը և կառավարութեան գործունէութեան մէջ. նա գերազոյն ճիգ էր թափում, գլխաւորապէս, օրւայ հրամայական պահանջներին բաւարարելու համար. հաց, դեղ և անդորրութիւն — այս երեք խնդիրներով կարելի էր սպառել այն ժամանակւայ պետական չինարարութիւնը»:

Իր խղճուկ միջոցներից Հայաստանը ստիպուած էր բաժին հանել և երկրից դուրս գտնուղ կարօտեալներին: Հոկտ. 26-ին, Հայ. Մորհուրդը կէս միլիոն րուբլի յատկացրեց Բագուի հայ աղէտեալներին, նոյ.4-ին 5 միլիոն րուբլի քէշարկեց՝ Վրաստանի Հայոց Ազգային Մորհրդին միանւագ նպաստ տալու համար, դեկտ. 3-ին 300,000ր. վարկ բաց արաւ Պարսկաստանի հայ փախստականների օգնութեան և այլն: Փշրանքներ էին սրանք տիրող ծով կարիքի համեմատութեամբ, բայց Հայաստանի սեղանի վրա էլ փշրանքից զատ բան չկար, հայ ժողովուրդը չունեցածից էր տալիս:

*

Հոկտ. 3-ին Մալիլ փաչան Երևանում յայտնեց, որ ինքը հրաման է ստացել դադարեցնել Լոռի-Փամբակի չրջանը: Անմիջապէս հայ և քիւրք հրամանատարութիւնները գծեցին այդ չրջանը հայերին փոխանցելու ծրագիրը, և Հայաստանի կառավարութիւնը հրամայեց Դիլիջան-Լոռիի զօրամասի պետ Դրօին՝ բռնել հետացող քիւրք զօրքերի տեղը:

Դիլիջան-Լոռիի զօրամասը, այդ միջոցին, բաղկացած էր հետեւեալ ուժերից. պարտիզանական հետեակ գունդ՝ գնդ. Մերիմանեանի հրամանատարութեան տակ, պարտիզանական ձիւոր գունդ՝ հրամանատար գնդ. Տէր-Ղուկով, Ձրդ լեռնային մարտկոցը (4 թնդանօթ) և նոր կազմւող Ղազախ միլիցիոն գունդը՝ ապայ Թ. Մնացականեանի գլխաւորութեամբ: Դրօն զօրամասի հրամանատար էր նշանակուած օգոստոսին: Քաղաքացիական մասի օգնականն էր Ս. Մանասեանը:

Զօրքերը դասաւորած էին հետեւեալ կերպով. Ղազախ զօրամասի պետ գնդ. Կօրոլկովը, ունենալով իր հրամանատարութեան տակ մի ձիաւոր հարիւրեակ, 4րդ հետեակ գունդը և Ղազախի մելիքական գունդը՝ բռնում էր ամբողջ հայ–վրացական սահմանագիծը (Կողբ—Քարվանսարա), ուր կարգը մինչև 1918 թիւը բնաւ չխանգարուեց:

Ղարաքլիսայում գտնուող թիւրքերի դէմ — Բոդիքէնդ—Վոսկրեսենովկա—Վարդանլու (Վարդանլուն չկոչ վայր էր) — կանգնած էին 2րդ ձիաւոր գնդի երկու հարիւրեակները՝ սպայ կուռօ Թարխանեանի հրամանատարութեամբ:

Ընդհանուր պահեստը, գնդ. Մխրիմանեանի գլխաւորութեամբ, բաղկացած էր 4րդ գնդի 2 դումարտակներից՝ Դիլիջանում և 1 դումարտակից՝ Նիկիտինոյում:

Ստացած հրամանի վրա, հոկտ. 18–ին Դրօն կարգադրեց կուռօ Թարխանեանին, 2 հարիւրեակ ձիաւորներով չտապ գնալ–գրաւել Խսեղ—Քոլաքերան—Կաչական գիծը, իսկ հաջ Աբարանի զօրամասը — առաջին ձիաւոր գունդ, 5րդ հետեակ գունդ, 1 մարտկոց — հրամանատարութեամբ գնդ. Ղորղանեանի՝ անցնելով Սպիտակի լեռնանցքը՝ գնաց բռնել Ջալալ–Օղլի—Գևրգեր—կուրթան գիծը: կարգադրութիւնը կատարուեց չատ արագ, և հոկտ. 21–ին արդէն չրջանը ամբողջութեամբ հայերի ձեռքին էր, գրեթէ առանց մխրճուելի:

Մի–երկու աննչան մխրճուելեր պատահեցին հայ և վրացի զօրամասերի մէջև Ջալալ–Օղլի և Խսեղի չրջաններում: Առաջինում, հակառակ մեծագոյն նախազգուշացման, վրացիները հետախոյզների մի խումբ ուղարկեցին կաչականի կողմը, բայց մեր ձիաւորների կրակով յետ չպտուեցին: Խսեղի կողմը վրացիները առաջ քաչեցին գերմանացի գիւղերների մի խումբ, որ մտաս հայերի գրաւած Քարինջ գիւղը և ձերբակալեց ու գինաթափած յետ ուղարկեց՝ մեր զօրամասի կողմից: Երկու օր յետոյ, վերից եկած հրամանով, գէնքերն էլ վերադարձուեցին գերմանացիներին: Այս մխրճուելը ունէր ծառայեց զօր. Ֆոն–Քրեսի մխրճտութեան: Առհասարակ, Լոռի–Փամբակի դրաւումը ահագին խլրտում առաջ բերեց Թիֆլիսում:

Հոկտեմբերից սկսած, արտաքին աշխարհում տեղի ունեցան արտակարգ դէպքեր: Բուլղարիան պարտուած՝ դուրս էր եկել պատերազմողների չարքից: Աւստրահունգարական կայսրութիւնը ճաքճաքում էր փլուզումի նախօրեակին: Ամերիկայի մուտքը պատերազմի մէջ նախորոշում էր պատերազմի վախճանը: Եւ որքան ընդհանուր հաչւեյարդարի օրը մօտենում էր, այնքան փոխում էին տրամադրութիւնները և Հայաստանում ու Հայաստանից դուրս գտնող հայկական չրջանների մէջ, կասկածն ու յոռետեսութիւնը սկսում էր տեղի տալ լաւատեսութեան:

Հայաստանի Հանրապետութեան կեանքի առաջին ամիսներում չատ ուժեղ էր քեռհաւատութիւնը: Մանաւանդ, Թիֆլիսում, Հայաստանի մասին խօսելիս ու գրելիս ճշմարտութիւնն, հանկախութիւնն բառերը արտասանւում էին հեղնանքով ու չակերտների մէջ էին առնւում: Հայ սոցիալ–դեմոկրատներն ու սոցիալիստ–յեղափոխականները, հակառակ որ

մանակում էին Հայ. Յորհրդի աշխատանքներին, ըստ էության բացասական դիրք ունէին և պայքարում էին անկախութեան դէմ: Ժողովրդականները ակզբունքով ճանաչում էին անկախութիւնը, բայց Հայ. Յորհրդում, համաթիւ մէյնտ, ընթանում էին ձեռք-ձեռքի սոց.-դեմոկրատների և սոց.-յեղափոխականների հետ, իսկ Թիֆլիսում նրանց կուսակիցները ընդ չէին խնայում՝ վարկաբեկելու Հայաստանի կառավարութիւնը, որով, անուղղակի կերպով, հարուածում էին և Հայաստանի պետականութեան: Բացի դաշնակցականներից — այն էլ ո՛չ բոլորը — չատ քչերն էին հաւատում, որ հանրապետութիւնը կապրի ու կամրանայ:

Արեւմուտքում զարգացող դէպքերը, սակայն, հետզհետէ փոխեցին տրամադրութիւնները և՛ Հայկական շրջաններում, և, մանաւանդ, Հայ բուրժուական մտաւորականութեան մէջ: Նրանք կամաց-կամաց փոխեցին իրենց վերաբերմունքը դէպի Հայաստանը և, երբեւէ անհաշտ հակառակորդները, սկսեցին հասկացողութեան գալուն որոնել՝ արծարծելով Հայաստանի իշխանութեան վերակազմութեան ծրագիրը կօալիցիոն հիմունքներով: Այդ նպատակով, հոկտեմբերի վերջերին Երևան հասան Հայ ժողովրդական կուսակցութեան ներկայացուցիչները՝ Սամ. Յարությունեանի և Մին. Բեքզադեանի գլխաւորութեամբ՝ Հ. Յ. Դաշնակցութեան հետ բանակցելու՝ կօալիցիոն կառավարութիւն կազմելու ծրագրով: Թիֆլիսի ժողովրդականների տրամադրութիւնը համապատասխանում էր և երևանի ժողովրդականների ձգտումներին, որոնք աւելի ամուր կանգնած Հայաստանի տնտեսական վրա՝ ներմղուին պաշտպանում էին համերաշխութեան ու գործակցութեան գաղափարը:

Հ. Յ. Դաշնակցութեան շարքերում էլ կօալիցիայի հարցը գրւած էր հերթի: Հոկտեմբերի վերջերին սկսւել էր կառավարական սուր տագնապ. ընդդիմադիրների անվերջ քննադատութիւններից ու յարձակումներից զգուած, ինչ որ խնդրի առթիւ ստանալով անվստահութեան քւէ՝ Քաջազնունին հրաժարական էր ներկայացրել: Անհասարակ, Հայ. Յորհրդում ստեղծւել էր անբնական մթնոլորտ, և այդ գրութեան վերջ տալու համար Հ. Յ. Դաշնակցութիւնը մտածում էր առաջ բերել կուսակցութիւնների գործակցութիւն:

Գործակցութիւնը ներկայացւում էր երկու ձևով. ոմանք կողմնակից էին բոլոր կուսակցութիւնների մասնակցութեամբ կառավարութիւն կազմելուն, բայց կային և դուտ ընկերվարական նախարարության կողմնակիցներ: Այս վերջին միտքը մէկ կողմ թողնւեց, որովհետև Հ. Յ. Դաշնակցութեան կողմից արւած առաջարկի վրա սոց.-դեմ. և սոց.-յեղ. Ֆրակցիաները դրին անկոչյանի կերպով անիրագործելի պայմաններ. առաջիններս պահանջեցին երկու տեղ և անպայման ներքին կամ արտաքին գործոց նախարարութիւնը. վերջիններս իրենց համար առանձին պահանջներ չունէին, բայց վճռականապէս դէմ էին, որ արտաքին գործոց նախարարութիւնը յանձնւի ժողովրդականներին և ներքինը՝ սոց.-դեմոկրատներին: Այսպիսով, ընդհանուր կօալիցիայի խնդիրը մէկ կողմ էր ընկնում. մնում էր

գաշնակցական-ժողովրդական գործակցությունը: Այս հողի վրա և սկսեցին բանակցությունները:

Բանակցությունների ընթացքում ժողովրդականներին ուշի հետաքրքրում էր նախաբարեական աշխոյների թիւը, քան քաղաքական սկզբունքային հարցերը: Նրանք պնդում էին, որ իրենց յանձնեն աթոռային, եկեղեցական, գատական և հանրային կրթութեան նախարարութիւնները, իսկ զինուորական նախարարը լինի անկուսակցական մէկը: Վերջին չորս կէտերը Դաշնակցութիւնն ընդունեց, իսկ աթոռային գործոց նախարարութիւնը վերապահեց իրեն:

Ընդհանուր-սկզբունքային խնդիրներից ժողովրդականները մինչև վերջ պնդեցին մէկ կէտի վրա — որ հողային հարցի լուծումը յետաձգուի մինչև Սահմ. ժողով կամ համաժողովրդական քուէով ընտրուած խորհրդարանի գումարումը: Դաշնակցութիւնը այս հարցում զիջեց:

Ժողովրդականները առարկում էին և՛ Արամի ու Ա. Խատիսեանի կառավարական կազմի մէջ մտնելու դէմ. այս պահանջը Դաշնակցութիւնը մերժեց:

Ի վերջոյ, կօալիցիան գլուխ եկաւ և Հայ Յեղափոխական Դաշնակցութեան 4-ի նիստում՝ դաշնակցական ու ժողովրդական պատգամաւորների քուէներով ընդունուեց Ե. Քաջազնունիի կառավարութեան հրաժարականը և Դ. Ջուբանի ու Հ. Ազատեանի կրքոտ քննադատութիւններից յետոյ յանձնաբարուեց նոյն Քաջազնունիին կազմել նոր կառավարութիւն: Նոյն նիստում հէնց Քաջազնունին յայտարարեց նոր կառավարութեան կազմը. անպորտֆէյլ վարչապետ՝ Ե. Քաջազնունի (դաշն.), արտաքին գործոց նախարար՝ Ս. Տիգրանեան (դաշն.), ռազմական՝ Գ. Մելիք-Ղարագէոզեան (ժող.), ներքին գործոց՝ Արամ (դաշն.), զինուորական՝ զօր. Ե. Հախվերդեան (անկ.), եկեղեցական՝ Ա. Խնֆիլեան (ժող.), արդարադատութեան՝ Մ. Ջարուբեանեան (ժող.), հանրային կրթութեան՝ Մ. Աֆաքեղեան (ժող.), պաշտօնատարների՝ Լ. Ղուլեան (ժող.), խնամատարութեան՝ Ա. Կարճիկեան (դաշն.):

Գեւոական վերահսկիչ Հայ. Յեղափոխ. կողմից, սոց.-յեղ. և սոց.-դեմ.-ների ձեռնպահութեամբ, ընտրուեց Մինաս Բերբերեանը (ժող.):

Ինչպէս ցոյց են տալիս անունները, կառավարութիւնը բաւական ուժեղ կազմ ունէր: Բոլոր նախարարները զարգացած ու հեղինակաւոր գործիչներ էին: Ժողովրդականների մէջ կենտրոնական անձը Ս. Ջարուբեանն էր՝ Թիֆլիսի յայտնի փաստաբաններից մէկը, պատրաստուած, հայրատասխան պաշտօններին ու հայ իրականութիւնը լաւ ճանաչող, աշխատունակ ու հայ բուրժուական խաւերում մեծ ազդեցութիւն ունեցող մի գործիչ: Հայկական ու ռուսական չբջանների լայն կապեր ունեցող, գրական ու հասարակական կեղի տէր, հայրենասէր ու ձեռնհաս գործիչ էր և պետական վերահսկիչ Մ. Բէրբերեանը:

Նոր կառավարութիւնը հասարակութեան կողմից ընդունուեց, իբրև մի քայլ դէպի ալ, զիջում բուրժուական խաւերին. «Հայաստանի Յեղափոխ.

ձեկավար կենտրոնը մի քիչ Թիֆլիզից դեպի ալ, գրում էր «Հորիզոն»-ը*), և այդ բանում մեծագիտ պատասխանատու են սոց.-դեմ. և սոց.-յեղափ. ֆրակցիաները... Ստեղծած դրությունը իսկական կռվիցիան է մեր իրականության, ուր հայ դեմոկրատիայի կուսակցությունն է Հ.Յ.Դաշնակցությունը և հայ բուրժուազիայի գլխավոր կազմակերպությունը՝ Ժողովրդական հուսակցությունը: Հայ դեմոկրատիայի և բուրժուազիայի կռվիցիան է, որ ստեղծեց:

Հասկանալի է, որ նոր կառավարության հետ կապում էին մեծամեծ յույսեր: Ենթադրում էր նաև, որ Թիֆլիսից դեպի Հայաստան կը սկսվի քարշ ուժերի, մասնավոր նոր գործիչների կենդանի հոսանք: Եւ, առաջին օրերին, նոյեմբ. 20–ին Երևան փոխադրվելով, ժողովրդական նահապետներն իրենք էլ գործի կոչն մեծ ոգևորությամբ: Ս.Յարությունյանը պատրաստում էր հիմքից վերակազմել արդարադատության գործը, պաշտոնի կոչել հմուտ իրաւագէտներ ու գաղտնասանական գործիչներ: Մ. Աքաթեկյանը հրապարակ դրեց աշխարհիկ ընդհանուր կրթության խնդիրը, խոստացավ ոչ միայն տեխնիկական դպրոցների բացման, ինչի մասին ձեմարանը տեղափոխել Երևան ու հետզհետէ վերածել համալսարանի, կրթությունը ազատ ու հասկանալի ազգայնացնել, պետական թատրոն, թանգարան ու գրադարան հիմնել, համաչափել մտաւորականությունը Հայաստանում: Մ. Բեյքերյանը ձեռնարկեց պետական վերահսկողության գործի կազմակերպման՝ պետական վերահսկողության երկու հիմք ընդունելով նախնական կամ փաստական հսկողությանն ակզբունքը: Ա. Խնդիրյանը յայտարարեց, թէ նոր տարուանից ներկայացնելու է կայուն պետական բիւջէ և մի ծրագիր է ձեռք առնելու՝ ստեղծելու տեսական դրամ:

Ոգևորությունը, սակայն, երկար չտևեց — հազիւ մի քանի չաբաթ: Եւ ահա սկսեց ժողովրդական նախաբարների փախուստը Երևանից, ուր կեանքի պայմանները շատ էին ծանր ան հացի, յատուկի վրա քննելու և ոչիլի չվարժուած մարդկանց համար: Կառավարության կազմությունից երկու չաբաթ չանցած, կուսակցական ինչ որ ներքին տարաձայնության հետևանքով, հրաժարական ուեց ու հեռացաւ հանրային կրթության նախարար Մ. Աքաթեկյանը. նրա տեղը անցաւ Գ. Մելիք-Ղարադեղյանը: Քիչ յետոյ, պաշտօնական գործով, մեկնեց պարենաւորման նախարար Լ. Ղուլխանը և այլևս չվերադարձաւ. Թիֆլիսում պաշտօն ստացաւ հայկական պարենաւորման հիմնարկութեան մէջ: Ղուլխանի նախարարութիւնն էլ տասնմեկից Ս. Յարությունյանը, որը չուտով նոյնպէս գնաց Թիֆլիս՝ իր տեղին պաշտօնակատար նշանակելով Գ. Մելիք-Ղարադեղյանին: Այսպիսով, ստեղծուեց մի դրութիւն, երբ Հայաստանը ունէր երեք պարենաւորման նախարար և ո՛չ մի պարենաւորում: Մի հանգամանք, որ ի հարկէ, վնասում էր կառավարության հմայքին:

Կօալիցիոն կառավարության համար անուղղելի հարուած եղաւ և Խաչ. Կարծիկեանի մահը նոյեմբ. 14–ին: Նա սպանուեց իր կուսակցական ընկերոջ՝ ազգ. Եղբ Ջէր–Մինասեանի ձեռքով, երբ նախաբարական առանձնասենեակ

*) Ս. Մասուրեան, «Հորիզոն», 10 նոյ., 1913թ.

կում գրաւած էր գաղթականների տեղաւորման ու հոգատարութեան խնդիրներով։

Կարճիկեանի մահով ո՛չ միայն Հայաստանն էր զրկւում իր ամենախոչոր պետական մի գործչից, այլ և բովանդակ Կովկասը։ Նա եղաւ վերջին տասնամեակի Կովկասեան իրականութեան այն սակաւաթիւ դէմքերից մէկը, որոնք կեանքի ամենախռովայոյզ օրերին անգամ կարողացան պահել մտքի պայծառութիւնն ու հոգեկան հաւասարակշռութիւնը։ Ապահով յետոյ, առաջինն էր՝ կռչած կերտելու Հայաստանի պետական չէնքը։ Եւ մոլեռանդի կոյր ղնդակը խլեց հայ ժողովրդից այդ քանդագին կեանքը։ Հասկանալի է, թէ ինչո՞ւ նրա մահը ցնցեց ամենքին։ Կարճիկեանի յուղարկաւորութիւնը իսկական համաժողովրդական սուգ էր*)։

Սպանիչը վրէժ էր լուծում Կարճիկեանից, իբրև մէկից, որ էր վարած քաղաքականութեամբ դէպի կործանում էր առաջնորդել հայ ժողովրդին, որ զործիք էր ծառայել վրացի ազգայականների ձեռքին, որ պատճառ էր եղել Կարսի անկման ու յետադաս ազէտների։ Գատումներն էլ մնում պարզել, թէ որքա՜ն արդար են այդ մեղադրանքները և արդեօք Կարճիկեանին վերագրւող յանցանքների համար աւելի պատասխանատու չէ՞ն այն մարդիկ, որոնց ուղղակի կամ անուղղակի ներշնչումով ոճիր էր գործում դժբախտ Եզորը։

*

Կօալիցիոն կառավարութիւնը գործի անցաւ այն պահուն, երբ արդէն դաշնակիցների յայտնութիւնը փաստ էր, և հայ ժողովրդի առջև բացւում էին նոր հորիզոններ։ Նոյեմբ. 17–ին Բաքու էր մտել անգլիական մի զօրամաս զօր. Թոմսընի գլխաւորութեամբ։ Նոյեմբ. 20–ին վերադարձել էին հաշտարար պատւիրակութեան անդամները՝ Ահարոնեանը, Յատիսեանը, Պապաջանեանը, որոնք Պոլսից դուրս էին եկել նոյեմբ.1–ին՝ բերելով իրենց հետ Մուդրոսի զինադադարի և արևմտեան Հայաստի դէպքերի մանրամասնութիւնները։ Նոյն օրերին, Թիֆլիսից՝ Ս.Ալբատեանից, Ներսէս արքեպ. Մելիք-Թանկեանի միջոցով, ստացւեց մի հեռագիր, որ չափազանց վարդագոյն հեռանկարներ էր բանում հայ ժողովրդի առջև. Գօրգս Նուպարը աւետում էր դաշնակիցների յաղթութեան լուրը և այն ազդարարութիւնը, որ տիրում էր հայկական բոլոր խաւերի մէջ։

Շուտով բացւելու էր Խաղաղութեան Վեհաժողովը։ Պէտք էր չտապել պատւիրակութիւնն ուղարկել Եւրոպա՝ ներկայացնելու համար հայկական պահանջները։ Հայ. Հանրապետութիւնը մի քանի դէպքով նախատրամ քննեց պատւիրակութեան տալիք հրահանգները։ Մասնաւորապէս լուրջ ու բազմակողմանի քննութեան առնւեց Հայաստանի սահմանների խնդիրը։ Կար մի քանի տեսակէտ. վարչապետ Քալաքոսեանին դոհանում էր համեստ սահմաններով՝ համաձայնւելով ծովային ելք էլ չունենալ։ Ժողովրդականները՝ Ս.Վարու-

*) 1919թ. յուլ. 17–ին Հայ. Հանրապետութիւնը յատկացրեց 75,000ռ. Կարճիկեանի ընտանիքին նպաստ և զանակներին կրթութիւն տալու նպատակով։



Գ. ՍԱՐՅԱՆ



Ա. ԱԼԱՖԱՆԴԱՆՑ



Մ. ԲՈՐՈՒՆՑԱՆՑ



Ս. ՅԱՐՈՒԹՅՈՒՆՑԱՆՑ

Քիւնեանն ու Մ. Պապաջանեանը պնդում էին ծովից-ծով Հայաստանի վրա՝ Տրապիզոնի և Ալեքսանդրէտի ելքերով։ Դաշնակցականների մէջ էլ քիչ չէին ծովից-ծով Հայաստանի կողմնակիցներ, բայց մեծ մասը կանգնած էր մխայն Սև ծովի ելք ունենալու տեսակէտի վրա։ Նկատողութեան առնւեց և ժանգատի հաւքը, բայց սոց.-յեղափոխականներից ու սոց.-դեմոկրատներից, որոնք պաշտպանում էին միութիւնը Ռուսաստանի հետ, Հայ. Յեղկոմը առաջին տեղը տւեց Ամերիկային, ապա՝ Անգլիային, յետոյ՝ Ֆրանսիային, և վերջը միայն՝ Ռուսաստանին։ Հայ.Յեղկոմի դեկտ. 3-ի նիստում կազմւեց պատւիրակութիւնը — Ա. Ահարոնեան՝ նախագահ, Մ. Պապաջանեան և Հ. Օհանեանան անդամներ։ Այս վերջինը դեռ Բերլինում էր։ Հրաւհանդների վերջնական ձևակերպումը թողնւեց կառավարութեան, որ և յանձնարարեց պատւիրակութեան պաշտպանել Սև ծովի ելքը՝ առանց դնելու կիլիկիայի պահանջը։ Միևնոյն ժամանակ կարգադրւեց Ա. Ահարոնեանին՝ սերտ դործակցութիւն ստեղծել Գօրս փաշա Նուպարի հետ։ Նոյեմբերի 9-ին պատւիրակութիւնը մեկնեց Թիֆլիս։

•

Դարձեալ հրաչքն էր փրկում հայ ժողովրդին։

Նոյեմբերի կէսերին, Հայաստանի դիւանագիտական նախաթորը Երևանի Քիւրքեանի ներկայացուցիչ Ահմէտ Ալի փաշայից ստացաւ հետևեալ գրութիւնը. «Գ. Նախարար, օսմանեան կայսրութեան գլխաւոր սպայակոյտի պետը հրամայում է ինձ հաղորդելու ձեզ, որ Բրեստ-Լիտովսկի սահմանից դուրս մնացող և Քիւրք զօրքերի կողմից գրաւած հողամասերը պէտք է դատարկւեն վեց չաբաթւայ ընթացքում» (Հաչւելով 1918թ. հոկտ. 24-ից)։

Եւ հետզհետէ սկսւեց Քիւրքերի նահանջը ու նրանց պարպած հողերի գրաւումը հայերից։ Նոյ. 18-ին հայկական զօրքերը մտան Ղարաքլիսա և իրենց ձեռքը առին չրջանի կառավարութիւնը։ Ահռելի տեսարան բացւեց նրանց առջև. գաւառը բառիս բուն նշանակութեամբ աւերւած ու կողոպտւած էր։ Գիւղացիութեան 98% թալանւած էր մինչև չափի կոճակը։ Ամէն ինչ տաբել էին Քիւրքերը — տաւարը, երկրագործական գործիքները, սայլերը, կահկարասիքը, անկողինները, անգամ ճրագները։ Մարդկային կմախքները քափքփւած էին չորս կողմը։ Ղարաքլիսայի ու Ղըշլախի մէջև նետւած էին 400 դիակներ, Ղըշլախի մօտ՝ մեծ կիրճում մարդիկ հաչւել էին 500 դիակ։ Հազարաւոր դիակներ, գանգեր ու մարդկային ոսկորներ քափւած էին Ալթուն Թախտում ու Վանանց ձորում... Երկաթուղին քար ու քանդ էր արւած, կողոպտւած մինչև դռներն ու պատուհանները։ Երկերը հասել էր քայքայման վերջին աստիճանին։

Ջարհուրելի պատկեր էր նկարում «Зак. Слово»-ի Քղքակիցը (1918թ. նոյ. 22), որ անհիլապես Քիւրքերի հետանալուց յետոյ, եղել էր Լոռի-Փամբակում.

«Ղալաքախի կայարանից մինչև Քոլագերան Քիւրքերը տաբել են չպատները, պահեստի երկաթուղագծերը, կայարանների կարասիները, չոգե-

չաթիները, վագոնները, հեռախօսները ու հեռագիրը… Կայարանի չէնքերը թողնում են աւերակների տպաւորութիւն. դռների և պատուհանների փայտեղէն մասերը հանուած են, կառուցերը պոկուած, պատերը քանդուած… Համամասկիները չարունակում են հնձել ժողովրդին: Զինւոր բժշկական օգնութիւն: Դեղատները թալանուած են: Հիւանդները մեռնում են առանց դեղի ու բժշկական օգնութեան: Փամբակի գիւղերում կան բազմաթիւ տոմսեր ու բոկոտն որբեր, առանց որև է խնամքի: Շրջանի դպրոցական կեանքը մեռել է: Բոլոր դպրոցները թալանուած են: Ղըշլախի գեղեցիկ դպրոցի մաքրուղ կահկարասիքը այրել են ամէնաբները… Բոլոր 8—10 հօսպիտալները կողոպտուած են:

Նոյնքան սարսափելի էր գրութիւնը և միւս վայրերում: Նոյեմբեր 22–ից Քիւրքերը սկսեցին դատարկել Ալէքսանդրապոլը: Դեկտ. 2 և 3–ին, Հայաստանի կառավարութեան ներկայացուցիչ Յոխեցեանի նախագահութեամբ կազմուած մի յանձնախումբ ընդունեց քաղաքն ու բերդը: Դեկտ. 4–ին առաւօտեան ժամը 5–ին Ղալթախչիից չարժուեց մի հայկական գումարտակ գնդ. Նեստերովսկիի հրամանատարութեան տակ և գրաւեց Ալէքսանդրապոլը: Բերդապետ նշանակուեց գնդ. Դոխտուրը:

Այստեղ ևս՝ ընդհանուր աւեր ու խեղճութիւն. Քիւրքերը տարել էին ամէն ինչ, որ կարելի էր նրանց չարժել — չոգեչարժ, վագոն, ցորեն, ժողովրդից խլուած պարէնը, բամբակը, տնային իրեր, կայարանների բոլոր գոյքը՝ հեռագրական ու հեռախօսային գործիքներից սկսած մինչև դռներն ու պատուհանները: Բերդը պայթեցրել էին և չատ բան այրել: Գաղաքն ու չրկախ գիւղերը կողոպտուած էին մինչև վերջին ասեղը: Անչատակ Քչատութիւն էր տիրում ամէն կողմ: Հակառակ Մեհմեդ Ալի փաչայի Հայաստանի կառավարութեան տուած պաշտօնական հաւաստիացումների, Քէ գնկտ. 6–ի առաւօտեան ժամը 9–ից սկսած՝ Բրնստ–Լիտովսկի դաշնագրի սահմաններից այս կողմ ո՛չ մի Քիւրք ասկեար չի մնալու և Քէ կարգադրուած է, որ հետացող ասկեարները ո՛չ մի Բալեն ու աւերածութիւն չանեն, Քիւրքերը հետանում էին՝ իրենց յետևը Թողնելով ժահ ու քայքայում…

Աւարը կլնտրոնացում էր կարսում, ուր հաւաքած էր հարիւր հազարաւոր փութ բամբակ, 65,000 փութ չաքար, մի քանի տասնեակ հազար հղլլիւրաւոր անասուններ, մեծ քանակութեամբ հացահատիկ, կաշեղէն, բուրդ, մանուֆակտուրա, կահ–կարասիք, պատուհաններ ու դռներ…

Ալէքսանդրապոլ–Երևան երկաթուղագիծը, որ յանձնուեց Հայաստանին դեկտ. 5–ին, մերկացուած էր ամէն բանից. կայարանների չէնքերը՝ աւերակ և անբնակելի, ջրակայարանները՝ փչացած, հեռախօսն ու հեռագիրը՝ քանդուած, կամուրջներից չատերը՝ հրոյ ճարակ…

Նոյն տեսարանը և՛ Երևան—Ջուլֆա երկաթուղագծի վրա և Երևանի, Էջմիածնի ու Սուրմալուի գաւառների Քիւրքերից գրաւուած մասերում: Գարսկաստանից դէպի կարս ու Էրզրում քաչող Քիւրք զօրամասերը, խուժանացած, ճանապարհին, ամ ու սարսափ էին տարածում, գոքձում էին բռնութիւններ, կողոպտում ու փչացնում էին հայերի գոյքերը: Երկաթուղային կազմածքի պակասի պատճառով Նախիջևանում, Ուլուխանլուում,

Մարզարապատում, Ալեքսանդրապոլում կուտակվում էին հազարաւոր ապիկարներ, որոնք Քալանում էին ժողովրդին, մանում չրխակայ գիւղերը, խլում ինչ որ պատահի, կոտրում-փչացնում կարգրանների ու երկաթուղիչների կազմածքը: Մարթեխ պէս, այս ամբոխը սրբում-աչնչացնում էր ճանապարհին ամէն բան:

Դժուար է տալ իրական պատկերը Քիւրքների գործած աւերի ու քայքայման երեից ուշիմամեայ ռեպրեզենտացիան չրխանում և հեռանալու ժամանակ: Մեր մեռքի տակ կայ հէմամչխարհային պատերազմից Հայ ժողովրդի կրած վնասների թիւնիչ ճանձնաժողովի մէկ պաշտօնական գեկուցագիր Փամբակ-Լոռի չրխանում Քիւրքերի հասցրած վնասների մասին: Այդ գեկուցագիրը կազմած է 1918Թ. գեկտեմբերի առաջին կիսին, Քիւրքերի հեռանալուց անմիջապէս յետոյ, տեղն ու տեղը, բոլոր գիւղերում կատարած քննութեան ու հաւաքած նիւթերի հիման վրա: Ահա մի քանի քաղուածքներ այդ գեկուցագրից, որոնք տալիս են ազատ պատկերը սոսկ իրականութեան, որը անհամեմատ աւելի մռայլ էր:

«Քիւրք զօրքը ներս է խուժել Փամբակի չրխանը 1918Թ. մայիս 20-ին: Այդ զօրքը Յաւէդ բէյի 11րդ դիվիզիան էր, որի չարքերում մեծ թիւ էին կազմում փիւրդ գիւղորնները: Ղարաքիլիսա հասնելուն պէս, նրանք սկսում են կառորել հայերին. գիստրաններըր բնաւ անկարդ, պատահական բնոյթ չեն կրել, այլ եղել են ծրագրած ու կազմակերպուած և տեւել են պատմապէս երեք օր:

«Ղարաքիլիսայում Քէ բունութեամբ և Քէ գանագան խորամանկ մեթոդներով հարիւրաւոր մարդկանցից բաղկացած խմբեր են հաւաքել և գերեզման գուբս հանելով՝ գնդակահարել կամ սրնահարել են: Ղարաքիլիսայում ապահել են բոլոր հայ սպաներն ու գինուորները, որոնք պարտութիւնից յետոյ կամ գերի են ընկել, կամ կամովին ապաստիան յաղթողների մեծահոգութեան: Նոյն տեղում կոտորած են, բացի տեղացիներից, բազմաթիւ գաղթականներ կարսի և Ալեքսանդրապոլի չրխաններից: Ընդհանուր առմամբ, Ղարաքիլիսայի չրխակայքում գնդակահարած են մի քանի հազար մարդ — ճիշտ թիւը պարզելու հնարաւորութիւն չկայ: Գիտք է կարծել, որ այդ թիւը 3000-ից պակաս չէ, թէև ոմանք հասցնում են մինչև 7000-ի: Այս թէ մէկ չեն մոռում սպանած տեղացիները 1470 հոգի: Այս մեծ կոտորածներ տեղի են ունեցել նաև Համամլուում, Հաթիրաբաղում, Թարթառում, Ղշլադում և Եզաթլուում: Մեռ գիւղերում սպանութիւնները գանգուածային բնոյթ չեն կրել, սակայն, մարդկային զոհերը պակաս չեն եղել և այս գիւղերում. այստեղ Քիւրքերը իրենց ծրագիրը իրագործել են մեղմ ձևով: Ալեմմանի Փամբակի գիւղերից գերի են առել հարիւրաւոր երիտասարդներ, որոնք գրեթէ բոլորը ոչնչացել են քաղցից, ծեծից և ուժից մեր ալիսաոնգ-ներից՝ էրգրումի չրխանում: Սակաւաթիւ վերադարձածները պատմում են, որ նրանց, բացի այլ և այլ տեսակների ալիսաոնգներից, յեռւմ էին սալքից և քլում երկաթէ հիպոտնեռով: Էրգրում քչուած 8000 գերիներից — Շէրեմէի ու Փամբակից — վերադարձել են միայն մօտ 600 հոգիս:

«Քէ մեր չրխանում և Քէ ամենուրեք առանձնապէս հետամտել են Քիւրքահայերին և հանկը ընկածներից ոչ մէկը չի խուսափել մահից:

«Բռնաբարութիւնները կրել են բաւի ամենայն իմաստով գանգուածային բնոյթ-կան գիւղեր, որոնք, հէնց իրենց գիւղացիների խոստովանութեամբ, ենթարկուել են լիակատար բռնաբարութեան (Նալբանդ գիւղը):

Եղել են դէպքեր, երբ բոլոր տղամարդկանց դուրս են քշել գիւղից և կանանց բռնաբարել: Բռնաբարութեան ենթարկւել են և չահլի աղջիկները՝ սկսած 8—10 տարեկանից, և նոքաօր հարսները, ասկայն, սակաւ չեն դէպքեր, երբ բռնաբարել են պառաւ կանանց: Հաստատւում են նաև պրուսոմոլութեան բազմաթիւ դէպքեր, բռնաբարութիւններին մասնակցել է նաև հրամանատարութիւնը, նոյնիսկ բժիշկները, օրինակ, դիվիզիայի բժիշկ Քեամիլ բէյը:

«Թալանի ենթարկւել է ամէն ինչ, որ կարելի է թալանել — գրամ, քանգարթէք իրեր, կահ-կարասի, հագուստեղէն, մթերքներ և այլն: Որովհետև Փամբակի ապրանքային բիւրոն չակարծակիի եկաւ, նա գրեթէ ոչինչ չթաղցրեց և ամէն ինչ կորցրեց: Դրամը և թանգարժէք իրերը անցել են ասկէարների ձեռքը չատ դէպքերում որպէս փրկանք կամ մահից ու բռնաբարութիւնից ազատւելու և կամ «օրինքի խատութիւնից խուսափելու համար»:

«Թալանի են ենթարկւած ամբողջ չրջանի անասունները: Ջոկել տարել են չահլ և առոյգ անասունները՝ բողնելով վտիտներին: Տարել են գրեթէ բոլոր ձիերն ու էշերը... Ճանքսերի մեծ մասը տրուեցին ձիերի տոքերի տակ, մի մասը արաձացրին, իսկ ինչ փրկւեց, սրա երեք-ութերորդ մասն էլ, իբրև բահրա, թիւրք իշխանութիւնը դուրս տարաւ երկրից տասնեակ վագոններով: Փամբակի լեռնաչղթայի ձոխ խոտահարքերը հնձել տուին հէնց գիւղացիներին, նրանց սայլերով կրել տուին կայարանները և բանուկով վագոնները՝ նոյնպէս դուրս տարին: Նոյն վիճակին ենթարկւեց և գեամանխնդորը... Մեղաւորութիւնը վերջնականապէս ոչնչացած պէտք է համարել, եթէ հաշի չառնենք մէկ մեղաւոց, որ փրկւել է ամբողջովին և հատու կենդանի փեթակներ՝ մնացած այս կամ այն մեղաւպահի մօտ: Շրջանում ոչնչացած է մօտ 6500 մեղու ընտանիք, բոլորը չրջանակաւոր փեթակներով:

«Հիմնաւորապէս ոչնչացած է բոլոր դպրոցական գոյքը, գրատարանները, կօօպէրատիւները. քիչ բացառութեամբ թալանւած են և վատթար ձևերով սրբապղծւած բոլոր եկեղեցիները: Ներկայումս Փամբակում չի գործում ո՛չ մի դպրոց, ո՛չ մի կօօպէրատիւ:

«Վախճարները ամբողջ հինգ ամիս ապրել են գիւղերի հաշուին և բառի իսկական իմաստով ոչնչացրել են ոչխար, հաւ, ձու, իւղ, պանիր, կաթ և այլ մթերքներ: Եւ այսօր հայ չինականի չէն օթևոք կատարեալ ամայութիւն է ներկայացնում:

«Ինչ որ ասւեց Փամբակի մասին, նոյնը կարելի է կրկնել Լոռիի մասին»:

Լոռի-Փամբակի նիւթական կորուստը, խիստ մօտաւոր թւերով, հաշււած է, մօտ 45 միլիոն րուբլի — չուրջ 15 միլիոն դոլար:

Եւ այս դեռ մի չրջանում, որը, օրինակ, Շեբռակի կամ Սուրմալուի համեմատութեամբ, աւելի քիչ էր վնասւած: Կարելի է երևակայել, թէ ինչ էր կատարւում միւս չրջաններում: Իրօք որ, «այտտեղից թիւրքն էր անցել»...



Ա. ԻՆՖԻԱՋՅԱՆ



Տ. ԱՐՄԱՆԵՆԱՆ



Ա. ԲԱԲԱԼԱՆ



Գ. ՅԱԿՈԲՅԱՆՅԱՆ

ԳԼՈՒԽ Դ.

ՀԱՑ — ՎՐԱՑԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՎԻՃԸ

Կօալիցիոն կառավարութեան օրով կատարած ամենախոշոր դէպքը եղաւ, անշուշտ, Հայ-Վրացական բախումը, որ ահագին աղբատարձում ունեցաւ երկու երկրների ճակատագրի վրայ:

Ինչպէս տեսանք նախորդաց գլուխներում, Հայ-Վրացական յարաբերութիւնները լաւ չէին: 1918Թ. ամառը, Հայերն ու Վրացիները Թիֆլիսում, երկու քշտամի կողմեր էին: Դրութիւնը չմեղմացաւ և՛ Հայաստանի կառավարութեան Երևան մեկնելուց յետոյ: Ընդհակառակը, աւելի և աւելց:

Նախկին հակամարտութիւնների, դժգոհութիւնների և սրտցաւութիւնների վրա, այժմ, երբ Վրաստանն ու Հայաստանը այլևս անկախ պետութիւններ էին, աւելացաւ և՛ սահմանային վէճը, և՛ անդրկովկասեան ընդհանուր գոյքերի բաժանման խնդիրը, և՛ մի շարք ուրիշ ցաւոտ հարցեր:

Առանձնապէս ախտաւոր ձևեր ստացաւ սահմանային խնդիրը: Վրացիները, որ անկախութենից առաջ, բոլորովին համամիտ էին հայերին և մէկից աւելի անգամներ պաշտօնապէս յայտարարել էին, որ Ախալքալաքի գաւառն ու Բորչալուի շրջանի լեռնային մասը՝ Լոռին համարում են հայկական հողամաս, այժմ, յանկարծ, պահանջ դրին, որ Ախալքալաքն ու Լոռին մտնեն Վրաստանի սահմանների մէջ: Մերևքիւրին այս պահանջը հիմնաւորում էր Վրաստանի համար «ռազմադիտական սահմաններ» ստեղծելու անհրաժեշտութեամբ. Ախալքալաքի գաւառը և Լոռին մինչև Շահալի անհրաժեշտ էին վրացիներին իրենց պետութեան ապահովութեան համար: Իսկ ժողրաներն առաջ էր քաշում և տնտեսական նկատումներ ու պատմական իրաւունքներ:

1918Թ. յունիսի սկզբին,) Վրաց Ազգ. Խորհրդի նախագահ ժողրաներն և Վրաստանի վարչապետ Ռամիշվիլին այցելեցին Հայոց Ազգային Խորհուրդը և առաջարկեցին Ա. Ահարոնեանին, Յ. Քաջազնունիին ու Ա. Յատիսեանին՝ Բորչալուի բաժանում կատարել ազգային սկզբունքներով՝ խնդրելով նշանակել ներկայացուցիչներ այդ նպատակով: Ախալքալաքի մասին խօսք չկար, որովհետև նա գրաւած էր Քիւրքերի կողմից: Հ. Ազգ. Խորհուրդը նշանակեց Ե. Կարճիկեանին, Գ. Յատիսեանին և զօր. Գ. Դողոնեանին, որոնց Ի.Մերևքիւրին, յանուն Վրաց Ազգ.Խորհրդի յայտարարեց, որ Վրաստանի սահմանների մէջ են մտնելու ամբողջապէս Ախալքալաքի,*

*) Армяно-грузинский вооруженный конфликт, 1919 г. Баку.

Ղազախի ու Բորչալուի գաւառները և Ալէքսանդրապոլի գաւառի Փամբակի չրջանը: Մելիք-Ալիխ բացատրեց, որ նման սահմանների հաստատումը անհաւժեշտ է վրաց ժողովրդի կենսական չահերի համար, որ, ռազմագիտական տեսակէտից, Վրաստանը չի կարող ապրել առանց Լոռի-Փամբակի: Միւս կողմից, հայերի չահն էլ պահանջում է այդ չրջանների Վրաստանի սահմաններում լինելը, որովհետև այդպիսով յանձին Վրաստանի, Կովկասում կը ստեղծուի կենսունակ ու հզօր քրիստոնեայ պետութիւն, որը գերմանացիների աչակցութեամբ կը պաչտպանէ և հայերին:

Այս յայտարարութիւնը յանկարծակիի բերեց հայերին: Նա բոլորովին հակասում էր վրացիների մինչև այդ ասածներին և տարօրինակ էր հնչում, մանաւանդ, Մելիք-Ալիխի բերանում: Հայերի կողմից Ս. Կարնիկեանը վրդովւած՝ բողոքից նրա դէմ՝ ասելով, որ Մելիք-Ալիխի առաջարկածը ոչ այլ ինչ է, եթէ ոչ Հայաստանը Թիւրքիայի, Վրաստանի և Ազրբէյճանի միջև բաժանելու ծրագիրը, որ այդ առաջարկը տրամագծօրէն հակառակն է Ժորդանիայի և Ռամէչվիլի Հայոց Ազգ. Ներկրդին արած հաւաստիացումների:

Պէտք է այսանդ նկատել, որ Թիւրքերի յառաչադացման հետևանքով վրաց-գերմանական զօրամասերը գրաւել էին Բոբչալուն. Հ. Ազգ. Ներկրդի գլխաւոր վրա վրաց ներկայացուցիչները՝ Ժորդանիան ու Ռամիչվիլին վռատհացրին Ա. Ահարոնեանին, Ա. Խատիսեանին և Ց. Քալանթարին, որ այդ գաւառները ժամանակաւոր է, միայն պաչտպանական նպատակներով, և, հէնց որ Թիւրքերը հեռանան, կը հեռանան և վրաց զօրքերը:

Հայերի պատասխանը լսելուց յետոյ, Մելիք-Ալիխ՝ առաջարկեց մի քիչ էլ մտածել և ինքն էլ խոստացաւ խնդիրը նորից քննութեան առնել ընկերների հետ: Բայց, մի քանի օր անցաւ, առանց հայերին իմացնելու, Վրաստանի կառավարութիւնը յայտարարեց Վրաստանի սահմանները՝ մտցնելով նրանց մէջ և վիճելի համարուող հայկական չրջանները: Հայաստանի կառավարութիւնը անմիջապէս բողոքեց այդ յայտարարութեան դէմ, սակայն, վրացիները չարունակեցին մնալ իրենց որոշման վրա և բռնչալուում վարում էին այնպէս, կարծես այդ չրջանը անվիճելի վրացական հող լինէր: Ծանր տուրքեր էին դնում հայերի վրա, հեռացնում էին հայաստանեայ կողմնակից պաչտօնեաներին և տեղը նչանակում իրենց մարդկանց, հարկադրում էին հայ դիւղացիներին համախոհականներ ուղարկել Թիֆլիս, որ, իբր թէ, ուզում են միայ Վրաստանի սահմանները, իսկ յետոյ յայտարարելին և զօրահաւաք:

Այս վերջինի դէմ, օգոստ. 26-ին, Հայաստանի դիւանագիտական ներկայացուցիչ Ա. Ջամալեանը Վրաստանի արտաքին գործոց նախարարին յանձնեց հետևեալ բողոքագիրը. «Ներկայացնելով քեզ ամէն ինչ վերջերերիկ չրջանի կոմիսարի տոյն տարւայ յուլ. 27 № 35 գրութիւնը՝ ուղղուած Լեռնային գիւղական կոմիսարին ի մասին 1895—1899թ. ծնեալների զօրակոչի Վրաստանի կողմից, իմ կառավարութեան յանձնարարութեամբ յայտնում եմ ամենավճռական բողոք այն մասին, որ Վրաստանի կառավարութիւնը չօրակոչ է անում Բորչալուի վիճելի չրջանում, որի սեպհականութեան խնդիրը Հայաստանի Հանրապետութիւնը երբէք չի կասկածել և

պարոնայք նախաբարներ փորձանքան և Իսմիլչվիլին գեռ սոյն տարեայ յունիս ամսին յայտարարեցին Քաղաքունչին, Ահմեդխանին ու Քասխանին, որ յիչեալ չրջանը ժամանակաւոր կերպով գրաւած է վրաց զօրքերի կողմից՝ Քիւրքերի ճանապարհը դէպի Քինքիս կտրելու նպատակով:

Վրացիները դէպքը բացատրեցին «Քիւրքիստան»ների և խոստացան հետաքննութեան հրահանգներ տալ, բայց իրենց ընթացքը չարունակեցին անչլչալ: Սեպտ. 29-ին Ջամալեանը մի նոր համենմուհանական բողոք ևս ուղարկեց վրաց կառավարութեան՝ յայտնելով թէ՝ «մինչև այսօր էլ չարունակում եմ ստանալ տեղեկութիւններ վերջին գաւառ բնակիչների կողմից, որոնք զանգատւում են, որ վրաց իչխանութիւնները զօրահոլ են անում»: Այս բողոքն էլ ունեցաւ նախկինի հետևանքը. սիրալիր խոստում և ոչդադրած գործելակերպի չարունակութիւն:

Ցարաբերութիւնները աւելի ևս լարուեցին հոկտեմբերին, երբ, Հայաստանի կառավարութեան բազմաթիւ դիմումների հետևանքով, Քիւրքերը սկսեցին պարպել Լոռի-Փամբակի չրջանը և հայ զօրքերը Ծրօի գլխաւորութեամբ, գրաւեցին նրանց Թողած հողերը: Վրաց կառավարութիւնը հայերի այդ քայլը գտաւ ապօրինի: Հոկտ. 19-ին Վրաստանի արտաքին գործոց նախարարը ուղարկեց Հայաստանի դիւանագիտական ներկայացուցիչ Ջամալեանին հետևեալ բողոքագիրը. «Վրաստանի Հանրապետութեան կառավարութիւնը տեղեկացաւ, որ Քիւրքիս նահանգի մէկը մասը՝ Ծորքը կայազանից սկսած մինչև սահմանակից կամուրջը, այլ և Ամահնիի մօտի չրէ՜ններըը, ասյն հոկտ. 18-ին, գրաւել են հայկական կանոնաւոր զօրքերի առաջին և չորրորդ հրացանաձիգ գնդերի կողմից: Վրաց կառավարութիւնը, որ միշտ պատրաստ է խաղաղ, փոխադարձ համաձայնութեան միջոցով կարգաւորել սահմանների հարցը բարեկամ Հայաստանի Հանրապետութեան հետ, իր պարտականութիւնն է համարում յայտարարելու, որ քանի այդպիսի համաձայնութիւն չի կայացել, հայկական զօրամասերի մուտքը Քիւրքիսի նահանգի սահմաններից ներս վրաց կառավարութեան կողմից կը գնահատուի որպէս Հայաստանի կողմից արուած ակնեղուկ մի քշտամասկան քայլ Վրաստանի նկատմամբ»:

Իսկ յաջորդ օրը, հոկտ. 20-ին, Ամանհնում կանգնած գրահապատ գնացքների պետ Գոգուաձէն ստացաւ զինուորական նախարարի հրամանը՝ պահանջել հայ զօրամասերից, որ անմիջապէս հետևան Լոռիից և ամբողջ տարածութիւնը, մէկը լինելով և Շահալին, յանձնեն վրացիներին: Եւ նոյն օրն և նր Գոգուաձէն հայ սահմանապահ վաչտի հրամանատարի միջոցով Հայաստանի կառավարութեան ուղարկեց հետևեալ հեռագիր-վերջնագիրը. «Հիմնուելով Վրաստանի Հանրապետութեան զինուրական նախարարի № 672 հեռագրի վրա՝ յանձնարարում եմ ձեզ 24 ժամուայ ընթացքում տեղակայեցնել ձեր կառավարութեան, որ դուք պէտք է հետևանք ձեր այժմ գրաւած տեղից Շահալի կայարանից այն կողմը: Սպասում եմ ձեր պատասխանին մինչև 22 հոկտ. ժամը 2 կէսօրից յետոյ»:

Յաջորդ օրը, հոկտ. 21-ին, Գոգուաձէն ստացաւ զինուրական նախարարութեան հետևեալ հեռագիրը. «Վաղը, հոկտ. 22-ին ժամը 12-ին, երկաթուղով ձեզ մօտ են գալիս նահանգային գումարտակի 250 զինուորներ, ղեկավ Վորոնցովկա է չարժուում զօր. Ծիցիանովի զօրամասը՝ բաղկացած մարտկոցներից և հետևակներից: Զօր. Ծիցիանովի գալուց յետոյ, նա

կընդունէ բոլոր օրքերի հրամանատարութիւնը: Ամբողջ Բոլշևիկի գաւառի մաքրագործման և մինչև Խիֆլիկի նահանգի սահմանները հեռանալու պահը անպայման էր:

Իսկ մէկ օր յետոյ, հոկտ. 22-ին, գնդ. Նախարար Գէորգեանէն հեռագրեց նոյն Գոգուաձէին, թէ՝ «քանի որ Հայաստանի ներկայացուցիչ Ջամալեանը իր կառավարութիւնից դեռ չի ստացել մեր դիմումի պատասխանը, հրամայում եմ չտապով գրաւել այն գիծը, որ մենք բռնում էինք թիւրքերի հեռանալուց առաջ և ոչ օքի Թոյլ չտալ անցնելու ո՛չ այդ գծի այն կողմը, ո՛չ այս կողմը: Մեր օրքերը դեռ չպէտք է անցնեն այդ գիծը»: Եւ մի լրացուցիչ հեռագրով էլ հրամայեց՝ «առանց վրաց կառավարութեան արտօնութեան Հայաստանից ոչ օքի Թոյլ չտալ մտնելու Վրաստան»:


Այսպէս, ուրեմն, վրաց կառավարութիւնը պատրաստում էր գէնքի ուժով ստիպելու հայերին, որ դուրս գան Լոռիից՝ վրացիներին յանձնելով և Շահալի կայարանը: Ի՞նչ է այս, եթէ ոչ պատերազմի որոշում, որովհետև վրաց զինավարները չէին կարող չհասկանալ, որ հայերը յօժար կամքով չէին կատարելու իրենց պահանջը: Նրանց Քև էր տալիս Գէորմանիայի հովանաւորութիւնը: Անշուշտ, նրանք հաւատում էին, որ գինած բախումի դէպքում, գերմանացիները կը միջամտեն ու կը ստիպեն հայերին կատարել վրացական պահանջը:

Եւ, յիրաւի, մինչ Գէորգաձէն պատերազմի պատրաստութիւններ էր տեսնում, Գերմանիայի գինուորական ներկայացուցիչ Ֆոն-Քրեսը աշխատում էր համոզել Հայաստանի ներկայացուցիչ Ջամալեանին ընդունել վրացիների վերջնագիրը և առանց արիւնհեղութեան դատարկել «վրացական» հողը: Ջամալեանի հարցումին, թէ՝ արդեօք Գերմանիան կը խառնւի՞ հայ-վրացական սահմանային վէճին, Ֆոն-Քրեսը պատասխանեց դրական մտքով. Գերմանիան, որպէս Վրաստանի դաշնակից, պարտաւորւած է պաշտպանել վերջինիս երկիրը այն սահմաններում, ինչ սահմաններում որ ցոյց կը տայ վրաց կառավարութիւնը: Այսպիսով, պարզ էր դառնում վրաց կառավարութեան լայն ախորժակն ու վճռական դիրքը:

Ի՞նչ կարող էին անել այս պայմաններում հայերը:

Վրացիների վերջնագիրը Երևանում ստացւեց հոկտ. 21-ի գիշերը և անսահման զայրոյթ ու վրդովմունք առաջ բերեց բոլոր շրջաններում: Հայաստանի Հորհրդի հոկտ. 22-ի նիստում վարչապետ Քաջազնունին արտ. հետևեալ զեկուցումը. —

«Մեր հողի մի մասը, Լոռի-Փամբակի շրջանում, գրաււած էր Թիւրքական օրքերով: Կառավարութիւնը մի քանի անգամ պաշտօնական բողոքներ է ներկայացրել Քիւրքաց կառավարութեան, ինչպէս նաև գերմանական և աւստրիական միսիաներին ու գերմանական կառավարութեան և միշտ մի պատասխան է ստացել, որ գրաւումը ժամանակաւոր է: Հոկտեմբեր 5-ին Թաւրիզ վաշտն Երևանում յայտնեց մեզ, որ հրաման է ստացել դատարկել վերոյիշեալ երկրամասերը: Անմիջապէս մեր և Թիւրքաց չտանները գծեցին այդ գործողութեան ծրագիրը, որը սկսւեց հոկտ. 18-ին և առանց որև է միջադէպի չարունակւեց մինչև հոկտ. 21-ը, երբ գիշերւայ ժամը 12-ին հետևեալ ստացանք Թրօից այն մասին, որ վրացիները վերջնագիր են ներկայացրել՝ դատարկելու համար մեր ստացած չրջանը մինչև Շահալի՝ ու



ԳՈՒԳԱՐԱՑ ՀԱՅԱՔԱՐ



ԼՈՌՈՒՄ

չարժեցին հոթերի վրայով։ Նա խնդրում է կարգադրութիւն անել։ Կառավարիչը որոշեց չընդունել վերինագիրը, չյանձնել Շահալի կայսրանը և զինուած ուժի դիմելու պատրաստի՝ ցոյց տալ դիմադրութիւն։

Սուացանք Դիլիջանից և երեք հեռագիր· առաջին, որ մերոնք գրաւել են հոթերը, երկրորդ, որ պարսել են հոթերը վերամացի լէյտենանտի պահակնով և երրորդ, որ մերոնք նորէն նկել են հոթեր։ Մեր կառավարութիւնը Թիֆլիս ուղարկեց մի հեռագիր Ժորդանիային, որով առաջարկում է զինուած ընդհարում չառաջացնել, այլ աշխատել ընդհարումը լուծել խաղաղ ճանապարհով։

Ջամալեանից ստացանք երկու ուղիղ–հեռագիր· առաջինով յայտնում է, որ ինքը յուշագիր է ստացել՝ դաւարկելու Թիֆլիսի նահանգի այն մասը, որ Ռուսում են թիւրքական զօրքերը· երկրորդով, որ նա տեսակցել է վրաց արտաքին գործոց նախարարի հետ ու վերջինս առաջարկել է Ռուսել գրաւած չրջանները և ապա բանակցութիւններ սկսել հարցը խաղաղութեամբ վերլուծելու համար. կառավարութիւնը կանգնած է այն տեսակէտի վրայ, որ հարցը պէտք է լուծել խաղաղ ճանապարհով և պահել բարի–դրացիական յարաբերութիւնները։

Այս արտակարգ յայտարարութիւնից յետոյ ընդմիջում արաւ, որի մէջտեղն ստացաւ մի նոր հեռագիր, թէ՝ հայկական զօրամասերը բռնել են Թիւրքլրի Ռուսի ամբողջ չրջանը և որ գրուելիքը հանգիստ է։ Միմիայն գարձի ֆրակցիանները ունեցան խորհրդակցութիւններ, և երբ նիստը վերակսւեց, ամենքի որոշումն արդէն պատրաստ էր։

Կառավարութեան յայտարարութեան առթիւ արտայայտուեցին բազմաթիւ պատգամաւորներ, որոնք բոլորն էլ չնչտում էին միջադէպը խաղաղ ճանապարհով լուծելու անհրաժեշտութիւնը, բայց եթէ վրացիները դիմեն զինուած ուժի, անհրաժեշտ էր ցոյց տալ դիմադրութիւն։ Ի վերջոյ, ընդունուեց հետեւեալ բանաձեւը· «Լսելով կառավարութեան յայտարարութիւնը՝ Հայաստանի Խորհուրդը հաւանութիւն է տալիս կառավարութեան բռնած քաղաքականութեան ու սրած քայլերին և առաջարկում է նոյն ուղղութեամբ չարունակել»։

Ստանալով Հայ.Խորհրդի հաւանութիւնը՝ Ե.Քաջազնունին հեռագրեց Թիֆլիս, Ա. Ջամալեանին, թէ՝ «Հայաստանի Խորհուրդը լսելով իմ զեկուցումը վրացական № 4303 դիմումի և Շահալին պարսելու մասին արած վերլուծափը–պահանջի, այլ և կառավարութեան ձեռք առած միջոցների մասին՝ որոշեց 1)հաւանութիւն տալ կառավարութեան գործողութիւններին և առաջարկեց նրան յետագայում էլ հետեւել ընդունած ուղղութեան· 2) պարզուք դնել կառավարութեան վրա՝ ամէն ջանք գործել բանակցութիւն խաղաղ ճանապարհով լուծելու համար՝ այն յոյսով, որ Վրաստանն էլ յետ կը կենայ յարձակողական քայլերից և չի անցնի իր գրաւած դիծը։ Ինչպիսի հաղորդել այդ մասին վրաց կառավարութեան»։

Մի ուրիշ հեռագիր էլ տուեց Ժորդանիային, պատճէնը՝ Ջամալեանին· Թիֆլիսի զօրամասի պետը հաղորդում է, որ վրաց հրամանատարութիւնը վերինագիրը է ներկայացրել՝ դաւարկելու Շահալի կայսրանը։ Ես հրամայեցի՝ չդաւարկել կայսրանը, և եթէ վրացիները անցնեն յարձակման — պատասխանել։ Ի խուսափումն բարդութիւնների, որոնք կարող են առաջ բերել նոր աղէտներ, յանուն պատերազմից տառապած ու չօշուած Վրաստանի և Հայաստանի բարիքի, յանուն իրաւունքի և արդարութեան

խնդրում եմ չկտ կենալ յարձակողական գործողութիւններից, պահել վրաց զօրքերը նրանց կեցած այժմեայ դիրքի վրա, իսկ սահմանների հարցը լուծել խաղաղ համաձայնութեան ճանապարհով: Ցիչեցնում եմ ձեզ մեր անփակած հանգիստաց յայտարարութիւնը, յունիսին, նոյ Ռամիչվիլիի, Ակաբոնեանի և Ծառխանեանի ներկայութեամբ, թէ՝ Վրաստանը ազգ չունի Լոռիի վրա և գրաւում է նրան ժամանակաւոր կերպով երբորդ պետութեան զրաւման առաջը առնելու նպատակով»:

Թէ ինչով կը վերջանար բողոքագրերի ու հեռագրների այս փոխանակութիւնը, դժուար չէր դուշակել. վրաց կառավարութիւնը մի կողմից պահանջներ էր անում, սպառնալիքներ կարդում, մէս կողմից տննդագին դիւանագիտական պատրաստութիւնների մէջ էր, ուժեղ էր հաւաքում Սանահնի ու Վորոնցովկայի շրջանում և պատրաստ փնտռում, որպէսզի հնարաւոր ընդհարման պատասխանատուութիւնը ձգէ հայերի վրա: Վերջին խմաստը ունի Ն. Ռամիչվիլիի 23 հոկտ. նամակը Ջամալեանին, որի մէջ վրաց արտաքին գործոց նախարարը հաղորդում է. «Ինձնելով ստեղծած դրութիւնը՝ Վրաստանի կառավարութիւնը յանձնարարեց ինձ հաղորդելու ձեզ, որ եթէ հայկական զօրամասերը անյապաղ չպարպեն Քոքինէ—Յաներ գիծը կամ եթէ յետագային զրաւեն որև է հողամաս Թիֆլիսի նահանգի սահմաններում, վրաց կառավարութիւնը կը համարէ այդ պատերազմի յայտարարութիւն Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան կողմից, որի վրա կընկնի երկու հանրապետութիւնների համար ստացուելիք կորստաբեր հետևանքների բովանդակ պատասխանատուութիւնը»:

Եւ զինուորական գործողութիւնները սկսեցին էլ. զօր. Յուլուկիձէի հրամանով, հոկտ. 23-ին, Դոգուաձէի զրահապատը ոմբակոծեց Շընկիր գիւղը, և վրացի զինուորները ընդհարում ունեցան հայ գիւղացիների և այդ շրջանում գտնուղ հայկական փոքրիկ զօրամասի հետ: Հոկտ. 26-ին Դոգուաձէն իր զրահապատով անցաւ մինչև Հայրում և պահանջից հայ գիւղացիներից ճանաչել Վրաստանի իշխանութիւնը: Մանր դէպքեր տեղի ունեցան և ուրիշ կողմերը:

Մ՚Քնոլորտը խտացած էր՝ պատրաստ պայքելու: Դրան նպաստում էր վրաց ղեկավարների յոխորտ դիրքը: Հայ-վրացական սահմանային վէճը դարձաւ նաև Վրաստանի Միջազգային հարցապնդման նիւթ, և արտաքին գործոց նախարար Ն. Ռամիչվիլին հրոյր քիւրիմացու-քիւններըը վերացնելու նպատակով յայտարարեց, թէ «Թիֆլիսի նահանգը անվճռելիօրէն համարտւում է Վրաստանի հող», իսկ զինուորական նախարար Գէորգաձէն ասելացրեց, որ ինքը «զէնքի ուժով կը ճնշէ ապստամբութիւնը»:

Բարեբախտաբար, վրա հասան զերմանացիների արևմուտքում կրած պարտութիւնների լուրերը, զօր. Ֆոն-Քրեսի հետ կապւած յոյսերը սկսեցին քուանալ, և վրաց վարիչները խոհեմութիւն համարեցին զսպել իրենց ագահաշունչ եռանդը:

Մի ուրիչ դէպք նոյնպէս իւր ներքին հայ-վրացական փոխյարաբերութիւնների խարդախի վրա: Հոկտ. 17-ին Վրաստանի արտաքին գործոց

նախարար Ն. Ռամիչվիլին Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնականների կառավարությունների ուղեց հետևյալ դիտումները.

«Ես կհասել է այն վայրկյանը, որ Անդրկովկասի և Կովկասի կառավարությունները, լցած փոխադարձ վստահության ոգով, իրար օգնության գալու պատրաստակամությամբ և միմյանց անկախությունը ընդունելով՝ հանդես գան փոխադարձ օգնությամբ և համերաշխությամբ իրանհանգստելու ապագայ վհատոդովին ստեղծած հանրապետությունների ճանաչումն ու փոխադարձ չարերի պաշտպանությունը, ինչպես և լուծելու բոլոր վիճելի հարցերը, գրանց Քասում և սահմանների հարցը՝ չհետզրդռած պետությունների համաձայնությամբ կամ, եթե այդ անցնի ապարդիւն, իրաւարարության միջոցով, և մշակելու փոխադարձ այնպիսի պարտաւորությունները, որոնց ուժով ոչ ոք իրաւունք չունենայ որև է պետության հետ համաձայնության մէջ մտնել՝ ի վնաս խորհրդաժողովին մասնակցող ժողովուրդներից որև է մէկի:

Այս նպատակով վրաց հանրապետության կառավարությունը առաջարկում է Ադրբէջանի և Հայաստանի հանրապետություններին ու Հիւսիսային Կովկասի Լեռնական ժողովուրդների Միության կառավարության անհրաժեշտ լիազորություններով երկուական ներկայացուցիչ ուղարկել Թիֆլիս, ոչ քիչ նոյեմբերի 10-ին, յեթե կայ ժամը 12-ին՝ արտաքին գործոց նախարարության չենջում կայանալիք խորհրդաժողովին մասնակցելու համար:

Վրաց հանրապետության կառավարությունը որոշել է խորհրդաժողովի քննության դնել հետևեալ հարցերը.

1. Խորհրդաժողովին հրաւիրուած պետությունների անկախության ճանաչումը փոխադարձաբար:

2. Վիճելի խնդիրների, որոնց մէջ և սահմանավէճերի լուծումը՝ փոխադարձ համաձայնությամբ կամ իրաւարարությամբ:

3. Փոխադարձ պարտաւորություն՝ չկայացնելու համաձայնություն որև է պետության հետ ի վնաս խորհրդաժողովին մասնակցող պետությանց:

4. Համերաշխ և փոխադարձ վստահությամբ հանդես գալ համաշխարհային վհատոդովում հանրապետությունների անկախությունը ճանաչելու տալու և ընդհանուր շահերը պաշտպանելու նպատակով»:

Այս դիտումը տարօրինակ էր քիչ շատ ձևի և քիչ բովանդակությամբ. վրաց կառավարությունը որոշել էր խորհրդաժողովի օրակարգը, կազմը, տեղն ու ժամը և ուղարկում էր իր հարևան պետությունների կառավարությունների ի գործադրութիւն: Այդպես կարող էր վարուել մի հանդգնպետ էր ստորադաս գաւառապետի հետ, բայց անհանդուրժելի էր անկախ պետությունների փոխյարաբերությունների մէջ*): Եւ հասկանալի է, որ այդ դրությունը երևանում ընդունելց գարմանքով ու վրդովմունքով:

Հայերը ունէին դժգոհելու և ուրիչ պատճառ. Ռամիչվիլին ինքնագլուխ օրակարգի մէջ էր դրել և հասմանավէճերի լուծումը: Երևանում համաքաւում էր կասկածից դուրս, որ վրացիներն ու Թուրքերը միացած,

*) «Ռամիչվիլիի տարադրած հրաւիրագրին ոչին, ընդգծում է Ալալովը, մի քիչ... ներքին դրոշոց նախարարի լրկարեցականն էր լինելու»:

ինչպէս վարուում էին անցեալում, Հայաստանին կը պարտադրեն անընդունելի սահմանադիծ, մինչդեռ սահմանային խնդիրը իր էութեամբ այնպէս էր, որ կարող էր լուծուել միայն հաշտարարութեամբ կողմերի միջև առանձին-առանձին:

Հայաստանի Հորհրդի նոյեմբ. 8-ի նիստում քննուեց Ռամբուվիլիէի դիմումագիրը, և առաջին անգամը Հայաստանի Հանրապետութեան կեանքում Հորհրդի բոլոր կուսակցութիւնները, առանց բացառութեան, կանգնեցին մեկնոյն տեսակէտի վրա՝ բուռն կերպով դատապարտելով Վրաստանի կառավարութեան մենատիրական ձգտումները: Եւ որ հետաքրքրական է, ամենաուժգին քննադատողներն ու դատափետողները եղան հայ սոցիալ-դեմոկրատները, որոնք դեռ շաբաթներ առաջ կազմակերպական կապեր պահել վրաց սոցիալ-դեմոկրատների հետ: Սոցիալ-դեմոկրատ պատգամաւոր Ա. Մալխասեանը բուռն կերպով բողոքեց խորհրդաժողովը հրաւիրելու տաքորինակ ձևի դէմ, որը այս դէպքում համաձայն էր բովանդակութեան. իր քայլով Վրաստանի կառավարութիւնը խախտում էր հաւասարութեան սկզբունքը, կամենում էր ուրիշների վզին փաթաթել իր կամքը: Նա ենթագծելուց կերպով որոշել է խորհրդաժողովի վայրն ու ժամանակը, օրակարգն ու կազմը: Նման դրութիւն կարելի չէ հանդուրժել:

Անհանդուրժելի գտաւ և ընտ ձևի ու ըստ էութեան դէմ արտայայտուեց նաև սոցիալիստ-յեղափոխական ֆրակցիան: Նոյն պատճառաբանութիւններից մեկնելով՝ բացասաբար վերաբերուեցին և դաշնակցական ու ժողովրդական ֆրակցիաները: Եւ գրեթէ միաձայնութեամբ Հորհուրդը որոշեց չմասնակցել նոյեմբ. 10-ի խորհրդաժողովին և յանձնարարել կառավարութեան, որ աշխատի «հող պատրաստել մասնակցելու խորհրդաժողովին՝ նախօրօք համաձայնութեան գալով նրա կազմի, օրակարգի, տեղի ու ժամանակի նկատմամբ»: Միաժամանակ Հորհուրդը որոշեց, որ հայ-վրացական սահմանային վէճը առընչութիւն չունի այդ խորհրդաժողովի հետ և պէտք է վճռուի միայն երկու հանրապետութիւնների ներկայացուցիչների մէջ ուղիղ, փոխադարձ համաձայնութեամբ»:

Եւ Ռամբուվիլիի ծրագրած խորհրդաժողովը չկայացաւ:

Քիչ չէին և ուրիշ առիթներ, որոնք բարդացնում էին հայ-վրացական փոխյարաբերութիւնները: Հայաստանը կոտրած էր ամբողջ աչխարհից, խեղդւում էր իր լեռներում և, իրաւամբ, սպասում էր, որ հարևան Վրաստանը մի քիչ մարդկային վերաբերում կունենայ իրեն հանդէպ: Ընդհակառակը, վրացիները, կարծես դիտմամբ, խնդիրներ էին ստեղծում, վիրաւորում էին հայերի արժանապատուութիւնը, դժուարացնում հաղորդակցութիւնը դրսի հետ, նոյնիսկ փակում էին իրենց սահմանները հայերի առջև: Գաղտուկ բռնելով Թրանզիտային համաձայնութեան չկայութիւնը Հայաստանի և Վրաստանի միջև, վրաց կառավարութիւնը արգելքներ էր հանում հայերի առջև: Սովի և հիւանդութիւնների ճիրաններում գալարուող Հայաստանի համար այս վերաբերումը համարւում էր անխիղճ, տմարդի, թշնամական:

Բազմաթիւ օրինակներից առաջ թերենք միայն մէկը. Նոյեմբերի կէսերին Հայաստանի դիւանագիտական ներկայացուցիչը Թիֆլիսում դիմեց վրաց արտաքին գործոց նախարարին՝ խնդրելով արտօնել Բագուում գնած 40 ձիատեղն նաւերն ու 9 ձիատերն բեռնիկը Վրաստանի վրայով փոխադրել Հայաստան։ Իբր փոխարինութիւն այդ արտօնութեան Ջամալեանը համաձայնութիւն էր յայտնում ապրանքների 20% յանձնել Վրաստանի կառավարութեան։ Մեծ դժուարութեամբ ու ձղձգումներով կարելի եղաւ ստանալ իրաւունք, բայց ահա Վրաստանի հաղորդակցութեան նախարարը յայտնում է Հայաստանի դիւանագիտ. ներկայացուցչին, որ զինուորական նախարարի կարգադրութեամբ հարաւային երկաթուղագծի վրա զինուորական զրուխին յայտարարուած լինելու հետևանքով, բացի թիւրքական կառավարական գնացքներից, ոչ մի գնացք չի թողնելու հայ–վրացական սահմանից դէպի հարաւ։ Ի հարկէ, Բագուի նաւերն ու բեռնիկը Հայաստան չհնեց։ Նման պատճառներով Հայաստանը բոլորովին անգօր էր արտաքին աշխարհից որև է ապրանք, ուտելիք ու դեղօրայք ներմուծելու։ Կարելի է երևակայել, թէ վրացիների այս ընթացքը ինչպիսի տրամադրութիւն էր առաջ բերում սովահար Հայաստանում։

Այսպիսի պայմաններում ծնունդ առաւ այն բախումը, որը վերջ ի վերոյ, վեր ածուեց հայ–վրացական արիւնոտ պատերազմի։ Այդ պատերազմի անմիջական առիթը վրաց զօրամասերի գործած բռնութիւններն էին Լոռիի հայ գիւղերում և Ախալքալաքի գրաւումը թիւրքերի հետանալուց յետոյ։

Ամբողջ նոյեմբեր ամբոխ և դեկտեմբեր սկզբներին Հայաստանի կառավարութիւնը անվերջ դանգատներ ու բողոքներ էր ստանում լոռեցիներից վրաց զօրքերի գործած կամայականութիւնների, թալանի ու բռնութիւնների դէմ։ Վրաց զինուորները ապրում էին հայկական գիւղերում։ ուտելիքը առանց վճարումի առնում էին գիւղերից։ խուզարկութիւնների պատրւակով մտնում էին տները և տանում ինչ որ պատահից։ Ձեռք էին տալիս կանանց, հարցում, ամէն տեսակ խայտառակութիւններ գործ դնում։ խլանութիւնները բռնագրաւում էին գիւղացիների ցորենը, անասունները, գինին, խոտը, իւղը, պանիրը, գետնախնձորը, հաւը, հաւկիթը։ պահանջում էին գէջ ու ռազմամթերք։ Երբեմն ամբողջ գիւղեր ինչպէս, օրինակ, Շուլաւերը, խուզարկութեան ու կողոպտուի էին ենթարկւում։ Վրացիները պահում էին իրենց այնպէս, կարծես թշնամի երկրում լինէին։ Ենիչէրական կարգեր էին սահմանւել Լոռիում, ուր վրացին ամէն ինչ էր, հայը՝ ճնշուած ռաիա։

Մասնաւորապէս ծանր էր ուզունլար գիւղի բնակիչների վիճակը. վրացիները մասնաւոր ուշադրութիւն էին դարձնում երմոլոյա ուզունլարի վրա և նրանց գինուորները ինչ սանձարձակութիւն ասես չէին գործում ուզունլարցիների գլխին։ Այսպէս, Վորոնցովկայի շրջանի վրաց զօրքերի հրամանատար գնդ. Ռամազովը, նոյեմբ. 21–ին, տեղեկագրում էր զօր. Ծուլուկիձեին. «Հաղորդում եմ ձեզ, որ այսօր, ժամը 3–ին, հրացանաձգութիւն էր լսւում ուզունլարի ուղղութեամբ։ Ես ուղարկեցի պահակներ տե–

դակալ Շուբլաձէի հետ՝ բանի չուքիւնը հասկանալու և հրացանագուբիւնը վերջ տալու համար։ Տեղ. Շուբլաձէի երևալով՝ հրացանագուբիւնը վերջ է գտնում։ Պարզուեց, որ պահակային հարիւրեակի գինուորները և Ուզունլարի բնակիչները հրացանագուբեան են բռնուել, որի ժամանակ սպանուել է Ուզունլարի պահակը և վիրաւորուել է մէն, այլ և գինուորների ձեռքից սասանուկ ծեծ կերել գիւղի կոմիսարը։·· Երևում է, որ գինուորները յանցաւոր են եղել, բայց գիւղացիների յանդգնած քայլը և գինուած չղիանեների յարձակելը ասիք է տալիս մտածելու, որ գիւղում չատ գէնք կայ։ Անհրաժեչտ է խիստ խուզարկուբիւն անել գիւղի բոլոր տներում և միևնոյն ժամանակ հարկաւոր է վռնտել այստեղի երկու հարիւրեակները և փոխարինել ուրիշ զօրամասերով, որովհետև գինուորները սասանուկ երես են առած և Քալանեներով յուզում են տեղական բնակիչներին»։

Երբ ուզունլարցիները ներկայացուցիչներ ուղարկեցին Սանահին՝ բողոքելու համար գինուորների գործած չահատակուբիւնների դէմ, զօր. Ճուլուխիձէն ձերբակալեց նրանց և Ուզունլար պատժիչ զօրամաս ուղարկեց՝ գնդացիրներով ու ընդանօթներով։ Դեկտ. 8-ին այս զօրամասը ճանապարհ ընկաւ մի զրահապատ ուղևկցութեամբ։ Ուզունլարցիները գիմաւորելին հրացաններով։ «Զրահապատից, տեղեկացրում էր նրա պետ Խուչեան, պատասխանելինք ընդանօթներով ու գնդացիրներով։ Մեր հետևակները չկարողացան բարձրանալ սարը և նահանջելին մոդնելով մի գնդացիր։ Մեր հետևակները չատ վնասուեցին։ Հայերը մեզ քարեր էին նետում կայարանի վրա, որի հետևանքով պայքեցրին ռազմամքերքով բեռնաւորուած երեք քերբական վագոնները։ Կայարանը ջարդուած էր։ Իսկ վրաց չաղորգակցութեան նախաբարութիւնը դէկտ. 9-ին չաղորդեց, թէ՝ «Դեկտ. 9-ին, Սանահնի մօտի կռիւներից սպանուել են 3 հոգի, նաև վիրաւորուել՝ 1, քէմել վիրաւորուել՝ 1, անհետ կորել՝ 2։ Արձակած է 3.600 գնդակ»։

Երկու օր յետոյ, գեկտ. 11-ին, Գագուաձէն գեկուցանում էր գինուորական նախաբարին. «Այսօր, վաղ առաւօտեան, Ալլահվերդի և Սանահին կայարանների միջև, 102րդ վերստի վրա, ուղին քանդուած է հայերի ձեռքով։ № 3 զրահապատը ընդանօթաձգութիւն ունեցաւ։ Ես կարգադրել եմ նորոգել ճանապարհը»։

Վրացիները ամբողջ երկու օր ընդանօթի բռնեցին Ուզունլար գիւղը։ Դեկտ. 10-ին Ուզունլարի ներկայացուցիչներ Տարեանն ու Ղաբաքճիչեանը հետևեալ ազերսալի հեռագիրը տուին Երևան, գինուորական նախաբարին. «Միաձգնում ենք, որ դէկտ. 8-ին վրաց զօրքերը ուզեցին գրաւել Ուզունլար գիւղը։ Մենց չունեինք նրանց սուպատուլու, և հաւաբակուբիւնը ժերժեց բնկուել։ Զօրքերը վճռեցին գրաւել ուժով։ Երկու օր է Ուզունլարը գանուում է ընդանօթների կրակի տակ։ Վրացիները սպառնում են կոտորել ուզունլարցիներին։ Հայար տուն ենք և խնդրում ենք անել չատ կարգադրութիւն՝ օգնութիւն հասցնելու կորչող ժողովրդին»։

Հայաստանի կառավարութիւնը, որ ահագին նիւթ ունէր Լոռիի ծանր կացութեան մասին, նոյն օրն և ութ, արտաքին գործոց նախարար Ս. Տիգրանեանի տեսարգութեամբ Թիֆլիս ուղարկեց հետևեալ հեռագիր-բողոքը. «Վաբաբերկիսա—Լոռիի զօրամասի պետը հաղորդում է, որ ուզունլարցիները երկրորդ օրն է գանւում են վրաց զօրքերի ընդանօթային և գնդացիրային կրակի տակ, որ Լոռիի հեսիսային մասի հայկական գիւղերը մատնում են թալանի ու բռնութիւնների նոյն զօրքերի կողմից։ Հայաստանի կառավա-

բութիւնը վճռական կերպով բողոքում է վրաց գօրքերի ասենագրականութիւնների դէմ մի չբնաւում, որը կազմում է Հայաստանի հողամասը և թանութիւնամբ գրաւուած է վրաց գօրքերով: Եթէ անմիջապէս միջոցներ ձեռք չառնէք վերջ տալու, հետևանքների պատասխանատուութիւնը կառավարութիւնս վերցնում է իր վրայից:

Շուտով յայտնի գարձաւ, նոյնպէս, որ միայն Ուդունչարը չէր վրաց գօրքերի ոտքագործութեանց զոհը. Ախրէ, Ամուլ, Ակորի և մի շարք ուրիշ գիւղեր էլ ենթարկուել էին հարստահարութիւնների, կողոպուտի ու բռնութեանց: Եւ նման երևոյթները ընդհանուր էին Լոռիի բոլոր վայրերում, ուր կանգնած էին վրաց զօրամասերը:

Մինչ հայ-վրացական սահմանի վրա տեղի էին ունենում այս դէպքերը, երևանում կատարւում էին դիւանագիտական բանակցութիւններ Հայաստանի և Վրաստանի միջև: Նոյեմբերի սկզբներին Երևան էր եկել Վրաստանի ներկայացուցիչ Ս. Մդիվանին՝ հայ-վրացական սահմանային վէճը լուծելու նպատակով: Նոյ. 29-ին նա գրաւոր կերպով հաղորդեց Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան, որ ինքը չլիազօրուած է վերջնականապէս լուծելու սահմանային հարցը և կայացնելիք վճիռը ներկայացնելու Վրաստանի կառավարութեան ի վաւերացումն: Եւ նոյն գրութեան մէջ որոշում էր վրացիների սահմանային պահանջները. «վրաց հանրապետութեան կառավարութեան պահանջով սահմանագիծը Հայաստանի և Վրաստանի հանրապետութիւնների միջև պէտք է անցնի Թիֆլիսի նահանգի հին սահմանով, այսինքն՝ այն գծով, որը այժմ բաժանում է Ախալքալաքի ու Բորչալուի գաւառները նախկին Երևանի նահանգի նախկին Ալեքսանդրապոլ գաւառից՝ հարաւում, իսկ արևելքից՝ այն գծով, որը բաժանում է Բորչալուի գաւառը նախկին Գանձակի նահանգի նախկին Ղազախի գաւառից»:

Ի պատասխան այս գրութեան, Մ. Տիգրանեանը հաղորդեց, նոյնպէս գրաւոր, որ սահմանը Հայաստանի և Վրաստանի միջև որոշուած է հայ ու վրաց ներկայացուցիչների միջև մէկից աւելի անգամներ հաստատուած է 1917 թւի ընթացքին: Այդ սահմանը, որ հիմնուած է ազգագրական սկզբունքի վրա, Հայաստանի կառավարութեան համար ի գօրու է և այժմ: Ըստ 1917 թ. հայ-վրացական համաձայնութեան Ախալքալաքի գաւառը ամբողջովին և Բորչալուի գաւառի մեծ մասը, ուր հայ ազգաբնակութիւնը կազմում է բացարձակ մեծամասնութիւն, անկապտելի կտորն են Հայաստանին: Միաժամանակ Բորչալուի գաւառի հիւսիսային մասը և Թիֆլիսի գաւառի հիւսիսային մասը միևնոյն Թիֆլիս քաղաքը, չնայած որ այս մասում հայ բնակչութիւնը աւելի է վրացականից, մտցուած են Վրաստանի կազմի մէջ՝ այն հաշուով, որ Վրաստանի հայերը կունենան ազգային-մշակութային ինքնաբուխման երաչխիքներ: Եթէ, սակայն, վրաց կառավարութիւնը պնդում է նոր սահմանագծի վրա, այն ժամանակ սահմանային խնդիրը պէտք է քննէի թողնուի՝ ոչ միայն Ախալքալաքի և Լոռիի, այլ և «այն շրջանների (Բորչալուի ու Թիֆլիսի գաւառների) վերաբերմամբ, որոնք կարող են առանց վէճի միացուել Վրաստանին միայն այն դէպքում, երբ Վրաստանի և Հայաստանի հողային բաժանման ամբողջ նախկին ծրագիրը պահպանուի»:

Վրաց ներկայացուցիչը չարունակից պնդել իր տեսակետի վրա, իսկ այդ միջոցին Վրաստանի կառավարությունը, օգտվելով Թիւրքերի հեռանալուց, հակառակ Հայաստանի կառավարության կարուկ բողոքների, գրաւեց Ախալքալաքի գաւառը։ դեկտ. 5-ին վրաց զօրքերը, զօր. Մակալաձի գլխաւորութեամբ, մտան Ախալքալաք և յայտարարեցին միացած Վրաստանին։ Վրաց կառավարութիւնը պատասխանեց Հայաստանի կառավարութեան, թէ՝ «Ախալքալաքի գաւառի նուաճման հարցը ո՛չ պատմական, ո՛չ քաղաքական և ոչ էլ բարոյական տեսակէտից վիճելի չէ»։ Եւ այդ «անվիճելի» իրաւունքը իրականացնելու համար դեկտ. 8 ու 9-ին, վրաց զօրքերը գինքի ուժով տիրեցին սակաւամարդ հայ զօրամասին Թողնել Ախալքալաքի գաւառի ՆՓրեմովկա և Տրոյիցկոյէ գիւղերը, որ հայերը գրաւել էին Թիւրքերի հեռանալուց յետոյ։

Ախալքալաքի ու Լոռիի դէպքերը մեծ յուզում առաջ բերին երևանում։ Կուսակցութիւնները, Հայաստանի Ժողովրդը, կառավարութիւնը, հանրային կարծիքը միաբերան դատապարտում էին վրացիների ընթացքը։ Հայ. Ժողովուրդը մի շարք դռնիպակ նիստերում քննելով դրութիւնը՝ կառավարութեան ուշ զործելու պատուիրեց՝ պարտաւորեցնելով նրան դիմել ամէն միջոցի՝ պաշտպանելու համար Հայաստանի իրաւունքը Ախալքալաքի, բայց, մանաւանդ, Լոռիի վերաբերմամբ։ Այս հարցում տարակարծութիւն չկար։ բոլոր կուսակցութիւնները Լոռին համարում էին Հայաստանի անբաժանելի մաս։ Հայ ժողովրդի բոլոր խաւերի գազափարն էր արտայայտում, երբ սահմանավճռի առիթ պատմական էջեր գրում էր։ վերկու հազար տարուայ պատմութիւնը տանում հասցնում է այն եզրակացութեան, որ առանց Լոռու երկար դարաշրջաններում չէր կարելի երևակայել Հայաստան։ Ներկայումս այս բանն ասելի ևս աներևակայելի պիտի համարել, քանի որ կորել Լոռին Հայաստանի մարմնից կը նշանակէ յօշոտել նրա ամբողջ անցեալը և նրա կուլտուրական զանձերը — դարերի և հարիւրաւոր սերունդների մեծագործութիւնը Թալանի տալ*)։

Ծերթիթելի համար Լոռին «տագմագիտական սահման» էր, հայերի համար՝ հայկական մարմնի մի մաս։ Եւ այդ մարմինն էր, որ յօշոտուում էր չարաչար վրաց զօրավարների կողմից։ Դեկտ. 9-ին և ապա 12-ին Հայաստանի կառավարութիւնը նորից դիմեց վրաց կառավարութեան՝ խնդրելով, յանուն երկու ժողովուրդների բարեքի, վերջ տալ հաքստահարութիւններին, դուրս բերել վրաց զօրքերը Լոռիից և սահմանի խնդիրը կարգադրել խաղաղ բանակցութիւններով։ «Մերժման պարագային, գրում էր Քալաջանովն իր դեկտ. 12 դիմումնագրի մէջ, Հայաստանի կառավարութիւնը ստիպուած պիտի լինի ձեռք առնել անհրաժեշտ միջոցներ՝ պաշտպանելու համար Հայաստանի քաղաքացիներին վրաց զօրքերի բռնութիւններից ու չահատակութիւններից»։

Վրաց կառավարութեան պատասխանը եղաւ բացասական։ Թիֆլիսի կառավարութիւնը չարունակում էր պնդել իր «անվիճելի» իրաւունքների վրա, առանց հաշւի առնելու հայերի նոյնպէս «անվիճելի» համարուող իրա-

*) Լէօ. «Ժամանակներ», 1919թ., Թիֆլիս, էջ 24։

ւմունքները։ Հայերի պահանջը նա համարում էր ժխրկամտություն Վրաստանի ներքին գործերին։ Բախումը դառնում էր անխուսափելի, և դեկտ. 13-ին բռնկուեց հայ-վրացական զինած ընդհարումը։

Գաոեբարգը սկսելուց յետոյ էլ Հայաստանի կառավարությունը աչքաթող գտնել խաղաղ միջոցներ՝ վէճի լուծման։

Դեկտ. 14-ին արտաքին գործոց նախարար Ս. Տիգրանեանը Թիֆլիս ուղարկեց մի նոր դիմումագիր, որով, ի միջի այլոց, գրում էր. «Վրաց կառավարությունը ո՛չ միայն ընդառաջ չգնաց մեր փափաքին՝ սահմանների հարցը խաղաղութեամբ լուծելու, այլ և կամենալով ամբանդել օտար հողի գրաւումը՝ ձեռնարկեց արշաւանքի խաղաղ բնակչութեան դէմ՝ ենթարկելով աքսիահեղ ու դաժան բռնութիւնների, մինչև իսկ հայկական գիւղերը թնդանօթների կրակի տաքնելով։ Հայաստանի կառավարութիւնը չի կարող մնալ անկարեկից դիտողի դերում, որովհետև հարևան պետութեան զօրքերը ախտածութիւններ են անում Հայաստանին պատկանող հողի վրա և զինակոչում են Հայաստանի քաղաքացիներին։ Իմ կառավարութիւնը՝ ի պահօրէն ձգտելով առաջն առնել ապագայ բարդութիւնների՝ ուզում է հաւատալ, որ ձեր կառավարութիւնը՝ յարգելով ժողովրդի բաղձանքն ու Հայաստանի իրաւունքը՝ կը փութայ սեփական նախաձեռնութեամբ դուրս հանել զօրքերը, հնարաւորութիւն կը տայ ձեր պատգամաւորութեան յաջողութեան մէջ մտնել մերինի հետ, կը վերակազմէ հեռագրական կապը և դրանով կամրացնէ երկու հարևան հարազատ պետութիւնների խաղաղ կենակցութիւնը»։

Այս դիմումն էլ մնաց ձայն բարբառոյ յանապատի։

Զինւած ընդհարման առաջին իսկ օրերին միջամտեց, այդ պահուն Ղարաքիլիսայում գտնւող, անգլիական սպայ կապիտան Գրինը, որ առաջարկեց՝ հայ-վրացական խորհրդակցութիւն կազմել և վէճը լուծել խաղաղ ճանապարհով։ Հայաստանի կառավարութիւնն ընդունեց և Ղարաքիլիսա ուղարկեց մի պատւիրակութիւն, որի մէջ մտան՝ Մ. Ջաբուրիւնեանը (նախագահ), Ս. Աճաչեանը, Ս. Մամիկոնեանը, Ա. Խոնդկարեանը և Գ. Տէր-Աշաւորեանը։ Միևնոյն ժամանակ, դեկտ. 18-ին, արտաքին գործոց նախարար Ս. Տիգրանեանը հեռագրեց Վրաստանի կառավարութեան. «Հորդրի որոշումով կառավարութիւնն այսօր պատւիրակութիւն է ուղարկում կապ. Գրինի և Վրաստանի լիազօրների հետ միասին, եթէ վերջիններս դան, պատերազմական գործողութիւնները վերջացնելու պայմանները մշակելու համար։ Մէ պայման Հորհուրդը համարում է միանգամայն անհրաժեշտ. Հայաստանի կառավարութիւնն իր զօրքերը Բորչալուի գաւառից կարող է հանել միայն այն դէպքում, երբ եռակողմ առանձ, որ այդ, ինչպէս և Ախալքալաքի գաւառը կապահովւեն Վրաստանի նոր յարձակումներից... Մեր պատգամաւորութիւնը ուրախ կը լինի հանդիպելու ձեր լիազօրների հետ, որպէսզի համերաշխաբար աշխատեն յաւաղն պատմական առանձնութիւններով կապած և ընդհանուր մշակութային տեսակէտով համակած երկու հարևան ժողովուրդների բարօրութեան համար»։

Այս դիմումն էլ անմիջական գործնական հետևանքներ չունեցաւ. վրացիները պահանջեցին, որ հայերը հեռանան Լոռիից, իսկ երկրի մնան Լոռիում և Ախալքալաքում։ Բնականաբար, հայերը չէին կարող ընդունել

հարցի նման մեկնողմանի լուծում. հայ պատւիրակները երկար սպասեցին Ղարաքիլիսայում, վրացիները պատւիրակներ չուղարկեցին: Կապ. Գրիբը գնաց զօր. Թոմսընին գեկուցանելու համար, և այլևս ձայնը չլսեց:

Երկու ժողովուրդների գինւած ընդհարման առաջն առնելու փորձեր արաւ և Վիրահայոց Ազգ. Խորհուրդը: Դեկտ. 11-ին նրա պատւիրակութիւնը — Ա.Երզնկեանը, Ա.Քոչարեանը, Տէր-Օհանեանը և Աբովեանը — վրաց կառավարութեան արտօնութեամբ, մեկնեց Թիֆլիսից՝ կամենալով Վորոնցովկայի ու Ջալալ-Օղլիի վրայով հասնել Ղարաքիլիսա և համոզել հայերին, որ դադարեցնեն կռիւը և վէճը լուծեն բանակցութիւնների միջոցով: Դեկտ. 15-ին պատւիրակութիւնը հասաւ եկատերինֆելդ, ուր պահւեց մի քանի օր, ապա վերադարձւեց Թիֆլիս, իբր թէ, կառավարութեան հրամանով: Պատւիրակութեան անդամներ Երզնկեանն ու Աբովեանը ենթարկւեցին հայհոյանքի և անարգանքի, իսկ Քոչարեանը ծեծւեց ժողովրդական գաւրդիականների ձեռքով: Երեքին էլ փակեցին սենեակի մէջ և դաշոյնը կրծքներին ուղղած՝ սպառնում էին սպանել: Զօրնեց և այն փաստը, որ Ա.Երզնկեանը Վրաստանի Խորհրդարանի անդամ էր. նրան համարում էին հայկական լրտես:

Պատերազմի առաջն առնելու մի փորձ արաւ և Վրաստանի ներկայացուցիչ Ս. Մդիվանին, որը դեռ ընդհարումներից առաջ մեկնել էր Երևանից և գտնւում էր Ղարաքիլիսայի շրջանում: Զօր. Ճուլուկիձէի հետ ուղիղ հեռագրաթելով խօսելուց յետոյ, նա յորդորեց Հայաստանի կառավարութեան կանգնեցնել առաջ չարժւող զօրքերը, պարպել Լոռիի գրաււած վայրերը և հայ-վրացական խառն պատւիրակութեան միջոցով՝ համոզել Լոռիի հայ գիւղացիութեան, որ համակերպւի և ճանաչէ վրաց իշխանութիւնը, իսկ սահմանների հարցը լուծել բանակցութիւնների միջոցով: Մի ձև, որ, ի հարկէ, անհնար էր ընդունել ստեղծած պայմաններում:

Եւ դէպքերն ընթացան իրենց ճանապարհով. խօսքը մնացել էր գէնքին:

ԳԼՈՒԽ Դ.

ՊԱՏԵՐԱԶՄ ԵՒ ՀԱՇՏՈՒԹԻՒՆ

Դեկտ. 13–ին Հայաստանի կառավարութիւնը հրամայեց Դիլիջան–Լոռիի զօրամասի պետ Դրօին՝ մաքրել Լոռին վրացական զօրքերից։ Ճակատը զբաղեցրած զօրամասը դիմեց յաւաջխաղացման Վորոնցովկա–Գրիվոլոյկա–Օփրեթ–Հայրում գծով։

Գործողութեան սկսող զօրամասի մէջ մտնում էին հետեւեալ միաւորները։ աջ թեւում՝ փոխ–գնդ. Կորոլկովը 6րդ գնդի 2րդ վաշտով, 2 գնդացիրով, 3 հարիւրեակ ձիաւորով և մի լեռնային գնդի 4 վաշտով։ Կենտրոնում՝ փոխ–գնդ. Նետերովսկին 4րդ գնդի 2 դումարտակով, 4 գնդացիրով, 7րդ լեռնային մարտկոցի 2 թնդանօթով։ Ձախ թեւում՝ գնդ. Տէր–Նիկողոսեանը 5րդ գնդի 3 դումարտակով, 12 գնդացիրով, 4րդ լեռնային մարտկոցի 3 թնդանօթով։ Ընդհանուր պահեստ՝ հրամանատար գնդ. Մխրխմանեանը 4րդ գնդի 3 վաշտով, 4րդ գնդի ձիաւոր հետախոյզներով և 7րդ լեռնային մարտկոցի 2 թնդանօթներով։ Զօրամասի ուժերի համաձայնար թիւն էր՝ 28 վաշտ., 26 գնդացիր, 7 լեռնային թնդանօթ, 4 հարիւրեակ ձիաւորներ։ Ա՛յս համեստ ուժերով սկսուց հայ–վրացական պատերազմը։

Պէտք է նկատել նոյնպէս, որ պարենաւորման, սարքաւորման, հագուստի ու մատակարարման տեսակէտից էլ հայկական զօրամասերը անհամեմատելի վիճակ էին ներկայացնում։ Օր–կուշտ, օր–մոլած, ցնցոտիներ հագին, բայց, դուցէ, հէնց այդ պատճառով, յաղթելու վճռակամութեամբ լի՝ հայ գինուորը կուի դաշտ նետուեց արտակարգ ալխոյժով։

Առաջին օրն իսկ, գնդ. Տէր–Նիկողոսեանի զօրամասը, գերբնական խիզախ գրոհով, գրաւեց Վորոնցովկան ու Գրիվոլոյկէն։ Գերի առնուեցին 5 վրացի սպաներ, 45 գինուոր, 3 լեռնային թնդանօթ, 1 մաքսիմ գնդացիր, առատ փամփուշտ և մեծ քանակութեամբ ձիեր։ Մեր կորուստներն էին՝ սպանուած տեղական Զարաֆեանը, վիրաւոր՝ 8 գինուոր և տեղական Ագաստեանը, որը մինչև կուի վերջը զօրամասից չհեռացաւ։ Գնդ. Նետերովսկու զօրամասը գրաւեց Սանահէն կայարանը, ուր մերոնց ձեռքն ընկան 49 վագոն ու 1 չոգեշարժ և գերի առնուեցին 15 գինուորներ։ Վրացիները ունեցան մեծ կորուստ։ Մեր կողմից վիրաւորուեց մի գինուոր։ Վրացիների 3 գրահապատ գնացքները յամառ դիմադրութիւն ցոյց տուին, բայց Հայրումի կողմից Կորոլկովի զօրամասը քանդել էր երկաթուղագիծը և կտրել նրանց նահանջի ճանապարհը։ Գիչերային գրոհով, գլխապատ Թաթվերգեանը 4րդ գնդի մէկ

գումարտակով յետ չպրտեց վրաց զօրքերը Հախպատի և Ախտովայի մէջև և գրաւեց 2 գնդացիր: Ռոտմիստր Փիրումեանի հարբւբեակը քշեց վրացիներին և գրաւեց Լալւար սարը՝ գրաւելով 2 գնդացիր և գերելով 15 վրացիներ: Դիւբելայ ժամը 2-ին հայ կամաւորները ռումբերով պայթեցրին զրահապատներից մէկը: Լուսաբացին գնդ. Տէր-Նիկողոսեանը գրաւեց Մխիայլովկա գիւղը և առաջ ուղարկեց խուզարկուներ:

Դեկտ. 14-ին և 15-ին հայ զօրքերի յառաջխաղացումը անցաւ չատ յաջող: Նրանց ճնշման տակ վրացիները պարպեցին և Ալլահվերդին: Դեկտ. 16-ին, լուսաբացին, գնդ. Տէր-Նիկողոսեանի ուժերը անցան յարձակման՝ գրաւելու համար Բոլնիս-Խաչէն-Եկատերինֆելդը: Նոյն օրը, առաւօտեան, Կորոլկովի Հայրումի խումբը, մի խիտ յաղող չարժումով, ոչնչացրեց վրացական մի գունդ և գրաւեց Հայրում կայարանը: Վրացիներից գերի քնկան 12 սպաներ գնդ. Վաչնաձէի գլխաւորութեամբ և 300 գինւորներ: Մօտ 200 հոգի սպանեցին ու վիրաւորեցին, մեւնները փախան: Մեր կողմից սպանեցին տեղական Մուկուչ Տէր-Յովհաննէսեանը և մի գինւոր, վիրաւորեցին 7 հոգի: Տէր-Նիկողոսեանի և Նեստերովսկիի զօրամասերը չարունակեցին ճնշել վրացիներին դէպի հիւսիս: Վրաց կողմից սկսեցին երևալ Թիֆլիսից հասած քարմ ուժեր:

Դեկտ. 17-ին արևելքից գլխաւոր Թարվերդեանի ու արևմուտքից Փիրումեանի խիզախ զրոհով յաղթ ու փչուր եղան 5րդ և 6րդ վրացական գնդերը և գվարդիայի ու սահմանապահ գումարտակները: Գրաւեցին 2 հաւուրիցներ, 2 գաշտային թնդանօթ, 25 գնդացիր և Ախթալա կայարանի մօտ 2 կազմ ու պատրաստ զրահապատ գնացքներ, որոնք տեղն ու տեղը գործադրութեան դրւեցին հակառակորդի դէմ: Վրացիները ցոյց տուին կատաղի դիմադրութիւն և կուի գալով Թողին 60 դիակ: Վրաց ճակատի հրամանատար զօր. Ծուլուկիձէն, բոլորովին չկռնչաւած, հապճեպով փախաւ Հայրում—Սադախլու գիծը՝ հայերի ձեռքը Թողնելով նոյնիսկ իր վագոնը մէջի իրերով:

Մերոնք չարունակեցին յառաջխաղացումը: Կորոլկովի զօրաբիւրը մտնեցաւ Սադախլուին և կուի բռնւեց թշնամու հետ: Դեկտ. 18-ին, առաւօտեան, գնդ. Տէր-Նիկողոսեանը գրաւեց Բոլնիս-Խաչէնը: Կուի պայմանները չատ ծանր էին. ձիւն, ցուրտ, հագուստի ու սնունդի պակասութիւն: Բայց և այնպէս զօրքի տրամադրութիւնը բարձր էր: երբեմն ճակատամարտները տեւում էին աբիւնահեղ ընոյթ, տեղի էին ունենում կատաղի սուինամարտներ: Ախթալա կայարանի մօտ, ուր գրաւեցին զրահապատները՝ ձգտ գնդի առաջին և երրորդ վաշտերը արագ ու վճռական հարւածով խփեցին թշնամուն և սուիններով խուճապային փախուստի մատնեցին: Զոխ Թևի վրա, օգնական ուժեր առանալով, վրացիները դիմեցին հակագրոհի Բոլնիս-Խաչէնի վրա, բայց մերոնց սպանիչ կրակի տակ՝ փախան դէպի Աբուխլու գիւղը:

Մինչև դեկտ. 18–ը վրաց զօրամասերը նահանջեցին ու կենտրոնացան Սադախլուի չրջանում: Հետզհետէ Թիֆլիսից հասան նոր ուժեր: Հայկական ճակատ էր ուղարկուել ժողովրդական գւարդիան: Ամբողջ Վրաստանը ոտքի էր հանւած, զօրահաւաք էր կատարւում: Թիֆլիսում, խորհրդարանի նիստերում սպառնական ճառեր էին արտասանւում, մամուլը կրակ ու չանք էր քամում հայերի գլխին. հայատեաց դրւած էր օրկնքից դուրս. տղամարդիկ հարբւրներով ձերբակալւում և ջուլֆայից էին աքսորւում: Անհամարակ, ագռաղին կրքերը սրւել էին անասելի աստիճանի:

Դեկտ. 18–ին Սադախլու եկաւ և Վրաստանի զինւորական նախարարը, 1000 քարտ զինւորներ, մի հարբւրեակ ձիաւոր, 3 լեռնային մարտկոց և վերջին զրահապատ գնացքը: Զօր. Ծուլուկիձէն պատրաստւում էր ուժեղ հակայարձակման:

Հայկական ուժերը սկզբից մինչև այժմ մնացել էին նոյնը. քիկոնքից համարեա ո՛չ մի լրացում չէր գալիս. ճանապարհները փակւած էին, և կառավարութեան ուշադրութիւնը դրաւած էր Շարուրի ճակատում սպառնացող բարդութիւններով: Ցարսկաստանից ու Նախիջևանից հայրենիք վերադարձող բազմահազար քիւրք զինւորները՝ անկարգ ու բոլշևիկացած՝ ահ ու դող էին ժամանել մերձակայ չրջանների հայերին, և կառավարութիւնը ճիգ էր լարում այդ փորձանքից ազատւելու: Վրաց ճակատը գրեթէ ամբողջապէս մնացել էր Դիլիջան—Լոռիի զօրամասին և Ղազախի ու Լոռիի կամաւորներին:

Այդ ուժերով Դբօն որոշեց չրջապատել ու չարդել Ծուլուկիձէի զօրամասը: Գնդ. Տէր–Նիկողոսեանին նա հրամայից Բոլնիս–Խաչէնից մի զուտ մարտակ առաջ քաշել դէպի արևելք՝ երկաթուղու կողմը և ցուցական չաթոմներով օժանդակել Կորլկովի զօրաբէնին, իսկ Կորլկովին հրամայից երկու քաղաքօք և 3 վաշտ քաղել Հայքումում և մնացած ուժերով, Բարդաձորի և Դիւլբէկիի վրայով, անցնելով Դամխա գիւղը, վրացիներին քիկոնքը՝ չարդել նրանց՝ լուրջ ուշադրութիւն դարձնելով Շուլաւերից Օձրէք տանող ճանապարհի վրա: Դեկտ. 19–ին փոխ–գնդ. Կորլկովին մի քանի և մի լեգեան գումարը 350 զինւորներով ու 2 գնդացիրներով, որին հրամայւեց գրաւել Շուլաւերը:

Երեկոյեան դէմ, գրդ գնդի 6րդ վաչտը փոխ–գլխ. Ֆիլչերովսկիի հրամանատարութեամբ և առանձին ձիաւոր գնդի 2րդ դիվիզիոնի 2րդ հարբւրեակը տեղակալ Տէր–Մարտիրոսեանի գլխաւորութեամբ, սեփական նախաձեռնութեամբ յարձակման դիմեցին և գրաւեցին Սադախլուն: Վրացիները սպիտակ դրօշ բարձրացրին: Բայց հէնց այդ մէջտեղ, վրա հասաւ վրաց զրահապատը և ժամենալով կաչարանին՝ սպանիչ կրակ բացեց հայերի վրա: Զրահապատի օգնութեամբ վրաց զինւորները չրջապատեցին 6րդ վաչտի և 2րդ հարբւրեակի զինւորներին, չատերին սպանեցին և գերի առին Ֆիլչերովսկիին ու Տէր–Մարտիրոսեանին ժամ 30 զինւորներով:

Այդ ժամանակ, 6րդ գնդի մեկ հարիւրեակը փոխ–գնդ. Մանեանի հրամանատարութեամբ հասաւ Հայրումի և հրաման ստացաւ ձոճկանի զօրախումբը ուժեղացնելու նպատակով 60 հոգի հետախոյզներ ուղարկել ձոճկան, փոխ–գլխ. Պետրոսեանի տրամադրութեան տակ, իսկ մնացած ուժերով անցնել յարձակման ու գրաւել Լամբալու գիւղը՝ Հայրումում քողնելով պահեստի մի վաշտ:

Դեկտ. 20–ին տեղի ունեցան յամառ և արիւնահեղ կռիւներ: Կուռօ Թարխանեանի հարիւրեակը մի կողմ չպրտելով Քչնամուն՝ գրաւեց Շուլաւերը: Իսկ նոյն ժամանակ, հազարից աւելի վրացիներ, զրահապատ գնացքի աջակցութեամբ, համախմբւում էին Սադախլուի չրջանում:

Շուլաւերը—Սադախլուի չրջանում գործող վրաց ուժերի մի մասը մի կողմ քաչելու նպատակով՝ Դրօն հրամայեց գնդ.Տէր–Նիկողոսեանին, դեկտ. 21–ին, 1 գումարտակ ու 2 թնդանօթ քողնել Մեծ–Դումանխոսում, իսկ մնացած ուժերով չարժւել Արախլուի վրա: Սկսւեց տաք կռիւ: Մերոնք յարձակւում էին անվերջ, վրացիները յուսահատական դիմադրութիւն էին ցոյց տալիս: Գլխ.Մնացականեանի Շուլաւերի զօրամասը կուի բռնւեց թիֆլիսից նոր հասած վրացական թարմ ուժերի հետ: Մերոնք քանդեցին Սադախլուի—Մամայ երկաթուղագիծը՝ կտրելով վրաց զրահապատի նահանջի ճանապարհը: Կուռօ Թարխանեանը յանդուգն յարձակումներ գործելով Աչաղա–Մարայլի ուղղութեամբ՝ գրաւեց մի թնդանօթ և մի գնդացիր: Այդ կուռւմ վիրաւորւեց ինքը՝ Թարխանեանը և սպանւեց նրա ձիաւորներից մէկը:

Ձակատամարտը Սադախլուի մօտ չարունակւեց անընդհատ: Վրացիները համաթիւ չրկապատւած էին և գրաւում էին միայն կայարանը, գիւղը և արևմտեան բարձունքը: Դեկտ. 22–ին, հակառակ Քչնամու հրացանի ու գնդացիրների մրրկայոյզ կրակի, ձոճկանի զօրախումբը փոխ–գլխ. Պետրոսեանի գլխաւորութեամբ, արհամարհելով գնդակների տեղատարափը, չարժւեց Սադախլուի վրա և յամառ ու երկարատև կուից յետոյ գրաւեց կայարանն ու գիւղի հարաւային մասը, բայց օգնական ուժեր չստանալով՝ վրացիների հակայարձակման ու քնից սպառնացող վտանգի տակ՝ քաչւեց նախկին դիրքերը՝ տալով մօտ 40 զոհ: Փոխ–գլխ. Պետրոսեանը գրաւեց 2702 բարձունքը, փոխ–գնդ. Կորյկովը՝ Դամխան, գլխ. Մնացականեանը՝ Շուլաւերը, փոխ–գնդ. Մանեեանը՝ Քերփիլի—2660 բարձունք դիծը: Վրացիները չարունակում էին նոր ուժեր բերել ու կենտրոնացնել Բոլնիս–Խաչէնի մօտ:

Դեկտ. 23–ին մեր ուժերը վերադասաւորւեցին՝ նորից յարձակման անցնելու համար: Եւ նոյն օրը, երկարատև ու բուռն ճակատամարտից յետոյ, 6րդ գնդի 12 վաշտերը, փոխ–գլխ.Աւանեանի հրամանատարութեան տակ, գրաւեցին Սադախլուն: Մերոնց ձեռքը գերի ընկան 6 սպայ, 126 զինւոր, 2 կոլտի գնդացիր, աւելի քան 100 վագոն պարէն, ռազմամթերք ու փամփուչտ, 3 չոգեչարժ և ուրիչ պաչարելիէն: Մեր կորուստներն էին. փոխ–գլխ. Ալեքսանդրովը վիրաւոր, 7 զինւոր սպանւած և 11 վիրաւոր:

Տաք կռիւներ տեղի ունեցան և՛ Եկատերինֆելդի ուղղութեամբ, ուր վրացիները գրաւեցին Դաղէթ-Մաչէն գիւղը, և՛ Շուլաւերի շրջանում, Սաբաչլու գիւղի ճակատում, ուր մերոնք յետ մղեցին վրացական մի չարք կատաղի գրոհներ: Այսպիսով, վերջնականապէս ջարդ ու փշուր եղաւ զօր. Ճուլուկիձէի զօրամասը, և Ճուլուկիձէն ինքն էլ փախաւ մացապուրծ՝ շրջակայ թուրքերի օգնութեամբ:

Դրանից յետոյ, վրաց հրամանատարութիւնը փոխեց. Ճուլուկիձէի փոխարէն նշանակեց զօր. Մազնիւը: Վրացիները չարունակեցին չտապով հաացնել նոր զօրքեր ու քեդանօթներ և պատրաստուել ընդհանուր յարձակման:

Դեկտ. 24-ին փոխ-գնդ. Կորուկովը հրաման ստացաւ չարժուելու Շուլաւերի վրա, որը ենթարկուել էր վրացիների յարձակման. միլիցիոն գունդը երկու օր է դիմադրում էր հակառակորդի սաստիկ գրոհներին: Դեկտ. 25-ին, երբ հասան Կորուկովի ուժերը, վրացական 5 գրոհ յետ մղուեց՝ մեծ կորուստներով թշնամու համար: Սաբաչլու գիւղից դէպի խճուղին տանող տարածութեան վրա բոլոր վրացական դիրքերը մաքրուեցին. վրացիները կուռ դաշտում թողին 86 դիակ:

Յետևեալ ժամը երկսի մօտերը, վրացիները, թիֆլիսից հէնց նոր հասած ու վագոններից դուրս եկած մօտ 1500 մարդով, ուժեղ հրետանու ընկերակցութեամբ, դիմեցին յարձակման Շուլաւերի խճուղու չորրորդում, Աչաղա-Սաթալլ կայարանի մօտ: Շուլաւերի վրա թուրքն էին վրաց սաւառնակները և նետում ռումբեր: Մերոնց հակայարձակումով թշնամին յետ չպրուեց և Աչաղա-Սաթալլը տրւեց մեր քեդանօթների կրակին: Այս կռիւներում ռումբի կտորներով երեք տեղից վիրաւորուեց անվհհեր տեղակալ Կուռօ Թարխանեանը և սպանւեց միլիցիոն գնդի սպայ Տէր-Գրիգորեանը:

Այս ձևի կռիւները, գրոհները ու հակագրոհները չարունակեցին անընդհատ, մինչև դեկտ. 28:

Մինչ ճակատում հոսում էր արիւնը, Թիֆլիսում դաշնակիցները միջոցներ էին փնտռում՝ վերջ տալու համար արիւնհեղութեան: Դեկտ. 25-ին անգլիական զօրավար Թաչկրոֆտի, ֆրանսական գնդապետ Շարդինիի և Ժորդանիայի կողմից ստորագրուեց մի համաձայնագիր, որով «պատւիրագծական գործողութիւնները վրացիների և հայերի միջև պէտք է անմիջապէս դադարեցնել և բրիտանական ու ֆրանսական բանակների սպաներից բաղկացած մի յանձնաժողով՝ ուղեկցութեամբ վրաց կառավարութեան ներկայացուցիչների՝ կր մեկնի ճակատ՝ բացատրելու համար համաձայնութեան յանդիմանութիւնները և հակելու նրանց իրականացման վրա՝ համաձայն ներքոյ ստորագրեալների կողմից երևան ուղարկած հետագրի»:

Այս համաձայնութիւնը կնքելիս ներկայ էր և Հայաստանի ներկայացուցիչ Ա. Ջամալեանը, որը մերժից ստորագրել՝ յղոդելով. «Ամանաւորապէս, Ախալքալաքի գաւառին վերաբերող մասի դէմ: Այդ պատճառով համաձայնագրի տակ, Թաչկրոֆտի ու Շարդինին աւելացրին, թէ՝ «Պ. Ջամալեանը համաձայն չէ Ախալքալաքի գաւառը Վրաստանի կողմից գրաւելու կէտին»:

Նոյն օրը երևան ուղարկուեց հետևեալ հետագիրը. «Ներկայումս

Թիֆլիսում գտնվող մեծ–բրիտանական գօրավար Ռայկրոֆթը և Ֆրանսական առաքելութեան պետ գնդ. Շարըինին, Վրաստանի Հանրապետութեան նախագահ Ժորդանիայի հետ ունեցած խորհրդաժողովում, պ. Ջամալեանի ներկայութեամբ, որոշեցին, որ պատերազմական գործողութիւնները անյապաղ պէտք է վերջացնեն:

Ջնայած պ. Ջամալեանի բողոքներին, գօր. Ռայկրոֆթը, գնդ. Շարըինին և Վրաստանի Հանրապետութեան նախագահ Ժորդանիան որոշեցին, որ՝

Անգլիական, ֆրանսական, վրաց ու հայկական ներկայացուցիչներից բաղկացած մի խառն յանձնախումբ, ըստ կարելւոյն չուտ, պէտք է մեկնի Ճակատ, որպէսզի կեանքում իրականացնի հետևեալ պայմանները.

Ցանձնախումբը որոշում է քանակը այն օրգթերի, որ վրացիները պէտք է թողնեն Բորչալուի գաւառի հիւսիսային մասում, իսկ հայերը՝ հարաւային, այլ և վրացիները՝ Ախալքալաքի գաւառում: Ջօրքերը պէտք է լինեն սակաւաթիւ:

Վրաց զօրքերը պէտք է մնան իրենց գրաւած այժմեայ դիր վրա, հայ զօրքերը պէտք է նահանջեն Դսեղ—Ջալալ–Օղլի Քիւրթական գիծը:

Վրացական և հայկական զօրքերի գրաւուած տարածութեան մէջև, երկաթուղու վրա, կը գտնուն բրիտանական պահակներ. վարչութիւնը այս վիճելի մասում կը լինի խառն:

Ախալքալաքի գաւառի վրացական վարչութեան վրա հսկում է դաշնակիցների մի յանձնախումբ, որի մէջ մտնում են ներկայացուցիչներ և տեղական հայ ու մահմետական բնակիչներից:

Երկու պետութեան՝ Վրաստանի ու Հայաստանի ներկայացուցիչները չուտով կուղարկուն Եւրոպա, ուր ահմանների վերաբերող ամբողջ հարցը կը լուծուի մեծ պետութիւնների կողմից:

Իսկական ստորագրեցին Ռայկրոֆտ, Շարըինի, Ժորդանիա: Թիֆլիս, 25 դեկտ. 1918թ.»:

Ցանձնախումբը՝ բաղկացած 2 անգլիացի, 1 Ֆրանսացի ու 1 վրացի սպաներից, անգլիական կապիտան Դըգլէդ Վիցերսի գլխաւորութեամբ, դեկտ. 28–ին, հասաւ Ղարաքիլիսա և հայկական հրամանատարութեան ներկայացրեց վերևի համաձայնութիւնը: Հայերը բողոքեցին ու պահանջեցին որոշ կէտեր փոխել, բայց, ի վերջոյ, անգլիացիների ճնշման տակ ստիպուած նրան համակերպուել: Հայկական կառավարութիւնը, սակայն, համաձայնութեան մի քանի կէտեր համարում էր մութ և բացատրութիւն էր պահանջում, որի վրա յանձնախմբի նախագահը համաձայնուեց իր հետ Թիֆլիս տանել հայերից երկու ներկայացուցիչ՝ մութ կէտերի վերջնական պարզաբանման համար: Բանակցութիւններից յետոյ, դեկտ.30–ին, որոշուեց, միւս օրը, դեկտ. 31–ի գիշերուայ ժամը 12–ին, վերջ տալ պատերազմական գործողութիւններին, որից յետոյ հայկական պատւիրակութիւնը պէտք է մեկնէր Թիֆլիս՝ հաշտութեան բանակցութիւնների համար:

Ցանձնախմբի Ղարաքիլիսա հասնելու օրն իսկ, դեկտ. 28–ին վրացիները ամբողջ ճակատի վրա անցան ընդհանուր յարձակման: Նրանց ուժերը աւելացել էին, մատակարարման գործը հեշտացել էր. նրանց մէացել էին և Բորչալուի թուրքերը, որոնք կուի դաշտ էին հանել կամաւորական խմբեր: Ռազմատիտական տեսակէտից նահանջը վրացիներին օգտակար էր եղել.



ԱՒԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ




ՖԱՏ- ԳԱՐԱԳԱՇԻ.




ԻՄՍՏԻՒՔ ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ



ՈՐԲԵՒԱՆՑ ՓՈՂՈՑԸ



ԿԱՐԱՊԱՊԱՀԱՐԱՆՑ ԿՈՂՄԸ



Նրանք դուրս էին եկել Քչնամաքար տրամադրւած հայկական չրջաններից, կոմբացրել հաղորդակցութեան գիծը, վերակազմել իրենց բարձր հրամանատարութիւնը, ռազմաճակատ ուղարկել զորձիչների ու ժողովրդական գնդերի նոր խմբեր, վրաց ժողովրդի ուշադրութիւնը լարել, ամբողջ չապէս կենտրոնացրել ճակատի վրա։

Ընդհակառակը, հայերի համար՝ երթալով՝ ստեղծւում էր աւելի աննպաստ վիճակ։ Երկու չաբաթ չարունակ առաջ չարժւող, կռիւներից դուրս չեկող, վատ հագնւած ու վատ պարենաւորւած զօրքը սաստիկ յոգնել էր, պահեստի մասերը սպառւել էին, իսկ նոր ոյժ գրեթէ չէր գալիս։ Կառավարութիւնը զբաղւած էր ուրիչ ոչ պակաս ծանր հոգսերով և պատերազմին բաւարար ուչադրութիւն չէր կարող դարձնել։ Թիկունքից պարենաւորում ու ռազմամթերքները չէին ստացւում։ զօրքը կերակրւում էր վրացիներից առած հացով և կռւում վրացական ռազմամթերքով։

Դրութիւնը դժւարացնում էր և մի ուրիչ հանգամանք։ քանի կռիւները տեղի էին ունենում հայկական չրջաններում, լոռեցիները՝ գէնքը ձեռներին, մասնակցում էին պատերազմական գործողութիւններին՝ միչտ բանակի առաջին չարքերում։ Հէնց որ ամբողջ Լոռին գրաււեց, և պատերազմը սկսեց տեղափոխւել հայկական չրջաններից դուրս, լոռեցիները, մեծ մասով, հեռացան իրենց տները, և կուի դաչտում մնացին գլխաւորապէս կանոնաւոր զօրամասերը։ Այս պարագան, ի հարկէ, վատ անդրադարձաւ և մնացած գիւղորների հոգեկան վիճակի վրա։ Հայկական բանակը աստիճանաբար փոքրանում էր, վրացիներինը, ընդհակառակը, աւելանում էր արագօրէն։ Ուժերի համեմատութիւնը փոխւում էր ի նպաստ Քչնամու։

Դեկտ. 27-ին վրացական առաջաւոր խմբերը նրևացին 2660 բարձունքի մօտ։ Սաթչլուի կողմից, 3—400 վրացիներ աչխատում էին անցնել փոխ-գնդ. Կորոլկովի ձախ թևի բիկունքը։ Շարժումներ սկսեցին և միւս ճակատներում, բայց գլխաւոր ուժերը Շուլաւերի չրջանում էին, ուր զօր. Մացնևի զօրամասը — 3 ու կէս հազար մարդ ու 12 թնդանօթ — մեր դիրքերի թնդանօթային փոթորկայոյց ոմբակոծումից յետոյ, ժամը 5-ին անցաւ ուժեղ յարձակման Կորոլկովի ճակատի ամբողջ լայնութեամբ։

Հակառակ Քչնամու ուժերի խիտ գերակչռութեան և մեր զօրքերի զբաղեցրած յոդնածութեան ու ասկաւութեան, մի քանի օր անընդհատ մղեցին կատաղի կռիւներ, և մերոնք մեծ կորուստներ պատճառելով՝ յետ էին մղում բոլոր գրոհները։

Միաժամանակ վրացիները, մօտ 1000 հոգով, հետները ուենենալով և Բոբչալուի Թուրքերի կամաւորական խմբերը, Գասուժլու և Ահմամաղլու գիւղերի կողմից, յարձակւեցին մեր ալ Քևի վրա, ուր գործում էր փոխ-գնդ. Իչխանեանը 6րդ գնդի 1 գումարտակով ու 2 գնդացիրով։ Թէ Շուլաւերից և Քչ այս կողմը, մեր զօրքերը, չատնալով ո՛չ մի օգնութիւն, Քչնամու օր աւուր աճող ուժերի ճնշման տակ, գիմեցին նահանջի մինչև Գեաուլը Աբխ և Սիոն գիւղերը։ Մեր կորուստները էին այս կռւում. մօտ

200 հոգի սպանած ու վիրաւոր։ Սպանեց տեղակալ Տիւիէնկոյը, գերի ընկան փոխ–գլխ. Ճակոբեանը և 2րդ Քէթէ մարտկոցի պետ տեղակալ Ռագրատուեան։ Թշնամու ձեռքն անցան 2րդ Քէթէ մարտկոցի 2 Քնդանօթները, որոնց վարիչները մինչև վերջ ցոյց տուին հերոսական դիմադրութիւն և հետացան Քնդանօթները անգործածելի դարձնելուց յետոյ։

Դեկտ. 29–ին օգնութեան հասաւ գնդ. Տիմչենկոն, որ ընդունեց ալ Քևի ընդհանուր հրամանատարութիւնը՝ խնդիր ստանալով հակողութեան տակ առնել № 2660 և Ղըզըլ–կայա բարձունքներից դէպի հիւսիս գտնուող տարածութիւնը և, եթէ վրացիները Շուլաւերի դիրքերից հեռանան, արեւելքից անցնել նրանց թիկունքը, չարժւելով դէպի Աչադա–Սարայլ ու սերտ կապ պահելով Կորոլկովի հետ՝ ապահովել ալ Քևը։ Կենտրոնի՝ Կորոլկովի զօրամասին՝ բաղկացած 4րդ գնդի 10 վաշտից, մէլիքիոն գնդի 4 վաշտից, 2րդ դիվիզիոնի 2 հարիւրեակից, 2րդ գնդի 1 գումարտակից, Շրդ լեռնային մարտկոցի 2 Քնդանօթից ու 1 գրահապատ գնացքից՝ հրամայուեց յամառ կերպով պաշտպանել Դամխա—Սադախլու դիծը՝ Ռոժոնկում կենտրոնացնելով 4րդ գունդը, առաջաւոր մասերը պահելով Դամխա գիւղում և ալից կապ ունենալով Տիմչենկոյի Քևի հետ։ Վերջինիս նոր հրաման տուեց՝ ամուր կերպով պահել Սադախլուի ժօտ երկաթուղագծից 2660 բարձունք — Քերփիլի գիւղ դիծը։ 2րդ գնդի մէկ գումարտակը Քողնեց պահեստում Ճոճկան գիւղի մօտ։

Մինչ կենտրոնում և ալ Քևում կատարւում էին այս դէպքերը, ձախ Քևից երեք օր չարունակ լուր չստացուեց. գնդ. Տէր–Նիկողոսեանը բոլորովին կորւել էր ընդհանուր հրամանատարութիւնից։ Ցետոյ պարզուեց, որ 5րդ գունդը բռնած էր բծաւոր տիֆով, հիւանդացել էին և գնդ. Տէր–Նիկողոսեանը ու իր սպայակոյտ սպաները։ Այդ պատճառով կարելի չէր եղել կատարել առաջադ հրամանը, որով կարգադրւում էր գրաւել Նկատերին–Ֆելդ—Բոլնիս–Ղալէն դիծը և 4րդ գնդի հետ միասին չարժւել դէպի Աբախլու։ Հակառակ պարագային, եթէ կոխները գնան անյաջող, ամուր պահել Մեծ–Դումանիս—Բոլնիս–Ղալէն ճակատը։ Այս հրամանը գնդ. Տէր Նիկողոսեանը չէր կարողացել կատարել, և այդ ծանր անդրադարձում ունեցաւ յետագայ գործողութիւնների վրա։

Դեկտ. 30–ի առաւօտեան վրացիները փորձեցին մօտենալ Սադախլու կայարանին ու լամբալու գիւղին, բայց մեր հրետանիի կրակով յետ չպրտեցին։ Նորից անցնելով յարձակման՝ մօտ 500 հոգով մտան Սադախլու, իսկ մի ուրիշ զօրամաս գրաւեց 2660 բարձունքը։ Մեր գրահապատը կրակի բռնեց Սադախլուն, ուր սկսել էր հաւաքել Քուրք գինւած խուժանը։ Վրացիներն ու Քուրքերը հեռացան Սադախլուից և սկսեցին առալ քաշել իրենց Քնդանօթներն ու ռմբակոծել մեր գրահապատը, որը, փոխ–տեղակալ Սուլթան–Շահի հրամանատարութեան տակ յանդուգն յարձակումներ էր գործում և ահագին վնաս պատճառում հակառակորդին։ Մերոնք քաղցեցին Սադախլուից հիւսիս գտնուղ երկաթուղու կամուրջը։ Շուլաւերից առաջացող վրացիներն ու Քուրքերը այրեցին Դամխա գիւղը։

Երեկոյեան դէմ վրացիները նորից փորձեցին գրաւել Սադախլուն, փոքրիկ խմբերով առաջ անցան, մաքլցեցին 2660 բարձունքը: Մեր զրահաւոր կրկին գործողութեան դիմաց նրանց դէմ: 2րդ գնդի մէկ գումարտակը գլխ. Զերգելտովի հրամանատարութեամբ բռնեց 2702 բարձունքը: Կոխներ տեղի ունեցան և Կորոլկովի ու Տէր-Նիկողոսեանի ճակատներում: Վերջինում, երկու օրւայ կատաղի գրոհներից յետոյ, վրացիները գրաւեցին Բոլնիս-Ուչէն գիւղը:

Նոյն օրը, երկար ու յամառ պահանջներից յետոյ, Դրօն, վերջապէս, առացաւ փոքրիկ օժանդակութիւն. 4րդ և 6րդ գնդերի համար հասան մօտ 600 քարմ գինւորներ: Դրօն մի կողմից յետ էր մղում թշնամու յարձակումները, միւս կողմից պատրաստւում դեկտ. 31-ի վճռական կռւի համար. երկու կողմերն էլ աշխատում էին զինադադարի վայրկեանին իրենց համար նպաստաւոր դիրքեր ապահովել:

Դեկտ. 31-ի առաւօտեան հայկական զօրամասերը դասաւորւած էին հետեւեալ ձեւով. ալ Քևում կանգնած էր գնդ. Տիմչենկօ 6րդ գնդի 2 գումարտակով (մօտ 1100 ուխ) և 6րդ լեռնային մարտկոցի 2 Քնդանօթով: Նրա ճակատն էր Գիւնաքափա լեռ—Քեփիլլին մինչև երկաթուղի: կենտրոնում՝ 2րդ գնդի 3 գումարտակներ (մօտ 600 ուխ) գլխ. Ծովհաննիսեանի հրամանատարութեամբ և 7րդ լեռնային մարտկոցի երկու Քնդանօթ՝ երկաթուղուց մինչև Բարդաձորից ձոնական տանող ճանապարհը: Ձախ թևի վրա՝ փոխ-գնդ. Կորոլկովը՝ Բարդաձորի ճանապարհից մինչև Օփրեքի ճանապարհը: Նրա մասերը դասաւորւած էին. Գիւլ-Գագիում մի լիքեցոն գունդը, Բարդաձորում 4րդ գնդի մէկ գումարտակը, 2 գումարտակ Ջոժոռնիում, 50 ձիաւոր Ալքեորփիում: Պահեստը գտնւում էր ձոնականում՝ 2րդ գնդի 2 գումարտակներ և 7րդ մարտկոցի 2 Քնդանօթներ:

Վրացիները դեկտ. 31-ի առաւօտեան Սադախլուում հաւաքել էին մօտ 3 և կէս հազար կուռդ*), Դամխա—Սադախլուում 12 Քնդանօթ և մօտ 800 հոգի էլ Քասուլու Քրքական չորքանում: Նրանց առաջապահ մասերը, մօտ 2 վաշտ, գրաւում էին 2660 բարձունքը:

Հայկական հրամանատարութեան ծրագիրն էր՝ գրաւել Սադախլուն և ոչնչացնել զօր. Մազնիևի զօրամասը: Այդ նպատակով տրւել էր հետեւեալ հրամանը.

«Ալ Քևը, ժամը 2-ին, սկսում է յարձակման, գրաւում 2660 բարձունքը և, եթէ ձախ Քևը առաջնայ յաջողութեամբ, Մամայում կապւում նրա հետ: կենտրոնական զօրամասը՝ գաղնում է ճակատից և գրաւեցնում Սադախլուի Քշնամուն: Ձախ Քևը չարժւում է կենտրոնի հետ միաժամանակ և գրաւելով Սիոն—Դամխա չորքանը՝ Մամայում միանում է ալ Քևին»: Այսպիսով Քշնամին առնելու էր օղակի մէջ և ջախջախելու:

*) Ջոր. Մազնիևի յետագայ յայտարարութիւնների համաձայն, վրացիները ամբողջ հայկական ճակատի վրա ունէին 8.000 կուռդ:

Սակայն, ճակատամարտը տեղի ունեցավ նախատեսվածից մի քիչ տարբեր ձևով: Հետախուզային կապ չլինելու պատճառով՝ կորյակովը մի քանի ժամ ուշ տեղացավ հրամանը, և նախաճեռնությունը նրա ճակատում անցավ քշտամու ձեռքը: Ժամը 8-ին վրացիները, ապշական դիմադրությունից գլխաորությամբ, դիմեցին ուժեղ յարձակման, Գիլ-Գագիի մօտ պատնեշին մերոնց չդիման և շարժվեցին դէպի Գեղեձ-Բուռուն լեռը: Ժամը 1-ին քշտամու յառաջխաղացման մասին լուր ստացվեց զօրամասի պապակոյսում, և Դրօն չտապից պահեստից օգնութեան հասցնել Շրդ գնդի Շրդ գումարտակը, որը կանգնեցրեց վրացիների արշաւը:

Ժամը 2-ին ուժգին յարձակման անցավ 6րդ գունդը՝ շարժվելով դէպի 2660 բարձունքը: Կենտրոնական ճակատից անընդհատ տեղեկութիւններ էին ստացվում, որ վրացիները 2660 բարձունքի կողմերից, Մամայից ու Դամիայից Սաղախլու էին քաշում իրենց ուժերը և շարժւում դէպի Գիլ-Բաղի: Եւ որովհետև ձախ թևը չէր շարժւում, Դրօն հրամայեց աջ զօրասիւնին ցոյց տալ վճռական գործունէութիւն և մի զօրասիւն ուղարկել դէպի Սաղախլու՝ Գիլ-Բաղիի ուղութեամբ գործող վրացիներին քիկունքից հարւածելու համար:

6րդ գունդը յառաջացավ երկու թևով. մէկը՝ 1 գումարտակ՝ Գիւնաշ-Թափայից 2660 բարձունքի լանջերով շարժւեց դէպի Լամբալու և Սաղախլու: 6րդ լեռնային մարտկոցի 2 թնդանօթը կրակ բաց արին Սաղախլուի վրա. 2660 բարձունքի վրա տրւեց մի պահակ: Միւս գումարտակը գործում էր ջաւումլուի և կաչաղանի չրջանում:

Միաժամանակ, Սաղախլուի վրա կրակ բաց արեց և 7րդ լեռնային մարտկոցը, և Շրդ գնդի Յրդ գումարտակը 2702 բարձունքից սկսեց հարւածից իջնել դէպի Սաղախլու: Ջրահաւաքը, առաջ անցնելով, օգնում էր Յրդ գումարտակի էջերին:

Ձախ թևի վրա չարունակւում էին կատաղի կռիւները. վրացիները տարածւում էին Գեղեձ-Բուռուն ուղղութեամբ:

Ժամը 3-ի մօտերը, 6րդ գնդի Շրդ գումարտակը սկսեց մօտենալ 2660 բարձունքի կատարին: Վրացիները բաց արին ուժեղ գնդացիրային կրակ, բայց մերոնք առաջ չարժւեցին գնդակների տարափի տակ՝ պատրաստ անցնելու սւնիամարտի: Վրացիները խուսափեցին սւնիակուից և ժամը 4 ու կէսին փախան: 2660 բարձունքը անցաւ հայերի ձեռքը, որոնց առաջաւոր մասերը սկսեցին իջնել դէպի Մամայ՝ կտրելով Սաղախլուի ճակատում գործող վրացական օրգքերի քիկունքը: Երեկոյեան 6րդ գնդի ձախ զօրասիւնը գրաւեց Լամբալուն, իսկ Շրդ գնդի Յրդ գումարտակը ներս խուժեց Սաղախլուի հարաւային մասը:


Գիլերը կռիւը դադարեց: Քիկունքից կտրւած՝ վրացիները կանգնեցին Գիլ-Բաղիի չրջանում և սկսեցին կամաց-կամաց յետ քաշւել: Մեր ձախ զօրամասը բռնեց բարձունքները Նոժոռնիի, Գիլ Բաղիի ու Բարդաձորի գլխին:

Ճակատամարտը դեռ չէր լրացած, բայց արդէն ժամը 12 էր, և կուռղ կողմերը կանգ առին իրենց գրաւած տեղերում: Պատերազմը վերջանում էր:

Ո՛վ էր յաղթողը այս պատերազմում: Վրացիները պնդում են, որ դեկտ. 31-ի ճակատամարտը վերջացաւ իրենց յաղթանակով: Եթէ պայմանաժամը չլրանար, վրաց զօրքը առաջ կերթար յաղթական, և հայկական բանակի կատարեալ պարտութիւնը կը դառնար անխուսափելի: Ո՛չ, պատասխանում են հայերը, եթէ պայմանաժամը չլրանար, հայ զօրքերը յաջողութեամբ կիրականացնէին չրջակայման ծրագիրը, և զօր. Մադինեի զօրքերը ամբողջովին գերի կրնկնէին հայերի ձեռքը:

Վրացիները ասում են՝ մենք յաղթեցինք, հայերը ասում են՝ մենք յաղթեցինք: Ո՞ւմն է իրաւունքը: Պատասխանը Քո՛ղ ոգեմաքէտները տան. ճակատամարտի դաշտի քարտէսը երկու կողմին էլ հիմք է տալիս մնալու իր համոզման մէջ:

Եւ, իրօք, ուշադրութիւն դարձրէ՛ք ճակատամարտի քարտէսի վրա՝ ուժերի ի՜նչ տարօրինակ դասաւորութիւն: Հայ ու վրացի զօրամասերը խառնել են իրար. վրացիները մտել են չատ խորունկ հայկական չրջանը, հայերը ապառնական՝ անցել են վրացիների թիկունքը: Կը դիմանայի՞ն կորուկովի զօրամասերը վրացական զրոհին, կը կարողանայի՞ն վրացիները մաքրել թիկունքը հայկական խուժումից. կը կարողանա՞ր Մադինեը տոկալ Դբօի հարւածին: Այս հարցերը մնում են անպատասխան*):



*) Ինչո՞ւ էր մարդկային կորուստը պատերազմում — դժուար է ասել: Մեր մեռելների ընկած պատահական տեղեկութիւններից երևում է, որ միայն 4-րդ գնդից սպանուել էր 41

Այսպէս թէ այնպէս, հայ–վրացական պատերազմը վերջացաւ։ Բանակները կատարեցին իրենց պարտականութիւնը։ Ժողովը անցնում էր քաղաքագէտներին։

•

Քաղաքագէտների գործը, սակայն, հեշտ չէր լինելու։ պատերազմն ու յարակից դէպքերը չափազանց շատ էին լարել կրքերն ու խառնափնթորել կացութիւնը։ Մանաւանդ, վրաց կառավարութիւնը եռանդ չէր խնայել այդ ուղղութեամբ։ պատերազմի ընթացքում հայերի վիճակը Վրաստանում ոչնչով չէր տարբերւում այն վիճակից, որ ստեղծել էր Թիւրքիայում, պատերազմի օրերին։ Հայաստանի դրամները բանկերից և հայկական պետական գոյքերը գրաւեցին։

Հայաստանի ներկայացուցչութիւնը փակեց։ Վրաստանի Ազգ. Խորհուրդը փակեց։ Դաղթականական ու որբանոցամ մարմինները փակեցին։ «Ազխառատուրա», «Ընոր–Հորիգոն», «Կաւկ։ Սլովօ» և մի շարք ուրիշ թերթեր փակեցին։ Բազմաթիւ հայ գործիչներ, Թիֆլիսի քաղաքային խորհրդի դաշնակցական անդամները ձերբակալեցին։ Հայ մելիքիոնները արձակուեցին պաշտօնից։ Սկսուեց մի այլանգամ հալածանք բոլոր հայերի դէմ անխտիր, զգալի հայորսութիւն Թիֆլիսի փողոցներում։ 1918թ. յունւ. 8–ին, Վրաստանի Ազգ. Խորհուրդը Վրաստանի կառավարութեան ներկայացրեց մի յուշագիր, որ ահռելի մանրամասնութիւններ էր տալիս հայերի նկատմամբ գործադրուող կամայականութիւնների և բռնութիւնների։

«Պատերազմական գործողութիւնների սկսելով, ասում էր այդ յուշագիրը, հանրապետութեան կառավարութիւնը Վրաստանի հողի վրա ապրող բոլոր հայերին յայտարարեց ռազմագերի՝ կիրառելով նրանց վերաբերմամբ ճնշումներ՝ բանտարկութիւններ, հրաձգային հսկանդն աքսորելու և այլ ձևերով... Հայատակութեան Օրէնքի թերութիւնների պատճառով, պատերազմի հէնց առաջին օրից ստեղծուած քաղաքական մթնոլորտը խուզարկութիւններ, ձերբակալութիւններ և աքսորումներ կատարող մելիքիայի և յատուկ զօրամասի պաշտօնեաների առջև, բաց սրաւ լայն հեռանկարներ ամէն կարգի ապօրինութիւնների հայերի նկատմամբ՝ սկիզբն կիրպով չձերբակալելիք անձերի ձերբակալութիւնից սկսած մինչև բաց ու անպատիժ գրամայորդութիւն։ Հայերի վիճակը է՛լ աւելի վատացաւ, երբ հրապարակեցին ընդհանուր–նահանգապետի պարտադիր որոշումները, որոնք, վարչական օրէնսդրութեան կարգով, ընդարձակում էին ռազմագերիների տեսակները՝ մոցնելով նրանց մէջ հայաստանի Հանրապետութեան զօրքերով գրաւուած Բորչալուի չրջանն էլ»։

զինուր, ամենու կազդ 62 և վիրաւորել 60, 5րդ գնդից՝ սպանել էր 19 զինուր, ամենու կազդ 44 և վիրաւորել 14, 6րդ գնդից սպանել էր 8, ամենու կազդ 11 և վիրաւորել 18։ Կռիւներում սպանեցին հետեւեալ սպաները՝ Վահան Դաւիթեանց, Լեւոն Գաբրիէլեանց, Յովսեփ Գրիգորեան, Արշակ Միւիք–Շահնազարեան. Մարտիրոս Եղոյեան, Յեղիզո Թան, Կոլոձէյչկի, Գրիգոր Սաֆարեան, Միկոյէլ Տէր–Յովհաննիսեան, Մատթէոս Տէր–Մատթէոսեան. Մկրտիչ Տէր–Գեղամեան։ Վէրջերից մեռան սպաներ Սուրէն Տէր–Ղուկասեանց, Գեղոզ Սուլթան Շահե, Թիւիչէլեր, Տէր–Գրիգորեանց։ Վիրաւորեցին սպաներ Ալէքսանդր Մամիսեցը, Սմբատ Չէրիգեանը, Ալեքսանդր Անդրադասուզը, Արամայիս Բաքուչեան–Բաքուլմեանը, Յիգրան Ագիգեանը, Լեւոն Վերմիչեանը, Նիկ. Թաքիամեանը (Կուռօ), Գաբրիելեանը և զինւ. պաշտօնեայ Վախտանգ Դաւթեանը։

«Այս բոլորի հետևանքով վրաց իշխանությանն տակ ապրող 4½ մի-լիոն հայ ազգաբնակությունը զրկվեց ամէն իրաւունքից, նրա պատիւը, ունեցուածքը, ազատութիւնն ու գոյքը դարձան մի ըիշխայի և յատուկ զօրա-մասի պահանջների ազատ քաղաքացի առարկայ»։ «Այն պատրուակով, որ, իբր թէ, Աբռամեանի չէնջում, ուր Հայ. Ազգ. Մորհրդին կից տեղատե-ղած էին և մի չարք ուրիշ հիմնարկութիւններ, կատարւում է համատորների արձանագրութիւն յօգուտ Հայաստանի, կնքեցին Հայ. Ազգ. Մորհրդի տեղապահներ և գրաւեցին նրա բոլոր նիւթական միջոցները և գաղթականնե-րին յանկացած դեղերն ու դրամները։ Եւ Ազգ. Մորհուրդը փաստօրէն դադարեց գոյութիւն ունենալուց»։

«Ահա երկու չաբաթ է, որ Թիֆլիսի հայ բնակչութիւնը ենթակայ է վարչական իշխանութեան ամէն տեսակ կամայականութեանց։ Չնչնած միլիցիոներները գիշերները այցելում են, առանց հպատակութեան ու դիրքի խտրութեան, հայերի տները, բռնութիւններ են գործ դնում, առնում—տանում են թանգարժէք իրեր, ձերբակալում են ոչ միայն ոչ հայահպատակ, այլ և վրացահպատակ անձանց։ ցեղակից չուրջկացիներ են կատարում և հայերին հարիւրներով քշում են բանտ ու Քուռայիսի նահանգը՝ առանց նոյնիսկ հնարաւորութիւն տալու գէթ մնաս-բարև ասելու իրենց հարազատներին ու անհրաժեշտ իրեր առնելու։ Հազարաւոր հայ բանւորներն ու մտաւորական-ները, որոնց հանում են գործից և ուղարկում Մեթեխի բերդը կամ՝ միլիա-դարեան բանտերի վատագոյն կարգերով գերիների կայանի վերածուած նեթախեան դպրոցի չէնջը — սովորական երևոյթներ են դարձել Թիֆլիսի հայերի կեանջում։ Այդ բոլորին գուարթ՝ առ, տեղի են ունենում բոլորովին անծեղ մարդկանց ձերբակալութիւններ՝ դրամ կորզելու նպատակով։ մեր-ժման կամ իշխանութեան յայտնելու պարագային սպառնում են գնդակահար անել։ Այլասերման աստիճանի մասին կարելի է գաղափար կազմել նրանով, որ միլիցիոներները և յատուկ զօրամասի պաշտօնեաները հաստատել են փրկագնի որոշ սակ՝ 50-ից սկսած մինչև 50,000 ռուբլի, և սակայն չեն դէպքեր, երբ միևնոյն անձին ձերբակալել են երկու հիմնարկութեան ներկայացուցիչները էլ, և եթէ միասիրտ յայտնի, թէ ինչը պրէնի տալ է, այդ փաստն էլ՝ ամրացնում է նոր պահանջողի իրաւունքը»։

Այս բոլորի քաղ ու պակ եղաւ յուն։ 5-ի այլազդակ դէպքեր, երբ, կնքած դիւանագործից յետոյ պրէնի, Թիֆլիսում տեղի ունեցան հայերի գանգատային ձերբակալութիւններ։ միլիցիայի գործակալները, գրում էր Վ. Ազգ. Մորհուրդը, վայելեցնելի պէս, բառիս բուն նշանակութեամբ, որպէ ելան հայերի դէմ։ մի քանի ժամւայ մէջ ձերբակալեցին 6000 հոգի և ազատ թողին այն մի քանի հարիւր բախտաւորներին, որոնք տեղն ու տեղը, մարդկանց աչքի առջև, կարողանում էին վճարել պահանջած գումարը կամ, նեարատութիւնն էին առանում, միլիցիոներների ուղեկցութեամբ գնալ տուն և առնել մեծ գումար վճարելով՝ ազատուել բռնակալների ձեռքից»։

«Եւ եթէ այս ամենը կատարւում էր Թիֆլիսում, դժուար չէ երևակա-յել հայերի վիճակը Վրատոանի գաւառներում, որոնք թողնւած են սեփական ճակատագրին և վրաց մամուլի հակահայ քարոզչութեան ոգով տոգորւած տեղական վարչութեան ողորմածութեանը»։

Անկասկած, գաւառներում, ասելի վատ էր, քան Թիֆլիսում։ Ապօ-րինութիւններից, բռնութիւններից զատ պէտք չէ մոռնալ տեղի էին ունենում և սպանութիւններ, մանաւանդ ժողովրդական

գաւթի ականների կողմից, որոնք, սովորաբար, մնում էին անպատիժ իրենց արարքների համար: Անտանելի էր հայերի դրութիւնը, մանաւանդ, հայկական սահմանին մօտ գտնուղ վայրերում, ուր ճնշումներն ու կամայականութիւնները պատերազմից յետոյ էլ չվերջացան: Այսպէս, Բոլնիս-Կամչի գիւղը վրաց զօրքի կողմից գրաւելու ժամանակ, բնակիչները Թողին-Հեռացան՝ չկարողանալով տանել որև է բան: Գիւղում մնացին մի քանի չքաւոր ընտանիքներ, ծերեր ու որբևայրեր: Գիւղը գրաւելուց յետոյ կարմիր գաւթականները անցան Քալանի ու բոնութիւնների: Թալանեցին ամէն ինչ, ուտելիքնէրը տարին կազմակերպած կերպով: Տարին հաց, ցորեն, գարի, գետնախնձոր, լոբի, ընկոյզ, հաղուստ, կարի մեքենայ, պղնձեղէն, երկրագործական պիտոյքներ, արծաթ և ոսկի իրեր, կով–կարաւիք, նոյնիսկ բարձերի փետուրը թափեցին և կտորը տարին: Ինչ որ չկարողացան տանել, ոչնչացրին: Փչացրին տների դռները, պատուհանները, կարաւիքը, մեղրի փեթակները: Տարին կենդանիները՝ կով, ձի, եզ, գոմէշ, ոչխար, հաւ, սագ: Չինւորներն ու սպաները խմում էին գինի և օղի, քէֆ էին անում. բռնաբարում էին գիւղում մնացած կանանց և աղջիկներին: Ցետոյ, բոլոր գիւղացիներին, առանց սեռի և հասակի խտրութեան, հաւաքեցին մի նկուղ և պահեցին իբրև գերի: Կանանց մի քանի օրից յետոյ բաց թողին, իսկ այր մարդկանց պահեցին երկու շաբաթ և ազատ արձակեցին միայն յուլիս. 13–ին: Այդ երկու շաբաթւայ ընթացքում գիւղը մաքուր կերպով թալանեցին ու հաւաքած իրերը փոխադրեցին նկատերինֆելդ, այնտեղից էլ Թիֆլիս:

Ցունս. 18–ին Բելիչ–Կլիչ մտաւ վրացական 2րդ հեծեալ գունդը, որից յետոյ սկսեցին բռնութիւններն ու թալանը: Չինւորները զանազան պատրուակներով մտնում էին գիւղացիների տները և առնում աչքը տեսածը: Ամենից առաջ թալանեցին բոլոր հայ գաղթականներին. բռնաբարում էին կանանց: Գիւղացիները զանգատուեցին չրջանի կոմիսարին և զօրամասի պետին—ապարդիւն: Բելիչ–Կլիչից թալանը տարածուեց և չրջանի գիւղերը՝ Սամդրէթ, Վայխուն, Շամչուլդա, ուր տեղի ունեցան ծեծ ու բռնաբարութիւն:

Սակայն, ամենազգալի դէպքը պատահեց Բելիչ–Կլիչի կենտրոնը գտնուղ ամառանոցում. գիշերւայ ժամը 1–ին մի խումբ զինւորներ մտան որբանոց և կին պահանջեցին իրենց համար: Որբանոցի ծառայող չափահաս կանայք փախան: Զինւորները սկսեցին ծեծել որբերին և պահանջել, որ ցոյց տան փախածների տեղը: Ապա բռնաբարեցին 10—12 տարեկան երկու որբուհիներ ու հեռացան: Երկու օր յետոյ կրկնեց նոյն պատմութիւնը. դարձեալ ծեծ ու բռնաբարութիւն: Որբանոցի վարչութիւնը դիմեց տեղական իշխանութեան, բայց այդ դիմումը Թողնեց անհետևանք:

Այսպիսի քամեների տեսարաններով լեցուն են Թիֆլիսի ա'յն օրերի մամուլի էջերը, բայց գերքը չծանրաբեռնելու համար՝ սահմանափակենք այսքանով: Այս անտանելի դրութիւնը տարածեց Վրաստանի Մորմրզարանի հայ պատգամաւորներին հարցապնդում ուղղել կառավարութեան: Եւ ի՞նչ.


վառնց կուսակցական խորութեան, հայ պատգամաւորների մոցրած հարցապնդումը Վրաստանի Ներհրդարանում՝ ազգային հալածանքների մասին, կառավարական կուսակցութեան լուռութեան հետ ժէկտեղ այնպիսի քննամանի վերաբերմունք հանդիպեց մեզ կուսակցութիւնների կողմից, որ, բնականաբար, բարոյական նէրտպդործում էր գործուղ խայտառակութիւններ։ Իսկ ներքին գործոց նախարարի բացատրութիւնը, որը այդ ազգային հալածանքը վերածեց մի քանի անհատ պաշտօնեաների աննշան գեղծումի, չէր կարող հայ հասարակութեան վրա չթողնել ծայր աստիճանի ընչէլ տպաւորութիւն, մանաւանդ որ այդ բացատրութեան հետևում էր վերջերս այնքան սովորական դարձած խօսքը դէպի հայ ժողովուրդը տուած յորդանքի մասին, մի խօսք, որ միայն վիրաւորում է ամենալուսի հալածանքների պատմաններում ապրող ժողովրդի զգացմունքները։

Հայերի դիմին թափւող ապօրինութիւնների, հարստահարութիւնների ու ընչումների մասին բազմաթիւ արձանագրութիւններ ու բողոքագրեր է կազմել Ռուսական Ազգային Ներհրդը, որ ամենամոյ գոյներով է ներկայացնում Թիֆլիսի հայերի այն ժամանակուայ վիճակը։ Մենք զանց ենք առնում ուրիշ բազմաթիւ փաստերն ու վկայութիւնները և սահմանափակում ենք հետևեալ երկու պնդմասօս վաւերագրերով։ Առաջինը Թիֆլիսի ընդհանուր նահանգապետի տուած վկայականն է ոմն Աբտուշ Քոռասպականեն։ Այդ վկայականով Քոռասպականին իրաւունք է տրւում ազատ ապրելու Թիֆլիսում։ Նա Հայր հայ, ենթակայ չէ ձերբակալութեան կամ բանտարկութեան։ (Տես նկար երես 210)։ Ուրիմն, վկայական չունեցող բոլոր հայերը կարող էին և՛ ձերբակալել և՛ բանտարկել։

Երկրորդը՝ 56 Թիֆլիսաբնակ հայ քաղաքացիների մէկ գրութիւնը, որ լոյս տեսաւ Թիֆլիսի մամուլում։ «Մենք, գրում են նրանք, չարունակ լոյսով և անպայման հանդուրժելի ենք մնացել տեղական նոր իշխանութեան վերաբերմամբ, բայց չնայած դրան, Հայաստանի և Վրաստանի մէկ բաժում ծագելիս՝ փաստօրէն օրէնքից դուրս և ազատութիւնից զրկուած յայտարարւեցինք նրա կողմից... Մենք չէինք կարող ռազմագերիներ լինել այն պարզ պատճառով, որ զինուորականներ չէինք։ Բացի այդ՝ մենք Հայաստանի հպատակներ չենք։ Մեզնից չատերը ընկնում են վրաց պարլամենտի հրատարակած հպատակութեան օրէնքի տակ և, հետևաբար, հանդիսանում են Վրաստանի հպատակներ։ Ուրիշները ռուսահպատակ էին և չարունակում են իրենց համարել իբր այդպիսին։ Վերջապես, ձերբակալուածների և աքսորւածների մէջ կային և Գարսկաստանի, Թիւրքիայի և այլ հպատակներ։ Մեր մէջ կային մտաւորականներ, հիւանդներ, քնացուրկներ, ոտագուրկներ, կոյրեր։ կային և մինչև 75 տարեկան ծերունիներ ու 15—16 տարեկան երեխաներ։

Մեզ ո՛չ մի մեղադրանք չներկայացուց ձերբակալելիս և ձերբակալութեան ժամոյ։ Մեզ հարցրին միայն՝ «Ինչ հա՞յ էք» — և այդ բաւական էր։ Մեզ, առաջին հանդիպող պատահական անձերիս, որ մտել էինք կոմիսարիատ՝ մեծ մասամբ այլ գործով — տուրքեր վճարելու, գանգատ տեղեկութիւններ ու քոյլտուութիւններ ստանալու համար — խլեցին մեր ընտանիքից և պարապմունքներից և քոյլ չտալով հրաժեշտ տալ մերձաւորներին, կամ վերցնել ամենից անհրաժեշտ առարկաներն ու որև է կարգադրութիւններ անել — ուղարկեցին յայտնի չէ՝ ինչ պատճառով, յայտնի չէ՝ ուր, յայտնի չէ՝ ինչ պայմանաժամով...

«Երբ մեզ տանում էին, կայարաններում՝ վագոններն լուրջը հաւաքւում էր բազմութիւն: Նրանց ասում էր, որ ճակատից հայ ռազմագերիներ են բերում: Մեզ ստիպեցին զինուորական քայլով անցնել Ռութայիսի փողոցներով՝ չրկապատւած պահակախմբով ու ժողովրդի բազմութեամբ: Մեզ դարձրին ծաղրանքների ու վիրաւորանքների առարկայ: Մեզ քաղցած



№ 11.

УДОСТОВѢРЕНІЕ.

Дано сіе. Мелъ Да. Дзнъ....
...Арутюнянцу.....
въ томъ, что Тифлисскимъ Генералъ-Губернаторомъ разрѣшено ему свободное проживаніе въ г. Тифлисѣ и что онъ какъ армянинъ задержанію или аресту не подлежитъ, что подписью и приложені печати удостовѣряется.

Управляющій канцеляріей



Дѣлопроизводитель

պահեցին: Զերբակալութիւնից միայն երեք օր յետոյ մեզ տւին եգիպտացորենի հաց և մի գդալի կէսչափ: Մեզ դատապարտեցին երկու չարաշատրել բանտերում ամենից հակասանդղապահական պայմաններում, կեղտոտ յատակի վրա, առանց անկողնի, առանց Լրի···

«Մեզ հետ վարւում էին, որպէս ոճրագործների: Մեզնից ոչ նւազ քան 75%-ը այժմ հիւանդ է: Մի քանիսը հիւանդացան բծաւոր տիֆով ու մեռան (երբ—հաւատ. Գապովնանը, Խաչատնանցը, Հարմոնիչ Նազոյ Գէորգ—

Լէքան)։ Ռուֆայիսում հիւանդները գուրկ մնացին բժշկական օգնութիւնից։ Թախանձագին խնդրանքից յետոյ՝ մի քանիսը գետեղուեցին բանտի հիւանդանոցում բծաւոր տիֆով հիւանդների և այլ ոճրագործների կողքին, որոնցից ամէն օր մի քանի հոգի մեռնում էր խնամքի բացակայութեան պատճառով։ Բանտի հիւանդանոց տեղաւորուած հայերից մեռան մօտ 10 հոգի, որոնց անունները յայտնի է Ռուֆայիսի հայ քահանային։ Բոլոր այդ օրերի ընթացքին՝ մեզնից իւրաքանչիւրը չէր դադարում կախում ունենալ այս կամ այն պաշտօնեայի կամ գիւղերի քահանայից ու կամաւականութիւնից։ Մեզ տանում էին՝ ատրճանակների փողը մեզ վրա ուղղած, մեզնից չառերին ձիաքարկում էին պահակապետի և գիւղապետի ծեծին։ Շատերին կողոպտեցին, խլեցին դրամները. չառերի վրայից հանեցին քիչ թէ շատ լաւ գգեստը (ուսանող Շամոյեանի, վաճառ Ալէքսանեանցի, Սարգիս Մուրադեանի, Գ. Քաչատրեանցի և ուրիշների)։ Մեզ յայտնի չէ ձերբակալուածների և Ռուֆայիս տարուածների որոշ Թիւը. յամենայն դէպս, այդ Թիւը հասնում է երկու հազարի։ Իրանցից, իրօք, ճակատից բերած ոսպմագերիներից 3—4 տասնեակ մարդկանցից աւելի չէին, որոնց նկատմամբ մենք վկայ եղանք առանձնապէս վայրագ վերաբերմունքի։ Զինուորները գրկեցին տաք հագուստից ու կօշիկից։ Սպաներից խլում էին լաւ կօշիկներն ու փոխարինում տրեխներով (տես—կապ. Տէր-Ղազարեան)։ Մի ոսպմագերի գինուորի դաշոյնով վերարուրեց պահակ գինուորը, և նա մեռաւ՝ առանց բժշկական օգնութեան։ Թիֆլիսում այդ ոսպմագերիներից մի քանիսը մարակով ծեծեցին՝ Բոբլայուի թաքարներից առնուած ձիւորը պահակների կողմից*)։ Ներկայացուած փաստաթղթերը, յայտարարութիւնները, հարցաքննութիւն կատարելու մասին խնդիրները, պաշտօնատարների նկատմամբ գանգատները ո՛չ մի արդիւնք չունեցան։ Մենք չենք բերում մեր կրած վնասները...

Մեզնից ոմանք, ձերբակալուած գիւղ. 23-ին և աքսուած Ռուֆայիս, յետոյ գանազան պատճառներով վերադարձած, — Թիֆլիսի ճանապարհին ու հազիւ Թիֆլիս հասած նորէն ձերբակալեցին և մինչև անգամ յետ ուղարկեցին Ռուֆայիս։ Եղան դէպքեր, երբ միևնոյն անձը ձերբակալուեց մինչև չորս անգամ**)։

Այս ամէնից հեշտ է տեսնել, Թէ ի՛նչ լաւատ յարաբերութիւններ էին ստեղծուած հայերի և վրացիների միջև — մի բան, որ, ի հարկէ, չատ դժւարացրեց երկու ժողովուրդների մերձեցման ու բարի հարևանական համակեցութեան գործը։ Պատերազմը մեծ չարիք պատճառեց երկու կողմերին էլ։ Ճիշտ է, նա մասամբ մաքրեց անատղով մթնոլորտը Հայաստանում, բարձրացրեց հայ ժողովրդի կրօնքը, հայերին տւեց երևելի գործիչ ու գինուորական Քանդարժէք նիւթեր, մասամբ քուլացրեց վրացիների յարձակողական ագդայնամոլութիւնն ու հարկադրեց, որ, որոշ չափով,

---

*) «Իմերաուրա», 30 յունւար, 1919թ.։

**) Ցա՛ծ կարող այստեղ չլինել, որ վրացի գերիները Հայաստանում բոլորովին այլ վերաբերմուն էին արժանացել։ Նրանք պահւում էին առանձին զօրամասերում, ստանում էին ճաշիհամ ուտելիք, արմաւ և գինւորները· սպաների համար տրւել էին յատուկ յարմարատիպներ։ Զրամիէ ստանում էին պայմանական ռանիկ։ Վրացական դրր և նրդ գնդերի գերի ու վիրաւոր գինւորները «Ռորրա»-յի խմբագրատիպ ուղղած մի ճամախով գրում էին, որ իրենք «ամերի կողմից հանդիպել են ամենալաւ ու օրաւոկից վերաբերմուն։ Քէ ցարտաքսեակներ և քէ գինւորական իշխանութիւնները գործ են գնում ամէն Լանգ, որ գերիացնեն մեր վիճակը։ Իսկ մեզ գերի առնող գինւորների վերաբերմունք ամենահրաշալիականն է, որից լաւը կարելի չէ ցանկանալ։

Հայաստանի չահերն էլ հաշւի առնեն, բայց ուշց և չատ ծանր հետևանքներ, որոնց մէջ, առաջին չարքում, անկասկած, այն չափազանց աննպատակ անդրադարձումն էր, որ ունեցաւ արտաքին աչխարհում. երկու նորատեղծ պետութիւնների պատերազմը, իրենց ինքնուրոյն կեանքի արշալոյսին, չէր կարող նկատուել բարենիչ նրանց համար:

*

Չինադաղարի յաջորդ օրն իսկ, հայկական հաչտարար պատիրակութիւնը Ղարաքիլիսայից հաւաւ Թիֆլիս, և մի չարք նախապատրաստական աչխատանքներից յետոյ, յունւարի կէսերին, բացուեց հայ–վրացական խորհրդաժողովը, որը զբաղուեց ո՛չ միայն պատերազմի հաչւեյարդարով, այլ և երկու երկրների փոխյարաբերութիւններին վերաբերւող բոլոր կարևոր խնդիրներով: Հայերի կողմից խորհրդաժողովին մասնակցում էր Ղարաքիլիսա ուղարկուած պատիրակութեան ամբողջ կազմը՝ լրացած գինւորական մասնագէտ զօր. Ղորղանեանով: Վրացիների պատիրակութեան անդամներն էին ե. Գեղեչկորին, Ն. Ռամիչվիլին, Սաթախտարաչվիլին և զօր. Գելեւանովը:

Օրակարգի հարցերն էին. 1) փոխադարձ անկախութեան ճանաչումն ու դիւանագիտական յարաբերութիւնների վերականգնումը. 2) հաղորդակցութեան և երթեւեկութեան պայմանների կարգաւորումը. 3) Քրանգիտ. 4) փոստ–հեռագրական համաձայնութիւն. 5) հայկական կորպուսի զրաւած գոյքերի վերադարձը. 6) հայկական կառավարութեան պատկանող և վրացիներից գրաւած 13 միլիոն ռուբլի գումարը վերադարձնելու խնդիր:

Յորհրդաժողովը տեւեց չատ երկար, մօտ 3 ամիս: Վրացիները ակնյայտնի կերպով աչխատում էին ձգձգել՝ քաջ գիտակցելով, որ ինչքան ժամանակ անցնի, այնքան դրութիւնը Հայաստանում կը ծանրանայ, հետևաբար, և այնքան հայ պատգամաւորները կը լինեն գիջող: Վէճի գլխաւոր նիւթը սահմանների հարցն էր, որի վերաբերմամբ կողմերը մինչև վերջ էլ համաձայնութեան չեկան:

Տեսնելով վրացիների դիտումնաւոր ձգձգումը՝ Հայաստանի կառավարութիւնը փետր. 10–ին հրահանգեց իր պատւիրակութեան՝ մինչև մարտ վերջացնել բանակցութիւնները և մեկնել Երևան: Մի պահ դադարից յետոյ, խորհրդաժողովը վերսկսեց փետր. 28–ին և աչխուժեաւ աչխատանքները ընթացան ուեւլի արագ: Ընդունեց փոխադարձ անկախութիւնների ճանաչման և դիւանագիտական յարաբերութիւնների վերականգնման դաչինքը: Մչակեց Լոռիի չէզոք գօտու վարչութեան առանձին կանոնագիրը: Մարտ 1–ին ատորագրուեց և ուժի մէջ մտաւ փոստ–հեռագրական համաձայնութիւնը: Մարտ 4–ին վերականգնուեց երկաթուղային հաղորդակցութիւնը. վերացուեցին ճամբորդական արտօնագրերը Հայաստանի ու Վրաստանի միջև, բացի զաղթականներից: Մարտի սկզբին բացուեց Թիֆլիսի հայկական դիւանագիտական ներկայացուցչութիւնը՝ Մ. Թումանեանի պաչտօնակատարութեամբ.

քիչ յետոյ պաշտօնի կոչւեց Լ. Եւանգուլեանը: Մարտ 8 Քւակիր յայտաբարութեամբ Վրաստանի կառավարութիւնը ճանաչեց Հայաստանի անկախութիւնը, որին ի պատասխան Հայաստանի կառավարութիւնը ուղարկեց հեռաձայ յայտագիրը, որ մարտ 24–ին Թիֆլիսի ներկայացուցչի ձեռքով յանձնուեց վրաց արտաքին գործոց նախարարին.

«Մեր կառավարութեան գիւանագիտական ներկայացուցիչը Վրաստանի կառավարութեան մօտ ուղարկել է ինձ 1664, մարտ 8 Քւակիր յայտագիրը, որի մէջ Դուք, պ. Նախարար, Ձեր կառավարութեան յայծնաբարութեամբ, յայտնում էք ի գիտութիւն Հայաստանի կառավարութեան, Թէ նա ճանաչում է Հայաստանի Հանրապետութիւնը իբրև ինքնօրէն անկախ պետութիւն: Հայաստանի կառավարութիւնը լիովին համակիր է այն նկատառումներին, որոնց համաձայն Վրաստանի կառավարութիւնը հարկ է գտել յիշեալ յայտարդի մէջ ծանուցանելու, որ ճանաչում է Հայաստանի Հանրապետութեան պետական ինքնօրէնութիւնն ու անկախութիւնը:

Նորապէս գիտակցելով Անդրկովկասի հողի վրա կազմւած հանրապետութիւնների չահերի ընդհանրութիւնն ու միութիւնը մի շարք խնդիրներում, որոնք էական նշանակութիւն ունեն նրանց գոյութեան և ապահով բարգաւաճման համար, Հայաստանի կառավարութիւնը ուրախ է վրաց կառավարութեան այդ ակտը նկատելու իբրև ապացոյց համերաշխութեան և փոխադարձութեան գիտակցութեան այդ տեսակէտից:

Իր կողմից Հայաստանի կառավարութիւնը իր պարտքն է համարում հաստատել Ձեր կառավարութեան, որ ինքը ճանչել է և ճանաչում է վրաց դեմոկրատական հանրապետութիւնը իբրև անկախ և ինքնօրէն պետութիւն: Հայաստանի Հանրապետութեան Արտաքին Գործերի Նախարար՝ Ս. Տիգրանեան»:

Այսպէսով, վերականդնւեցին հայ–վրացական բնականոն յարաբերութիւնները:

ԳԼՈՒԽ Ե·

ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄ

1919 Թւի սկզբից, Հայաստանը հետզհետէ սկսեց դուրս գալ այն դժոխային վիճակից, որի մէջ ընկել էր Թիւրքական աքցաւանքի հետևանքով։ Ձիչտ է, կացութիւնը դեռ չատ էր ծանր։ Թիւրքերի գործած աւերը զգացւում էր չափազանց սուր։ Սովն ու հիւանդութիւնները, որոնք առատ հունձ էին անում 1918Թ· վերջերին, չարունակում էին կոտորել և այժմ։ Մանաւանդ, բնաւոր տիֆը, որ փոխարինել էր քոլերային, ամէն օր խլում էր հարիւրաւոր կեանքեր· մարդիկ մեռնում էին հիւանդանոցներում, հանրակացարանների մէջ, տներում ու փողոցներում, ամենքի աչքի առջև։ Մեռնում էին զաղթականներն ու տեղացիները, աղքատներն և ունևորները։ Մահը խտրութիւն չէր դնում*)։ Բազմաթիւ Թանդագին կեանքեր խլեց նա· դեկտ· 2–ին մեռաւ հին յեղափոխական, ներքին գործոց նախարարութեան կարևոր յանձնարարութիւնների պաշտօնեայ Սարգիս Օհանջանեանը (Ցարհատը), յունւ· 5–ին՝ Հանրապետութեան բժշկա–առողջապահական մասի վարիչ՝ բժ· Զ· Անդրէասեանը, յունւ· 11–ին՝ Հայաստանի անդրանիկ պետական վերահսկիչ Մ· Բերբերեանը, յունւ· 23–ին՝ երևանի արքունական պալատի վարիչ Գ· Կամսարականը, յունւ· 30–ին՝ խնդուղիների առաջին մասի պետ ինժ· Թորգոմ Նիկողոսեանը։ Մեռաւ երևանի քաղաքային վարչութեան անդամ՝ Ցակ· Ցարութիւնեանը, երիտասարդ գործիչ Փառնակ Ցակոբեանը։ Բնաւոր տիֆին զոհ գնաց և Հայաստանի Հանրապետութեան կերտողն ու մեծագոյն գործիչը՝ Արամը, որ քառասունօրեայ տաժանելի տառապանքներից յետոյ, յունւ· 26–ին փչեց վերջին չունչը։ Նրա մահը անդարմանելի հարուած էր Հայաստանի համար, և հասկանալի է այն խորունկ վիշտը, որ պատեց ամենքին։ Արամի յուղարկաւորութիւնը փետր· 1–ին համաժողովրդական սուգի օր էր։

Հիւանդութիւնների պակաս Թողած յրացնում էր սովը։ Մինչև արտասահմանից ալիւր առացւելը, երկրի բոլոր կողմերից աղեկտուր կոչ ու հեծկլտանք էր լսւում· «Հա՛ց, հա՛ց հասցրէք, մեռնում ենք»···

*) Պատճառական ցուցակագրութեան համաձայն, 1919 թւի, 5 ամսւայ ընթացքին, միայն Երևանում 3.972 մահւան դէպք էր պատահել։ Ըստ ամիսների այդ մահերը գասւսւում էին այսպէս· ապրիլ 742, մայիս 764, յունիս 899, յուլիս 766, օգոստոս 801։ Եթէ Երևանի այն ժամանակւայ բնակչութիւնը, միջին թւով, հաշւենք 60.000 մարդ, իւրաքանչիւր հազարի կընկնի 161.2 մահ։ 1913 թւի Եւրոպական Ռուսաստանում իւրաքանչիւր հազար մարդուց մեռնում էր 27.9 մարդ։

«Գիւղը ապրում է սովի ճիրաններում, գրում էին Վերին-Ղարախլուխից «Հայաստանի Աշխատաւոր»-ին (25 ապր.)։ Սրանից մի քանի օր առաջ մի գաղթական սովածութիւնից մեռաւ տեղացի Խաչատուրի դռանը։ Շատերը, տեղացի քչ գաղթական, հապճեպ փախչում են էս կողմ-էն կողմը, որպէսզի մի կտոր լոր հաց ճարեն։ Սրանից 3 օր առաջ 3 հոգի գաղթական սովածութիւնից ճանապարհին մեռել են, այնպէս որ սովը հնձում է։ Գիւղում ապրում է 1000—1200 չունչ գաղթական, իսկ բնակիչ գիւղացիք 2300 չունչ են։ Հացի գինը բարձրացել է՝ 1 փութ ցորենը 300—400 ուռլու, գարին՝ 200ռ., ձուն հատը 1ռ. 20կ., միւս մթերքները կրկնապատիկ և եռապատիկ գին են ստացել, այն էլ ձեռք չի բերւում»։

Նոր-Բայազիտի Ջէօլաղան գիւղից հետադրում էին նոյն թերթին (27 ապր.)։ «Ժողովուրդը ապրում է սոսկալի պայմաններում։ Սովամահութեան դէպքերը տասնեակների են հասնում. օր օրի վրա աստկանում է։ Ախտում ենք հաց։ Ի սէր Աստծոյ, մի՛ թողէք մեռնենք»։

«Ախտաւի չրջանի տեղացի և փախստական հայութիւնը ծայր աստիճան սոված է, հետագրում էին Ներքին-Ախտալից, անհամար դիմումներ կը լինեն։ Սովամահութեան դէպքերը բազմաթիւ են։ Եթէ անմիջապէս նպաստ և սերմացու չտանի, ուշ կը լինի»։

Քէլիշբեանդից գրում էին նոյն թերթին (9 մայիս). «Սոսկալի տեսարաններ... Գաղթականութիւնը նորից գաղթի համապարշտ բռնած՝ չուում է դէպի Երևան։ Մերվի, ոտաբոբիկ կամ գնդապան ցնցոտիներով իր այլանդակ մարմնի մի մասը ծածկած և ծանրաբեռնւած իր փոքրիկներով՝ դիւղից-գիւղ թափառում, հաց է մուրում, բայց հաց չի գտնում։ Հացի փոխարէն կանայով անւող գաղթականութեան մէջ յաճախ քուէատրման դէպքեր են պատահում և կամ գէւանչի նման թափառում են փղոցները՝ անկապ և կիսատուր խօսքեր արտասանելով։ Շրջանիս գաղթականութեան մի մասը դեռ մինչև օրս էլ բացօդեայ է անցկացնում իր օրերը ձիւնի, անձրևի տակ և ցեխերի մէջ։ Լինում են դէպքեր, որ սոված, ուժասպառ եղած գաղթականները քաղում են ցեխերի մէջ և առանց կողմնակի օգնութեան չեն կարողանում ազատւել այդ դրութիւնից։ Աւելի սոսկալի և անելանելի դրութեան մէջ գտնւողների մեծ մասնը կազմում է Նախիջեանի ժողովուրդը... Սովն ու ցաւը մէկից մէկէլի ուած հնձում են 17,000 խեղճ գաղթականութիւնը... Պատահում են, յաճախ, մեռելներ, որոնք 6—7 օրով մնում են գոմերի մէջ, առանց թաղւելու»։

«Կողրը սովի ճարակ է դարձել, հնչում էին ազահանքից («Հ. Աչխ.» 21 մայիս)։ Հացի գրւանքան 15ռ. է։ Նպաստ չստանալու պատճառով սովից մեռնում են օրական 20 մարդ։ Օգնեցէ՛ք մեզ»։

Ժողովուրդը սովամահութիւնից բնաջնջւելց, նորից ազատկում էին Ներքին-Ախտալից։ Կամաքացած մարդիկ խում են ճարակում, ատւնած լչելը ուտում գիւղերում։ Հարիւրաւորներ մեռնում են։ Շրջանը ձեռքից գնաց»։

«Քէօսամահմատ գիւղի մեծ մասը, հետագրում էին մայիս 19-ին Նոր-Բայազիտից, կանայով է կերակրում։ Կանայք և երեխաները նման են ուրւականների։ Ի սէր Աստծոյ, փրկեցէ՛ք մեզ մեռնելուց։ Հաց տասցէ՛ք»։

«Գեաւառի և քաղաքի ազգաբնակութեան վիճակը անտանելի է, հաղորդում էր Հայ.-Հեռ.-Գործակալութիւնը մայիս 20-ին։ Սովամահութեան դէպքեր են եղել։ Ամերիկեան կոմիտէն 10 օրից ի վեր ոչինչ չի տառնում։ Աչխը չլինելու պատճառով ի գուր է մոտ ապագայում ամերիկացիներից որև է օգնութիւն ապասելը»։

Եւ այսպէս անվերջ ու ամէն կողմից։

Դրութիւնը յուսահատական էր։ Մայիսի վերջերին երևանի հացաբաժինը իջեցուց մէկ քառորդ փունտի, իսկ գաւառի ժողովուրդը արածում էր դաչտերում։ Սով Արքայի ուրւականը սաւառնում էր Հայաստանի գլխին։

Կառավարութիւնը նախատեսնում էր այդ վտանգը և վերագոյն ճիգ ի՛պահում առաջն առնելու։ Սակայն, նրա բոլոր դիմումներն ու թախանձանքները արձագանգ չգտան ոչ մի կողմից։ Անգլիացիք միայն յունաստրն կարպից Ալէքսանդրապոլ բերին 6 գնացք ցորեն և ալիւր և մի քանի վագոն էլ՝ Շարուրից։ Աննշան քանակութեամբ ալիւր եկաւ և Թիֆլիսից և այնուհետև մինչև ապրիլի վերջերը Հայաստան դրսից մի՛ բերք չմտաւ։ ապր։ 28-ին խնամատարութեան նախարարութիւնը ստացաւ 15 վագոն ալիւր։

Յունւ։ 22 նիստին, վարչապետ Ց։ Քալանթարեան բերեց հետևեալ առաջարկը։ «Երկրին սպառնացող սովի առաջն առնելու համար անհրաժեշտ է դիմում անել դաշնակից պետութիւններին, մասնաւորապէս Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներին, օտար չուկաներից (առանձնապէս Ամերիկայից) Հայաստան խոշոր քանակութեամբ հաց ներմուծելու համար։ Սպառնացող աղէտի ծաւալը պահանջում է, որ այս դիմումը անի Հայաստանի Հորդրի և կառավարութեան յանձնարարութեամբ անձամբ ինքը՝ վարչապետը, իբրև երկրի ամենաբարձր պաշտօնեան՝ ունենալով ուղեկիցներ պարենաւորման նախարարին և ելեմտական նախարարութեան կողմից մի ձեռնհաս խորհրդատու։ Բացի հացի խնդրից, նպատակայարմար և կարևոր է յանձնարարել սոյն անձնաւորութիւններին ա) համաձայնութեան գալ պետութիւնների կամ մեծ առևտրական տների հետ ներմուծելու Հայաստան երկրին պակասող առաջին անհրաժեշտութեան ապրանքները և բ) հնար եղած դէպքում բանակցութիւններ վարել և պարզել, թէ ինչ պայմաններով Հայաստանի Հանրապետութիւնը կարող կը լինէր դրամական փոխարինութիւն տալ արտասահմանում»։

Կառավարութիւնն ընդունեց առաջարկի կարևորութիւնն ու նպատակայարմարութիւնը և յանձնարարեց վարչապետին կազմել գեկուցում, նախաշաւիղ և օրինագիծ Հայաստանի Հորդրին ներկայացնելու համար։

Յունւ։ 27-ին վարչապետը ներկայացրեց գեկուցումը, նախաշաւիղն ու օրինագիծը, որը ընդունուեց և չտապ կարգով մտցուեց Հայաստանի Հորդուրդ։ Այս վերջինն էլ, փետր։ 4-ին, որոշեց։ «Յանձնարարել վարչապետին ուղևորուել Եւրոպա և Ամերիկա, դիմել Հայաստանի Հորդրդի անունից համաձայնութեան պետութիւնների և Հիւս։ Ամեր։ Միաց։ Նահանգների կառավարութիւններին և խնդրել նրանց օգնութիւնը՝ ներմուծելու երկիր Հայաստանին պակասող պարէնը և առաջին անհրաժեշտութեան ուրիշ ապրանքներ։ Ուղևորութեան ծախսերը ծածկելու համար բաց անել վարչապետին 550,000 ուրբու վարկ»։

Փետր։15-ին վարչապետի պաշտօնակատար նշանակուեց Ա։Յատիսանեանը, իսկ Ց։ Քալանթարեան մեկնեց Թիֆլիս։ Սակայն, անգլիական հրամանատարութիւնը երկար ժամանակ արտասահման անցնելու արտօնութիւն չտուեց, այնպէս որ Քալանթարեան ստիպուած եղաւ վերադառնալ Երևան, ապր։ 2-ին նորից ստանձնեց վարչապետի պաշտօնը և միայն ապր։ 16-ին կարողացաւ

մեկնել՝ հետը առնելով ելևմտական նախարար Ա. Էնֆիալեանին, դիւղ. Ց. Փիլաւեանին և ապագ Ս. Մելիքեանին:

*Նոյն նպատակով, մարտ 12-ին Թիֆլիս գնաց և Հայ. Յեղափոխական Դաշնակցութեան Կեդրոնական Կոմիտէի անդամ Ռուբէն Տէր-Մինասեանի հետ մեկնեցաւ Պարսկաստան՝

մանատարութեան բռնած վարանոտ կամ անբարեացակամ դիրքը արդար դժգոհութիւն էր պատճառում հայերին: Մարտ 26–ին Հայաստանի կառավարութիւնը զօր. Թոմսընին ներկայացրեց մի ընդարձակ յուշագիր, որով պահանջում էր անյապաղ լուծել Ղարաքաղի, Կարսի ու Շարուրի և Նեթաղաղի խնդիրները, ինչպէս նաև պարենաւորման, հաղորդակցութեան, առեւտրական ու գիւղատնտեսական մի շարք հարցեր:

Մանաւորապէս սուր վրդովում էր առաջ բերում անգլիացիների գործելակերպը Զանգեզուր—Ղարաքաղի և Կարսի հարցերում: Կարսը այդ ժամանակ կառավարում էր Թիւրքերի նշանակած տեղական կառավարութեան՝ Շուրայի ձեռքով, որը խիստ Քէմալական էր տրամադրուած դէպի հայերը և աշխատում էր կարելի պահել Թիւրքիայի տիրապետութիւնը կամ, եթէ այդ անհնար է, ստեղծել Կարսի, Բաթումի և Ախալցխայի չորքաններից առանձին անկախ պետութիւն՝ Հարաւ–Արեւմտեան Անդրկովկաս անուանով: Անգլիացիք չէին ուզում գրգռել մահմետականներին և գանազան պատրուակներով արգելք չէին լինում, որ հայերը գրաւեն Կարսը: Հայաստանի կառավարութեան յամառ պնդումների վրա, 1919թ. յունւ. 8–ին, Արեւմտեան Անդրկ. բրիտանական ուժերի հրամանատար զօր. Ֆորեստիէ–Ուակերի և Հայաստանի արտ. գործ. նախարար Ս. Տիգրանեանի միջև կնքուեց Կարսի մասին մի համաձայնութիւն, որով, մինչև հաշտութեան դաշնագրի ստորագրումը, Կարսում պիտի նշանակուէր անգլիական զինուորական նահանգապետ, քաղաքացիական իշխանութիւնը պիտի կազմուէր հայերից և զինուորական նահանգապետի ենթակայ՝ վարչր պիտի քաղաքի ու նահանգի քաղաքացիական գործերը: Հայկական պաշտօնեութիւնը պէտք է պատրաստ լինէր Ալէքսանդրապոլում և յունւ. 12–ին զինւ. նահանգապետի հետ պիտի անցնէր Կարս: Համաձայնագրի մէջ մանրամասն նշանակուած էին երկաթուղու և հեռագրի ու փոստի թուրքերից փոխանցելու ասպեհանիներն ու կառավարութեան նպատակը. — մինչև Կարս բոլորովին հայ պաշտօնեաներ, Կարսում՝ խառն, սահմանում՝ թուրք–անգլիական՝ զինւ. նահանգապետի հսկողութեան տակ:

Համաձայնագրի 10րդ և 11րդ կէտերում ամփոփուած էր ոչ–հայ տարրերի կառավարութեան ձևը. լինում էր, որ մահմետականները վախենում են հայկական վարչութիւնից, հետևաբար, անհրաժեշտ է գործել զգուշութեամբ և ցրել ամէն վախ ցոյց տալու համար, որ հայերը ընդունակ են մոռանալու ցեղային նախապաշարումները, երբ որ իշխանութեան գլուխ են կանգնում»: Մանաւորապէս հրահանգում էր խիստ լինել ժանդարմների գործած ճնշումների և բռնութիւնների դէմ. «Սա կը լինի հիանալի յարմարութիւն հայկական իշխանութիւնների համար և կառավարութիւնը արժանի կը լինի դաշնակից պետութիւնների չնորհաւորութեան, եթէ մինչև Անդրկովկասի ապագայի որոշումը հաշտութեան խորհրդաժողովի կողմից, անդորրութիւնը չխախտի»: (10րդ կէտ):

12րդ դէսուն սուսում էր, որ այս համաձայնութիւնը արգելք չէ, որ հայերը հետապնդեն իրենց պահանջները հաշտութեան վեհաժողովի առջև։

Այս համաձայնութեան հիման վրա, անգլիական դիւանագործական նահանգապետն ու հայկական գլխաւոր պաշտօնէութիւնը մեկնեցին Կարս։ Բայց հայկական իշխանութեան երեսը կարսում Շուրայի կողմից ընդունելից թշնամաթար ու սպառնալիքներով, և անգլիական նահանգապետի խորհրդով հայերը հեռացան Ալէքսանդրապոլ։ Այսպիսով, անգլիացիները, մի տեսակ, ճանաչեցին Շուրայի իշխանութիւնը։

Կարսի, Արդահանի և Բաթումի չրջանների մահմետականները դիմեցին Փարիզի Խորհրդաժողովին, Ուիլսընին, Լոյտ Ջորջին՝ բողոքելով իրենց չրջանները հայերին և վրացիներին յանձնելու դէմ և պահանջելով ճանաչել իրենց անկախութիւնը։ Նրանք յայտնում էին, որ հայերը կոտորել են հարիւր հազար մահմետականներ։

Այս դէպքը, ինչպէս և ուրիշ առիթներով անգլիացիների ցոյց տւած Քրքասխրութիւնը սաստիկ յուզում ու զայրոյթ պատճառեց հայկական չրջաններում։ Մարտ 6–ին, Հ. Հ. Գատուրակութեան գրած մի նամակում, արտ. դոքտոր Նախարար Ս. Տիգրանեանը երկարօրէն, կանգ է առնում այն օրերի անգլիացիների հետ ունած քաղաքականութեան վրա։ «Կարսի դէպքը, գրում է նա ի միջի այլոց, չատ վատ և ընդարձակ հետևանքներ ունեցաւ, ինչպէս և սպառում էին։ Թուրքերը տեսան, որ բաւական է ցուցադրել որև է հակառակութիւն և բողոք հայերի, Հայաստանի կառավարութեան դէմ, և Անգլիան թոյլ կը եր հանդէս կը գայ դարձեալ, կասեցնելու մեր կառավարութեան ամէն մի ներգործական քայլն ու ծրագիրը։ Բրիտանական զօրահրամանատարութիւնը Անգրկովկասի մի չարք անտեղով աւելի և աւելի ոյժ է տալիս Թուրքերի այդ համոզմանը։

Մեր զօրամասերը առաջ էին ընթանում դէպի Շարուր, Նախիջևան, Ջուլֆա՝ օսմանեան զօրքերի դատարկած այդ վայրերը գրաւելու։ Թուրքերը դիմադրում էին։ Վօլլի վաթօտայից (Երևանի և Շարուրի ուեզդների սահմանակից) մեր զօրամասը յետ եկաւ մինչև Դաւալու (հայ–վրացական պատերազմի ժամանակ), յետոյ պատրաստւեց նորից առաջ գնալ։ Եկան Շարուրի և Նախիջևանի Թուրքերի ներկայացուցիչները։ Մեր կառավարութեան հետ բանակցեցին։ Համաձայնեցինք, թէ 8–10 օր մեր զօրքը Դաւալուից առաջ չի չարժւի, մինչև որ նրանք կերթան կը պատրաստեն խաղաղ ժողովուրդը, թէ հայոց զօրքը իրենց որև է վնաս չի հասցնելու, և կը գան ընդառաջ հայ զօրքն ու հայ ադմինիստրացիան խաղաղ և հաչտ ընդունելու։ բայց վրա հասաւ անգլիական կապիտան Լօսէնը, անցաւ Նախիջևան տեսնելու՝ ինչ կայ, ինչ չկայ... և իր դեկուցման հետևանքով նչանակւեց Նախիջևանի բրիտանական զօրական նահանգապետ և փոխ–գնդապետ, յետոյ եկաւ երևան պահանջելու, որ մեր զօրքերը յետ քաչեն նոյնիսկ Դաւալուից հետևս... Ոչ առանց դժւարութեան համաձայնութեան եկանք երիտասարդ փոխ–գնդապետի հետ, որ մինչև Վօլլի Վաթօտան մնայ մեր առաջնորդացեան, բայց մեր զօրքը յետ կը քերենք այդ չրջանից՝ Թողնելով մի փոքրիկ խումբ (50 հոգի) Դաւալուում։ բրիտանական մի զօրամաս կը լինի այդ տեղը, որը կը պաշտպանի կարգը և խաղաղութիւնը։ Ուրեմն, Շարուրն ու Նախիջևանն էլ մեր ձեռքից գնաց (Քո՛ղ ժամանակագրապէս), դառաս բրիտանական զօրական նահանգապետութիւն (կարսի օրինակով), և մենք

պարտաւորեցինք նոյնիսկ դրան սահմանակից մեր տէրիտորիայում (Վէգէի բասար) զօրք չպահել։

Նոյն խաղը խաղալու լուրջ պատրաստութիւններ են տեսնում Քուբքերը այժմ Սուրմալուում...

Ղարաթաղը բրիտանական հովանաւորութեան տակ Ագրբէյճանի գեներալ-նահանգապետութեան մէջ է գտնւում։

Ախալցխան, Ախալքալաքը ինքնում—կարսի Քրքութեան ձեռքն են անցել ռազմական նպատակով՝ վրացիների օգնքերը պաշտպանելով։

Այսպիսով, Անգրկովկասի Քրքութիւնը բրիտանական զօրահրամանատարութեան օրով աւելի նպաստաւոր պայմանների մէջ է գտնւում, քան գերման–օսմանեան յաղթական օկուպացիայի ժամանակ։

Փաստեր ու հանգամանքներ են սրանք, որոնք լուրջ մտածմունքների և ծանր մտատանջութիւնների տեղիք են տալիս մեզ...

Անշուշտ, գլխաւորապէս պատճառը անգլիական զինուած ուժերի Քուլութիւնն է այստեղ։ Ինչպէս Գերմանիան ամառն ու աշնանը տեղի էր տալիս թիւրք հրամանատարութեան պահանջների ու քամահրանքների առաջ, այնպէս էլ այժմ անգլիական զինուորների օսմանեան օֆիցէրների այս նուաճողական ծրագիրների և գործունէութիւնների առաջ... Որովհետև արձանագրածս փաստերը հայերի յաղթահարումը չէ միայն, այլ աւելի ևս Անգլիայի պարտութիւնը։ Բրիտանական զօրական նահանգապետութիւնները լոկ մի քող են, նուրբ ու քաղաքնիկ, որի տակից պարզ երևում է իրական Քուրքական իշխանութիւնն ու ոյժը։

Սակայն, Քւում է Քէ մի ուրիշ պատճառ էլ կայ։ Անգլիացին չէ հաւատում հային, աւանդաբար համարելով սրան անուղղելի ռուսասէր, ռուսական օրիենտացիայի անյողդողդ հետամուտ... Բնորոշ է, որ գեներալ Ոօկկէրի պահանջով Կամալուրական Զօրաբանակի ներկայացուցիչը հեռացաւ Երևանից դէպի եկատերինոդար։ այդ մի նոր փաստ է ապացուցանելու Անգլիայի ունեցած վերաբերմունքը դէպի Ռուսիայի ներկայութիւնը Անդրկովկասում։ Այն համարւում ու այս վերաբերմունքն է, որ տրամադրում է բրիտանական զօրահրամանատարութեան չնպաստել մեր ուժերի կազմակերպմանը և զօրեղացմանը Քուբքութեան դէմ Անդրկովկասում, որովհետև Քուբքն ի նրա աչքում ամենավատահելի պատասքը Ռուսիայի դէմ այստեղ։ Նա դիմում էր մեզ կարսը, բայց հէնց որ տեսաւ, որ այնտեղ աւելի վստահելի և ոչ անվնաս հակառուսական ոյժ կայ յանձին Քրքութեան, իսկոյն չտապեց ուղղել իր այդ սխալը։ Կարսը տւեց Քուրքերին... և ոչ միայն Կարսը։

Կարսի նահանգի համար բրիտ. զօրահրամանատարութիւնը մինչև 1000 հոգուց բաղկացած մի լիքեա է կազմակերպում. հաւաքում է տարբեր, որոնք իր ծառայեն իբրև ոոճիկի համար, առանց քաղաքական ձգտումների (օրինակ, օսեր, ռուս հին տարածնեցիներ)։ Հայի չեն ընդունում։ Հաւ այժմ, որովհետև տեղական Քուրքերը գրգռած են հայերի դէմ (այս է պաշտօնական պատճառաբանութիւնը), բայց Քւում է, Քէ Անգլիան չէ ուզում յենւել որև է հայ ուժի վրա, որովհետև իր կարծիքով (և, դժբախտաբար, ոչ միայն իր կարծիքով) հայն աւելի է ռուս, քան ռուսն ինքը, և չէ կարելի յենւել հայի վրա, երբ Ռուսիայի դէմ բան է ծրագրւում։

Մեր հաւատարիմ վերաբերմունքը դէպի Ռուսիան գիտէք Քէ ինչ չափով է գնահատւել և մեզ օգուտ բերել։ գիտէք, որ ներկայիս այդ վերաբերմունքը չէ կարող տևել պղտոնական սերոյ չնմանւել, որը ունայն է և անիրական փոխադարձաբար։ սակայն, անօգուտ լինելով՝ վնասակար է այսօր և վաղը, իսկ վաղը չէ միւս օրը Քէ ինչ է լինելու, ոչ ոք չի իմանում։

... Ամէն կողմէ մեզ չրխաւատել է Թուրքիան վտանգը, սպառնական և յանդուգն։ Մեր քաղաքական դրպրին հակառակ Թուրքիան առալ է առնում իր դրպրները Հայաստանի վերաբերմամբ, որոնց մէջ հայ տարրի ֆիզիքական ոնձնիջումը էական և հիմնական կէտն է հանդիսանում, և մենք ոչինչ գրաւական և վստահութիւն չունենք, թէ անգլիական զօրահրամանատարութիւնը ցանկութիւն ունի մեզ փրկելու այդ վտանգից, որը, կրկնում եմ ու պնդում. — այսօր էլ իրական է և սպառնական ոչ պակաս, քան ամիսներ առալ։

Բրիտանական զօրահրամանատարութիւնը արգելից մեզ գրաւել Հայաստանում որոշ կարևոր վայրեր, կարևոր թէ ստրատէգիական, թէ տնտեսական (Կարսի պահեստները) տեսակէտով։ այդ բոլորը մնաց Թուրքերի ձեռին։ մեր քայլերն ու ընթացքը կաչկանդուած են, Թուրքերինը՝ ազատ։ մեզ օգնող չկայ, Թուրքերին աջակից են և դեկավար Թուրքիան իր օֆիցէրներով (նոյնիսկ բարձրատեղեան), ռազմամթերքով և ռազմական ամէն տեսակ գործիքներով...

Կառավարութեան կողմից մեր յատուկ ուշադրութիւնը հրաւիրելով այս փաստերի և հանդամանքների վրա՝ խնդրում եմ, որ ամենաւերջ դիմումներով ուժ հարկն է աղողեցնէք, որպէսզի։

1) Անդրկովկասից և Թիւրքիայի նախկին վիլայէթներից հեռացնէն չոտաժոյք Թիւրքական ուժերն ու զօրականները սպառնալով, որ այդ ուժերի կողմից որև է դիւանագործութեան դէպքում պատիժ և պատասխանատուութիւն կը կրի Թիւրքիան։

2) Թէկուզ փոքր զօրամասեր (անգլիական, ֆրանսիական, ամերիկեան) ուղարկելն Տրապիզոն—Էրզրում—Մարդիամիչ—Կարս—Նախիջեւան Ջուլֆա—Շուշի. կարսում և այլ տեղերում եղած անգլիական զօրախմբերը դէմօրթիզացիայի են ենթակայ և հեռանում են)։

3) Աջակցել մեր զօրքերի կազմակերպմանը և սպառազինմանը (փամփուշտ, հրացան, զնդացիք...)։

4) Հայաստան փոխադրել հայ զօրամասերին և զօրականներին զանազան եղելութեամբ ներկայումս գտնուող՝ օժտելով նրանց հարկ եղած ռազմական մթերոցներով և նիւթերով։

Այս մասին Ձեզ նաև հեռագրում ենք՝ խնդրի ստիպողականութիւնը աչքի առալ ունենալով։

Իսկ խնդիրը, իրօք որ, ստիպողական էր։ Հայաստանը խեղդւում էր՝ կծկած նեղ լեռներում ու ձորերում։ Գարունը վրա էր հասնում. պէտք էր գաղթականութիւնը վերադարձնել իր տեղերը, ցանքս անել յաջորդ տարւայ համար, հասավարութիւնը ապատել քնամատաի ու որբապահի դերերից։ Այդ էր պատճառը, որ հայկական ներկայացուցիչները ոմբակոծում էին դաշնակիցներին հեռագրներով ու յուշագրերով՝ պահանջելով անմիջական կարգադրութիւն Հայաստանի տահմանների ընդարձակման համար։

Ապրիլ ամսից սկսած, Անդրկովկասի անգլիական հրամանատարութեան քաղաքականութիւնը զգալի կերպով փոխւեց յօգուտ հայերի, և Հայաստանի տահմանների ընդարձակման խնդիրը տատաց նոր ժրում։ Հայկական կառավարութեան և անգլիական բարձր հրամանատարութեան համաձայնու-

Քեամբ, որուհետև հայ–անգլիական ուժերով գրաւել կարսը: Կարսի գինուորական նահանգապետ կարգուեց գնդ. Թեմբըրլէյը, ապր. 12–ին քաղաքացիական նահանգապետ նշանակուեց Ստ. Ղորղանեանը և հայկական գրաւող զօրամասի պետ՝ զօր. Ծովսփեանը: Հայ և անգլիական զօրքերը, երկամեայ ու խճուճուղիով շարժուեցին առաջ և, առանց դիմադրութեան հանդիպելու, ապր. 24–ին, մտան Կարս: Շուբան, Շիւբրի փաշայի դրդումով, փորձեց հակառակութիւն ցոյց տալ, բայց անգլիացիք ձերբակալեցին Շուբայի անդամներին և ուրիշ աչքի ընկնող Թուրքերին, մօտ 150 հոգի, և արտակարգ գնացքով ուղարկեցին Մալթա կղզին: Շիւբրի փաշան յաջողեց փախչել:

Ահաւասիկ օրերը, իշխանութիւնը և քաղաքի ու թերդի պահակութիւնը անում էին անգլիական գինուորները. ապր. 28–ին իշխանութիւնն ամբողջապէս փոխանցուեց հայերին. անգլիական գինուորներին փոխարինեցին հայերը. բերդապետ նշանակուեց փոխ–գնդ. Մատվէյևը:

Մայիս 2–ին հայերի ձեռքն անցաւ Արփաչայ–Սարըղամիշ երկաթուղին, և մայիս 4–ից սկսուեց կանոնաւոր երթևեկութիւնը:

Մայիս 9–ին հայկական զօրքերը գրաւեցին Մերզիւենկը, մայիս 13–ին, առանց կռւի, մտան Օլթի և կաղզուան: Գրղերն ու Թուրքերը ընդունեցին նրանց աղ ու հացով:

Մայիս 10–ին Կարս հասան և մեծ հանդիսաւորութեամբ ընդունեցին վարչապետ Խատիսեանը և զօր. Դևին: Մայիս 11–ին համաժողովրդական մաղթանք եղաւ պատմական Առաքելոց եկեղեցում, ուր Խատիսեանն իր ճառում յայտարարեց. «Մինչև մայիս 15 մեր զօրքերը պէտք է գրաւեն Ալաշկերտի հովիտը և Բասէնը»:

Եւ, յիրաւի, հայ ժողովրդի հայեացքը յառած էր ա՛յն կողմ: Այդ ուղղութեամբ էր չարժւում և գաղթականութիւնը:

Նոյն ձևով, առանց մի կաղափի, տեղի ունեցաւ և Նախիջևանի գրաւումը: Ապր. 9–ին, կառավարութիւնը որոշեց Շարուր–Նախիջևանի վարչական ձևը. շրջանը պիտի բաժանուէր 3 գաւառի. 1) Դողբան՝ կենտրոնը Ագուլիս, 2) Նախիջևան՝ Նախիջևան քաղաքը, և 3) Շարուր՝ Բաշ–Նորաշէն: Մայիս 3–ին Նախիջևանի ընդհանուր նահանգապետ նշանակուեց Քրւարեան Գէորգ Վարշամեանը և գրաւող զօրքերի հրամանատար՝ երևանի զօրամասի պետ Դրօն: Գրաւման ծրագիրը կազմուեց զօր. Դևիի, զօր. Հախվերդեանի և Դրօի կողմից:

Նոյն օրը, մայիս 3–ին, հրատարակուեց զօր. Դևիի և Դրօի ստորագրութեամբ մի հրաման՝ ուղղած Նախիջևանի ազգաբնակութեան, որով Նախիջևանը յայտարարւում էր կցուած Հայաստանին, պարտք էր դրւում ժողովրդի վրա՝ ապրել խաղաղ ու համերաշխ և կատարութեան կողմից խոստացւում էր օրէնքի յարգանք ու հաւասար վերաբերում դէպի բոլոր քնակիչները՝ առանց ցեղի և կրօնի խտրութեան:

Ապա, հայկական զօրքերը ճանապարհ ընկան և մի քանի օրից արդէն Դաւալուում էին, ուր գտան խանդավառ ընդունելութիւն: Ջօրքին դիմա-

ւորելու համար դուրս էր եկել գիւղի ամբողջ բնակչութիւնն ու գաղթականութիւնը։ Ժողովրդի առջևից գնում էին Սասունի գիվիգիոնի ձիաւոր հարիւրեակը Մուշեղի գլխաւորութեամբ, տեղական վաչուց և եապոնը մի քանի ձիաւորներով։ Ապա գալիս էին որբերը՝ հայկական և ամերիկեան գրօշակներով։ Որբերին հետևում էր հոգևորականութիւնը՝ խաչ ու խաչվառով և աղ ու հացով։ Տեսարանը վերին աստիճանի արտառուչ էր։ Հրդեհի ու փոթորիկների բովից անցած ժողովուրդը ընդունում էր իր հարազատ իշխանութիւնը...

Մայիս 12–ին զօրքերն առաջ շարժւեցին դէպի Շարուր–Նախիջևան։ Նոյն օրը, փոխ–վարչապետ Խատիսեանը, զօր. Դևին, Իրօն և Գ. Վարչամեանը առաջին գնացքով Երևանից մեկնեցին Նախիջևան։ Նախիջևանցիները, սկզբում, մեծ ցնծութեամբ ճանաչել էին Հայաստանի իշխանութիւնը, բայց զօր. Դևիի կարուկ պահանջի վրա տեղի տուին և ընդունեցին Գ. Վարչամեանի ընդհանուր հսկողապետութիւնը։ Մայիս 20–ին Նախիջևան մտան և հայկական զօրքերը։

Այսպիսով, ապրիլ–մայիս ամիսներին կատարւեց Ռուսահայաստանի ամբողջացման գործը։ Հայկական զօրքերը կանգնած էին Ջուլֆայում, Ջիւլիւլում և Կարաուրգանում։

Հայկական յղիացների գրաւման հետ և դեռ առաջ տեղից չարժւեց և գաղթականութիւնը։ Թիւրքերի հեռանալու լուրը ելեկտրական արագութեամբ տարածւեց երկրի բոլոր մասերում և աննկարագրելի ցնծութիւն առաջ բերից ամէն տեղ։ Սկսւեց տարերային մի շարժում։ Առանց սպասելու կառավարութեան կարգադրութեան, առանց նոյնիսկ ճշտելու լուրի ճշտութիւնը, գաղթականութիւնը ուղղւեց թափով դէպի սահման։ Էջմիածնում ու Ղարաքլիսայում կուտակւեցին ահագին բազմութիւններ։ Եւ որովհետև դանդաղում էին պարպել գրաււած վայրերը, գաղթականութեան համար ստեղծւեց անտանելի կացութիւն — չաքաթներով մնում էին բաց երկնքի տակ, ենթակայ սաստիկ ցրտերի կամ անձրևների։ Եւ չնայած դրան, ամէն օր հասնում էին նորանոր խմբեր՝ սայլերով, եղներով, ֆուրգոններով, ոտով։ Մանաւորապէս անհամբեր էին մոթմայուեցիները, դամարլուեցիներն ու սարդարապատցիները։ Միայն էջմիածնի չրջանում խռնւել էր մօտ 140,000 գաղթականութիւն։

Կառավարութեան ճիգերը՝ կազմակերպելու և ծրագրւած ձև տալու այդ հոսանքին՝ առանձին յաջողութիւն չունեցան։ Տարերքը ահռելի ուժեղ էր։ Բայց և այնպէս, կարելի եղաւ, որոշ չափով, մեղմացնել գաղթականութեան տառապանքը և, հնարաւորութեան սահմաններում, կազմակերպւած ձև տալ վերադարձի գործին։ Ներքին գործոց նախարարութիւնը, առաջին հերթին, յատկացրեց մէկ միլիոն ռուբլի գաղթականութեան անունէ ու դեղօրայք հասցնելու համար, իսկ Հայաստանի Սորհրդի գաղթականական յանձնաժողովը հանեց հետևեալ որոշումները.

«1. Հենց այստեղ և այժմյանից նշանակել վերագրաւած վայրերի համար գաւառական, գաւառակային և գիւղական կոմիսարներ՝ հաշուելով դրանց պետական պաշտօնեաներ, նեղկայացնել նախահաշիւ և խնդրել Ռոբերից վարկ այդ ծախքերը գոցելու համար:

2. Հենց այստեղ և այժմյանից կազմակերպել իւրաքանչիւր գաւառի համար ձիաւոր միլիցիայի կաղրեր՝ 100—200 մարդ ամէն մի գաւառի համար:

3. Ազգմինիստրացիան նախօրօք, կամ գաղթականութեան առաջին հոսանքի հետ միասին գնում է գիւղերը և կարգաւորում գաղթականներին ընդունելու և տեղաւորելու գործը:

4. Գլխաւոր ճանապարհների վրա ունենալ անդադար կայաններ թժիշկ—ֆելդշէրական բաժիններով միասին, նաև՝ գաղթականութեան դիւրութիւն տալու համար և երկրորդ՝ գաղթականական հոսանքը մի ճանապարհով տանելու նպատակով, որպէսզի նա չփուլ ամէն կողմ և հակողութիւնից ազատ լինելով՝ դանդաղ անախորժութիւններ չառաջացնի:

5. Ճանապարհների վրա, որոշ կէտերում, ունենալ չորիկ ձիաւոր պահակներ՝ ճանապարհների ապահովութեան համար:

6. Ժամանակաւորապէս արգելել ոչ—տեղացի գաղթականներին գնալ այս կամ այն գաւառը: Օրինակ, ոչ—սուրմալուեցի գաղթականը ժամանակաւորապէս իրաւունք չունի Սուրմալու գնալու, մինչև որ տեղացիները դնան ու տեղաւորուեն: Երբ սրանք գնացին ու տեղաւորուեցին և երևաց, որ ազատ դիւղեր ու տեղեր էլի մնում են, այդ դէպքում կարող են և ոչ—տեղացի գաղթականներն ևս գնալ Սուրմալու և այնտեղ տեղաւորուել:

7. Ջօրքի հետ միասին և միաժամանակ վերագրաւած վայրերն են գնում և պարէնաւորման գործի ներկայացուցիչները՝ տեղերում պարէնաւորման խնդիրը լուծելու համար:

8. Գաղթականութեան վերադարձի ու տեղաւորման գործի բարձրագոյն ղեկավարութիւնն ամէն մի գաւառում իրենց վրա են վերցնում Ռորդրդի մէկ-մէկ անդամները, ի հարկէ, նոյն գաւառից՝ պարլամենտական կոմիսար անուանով»:

Այս ձևով էլ տարուեց գործը:


Մայիսի վերջերին արդէն Թիւրքիոյ պարապած բոլոր չրջաններըՇիրակ, Կաթս ու Կաղզան, Կողբ ու Սարգարապատ, Սուրմալու ու Վեդի Բասար՝ բնակեցած էին վերադարձած գաղթականներով, որոնք ազատութեամբ կսկսն վերաչինական աշխատանքի: Կազմակերպուեց, այդ վայրերում, և վարչութիւնը, պարենաւորման գործը, և կեանքը կամաց-կամաց սկսեց բարելաւուել:

•

Արտաքին քաղաքականութեան մէջ գլխաւոր տեղը գրաւում էր, ի հարկէ, հայ—վրացական պատերազմը և դիւանագիտական ու տնտեսական յարաբերութիւնների կարգաւորումը Հայաստանի և Վրաստանի միջև: Մարտից սկսած Հայաստանի համար բացուեց Եւրոպայի և Ռուսաստանի Հանապարհը Թիֆլիս—Բաթումի վրայով:



ԳԱՂԹԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԴԵՊԻ ՏՈՒՆ



ԳԱՂԹԻ ԻՐԱՑՄԱՆ



ԳԱՂԹԻ ԲԱՇԽԱՆՈՒՄ

Երևանում հաստատուեցին անգլիական ու ֆրանսական ներկայացուցչութիւններ։ Ֆրանսիայի ներկայացուցիչն էր կապ. Գուադելբրը, որ մինչև վերջն էլ մնաց հայերի ու Հայաստանի բարեկամ։ Հետզհետէ ներկայացուցիչներ ունեցան և Իտալիան, Համաւորական Բանկը, Վրաստանը, Ազրբէյջանը և այլն։

Դիւանագիտական յարաբերութիւնները Հայաստանի ու Ազրբէյջանի մէջև սկսեցին մարտի կէսերին, երբ Երևան եկաւ վերջինիս դիւանագիտական ներկայացուցիչ Խան Թեքինսկին։ Պարսից կառավարութիւնը իր Երևանի ընդհանուր-հիւպատոսին պաշտօն ուաց ներկայացնելու Պարսկաստանը Հայաստանի կառավարութեան մօտ։ Ապր. 29-ին Երևան եկաւ Անգլիայի Մերձաւոր Արևելքի ուժերի ընդհանուր հրամանատար զօր. Միլնը՝ զօր. Թոմսընի և ուրիշների հետ։ տեսնուեց կառավարութեան հետ, ապա գնաց Էջմիածին՝ կաթուղիկոսին այցելութեան։ Մայիս 19-ին Երևան հասաւ Պարսկաստանի եւմմական նախարարութեան ներկայացուցիչը՝ Հայաստանի հետ մաքսային ու թրանզիտային համաձայնութեան նախապատրաստական բանակցութիւններ վարելու համար։

Իր հերթին, Հայաստանն էլ դիւանագիտական ներկայացուցիչներ նշանակեց օտար կառավարութիւնների մօտ։ յուն. 18-ին որոչուեց Ռուս. համաւորական բանակում ունենալ ներկայացուցիչ, առանց քաղաքական լիազօրութիւնների, և այդ պաշտօնին կոչուեց Գետ. Դումայի նախկին անդամ Ց. Սաղաթելեանը։ Ապրիլ 11-ին Սաղաթելեանը ներկայացուցիչ կարգուեց և Կուբանի կառավարութեան մօտ։ Փետրուարին մի պատերազմութիւն ուղարկուեց Թուրքիայի հետ սերտ բարեկամական յարաբերութիւններ մշակելու նպատակով։ Մարտին Բագուում դիւանագիտական ներկայացուցիչ նշանակուեց Տ. Բէդրոսեանը, Թիֆլիսում՝ Լ. Եսայեանը։

Ներքին աշխատանքների շարքում, սահմանների ընդարձակումից և գաղթականների տեղաւորումից յետոյ, առաջին տեղը բռնում էր բանակի կարգաւորումն ու որբերի խնամատարութիւնը։ Հայ. Հորհրդի յուն. 7-ի որոշումով կատարուեց զօրացրում, և զէնքի տակ պահուեցին միայն հինգ տարեայ — 1894 յուն. 1—1899 յուն. 1 — ծնունդները։ Հայ. Հորհուրդը յատկացրեց խոշոր գումարներ՝ բարելաւելու համար զօրքի նիւթական ու տեխնիկական վիճակը։

Երկրի բազմաթիւ վայրերում բացուեցին որբանոցներ ու աշխատանոցներ։ Այդ նպատակով յատկացուեցին խոշոր գումարներ և գործի կանչուեցին ճեմնհաս վարիչներ։ Հայաստանից դուրս գտնուղ որբերին ու գաղթականներին օգնելու համար՝ մարտ 27-ին Թիֆլիսում խնամատարութեան ներկայացուցիչ նշանակուեց Դ. Դաւիթխանեանը։ Մայիսի սկզբին 3 միլիոն ռուբլի յատկացուեց Ախալքալաքի սովեալներին նպաստ բաշխելու, և 7,400,000-ն՝ նոյն չորեանում սերմացու բաժանելու համար։ Մարտ 11-ին պայման կնքուեց և Ամերիկեան Նպաստամատոյց Հոմիտէին յանձնուեց 15,000 որբերի 2 տարեայ հոգատարութիւնը։ Ըստ կազմած նախահաշուի, Նպաստամատոյցը այդ նպատակով պիտի ծախսէր 90 միլիոն ռուբլի։

Մարտ 15-ին հաշվեյարդարի ծեռքարկեց թծատոր տիկին դէմ պայքարդ արատակարգ յանձնախումբը. համաճարակը այլևս վերջացած էր։

Կառավարութեան յատուկ ուշադրութեան առարկայ էր երկաթուղու բարելաւման գործը, որի համար դրսից հրաւիրեցին ձեռնհաս մասնագէտներ. բացեցին խոշոր վարկեր, ձեռք բերեցին անհրաժեշտ նիւթեր։ Փետր. 15-ին Հանրապետութեան երկաթուղիների ընդհանուր կառավարիչ նշանակեց յայտնի մասնագէտ ինժ. Մ֊բայէլ Օգանէզեանը, ապասարկութեան պետ՝ ինժ.Մ.Ալիքէգեանը, ուրիշ պաշտօնների՝ ինժ.Սրբ.Պիչիկեանը, ինժ.Բ.Փիրումեանը։ Մարտից սկսած երկաթուղային վարչութեան կենտրոնը փոխագրւեց Ալէքսանդրապոլ։ Ապր. 29-ին յատկացւեց 11,230,537ռ. երկաթուղիները, կարաւանները և երկաթուղային չէնքերը վերանորոգելու համար։

Համեմատաբար, քոյլ էր ընթանում պարենաւորման գործը։ Պարենաւորման նախարարութեան մէջ ստեղծւել էր բաժնիքնաւորութիւն. նախարար լ. Ղուկասեան և պաշտօնակատար Ս. Ճարութիւնեանը թիֆլիսում և Ս. Ճարութիւնեանի պաշտօնակատար Գ. Մելիք֊Ղարագեոզեանը՝ Երևանում միաժամանակ կարգագրութիւններ էին անում, որոնք, յաճախ, խաչաձևում էին իրար և առաջ էին բերում իրաւացի դժգոհութիւն ու գանգատներ Գ. Մելիք֊Ղարագեոզեանի կողմից։ Վերջինս փետր. 2-ին նախարարական խորհրդի նիստում հարց յարուցեց, թէ պէտք է մնջոցներ ձեռք առնել՝ երեսացնելու համար բաժնիքնաւորութիւնը։ Ճայտարարւեց, թէ պարենաւորման նոր նախարար է հրաւիրւած և չուտով գալու է Գր։ Վերմիչեանը, ասկայն, Վերմիչեանը դնո երկար չեզաց Երևանում, իսկ պարենաւորման գործերը երթալով՝ աւելի և աւելի խճողւում էին։ Փետր. 25-ին Մելիք֊Ղարագեոզեանը նորից գանգատ ներկայացրեց Ս. Ճարութիւնեանի քայլերի դէմ և հարց դրեց, թէ՝ արդեօք ինքը պարտաւո՞ր է ենթարկւել նրա հրահանգներին. կառավարութիւնը որոշեց, որ պարենաւորման նախարարութեան վերաբերմամբ Մելիք֊Ղարագեոզեանից գատ ուրիշ ոչ ոք կարգադրութիւններ անելու իրաւունք չունի։ Այսպէս տւեց դրութիւնը, մինչև որ մարտ 1-ին պարենաւորման նախարար նշանակւեց Գր. Վերմիչեանը։ Պարենաւորման տարնապի դէմ պայքարելու նպատակով, մարտ 26-ին, յատկացւեց 50 միլիոն ռուբլի գիւղացիութեան սերմացու հայթայթելու համար։

Կառավարութեան կազմի մէջ եզան և ուրիշ փոփոխութիւններ. մարտ 27-ին գինւորական նախարարի պաշտօնից հրաժարւեց զօր.Ճ.Չալխուշեանը և նոյն օրը նրա փոխարէն նշանակւեց գնդ.Գր.Ազրաթեանը՝ բարձրացւելով միաժամանակ զօրավարի աստիճանի։ Ձինւորական նախարարի օգնական նշանակւեց Դրօն, Ապր. 25-ին կազմւեց գինւորական խորհուրդ, որի նախագահ կարգւեց զօր. Թ. Նազարբէգեանը, անդամներ՝ զօր. Ց. Հախվերդեանը և զօր. Ց. Բաղրամեանը։ Զօր. Նազարբէգեանին յանձնւեց և հայասանի բանակի ապաթափոխութիւնը։

Ահռետաբակ, կառավարությունը իրեն կայուն չէր զգում. ժողովրդական նախաբարեների աչքը ուելի Թիֆլիս էր, քան Երևան։ Դրանից դժգոհ էին ամենքը, որոնց Քւում և Երևանի ժողովրդականները։ Հայ. Ազգրդի ժողովրդական պատգամաւորները, որոնք սկզբում ոչ էին տալիս կառավարութեան, կամաց-կամաց կրկին անցան ընդդիմադիրների կողմը, և Ազգրդի ամբիոնը նորից դարձաւ կուսակցական կրքոտ վէճերի տեղ. կառավարութիւնը ստիպուած էր լինում՝ բան ու գործ Թողած՝ օրէրով զբաղուել հաքցումներով ու հարցաքննութիւններին պատասխանելով։

Նման քննադատութիւնների ու յարձակումները յուզում էին հանրային միտքը։ Ազգրդարանի նիստերին ներկայ եղող հասարակութիւնը յաճախ արտայայտում էր իր դժգոհութիւնը, երբեմն նոյնիսկ անթոյլատրելի ձևերով։ Այս հողի վրա, փետր. 28-ին տեղի ունեցաւ մի դէպք, որ ճակատագրական նշանակութիւն ունեցաւ հայ. Ազգրդի համար։

Քննւում էր Սաւրմուլի գաւառում գինետրական դրութիւն յայտարարելու առաջարկը։ Կառավարութիւնն այդ առաջարկը պատճառաբանում էր նրանով, որ գաւառի Քուրք ազգաբնակութիւնը բացայայտ քշնամական դիրք էր բռնել դէպի հայաստանի պետականութիւնը, գինւած յարձակումներ էր գործում հայ բնակչութեան և պաշտօնէութեան վրա, կտրել էր ճանապարհները, մշտական վտանգի տակ էր պահում երկաթգծին—Թղթեր խճուղին և այլն։ Ընդդիմադիրները, բնականաբար, դէմ էին օրինաձին։ Ազգրդի նիստ մէջոցին, ներկայ գտնող ամբոխը, հասանաբար, ո՛չ առանց որոշ պատգամաւորների դրդումի, խուժելով ժողովատեղը՝ յարձակւեց ընդդիմադիր պատգամաւորների վրա։ Տեղի ունեցաւ վէճ ու կռիւ, և նիստը խանգարւեց։

Այս դէպքից յետոյ, Ազգրդը, կարելի է ասել, կանոնաւոր աշխատանք չունեցաւ։ Կուսակցութիւնները երկար բանակցութիւններից յետոյ, որոշեցին մեծաթիւ խորհրդարանի ընտրութեան. երկիրն արդէն մտնում էր բնականոն դրութեան մէջ և ժամանակն էր նշանակվի Ազգրդը ընտրած Ազգրդարանով փոխարինելու։

Ի վերջոյ, ապր. 27-ի նիստում, Հայ. Ազգրդը որոշեց. «1. Ազգրդի պարապմունքները դադարեցնել մէկ ամսւայ ժամանակամիջոցով։ 2. Դադարի մէջոցին Ազգրդի բոլոր իրաւունքները յանձնել կառավարութեան։ 3. Կառավարութեան յանձնարարել արտակարգ կարևորութիւն ունեցող գէպքերում հրաւիրել Ազգրդի արտակարգ նիստ»։

Այս որոշումով փաստօրէն վերջ դրւաւ Հայաստանի Ազգրդը, որ հայոց պատմութեան ամենահետաքրքրական չրջանում հանդիսացաւ երկրի գերագոյն իշխանութիւնը։

ԳԼՈՒԽ Զ·

ԱՐԵՒՄՏԱՀԱՑՈՑ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Մայիս 28–ի ակտը

1919Թ· գարնան Հայաստանի կեանքի կարևոր երևոյթներից մէկն էր և Արևմտահայ երկրորդ համագումարը:

Հայաստանի Հանրապետութեան գոյութեան սկզբի չբնանում, արևմտահայութիւնը իրեն մեկուսացած էր պահում պետական կեանքից: Այդ արտայայտւում էր շատ բաներում· պետական հիմնարկութիւններում, համակուսաքար, քիչ արևմտահայ պաշտօնեաներ կային· արևմտահայ երեսաւորդութիւնը պարտադիր գինւորակոչից խուսափում էր: Ուրիշ պետական պարտաւորութիւնների հանդէպ էլ արևմտահայութիւնը վերապահ էր և, առհասարակ, հարթպատ չէր գտնում իրեն հանրապետութեան մէջ: Անգրաքիկը, որ Բաթումի դաշնագրից յետոյ իր զօրամասով ու զաղթականներով հեռացել էր Հայաստանից և ապա ամբացել Զանգեզուրում՝ Քշնամական դէրջ բռնելով «Բիւրքերի ձեռքով ստեղծած» հանրապետութեան վերաբերմամբ, զգալի չափով արտայայտիչ էր արևմտահայերի այն ժամանակւայ մտայնութեան: Ազգային Պաւէրակութիւնը Փարիզում Ցողոս փաշա Նուպարի գլխաւորութեամբ աւելի հեղինակութիւն էր վայելում արևմտահայերի մէջ, քան Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը: «Հայաստանի Հանրապետութիւն» խօսքն էլ ընդունելի չէր շատերի համար— եղածը սոսկ «Արարատեան Հանրապետութիւն էր»:

Ընդհակառակը, «Արարատեան Հանրապետութեան» կառավարութիւնը ամէն կերպ աչխատում էր վերացնել այդ խորհրդութիւնը և, առհասարակ, հատւածական խնդիրը Հայաստանում — մի գործ, որ, ի հարկէ, հեշտ չէր այն ժամանակւայ պայմաններում: Տանեկան տարիներ հայ քաղաքական միտքը դաստիարակւել էր այն ուղղութեամբ, որ Հայաստանը այնտեղ էր, ԲարԲողեան լեռնաչղթայի միւս կողմը, հայկական հարց, Հայաստանի ինքնավարութիւն, հայ պետութիւն կարող էր լինել միայն Թիւրքահայաստանում, և, յանկարծ, բոլորովին չսպասւած տեղից՝ մէջտեղը բռնում է ինչ որ մի «Հայաստանի Հանրապետութիւն» — մարսելի՞ բան էր այդ: Ցետոյ, այդ «Հանրապետութեան» մէջ գեռ շատ բանից՝ օրէնքներից ու լեզուից սկսած մինչև ներքին կարգերը, մինչև հանրային կենցաղն ու բարքերը՝ ոտւսի հոտ էր բուրում: Արևմտահայութեան մտքին ու զգացմունքներին այդ բանը խորթ էր, անհարազատ:




ՅՈՐ· Ա· ԱՐԱՐԱՏՅԱՆ



ՅՈՐ· ՊԱՐՈՒՅՐՅԱՆ
(Հյուսուհու սիրուհի)





ՀԻՆԳՏԱՍՆԻ ՀԱՐՅԱՆԻՆԵՐԸ



ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ Ա
(Աջ՝ տրոյկի վրա Ա· Պռոշյանցը)



ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆՆԵՐ

Ուստի և գործանալի չէ, որ անկախութեան առաջին օրերից հէնց նրանք սկսել էին մտածել ֆինանսորոշմանց, իրենց քաղաքական դիրքն ու ընթացքը որոշելու մասին: Այդ նպատակին ծառայեց Արևմտահայ երկրորդ համագումարը, Երևանում, փետր· 6—13-ին:

Համագումարը ծրագրեց մի[լ]կուսակցական մի շարք խորհրդակցութիւնների մէջ, ուր դնէր· 19-ին կազմեց համագումարի կազմակերպիչ կոմիտէ: Այս վերջինիս դիմումի վրա՝ Հայ· Յեղափոխական դնէր· 28-ին տրամադրեց 35,000ռ· համագումարի կարիքների համար: Համագումարը ներկայացուցիչներ էր քանալ յուն· 25-ին, բայց չրջանների պահանջով՝ յետաձգեց տան օրով: Յեղափոխականների մէջ կազմել էր հետևեալ օրակարգը·

«1· Արևմտեան Հայաստանի գաղթական հայութեան քաղաքական նպատակներու ձևակերպումն ու արտայայտութիւնը:

2· Արևմտեան Հայաստանի գաղթական հայութեան ներգաղթի խնդիրը և կազմակերպութիւնը:

3· Արևմտեան Հայաստանի գաղթական հայութեան ներկայացուցչական և հաշտեյարդարի մարմնի ընտրութիւնը:

*Համագումարը կազմեց ժողովրդական քէչարկութեամբ՝ երկաստիճան ընտրական սկզբունքով: Համագումարը ներկայացնում էր հետևեալ կազմը**)·:

Երևան՝ 31,700 գաղթական — 8 պատգամաւոր· Հ· Կոստեան, Զ· Յոդիկեան, Հ· Հայրապետեան, Հ· Կարինեան, Ռ· Շահուրեան, Ե· Ալիքսանեան, Մ· Մալոյեան, Ա· Աւետեան:

Էջմիածին՝ 46,600 գաղթական — 3 պատգ· եգնիկ վարդ· Ներկարաքեան, Թ· Մուրդեան, Վ· Համբարձումեան:

Աշտարակ՝ 12,880 գաղթական — 2 պատգ· Գ· Ոսկերչեան, Ռ· Թերլեմեզեան:

Վաղկաւոր՝ 23,750 գաղթական — 5 պատգ· Տ· Ղեմոյեան, Շ· Բաւենցեան, Տ· Թերլեմեզեան, Մ· Մանուկեան, Հ· Աբրահամեան:

Կոտայք՝ 17,570 գաղթական — 5 պատգ· Ա· Մանուկեան, Շ· Շահրանբէյեան, Ա· Ղուկասեան, Ս· Գալուստեան, Թ· Շահգալեան:

Սուրմալու՝ 25,700 գաղթական — 4 պատգ· Ա· Մելքոյեան, Օ· Ղորղանեան, Թէյիբ բէգ և Թեմուր աղա:

Միլլի Զոր՝ 10,670 գաղթական — 1 պատգ· Ա· Մխիթարեան:

Ալեքսանդրապոլ՝ 10,000 գաղթական — 1 պատգ· Ս· Ռշտունեան:

Դիլիջան՝ 12,000 գաղթական — 2 պատգ· Վ· Առաքելեան, Ղ· Ծովսէփեան:

Բաշ–Գետանի՝ 5000 գաղթական — 1 պատգ· Մ· Դարմանեան:

---

*) Բոլոր նայուածքերը առնում են «Համառօտ տեղեկագիր Արևմտահայ երկրորդ համագումարի, 1919թ· Թիֆլիս· հրատ· Արևմտահայ գործադիր Մարմնի» գրքոյկից:

Նթ–Բայազէտ՝ 27,973 գաղթական — 7 պատգ. Վ. Քրմոյեան, Բ. Աբոյեան, Ա. Խաչիկեան, Մ. Գրիգորեան, բժ. Մուրատեան, Ա. Յովհաննէս, Գ. Աւետեան:

Կազմակերպիչ կոմիտէ՝ Գրիգոր Բուլղուրջեան, Սմբատ, Վ. Տէրոյեան, Ռ. Դաւթեան, Ա. Սասունէ, Վ. Յովհաննէս, Յ. Մխիթարեան, Ա. Կիւտուր, Ն. Բուտնուրեան:

Արեւմտահայ խորհրդի անդամներից՝ բժ. Գոնաքեանց, Վան–Փուչ:

Հայաստանի խորհուրդ՝ Մ. Վրացեան:

Եղբայրական Օգնութեան կոմիտէ՝ Կորիւն վարդ. Սահակեան:

Կովկ. Հ. Բարեգ. Ընկերութիւն՝ Ե. Յարութիւնեան:

Լորդ Մէլրրս կոմիտէ՝ Մ. Թոփալեան:

«Աշխատանք», «Վան–Տոսպ» թերթերից՝ Ա. Գազանջեան, Յ. Վարդանեան:

Այսպիսով, համագումարին մասնակցում էին 55 պատգամաւորներ: Պատգամաւոր չէին ուղարկել Սեբաստիա, Ղամարլուխ և Դարալագեազի գաղթականները: Բացակայում էին նաև Ղարաքիլիսայի 2 պատգամաւորները: Հրաւիրած էին նաև Ամինայի Հայոց կաթուղիկոսի ներկայացուցիչը, Անդրանիկը և ուրիշներ: Անդրանիկի մօտ ուղարկուել էր յատուկ մարդ՝ խնդրելով, որ անպատճառ ներկայ գտնուի համագումարին, բայց նա չէր համաձայնել մասնակցել մի ժողովում, որը գումարուելու էր զինւորների ձեռքով սպանուած Հայաստանի մայրաքաղաքում: Իր պաշտօնական համակրութիւնը (յունւ. 25) նա գրում էր. «մտածելով, որ չեմ կրնար այդ համագումարին մասնակցելով օգտակար գտնուել և թեև ցանկանում եմ ներկայ լինել այդ համագումարին»: կաթուղիկոսը ուղարկել էր օրհնութեան կոնդակ և Գ.թ.Ք. Զէրբէզեանին՝ ներկայացուցիչ իր կողմից: Շնորհաւորական depешներ էին ուղարկել Հ.Յ.Դաշնակցութեան Արեւմտեան Հայաստանի կենտր. Կոմիտէն և Հայ Ռամկավար կուսակցութեան երեսնի Շրջանային Վարչութիւնը:

Փետր. 4–ին և 5–ին տեղի ունեցաւ նախապատրաստական նիստերում կազմուց համագումարի նախագահութիւնը — 3 նախագահներ՝ Գր. Բուլղարացի, Վ. Տէրոյեան և Վ. Քրմոյեան, երկու քարտուղարներ՝ Ա.Գիւտուր և Յ. Վարդապետեան, լսագրութիւնները քննող մարմին և 4 յանձնաժողովներ — չրջանների գեկուցումների, քաղաքական, ներզործի և հաչիւ–յարդար կազմակերպչական:

Համագումարի պաշտօնական բացումը տեղի ունեցաւ Հայ. Յեղափոխական Կոնդակի ընթերցումից յետոյ, ողջոյնի ճառեր խօսեցին Յ. Թալեաններին, որ յայտնեց կառավարութեան ցանկութիւնը՝ որ համագումարով վերացած տեսնել հայութեան հատուածական բաժանումը, Գ. Վրացեանը, Գորիւն վարդ.–ը, Մ. Թոփալեանը, Ե. Յարութիւնեանը, Ա. Տէր–Յակոբեանը և Խաչիկեանը: Վ. Տէրոյեանը կարդաց մի գեկուցում համագումարի աշխատանքների մասին: Վ. Քրմոյեանը յարդանքի խօսք

ազգից նահատակած զոհերի վերաբերյալ: Հատարտությունը, որ խոնած էր ազատում, ծնեց վերաբերմունք ցավ ունեց համագումարին: Բազմաթիվ կազմակերպություններ, հիմնարկություններ և գործիչներ դրսում ոգևորվել էին համագումարը:

Համագումարի աշխատանքները անցան հանգեցավոտության մթնոլորտում. միայն քաղաքական բանաձևի շուրջ տեղի ունեցան բուռն վիճաբանություններ ու բախումներ: Եւ հենց այդ հարցն էր կազմում համագումարի առանցքը: Բժ. Գոնափարեանի զեկուցումից յետոյ երկարօրէն քննութեան առնուեցին առաջարկած բանաձևի յօդուածները I, II և V կէտերը: Ծանր առ յօդուած քննելուց և մաս-մաս ընդունելուց յետոյ, ամբողջական բանաձևը երրորդ ընթերցման դրուեց փետր. 12-ին և ընդունուեց միաձայնութեամբ ու ջերմ ծափահարութիւններով: Ներկայ հանդիսատեսների քաղաքական կամքի ճնշակերպումն էր այդ: Բանաձևն ասում է.

«Ամերիկահայ Երկրորդ Համագումարը՝ քննելով հայ ժողովրդի ներկայ կացութիւնը՝

I. Սրտագին կողմնակից է և կը յայտարարէ Ազատ և Միացեալ Հայաստանի անկախութիւնը:

II. Լիակատար վստահութիւն կը յայտնէ Ազատ և Միացեալ Հայաստանի Ազգային Ժողովի պատգամաւորներուն*):

III. Կը յայտարարէ իր վճռական որոշումն ու կամքը՝ ունենալ քաղաքական և պետական մէկ միութիւն հասկացողութեան հաւասարեցնելու և երկրամասերու մերձաւորութեամբ:

IV. Կը պարտաւորէ ընտրեալ «Գործադիր Մարմնին» նախապատրաստական գործերուն համար անմիջական յարաբերութեան մէջ մտնել իրանցացնելու և դրացնակցանալու քաղաքական և պետական այն բոլոր աշխատանքները, որոնք հարկաւոր են Ազատ և Միացեալ Հայաստանի պետական գոյութիւնը հաստատելու համար:

V. Միաժամանակ կը պարտադրէ ընտրեալ Գործադիր Մարմնին՝ գործնական քայլեր առնել Թաբատեան Հանրապետութեան նախարարութեան և Ներկրդրանի հետ Միացեալ Ազատ Հայաստանի անկախութիւնը յարատեւելու և իր մտահոգութիւնը բերելու դաշնակից պետական և օրէնսդրական հաստատութիւնների մէջ համագործային միութիւնը իրականացնելու համար:**)

VI. Կը պահանջէ Ազատ և Միացեալ Հայաստանի պետական գոյութեան երաշխաւորումը՝ դաշնակից պետութիւններուն քաղաքական, տնտեսական և ռազմական օժանդակութիւններով և ալեհանգութիւնով:

---

*) Այդ տերմին երեսունուց լուրջ էր ընդհանուր, թէ Ֆարիզում Գազոն նախարարը յայտարարել է Հայաստանի անկախութիւնն ու միութիւնը և կոչել Միացեալ Հայաստանի կառավարչութիւն:

**) Այս կէտին դէմ արտայայտվեցին հանրակար ճ պատգամաւորները և պատճառաբանելով յարաբերաբերութիւն ներկայացնելով՝ նիստից հեռացան:

VII. Կը պահանջէ Հայկական Մեծ Եղեռնի հեղինակ և պատասխանատու ճիւաղներուն՝ Վիլհելմի, Էնվէրի, Թալէաթի, Ճեմալի, Նազըմի, Գէհաէտտին—Շաքիրի և ընկերք նահանգապետներու, կառավարիչներու և բոլոր ղեկավարներու դինւորական դատարանով պատժուիլը:

VIII. Կը պահանջէ հայ ժողովրդի վնասներու ամբողջական հատուցում մը ի հաշիւ օսմանեան կառավարութեան:

Թէեւ ակնարկն իսկ բաւական է հասկանալու համար, թէ ի՛նչ սուր պայքար է տեղի ունեցել բանաձեւի չուրջ. նա մեքենայական միացումն է երկու՝ բոլորովին անհաշտելի տեսակէտների — մի կողմից «լիակատար վնասհատուցին... Գօդոս Նուպար փաշայի անդրանիկ դահլիճին», միւս կողմից՝ «գործնական քայլեր Արարատեան Հանրապետութեան և Մորհրդարանի հետ Միացեալ Ազատ Հայաստանի անկախութիւնը յայտարարելու» և այլն: Անկասկած, ոմանք պատգամաւորները աւելի հետևողական էին իրենց հակառարատեան տրամադրութիւններով: Պէտք էր կանգնել կա՛մ Հայաստանի, կա՛մ Փարիզի տեսակէտի վրա. ոմանք վարանեցին ընտրեցին վերջինը. համագումարի մեծամասնութիւնը դեռ տատանում էր Արարատի և Փարիզի միջև:

Այս տեսակէտից, բնորոշ էին նաև համագումարի կողմից «Հայկական պատւիրակութեան նախագահ Նորին Վեհափայլութեան Գօդոս Նուպար փաշային» և «Արարատեան Հանրապետութեան պ. վարչապետին» տրուած ողջոյնի հեռագիրները: Առաջինում ասւում էր, թէ համագումարը «էր օրտագին ողջոյններ կուղղէ Ձերդ Վեհափայլութեան և իր լիսաբերտ վստահութիւնը կը յայտնէ, որ Ձեր կարող և արդիւնաւէտ գործունէութեամբ պէտք է վերջնականապէս ձևակերպուեն հայ բնաջնջրհի պետական հիմքերը և հայ բազմաչարչար ժողովրդին հնարաւորութիւն տրուի աշխատել և վերստեղծել իր հայրենի տունը: Համագումարը տեսնելով Ձեր մէջ իւր իղձերու և ցանկութիւնների լաւագոյն արտայայտիչը՝ յոյս ունի, որ իւր քաղաքական և ազգային ձգտումները կը ջանաք լուծել հայ ժողովրդի արհեստակնօրէն անջատուած հատուածներու միաւորութեամբ և մէկ պետական-քաղաքական իրաւակարգի ստեղծմամբ»:

«Արարատեան Հանրապետութեան պ. վարչապետին» ուղղուած հեռագրով համագումարը «ողջունելով հայութեան մէկ հատուածի կառավարութիւնը՝ լիացյա է, որ ան ևս կը միացնէ իր ձայնը Արևմտահայ համագումարի վճռին՝ ունենալ մէկ հայրենիք և մէկ միացեալ ազատ Հայաստանի պետական կազմակերպութիւն»:

Համագումարը գտնելով սոյն խնդիրը հայութեան համար պատմական մէկ կարևոր խնդիր՝ հաւատացած է, որ Արարատեան Հանրապետութեան կառավարութիւնը կը փութայ օր առաջ յայտարարել Միացեալ Ազատ Հայաստանի անկախութիւնը և գործնական քայլեր առնել՝ միացումը իրականացնելու համար կեանքի մէջ»:

Այս վերջին մտքը շեշտւում է «Արարատեան Հանրապետութեան Մորհրդարանին» ուղղուած հեռագրում. «Արևմտահայ Բ. Համագումարը՝ ողջունելով Հանրապետութեան անդրանիկ Մորհրդարանը՝ վստահ է, որ ան ևս իր հեղինակաւոր ձայնը պիտի միացնէ հայութեան ամենէն չատ տանջուած և զոհաբերած խոշոր հատուածի ձայնին՝ ունենալ մէկ հայրենիք, Միացեալ Անկախ Հայաստան, մէկ պետական կազմակերպութեամբ: Հա-

մագումբը հաւատացած է, որ Խորհրդարանը չի ուշանար իր որոշումը տալու հայութեան համար խիստ կարեւոր այս խնդրի մասինէ:

Համագումարը բանաձեւեր հանեց և արեւմտահայ նախկին մարմիններուն հաշւետուութիւն ու ներքաղքի մասին: Առաջինը աւուժ էր.

«Արեւմտահայ Բ. Համագումարը՝ լսելով հաշւետուութիւն յանձնաժողովի գեկուցումը արեւմտահայ նախկին մարմիններու մասին և տեսնելով, որ անոնք կազմալոյծ վիճակի մը մէջ կը գտնուին ընորհիւ այն հանգամանքին, որ 1918թ. մայիս ամսէն ի վեր ոչ մի տեղ չեն յաջողած մեծամասնութիւն կազմել, իրենց ընտրողներուն հաւաքել և իրենց տնտեսական-քարոյական գործունէութեան հաշիւը ներկայացնել, ինչպէս նաև չնորհիւ այն հանգամանքին, որ ոչ մէկուն իրենց ընտրողները մօտ չեն վերադարձած և Բ. Համագումարին չեն ներկայացած, մի բան, որ ըստ ամենայնի անոնք հնարաւորութիւն ունէին ընելու, այլ և միայն 2—3 հոգիի համամասնութեամբ յանձն են առած արեւմտահայ փախստականութեան հանդէպ այնպիսի պարտականութիւններ կատարելու, որ երբէք իրենց վրա գրւած չէ եղած, անոնց դումարները անձնական պատասխանատուութեամբ գանազան գործերու յատկացնելով, մի բան, որ ո՛չ համագումարը, ո՛չ կոնֆերանսը և ոչ ալ Խորհուրդները չէին թոյլատրած: Արեւմտահայ Բ. Համագումարը, որպէս Հայաստանի Հանրապետութեան սահմաններու մէջ ազատանաձ փախստական ներկայացուցչութիւնը՝ կը յայտարարէ նախկին խորհուրդները լուծած՝ պահանջելով բարոյական և նիւթական հաշւետուութիւն իրենց ամբողջ գործունէութեան վերաբերմամբ քէ՛ հաւաքականօրէն և քէ՛ անձնապէս:

Ներքաղքի համար հ.համագումարը կը հրահանգէ ընտրելիք մարմինն աշխատիլ անհրաժեշտ միջոցներու ձեռնարկել պատմական Մխիթարեան հայաստանի կառավարութեան մօտ և գաղթականներու ներգործոն միջամտութեամբ և աջակցութեամբ պետականօրէն ապահովել ներքաղքող ժողովրդի ֆիզիքական գոյութիւնը և պարենաւորման անհրաժեշտ պայմանները, ինչպէս նաև անոր հետևող վերաչինութեան գործի իրականացման անհրաժեշտ ուժերները հաւաքելը»:

Ի վերջոյ, փետր. 13-ի նիստում, գաղտնի քւէարկութեամբ ընտրուեց վարչատեան Հանրապետութեան մէջ ապրող արեւմտահայ հասուածի Գործադիր Մարմին՝ բաղկացած հետևեալ 9 անձերից: Մմբատ Բորոյեան, Ֆաշ. Գոնաւարեան, Աբ. Սասունի, Գր. Բուլղարացի, Վար. Տէրոյեան, Ռուբ. Խրամբեան, Վահագն Քրմոյեան, Վաղ. Ճոխիկեան, և Աբս. Կիսուր: Գործադիր Մարմնի համար մշակեցին հետևեալ հրահանգները.

«1. Նա կիրականացնէ համագումարի որոշումները:

II. Կը յարունակէ մնալ իր ստանձնած պարտականութիւններու և իրաւասութեան մէջ մինչև Մխիթարեան Ազատ Հայաստանի պետական-օրէնսդրական հաստատութիւններու իրականացումը՝ հայութեան միւս հատուածներու՝ Գօղտ Նուպարի կաբինետի, Աքարատեան Հանրապետութեան կառավարութեան և Խորհրդարանի գործակցութեամբ և համաձայնութեամբ:

III. Բացառիկ և համագործին արժէքը ներկայացնող ոև է դէպքի առթիւ կը հրաւիրէ սոյն համագումարն իր լրիւ կազմով՝ Գործադիր Մարմնի անդամներուն մէկ երրորդին կամ համագումարի անդամներու կէսին աւելի պահանջմամբ:

IV. Գործադիր Մարմինը հաչվետու և պատասխանատու է համագումարի առաջ իր գործունէութեան համար:

V. Համագումարի 2րդ նստաշրջանը կը հրաւիրէ մայիս 1-ին, եթէ մինչ այդ ներկայիը չէ կատարած և եթէ հնարաւոր է պատգամաւորներու էջևէն ուղիղ հաւաքել:

VI. Գործադիր Մարմնի օրէնսդրական գործունէութիւնը կը սահմանափակի միայն այն չափով, որ չափով որ չի հակառակ համագումարի որոշումներուն և քանաձևերուն:

VII. Գործադիր Մարմինը կանխատէ միւս չքննութիւնէն ևս, որոնք գանազան պատճառներով ներկայ կազմէն կը բացակային, պատգամաւորներ ընտրելով՝ լրացնել իւր կազմը»:

Այսպիսով, ստեղծուած էր մի նոր կառավարութիւն՝ «Վրաստանեան կառավարութեան» կողքին: Գործադիր Մարմինը կազմակերպուեց պետական հիմունքներով՝ տալով իրեն մի տեսակ նախարարութեան բնոյթ. իր նախագահին և անդամներին տուեց նախարարական դէր: Ընդամէնը նիւթական կազմով յետ չմնաց կառավարութիւնից. նախագահին նշանակեց վարչական առնիվ, անդամներին՝ նախարարական դրամը, ի հարկէ, առանձնով «Վրաստանեան Հանրապետութեան գանձարանից:

Այս դրութիւնը, ասկայն, երկար չտեւեց. կեանքը սեպհում էր դնել միակ հնարաւոր ճանապարհով՝ հաւատածական տարբերութիւնների վերացման ուղիով: Եւ ամէնից չատ արեւմտահայութիւնն էր զգում այդ պահանջը: Գործադիր Մարմինը ընդառաջ գնալով հանրային չեչտած տրամադրութեան՝ մի չարք ժողովներում քննութեան առաւ համագումարի որոշումը՝ «Իրկ հայրենիք, Միացեալ Անկախ Հայաստանն ունենալու մասին և եկաւ այն եզրակացութեան, որ անհրաժեշտ է օր առաջ յայտարարել Հայաստանի երկու հատուածների միացումը: Եւ այդ խնդրանով պաշտօնական դիմում արաւ կառավարութեան:

Արեւմտահայ Գործադիր Մարմնի դիմումը միանգամայն համապատասխան էր այն օրերին Հայաստանի դրութեան բոլոր խաւերում տիրող տրամադրութեան: Փետր. 25-ին կառավարութիւնը քննութեան առաւ Գործադիր Մարմնի դիմումը և միաձայնութեամբ համաձայնելով առաջարկեն՝ յանձնարարեց արտաքին գործոց նախարարին պատրաստել մի զեկուցում Հայաստանի հորհուրդ մտցնելու համար: Նման քայլի անհրաժեշտութիւնը չէր մերժում կառավարութեան ո՛չ մի անդամի կողմից:

Այնուհետև կատարելիքին նախապատրաստական աշխատանքները Հայաստանի անկախութեան և միութեան յարատեւութիւնը հանդիսաւորապէս կատարելու համար: Այդ նպատակով կազմուեց մի յանձնախումբ հանրային կրթութեան և արուեստի նախարար Գ. Մելիք-Ղարագէոզեանի նախագահութեան տակ: Գ. Մելիք-Ղարագէոզեանը յանուն յանձնախմբի մի կոչ հրատարակեց, որով հրաւիրում էր ժողովրդին արժանաւոր վայելչութեամբ

ասնել Մայիս 28–ը· «Թո՛ղ Մայիս 28–ի օրը լինի գոհերի յիշատակին, բայց և համապղծական մեծ ուրախութեան օր, — օ՛ր նոր պետութեան ստեղծման բերկրական ևրաթաի չուրջը, օ՛ր ազգային բարձր իդեալի և համաշխարհային արդարութեան յաղթանակի»:

Նախաթաթխի Խորհրդի մայիս 27–ի նիստում, որին ներկայ էին Ա· Խատիսեանը, գեր· ԵՒրամեանը, Ս· Մանասեանը, Գր· Վերմիշեանը, Ս· Թորոսեանը, Գ· Մելիք–Ղաթադիոգեանը, Ճ· Ջիւլհանեանը և ուրիշներ, լսուեց վարչապետի զեկուցումը այն բոլոր ձեռնարկների մասին, որոնք կատարել էին Հայաստանի անկախութեան տարեդարձի օրը միութեան յայտարարութիւնը տեղւոյն համար և կարգադրեց յայտարարութեան նախագիծը: Կատարվարութիւնը հաւանութիւն տուեց արուած աշխատանքին, որոշեց, Հայ· Խորհրդի ապր· 21 օրինքի հիման վրա, հատուկ յայտարարութեան նախագիծը և յանձնարարեց վարչապետին հրապարակել: Որոշեց նաև հրաւիրել Հայաստանի Խորհրդի նիստերին մասնակցելու, որպէս Խորհրդի անդամներ, Արեւմտահայ Դրօշադիր Մարմնի 12 անդամներին»[*]*):

Նոյն նիստում քննուեց հանրային կրթութեան նախարար Գ· Մելիք–Ղաթադիոգեանի առաջարկը՝ Հայաստանի անկախութեան և միութեան յայտարարութիւնը յաւէրժացնելու համար 1) մայրաքաղաքում յուշարձան կանգնեցնել հայ ազատամարտում ընկած հերոսներին ի յիշատակ և այդ նպատակով կազմել հիմնագրամ՝ կառավարութեան կողմից յատկացնելով 100,000ռ· և 25,000ռ· էլ արձանի մրցանակաբաշխութեան համար· 2) հրատարակել հայկական ազատագրութեան վերջին չորեքի պատմութիւնը, որի համար տրամադրել 285,000ռ·, 3) բաց թողնել առանձին չքաւոր հաշմեքներին մասնաւոր նպաստութիւններ համաձ· մակագրութեամբ: Այս առաջարկն էս հաստատուեց միաձայնութեամբ:

Երկու օր յետոյ, մայիս 28–ին, Հայաստանի Խորհրդի հանդիսաւոր նիստում կատարուեց Հայաստանի միութեան և անկախութեան յայտարարութիւնը:

Այդ օրը Երևանը ստացել էր տօնական կերպարանք: Ամբողջ քաղաքը զարդարուած էր դրօշակներով, գորգերով, կանաչներով ու ծաղիկներով: Վաղ առաւօտեանից փողոցները լիքն էին բազմութիւններով: Շրջակայ գիւղերից քաղաք էին գալիս խումբ–խումբ գիւղացիներ, պատգամաւորութիւններ գրօշակներով՝ հանդէսներին մասնակցելու համար:

Առաւօտեան, քաղաքային ինքնավարութեան չէնքի ընդարձակ հրապարակում տեղի ունեցաւ հոգեհանդիստ հայրենիքի ազատութեան համար զոհուածների յիշատակին, ապա՝ մաղթանք և գրահանդէս: Հրապարակն ու մօտակայ փողոցները բռնած էին ծովածաւալ բազմութեամբ, գօրքով, դպրոցական աշակերտներով, սրբերով: Մէջտեղը տեղաւորուած էին Հայ· Խորհրդի ու կառավարութեան անդամները, բարձր հրամանատարութիւնը՝ գեր· Նազարբէգեանի գլխաւորութեամբ, գեր· Դևին, Գարեգինեանի, Ազգը–

[*]) Փաւլուժի նախարարների խորհրդի 1919թ· մայիս 27–ի նիստի արձանագրութիւնից:

բէյնէի և Վրաստանի ներկայացուցիչները, Ամերիկեան կոմիտէի անդամները և ուրիշներ: Գաւուդ պահակախմբի ուղեկցութեամբ էջմիածնից եկել էր Ամենայն Հայոց կաթուղիկոսը, որ նախագահում էր հոգեհանգիստ-մաղթանքի արարողութեանը:

Հոգեհանգստից ու մաղթանքից և վարչապետի՝ բանակին ուղղած ճառից յետոյ, սկսւեց զօրահանդէսը՝ հազարաւոր ներկաների ծափերի ու ցնծութեան աղաղակների մէջ: Զօրամասերը՝ հետևակ, հրետանի, ձիաւոր՝ զինւորական նուազի ուղեկցութեամբ, անցնում էին խրոխտ շարքերով՝ յուզելով ու ոգևորելով հասարակութիւնը:

Զինւորներից յետոյ սկսւեց աշակերտների, որբերի, արհեստակցական մրցութիւնների ու ժողովրդի շքերթը:

Հանդէսից յետոյ, տեղի ունեցաւ յայտարարութեան արարողութիւնը: Հայաստանի Խորհրդի մուտքն ու դահլիճը նոյնպէս զարդարած էին չքեղ՝ դրօշակներով, զորգերով ու ծաղիկներով: Օթեակները բռնած էին օտար պետութիւնց ներկայացուցիչներով: Մի օթեակ յատկացած էր կաթուղիկոսին և իր շքախմբին: Բեմի վրա տեղաւորուած էին Խորհրդի և կառավարութեան անդամները: Դահլիճի առջևի մասում երևում էր զօր. Նազարբէգեանի պատկառելի դէմքը, միւս կողմը՝ նստած էր զօր. Փերսմեանը: Սրահը բերնէ բերան լեցւած էր հիւրերով ու հանդիսականներով:


Հանդէսին նախագահում էր հանրային կրթութեան և արւեստի նախարար Գ. Մելիք-Ղարագէոզեանը, որ մի գրաւոր ճառով բացատրեց հանդէսի նշանակութիւնը, որից յետոյ նւագախումբը հնչեցրեց «Մեր Հայրենիքն»-ը, որ լսւեց յոտնկայս: Մի պահ տիրեց խորհրդաւոր լռութիւն, որից յետոյ վարչապետը արտասանեց մի փոքրիկ ճառ և ժողովականների խանդավառ ծափերի մէջ, կարդաց հետևեալ յայտարարութիւնը.

«Հայաստանի ամբողջութիւնը վերականգնելու և ժողովրդի լիակատար ազատութիւնն ու բարգաւաճումն ապահովելու համար Հայաստանի կառավարութիւնը, համաձայն բովանդակ հայ ժողովրդի միահամուռ կամքի ու ցանկութեան, յայտարարում է, որ այսօրւանից Հայաստանի բաժանքաժան մասերը մշտնջենապէս միացած են իրր անկախ պետական միութիւն:

«Ուզիղ մի տարի առաջ, ռուսահայերի համագումարից ընտրուած Հայոց Ազգային Խորհուրդը յայտարարեց իրեն անդրկովկասեան հայկական գաւառների բարձրագոյն իշխանութիւն: Ազգային Խորհրդի կազմած կառավարութիւնն այդ խղճահարական ոտի մասին պաշտօնապէս պետութեանց ներկայացուցիչներին յայտնելուց յետոյ, այս մի տարւայ մէջ փաստօրէն հաստատել է իր իշխանութիւնն Անդրկովկասի հայկական գաւառներում:

«1919թ. փետրուար ամսին Երևան խղճահարում կայացած Արևմտահայ երկրորդ համագումարը հանդիսաւոր կերպով յայտարարեց, որ ևս Հայաստանը միացնում է անկախ է ճանաչում:

«Այժմ, Անդրկովկասում և օսմանեան կայսրութեան սահմաններում գտնւած պապենական հայկական երկիրների միացման և անկախութեան այս



ՓԱՐԱԴԱՐԶԱԿԱՆ ԹԱՓՕՐԸ ԵՐԵՒԱՆՈՒՄ. ՄԻԱՑԵԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ
ՅԱՂԹԱՀԱՐՈՒԹԵԱՆ ԱՒԱԽՏԻՆ, 1919 Թ. ՄԱՅԻՍ 28-ԻՆ



Հ. Հ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՏՈՒՆԸ

ամսը կատարելով՝ Հայաստանի կառավարութիւնը յայտարարում է, որ միացեալ Հայաստանի պետական ձևն է ռամկավար հանրապետութիւն և որ ինքը հանդիսանում է միացեալ Հայաստանի հանրապետութեան կառավարութիւնը:

«Այսպիսով, ներկայումս Հայաստանի ժողովուրդն է իր ամբողջացած հայրենիքի գերագոյն տէրն ու տիրոջը, և Հայաստանի պարլամենտն ու կառավարութիւնը հանդիսանում են միացեալ Հայաստանի ազատ ժողովուրդը շահակապող բարձրագոյն օրէնադիր և գործադիր իշխանութիւնը:

«Հայաստանի կառավարութիւնը սոյն ամսը հրատարակում է 1919թ. ապրիլի 27-ի պարլամենտի որոշմամբ կառավարութեանը տրուած յատուկ լիազօրութիւնների հիման վրա»:

Մինիստրների խորհրդի նախագահ և արտաքին գործերի մինիստրի պաշտօնակատար — Ալ. Խատիսեան
Ներքին գործերի մինիստրի պաշտօնակատար — Ս. Մանասեան
Զինուորական մինիստր գնդապետ մայոր — Ռ. Արարատեան
Արդարադատութեան մինիստրի պաշտօնակատար — Ց. Ձմշկեան
Հանրային կրթութեան մինիստր — Գ. Մելիք Ղարագէզոգեան
Ֆինանսատնտեսութեան մինիստր — Ս. Թորոսեան
Գարձաւորման մինիստր — Ռ. Վերմիշեան
Ճիւանաններէ մինիստրի պաշտօնակատար — Գ. Ջաղէբեան
Գործերի կառավարիչ — Գ. Խատիսեան

1919թ. մայիսի 28-ին, Երևան քաղաք.

Յայտարարութեան ընթերցումից յետոյ, համաձայն նախորոք եղած որոշման, քիմ բարձրացան և նստեցին Հ. Խորհրդի անդամների հարցում, Արևմտահայ Գործադիր Մարմնի ընտրած 12 պատգամաւորները՝ Հմ. Մանուկեան, Վ. Քրմոյեան, Զ. Կորկոտեան, Վ. Ճոպնիկեան, Վան-Փուշ, Վ. Առաքելեան, Ա. Մաքսուդեան, Ա. Մխրդոյեան, Ա. Կիւտուր, Հ. Կոսոյեան, Ա. Սասունի, Հ. Հայրապետեան: Երկու հատուածների միացման յայտարարութեան առաջին գործնական արտայայտութիւնն էր այդ, որ հասարակութիւնը ողջունեց ոգևորուած ծափերով:

Այնուհետև կառավարութեան կողմից յայտարարուեց ընդհանուր նեռում վաբչական կարգով բանտարկուածների համար, իսկ քրէական յանցագործների պատիժը կրճատուեց կէս առ կէս: Եւ նախագահի յուշարձանի, չքանչանի ու հրատարակութիւնների մասին կառավարական որոշումները յայտարարուեց յետոյ, յաջորդաբար ողջոյնի ճառեր խօսեցին Հ. Խորհրդի նախագահ Ա. Սահակեանը, արևմտահայերի ներկայացուցիչ Քրմոյեանը, կաթուղիկոսը, Ամերիկեան կոմիտէի ներկայացուցիչ Հարութիւնեան էդգըրը, Գարեգեսեանի, Վրաստանի և Ազրբէյճանի ներկայացուցիչները, Հ. Ց. Դ. Բիւրօի կողմից՝ Ս. Արարատեանը, Հ. Ց. Դ. Երևանի և Վրաստանի կ. կ-ի

կողմից՝ Վ. Նորիկին, յանուն Ղաթաթաղի հայութեան՝ Գ. Բալայեանը, Ամերիկահայ դաշուքի կողմից՝ Ա. Մկքայէլեանը, պետական ծառայողների կողմից՝ Վ. Ահարոնեանը, Ուսուցչական Միութեան կողմից՝ Ա. Տէր-Թովմասեանը, Կանանց Միութեան կողմից՝ օր. Լ. Տէր-Մարգսեանը, երեսնի քաղաքային ընթավարութեան կողմից՝ Մ. Մուսինեանը և ուրիշներ։

Առանձնապէս տպաւորիչ էր կաթուղիկոսի ճառը, որ անգլիական դիւանագիտականների ներկայութեամբ հրաւէր էր կարդում հայ ժողովրդին հոյս չդնել օտարի վրա, որովհետև մեր ժողովրդի բարօրութիւնն ու յառաջդիմութիւնը միայնից է կախուած բացառապէս։ Այժմ, երբ Մասիսը ժայռերի պէս քանդ ու մխացրեց հայութեան երկու հատածները, երբ ստեղծուեց Միացեալ Հայաստան, այժմ պէտք է լաքենք մեր ապագային բոլոր կարողութիւնները՝ փրկելու և դասաիարակելու մեր ժողովուրդը ի փառս իր ազատ հայրենիքի»։

Վ. Քրմոյեանը Արեմտահայ Գործադիր Կոմիտէի կողմից կարդաց հետեւեալ յայտարարութիւնը. «Վանդնած մնալով Արեմտահայ Բ. Համագումարի ընդունած քաղաքական բանաձեւի տեսակէտին վրա՝ Արեմտահայ Գործադիր Մարմինն էլըև Հայկական Հանրապետութեան սահմանները մէջ ապրող արեմտահայերու ներկայացուցչական օրգան, լսելով կառավարութեան յայտարարութիւնը Հայաստանի միացման և անկախութեան մասին, որտագին կողջունէ կառավարութեան կատարած աքը և իր լիակատար պատրաստակամութիւնը կը յայտնէ Հայաստանի Հանրապետութեան և կառավարութեան մէջ իր գործօն մասնակցութիւնը բերել՝ իրագործելու Միացեալ Հայաստանի գաղափարը և ամրապնդելու հայ ժողովրդի ազատութիւնն ու բարգաւաճումը»։

Ճառերից յետոյ կարդացուեցին բազմաթիւ շնորհաւորական գրութիւններ ու հեռագիրներ Հայաստանի գանազան կողմերից և արտասահմանից։ Շնորհաւորում էին Վրաստանի Սահմանադիր ժողովն ու վարչապետը, Ազրբէյճանի Հանրապետութիւնը, Լեռնականները, Վրահայոց Ազգ. Հորհուրդը, Անդրկովկասեան Ասորական Ազգ. Հորհուրդը, երեսնասարդ զրոցներ Ստ. Զօրեանը, Մ. Մանուէլեանը, Էչմիձին, և շատ ուրիշներ։

Ժողովը խորունկ լռութեան մէջ, յոտնկայս յարգեց Արամի յիշատակը և խանդավառ ոգևորութեամբ ցոյցեր արաւ հայկական բանակի ներկայացուցիչներ զօր. Նազարբէկեանին, զօր. Փիրումեանին ու Դրօխին։

Հանդէսը փակուեց Մեր Հայրենիք»-ով, որից յետոյ վաչչապետը պաշտօնական անձերով լրջապատուած՝ դուրս եկաւ Հորհրդարանի պատշգամբը և ժողովրդին ու զինուորների կարդաց Միացեալ Հայաստանի անկախութեան յայտարարութիւնը, որ ընդունուեց որոտագին վհեցցէներով և քնդանօթի 30 հարուածներով։

Ժողովուրդը մինչև ուշ գիշեր, չքերթներով, երաժշտութեամբ, երգ ու պարով ոտնում էր օրեայ մեծ դէպքը։

Խանդավառ հանդիսաւորութիւններ տեղի ունեցան և Հայաստանի գաւառներում ու գաղութահայութեան մէջ։

---

3 ✓ ԳԼՈՒԽ Ե·

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ· ԿՕԱԼԻՑԻԱՅԻ ԽԶՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետութեան

Մայիս 28-ի հանդէսները անցան ընդհանուր ոգեւորութեան ու համերաշխութեան մթնոլորտում:

Վկեցցէ՛ Միացեալ, Անկախ և Ազատ Հայաստանը» գրում էր մեծաւառ՝ ժողովրդականների «Ժողովուրդ» պաշտօնաթերթը, իսկ մէկ օր յետոյ, Մայիս 28-ի աջոյը անւանում էր «պետական յեղաշրջումն», արդիւնք «ինքնաբաւական կազմի պատահական մեծամասնութեան»: «Այդ աջոյը կուռնեաց խոշոր բարոյական նշանակութիւն», գրում էր թերթը, եթէ նա յայտաբերէր պարլամենտի կողմից», Ուրեմն, աջոյ էութիւնը չէր յուզողը, այլ՝ ձևը — մի ձև, որ մշակուել էր և իրենց՝ ժողովրդականների մտածակցութեամբ:

Մի քանի օր անցած, Երևան վերադարձաւ Ս· Ծարուխիւեանը, որ Թիֆլիսումն էր և մայիսեան հանդէսներին չէր մասնակցել: Եւ այդ ժամանակ մէկտեղ եկաւ ժողովրդականների բողոքը ընդգէմ Մայիս 28-ի աջոյի, որը, իբր թէ, չէր համապատասխանում հայ ժողովրդի չափերին: Ս· Ծարուխիւեանը հիմնաւորում էր իրենց տեսակէտը նրանով, որ Մայիս 28-ի աջոյը կրում է մխակողմանի բնոյթ, չունի Զօրու Նուպար փաշայի հատուկ նուիրիւնը, չի բերում հայկական հարցի մէջադրային կացութիւնից և, հետևաբար, պէտք է յայտարարի չեղնալ: Նրան պատասխանում էին, որ յայտարարութիւնը պատրաստուած ու կատարած է ամբողջ կառավարութեան, հետևաբար և ժողովրդական նախարարների հաւանութեամբ, որ Մայիս 28-ի յայտարարութեան տակ յօժար կամքով ստորագրել են և կառավարութեան ժողովրդական անդամները, որ հանդէսին նախագահողը նոյնիսկ ժողովրդական նախարար էր և որ, այդ բոլորից յետոյ, անտեղի է ինչ որ առարկութիւններ առալ քաշելը: Բայց ժողովրդականները պնդեցին իրենց պահանջի վրա, որը նրանց պաշտօնաթերթի «Ժողովուրդ»-ը (յունիս 4) հետևեալ կերպով էր ձևակերպում· «Միացեալ Հայաստանի պետական էչխանութիւնը պիտի կազմակերպուի Փարիզի դաշնադիր մարմնի և Հայաստանի հանրապետական կառավարութեան փոխադարձ համաձայնութեամբ: Պիտի ստեղծուի մի ժամանակաւոր խառն կառավարութիւն, որը պիտի գումարէ Միացեալ Հայաստանի հիմնադիր ժողով, կամ պարլամենտ, եթէ մինչ այդ մշակուած լինի երկրի սահմանադրութիւնը: Ուրիշ կերպ լուծել

մեռցնել Հայաստանի իշխանութեան պրոբլեմը անկարելի է, քանի որ Հայաստանի երկու մասերը մինչև այժմ գանուել են տարբեր քաղաքական և տնտեսական պայմաններում և ապրել են տարբեր կուլտուրական կեանքով»:

Եւ երբ կառավարութիւնը մերժեց ընդունել այս պահանջը, յունիս 24-ին նախարարական կազմից դուրս եկան Ս. Ճարուխիւնեանը, Ս. Ինճիճեանը, Գ. Մելիք-Ղարագէոզեանը և Ռ. Վերմիչևանը, որով և վերջ գտաւ կօալիցիան: Նրանց տեղը նշանակուեցին՝ ևլևմտական նախարար՝ Գ. Զաքէեանը, պաբենաւորման՝ Ս. Թորոսեանը, հանրային կրթութեան՝ Ս. Տիգրանեանը և արդարադատութեան՝ Ց. Ջմշկեանը: Այս վերջինը անդամ էր Ժող. կուսակցութեան, բայց Ս. Ճարուխիւնեանի քայլից յետոյ բողոքից ու հեռացաւ կուսակցութիւնից*): Ս. Տիգրանեանի հանր. կրթ. նախարար նշանակուելով՝ արտաքին գործոց նախարարութիւնը անցաւ փոխ-վարչապետ Ա. Խատիսեանին: Այս փոփոխութիւնը որև է անդրադարձում չունեցաւ կառավարական քաղաքականութեան վրա:

Ժողովրդականների վարմունքը, սկզբի չրջանում, դժւար էր բացատրել. վերջ ի վերջոյ, ի՞նչ էր կատարածը Մայիս 28-ին, ինչո՞վ կարող էր վնասել Հայաստանի միջազգային դիրքին, ի՞նչ սարսափելի հետևանքներ կարող էր տալ ներքին կեանքում: Ոչի՛նչ: Լաւագոյն դէպքում, նա կարագացնէր Երևանի ու Փարիզի մերձեցումը ու կը համախմբէր բովանդակ հայ ժողովրդի կամքը Հայաստանի չուրջ, վերջ կը տար ներքին պառակտումին, կը բարձրացնէր հայ ժողովրդի հոգեկան կորովը և կամրացնէր Հայաստանի դիրքը հաւևանների աչքին. վատ դէպքում — կը մնար մեռած տառ: Ի՞նչ պատճառ կար այդքան յուզելու, իրար անցնելու և, նոյնիսկ, կառավարութիւնից դուրս գալու:

Շատ չանցած, սակայն, առեղծւածը լուծւեց, և լուծումը գալիս էր բոլորովին ևսպասւած կողմից: Շուտով յայտնի դարձաւ, որ ժողովրդականների քայլը քևլաղրւած էր Փարիզից: Ցայտնի դարձան նաև չատ ուրիչ բաներ, որոնց մասին Հայաստանում, այն ժամանակ, ոչ ոք ոչինչ չգիտէր: Հաշտութևան պատրաստութիւնը ևւրոպա ուղարկելուց յետոյ Հայաստանի գործիչները այնքան էին ծանրաբևռնւել ու կլանւել ևրկրի ներքին աշխատանքներով, որ ո՛չ ժամանակ ունէին, ո՛չ էլ տրամադրութիւն գրաղևլու փարիզեան անց ու դարձերով: Պէտք է ասել, որ հետաքրքրութիւն էլ չունէին. Փարիզը չատ էր հեռու ու կորած Երևանից: Ի՞նչ էր կատարւում այնտեղ — Երևանում գրեթէ ոչինչ յայտնի չէր: Այն ինչ, Թիֆլիսը աւելի արագ և անմիջական յարաբերութևան մէջ էր Փարիզի հետ և աւելի էր իրազեկ այնտեղի դէպքերին: Եւ Հայ Ժող. կուսակցութևան կևնտրոնական

*) Խորհրդայնացումից յետոյ. Ց. Ջմշկեանը մնաց Թիֆլիսում և հոգեկան ու փիզիկական ծանր տանջանքների ենթարկուեց բոլշևիկների կողմից: Ես չկարողանալով տակաւ անձնարին գրկանքներին՝ հիւանդացաւ հոգեկան հիւանդութևամբ ու մեռաւ 1928 թվի սկզբներին: Ջմշկեանը շնորհալի փաստաբան էր, լուսամիտ ու հեռանդուն հասարակական գործիչ:







հոմխոէն, Թիֆլիսում, աւելի շատ ականջ էր դնում Փարիզին, քան Երևանին։ Իսկ Փարիզում այդ օրերին հետաքրքրական դէպքեր էին տեղի ունենում։

Ինչպէս յայտնի է, զինադադարից մօտ 3 շաբաթ յետոյ, 1918Թ. նոյեմբ. 30-ին Գօրգս Նուլանդ փաշան հրատարակել էր հետևեալ յայտարարութիւնը. «Հայկական Ազգային Պատւիրակութիւնը, պատասխանելու համար հայ ազգին միևնոյն իղձին, որուն մէկ մասը արդէն իսկ իրրև անկախ հանրապետութիւն կազմւած է, կը յայտարարէ ամբողջական Հայաստանի անկախութիւնը, կիլիկիայով միասին, համաձայնական պետութիւններու և մեծագիտ նահանգներու հովանաւորութեան տակ, կամ Ազգերու Դաշնակցութեան, երբ ան կազմւի։»)

Ապա, Ազգ. Պատւիրակութիւնը, չարունակելով հանդերձ, յանուն հայ ազգի, քաղաքական հետապնդումներ Եւրոպայում, ծրագրել էր հրաւիրել ազգային մի համագումար՝ որոշելու համար ևայ ազգին միևնոյն իղձերը»։ Համագումարի նախապատրաստութիւնները դուրգուրկեցին Հայաստանի Հանրապետութեան Պատւիրակութեան նախագահ Ա. Ահարոնեանի Եւրոպա հասնելուն, վեպր. 4-ին։ Այս վերջինի երևալը Փարիզում առաջ բերեց լուրջ դժգոհութիւն Ազգ. Պատւիրակութեան շրջանակներում, որոնք Հայաստանի Հանրապետութեան անունն իսկ դժկամակութեամբ էին լսում և աւելի սիրով փոխարինում էին «Արարատեան Հանրապետութիւն» դրած–ւածքով. Արարատը հո Հայաստան չէ՞ր, և ինչ իրաւունք ունէին նրանք այդ ինչ որ անյայտ մարդիկ Հայաստանի կառավարութիւնն կոչելու իրենց և ինչ որ պատւիրակութիւն ուղարկելու պետութիւնների մօտ։ Չէ՞ որ ազգին միևնոյն իղձը» արտայայտող պատւիրակութիւնն արդէն կար և ներկայացած էր ո՛չ քէ գաւառացի վարժապետ–քանաստեղծով, այլ տիտղոսաւոր և հանրահռչակ մի անձով, որի հօր արժանը կանգնած էր խըղճմտանքի մայրաքաղաքում, իսկ իր առջև բաց էին Եւրոպայի բոլոր դռները։

Միւս կողմից, Հ.Հ.Պատւիրակութեան ներկայացուցիչն էլ՝ համակուած իր դիրքի ու պաշտօնի վեհութեան գիտակցութեամբ՝ չէր գիջանում լիարժան յարգանքի տուրքը մատուցանել փաշայական և էֆենդիական տնապարծութեան։

) Միաժամանակ Ազգ. Պատւիրակութիւնը ծանուցնել էր ամբողջական Հայաստանի տիտմամների ցնտրոյման։ «Times»-ի 31 դեկտ. համարում հրատարակւեց Գօրգս Նուլանդի յայտարարութիւնը Հայաստանի անկախութեան և տահմանների մասին։ Այնմնեղ գրւած էր և անկախ Հայաստանի Հարտէսը, որի վրա Թուսահայաստանի տահմանները ցոյց էին տրւած թեատ համեստ չափերով, մինչդեռ Թիւրքահայաստանի մէջ մտցած էին ոչ միայն Վանը, Բիթլիսը, Մուշն ու Տարիճը, այլ և Սեվաղը, Ագանոն, Ալթինթաղը, Դիարբէքիրը և մի տեսակ կտոր Սև ծովի եզերքից՝ Սամսոնի ու Բաթումի միջև։ Ազգ. Պատւիրակութեան նախագահը հաւատացած էր, որ Հայաստանը, մեծ տահմանների, կարող էր իրականացրնել մի քանի տարիների ընթացքում։ Ահաւասիկ, տահմանների հարցը ընդհանուր գաղափարի առարկայ էր պատասխանում։ Շատերը ծոյնիսկ Գօրգս Նուլանդի գծած տահմաններից գոնէ էին ամրուարտ և պահանջում էին ընդարձակ գաւառներ մտցնել Հայաստանի մէջ։

Այդ պատճառով, Ազգային և Հանրապետական Գաղափարակիցների Ընտրը Հենց սկզբից միևնոյն ասելով չէնացին։ Առաջին իսկ օրից սև կատու անցավ նրանց միջև, և թէև, ժամանակի ընթացքում, կարելի եղավ ասեղնել ձևական գոթակցութիւն և աշխատանքի ընդհանուր հավասար, հոգևոր մտերմութիւնը, անկեղծութիւնն ու յարաբերութիւնների լիակատարութիւնը միևչև վերջ էլ բացակայեցին։ Մի էր միջատը, կամ, ասելի ճիշտ, ո՛ր կողմն էր ասելի միջատորը այդ հիւանդոտ գրութեան համար—մինչև այսօր էլ մեկը ամբաստանում է մեւսին։ Ու քանի երկու պատերազմականից գործակատարների մանրամասն տեղեկագրերն ու վաւերագրերը չեն հրատարակուած, անկարելի կը լինի ճշտել պատասխանատուների ու պատասխանատուութեան չափը, ինչպէս, առհասարակ, պատմութեան այս փուլի մէջ և ներկայ տեսակետներով դժուար է պատասխանատուութիւնների ճշտումը։ Բայց մեր գործի համար այդ այնքան կարևոր էլ չէ։ Կարևոր փաստի արձանագրութիւնն է — եղրակացութիւնը Քող ուրիշներն անեն։ Իսկ փաստը՝ միմնոյնքան փարիզում լաւ էջեր։

Ազգային Համագումարը կոչուած էր մաքրելու այդ մթնոլորտը և ազգային գործերը դնելու առողջ հիմքի վրա, բայց յաջողութիւն չունեցաւ. Նա, ոչ իր կազմով, ոչ էլ մտայնութեամբ կարող էր նման գիր կատարել։

Նախ կազմը։ Համագումարը ներկայացած էր հետևեալ ձևով. Գոլիս՝ Ղազէչ արք. Դուրեան, փոխ. Ա. Տէր-Յակոբեան, դոկտ. Ա. Բարսեղեան, Գ. Սիմոնեան, Գօզոս բէյ Մարլէ, կռվիռա՝ (արևմտահայ փոխըմտականների կողմից) Վ.Փափազեան, Ա.Քէրկիպաշեան, Լ.Շանթ, Ծգիռառա՝ դոկտ. Նևիմուլ, Վ. Թեքէյեան, Բուլգարիա՝ դոկտ. Մալեան, Մ.Հինդլեան, Գարսկաստան՝ Ց.Խան Մասեհեան, Մ.Վարանդեան, Աֆգիռա՝ Գ.Յակոբեան, Գ. Ֆնտզլեան, Հնդկաստան և Ճաւա՝ Գօզոս փէյա Նուպար, Չուիցերիա՝ Գ. Նորատունկեան, Իտալիա՝ դոկտ. Ն. Տէր-Մոսեհեան, Վենետիկ՝ ՑոզՀ. վարդ. Թորոսեան, Իռւմանիա՝ Մ. Տէրպէտրեան, Ֆրանսիա՝ Ն. Խան Ներսէսեան, Տ.Խան Ջելկեան, Ամերիկա՝ Ե.Ագաթօն, Մ.Համբարձումեան, Զ. Մաքիկեան, Ա. Միքայէլեան, Միջագետ՝ Ե. Տէրմիչեան, փոխ. Ա. Խաչատրեան, Հալէպ և Այնթապ՝ դոկտ. Ալբէնեան, Ցուսնաստան՝ Ց. Մոսուիչեան, անդամ Ազգ. Պատիրակութեան՝ Ձ. Մալեոմ, Ամենայն Հայոց կաթուղիկոսի Ամերիկայի ներկայացուցիչ՝ Գ. Փաստրմաճեան, հրատիրատածներ՝ Մ. Տամատեան, Ա. Զոպանեան, Ա. Հանքեան, Մ.Մ.Դաւիթ բէյ, փոխ. Կ. Թումանեան, Հ. Հ. Գատնքակութիւնից՝ Ա. Ահարոնեան, Հ. Ցհանիսեան՝ խորհրդակցական ձայնով։

Այս 4 անձից հարկ. 4—5 հոգին կարող էին ասել, թէ իրենք, որոշ չափով, արտայայտում են Հայաստանի ժողովրդի բազմազանները։ միւսները բոլորը վաղուց գաղութներում ապրող մարդիկ էին՝ բոլորովին անծանօթ երկրի պայմաններին և հայ ժողովրդի կացութեան։ Նրանցից չատերը — անգամ ամենապատասխանատու դիրքեր գրաւողները — Հայաստանի երեսն անգամ չէին տեսել, Հայաստանի աշխարհագրութեան, տնտեսական կեր-

զուլթիաններին, ապագարակաի կալմին ու չըլապաաին իակ ծանօթ չէին, չգիտէին, և Հայաստանի մասին ունէին նոյն պատկերացումը, ինչ որ մի Ջիլիի կամ Ուրուգուայի:

Ճնոյ, տարօրինակ հագուստին ներկայացուցչութիւն էր այդ. Չափ-ցեր, Խաչիկ, Հեղինաան, Մխիթարը, Եգիպտոս—ազգանուն ստացած-ները զարմ էին ճամ ապրելի մասին իսկական պատմութիւնը. ճՆչ իրատնցող: Ո՛վ էր տալ նրանց լիազօրութիւն խօսելու Հայաստանի և հայ ժողովրդի անունից:

Աւելին գեռ. հարիւր մէկ-երկու տարբեր ցաք ու ցրիւ հայեր ունեցող Խաչիկի կամ Չիլինգիրեան տուել էին մէկական պատգամաւոր, 30—40,000 հայ ունեցող ճուսնական էլ՝ մէկ. Մեզնիայի երկու գոյք մէկ կենտ առևտրականները ուղարկել էին 2 մարդ, 2 մարդ էր տուղարկել և 100,000 անդամ ունեցող պարսկահայ գաղութը, այն ինչ նոյնքան հայ հաշուող Ամե-րիկան տուել էր 4 պատգամաւոր:

Ժողովուրդ, աշխատաւորութիւնից ընտրուած մարդ այդ համագումա-րման չկար: բէյ, փաշա, էֆենտի, եպիսկոպոս, հարուստ վաճառական, արհեստով ազգային գործիչ — ահա ովքեր էին հաւաքել հազգին մասնակ իսկական ազատագրութիւն: Լաւագոյն դէպքում, եթէ մի պահ հրաժարուելու լինենք բոլոր ժողովրդապետական նախապայմաններից, այդ հաւաքոյթը կարող էինք կոչել ազատագրական համագումար, բայց ոչ երբեք հազգային: Դաշնակցականութիւնն էր խօսում նրա մէջ՝ անպատասխանատու, գաւառնդր, անհող ու անտարած:

Աւաղ բերնեք համագումարի արդիւնքները այնպէս, ինչպէս որ ներկայացած են պաշտօնական հրատարակութեամբ*):

«Ամերիկեան համագումարի նախապատրաստական հինգ նիստերուն և պաշտօնական բացումէն մինչև փակումը, այն է փետրուար 24—էն մինչև մարտ 22 ընկած 38 նիստերուն, ընդամենը 43 նիստի մէջ կատարած աշխատութեանց համառօտ մէկ ամփոփումը:

1. Ընտրութիւն համագումարի դիւանին: Ընտրեցան՝ նախագահ վահ. Գ. Նորատունկեան, դեր-նախագահներ ՊՊ. փրոֆ. Տէր-Ցակոբեան և Ա. Յոհաննեան, առենադպիրներ՝ ՊՊ. Վ. Թէքէեան և Ն. Տէր-Մովսիսեան. այս վերջինս հրաժարեցաւ յետոյ՝ Պ. Գ. Ֆինդիկեան:

2. Քննութիւն և վաւերացում համագումարի ներքին կանոնագրին:

3. Քննութիւն և վաւերացում ժողովի իրաւասութեան և աշխատու-թեանց ծրագրին:

4. Վաւերացում նախագէս պատրաստած և կազադութեան վեհա-ժողովին ներկայացած Հայկական Պահանջներու ճիշտառակագրին:

5. Չեկուցում Ազգ. Պատւիրակութեան նախագահ վահ. Գ. Տոքո Նուպար փաշայի՝ Պատւիրակութեան ի սկզբանէ մինչև այժմ կատարած աշխատանքներուն և ստացած արդիւնքներուն վերաբերմամբ:

---

*) Տե՛ս «Հայ Ազգային Համագումարի Ակնատեսութեան և Որոշումներ» (փետր. 24-էն մինչև մարտ. 22):

6. Քննութիւն և վաւերացում հայ ազգին Թիւրքիոյ և Կովկասի մէջ այս պատեհապահի ընթացքին կոտորածներու, տեղահանութեան և այլ աղէտներու հետևանօք կրած վնասներուն հատուցման վերաբերող Ցիշատակագիրին, որ ներկայացուեցաւ Կաղզուընեան Վեհաժողովին և օրուն համաձայն վերոյիշեալ վնասուց ամբողջական գումարը կը յանգի 19 միլիառ 130 միլիոն 982 հազար ֆրանքի: Այս գումարին 14 միլիառ 598 միլիոն 510 հազարը արևմտեան հայոց պահանջներուն և մնացեալ 4 միլիառ 532 միլիոն 472 հազարը արևելեան հայոց պահանջներուն համար:

7. Քննութիւն և վաւերացում ևւմտական յանձնաժողովին կողմէ Ազգ. Գաւուխրակութեան յառաջիկայ վեց ամսուան գործունէութեան համար պատրաստած ևւմտացոյցին, որուն համաձայն ազգային դանագան պէտքերու համար նշագաղոյն 15 և առաւելագոյն 30 միլիոն ֆրանքի ծախուց գումար մը կը նախատեսէ, հասոյթի գանագան եղանակներու առաջարկութեամբ, որոնց յարմարագոյն գործադրութիւնը յանձնած է նոր Ազգային Գաւուխրակութեան:

8. Քննութիւն և վաւերացում յատուկ յանձնաժողովի մը կողմէ պատրաստուած նոր Ազգ. Գաւուխրակութեան տուելիք ուղեցոյցներու (տիպիքիով) ծրագրին, որուն մէջ մանրամասնած են պետութեանց հետ բանակցութիւններու ընթացքին Գաւուխրակութեան հետևելիք ուղղութիւնն ու գնելիք պահանջները՝ հիմնուած Ցիշատակագիրի գլխաւոր ակզբունքներուն վրա:

9. Քննութիւն և վաւերացում Հայկական Լեգէոնի ներկայ վիճակին, կամաւորներու վերստին յանձնառաջումին և Լեգէոնի ապագայ գործածութեան հարցերուն մասին յատուկ յանձնաժողովի մը կողմէ բերուած առաջարկներուն:

10. Քննութիւն Գաւուխրակութեան տուելիք ուղեցոյցներու առթիւ վերապահուած յաւելուածական մասի մը, որով կը փափաքէր Համագումարի ընթացքին իսկ կարելի դարձնել Թրքական և ռուսական Հայաստաններու միացումը՝ միակ ներկայացուցչութեան մը և միակ կառավարութեան մը տեղիդմամբ. յետ բարմաքիւ խորհրդակցութեանց որոշուեցաւ սոյն խնդրոյն իրականացումը յանձնել նորընտիր Գաւուխրակութեան՝ ըստ ուղեցոյցներու տրամադրութեան:

11. Ընտրութիւն ապրիլ 2-ի նիստին մէջ Հայ Ազգային Գաւուխրակութեան՝ բաղկացած վեց անդամէ, որ, համաձայն նոր Գաւուխրակութեան համար ընդունուած ուղեցոյցներուն, Հայ Հանրապետութեան Գաւուխրակութեան հետ կը կազմէ «Միմրողջական Հայաստանի Գաւուխրակութիւնը» և անոր հետ միասին պիտի աշխատի ժնեւի բերել Ցիշատակագիրով բանաձևուած հայկական պահանջներու. գործադրութիւնը և պիտի հետապնդէ ազգային դատին յարմարկից բոլոր հարցերուն բարւօք լուծումը: Նորընտիր Գաւուխրակութեան անդամ ընտրուեցան՝ վսեմ. Գոլոս փաշա Նուպար, Գ. Գ. փրոֆ. Տէր-Ծակորեան, Ա. Զոպանեան, Գ. Փաստրմաճեան, դոքտ. Ց. Նեվրուզ, Վ. Թէքէեան:

12. Քննութիւն Հայկական Վնասուց Հատուցման Ցիշատակագիրին վրա աւելցուելիք նոր յուշագրի մը՝ վնասուց պատասխանատուութեան և գանձման վերաբերեալ: Սոյն յուշագրին ամբողջացումն ու առաջումը յանձնուեցաւ Գաւուխրակութեան:

13. Ընթերթիւն, համաձայն Համազումարի իրաւասութիւնն ու գործնեութիւնը նշող ծրագրին, յանձնաժողովի մը, որուն պաշտօնն է մօտաւոր փոխանցման չրջանին համար Հայաստանի վարչական կազմը ճշտող առաջնեայ ծրագիր մը կազմել և զայն ենթարկել Համազումարի վաւերացման, երբ Համազումարը վերսկսին ի նիստ հրաւիրւի Պատիրակութեան կողմէ, ինչպէս պարտաւոր է ընել այն ատեն, երբ Հայաստանի քաղաքական բախտին մասին Ազգային Վեհաժողովն իր որոշումը տայ, կամ երբ Պատւիրակութիւնը հարկ տեսնէ Համազումարին դիմել ուրիչ ուէ անակնկալ հարկեցուցիչ պարագայի առիթ։

Օրակարգի նիւթ կազմող և վերև թւուած այս խնդիրներէն զատ, Համազումարը իր նստաչրջանի մէկոյին զբաղեցաւ նաև կարգ մը խնդիրներով, որոնցմէ յիշենք՝ հայկական հողամասերու գինւորական գրաւման, կիլիկիոյ և Սիւրիոյ մէջ ապրող տարագիր հայ ժողովուրդին ապահովութեան, Արեւելեան Հայաստանի սովարեկ հայ ժողովուրդին պաբնհաւորման, կիլիկիոյ համար թժչկական միսիոնի մը, հիւանդանոցի կազմածներու, դիզորկից և գեհամոզկնի, ինչպէս նաև Արեւելեան Հայաստանի համար դիզորկից առաքման խնդիրները։ Ասոնցմէ վերջիններուն Համազումարը յաջողեցաւ մասամբ գոհացում տալ Պատւիրակութեան տրամադրելի միջոցներով։

Համազումարը իր նստաչրջանին մէկոյին զբաղեցաւ նաև կարգ մը այլ խնդիրներով, որոնցմէ կարեւորագոյնն է Հայկական Լեգէոնի վաւերագրման հարցը։ Համազումարը իր նստաչրջանին մէկոյին զբաղեցաւ նաև կարգ մը այլ խնդիրներով, որոնցմէ կարեւորագոյնն է Հայկական Լեգէոնի վաւերագրման հարցը։ Համազումարը իր նստաչրջանին մէկոյին զբաղեցաւ նաև կարգ մը այլ խնդիրներով, որոնցմէ կարեւորագոյնն է Հայկական Լեգէոնի վաւերագրման հարցը։ Համազումարը իր նստաչրջանին մէկոյին զբաղեցաւ նաև կարգ մը այլ խնդիրներով, որոնցմէ կարեւորագոյնն է Հայկական Լեգէոնի վաւերագրման հարցը։

Համազումարը իր նստաչրջանին մէկոյին զբաղեցաւ նաև կարգ մը այլ խնդիրներով, որոնցմէ կարեւորագոյնն է Հայկական Լեգէոնի վաւերագրման հարցը։ Համազումարը իր նստաչրջանին մէկոյին զբաղեցաւ նաև կարգ մը այլ խնդիրներով, որոնցմէ կարեւորագոյնն է Հայկական Լեգէոնի վաւերագրման հարցը։ Համազումարը իր նստաչրջանին մէկոյին զբաղեցաւ նաև կարգ մը այլ խնդիրներով, որոնցմէ կարեւորագոյնն է Հայկական Լեգէոնի վաւերագրման հարցը։

Համագումարը որոշեց նոյնպէս, որ Դիւանը առյ առթիւ դրկի Համազգայինի գլխաւոր մասնաճիւղերը յայտնող ուղերձներ՝ նախագահ Ալիշանին, Գր. Զօհրապեանի, Լոյս Ճորճի և Օրլանեան, կոչ մը ղրկելիք ազգերուն՝ լրագրաց մէջ հրատարակելու համար և հեռագիր մը Հայ Հանրապետութեան, եբեան։

Այն պահուն երբ Համագումարը իր աշխատութեանց գլխաւոր մասը կատարելէ հետ՝ կը դադրեցնէ իր Ա. Նստաշրջանը, Նորընծաներ Ազգ. Գաւառբոակութիւնը՝ Հայկական Հանրապետութեան հետ ձեռնարկած է արդէն իրմէ սպասուած աշխատութեան, և, ուղեցոյցներուբ տրամադրութեան համաձայն, չուտով ամբողջացնելով իրեն գործակցել կոչուած Ներգաղթի, Ելեմտական, Գրոպագանդի և այլ գլխաւոր յանձնաժողովներու կազմութեան՝ սկիզբ պահել, անշուշտ, Համագումարին իր վրա դրած յոյսերը։

Փակելուց առաջ, Համագումարը դաշնակից ազգերին ուղղեց մի կոչ, որով, կը հրաւիրէր անգամ մը ևս հայ ազգին կամքը իր ազատ հայրենիքն ունենալու՝ անկախ տէրութեան մը մէջ իր բոլոր հողամասերուն միացմամբ կազմուած և կը խնդրէր դաշնակից ազգերէն՝ «իրենց ձայնը մերինին միացնեն պահանջելու համար հաշուութեան վեհաժողովէն, որ փուճացնի լուծումը հայկական հարցին»։

Ապա մի հեռագիր էլ ուղղեցին Հայաստանի Հանրապետութեան. «Փարիզի համախմբուած Հայ Համագումարը, իր առաջին նստաշրջանի փակման առթիւ, Հայկական Հանրապետութեան կուղղէ իր ներքագրական խանդաղատագին ողջոյնը։ Սրտագին կը յաղթենք, որ ընդհուպ իրականանայ Միացեալ Հայաստանի Հանրապետութեան կազմակերպութիւնը և լիթայոյս ենք, որ ձեր և մեր ջանքերով պիտի պատուին մեր իղձերը՝ ընդհանուր խաղաղութեան կնքման պահուն՝ ազգային գաղափարը կատարեալ յաղթանակովը»։

Համագումարի պաշտօնական բանաձեւերէ մէկ, կարծես, աչքի արտասովոր բան չկար։ Բոլոր էութեան նրանք նոյնն էին, ինչ որ և երբեմն սքանչացած Համագումարի որոշումները։ Աւելին։ Նրանք, չատ կողմերով, յիշեցնում էին և այն օրերին Հայաստանում տիրող տրամադրութիւնները։ Սակայն, Համագումարում արտայայտած ոգին, Ազգ. Գաւառբոակութեան և պատգամաւորներից չատերի բռնած դիրքը Հայաստանի Հանրապետութեան հանդէպ և Ազգ. Գաւառբոակութեան ու Հ. Հ. Գաւառբոակութեան մէջեղ առեղծուած փոխյարաբերութիւնները, վերջ ի վերջոյ, առաջ բերին տխրահռչակ մրմնոլորտ, որ Ազգ. Գաւառբոակութիւնը և Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնն ու Գաւառբոակութիւնը գարձան, մի տեսակ, Նժրհակ, մրցակից կողմեր։ Համագումարի մէջ լսում էին ուղղակի քննադատութեան ձայներ, որոնք Հայաստանի Հանրապետութեան գոյութիւնը համարում էին վնասակար հակակշիռ գաւառ համար։ «Վրաբառեան Հանրապետութեանդ հաւքը դուռ ուսւական հաւք է, ասում էին նրանք, մինչդեռ հակակշռի խնդիրը վերաբերում է Թիւրքահայաստանին։ Ազգ. Համագումարը պէտք է ծուսահայաստանը ծողնէ իր ճակատագրին և տեղծնական նպատակ թիւրքահայոց գատին՝ պահանջելով, ի հարկին, «Վրաբառեան Հանրապետութեան կզումը Հայաստանին։ Հ. Հ. Գաւառբոակութիւնը, երկուքիւն չտեղծելու համար, պարտաւոր է քաշուել ասպարէզից կամ ենթարկուել Ազգ. Գաւառբոակութեան։

Իր հերթին, Հ. Հ. Գասպրյանցի գործունեությունը մեկնում էր իրական փաստից. Հայաստանի Հանրապետության գոյությունից է, Հայաստանում տապրում է մեկ միլիոն ժողովուրդ. Երևանում կա Կարմրատան, կառավարություն, բանակ. երկիրը հետզհետե կազմակերպում է պետականության: Միևնույնն, Թիւրքահայաստանը ամայի է· ո՛չ ժողովուրդ կայ, ո՛չ կառավարություն: Հետևաբար, անհրաժեշտ է ազգային բոլոր ուժերը կենտրոնացնել Հայաստանի Հանրապետության վրա, իրրև հայկական պետության կորիզի, և հայկական հարցի լուծումը դնել Հայաստանի երկու հատվածների միացման ձևով:

Կողմերը խօսում էին տարբեր լեզուներով և իրար չէին հասկանում: Այս տրամաբանությունից օգտւում էին չարամիտ մարդիկ՝ թունաւորելու համար գաղութահայ ազգայինների միտքը նրանով, որ, իբր Քէ, դաշնակցականներն են մեկայն այդպէս մտածողները, դաշնակցական պարագլուխները, որոնք վերապատան Հանրապետութեան գործերը են գաղձրել իրենց կուսակցական նպատակների, ձգտում են բռնագրաւել Թիւրքահայաստանը[*]), խլել Գողտ փաշա Նուպարից ազգային գործերի դեկավարութիւնը և այլն: Գաղաքական ընդհանուր տեսակէտների տարբերութիւնը, կուսակցական նեղմտութիւնը և անձնական նախանձն ու քէնը Փարիզում առաջացրին խեղդիչ մթնոլորտ, որի թունաւոր հոսանքները հետզհետէ սկսեցին հասնել և Երևան:

Մարչ 28-ի յայտարարութիւնը բոլորովին անսպասելի էր Ազգ. Գաղութահանդիսության համար: Գողտ Նուպարն ու իր գործակիցները սկզբունքով դէմ չէին նման քայլի: Ընդհակառակը, ինչպէս տեսանք, դեռ նոյեմբ. 30-ին նրանք յայտարարել էին համաձայնական Հայաստանի անկախութիւնը: Եւ արժէ էլ գոհունակ էին այդ ուղղութեամբ, բայց նրանց գայթագնողը այն էր, որ յայտարարութիւն անողը Երևանն էր և ոչ իրենք, երկրորդ՝ որ Երևանի կառավարութիւնը ինքնինքը հռչակում էր միացեալ Հայաստանի կառավարութիւն, այն ինչ բոլոր մարդիկքին և աստուածային օրէնքներով միացեալ Հայաստանի կառավարութիւնը պիտի է կազմէր Փարիզում և անպայման Գողտ փաշա Նուպարի նախագահութեան տակ:

) Արժէ տրտնջալիր մի պատմութիւն, որ անում էր համգստյեալ Արմէն Գարօն: Ազգ. համագումարի ժամանակ, երբ քննւում էր քիւրքահայկական գաւառների գրաւման հարցը, Արմէն Գարօն ասում է, թէ չուտով Հայաստանի կառավարութիւնը կը գրաւէ Էրզրումը:

— Ինչպէ՞ս թէ կը գրաւէ, գարմանում է Գողտ Նուպարը՝ բանկաքեակի ձեռ:

— Հէնց այնպէս, երբ կուզրիէ ու կը գրաւէ, պատասխանում է Արմէն Գարօն: Իմ ծրագրի էլ հայկական բանակում է. բայ ունեմ տասնեվեց հրաւէր տանուներից ձեզն էլ ես կա՛մ մեր...

— Mais c'est une occupation! (բայց այդ բռնագրաւում է) վրդովուած բացականչում է փաշան:

Եւ տեսնելով Արմէն Գարօի չտրան գնդացը՝ ձեռքը գաղում է տեղերին ու ա՛ս

— Այո՛, այո՛, բռնագրաւում է ասյ, և ես կը բողոքեմ դրա դէմ... ես կը բողոքեմ...

Հայաստանի գործը պիտի գրաւէր էրզրումը, և Ազգ. Գաղութահանդիսության նախագահը տպատեղծ էր բռնկել...

Եւ հասկանալի է այն անաչահման վրդովմունքը, որ Մայիս 28-ի աջօրը առաջ բերից Փարիզում, ուր նա ընդունելց, իբրև բռնաբարում Ազգ. Պատւիրակութեան իրաւունքների: Գօդոս Նուպարը, անմիջական մղումով, որոշից հրապարակային յայտարարութեամբ՝ բողոքել այդ աջտի դէմ, սակայն, Հ. Հ. Գաւտիրակութեան ներկայացուցիչների և ուրիշ աւելի պաղարիւն մարդկանց ստիպումով յետ կեցաւ այդ մտադրութիւնից: Եւ սկսեցին բանակցութիւններ նրա և Ակարօնեանի միջև, որոնք տեւեցին երկար: Այդ բանակցութիւնների համար Ա. Ակարօնեանը լիագօրութիւն չունէր իր կառավարութիւնից, բայց, ընդհանուր առմամբ, ճիշտ էր ներկայացրել երեւանի տրամադրութիւնները: Բանակցութիւնների առարկայ էին ամբողջական Հայաստանի կառավարութեան, խորհրդարանի և պատւիրակութեան կազմութեան հարցերը: Գօդոս Նուպարը պահանջում էր կազմել միացեալ խորհրդարան՝ կէսը ռուսահայերից, կէսը Թիւրքահայերից և միացեալ կառավարութիւն՝ նոյնպէս կէս առ կէս: Կառավարութեան թիւրքահայ անդամները պիտի նշանակուէին Ազգ. Պատւիրակութեան կողմից, ռուսահայերը՝ Հայաստանի օրւայ կառավարութիւնից: Նախապարական տեղերը պէտք է բաժանուէին փոխադարձ համաձայնութեամբ, բայց վարչապետ պէտք է լինէր անպայման Գօդոս Նուպարը՝ մնալով միանդամայն և Գաւտիրակութեան նախագահ: Արտաքին գործոց և դիւանագիտական նախարարները պէտք է լինէին ոչ-դաշնակցական: Ջանի որ վարչապետը պիտի ապրէր Փարիզում, Երեւանում պիտի նշանակուէր փոխանորդ: Ժամանակաւոր կառավարութեան կազմութիւնից յետոյ Խորհրդարանին դադար պիտի տրւէր անորոշ ժամանակով, մինչև միացեալ խորհրդարանի գումարումը: Միացեալ Գաւտիրակութիւնը պիտի կազմւէր Փարիզում՝ երկու կողմից չորսական կամ երեքական անդամով: Թիւրքահայ անդամները պիտի նշանակուէին Գօդոս Նուպարից, միւսները՝ կառավարութիւնից: Գօդոս Նուպարի նշանակած անդամները պէտք է լինէին անփոխնելի, և նոյնիսկ միացեալ կառավարութիւնը իրաւունք չպիտի ունենար նրանց հրաժարեցնելու մինչև հայկական հարցի լուծումը: Նոր պատւիրակութեան նախագահ պէտք է լինէր Գօդոս Նուպարը, որին պիտի տրւէին արտակարգ լիագօրութիւններ:

Այս պահանջներից Հ. Հ. Գաւտիրակութիւնը ընդունում էր, որ կառավարութիւնն ու խորհրդարանը կազմւէն կէս առ կէս Թիւրքահայերից ու ռուսահայերից, բայց վարչապետը անպայման պէտք է ապրէր Հայաստանում, որ երկու Գաւտիրակութիւնները կարող են ձուլւել Գօդոս Նուպարի գլխաւորութեամբ՝ պայմանով, որ նոր պատւիրակութիւնը եռքարկի և պատասխանատու լինի կառավարութեան, որ պատւիրակութեան Թիւրքահայ անդամները կարող են նշանակւել Գօդոս Նուպարի կողմից, դիւանագիտական նախարարը կարող է լինել անկուսակցական և այլն:

Ինչպէս տեսնում ենք, տարածութիւնը երկու տեսակէտների միջև բաւական լայն էր:



Ա. ՄԱՐԳՈՍՅԱՆ
(Նախագահ)



Լ. ՇԱՀԱԶ
(Փոխ-նախագահ)



Ա. ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ
(Փոխ-նախագահ)



Ս. ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ
(Ազգ. Գրադարանի)

Ի վերջոյ, երկու Ֆաուբրակութիւնների նախագահների ստորագրութեամբ հետագիր տրւեց Մբռևան, որով առաջարկւում էր չեզոնարկել կառավարութեան և խորհրդարանի վերակազմութեան և սպասել Փարիզից ուղարկւելիք պատգամաւորներին, որոնք այդ առիթ նոր առաջարկութիւններ էին բերելու: Հայաստանի կառավարութիւնը սերով ընդառաջ գնաց այս առաջարկութեան:

•

Մինչ Փարիզում պատւիրակութիւնները յուզւում ու բանակցութիւններ էին վարում, Հայաստանում տեղի էին ունենում խորհրդարանական ընտրութիւնները, որոնք ձեռնարկւեցին Հայաստանի Խորհրդի փետր. 28-ի ժխլռագիպից յետոյ: Մարտ 12-ին կառավարութիւնը որոշեց Խորհրդարանի ընտրութիւնների համար հիմք ընդունել համառուսական Սահմ. ժողովի ընտրական օրէնքը Անդրկ.Առանձին Կոմիտէի մտցրած փոփոխութիւններով, ամբողջ երկիրը դարձնել մէկ ընտրական չրջան, թիւրքահայերին տալ ընտրական իրաւունք և այլն: Այս որոշման հիման վրա մշակւեց 80 օրէնք Հայաստանի Ֆարլամենտի Ընտրութեանց, որով իւրաքանչիւր 20 տարին լրացրած քաղաքացի, առանց սեռի, կրօնի ու ցեղի խտրութեան իրաւունք ունէր մասնակցելու ընտրութիւններին, որոնք պիտի կատարւէին ընդհանուր, հաւասար, ուղղակի և համեմատական քւէարկութեամբ: Խորհրդարանի անդամների թիւը սահմանւում էր 80: Ընտրութիւնները վարելու համար ստեղծւում էին կենտրոնական, գաւառական, չրջանային, քաղաքային, գիւղական և թաղամասային ընտրական յանձնաժողովներ. կենտրոնական յանձնաժողովը նշանակւում էր Հայ. Խորհրդից, իսկ մնացածները՝ իրենցից գերադաս յանձնաժողովներից:

Հայ. Խորհուրդը նշանակից ընտրական կենտրոնական յանձնաժողով և այս վերջինն անցաւ գործի: Նշանակից գաւառական ընտրական յանձնաժողովներ, յանձնաժողովների նախագահներ ու ընտրական հրահանգիչներ և գաւառներն ուղարկից ժողովրդական թեքթիկներ՝ մանրամասն հրահանգներով: Ապր. 25-ից Հայաստանի բոլոր վայրերում սկսւեց ընտրողների ցուցակագրութիւնը. քւէի իրաւունք ունեցողների ընդհանուր թիւը դուրս եկաւ, առանց Կարսի և Շարուր-Նախիջևանի, 365,780 հոգի: Խորհրդարանի ընտրութիւնների համար կազմւեց հետևեալ ժամանակացոյցը.

Մայիս 12 — ընտրողների ցուցակների յայտարարման վերջնական ժամանակը:

Մայիս 22 — թեկնածուների ցանկը ներկայացնելու վերջին օրը:

Մայիս 29 — ներկայացած թեկնածուների ցանկի յայտարարութեան վերջին պայմանաժամը:

Յունիս 6 — վերջնական ժամանակը թեկնածուների ցանկ ներկայացնող ընտրողների յայտարարութեան՝ ցանկերը փոփոխելու մասին:

Յունիս 11 — ընտրողների ցանկերի երկրորդ յայտարարութեան վերջին օրը:

Ընտրեց 21, 22, 23 — ընտրութիւնները Հայաստանի բոլոր վայրերում։ Ուրբաթօրեայի ընտրութիւնների համար ներկայացուց թեկնածուների հետեւեալ ցուցակը.

№ 1· Հ· Ց· Դաշնակցութիւն . . . . 120 թեկնածու
№ 2· Հայ ժողովրդական կուս. . . . 65 ,,
№ 3· Սոց.-Յեղափոխ. կուս. . . . 35 ,,
№ 4· Ռուսական ցանկ . . . . . 2 ,,
№ 5· Ասորական ցանկ . . . . . 3 ,,
№ 6· Անկուսակց. Գիւղաց. Միութիւն . . . . .
№ 7· Թրքական ցանկ . . . . . .

Նախընտրական պայքարն արդէն սկսած էր, երբ թիֆլիսցիների և երևանցիների մէջև ծագած կուսակցական վէճերին անհամաձայնութիւնները հետևանքով՝ ժողովրդական Կուսակցութիւնը, թեկնածուների ցանկը ներկայացնելուց և ընտրական աշխատանքներին ձեռնարկելուց յետոյ, սեռտի պատրաստներով, հրաժարւեց մասնակցելուց, յուլիս 20-ին յետ պահանջեց իր ցուցակը և սկսեց պայքար մղել խորհրդարանական ընտրութիւնների դէմ: Այդ պայքարում նա յենւում էր գլխաւորապէս, Գօրգո Նուպարի բռնած բացասական դիրքի վրա: Գօրգո Նուպարը դէմ էր, որ Հայաստանում խորհրդարանական ընտրութիւններ էին կատարւում. Հայաստանը նրա աչքին մի գաւառ էր սոսկ, ուր կարող էր գոյութիւն ունենալ տեղական իշխանութիւն և ոչ թէ խորհրդարան:

Նախընտրական պայքարը եղաւ բաւական տաք. ժողովներ, թռուցիկներ, ընտրական ցուցատախտակներ, խոշեր, անհաշիւ յօդուածներ թերթերում: Կուսակցական գործիչները պատում էին գիւղից գիւղ ու քաղաքից քաղաք և աշխատում ժողովրդականացնել իրենց թեկնածուների ցանկը — ձիշտ և ճիշտ ԵւրոպայՀ օրինակով:

Ամենից լայն ժողովրդականութիւն վայելողը, բնականաբար, Հ· Ց· Դաշնակցութեան ցանկն էր և նրա նշանախօսքերը· Հ· Ց·Դաշնակցութիւնը պահանջում էր «Միացեալ և Անկախ Հայաստան», «Մարդոյ իշխանութիւնը աշխատաւոր ժողովրդին», «Հողը աշխատաւորին», «Գործ՝ գործազուրկին», «Հաց ժողովրդին», «Ժողովուրդների համերաշխութիւն և եղբայրութիւն»:

Ընտրութիւնները տեղի ունեցան նշանակւած ժամանակին և արդիւնքը եղաւ.

Հ· Ց· Դաշնակցութիւնը ստացաւ	230,272 քւէ	— 72 պատգամաւոր
Սոց.-յեղափոխականները՝	13,239 քւէ	— 4 ,,
Թուրքերը՝	8,187 քւէ	— 3 ,,
Անկուսակց. Գիւղաց. Միութիւնը՝	4,224 քւէ	— 1 ,,
Ռուսական ցուցակը՝	1,305 քւէ	— ո՛չ մէկ
Ժողովրդականները՝	481 քւէ	— ո՛չ մէկ
Ասորիները՝	178 քւէ	— ո՛չ մէկ

Նորընտիր Ազգային Ժողովի բացումը տեղի ունեցավ օգոստոս 1-ին։ Բացումից դեռ չատ առաջ Ազգային Ժողովի շենքում տիրում էր եռուն դեղատկական գրակցիաները կատարում էին նախապատրաստական աշխատանքներ։ Բոլորի ուշադրությունը, բնական կերպով, կենտրոնացած էր պատգամական գրակցիայի վրա, որ ամեն օր դուժորում էր նիստերուն մեջտեղ, ուր քննության էին առնում բազմաթիվ ընդհանուր-պետական և ընթացիկ-դրծնական հարցեր։ Ամենից շատ գրաղեցնող խնդիրը երկրի ներքին և ճամատներում տեղեկած լարված դրությունն էր, որի մեղմացման համար մտածում էին մի շարք միջոցներ։

Այդ խորհրդակցություններէն ժամանակ լուծվեց և գրակցիայի ու կառավարության փոխյարաբերության հարցը։ Վարչապետը նշանակելու էր գրակցիայից՝ կուսակցական բարեբազդն մարմնի հանանությամբ. կառավարությունը պետք է լիներ պատասխանատու Ազգային Ժողովի և գրակցիայի առջև։ Գրակցիան իր հրահանգները պիտի ստանար կուսակցության բարեբազդն մարմնից։ Նշանակվեցին Քննիչ-մասնավոր Ազգային Ժողովի նախագահության հինգ անդամներ — մեկ նախագահ, երկու փոխ-նախագահ, ատաղ ու կրտսեր քարտուղարներ։ Քննվեց և հաստատվեց կառավարության յայտարարության նախագիծը, որից յետոյ որոշվեցին վարչապետության և նախարարության քննիչ-մասնավորները։ Կառավարության վերակազմությունը յանձնարարվեց Ա. Խատիսյանին, որը իր հրաւիրելիք նախարարների ցանկը պիտի ներկայացներ գրակցիային ի հաստատություն։ Կազմվեց խորհրդարանական գրակցիայի նախագահության՝ Ա. Ջամալյան, վ. Ազգիկի և Ս. Վրացյան։

Բացառը եղավ հանդիսավոր, Ազգային Ժողովի ատաղ անդամ Ա. Սահակյանի նախագահությամբ, նախարարական ամբողջ կազմի, օտար ներկայացուցիչների և բազմաթիվ հիւրերի ու հանդիսականների ամանակությամբ։ Ազգային Ժողովարանի դահլիճը ենթարկված էր հիմնական վերանորոգման և գարդարված էր գրօչակներով ու զորգերով։

Ա. Սահակյանի բացման հակիրճ ճառը ընդմիջում էր բուռն ծափահարություններով։ «Բարաքացիներ», Միացեալ Հայաստանի ներկայացուցիչներ, ահագ նա, ուղիղ մի տարի առաջ, օգոստ. 1-ին, մեր երկիրը յրկոտատած էր տանկական զորքերի երկաթէ ոտքով, քշեամաս առաջ կախած էր մեր գլխին, մեր հայրենիքը գարձել էր բանտ։ Ես, որպես նախագահ գերագոյն Ազգային Ժողովի, առաջին նիստին, անխոտ հանատով և խորը համոզմունքով յայտարարեցի, որ մեր Հանրապետության նեղ հարիզոնը, որի տանհանները խեղդում էին նրան, պետք է բնդարձակի, մեր հեթոս ու ժարտիրոս ժողովուրդը պետք է լինի տէրը իր փայթյամբ ու գրոքրուցած հայրենիքի (ծափեր)։ Այսօր երջանիկ եմ վկայելու, որ իմ գուշակությունը ոչ միայն արդէն կատարված փաստ և իրականության է գարձել, այլ և մեր ժողովրդի համբը սրբացան, հայրենիքի երկու կէսերը գրկախառ միացել են և յայտարարել մի պետության, միացեալ, անկախ և ազատ Հայաստան, որի պաշտպանության համար մենք երդուել ենք գոհել մեր կեանքը և կռւել մինչև վերջին չունչ (ծափեր)։ Մենք հպարտանում ենք մեր նորածին պետությամբ։ Նա մերն է, հեռու է կատարեալ լինելուց,

բայց մխացնում է իր ամբողջ հոգեմասը: Ժողովուրդը սերում է իր երիտասարդ Հանրապետությունը. նրա մեջ արմատացել է անկախության զգացմունքը. նա երբեք չի բաժանվի նրանից և երբեք չի դիմի: Ճիշտ է, մեր առջև, Տաճկահայաստանի փակ դռների չեմուկ, մեր քշնամին չարունակում է կատարել իր մութ գործերը և ինտրիգներ է սերմանում այս կողմը, մեր Հանրապետության սահմաններում: Բայց ես չեմ կասկածում, որ մենք կը ճեղքենք այդ դռուը մեր մեծ դաշնակիցների հետ միասին, կը տիրենք մեր երկրին, որ ցոլտած է անհամար մարտիրոսների և հերոսների արյունով: Հայ ժողովրդի արեան դառը, անկասկած, պէտք է ստանայ իր նպաստաւոր և արդար լուծումը. այդ դառը մարդկութեան խղճի, պատուի և իրաւունքների դառն է, մարդկային գոյութեան հարցն է, որ ոչ ոք չի կարող ժխտել... Երջանիկ և ոգեւորուած եմ ողջունելու մեր առաջին ընտրած Խորհրդարանը այս պատմական վարչկետնին»:

Ապա ողջունեց դաշնակիցներին ու հարևան պետութիւններին, յանձին նրանց ներկայացուցիչների, և մեր վաստապանծ բանակը, որ հայրենասիրութեան անսահման անձնազոհութեամբ կուում է՝ պաշտպանելով մեր հայրենիքը արտաքին և ներքին քշնամիներից»: Խորհրդարանը խանդավառ ծափերով ու յոտնկայս ցոյց արաւ հայ զօրքին:

Երկրորդ նիստում Խորհրդարանը կազմեց իր նախագահութիւնը: Փարիզից եզած դիմումի վրա, ձևական նախագահ նշանակեց Ա. Ահարոնեանը, իսկ իրական նախագահներ — փոխ-նախագահներ — ընտրեցին Լ. Շանթը և Ս. Արքարատեանը: Քարտուղարներ՝ Ց. Տէր-Ցակոբեանը (աւագ) և Ա. Սաֆրաստեանն ու Ա. Տէր-Միքայէլեանը:

Երրորդ նիստում, օգ. 7-ին, 40 քուէով ընդդէմ 8-ի վարչապետ կարգեց Ա. Խատիսեանը: Վերջնականապէս կազմեցին Խորհրդարանական 12 յանձնաժողովները, որի մէջ մտան բոլոր պատգամաւորները: Որոշեց Խորհրդարանի նիստերը դումարել չաբաթը երկու անգամ՝ երկուշաբթի և ուրբաթ օրերը:

Չորրորդ նիստում, օգ. 10-ին, Ց. Արղութեանի նախագահութեամբ*), վարչապետը յայտարարեց նոր կառավարութեան անդամների ցանկը — վարչապետ և արտաքին գործոց նախարար՝ Ա. Խատիսեան, ներքին գործոց և արդարադատութեան՝ Ա. Դիւլքանդեանեան, պարենաւորման և էվակուատական՝ Ս. Արարատեան, խնամատարութեան և աշխատանքի՝ Ա. Սահակեան, հանրային կրթութեան և արւեստի՝ Ն. Ադբալեան, զինւորական՝ զօր. Ֆ. Ազարատեան: Ցանկը վաւերացուեց 37 քուէով 2-ի դէմ, որից յետոյ վարչապետը կարդաց կառավարական յայտարարութիւնը:

Ներկայացնելով Հայաստանի արտաքին ու ներքին քաղաքական բարդ դրութիւնը, թիւրք-ադրբէջանեան դաւերը, պարենաւորման ու էվակուատական անկայուն վիճակը, անկլիական զօրքերի մեկնումը Կովկասից, հայկական հարցի ընթացքը Հաշտութեան Վեհաժողովում՝ յայտարարութիւնը երկնօրեայ կանգ էր առնում կառավարութեան անելիքների և վարելիք քաղաքա-

*) Ս. Ազարատեանը նախարար նշանակելով՝ երաժարել էր, իսկ Լ. Շանթը դեռ չէր եկել Եւրոպայից:

ՆՈՒՀԵՐԱՐԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ




Լ. ԻՐԱԿԼԻՈՆԱՆ



ԲԱՐ. Ե. ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ



ՏՈՔ. ՊԵՐՄԱՆԵՆՏ ԲԱՐԻՆԵՐԱՆ



ՊՐՈՖ. Ա. ՄԱՐՏԵԼԱՆ

կանոնների վրա. պետականությունը պիտի ձգտէ ստեղծել ամենամատչելի պետական վարչ չահագործելու և մոցնելու մի շարք տնտեսական ձեռնարկություններ, ցոյց տալ պետական օգնությունն կարկինց, հեղեղից, մոլեխից և այլ աբհատիքներից տնտեսապէս քայքայուած աշխատաւոր դասակարգին, ամէն կերպ պիտի խրախուսի մասնաւոր կապիտալի մուտքը մեր երկրի տահմաններէն, պիտի ապահովի նրա տարածումը և բնականոն գարգացումը, հետացնելու համար մեր երկրի ծանր ֆինանսական դրությունը։ Կառավարությունը պիտի ջանայ կարգաւորել հարկային սիստեմը, կիրարկելով եկամտային հարկի պրոգրեսիա սիստեմը՝ ուժեղացնելով ուղղակի հարկերը և հաշիւ տնուղական հարկերի։ Կնքելով արտաքին փոխառութիւններ՝ պիտի փութացնի սեփական բոների հրատարակությունը։ Աչխատանքի ապահովութեան և պաշտպանության համար կառավարությունը մտադիր է հրատարակել ապատ բանւորական օրէնսդրութիւն, կիրարկել վարձատրութեան կենսական նորմաները, հիմնել աշխատանքի և արդիւնաբերութեան տեսչութիւններ, հաւտարար առեանններ, աշխատանքի բորառներ, նպաստել բանւորական կազմակերպութիւնների ուժեղացման, կռւել անգործութեան դէմ տնտեսական և արդիւնաբերական ձեռնարկութիւնների միջոցով։

Ժողովրդական լուսաւորութեան գործի մէջ կառավարութիւնը պիտի ղեկավարւի հետեւեալ սկզբունքներով. — ընդհանուր, պարտադիր, ձրի տարրական կրթութիւն։ Ժողովրդական լուսաւորութեան գործը պիտի հիմնւած լինի աշխատանքի հիմունքների վրա։ Կառավարութիւնը առանձնապէս պիտի գարկ տայ պրոֆեսիոնալ կրթութեան։

Արտաքին քաղաքականութեան մէջ կառավարութիւնը հաւատարիմ պիտի մնայ նոյն քաղաքականութեան, որին յարած է եղել մինչև այժմ հայ ժողովուրդը, և այն հաւատին, որ նա տանում է դէպի գաշնակից պետութիւնները։ Միաժամանակ կառավարութիւնը պիտի ջանայ ստեղծել բարեկամական փոխյարաբերութիւններ հարևան պետութիւնների հետ և փոխադարձ համաձայնութեամբ կարգաւորել Հայաստանի սահմանների հարցը, որ հանդիսանում է միակ պատճառը չարունակական զգոհութեան և քիւրնիպատութեան։ Ոչ մի դէպքում սահմանային վէճերը Հայաստանի և հարևան պետութիւնների միջև չպիտի լուծւեն զէնքի ուժով։

Կառավարութիւնը մեր երկրի ներսում ձգտում է Հայաստանի Հանրապետութեան դեմոկրատական նպատակներին, աչխատելով իրականացնել բոլոր քաղաքական ազատութիւնները։ Այդ բանի համար կառավարութիւնը ենթարկում է հիմնական բարենորոգութիւնների վարչական ամբողջ կազմը՝ ձգտելով ազգայնացնել այն, մարդերի լեզուն գործածութեան մէջ մտցնելով, պիտի փութացնի գեմստւօն (գաւառային ինքնավարութիւնը) և քաղաքային ինքնավարութիւնները։

Մեր երեսատարդ պետութեան կարմակերպման համար ազատութիւն պիտի տայ լայն հասարակական քաղաքական խաւերին, պիտի կիրառի ազգային կուլտուրական լայն ինքնավարութեան սկզբունքը օտարացեղ ժողովուրդների վերաբերմամբ, առանց որի մեր երկրից դուրս թիւն ունենալ չէ կարող։

Հողային հարցի վերաբերեալ՝ կառավարութիւնը պիտի իրականացնի կալւածատիրական, եկեղեցապատկան, վանքապատկան և մասնաւոր պինդորթական բոլոր հողերի ազգայնացումը, պիտի բաժանի այդ հողերը սակաւահող գիւղացիութեան բատ աչխատանքի նորմայի և կարիքի։

Ժողովրդի տնտեսութիւնը բարձրացնելու համար կառավարութիւնը պիտի աչխատի գարկ տալ արդիւնաբերական ուժերի գարգացմանը՝ ցոյց

տալով պետական ամակցուքիւն քաղաքային ինքնավարութեան հիմնարկութիւններին և նրանց մուրհիւնների՝ իրենց քաղաքային և տեսուչական ձեռնարկութիւնների մէջ։

Կառավարութիւնը ամէն կերպ պիտի աշակցի կօոպերատիւներին, ամէն տեսակի մուրհիւնների՝ այս ձևով խրախուսելով ժողովրդական նախաձեռնութիւնը գիւղատնտեսութեան և տնայնագործական արդիւնագործական վարկի չրջանում։

Արդարադատութեան գործը ամուր հիմքի վրա դնելու համար կառավարութիւնը մտցնում է գատաստաններում ընտրական սկզբունքը։ Դատավարութիւնը պէտք է հանրամատչելի լինի դատական նախադէպերի տեսակէտից, Դողովարութիւնը դատարանում պէտք է տարբեր պետական լեզուով, դատավարութիւնը՝ մայրենի։

Երկիրը արտաքին քշնամիներից պաշտպանելու համար պիտի լինի որոշ հասակի պարտադիր գինւորական ծառայութեան վրա։ Կազմակերպւում է ժողովրդական միլիցիա մշտական զօրքի փոխարէն։ Զօրքը պիտի ազգայնացւի։ Միլիցներ պիտի ձևոք առնեն զօրանոցների բարելաւման և գինւորների կեանքի առողջապահական պայմանների կարգաւորման վերաբերեալ։

Կառավարութիւնը ամէն միլիցներ ձևոք պիտի առնի Հայաստանի սահմաններից դուրս մնացած հայերի վերադարձը իրենց հայրենիքը փութացնել՝ նախօրօք երկրի ներսում ապահովելով նրանց գոյութիւնը և տեղեղնելով յարմարութիւններ նրանց համար։

Առանձնապէս կառավարութիւնը պիտի ջանայ մինչև ձմեռ գաղթեցնել նախկին տաճկահայ գաղթականներին իրենց հայրենիքը, հակառակ դէպքում ամէն կերպ պիտի ապահովէ նրանց։

Վերջապէս, հերթական հարց է դառնում վերադարձումը Հայաստանի ուժերկների։ Այս գործի մէջ պիտի ներգաւ դայ դաշնակիցների ակտիւ գործունէութիւնը։

Առաջադրելով ապագայ գործունէութեան այս ծրագիրը, որի հիմունքներն ու կէտերը ես այստեղ ընդգծեցի, նոր կառավարութիւնը յայտարարում է, որ նա յամառօրէն պիտի ձգտի իրականացնել այդ՝ հիմնւելով օրինականութեան վրա»։

Ճաշերդ նիստերում, այս յայտարարութիւնը առնւեց քնութեան և ընդունւեց հակառակ սոց.-յեղ. և անկուսակցական գիւղացիական պատգամաւորների քւէների։ Ընդդիմադիրների կողմից Ա. Յովհաննիսեանը երկար ու մանրակրկիտ վերլուծութեան ենթարկեց կառավարութեան յայտարարութիւնը՝ կանգ առնելով Հայաստանի պետականութեան քերի կողմերի վրա։

Ապա, Ազգ. Խորհրդարանն ու կառավարութիւնն անցան իրենց հերթական աչխատանքներին։

*

Ազգ. Ֆատւիրակութեան առաքելութիւնը Երևան հասաւ հոկտեմբերի կէսերին։ Նա բաղկացած էր Վ. Թէքէյեանից (նախագահ) և դր. Ն. Տէր Յակոբեանից ու Սաք. Յարութիւնեանից։ Այս վերջինի մամնակցութիւնը Ազգ. Ֆատւիրակութեան առաքելութեան մէջ՝ գործանք ու գժգոհութիւն առաջ բերեց Երևանում։

Ինչ որ նոյն օրերին Երևանում գումարւած էր Հ. Յ. Դ. Յոգ. Ընդհ. Ժողովը, Ազգ. Ֆատւիրակութեան հետ բանակցելու հարցն էլ տրւեց նրա

ֆնուքեան։ Ընդհ. ժողովը որոշեց, որ կառավարութիւնը սկսէ բանակցութիւններ, և մշակեց այն պայմանները, որոնք հիմք պիտի ծառայէին, կնքելիք համաձայնութեան։ Որից յետոյ կառավարութիւնը նշանակից իր պատւիրակներին — Ս. Վրացեան (նախագահ), Շ. Մխիթարեան և Մ. Ճոպանեանին, և հոկտ. 29-ին սկսուեցին բանակցութիւնները, որոնք տեւեցին մինչև նոյեմբ. 16։ 9 նիստեր գումարուեցին, եղան և անպաշտօն հանդիպումներ։ Դժուարը չատ շանք թափեցին՝ դանելու համար համաձայնութեան մի ճար, բայց յաջողութիւն չունեցան*)։

Բանակցութիւնների հիմք կազմեց Վ. Թէքէյեանի հոկտ. 21-ին Հայաստանի վարչապետին ներկայացրած հետևեալ գրութիւնը.

«Մշտգիր Հայ Ազգային Գաւառիրական Ժողովոյ Հայաստանի վարչական առժամեայ կազմի մասին։ — Անգրկովկասեան Հայաստանի մէջ ներկայիս իրականապէս (de facto) գոյութիւն ունեցող Հայ Հանրապետական կառավարութեան և նախկին Օսմանեան Հայաստանի հայերը ներկայացնող Ազգային Գաւառիրական մէջև կը կնքուի համաձայնութիւն մը հետևեալ հիմունքներուն վրա։

Ա. Կառավարութիւն։ — 1. Կը կազմուի առժամեայ կառավարութիւն մը, որու նախաբարական խորհուրդը կը բաղկանայ 9—13 անդամէ։

2. Նախաբարական խորհուրդին մէջ կը մտնեն 4—6 արևելահայ և 4—6 արևմտահայ նախաբարներ, իւրաքանչիւր կողմին համար հաւասար թիւով. պատերազմական նախաբարի անձնաւորութիւնը այս նկատութենէն դուրս կը մնայ։

3. Նախաբարական խորհուրդը նոյնպէս կէս առ կէս կը կազմուի՝ առաջին կէսը դաշնակցական և երկրորդ կէսը ժողովրդական և ռամկավար անդամներէն։ Գաւառիրական նախաբարը անկուսակցական է և կանանչի երկու կողմերու համաձայնութիւնովը։

4. Վարչապետը կըլլայ արևմտահայ մը, որ կը ներկայացուի Ազգ. Գաւառիրութեան կողմէ։ Հանրապետութեան ներկայ Նորդրպարանը կը վերածուի անոր Վարչապետի պալատոնը։

5. Քան որում վարչապետը Փարիզ կը մնայ իբրև նախագահ Խաղաղութեան Համաժողովին մեր Հայկական Գաւառիրութեան (տե՛ս յետագայ գլուխը), նախաբարական խորհուրդին մէջ իր անձնաւորութիւնը հազիւ կառնուի՝ թէև, հաճախ և հոսանքի տեսակէտներէն։

6. Վարչապետին Փարիզ մնալուն պատճառաւ, Հանրապետութեան Նորդրպարանը կընտրէ գէթ-վարչապետ մը (vice-président), ով և ինչ հաւատքի ու հոսանքի որ ինքը ուզէ։ Գէթ-վարչապետին ներկայացուցած հաւատքն ու հոսանքը հազիւ կառնուին նախաբարական խորհուրդի կէս առ կէսի կազմին մէջ։

7. Նախաբարական միւս քրիստոնեաները կը բաշխուին կողմերու փոխադարձ համաձայնութեամբը։ Անոնց յատկացումը կը մտնէ կնքելիք վերջնական համաձայնագրի մէջ։

---

*) Բանակցութիւններուն մասնակցութիւնները հրատարակած են առանձին գրքոյկով՝ Ս. Վրացեան. «Հանրապետութեան Ազգ. Գաւառիրութեան և Հայաստանի Հանրապետութեան միջև», 1920, Փարիզ։

8· եթէ ոևէ պատճառով նախաբաբ մը պակսի, իր յաջորդը կը նշանակի միևնոյն հատւածէն և հոսանքէն և միևնոյն եղանակով, որով նշանակւած էր պակսող անդամը:

9· Նախաբաբական խորհուրդի անդամներուն մէջ Դաշնակցական հասանքի պատկանող կէս մասը կը նշանակւի ներկայ Ընդհանրաժողովի մէջ մեծամասնութիւն կազմող նոյն կուսակցութեան բաժինէն (fraction), կամ ուրիշ ոևէ պատասխանատու մարմինէ մը՝ քէ արևելահայ և քէ արևմտահայ Դաշնակցական նախաբաբներու վերաբերմամբ. գալով միւս կէսը կազմող մասին՝ անոնցմէ արևմտահայ նախաբաբները կը ներկայացնին Ազգային Պատւիրակութեան կողմէ և արևելահայ նախաբաբները՝ ժողովրդական կուսակցութեան պատասխանատու մարմինին կողմէ:

10· Նախաբաբական խորհուրդը արտաքին քէ ներքին քաղաքականութեան վերաբերեալ և բացառիկ կարևորութիւն ունեցող որոշումներ տալու ժամանակ — ինչպէս պատւիրագրի յայտարարութիւն և հաշտութեան կնքում, խորհրդարանական ընտրութիւններ, ընկերային բարենորոգումներ և այլն — կը փնտռէ քոյր անդամներու քիւին վրա 7–ի, եթէ 9 է այդ քիւը, և 10–ի, եթէ 13 է, մեծամասնութիւնը:

11· եթէ նախաբաբական խորհուրդը պէտք ունենայ հրահանգներ տալու Պատւիրակութեան, այդ հրահանգները քւէարկւած կը համաքին միայն այն ժամանակ, երբ նախաբաբներու երկու–երրորդը միաբանած են որոշման վրա: Այս պարագային կը դիմէ նաև արտաքսման կամ այլուր բացակայ գտնւող վարչապետին և ուրիշ նախաբաբներու ձայնին:

Բ· Պատւիրակութիւն· — 1· Ամբողջական Հայաստանի մթացեալ կառավարութիւնը կունենայ մեկ Պատւիրակութիւն մը, որ կը ներկայացնէ հայ ազգը Խաղաղութեան Համաժողովին մօտ:

2· Պատւիրակութիւնը կը բաղկանայ 7 անդամէ, որոնց 4–ը արևմտահայ և 3–ը արևելահայ:

3· Պատւիրակութեան նախագահն է Հանրապետութեան կառավարութեան վարչապետը:

4· Պատւիրակութեան կազմին մէջ՝ մէկ կողմէ Դաշնակցական կուսակցութիւնը և միւս կողմէ ոչ–դաշնակցականները ներկայացած կըլլան հաւասար քւով, այսինքն 3 առ 3· նախագահ վարչապետը, իբրև անկուսակցական դէմք կը մնայ ուժերու այս յարաբերութենէն:

5· Պատւիրակութիւնը, նման կառավարութեան, կը մնայ անփոփոխելի մինչև Ամբողջական Հայաստանի Ընդհրդարանի գումարումը: Անդամներու պակասման պարագային՝ անոնց յաջորդները կորոշւին նոյն հաւատւածէն և հոսանքէն և նոյն եղանակով, ինչպէս եղած էր պակսած անդամին համար:

6· Պատւիրակութեան արևմտահայ անդամները կառնւին Արևմտահայ Ազգային Համագումարին կողմէ ընտրած ներկայ Ազգային Պատւիրակութեան անդամներու մէջէն՝ պահելով հոն ներկայացած հոսանքներուն համեմատութիւնը· այն է՝ 2 ոչ–դաշնակցական և մի դաշնակցական· ի փոխարէն 3 արևելահայ անդամները կորոշւին Հանրապետութեան ներկայ Ընդհրդարանի կողմէ· այսպէս՝ 2 դաշնակցական և մի ժողովրդական· — սոյն վերջինը կընտրւի և ցոյց կը տրւի ժողովրդական կուսակցութեան պատասխանատու մարմինին կողմէ:


ՆՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ




ՎԱՀԱՆ ՆԱՐԵԿԱՆ



Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆԱՆ



Գ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ



Ե. ՈՒՐԻՈՒՆԱՆ



ՈՒՐԱՆԻԱ



Հ. ՈՒՐԻՈՒՆԱՆ

7. Պատերազմութիւնը լոյն իրաւասութիւն կունենայ բանակցելու համաձայնական Պետութեանց և Յաղթութեան Համաժողովին հետ և հաւանագնելու՝ Համաժողովին ներկայացած Ճկատահանգրին սահմաններուն մէջ Հայկական դատի լուծումը:

8. Պատերազմութիւնը ինքը կը նշանակէ, երբ պէտք ըլլայ, վերոյիշեալ պետութեանց մօտ Հայաստանի դեսպանները: Եթէ կառավարութիւնը պէտք գտայ նոյն պետութեանց մօտ քաղաքական առաքելութիւններ ղրկելու, նախապէս կը ստանայ այդ մասին Պատերազմութեան հաւանութիւնը:

9. Պատերազմութիւնը, նման կառավարութեան, իր գործունէութեան համար պատասխանատու է Ամբողջական Հայաստանի Ժողովրդարանին:

Գ. Խորհրդարան. — 1. Հանրապետութեան ներկայ Ժողովրդարանը ոյն համաձայնագիրը վաւերացնելէ ետք, երբ անոր հիման վրա կազմուի նոր առժամանակեայ կառավարութիւնը կը ձեռնարկէ իր պաշտօնին, ինքզինք լուծուած կը հռչակէ՝ տալով իր օրէնսդրական իրաւունքները առժամանակեայ կառավարութեան և պարտք դնելով անոր վրա չուտով մշակել ընտրութեանց հրահանգը և ընտրել տալ Ամբողջական Հայաստանի Ժողովրդարանը:

2. Ամբողջական Հայաստանի Ժողովրդարանը, որը իսկապէս նախաժողովրդարան (Prés-Parlement) մըն է, կը գործէ մինչև Սահմանադիր Ժողովի (Constituent) գումարումը, որ միմիայն կարելի է հայկական դատին լուծումէն և հայկական հողամասերու դրաւումէն ետք:

3. Ժողովրդարանը կը բաղկանայ ընդամէնը 80 անդամէ, որոնց կէսը կընտրեն արևմտահայերը և միւս կէսը՝ Արևելեան Հայաստանի ժողովուրդը:

4. Նկատելով, որ Թիւրքահայաստանը գրաւած չէ տակաւին, և արևմտահայ ժողովուրդը մեծ մասամբ երկրէն դուրս կը գտնուի, արևմտահայոց մասին ընտրութիւնները կը կատարուին երկրի մէջ և այլուր գտնուղ բոլոր արևմտահայերու կողմէ, ուր որ Հնար է: Արտասահմանի մէջ ձեւաթղթով արևմտահայերը այսպէսով յանձնառու եղած կը նկատուին, ինչպէս պէտք է յայտարարի կանխաւ, Հայաստանի քաղաքացիներ դառնալու:

5. Ժողովրդարանը օրինաւորապէս իր առաջին նիստը կը գումարէ, երբ ընտրած արևմտահայ ներկայացուցիչներու առնուազն երեք-չորրորդը և Արևելեան Հայաստանի ներկայացուցիչներուն նոյնպէս երեք-չորրորդը հաւաքած ըլլան:

Դ. Վաւերացում և հրապարակում ներկայ համաձայնագրի.—Ներկայ համաձայնագիրը այժմու Ժողովրդարանին կողմէ վաւերացուելէ և երկու կողմէ լիազօրներու ստորագրութիւնը առանալէ ետք՝ կը ստանայ օրէնքի ոյժ և կը հրատարակուի:

Հրատարակութիւնը կը կատարուի բանաձևով մը, որուն մէջ կը յիշուի Թէ նախկին Թիւրքահայաստանն է, որ կազմած է իր կառավարութիւնը և անոր միացած է Անդրկովկասի մէջ իրականապէս (de-facto) գոյութիւն ունեցող Արևելեան Հայաստանի Անկախ Հանրապետութիւնը, Թէ երկուքը ընդունած է իրրև առժամեայ մայրաքաղաք և Թէ Ամբողջական Հայաստանի վերջնական մայրաքաղաքը պիտի ըլլայ նախապէս Թիւրքիոյ մաս կազմող Հայաստանի քաղաքներէն մէնն:

Այս ծրագիրը տասօրեայ է՝ Թէ՛ իր ոգով և Թէ՛ ժամանակ, ետևը Թեամբ: Նա ամէն մի առղից անասհման արհամարհանք է բուրում դէպի էիրականապէս գոյութիւն ունեցող Հայ Հանրապետութիւնն ու նրա վարիչ-

ներդր և, ընդհակառակը, ամէն բան տապրում–կենտրոնացում էր Փարիզի մի խումբ ազգայինների ձեռքը։ Ըստ վ. Թէքէյեանի ծրագրի, Գօղտ փաշա Նուպարը, որ լինելու էր միաժամանակ և՛ վարչապետ, և՛ Գաւառիքականութեան նախագահ՝ օժտուած արտակարգ լիազօրութիւններով՝ Փարիզից պիտի վարէր Հայաստանի քաղաքական բախտը, իսկ Երևանում նստած նախարարները պիտի կազմէին տեղական կառավարութիւն, մի տեսակ հազգային գաւառական խորհուրդ։

Գօղտ Նուպարի պայմաններդ մանրակրկիտ քննութեան առնելուց մի շարք նիստերում, և Նոյ. 4–ին կառավարական պատւիրակութիւնը տուց հետևեալ պատասխանները պատասխանը. —

«1. Փարիզի Գաւառիքականութիւնը կազմել առանց հաւասարական և կուսակցական խորհրդեան. ցանկալի է, որ արևմտահայերը այնտեղ մեծամասնութիւն լինեն, իսկ կուսակցական տեսակէտից Դաշնակցութիւնը կարող է լինել փոքրամասնութիւն։ Այսպէս, եթէ Գաւառիքականութիւնը կազմած է երեք անդամից, Դաշնակցութիւնը կը տայ մէկ անդամ, իսկ մեծ հինգից՝ երկու անդամ։ Երկու դէպքում էլ Գաւառիքականութեան մէկ անդամը պիտի լինի անկուսակցական։ Համաձայն ենք, որ պրն. Գօղտ Նուպարը լինի Գաւառիքականութեան նախագահ, սակայն, Գաւառիքականութիւնը պիտի գործէ Հայաստանի Հանրապետական կառավարութեան հսկողութեամբ։

2. Կառավարութեան կազմի մէջ Դաշնակցականները պիտի ունենայ կէսից մէկ անդամ աւելի։ Գաւառիքականութեան նախագահը և վարչապետը պիտի լինեն տարբեր անձեր։ Թէ վարչապետը և մեծ բոլոր նախարարները պէտք է մնան երկրում և մեր երկրում գործեն։ Ընդունելի է Ազգային Գաւառիքականութեան ներկայացուցիչների առաջարկը, որ Գօղտ Նուպարին տրուի վարչապետութիւն, թէկուզ իրրև լոկ տիտղոս։

3. Ներկայ Պարլամենտի լուծման մասին խօսք լինել չի կարող, նա պէտք է շարունակէ իր գործունէութիւնը։ Անհնարին է նաև դադար տալ մինչև Հանրապետութեան առաջին բնակչութեան ուսումնասիրութիւն։ Համաձայն ենք, և դա մեր փափաքն է, որ Պարլամենտի արևմտահայ անդամները թիւը հաւասարեցնի արևելահայերին։ Կրճատել պատգամաւորների թիւը իրականում հնարաւոր չէ։ Արևմտահայ նոր պատգամաւորների մուտքը Պարլամենտի մէջ պէտք է կատարել լրացուցիչ ընտրութեամբ։ Մենք կարծում ենք, որ ընտրութիւններ պիտի նշանակուեն Հայաստանի այն մասերում, ուր դեռևս ընտրութիւն չի եղել, ինչպէս, օրինակ, Կարսի չորքսը, Կիլիկիա, և արտասահմանեան գաղութներում, այսինքն՝ Պոլիս, Բալկաններ, Եգիպտոս, Ամերիկա, Մեծ Ծովի ափերը և այլ տեղեր, ուր հնարաւոր է։ Ընտրութիւնները պիտի լինեն Հայաստանի օրէնքներով, որոնք պէտք է յարմարուեն տեղական պայմաններին։ Արևմտահայերի վերաբերմամբ կարելի է ընդունել, որ մի պատգամաւոր ընտրի ոչ քէ 20,000–ից, ինչպէս եղել է Հայաստանի Պարլամենտի ընտրութիւնը, այլ աւելի փոքրաթուից։ Նկատելով Պարլամենտի անդամների այժմեան կազմը հասարակական տեսակէտից, անհրաժեշտ կը լինի ընտրել և 51 պատգամաւոր, որով հաւասարները թիւով կը հաւասարուեն իրար, իսկ Պարլամենտի անդամների քնհհանուր թիւը կը դառնայ 131։

4. Գալով Ազգային Գաւառիքականութեան վերջին առաջարկին, որ Հայաստանի Հանրապետութիւնը իրեն մնացած յայտարարի անկախ թիւերից

Հայաստանին, սկզբունքային որև է առարկությունն չունենք, սակայն, չենք տեսնում այն ժամը, որ քաղաքական տեսանկյունից պայմաններում կարող էր հնարաւոր դառնալ այդ ակտը։ Ընդհակառակը, քաղաքական դէպքերի զարգացման ուղղութեամբ, Հայաստանի ներկայ հանրապետութիւնը դարձել է յենաքարը, որի վրա կանգնած՝ հայ ժողովուրդը պիտի չարունակէ Հայաստանի ամբողջացման գործը։ Մենք չենք կարողանում երևակայել Հայաստան առանց Տաճկահայաստանի կամ առանց Թուրաստայաստանի։

Ինչպէս տեսնում ենք, ո՛չ միայն ոգով, այլ հիմնական մտածելակերպով էլ տարբեր բևեռներ էին այս երկու հոսանքները։ Մէկը ձգտում էր Հայաստանը փոխադրել Փարիզ դէպի դաշնակցականութիւնը, միւսը կապել էր մայրենի հողին ու չէր ուզում պոկուել։ Մի մտածելակերպ, որ տիպական մնաց մինչև վերջ։

Նոր բանակցութիւններից, մի չարչ պաշտօնական և անպաշտօն հետևերից ու փոխադարձ դիմումներից յետոյ, կողմերն, ի վերջոյ, յանգեցին հետևեալ եզրակացութեան։ Հանրապետական պատւիրակութիւնը, իբրև վերջին պայման, ընդունում էր, որ

Ա. Ներկայ Փարլամենտը պիտական բիւրոյին քննելուց և վաւերացնելուց յետոյ 1—2 ամսով արձակուրդ կը առնեայ։

Բ. Անմիջապէս կը ձեռնարկի լրացուցիչ ընտրութիւնների. կընտրուեն 51 արևմտահայ պատգամաւորներ ևս։

Գ. Ընտրութիւնները կը կատարուեն Հայաստանի ընտրական օրէնքներով՝ տեղական պայմաններին յարմարացնելով։

Դ. Ընտրական գործի կազմակերպութիւնն ու ղեկավարութիւնը կը առանձնի Գօղտ Նուպարի պատւիրակութիւնը։

Ե. Միացեալ կառավարութիւնը կը կազմւի անմիջապէս, բայց եթէ պահանջնեն, կարելի է կազմել և բիւրոյին քննութիւնը վերջացնելու ու Փարլամենտ դառնալու ժամանակ։

Զ. Կառավարութիւնը կը կազմւի 9 նախարարից — 5 դաշնակցական, 4 ոչ-դաշնակցական։ Վարչապետը դաշնակցական։ Համաձայն ենք, որ արտաքին գործոց նախարարը լինի Գօղտ Նուպարը։

Է. Նկատի առնում ենք, որ միացեալ կառավարութիւնը կր մնայ մինչև լրացած Փարլամենտի գոյութիւն ունենալը։

Ը. Համաձայն ենք, որ Միացեալ Պատւիրակութեան նախագահը լինի Գօղտ Նուպարը։ Համաձայն ենք, որ Միացեալ Պատւիրակութեան մէջ դաշնակցականները լինեն փոքրամասնութիւն։

Թ. Համաձայնութեան ակտը կը յայտարարենք այն մտքով, որ Տաճկահայաստանն ու Թուրանայաստանը միացել են միմեանց։

Գօղտ Նուպարի առաքելութեան վերջնական պայմանները.

Ա. Միացեալ Պատւիրակութիւն Գօղտ Նուպարի նախագահութեամբ։

Բ. Միացեալ կառավարութիւն 9 կամ 11 նախարարներից, որոնցից պատերազմական նախարարը չէզոք, իսկ մնացեալները՝ կէս առ կէս — 4 արևելահայ, 4 արևմտահայ և 4 դաշնակցական ու 4 ոչ-դաշնակցական։ Ամէնքն, ամենը կընեն նաև ընդհանրի 10 անձ կազմած կառավարութիւն մը դաշնակցական մեծամասնութեամբ — 5 դաշնակցական, 4 ոչ-դաշնակ-

ցական և պատերազմական նախարարը չէզոք՝ «պայմանաւ, սակայն, որ այդ կառավարութիւնը ամէն բացառիկ կարևորութիւն ունեցող որոշումները — արտաքին քաղաքականութեան և ընկերային բարենորոգումներու վերաբերեալ որոշումները, ինչպէս և պատերազմական տրուելիք հրամանագները — կայացնէ երկու-երրորդի մեծամասնութեամբ, կամ լաւ եւ՝ օրթ ձայնով տասնի վրայ»:

Գ· Գօղտս Նուպարին տալ արտաքին գործոց նախարարի պաշտօն կամ Հանրապետութեան գերագոյն ներկայացուցչի դիրք:

Դ· Ներկայ Ժողովրդարանը պէտք է արձակուի մինչև սեպտեմբեր պատգամաւորների ընտրութիւնը և նրանց երեք քառորդի ներկան հաստատը: Կարելի է արձակուրդ տալ բիւզիչի քննութիւնից յետոյ, բայց կօալիցիոն կառավարութիւնն էլ գործի պիտի սկսէ Ժողովրդարանի արձակուրդից յետոյ:

Ե· Արևմտահայ պատգամաւորների ընտրութեան նախաձեռնութեան և ընտրական օրէնքի որոշման իրաւունքը պատկանում է Ազգ· Պատւիրակութեան և կամ կօալիցիոն կառավարութեան:

Զ· Ներկայ Ժողովրդարանը արձակուրդի ընթացքին կարող է վերատին նիստ գումարել բացառիկ խնդիրների առթիւ՝ պայմանաւ, որ նշանակուած հարցից զատ ուրիշ որև է բանով չզբաղուի:

Է· Համաձայնութիւնը կը յայտարարուի այն մտքով, որ Ռուսահայաստանն է միացել Թիւրքահայաստանին:


ԵՔէ ուշի ուշով քննենք երկու կողմի տեսակէտները, կը տեսնենք, որ անհամաձայնութեան գլխաւոր առարկան մնացել էր Ժողովրդարանի արձակուրդի ժամանակը· երևանցիք համաձայնւում էին Ժողովրդարանին տալ ժամանակաւոր արձակուրդ, փարիզցիք պնդում էին, որ արձակուրդը լինի անորոշ ժամանակով: Եւ հակառակ երևանցիների ծայրահեղ հաշտասիրութեան և ազատ դիւմունների, Փարիզը մնաց անյողդողդ: Ցրդ նիստում Վ· Թէքէյեանը յայտարարեց· «Եզրակացնելով մեր բոլոր ստացած պատասխանները դուսի առաջարկներուն՝ ես պէտք է հաստատեմ, որ համաձայնութեան ո՛չ մէկ կէտ չկայ վերջին առաջարկներուն վրա, և կը մնայ, որ մենք գրաւոր կերպով արձանագրենք այդ: Ես այլևս ոևէ հնարաւորութիւն չեմ տեսնար միութիւն կայացնելուն»:

Գարգ էր եզրակացութիւնը· բանակցութիւնները խզւում էին: Եւ նոյ· 6–ին, վերջին նիստում, տզրաւոր կերպով արձանագրւեց այդ խզումը:

Ջուտ պատմական տեսակէտից մօտենալով խնդրին՝ պէտք է ասել, որ Հայաստանի կառավարութիւնն ու ղեկավար շրջանները իրենց մեծամասնութեան մէջ անկեղծօրէն ուզում էին համաձայնութեան գալ Ազգ· Պատւիրակութեան հետ: Մասնաւորապէս հանրապետական պատւիրակութիւնը բոլոր հնարաւոր և անհնար միջոցները գործ դրեց՝ համոզելու համար Հ· Յ· Դ· Ընդհ· Ժողովին, Ժողովրդարանի ու կառավարութեան անդամներին՝ անելու մի չարչ կարևոր դիմումներ, որոնց մասին, ուրիշ պայմաններում, խօսելն իսկ անմտութիւն կը լինէր: Բայց Գօղտս Նուպարի մարդիկ չըմբռնեցին վայրկեանի լրջութիւնը և մասամբ էլ ցոյց գնացին երևանի ընդդիմադիր շրջանների սխալ ներչնչումներին: Մի քանի տարի յետոյ, երբ խչխանութեան գլուխ ոչ քէչ դաշնակցական ընկերվարականներն էին, այլ



Հ. Յ. Գ. 30ՊՏ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՒԱՔԱԾ



Ն. ԱՐՔԱԼԵԱՆ
(Համբ. Կրթ. Ն. տես. նախ.)



Ա. ՉԻԼԻՆԳԻՐԵԱՆ
(Ընդհանուր. Քարտուղար)

Լենինի աշակերտները, նրանք փորձեցին երևան մտնել չատ աւելի համեստ պայմաններով—«լուծմնաւորի դերասաբոյծ», ինչպես անողոքօրէն բնորոշեց նոյն ինքն Վ. Թեքէյեանը — բայց նրանց երեսին նայող չեղաւ:

Հակառակ Վ. Թեքէյեանի խզումի յայտարարութեան ու մեկնումին, վարչապետ Ա. Խատիսեանը դեկտ. 9-ին Գօղտ Նուպարին ուղարկեց մի ընդարձակ նամակ՝ պարզելով բանակցութիւնների ընթացքն ու վախճանը և աշխատելով համոզել, որ Ազգ. Պատիւրակութիւնն ընդունէ կառավարութեան պայմանները: «Ես ուզում եմ հաւատալ, գրում էր Խատիսեանը, որ Ազգ. Պատիւրակութեան առաքելութեան մեկնումը Երևանից դեռ ևս բանակցութիւնների վերջնական խզումը չի նշանակում: Սիրում եմ յուսալ, որ հարցի մանրամասնութիւնների ծանօթանալուց յետոյ, դուք բաւարար կը համարէք մեր հարցի կողմից առաջարկած պայմանները և գործնական քայլ կառնէք երկուսութեք ցանկալի համաձայնութիւնն իրականութիւն դարձնելու համար: Եւ ինչ էլ լինի մեր վճիռը, դուք միշոցներ մեզ կառնէք մեր հեղինակաւոր ազդեցութեամբ Քոյլ չտալու հրապարակային պայքարի վերսկսման, որ արտաքին աշխարհում այնպիսի տպաւորութիւն կը թողնէ, որ, իբր թէ, մեր մէջ գոյութիւն ունի էական անհամաձայնութիւն ու պայքար ազգային—քաղաքական հիմնական հարցերի վերաբերմամբ: Ընդհակառակը, մտերիմ ծանօթութիւնը մեր ներկայացուցիչների հետ ցոյց տուց, որ Հայաստանի քաղաքական այսօրուայ ճակատագրին վերաբերուող գլխաւոր հարցերի նկատմամբ մեր մէջ հայեացքների նոյնութիւն է տիրում և նկատող անհամաձայնութիւնը, աւելի չուտ, արդիւնք է փոխադարձ անվստահութեան, ինչ որ դժուար չպիտի լինի վերացնել գործի ընթացքում»:

Այսպէսով, Վ. Թեքէյեանի հպումէն յայտարարութեան Հայաստանի կառավարութիւնը պատասխանում էր ջղագարշ-ով և առաջարկում բանակցութիւնները շարունակել: Եւ այս Խատիսեանի անհատական կարծիքը չէր մխայն. այդպէս էր մտածում և բանակցող պատւիրակութիւնը, որի նախագահի ձեռքով էր գրւած Խատիսեանի ուղարկած նամակը: Այդպէս էին մտածում և Հորհրդարանի ու կառավարութեան ղեկավար անդամները:

Երևանում այն յոյսն ունէին, որ հէնց որ Թեքէյեանի առաքելութիւնը վերադառնայ Փարիզ ու զեկուցանէ Հայաստանի դէպքերի ու տրամադրութիւնների մասին, Ազգ. Պատւիրակութիւնը կը փոխէ իր անհաշտ ընթացքը և կը չտապէ ընդունել կառավարութեան պայմանները: Դէպքերը չարդարացրին այդ յոյսերը: Գօղտ Նուպարի առաքելները գալիս հասան Քէ չէ՝ սկսուեց մի կրքոտ ու քունաւոր բանակռիւ. Երևանի բանակցութիւնների չուրջ, որ լոյն ալիքներով տարածուեց բովանդակ գաղութահայութեան մէջ: Ազգ. Պատւիրակութիւնն էլ տարուեց այդ քունաւոր մթնոլորտով, և Հայաստանի կառավարութեան պարտած ձեռքը մնաց կախուած օդի մէջ:

Հետզհետէ, ամէնայն դէպքերը սկսեցին դառնալուել յօդուտ «Աբարատեան Հանրապետութեան»-յունեաց. 19-ին Գերագոյն Հորհուրդը ճանաչեց նրա դէ ֆակտօ գոյութիւնը. Երևանը սկսեց դառնալ քաղաքական հետաքրքրութեան առարկայ: Աւելի և աւելի սկսեց ակնկալուել դառնալ, որ Բնւրքահայկական խնդիրը կարող է լուծուել միայն որոշ կապակցութեամբ Հայաստանի Հանրապետութեան հետ: Գուցէ կային և ուրիշ պատճառներ,

որոնք առավ բերքին յանկարծական փոփոխություն Ազգ. Պատւերակութեան ընթացքում. փետր. 18–ին, ուրեմն, երբ անի բանակցութիւնների վերջնանուց երեք ամիս յետոյ, Հայաստանի կառավարութիւնը Գողտ Նուպարից տեղեկացաւ մի հեռագիր, որով փաշան յայտնում էր, թէ ինքը ընդունում է այն պայմանները, որ Վ. Թեքէյեանը մէջբերել էր ընդունել: Միևնոյն հեռագրում Գողտ Նուպարը առանձնակում էր անյապաղ մեղմելու Փարիզի Պատւերակութիւնները և խնդրում էր, որ ինքը ներկայացուցիչ է նշանակել Ս. Ճարութիւնեանին ու Ա. Մխիթարեանին, որոնք Հանրապետութեան կառավարութեան հետ պիտի կազմեն միացեալ կառավարութիւն:

Երևանում հաչտւել էին արդէն այն մտքի հետ, որ Ազգ. Պատւերակութիւնը մնջմէյ է կատավարութեան պայմանները: Հիմա ի՞նչ պատահեց, որ յանկարծ, ընդունում է: Եւ ևթէ արևմտահայ ու արևելահայ խոտա կառավարիչն պիտի կազմեն, ինչպո՞ւ են Ս. Ճարութիւնեանն ու Ա. Մխիթարեանը — երկուսն էլ ուսւահայ ծնունդ հակադաշնակցականներ ու կառավարութեան դէմ ազիկայոյզ պայքար մղողներ: Պարզ էր, որ մէջտեղը ինչոր անչիտակ խաղ էր խաղացւում, բայց ի՞նչ — երևանում չէին հասկանում: Միակ բացատրութիւնը այն էր, որ Հայաստանի Հանրապետութեան իրական ճանաչումից յետոյ Գողտ Նուպարի քաղաքական բանծնիքները սկսել էին ընկնել, և նա չտապում էր ա՛յդ ձևով փրկել դրութիւնը:

Մարտ 25–ին տեղի ունեցաւ հանդիպում Ս. Ճարութիւնեանի և Հանրապետական պատւերակութեան նախագահ Ս. Վրացեանի միջև վարչապետ Ա. Խատիսեանի ներկայութեամբ: Ս. Վրացեանը բացատրեց, որ հոկտեմբերից ի վեր կացութիւնը մեծ չափով փոխուել է. նախ՝ հայկական անկախութեան ճանաչման փաստով նոր կացութիւն է ստեղծել արտաքին ասկառում. երկրորդ՝ Ազգ. Պատւերակութեան յարուցած պայքարը այնքա՛ն է յուզել կրքերը, որ Հայաստանում կասկիծքայի գաղափարը բոլորովին վարկաբեկուել է: Պէտք է ցաւել, որ հնչեմէյերին սկսած բանակցութիւնները պատահանքը միայն փետրուարին տուեց, մինչդեռ Ազգ. Պատւերակութիւնն ամէն հնարաւորութիւն ունէր աւելի առաջ ասելու իր վերջնական խօսքը: Ներկայ պայմանները աւելի քան երբեք պահանջում են, որ Հայաստանն ունենայ ուժեղ և ժողովրդական վատահութիւնը վայելող կառավարութիւն: Այն միջոցները, որ առնեցնել են Ազգային Պատւերակութեան կուսակիցները, այն, ևթէ ոչ քչնամական, առնւազն պաղ վերաբերմունք, որ նրանք ցոյց են տալիս դէպի Հանրապետութիւնը, աւելի ևս գժւարացնում է հոկտեմբերին առաջարկած կոալիցիոն ձևով հզիենակառար կառավարութեան կազմակերպումը. հոկտեմբերից ի վեր կացութիւնը մի շարք տեսակէտներից փոխել է»: Եւ առաջարկում էր սպասել մինչ Հ. Ը. Դաշնակցութեան մասնակ գումարելիքը խորհրդաժողովը, որը քննելու էր և այս հարցը:

Ը. Ճարութիւնեանը, ընդհակառակը, այդ բոլոր մտահոգութիւնները համարում էր հարցից խուսափելու մի միջոց: Նրա համար դրութիւնն ու անելիքը պարզ էր. «Ձյժժա մեզ հարկաւոր է փոխադարձ համաձայնութեամբ

որոշել միայն երեք հարց. նախաբարեական պաշտօնների բաժանումն, նախաբարեական թեկնածուների որոշումն և արտաքսհմանեան մեր 2 պատւիրակութիւններից կազմել մէկ պատւիրակութիւն»: Մ. Ճարուքիւնեանը ամէն կերպ աշխատեց համոզել, որ Գօդոս Նուպարի առաջարկն ընդունւի անայլայլ, սակայն, այս անգամ էլ հակառակ կողմը մնաց անդրդեւելի: Եւ պէտք է ասել, որ կառավարութիւնը եթէ ուզենար էլ, չէր կարող ուրիշ կերպ վարւել. Ազգ. Պատւիրակութեան կատարած հակահանրապետական աշխատանքների մասին այնպիսի մոայլ տեղեկութիւններ էին ստացւում Փարիզից, Ազգ. Պատւիրակութեան կուսակից մամուլը այնպիսի քունաւոր լեզու էր բանեցնում, որ «Գօալիցիայի» գաղափարը բոլորովին վարկաբեկ էր եղել Հայաստանում:

Այսպէս վերջ գտան անառողջ պայմաններում անառողջ մտայնութեամբ սկսած բանակցութիւնները, և Ազգ. Պատւիրակութիւնը չարունակեց մնալ խռովածի և ընդդիմադիրի դերում Հայաստանի Հանրապետութեան հանգէպ:

ԳԼՈՒԽ Ը.

ՄԱՀՄԵՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

ԳՆԴ. ՀԱՍԿԵԼԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1919 Թւականի Հայաստանի ներքին կեանքի ամենացաւոտ երեւոյթը մահմետական հակապետական շարժումներն էին՝ կազմակերպւած Թիւրքիայի և Ադրբէջանի ձեռքով՝ Հայաստանի անկախութիւնը խորտակելու դիտաւորութեամբ:

Հայաստանի Հանրապետութեան գոյութեան առաջին օրից իսկ երկրի ներսը ապրող և Ադրբէջանի ու Թիւրքիայի մահմետական տարրը քննամական դիրք բռնեց դէպի հայ պետականութիւնը: Ներքին Թրքութիւնը չէր ուզում հաշտուել Հայաստանի անկախութեան հետ և ձգտում էր միանալ կա՛մ Ադրբէջանին, կամ Թիւրքիային: Ադրբէջանն ու Թիւրքիան էլ, իրենց հերթին, աշխատում էին միմեանց ձեռք մեկնել, միանալ Հայաստանի վրայով: Միութեան կամուրջ պէտք է լինէր Ղարաբաղ—Զանգեզուր—Նախիջեան չերտը, ներս, և Սուրմալուն ու Կարսը:

Թիւրքերի պարտութիւնից ու կովկասից հեռանալուց յետոյ, Թիւրք հրամանատարութեան դրդումով, Հայաստանում ու Վրաստանում, ամէն տեղ — Ալաշկերտ, Ախալցխա, Կարս, Սուրմալու, Շարուր—Նախիջեան և այլն — կազմւեցին տեղական «անկախ հանրապետութիւններ» իրենց կառավարութիւններով՝ «չուրա»-ներով և սկսեցին պայքարել Հայաստանի ու Վրաստանի տիրապետութեան դէմ: Հայաստանի հողի վրա կային «Արեւմտեան հովկասի հանրապետութիւնը» Կարսի «չուրա»-յով և Արեւելեան հովկասի կամ «Արաքսեան հանրապետութիւնը», որի մէջ մտնում էին Սուրմալուն, Զանգի և Վեդի բասարները, Մէյլին, Շարուրն ու Նախիջեանը՝ Նախիջեան կենտրոնով: Այս «հանրապետութիւններից» իւրաքանչիւրը, իր հերթին, բաժանւում էր աւելի փոքր, զաւառական մի՛ութիւնների՝ իրենց տեղական «չուրա»-ներով: Այդ «հանրապետութիւնները» պահում էին սեփական «քանակներ»՝ գինւած Թիւրքական զէնքերով, զնդացիրներով ու հրացաններով, Թիւրք սպաներ ու չաւուշների հրամանատարութեան տակ: Ադրբէջանը հայթայթում էր նրանց դրամը: Թիւրքիան և Ադրբէջանը ուղղութիւն էին տալիս նրանց գործունէութեան:

Հայաստանը ներսից պայթեցնելու համար մասնաւորապէս մեծ ճիգ էր թափում Ադրբէջանը, որը 1919թ. մարտին դիւանագիտական ներկայացուցչի պաշտօնով Երեան ուղարկեց իր մոլեռանդ համաթիւրքապաշտ

գործիչներից մէկին՝ Ալեն Թէքինակին՝ պաշտօն տալով նրան՝ Հայաստանի ներսում մահմեդական խռովութիւններ կազմակերպելու*):

Ալեն Թէքինակին Երևան հասաւ մարտ ամսի քսաններին: 22-ին նա այցելեց էվմիածին կաթուղիկոսին, և ահա թէ ինչ է հեռագրում իր կատարածութեան մասին. «Նա (կաթուղիկոսը) չնշանց հայերի և մահմեդականների բարեկամութեան անհրաժեշտութիւնը և խոստացաւ կոչ ուղղել հայ ժողովրդին՝ հաշտ ապրել մահմեդականների հետ: Կաթուղիկոսը ինձ պահեց ճաշի և մինչև վերջին րոպէն չհեռացաւ ինձնից: Նաև չլինելու պատճառով էվմիածին վանքն ու կաթուղիկոսարանը գրկած են ելեկտրական լոյսից: Ես խոստացայ մեքենաների համար նաև տալ, ուստի խնդրում եմ չուտով առկառներով նաև ուղարկէք կաթուղիկոսի համար»: Իւ. նոյն հեռագրում, ծանրագրով, աւելացնում է. «Ուղարկեցէ՛ք միայն 200 փութ նաև. աւելին կարող է կառավարութիւնը օգտագործել... Մարտ 14-ին Հայաստանը Թիֆլիսից առացաւ 14 մէլիոն ռուբ, բայց եթէ դրամական տնտեսութեան դժուարութիւններ հանէք, չուտով կընկնի ծանր դրութեան մէջ: Հացի բացակայութեան պատճառով Հայաստանը չի կարող ապրել ինքնուրոյն կեանքով: Հնդկի գինուորները ուղևորուեցին դէպի Նախիջևան: Եթէ անհրաժեշտ գտնէք, կարող կառավարութեան հետ կապ կը հաստատեմ»:

Ուրիշ, առաջին իսկ քայլից, Հարևան գործ հանրապետութեան ներկայացուցիչը զգուշութիւններ հանելուց մասին է մտածում:

Ապրիլ 10-ին Թէքինակին մանրամասն տեղեկութիւններ է հեռագրում Բաքու հայկական բանակի մասին, իսկ ապր. 16-ին, թէ՝ վէրսերի համաձայն անպէտացած կարսը յանձնել են հայերին. պատրաստուում են յանձնել նաև Շարուր—Նախիջևանը: Ինդրում եմ ստանալ և հարցնել անպէտացնելուն. եթէ ճիշտ է, կարծում եմ, անհրաժեշտ է բողոքել Հնդկաստանի, Թուրքիստանի, Աղրանիստանի, Մալայեան կղզիների և Կովկասի ողջ մահմեդականութեան, նոյնպէս և Հաշտութեան վեհաժողովին ընդդէմ անպէտացնելու այն ցանկութեան, որով նրանք մի քանի միլիոն մահմեդականներին ենթարկում են քսուլ կէս միլիոն հայերենց:

Ապա, մի չարք հեռագրերով, հաղորդում է Նախիջևանի գրաւման նախապատրաստական աշխատանքների մանրամասնութիւնները և ապրիլ 29-ին № 72 հեռագրով չտալ հարցնում է. «Երբէ Նախիջևանը դիմադրութիւն ցոյց տայ հայկական զօրքերին, կառավարութիւնը ի՞նչ օգնութիւն կը հասցնէ և զօրքեր կուղարկէ՞, քէկուզ կամաւորների անուն տակէ:

Մայ. 30-ին, հետևելը մեծ դուժգնութեամբ, երևան են հասնում Ապրիլեանի զօրավարները Նախիջևանցիների և Մախինակին՝ Նախիջևան գնալու համար: «Զօր. Թոմսընը Երևանում, հեռագրում է մայիս 1-ին Թէքինակին, արգելից Մախինակինին անցնել Նախիջևան՝ այն պատճառաբանութեամբ, թէ այդ չբխանը գտնում է Հայաստանի կառավարութեան վարչութեան ներքոյ: Մախինակին զրամները յանձնեց ինձ. սպասում եմ ցուցմունքների, թէ

*) Ալեն Թէքինակին Երևան հասնելու առաջին իսկ օրից Հայաստանի արտաքին գործոց նախարարութիւնը ծանօթ էր գրա ծանոյագրին. Ալեն Թէքինակին ուղարկած և ստացած բոլոր հեռագիրները, նաև մեզ իրեն հասնելը, յայտնի էին դաշնակ Հայաստանի կառավարութեան: 1920թ. մայիսին, Ադրբէջանի խորհրդայնացումից յետոյ, այդ հեռագրերը հրատարակիցին ասանձին գրքոյկով — «Հետաքրքրական փաստաթղթեր (Ադրբէջանի դաշնակական գործունէութեան մի էջ), 1920թ. Երևան, հրատ. «Հայաստան»-ի:

ինչպէ՞ս գործադրեմ Նախիջևանին յատկացած դումարները: Նախիջևանական հարկադրված է վերադառնալ: Անգլիացիք զրաւեցին Մակինակիի վազոնը»:

Ու երեք օր յետոյ, մայիս 4-ին, իրար յետևից ջարդ է 2 հեռագիր: առաջինով հաղորդում է. «Հայկական դիզերը ուղևորուեցին դէպի Նախիջևան: Հայաստանի վրա ճնշում գործ դնելու համար անհրաժեշտ եմ գտնում, որ անյապաղ հարկական սահմանների վրա կենտրոնացուն մեր զօրքերը: Նախիջևանի ազգաբնակութիւնը պատրաստ է ցոյց տալու գիմադրութիւն... Գիւրիթեռում կանգնած է մեզ գէմ գունդ՝ քեռի կոմսով»: Երկրորդ հեռագրով խնդրում է. «Շուտով պատասխանեցէ՛ք 29 ապր. № 72 հեռագրիս: Նախիջևանցիները ինձ հարցնում են՝ ինչպէ՞ս վարուիլ, և արդեօք Ազրբէջանը օգնութեան կը գա՞յ, եթէ իրենց հայերին գիմադրութիւն ցոյց տան»:

Մայիս 5-ին Բաքուի կառավարութիւնը պաղ ջուր է լցնում Խան Թէքինակիի գլխին. արտ. գործ. նախ. պաշտօնակատար Զիւթինխանովը հեռագրում է. «Ինչպէ՞ս Նախիջևան զօրամասեր և համատրներ ուղարկելու մասին ներկայումս խօսք լինել չի կարող. այդ հարցը եռանդուն կերպով քննւում է կառավարութեան և (խորհրդարանի) ատագների խորհրդի մէջ: Հետևանքը կը հաղորդեմ: Եռանդային բողոքեցէք Նախիջևանը գրաւելու նպատակով ձեռնարկուղ ամէն տեսակ գործողութիւնների և Ազրբէջանի ինքնիշխան իրաւունքների նսեմացման դէմ»:

Իսկ մի օր յետոյ, մայիս 5-ին, վարչապետ Խան Նոյսկին հրամայում է. «Ինչպապղ կապ հաստատեցէք կարսի կառավարութեան հետ: Ցոյց տուէք նրան ամէն տեսակ աջակցութիւն. իմացէ՛ք, թէ ի՞նչ կարիք ունի. հետաքրքրեցէք մեզ, որ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնենք»:

Թէքինակին Նախիջևան է ուղարկում իր գիւղատրական կցորդին ու զործակարին, որ ոտքի հանեն մահմետականներին: Եւ մայիս 9-ին հեռագրում է. «Մինչև ապր. 27-ը գինուորական կցորդն ու գործակարը պէտք է Նախիջևան լինէին, բայց նրանցից զեռ տեղեկութիւն չի ստացուած»:

Մայիս 12-ին Թէքինակին դրամ է իր ոռճիկին է պահանջում վրդովուած. «Ես պարտական չեմ առանց ոռճիկի ծառայելու և առանց աւելի քիչ, քան միւս դիւանագիտական ներկայացուցիչները: Գործի օգուտը նկատի առնելով՝ չպէտք է սահմանափակէք իմ ծախքերը: Եթէ իմ ծախքերը մեծ էք համարում, խնդրում եմ ինձ յետ կանչէք և փոխարինէք ուրիշով, մանաւանդ որ ես Նոյսկիի հետ պայմանաւորուել եմ երեսունում մի ամսից աւելի չմնալ»:

Մարդը եկել էր մի ամսում Հայաստանը տապն ու վրա անելու և հեռանալու:

Թէքինակիի այնդումների վրա Բաքուի կառավարութիւնը մայիս 18-ին նոթից պատասխանում է, որ «Հանգամանքների բարդացման հետևանքով(*) Նախիջևանցիները մօտ ապագայում չեն կարող մեզանից ապահով զինւորական իրական օգնութիւն, եթէ տեղական զինակոչութիւնը կարող է կանգնեցնել հայկական զօրքերի յառաջապացումը, այդ ուրախութիւնեմբ կընդունէ Ազրբէջանի կողմից, մանաւանդ որ Ղարաբաղի հայերը, հակառակ մեզ աջակցելու համար Ղարաբաղ եկած անդլիացիների ներկայութեան, կտրականապէս բնդդիմանում են Ազրբէջանի իշխանութեան հաստատմանը այնտեղ»:

**) Այդ ժամանակներս Ազրբէջանը ապրում էր զօր. Դենիկինի կամաւորական բանակի ազատանալիքի տակ:*

Այնուամենայնիվ, հակառակ Թէքէնեկիի թափած ջանքերի, հայկական զօրքերը, ինչպէս տեսանք, առանց դիմադրութեան հանդիպելու, գրաւեցին Կարան էլ, Շաթուր—Նախիջևանն էլ: Դրանից յետոյ, սկսեց ապրիլ-հունիսեան գործողութիւնների դաշտերի մի նոր շրջան:

Մայիս 10-ին Թէքէնեկին խորհուրդ է տալիս իր կառավարութեան. «Ռուսներին կողմից Բագուին վտանգ սպառնալը պատրաստ լինելով և ենթարկելով անգլիացիներին, որ կարող Պետերհոֆները փոխադրուն Բաքու.») *Յունիս 4-ին, Քէ՝ վրդ է պատճառ լինելով՝ յետաձգելով Հայաստանի երկաթուղիների համար նաև ուղարկելը, որովհետև Նախիջևան չրկնում զէպքեր են սպասում»: Եւ նոյն օրը, № 130 հեռագրով. «Կամաւորական բանակի յատուկ նշանակութիւն է պատճառում... Եթէ մեր յարաբերութիւնը կամ. բանակի հետ լարւի, հայերը քշնամական դիրք կը բռնեն դէպի մեզ, ուստի անհրաժեշտ է Հայաստանի համար վտանգ առեղծել Շաթուր—Նախիջևանում: Գործը կարգադրելու համար անյապաղ պէտք է դրամ բաց Թողնէք: Իմ ձեռք առած միջոցների չնորհիւ Շաթուրը, Նախիջևանը և Օրգուբաթը արդէն միացել են մեզ ազգային խորհրդի մէջ, որը մշտական յարաբերութեան մէջ է ինձ հետ»:*

Յունիս 8-ին արտ. գործ. նախ. Զաֆարովը հեռագրում է կառավարութեան հաւանութիւնը. «Պատասխան № 130 հեռագրի: Հաւանութիւն եմ տալիս Շաթուր—Նախիջևանի հետ կապ հաստատելու նպատակով ձեր ձեռնարկած միջոցներին. համաձայն եմ դրամ տալ դիւանագիտական կազմակերպութեան համար: Հաղորդեցէք ի՞նչպէս և ում բաց Թողնել դրամը: Հաղորդեցէք, թէ ի՞նչ միջոցներով պիտի իրագործուն մատնանշուած ծրագրերն ու կազմակերպութիւնները»:

Յունիս 11-ին Թէքէնեկին պատասխանում է. «Շաթուր—Նախիջևանի չրջանը ունի մօտ 6000 կիսականոնաւոր զօրք՝ ձիաւորով, Քնգաօճով ու զնդացիններով: Տարմունակութեամբ չատ չեն մնում հայերից, որոնց օճանդակում են անգլիացիները: Պատերազմական գործողութիւնների ժամանակ գինւած ուժերի թիւը կարող է հասնել մինչև 10,000: Կարծում եմ, որ մենք պէտք է պահենք միայն 6000 ակիաթ՝ հին հրամանատարական կազմի հետ միասին՝ տեղաւորելով նրանց այն վայրերում, ուր գտնւում էին մինչև հայերի գալը, իսկ մի մասն էլ Զանգեզուրի սահմանի վրա՝ լեռնէրում: Ճանապարհների ստուգումը լրիվ երաչխաւորել դժար է: Գործի կարեւորութիւնը ստիպում է, որ հաշուենք մի քանի հնարաւոր դէպքերների հետ: Դրամը հրամանատարներին բաց կը Թողնեմ մաս-մաս, բայց ապ, վերահսկիչներ կը նշանակեմ: Վազը մեկնում է զինւորական կցորդը. լսեցէք նրա զեկուցումը և միասին քննեցէք: Այսօր աւերհանդակ ուղարկեցի Նախիջևան»:

Ու նոյն օրը նոր հրահանգ Բագու. «Ո՛չ մի փունտ նաւթ ու մազութ բաց չԹողնէք Հայաստանին»:

Յունիս 22-ին Թէքէնեկին հեռագրում է. «Լուում է, որ ոչխ Ազրբէջանը Հայաստանից բացի՝ ուրիշ քշնամի չունի, ուստի անհրաժեշտ է Հայաստանի վրա առաձգին ուշադրութիւն դարձնել: Պէտք է քերդ Սմկոյին քաշել մեր կողմը, որի համար լիագօրութիւն եմ խնդրում ինձ: զինւորական կցորդին հաքց ու փորձ արէք Սմկոյի մասին»:

---

*) Կարդ գրաւելուց յետոյ, անգլիացիները բերդի ընդաօճօթների ու ռազմամթերքի մի մասը փոխադրեցին Կասպից ռանեկին:

Ուրբաթ 21-ին. Նորից պահանջ, որ Ազրբէյջանը գօրք ուղարկէ Հայաստանի սահմանները. «Մեր գօրքերի երեակը սահմանների վրա խուճապ կը ձգէ հայերի մէջ, կուժեղացնէ դասալքութիւնը և կը բարձրացնէ մահմետականների ոգին... Եթէ ուզում էք օգտուել րոպէից, ձեռք առէք յառաջ և վճռական միջոցներ». Ու կրկին. «Սպասում են խոշոր դէպքեր: Հայաստանը լարում է իր բոլոր ուժերը»:

Եւ, իրօք, Հայաստանը լարում էր իր բոլոր ուժերը: Մահմետականութիւնը ոտքի էր էլել հայ ժողովրդի ու Հայաստանի գոյութեան դէմ: Ուրախ 14-ին, Փարիզի վհուժողովը օսմանեան պատերազմութեան յանձնել էր Հաշտութեան պայմանները, յոյները գրաւել էին Իզմիրը, Մէյնեղը գրաւած էր Մեծ Ուռնաստանի ու Ծովից-Ծով Հայաստանի ծրագիրը: Եւ մահմետական աշխարհը յուզուում էր գայրացած: Սկսում էր քէմալական շարժումը, որի ազդեցութեան տակ Կովկասի մահմետականները համախոսականներով ու հեռագրերով ոմբակոծում էին Հաշտութեան Վհուժողովն ու դաշնակիցների անդրկովկասեան ներկայացուցիչներին՝ բողոքելով Հայաստանի տիրապետութեան դէմ և պահանջելով իրենց կցումը Թիւրքիային կամ Ազրբէյջանին:

Միւս կողմից, յունիս ամսից սկսած, հայկական հետախուզութիւնը նկատում էր Թիւրքերի կողմից դինւորական չտապ պատրաստութիւններ Հայաստանի ուղղութեամբ: «Թիւրքահայաստան ուղարկուած գործակալները, կարդում ենք Հայաստանի Գլխաւոր Սպայակոյտի յունիս 17 գաղտնի զեկուցման մէջ, վկայում են Թիւրք կանոնաւոր զօրամասերի ներկայութիւնը Օլթիի և Սարըղամիշի ուղղութեամբ և Ալաչկերտի շրջանում: Կատարելապէս ստոյգ կերպով հաստատուած է, որ Թիւրքական 12րդ դիվիզիան գտնում է Խորոսան-Ջիւինում՝ կենտրոն ունենալով Խորոսանում... Քարոզչութիւնը Թիւրքիայի և Անդրկովկասի շրջաններում ուժեղանում է: Այդ նպատակով մեծ քանակութեամբ Թիւրք գործակալներ են ուղարկուած Հայաստանի ներսերը, մահմետական գիւղերը, և ամէն տեղ յայտնաբերւում են մեր վարչութեան և հակահետախուզութեան կողմից: Մասնաւորապէս զօրաւոր է Թիւրք գործակալների ազդեցութիւնը Ալրզահան—Օլթիի և Բարդուսի շրջաններում, ուր նրանք կազմակերպել են գնդացիրներով գինւած քրդական հրոսախմբեր: Նոյն պատրաստութիւնը կատարւում է և՛ Սարըղամիշ—կաղզուան տարածութեան վրա և աւելի հեռուները՝ Բարթղուան լեռնաշղթայի քրդաբնակ մասերում մինչև Աբարատ»:

Նախապատրաստուելով ներսից ու դրսից՝ Թիւրք-ազրբէյջանցիները անցան գործի, որը հեշտանում էր և նրանով, որ անգլիացիք պաշտօնապէս յայտարարել էին, թէ չուտով հեռանալու են Կովկասից. մինչև մայիս 15 կարտում և մայիս 30 Նախիջևանում արդէն ոչ մի անգլիական գինւոր չէր մնացել: Հայերը մնացել էին միայն իրենց համեստ ուժերով: Այդ օրերին Հայաստանը ունէր երեք հետևակ բրիգադ՝ իւրաքանչիւրը երկու գնդից և գունդը՝ երեք գումարտակից, երկու ձիաւոր գունդ՝ իւրաքանչիւրը վեց հարիւրեակով, 12 մարտկոց՝ ամէն մէկը 4 թնդանօթով, 3 զրահապատ գնացք և մի քանի տեղական զօրամասեր: Այս ուժերը ցրւած էին երկրի բոլոր կողմերում, ունէին մերի կազմ, չէին քանակութեամբ ոազմամթերք, վատ հագուստ ու պարենաւորում:

Այսպիսի քոյլ և ուժաթրիւ վիճակում չատ դժւար պիտի լինէր դրուբիւնը, եթէ մահմետական խռովութիւնները վերածուէին ընդհանուր ապստամբութեան։ Այդպէս էլ պատահեց։ Անգլիացիների հեռանալուց յետոյ, Օլթինից մինչև Օրդուբաթ, ամբողջ տարածութեան վրա, բռնկուեց մահմետական ապստամբութիւնը։

Շարժումը սկսուեց Բէոյիւք-Վեդի գիւղից, որը վաղուց կէս-ապստամբ վիճակի մէջ էր, և հաբևան գիւղերի հետ ունէր մօտ 4000 կուռնիներ։ Սերտ կապ պահելով Արաքսի միւս ափի՝ Արալըխի քրդութեան հետ՝ նա մշտական ապառնալիք էր Շարուր-Նախիջևանի հայկական գօրքերի և երկաթուղային հաղորդակցութեան համար։ Բէոյիւք-Վեդիցիները բազմաթիւ յարձակումներ էին գործում, քալանում ու սպանում էին հայերին և, առհասարակ, անհանգիստ հակապետական տարր էին։ Յուլիս 1-ին, Դաւալուի մօտերը նրանք սպանեցին 9 հայ գիւղերներ և 12 գիւղացիներ։ Այդ դէպքը տուիք դարձաւ, որ հայկական հրամանատարութիւնը, համաձայնուելով անգլիական ներկայացուցչի, վճռէ գրաւել Բէոյիւք-Վեդին։ Այդ նպատակով, դէպքի վայրը ուղարկուեց մի գօրամաս՝ հրամանատարութեամբ գնդ. Ապրեսեանի, որը իր մօտ կանչելով գիւղի կոմիսարին և օգնականին՝ պահանջեց՝ յանձնել յանցաւորներին, վերադարձնել սպանուածների դէնքերն ու գոյքերը և վարձատրել սպանուածների ընտանիքներին։ Կոմիսարն ու օգնականը համաձայնուեցին կատարել պահանջը, և յուլ. 4-ին գնդ. Ապրեսեանը իր գօրամասով, Բէոյիւք-Վեդիի ներկայացուցիչների ուղեկցութեամբ, մօտեցաւ գիւղին և բանակ դրեց։ Եւ երբ Բէոյիւք-Վեդիի ներկայացուցիչները գնացին գիւղ, վերջնական պատասխան բերելու համար, այնտեղից յանկարծ, հայերի վրա թացեց հրացանային ու ընդացիքային սաստիկ կրակ։ Ցանկարծակիի եկած հայերը՝ ուժեր ձևոր — սպանեց 5 սպայ և 30 զինուոր, վիրաւորուեց 7 սպայ և 120 զինուոր — և անկարգ նահանջելցին։ Յուլ. 8-ին հայկական հրամանատարութիւնը փորձեց ուժով գրաւել Բէոյիւք-Վեդին, բայց յաջողութիւն չունեցաւ։ Եւ այնուհետև սկսեց ուժեր հաւաքել ու պատրաստուել վճռական գործողութիւններ։

«Բէոյիւք-Վեդիի գրութիւնը լուրջ է, հեռագրում է 14 յուլ. Թեքիրսէիի։ Հայաստանը կենտրոնացնում է իր բոլոր ուժերը։ Քահանաները իրենց քարոզներում կոչ են անում յարձակուել Բէոյիւք-Վեդիի վրա՝ սրբացան արշաւանք համարելով այդ։ Մահմետականներին կարող է ազատել Ապրէլեանի գինուած միջամտութիւնը... Մահմետականների դիմումին՝ օգնութեան համար՝ յայտարարեցի, որ առ այժմ Ապրէլեանը չի կարող գործով օգնել, բայց մահմետականների բոլոր ծախքերն ու վնասները անմիջապէս կը վերադարձուին Ապրէլեանի կողմից։ Սպասում են մեծ դէպքեր ամբողջ Շարուր—Նախիջևան—Օրդուբաթում և կարսի շրջանում։ Առանց մի օր կորցնելու — ուղարկեցէք խոշոր զուտար զինուորական կազմակերպութիւններ» ։

Եւ, յիրաւի, Բէոյիւք-Վեդիի ազդեցութեան վրա գլուխ բարձրացրին և Շարուրի ու Նախիջևանի թուրքերը։ Յուլիսի կէսերին չտեսնուղ Շահքախթ հասաւ թիւրքական բանակի գնդապետ Խալիլ բէյը, թիւրք սպաների ու 2-3

հարեւր ամսիսների հետ և անցաւ մահմեդական չորեքշաբթի գլուխը: Եւ յուլիս 20—21-ին, միաժամանակ, ապստամբութիւն բռնեց Շարուր-Նախիջեւանի բոլոր կողմերում: Հայկական սակաւաթիւ բոյլ զօրամասերը Զուլֆայում, Նախիջեւանում, Շահթախթում ու Բաշ-Նորաշէնում չրիապատեցին թուրք զինուած բազմութիւններով: Մի քանի օրաւ արեւմտեան կուսներից յետոյ, յուլ. 25-ին, Նախիջեւանի հայկական զօրքերը, իրենց հետ առնելով և հայ ազգաբնակութեան որոշ մասը, նահանջեցին դէպի Զանգեզուր: Անգլիական զինուորական առաքելութիւնը և ամերիկեան նպաստամատոյցի պաշտօնեաները անցան Թուրիզ: Շարուրի զօրքերի մի մասը երկաթուղով քաշուեց հիւսիս, իսկ միւս մասը, Բաշ-Նորաշէնի չրջանում, յուլ. 25—26-ին, գնդ. Կարաքեչիլեանի գլխաւորութեամբ՝ ճեղքելով թշնամու ամուր չրջան՝ նահանջից դէպի Զանգիլչի ու Քինդիլու գիւղերը: Մի քանի օրից, այս գիւղերն էլ, Ղարախաչ, Ուլուխանլու, Էլիքին գիւղերի բնակիչների ու զօրքի հետ միասին, կուռվ նահանջեցին Զուխի վրայով, դէպի Արաքսի:

Թուրքերը հետեւեցին հայերին Նախիջեւանից Զանգեզուրի ուղղութեամբ Նախիջեան գետի կիրճով և Շարուրից՝ դէպի Դարալագեազ՝ Աբաքա գետի ձորով, բայց Ջուխ—Նորս գծից յետ մղուեցին:

Այս յաղթութիւններից արբեցած, օգ. 1-ին, Թեքինսկին հեռագրում է Բաքու. «Իչոյլու-Վեդիի, Շարուրի և Նախիջեանի չրջաններում կուիներ են տեղի ունենում: Հայկական գնդերը փախչում են կամ ոչնչանում: Հաղորդեցէք, թէ ես ի՞նչ պէտք է անեմ: Մահմեդականները դեռ չեն ցանկանում գրաւել Երեւանը»: Ու նորից. «Վերջապէս, քոնի յայտարերից յետոյ մենք պէ՛տք է անենք իրական քայլեր... պէ՛տք է անյապաղ պատերազմ յայտարարենք»: Միաժամանակ, «մեր կառավարութիւնը պէտք է վճռական առաջարկ անէ անգլիացիներին, որ մեզ յանձնեն Ջուլֆա—Շահթախթ երկաթուղին՝ Ալչաթ—Ջուլֆա գծով՝ Պարսկաստանի հետ առեւտուր տեղիս համար: Ցանձնման ենթակայ այդ գիծը պէտք է երկարի մինչև Դաւալու գիւղը» (28 յուլ.):

Իսկ երկու օր յետոյ, օգ. 3-ին, ռազմաչունչ խանը հեռագրում է վարչապետ Հան Խոյսկիին. «Ինձ հրաժեշտ չ, որ Ադրբէջանը երկու չաբաթ կրնացքում մարդ Զանգեզուրի հաչիւրը և զօրքերը առաջ քաշէ մինչև Ղամարլու: Այժմ ամենայարմար ժամանակն է: Հայաստանի կոմիտաթ ամերիկեան դեղապետի ժամանումից յետոյ ուչ կը լինի: Եթէ իմ առաջարկը կընդունուի մեր կողմից, իրագործեցէք առանց պատերազմ յայտարարելու: Շատ եմ խնդրում, որ օգտուէք րոպէից և ժամանակ չկորցնէք»:

Օգ. 4-ին Թեքինսկին Հան Խոյսկիին տեղեկութիւններ է հաղորդում հայկական զինուորական տեղափոխութիւնների մասին, և որանով վերջանում է նրա դաւագրական գործունէութիւնը Հայաստանում. հայկական կառավարութեան պահանջով անգլիացիք ջնջեցին նրան երեսից, և ի հատուցումն իր մատուցած ծառայութիւնների նա նչանակուեց Ադրբէջանի արտ. գործ. նախարարի օգնական: Նրա տեղը Երեան եկաւ Ադրբէջանի ազգային բանասեղծ Հաճիվերդուվը, որ անչեղ չարունակից իր նախորդի քաղաքականութիւնը:

Բհոյիւք-Վեդիի և Շարուր-Նախիջևանի դէպքերը մեծ յուզում առաջ բերին Երևանում և Հայաստանի բոլոր կողմերում: Կառավարութիւնը ձեռք առաւ արտակարգ միջոցներ. յուլ. 23-ին Երևանի, Էջմիածնի և Սուրմալուի գաւառներում յայտարարուեց 26, 27 և 28 տարեկանների զօրակոչ (օգ. 18-ին այս որոշումը տարածուեց ամբողջ Հայաստանի վրայ): Յուլ. 24-ին մտցուեց մահապատիժ պետական գաւառանքների և գաղափարների համար: Նոյն օրը որոշուեց ապագաղութացնել հարկադրական միջոցներով զէնք ու ռադիոմիջոցը հաւաքել և սահմանել զինային պարտադիր տուրք: Յուլ. 25-ին հաստատուեց զինաժողովի կոմիսարի պաշտօնը և Արշ. Ջամալեանը նշանակուեց զինաժողովի կոմիսար: Յուլ. 28-ին զէնքի տակ առնուեցին մինչև 40 տարեկան բոլոր սպաները: Յուլ. 30-ին կազմուեց երեք հոգիանոց Ապահովութեան կոմիտէ՝ վաթչապաճից և ներքին գործոց ու զինուորական նախարարներից: Ապահ. կոմիտէն սիրի վարչը երկրի պաշտպանութեան գործը՝ լիագօրութիւն ունենալով դիմելու արտակարգ միջոցների նոյնիսկ առանց նախապարապան խորհրդի որոշման:

Այս միջոցներն ինքնին բաւական են տեսնելու համար, թէ ինչ վտանգաւոր կացութիւն էր ստեղծուել Հայաստանում: Կառավարութիւնն ու ժողովուրդը գործ էին, որ միայն իրենցից է կախուած փրկութիւնը և յարուց իրենց բոլոր ուժերը: Կառավարութեան կոչի վրայ, մի քանի օրուայ մէջ, Երեւանի բնակչութիւնը մեծ քանակութեամբ փամփուշտ ու հրացան յանձնեց զինուորական իշխանութիւններին: Ժողովուրդը իր տրամադրութիւնն արտայայտում էր բազմաթիւ ժողովներով ու բանաձևերով:

Կառավարութիւնը դիմեց և դաշնակիցներին՝ զինուորական աջակցութեան հարցերու խնդրանքով:

Յուլ. 26-ին Երևան հասան անգլիական ու ֆրանսական հրամանատարութեան ներկայացուցիչները մի քանի հարիւր հոգիի զինուորների հետ, և օգոստ. 2-ին հանդիպում ունեցան ազատամարտերի պետ Քալէ բէյի հետ, որը յայտարարեց, թէ նեղը ապատամարտութիւն չէ թեաւ, այլ ազգային իրաւունքների պաշտպանութիւն. Շարուր—Նախիջևանի ըրջանները մինչև Փոքրիկ Վեհաժողովի վերջնական վճիռը, ուզում է կառավարուել սեփական ազգային խորհրդով, ինչպէս Ղարաքաղը կառավարում է հայկական ազգային խորհրդով:

Անգլիական ու ֆրանսական սպաների փոքրաթիւ ն՛ւ մի արդիւնք չտուին: Այդ պատճառով, օգ. 10-ի առաւօտեան, հայկական զօրքերը դիմեցին նոր յարձակման Բհոյիւք-Վեդիի վրա և մի շարք յաջող ընդհարումներից յետոյ, երեկոյեան դէմ գրաւեցին Բհոյիւք-Վեդիից 2 վերստ հեռու գտնուող Գոմուղի բարձունքները և Գիլա, Շերազլու, Կարաբաբ, Ջաքրանան և Թեհկոյու գիւղերը: Թուրքերը դիմադրում էին կատաղի կերպով, ռազմագիտական արհեստով փորած դիրքերից, հրացանների ու գնդացիրների սպանիչ կրակով: Մի քանի օր տևեցին արիւնահեղ կռիւներ, որոնց ամբողջ երկիրը լարած հետևում էր: Ամենքը գիտէին, որ պարտութիւնը Բհոյիւք-Վեդիի տակ ճակատագրական հետևանքներ կունենար Հայաստանի համար:

Օգոստ. 15–ին, Ռորհրդարանում, փոխ–վարչապետ Ա. Սահակեանը դեկուցում տուեց մահմետական չարժումների մասին: «Մենք, ասաց նա, հետզհետէ չրջապատուում ենք երկաթէ օղակով: Թշնամին ուզում է ներխուժել մեր երկիրը··· կառավարութիւնը բաւարար չգտնելով ներկայ դիւանրական ոյժը՝ կոչ է անում ժողովրդին զոհաբերել իր գոյքն ու կեանքը: Այժմ կառավարութիւնը դիմելով այս բարձր ժողովին՝ յայտնում է, որ կարիք ունի հեղինակաւոր գործիչների և պատգամաւորներից օգնութիւն ստանալու յոյս ունի:

Ռորհրդարանը ընդառաջ գնաց կառավարութեան դիմումին և որոչեց 1) յայտարարել հայրենիքը վտանգի մէջ և հրաւիրել ժողովուրդը՝ լարել բոլոր ուժերը երկրի պաչտպանութեան համար, 2) թ.Թ.Տէր–Դաւիթեանից, Լ. Թադէոսեանից, Ց. Արղութեանից և Հ. Մանուկեանից բաղկացած խորհրդարանական մի յանձնախումբ ուղարկել օգոստակատ՝ ողջունելու համար զօրքին և բանակի բարելաւման ծրագիր բերել, 3) կոչ ուղղել դաշնակից երկրների խորհրդարաններին:

Մի քանի օրւայ արիւնահեղ կռիւներից յետոյ, հայկական զօրքերը ամրացան դիրքերում Բէյոլիւ–Վեդիի առջև և վերջ տուին գործողութիւններին· դրութիւնը սկսել էր լրջանալ երկրի միւս մասերում էլ[*]*:*

Շարուր–Նախիջևանի դէպքերը, ամէնից առաջ, արժագանգ գտան և Սուրմալու—Կողբի չրջանում, ուր հայկական իչխանութիւնը հաստատւել էր մայիս 27–ին: Օգոստ. 7–ին չարժումներ սկսեցին Կողբից հարաւ կանգնած հայկական զօրամասի վրա: Առաջին չարժակումը յետ մղեց, բայց օգոստ. 18–ին թուրքերը զրոհ տուին նոր թափով: Ապստամբեցին և հայ զօրքերի թիկունքում գտնւող Ղամըչլու, Ագարակ և Աբաս Գէղ գիւղերը, և հայկական զօրամասը ստիպւած եղաւ թողնել Կողբն ու քաչել Արաքսի ափը: Նրանց հետ հեռացան և մօտ 5000 հայ ու եզիդի բնակիչներ:

Օգոստ. 23–ին թուրքերը սկսեցին սպառնալ և Էջմիածնի կայարանին ու սպանեցին չրջակայ գիւղերից 8 հայ: Օգոստ. 24–ին, Ներքին Ղարխուն գիւղի մօտ ընդհարում տեղի ունեցաւ ապստամբ թուրքերի և մի հայկական վաչտի միջև· վիրաւորուեցին 3 հայ գինուորներ և 1 սպայ: Օգոստ. 25–ին Շոռոթ գիւղի բնակիչները հրաժարուեցին ճանաչել Հայաստանի իչխանութիւնը: Օգոստ. 26–ին թուրքերը կրակ բաց արին Էջմիածնից Ղարխուն մեկնող ամերիկացիների վրա: Օգոստ. 29–ին Ուլուխանլու—Էջմիածնի ճանապարհին սպանեցին հիւանդանոցից իրենց զօրամասը վերադարձող 4 գինուորներ: Ամբողջ Զանգիբասարը յայտարարեց իրեն ապստամբ և մերժեց ճանաչել հայկական իչխանութիւնը: Զանգիբասարցիներին դեկավարում էր Խալիլ բէյի համերգ Մահմէդ բէյը և մի չարք թիւրք չաուչներ:

---

*) Բէյոլիւ–Վեդիի կռիւների ժամանակ, հայ համայնիստները նրհամում քաց թողնցին կառավարութեան դէմ ուղղած մի թռուցիկ, որով դասալքութեան էին նրատրում զինուորներին: Թռուցիկի հեղինակները ձերբակալուեցին և արտաքսուեցին Հայաստանից:

Ընդհարումներէ և կռիւներէ քատերթաթիմ դարձաւ և կարսի հանգիստը։ Օգոստ. 18–ին մօտ 1500 գինւած զրդներ ու Քուրքեր յարձակեցեցին կաղզուանի վրա, բայց յետ մղւեցին։ Օգոստ. 21–ից սկսեցին մի շարք ընդհարումներ քէլբերի և հայկական կանոնաւոր ուժերի մէջև։ Օգ. 22–ին 400 Քուրքեր գրաւեցին Բայազետ գիւղը, Սեւլիմից 15 վերստի վրա՝ կամենալով փչացնել երկաթուղին Բէյլի–Ահմէդի մօտ և կտրել Սարըղամիշի հայկական զօրամասի հաղորդակցութիւնը։ Դեկի մօտ քրդերը գնդակահարեցին անզէնի մի ինքնաշարժ և վիրաւորեցին մի գինւոր*)։ Հայկական հողերի վրա երևացին և քիւրքական ուժեր։

Օգոստ. 30–ին, Սարըղամիշի հայկական զօրամասերը անցան հակայարձակման և յաղող կռիւներով յետ շպրտեցին թշնամուն ու գրաւեցին նրա դիրքերը Կարաքուրդի չրջանում։ Օգոստ. 31–ին Դեկիի հայկական մասերը գրաւեցին Վերչան, Բաչքէոյ, Բէդքէոյ, Բողդուտ և Մեխրնա գիւղերը։ քրդերը փախան՝ չարդած։ Նոյն օրը Կարաքուրդի զօրամասը գրաւեց Բաչքէոյի դիրքերը և մինչև 1914Թ. սահմանը մաքրեց քրդերից։ Անչալող անցաւ նոյնպէս Քշնամու փորձը՝ գրաւելու Կաղզուանը։ Մեծ զոհեր սալով՝ փախաւ խուճապահար։

Սեպտ.1–ին քրդերն ու Քուրքերը չրշապատեցին Կոնգ և Դորդ Կիլիսա գիւղերը և Մերդենեկի զօրամասի պետից պահանջեցին՝ մաքրել անչապող Մերդենեկի չրջանը և զօրքերը հեռացնել Կարս։ Պատասխանը եղաւ՝ յարձակում Մերդենեկի զօրքերի կողմից և Քշնամու փախուստը դէպի Կանջուրեանի լեռները։ Սեպ. 2–ին Սարըղամիշի հայկական զօրամասը կուով գրաւեց Գումբի սարն ու Ղըլլ Կիլիսա գիւղը։ Ապստամբների դեկավար էյուբ փաշան փախաւ Օլքիի չրջանը, իսկ մի ուրիշ դեկավար անձնատուր եղաւ։

Այսպիսով, իբրև հետևանք հայկական զէնքի յաղողութեան, մահմեդական չարժումը կարսի նահանգում վերջ գտաւ։ Դրան նպաստեց և այն գոյչ ու հաչտասէր քաղաքականութիւնը, որ վարում էր այստեղ հայկական իչխանութիւնը։ Այնուհետև, երբ չհաչտեցրեց 1920 Թւի սկզբի Ջարուչատի դէպքերը, կարսի չրջանում լուրչ հակապետական դէպքեր տեղի չունեցան։

•

Մահմեդական չարժումների ամենատարբ չրջանին Հայաստան հասաւ Հաշտութեան Վեհաժողովի Հնգի Մորհրդի կողմից նչանակած՝ Հայաստանի կոմիսար գնդ. Ուիլիամ Հասկելը։ Նրա նչանակումը մեծ ոգևորութիւն

*) Հակառակ Մուդրոսի զինադադարի, իւիրերը չարունակում էին թշնամութիւնը անգլիացիների դէմ։ Այսպես. յուլիսին անգլիացիք իրենց ճեմքի էին առել էրզրումը, զինաթափել էին հայերը և յուլիսի վերջերին սկսել դուրս տանել թերի զէնքն ու ռազմամթերքը։ Երբ էրզրումից դուրս եկաւ առաջին գնացքը՝ բեռնատարած 15 թնդանօթով, 500 հրացանով և մէկ միլիոն փամփուչտով, հաչտից ոչ հետւ, մի խումբ թիւրի զինուորներ յարձակեցին նրա վրա, գինաթափ արին անգլիացի պահակներին և գնացքը զարձրին էրզրում։ Անգլիացիք մարտնչին այս անպատուութիւնը, ինչպես մարտնչում և շատ ուրիչ, աւելի ծանր անպատուութիւններ։

առաջացրեց հայերի մեջ: Բաթումից մինչև Երևան, ամէն տեղ, որան ցոյց տրուեց խանդավառ ընդունելութիւն: Ընդունելութիւնը չատ ջերմ էր, նամանաւանդ, Հայաստանում:

Օգոստոս 20-ին գնդ. Հասկելը իր չքախմբով հասաւ Ղարաքլիսա:

Գնացքը կանգ առաւ ծաղիկներով զարդարուած կամարի տակ: Հասկելի վագոնի առջև դրւեցին պատուոյ պահակներ: Կայարան էր հաւաքուած ահագին բազմութիւն: Քաղաքացիական և զինուորական ներկայացուցիչները ներկայացան Հասկելին, որը դուրս եկաւ վագոնից և ժողովրդի ոգեորուած ծափերի ու «կեցցէ»-ների տակ դիտեց չարած օրերը, հարց ու փորձ արաւ զինուորներին, հետաքրքրւեց նրանց վիճակով: Որբերի կողմից մի աղջիկ ծաղկեփունջ ներկայացրեց տիկ. Հասկելին:

Նոյն հանդիսաւորութեամբ Հասկելը անցաւ և Ախալքալաքուղից և օգոստոս 21-ի առաւօտեան հասաւ Երևան: Քաղաքն ամբողջ զարդարուած էր դրօշակներով, զորգերով ու կանաչով: Բոլոր խանութները փակ էին: Փողոցներում տիրում էր արտակարգ կենդանութիւն: Ամենքը դուրս էին եկել վեհաժողովի ներկայացուցչին ընդունելու: վարչապետը, բոլոր նախարարները, Խորհրդարանի նախագահը, զինուորական հրամանատարական կազմը, քաղաքապետը, քաղաքագլուխը, Քեմալալ առաքեալը, ամերիկեան, անգլիական և ֆրանսական ներկայացուցիչները — ամենքը կայարանում էին, ուր չարքով կանգնած էին զինուորները իրենց նագափառով:

Ընդունելութեան արարողութիւնից—վարչապետ Յաւխանեան ողջոյնի խօսքից, Հասկելի պատասխանից ու պատուոյ պահակի ընդունելութիւնից յետոյ, չքերթը մեկնեց քաղաք: Առջևից գնում էին Սասունի և Շատախի ձիաւորները՝ ազգային տարազով և դաշնակից պետութիւնների զրօսկենբով: Նրանց հետևում էին Հասկելի ու վարչապետի և մեր զինուորականների ինքնաշարժները: Քաղաքային ինքնավարութեան չէնքի առջև կանգնած էին որբերը քարտ պահպներով: Աբովեան պողոտան լիքն էր անհաւիւ բազմութեամբ: Հասկելին յատկացած էր Եքմեկի լաւագոյն տներից մէկը, որի առջև կանգնած էր քաղաքացրօրը, անգլիական հնդիկ զինուորները, համազգութիւնները իրենց դրօշակներով:

Հասկելի հասնելուն պէս նագաքահութեան հնչեցրեց «Մեր Հայրենիք»-ը: Հաւաքակութիւնը ողջունեց որոտընդոստ ծափերով ու «կեցցէ»-ներով: Հասկելը դիտեց գօրքը, հարց ու փորձ արաւ գօրքի սպառազինութեան և հագուստի մասին: Զօրամասերը հանդիսաւոր քայլերով անցան նրա առջևից:

Ապա, բնակարանում, Հասկելը ընդունեց կառավարութեան, բանակի, քաղաքի և օտար պետութեանց ներկայացուցիչներին ու շնորհակալութիւն յայտնեց իրեն ցոյց տրւած ջերմ ու սրտագին ընդունելութեան համար: Ժողովուրդը, խռնուած նրա բնակարանի առջև, երկար չէր ցրւում: Վերջապէս, մեզ էլ լիչեց Վեհաժողովը...

Նոյն օրն և նի Հասկելը երկար տեսակցութիւն ունեցաւ կառավարութեան նախագահի հետ: Ծուսատու էին նրա խօսքերը. նա հաղորդեց, որ

ինքը վեհաժողովից յանձնաբարուքիւն ունի պաշտպանելու բոլոր հայերին, ուր և գտնւին նրանք՝ Հայաստանում, Ադրբէյճանում, Թուրքիայում թէ վրաստանում: Զինուորական օգնութիւն առ այժմ չի կարող տալ, բայց արդէն Փարիզ է ուղարկել 3 սպաներ՝ խնդրելով անմիջապէս զօրք հասցնել Հայաստան, այլ և խնդրել է, որ անգլիական զօրքերի մի մասը թողնի Հայաստանում, ինքը ամէն միջոց ձեռք կառնի պաշտպանելու համար Հայաստանի սահմանները և կը պահանջէ, որ Ադրբէյճանի կառավարութիւնը վերջ տայ զրկուել գործունէութեան Հայաստանի մահմետականների մէջ: Ձեռք կառնէ նաև կարուկ միջոցներ, որ Հայաստանը առանձայ գէնք ու ռազմամթերք և որ վրաց կառավարութիւնը արգելք չլինի նրանց փոխադրութեան: Մասնաւորապէս, կաչխատէ ապահովել Հայաստանի պարենաւորման գործն ու մթերքի հայթայթումը: Դրա համար նա բաժանում թողել է իր սպաներից մէկին՝ Հայաստանի համար առաջուղ ապրանքները փոխադրելու համար: Շուտով բաժան կը հասնի 7000 փոն ալիւրով բեռնաւորուած մի նաւ, ապա կը առաքւեն պահածոներ, մսեղէն, դնոզրաչք, երկրագործական գործիքներ ու մեքենաներ և այլն: Դրամական օժանդակութիւն Ամերիկան չի տայ, քանի հոգեառաքելական հաւքը որոշուած չէ, բայց ինքը յոյս ունի, որ նպաստամատոյցը կը տրամադրէ մինչև 50 միլիոն դոլար: Ցոյս ունի նոյնպէս հայթայթել զօրքի, զրաքի և զաղթականների հագնելիքը, այլ և բանակի համար 150 լոկոմոթիւներ՝ իրենց սարքով միասին: Մինչև ձմեռ քուրքահայերի նեղզուարքը անհնար է, բայց զարնանից նրանք կարող են վերադառնալ իրենց տեղերը: Հայկական հարցի լուծումը վեհաժողովում արև է կասած չի յաջուցանում. վճռուած-վերջացած խնդիր է. մնում է միայն որոշել սահմանները և հոգաստար պետութիւնը:

Յաջորդ օր, օգոստ. 22-ին Հասկելը ներկայ գտնւեց Սորբոնայի նիստին, ուր նախագահող Ց. Արուրեանը ողջունեց նրան լեզգի խօսքերով: Հասկելը պատասխանեց հետեւեալ ճառով:

«Ես հասկանում եմ, որ ձեզ բոլորիդ գրաղեցնում է երկրի ապահովութեան և զաշնակիցների օգնութեան հարցը: Գուցէ տաքսրինակ քայլ, քէ ինչու այսքան երկար է ձգձգւում հայկական խնդրի լուծումը: Ամերիկացիները ընդհանրապէս ծանր են յարժուում: Մենք դանդաղ ակսեցինք պատերազմը, դանդաղ վարեցինք այն, բայց ասարտեցինք ամենայն քաջով: Դանդաղ ենք յարժուում նաև հայաութեան խնդրում: Մինչև որ չվանէցաբեր հայաութեան պայմանագիրը, չենդունւի Ազգերի Լիգան, չի' կարող լուծւել Հայաստանի ճանդատի խնդիրը: Սակայն, այդ չի կարող բաւարարել ո'չ ձեզ և ո'չ ինձ: Հարկաւոր է այժմէն իսկ մտածել՝ ի՞նչպէս օգնել հայ ժողովրդին: Գիակատ չկայ, որ մեզ անհրաժեչտ է գիւեան ոյժ, ո'չ թէ նրա համար, որ խլենք Վրաստանից կամ Ադրբէյճանից նրանց պատկանող անվիճելի հողերը, այլ՝ ապահովելու համար հայ ժողովրդի գոյութիւնը: Մեզ հարկաւոր է զօրք պաշտպանելու համար այն ժամանակաւոր սահմանները, որոնք ցոյց են արւած մեզ: Փարիզում դեռ ևս մանրամասնօրէն ծանօթացած չլինելով իրերի դրութեանը՝ ես անհրաժեչտ էի համարում գիւուրական ոյժի ներկայութիւնը Հայաստանում: Դրա համար ես իմ հայրական գալուն իրեն պայման դրի առ այժմ անգլիական զօրքերի թողնելը Հայաստանում, մինչև որ

մի երրորդ ոյժ գայ նրանց փոխարինելու։ Երբ ես Գոլսում լսեցի անգլիական գօրքերի կովկասից հեռանալու մասին՝ հետագրով բողոքեցի Փարիզ Ֆլէմանօվին և Վեհաժողովին այդ որոշման դէմ։ Այժմ այդ հարցը քննւում է Փարիզում, և ես յոյս ունեմ, որ անգլիական գօրքերը կը մնան այստեղ։ Իսկ եթէ նոյնիսկ հեռանան էլ, մեր գործը պէտք է լինի գտնել դրանց փոխարինող ուրիշ գօրքեր։

Երկրի պաշտպանման, զինման, նլւմուտքի կարգաւորման և այլ խնդիրների մասին ես արդէն կարգադրութիւններ արել եմ, սակայն, նայում եմ դրանց վրա, իբրև երկրորդական խնդիրների։ Անկասկած է, որ Ադրբէջանի կառավարութիւնը խախտել է անգլիական իշխանութիւնից ստացած հրահանգները, և այդ խնդիրն է այս րոպէիս ինձ զբաղեցնում։ Ես մեկնում եմ Թիֆլիս և կը պահանջեմ, որ Ադրբէջանը վերջ տայ այդ բանին, հակառակ դէպքում Ադրբէջանի կառավարութեան անդամները կենթարկւեն անձնական պատասխանատուութեան։

Թիֆլիսում ես կը հանդիպեմ գօրավար Հարբօրտին, որը Ֆրանսայում գործող ամերիկեան բանակի սպայակոյտի պետն է։ Ես նրա հետ պիտի խորհրդակցեմ այն հարցի մասին, թէ ի՛նչ ձեով պէտք է օգնել Հայաստանին։ Այս վայրկեանիս Փարիզից ճանապարհ են ընկել մի խումբ սպաներ—մասնագէտներ՝ զինւորական և այլ ճիւղերի վերաբերմամբ։ Եթէ տեսածութիւնը խանգարի իմ յարաբերութիւններին Փարիզի հետ, ես ինքս անձամբ կը մեկնեմ Սև Ծովում գտնւող ամենաարագընթաց ականակիրով Մարսէյլ—Փարիզ՝ զեկուցանելու համար Վեհաժողովին և խնդրելու Վեհաժողովից և ամերիկեան ժողովրդից չուսափոլ օգնութիւն հասցնել հայ ժողովրդին։ Միևնոյն ժամանակ հայ ժողովրդի և կառավարութեան վերաբերմունքը դէպի իր հարևանները պէտք է լինի բարեացակամ, որպէսզի հարևանները պաշտպանման և այլ խնդիրներում դժւարութիւններ չյարուցանեն։ Ես միանգամայն կախւած եմ ժողովրդի և կառավարութեան ազատութիւնից։ Այժմ քաղաքական վէճերի ժամանակը չէ։ Պէտք է մտածել ժողովրդի փրկութեան մասին։

Ո՛չ մի նշանակութիւն չպէտք է տալ այն բանին, որ այս կամ այն երկիրը խլում է մի-մի քանի վերստ հողամաս։ Այդ հանգամանքը ոչ մի նշանակութիւն չի կարող ունենալ այս կամ այն երկրի սահմանները վերանախագծելիս որոշելու համար Փարիզում։ Ինչպէս որ Նեղու Բիւզիայի և Ռումանիայի վերաբերմամբ։

Այսպիսով, հայ ժողովրդին մնում է սպասել դաշնակիցների օգնութեանը։ Շնորհակալ եմ ինձ ցոյց տրւած ջերմ ընդունելութեան համար և ցանկանում եմ ձեզ եռանդ և ոգևորութիւն»։

Օգոստ. 23-ին Հասկելը չտապով մեկնեց Թիֆլիս և այնտեղից ճագաւ՝ Ադրբէջանի կառավարութեան հետ կարգադրելու համար Շարուր—Նախիջևանի հարցը։ Եւ օգոստ. 29-ին, Ուսուպբէգովի հետ ստորագրեց մի պարտաւորութիւն, որ բոլորովին հակասում էր Երևանում տւած խոստումներին։

Այդ պայմանագրի համաձայն «Շարուր-Դարալագեազի և Նախիջևանի դաւառներում պիտի հաստատւի չէզոք շրջան», որի կառավարութիւնը պիտի յանձնւի զօր. Հասկելի նշանակած ընդհանուր-հանձնագրատին։ Երկու կողմերն այդ շրջանից հանում են իրենց զօրքերն ու զործակալներին, և կազմակերպւում է տեղական իշխանութիւն։

Այսպէսով, Շարուր—Դարալագեաց—Նախիջևանի շրջանները յայտարարւում էին վիճելի, որով գեղ. Հասկելը իւրացնում էր ապրբէլեանեան սեռակիցը,

Ասելին դեռ պայմանագրի 9րդ կէտը ասում էր. «Հայաստանի կառավարութիւնը պիտի գործադրէ իր ամբողջ ազդեցութիւնը հանգստացնելու համար հայ ազգաբնակութիւնը չէզոք շրջանում և Զանգեզուրում»: 12րդ կէտով «Ապրբէլեանի կառավարութիւնը համաձայնւում է ամէն կերպ դիւրացնել Ամերիկեան Նպաստամատոյցի պարենաւորման և տնունդ տալու գործը Շուշիի և Զանգեզուրի շրջանների ազգաբնակութեան»: 15րդ կէտով «Ռազու—Ջուլֆա չինուող երկաթուղագիծը պիտի լինի բացառապէս Ապրբէլեանի կառավարութեան իշխանութեան տակ և ոչ ոք չպիտի խառնի նրա կառուցման գործումն»: 16րդ կէտ. «Հայաստանի և չէզոք շրջանի սահմանը պիտի լինի այն տեղը, որը կոչւում է Գայլի Դրունք»:

Այսպէսով, «Հայաստանի Գերագոյն Կոմիսարը» Ղարաբաղ—Զանգեզուրն էլ տալիս էր Ապրբէլեանին: Ու հասկանալի է այն զարմանքն ու ցասումը, որ պատեց ամենքին Երևանում, երբ ստացւեց Հասկելի կարգադրութիւնը՝ հառանց դանդաղելու ստորագրել և յետ ուղարկել» պայմանագիրը: Չկամաւթիւն ու քշտամանք փետուլը Հասկելի քայլի մէջ անտեղի էր, ի հարկէ, այնքան վրան բաց էր կատարւած խաղը: Մարդը պարզապէս գոհ էր իր անդիտութեան ու դիւրահաւատութեան և ծագւում լարած ծուքնայութիւններին: Նրան ամէն կողմից ներկայանում էին Թուրք պատգամաւորութիւններ՝ զանգատով ու բողոքով Հայաստանի իշխանութեան դէմ. Ապրբէլեանի կառավարութիւնը նրան հաղորդում էր ընդվզեցուցիչ փաստեր ու թւեր, և խեղճ մարդը չգիտէր՝ ո՞ւմ հաւատալ, ի՞նչ անել:

Այսպէս, տեսու. 9–ին Հասկելին ներկայացան «Հայաս—Արևմտեան Ապրբէլեանի» ներկայացուցիչները և յանձնեցին 10 կէտից բաղկացած մի յուշագիր, որի մէջ գրում էին.

«Նկատի ունենալով, որ ամէն ազգ իրաւունք ունի անկախութեան և իր ձեռքն առնելու իր իրաւունքներն ու հակառադիրը, Սուրմալուի, Վեդի—Բասարի, Մխլիստանի, Շարուրի, Նախիջևանի և Օրդուբաթի շրջաններն իրենց համարում են անբաժանելի մասն Ապրբէլեանի: Այդ շրջանների ժողովուրդը պահանջում է Քէ Ապրբէլեանի կառավարութիւնից և Քէ Անդրկովկասի գերագոյն կոմիսարից, որ այլևս նրան չենթարկուն Հայաստանի հպատակ լինելու դրութեան, այլապէս՝ նա «կը նախապատ գէնքը ձեռքին պատով մեռնել, քան անպատիւ կերպով ոչնչանալ դաշնակցական ասպատկների ձեռքից»: Ցուշագիրը համաձայնւում էր, որ, մինչև Փարիզի Վեհաժողովի վերջնական կարգադրութիւնը, հաստատւի ժամանակաւոր մի դրութիւն գերագոյն կոմիսարի հսկողութեան տակ, պայմանով, որ վերոյիշեալ շրջանները չանջատուն Ապրբէլեանից: Միաժամանակ, յուշագրի հեղինակները պահանջում էին կազմել ժի խառն քննիչ մարմին բոլոր դաշնակիցների ներկայացուցիչներից «քննելու համար հայ ազգակցականների կատարած բռնութիւնները Երևանի վիլայէթի ապրբէլեանցիների դէմ»:*)

*) Բազմի «Ապրբէլեան», 1919թ. № 178.

Ծուշաքրի պատճէնները ուղարկուեցին և անգլիական ներկայացուցիչ Օ. Ուօդրոուին և Ագրբէյճանի կառավարութեան։ Ներկայացուցիչները տեսակցութիւն ունեցան և Ագրբէյճանի վարչապետի և Ղարաբաղի ընդհանուր հրամանատար Սուլթանովի հետ, որոնք այդ միջոցին Թիֆլիսում էին։

Մի քանի օր յետոյ գնդ. Հասկելլին յուշագիր ներկայացրեց և վերևում նահանգի վաղեմի բնակիչ Թուրքերը», որոնք գանգատւում էին հայերի դէմ և խնդրում ամերիկացիների միջամտութիւնը։ Ծուշաքրին կցուած էր մի ցուցակ, որի համաձայն հայերը Երևանի նահանգում աւերել էին 88 մահմեդական գիւղեր, այրել 1920 տուն և սպանել 131,970 մարդ։

Ագրբէյճանի կառավարութիւնը հաղորդում էր, որ «1918թ. յունուարից սկսած, նախ քան Թիւրքերի Երևանի նահանգը գալը՝ հայերը քանդեցին աւելի քան 300 գիւղեր՝ կոտորելով այդ գիւղերի մահմեդականների մեծ մասը... Թիւրքերի Երևանի նահանգից հեռանալուց յետոյ, 1918թ. դեկտեմբերին Սասունի գունդը գինաթափեց Երևանի գաւառի Ղաբախլիչ և Վեդի–Ջալի գիւղական համայնքների մահմեդականներին և քանդեց Ղազլու, Շահաթլու, Ղարախաչ, Դահնագ, Ղարաբէգլեար, Ազափ–Բէյլի և այլ գիւղերը՝ կոտորելով յիշեալ համայնքների բոլոր մահմեդականներին։ Նոյն ճակատագրին ենթարկեցին Միլլի Դարաչի չորքի մի շարք գիւղերի մահմեդականները։ Համարեա միաժամանակ, հայ զօրքերը չորրորդականին Բասար–Գէչարի աւանների ու կոտորեցին Կրզը–Վանք, Սուբաթան, Զազալու, Շահաթ և այլ գիւղերի մահմեդականներին՝ բռնաբարելով կանանց և Շահաթ գիւղի բազմաթիւ երեխաներին այրելցն Մոնիրնեբում։ Ինքնիշեցին և Էչմիածնի ու Սուրմալուի գաւառների մահմեդականներին... Օգոստ. 17–ին հայկական վարչութիւնը հայկական միլիցիայի անմիջական մասնակցութեամբ սկսեց բնաջնջել Էչմիածնի, Սուրմալուի, Երևանի և Նոր–Բայազէտի գաւառների մահմեդականներին... Հայկական վարչութիւնը օգոստ. 17—31–ի կաթսաուած միջոցում կարողացել է ջարդել ու կոտորել Էչմիածնի, Սուրմալուի, Երևանի և Նոր–Բայազէտի գաւառների մէջև 50 գէւղ մահմեդականներին։*)

Հասկանալի է, որ նման դիմումներն ու փաստերը պիտի ազդէին ամերիկացի Հասկելի վրա, որը ո՛չ ծանօթ էր կովկասեան պայմաններին ու բարքերին, ո՛չ էլ գաղութներ կառավարելու վարժութիւնն ունեցող անգլիացու խորագիտութեամբ էր օժտւած։

Հասկելի գրութիւնը քննւեց Խորհրդարանում ու կառավարութեան մէջ և որոշւեց Հասկելի մօտ ուղարկել մի յանձնախումբ՝ պարզելու համար գրութիւնը։ Մեպտեմբերի կէսերին Թիֆլիս մեկնեցին Ա. Խատիսեանն ու Ռ. Տէր–Մինասեանը, որոնց բացատրութիւնները լսելուց յետոյ՝ Հասկելը չեղեալ համարեց Ուռուպրէդովի հետ կնքած պայմանագրի Ղարաքաղին ու Զանգեզուրին վերաբերող կէտերը։ Բայց այս անգամ էլ Ագրբէյճանը մերժեց ընդունել այդ համաձայնութիւնը։

Երկար բանակցութիւններից ու ձգձգումներից յետոյ, սակայն, Հասկելը պնդեց իր տեսակէտի վրա և Նախիջևանի ամերիկացի հրամանատար նշանակելով՝ կարգադրեց մոցնել այնտեղ ամերիկեան իշխանութիւն։

*) «Ազատաւոր», 27 սեպտ. 1919թ.

Հոկտ. 16–ին նրա ներկայացուցիչ գնդ. Ջէյմս Ռէյը Նախիջևանի զօրամասի հրամանատարին ու մահմեդական ազգային խորհրդին ուղղեց մի նամակ, որով, ի միջի այլոց,ասում էր. «Երբև ներկայացուցիչ դաշնակիցների գերագոյն կոմիսարի, նրա բացակայութեան ժամանակ, պաշտօնեայ յայտնելու ձեզ, որ Նախիջևանի և Շարուրի շրջաններում խաղաղութիւն հաստատելու նպատակով Ազրբէջանի և Հայաստանի կառավարութիւնը համաձայնութեան են եկել, որ այդ երկու շրջանները յատուկ կայում են մնան դաշնակցական վարչութեան տիրապետութեան ներքոյ։ Միացեալ Նահանգների բանակի երկրապետ գնդ. Էդմոնդ Լ. Դէյլին նշանակված է հանձնապետ։ Նրա իր պարտականութիւնների անցնելը տեղի կունենայ հոկտ. 23–ին Նախիջևանում։ Միաժամանակ տեղի կունենայ շրջանի կառավարութեան վերաբերեալ Ազրբէջանի և Հայաստանի՝ դաշնակիցների գերագոյն կոմիսարի հետ կապված համաձայնութեան յայտարարութիւնը։ Մի խումբ մարդիկ, որոնց թւում են և պապակոյտ ապաները, գնդ. Դէյլին ու իր պապակոյտը և Ազրբէջանի ու Հայաստանի ներկայացուցիչները, Նախիջևան կը ժամանեն հոկտ. 23–ին՝ յիշեալ արարողութեան մասնակցելու համար։ Հրաւերում տեղ Նախիջևանի մահմեդական ազգային խորհրդին, այլ և զինուորական ու քաղաքացիական ներկայացուցիչներին նոյնպէս ներկայ լինելը։

Ազրբէջանի և Հայաստանի կառավարութիւնները խոստացել էին նշանակել երեքական ներկայացուցիչներ՝ գնդ. Դէյլիի հետ Նախիջևան գնալու համար, բայց Ազրբէջանի կառավարութիւնը, վերջին րոպէին, մերժեց նշանակել։ Գնդ. Դէյլին իր գործակիցներով երեկոյեան դուրս եկաւ հոկտ. 24–ին և Նախիջևանում ընդունեց պատշաճ ճաշով։ Նրա նահանգապետութիւնը, սակայն, իրական փոփոխութիւն չմտցրեց գործութեան մէջ. Նախիջևանը փաստօրէն մնաց ինքնավար, մինչև 1920 թւի ամառւայ դէպքերը։

ԳԼՈՒԽ Թ.

ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑԸ*)

Շարուբ—Նախկինեան դէպքերին գուգընթաց Ապրիլեանը գործօն քայլերի դիմեց և դարաբաղցիներին ընկճելու համար։

Ղարաբաղը բռնում է Հայաստանի հիւսիս–արեւելեան մասը և իր աչխարհագրական ու բնական պայմաններով, իր ազգագրական կազմով հանդիսանում է Հայկական բարձրաւանդակի անմիջական շարունակութիւնը։ Ցարական իշխանութեան օրով նա միացած էր Քրքական հարթավայրերի հետ և մտնում էր Գանձակի նահանգի մէջ, որի գաւառները ձեւաւած էին այնպէս, որ ամէն տեղ հայերը կազմում էին փոքրամասնութիւն։ Միմիչեռեա Լեռնային Ղարաբաղը, այսինքն՝ Շուշիի, Ջիւնիքիի և Ջիրրայիլի լեռնային մասերը — Խաչէն, Վարանդա, Դիզակ, Ջրաբերդ — կազմում են մի ամբողջութիւն՝ հայ հոծ ազգաբնակութեամբ։

Ղարաբաղի ազգային կազմի մասին Դ. Անանունը հետեւեալ տեղեկութիւններն էր տալիս «Հայաստանի կօօպերացիայ»–ի 1920թ. սեպտեմբերի համարում.

«Ղարաբաղի լեռնաստանում 1917թ. տուեալներով ապրում էին՝ հայեր՝ 150,000 (70%), մուսուլմաններ՝ 58,000 (27%), մնացած ազգեր՝ 5000 (3%)։ Այժմ ազգութիւնների քանակ յարաբերութիւնը մի նգամայն փոխուած է։ Ուրիշ ազգերից ոչուացել են Թուսաստան։ Ապա Լեռնային Ղարաբաղի որոշ գիւղերից հեռացել են նաև Քուրքերը։ Դրա դիմաց լեռներն են ապաստանել տափաստանում եղած հայ գիւղերի բնակիչները (Ջիվանչիր գաւ.)։ Այսպիսով, Հայկական Ղարաբաղում (Ջրաբերդ, Խաչէն, Վարանդա, Դիզակ) հայ տարրը աւելի է ամրացել քան։ Իսկ եթէ որան աւելացնենք նաև, որ հին Ղարաբաղի անբաժան մասը կազմող Գիւլիստանը վերջին տարիների անց ու դարձի մէջ վերականգնեց իր կապը նախկին մի աւորի հետ և ընթացաւ հայկական քաղաքականութեան հունով, պատկերն աւելի կատարեալ կը լինի»։

Թուսական յեղափոխութիւնը Ղարաբաղում ևս ընդունեց խանդավառութեամբ։ Յեղափոխութեան առաջին օրերից Շուշիում կազմուեց հայ—քրքական մի[illegible]կուսակցական մի բիւրօ, որի կողմից նշանակուեց չրջանային գործադիր կոմիտէ, որը պէտք է վարէր Ղարաբաղ—Զանգեզուր միացեալ

*) Այս գլխի համար, բացի տպուած նիւթերից, օգտուել եմ նաև Ղարաբաղ–Զանգեզուրի գործիչների, 1922թ. յուլիսին, Թաւրիզում. կազմած զեկուցումից և Հ. Հ. Պատւիրեակեանի և Հ. Հ. Թիֆլիսի դիւ. ներկայացուցչութեան «Գործ»–երից։

ԴԱՐԲԱՐԱԿ



Գ. ԲԱՂԱՅԵԱՆ



ԼԵՒՈՆ ՇԱՀՐԻԿԵԱՆ



ՅՈՎԱՒՆ ՍՏԵՓԱՆԵԱՆ



Ե. ԹԱՄԱՆԵԱՆ



Ա. ՄԱՐԻՏԱԼԵԱՆ



Ե. ՄԵԼՔՈՒՄԵԱՆ



չրջանի կառավարական գործերը, բայց, իրօք, գարձաւ միայն Ղարաբաղի իշխանութիւնը։ Հայերն ու Թուրքերը համերաշխ էին. գաւառի հայկական մասերում զինվարում էին հայերը, Քրքականում՝ Թուրքերը։ Անգամ հոկտեմբերեան յեղաշրջումից և Երևանի, Կարսի, Գանձակի ու Բագուի, Քրքական չարժումներից յետոյ էլ անդորրութիւնը Ղարաբաղում չխախտուեց։

Այսպէս տևեց դրութիւնը մինչև 1918 Յուն ամառը, երբ լուծուեց Անդրկովկասի միութիւնը, կովկասում երևացին Թուրքերը, և Նուրի փաշան Գանձակում ձեռնարկեց իսլամական բանակի կազմակերպութեան։ Միլիտուանակցական բնոյթ՝ չկամենալով ենթարկուել նորաստեղծ Ադրբէջանին՝ որոշեց կազմել տեղական ինքնուրոյն իշխանութիւն և իր տեղը նշանակեց կոմխարհների խորհուրդ անունով մի մարմին, խառն՝ հայերից ու Թուրքերից։ Իսկ մի ամիս անցած էլ այս մարմինը փոխարինուեց ազատ Ղարաբաղի ժողովրդական կառավարութեամբ։

Սակայն, Թուրք–ադրբէջանեան սադրանքների հետևանքով հետզհետէ Ղարաբաղի կեանքն էլ խառնափնթորուեց։ Անիշխանութիւնը սկսեց դուրս բաթգրացնել ամէն կողմ։ Ելիսաւետ—Շուշի ճանապարհը փակուեց հայերի առջև։ Մի չարք վայրերում Թուրքերի կողմից տեղի ունեցան հայերի Քալան ու սպանութիւններ։ Իրենց հերթին, հայերն էլ պատասխանում էին նոյն ձևով. ուսւական ռազմաճակատից վերադարձած զինուորները կամ առվահար գիւղացիք, յանախ, յարձակուում էին քոչւորների վրայ՝ Քալանի և կողոպուտի նպատակով։ Բայց և այնպէս, հայ և Թուրք գիւղաբնակների յանգիստով, մինչև 1918Թ. ամառը ընդհանուր խաղաղութիւնը չխախտուեց։ Շուշի քաղաքում իրար յետևից հրաւիրուեցին երեք խառն համագումարներ, որոնք նպաստեցին հայ–Թրքական բարիհարևանական յարաբերութիւնների պահպանման։

Դրութիւնը փոխուեց արմատապէս, երբ Ղարաբաղի հորիզոնի վրայ երևացին Թիւրքերը։ Թիւրքական մի բրիգադ, Զէմիլ Զահիդ բէյի հրամանատարութեան տակ և տեղական Թուրք բէգերի առաջնորդութեամբ, ելևսխից, ուղղուեց դէպի Շուշի՝ ճանապարհին ոմբակոծելով ու գինաթափելով հայկական գիւղերը։ Միաժամանակ յարձակման ենթարկուեց ու ոչնչացուեց Շուշիից դէպի Զանգեզուր տանող ճանապարհին ընկած Ղարաւշլար հայկական մեծ գիւղը, որը հաղկապի դեր էր կատարում Ղարաբաղի և Զանգեզուրի միջև։

Համաղարաբաղցիական երբորդ համագումարը, որ տեղի ունեցաւ տեպտ. 18—20–ին, Շուշիում, Թիւրքերի յատաքիաղացման առթիւ, որոշեց չղիմադրել և ընդունել Ադրբէջանի իշխանութիւնը։ Սեպտ. 26–ին Թիւրքերը առանց կուի մտան Շուշի և անմիջապէս գինաթափ արին հայերին։ Այս բանը սաստիկ գրգռեց հայերին, և երբ Թիւրքերը տեղափոխում էին գրաւուած գէնքերը, նրանք յարձակեցին ու գրաւեցին, որի պատճառով Թիւրքերը կախեցին երեք հայեր։ Հոկտ. 1–ին, գինաթափութեան յանձնարարեցին մերքանակութիւններ. բազմաթիւ հայ գործիչներ բռնուեցին ու նետուեցին բանտ։

Ղարաբաղի դիւղացիութիւնը՝ վրդովւած քաղաքացիների փոքրամասնութիւնից ու դատաճանութիւնից՝ մեծ եռանդով հետաքրքրւել քիւրքերին և սկսել պատրաստւել դեմոկրատիան։ Շրջանը բաժանւեց 4 գիւղապահական մասերի՝ իւրաքանչիւրի գլխին ընտրելով մի-մի ժողովրդական հրամանատար։ Ամէն կող գաւառի ու քաղաքի մէջն խրեց։ Մխիթարեանք Դիզակի ու Վաղանդայի գործիչները մարդ ուղարկեցին Զանգեզուր, Անդրանիկի մօտ՝ քաջալերելով նրան օգնութեան հասնել։

Թիւրքական հրամանները գիւղերում չէին գործադրւում. քիւրքերի իշխանութիւնը Շուշիից և խճուղուց այն կողմ չէր տարածւում։ Այս դրութեան վերջ տալու նպատակով քիւրքերը որոշեցին դիմել զէնքի և միաժամանակ վերջնագիր ուղարկեցին գանգեզուրցիներին։ Հոկտ. 18-ին քիւրքական մի զօրամաս, տեղական քիւրքերի և մի քանի հայերի առաջնորդութեամբ, մտաւ Վարանդայի Մամիա գիւղը, բայց հանդիպեց հայ մարտիկների ուժեղ դիմադրութեան, կարգուկս և ամօթահար փախաւ յետ՝ հայերին թողնելով 2 ընդանօթ ու մեծ քանակութեամբ պատերազմական աւար։ Ու քիչ յետոյ, հոկտ. 31-ին, դաշնակիցների պահանջով, քիւրքերը թողին Ղարաբաղն ու հեռացան։

Անդրանիկը լսելով Ղարաբաղցիների խնդիրը՝ չտապով պատրաստւեց և նոյեմբ. 16-ին չորս դէպի Շուշի ու հասաւ Աւդալար գիւղը՝ Շուշիից 40 վերստ վրա։ Անդրանիկի հրամանի համաձայն, Դիզակի գինւած ուժերի հրամանատար Սոկրատ բէգ Մելիք-Շահնազարեանը պէտք է գրաւէր Քիրսի ու Սաղսաղանի գագաթները ու թիմու ջուրը, բայց փոխանակ այդ հրամանը կատարելու՝ նա անցաւ քաղաքի մօտ Քարին-Տակ գիւղը և յարաբերութեան մէջ մտաւ քաղաքագլուխ Գերասիմ Մելիք-Շահնազարեանի հետ, որը հակառակ էր Անդրանիկի արշաւանքին։ Մելիք-Շահնազարեանը իր և Սոկրատ բէգի կողմից նամակ ուղարկեց Անդրանիկին և կանգնեցրեց նրա յառաջխաղացումը։ Նոյն ժամանակ հեռագիր հասաւ զօր. Թոմսընից, որը հրահանգում էր Անդրանիկին գադարեցնել կռիւները։ Դրա վրա Անդրանիկը առաւ իր ուժերն ու քաշւեց Զանգեզուր։ Նրա հեռանալուց յետոյ, Քուրքերը ոչնչացրին Ղարաբաղի և Զանգեզուրի միջև ընկած Հաբաթ, Սպիտակաչէն և Վետրոսաչէն հայկական գիւղերը՝ աւելի ևս դժւարացնելով Ղարաբաղի և Զանգեզուրի յարաբերութիւնը։

Դեկտեմբերի սկզբին Շուշի հասաւ անգլիական գինւորական առաքելութիւնը։ Այդ առթիւ ղարաբաղցիք որոշեցին յարաբերութեան մէջ մտնել անգլիացիների հետ։ Գաւառի 4 շրջանների և քաղաքի մէկական ներկայացուցիչներից կազմւեց Ղարաբաղի ժամ. խորհուրդ, որը բանակցութեան մէջ մտաւ անգլիացիների հետ՝ կամենալով որոշել Ղարաբաղի քաղաքական դրութիւնը։ Անգլիացիք խուսափեցին այդ հարցից՝ պատասխանելով, թէ իրենք քաղաքական լիազօրութիւններ չունեն, թէ այդ հարցով կը զբաղւեն զօր. Թոմսընից հրահանգ առանալուց յետոյ, բայց ձեռքի տակից աշխատեցին համոզել հայերին՝ ընդունել Ագրբէջանի իշխանութիւնը։

Անգլիացիների համար Ղարաքաղի, ինչպէս և Զանգեզուրի ճակատագիրը որոշուած էր. նրանք վճռել էին այդ հողամասերը մի կերպով Ադրբէջանին: 1919թ. յունս. 15-ին, Ադրբէջանի կառավարութիւնը գոր. Թոմսընի հետևնուէքներով, Ղարաքաղ-Զանգեզուրի ընդհանուր-հրամանատար նշանակեց գր. Քոսթով բէդ Սուլթանովին, որը հայերի աչքին հայատեացի և ջարդարարի համբաւ էր վայելում: Այդ լուրն առնելուն պէս, յունս. 26-ին, Հայաստանի արտ. գործ. նախարար Ս. Տիգրանեանը վճռական բողոք ուղարկեց Ադրբէջանի կառավարութեան՝ յայտարարելով, որ Ղարաքաղն ու Զանգեզուրը Հայաստանի անբաժան մասն են:

Այս բողոքին Ադրբէջանի կառավարութիւնը պատասխանեց, որ խնդրի առարկայ եղող հէրկրանները Ադրբէջանի անվիճելի և անխախտ մասն են կազմում և որ գերնահանուր-հրամանատարութիւնն հաստատելու որոշումը ոչ մի դէպքում չի խախտում Հայաստանի հողային իրաւունքները: Ընդհակառակը, Հայաստանի կառավարութեան բողոքը մենք համարում ենք խախտում մեր գերբնականութեան և մեր ներքին գործերին միջամտելու փորձ»:

Մի քանի շաբաթ յետոյ, փետր. 24-ին, Հայաստանի կառավարութիւնը տասնեակ բրիտանական զերագոյն կոմիսարի Երևանի ներկայացուցիչ գոր. Վ. Ասբրեյ գոր. Ֆորեսթիէ-Ուիլկերի մէկ գրութիւնը, որով հաղորդում էր գոր. Թոմսընի կողմից, թէ, ասը. Սուլթանովը գնում է Շուշի, իբրև ընդհանուր-հրամանատար Զանգեզուրի, Շուշիի և Ղարաքաղի չբլաններէի: Նա այդ պատճառ է առանց դնելու որև է պահանջ Ադրբէջանի ապագայ վարչութեան վերաբերմամբ. նա գնում է այնտեղ միայն օրէնքը և կարգը պահպանելու համար»: Արտ. գործ. նախարար Ս. Տիգրանեանը անմիջապես պատասխանեց գոր. Ֆորեսթիէ Ուիլկերին, թէ՝ «Հայաստանի կառավարութիւնը չի կարող գոր. Թոմսընի հետագրի հաղորդելու փաստը համարել որպէսզի նոյնիսկ անուղղակի ճանաչման Ադրբէջանի կառավարութեան թէկուզ ժամանակաւոր գերբնականութեան իրաւունքի դր. Սուլթանովի իշխանութեանը ենթարկելիք գաւառների վիճելի չբլանների վրա»:

Գոր. Թոմսընի կարգադրութեան հետ չէր կարող հաշտուել և Ղարաքաղի ազգաբնակութիւնը: Կամենալով անգլիացիների ներկայութեամբ հանդէս բերել ղարաքաղցիների հաւաքական կամքը՝ ժամ. Խորհուրդը, փետր. 12-ին, հրաւիրեց համազգաբաղդիական հրդ համագումարը, որը մի անգամ ևս որոշեց՝ Ղարաքաղը համարել Հայաստանի անբաժան մաս, ո՛չ մի դէպքում չճանաչել Ադրբէջանի իշխանութիւնը և մերժել ազբէյնեան կառավարութեան պահանջը՝ ուղարկելու խորհրդարանի պատգամաւորներ: Բացի այդ, համագումարը ընտրեց ազգային խորհուրդ և յանձնեց նրան որոշումների գործադրութիւնը:

Փետրուարի վերջերին Շուշի եկաւ անգլիական նոր ներկայացուցիչ մայոր Մաք Մէհենը 400 զինուորներով: Նրա հետ եկան և գոր. Թոմսընի և ազբէյնեանի կառավարութեան համաձայնութեամբ Բաքուի Հայոց Ազգ. Խորհրդի և Հ. Ց. Դաշնակցութեան կենտ. կոմիտէի ներկայացուցիչներ

Գ. Բալայեանը և Լ. Զարաֆեանը: Սկուեցին բանակցութիւններ Մաք Մեգենի, դր. Սուլթանովի և երկու հայ ներկայացուցիչների միջև: Մաք Մեգենը առաջարկեց հաղւից եկած հայ ներկայացուցիչներին ստորագրել մի յայտարարութիւն, որ Ղարաքաղը մինչև Զաբուղ ժամանակաւորապէս յանձնւում է Ադրբէջանին: Պատասխանը եղաւ կտրուկ մերժում: Այն ժամանակ Մաք Մեգենը գրահապատ ինքնաշարժ նստեցրեց Գ. Բալայեանին ու Լ. Զարաֆեանին և հեռացրեց Ղարաքաղից: Հայ ազգաբնակութիւնը վրդոված՝ փակեց խանութները և բողոքի ցոյց արաւ անգլիական ներկայացուցչութեան առջև:

Անգլիացիների բոլոր ջանքերն անցան ապարդիւն. դարաքաղցիները մերժեցին ճանաչել դր. Սուլթանովի իշխանութիւնը:

Ի պատասխան Հայաստանի կառավարութեան բողոքների և ղարաքաղցիների հակառակութեան, բազուի անգլիական զօրքերի հրամանատար գնդ. Շատեվլորտը, ապր. 3-ին, հրատարակեց հետևեալ յայտարարութիւնը.

«Անգլիական հրամանատարութիւնը յայտարարում է իր գործադրութիւն Շուշի, Ջանգեզուր, Ջիբրայիլ և Ջիվանչիր գաւառների բովանդակ ազգաբնակութեան, որ՝ 1) Ադրբէջանի կառավարութեան 1919թ. յունս. 15 օրոշումով դր. Սուլթանովը նշանակւած է Շուշի, Ջանգեզուր, Ջիբրայիլ և Ջիվանչիր գաւառների ընդհանուր-նահանգապետ և վայելում է անգլիական հրամանատարութեան աջակցութիւնը: 2) Գոյութիւն ունեցող օրէնքների համաձայն, ամբողջ ազգաբնակութեան կարիքների գոհացման համար, ընդհ.-նահանգապետին կից կազմակերպւում է հայ ու մահմետական վեց իրագիտ ներկայացուցչներից մի խորհուրդ: 3) Անգլիական հրամանատարութեան ներկայացուցչի հանգամանքով կարող է խորհրդի մէջ մտնել անգլիական առաքելութեան սպաներից մէկը: 4) Ընդհ.-նահանգապետութեան ահմանները ծառայող բոլոր պաշտօնեաների ոռճիկը և միւս ծախսերը հոգացւում են ադրբէջանեան դանձարանից: 5) Բոլոր վիճելի հարցերը իրենց վերջնական լուծումը կը ստանան Հաշտութեան Վեհաժողովում: 6) Ընդհ.-նահանգապետութեան ահմանները կատարւող բոլոր դինուորական տեղափոխութիւնների մասին նախօրօք տեղեկացւում է անգլիական առաքելութեան: 7) Սոյն հաղորդագրութեամբ անգլիական հրամանատարութիւնը ուզում է մասնաւորել, որ ընդհ.-նահանգապետի վրա դրւած պարտականութիւնների գործադրութիւնը՝ ի մասին ընդհ.-նահանգապետութեան մէջ կարգի և անդորրութեան պահպանման, ընդհ.-նահանգապետից և նրա մարմիններից բխող բոլոր հրամաններն ու կարգադրութիւնները պէտք է իրագործւեն առանց առարկութեան, և անգլիական հրամանատարութիւնը պահպանելու է ցոյց տալիս ձեռք առնւած բոլոր օրինական միջոցներին»:

Այս յայտարարութիւնը հանդիպեց Հայաստանի կառավարութեան և ղարաքաղցիների բուռն բողոքին ու դիմադրութեան: Հայաստանի պրտ. գործ. նախարարը, ապր. 16-ին, բրիտանական կովկասեան հրամանատարութեան քաշեց հետևեալ հեռագիրը. «Ապր. 3-ին Բագուի բրիտանական ուժերի հրամանատար գնդ. Շատեվլորտի ստորագրութեամբ անգլիական դինուորական առաքելութեան կողմից յայտարարութիւն է տրւած, որով Շուշի, Ջանգեզուր, Ջիբրայիլ և Ջիվանչիր գաւառների ազգաբնակութիւնը պարտադրւում է «առանց հակաճառելու՝ կատարել» Ադրբէջանի կառավարութեան նշանակած ընդհանուր-նահանգապետ դր. Սուլթանովի և իր պաշ-

տօնեանների հրամաններէն ու ձեռնարկներէն։ Դեռ ևս յուներ ամսին Հայաստանի կառավարութեան կողմէ բողոքելէ էր Ադրբէջանի կառավարութեան առայ Զանգեզուրը և Հայկական Ղարաբաղը Ադրբէջանի կողմէ նշանակած ընդհանուր նահանգապետութեան սահմաններէ մէջ յայտարարելու դէմ։ Բրիտանական հրամանատարութեան ուղղած մի քանի գրութիւններով Հայաստանի կառավարութեան կողմէ ևս պատուիրուեցել յայտարարել, որ թէ տեղական բնակչութիւնը և թէ մեր կառավարութիւնը չեն կարող հաշտուիլ, որ Զանգեզուրն ու Հայկական Ղարաբաղը ենթարկուին Ադրբէջանի կառավարութեան կողմից կարգած իշխանութեան, բայց յօգուտութիւնով խնդրում են, որ բրիտանական հրամանատարութիւնը գործադրէ իր հեղինակաւոր և հաշտարար միջամտութիւնն ու ազդեցութիւնը այդ չրկանում։ Հայաստանի կառավարութեան յատուկ յանձնարարութիւնով պարտք ունիմ հաղորդելու ձերդ գերագանցութեան, որ մեր կառավարութիւնը մնում է նոյն կարծիքին և հայեցակիտին»։

Միաժամանակ Հայաստանի կառավարութիւնը, անգլիական բարձր հրամանատարութեան հաւանութեամբ, Շուշի ուղարկեց ներկայացուցիչ Մ. Արզումանեանին։ Մաք Մեդոնը սրան էլ առաջարկեց յայտարարել, որ Ղարաբաղն ու Զանգեզուրը ենթարկում են Ադրբէջանին։ Մերժելով Արզումանեանն ևս արժանացաւ Բալայեանի ու Զարաֆխանի բարկութ. արտաքսեց Ղարաբաղից։ Ղարաբաղից հեռացուց նաև Ազգ.-Խորհրդի նախագահ Ալան Շահնազարեանը։

Այս բոլոր անյաջող փորձերից յետոյ գնդ. Շատելվորթը, ապրիլի վերջերին, մեկնեց Ղարաբաղ՝ անձամբ պարտադրելու ապրբէջանեան իշխանութիւնը։ Այդ առթիւ, ապր. 23-ին, Շուշիում, գումարուեց Ղարաբաղի հինգերորդ համագումարը, որի առաջին նիստում Շատելվորտն ու դր. Սուլքանովը աչխատեցին համոզել ժողովականներին՝ ենթարկուել Ադրբէջանին։ Համագումարի պատգամաւորները բուռն ցասումով բողոքեցին ու մերժեցին համակերպուել Շատելվորտ—Սուլքանովի պահանջներին։ Համագումարը միաձայն ընդունեց հետևեալ բանաձևը.

«Ղարաբաղի հայութեան հրդ համագումարը, 1919թ. ապր. 23-ին (ն. տ.) իբր անպաշտօն նիստում լսելով անգլիական հրամանատարութեան ներկայացուցիչ գնդապետ Շատելվորտի Ղարաբաղի ժամանակաւոր իշխանութեան վարչական ծրագիրը և քննելով նոյն համագումարի ապր. 24-ի պաշտօնական նիստում՝ որոշեց.

1. Մինչդամայն կողմնակից և ծարաւի լինելով կարգի և խաղաղութեան վերահաստատմանը Ղարաբաղում.

2. Բոլոր ցանկութեամբ և անկեղծութեամբ ընդառաջ գնալով անգլիական հրամանատարութեան առաջարկին՝ խաղաղ բարեկամական յարաբերութիւններ պահպանել հարևան Քուրք ժողովրդի հետ, որը միշտ էլ իրաւունքներ է Ղարաբաղի հայութեան.

3. Ի նկատի առնելով, որ Ղարաբաղի վերաբերեալ տեղեկատուական հարցերը պէտք է վերջնական լուծում ստանան Պարտադրաբար Կոնֆերանսում, ինչպէս և ինքը գնդ. Շատելվորտը յայտարարեց այդ մասին, Ղարաբաղի հայութեան հրդ համագումարը գտնում է, որ այդ ծրագիրը չի համապատասխանում համագումարին պատգամաւորները ուղարկող

Ղաբաթալի հայ ժողովրդի ցանկութեան և կենսական չահերին, ինչպիսի համաձայնականներ և գրաւոր խոպեքատիւ մանդատներ ուել է նա իւր ընտրած պատգամաւորներին:

Համագումարը անընդունելի է համարում Ադրբէյճանի հետ ուղենչութեան ունեցող որև է վարչական ծրագիր և այդ ծրագրի որևի իրականացումը կեանքի մէջ համարում է անխուսափելի պատճառ՝ առեղծելու ազգամիջեան լուրջ խռովութիւններ ու արիւնհեղութիւններ, որի պատասխանատուութիւնը իր վրա վերցնել ո՛չ մի դէպքում չի կարող Ղաբաթալի հայութեան ճշդ համագումարը:

Այս բանաձևը դիւանի ամբողջ կազմի և 48 պատգամաւորների ստորագրութեամբ յանձնուեց Շատելվորտին, որը դժգոհ ու զայրացած վերադարձաւ Բագու: Դրանից յետոյ, դր· Սուլթանովը, անգլիացիների օժանդակութեամբ սկսեց գործել և դիւնորական պատրաստութիւններ տեսնել, որպէսզի բռնի ուժով հնազանդեցնի ղարաբաղցիներին: Մայիսի վերջերից ադրբէյճանեան գործերը չրջապատում էին քաղաքը և ամուր դիրքեր դրաւում:

Յունիս 3-ին մայոր Մաք Մեհենը իր մօտ կանչեց Ազգ· Խորհրդի նախագահ՝ եղիչէ Իչխանեանին և անդամներ Ց·Թումանեանին և Ա·Տէր-Աստուածատրեանին և ուրիշներին—7 հոգի—և ստորագրութիւն առաւ, որ այդ օրուանից այլևս քաղաքականութեամբ չպիտի զբաղեն: Նոյն օրը ադրբէյճանեան գործերը դիրքեր դրաւեցին հայկական թաղում: Հայերի մէջ սկսեց խուճապ: Փակւեցին խանութներն ու արհեստանոցները և հաւաքեցին անգլիական ներկայացուցչութեան առջև՝ պահանջելով ձեռք առնել չտապ մի քանիներ, որպէսզի տեղի չունենայ արիւնհեղութիւն: Մաք Մեհենը վստահացրեց, թէ ոչինչ չի պատահի, բայց նոյն ժամին տեղեկութիւն ստացաւ, որ դր·Մուլթանովը պահանջում է իրեն յանձնել վերոյիշեալ 7 գործիչներին՝ սպառնալով, հակառակ դէպքում, քաղաքը ռմբակոծել Քնդանօթներից: Մաք Մեհենի խորհրդով, 7 գործիչները հեռացան քաղաքից, անգլիական դիւորների հսկողութեան տակ: Սուլթանովի ուզածն էլ այդ էր:

Յաջորդ օր, յունիս 4-ին, Քրքական թաղից սկսեց հրացանաձգութիւն ու յարձակում հայերի վրա: Թաղում գտնուղ հայ ինքնապաշտպանողական խմբերը դիմեցին հակայարձակման և գրաւեցին հայկական դիրքերը, որ մի օր առաջ բռնել էին Թուրքերը: Ամբողջ օր տևեց հրացանաձգութիւնը, և քաղաքի հայ բնակչութիւնը ապրեց տագնապալի ժամեր: Տեսնելով, որ ընդհարումը կարող է խորանալ, Մաք Մեհենը հրամայեց Թուրքերին և հայերին վերջ տալ հրացանաձգութեան և մաքրել դիրքերը· Հայերը հնազանդեցին, և նրանց դիրքերը գրաւեցին անգլիական դիւորները· Թուրքերը դուրս չեկան իրենց դիրքերից· Թուրքերի գեղակով սպանեց անգլիական մի դիւոր և վիրաւորեց մէկ ուրիշը:

Յունիս 5-ին, անգլիական ներկայացուցչութեան և ադրբէյճանեան հրամանատարութեան աչքի առջև, Թուրք ու քիւրդ դիւանդ խուժանը կոտորեց Շուշիից 2 վերստ հեռու գտնուղ Ղայբալիքենդ հայկական մեծ գիւղը: Անլուր բռնութիւններ գործուեցին անպաշտպան կանանց ու երեխա-

Ներքև վրա: Մի քանի հարիւր մարդ սպանուեց, գիւղը աւարի տրուեց ու քար ու քանդ եղաւ:

Ղալաչիքենդի կոտորածից յետոյ, մօտակայ Կրկըժան գիւղի հայ բնակիչները սպիտակ դրօշ բարձրացնելով՝ ուղևորուեցին Ջանքենդ գիվիգիայի պետի մօտ՝ պաշտպանութիւն խնդրելու: Նպաստակով: Ջանքենդից ուղարկուեց մի զօրաժաս սպայի գլխաւորութեամբ, որը առաջարկեց հայ գիւղացիներին իրենց զոյքը յանձնել ի պահ հարևան Թուրքերին և տեղափոխուել Ջանքենդ: Այդպէս էլ արեց, բայց Կրկըժանը այնուամենայնիւ աւերուեց ու թալանուեց յուլ.7-ին. բոլոր հայերի տները հրդեհուեցին զօրքերի ալէքի առվիւ, գինուորական չտարբեր մի վերատ հեռաւորութեան վրա:

Նոյն պայմաններում, զօրքի ալէքի առվիւ, յաջորդ օրը, աւերուեց ու թալանուեց և Փահլիւլ հայարնակ գիւղը, որի աւերածութեան մասնակցեցին և ասկերներըը:

Ջանքենդից ոչ հեռու, իր կալւածում, Թուրք պահակների ներկայութեամբ սպանուեց Նատալիա Աթաբէգեանն ու իր ադախինը. գիակները կորան անհետ:

Թուրք ամբոխը, մասնակցութեամբ քրդական հեծելազօրի, յարձակուեց Դաշալթի գիւղի վրա, որը փրկուեց միայն անգլիացիների միջամտութեամբ: Ցաքծակում եղաւ և Դաչքենդ գիւղի վրա, որի բնակիչները ցոյց ուին դիմադրութիւն: Սուլթանովը պատժելու համար գիւղացիներին՝ գնդացիր ուղարկեց նրանց դէմ:

Ակնթարթ կիրճն մտի Նախիջևանիկ և ուրիշ հայ գիւղերը տատացի իմաստով գրաւեցին պաշարողական վիճակի մէջ: Գիւղական տների դէմ հանգիստան կանգնեցուեցին կանոնաւոր զօրքեր, որոնք նեղում էին գիւղացիներին, թալանում ու փչացնում նրանց այգիները, բոնութիւններ գործ գնում, կանանց յետևից ընկնում և հրացանագրութեամբ վախի տակ պահում ամենքին:

Աձգօր որև է իրական գործան հասցնելու, յունիս 12-ին մայոր Մաք Մենինը անգլիական ներկայացուցչութեան և գինուորների հետ հետացաւ Ղարաքալից՝ տանելով իր հետ հայ ժողովրդի անահման տառապութիւնը, որին այնպէս արժանի էր: Սուլթանովի ձեռքերն այլևս բոլորովին ազատ էին:

Ղարաբաղի կոտորածները սաստիկ յուզում առաջ բերին կովկասեան հայութեան բոլոր խաւերում: Առաջին արձագանգը լուեց Էջմիածնից: Ամենայն Հայոց Կաթուղիկոսը զօր. Քորիին ուղղեց հետևեալ հեռագիրը. «Մենք համոզուած ենք, որ դաշնակիցների հովանաւորութեան շնորհիւ մեր հօտի համար հասել է փրկութիւնը երկար տանջանքներից ու չարչարանքներից: Բայց և այնպէս, Ղարաբաղում հոսում է անմեղ արիւնը կանանց, երեխաների և նրանց հերոսական պաշտպանների, որոնց ոդքն ու ազատութիւնը հանուում է մինչև մեր պատրիարքական աթոռը: Մենք չենք կարող մնալ անկաթնկից գիտող կատարող սարսափների և ձայն չբարձրացնել ի պաշտպանութիւն անմեղ զոհերի: Այդ պատճառով դիմում ենք ձեզ, իբրի Մեծն Բրիտանիայի ներկայացուցչի և խնդրում պաշտպանել նոր բնակչման

նախօրեակին գնելու մեր հոգևոր գաւակներին և վերացնել վիճելի խնդիրը: Կատարելապէս հաւատում ենք, որ հզօր Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչը կիրագործէ մեր օրինական բաղձանքները»:

Ծունիս 16-ին Երևանում տեղի ունեցաւ հրապարակային մեծ ժողով, ուր կրակոտ ճառեր խօսեցին Դ. Ենանեանը, Ա. Յովհաննիսեանը, Վ. Տէր-Ղևոնեանը, Դրօն և ուրիշները: Ժողովը ընդունեց հետևեալ բանաձևը.

«Ծունիս 16-ի հրապարակային ժողովը խորը յուզմունքով լսեց այն լուրը, որ Ղարաքաղում, անգլիական միսիայի աչքերի առջև, Ադրբէյճան զօրքը Սուլթանովի գլխաւորութեամբ ասերել է հայկական վեց գիւղեր, կոտորել է աւելի քան 600 կին ու երեխաներ, սպառնում է չարունակել կոտորածը և ամբողջ հայկական Ղարաքաղը արեան մէջ ողողելու: Մենք համոզուած ենք, որ այս չարունակութիւնն է ենթվեր-Թալէաթեան քաղաքականութեան: Այնտեղ, Թիւրքիայում, ամբողջ քաղաքակիրթ մարդկութեան աչքերի առջև կոտորածի ենթարկուեց միլիոնաւոր հայ ժողովուրդը. այստեղ, Ադրբէյճանում, դաշնակից ժողովուրդների աչքերի առջև աչխատում են ոչնչացնել Ղարաքաղի հայ ազգաբնակութիւնը և հաստատել իրենց արիւնոտ կարգերը այս երկրում: Որը գիտակցելով մեր պարտականութիւնը՝ վճռականապէս բողոքում ենք այն բարբարոսութեան դէմ, որ գործադրում է Ադրբէյճանը: Պահանջում ենք անյապաղ հետացնել Ղարաքաղի սահմաններից Սուլթանովի ասպատկախումբը: Մենք յայտարարում ենք, որ Ղարաքաղի իրաւունքների պաշտպանութեան հարցում մեր կառավարութիւնը լիակատար աջակցութիւն կարող է գտնել մեր կողմից: Բա՛ւ է, որքան կոտորուց հայ ժողովուրդը Թիւրքիայում, Ղարաքաղում, Ադրբէյճանում: Մենք այլևս չենք կարող թոյլ տալ, որ եւրոպական մեծ ժողովուրդների ներկայացուցիչների աչքերի առջև մեր կանայք ու երեխաները ենթարկուեն կոտորածի: Պահանջում ենք, որ դաշնակից պետութիւնների կովկասում գտնուղ ներկայացուցիչները վերջ դնեն կոտորածի և աւերի քաղաքականութեան: Պահանջում ենք հայկական կառավարութիւնից բուռն կերպով բողոքել դաշնակիցների ներկայացուցիչներին և յանուն քաղաքակրթութեան ու մեր ժողովրդի ֆիզիքական գոյութեան պաշտպանել հայ ժողովուրդը ձեռքի տակ ունեցած բոլոր միջոցներով: Մենք բողոքում ենք և մեր հիացմունքն ենք յայտնում Ղարաքաղի մեր եղբայրներին, որոնք հերոսաբար կռւում են Սուլթանովի բռնակալութեան դէմ յանուն ժողովուրդների ինքնորոշութեան ու քաղաքակրթութեան»:

Ապա, հազարաւոր բազմութիւնը ցոյց արաւ Որդրդարանի ու կառավարական չինչի առջև և նւագախմբի ուղեկցութեամբ չորւեց դէպի անգլիական ներկայացչութիւնը, որի առջև նոյնպէս արտասանեցին ճառեր և յանձնեց բանաձևը:

Թիֆլիսում տեղի ունեցան երկու բազմամարդ հրապարակային ժողովներ — յունիս 8-ին և 22-ին: Վերջինին մասնակցում էին քառասունից աւելի ազգային ու հայրենակցական կազմակերպութիւններ ու հազարաւոր ներկաներ: Նախագահում էր Ծոմկ. Թումանեանը: Ընդունւած բանաձևը պահանջում էր դաշնակիցների միջամտութիւնը, դր. Սուլթանովի վտարումը Ղարաքաղից, կոտորածի հեղինակների ձերբակալութիւնն ու պատժւելը և Ղարաքաղի միացումը Հայաստանին:

Բողոքի ձայն բարձրացրին և Հայաստանի կառավարութիւնը, Ադրբէյջանի Որդրդարանի հայ պատգամաւորներն ու Ղարաքաղի Ազգ. Որդնութիւնը:

Վերջինս, Ղայթալիքենդի կոտորածից անմիջապես յետոյ մի ընդարձակ հաղորդագրութեամբ դիմեց դաշնակից հրամանատարութեան ու հանդարտին կարծիքին՝ պնդելով, որ պատահած դէպքերի միակ պատասխանատուն դրօ. Սուլթանովն է: Ղարաքաղի հայ ազգաբնակութիւնն ու Ազգ. Մորհուրդը միշտ խուսափել են ընդհարումների առիթներ տալուց. նրանց գլխաւոր պահանջը եղել է՝ Ղարաքաղը նկատել վիճելի չրլան և այնտեղ հաստատել անգլիական չէզոք իշխանութիւն, մինչև որ սահմանների հարցը վերջնականապէս որոշուի: Հակառակ ծանր պայմանների, Ազգ. Մորհուրդն յաջողուել է պահել հայ—քրքական խաղաղութիւնը և խուսափել բախումներից: Սուլթանովը Ղարաքաղ գալով՝ ձեռնարկում է յարձակողական քայլերի՝ որոշելով զէնքի ուժով հնազանդեցնել հայկական չրլաններըը: Հանդիպելով դիմադրութեան՝ դիմում է բռնութեան և պրովոկացիայի, հայերի դէմ գրգռում է մահմետական ռազմ զանգւածներին ու քոչւորներին և գործիք դարձնում քիւրդ հրոսա—խմբերը: 380 հայ է սպանւել Ղարաքաղում, և այդ արեան պատասխանա—տուութիւնն ամբողջապէս ընկնում է Սուլթանովի վրա: Մանրամասնօրէն Թւելով Ղարաքաղի դէպքերը՝ Ազգ. Մորհուրդը հաստատացնում է, որ Շուչին գրաւելը դեռ ևս Ղարաքաղի նւաճում չի նշանակում և որ ո՛չ մի համաձայ—նութեան չի կարելի հանձել Սուլթանովի հետ: Յայտնում է նոյնպէս, որ չուտով դումաբւելու է Ղարաքաղի հայութեան 6րդ համագումարը, որը նորից քննութեան կառնի իր և Ադրբէջանի փոխյարաբերութեան հարցը:

Նոյն խմաւով զեկուցում բերից և Շաուէլդորտի ներկայացուցիչ գնդ. Գլասերբերգը, որը ուղարկւել էր Ղարաքաղ Յանդամանալու համար կոտո—րածների մանրամասնութիւններին: Նա ևս պնդում էր, որ կոտորածի ամբողջ պատասխանատուութիւնը ընկնում է Սուլթանովի վրա, որը նախօրօք քաղաքի և Ղայթալիքենդի մօտերը դրել էր քրդական խմբեր և նրանց միջո—ցով ջարդել հայերին: Եթէ Սուլթանովը կամենար, կոտորած չէր լինի և անդորրութիւնը Ղարաքաղում չէր խախտւի: Գնդ. Գլասերբերգը առա—ջարկում էր պատասխանատուութեան ենթարկել Սուլթանովին:

Մինչդեռ պահանջի վրա պնդում էին և Ադրբէջանի Մորհրդարանի հայ պատգամաւորները, որոնց կողմից պատգամաւոր Գ. Զուլբարը գնացել էր Ղարաքաղ, տեղն ու տեղը ուսումնասիրել դէպքերը և նոյնպէս յանգել այն եզրակացութեան, որ պատահածների ամբողջ պատասխանատուն Սուլթա—նովն էր: Մորհրդարանում արտասանած իր ընդարձակ ճառով Զուլբարը բազմաթիւ փաստերով ու պաշտօնական վաւերագրերով հաստատեց, որ Ղայթալիքենդի և մեւս գիւղերի կոտորածը Սուլթանովի գործն էր: Մոր—հրդարանը, սակայն, գտաւ, որ Ղարաքաղի տեղական իշխանութեանց և, ի մասնաւորի, ընդհանուր–նահանգապետի գործողութիւնների մէջ չկայ ապօրինութեան և ոչ մի փաստ:

Ղայթալիքենդի կոտորածների և անգլիացիների հեռանալու տպաւո—րութեան տակ, Սուլթանովի հրաւէրով, յունիս 28–ին, Վարդենչի Շոշա գիւղում (Շուշիից 4 վերստ վրա) հաւաքւեց Ղարաքաղի 6րդ համագումա—

քը, որին մասնակցում էին և Բագրատ զաբաթաղիների ներկայացուցիչները ու Ադրբէյնի կառավարութեան ներկայացուցիչ Իւստաւոմբէդովը։ Օրա-կարգի հարցն էր՝ Ադրբէյնի իշխանութեան ճանաչումը։ Սուլթանովը կանչած էր Բագրատ. անդլիացիք էլ ներկայացուցիչ չէին ուղարկել։ Այդ պատճառով համագումարը ընթրեց 3 հոգինոց մի մարմին — Թուրքին Շահ-Տախտաքան, Աբասաչիս Տէր-Դանիէլեան, Գեղամեան Ռաչատուրեան — տալով նրան Ղարաբաղի կողմից Ադրբէյնի կառավարութեան հետ բանակցելու լիազօրութիւնն և ինքը գրեց։

Ընթրատները մեկնեցին Բագրատ՝ տանելով իրենց հետ համաձայնութեան մի նախագիծ։ Ձանապարհին Գեղ. Այշատրեանը սպանուեց Քուրքերի ձեռքով, իսկ մեւս երկուսը հասան Բագրատ և զարաբաղցիների հայրենակցական միութեան ու Ազգ. Խորհրդի հետ խորհրդակցելուց յետոյ՝ բանակցութեան մէջ մտան Ադրբէյնի կառավարութեան ու Սուլթանովի հետ և յանգեցին որոշ համաձայնութեան։

Նախնական համաձայնութիւն կայացնելուց յետոյ, Ղարաբաղի ներկայացուցիչները և Սուլթանովը վերադարձան Ղարաբաղ։ Սուլթանովը արտաքնապէս փախից իր վերաբերմունքը. չատ սիրալիր էր դէպի հայերը և ամէն կերպ աշխատում էր գրաւել նրանց համակրանքը։ Հաստատուեց հայկական քաղաք, մի հայի տանը և յայտարարեց, որ Շուշի—Եւլախ ճանապարհը այլևս բաց է, և հայերը ազատ են ճամփորդելու։ Նրանց գլխից մի մաղ իսկ չի ընկնի։ Հայերն էլ, իրենց հերթին, աշխատում էին առիթ չտալ զժգոհութեան ու բարդութիւնների։

Այս երևութական խաղաղութեան տակ, սակայն, կրքերը չարունակում էին եռալ, և երկու կողմերն էլ տենդագին պատրաստութիւնների մէջ էին։ Հայերը պատրաստւում էին Ղրդ համագումարին, որը պիտի որոշէր Բագրատի կնքած համաձայնութեան ճակատագիրը. ղարաբաղցիները պէտք է ասէին, թէ ի՞նչ է իրենց վճիռը՝ ընդունել Ադրբէյնի իշխանութիւնը, թէ չարունակել պայքարը։ Այս հոգի վրա սուր տարակարծութիւններ կային քաղաքացիների և պետականների մէջև։ Վերջիններս մեղադրում էին քաղաքացիներին, որ նորից գաւաճանել են Ղարաբաղին՝ համաձայնելով համաբերելու Ադրբէյնի պայմաններին։

Մեւս կողմից պատրաստութիւններ էր տեսնում և Սուլթանովը. մի կողմից աշխատում էր կոմունիկիցներ որսալ հայերի մէջ՝ պատկառելով նրանց, մեւս կողմից չտապում էր գրաւել ռազմագիտական կարևոր կէտերը, ամրացնել զօրքերի թիւը, զէնքով և ամրացնել նրանց։ Հաւաքում էր ապստամբական բոլոր ազգերու համար համագումարի վրա։

Օգոստ. 12–ին, Շուշու դիւղում, բացուեց Ղրդ համագումարը։ Սուլթանովը չներկայացաւ նրան և ուղարկեց առաջնորդ վանան եպ.–ին մի քանի քաղաքացիների հետ։ Համագումարը մերժեց լսել սրանց և մի խոսք բողոք ուղղեց Սուլթանովին՝ Գ. Այշատրեանի և ուրիշների սպանութեան գէմ։ Ի պատասխան, օգոստ. 14–ին, Սուլթանովը ներկայացրեց համագումարին մի

վերջնագիր՝ պահանջելով 48 ժամւայ ընթացքում ընդունել Բագւում մշակւած համաձայնագիրը՝ սպառնալով, հակառակ պարագային, զբաղել զինւորական ոյժի։

Համագումարը երկարօրէն քննեց առեղծւած դրութիւնը և համոզւելով, որ դրսից ոչ մի օգնութիւն չի կարող ստանալ—անգլիացիները պաշտպանում էին ազգբնջիներին, իսկ Հայաստանի կառավարութիւնը ի վիճակի չէր լուրջ օգնութիւն հասցնելու — այլ և կշռելով սեփական ուժերը՝ խոհեմութիւն համարեց զէնքին և օգոստ· 15-ին որոշեց ընդունել Բագուի համաձայնագիրը։ Ցաջորդ օր, Օգոստ· 16-ին նրա 16 ներկայացուցիչները գնացին Շուշի, Սուլթանովի մօտ և օգոստ· 22-ին ստորագրեցին հետևեալ համաձայնագիրը·

«Ընկատելով, որ Լեռնային Ղարաբաղի ճակատագրի հարցը լուծւելու է Հաշտութեան վեհաժողովում, որ ամէն մի ընդհարում վնասակար է Ղարաբաղի ազգաբնակութեան համար, որ Ղարաբաղի հարցը ինչ ժամով էլ լուծւելու լինի, հայերն ու մահմետականները ապրելու են միասին, Ղարաբաղի Հայոց Ցրէ համագումարը իր 1919թ· օգ· 15-ի առաւօտեան նիստում որոշեց կանգ առնել Ազրբէջանի Հանրապետութեան կառավարութեան հետ կայացած համաձայնութեան հետևեալ կէտերի վրայ·

1· Մոյն ժամանակաւոր համաձայնութիւնը կոդմերն ընդունում են միմիչև որ այդ հարցը վճռւի Հաշտութեան վեհաժողովում, որպէսի լուծումը հաւասարապէս պարտադիր է երկու կողմերի համար էլ։

2· Ղարաբաղի Շուշի, Ջիվանչիր և Ջրբայիլ գաւառների հայերով բնակեցւած լեռնային մասը (Դիզակ, Վարանդա, Ցայէն, Ջրաբերդ) ժամանակաւորապէս իրեն համարում է Ազրբէջանի Հանրապետութեան սահմաններում։

3· Շուշիի, Ջիվանչիրի և Ջրբրայիլի գաւառները մնում են իրրև առանձին վարչական միաւոր Ղարաբաղի ընդհանուր-նահանգապետութեան և նրա ներքին կազմակերպութիւնն այնպէս է, որ լեռնային հայկական մասում վարչութիւնը նշանակւում է հայերից՝ փոքրամասնութեան իրաւունքների երաշխաւորութեամբ։

4· Ղարաբաղի լեռնային մասում (Դիզակ, Ցայէն, Վարանդա և Ջրաբերդ) վարչական պաշտօնատար անձինք նշանակւում են խորհրդի հայ անդամների առաջարկութեամբ։

5· Ղարաբաղի ընդհանուր-նահանգապետութեան կից հիմնւում է 6 հոգինոց մի խորհուրդ — 3 հայ և 3 մահմետական։

6· Խորհրդի հայ անդամները ընտրւում են Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակութեան համագումարից։ Համագումարն իրաւունք ունի վերընտրելու։

7· Միջնդային բնոյթ ունեցող սկզբունքային բոլոր հարցերը չեն կարող կէրտուել կեանքում առանց նախօրօք խորհրդում քննելու։

8· Խորհուրդն ունի նախաձեռնութեան իրաւունք ընդհանուր-նահանգապետութեան կարգաւորման ու կառավարութեան վերաբերող հարցերում։

9· Խորհուրդն ունի ընդհանուր-նահանգապետութեան վարչութեան վրա հսկելու ու հակակշռելու իրաւունք՝ առանց վարչութեան գործողութիւններին խառնւելու իրաւունքի։

10. Հաստատւում է ընդհանուր-նահանգապետի քաղաքացիական մասի օգնականի պաշտօն, որպիսի պաշտօնին նշանակւում է հայ:

11. Քաղաքացիական մասի օգնականի պաշտօնի համար հայկական համագումարը ներկայացնում է Ազգրբէլքեան կառավարութեան երկու թեկնածու, որոնցից մէկը հաստատւում է:

12. Ղարաքաղի հայերը վայելում են մշակութային ինքնավարութեան իրաւունք:

13. Մշակութային ինքնավարութեան իրաւունքը կիրառւում է Ղարաքաղի Հայոց Ազգային Խորհրդի կողմից, որը ընտրւում է Ղարաքաղի հայերից պարբերաբար հրաւիրւող համագումարներում: Համագումարը հրաւիրում է Ազգ. Խորհուրդը:

14. Ազգրբէլքանի Հանրապետութեան կառավարութիւնը հակակշռում է Հայոց Ազգային Խորհրդի գործունէութիւնը հայ լիազօրների միջոցով:

15. Զօրամասերը կենում են Թանքենդում և Շուլհում, խաղաղ ժամանակւայ կազմով:

16. Զօրամասերի ամէն տեղափոխում Ղարաքաղի, Շուլհի, Ջիվանչիր և Ջիրրայիլ գաւառների լեռնային հայաբնակ մասերում կարող է կատարւել խորհրդի անդամների երկու երրորդի համաձայնութեամբ:

17. Քաղաքական համագումարների համար ոչ ոք չի կարող հետապնդման ենթարկւել ոչ զատական, ոչ էլ վարչական կարգով:

18. Քաղաքական պատճառներով մեկնելու հարկադրւած բոլոր հայերը իրաւունք ունեն վերադառնալու իրենց տեղերը:

19. Ղարաքաղում դադարեցւում է հայ և մահմետական բնակչութեան զինաթափումը մինչև Ղարաքաղի հարցի որոշւելը Հաշտութեան Վեհաժողովում:

Ծանօթագիր. Քանի որ ամբողջ Ազգրբէլքանում յայտարարւած է զինաթափութիւն, խօսք կարող է լինել միայն դադարեցման մասին:

20. Ազգրբէլքանի Հանրապետութեան կառավարութիւնը ցոյց է տալիս նիւթական և բարոյական աջակցութիւն Ղարաքաղի ազգաբնակութեան՝ մահմետական ու հայ քաղաքացիական գիւղերը չուտով վերականգնելու համար:

21. Միջնեղային յարաբերութիւնները աւելի լաւ կարգաւորելու նպատակով խորհուրդը պարբերաբար հրաւիրում է հայ–մահմետական ընդհանուր և տեղական համագումարներ:

22. Միութիւնների, խօսքի ու մամուլի կատարեալ ազատութիւն: Իսկ ժողովները, քանի որ ամբողջ Ազգրբէլքանում տիրում է զինուորական դրութիւն, արուում են վարչութեան կողմից:

23. Մասնաւոր և պաշտօնատար անձանց բոլոր յանցագործութիւնները հետապնդւում են դատական ընդհանուր կարգով, բացի Գետական Պաշտպանութեան Կոմիտէի 1919թ. յունիս 11-ի պարտադիր որոշումով ընդհանուր դատաստանական ենթակայութիւնից հանւած յանցանքներից:

24. Մինչև այժմ տեղի ունեցող մէկ ցեղային ընդհարումներին մասնակցելու համար ոչ ոք չի ենթարկւում պատասխանատուութեան:

25. Սոյն համաձայնութիւնը ուժի մէջ է մնում Ղարաքաղի Հայոց Շրջ. համագումարի ընդունած վճռի կնիքից:

26. Սոյն համաձայնութիւնը իր ուժի մէջ է մնում բոլոր դէպքերում՝ պատերազմական, զինուորական և այլն:

Ղարաբաղի Երդ համագումարի նշանակած պատւիրակները լիագօր են՝ ստորագրելու համագումարի բոլոր անդամների ընդունած վերջնական ժամանակաւոր համաձայնութիւնը Ազրբէջանի կառավարութեան հետ, ընտրելու 2 թեկնածու Ղարաբաղի ժամանակաւոր ընդհանուր-նահանգապետի օգնականի պաշտօնի համար և Ղարաբաղի ընդհանուր-նահանգապետի կից գտնւող խորհրդի 3 անդամներ ու լուծելու բոլոր այն տեխնիկ հարցերը, որոնք կապած են Ղարաբաղի կառավարութեան հետ՝ ընդունւած ժամանակաւոր համաձայնութեան հիման վրա՝

1. Դանիէլ Աւագեանց, 2. Աբրամ Գեւորգեան, 3. Սիմոն Զօրաեան, 4. Հիւանդ է, 5. Սմբատ Բալայեանց, 6. Բենիամին Բարաքոխովեանց, 7. Խաչիկ Գիւլբեքոխովեանց, 8. Աբրամ բէգ Իշխանեան, 9. Հաչիկ Մուրադեան, 10. Յովհաննէս Աբրամեան, 11. Ստեփան Ստեփանեան, 12. Ճակոր Բալասանեան, 13. Տիգրան Մելիք-Գասպարեան, 14. Աւանէս Գասպարեան, 15. Լևոն Վարդանեան, 16. Արսէն Յովհաննիսեանց։

Այս համաձայնագրի բոլոր կէտերի ամփոփումը նոյն օրն և ութ, օգ. 22-ին, Սուլքանովը հրատարակեց առանձին յայտարարութեամբ և հանդիսաւորապէս պարտաւորութիւն ստանձնեց՝ կատարելու կեանքի մէջ։ «Այսուհետև, ասում էր նա այդ յայտարարութեան մէջ, նոր դարագլուխ է բացւում Ղարաբաղի ազգաբնակութեան կեանքում»։

Նոր գարագլուխ, դժբախտաբար, չբացւեց, բայց Սուլքանովը իրաւունք ունէր հպարտանալու, որովհետև, քէն ժամանակաւոր կերպով, Ղարաբաղը դառնում էր Ազրբէջանի մաս։ «Ժամանակաւորը» վերջնական դարձնելը ապագայի հարց էր, և ազրբէջանցի գործիչները չէին հրաժարւում այդ մտքից։ Մի ուրիշ յայտարարութեան մէջ, յետագային, Սուլքանովը աւելի ցայտուն կերպով արտայայտեց այդ տրամադրութիւնը. «Ընտրեք, որ երդուում են Ղարաբաղի հայկական լեռնային մասը բաժանել նրա մահմեդական մասից, ասում էր նա, կարող են համաձայել կամ ձերդակիտներ և կամ իրենց ժողովրդի քշնամիներ։ Ղարաբաղի դաշտավայրից պակասած լեռնամասի ազգաբնակութիւնը սովից կը կոտորւի։ դաշտավայրի բնակչութիւնն էլ, առանց լեռների, կը կործանւի քէ տնտեսապէս (անասնաբուծութիւն) և քէ ֆիզիքապէս (մալարիա)։ Իսկ եթէ մի անգամ ընդունենք իրրև անժխտելի ճշմարտութիւն, որ Ղարաբաղը տնտեսապէս և քաղաքականապէս անբաժան է, հէնց կը լինի լուծել այն հարցը, քէ ո՞ր պետութեան է պատկանելու նա։ Եւլսեից սկսած մահմեդական հոծ բնակչութեան չրջանն է տարածւած։ Մտածելով լերան ստորոտին՝ տեսնում ենք հայ-մահմեդական խառն բնակչութեան չրջան։ Բարձրանալով լեռները՝ գտնում ենք համարեա բացառապէս հայ ազգաբնակութիւն։ Այդ վերջին չրջանի յետևը դարձեալ մահմեդական չրջաններ են՝ Զանգեզուրը և աւելի հեռուն՝ Նախիչևանը, որից յետոյ սկսում է Հայաստանի հողը։ Այսպիսով հայկական չրջանը չրջապատւած է մահմեդական չրջաններով։ Բացի այդ, պէտք է նկատել, որ ձմեռայ երեք ամիսների ընթացքում ճանապարհը Նախիչևանից Զանգեզուր, ուրեմն, և Հայաստանից Զանգեզուր բոլորովին կտրւում է։

Այսպիսով, Ղարաբաղը, իբրև տնտեսական մի ամբողջութիւն, ճնշիչ մեծամասնութեամբ բաղկանալով մահմեդական ազգաբնակութիւնից և հայկական չրջանը լինելով չրջապատւած մահմեդական չրջաններով, իր ո՛չ մի մասով կապ չունի Հայաստանի հետ և ֆիզիքական հեռաւորութիւն չունի յարաբերութիւն պահելու նրա հետ։ Միւս կողմից Ղարաբաղը գտնւում

է տնտեսական և, այսպէս ասենք, բնախօսական սերտ կապակցութեան մէջ Ագրբէյճանի հետ և միացումը այս վերջինի հետ պահանջում են Ղարաբաղում ապրող երկու ազգութիւնների չահերը»:

Գարգ ու կորուկ. Ղարաբաղի հարցը մեզի Ղարաբաղը Ագրբէյճանին հանելու խնդիրը չէ, այլ և Զանգեզուրն ու Նախիջևանը Ագրբէյճանին միացնելու:

Օգոստ. 22-ի համաձայնութիւնը ցնծութեամբ ընդունեց ամբողջ Ագրբէյճանում: Մուսաւաթի պարագլուխ Խասուլ Զադէն քարտմանը եղաւ ընդհանուր ուրախութեան:

«Ղարաբաղը, գրում էր նա,*) մեր հայրենիքի այդ սքանչ վայրը ազատուեց մեր յամառ դրացիների ոտնձգութիւններից, որոնք չլսում էին մեր տնտեսական կեանքը, և մեր ջերմի վերին հոսանքը բռնելով՝ ուզում էին մեզ նեղ դրութեան մատնել: Առանց տեղի տալու ուելորդ աբիւնհեղութեան՝ հայ ժողովուրդը բռնեց հարցի խաղաղ լուծման ճանապարհը և ընդունեց Ագրբէյճանի գերիշխանութիւնը:

Նախիջևանը, որ իր բնական պայմաններով խնամքս հնախչը–Ջհհանդ (աշխարհի գարդանքար) է և անբաժան մասը Ագրբէյճանի, ընորհիւ իր հերոս ու անձնուէր գաւակների հայրենասիրութեան, օգուտը ազատամարտելու իրաւունքից՝ միանալու համար հայրենիքին, որից բաժանուել էր խաբելով: Նախիջևանը իր սահմանից դուրս չպրտեց բռնագրաւող հայաստանի բանակը:

Գալով Զանգեզուրին, որ ցաւ է դարձել մեզ համար և մէջտեղը կանգնած է սպառնալով մեր նպատակներին, — կարող ենք յոյս ունենալ, որ նա էլ մօտ ժամանակում կը դրւի անվնաս դրութեան մէջ, և որ Աւստրա գետից և Սամուրի կամուրջից սկսած մինչև Արաքս գետն ու Ջուլֆայի կամուրջը կը բացուի անարգել մի ճամբայ: Այդ նշանակում է, որ այս կերպով Ագրբէյճանի հողային պահանջների կարևոր մասը լուծում է ստացել»:

Եւ, իրօք, Ղարաբաղի հարցը վերջնական լուծում էր ստացել: Ագրբէյճանը սկսեց տնտեսական պատրաստութիւններ տեսնել Զանգեզուրն էլ հանձնած դրութեան մէջ դնելու համար:

---

*) «Ագրբէյճան» (բաքուի թերթ), թիւ 28 օգ. 1919թ.

ԳԼՈՒԽ Ա.

ԶԱՆԳԵԶՈՒՐ — ԴՈՂՔՆ

Ղարաթաղից յետոյ Զանգեզուրը…

Ղարաբաղից յետոյ Զանգեզուրը…

1919թ. սեպտ. 7–ին, Ազրբէյջանի Դիվաւոր Սպարակոյտի պետը հետեւեալ գաղտնի մտքերն էր թելադրում Ղարաբաղի ընդհանուր-հնահանգապետ գր. Սուլքանովին. — «Ղարաբաղի հարցի խաղաղ կարգադրութիւնը հարկադրում է մտածել, որ Զանգեզուրի պաւառի կցումը տեղի կունենայ առանց գինւած կռւի, որովհետեւ նրա հայ ազգաբնակութիւնը, նախկինների փլուզումից յետոյ, դրւած է երկու հրակի մէջ եւ հոգէբ քէ համաձայնւած դիմադրելու մեզ, առանց քիկութեամբ նախկին աշխոյժութեան ունենալու: Սակայն եւ այնպէս, Ղարաբաղի անդորրութեան ապահովումը կզնել է ու կը լինի մեր մտահոգութիւնը՝ կամաւորական բանակի եւ նրա թնական ու մեծ դաշնակից Հայաստանի հետ ընդհարելու պարագայի: Գործերի ներկայ վիճակում Հայաստանը մեզ համար վտանգաւոր չէ, բայց նման բարենպաստ կացութիւնը չի կարող երկար տեւել, և մենք պէտք է պատրաստենք ուժի վատ դրութեան համար:

Ղարաբաղի վերջնական կորուստի հետ հայերը չեն կարող հաշտւել և, անկասկած, կձգտեն օգտագործել ամէն յարմար առիթ կորուստը յետ գարձնելու նպատակով: Այդ բոլորը մեզանից կը պահանջէ, օրգանական դէպքում, օրգեր թողնել Ղանջեղնում, իսկ ապագային նաև Գորիսում՝ հայերի վրա հսկելու համար: Այդպիսով, Ղարաբաղը կարող է մեր ոչ մեծ բանակից բաւական զգալի ուժեր գրաւել ճակատից: Սակայն, կան մի քողեր Ղարաբաղի պահպանութեան համար ոչ միայն գաւառային օրգերը չմոռլացնելու, այլ նակատ համար կենսական որ էլ հանելու նրա խորքերից՝ թողնելով բանականաչափ օրգամասեր Ղարաբաղի քնհանուր-հնհանգապետութեան չրջանի կարգի ապահովութեան համար:

Այդ նպատակով հարկաւոր է օգտագործել քրդական հիանալի մարտական ոյժը, կազմակերպել նրանցից հետևակ ու ձիաւոր մասեր հետեւելով գնդերի օրինակով, որոնց գործնական օգտակարութիւնը փորձած է Ղիւրքերի կողմից վերջին պատերազմի ընթացքին: Քրդական գնդերը անվճար գործունէութեան մասին փոքր-ասիական, պարսկական և Միջագետքի ռազմաճակատներում՝ մեծամասն խօսում են պատերազմին բոլոր մասնակիցները:

Ինչպէս զօրամասերի խաղաղ ժամանակի չորքեր ստեղծելու համար ենթադրւում է կազմակերպել քրդական ձիաւոր գունդ եւ մի հրացանաձիգ գումարտակ, որը պատերազմի ժամանակ կը վերածւի 4 գումարտակի:

Զինապարտ տարիքի քրդերը զինտրական պարտականութիւն կը կատարեն իրենց մասերում, իսկ պատերազմի դէպքում կը կազմէին նոր մասեր էլ (երկրորդ և երրորդ հերթի գնդեր ու գումարտակներ), որոնց մի մասը կը յատկացուի ռազմաճակատին, միւսները կը մնան Ղարաբաղում:

Ռրշական գօրամասերի կազմակերպութիւնը հանգամանօրէն մշակելու համար անհրաժեշտ է առ այժմ պարզել, թէ որքան հետևակ ու ձիաւոր մարտիկները կարող են տալ քրդերը: Հաղորդելով մեզ այս մասին՝ խնդրում եմ մեր գերազանցութեան՝ յայտնել մեր կարծիքը և հաղորդել խնդրւած թւերը»:

Այս նամակը կատարեալ յստակութեամբ պարզում է, թէ ի՞նչ ուղղութեամբ էր գարգանում Ազրբէյճանան պետական միտքը, որի համար թւերքական «համիդիէ» գնդերը համարւում էին իդէալ: Ցոյց է տալիս նաև, որ ազրբէյճանցիների համար հերթի էր դրւում Զանգեզուրի կղզումը, որպէս դի Սամուրից մինչև Արաքս հաստատւի Ազրբէյճանի իշխանութիւնը:

Զանգեզուրը, ցարական իշխանութեան օրով, կազմում էր Ելիսաւետպոլի (Գանձակի) նահանգի մէկ գաւառը՝ Ղարաբաղի ու Վարդանոցի միջև՝ արևմուտքից ունենալով Նախիջևանն ու Դարալագեազը, իսկ արևելքից Կարեազինի գաւառը: Զանգեզուրի գաւառը բռնում էր 6743 քառ. վերստ տարածութիւն և 1916 թ. ունէր 226,398 բնակիչ, որից հայ՝ 95,054, թուրք չէ՝ 110,637, թուրք սիւննի՝ 8,966, քիւրդ՝ 3,638, ռուս՝ 1,709 և այլն*):

Զանգեզուրի վարչական սահմանները էլ արհեստական կերպով գծած էին այնպէս, որ ո՛չ մի ժողովուրդ նրա մէջ գոյալի մեծամասնութիւն չէր կազմում: Ըստ հայկական վարչական վերաբաժանման ծրագրի Զանգեզուրից պէտք է գաւուէին մի չարք գուռ քրքաբնակ շրջաններ ու կցէին Կարեազինի քրքական գաւառին, որով Զանգեզուրը կը դառնար հայ մեծամասնութիւն ունեցող (65 %) մի գաւառ՝ 136 հազար բնակչութեամբ, որից 88 հազարը հայ, 46ը թուրք և 2ը՝ ուրիշ ազգութիւններ:

Ռուսական յեղափոխութեան յուրը Զանգեզուրում էլ առաջ բերեց ընդհանուր ոգևորութիւն: Հետզհետէ ամէն կողմ կազմւեցին յեղափոխական կոմիտէներ՝ փոխարինելու համար հին իշխանութեանը: Դէպքերի բերումով՝ գաւառը կորւեց նահանգական կենտրոն Գանձակից և իր գործերը վարում էր ինքը՝ Գորիսի ու Հանքերի խառն կոմիտէների միջոցով: Այստեղ էլ հայերն ու թուրքերը սկզբի չրջանում ապրում էին հաչտ ու համերաչխ:


Մարտի սկզբներին Ղարաթաղն ու Զանգեզուրը միացւեցին և կազմւեց Գանձակից անկախ մի առանձին չրջան՝ Շրջանային Գործադիր կոմիտէի գլխաւորութեամբ: Այս վերջինի չանքերով կազմւեց Գորիսի գործադիր կոմիտէ, որին ենթարկւում էին բուն Զանգեզուրն ու Սիսեանը, իսկ Ղափան—Մեղրիի չրջանը մնաց Հանքերի կոմիտէի իշխանութեան տակ:

---

*) Այս գլուխը կազմելիս ադբիւր եմ ունեցել՝ «Кавказскій Календарь», 1917 г.», А. Шахатунянъ. «Административный передѣлъ Закавказскаго Края». 1917. Тифлисъ.
Այլև լայնօրէն օգտւել եմ զանգեզուրցի ծանօթ գործիչ Ց. Չէրունի հետաքրքիր Օրագրութիւնը Զանգեզուրում ձեռագիր աշխատութիւնից ու Հ. Հ. Գասւիքրահութեամբ դիւանի միւրեքից:



Ա. ԱՐԱԼԵՑ-ԱՐՈՒԽՈՒՄՅԱՆ



Գ. ԳԱՐԵՑԻՆ



ՊԱՐՈՒՅՐ ՓՈՂՈՍՅԱՆ



ԲԱՐ. Ա. ՈՍԿԱՆՅԱՆ



Գ. ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՅԱՆ



ՏԵՐՈՒՅԱՆ



Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ



Ե. ՍԱՐՅԱՆ

Սակայն, չբնանային նոր կազմակերպութիւնը յաջողութիւն չունեցաւ. փաստորէն Ղարաթաղն ու Զանգեզուրը ապրում էին առանձին, իրարից կտրւած, և Զանգեզուրի կացութիւնը երթալով վատանում էր: Մի կողմից նիւթական ու պարենաւորման սուր տագնապը, միւս կողմից՝ հողային վէճերը, հայ–թրքական յարաբերութիւնների լարւելը — այս ամէնը անհրաժեշտ դարձրին աւելի ուժեղ իշխանութեան ստեղծումը: Օգոստ. 15–ին գումարւեց համազանգեզուրեան գործադիր կոմիտէի նիստը՝ բաղկացած 31–ական հայ ու թուրք պատգամաւորներից, որոնք ընտրւել էին Օգակոմի ներկայացուցիչների ղեկավարութեամբ, գաւառի 31 գիւղախմբերից: Հայ պատգամաւորներից 24 դաշնակցականներ էին, մնացած 7ը՝ սոց.–դեմոկրատ, սոց.–յեղափոխական և այլն: Թուրքերից՝ 28 մուսաւաթական և 3ը՝ սոց.–չեմոկրատ:

8 օրւայ նիստերի ընթացքում լուծւեցին գաւառին վերաբերւող խնդիրները և ընտրւեց 4 հոգինոց մի դուան, 7 անդամներից հողային կոմիտէ, գաւառապետ, օգնական, չբնանների ոստիկանապետներ, որոնք և կազմելին գաւառի իշխանութիւնը՝ դիւանի վերին հսկողութեան տակ: Դիւանի նախագահ ընտրւեց Նազար բէդ Սուլքանովը, փոխ–նախագահ՝ Ց. Տէրունին, հողային կոմիտէի ղեկավար՝ Աբշ. Շերինեանը և Մ. Հ. բէդ Մոլշանանկին, գաւառապետ՝ Մեսրոպ բէդ Սարաօիկեանը, օգնական՝ Խանլար բէդը:

Գործադիր կոմիտէի նիստերի ժամանակ տեղի ունեցաւ կրքոտ պայքար, մանաւանդ պահ. մուսաւաթականների կողմից, որոնք աշխատում էին իշխանութիւնը առնել իրենց ձեռքը: Այդ պայքարը, Ջաւիլ բէդ Սուլքանովի գլխաւորութեամբ, չարունակւեց դուրսն էլ և ծայր–աստիճան սրեց հայ–թրքական յարաբերութիւնները: Դրան նպաստում էին և բախումները թուրք քոչւորների և տեղական հայ ու ռուս գիւղացիների միջև: Տեղական թուրքերը բռնում էին քոչւորների կողմը, որից առաջ էին գալիս ընդհարումներ և տեղական հայերի ու թուրքերի միջև: Սեպտեմբերին ազուռի–վարուդեցի թուրքերի ձեռքով սպանւեցին մի քանի սխալանիներ: Երթևեկութիւնը խանգարւեց. ճանապարհները դարձան վտանգաւոր:

Գործերը կ՚աւելի խճճւեցին, երբ թուրքերը Զանգեզուրի քրքական մասը յայտարարեցին Գորիսից անկախ, և Դոնդարլու. գիւղում կազմեցին առանձին կառավարութիւն՝ Մահմետական կոմիտէ անունով՝ Ջաւիլ բէդի նախագահութեամբ: Քրքական լրբնանների հայերը տեղափոխւեցին հայկական վայրեր. Գորիսից թուրքերը քաշւեցին Քրքական լրբնանները: Փաստորէն Զանգեզուրը բաժանւեց երկու, իրարից անկախ մասերի: Նոյեմբերը ամօք լուծւեց և Գործադիր կոմիտէի դիւանը, պետական հիմնարկութիւնները փակւեցին, գաւառապետը քաշւեց գործից, և ամէն բան խառնւեց իրար:

Այսպէս տեւեց դրութիւնը մինչև 1918Թ. յունւարի վերջերը: Ծունւ. 25–ին Գորիսում կազմւեց 18 հոգինոց մի՝ ազգային մի խորհուրդ — 9 դաշնակցական և 9 մուսաւաթական միջև կուսակցութիւններից — որը աշխատեց կազմակեր–

պել հայկական չրլիաններուն իշխանութիւնը, բայց Տիւրքական միլոցներուն ու պետական մեքենայի բացակայութեան պատճառով յաղթութիւն չունենալու։

Դարձան բացատրելով՝ անկախանութիւնը աւելի ևս տատակացաւ։ Մայիսին սկսաւ քոյը։ Քուրք քոչուորները պատրաստուում էին իրենց հօտերով բարձրանալ Զանգեզուրի սարերը։ Ծաղոզութեան դէպքում այդ պիտի նշանակէր տոյժ մահ զանգեզուրցիների համար։ Եւ ահա, յեղաբեկութեամբ, իրարից անկախ, Սիսեանում, Դորխում, Ղափանում ու Մեղրիում կողմնակցին տեղական մարմինները, որոնք իրենց ձեռքն առին ինքնապաշտպանութեան գործը։ Նշանակեցին չրջանապետներ և անցան կազմակերպական աշխատանքի։

Մայիսի վերջերին Զանգեզուր հասաւ և Խնուսի, Սասունի ու Վանի գաղթականների մի մասը՝ պինւած ուժերով։ Խնուսցիների մի հարիւրեակը եղոյի գլխաւորութեամբ և վանեցիների մի վաշտը իրենց դրին Սիսեանի մարմնի տրամադրութեան տակ, իսկ Սասունցի Մանուկը, Մուչեղը և Զոլօն երեք հարիւրեակով անցան Դորխ։ Այդ ուժերը կազմեցին այն կորիզը, որի չուրջ համախմբեցին զանգեզուրցի մարտիկները։

Ծունեսի սկզբներին, հազարաւոր պինւած քոչուորներ խոնւեցին Հազարի դեսի ափին՝ պատրաստ դէնքի ուժով բանալու սարերի համբան։ Նրանց օդնութեան էին եկել և Հալի-Սամլուի ու Մուսուլմանլարի Քուրքերը։ Հարամի Դիւզ վայրում տեղի ունեցան Քուրքերի և հայերի մէջև արիւնահեղ ճակատամարտներ, և Քուրքերը պարտուած՝ դիմեցին փախուստի՝ կուի դաշտում թողնելով բազմաթիւ դիակներ։ Կարճ ժամանակ յետոյ, Հալի-Սամլուի Քուրքերը յարձակուեցին Սիսեանի վրա՝ կամենալով միանալ Քրքական Ջուլ չրջանին և այդպիսով Զանգեզուրը կտրել Դարալագեազից, բայց կարդած քշեցին այստեղից էլ։ Ընդհարումներ եղան և Զլվա—Հազարակ գեղ վրա, Մեղրիում. այստեղ ևս Քուրքերը չդիմացան ու փախան Օրդուբաթի կողմերը։

Այսպիսով, Զանգեզուրն ազատուեց քոչի մղձաւանջից։ Ծուլիսին Սիսեան էկաւ Շուշիի գնդի սպայակոյտը՝ գնդապետ Մելիք-Շահազաթեանի գլխաւորութեամբ։ Իսկ, յուլիսի վերջերին, զանգեզուրցիների կողմից Երևան ուղարկուեց մի յատուկ պատւիրակութիւն՝ յայտնելու համար Հայաստանի կառավարութեան, որ Զանգեզուրը վճռել է մնալ Հայաստանի մաս և պատրաստ է մինչև մահ կուել, և խնդրելու, որ Հայաստանի կառավարութիւնը Զանգեզուր ուղարկէ 8—10 ձեռնհաս սպայ ու զրամական միջոց։ Հայաստանի կառավարութեան վիճակն այն օրերին այնպէս էր, որ, ի հարկէ, չըսփռելիք օդնութիւն չէր կարող հասցնել։ Վարչապետ Ե. Ֆալեզարեանին ահմանափակուեց միայն բարոյական քաջալերանքով։ Ըստ էութեան, աւելի դրական չեղաւ և ներքին գործոց Նախարար Աքամի տրածը, բայց նա խոստացաւ կենդանի կապ պահել Զանգեզուրի հետ և ժամկէ ապագայում ուղարկել մի ձեռնհաս հրամանատար ու սպաներ։

Ծուլիսի վերջերին Զանգեզուր մտաւ Անդրանիկը և հրամանատարի պահանջը այդպէսով որոշ ժամանակի համար լուծուեց*):

Օգոստոսի սկզբներին, Կարսի ու Շարուր–Նախիջևանի հետ միաժամանակ, Թուրքերն ընդհանուր յարձակման անցան և Զանգեզուրի վրա, բայց նորից հանդիպեցին յամառ դիմադրութեան: Զանգեզուրցիների ինքնապաշտպանութեան գլուխն անցաւ Անդրանիկը, որ ընդհանուր զօրավարութիւնը և յետ չդրեց Քրքեանի բոլոր զորհները՝ գրաւելով և ամրանալով Զարուղի բերդում:

Նոյեմբերին Թուրքերը նորից դիմեցին զործողութիւնների Զանգեզուրի դէմ: Կռիւները սկսեցին մինչև դեկտեմբեր: Անդրանիկը, որ ստացել էր զարթաղդների օգնութեան կոչը, Յարդից քշմարուն և չարժւից դէպի Շուլի, բայց, ինչպէս տեսանք արդէն, հէս ճանապարհին անգլիացիների կողմից կանգնեցուց ու վերադարձուց Զանգեզուր: Ճանապարհները բացուելուն պէս Անդրանիկը, անգլիական սպայ Գիքրենի ուղեկցութեամբ անցաւ Խզմիանին, ուր մի առ ժամանակ մնալուց յետոյ, զէնքերն ու ռազմամթերքը կամիւրիկոսին յանձնելով՝ անցաւ Թիֆլիս և այնտեղից, մայիս 6–ին, արտասահման**):

---

*) Բաթումի դաշնագրից յետոյ. Անդրանիկը՝ ունենալով իր հետ մօտ 3000 հետևակ, 700 ձիաւոր, 150 թնդանօթաձիգներ, 80 գնդացիրաւորներ, 1 դաշտային և 3 լեռնային թնդանօթ, 40 ուղտ, 15 սայլ և մի մեծ տասնեակ հազար գաղթականներ՝ Նոր–Բայազետի, Թեքալագեղի ու Զուլֆայի վրայով անցել էր Խոյ՝ անկիրական բանակի հետ միասնաբար յուսալ: Յունիս 21–ին. Սէդդաթար գիւղի մօտ թիւրքերի հետ կռւի բռնվել ու մօտ 150 հոգի սպանած ու գերի տալով՝ ճանաչվել էր Զուլֆա, սպա Նախիջևան, ուր փորձել էր կազմակերպել հայկական ինքնապաշտպանութիւնը: Այստեղից էլ, սովից, հիւանդութիւններից ու թիւրքերից նեղուած՝ Օխչի չայի հովտով, անցել էր Ղափան:

**) Արժէ այստեղ արձանագրել մի փաստ, որ մինչև այժմ գրի չի առնուած և որը, սակայն, գուրկ չէ պատմական արժէքից: Ապրիլին Անդրանիկը մտաւ Երևանի գաւառը: Հայաստանի կառավարութիւնը նրան ընդառաջ ուղարկեց ներքին գործոց նախարարի օգնական Ս. Մանասեանին և Երևանի զօրամասի պետ Գրօնին՝ բարի գալուստ մաղթելու և Երևան հրաւիրելու համար: Անդրանիկը ջրախցած և լուսանկարը թափելով կառավարութեան գլխին՝ մերժեց մանել հասկիների մեծով ասեղնած Հայաստանին մայթագաղաց և, ինչպէս գրած է իր հրատարակած ճշմարիտ Զանտի Գասմական Օդագրութեանց մէջ (էջ 137), տառապեց Երևան մտնելու և դասակոնելու երեսներ տեսնելուց, անցաւ էջմիածին,

Ապր. 19ը Զատիկի նախօրեակն էր, և Երևանի լուսան լիքն էր գիւղացիներով, քաղաքի բնակիչներով, գինուորներով: Մէկ էլ, կշեռքի տակ, լսել որ վեճ ու կռիւ է սկսուում Անդրանիկի կառավարիչի և երևանցի գինուորների միջև: Անդրանիկի գինուորները մէկը վիրաւորուում է, մէկ ուրիշը չտապում է էջմիածին՝ հաղորդելու եժանչիկ, թէ՝ Երևանի կառավարութիւնը հրաման է ուել կոտորելու համալուրներին, որոնցից մի քանիսն արդէն սպանած են երևանի չուկայում:

Անդրանիկը կրակ է կարում: Հրամայում է անմիջապես հաւաքել բոլոր գինուորներին, զօրաւորած է նրանց և հետևակով, ձիաւորով, գնդացիրով ու գնդացքով արշաւում Երևանի վրա: Կէսօրին Երևանի բլուրների, այգիների յետևը, երևում են Անդրանիկի սառնազարհնեը: Շուտով հասնում է և ինքը: Բլրի գլխին անկում է գունակիցների դրօշակները, Քեամանիների բերանները ուղղում քաղաքի վրա, դէրջեր բանում և պատրաստութեան մէջ տալով կառավարութիւնից բանագործութիւն ու յանցաւորների պատիժ է պահանջում, հանուան զորագլխի սպանութիւնը ամբոխներ քաղաքը···

Կարելի է երևակայել, Քէ ինչ զարհյր ու վրդովում առաջ եկաւ կառավարական ու

Անգլիացիների երեսը Զանգեզուրում առաջ բերեց անխառն ուրախություն, որը, սակայն, չուտով պղտորուեց անգլիացիների բռնած երկդիմի դիրքով. «մեր մեծ դաշնակից» ներկայացուցիչներն էլ աշխատում էին Զանգեզուրը դնել Ադրբէջանի իշխանութեան տակ: Զանգեզուրցիք ցասումով բողոքեցին և ըմբոստացան այդ ծրագրի դէմ: Այդ առթիւ Զանգեզուր գնաց գօր. Թոմսընի տեղակալ գօր. Շատելվորդը և Հայաստանի ներկայացուցիչ Ց. Արղուեանը: Զանգեզուրցիք Շատելվորդին էլ ընդունեցին գայթյթով ու միակ պահանջով՝ միացնել Զանգեզուրը Հայաստանին: Շատելվորդի սպառնալիքների վրա՝ զանգեզուրցիները դիւնած ցոյց արին նրա ինքնաշարժի չուրջ և քիչ էր մնում ձերբակալէին նրան: Շատելվորդը հեռացաւ ձեռնունայն, իսկ Ց. Արղուեանը, որ Ղարաբաղի հարցում կուսակից էր փոխադարձ զիջումի, զեկուցում տարաւ Երևան, թէ, ստեղծած պայմանների մէջ, ո՛չ միայն Զանգեզուրը, այլ և Ղարաբաղն էլ չի կարելի Թողնել Ադրբէջանի տիրապետութեան տակ:

Թիւրքերի պարտութիւնից յետոյ, կուսակցութիւնների և կազմակերպութիւնների փոխադարձ համաձայնութեամբ որոշուեց կեանքի կոչել Զանգեզուրի կենտրոնական Ազգային Խորհուրդը, 9 անդամներով, որոնք պիտի ընտրէին ըրջանիներից: Ընտրուեցին Սխտիսից Մ. Զաքարեան, Ց. Տէրունի և Գ. Տէր-Մկրտչեան, Բուն Զանգեզուրից՝ Տ. Սագանդուքեան, բժ. Մ. Պարոնեան, Ն. Ռուխկեան, Ղափան—Մեղրիից՝ Ս. Մ.-Քարամեան, Ա. Շերինեան, Ս. Մ.-Մուսինեան: Խորհուրդը գործի անցաւ դեկտեմբերի սկզբին և այդ օրից լուծած համարուեցին բոլոր հին մարմինները:

Ազգային Խորհուրդը ձեռնարկեց գաւառի իշխանութեան հիմնական կազմակերպութեան: Ամէն ինչ նորից պէտք էր սկսել: Խորհրդի նախագահ և միանգամայն գաւառապետ ընտրուեց Մ. Պարոնեանը, որին, երկու ամիս անցած, գաւառապետի պաշտօնում փոխարինեց Ն. Ռուխկեանը: Նշանակուեցին ըրջանային կոմիսարներ: Վերընտրուեցին գիւղական կոմիսարները: Ստեղծուեց գաւառական պարենաւորման կոմիտէ. ըրջաններում նշանակուեցին պարենաւորման կոմիսարներ: Գորիսում հիմնուց ըրջանային դատարան: 1919թ. յունուարին յայտարարուեց 20—22 տարիքի զանգեզուրցիների զօրահաւաք և ստեղծուց տեղական մնայուն զօրամաս: Գետական կարիքների համար հարկ դրուեց ազգաբնակութեան վրա:

Ճունուարի վերջերին Ազգ. Խորհրդի կողմից Երևան ուղարկուեց Ա. Շերինեանը՝ ստանալու համար դրամ ու ռազմամթերք և խնդրելու, որ Հայաստանի կառավարութիւնը փութացնէ Զանգեզուրի նահանգապետի առաքումը: Վերջինիս գալը անհրաժեշտ էր, որովհետև, ձիւնը հալելուն պէս, Ադբրանիկը պիտի հեռանար և նրան պէտք է փոխարինէր մէկ ուրիշը:

զինուորական ըրջաններում ու քաղաքի բնակութեան մէջ, Զօր. Նազարբէգեանն ու Հախվերդեանը աջակցութիւն խնդրեցին՝ զէնքի ուժով վերջ տալու խայտառակութեան, կառավարութիւնը, սակայն, տատանում էր: Չէր ուզում տեղիք տալ երկպատակ ընդհարումների: Եւ միայն ամերիկեան ներկայացուցչի և հայ հոգևորականների ՀՀՀետ ժպելով, երեկոյեան դէմ, երևանի զօրաւորումը վերացուեց, և Ադբրանիկը իր զօրքերով վերադարձաւ էջմիածին:

1919Թ. մարտ 6–ին Գորիս հասավ Հայաստանի կառավարութեան նշանակած Զանգեզուրի ընդհանուր կոմիսարը՝ փոխ–գնդ. Արսէն Շահմազեանը, որից յետոյ Զանգեզուրն այլևս կապւեց Երևանի հետ: Շահմազեանի պաշտօնը կէս գաղտնի էր. Ղարաթաղ—Զանգեզուր Ազրբէյջանին հցել աչխատող անկլիացիների ճնշման տակ, Հայաստանի կառավարութիւնը պաշտօնական ձև չէր տալիս իր գործունէութեան Զանգեզուրում: Հակառակ դրան, Զանգեզուրը, երկրի մեծ մասերին հաւասար, օգուտ էր Հայաստանի պետական մի[illegible]ներից:

Մարտ 31–ին Գորիսում հրաւիրւեց համազանգեզուրեան մի համաժողով, ուր Ագգ. Խորհուրդը ներկայացրեց իր հրաժարականը: Եւ նրա տեղ, ընդհանուր ժողովրդի միահամուռ փափագին, ընտրւեց Զանգեզուրի—Ղարաթաղի Շրջանային Խորհուրդ անունով մի մարմին՝ այդ ժամի հանգամանաւորապէս նպատակադրմամբ Ղարաթաղ—Զանգեզուրի մնութիւնը և այս երկուի կցումը Մայր–Հայաստանին: Շրջ. Խորհրդի անդամներ ընտրւեցին Ա. Շերիմեանը, Մ. Զաքարեանը, Ց. Տէրունին, Ա. Դանիէլեանը (չորսն էլ դաշնակցական), եր. Բագունց, Սահ. Տէր–Հայրապետեան (բոլշևիկ) և Ս. Մ.–Մոսէսեանան (անկուս.): Ղարաթաղի կողմից խորհրդի մէջ մտան՝ Դեր. Բալայեանը, Եղիկէ Իշխանեանը, Մելիք–Եսայեանը, Աւ. Աստուրեանը և Աբս. Բագունցը: Վերջիններս այդ ժամանակ՝ խուսափելով անգլիացիների հալածանքներից՝ գտնւում էին Գորիսում, որտեղից և հետևում էին Ղարաբաղի անց ու դարձերին:

Վերակազմւեց երկրի ինքնապաշտպանութեան գործը: Շրջ. Խորհրդի անդամներից կազմւեց զինւորական խորհուրդ, իսկ սպաներից՝ գլխաւոր սպայակոյտ: Շրջաններում նշանակւեցին զինւորական հրամանատարներ՝ Սիսեանում Գօլոս Տէր–Դաւթեանը, Տաթևում՝ Ս. Մալխազեանը, Տեղ–Խնձորեսկում՝ Մ. Հիւսէյնեանը, Ղափանում՝ Ց. Տէր–Գնտրոսեանը, Մեղրիում՝ Շահպագեանը: Կարուեցին նաև հակառակորդներ՝ Զաբուդում, Զիլֆա—Հապարակում, Բազարչայում, Նուրս—Գոմբրում:

Զուգընթացաբար տարւում էր նաև քաղաքական մասի կազմակերպական աչխատանքը: Դաւառապետ նշանակւեց Ն. Բովսէփեանը, օգնական և մի[illegible]կապետ՝ Աթօն: Մի[illegible]կի քիւր կրկնապատկւեց: Բացւեցին փոստատները և կանոնաւորւեց փոստային յարաբերութիւնը Երևանի հետ: Վերաբացւեց Գորիսի պետական դանձարանը: Հիմնւեց պետական վերահսկողութիւն: Վերաբացւեցին Գորիսի և Հանգեքի հետևոդոցները, բուժկային կայաններն ու դեղատները: Սկսեց գործել զինւորական ատեանը:

Մինչև յունիսի վերջերը կազմակերպական աչխատանքներն արդէն վերջացած էին: Օգոստոսին Շրջնային Խորհուրդը աչխատանքների բաժանում կատարեց իր անդամների միջև՝ հիմնելով հետևեալ վարչութիւնները. վարչական և ներքին գործերի վարիչ Ա. Շերիմեան, օգնական՝ Ս. Մ.–Մոսէսեան, հաղորդակցութեան՝ ինժ. Ա. Բագունց, կրթական՝ Ց. Տէրունի, առողջապահութեան և խնամատարութեան՝ Ա. Աւետիսեան, օգն. Ն. Դա–

նիչեան, երկրագործական՝ Մ. Զաքարեան, արդարադատութեան՝ Եր. Բագունց։ Զանգեզուրի կառավարութիւնն էր այս, որ, ամենուհետեւ, ձեռք-ձեռքի ընդհանուր կոմիտարի հետ՝ տարաւ երկրի կազմակերպութեան ու կառավարութեան գործը։ Ներկրդի մէջ անգամները գրաւում էին Ղարաբաղի հարցերով։ Շրջանային Ներհուրդն իր ամբողջութեան մէջ վարչական գործունէութեան վերին հսկողի դերում էր և չարաքը մի անգամ նկատ դումարելով՝ լսում էր վարիչների զեկուցումները։

Գէտք է աւելացնել և այն, որ այդ բոլոր աշխատանքները կատարում էին գրեթէ պատերազմական պայմաններում։ Ապր. 15–ից սկսած մինչև Նոյեմբերի վերջը տեղի ունեցան մի չարք լուրջ բախումներ հայերի և Թուրքերի մէջև Երիցաթումբի, Զէյվա–Հաղարբիի, Ներքին Հանդի–Նիւադիի, Նորա–Գոմրիի, Մագրայի, Բաղարչայ–Ղուչչի–Բիլագի, Մինքենդ–Ներա–Նաւուրի և այլն։ Ամէն անգամ կռիւներին մասնակցում էին երկու կողմից 1500—3000 գինուած ուժեր։ Համարեա բոլոր դէպքերում էլ նախայարձակը Թուրքերն էին. նրանք էին և չարաչար պարտուողը։ Թուրքերի ձգտումն էր միացնել Զանգեզուրը Ակրբէջանին։

Այս բանին ոյժ էին տալիս և անգլիացիները։ Այսպէս, մայիս 2–ին Շուշիից Գորիս եկաւ անգլիական միսիայի պետ մայոր Մաք Մեգենը և հրաւիրելով Զանգեզուր—Ղարաբաղի Շրջանային Ներհրդի անդամներին՝ արաւ հետեւեալ յայտարարութիւն–պահանջը.

1. Ճանաչել Ակրբէջանի իշխանութիւնը՝ երկրում կարգ, իշխանութիւն հաստատելու, ճանապարհները բանալու և ժողովրդին պարէն հասցնելու համար։

2. Ցարժարութիւններ տալ քոչւորներին բարձրանալու Զանգեզուրի լեռները։

Շրջանային Ներհուրդը մայիս 3–ին տւեց հետեւեալ դրաւոր պատասխանը.

«Զանգեզուրի առաջին դիւղացիական համագումարի որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետութեան երկրամաս Զանգեզուրի դէմ կատարած իւրաքանչիւր յարձակողական գործողութիւն կը հանդիպի ամենայարմար և կատաղի դիմադրութեան Զանգեզուրի հայ ժողովրդի կողմից։

Հայաստանի Հանրապետութեան երկրամասում չապրող քոչւորներին ո՛չ մի դէպքում և ո՛չ մի պայմանով չի թոյլատրւում բարձրանալ Զանգեզուրի սարերը։

Ինչ վերաբերւում է իշխանութիւն հաստատելուն, պէտք է ասենք, որ ո՛չ միայն այժմ, այլ և համատարած անիշխանութեան օրերին Զանգեզուրում մէկտ թագաւորել է օրինակելի իշխանութիւն, և այժմ հարկ չկայ իշխանութիւն հաստատելու այնտեղ, ուր անիշխանութիւն չկայ։»

Ուղիղ երկու տարի է ինչ Զանգեզուրը կռւում է քաղաքակիրթ աշխարհից, նրա առաջ փակւած են հաղորդակցութեան ճանապարհները։ Զանգեզուրը հաշտւել է այդ հանգամանքի հետ՝ դնելով, որ իր ազատութիւնը վեր է ամէն տեսակ յարմարութիւններից և կուլտուրական բարիքներից։

Համաչխարհային Հաղագաբար կանխիբենցիալի յայտարարությունը պարզորոշ քնարդում է ամենքին՝ պահպանելու նրան գերությունը, մինչև վերջնական որոշման յայտարարությունը:

Քիւրդ–պարբէլանեան աւանդությայի ամբողջ ընթացքում Զանգեզուրը եղել է միշտ ինքնուրոյն, և դաշնակից հրամանատարությունը այդպէս էլ անուել է Զանգեզուր մանկլիս:

Այժմ մի ոտնձգութիւն մեր ինքնուրոյնութեան դէմ ում կողմից էլ որ երևան գայ, այդ ստատուս կուօի խանգարումն է և մեր կողմից կը հանդիպի ամենաուժեղ դիմադրութեան»:

Այս յանդուգն պատասխանը ստանալուց յետոյ անգլիական ներկայացուցիչը չուապեց հեռանալ: Եւ դրծի անցաւ Ադրբէյանը:

Ղարաբաղի խնդիրը փակելուց և Հայաստանը մահմեդական ապրուստմտրութիւնների վայր դարձնելուց յետոյ, Ադրբէյանի կառավարութիւնը ակսեց ուժեր հաւաքել Զանգեզուրի չուրջը գօրավար Ալի Ագա Շխէնսկիի գլխաւորութեամբ: Հոկտեմբերին, Նոյեմբերի և կարեւագիսի ուղղութեամբ համախմբուեցին 3 հետևակ ու 2 ձիաւոր գնդեր, 8 թնդ. ու 4 ծանր թնդանօթներ և 400 գիւրդ կամաւորներ: Նախիջեանի և Շարուրի կողմից յարձակման մէջ դրուեցին աւելի քան 3000 կուռղներ: Ադրբէյանը ուղում էր 3 ծայրերից օղակել և արագ ու կատրել հարուածներով գրաւել Զանգեզուրը:

Վճռական գործողութիւնների անցնելուց առաջ, դր. Սուլթանովը մի կոչ ուղղեց գանգեզուրցիներին, որով համգուում էր հետևել զարթաքաղցիների օրինակին և յօժարակամ ճանաչել Ադրբէյանի իշխանութիւնը: «Ես գիտեմ ձեզ, գրում էր նա, Զանգեզուրի ազգաբնակութեան, բանւորներին ու գեղջկացիներին... ապացուցէ՛ք, որ դուք կապ չունէք անիշխանական և արկածախնդիր տարրերի հետ: Ես ապահովում եմ ձեր անձի ու գոյքի անձեռնմխելիութիւնը, իսկ ես միշտ յարգում եմ իմ խօսքը: Իսկ եթէ դուք չարունակէք օգնել անիշխանական տարրերին, ես այնքան ոյժ կունենամ, որ ստիպեմ ձեզ ճանաչել Ադրբէյանի հանրապետութեան իշխանութիւնը, բայց այն ժամանակ արիւնահեղութեան պատասխանատուութիւնը կընկնի ձեր վրաց:

Զանգեզուրցիք ականջ չդրին Սուլթանովի յորդորներին, և նոյեմբ. 1–ին ադրբէյանեան զօրքերը Զաբուղից, Կարևագիրի կողմից, Նախիջևանից ու Դարալագեազից անցան ընդհանուր յարձակման: Ամբողջ 6 օր Զանգեզուրի լեռներում արծում էին թնդանօթներն ու գնացիրները: Առաջին օրերը թշնամին գրաւեց Ինծածար, Կոզնավար, Բայանդուր, Կոռնձոր. գիւղերն ու Քալալ Դաղը և սպառնում էր Գորիսին: Նոյ. 4ին գանգեզուրցիները, Ա. Շահմազեանի հրամանատարութեամբ, կանգնեցրին թշնամուն յաջողացուցումը և կատաղի հակագրոհներով ու հարուածներով, Նոյ. 6ին, փախուստի մատնեցին ադրբէյանեան բանակը, որը թողնց բազմաթիւ դիակներ, աւելի քան 150 գերի, մէկ մնդաւօթ, 20 գնդացիր և հարուստ աւար: Ադրբէյանեան 2րդ ձիաւոր գունդը ամբողջապես ոչնչացաւ: Զանգեզուրը, չնորհիւ իր դաւանների հերոսական ճիգերի, մի անգամ էլ փրկուեց մահացու վտանգից:

Զանգեզուրի դէպքերը ահագին յուզում առաջ բերին դուրսը: Գնդ. Հասկելի փոխանորդ գնդ. Ռէյը և բրիտանական ներկայացուցիչ Ուօրդրոպը չուապեցին պահանջել Հայաստանի ու Ադրբէյնի կառավարութիւններից՝ վերջ տալ արիւնհեղութեան և փոխադարձ համաձայնութեամբ լուծել Զանգեզուրի հարցը: Մինչ Հայաստանը անմիջապէս տուեց իր համաձայնութիւնը, Ադրբէյնը սկզբում բաւական անդիմող դիրք բռնեց· «Զանգեզուրում պատերազմական գործողութիւններ չկան Ադրբէյնի կառավարութեան կողմից, պատասխանեց գնդապետ Ռէյին վարչապետ Ուսուպբէկովը, Զանգեզուրը Ադրբէյնի անբաժան մասն է... Ադրբէյնի կառավարութիւնը հարկադրուած էր դիմուրական օգնութիւն ուղարկել Ղարաբաղի ընդհ.-նահանգապետին՝ կարգը վերականգնելու և հայ ապստամբների անիշխանական-բոլշևիկեան հրոսախմբերը ճնշելու նպատակով»: Սակայն, պարտութեան լուրը առնելուց յետոյ փութքով բաւական իջաւ, և նոյն Ուսուպբէկովը փութաց ընդունել գնդ. Ռէյի առաջարկը՝ նոյ. 20–ին, իր մօտ հանդիպում ունենալու Հայաստանի վարչապետի հետ:

Նոյեմբ. 20–ին տեղի ունեցաւ Խատիսեանի և Ուսուպբէկովի տեսակցութիւնը գնդ. Ռէյի առանձնասենեակում: Երկու կողմերի բանակցութիւնները յանգեցին նոյեմբ. 23–ի համաձայնութեան, ըստ որի՝

«1. Հայաստանի և Ադրբէյնի կառավարութիւնները պարտաւորւում են դադարեցնել տեղի ունեցող ընդհարումները և նոր ընդհարումների չդիմել:

2. Հայաստանի և Ադրբէյնի կառավարութիւնները համաձայնւում են ձեռք առնել իրական միջոցներ բանալու և նորոգելու Զանգեզուր տանող ճանապարհները՝ խաղաղ երթևեկի համար:

3. Հայաստանի և Ադրբէյնի կառավարութիւնները պարտաւորւում են լուծել բոլոր վիճելի հարցերը, մէջը լինելով և սահմանավէճերը, խաղաղ համաձայնութիւնների ճանապարհով, մինչև յայնոր յօդւածում նախատեսուած խորհրդաժողովի վճիռը: Այն դէպքում, երբ կարելի չլինի հասնել խաղաղ համաձայնութեան, երկու կողմերը պարտաւորւում են իրաւարար ընտրել մի չէզոք անձնաւորութիւն, որի վճիռը պիտի լինի պարտադիր երկու կողմերի համար էլ: Ներկայումս այդ անձը համաձայնւում է Մէացեալ Նահանգների բանակի գնդ. Զէյմս Ս. Ռէյը:

4. Հայաստանի և Ադրբէյնի կառավարութիւնները պարտաւորւում են խնդրել և եթ հաւասար թուով պատգամաւորներ նշանակել, յոթեքսաթեք, նոյ. 20–ին, Բագուում գումարելիք խորհրդաժողովի համար, որը պէտք է տեղափոխւի Թիֆլիս դեկտ. 4–ին, ուր կը շարունակւեն խորհրդաժողովի նիստերը, եթէ փոխադարձ համաձայնութեամբ պէտք չնկատւի այլ վայր փոխադրելու: Այդ խորհրդաժողովը պիտի քննէ բոլոր այն հարցերը, որոնք վէճ ու բախում են առաջ բերում երկու կառավարութիւնների միջև, և լիազօրութիւն կունենայ լուծել այդ հարցերը համաձայնութեան կամ իրաւարարութեան միջոցով:

5. Սոյն համաձայնութիւնը համարւում է իրական ստորագրութեան օրից և մնայուն ոյժ կը ստանայ երկու պետութիւնների խորհրդարանների վաւերացումից յետոյ»:

Այս համաձայնութեամբ վերջ գտաւ Զանգեզուրի արիւնհեղութիւնը, որ քիչ մնաց պատճառ դառնար հայ–ադրբէջանական պատերազմի: Ճիշտ է, կուիւները փաստօրէն չդադարեցին, բայց այս անգամ արդէն նախայարձակը զանգեզուրցիները չէին: Նոյեմբեր վերջերին, զաճանցիները, երևանից նոր հասած Գ. Նժդեհի գլխաւորութեամբ, մաքրեցին Օխչի չայի ապստամբ չրջանը: Դեկտեմբերի սկզբին մաքրուեցին Գեղարդ ձորի մօտ 40 քրջաքանակ գիւղերը: Այդ դէպքերը նորից բողոքի ու սպառնալիքի նիւթ դարձան գնդ. Թէյի և Ուօրդրոպի ժեռքին: Ադրբէջանի կառավարութիւնը ցասկոտ հեռագրերներ ուղարկեց պատասխաններ ստացաւ, բայց կեանքը գնաց իր ճանապարհով. Զանգեզուրն այլևս մաքրուած էր ներքին թշնամուց:

•

Թիւրքիայի և Ադրբէջանի միացման մէկ օրական էլ Գողքն*) գաւառակն է՝ հազիւ 20–25 գիւղ**) ունեցող հայկական մի չրջան՝ կիսկամ Ալանգեոզ ու Ղազանգիոլ բարձրաբերձ լեռների և Արաքսի միջև: Գողքը և Արևիքը գաւառում են Ադրբէջանը Նախիջևանից. վերացնել մէջտեղից այս հայկական չրջանները՝ նշանակում է բանալ ուղիղ ճանապարհ Բագուի, Անգորայի և Գոլոզ միջև: Ուստի, տարօրինակ չկրկի Քւայ այն չամառութիւնը, որով Թիւրք–ադրբէջանցիները, ամէն առիթով, աչքառում էին գրաւել Գողքը:

Երբ, Բաքուի դաշնագրից յետոյ, Թիւրքերը եկան Նախիջևան, նրանց առաջին գործը եղաւ Գողքի նւաճումը· 1918թ· յուլ·25–ին Թիւրք զօրքերը մտան Ագուլիս:

Օգոստ· 8–ին, կովկասեան իսլամական կառավարութեան կողմից Օրդուբաթ քաղաքի և չրջանի զինուորական կառավարիչ նչանակուեց Թիւրքական բանակի սպայ Ռաիլի բէյը, որը իր ձեռքի տակ ունէր 5–6 Թիւրք սպաներ, 12 Թեդաոօր, 20–22 գեղացիր և հազարի չափ տեղական քաջարի զինուորներ: Օրդուբաթ հասնելուն պէս նա հրատարակեց հետևեալ յայտարարութիւնը՝ ռուսերէն և Թիւրքերէն լեզուներով·

«Կովկասեան Իսլամական կառավարութեան կողմից ես նչանակուած եմ Օրդուբաթ քաղաքի և չրջանի զինուորական կառավարիչ և Ատոնոս օգնութեամբ այսօրուանից ստանձնեցի իմ պարտականութիւնների կատարումը:

Կովկասեան Իսլամական կառավարութիւնը ցանկանում է, որ իր բոլոր հպատակները, առանց կրօնի և ազգութեան խորութեան, ապրեն խաղաղ, աշխորը կեանքով և արիւնհեղութիւն չլինի:

Մեր սահմաններում գտնւող հայ գիւղերը, եթէ կը ցանկանան հպատակել մեզ, պէտք է յանձնեն զէնքերը, որովհետև բոլոր մահմետական գիւղերը մինչև այժմ ենթարկւել են և ենթարկւում են հայերի յարձակման: Այն օրւանից, որ ես Նախիջևանի չրջանումն եմ, ամբողջ Ազրկովկասում, իմ հասցեան ստոյգ տեղեկութիւններով, աւելուած են 300 մահմետական գիւղեր, այն ինչ հայկական գիւղեր՝ միայն 3–ից մինչև 5:

*) Գոգթան չրջանի գէպիերը գրելիս՝ օգտւել եմ նաև Փոչարեանի ճեռագիր յուշերից և Ագուլիսի հաչտարար դատաւոր Ց· Տէր–Ալաոնեանի զեկուցումից:

**) Որից 10ը գոնւում են լեռնային չրջանում:

Այսպէս, ուրեմն, փաստերը ցոյց են տալիս, որ հանգիստը և խաղաղութիւնը խանգարող հանգիստանում են ոչ թէ մահմեդականները, այլ հայերը, որի պատճառով մենք, այսինքն՝ հովվական իշխանական կառավարիչները, չենք կարող կատարելապէս հաւատալ հայերին:

Չենչերը յանձնող հայերը կը լինեն մեր թանդարէն հպատակները, որոնց պատիւը, կեանքն ու գոյքը կը գտնուեն մեր հովանաւորութեան տակ. Նրանց վերաբերմամբ ամենափոքրիկ ցոյցն իսկ չի թոյլատրուի: Չենչեր չյանձնող հայ գիւղերը կը համարուին կառավարութեան քշնամի և նրանց դէմ ձեռք կառնուեն խիստ միջոցներ»:

Շնորհիւ իրենց ճկուն բնաւորութեան, գողթնեցիք կարողացան գլուխ պահել փաշայական կառավարութեանց իշխանութեան տակ:

1919թ. մայիսին, Նախիջևանի գրաւումից յետոյ, Գողթնը գաբձաւ նրա երեք գաւառներից մէկը՝ Ազուլիս կենտրոնով: Ընդհ.–նահանգապետ Գ. Վարչամեանը Գողթնի գաւառապետ նշանակեց Աչուռ Մելիք–Մուսեանին, իսկ միլիցիապետ՝ երիտասարդ ու քաջ սպայ Մովսէս Գիւլնազարեանին: Սրանք նոր էին հասել իրենց պաշտօնավայրը, երբ տեղի ունեցաւ մահմետական ապստամբութիւնը Նախիջևանում, և Գողթնը նորից կտրուեց հայաստանից:

Օգոստ. 3–ին, Ա. Մելիք–Մուսեանն ու Մ. Գիւլնազարեանը, Վերին Ագուլիսից, հեռագրում են Հայաստանի Հանրապետութեան, Հայաստանի կառավարութեան, Գորիսի, Ղափանի, Գենոսւոզի պետական ներկայացուցիչներին, Ազգային Ժողովուրդներին և ի լուր համայն հայութեան սրտին հետևեալ դիմումը.

«Նախիջևանն ընկաւ. չորեքի հայութեան բաւական խոշոր մասը սրի է քաշուած, Աբաքսի մէջ նկատած են մեծ թուով դիակներ: Նախիջևանի մեր զօրքերը, քան թուրքական լուրերի, կոտորածից ազատած հայութեան մնացորդների հետ նահանջել են զէպի Դարալագեաց: Նոյն ազբիւրներից իմանում ենք, որ նեհրամում հազարից աւելի հայ գերեվարներ կան: Ջուլֆայում ու Ջուղայում խոշոր դէպքեր տեղի չեն ունեցել — ժողովրդի մեծագոյն մասը և մեր փոքրաթիւ զօրքը անցել են Պարսկաստան: Ագա և Դեր գիւղերը անվնաս գաղթեցին ճշնա: Երիվակի ձորում, ականատեսների պատմելով, տեղի են ունեցել սոսկալի կոտորածներ: Ղազախչից ազատուել և Գողթն են ապաստանել մօտ 500 հոգի: Մի օր տևող կռիւներից յետոյ Գեապը, Փորադաչոր և Շուտութը չատ քիչ գոհեր տալով՝ քաշուել են Գողթն:

Յուլ. 25–ից Գողթնում ուժեղ կռիւներ են տեղի ունեցել: Վերին գիւղերում (Փառակա–Բիսու) յարձակումներն առ այժմ մերոց կողմն են: Տանակերտը 8 օր է պաշարման վիճակի մէջ է. այստեղ տեղի են ունենում դիրքային անընդհատ կռիւներ: Պաշարած կարելի է համարել Վերին և Ներքին Ագուլիսները: Թուրքերը խոշոր պատրաստութիւններ են տեսնում մաքրելու Գողթնը հայերից: Ժողովուրդը աննկարագրելի նեղութեան մէջ է հացի կողմից: Արտաքին աշխարհից կտրուած ենք բաոի ամենալայն իմաստով: Մի քանի անգամներ սուրհանդակներ ենք ուղարկել Գենուզ օգնութիւն և լուր ստանալու համար, բայց մինչև օրս չեն վերադարձել: Գողթնը լքած իր հարազատներից և կտրուած արտաքին աշխարհից, իր անելիքների մասին ճիշտ հաշիւ տալ իրեն չի կարող: Ապատնել Թուրքերի ողորմածութեանը՝ ներքայ հանգամանքներում անհնարին է: Ի սէր Աստծոյ, ցոյց տուէք մեզ փրկութեան ճանապարհ: Սեփական միջոցներով ամենաչատը

10–15 օր ևս հազիւ կարողանանք պահպանել ներկայ գրութիւնը։ Սարսափելի չէ մահը... երկրորդ տարին է, որ մենք արդէն հաշուում ենք այդ մասին հետ։ Գողիաթը կը մեռնի հերոսի մահով, ասկայն, թո՛ղ ամբողջ աշխարհը իմանայ, որ այս անգամ մեզ մահուան դուռ հասցնողը երևանի մեր կառավարութիւնն է։ Փրկուած է Գողիաթը, եթէ մօտ օրերում գոնէ 400 սրացաւ դիւտը մեզ օգնութեան հասնէր։

Յուսահատի նման էր այս։ Գողիաթում չդիմացան, որ երևանը ինքն էլ օրհասական ժամեր էր ապրում և նոյնպէս հևալով՝ օգնութիւն սպասում արտաքին աշխարհից։

Բայց և այնպէս, կառավարութիւնը չտապեց կազմակերպել Գողիաթի օգնութեան գործը։ Մի կողմից նրութական միջոց ու պարէն փութացրեց, մեւս կողմից՝ յանձնարարեց Գ. Նժդեհին ու բաշխառնեցի յայտնի խմբապետ Ղազար Քոչարեանին կազմել մի զօրամաս՝ Գողիաթ ուղարկելու համար։ Մի քանի շաբաթից զօրամասը արդէն պատրաստ էր, և յունուար 4–ին, Ղազարի հրամանատարութեան տակ, դուրս եկաւ Երևանից ու հասաւ 2–ին, Թարթառագետի ու Ջանգեզուրի վրայով, Տաթև Գողիաթ։

Տեղը էր այնպէս կացութիւնը։ 6 լեռնային գիւղերը միայն մնացել էին ազատ, մեւսները կամ տեղահանուել ու կոտորուել էին, կամ ապրում էին թշնամի մզձաւանջի տակ։ Ազատ մնացած գիւղերն էին Բիստ, Ալահի, Նաւթաւազ (Մեծորպատան), Փառակա, Ճղնա և Ռամիս, որոնք գտնուում էին պաշարուած վիճակում։ Ագուլիսները համակերպուել էին թրքական իշխանութեան, հնազանդել էին իրենց մեջերից կազած ուժերը և գրանով էին ուզում պահել իրենց գոյութիւնը։ Տիրում էր պարենի անասելի սովալուծ։ յաջողութիւնն և մեջերը ստանալու միակ ճանապարհը Գաֆուլուխի լեռնանցքն էր՝ 12,853 ոտք բարձրութեամբ, այն էլ վտանգուած էր Օխչի ձորի ապստամբ թուրքերի կողմից։

Հայկական զօրքերի ժամանումը բարձրացրեց ժողովրդի տրամադրութիւնը։ Ղազարը Մովսէս Թիւնպարեանի և տեղական ուժերի գործակցութեամբ կազմակերպեց շրջանի ինքնապաշտպանութիւնը — 7–800 կռուողներ, 2 Քնգանօթ, 6 գնդացիր, — և այնուհետև Գողիաթը ո՛չ միայն դիմացաւ Քրքական յարձակումներին, այլ և ինքն էլ գարձաւ նախաձեռնարկ։ Նոյեմբերի կէսերից սկսուեցին անվերջ կռիւներ գողիաթեցիների և թուրքերի միջև։ Նոյեմբ. 12–ին թշնամին առաջ խաղաց Բիստի վրա ու յետ չպրտուեց։ Նոյ. 25–ին թուրքերն ուեյի մեծ ուժերով, երկու զօրասիւնով, յարձակուեցին Բիստի, Ալահիի ու Մեսրոպաւանի և Ռամիսի վրա։ Տեղի ունեցան տաք կռիւներ. թշնամին պարտուեց՝ դիմեց խուճապային փախուստի՝ հարերի ձնուքը թողնելով առատ ասար, գերիներ ու մի ղրօշակ։

Իր վրէժը, ասկայն, մի ամիս յետոյ լուծեց Վերին Ագուլիսից։ Օխչի ձորի ու Գեղամայ ձորի ասերից յետոյ, Օրդուբաթի ու Նախիջևանի թրքուհիները, կազմակերպեց Ագուլիսների թալանն ու կոտորածը։ Դէպքի մանրամասնութիւնները Երևան հասցրեց Գողիաթի հաշտարար դասատու Ց.

Տէր-Անտոնեանը, որի պատմութիւնը նիւթ ծառայից բազմաթիւ բողոքների ու հէռագրների փոխանակութեան Հայաստանի և Ազրբէջանի կառավարութիւնների միջև։

Դեկտ. 18-ին Օրդուբաթի և չրջակի գիւղած Քուրքերը յարձակուեցին ու սկսեցին թալանել Նէրքին Ագուլիսը։ Ազգաբնակութիւնը ծողնելով իր ամբողջ ունեցուածքը՝ փախաւ Վէրին Ագուլիս։ Վէրջինիս ներկայացուցիչները դիմեցին Օրդուբաթ, Թուրքական հրամանատար էդիֆ բէյին՝ խնդրելով ապահովել հայերի կեանքը։ Էդիֆ բէյը անմիջապէս եկաւ Վ. Ագուլիս ու խոստացաւ անհրաժեշտ միջոցները ձեռք առնել Ագուլիսի պաշտպանութեան համար։ Սակայն, չրջակայքում հետզհետէ սկսեցին հաւաքուել Քրքական գիւղած խմբեր։ Ագուլիսեցիների դիմումների վրա՝ էդիֆ բէյը հանգստացնում ու երդւում էր անվերջ, թէ հայերի գլխից մի մազ անգամ չի վնասւի։

Դեկտ. 25-ին Վ. Ագուլիս եկան Օրդուբաթի չէյին ու գաւառապետ Թահիրովը։ Սրանց հանդիպում մի ժամ յետոյ, քաղաքում լուեց հրացանաձգութիւն և աղմուկ։ Քուրք գիւղած խուժանը թալանում ու կոտորում էր հայերին։ Վառուեց Սարգիս Հախնազարեանի տունը, և հրդեհը սկսեց տարածուել։ Հայերը չէյին առաջնորդութեամբ փոխադրուեցին Քրքական քաղը։ «Փիլչերը, պատմում է Տէր-Անտոնեանը, հրդեհը բռնեց ամբողջ քաղաքը, և քաղաքում խրախճանք էր կատարւում։ Առաւօտեան գաւառապետ Թահիրովը յայտարարեց, որ ինքը գնում է Օրդուբաթ՝ դիմաւորելու համար նոյնիսկ փաշային, որը, իբր թէ, մեկնում է Վարպետատան։ Եւ ասաց, որ այնտեղից կը յայտնէ, թէ՝ «ո՞ւր պէտք է ուղարկել հայ գաղթականներին՝ հայկական ծղնա գիւղը՞», թէ Վարպետատան։ Նրա գնալուց յետոյ, ժամը 12-ի մօտերը, յայտարարուեց, որ կարգադրութեան համաձայն, հայերը պիտի ուղարկուեն ծղնա և որ նրանց ուղեկցելու է ինչ որ մի ՍաքՓար (Դրանս գիւղացի, յայտնի աւազակ, տաժանակիր աշխատանքից փախած)։ Ազգաբնակութիւնը երբ որ իմացաւ, սարսափահար եղաւ։ դիմեց էդիֆ բէյին, որ ինքը ուղեկցէ հայերին։ Բայց էդիֆ բէյը պահել էր սենեակում ու խուսափում էր հայերից։ Ես վազեցի ոստիկանապետ Մունչիևի մօտ (15 տարի առաջ եղել էր իմ գրագիրը), որը պահեց ինձ իր մօտ։ Երբ բանակիցները մտրակներով դուրս քշեցին, ես լսելի հրացանաձգութիւն, ոչ թէ անկարգ, այլ համազարկերով։ Համազարկերը չարունակուեցին մօտ երկու ժամ։ Ո՛չ մի կասկած չկար, որ համազարկերը տրւում էին կատարեալ կազմակերպւած զօրամասերի կողմից։ Երբ համազարկերը լուեցին, իմ պահուած սենեակը բերին 30-ի չափ գեղացիկ հայուհիներ՝ օրիորդներ ու տիկիններ։ Սկսեցին սենեակ մտնել ոստիկանապետ Մունչիևը, նախկին տանուտէր Վահան էֆէնտին, ՍաքՓարը և ուրիշներ, որոնք մէկ-մէկ երկու-երկու ընտրում ու դուրս էին տանում գեղեցիկ հայուհիներին՝ նախօրօք խելւելով նրանց մօտի զարդեղէններն ու դրամը։ Դուրս տարած հայուհիներին բռնաբարում էին հարեան սենեակում։ Նոյն սենեակում, մահճակալի տակ, պառկած էր թալանուած Սարգիս Մարխանեանը, որի կնոջ ու երկու զաւակներին սպանել էին հէնց իր աչքի առջև։ Նրա խորհուրդով, մենք դուրս եկանք յետևի դռնից — ոչ ոք չէր հսկում, ամենքը զբաղուած էին բռնաբարութիւններով — և այդիների միջով հասանք ուերթակ Դանիելեան գիւղը ու այստեղից էլ ծղնա և Ջանգեղուր, որտեղից ես եկայ Երևան։ Ես ինքս տեսայ, թէ ինչպէս թալանին ու սպանութիւններին մաս-

Նակցում էին տեղական քուրքերը, որոնցից կարող եմ տալ վաճառականներ Համզայի, Հիւսէյին Կուլիի, Իբրահիմի և ուրիշների անունները։ Կոտորածն ունէր բոլորովին կազմակերպւած բնոյթ։ Անկասկած, նահանջնուիրելը քնում էր բարձր իշխանութիւնից, իսկ Քալանին ու կոտորածին մասնակցում էր տեղական պաշտօնէութիւնը։ Ի հարկէ, եթէ իշխանուիրելը կամենար, ո՛չ Քալան կր լինէր և ո՛չ կոտորածը։*)

Ագուլիսի կոտորածը մեծ հաւատ էր հայ ժողովրդի համար, և հասկանալի է այն յուզումն ու ցասումը, որ առաջ բերեց հայկական բոլոր շրջաններում։ Լուրը Երևան հասաւ դեկտ. 29-ին, Գորիսից։ Երկու օր յետոյ, դեկտ. 31-ին, հնդկաբրոպական հետագրագծով հետագիր ստացւեց Թաւրիզից, Քէ՝ «Քարտէսի վրա Ագուլիսն այլևս գոյութիւն չունի։ Ներսէս եպ.»։ Յունւ. 4-ին Մելիք-Թանգեան եպ.-ը հաղորդեց, Քէ՝ «Ամենքը կոտորւած են։ Մանրամասնութիւնները յոյլ չեն տալիս»։

Նոյն օրերին Հայաստանի կառավարութիւնը հագուեց էլ տեղեկութիւն ստացաւ, որ այնտեղ արտ.գործ.նախարարի օգնական Ման Թեքինսկիի նախաձեռնութեամբ յատուկ խորհրդակցութիւն է գումարւել, որին մասնակցել էին և Ուսուպբեգովն ու Ման Ռոյսկին և որտեղ մշակւել էր Հարաւային Զանգեզուրը, Գողթնը, Օրդուբաթն ու Նախիջևանը Ազրբէջանին ու Թուրքիային հաւատարիմ մարտական մահմեդական տարրերով բնակեցնելու և այդ նպատակով, առաջին հերթին, Հնաբիլևանի շրջանի հարաւային մասը հայ տարրից մաքրագործելուն ծրագիրը։ Ագուլիսի կոտորածը այս ծրագրի սկզբնական քայլն էր։ Ներքին Ագուլիսում կոտորւեց մօտ 400 մարդ, վերին Ագուլիսում 1000։ Ողջ մնացին միայն մի քանի տասնեակ կանայք ու օրիորդներ, որոնք նէր տրւեցին Քիւրք սպաներին ու կոտորածի դեկավարներին։ այսպէս, վաճառական Փանեանի 16 ամեայ դեղեցկուհի աղջիկը բաժին հասաւ էդիֆ բէյին։

Հայաստանի կառավարութիւնը ստացած տեղեկութիւնները օր օրին հաղորդեց դնդ. Հասկէյին ու դաշնակիցների ներկայացուցիչներին և բողոքներ ուղարկեց Բագու։ Ազրբէջանի կառավարութիւնը սկզբում ուրացաւ եղելութիւնը, ապա հետագրեց, Քէ՝ «լուրերը չափազանց մեծացւած են», և, ի վերջոյ, յունւ. 23-ին միայն, Հայաստանի կառավարութեան վճռական մերկացումների ու բողոքների տակ, ստիպւած եղաւ բնդունել փաստը, որը, սակայն, արտարացնում էր նրանով, որ կոտորածը եղել է էլիզաբեթի, երևանի ու Զանգեզուրի շրջաններից հայերի ձեռքով քշւած մահմեդական գաղթականների կողմից։

Հայկական բողոքները իրական դարման չհագացրին և Հասկէյից ու դաշնակից ներկայացուցիչներից։ Նրանք սահմանափակւեցին միայն ցաւակցութիւններով, պաշտօնական նկատողութիւններով, խորհուրդներով ու սաստումներով և գործնական միջամտութիւնից խուսափեցին։ Երկու գիւղ էր աւերւել, 1000—1500 մարդ էր կոտորւել — աթժէ՞ր դրա համար աշխարհ էրաք խառնել...

*) Տե՛ս Զանգեզուրի ու Գողթնի «Ծագեան» էջ. Հ. Պատւիրակութեան դիւանում։

Գողթնեցիք իրենք, սակայն, այլ կերպ էին մտածում: Կոտոքաձի լուրն առնելուն պէս՝ Ղազարի մարտական ուժերը չարժման մէջ դրուեցին,*) և դեկտ. 27-ին, փոխվրէժի զայրոյթով լեցուած, յարձակուեցին Փառակայից 3 վերստ հեռու գտնուղ բլուր ասպակաթարոյ քուրջ գիւղի վրա, գիւղացին գրոհով գրաւեցին ու ոչնչացրին նրան: Ու այնուհետև ամբոխը չարունակ, անընդհատ յարձակումներ էին գործում չորեքսիյ մահմեդականութեան վրա՝ ահ ու սարսափի մատնելով, մանաւանդ օրդուբաթցիներին: Փոխվրէժը օրդուբաթցիներից՝ զարձաւ Գողթն ազգ մնացած վեց գիւղերի ոչնչորուբեան պրկութը: Նոյն նպատակի համար քայլեր էին առնում և Ղափանում Գ. Նժդեհի կողմից: Մի քանի ամիս յետոյ, Ազուլիսի վրէժը լուծուեց:

---

*) Հէնց ազգուխցիների պահանջով իմպերատորական ուժերի ազդեցութիւնը չէր տարածւում Ագուլիսների վրա. այդ ձևով յոյս ունէին մեզմել թուրքերին և արժանանալ նրանց բարեհաճութեան: Բնորոշ է, որ այսօրուայ էլ առաջին սպանուածը եղած այսպէս կոչուած «բրբռատքը» եայիքը:

ԳԼՈՒԽ ԺԱ.

ԱՐՏԱՔԻՆ ԵՒ ՆԵՐՔԻՆ ՃԻԳԵՐ

Թրքան և Ծանր լծէին Քիւրք-ապրէլհանեան դաւերի հետևանքները Հայաստանում, այնուամենայնիվ, անգօր էին կանգնեցնելու երկրի կենսական ուժերի գարգացումը։ Հայ ժողովուրդը մի ձևոքով պայքարում էր դաւադրութիւնների դէմ, միւս ձևոքով՝ վերաչինում ու կարգաւորում իր նորաստեղծ պետութիւնը։ Հերոսական ճիգ, սիզիֆեան աշխատանք թափեց նա, որ ապարդիւն չկորաւ։ 1919Ք. տարւայ ընթացքում Հայաստանը ո՛չ միայն չխորտակւեց մահմետական գրոհից, այլ և մի չարք վայրերում տեւեց չմեցնող հակահարւածներ և ունեցաւ աչքի ընկնող գործունէութիւն արտաքին ու ներքին կեանքի ասպարէզներում։ Արտաքին ասպարէզում, հայ-վրացական պատերազմի դադարեցուց անմիջապէս յետոյ Եւրոպա մեկնեց Հայաստանի պատւիրակութիւնը՝ հայկական խնդիրը Հաշտութեան Վեհաժողովին ներկայացնելու համար։ Փետրւար 4-ին Ա. Ահարոնեանը արդէն Փարիզում էր, ուր հայկական պահանջները արդէն վերնական ձևակերպում էին ստացել Ազգ. Պատւիրակութեան կողմից։ Այդ պահանջները չէին համապատասխանում երևանում մշակւած պայմաններին։ Երևանում որոշւել էր Վեհաժողովից պահանջել չորս վիլայէթների հոգամասերից բաղկացած Հայաստան՝ ելքով դէպի Մէ Ծով, Ազգ. Պատւիրակութիւնը գծել էր Ծովից-Ծով Հայաստան՝ Մերսինից մինչև Շուշի։ Եւ այդ էլ ոմանց քիչ էր թւում։ Պատւիրակ մտաւորականները Ա. Ահարոնեանին էլ հարկադրեց տալ իր առորագրութիւնը Ազգ. Պատւիրակութեան մշակած ծրագրին, և փետր. 12-ին, երբոր պատւիրակութիւնների նախագահների ստորագրութեամբ, հայկական պահանջները ներկայացրեցին Հաշտութեան Վեհաժողովին։

Հայերը պահանջում էին՝

1. *ճանաչումը հայկական անկախ պետութեան, որ պիտի բաղկանար 1) Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի, Սեբաստիայի, Կարնի և Տրապիզոնի 7 վիլայէթներից՝ դուրս ձգելով Տիգրիսի հարաւակողմը և Օրդու—Մեբաստիա դծից դէպի արեմուտք գտնւող չրջաններ։ 2) Գիլիկիայի չորս սանջակները՝ Մարաշ, Սիս, Զեյթուն—Բերբերիք և Ադանա՝ Ալեքսանդրեթով հանդերձ։ 3) Կովկասի Հայկական Հանրապետութիւնը՝ երևանի սահմանից մինչև Բիթլիսի նահանգի հարաւային մասը, Էլիզաւետպոլի նահանգի հարաւ-արևմտեան մասը, Կարսի նահանգը՝ բացառութեամբ Ալեքսանդրից հիւսիս գտնւող չրջանի։*

2. Հայկական պետութիւնը գրւի դաշնակից պետութեանց և Միացեալ Նահանգների կամ Ազգերի Լիգայի երաշխաւորութեան տակ:

3. «Հաշտութեան Վեհաժողովի կողմից պէտք է մանաւանդ ժանդատ տրւի պետութիւններից մէկին, որն իր օժանդակութիւնը պիտի ընծայի Հայաստանին՝ փոխանցման մի ժամանակաշրջանի համար: Այդ պաշտօնն ստանձնող պետութեան ընտրութիւնը պիտի լինի համախորհուրդ Հայկական Համազումարի հետ, որ այժմ գումարւած է Փարիզում և որը ներկայացնում է ամբողջ հայ ազգը: Մանդատի տեւողութիւնը լինելու է առնւազն 20 տարով»:

4. Հատուցում ջարդերի, տարագրութեանց, յափշտակութեանց և աւերումների պատճառած վնասների: Հայաստանը պատրաստ է իր բաժինը ստանձնելու օսմանեան նախապատերազմական պարտքից:

5. Մանդատ առնող պետութիւնը պէտք է ստիպէ Թիւրքերին՝ պարպել հայկական հողերը, ձեռնարկէ բնակչութեան ընդհանուր զինաթափութեան, պատժէ ջարդարարներին ու հայերի վերաբերմամբ անիրաւութիւն գործողներին, երկրից հեռացնէ կարգը խանգարող տարրերին, իրենց տեղերն ուղարկէ մուհաջիրներին և այլն: «Հայկական ծագում ունեցող իւրաքանչիւր անհատ, որ հաստատւել է կամ բնիկ դարձել օտար երկրում, պէտք է լինի ազատ հինգ տարւայ ընթացքում ընտրելու նոր հպատակութիւն՝ թէ՛ իր և թէ իր անչափահաս զաւակների անունով և դառնայ հայ քաղաքացի՝ նախապէս գրաւոր կերպով տեղեկացնելով երկու երկրների ձեռնհաս իշխանութիւններին»:*)

Այս պահանջները կազմեցին հայ քաղաքական չրջանների հետապնդման և հայ ժողովրդի ոգևորութեան առարկան: Գործնականօրէն հաւէն առնւեցին նրանք միայն մի տարի յետոյ, երբ Վեհաժողովի սեղանի վրա եկաւ Օսմանեան կայսրութեան հարցը: Երկու պատերազմ-Զիւնների դերը նւաւ մոգքը պատրաստել այդ ուղղութեամբ և Վեհաժողովի չրջանակներում ու պետութիւնների մօտ դիմումներ կատարել յօգուտ հայկական պահանջների:

Հայկական պատերազմ-Զիւնները առանձնապէս մեծ ձիգ էին քաշում՝ հայկական հարցով հետաքրքրելու Ամերիկայի Միացեալ Նահանգները, որոնց ներկայացուցիչները Վեհաժողովում և յատկապէս ինքը, նախագահ Վիլսընը սրտին մօտիկ էր ընդունում հայերին ու տրամադրութիւն ցոյց տալիս ստանձնելու Հայաստանի մանդատը: Եթէ որև է մէկ մանդատ ընդունելու լինի, Ամերիկան առաջինը կընդունի Հայաստանի մանդատը, — այս էր ամերիկացիների բանաձեւը: Եւ, անշուշտ, Վիլսընեան չրջանակը կը կամենար, որ Ամերիկան լինի Հայաստանի հոգատարը, և ինչո՞ւ միայն Հայաստանի: գուցէ և Անդրկովկասի, գուցէ և ողջ Փոքր-Ասիայի: Հայկական «ծովածաւալ կայսերապաշտութեան» մէջ, ինչպէս կծու կերպով









հեգնում էր «Թանդ»-ը, քիչ տեղ չէր բռնում և Վիլսընեան ներշնչումը՝ ուղղակի կամ անուղղակի:

Նախագահ Վիլսընի նախաձեռնութեամբ, 1919թ. յունւ. 30-ին Վեհաժողովը վճռեց ազատել Հայաստանը և Նշանակել հոգատար (մանդատէր): Մարտ 20-ին դարձեալ Վիլսընի առաջարկութեամբ Վեհաժողովը որոշեց Մեթմաւոր Արեւելք ուղարկել Ամերիկայի, Ֆրանսայի, Անգլիայի և Իտալիայի ներկայացուցիչներից բաղկացած մի յանձնախումբ՝ քննելու համար օսմանեան կայսրութիւնից անջատուելիք երկրամասերի վիճակը և ժողովուրդների կարիքները: Փաստօրէն գնացին միայն Ամերիկայի ներկայացուցիչները՝ Քինգն ու Քրէյնը. միւս կառավարութիւնները ներկայացուցիչ չնշանակեցին: Քինգն ու Քրէյնը հարցաքննութիւն կատարեցին Պոլսում յունիս 10-ից մինչև յուլ. 21 և եկան այն եզրակացութեան, որ նախկին օսմանեան կայսրութիւնից պէտք է կազմել 3 նոր պետութիւն՝ Հայաստան, Թիւրքիա և Պոլիս, որոնցից իւրաքանչիւրը առանձին-առանձին և բոլորը միասին պէտք է յանձնուեն մի պետութեան հոգատարութեան (մանդատ): Մանաւորապես դժւար էր երևում Հայաստանի հոգատարութիւնը, որի առանձնումը պայմանաւորւում էր նրանով, որ Պոլիսն ու Թիւրքիան էլ գրեթէ միևնոյն պետութեան հոգատարութեան տակ: Իրենց տեղեկագրում Քինգն ու Քրէյնը առաջարկում էին, որ Հայաստանի, Թիւրքիայի և Պոլսի մանդատը տուի Ամերիկային:

1919թ. ամառը նախագահ Վիլսընը նոր յանձնախումբ ուղարկեց Առաջաւոր Ասիա՝ քննելու համար մանդատի պայմանները: Հմուտ մասնագէտների բազմամարդ մի առաքելութիւն էր այդ գործաւոր Հարթրտրի գլխաւորութեամբ: Առաքելութիւնը իր քննական պտոյտը սկսեց Պոլսից, անցաւ Կիլիկիա, Հիւսիսային Սիւրիա, Տիգրանակերտ, Խարբերդ, Սըվազ, Երզնկա, Կարին, Կաբս: Ամէն տեղ հարցաքննեց ազգաբնակութեան ներկայացուցիչներին, յարաբերութեան մէջ մտաւ տեղական իշխանութիւնների հետ, հաւաքեց պատմական, ազգագրական, տնտեսական, քաղաքական, բնալեզուագրական, մշակութային, ռազմագիտական և այլ կարգի տեղեկութիւններ: Սըվազում գոր.Հարթրտը տեսակցութիւն ունեցաւ Մուստաֆա Քեմալի հետ, որը նոր էր ձեռնարկում «Միլլի» շարժման: Հարթրտի տեսլով՝ Քեմալը խնդրել է յայտնել Հայաստանի կառավարութեան, որ այս վերջինը ձեռք քաշէ մեծ պետութիւններից և անմիջապէս համաձայնութեան գայ Թիւրքերի հետ:

Հարթրտի առաքելութիւնը, կարսից, Կաղզուան—Կոզք—Սուրմալուի ճանապարհով հասաւ Երևան և իրեն ընդունելութիւն գտաւ կառավարութեան ու ժողովրդի կողմից: Առաջուց արդէն ուղարկած էին ընդարձակ հարցացուցակներ, և կառավարութիւնը պատրաստել էր պահանջած նիւթը: Տեղի վրա էլ Հարթրտն ու իր ընկերները կատարեցին մանրակրկիտ քննութիւն և նոյն ջերմութեամբ ճանապարհ գրւեցին դէպի Թիֆլիս: Այստեղից անցան Բագու և տեսութիւնների վերջերին մեկնեցին Փարիզ, որտեղից զոր.

Հարթրտրը «Մարքա Վաշինկթընն նուռվ վերադարձաւ Ամերիկա և նաւի վրա էլ պատրաստեց իր տեղեկագիրը՝ ստորագրած 16 հոկտ. 1919թ.»):

Այդ տեղեկագրի մէջ գօրավար Հարբրտրը խոստովանում էր տեսել ամերիկեան ընթացքին հաւաքած տեղեկութիւնները ու հանած եզրակացութիւնները: Շատ էլ մխիթարական չէին նրանք հայերի համար: Նա պնդում էր, որ ծրագրուած Հայաստանում հայերը երբեք ժողովուրդը օժտուած չեն կազմել, իսկ այժմ՝ ևս ստուել, որ հայ ժողովուրդը օժտուած է դրական յատկութիւններով, բայց չդիտէ յարմարուել իր շրջապատին: Հայերը պէտք ունեն արտաքին հոգատարութեան, և Միացեալ-Նահանգները պէտք է ընդունեն հոգատարութիւնը, բայց ո՛չ միայն Հայաստանին: Հարբրտրը առանձնապէս էր մխացնել ամերոյ Թիւրքահայաստանը, Անատոլիան, Գոլիսը, Թրակիան և Անդրկովկասը մէկ մանդատի տակ: Այդ դէպքում Ամերիկան կարող է սահմանել հոգատարութիւնը: Ծօգտւս մանգատն ընգուելու Հարբրտրը բերում էր 14 հիմք, ընդդէմ՝ 13: Մի եզրակացութիւն, որ, ի հարկէ, ոչնչով չէր կարող ուժեղացնել Վիլսընի գիրքը և, ընդհակառակը, ջուր էր լեցնում վիլսընեան քաղաքականութեան քշտամիների ջրաղացի վրա:

*Եւրոպայում արուած քայլերին զուգընթաց՝ Հայաստանի կառավարութիւնը աշխատում էր հարևանների հետ էլ համակեցութեան եղբ ոչ լաւագոյն, գէթ տանելի ձևեր ստեղծել: Այս նպատակով կատարւում էին մանաւանդ տեսակցութիւններ, տեսակէտների գրաւոր փոխանակութիւններ, խորհրդաժողովներ և այլն: Այս ուղղութեամբ մանաւանդրապես եռանդուն գործունէութիւն էին ցոյց տալիս Հայաստանի Հանրապետութեան Բագուի դիւանագիտական ներկայացուցիչ Տ. Բէգզադեանը և Թիֆլիսի ներկայացուցիչ Լ. Եւանդուլեանը՝ երկուսն էլ յարգուած, ձեռնհաս և ազգային գործիչներ, որոնց ներկայութիւնը Թիֆլիսում ու Բագուում, մանաւանդ Տ. Բէգզադեանի հմուտ ներկայացուցչութիւնը, խոշոր օգնականներ էին բերում Հայաստանին: 1919 թւի վերջերին Լ. Եւանդուլեանը**), հիւանդութեան*

) Այս տեղեկագիրը հրատարակուեց 1920թ. Ամերիկեան Վերակոչոի կողմից: Բացի տեղեկագրից ամբողջութիւնը կազմել էր և 12 մասնագիտական տեսութիւններ: 1) Տնտեսական գործօնների ու խնդիրները: 2) Թիւրքիայի և Անդրկովկասի կառավարութիւնը: 3) Թիւրքիայի և Անդրկովկասի պետական և մասնաւոր ֆինանսները: 4) Նոյն երկրների առևտուրն ու արդիւնաբերութիւնը: 5) Հանրային առողջութիւնն ու առողջապահութիւնը: 6) Ազգաբնակութիւնը, արդիւնաբերութեան յատկութիւններ, կենցաղը: 7) Կրթութ, բանեան հարցերի հետազոտութիւնները, անասնաբուծութիւնը, երկրագործութիւնը: 8) Հիմնահարցերը նրանց, հանքային գործը և տաշմանները: 9) Մամուլը Թիւրքիայում և Անդրկովկասում: 10) Մանդատատերով զինուրական անկէքները: 11) Հաղորդակցութեան մէջոցները Փոթ-Աստամում և Անդրկովկասում: 12) Կենսագրութիւններ:

**) Լ. Եւանդուլեանը վախճանեց 1920ին: Նա Թիֆլիսի հայ բարձրագոյն մասնագիտական լաւագոյն դէմքերից էր՝ զարգացած ու կենցաղագէտ, որ վրացիների ու հայերի մէջ ունէցած իր ազդեցութեամբ և օտարների շրջանում վայելած յարգանքով՝ Հայաստանը ներկայացնում էր վայել արժանապատուութեամբ:

պատճառով, պաշտօնից հրաժարուեց, և նրա տեղը անցաւ Տ. Բէնիամինեանը, իսկ վերջինիս փոխարինեց Խորհրդատու անդամ Մարտ. Յարութիւնեանը։

Գէորգ Է այստեղ արձանագրել — յարգանքով ու երախտագիտութեամբ — և ա՛յն անգնահատելի ծառայութիւնը, որ մատուցանում էր Հայաստանին վերջին երեսնամեակի հայ ամենաինքնատիպ գործիչներից մէկը՝ Ստ. Մամիկոնեանը՝ Մոսկուայի Հայկական Կոմիտէի համբաւաւոր նախագահը։ Նաև մի ուրիշ վաստակաւոր գործիչ՝ Սմբ. Յարութիւնեանը, գրիչն մշտական պատւիրակներն էին հայկական կառավարութեան՝ Բէքիլիտում գումարուող խորհրդաժողովներին։ Նա իր պաշտօնը կատարում էր առանձին սիրով ու ժեռնհատութեամբ։ Անմնացէր հայրենասէր, զարգացած և խմացական հարուստ կարողութիւններով օժտուած գործիչ, ուժեղ ու հետևողական կամքի տէր՝ նա կարողանում էր հայկական չահերը պաշտպանել այնպէս, ինչպէս չէր կարողանում ուրիշ ո՛չ մէկը իր միջավայրում։ Ստ. Մամիկոնեանը ամբողջ կեանքում մնաց հաւատարիմ իր գաղափարներին և հայրենասէրի դառն բաժակը քամեց մինչև վերջին մրուրը։ Մեռաւ Բէքիլիտում, յետին աղքատութեան մէջ՝ մերժելով Նէրիսական աշակցութիւնը հայ բոլշևիկների, որոնց համարում էր, Քիւրդերից յետոյ, հայ ժողովրդի վտանգաւորագոյն թշնամին։

Հեշտ բան չէր Հայաստանի չահերի ներդաշնակումը հարևանների հետ։ Մ՛ւ միայն տահմանային ու գործնական ուրիշ խնդիրներ էին բաժանում հայերին պարբկներից ու վրացիներից, այլ և միջազգային քաղաքականութեան գնահատութիւնը, օրիենտացիայի խնդիրը, նովկասի ապագայի ըմբռնումը և այլն։ Մինչ հայերը իրենց ազգային պահանջների գնահատումը որոնում էին դաշնակիցների յաղողութեան և Քուրքիայի քայքայման մէջ, նովկասեան ժահմանականները գժբախտութիւն էին համարում Քուրքիայի պարտութիւնը և ամէն կերպ աշխատում էին ուժեղացնել նրա ազդեցութիւնը նովկասում։ Մինչ, մյուս կողմից, պարբկներն ու վրացիները անվերապահ կռիւ էին յայտարարել հիւսիսին՝ խորհրդային Քէ կամաւորական Ռուսաստանին, առհասարակ, ռուսութեան, հայերը հոգով Ռուսաստանի հետ էին, բնաղդրէն Ռուսաստան էին որոնում։ Հայաստանի ներկայացուցիչները գօր. Դնեիկինի ու Կոլչակի մօտ արտայայտութիւնն էին այդ չռուսասիրութեանց։ Եւ, վերջապէս, վրացիները, բայց, մանաւանդ, պարբկներները իրենց համար ժեռնաւոր էին համարում և յամառօրէն առաջ էին մղում կոնֆեդերացիայի տեղդումը նովկասեան երկիրներից՝ ուղղելով մի յատկ նովկասը Ռուսաստանի դէմ, հայերը, պահելով հանդերձ արտաքին համակրական վերաբերմունքը դէպի կոնֆեդերացիայի գաղափարը, ըստ էութեան հակառակ էին նրան։

Կոնֆեդերացիայի խնդիրը առաջին անգամ եկաւ նովկասեան յորդ հանրագումարութիւնների անդրանիկ խորհրդաժողովին, որ բացուեց ապրիլ 21–ին Թիֆլիսում՝ մասնակցութեամբ Հայաստանի կողմից պրոֆ. գործ. Նախաբար Ս. Տէրբաշեանի, պրոֆ. Նախ. Ս. Յարութիւնեանի և Հ. Խորհրդի

անդամ Ստ. Մամիկոնյանի, վրաստանի կողմից՝ արտ. գործ. նախարար Ե. Գեգեչկորիի, ներք. գործ. նախ. Ն. Ռամիշվիլիի, և ելևմտական նախարար Կանդելակիի. Ադրբէջանի կողմից՝ վարչապետ՝ Խան Խոյսկին, Թիֆլիսի դէս. Ներկ. Մ. Ջաֆարովի և Խաս-Մամեդովի. Լեռնականների Միութեան կողմից՝ Կանտեմիրովի, Բուդդայևի և Գանդուբայևի:

Յորհրդաժողովը տևեց աւելի քան 3 շաբաթ, բայց և ո՛չ մէկ հարցի չուրջ համաձայնութեան չեկաւ: Օրակարգի հարցերն էին՝ սահմանաբաժանման խնդիրը, քոչը, գաղթականութեան վիճակի կարգադրութիւնը, հաղորդակցութեան ու ելևմտական միջոցները, դիւանագիտական ու պաշտպանական համագործակցութիւնը և այլն: Բոլոր հիմնական հարցերը համարեա առաջ բերին տարակարծութիւն, և խորհրդաժողովը ցրուեց անարդիւնք: Յորհրդաժողովի ընթացքում աւելի որոշ դարձաւ կամաւորական բանակի ապառնալիքը կովկասին, և վրացիներն ու ադրբէջանցիները դրին օգոստոս Դենիկինի դէմ զինակցութիւն կնքելու առաջարկը: Հայերը մերժեցին: Այն ժամանակ, վրացիներն ու ադրբէջանցիները կնքեցին առանձին դաշինք, որով կողմերը պարտաւորւում էին, ռուսական յարձակման պարագային, մէկ մէկու զինուորական աջակցութիւն ցոյց տալ: Դաշինքի կնքումից յետոյ Թիֆլիս եկաւ Ադրբէջանի զինուորական նախարար գօր. Մխիթարովը և տեղի ունեցան աղմկոտ ցոյցեր վրաց–ադրբէջանեան բարեկամութեան մասին:

Այդ առթիւ, արտ. գործ. նախ. Ս. Տիգրանեանը գրում էր իր 1919Թ. յունիս 16 գեկուցման մէջ. «Մդիվանին օրեր առաջ ասել էր, Թէ՝ եթէ հայերդ չզիջէք, մենք ստիպւած կը միանանք Թաթարների հետ: Մեր քաղաքական գործակցութեան անհրաժեշտութիւնը մերժել էին, իսկ մեր չէզոքութիւնը, առանց դաշնագրի ու կոմբինացիայի, ապահովելու հաստատ ու բաւարար մի բոլոր գտել էին Հայաստանի նեղսը և դուրսը մուսուլմանների յարձակումներով ու սպառնալիքով մեր ուժերը դրաղեցնելու, ջլատելու և չէզոքացնելու մէջ (Ղարաբաղի, Օլթիի, Կազղանի, Շարուրի, Նախիջևանի դէպքերը): Եւ այն երևաց, երբ մենք՝ Հայաստանի միխատրներս՝ անչուռ և անուշադիր մեկնում էինք Թիֆլիսի կայսրանից, նոյն կայսրանում Վրաստանի մինիստրները պատւի պահակով, երաժշտախմբով, չքով դիմաւորում էին Թիֆլիս ժամանող գօր. Մխիթարովին՝ Ադրբէջանի գօրական մինիստրին»:

Սեպտ. 17–ին, Թիֆլիսում, բացւեց Հայ–վրացական մի նոր խորհրդաժողով՝ բաղկացած Ն. Ռամիշվիլիից, Ս. Մդիվանիից ու Կ. Սաթախտարաշվիլիից (Վրաստան) և Ստ. Մամիկոնեանից, Ս. Խաչատրեանից ու գօրավար Քիլմիլեանից (Հայաստան): Օրակարգի հարցերն էին. 1) Թրանզիտ, 2) երկաթուղային չարժական միջոցների բաժանում, 3) անդրկովկասեան դոյքերի բաժանում, 4) Հպատակութեան հարց, 5) Հայաստանի պետական վարկային գործողութիւնների կատարում Թիֆլիսում և 6) մաքսային արտելքների վերացում:

Նորից ու նորից չատ երկար քննութեան ու վիճաբանութեան առարկայ դարձաւ սահմանային հարցը: Այս անգամ կողմերը որոշ զիջումներ արին, բայց համաձայնութիւնը նորից մնաց անհասանելի: Վրացիները յայտնեցին,

որ իրենք տրամաղիր են որոշ գիշումներ անել Լոռիի չրջանում, բայց Ախալչալաքի գաւառում՝ ո՛չ մի գիշում: Նրանք առաջարկեցին հետևեալ սահմանագիծը Վրաստանի և Հայաստանի միջև.

Սկսելով Ջաբընգաղ 7378 գագաթից Թիֆլիսի և Գանձակի նահանգների սահմանագծից՝ սահմանը պէտք է անցնէր Բոլոր-Կոնտ 6475 լերան կատարով, ապա, Ջրաբաչի ուղղութեամբ, Ակոռի գիւղի հարաւային կէսին, ուր ձախ կողմից թափւում է մի գետակ Թեքեբաշլի մէջ: Այստեղից, ուղիղ գծով դէպի Ակուռկայա սարը և ապա Ջրաբաչիով մինչև 7252 նշանը, այստեղից լեռնաշղթայով կրնստովայա լերան կատարը 6488: Ցետոյ, Ջրաբաչիով, Դայլի Դրունք լեռնանցքով —Օսինովայա լեռը — Լոկի լեռը — Լոկի լեռնանցքը — 5752 բարձունքը, Սասաթի գիւղը հարաւից առնելով՝ 6132 բարձունքը: Այստեղից Ջրաբաչիով՝ Խզանչայ գիծը, ապա կարաններս գետով Լէյլի դաղ բարձունքը: Ապա՝ Թիֆլիսի նահանգի նախկին սահմանը, Ակիւդդաղ 8018 լերան վրայով՝ Օրտուդդաղ 8030 լեռը, 8127 նշանը մինչև Ուչ-Քիփաչար 9783 լեռը»:

Այսպիսով, ամբողջ Լոռիի դաշտը և երկաթուղին մինչև Սանահին պիտի անցնէին Հայաստանին: Այս գիծը վրացիները համաձայնում էին նկատել իբրև ժամանակաւոր սահման. եթէ Հայաստանի անկախութիւնները Թիւրքիայից իրականանային, սահմանագիծը պէտք է վերաքննւէր:

Հայերը համաձայնում էին պայմանական կերպով գիշել Ախալչալաքի մեծ մասը՝ պահելով իրենց ձեռքին լճերի չրջանը: Լուրջ գիշումներ էին անում և Լոռիի չրջանում: Հայերն առաջարկում էին հետևեալ սահմանագիծը. Գաղթ գիւղից 4 վերստ հիւսիս-արևմուտք գտնւող Շուամլ (3465) լեռը. ապա՝ 1603 բարձունքով, 3938 (Գեդիկ-Բուռուն լեռը) բարձունքի վրա գտնւող ձմեռանոցով դէպի Քէչէլ Կոնդ (4865) լեռը, Հուղաքար լեռը. ապա՝ 7364 բարձունքի վրա գտնւող ձմեռանոցից դէպի Լալւաթ սարը (8386), 7262 բարձունքը, որտեղից սահմանը չուռ է գալիս դէպի հիւսիս-արևմուտք, կրնստովայա (6488) լեռը, 5810 բարձունքով (Դայլի Դրունք լեռնանցքը) Օսինովայա սարը, Լոկ սարը (7038), ապա՝ Լոկի լեռնանցքը (5999), «Սասթի» մակագրութեան վրայով դէպի 5752, 5334 բարձունքը, որտեղից ուղիղ գծով Աղրիքար (9765) լեռը: Եւ Ախալչալաքի գաւառով՝ Աղրիքար (9765) լեռը՝ դէպի Շէյ Թափա (8820) լեռը, 7637 (Սուրբ Յովհաննէս) բարձունքը, 7168 (Գոտ-Ջանա-Թափա լեռը) բարձունքը, 6741 բարձունքը, Էչտիա գիւղի (որ պիտի մնայ Հայաստանին) վրայով Ուչ-Քիփա (6254) լեռը, որտեղից ուղիղ գծով 4319 բարձունքը, որ Քուռից արևմուտք է գտնւում (Օկամ և Ադմանա գիւղերը Քողնելով Վրաստանին). ապա՝ սահմանը անցնում է դէպի հարաւ-արևմուտք, Քուռ գետի հոսանքով, մինչև Ագրահան:

Ինչպէս տեսնում ենք, հայ-վրացական սահմանագիծի հիմնական տարբերութիւնը Լոռիում Ալլահվերդիի պղնձահանքերն էին. վրացիները պահանջում էին Ալլահվերդին իրենց, հայերը՝ իրենց: Եւ երբ վրացիները

խօսք բացին այն մասին, որ իրենք ահագին անտեսական զիջումներ արին այն պայմանով, որ հայերն էլ զիջեն սահմանային խնդրում, հակակաս պատուիրակութեան նախագահ Սա. Մամիկոնեանը կոբուվ կէյզով ընդհատեց. «Հողային հարցը չպէտք է կապել տնտեսական հարցի հետ. հողային հարցերը քաղաքական հարցեր են և զիջումը այս ասպարէզում կարող է լինել միայն բարձրագոյն կարգի քաղաքական պատճառներով: Վագոնների ու չոգնչարժերի փոխարէն հող չի կարելի զիջել»:

Սահմանային հարցը այս անգամ էլ մնաց անլուծ: Նա վէճի առարկայ էր և արտասահմանում հայ և վրացի պատիրակութիւնների միջև և նոյն խոչընդոտները էր հանդիպում, ինչ որ և կովկասում: Որոշուեց, սակայն, մի քայլ արաւ ուրիշ հարցերում. Նոյեմբ. 3-ին Հայաստանի և Վրաստանի միջև ստորագրուեցին երկու դաշնագրեր, որոնք անպայման նւանում էին հայ-վրացական մերձեցման տեսակէտից: Առաջին դաշնագիրը ասում էր.

«Վրաստանի կառավարութիւնը՝ ներկայացած է գմա նևրքին գործերի և զօրական նախարար Նոյ Վիսարիոնովիչ Ռամիշվիլու և Վրաստանի Հանրապետութեան Հիմնադիր ժողովի փոխ-նախագահ՝ Սիմէոն Գուգունովիչ Մդիվանու մի կողմից և Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը՝ ի գմա Սաֆեան Գրիգորեան Մամիկոնեանի և Հայաստանի Հանրապետութեան Պարլամենտի անդամ Սմբատ Յարութիւնեան նախատորեանի միւս կողմից, — ծանօթանալով լիազօրութիւնների հետ և, գտնելով դրանք պահանջւած ձեի և պատշած կարգի, կնքեցին այն դաշնագիրն առ այն, որ.

1. Հայաստանի երկաթուղիներով Հայաստանի վրայով Վրաստան, կամ Վրաստանից Հայաստանի սահմանները և վրաց երկաթուղիներով Վրաստանի վրայով Հայաստան կամ Հայաստանից Վրաստանի սահմանները փոխադրուղ ապրանքների համար սահմանւում է ազատ փոխադրութիւն, այսինքն՝ փոխադրութիւն առանց մաքսի:

2. Մոյն դաշնագիրը կնքւում է երեք տարով, ըստ որում դաշնագրի հաստատման օրից մի տարի անցած՝ դաշնագիրը կնքող կողմերից իւրաքանչիւրը իրաւունք ունի յայտարարել վերջինիս դաշնագիրը և այս դէպքում՝ դաշնագիրն իր ոյժի մէջ մնում է այդ յայտարարութեան օրւանից ևսած վեց ամսւայ ընթացքում: Եթէ այդ ժամանակամիջոցում կողմերը դաշնագրի վերաքննութեան մասին համաձայնութեան չգան — դաշնագիրը կորցնում է իր ոյժը:

3. Հաստատած դաշնագրի փոխանակութիւնը կատարելու է Թիֆլիսում երկու չարաթւայ ընթացքում:

4. Ներկայ դաշնագիրը կազմւում է երկու օրինակ»:

Երկրորդ դաշնագիրը վերաբերում էր «Հայաստանի և Վրաստանի Հանրապետութիւնների՝ վիճելի խնդիրները համաձայնութեամբ կամ պարտադիր իրաւարքի միջոցով լուծելու» հարցին.

«1. Դաշնագիրը կազմող պետութիւնները՝ Հայաստանի և Վրաստանի Հանրապետութիւնները՝ պարտաւորւում են իրանց մէջ գոյութիւն ունեցող, այլ և ծագելիք հնարաւոր բոլոր վէճերը լուծել համաձայնութեամբ, եթէ եթէ դա չկայանա, պարտադիր իրաւարքի միջոցով:

2. Վաւերացած սոյն գաշնագրի փոխանակութիւնը կատարուելու է Թիֆլիսում, երկու չաթաքեայ ընթացքում:

3. Ներկայ գաշնագիրը կազմում է երկու օրինակ:*)

Երկու գաշնագրերն էլ վաւերացուցին Հայաստանի Հանրապետութեան նախագահ 11-ը նիսանում և, փոխանակութիւնից յետոյ, ժամն ոյժի մէջ:

Դրանից առաջ, օգոստ. 29—30-ին, անգլիացիների հեռանալու առթիւ, հայ ու վրացական պատերազմական իշխանութիւնների խորհրդաժողովում, գօր. Բիլլի մասնակցութեամբ, մշակուել էր վարչական ձև Լոռիի չեզոք շրջանի համար: Որոշուել էր 1) Չեզոք շրջանի վարչութիւնը թողնել խառն անգլիական սպայի ղեկավարութեան ու հակակշռի տակ. 2) Անգլիական սպայի բնակութեան վայր կարող է լինել Ալլահվերդին կամ Թիֆլիսը. 3) չեզոք շրջանի վարչութեան ծախսերը բաժանուում են Հայաստանի և Վրաստանի մէջ: Սեպտ. 1-ին նոյն պատերազմական իշխանութիւնները որոշեցին 1) անփոփոխ թողնել չեզոք շրջանի հայ և վրացի զօրամասերի քանակն ու բնակութեան վայրը. 2) կազմել զինուորական մասնագէտներից մի յանձնախումբ ստուգելու համար, թէ արդեօք 1919թ. յունս.9—17-ին հաստատուած զինը և զօրքերի դասաւորութիւնը պահպանուա՞ծ է:

Այս որոշումները հաստատուեցին Հայաստանի և Վրաստանի կառավարութիւնների կողմից և մտան ուժի մէջ, որով անգլիացիների հեռանալուց յետոյ էլ Լոռիի չեզոք շրջանը մնաց հայ-վրացական խառն իշխանութեան ներքոյ:

Միակն, երէ հայ-վրացական փոխյարաբերութիւնները, արագ կամ դանդաղ, քայլ առ քայլ բարելաււում էին, Ադրբէջանն ու Հայաստանը չարունակում էին մնալ թշնամի կողմեր. պայտնապէս պատերազմ չկար նրանց մէջն, բայց փաստական վիճակը պատերազմից էլ վատ էր: Հասկացողութեան գալու մի փորձ էր հայ-ադրբէջանեան խորհրդաժողովը, որ բացուեց Բաքւում, 1919թ. դեկտ. 14-ին:

Հայաստանի կողմից խորհրդաժողովի պատգամաւորներ էին նշանակուած Մ. Ծարուխիւնեանը, Տ. Բէգզադեանը և Վ. Փափազեանը: Վերջինիս հիւանդութեան պատճառով՝ փոխարինեց Ց. Արզուխանը, որ Բաքուի վրայով Թէհրան էր գնում, իբրև դեսպան: Ադրբէջանեան պատգամաւորութեան կազմն էր՝ Ֆաթալի Խան Խոյսկի, Մամէդ Հասան Ջէնիկեի և գոկտ. Վեքիլով: Իբրև իրացի անձ, նիստերն ներկայ էր լինում և Խալիլ բէյ Խասմամեդովը: Հանրապետութեան օրակարգն էր. 1) սահմանների հարցը, 2) երկաթուղային և առևտրական պայմանագրեր, 3) գաղթականների վերադարձի կարգաւորում, 4) երկու հանրապետութիւնների քաղաքացիների դատաստանական-իրաւական յարաբերութիւնների և 5) հիւպատոսական հարցը:

Հանրապետութիւնը ունեցաւ 4 մասնաւոր խորհրդակցական և 2 հրապարակային նիստեր: Ադրբէջանի զինակալ շրջաններն ու կառավարութիւնը

*) Գաղնագրերը — առւսերէն ու հայերէն — հրատարակւած են Հայաստանի հանրապետութեան օրէնքների Հաւաքածոյի 1919թ. դեկտ. 31 № 10-ում:

խիստ ուշագիր էին դէպի հայ պատւիրակութիւնը, իսկ Մուսաւաթի համագումարը նոյնիսկ մի ուղերձ յանձնեց նրան, բայց հէնց սկզբից երևան եկաւ, որ կողմերը կանգնած են անհաչտելի տեսակէտների վրայ։

Սահմանների հարցի համար հայկ. պատւիրակութիւնը առաջարկում էր որոշել ժամանակաւոր սահմանագիծ, իսկ ազգբէչանցիք պնդում էին վերջնական լուծման վրայ։ Հայկ. պատւիրակութիւնը յարմար էր համարում սկզբից կարգադրել գործնական խնդիրները և որոշ նպաստաւոր մթնոլորտ ստեղծելուց յետոյ միայն անցնել սահմանային հարցին. ազգբէչանցիք, ընդհակառակը, անհրաժեչտ էին համարում սկսել հէնց սահմաններից։ Երկու դէպքում էլ հայկ. պատւիրակութիւնը տեղի տւեց։ Բայց այն օրը, երբ պէտք է սկսւէր սահմանագծի քննութիւնը, ազգբ. պատւիրակութիւնը յայտարարեց, թէ, երկար մտածելուց յետոյ, ինքը եկել է այն եզրակացութեան, որ ներկայ պայմաններում անհնար է անցկացնել այնպիսի սահմանագիծ, որ բաւարարի երկու կողմին էլ, ուստի պէտք է բաւականանալ միայն ընդհանուր սահմանորոչումով։ Իսկ դրանից առաջ հարկաւոր է բոլորովին վերացնել փոխադարձ անվստահութիւնը, տարբեր օրինաստիւնները և ստեղծել կովկասեան ժողովուրդների միութիւն, կապել կոնֆեդերացիա։ Դրանով ոչ միայն կը հեչտանայ ներքին խնդիրների լուծումը, այլ և արտաքին ճանաչումը։ Թէ Քանձրացեալ կերպով ի՞նչ ձևով էր հասկանում կոնֆեդերացիան, ազգբէչեանն պատւիրակութիւնը չպարզեց։

Հայաստանի պատւիրակութիւնը առարկեց, թէ կոնֆեդերացիայի համար պակասում են մի չարք էական պայմաններ. — մեր հարաբախտութիւնների անկախութիւնը դեռ ևս չի ճանաչւած, մեր հանրապետութիւնների չէզոքութիւնը դեռ չէ ապահովւած, սահմանները որոշ չեն և այլն։ Այս պայմաններում կոնֆեդերացիան անիրագործելի բան է։

Սրա վրա խորհրդաժողովը ընդհատւեց, և հայկ. պատւիրակութիւնը մեկնեց Երևան՝ նոր հրահանգներ ստանալու և խորհրդաժողովը թիֆլիսում շարունակելու որոչումով։

•

Հակառակ աննպաստ պայմանների, ներքին կեանքում էլ Հայաստանը հետզհետէ ամրանում ու բարգաւաճում էր։ 1919թ. ամառը Հայաստանը արդէն կազմակերպւած պետութիւն էր. երկիրը բաժանւած էր 10 գաւառների՝ համապատասխան վարչութեամբ ու դատաստանական իչխանութեամբ. բոլոր գաւառներում կային հաչտարար դատարաններ, որոնք, բացի Արզահանի գաւառից, դատավարութիւնը անում էին հայերէն լեզւով։ Երևանում կար չրջնային դատարան, դատաստանական պալատ, Մենեամ։ Մայիս 28–ին Ղամարլու, Վաղարչապատ, Աչտարակ, Իգդիր, Կողբ, Ղարաքլիսա, Ջալալ–Օղլի, Թիլիկեան գիւղերը վերածւեցին քաղաքի։

Երկրի վարչութիւնը բարելաւելու նպատակով, մայիս 25–ին Երևանում գումարւեց գաւառապետների անդրանիկ համագումարը ներքին գործոց նախարարի օգնական Ս. Մանասեանի նախագահութեան տակ։ Ներկայ էին



Կ. ԱԼԻԽԱՆ
Հիմնադիր նահանգապետ



Ա. ԱՐԱՄ
Վարչապետ



Ե. ՀԱԿՈԲՅԱՆ
Վարչապետ



Ե. ՀԱՅԿԱԶՅԱՆ
Վարչապետ



Ա. ՀԱՄԱՍՏԵՂՅԱՆ
Վարչապետ



Ա. ՀԵՔՊԻՅԱՆ
Վարչապետ



Ռ. ԴԱՐԲԻՆՅԱՆ
Վարչապետ



Տ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Վարչապետ



Վ. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆ
Վարչապետ



Երևանի գաւառապետ Լ. Ամիրխանեանը, էջմիածնի՝ Սեդրաք Զալալեանը, Դարալագեազի՝ Ն. Ճակոբեանը, Նոր-Բայազետի՝ Բէկո Նալչաճեանը, Դիլիջանի՝ Մեսրոպ Սարաւիկեանը, Ղարաքլիսայի՝ Սիգռ Տէր-Մարգսեանը, Ալեքսանդրապոլի՝ Թալանեանը, Կարսի Նահանգից՝ Ստ. Ղորղանեանը, Զանգեզուրից՝ Նիկ. Ծովսէփեանը, Սուրմալուից՝ Հ. Ղորղեի անդամ Իւսուֆ բէկ Քեմուրեանը (եկիդի)։ Համագումարին, մէջ ընդ մէջ, մասնակցեցին նաև Հայ. Ղորղեի ու կառավարութեան անդամները, նախարարութեանց ներկայացուցիչները և այլն։ Օրակարգի մէջ դրուած էին բազմաթիւ հարցեր։ Ջուտ վարչական–ոստիկանական հարցերից յիշենք 1) երկրի վարչական սահմանների որոշման հարցը, 2) մասնագէտ ոստիկանների պատրաստութիւնը և ոստիկանական դպրոցի բացումը, 3) պաշտօնէութեան ու ոստիկանութեան տնտեսական վիճակի բարելաւումը, 4) ոստիկանների համազգեստի խնդիրը։ Համագումարը ներմ հետաքրքրութիւն առաջ բերեց իր չուրջը։ Նրա դռին էր Ս. Մանասեանը՝ մէկը այն անդամուկ, բայց եռանդուն գործիչներից, որոնց, ամէն բանից առաջ, հետաքրքրում է կենդանի գործը։ Հին յեղափոխական, պատասխանատու դերակատար ժողովրդական ինքնապաշտպանութեան կազմակերպութեան չրջանում, Մանասեանը, որպէս ներքին գործոց նախարարութեան վարիչ էլ երևան բերեց վարչական բարձր կարողութիւն։ Երկար ժամանակ, փաստօրէն նա էր ներքին գործոց նախարարութեան ղեկավարը, և Հայաստանի ներքին կազմակերպութիւնն ու զարգացումը չատ բանով նրան է պարտական։

Կառավարութիւնը աչխատեց աստիճանաբար հայացնել բոլոր պետական հիմնարկութիւնները՝ խուսափելով, սակայն, կարուկ միջոցներից։ Այս պարագան ջղայնացնում էր հասարակութեան որոշ մասերը, մանաւանդ, քիւրքաշաւիերին, որոնք պահանջում էին անմիջապէս հայացնել ամբողջ պետական մեքենան։ Մամուլը, մանաւանդ, անողոք քննադատութեան էր ենթարկում այն հիմնարկութիւնները, ուր ազգայնացումը գնում էր դանդաղ։ Այսր. 17–ին Երևանի քաղաքապետարանում տեղի ունեցաւ հայ մեր–մերի ներկայացուցիչների առաջին ժողովը՝ մասնակցութեամբ «Աչխատանքը–ի խմբագիր Չ. Մանուկեանի, «Հայաստանի Աչխատաւորը–ի խմբագիր Վ. Ղորլենի, «Հայաստանի Կոօպերացիաս–ից Զ. Կորկոտեանի և «Վան–Տոսպ–ից՝ Ա. Աւետիսեանի, որ կայացրեց հետևեալ որոշումները։ 1. Կոչ ուղղել պետական, հասարակական ու մասնաւոր հիմնարկութիւններին՝ խօսել ու գրել հայերէնով։ 2. Մերժել ո՛չ հայերէնով գրութիւններ, լուրեր ու յայտարարութիւններ ընդունել։ Վերջինի համար բացառութիւն համարել միայն այն պարագան, երբ անոր կընկերանայ հայերէնը և կամ քէ երբ ոչ հայերու կողմէ է տրուած։ 3. Փաստնկել հայերէն լեզուի պաչտօնեաներացում, իսկ մեր մեքենաների գործածութիւնը թոյլատրել միայն որպէս օժանդակ լեզուներ։ 4. Թերթերի մէջ ունենալ հետայցմանդ բաժին, ուր տպելու են լուրեր քէ դրական և քէ բացասական, նոյնիսկ ազիտացիոն բնաւորութիւն ունեցող՝ հայ լեզուի գործածութեան լուրջ։ 5. Կազմակերպել հետևիչ հետայցման գործիչէ, որի մէջ մտնելու են ներկաները, ինչպէս նաև հրաւիրում են մասնակցելու բացակայ թերթերի, նախարարութիւն–

Նեղի ու քաղաքապետարանի ներկայացուցիչները։ Այդ կոմիտեի դուռները բաց պիտի բլլան։ վերոյիշեալներէն ցանկացողները կրնան ներկայացուցիչ ուղարկել և կամ ուզած ժամանակ իրենց ներկայացուցչին յետ կանչել։ Գոմիտէն պիտի գրաւէ նաև գործնական ինդիրներով։ ցուցմունքներ անելով և օգուտներով ի պահանջել հարկին զանազան հիմնարկութիւններ աւրագ հաւացական։ Գոմիտէն ունի իր միայուն դիւանը՝ վարելու համար գործառնեայ աշխատանքները։

Անշուշտ, որոշ չափով այս չարժման ազգեցութեան տակ էր, որ մայիս 15-ին ներքին գործոց նախարարի օգնական Ս.Մանասեանը ուղարկեց հետեւեալ շրջաբերականը.

«Վաւաշարկում եմ այսուհետև գաւառում բոլոր գրագրութիւնը գաւառական, հասարակական և պետական կոմիսարների և նմանապես բոլոր հիմնարկութիւնների պաշտօնեաների հետ վարել հայերէն՝ հասկացնելով ազգաբնակութեան, որ ինդիրները, բացատրութիւնները հիմնարկութիւններին և պաշտօնեաներին պէտք է գրել հայերէն։ Նոր պաշտօնեաներին ընդունելիս պէտք է պահանջել և գիտցաուելիին տալ նրանց, որոնք տեղական եղ հայոց լեզուին։ Թէ գաւառական կոմիսարների և թէ բոլոր տեղաբաշխեալ պաշտօնեաների կազմած արձանագրութիւնները պէտք է լինեն հայերէն, իսկ եթէ մեզաղուողը հայ չէ, արձանագրութիւնը կարելի է կազմել և ռուսերէն։ Կարգադրեցէք, որ բոլոր հայ գիւղերում համախօսականները, հրամանները և, ընդհանրապէս, ամբողջ գործավարութիւնը կազմւեն և կատարուեն հայերէնով։

Տարեայ վերջը պետական և հանրային հիմնարկութիւնների մեծ մասը արդէն հայացած էր. դեկտ. 26-ի օրինքով հայերէնը յայտարարուեց պետական լեզու։

Երկրի վերաշինութեան և տնտեսական բարեկարգութեան համար կատարեցին մի չարք արժէքաւոր ձեռնարկներ. ապրիլ-մայիս ամիսներին բանակցութիւններ կատարեցին Անդրկովկասի ջրային գործի հեղինակաւոր մասնագէտ Ս. Զաւալիշինի հետ և նրան յանձնեց Հայաստանի տնտեսութեան ջրային ուժի և ոռոգման ուսումնասիրութեան աշխատանքը։ Այդ նպատակով յատկացրեց 4 միլիոն ռուբլի։ Ս. Զաւալիշինը գործի կանչեց մի չարք առաջնակարգ մասնագէտներ — Գ. Վէյնարն, Ջմորիլին, Կոժուխինով և ուրիշներ—մօտ 70 ինժեներներ, տեխնիկներ, հանքագործներ, հողագէտներ ու բուսագէտներ և ուրիշ քան մէկ տարի անընդհատ հետազօտութեան ենթարկեց ու ծրագրներ կազմեց Հայաստանի ջրային կարողութիւնների մասին՝ որոշելով ոռոգման գրութիւնը, առուների ուղղութիւնը, էլեկտրակայանների կարգն ու տեղը և այլն։ Ցետագային, այս հետազօտութեան արդիւնքները ընդունելին ակադ. Ա. Թումանեանի նախագահութեամբ կազմուած յանձնախմբի կողմից և մինչև այսօր էլ անգնահատելի նիւթ են ծառայում Հայաստանի համար։

Մայիս 1-ին պարէն. նախ. Գ. Վերմիշեանի առաջարկով և արդ. նախ. Ս. Ցարութիւնեանի իրաւաբանական եզրակացութեամբ կոռուպարութիւնը ոչնչացուած համարեց Կողբի ազատանքի կապակի պայմանները և ազատանքերը գրաւեց յարգունիս՝ պետական միջոցներով կազմակերպելով ապի արտադրութիւնն ու վաճառքը։

ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ



Գ. ՓԱՓԱԶԻԱՆ
(Վաշինկթըն)



ԱՐՊԻՈՒԵԱՆ
(Բեռնօսն)



Մ. ՎԱՐՈՒԺԵԱՆ
(Հռոմ)



Տ. ԲԼԳԳԱԼԵԱՆ
(Բագու—Թիֆլիս)

Մայիս 26–ին կառավարութիւնը որոշեց բանալ կարս—Բաթում խճուղին և պարէնի փոխադրութեան գործը կազմակերպել այդ ճանապարհով։ Գործի ղեկավարութիւնը յանձնուեց Գ. Յատիսեանին, որին յաջողուեց հաղորդակցութիւն հաստատել Բաթումի ու Կարսի միջև և որոշ քանակութեամբ ալիւր էլ տեղափոխել։ Աշաքեայում ծայր տուած հակավրացական չարժումները, սակայն, արգելք եղան սկսուած գործի շարունակութեան։

Օգոստ. 25–ին քննութեան առնուեց ժողովրդական տնտեսութեան նախաթարութեան հիմնելու ծրագիրը և որոշուեց երկրի վերաշինութեան վերաբերող բովանդակ աշխատանքը կենտրոնացնել մի հիմնարկութեան մէջ։

Հոկտ. 17–ին Մոսկուայում կնքուեց 5 միլիոն ռուբլի վարկ բացեց Հայաստանի կօօպերատիւների Միութեան։

Նոյն հոկտեմբերին արդէն վերջացել էր կառուցումը Երևանի ուժեղ ռադիոկայանի, որ գործում էր մինչև Բաքու, Թաւրիզ ու Հաշտարխան։

Կրթական–մշակութային պահանջների համար ևս մեծ առնուեցին լուրջ միջոցներ։ *Մայիս* 30–ին կառավարութիւնը որոշեց մինչև յունիս 15 պարզել բոլոր դպրոցական չէնքերը, նորոգել և պատրաստել ուսումնական նոր տարւայ համար և տարրական ու միջնակարգ դպրոցներին յատկացնել 10,970,925ր.։ Տարւայ վերջը Երևանի, Կարսի, Ալեքսանդրապոլի, Էջմիածնի, Փամբակ–Լոռիի, Իջևանի և Նոր–Բայազէտի ու Զանգեզուրի գաւառներում կար 431 տարրական դպրոց 1096 ուսուցչով և 38,015 աշակերտով։ Միջնակարգ դպրոցների թիւն էր 20, որոնց մէջ կար 288 ուսուցիչ և 5162 աշակերտ։

Մայիս 16–ին որոշուեց բանալ համալսարան։ *Յուլ.* 15–ին հիմնուեցին յուշարձանների պահպանման և արուեստի հովանաւորութեան յանձնները։

Մայիս 25–ին Երևանում բացուեց Հայ Արուեստագէտների Միութեան անդրանիկ պատկերահանդէսը Հայաստանում, որ կազմակերպած էր հանրային կրթութեան և արուեստի նախարարի հովանաւորութեան տակ։ Ցուցադրուած էին բազմաթիւ նկարներ՝ Գ. Բաշինջաղեանի, Ե. Թադեոսեանի, Մ. Սաբեանի, Մ. Ջաչարեանի, Ախիկեանի և չատ ուրիշների։ Պատկերահանդէսը մեծ հետաքրքրութիւն առաջ բերեց հասարակութեան մէջ։ կառավարութիւնը գնեց 100,000ռ. նկարներ պետական քանգարանի համար։ Պատկերների գնումներ կատարեցին և Հայկօոպը, Երևանի քաղաքային ինքնավարութիւնը և այլն։

Հայ Գրողների Միութեան նախագահ Ց. Թումանեանի գիմումի վրա. *յուլ.* 9–ին կառավարութիւնը յատկացրեց 100,000ռ., որպէս նպաստ հայ գրողներին, գիտնականներին ու հրապարակախօսներին։ Հայ Գրողների Միութեան վարչութիւնը այդ դումարը բաժանեց 8 տեղից հեղինակաւոր ու կարիքաւոր գրողներին։

Սեպտ. 10-ին հորհրդարանը որոշեց հիմնել Ազգագրական-Մարգարեանական Քանաքեռ-գրադարան, որին յանձնել ի սեփականութիւն Հայոց Ազգագրական Ընկերութեան չարժական և անշարժ գոյքը՝ համաձայն վերջինս ընդհանուր ժողովի որոշման: Ազգ. Ընկերութիւնը նախընէ էր Հայաստանին իր ամբողջ գրադարանը — մօտ 10,000 գրքեր, պարբերականներ, 120 գրչագիր-ձեռագիրներ, ազգագրական նիւթեր, թերթեր և այլն: Ընկերութեան հիմնադիր ու վարիչ ե. Լալայեանն էլ տեղափոխում էր Հայաստան միևնոյն պաշտօնով:

1919թ. վերջին երևանում արդէն գործում էին Քաւտերական վարժարանը, Լրատ չական, Հայոց լեզւի, մանկավարժական դասընթացներ և մի շարք ուրիշ կրթական նոր հիմնարկութիւններ:

Կառավարութիւնը խոշոր գումարներ յատկեց ներգաղթի վրա. մայիս 3-ին յատկացուց 36,200,800ռ. Կարսի ներգաղթի գործին: Այդ գումարից 15 միլիոնը պիտի գնար գաղթականների փոխադրութեան և մի մասայ ապրուստի, 17,486,800ռ. պիտի տրուէր փոխարինաբար տնտեսութեան վերականգնման համար, իսկ մնացածը պիտի գործադրէր վարչական կազմակերպութեան, բժշկա-առողջապահական և այլ կարիքների: Ցուլիս 24-ին յատկացուց 9,744,100ռ. Ապրիլեանի, Նոյեմբի, Արչէլի, Շամախիի, Գէոքչայի և Ղուբայի գաւառների 20,000 հայերին Հայաստան փոխադրելու համար: Մէկ միլիոն ռուբլին պիտի յատկացուէր իբրև ճանապարհի վարձ, 3,600,000ռ.՝ երկու ամսայ ապրուստի մէջոց և 944,000ռ., որպէս կազմակերպական յատկացում:

Այս մի քանի ոչ լրիւ տեղեկութիւնները բաւական են ցոյց տալու համար, որ ներքին լարւած աշխատանք էր կատարւում Հայաստանում: Տարւայ վերջը արդէն երկիրը գտնւում էր համեմատական բարեկարգութեան մէջ և ոգևորութեան ու զուարդուրանքի առարկայ էր ո՛չ միայն Հայաստանում, այլ և դուրսը ապրող բոլոր հայերի համար: Հայաստանը դարձել էր այն յուսատու վարդոսը, որ իրեն էր քաշում աշխարհի չորս կողմը փուած հայութիւնը: Իբրև արտայայտութիւն նման տրամադրութեան, արձանագրենք Թիֆլիսի հայ մտաւորականութեան ժողովը: Դեկտեմբերի վերջերին այնտեղ կազմուեց Հայ Կուլտուրական Հաստատութիւնների Միութիւն՝ բաղկացած Հայ Գիւղատնտեսական Ընկերութիւնից, Հայոց Տեխնիկական Ընկերութիւնից, Հայ Բժիշկների Միութիւնից, Ազգագրական Ընկերութիւնից, Հայ Կանանց Միութիւնից, Հայ Իրաւաբանների Միութիւնից, Կովկ. Հայոց Բարեգործական Ընկերութիւնից և այլն: Միութեան նպատակն էր համաձայնեցնել առանձին ընկերութիւնների աշխատանքները և, ըստ կարելոյն, բարոյական օգնութիւն և լայն աջակցութիւն ցոյց տալ Հայաստանի կառավարութեան՝ երկրի վերաշինութեան գործում: Միութեան մէջ մտնում էին Թիֆլիսի գրեթէ բոլոր հայ մտաւորականներն ու հասարակական գործիչները, որոնք, առանց որև է ակնկալութեան, պատրաստակամութիւն էին յայտնում ծառայելու Հայաստանին, ի հարկին, տեղափոխելով նաև Հայաստան:

Իրակահանում էր բանաստեղծի երազը —

Եւ ամէն կողմից Հայկայ հէգ որդիք

Դիմեն դէպ իրենց սիրուն հայրենիք...

ԳԼՈՒԽ ԺԲ.

1920 ԹԻ ՍԿԻԶԲԸ


1920 թւականը Հայաստանի Հանրապետութեան համար սկսուեց ըստ ամենայնի նպաստաւոր պայմաններում: Ներքին կեանքում և սահմանների վրա տիրում էր համեմատական խաղաղութիւն: Երկրի բոլոր մասերում ժողովուրդը տարւած էր չինարարական աշխատանքով: Վերից վար, Կորհրդարանից սկսած մինչև վերջին գիւղական իշխանութիւնը՝ ամենքը համակուած էին իրենց պարտականութեան գիտակցութեամբ. պետութիւն էին ստեղծում: Եւ պետութիւնը օր օրի վրա զարգանում ու կատարելագործւում էր: Նրանք, որ տեսել էին Հայաստանը մի տարի առաջ, չէին ճանաչում. այնքա՜ն փոխուել էր ամէն ինչ՝ երկաթուղու կայարանից ու փողոցների տեսքից սկսած մինչև հասարակութեան ինքնագգացողութիւնը: Այլևս ոչ ոք չէր կասկածում Հայաստանի ապագայի մասին. ամէն ոք աշխատում էր ամրացնել նրա հիմքը, արագացնել վերաչինութիւնը:

Այս տրամադրութեան արտայայտութիւն կարելի է համարել իրար յաջորդող համագումարներն ու հասարակական հանդէսները, որոնք սկսեցին 1920թ. առաջին օրերից: Արտակարգ ոգևորութիւն էր տիրում այդ հաւաքոյթներում, անյողդողդ հաւատ դէպի հայ ժողովրդի ստեղծագործական հանճարը, դէպի Հայաստանի ապագան:

Յունւ. 4-ին, Երևանում, առանձին հանդիսաւորութեամբ, Կորհրդարանի ու կառավարութեան անդամների, հասարակական կազմակերպութիւնների ներկայացուցիչների և խուռն բազմութեան ներկայութեամբ, տւաւ Հայաստանի քաղաքների անդրանիկ համագումարը, որին մասնակցում էին Երևան, Ալէքսանդրապոլ, Կարս, Նոր-Բայազէտ, Աշտարակ և Ղամարլու քաղաքների ներկայացուցիչները:

Երևանի քաղաքագլուխ Մ. Մուսխինանը բանալով համագումարը և ընդգծելով, որ մեր կեանքը մտնում է նորմալ հունի մէջ, և մենք կանգնած ենք վերաչինութեան ճամբի վրա՝ պարզեց Հայաստանի քաղաքային ինքնավարութիւնների կատարելիք կարևոր դերը երկրի չինարարութեան մէջ: Ապա ողջոյնի ճառեր արտասանեցին վարչապետ Ա. Խատիսեանը, որ չէլտեց քաղաքների միութիւն կազմելու անհրաժեշտութիւնը, ներք. գործոց նախարար Ա. Ֆիւլխանդեանեանը, որ ծանրացաւ քաղաքային ինքնավարութիւնների պետական դերի վրա, Կորհրդարանի դաշնակցական ֆրակցիայի

ՀԱՂԱՐՏԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ



Ա. ԵՂՄԱՀԵԱՆ
Վերնախի վարչ. անդամ



Հ. ՇԱՀՐԻԱՆԵԱՆ
Պարտի Բաղամասպետ



Վ. ԱՅԲՈՒԵԱՆ
Ղազր-Բաղաղեսի Բաղամասպետ



Ա. ԱՍՏԻՒԱՑԱՏՐԵԱՆ
Վերնախի փոխ-Բաղամասպետ



Յ. ՅԱՐՈՒԹՒՆԵԱՆ
Վերնախի վարչ. անդամ



Ա. ՇԱՐԱԲԵԱՆ
Վերնախի վարչ. անդամ



Բժ. Հ. ԱԲԵԼԵԱՆԵԱՆ
Վերէ-պոլի Բաղամասպետ



Ա. ԱՒԱԳԵԱՆ
Վերէ-պոլի վարչ. անդամ

Ներկայացուցիչ Ա. Աբեղեանը հիացումով մատնանշեց, որ ամէն տարի առալ մահուան գառապարտած ժողովուրդը այսօր ինքնավարութեանց համապատասխան կառավարելու հնարաւորութիւնն ունէր: Մորճրաբանի սոց.-յեղափոխական ներկայացուցիչ Վ. Մինախորեանը կանգ առաւ հինքնավարութիւնների մեր կեանքում կատարելիք բացառիկ դերի վրա — պարզել մեր երկրի վիճակը, տալ մեզ նրա իսկական պատկերը»: Ա. Ասատամատրեանը խօսեց Հ. Յ. Դ. Երևանի կենտր. կոմիտէի կողմից, Գ. Շահինեանը՝ Երևանի բանւորական Մորճրդի: Գիւղոր ողջոյններ էին ուղարկել Նոյ ժողովրդ. կուսակցութեան Հայաստանի կենտր. կոմիտէն, կարսի քաղաքային ինքնավարութիւնը և ուրիշ հիմնարկութիւններ:

Յաջորդ, յունե. 3-ի նիստում, Մորճրդարանին, կառավարութեան ու բանակին ուղղած ողջոյնի բանաձևեր քննարկելուց յետոյ, համագումարը կազմեց նախագահութիւն՝ Մ. Մուսխեանի, Յ. Բուդաղեանի և Հ. Նոհրատեանի և 5 յանձնաժողովներ. 1) Քաղաքների միութեան կանոնագիրը մշակող՝ Ա. Բարխուդարեան, Ա. Տիրոսեան, բժ. Նահապետեան. 2) Ելմամական՝ Յ. Բուդաղեան, Լ. Թադևոսեան, Ա. Մարգարեան, Վ. Աֆրիկեան, Մ. Մաքսարեան. 3) Պարենաւորման՝ բժ. Մելքոնեան, Աւան-Խուրշեան, Մ. Ֆէքրահաժեան, Զալդրանեան. 4) Կրթական-դեղարուեստական՝ Մելիք-Շահնազարեան, Ս. Մանուկեանց, Վ. Շահպերեան. 5) Դաղթականական՝ Ա. Շարաքեան, Ա. Բարխուդարեան, Ա. Մարգարեան: Որից յետոյ, անցաւ օրակարգի հարցերին՝ զեկուցումներին ու դրանց խնդիրների քննութեան:

Համագումարը դրաւեց Հայաստանի քաղաքների կեանքին վերաբերող բազմաթիւ իրաւական, տնտեսական, ելմամական, պարենաւորման, կրթական-մշակութային, բժշկա-սոցիալապահական, չինարարական խնդիրներով: Ներկայացուցչին խնամած ու լուրջ զեկուցումներ, մասնագիտական հետազօտութիւններ, բարինորոգման հիմնական ծրագրերներ: Աչքառութեան անցան լաւած հետաքրքրութեամբ ու ինքն մտերմական մերնորոգում: Ընդունեցին քաղաքային կեանքի բոլոր կողմերը ընդգրկող բանաձևեր: Եւ, ի վերջոյ, հիմքը դրուեց Հայաստանի Քաղաքների Միութեան՝ մի կազմակերպութիւն, որին ահագին դեր էր վիճակուելու Հայաստանի կեանքում:

Երկար չարաչար յետոյ, տեղի ունեցաւ Հայաստանի իրական ճանաչումը, որ աննկարագրելի ցնծութեամբ ընդունեց ժողովրդի կողմից:

Ցունե. 19-ին, Գերագոյն Մորհուրդը հանեց հետևեալ որոշումը. — «1. Հայկական պետութեան կառավարութիւնը ճանաչված է de facto. 2. Յայդ ճանաչումը չի կանխորոշում այս պետութեան ապագայ սահմանների խնդիրը»:

Ցունեսի 23-ին ճանաչման լուրը ստացուց Երևանում և կայծակի արագութեամբ տարածուեց հասարակութեան մէջ: Մի ժամ յետոյ ամբողջ քաղաքն արդէն ոտքի վրա էր: Ժամը 3-ին քաղաքի պարէտի չէնքի առջև խռնուեց ահագին բազմութիւն. եկու և գորքը նշագնամբով: Պարէտ Ա. Շահխաթունեանն մի ոգևորված ճառ խօսեց օրւայ նշանակութեան մասին և

առաջարկեց Ծունկի զալ ի յարգանս Հայաստանի ազատութեան գոհերի։ Ջօրքը և բազմահազար բազմութիւնը մի մարդու պէս լուռ իջան Ծունկի։ Ապա զօրքն ու հասարակութիւնը, նաազով, դիմեց դէպի Կորհրդարան, ուր, պատշգամբից, յուզուած խօսք ասաց նախագահ Աւ. Սահակեանը։ Այստեղից, բազմութիւնը շարժւեց դէպի կառավարութեան շէնքը և խանդավառ ցոյցեր արաւ։ Վարչապետ Ա. Խատիսեանի ճառի մի հրդեհին թնդանօթները աւետեցին ժողովրդին ուրախ լուրը։

Այնուհետև, օրերը — ձիւնոտ ու հետևակ — նւագախմբի ուղեկցութեամբ հանդիսաւոր չքերթով անցաւ Երևանի փողոցներով՝ ժողովրդի ցնծագին ծափահարութիւնների տակ։ Քաղաքն ընդունել էր տօնական կերպարանք։ Տներն ու խանութները գարդարւած էին դրօշակներով ու զորգերով։ Երեկոյեան եղաւ հրաւառութիւն, իսկ կայարանից «Ազատամարտ» զրահաղնացքը լուսաւորում էր քաղաքը։

Ամրողջ օր, մինչև ուշ գիշեր, մայրաքաղաքը տնդադին վիճակի մէջ էր։ Երկրի զանազան կողմերից և արտասահմանից տեղում էին շնորհաւորական հեռագրեր։ Հեռագրեր ստացւեցին և օտար պետութիւնց Անգրկովկասի ներկայացուցիչներից, Վրաստանի և Ադրբէջանի Կորհրդարաններից ու կառավարութիւններից։ Համաժողովրդական ցոյցեր ու հանդիսաներ եղան և գաւառում։ Մասնաւորապէս չքեղ էր հանդէսը Կարսում, յունւ. 24-ին, ուր տեղի ունեցաւ համաժողովրդական միտինգ ու զօրահանդէս։ Անկեղծ ու անբռնազբօսիկ խանդավառութեամբ էր տօնում ժողովուրդը իր անկախութեան Ճանաչումը։

Ծունւար 26-ին Երևանում դումարւեց Արհեստակցական Միութեան Կորհրդի անդրանիկ նիստը մասնակցութեամբ 13 միութեանց 38 ներկայացուցիչների—կօօպերատիւների, աւտոդաժնի, դեղագործների, ուսուցչական միութեան, փոստ-հեռագրական պաշտօնեաների, քաղաքային ինքնավարութեան ծառայողների, բանկային ծառայողների, կաւչի գործարանի աշխատաւորների, երկաթուղային բանւորների, ջուլհականոցի, տպագրական բանւորների, հացթուխների և որքանոցների ծառայողների միութիւնների։

Ժողովը քննեց ու վաւերացրեց Միութեան կանոնադրութիւնը և ընտրեց Միութեան գործադիր մարմին, որի մէջ մտան Ազաջանեան Ա., Մուշեղեան Տ., Գոպով, Աբգարեան Մ., բժ. Նազարեան Բ., Վարդիկեան Ս., Տէր-Զաքարեան Գ. և Հախվերդեան Ա.։

Ժողովի զրաղումի առարկայ եղաւ նաև Հայաստանի դէ ֆակտօ ճանաչումը։ Ընդունւեց մի բանաձև, որի մէջ արտայայտւում էր հայ աշխատաւորութեան վերաբերումը. «Միութիւնների Միութեան անդրանիկ խորհուրդը, ասում էր բանաձևը, ողջունում է հայ աշխատաւորութեան և նրա կառավարութեան այս յաղթանակի համար, որը յաղթանակ մի քայլ է հայ քաղաքական ազատագրութեան տեսակէտից։ Միութիւնների Միութեան Խորհուրդը հաւատում է, որ Հայաստանի կառավարութիւնը թոյլ չի տայ, որ ստացւած ազատութիւնը ծառայէ որև է իմպերիալիստական պետութեան չահերին և Հայաստանի պետական նաւը կը տանէ դէպի Հայաստանի աշխատաւորութեան բարօրութիւնն ու սոցիալիստական նոր

յարձանակներ և կը ջանայ Հայաստանի ներկայ սահմաններ մէջ առնել նաև Տաճկահայաստանի այն մասերը, որոնք հանդիսանում են հայ ազգաբնակութեան հայրենիքը»:

Քիչ յետոյ առաւել և օրօրավոր Դենիկինի ճանաչումը: Լարաւայինն Ռուսաստանի Զինւած ուժերի Գլխաւոր Հրամանատարի դիւանական ներկայացուցիչը Հայաստանում՝ գնդապետ Զինկևիչը գրում էր փետր. 10–ին. «Պատիւ ունեմ տեղեկացնելու Հայաստանի կառավարութեան Մեծ Բրիտանիայի անդրկովկասեան կոմիսարի և Բիթլիսի մեր ներկայացուցչի միջոցով հին տոմարով յունւար. 21–ին (Նոր տոմ. 3 փետր.) ինձ ուղարկւած մի հեռագրական հաղորդագրութիւնը, որով յայտնւում է, թէ Հաբաւ. Ռուսաստանի գինւորական ուժերի գլխաւոր հրամանատարը ճանաչում է փաստօրէն գործին ունեցող Հայաստանի, Ադրբէջանի և Վրաստանի կառավարութիւնները: Ուրախ եմ առիթից օգտւելով յիշեցնելու, որ Փարիզում դաշնակիցների կողմից ընդունւած կատարեալ միևնոյն ակար Հայաստանի վերաբերմամբ գոր.Դենիկինի կողմից իրականացւած էր դեռ 1919թ. օգոստ. 20–ին (Հին տոմ.), երբ Հայաստանի կառավարութեան մօտ նշանակում էր իր գինւորական ներկայացուցչին»:

Գնալ է ասել, որ հայերի մէջ անհամար համոզում էր տիրում, որ կամաւոր. Բանակը Հայաստանի նկատմամբ ունի առանձին վերաբերում: Այդ համոզումը ամրանում էր և գոր. Դենիկինի մի չարք համակրական արտայայտութիւններով ու կարեզադրութիւններով: Այսպէս, 1919թ. նոյ. 9–ին նա հրատարակել էր իր յօդւածը, որի մէջ ասում էր, թէ՝ «Ի նկատի ունենալով ադրբէջանեան իշխանութիւնների քշնամական վերաբերումը դէպի ռուս բանակը և ի նկատի ունենալով ադրբէջանեան օրգերի գաւառիր յարձակումը Հայաստանի հողերի վրա՝ հրամայում եմ ադրբէջանեան օրգերի մէջ գտնւող ռուսական ծառայութեան բոլոր սպաներին հեռանալ նրանց չարքերից»:

Քաղաքական տեսակէտից, սակայն, գոր. Դենիկինը դէպի Հայաստանը ունէր նոյն վերաբերումը, ինչ որ և դէպի Ադրբէջան ու Վրաստան: 1919 Թւի յուլ. 2–ին նա այսպիսի հրահանգ էր տալիս գոր. Բարատովին, որը գնում էր Բիթլիս՝ բանակցելու համար անդրկովկասեան հանրապետութիւնների հետ.

«Կիսատաբերապէս համակրելով հայ ժողովրդի ձգտումներին՝ միանալու ազգային սահմանների մէջ և համաթելով, որ հայերը իրենց պատմական ու տնտեսական չահերով սերտ կերպով կապած են Մէկ, Աբաժան Ռուսաստանի հետ, որի սահմանների մէջ է մնում Հայաստանի ամենից աւելի նախկին մասը, Հաբաւ. Ռուս Զինւ. Ուժերի Գլխ. Հրամանատարութիւնը նոյն ժամով, ինչպէս և Վրաստանի ու Ադրբէջանի վերաբերմամբ, ընդունում է հայկական չրջանների անկիսո ինքնուրոյն կառավարութիւնը, մինչև համառուսական իշխանութեան վերջնական հաստատումը, առանց ունենալու օրև է յարձակողական դիտաւորութիւն հայաստանի վերաբերմամբ, բայց միևյն ժամով կանգնած ռուս պետականութեան միութեան տեսակէտի վրաս:

Նոյն ժամքը մենք տեղում ենք պատահում և հետևեալ փաստին: 1920թ. յունւ. 16–ին, Գեղարդի կրունում պատահանած ճառում գոր.Դենիկինը, հետևելով ժամ էր բնորոշում իր վերաբերմունքը դէպի Ռուսաստանից անջատած հողամասերը.

«Դաշնակիցների այն առաջարկին, որ որոշեմ իմ վերաբերմունքը գծվող ծայրամասերը, ես տուի որոշ և պարզ պատասխան:

Առաջին՝ ես ճանաչում եմ բոլշևիկների դեմ կռվող ծայրամասերի իրական կառավարությունների գոյությունը փաստը:

Երկրորդ՝ ծայրամասերի նկատմամբ Թուրատոյի ունենալիք ապագայ յարաբերությունները սահմանելու են համատեղական կառավարության և ծայրամասերի կառավարությունների մեկ կնքելիք պայմանագրով. ընդ սմին քոչել է տրուած դաշնակից պետությունների միջնորդությունը:

Երրորդ՝ որովհետև յունւ. 1-ին վեհաժողովի կողմից յայտարարուած վերաբերմունքը գէպի Ազգրէլյանն ու Վրաստանը առիթ ունեց կարծելու, թէ այդ նորակազմ պետութիւնների անկախութեան յայտարարութիւնն է, ես դիմեցի բողոքով, բայց այսօր պաշտօնական բացատրութիւն ստացայ, թէ պետութիւնները ճանաչել են միայն փաստական կառավարութեան ինքնուրոյնութիւնը և ոչ ծայրամասերի ինքնուրոյնութիւնը: Այս անհանդուրժողութիւն չէ. ուստ պետութեան բարձր շահերի պաշտպանութիւն է, և այս պատասխանը բնաւ չի ժխտում այս հիմունքներով բարի հարևանական յարաբերութիւններ հաստատելը»:

Բաթաքերութիւնները, սակայն, Հայաստանի ու Կամաւորական բանակի, ինչպէս և Դոնի, Կուբանի ու Տերեքի կառավարութիւնների միջև մնաց բաբևկամական:

Մարտ 7-ին Երևան հասաւ Գիւրգէոյի կրուզի պատերազմիչը՝ Գովալ (Դոն), Զոդուլեա (Կուբան), Բիբայև (Տերեք)՝ նպատակ ունենալով սերտ համագործակցութիւն հաստատել երկու կողմերի միջև: Երեւանում պատերազմիչները զուտ սրտագին ընդունելութիւն: Մարտ 8-ին կառավարութեան հետ ունեցաւ խորհրդակցութիւն և գրեց մի չարք հարցեր. 1) հակաբոլշևիկեան մէկ ճակատի ստեղծում, 2) փոխադարձ օժանդակութիւն, 3) նահանջի դէպքում արդեօք կամաւորականները կարո՞ղ են ընդունուել Հայաստանում և այլն: Հայաստանի ազգարհագրական դիրքը ինքնին արդէն պատասխանում էր տրուած հարցերին:

Բնորոշ ու հետաքրքրական է և մի ուրիշ այցելութիւն:

Կաթուղիկոսին այցելելու պատրաստվում, յունւ. 1-ին Երևան եկաւ Պոնտոսի յոյն մետրոպոլիտ Խրիսանֆը, որ պոնտոսեան պատերազմների նախագահն էր Փարիզում և Վենիզելոսի ժամին դերձակիչը: Պոնտոսի յոյները պահանջում էին Պոնտոսի անջատումը Թուրքիայից և առանձին յունական պետութեան ստեղծումը: Այդ պետութեան մէջ պիտի մտնէր Թիֆլ—Սիվազ ամբողջ ասպետաձգիները Պոնտոսեան լեռների և Սև ծովի միջև՝ 1,220,000 բնակչութեամբ, որից 800,000 մահմետական, 350,000 յոյն և 70,000 հայ: Խրիսանֆը եկել էր որոշելու Հայաստանի և Պոնտոսի փոխյարաբերութիւնները և առաջարկում էր. կամ 1) Պոնտոսի հանրապետութիւնը կը կազմէ մէկ դաշնակից մասը Հայաստանի Հանրապետութեան, կամ 2) Պոնտոսը կը լինի ինքնուրոյն և Հայաստանի հետ կը միանայ համադաշնակցային հիմունքներով և կամ 3) անկախ և հաւասարազօր Պոնտոսն ու Հայաստանը իրար հետ կը կապուին դաշնակցութեամբ կամ դիւանագիտութեամբ: Վերջին դէպքում, Հայաստանը կունենայ սեփական ծովային ելք Սեւ ծովում:

Արխանգելին երևանում ցույց տուն տիրայրը ընդունելութիւնն, և մի չարք նորհրդակցութիւններից յետոյ երկուստեղ ընդունելեցին հետևեալ պայմաններըը. 1) Գոնատոը, վերոյիշեալ առհմաններում, մտնելու է Հայաստանի մէջ, իբրև նրա գաղնակցային (ֆեդերատիւ) մէկ մասը. իր ներքին գործերում Գոնատոը կառավարելու էր սեփական Սէյմի միջոցով. 2) Հայկական և Գոնատոնան պատերազմութիւնները փարելում գործելու էին համերաշխ. 3) Ի հարկին, երբ Հայաստանի ու Գոնատոի անկախութիւնը վերւրե, հայերն ու յոյները միասին քայլերը էին առնելու, միևնչև ապատամբութիւն՝ հարկադրելու համար, որ ճանաչելի ընդհանուր անկախութիւնը. 4) Սոյն պայմանագրութիւնը պէտք է համաձայնեցնէր յոյն և հայկական պատերազմութիւնների գործունէութեան փարելում, ինչպես և վեհաժողովի որոչելիք առհմաններին:

Սակայն, մենք չեղեցինք պատմութեան ընթացքից:

Ցուես. 31-ին, Ալեքսանդրապոլում՝ հայաստանի երկրորդ մայրաքաղաքում տեղի ունեցաւ Հայաստանի Համալսարանի հանդիսաւոր բացումը: Երևանից ու Թիֆլիսից, յատուկ գնացքներով, էին էին բազմաթիվ հիւրեր՝ Կորհրդարանի նախագահ Ա. Սահակեանը, վարչապետ Ա. Ահարոնեանը, բրիտանական ներկայացուցիչ Օ. Ուօրդրոպը, Հայաստանի դերագոյն կոմիսար գնդ. Հասկելը իր կնոջ ու չքամիրի հետ, Ֆրանսական ներկայացուցիչ կապ. Գուազերաբը, համատորական Բանակի ներկայացուցիչ գնդ. Զենկևիչը, պարոիչ ընդհանուր-հիւպատոս Առագուլա խանը, Ազրբէջանի դեւ. ներկ. Հասվերդովը, հանր. կրթութեան և արուեստի նախարար Ն. Ադամալեանը, արդար. նախ. Ա. Ջիլինգարեանը, նկամտ. նախ. Ս. Արամբատեանը, խնամ. նախ. օգնական թ. Ե. Տէր-Միքայէլեանը, Կորհրդարանի անդամներ թ.թ. Ե. Տէր-Դաւիթեանը, Մ. Եաբութիւնեանը, Ռ. Տէր-Մինասեանը, Վ. Մինախորեանը, Ս. Վրացեանը, Ա. Խոդկաբեանը, Ա. Սաֆրաստեանը, Տ. Յովհաննէսեանը, Ա. Ղազարեանը, դոր. Նազարբէգեանը, գոր. Հասվերդեանը, համալսարանի ուսուցչապետները՝ պրոֆ. Ղամբարեանի գլխաւորութեամբ, բանասէրեղծ Ե. Շուկհանեսեանը, պրոֆ. Ա. Նայտարեանը և չատ ուրիշ պետական ու հասարակական, գրական ու գիտական դէմքեր: Այնքանպատպոյծ քաղաքային վարչութիւնը կազմակերպել էր փայլուն ընդունելութիւն: Կայարանում պատրաստած էր Քէյասեղան: Համալսարանի դահլիճը զարդարած էր կանաչով ու դրօշակներով: Նեագում էր դիւանագիտական խումբը:

Հանդէսը բաց արաւ համալսարանի տեսուչ վատտակաւոր գիտնական պրոֆ. Իւ. Ղամբարեանը, որից յետոյ նախարար Ն. Ադամալեանը, մի ընդարձակ ու կուռ ճառով վեր հանեց համալսարանի դերը հայ պետականութեան և մշակոյթի զարգացման գործում: «Այն ինչը, ասաց նա, որ մենք վառում ենք այսօր Հայաստանի բարձրաբանդակի վրա, չի հանգչի երբեք և կը լուսաւորէ Առաջաւոր Ասիան: Եւ մաղթեց, որ Հայաստանի համալսարանը լինի մատչելի ամենքի համար, — մանկը լինի հնչուն, երեկը՝ գիտաբ—որ ուսումը լինի ձրի, դիտուքիւնը վարեի գործնական եղանակով, որ հնձը գրեի համայնական գիտական աշխատանքին Հայաստանում:

Հանրային կրթութեան նախարարից յետոյ պրոֆ. Ղամբարեանը արաւ համալսարանի կազմակերպութեան պատմութիւնը, որից յետոյ խօսեցին Աւ. Սահակեանը, Ուօրդրոպը, գնդ. Հասկելը, Գուադելթարը, գնդ. Զենկիչը, Ասադուլա խանը, Հախվերդովը, գօր. Նազարբէկեանը:

«Մի քանի օր առաջ, ասաց Ուօրդրոպը, մենք տօնեցինք մի ուրիչ մեծ դէպք՝ Հայաստանի անկախութեան դէ ֆակտօ ճանաչումը: Ես կարծում եմ, որ առաջին համալսարանի բացումը նոյնքան կարեւոր է, որքան և անկախութիւնը: Պատմութեան մէջ եղել են դէպքեր, որ պետութիւնները կարճ ապրեն, բայց չի եղել դէպք, որ մի անդամ բացուած համալսարանը կարճ կեանք ունենայ... Ոմանք մեծ կարեւորութիւն էին տալիս դէ ֆակտօ բառին. Հայաստանը, յանձին ՀՅՖիածնի Ճմեռանի, Վիէննայի ու Վենետիկի վարժարանների արդէն իսկ դէ ֆակտօ գոյութիւն ունէր, և դուք այնքան շատ գիտնականներ և ուսուցչապետներ ունէք, որքան որ պէտք կը լինի ամբիոնների համար»:

Գնդ. Հասկելը. — Ես բախտաւոր եմ ներկայ լինելու այս պատմական դէպքին: Ասօգուտ է ասել, որ պատրաստ չեմ խօսելու այս նիւթի մասին, որն իմ գործունէութեան սահմանից դուրս է: Ներկայ Հայաստանում կատարուող դէպքերը, այբի առաջ ունենալով պետութեան հանդիպած դժուարութիւնները, չատ նշանակալից են: Եւ մեծ գոհացում է ներչնչում, որ գոյութեան ծանր հոգսերը չեն ճնշում ժողովրդի կրթութեան ծաւալը: Եւրոպայի և Ամերիկայի չատ քաղաքներում մենք հանդիպում ենք չատ հայերի, որ համալսարաններում բարձր կրթութիւն են ստանում, և այդ տուել է իր պտուղները. մի չարք այբի ընկերոջ հայեր կան, որ կարևոր տեղ ունեն և որոնց անուններդ յայտնի են ամէնքին: Այդ համալսարաններում սովորող անձինք յաջողութիւն են ունեցել, բայց Հայաստանի համալսարանում մարդիկ պէտք է դաստիարակեն աւելի հայրենասէր ոգով, քան արտասահմանում: Գլխաւոր բանը, որով ես չատ հետաքրքրուած եմ — որ հայ ժողովուրդը լինի անկախ քաղաքականապէս, տնտեսապէս և կրթութեամբ (բուռն ծափեր): Ես յոյս ունեմ, որ կարճ ժամանակում Հայաստանը բոլորովին ազատ կը լինի և կախում չի ունենայ ոչ ոքից (բուռն ծափեր): Եթէ կայ որև է կարիք, որին պէտք լինի օգնել Ամերիկայի կամ իմ ներկայացրած ուրիչ պետութիւններից, ես հաճոյքով կիմացնեմ նրանց և կը յաջողեցնեմ նրանց օգնութիւնը: Ճանաչելով այս գործի գլուխ կանգնածներին՝ ես համոզուած եմ, որ համալսարանը անպայման յաջողութիւն կունենայ»:

Հետևելի ճաոը հանդիսականների կողմից ընդունեց առանձին ոգևորութեամբ: Յետմ խօսքերով արտայայտուեցին և մեւս հետևորները, որոնց ճառերը ընդհատում էին որոտընդոստ ծափերով:

Ողջոյնի ճառերից յետոյ, Ս. Տիգրանեանը կարդաց արտասահմանից և Հայաստանի դանազան կողմերից առացած հարեւրաւոր հետագրերներից մի քանիսը: Շնորհաւորում էին Վրաստանի գլխ. Ներկ. Գ. Մախարաձէն, Վրաստանի հետ. կրթ. նախարարի պաշտօնակատար Ճիճոյաձէն, գօրավար կարապովը և ուրիշներ:

Ապա համալսարանի ուսուցչապետ Մեսրոպ եպ.-ը ակռեմեական ճառ արտասանեց՝ «Հայ վանքերի նշանակութիւնը Հայաստանի կուլտուրական զործերում» նիւթի մասին, որից յետոյ խօսեցին բանասեղծ Ց. Շուշան-

նիսեանը, Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ՝ Հ.Մելքոնեանը, երևան քաղաքի ներկայացուցիչ Ա. Շարաֆեանը, Կարսի քաղաքագլուխ Հ. Նոհրատեանը, Նոր-Բայազետի քաղաքագլուխ Վ.Ալիբեկեանը, Ա. Ռոստոմեանը ազ.-յուզ. և Ա. Ղազարեանը՝ Հ.Ց.Դ. կուսակցութիւնների կողմից և մի շարք ուրիշ հիմնարկութիւնների ու մասնաւորների ներկայացուցիչներ: Ցայտարարեց ցանկը համալսարանին արուած նւէրների. մէկ միլիոն ռուբլի Մայիլեանի եղբայրներից, 100,000ռ. «Շիրակ» կօպերատիւից. Ալեքսանդրապոլում ակսել էր ժողովրդական հանգանակութիւն: Հանդէսի օրևայ առիթ հրաւարակել էր միօրեայ թերթ «Հայաստանի համալսարան» անունով:

Հանդէսի ամբողջ տևողութեան ընթացքին, դուրսը խռնուած էր հակայական բազմութիւն. շատերը եկել էին չորկայ գիւղերից: Հաստատութիւնը խռնուած ցոյցերով ընդունեց հանդէսից յետոյ դուրս եկող հիւրերին: Այստեղ ևս խօսեցին օտար պետութեանց ներկայացուցիչները, վարչապետ Յաւոխեանը, Հ. Ց. Դաշնակցութեան կողմից Ս. Վրացեանը և ուրիշներ: Հաւաքած բազմութիւնը հանեց մի բանաձև, որով պահանջում էր դաշնակիցներից Թիւրքահայաստանի հարցի լուծումը:

Հանդէսից յետոյ, Քաղաքային Ակումբի դահլիճում տեղի ունեցաւ ճոխ հացկերոյթ քաղաքագլուխ Հ. Մելքոնեանի նախագահութեամբ, ուր նոյնպէս եղան բազմաթիւ ճառախօսութիւններ հայ և օտար ներկայացուցիչների կողմից: Երեկոյեան, Առևտրական դպրոցի սրահում, կայացաւ դրամական-արուեստական երեկոյթ և պարահանդէս, որ մեծ աչքառութեամբ անցաւ և տևեց մինչև ուշ գիշեր: Պարահանդէսից յետոյ հիւրերը արտակարգ գնացքով վերադարձան Երևան:

Ռուոր դէպք էր և Հայաստանի բժիշկների անդրանիկ համագումարը, որ բացւեց Երևանում այր. 18-ին: Քաղաքային տան դահլիճը լիքն էր Հանրապետութեան բոլոր ծայրերից եկած պատգամաւոր բժիշկներով, բուժակներով, դեղագործներով, անասնաբոյժներով, ունկնդիր հասարակութեամբ: Եկել էին 72 պատգամաւորներ:

Համագումարը բաց արաւ կազմակերպիչ յանձնաժողովի նախագահ բժ. Ց. Տէր-Մինասեանը: Ապա ողջոյնի խօսք ասացին Ռուոր-բարեան նախագահ Ա.Մահաիեանը, վարչապետ Յաոխեանը, Երևանի քաղաքագլուխ Մուսինեանը և բազմաթիւ ներկայացուցիչներ դանազան հիմնարկութիւնների և մասնաւորների կողմից:

Հանդիսաւոր մասից յետոյ համագումարը կազմեց իր նախագահութիւնը—նախագահներ՝ բժ. Տէր-Մինասեանը, Պապիկեանը և Լազարեանը, քարտուղարներ՝ Զարիֆեան, Բազդասարեան, Աւալեան, Տէր-Պողոսեան, Աւետեսեան, Քալանթարեան:

Յաջորդ օրը, համագումարը բաժանուեց 5 հատուածի—1) քաղաքական հարցերի՝ 29 բժիշկ, 2) դիւղական՝ 20, 3) դեղագործական՝ 13, 4) անասնաբուժական՝ 4 և 5) առաջնաբուժական՝ 3 — և օրակարգի հարցերը քննութեան առնուեցին այդ հատուածների նիստերում:

Համագումարն ունեցավ յանձնաժողովային և ընդհանուր բազմաթիվ նիստեր, ուր քննության առնվեցին Հայաստանի թէչկո-առողջապահության վերաբերյալ բոլոր սուր հարցերը: Ի վերջոյ, ընտրվեց կենտրոնական մարմին՝ Հայաստանի լուսագոյն թժիչկներից:

Աներևակայելի առաջ էր գնում և պետական կազմակերպական այնպես ահագին, ինչպէս և երկրի անտեսական վերակազմումը: Կառավարությունը առանձին ուշադրություն դարձրեց ժողովրդի ապրուստի միջոցների հայթայթման գործին. յունվ. 27-ին կազմվեց «Վերմանման Ցառուկ Կոմիտէն», որ մեծ եռանդով վարեց սերմահավաքման գործը՝ ամբարելով աւելի քան 350,000 փութ սերմացու: Փետրվարին 225 միլիոն ռուբլու վարկ բացվեց սերմացու գնելու համար: Մարտ 25-ին կառավարությունը հաստատեց այն պայմանները, որով գիւղատնտեսական նախապարտությունը կատարելու էր սերմացուի բաշխումը. պետական պահեստներից սերմացու պիտի տրվէր գիւղական համայնքներին, գիւղատնտեսական ընկերութիւններին, հասարակական ու պետական հիմնարկութիւններին, պետական պաշտօնեաների ընկերութիւններին ու հասարակական խմբակցութիւններին: Ստացած սերմացուն պիտի վերադարձվէր կամ ժամանակ՝ բերքով կամ դրամով:

Մինչև մայիսի սկիզբը կառավարութիւնը ժողովրդին բաժանեց 332,660 փութ սերմացու*), որից դարի՝ 206,580փ., ցորեն՝ 65,431փ., կորեկ՝ 15,225փ., յալթուկ (բրինձ)՝ 4,026փ., հաճար՝ 2,677փ., կտաւատ՝ 1,300փ., գետնախնձոր՝ 24,204փ., եգիպտացորեն՝ 12,368փ., բանջար՝ 534փ., գանգար՝ 315փ.: Ամենից շատ ստացաւ կարտօֆ՝ 76,855փ., ապա՝ Շերակը՝ 74,605փ., երևանի գետաւոր՝ 52,372փ., Ղարաքլիսան՝ 46,932 փութ, իսկ ամենից քիչ Դարալագեազը՝ 732փ.: Բացի այդ բաժանուեց 500 փութ բանջարաճոյային սերմ, բամբակի ու ծխախոտի սերմ: Բամբակ ցանելու ընդամենը 1,517 դեսեատին, ծխախոտ՝ 61 դես.: Կառավարութիւնը հող, վարկ, գործիքներ ու սերմացու տրամադրեց դրսից՝ Սուխումի չրջանից եկած ծխախոտագործներին: 30 միլիոն ռուբլի յատկացուեց բամբակագործներին օժանդակութիւն հասցնելու համար, 15 միլիոն ռուբլի՝ այգեգործների համար:

Մարտ 1-ին Ղորհրդարանը բաց արաւ 50 միլիոն ռուբլու վարկ գիւղատնտեսական գործիքներ գնելու համար: Բաթումից բերուեցին քրակտորներ, հնձելու և քաղելու մեքենաներ, գութաններ, սերգատներ, այգեգործական ու մեղւաբուծական գործիքներ, գերանդիներ, մանգաղ և այլն: Բերուեց մեծ քանակութեամբ պղնձի արմաւ՝ այգիների համար: Գիւղատնտ. նախարարութեան կենտրոնական պահեստը իր բաժանումնքների մէջոցով կատարում էր մեքենաների, գործիքների և նիւթերի բաշխումը երկրում:

Գալաս կարևոր դէպք չէր և երբեմն առանձակների դատաստանի բացումը, մարտ 15-ին: Դատական նիստի դահլիճը պարզարած էր եռագոյն ժապաւէններով: Ներկայ էին վարչապետ Ա. Յասխանեանը, արդարադատու-

*) Սերմանման չրջանի վերջում բաժանած սերմացուի գումարը հասաւ 375,000 փթի:

քեան նախարար Ա. Զիլինգարեանը, Վորկրզարանի անդամներ, դատաստանական ու հասարակական գործիչներ և խումն բազմութիւն հետաքրքրողներէ: Դատական նիստի սկզբին ողջոյնի խօսք ասացին վարչապետը, արդարադատութեան նախարարը և դատարանի նախագահ Մակ. Մելիք-Միքայէլեանեանը: Ապա՝ բեմ բարձրացաւ դատական կացմը. նախագահ՝ Մ. Մելիք-Միքայէլեան, անդամներ՝ Զ. Գեղամեան և Ա. Տէր-Ճակովբեան. դատախազ Ա. Մալխասեան, դատախազի օգնական՝ Վ. Ահարոնեան, քարտուղարներ՝ Ն. Տէր-Ճակովբեան և Ս. Շմաւոնեան: Երդեալ առնականներից ներկայ էին 19 հոգի և 1 տեղակալ — բոլորն էլ տղամարդիկ: Նիստի բացումից և ընթացիկ ձևականութիւնների լրացնելուց յետոյ, առանձնակաները յայտարարեցին, Թէ իրենք հրաժարում են կրօնական երդումից և պիտի խօսք են տալիս դատելու խղճի մտօք:

Կարճ ընդմիջումից յետոյ, վիճահարուցութեամբ կատարուեց 12 առանձնակաների ընտրութիւնը: Հայաստանի անդրանիկ առանձնակաների առանձի անդամ լինելու պատուի արժանացան՝ Աբչ. Տէր-Աբրահամեանը, Սաքդ. Հախնազարեանը, Նչ. Ժամագործեանը, Վարդ. Մամաչանեանը, Գր. Ֆէր-Ճակովբեանը, Սիր. Տէր-Մարտիրոսեանը, Գր. Վարդանեանը, Հմ. Մաղմոնեանը, Ծովս. Աւետեանը, Զաւ. Կորկոտեանը, Մխիր. Աթաբէկեան-ը և Թագ. Դամգեեանը. տեղապահներ՝ Մովս. Դիւմեանդանեանը և Եր. Թորգեանը: Ընտրածները մի քանի րոպէով հեռացան և ընտրելի իրենց համար ասաք՝ Սիր. Տէր-Մարտիրոսեանին: Առնականները հասարակական տարբեր խաւերի պատկանող մարդիկ էին:

Առաջին գործը Դարալագեազի Ուլնիանորալէն գիւղացի Եռվանդ Ծովհաննէսեանի և Զանգեզուրի գիւղացի Մանուկ Մովսէսեանի դէմ յարուցւող մեղադրանքն էր պարսկահպատակ Մամիկ Աջքնար Ալի օղլուին կողոպտելու փորձի դէմ: Ամբաստանեալներին պաշտպանում էր երդ. հասատարմատար Գ. Տէր-Գրիգորեանը: Հարցաքննութիւնից, վկաներին և կողմերի ճառերը լսելուց յետոյ, երդուեալ առնականները առանձնացան և 10 րոպէի խորհրդակցութիւնից յետոյ մեղադրեալներին յայտարարեցին անպարտ:

Երդուեալ առնականների դատարանի առաջին նստաշրջանը տևեց մինչև մարտ 26-ը:

Վորկրզարանի մարտ 1-ի օրէնքով արդարադատութեան նախարարութեան դիւանին կից կազմւեց 3 հոգիանց արեմտահայ իրաւագիտական յանձին, որի նպատակն էր ա) մանակցել օրինագրքերի քննութեան, մշակման և խմբագրման գործին, բ) ուսումնասիրել արեմտահայ հատւածի մէջ գոյութիւն ունեցող ընտանեկան, ժառանգական և այլն սովորութիւններն ու իրաւական հասկացողութիւնները, նրանց հարազատ ոգին մեր նոր մշակւող օրէնքների մէջ պահպանելու համար:

Հանրային կրթութեան ասպարէզում մշակւեցին մի չարք օրէնքներ. մարտին Վորկրզարանը սկզբունքով հաստատեց դպրոցական յանձնախմբի հետևեալ օրինագիծը ևկղեցական-ծխական դպրոցների աշխարհականացման ու պետականացման մասին.

«1. Հոգևոր եկեղեցական–ծխական դպրոցների կալքերն ու դոյքերը և նրանց չէնքերը պետականացուում են, եթէ նրանց դպրոցը բացած չլինի այս օրէնքի հրատարակման օրը, կամ բացելուց յետոյ փակւի և կամ, եթէ նա Հայաստանի պետական գանձարանից նպաստ է ստացել:

2. Պետականացուղ կալքերն ու գոյքերը և նրանց չէնքերը յանձնուում են հանրային կրթութեան և արւեստի նախարարութեան, որը ծառայեցնում է նրանց դպրոցական նպատակների համար:

3. Որոշ պայմաններով և նպատակներով կտակած կամ յատկացած և այս օրէնքի ուժով պետականացուղ կալքերը, գոյքերն ու չէնքերը անցնում են հանրային կրթութեան և արւեստի նախարարութեան այն պայմանով, որ վերջինս կատարում է կտակողների և յատկացնողների կամքը անշեղ»:

Այսպիսին ընդունւեց մի ուրիշ օրինագիծ տարրական կրթութեան մասին.

«1. Պետական դպրոցներում տարրական կրթութիւնը վճռամեայ տևողութիւն ունի, որ բաժանւում է երկու եռամեակների:

2. Տարրական դպրոցներում աւանդւում են հետևեալ առարկաները. հայոց լեզու, թւաբանութիւն, պատմութիւն, աշխարհագրութիւն, բնագիտութիւն, առողջապահիկ գիտելիքներ, երգեցողութիւն, նկարչութիւն, մարմնամարզ և ձեռքի աշխատանք ըստ հանրային կրթութեան և արւեստի նախարարութեան մշակած ծրագրի և կազմած դասաբաշխման տախտակի:

Ծանօթագիր. Այլազգի դպրոցներում պետական լեզուն աւանդւում է, ըստ համաձայնի ցանկութեան, սկսած ուսման երրորդ տարւանից:

3. Այն գիւղերում, որ այսօր բաւարար քանով դպրոցական հաստիք մանուկներ չունեն, բացւում են եռամեայ դասընթացով դպրոցներ:

4. Կենտրոնական գիւղերում բացւում են վեցամեայ դասընթացով դպրոցներ նոյն և մերձաւոր գիւղերի աշակերտութեան համար:

5. Այն տների համար, որ հնար չունեն վեցամեայ դպրոց յաճախելու կամ վեցամեան աւարտելով՝ միևնոյնպէս դպրոց անցնելու, համապատասխան դպրոցներում բացւում են չորրորդ և եօթերորդ լրացուցիչ դասարանները:

Մարտ 28–ին Դրամատիկական Դասընթացները տուին իրենց անդրանիկ երևոյթը՝ դասընթացների վարիչ դերասան Վ. Մրրոյեանի առաջնորդութեամբ: Հանդէսը անցաւ մեծ յաջողութեամբ: Դասընթացների մի շարք ուսանողներ, որոնց մէջ և երիտասարդ դերասան Մ. Մարութեանը, ազգի ընկան իրենց շնորհալի խաղով:

Ապր. 18–ին բոյ–սկաուտների օր էր երևանում: Քաղաքը տոնացել էր տօնական տեսք: Փողոցներում տուփերով հանգանակութիւն էր կատարւում: Բոյ–սկաուտները երաժշտութեամբ կենդանութիւն էին մտցնում ամէն կողմ: Ամառնային ակումբում տեղի ունեցաւ հրապարակային մարզանք: Բոյ–սկաուտները, իրենց վարիչ Հունգարացի Ալբերտ Սեգմայի առաջնորդութեամբ, դեղեցիկ խաղեր խաղացին՝ արժանանալով խնդած հասարակութեան խանդավառ ծափերին: Սկաուտական շարժումը Հանրային կրթութեան նախարարութեան ջանքերուն առաքակ էր և չուտով լայն ծաւալ ստացաւ Հայաստանում, մանաւանդ, երբ արտասահմանից հասան փորձած ղեկավար մարդիկներ՝ Վ. Զերաց, Ռոյեան և այլն:

Փետր. 18–ին հիմնուեց Հայաստանի Կարմիր Խաչը, որի կանոնադրութիւնը հաստատուեց Ներհրդարանում մարտ 19–ին: Կենտրոնական վարչութեան անդամներ ընտրուեցին Գր. Զաքարեանը (նախագահ), բժ. Ե. Տէր Դաւթեանը, բժ. Ս. Կամսարականը, բժ. Ե. Մելիքեանը, տիկ. Օ. Արարատեանը, բժ. տիկ. Զալեան–Մանուկեանը, տիկ. Գալանթարեանը, բժ. Ա. Տէր–Պօղոսեանը, Վ. Բաբայեանը, Ա. Մակարեանը: Կարմիր Խաչը ճիւղեր ունեցաւ Կարսում, Ալեքսանդրապոլում, Վաղարշապատում, Աշտարակում, Ջալալ–Օղլիում, Ղարաքիլիսայում և Իգդիրում: Նրան յարեցին և Թիֆլիսի, Պոլսի, Փարիզի և Ամերիկայի Հայ կարմիր Խաչերը: Կարմիր Խաչի գլխաւոր գործն էր՝ օգնութիւն հասցնել բանակին: Դրա համար նա կազմակերպեց 2 հիւանդանոց՝ ողջ սարքով, մի թուղթի խումբ, մի աննդատուն կայան գինուորների համար, բաղնիք, լուացարան և այլն: Կարմիր Խաչի մենաշնորհն էր խաղաթուղթը. յունիսից սկսած կառավարութիւնը տուրք դրեց երկաթուղու տոմսակների վրա էլ յօգուտ Կարմիր Խաչի և 4 միլիոն ռուբլու վարկ բացեց:

Այսպէս, կեանքի բոլոր ասպարէզներում, դրութիւնը բարելաււում էր դզուշպէս: Ապրուստի պայմանները էլ հետզհետէ զանում էին աւելի տանելի. հակառակ որ ժողովուրդը ազատութեամբ ցանում էր ունեցած հացահատիկները, հացն ու կենսական մթերքները անհամեմատ աւելի առատ էին, քան 1919 թուին: Գաղափար տալու համար ապրուստի պայմաններին մասին՝ առաջ բերենք մի քանի թուեր. փետրուար 7–ին Երևանի չուկայում մթերքները արժէին. հացը՝ 26—28 ռուբլի փունջը, միսը՝ 70—140 ռ., ալիւրը՝ 1400 ռ. փութը, ցորենը՝ 1300 ռ., գարին՝ 1300 ռ., բրինձը՝ 1400—1800 ռ., լոբին՝ 35 ռ. ֆունտը, սխտորը՝ 30 ռ., սոխը՝ 12 ռ., կաղամբը՝ 8 ռ., բազուկը՝ 7 ռ., գազարը՝ 8 ռ., ժաժուկը՝ 30 ռ., կաթը՝ 25 ռ., պանիրը՝ 60–100 ռ., կարագը՝ 180–200 ռ., մեղրը՝ 170–180 ռ., գետնախնձորը՝ 15 ռ., ընկոյզը՝ 40 ռ., չամիչը՝ 80—90 ռ., նաշը՝ 40 ռ., սապոնը՝ 30 ռ., հաւկիթը՝ 13—14 ռ. հատը, լուցկին՝ 8—10 ռ. տուփը, փայտածուխը՝ 110 ռ. փութը, փայտը՝ 70 ռ. փութը: Ապր. 15–ին կօօպերատիւներում տրամադրկանց կշիռներով արժէին 3000 ռ. դոյգը, կանանց՝ 4000 ռ., երեխաների՝ 1200 ռ., կրկնակշիռները՝ 1300 ռ., թէյի բաժակները՝ 120 ռ. հատը, ափսէներ թէյի՝ 120 ռ. հատը, մոմ՝ 320 ռ. ֆունտը, տուրճ՝ 360 ռ., երեսսրբիչներ՝ 160 ռ. հատը, ծխախոտի թուղթ՝ 6 ռ. դրջոյկը, լուցկի՝ 5 ռ. տուփը, սապոն՝ 50 ռ. ֆունտը:

Իսկ դրամը մարտ 1–ին՝ 1 դոլարը արժէր 580 ռուբլի, 1 թիւրքական ոսկին՝ 3000 ռ., 1 ֆունտ ստեռլինգը՝ 2000 ռ.:

Պաշտօնեաների ռոճիկները էին՝ վարչապետի՝ 8,150 ռ. ամսական, նախարարների՝ 7,450 ռ., Ներհրդարանի անդամների՝ 6,800 ռ., Սենատի նախագահի՝ 8,150 ռ., անդամների՝ 7,450 ռ., Երդմնակից դատարանի անդամների՝ 6,600 ռ., հաշտարար դատաւորների՝ 6,600 ռ.: 40 կարգի ռոճիկ դոյութիւն ունէր — նուագողինը 2000 ռ., բարձրագոյնը՝ 8,150 ռ.:

Երկրի կեանքի կայունացումը զգացում էր և ժողովրդի, մանաւանդ, ոչ-հայ տարրերի վերաբերումից: Այլևս այնքան հեշտ չէր հակապետական տարրերին ոտքի հանելը: Այդ ցոյց աւելի կարօի դէպքերը:

Տարւայ սկզբին դեռ ևս Կարսի մահմետական շրջաններում նկատւում էր տատանում. մի մասը կողմնակից էր Հայաստանի իշխանութեան, մեւսները՝ Քիւրթերի և ազգբէյնցիների դրդումով դէմ էին հայերին: Յունւ. 12-ին Զարուշատի, Ազրաթայի և Զըլդըրի ներկայացուցիչները ժողով գումարեցին Գեղարչին գիւղում և որոշեցին. 1) դադարեցնել առևտրական և ամէն յարաբերութիւն հայերի հետ. 2) արտաքսել հայկական իշխանութիւնը և կազմել տեղական իշխանութիւն՝ Ազրբէյնից ստացած դրամով. 3) 18—40 տարեկանների զօրաշարժ անել և մարզել Քիւրթ սպաների դէկավարութեան տակ. 4) երկաթուղու շրջանում և Ղըզըլ-Ջախչախում դնել տեփական պահակներ:

Յունւարի կէսերին Զարուշատ եկան մի քանի ազրբէյնցի սպաներ Նագարաւիլի գլխաւորութեամբ, խոշոր դումարներով, և սկսւեցին հակահայ յարձակումները: Յունւ. 20-ին Իրիչ գիւղում սպանւեցին 8 հայեր: Յունւ. 24-ին Զարուշատից և միւս շրջաններից դուրս քշւեց հայ պաշտօնեութիւնն ու մելիցիան: Թուրքերը դիրքեր գրաւեցին Չուրդնայում և դէպի Արգահան ուղղեցին 500 ձիաւորներ: Յունւ. 27-ին 400 դինւած Թուրքեր գրաւեցին Շաֆնալար գիւղը: Զարուշատը, Ազրաթան և Զըլդըրը ապատամբեցին Հայաստանի դէմ: Այս շրջաններում բաւական ուժեղ էին և Հայաստանի կուսակիցները, բայց Քիւրթ-ազրբէյնցի գործակալներից ահաբեկւած՝ չէին կարող արտայայտւել:

Կառավարութիւնը ամէն մէջոց սպառնալուց յետոյ, հրաման տւեց զօրքին դէնքի դիմելու: Հակառակ արտակարգ ձևան ու սառնամանիքին, զօրավար Ռուսկիևանի զօրամասերը արագութեամբ անցան գիւղից գիւղ, և ջախջախիչ պարտութեան մատնելով ընդամուն՝ փետր. 15-ին գրաւեցին բոլոր ըմբոստ վայրերը: Խռովարար պարագլուխները փախան, և Զարուշատից, Ազրաթայից ու Զըլդըրից 25 ներկայացուցիչներ եկան յայտնելու ժողովրդի հնազանդութիւնը: Շրջանը հանդստացաւ:

Հանդիստ չմնաց, սակայն, Ազրբէյնանը: Այս դէպքերի առթիւ, մարտ 8-ին Ազրբէյնանի Խորհրդարանում Մուսաւաթ, Էհրար և Իթթիհատ կուսակցութիւններին պատկանող 21 պատգամաւորներ մտցրին հարցապնդում, որի մէջ ասում էին, թէ՝ «հայկական կառավարութիւնը, դինադադարեանի պատրւակով, քարոզանդ է անում Կարսի շրջանի մահմետական գիւղերը և բնակիչների մահմետական խաղաղ բնակչութիւնը: Մօտ 10,000 մահմետականներ, հակառակ որ չօթար կամքով յանձնել են զէնքերը, չրկազատւած են կանոնաւոր հայ զօրքերով և ենթարկւում են վերջնական կոտորածին»:

Նոյն օրը, ժամը 12-ին, Նախանձից Խորհրդարանի արտակարգ նիստ, ուր վարչապետ Ուսուպբէկովը տւեց մանրամասն բացատրութիւններ, որից յետոյ տեղի ունեցան փոթորկայոյզ վիճաբանութիւններ: Գրեթէ անխտիր,

բոլոր ճառախոսները անդուլ յարձակումներ էին գործում Հայաստանի կառավարութեան և Դաշնակցութեան վրայ: Ներքնաբարի գաշնակցական պատգամաւորների փորձերը՝ դպաստութեան հրաւիրելու՝ առալ էին բերում անվնաբաբելի աղմուկ ու բողոք: Բանը հասաւ այնտեղ, որ պատգամաւորներից մէկը՝ ազ.—յեղափոխական Սաֆիքեըդակին առաջարկից հեռացնել Ապրիլեանի Ներքնաբարեան դաշնակցական պատգամաւորութեան: Միայն երկու հոգի փորձեցին քննադատել և Ապրիլեանի կառավարութեան պրովոկացիոն ընթացքը: Ընկերվարական Աղամալի Օղլին և Ծաղղ Գաբայեր բաց կերպով ամբաստանեցին կառավարութիւնը, որ կարող արիւնոտ դէպքերը առեղծած են Բագուի դէմ: Վերջ կառավարութիւնը անմեղ է, բացականչեց Գաբայեր, այն ժամանակ ինչպէ՞ս են այդ մելիոնները, որոնք ոգաբերուած են Հայաստանեան:

Ես, մինչ Ապրիլեանում չանք ու որսում էին թափում, կարսում կեանքը արդէն խաղացել էր: Հէնց որ լսթասու չրջանները յայտնեցին հպատակութիւն, դինուորական մթնոլորտը վերջ դաւած, և ժողովուրդը անցաւ առերեսման աշխատանքի: Հայաստանի ոչ մի չրջանում հայ-մահմետական յարաբերութիւնները այնքան լաւ չէին, որքան կարսում: Այդ բարի-հարևանական յարաբերութիւնների ցուցադրութիւն եղաւ Կարսի քաղաքային խորհրդի արտակարգ նիստը փետրուար 17-ին՝ մահմետականութեամբ քէրդ և Թուրք բնակչութեան ներկայացուցիչների:

Ներհրդի նախագահը բանալով ժողովը՝ դիմեց քէրդ և Թուրք ներկայացուցիչներին ողջոյնի խօսքով՝ ասելով, որ նրանք որոշել են հայերի հետ ապրել հաչտ ու խաղաղ, հայերի կողմից էլ կը գանեն նոյն եղբայրական անկեղծ վերաբերմունքը: Գասասխանից Դէղոլի չրջանի ներկայացուցիչ Թալի բէգը՝ յայտարարելով, Թէ պատահած ցաւալի դէպքերի ամբողջ պատասխանատուութիւնն ընկնում է եկուր խռովարարների վրայ: Եթէ Հայաստանի կառավարութիւնը ժողանայ այդ Թերհիացութիւնները և լաւ վերաբերուի իրենց հետ, իրենք խոստանում են լինել Հայաստանի հաւատարիմ քաղաքացիները:

Ապա, ի պատասխան բանաորների և պիւշացիների ողջոյնների, խօսեց Մուրզանի չրջանի ներկայացուցիչ Արիֆպաշան: Սա ևս պնդեց, որ բոլոր դէպքերի պատճառը գրսից եկած դրդիչներն են և որ տեղական ազգաբնակութիւնը ձգտում է խաղաղութեան: Առանց հայերի, ասաց նա, մահմետականները չեն կարող ապրել. մի քանի ամիս ևս այսպիսի կեանք, և մահմետական չրջանները քար ու քանդ կը լինեն ու կը փչանան սովից:

Նոյն միտքը յայտնեցին և Ջաթուչատի ներկայացուցիչները՝ Բաղրը աղա Մահմէդ Օղլին և Ջաւիլ աղա Մահմէդ Օղլին: Սրանք ևս ցաւալի դէպքերը բացատրում էին արտաքին դրդումներով և խոստանում լինել հաւատարիմ Հայաստանի Հանրապետութեան՝ այն յոյսով, որ ՀՀայերն ու մահմետականները կապրեն եղբօր պէս, ինչպես ապրում էին Նիկոլաևի ժամանակ:

Նիստից յետոյ տնէն ունեցաւ հանդիսաւոր հացկերոյթ, ուր նոյնպէս խօսուեցին տաք ճառեր՝ երգուելով, որ այսուհետև երբեք չեն կրկնուի անցեալի մոայլ օրերը:

Նման հաւաստիացումներ սկսեցին հասնել և ուրիշ չրջաններից: Մարտի սկզբին կառավարութիւնը ստացաւ հետևեալ դիմումը. «Մենք՝ Օրդով, Խարբերտ և այլ քրդական գիւղերի ներկայացուցիչներս այսօր ներկայանալով Իգդիրի բանակի հրամանատար Մեպուհին՝ յայտնում ենք ձեզ, որ պարտաւոր ենք սրտանց ընդունել Հայաստանի Հանրապետութեան հպատակութիւնը և որպէսզի այդ լինի Աբարատի ստորոտի բոլոր գիւղերի կողմից, մեզ մնում է խորհրդակցել թէ նրանց և թէ մեր ցեղապետների հետ: Եթէ նոյնիսկ նրանք չհամաձայնեն, մենք նորէն ենթարկուելու ենք, թէկուզ առանց նրանց համաձայնութեան: Աւդալ Մատօ Օղլի, Մատօ Խազի Կանբօ Օղլի, Հասօ Սիքաշ Օղլի, Մամադ Խազի Օղլի, Ալօ Իսմայիլ Օղլի, Դաւրիշ Աբա Օղլի, Ուսուփ Սարօ Օղլի»:

Մարտ 15-ին նման բազմաստորագիր դիմում եկաւ Զըլդըրի չրջանի մահմեդականներից, իսկ ապր. 25-ին Արդահանի մահմեդականների ներկայացուցիչներից, որոնք բողոքում էին Ագրբէյջանի գործակալների սադրանքների դէմ:

Նոյն օրերին կառավարութիւնը հաւաստիացրեց դիմումներ ստացաւ և միլլաէթների եզիդիներից ու ասորիներից, որոնք ցանկութիւն էին յայտնում տեղափոխուել Հայաստան:

*

Շատ ժամանակ չանցած, չուտով պարզուց կարօի դէպքերի չուրջ ագրբէյնանցիների հանած ադմուկի իսկական դրդապատճառը. մարդիկ նոր դէպքեր էին պատրաստում Ղարաքադում, և անհրաժեշտ էր հաստատութեան ուշադրութիւնը ուրիշ կողմ դարձնել:

Պէտք է նկատել, որ օգոստ. 22-ի համաձայնութիւնը էական փոփոխութիւն չմտցրեց Ղարաքադի դրութեան մէջ, ինչպէս և նոյեմբեր 23-ի համաձայնութիւնը չփոխեց Զանգեզուրի վիճակը: Նոյեմբ. 23-ից յետոյ էր, որ, ինչպէս տեսանք, դանգեզուրցիք մաքրեցին Օխչի ու Գեղազ ձորերը:

Նոյեմբերի վերջերին Զանգեզուրում Ա. Շահմազեանին փոխարինեց Ս. Մելիք-Եօլչեանը, որպէս քաղաքացիական մասի կոմիսար, իսկ զինուորական մասը ենթարկուեց զօր. Ղազարեանին: Սրանց գալով՝ Զանգեզուրը ձևականօրէն էլ կապակցուեց իրրև Հայաստանի մաս: Քաղաքացիական իշխանութիւնը ամփոփուեց վարիչների խորհրդի ձևռքում՝ Ս. Մելիք-Եօլչեանի նախագահութեամբ: Շրջանը բաժանուեց 2 գաւառի. 1) Բուն Զանգեզուր, Տաթև, Դաբարա, Սիսիան՝ Զանգեզուրի գաւառ անունով, 2) Ղափան, Քաղաքերդ—Գեղազ ձոր, Աբևիկ և Գոդիմ՝ կապաբ Գոդի անունով: Զինւորական տեսակէտից չրջանը բաժանուեց 3 մասի. 1) Սիսիան՝ հրամանատար Գ. Տէր-Դաւթեան, 2) Կապարդոդի՝ հրամանատար Գ. Նժդեհ և 3) Զանգեզուր: Իւրաքանչիւր չրջանի հրամանատարութեան կից կազմուեց դիւուրա-

կան չոտա, որոնց ենթարկում էին ճակատապետներն ու վաչտապետները։ 20—50 տաբեկան բոլոր տղամարդիկ տրւած էին գէնքի տակ, երկրապահ զինուորութեան դրութեամբ, 20—25 ընտիր սպաների զնկավարութեան տակ։ Դեկտեմբերի կէսերին Գորթա հասաւ Դրօի էկսպեդիցիոն զօրամասը, և Դրօն յայտարարեց Զանգեզուր–Ղարաբաղի ընդհանուր հրամանատար։

Այսպէս կազմակերպւած, յունե· 19–ին, զանգեզուրցիք մի գրոհով մաքրեցին Բուն Զանգեզուրի և Ղափանի մէջն ընկած տարածութիւնը՝ Դոնգաբյու—Շուռ—Նուխ—Ակկլուսի քրքական չրջանը, մօտ 30 գիւղ։ Մաթոնեն գրաււեց Աւգալար–Ալեանչու–Մուսալմանլար–Բարդիւչատ չրջանը, ուր գտնւում էին մօտ 120 քրքական գիւղեր։ Թրքութիւնը թողնց ու հետացաւ Ագրբէջան։

Իր հերթին, գործի վրա էր և Սուլթանովը։ Նոյեմբերի պարտութիւնից յետոյ, նա եռանդով պատրաստւում էր Զանգեզուրի և Ղարաբաղի գրաւման։ Օգոստ· 22–ի համաձայնութիւնը նրա ձեռքին ժամանակ վաստակելու մէջոց էր լոկ։ Մի կողմից աշխատում էր պատակով զարթարդիներին, մեւս կողմից զինուրական ուժեր համախմբել՝ Ղարաբաղը զենքով ընկճելու դիտաւորութեամբ։ Փետրւարին համաբեա ագրբէջանեան ամբողջ բանակը—մօտ 10 հազար հոգի — հաւաքւած էր Ղարաբաղի հակատում։ Լուրեր էին տարածւում որ ագրբէջանեան զօրամասերի ընդհանուր զնկավարն է նուրի փաչան, օգնականը՝ զօր· Նիրուզովը և նրանց տրամադրութեան տակ գտնւում են բաղմաթիւ թիւրք սպաներ։

Ղարաբաղցիք տեսնում էին այդ և նոյնպէս պատրաստութիւններ տեսնում՝ վիժեցնելու համար Սուլթանովի ծրագիրները։ Գաւառում գործում էր ինքնապաշտպանութեան Մարժինը սպայ Զ· Մեհենեի, Ա· Մխքսյէլեանի և ուրիշների մանակցութեամբ։ Ղարաբաղի և Զանգեզուրի մէջև հաստատւած էր համագործակցութիւն, և Ղարաբաղը զրանից ստանում էր ռազմամթերք ու նիւթական օգնութիւն։

Երկու կողմերը՝ Սուլթանովն ու զարաբաղցիք պատրաստւում էին տնդագին և առանց ծածկելու։ Փետր· 19–ին, երբ Ագրբէջանն արդէն բաւականաչափ զօրք էր համախմբել Ղարաբաղի չուրջ, Սուլթանովը դիմեց Շուշիի Հայոց Ազգ· Խորհրդին՝ պահանջելով Ղարաբաղը յայտարարել Ագրբէջանի մաս։ Սուլթանովի համար այլևս Հաշտութեան Վեհաժողով գոյութիւն չունէր, և հասման քաջաց գէնն իւրանցն սկզբունքը մնացել էր միակ հեղինակաւորը։

Այս պահանջի առթիւ, փետր· 22–ին, Շուշու գիւղում գումարւեց 8րդ համագումարը, որին ներկայ էին 96 պատգամաւորներ Գիւլիստանից, Զիւռնէչիրից, Կաչէնից, Դիզակից ու Վաբանգայից։ Համագումարը որոշեց՝ մերժել Սուլթանովի պահանջը և յարտնակել Մեալ օգոստ· 22–ի համաձայնութեան գնոի վրա։ Միաժամանակ, համագումարը բուռն կերպով բողոքեց Սուլթանովի գործած կամայականութիւնների, բռնութիւնների ու սպանութիւնների դէմ։

Նոյն պահուն, 45—50 հոգի էլ, գլխաւորապէս քաղաքացիներ, հաւաքեցին Շուշիում, կազմեցին առանձին համազումար և ընդունեցին Սուլքանովի պահանջը՝ Ղարաբաղը ճանաչել Ադրբէջանի մաս:

Երկու համազումարների բանաձևերը ներկայացուցին Սուլքանովին, որը, ի հարկէ, մնաց դժգոհ և սկսեց պատրաստել աւելի վճռական քայլերի: Մարտի սկզբից Շուշիի երթևեկը առնուց հակողոքիչ տակ: Մարտ 4-ին հայկական թաղում տեղատուեցին ադրբէջանցի ոստիկանները: Մարտ 5-ին ցուցակագրուեցին Շուշիի հայ սպաները: Բազուից հասան նոր զօրամասեր: Մարտ 7-ին Շուշի եկաւ ադրբէջանական բանակի զեկավար պրինց Մահմէդը: Մարտ 7-ին զէպի Ղանձասար տանող ճանապարհի վրա սպանեցին 5—6 հայեր: Մարտ 10-ին Եւլախ-Շուշի խճուղու վրա սպանեցին 10 հայեր: Մարտ 10-ից Շուշի բերուեցին 150 հաղի-ամէլուկի քիւրդեր: Նոյն օրը Սուլքանովը հրամայեց գաւառի բոլոր հայ ոստիկանապետներին իրենց ձիաւորներով, մարտ 23-ին, բայրամի օրը, ներկայանալ իրան քաղաքում: Նոյն ժամանակ, Սուլքանովը գրաւոր հրաման ուղարկեց Մուսուլմանլարի կայազօրի պետին, թէ՝ «Հոգի երեսից մաքրել Ղնծաբերդ, Տումի և Հին Թազլար գիւղերը»:

Այս և նման զէպքերը կասկած չէին թողնում հայերի մէջ, որ Ադրբէջանը որոշել է հրով ու սրով ընկճել Ղարաբաղը: Եւ որոշեցին կանխել, իրենք նախայարձակ լինել: Մարտ 22 լոյս 23-ի գիշերը Ղարաբաղում ծագեց ընդհանուր ապստամբութիւն Ադրբէջանի դէմ: Ակնկալած կերպով գրաւումով Շուշիում և Ղանձակում մնացած թուրք զօրամասերը կտրուեցին զօրաջոկերից և ցրուեցան: Արիւնոտ կռիւներ տեղի ունեցան Ղանձակում, ուր սպանուեցին ապստամբների հրամանատարներ Ալիքասան-Դադրին, սպայ Խալխալեանը և ուրիշներ: Շուշին մատուց թուրք խուժանի և զօրքի յարձակման: Հայ բնակչութեան մեծ մասը փախաւ, իսկ մօտ 3-4000 հոգի մնաց թուրքերի ձեռքը և բանտարկուեց: Կանայք ենթարկուեցին զանազանաչարչար բռնաբարութեան: Առաջնորդ Վահան Ալ. գլխատուեց, և գլուխը պտտցնում էին քաղաքի փողոցներում:

Մարտ 26-ից Ադրբէջանի զօրքերը ամէն կողմից սկսեցին հակայարձակման: Մի քանի օր կատաղի կռիւներ տեղի ունեցան Ակնբանում: Ապր. 3-ին, ադրբէջանական բանակը, 8 թնդանօթով ու բազմաթիւ գնդացիքներով անցաւ գրոհի Ակնբանի, Այչէնի և Վարանդայի ուղղութեամբ: Օգհասանան ճակատամարտում հերոսի մահով սպանուեց Ակնբանի ճակատի հրամանատար Դալի Ղազարը: Թուրքերը ճեղքեցին հայկական շղթան և ամէն ինչ ուրելով՝ ապր. 4-ին մտան Շուշի ու կոտորեցին քաղաքում մնացած հայերին: Հայկական տներն մեծ մասը աւերի մատնուեց ու հրկիզուեց: Հայկական Շուշին նոսրաց մոխիրների վրա:

Դէպքերը ցոյց տուին, որ ապստամբութիւնը կազմակերպուած էր ամփոփ մարդկանց ձեռքով: Հետևանքները կարող էին լինել չատ աւելի աղէտաւոր, եթէ ապր. 13-ին Ղարաբաղ չհասնէր Դրօն իր էկսպեդիցիոն

ջօրամասով։ Նա իր ժեռքը առաւ չրջանի իչխանութիւնը, ապր· 15–ին ջօրահաւաք յայտարարեց Վարանդայում ու Դիզակում, ամրացրեց ճակատները և 45 օր չարունակ մնաց Ղարաթաղում։ Ապր· 22–ին Թաղասդեղ գիւղում հաւաքուեց Ղարաթաղի 9րդ համագումարը, որը 44 ձայնով մէկի դէմ մի անգամ էլ որոչեց մերժել Ազրբէջանի իչխանութիւնը և Ղարաթաղը համարել Հայաստանի մաս։

Դրօի հասնելուց յետոյ Ազրբէջանի բանակն այլևս առանձին կենդանութիւն ցոյց չուտեց· մի կողմից բացուում տեղի էին ունենում ներքին խմորումներ ու բոլչևիկեան չարժումներ, միւս կողմից Թիֆլիսում դաչնակիցները և Անդրկովկասեան Յորհրդաժողովը պահանջում էին վերջ տալ արիւնահեղութեան։ Զննարկուել չէր կարելի· աղմուկն ու սպառնալիքը չատ մեծ էր։

Եւ, իրօք, Ղարաթաղի ապատամարտեան և Շուչիի կռտորածի լուրը Թիֆլիսում ցնցող ազդեցութիւն գործեց։ Այն պահուն, երբ կարմիր բանակի առաչապահները կանգնած էին Անդրկովկասի դրանը, ընկերցումը հանրապետութիւնների միջև կարող էր դառնալ ճակատագրական։

Մարտ 27–ին Ղարաթաղի Հայրենակցական Միութեան ներկայացուցիչներ Գ· Բալայեանը և Լէօն մի յուչագիր ներկայացրեցին Անգլիայի, Ֆրանսայի, Իտալիայի ու Ճունաստանի ներկայացուցիչներին, գնդ· Համբլին, Հայաստանի վարչապետին և Վրաստանի կառավարութեան՝ խնդրելով նրանց միջնորդութիւնը Ղարաթաղի հարցում։ Նրանք պահանջում էին՝ անմիջապէս հետացնել ազրբէջանեան զօրամասերը, բանալ ճանապարհները և յարգել օգոստ· 22–ի համաձայնութիւնը։

Նոյն օրը Վրաստանի վարչապետ Ժորդանիան դիմեց դաչնակիցների ներկայացուցիչներին՝ խնդրելով նրանց միջնորդութիւնը՝ մարելու համար Ղարաթաղի հրդեհը։ Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի ներկայացուցիչները Ուօրդրոպ, կոմս Մարուչլը և գնդ· Գարբան, ապր· 1–ին, հաւաքական մի հեռագրով դիմեցին Բագու ու Երևան՝ հետևողական խաղաղ միջոցներով և անյապաղ լուծել Ղարաթաղի և ուրիշ գաւառների հարցերը, ուր խաղաղութիւնը վտանգած էր։ Հաշտութեան այս հանդիսաւոր կոչը կրկ չլսւի հիչտ այն ժամին, երբ, թերևս, ամբողջ Անդրկովկասի բախտը վճռելու վրա է, կարող է չատ ծանր հետևանքներ ունենալ ձեր կառավարութիւնների համարձ։

Հայաստանի կառավարութիւնը իսկոյն և եթ, ապր· 2–ին, պատասխանեց, թէ ինքը բոլորովին համամիտ է դաչնակից ներկայացուցիչների առաչարկին և իր պատգամաւորները ապր· 5–ին կը լինեն Թիֆլիսում՝ մասնակցելու համար անդրկովկասեան խորհրդաժողովին՝ նպատակ ունենալով խաղաղութեամբ լուծել բոլոր վիճելի խնդիրները։ Ապր· 4–ին Հայաստանի Յանրապետն էլ գրաւոր Ղարաթաղի գէպքերով և հետևութիւն ուղ կառավարութիւնների հետևած քաղաքականութեան։

Ադրբէջանցիների որոշ ձգձգումից յետոյ, ապր· 9–ին, բացւեց անդրկովկասեան 3 հանրապետութիւնների խորհրդաժողովը: Հայաստանի ներկայացուցիչներն էին Հ· Օհանջանեանը, Տ· Բէգզադեանը, Ս· Մամիկոնեանը և Ս· Խաչատրեանը· Ադրբէջանինը՝ Հ· Ազայևը, Ֆ· Վեքիլովը, Ս· Կրէյնկին· Վրաստանինը՝ Ե· Գեգեչկորին, Գ· Լորդկիպանիձէն և Գ· Մախարաձէն:

Օրակարգին անցնելուց առաջ, Հայաստանի և Վրաստանի պատւիրատուութիւնները առաջարկեցին, առաջին հերթին, դնել Ղարաբաղի արբունհռդութիւնների դադարեցման խնդիրը պնդելով, որ առանց դրան անկարելի է հանգիստ և արդիւնաւէտ աշխատանք կատարել: Ադրբէջանի պատւիրատուութիւնը սկզբունքով չառարկեց, բայց պնդեց, որ սկսք է նկատողութեան առնւեն և Օրդուբաթի, Նախիջևանի, Վեդիի ու Ղազախի շրջանները: Եւ որովհետև ինքը լիազօրութիւն չունէր, առաջարկեց խնդիր յետաձգել, մինչև որ բազուից ստացւեն համապատասխան հրահանգներ:

Յաջորդ նիստում, ապր· 10–ին, կազմւեց խորհրդաժողովի նախագահութիւնը — Ս· Մամիկոնեան, Հ· Ազայև և Ե· Գեգեչկորի: Ազայևը Ադրբէջանի պատւիրակութեան կողմից կարդաց բազուի կառավարութեան հետագիրը· «խորհրդաժողովի յարուցած հարցը կը քննւի վաղը, ապր· 10–ին, խորհրդարանի աւագների կողմից: Պատասխանը կր ստանաք վաղը երեկոյ»: Հայ պատւիրակները եանդով բողոքեցին այդ ձգձգման դէմ: Որոչեց նորից նիստը ընդհատել և սպասել բազուի պատասխանին:

Պատասխան չստացւեց և երրորդ նիստում, որը նոյնպէս յետաձգւեց: Չորրորդ նիստին, ապր· 11–ին, վերջապէս Ազայևը յայտնեց Ադրբէջանի կառավարութեան պատասխանը, որով նա հաամաձայնութիւն էր յայտնում խորհրդաժողովի քննութեան ենթարկել ամբողջ Անդրկովկասի տարածութեան վրա ընդհարումներն ու արիւնհեղութիւնները դադարեցնելու միջոցների հարցը»: Որից յետոյ, երկար ու բարակ, քննւեց օրակարգի հարցը և ընդունւեց խորհրդաժողովի հետևեալ օրակարգը· 1) արիւնահեղ ընդհարումները դադարեցնելու հարց· 2) անդրկովկասեան պետութիւնների մէայուն մարմնի ստեղծում· 3) հողային հարցեր· 4) արտաքին քաղաքականութեան համաձայնեցումը· 5) կոնֆլիկտաբաժիկի հարց· 6) տնտեսական խնդիրներ:

Ապա խորհրդաժողովը քննութեան առաւ օրակարգի առաջին կէտը, որի առթիւ սուր վիճաբանութիւններ եղան հայերի և ադրբէջանցիների միջև: Վերջիններս պահանջում էին, որ տեղի ունեցող ընդհարումները նկատւեն իբրև ջպատերազմ հայերի և մահմետականների միջև»: Ի վերջոյ ընդունւեց հետևեալ բանաձևը, որ Ազայևի, Մամիկոնեանի և Գեգեչկորիի ստորագրութեամբ անմիջապէս հեռագրւեց Հայաստանի և Ադրբէջանի կառավարութիւններին· — «Ադրբէջանի, Հայաստանի և Վրաստանի հանրապետութիւնների խորհրդաժողովը իր աշխատանքներին ձեռնարկելով՝ որոչում է 1) անմիջապէս դադարեցնել բոլոր այն արիւնահեղ ընդհարումները, որոնք այժմ տեղի են ունենում Ղազախում, Նախիջևանում, Օրդուբ-

բաժում և Ղարաքաղում. 2) Միաժամանակ, խորհրդաժողովը պնդում է, որ Հայաստանի և Ադրբէջանի կառավարութիւնները ամենակարուկ միջոցներ ձեռք առնեն վերացնելու համար հայ և մահմեդական ազգաբնակութիւնների միջև ընդհարման բոլոր հնարաւորութիւնները՝ համապատասխան հանրապետութիւնների սահմաններում: 3) Այս որոշման մասին յուսալով տեղեկացնել Ադրբէջանի և Հայաստանի կառավարութիւններին, որպէսզի նրանք ձեռք առնեն համապատասխան միջոցներ»:

Յոյն նիստում, ապր. 12-ին, խորհրդաժողովը զբաղուեց արիւնհեղութիւնը դադարեցնելու պայմաններով, դարձեալ երկար վէճ ծագեց հայերի և ադրբէջանցիների միջև Ղարաքաղի մասին: Վերջիններս պնդում էին, որ Ղարաքաղը Ադրբէջանի մաս է և Ղարաքաղի խնդիրը՝ Ադրբէջանի ներքին խնդիրը: Հայերը, ընդհակառակը, համարում էին, որ Ղարաքաղը Ադրբէջանի մաս չէ: Երկու կողմերը մտացին իրենց տեսակէտին, և որոշուեց ճանաչել այն իրաւական վիճակը, որ գոյութիւն ունէր ընդհարումներից առաջ և հիմնուած էր հայ-ադրբէջանական և անդրկովկասեան հանրապետութիւնների խորհրդաժողովներում ձեռք բերուած համաձայնութեան վրա՝ կառավարութիւնների հետ ազգային խորհուրդների պայմանագրի հիմամբ»:

Նոյն նիստում որոշուեց ընտրել 6 հոգինոց յանձնախումբ՝ 2-ական ամէն մի պատերակութիւնից և ուղարկել Ադրբէջան ու Հայաստան խորհրդաժողովի որոշումը գործադրելու համար:

Ապա ուղարկուեց 3 յանձնախումբ. մէկը՝ Մախարաձէ, Մամիկոնեան, Աղայէ՝ Ղազախ, ուր նոյնպէս հայ-ըրքական ընդհարումներ էին պատահել. մէսը՝ Ի. Ռամիչվիլի, Ա. Աբեղեան ու Ջ. Մուլքանով՝ Շարուր-Նախիջևան և երրորդը՝ Ղարաքաղ: Յանձնախմբերը մեկնեցին համապատասխան վայրերը, բայց յետագայ դէպքերի պատճառով չկարողացան գործ կատարեցին:

Այնուհետև խորհրդաժողովը երկարօրէն զբաղուեց կոնֆիդերացիայի հարցով: Ադրբէջանի պատերակութիւնը ներկայացրեց «Անդրկովկասեան Հանրապետութիւնների Դաշնագրի» նախագիծը: Առաջարկուում էր երեք հանրապետութիւնների ներկայացուցիչներից կազմել մշտական միջազգային մի խորհուրդ, որի պարտականութիւնը պիտի լինէր «1) հոգալ հանրապետութիւնների արտաքին ապահովութիւնը և նրանց անկախութեան ու չեզոքութեան պահպանումը, 2) հսկել, որ հանրապետութիւնների միջև ծագող վիճելի խնդիրների լուծումը միշտ դատարանի կողմից՝ կորձգերի, 3) հետևել, որ կիրառուեն դաշնագրերը հանրապետութիւնների միջև, 4) մշակել միջհանրապետական դաշնագրերի նախագծեր, 5) ձգտել խաղաղութեամբ լուծելու հանրապետութիւնների միջև ծագող վէճերը և հարկաւորութիւնները տալ առանձին հանրապետութեանց կառավարութիւններին առաջարկով»: Խորհուրդը պիտի կազմէր 12 հոգուց. իւրաքանչիւր հանրապետութիւն պիտի տար 2 ներկայացուցիչ խորհրդարանից և երկու՝ կառավարութիւնից, մէկ տարի ժամանակով: Խորհուրդը պիտի ունենար տովորական և արտակարգ նստաշրջաններ: Եւ այլն:

Ի հարկէ, այս դեռ կոնֆեդերացիա չէր, բայց մի քայլ էր դէպի կոնֆեդերացիա: Ադրբէջանցիք քայլ առ քայլ հետապնդում էին իրենց հիմ-

նական նպատակը՝ Անդրկովկասի միացումը։ Վրացիք էլ դէմ չէին որոշ միութեան, պայմանով, որ Վրաստանի վերահաստատման իրաւունքները յառաջէն։ Հայերի համար, քանի քիւրքահայկական հարցը մնում էր անորոշ, գոյավէճական ամէն փոփոխութիւն համաձայնում էր վազաժամ։ Այս դէպքում էլ նրանք չմերժեցին իրենց համաձայնութիւնը, բայց այդ աւելց այնպէս, որ հաւասար էր մերժումի։

Դեռ կոնֆերանսի խնդիրը չվճռած, ապր։ 16–ին ազրբէջանցիք բերին գինւորական ղրծակցութեան առաջարկը Խորհրդային Ռուսաստանի դէմ։ Վրացիք չառարկելով հանդերձ՝ առաջ քաշեցին սահմանագծման հարցը։ Հայերն էլ դէմ արտայայտեցին արտաքին ճակատով գրաւելուն։ Այժմ, երբ անդրկովկասեան հանրապետութիւնների առջև կանգնած է մի նոր վտանգ և նոր արիւնհեղութիւններ են հնարաւոր, հայկական պատւիրակութիւնը մերժում է գրաւել արտաքին քաղաքականութեամբ, վրդոված նկատելց ազրբէջանցի Վեքիլովը։

«Այո՛, առարկեց հայերի կողմից Տ։ Բէգզադեանը, քանի հոգային հարցերը չեն լուծած, խորհրդաժողովի որոշումները ո՛չ մի աթոռ չեն ունենայ։ Եթէ ենթադրենք, որ խորհրդաժողովը որոշէ ընդհանուր ուժերով դուրս գալ արտաքին ոտնձգութիւնների դէմ ի պաշտպանութիւն մեր հանրապետութիւնների անկախութեան, այսինքն՝ հիւսիսի վտանգի դէմ, այն ժամանակ հայկական պատւիրակութիւնը կառավարիչ ջննել հարաւային վտանգի հարցը, որովհետև քիւրքերը, որքան յայտնի է, դաշնակից են բոլշևիկների հետ։ Բացի այդ, խորհրդաժողովը պէտք է առոյգ տեղեկութիւններ ունենայ այն համաձայնութեան մասին, որը, իբր թէ, գոյութիւն ունի թիւրքիայի և Ազրբէջանի միջև։ Մեզ համար անհրաժեշտ է պարզել նաև Ազրբէջանի կառավարութեան վերաբերմունքը դէպի մեր պետականութիւնը»։

Նորից հին հարցը՝ «հիւսիսի» ու «հարաւի» վտանգը։ Ազրբէջանցու համար հիւսիսն էր սարսափելի։ Հայերը վախենում էին «հարաւից»։ Էլ ինչ խորհրդաժողով, ինչ կոնֆերանսներ, ինչ համաձայնութիւն։ Եւ ո՛չ մի համաձայնութիւն էլ չկայացաւ։

Իսկ մինչ պատգամաւորութիւնները խորհրդաժողովում ճառեր էին արտասանում, մինչ Ազրբէջանն իր ամբողջ բանակը կենտրոնացրել էր Ղարաբաղի դէմ, ապր։ 28–ի դիւերը, բոլշևիկները, թիւրքերի աջակցութեամբ և Ազրբէջանի Խորհրդարանի համաձայնութեամբ, առանց մի հաւելի պատճառ պարզելու, մտան Բագու և Ազրբէջանում յայտարարեցին խորհրդային իշխանութիւն։ Նոր գործօն էր մտնում Անդրկովկաս, որ գալիս էր բոլորովին այլ ընթացք տալու նորաստեղծ հանրապետութիւններէ կեանքին։ Եւ այդ նոր գործօնի ուշադրութեան առարկան եղաւ Հայաստանը։ Ճեպաշրջման յաջորդ օրը Բագուից Երևանի կառավարութեան ուղարկուեց հետևեալ վերջնագիրը։

Ադրբէջանի Հոկտեմբերեան Հանրապետութեան բանւորա-գիւղացիական կառավարութիւնը, յանձինս յեղափոխական կոմիտէի, պահանջում է՝ նախ ժաքթել մեր զօրքերից Ղարաբաղի և Զանգեզուրի հողամասերը. երկրորդ՝ քաշել զէպի մեր սահմանները. երրորդ՝ դադարեցնել ազգամիջեան կոտորածը: Հակառակ դէպքում, Ադրբէջանեան ընկերվարական խորհրդային Հանրապետութեան յեղափոխական կոմիտէն իրեն կը համարի պատերազմական դրութեան մէջ Հայաստանի Հանրապետութեան հետ: Վերջնագրի պատասխանի համար տրւում է երեք օր ժամանակամիջոց:

Ադրբէջանի Հանրապետութեան արտաքին գործերի գործավար Հուսէյնով:

ԳԼՈՒԽ ԺԳ.

ՄԱՑԻՍԵԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Այն ժամանակ, երբ Վրաստանում, Ադրբէջանում, Հիւսիսային Կովկասում և ամենուրեք հայ բոլշևիկները ենթարկւում էին անողոք հալածանքի, Հայաստանի կառավարութիւնը նրանց տուեց հնարաւորութիւն ապրելու և աշխատելու Հայաստանում: Հայ բոլշևիկ գործիչներից չատերը՝ Ս. Կասեան, Ա. Մռաւեան, Ս. Ալանոյեան, Դ. Շահվերդեան, Մ. Մահակեան, Ե. Երզնկեան, Ախս Նուրիջանեան և ուրիշներ իրենց կեանքը փրկեցին Հայաստանի կառավարութեան շնորհիւ: Նրանք Հայաստանում վարում էին զանազան պաշտօններ պետական ու հասարակական հիմնարկութիւնների մէջ — դպրոցներում, կօօպերատիւներում, նախաբարութիւնների, պետական վերահսկողութեան, ինքնավարութիւնների մէջ:

Ընդունելով Հայաստանի սահմանների մէջ՝ կառավարութիւնը մի պայման էր դրել հայ կոմունիստներին — հակապետական աշխատանք չկատարել: Եւ նրանք ամենը ազատ խօսք էին տալ յարգելու այդ պայմանը: Նրանցից ոմանք իրենք հէնց անմոռութիւն էին համարում բոլշևիկեան գործօն աշխատանքը Հայաստանում: Եւ քանի պատերազմական գործերը Որդրդային Ռուսաստանում յաջող չէին, ընդհանուր առմամբ, պահւում էր ուած խօսքը: Ճիշտ է, պատահում էին մասնակի խախտումներ, ինչպէս «Սպարտակեաններ» Քոուցիկը Բէոյիւք-Վէդիի կուսնների ժամանակ, բայց կառավարութիւնը ներողամիտ աչքով էր նայում:

Սակայն, երբ կարմիր օրքերը սկսեցին մօտենալ Կովկասին, Հայաստանում հիւրընկալւած բոլշևիկներն էլ չդիմացան և անցան հակապետական գաղտնի գործունէութեան: Նրանք պրոպագանդ էին մղում օրքի և բանտութեան մէջ. բայ էին Քողնում գաղտնի Քոուցիկներ ու Քերքեր: Իրենց կողմը քաշելով Խորհրդարանի անկուսակցական պատգամաւոր Արտաշէս Մելքոնեանին, նրա մէջոցով, հրատարակում էին «Գիւղացիական Ձայն» Քերքը, որ անհապաղ պայքար էր մղում տիրող ռեժիմի դէմ և, առանց ծածկելու, անում էր խորհրդային իշխանութեան գովքը:

Ա. Մռաւեանը պատմում է, որ 1919—20 թւականներին բոլշևիկեան եռանդուն գործունէութիւն կար Հայաստանում: Գաղտնի բջիջներ էին կազմւում, գրականութիւն էր տարածւում, ժողովներ էին գումարւում, քարոզչութիւն էր արւում օրքի և բանւորութեան մէջ:

«Ընկ. Ղուկաս Ղուկասեանի և նրա մօտիկ ընկերներ Արժենակ Բուդաղեանի և Ազաթ Յովհաննէսեանի մէջտեղ, գրում է նա, մենք երեսուում կատարում էինք կոնսպիրատիւ (գաղտնի) մեր բոլոր գործերը: Թուղթերը ապել և կպցնել պատերին, գրականութիւն փոխադրել, ժողովատեղի դառնել, նամակ տանել Թիֆլիս՝ Երկրային Կոմիտէ և այլն — այս բոլորը նրանք կատարում էին արագ, ճիշտ, կոնսպիրացիայի բոլոր օրէնքներով»:

Նոյն Ղ. Ղուկասեանը «1919թ. օգոստոսի վերջերին յատուկ յանձնարարութեամբ անցնում է Դիլիջան, Ղարաքիլիսա, Ալեքսանդրապոլ՝ տեղական կոմկուսակցութիւնների յայտնելու Երեւանում դումարուելիք կուսխորհրդակցութեան, նրա օրակարգի և կոմկուսկրպման հետ կապուած հարցերի մասին»:*)

Բոլշեւիկները առանձնապէս ուժեղ էին Ալեքսանդրապոլում: Այստեղի նրանց կոմիտէն մեծ դումարներ էր ստանում Թիֆլիսից ու Ռուսաստանից, գաղտնի թերթ էր հրատարակում և քարոզիչներ ու կազմակերպիչներ ուղարկում Երկրի զանազան կողմերը: Հայաստանի և Վրաստանի միջեւ գտնուող չկռիւ գօտին ապահովում էր բոլշեւիկների համար, որտեղից նրանք, գաղտնի ճանապարհներով, մարդ, դրամ և գրականութիւն էին ներմուծում Հայաստան: 1920 թուականի սկզբներին Հայաստանը արդէն թաւնարեալ էր բոլշեւիկեան գործօն պրոպագանդի և կազմակերպութեան:

Կառավարութիւնը տեղեակ էր բոլշեւիկների գործունէութեան, բայց զանազանում էր վճռական միջոցներ ձեռք առնելու: Նոյեմբերին գործոց նախաբարութիւնը մօտից հետեւում էր նրանց գաղտնի շարժումներին ու պարապմունքների քայլերին, ծանօթ էր նրանց ծրագրերներին և բանակի ու բանտորութեան մէջ տղած հակակառավարական պրոպագանդին: Հայաստանի քաղաքական հետախուզութեան և պահեստի միլիցիայի գլուխը կանգնած էր Լեոն Քալանթարեանի պէս մի հմուտ ու եռանդուն գործիչ, որի տեսողութիւնից խուսափելը չատ էլ հեշտ չէր: Բայց կառավարութիւնը զանազանում էր վճռական միջոցներ ձեռք առնել. հոգեբանօրէն պատրաստ չէր ժամի պէս բնկերվարական կոմունխատներին, ամեր նրկեւայ ընկերներին ձերբակալելու: Կար և Վրաստանի օրինակը. դեռ երկի Հայաստանի հաստատուց կարծիքը այնպէս խիստ դատապարտում էր վրաց մենշեւիկների գործադրած դաժան միջոցները բոլշեւիկների դէմ — հիմա ինչպէս անել նոյնը մեզ մօտ:

Սակայն, քէ Դաշնակցութեան մէջ և քէ չկռիւ չրջաններում կար և հակառակ ուղղութիւն. ամէն կողմից մտանանչում էր այն վտանգը, որ բոլշեւիկները կարող են հասցնել Հայաստանին: Այս տրամադրութեան և եղած պահանջների հետեւանքով, նոյեմբերի գործոց նախաբարութիւնը, յուլիս. 31-ին երեսուում և Դիլիջանում ձերբակալեց մի քանի կոմունխատներ:

Այս փաստը բոլշեւիկներն ընդունեցին իրրեւ մարտահրաւէր: Մի քանի օր անցած, ռազմա-յեղափոխական գործիչ Աբչակ Զոհրաբեանի յուղարկաւորութեան առթիւ, նրանք կազմակերպեցին ադիտոտ մի ցոյց, որի նպատակն

*) «Յառաջ». Հայաստան, 14 մայիս. 1927:

էր ցուցադրել իրենց ուժերը և հրապարակային բնոյթ տալ պայքարին Հայաստանի իշխանությանն դէմ*)։

Ծուխ. 31ի ձերբակալությունները նկար դարձան և խորհրդարանական հարցապնդման։ Փետր. 20–ին սոց.–յեղափոխական պատգամաւոր Վահան Միհախրեանը կառավարութեան ուղղեց հետեւեալ հարցապնդումը.

«Ծուխ. 31–ին ներքին գործոց նախարարի կոչապետութեամբ Երեւանում և Դիլիջանում ձերբակալուել են մի քանի անձնաւորութիւններ. պատճառաբանութիւնն այն է, թէ յիշեալ անձինք ունեցել են հակապետական և հակակառավարչական ընթացք, սակայն, նրա կարգադրութեան մէջ չի յիշատակւում որև է օրինք, ազդ կամ, նոյնիսկ բերանացի նախազգուշացում, որի հիման վրա կարելի լինէր արգելափակման ենթարկել քաղաքացիներին։ Ժամ. կառավարութեան հրատարակած օրինքը, որի վրա հիմնուած պիտի լինի յիշեալ կարգադրութիւնը, բոլորովին այլ բան է ասում, և հէնց այդ անհակէմից կատարած փաստը ապօրինութիւն է։

Մեւս կողմից, պարզ պիտի լինէր, թէ քաղաքական հոսանքի դէմ է ուղղուած այդ հալածանքը, թէ՞ սոսկ անհատների։ Եթէ առաջինն է, ապա դա ապօրինութիւն է, որովհետև քաղաքական հոսանքը պիտի ազատ լինի որև է հետապնդումից. եթէ երկրորդն է, ապա ո՞ւր է այն կծկռտուն մեղադրանքը նրանց կատարած գործերի։ Նրանց հրատարակած մէկ գիրքը, բաց Քոռուկից չեն պարունակում որև է հակակառավարչական բովանդակութիւն, իսկ տաճկի փաշաների հետ համաձայնութիւն կնքած լինելու լուրերը փաստացիօրէն ապացուցած չեն։ Արդեօք նայելով խնդրին՝ սոցիալիստ–յեղափոխական ֆրակցիան կատարած ձերբակալութիւնները համարում է ապօրինի և առաջարկում է ազատել նրանց։

Ջուտ ձեւական–իրաւաբանական տեսակէտից սոց.–յեղափոխականների մեղադրանքը, գուցէ, և իրաւացի էր. այն ժամանակները պետական ո՞ր պաշտօնեան էր այնքան հմուտ դոյութիւն ունեցող օրէնքների մէջ, որ կարողանար անթերի կերպով, պետական օրինքի բոլոր պահանջներին համապատասխան ձեւակերպել իր գործերը։ Սակայն, բան էր ձեւական սոցիալիստ–յեղափոխականները, ի հարկէ, անարդար էին։ Նրանք չատ լաւ ծանօթ էին բոլշեւիզմի էութեան և հայ բոլշեւիկների գործունէութեան բնոյթին, որպէսզի կարողանային պնդել, թէ՝ վերջինս հրատարակած մէկ կիրքը, բաց Քոռուկից չեն պարունակում որև է հակապետական կամ հակակառավարչական բովանդակութիւն։ Եւ նախարարի ուսած բացատրութիւններն ու յետագայ վիճաբանութիւնները լիովին հաստատեցին այս պարագան։

---

*) Արշակ Չոբանեանը ռուսական սոցիալ–դեմոկրատների յայտնի գէմֆրեից էր և մտերիմ բարեկամ Թորդանիայի ու Իմմիշիլիի։ Ռուսական յեղափոխութիւնից յետոյ գաղթում էր կովկասում, վերջ մենշեւիկների հետ միասին, հակառակորդ էր բոլշեւիկների և դաշնակցականների։ Վրաստանի անկախութենից յետոյ, ապրել էր ընդդիմադիրների կողմը և, իբրեւ միջազգայնական, ճնշուած էր վրաց մենշեւիկների արարքներից։ Այս պատճառով, հայոց ցաւի եղբայրակցութեան ներկայացուցիչ Վրաստանում և իր երեկոյ ընկերների ձեռից ազատելու համար՝ փախաւ Երեւան։ Հայաստանի կառավարութիւնը խոստացել էր Թոմայ Կոբերը մի պաշտօն, սակայն. նա վարժւոից բժուր տիփով և յանկարծ 4–ին մեռաւ։

. Ներքին գործոց նախարար Ա. Գիւլխանդանեանը ուշց հետեւեալ բացատրութիւնները։ Ընթացք, ովքեր ընդհատում են Հայաստանը որպես անկախ պետական միաւոր, այսպիսի հարցապնդում չպիտի անէին, քանի որ նորագոյժ պետութիւնը ամենահաստատուն վտանգներից իսկ կարող է առաջել, և խոռվարարութիւնը ամէն մէկից պիտի ձեռք առնի երկերը գերծ պահելու որև է պատասխանից։ Հայաստանում կան բաւական քանի բոլշեւիկներ, որոնք՝ իրենց առելով հեղել են այստեղ միասին ապատան դնելու և ոչ մի գործունէութիւն չպիտի ունենան։ Սակայն, դեռ յուիս ամսին, Բէյդիւ-Վէդիի կռիւների ժամանակ, երանք տպեցին մի Թուղթ, որով կոչ էին անում զօրքին չձնալ կուիւ։ Այնուհետև, տեղի ունեցան մի քանի դէպքեր Սարդարապէտ—Ալէքսանդրապոլ երկաթուղային վրա և այլն։ Հայաստանի անկախութեան ոտնի օրը պատերին փակցուեցին Թուղթիկներ, որոնք ուղղուած էին մեր պետական կազմի դէմ։

Վերջին տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ օրէցօր Հայաստան են գալիս նոր մեծամասնականներ, որոնք իրենց հետ բերում են խոշոր գումարներ՝ ագիտացիայի համար։ Մեզ կողմից, անհրաժեշտ միասն է, որ ուժս մեծամասնականները դադր են կապել Լրիտասարդ Թիւրքերի հետ։ Այդ համաձայնութեամբ ասաջական զօրքերը պիտի անցնեն Հայաստանի վրայով Դենիկինի Քիկունքին խփելու համար։ Ի՞նչ դրութեան մէջ կրնայ Հայաստանը այդ պարագային, պարզ է ամենքին, բայց մեծամասնականները համար դա արժէք չունի և, եթէ կուզէք, հայ ժողովրդի բնաջինջման գնով նրանք կիրագործեն իրենց ծրագիրը։ Ազրբէյանում և Անդրկասպեան երկրում բոլշեւիկեան չարժման գլուխ են անցել տաճիկ Կարդարարներ, որպիսիք են Նուրի փաշա, Խաթիսի բէյ և այլն։ Վերոյիշեալ փաստերը կատարութիւնը նկատել է որպես յանգանք և միջոցներ է ձեռք առել նրանց դէմ, որոնք ակտիւ քայլեր են անում մեր պետութեան կամ կառավարութեան դէմ։

Նախաբերի բացատրութիւններից յետոյ տեղի ունեցան բուռն վիճաբանութիւններ։ Սոց—յեղափոխական Ա. Ջիմդարեանը՝ ընդարձակօրէն վիր առնելով հարցապնդման նիւթը՝ յայտնեց, որ ինքը հակառակ է բոլշեւիզմին, բայց պնդում է, որ խորհրդային յանգանք պէտք է ձևակերպուի և գործը յանձնուի դատարանին։ Այս հոդի վրա, ի հարկէ, հարցապնդման դէմ կարելի չէր ասարիել, բայց հարցապնդման իսկական իմասը այդ չէր։

Իր ճառի մէջ հետաքրքրական մերկացուցիչներ արաւ Ա. Ջամալեանը։ «Վիլլի չարժման և բոլշեւիկների դաչինքը, ասաց նա, դժբախտաբար, ճշմարտութիւն է. դրա հետևանքը այն է, որ մեր ժողովրդի դատերինը Քոմիսարի վրա է դրուած։ Թիֆլիս եղած ժամանակս, բոլշեւիկների Միաբանվկական Գնդապետ Գոբեծոյեր Մարտնի չբնաջնչի կոմիսէի ախտաւոր անդամներից մէկը յայտնեց ինձ, որ նոյնիսկ Չ.-ն Բաքւում, բոլշեւիկների և երիտասարդ Թիւրքերի մէջն կայացել է մի համաձայնութիւն, որ տասկական զօրքերը Հայաստանի վրայով պիտի անցնեն Դենիկինի Քիկունքը բռնելու համար։ Նոյն այդ աեձնաւորութիւնը ասաց, որ իրենց միջոցներ պիտի ձեռք առնեն հարերի կոտորածի առաջն առնելու համար, բայց, ի հարկէ, կարող է իրենց այդ չյաջողէլ։ որանք փաստեր են և ոչ ոք հերքել չի կարող։

Այժմ տեսնենք, ձերբակալած բոլշեւիկները կապ ունէ՞ն այս ամենի հետ։ Խուզարկեան կարգադրութեամբ տարբեր մարդիկը ներարկում է վերին մարմնի կարգադրիչներին։ բոլշեւիկների Անդրկովկասեան կոմի-

աչի հրահանգները պարտադիր են Հայաստանի կոմիտէի համար, և սա պէտք է իր կատար ածէ, եթէ հակառակ էլ լինի: Ահա իսկական պատկերը գործի, որ ընդունել է կառավարութիւնը և միջոցներ է ձեռք առել, բայց, ցաւոք սրտի, կիսատ: Պէտք է կուռ ամբողջ կազմակերպութեան դէմ, որպէսզի նա հնար չունենայ ոյժ դառնալուն:

Այս հարցապնդման առթիւ տեղի ունեցած վիճաբանութիւններից երեք խնդիր դառնում էր ակնյայտնի ու անհերքելի. նախ՝ որ հայ կոմունիստները Հայաստանի սահմաններում կատարում են գործօն աշխատանք՝ պետական յեղաշրջում առաջ բերելու նպատակով, երկրորդ՝ որ բոլշևիկների և թիւրքերի միջև գոյութիւն ունի իրական համաձայնութիւն, որի հետևանքով թիւրքերը պարտաւորւել են օգնել բոլշևիկներին Դէնիկինի դէմ, և, հետևաբար՝ երրորդ՝ բոլշևիկներին օգնութեան գնալիս՝ թիւրքերը պէտք է անցնեն Հայաստանի վրայով՝ նոր քայքայումների ու կոտորածի մատնելով մեր երկիրը:

Հայաստանում առանձնապէս մեծ անհանգստութիւն պատճառեց բոլշևիկ-քեմալական գործակցութիւնը: Հայ կոմունիստները վրդովմունքով հերքում էին այդպիսի գործակցութեան գոյութիւնը, և մամուլի մէջ տարածւած լուրերը համարում էին ղարաչախների պրովոկացիոն արդիւնք: Այն օրերին հայ բոլշևիկները դեռ ամօթ էին համարում բաբեկմութիւնը թիւրք ջարդարարների հետ: Բնտոյ՝ ժամանակները փոխւեցին—փոխւեցին և բարքերը...

Հայաստանի կառավարութիւնը, ինչպէս և Դաշնակցութեան բարձրագոյն մարմինը մէկից աւելի անգամներ քննութեան առաւ բոլշևիկ-քէմալական համաձայնութեան փաստը, ինչպէս և այդ փաստից բխելիք հետևանքները: Պարզ էր, որ համաձայնութեան մէջ, ուղղակի կամ անուղղակի ձևով որոշ տեղ պէտք է ունենար և՛ Հայաստանը հէնց, քէկուզ, իր աշխարհագրական դիրքի պատճառով: Իրերի առարկայական ընթացքը քէմալցիները էր միջոցներ ձեռք առնել, որպէսզի ապագայ իրադարձութիւնների պարագային՝ հայ ժողովուրդը ոտքի տակ չգնայ: Այս մտահոգութեամբ, Դաշնակցութեան Բիւրօն, յունուարի սկզբներին Թիֆլիս ուղարկեց իր անդամներից երեքին — Ա. Ջամալեանին, Ռ. Տէր-Մինասեանին և Ս. Վրացեանին, որպէսզի յարաբերութեան մէջ մտնեն Ռուսաստանի կոմունիստական կուսակցութեան կովկասեան բիւրօի հետ և պարզեն վերոյիշեալ հարցի մանրամասնութիւնները, ինչպէս նաև այդ հարցից բխելիք գործնական հնարաւորութիւնները: Ցայտնի էր, որ բոլշևիկների դեկավարութեան կենտրոնը Թիֆլիսում էր, ուր գաղտնի ապրում էին մի չարք աշքի ընկնող կոմունիստ գործիչներ: Հ. Բ. Դ. Բիւրօի անդամները մեկնեցին Թիֆլիս՝ ունենալով իրենց հետ բոլշևիկ-քեմալական համաձայնագրի պատճէնը:

Տեսակցութիւնը տեղի ունեցաւ կովկասեան Բիւրօի ընդհանուր քարտուղար Հ. Նազարէթեանի հետ, և, վերջին հաշուով, խիստ ճնշիչ տպաւորութիւն թողնց:

. Նագաբէքեանին տուեց երկու հարց։ Առաջին՝ ճի՞շտ է, որ բոլշևիկները և քէմալականների միջև կնքուած է գաղտնի համաձայնութիւն։ Երկրորդ՝ ճի՞շտ է, որ այդ համաձայնութիւնը ուղղուած է նաև Հայաստանի դէմ։ Բոլշևիկ-քէմալական համաձայնութեան փաստը նա չհերքեց, բայց չատ երկար խօսում էր այն մասին, որ կոմունիստական յեղափոխութիւնը պաշտպան է ճնշուած ազգերին և, ուրեմն, չի կարող չպաշտպանել նաև հայ ժողովրդին։ Հ.Յ.Դ.Բիւրօի ներկայացուցիչները հետացան այն համոզումով, որ եթէ բոլշևիկ-քէմալական բարեկամութեան չհաւերը պահանջին, Հայաստանը կր զոհաբերի յանուն բոլշևիկների արևելեան քաղաքականութեան։ Տեսակցութեան մէջոցին, յիշելով Լենինի դէկրէտը Հայաստանի անկախութեան մասին, ինչպէս նաև դաշնակցականներից ոմանց գործակցութիւնը Մ. Շահումեանին, Հ. Յ. Դ. Բիւրօի անդամները յայտնեցին այն միտքը, թէ հայ ժողովրդի չաւր պահանջում է որոչ հասկացողութիւն բոլշևիկների և Հայաստանի դեկավար կուսակցութեան մէջև։ Գաւառախանը եղաւ չոր հեգնական ծպտա։ Ինչ հասկացողութիւն, հարկաւոր է արագացնել խորհրդային իշխանութեան տարածումը նաև Կովկասի վրա։ Ընդհատ գնալու, համաձայնութեան եզր գտնելու ո՛չ մի ցանկութիւն չարտայայտուեց կովկասեան բեւրօի վարիչի կողմից։

Թէ՛ նախորդ դէպքերը, թէ՛ այս փաստը և թէ՛ այն գաղտնի տեղեկութիւնները, որ ամէն օր ստացւում էին կառավարութեան հետախուզական բաժնում, ո՛չ մի կասկած չէին թողնում այլևս, որ Հայաստանի դէմ նիւթուած է մի դաւ և որ այդ դաւի անմիջական մասնակիցները ու դերակատարները Հայաստանում հիւրընկալուած հայ կոմունիստներն են։ Դաղտագէտ այլևս յանգանք էր, և կառավարութիւնը ձեռք առաւ կարուկ միջոցներ. քաղ յետևից տեղի ունեցան ձերբակալութիւններ։ Բռնուեց աչքի ընկնող կոմունիստների մեծ մասը, որոնք որոչ ժամանակ քանտում պահելուց յետոյ՝ արտաքսուեցին Հայաստանի սահմաններից։ Ձերբակալուածների մէջ էր և Ալիխ Նուրիջանեանը, որը կարողացաւ փախչել և յետագային դարձաւ հակակոմունական չարժման մոլի դեկավարներից մէկը։

Կատարուած ձերբակալութիւնները ու խուզարկութիւնները կառավարութեան ձեռքը տուին առատ նիւթ, որից երևաց, որ բոլշևիկները պատրաստում էին Հայաստանում ընդհանուր ապստամբութիւն, այդ նպատակով զբաղեցրել էին խոշոր գումարներ և ձեռնարկել էին մարտական խմբերի կազմակերպութեան։ Ծայռի դարձաւ, ընդհանուր առմամբ, և ապստամբութեան յատկացիչը։ Գաղտնի նաև, որ բոլշևիկները որոշած են եղել օգտագործել Հայաստանի այլազգի տարրերի — մահմեդականների և ռուսների դժգոհութիւնը, ինչպես նաև երկրում տիրող պաբեներութեան ծանր կացութիւնը, որը սրել էր այն պատճառով, որ կառավարութիւնը իր ունեցած հացի պաշարի մեծ մասը յատկացրել էր ցանելու, իսկ ամբողջ աշխարհը ուշացել էր փոխադրութեան միջոցների քերութեան հետևանքով։

Գաբենատրման հողի վրա, փետրուար և մարտ ամիսներին, նոյնիսկ մի քանի ցոյներ էին տեղի ունեցել քաղաքային ինքնավարութիւնների և պարենաւորման նախարարութեան դէմ։ Բոլշևիկները զրգռում էին ամբոխի մութ բնազդները. խօսում էին այն անպատ հացի, շաքարի, հագուստեղէնի ու նաւթի մասին, որ պիտի լցուի Հայաստան հէնց որ հաստատուի խորհրդարքական իշխանութիւն, և հրաւիրում էին տապալելու զեղչախնդրի բռնապետութիւնը։ Սոված ու ակլոր մարդիկ, ի հարկէ, հեշտութեամբ ենթարկւում էին այսպիսի քարոզչութեան և կոյր գործիք էին դառնում բոլշևիկների ձեռքին։ Պէտք է արձանագրել և այն իրողութիւնը, որ անտեսական տագնապն ու սովը իրրև քաղաքական պայքարի զէնք ղործ էին ածում ո՛չ մեզնից մէկ-երկուքի միտքն չդնող բոլշևիկները, այլ և ուրիշ՝ ասելի չափաւոր տարրերը, ինչպէս, օրինակ, ժողովրդական կուսակցութիւնը։

Մինչև վերջերս հայ բոլշևիկները ժխտում էին այն մեղադրանքը, թէ իրենք Հանրապետութեան օրով աշխատել են պետական դեպրեսիայ առաջ բերել, թէ մայիսեան օրերին որոշել են ընդհանուր ապստամբութիւն անել։ Այժմ արդէն, հէնց իրենց կողմից հրատարակած բազմաթիւ փաստերով ու վաւերագրերով, հաստատւում է, որ 1919 և 1920 թուականներին ընթացքում հայ կոմունիստները Հայաստանում պատրաստուելիս են եղել, ապստամբութեան մէջոցով, խորտակելու Հայաստանի անկախութիւնը*)։

Այս տեսակէտից հետաքրքրական են հայ բոլշևիկի պարագլուխների վկայութիւնները.

«Բոլշևիկեան ակտիւ և խստացած գործունէութիւնը Հայաստանի տերիտորիայում, գրում է Ս. Կասեանը,**) իրապէս սկսւել է 1919 թուի ամառնանից։ Ճիշտ է, առաջ էլ եղել են այդպիսի գրուպաներ, բայց որովհետև մեր կուսակցութեան երկրային Ցոմիտէն կարւած է եղել Հայաստանից, նա չի կրթղրոջացել ոչ կազմակերպչական գործ կատարել այդ գրուպաների մէջոցով, ո՛չ էլ ուղղութեան տալ նրանց գործունէութեանը։ Ներքին գործերի գալուց յետոյ, երբ դաշնակներն ուժի էին եկել և իշխանութեան ամբողջապէս կենտրոնացրել իրենց ձեռքը, այդ գրուպաների գործունէութիւնը լինկիդացիայի է ենթարկում համարեա ամբողջապէս։ Նոյն տարւայ սեպտեմբերին, նախապատրաստական աշխատանքներից յետոյ, երկրային կոմիտէի ներքին յայտնի ուղիներով կազմակերպում են Երևանում՝ գաղտնիորէն հրաւիրած պատասխանատու ընկերների գաղտնի խորհրդակցութիւն, ուր մշակում է այդ երկրում մեր գործունէութեան հիմնական տակտիկան և ուղեգծում կենտրոնական մարմին՝ «Հայաստանի Կոմիտէ»։

Այս խորհրդակցութիւնը, բան գնահատի, մեզնում է այն փաստից, որ Հայաստանում զարգացած գործարանային կապիտալիզմի նշոյլն անգամ գոյութիւն չունէր, առևտրական կապիտալիզմի գէմքն էլ վազուց մոռացել էր, գիւղատնտեսութեան խոշորագոյն մասը անձնատէր է լատիֆունդիական, նրա մեծ կալուածատիրական յարաբերութիւններին, ուր ագրարականների 90% աղքատութեան և զրկանքի մէջ է քարշ տալիս իր խղճուկ գոյութիւնը», և

*) Տես, ի միջի այլոց, Շ. Ամիրխանեանի «Մայիսեան ապստամբութիւնը Հայաստանում», 1926. Մոսկուա և Ալ. Յովհաննիսեանի «Հայաստանի Յեղափոխութեան Ցուլեն ու Հոկտեմբերը», Երևան, 1925թ.

**) «Նոր Աշխարհ», ամսագիր, սեպտեմբեր, 1922թ. № 2։

առաջադրում է հետևյալ նշանաբանները. «1. Վճռական պայքար Անատոթի դեմ. 2. Վճռական պայքար այն ներքին ոսոխների դեմ, որոնց գրա յնեւում է նա — դաշնակ կառավարության և արտասահմանյան հայ բուրժուազիայի ազենտները. 3. անձնայ վարկաբեկումն ցարական և բուրժուական հոսանաստանի և 4. որպես գրական հանգիսիր այդ բացատական լոզունգների՝ մի՛ջազգային յեդոպեական պրոլետարիատի կոմունիստական պայքարի ու բանտրա-գիւազգիական հոսանաստանի բարոյական հմայքի բարձրացումը և խորհրդային հանրապետության հաստատումը Հայաստանում»:

«1920 թի յունուարի երիրորդ կեսին Երևանում տեղի ունեցած կուսակցական անդրազ. ֆունկցիայի, հիմնվելով կուսակցության քաղաքականայ փոքաոտության վրա, ամբողջապես ընդունեց և հաստատեց այդ վարքագիծը: Տաքանչյուր քիւնը վերաբերում էր մի՛այն այն հարցին, թե կուսակցությունը մասնակցելո՞ւ է բոլոր հասարակական հաստատություններին գործառնությանը, օրինակ՝ զեմստվոներին, քա՞ միայն դասակարգային հիմնարկություններին՝ պրոֆեսիոնալներին և գիւազգիական միութիւններին»:

«... Ա՛ւրջանդրապոլի կազմակերպությունը, որ դյուսուրապես բազկացած էր համարեա բացառապես Բաքվից ու Թիֆլիսից եկած երկաթուղային բանւորներից, իր ներկայացուցիչների բերանով հարց էր յարուցել իշխանությունը վերցնելու մասին, բայց կոնկրետության կարակամապես մերժեց այդ, որովհետև «նոնկրետ կանչնեց այն տեսակետի վրա, թե որքան էլ հնչո յնի բոլշևիստական հարատնով գրաւել իշխանությունը ինքնուրոյնաբար և մենակացած, այնուամենայնիվ. իշխանությունը ձեռքում պահելը անկարելի պիտի լինի՝ այն հասարակ պատճառով, որ 1) կուսակցությունը, բազկացած լինելով ո՛չ աւելի քան 500 անդամից, չափազանց աղքատ լինելով փորձած ու պատրաստ ուժերով, չպիտի կարողանայ ո՛չ միայն դիմագրել այն ժամանակւայ քաղաքական և հոգեբանական սիտուացիայում անխուսափելիօրէն առած գալիք քաղաքացիական կռւին, այլ և իշխանությունն կազմակերպել կենտրոնում և տեղերում. 2) որ նա հնարաւորութեան չպիտի ունենայ կազմակերպելու այնպիսի բանակ, որը կարողանայ, առանց «գրեթե» օգնության, դիմագրել արտաքին քշնամիների — մենշեւիկյան Վրաստանի, մուսաւատական Ադրբէջանի և քէմալական Տաճկաստանի ամենայնքին արշաւանքին անգամ. 3) որ նայր ասած՝ քաղաքացի և ռազմի ճիրանները գալուրաղ երկրի ցուրան ու քաղցը մի կողմից, իսկ անտեսական անխուսափելի բլոկադան մես կողմից՝ հնչեց ռազմի ժէլ պիտի խեղդեն խորհրդային իշխանությունը»:

«Դուցությունը, բացատրում է հասնաը, պահանջում էր գրաւել ո՛չ թէ այդ տ՛ւամ մտքով, այլ կուսակցական կազմակերպությունների և սրանց ազդեցության տարածմամբ ու խորացմամբ, արհեստական և գիւազգիական միութիւնների միջոցով իսկոր մասսաների քաղաքական դասակարգայնացմամբ՝ գործնականով նրանց մէջ ինքնագործունեության և ինքնիշխանության ձգտումին: Այդպիսով, պատրաստ լինել իշխանությունը գրաւելու, երբ նեցուկ կունենանք մի հարւած երկիր, որով հնարաւոր կը լինի կապել բանւորա-գիւազգիական հոսանաստանի հետ: Միեայն երկու գէպքի համար էր կոնկրետեցված առաջարկ սահպայնացնել քաղաքացնելու սպառազինության գործը և զնդհանուր ճակատ ստեղծելու՝ թէ գնով էլ ուզում է լինի. նախ՝ եթէ դաշնակ կառավարությունը յանդգնություն ունենար անտանի թնդանօթով և մենշեւիկյան Վրաստանի հետ միասին օգնել մուսաւատական կառավարությանը՝ խոշընդոտ հանդիսանալու կողմեր բանակին՝ բացուն հարձակողական գրաւելու դէպքում. երկրորդ՝

ՆՔՀ նա Ազրբէյնանի կամ Վրաստանի բանւորա–գիւղացիական ապստամբութիւնը Քեմէլականից խանգարել ուզենայ»։

Կասեանի այս հաւատարիացումներն, ըստ երեւոյթին, աւելի չուտ իր անձնական համոզումներից են բխում, քան իրական փաստերից։ Անկարելի չէ, որ նա ինքը այդպէս էր մտածում, բայց կոնֆերենցիան, անշուշտ, աւելի համամիտ էր «Այնքանդրապոլի կազմակերպութեան ներկայացուցիչներին», որոնց առաջնորդ Աւիսը խիստ մաքսական մի բանաձեւով առաջարկում էր անմիջապէս վերցնել իշխանութիւնը։ Կասեանը հաստատցնում է, որ այդ բանաձեւը ո՛չ միայն չի անցել, այլ չի էլ քննել, մինչդեռ Հայաստանի կոմկուսի կենտրոնական պաշտօնաթերթ «Իզվէստիա»–ի 1922թ. 25 յունւ. № 1–ում այդ բանաձեւը տպւած է, որպէս խորհրդակցութեան կողմից ընդունւած և հայ կոմունիստների համար պարտադիր մի որոշում։ Յետագայ դէպքերն էլ զարգացան Աւիսի բանաձեւի ուղղութեամբ, և կասեանի հոգեյուզ խորհրդածութիւնները «ռանդւածի օրիկնիս կացութեան», «երկրի իրական պայմանների» ու «տնտեսական–դասակարգային տարբերակութեան» մասին միայն գայլի չարականներ էին մեր դնտորինեօրների, դիւլելնիկիօրէն մտածելու չնորհքից զրկւածների և ձախութեան հիւանդութեամբ բռնւածների համար։

Այդ երեւում է և Աչ. Յովհաննիսեանի վկայութիւնից։

«Յովհեփացիայի խնդիրը, ասում է նա, պարտաւորիլ էր ամենից առաջ կոմունիստական կուսակցութեան Հայաստանի կոմիտէի—Արմկոմբ—համար։ Հայաստանի կոմունիստական կազմակերպութիւնների գաղտնի կոնֆերենցը, որ տեղի ունեցաւ Երեւանում, 1920 թւի յունւարին, ընդունել էր քէդեականեր այն իմաստով, որ կարմիր բանակի մերձեցման և հաւաքման հանրապետութիւնների յեղաշրջում լինելու դէպքում պէտք է առաջադրել Հայաստանի սովետիզացիայի խնդիրը։ Վերջհաս դէպքերը հարկադրում էին նախապատրաստական քայլեր անել այդ ուղղութեամբ։ Հայաստանի կոմիտէն ենթարդրում էր, որ Ղազախն ու Ղարաբաղը, որպէս սահմանակից շրջաններ, յեղաշրջման յենակէտներ պէտք է դառնային Հայաստանի համար։ Մինչ այդ պէտք էր խուսափել վճռական գործողութիւններից, քաւականանալով միայն կազմակերպչական աշխատանքով»։[*)]

Հայ կոմունիստների հակապետական չարժման դրդիչ և ազդանշան հանդիսացաւ Ազրբէյնանի խորհրդայնացումը։ Անտարակոյս, հայերը տեղեակ էին Ազրբէյնանում սպասւող դէպքերին և իրենք էլ պատրաստւում էին այդ ուղղութեամբ։

Հայ բոլշեւիկները որոշ յոյսեր կապում էին և այդ միջոցին Ղարաբաղում զարգացող պատերազմական գործողութիւնների, ինչպէս և ուսս ու մահմեդական տարրերի դժգոհութեան հետ։ Նրանց հաշիւը պարզ էր։ չահագործելով սովը, տնտեսական ճգնաժամը, ուսների ու մահմեդականների կենտրոնախոյս բնազդները մի կողմից և միւս կողմից՝ բոլշեւիկների արտաքին ոյժն ու կարմիր բանակի հմայքը՝ պայթեցնել Հայաստանի Հանրապետութիւնը։ Չնայած ապստամբութիւնն ու քաղաքացիական կռիւը այդ նպատակին հասնելու ուղիղ ճանապարհն էր։

---

*) «Ժողհրդ. Հայաստան», 1925թ., մայիս 1· № 98·

Ադրբէջանի յեղաբէջումը գուղալիպից մայիս մէկի ուսին։ Երեւանում և Հայաստանի մեւս վայրերում հայ աշխատաւորութիւնը պատրաստւում էր առաձին հանդիսաւորութեամբ ուսնելու աշխատաւորների միջազգային համերաշխութեան օրը։ Բոլշեիկները օգուտեցին դրանից և աշխատեցին մայիսեան ուսնը վերածել ընդհանուր հակապետական ապատամբութեան։ Երեւուում այդ չյաջողուեց, բայց գաւառական մի չարք քաղաքներում նրանք ուսնեցան կարճատև յաջողութիւն։

Շարժումները զարդացան հետեւեալ ձեւով։ Երեւանում Մայիսի մէկը ուսնեց աննախընթաց չեզով։ Ամբողջ քաղաքը զարդարւած էր կարմիր դրօշակներով, զորձերով ու ծաղիկներով։ Վաղ առաւօտուանից փողոցները լեցւած էին խուռն բազմութիւններով։ Հրապարակները ու Արովեան պողոտան բռնւած էին արհեստակցական միութիւնների անդամներով, դրօշակներով ու նշաններով։ Կազմակերպւած թափօրին մասնակցում էին բոլոր հոսանքները։ Ռիխտափորի, Ռոստոմի ու Զաւարեանի պատկերների կողքին դրւած էին և Լենինի ու Շահումեանի պատկերները։ Դաշնակցութեան նշանախօսքերին ու մակարդրութիւններին զուգընթաց կային և բոլշեիկեան աղմկարար կարգախօսներ։ Ջօրահանդէսից յետոյ Ռորհրդարանի առջև տեղի ունեցաւ հրապարակային փառահեղ ժողով, ուր ճառեր արտասանեցին Ռորհրդարանի Նախագահ Ա. Սահակեանը, արտաքին գործերի նախարար Հ. Օհանջանեանը, վրաց սոց.—դեմոկրատ յայտնի գործիչ Ի. Ռոմմիլլիկին, Մեսուհը և ուրիշներ։ Ապա տեղի ունեցաւ Երեւանի նոր կայարանի հանդիսաւոր բացումը, ուր նոյնպէս արտասանւեցին բազմաթիւ ճառեր։ Օրւայ ճառախօսների գլխաւոր նիւթն էր կարմիր գոյն առած Ադրբէջանի վերջնադերը, որ նոր էր ստացած երեւանում և որով պահանջում էր երեք օրւայ ընթացքում մաքրել Ղարաբաղն ու Զանգեզուրը հայկական ուժերից։ Այդ առթիւ ընդունւեց մի բանաձև, որի մէջ ժողովը գյայտնում էր իր բուռն դայրոյթը Քուրդ գիւղացիների և բանւորութեան անունը չահագործող դահիճներին, որոնք սովետական իշխանութեան և կոմունիզմի անունը օգտագործելով՝ չարունակում են նախորդ կառավարութեան արիւնոտ գործը։ Հայաստանի աշխատաւորութիւնը իր եղբայրական ձեռքն է մեկնում Ադրբէջանի աշխատաւորութեան և պահանջում է վերջ տալ արշաւանքին դէպի Ղարաբաղ և Զանգեզուր՝ քոյլ տալով, որ այդ գաւառների գիւղացիութիւնն ու բանւորութիւնը ինքը ազատօրէն արտայայտի իր կամքը։ Հայաստանի աշխատաւորութիւնը խորապէս հաւատալով, որ Ռուսաստանի խորհրդային իշխանութիւնը քոյլ չի տայ Ադրբէջանին յարձակողական քաղաքականութիւն՝ միևնոյն ժամանակ պահանջում է իր կառավարութիւնից անյողդող պաշտպանել Հայաստանի և հայ աշխատաւորութեան տատութիւնն ու անկախութիւնը և առաջարկում է արհեստակցական միութիւններ միութեան այս բանաձևը անմիջապէս յայտնել բոլոր երկրներէ աշխատաւորների և խորհրդարանների ռոցիալիստական ֆրակցիաներին։

*Բանաձևը, որ առաջարկած էր արհեստակցական միութիւններէ կենտրոնական վարչութեան կողմից, գնում էր տարբերութիւն Ռորհրդային Ռուսաստանի և Ադրբէջանի քաղաքականութեան միջև։ Թէև յետագայ դէպքերը ցոյց տուին, որ ո՛չ մի տարբերութիւն չկար։ Նա արտայայտում էր

այն նպատակով տրամադրությունը, որ կար Երևանի արհեստակցական միություններում որոշ մասերում, յատկապես ասած–գալաժի ծառայողների մեջ: Եւ քաղաքների ու ժողովների ընթացքում էլ փորձեր եղան ոտնին տալ բոլշևիկյան բնոյթ, նոյնիսկ արտասանեցին հակակառավարչական ճառեր, բայց, ընդհանուր առմամբ, ժողովուրդը մնաց անտարբեր հանդիպ բոլշևիկների ազդակ–ժեստերին: Պարզ էր, որ Երևանը բոլշևիկների հետ չէր, բայց անվիճելի էր նաև, որ բոլշևիկյան տարրերն ու տրամադրությունները այնքան էլ արհամարհելի չէին:

Դաւառում դէպքերը բոլորովին ուրիշ ընթացք ստացան:

Ցիչերինը արդէն, որ Ալեքսանդրապոլը կազմում էր բոլշևիկների գործունէութեան կէնտրոնը: Ապրիլի վերջերին այստեղ էին հաւաքւած նրանց գլխաւոր գործիչներն ու մարտական ուժերը՝ յեղաշրջում առաջ բերելու որոշումով: Մայիսի մէկին տեղի ունեցան բոլշևիկեան ուժեղ ցոյցեր: Ի միջի այլոց յարձակում գործուեց Դաշնակցութեան ակումբի վրայ, պատերից փրցուեցին և ոտի տակ նետուեցին Ռիխտոֆերի, Ջաւրեանի և ուրիշների նկարները: Ո՛չ մի կողմից ո՛չ մի դիմադրութիւն: Տեղական իշխանութիւնը չարած չթանում է. դաշնակցականները խուսափում են աթիւնհաղութիւնից: Հրապարակը մնաց բոլշևիկներին: Հակափետական չարժման կենտրոն էր ժվարգան Զօրավարի զրահատեղացը:

Լաւը Երևան հասնելուն պէս՝ զինուորական նախարարը կարգադրեց, որ ժվարգան Զօրավարի–ի պետ գլխապետ Մուսայէլեանը գնացքը առնելով՝ մեկնի Ղամարլուի ճակատը: Մուսայէլեանը ո՛չ մեկին չկատարեց իր բարձրացման իշխանաւորի հրամանը, այլ և կարգադրեց, որ Ղամարլուի ճակատից անմիջապէս Ալեքսանդրապոլ մեկնի զրահապատ գնացքի մի մասը, որ պահպանում էր Հայաստանի սահմանները Վէդի–Բասարի ծուրքերի դէմ:

Չօրամասը կրկնեց և սպարապետ զօր. Նազարբէգեանի կողմից, բայց Մուսայէլեանը նորից չենթարկուեց: Ընդհակառակը, զրահապատ գնացքի վրա բարձրացրեց բոլշևիկեան դրօշը, որից յետոյ նոյն Մուսայէլեանի նախագահութեամբ կազմուեց Հայաստանի Ռազմա–Յեղափոխական Կոմիտէ, որը յայտարարեց իրեն երկրի գերագոյն իշխանութիւնը: Ռազմա–Յեղափոխական Կոմիտէի մէջ գերիրը բաժանուած էին հետևեալ ձևով. նախագահ և զինուորական կոմիսար՝ Մուսայէլեան, արտաքին գործերի կոմիսար՝ Ալիխ Նուրիջանեան, ներքին գործերի կոմիսար՝ Ալուսչէս Մելքոնեան: Ռազմա–Յեղափոխական Կոմիտէն բռնեց կայարանը, իր կողմը քաշեց տեղական զօրքի մի մասը և կարեց երկաթուղային հաղորդակցութիւնը գրեթ աշխարհի հետ:

Ապա՝ Մուսայէլեանը անմիջապէս ուղիղ հեռագրաթելով վերնագիր ուղարկեց Երևան՝ պահանջելով, որ կառավարութիւնը իրեն յանձնի իշխանութիւնը: Ռազմա–Յեղափոխական Կոմիտէի անունից հեռագրեր տրուեցին Գաղու, Սարբդամիշ, Ղարաքիլիսա և ուրիշ վայրեր, որոնցով յայտարարւում էր Հայաստանի խորհրդայնացումը և զինուորական ու քաղաքացիական իշխանութիւնները առաջարկւում էր ճանաչել նոր իշխանութիւնը:

. Այս հետազոտները սրճազանգ գան գլխաւորապէս զօրամասերի և ալյսպէսների մէջ: Ազնջանդրապոլից առաջանն հրամանի վրայ, մոտիս 9-ին, գլխաւորապէս ատոս-գարաժի ծառայողներից, ռազմա-բեզպեհական համիսկ առանձին կարուած և մի գրասլիճամբ գիմից նահանգապետ Ղազանճանին, բնդդատիս փէրումէնին և քաղաքագլուխ Նշհրաանանին՝ պահանջելով 24 ժամուայ ընթացքում կարել ամէն կապ երևանի հետ, ճանաչել Ազնջանդրապոլի խորհրդային կառավարութիւնը և չարունակել իրենց պաշտօնավարութիւնը: Նման կարգադրութիւն հասաւ և Մուսայէլճանից ու Մելքոնեանից: Ըմբռնողների կողմն անցան և բերդի զօրքերի մի մասը և մասնաւոր ու յոյն բնակչութիւնը: Երկու օր քաղաքը մնաց խռովարարների ձեռքը:

Կարսից չարժումը փոխադրուեց Սարըղամիշ ու Կաղզուան: Դրանից եկած բոլշևիկների ագդացութեան տակ Սարըղամիշի զօրքի փոքր մասը կազմեց յեղափոխական կոմիտէ և փորձեց ձեռքը առնել իշխանութիւնը: Զինուորների մէջ կարգապահութիւնը խանգարուեց: Յեղափոխական կոմիտէն փորձեր արաւ յարաբերութեան մէջ մտնելու և հեղինակութեան սահմանի վրայ գտնուող Քիւրդ գինուորների հետ:

Աւելի աղմկայոյզ եղան դէպքերը Նոր-Բայազետում: Մայիս 13-ին, բոլշևիկների գրգռումով Բասար-Գեչարում կանգնած Համազասպի գնդի կամաւորների մի մասը ըմբոստացաւ և դիրքերը լքելով՝ գնաց Ղարանլուխ, որ չորեքի գինուորական կենտրոնն էր: Այստեղ խռովարարների միացան տեղի գինուորները: Ըմբոստացած զօրքի գլուխը անցաւ ուսուցիչ Սարուխանեանը, որը զբաղուել ճաւերով զրպեց ամբոխին տապալելու կառավարութիւնը: Զինուորները ձերբակալելով զօրքերի հրամանատար զօր.Սիլիկեանին և ամբողջ սպայութիւնը՝ աղմուկով չարժւեցին դէպի Նոր-Բայազետ և փոքրիկ ընդհարումից յետոյ գրաւեցին մայիս 17-ին:

Այսպիսով, գրեթէ միաժամանակ և միևնոյն ձևով, Հայաստանի զանազան կողմերում բռնկուեցին ապստամբութիւններ: Ամէն տեղ ապստամբութիւնը կրում էր գինուորական բնաւորութիւն: Տեղ-տեղ միայն միացան և բանւորները: Գարգ էր, որ չարժումը կազմակերպած էր նախօրօք. տեսական աչքառութիւնը էր քափառ բռնակում և բանւորութեան մէջ: Շարժման գեկավարները յոյս ունէին, որ կարճ բանակը կը հասնի իրենց օգնութեան: Ապստամբները բոլոր տեղերում միևնոյն նշանախօսքերն էին գործածում. — Ռուսաստանի կարմիր բանակը գալիս է ժողովրդին ազատելու. զգուշանալու է ինքդ. եղբայրական Ռուսաստանը հաց է ուղարկում սովահար Հայաստանին. արդէն Բաքուից դէպի Հայաստան են չարժւել ալիւրով և նաւթով բեռնած գնացքները և այլն: Շատ դիւրաւ խոստումները, և բոլշևիկները լաւ էին հաշւել ամբոխային հոգեբանութիւնը: Սակայն, դէպքերը ստացան բոլորովին ուրիշ ընթացք:

Հայաստանի բոլոր կողմերից հասնող հետագիրները խռովութիւնների և ապստամբութիւնների մասին մի պահ լիակատար երևակի զևկավար չրլանները: Ակներև էր, որ կառավարական մեքենան պատրաստ չէր

բռնված հրդեհը մարելու։ Ճիչտ է, ապր. 3-ին կատարւել էր նախաբաւթեան մասնակի լրացում. կառավարութեան մէջ մտցւել էին Ա.Ջամալեանը, Ռ. Տէր-Մինասեանը, Ս. Վրացեանը, որով Հ. Ց. Դ. Բիւրօի անդամների մեծ մասը դառնում էին նախաբար, բայց կառավարելու եղանակը՝ խորհրդարանական դանդաղաշարժ մեքենայով՝ չէր համապատասխանում վայրկեանի պահանջին։ Անհրաժեշտ էր արագաշարժ ու վճռական իշխանութիւն։ Հարկաւոր էին կարուկ միջոցներ։ Այդ կարող էր տալ միայն Հ. Ց. Դաշնակցութիւնը։

Մայիս 5-ին գումարւեց Ժողովրդարանի արտակարգ նիստը, որը ընդունեց Ա. Խատիսեանի նախարարութեան հրաժարականը և նշանակեց նոր կառավարութիւն. Հ. Ց. Դաշնակցութեան Բիւրօն իր ամբողջ կազմով անցաւ իշխանութեան ղլուխը*)։ Փաստօրէն յայտարարւում էր Դաշնակցութեան դիկտատուրա։ Ժողովրդապանը մի ամսով դադարեց։

Նոր կառավարութիւնը անմիջապէս հայրենիքը յայտարարեց վտանգի մէջ և ժողովրդին ուղղեց հետեւեալ կոչը.

Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիներին.

Քաղաքացինե՛ր.

Հերոսական պայքարով և անօրինակ զոհողութեամբ հայ աչխատաւոր ժողովուրդը տիրացել է անկախութեան և ազատութեան և մեզ յանձնել բռնաւորների կամքով դարեր շարունակ իրարից բաժանւած հայրենիքի երկու հատւածները՝ հիմք է դրել պետական յառաջդէմ շինարարութեան։ Հայաստանի Ժողովրդապետի և կառավարութեան ամբողջ մտահոգութիւնն է եղել ապահովել աչխատաւոր ժողովրդի ֆիզիքական գոյութիւնը ու տնտեսական անարգել զարգացումը և անսասան պահել հանրապետական դեմոկրատիկ իրաւակարգը։

Քաղաքացինե՛ր, այսօր, Հայաստանի ժողովրդի այս բախտորոշ վայրկեանին, նորից ամպեր են կուտակւում մեր երկրի ղլխին։ Մահւան ճիրանների պայքարող տաճիկ փաչաները մի կողմից և բոլչևիզմի կարմիր պատմուճանը հագած ազրբէյճանեան խանները միւս կողմից՝ նորից սպառնում են Հայաստանի անկախութեան և ազատութեան։ Դիտակցաբար կամ անգիտակցօրէն նրանց օգտին են գործում և մի չարք տարրեր երկրի ներսում, որոնք աչխատում են օգտագործել պարենաւորման ճգնաժամն ու ժողովրդի յոգնածութիւնը, որպէսզի առաջ բերեն անկարգութիւններ և իրենց նեղ եսական տենչերին յագուրդ տան։

Եւ այն ժամանակ, երբ Ազրբէյճանի զօրքերն ու հրոսախմբերը շարունակում են արհւհեղութիւնը ղարաբաղում և Գանձակում, այն ժամանակ, երբ տաճկի ասկեարները շարժումներ են անում Շարուրի և Նախիջևանի

*) Վարչապետ է տրւ. գործ. նախարար Հ. Օհանջանեան, նիրհի և զինուորական՝ Ռ. Տէր-Մինասեան, էյևմտական՝ Ա. Գիւլխանդանեան, հասարդակութեան՝ Ա. Ջամալեան, գիւղատնտեսութեան, պետական գոյքերի և աչխատանքի՝ Ս.Վրացեան, խնամատարութեան՝ Ս. Արտաւտեան, հանրային կրթութեան և արւեստի՝ Գ. Ղազարեան։



Հ. ՊՇԻՆՅԱՆՑ



Ա. ՏԵՓԱՆՅԱՆՑԱՆՑ



Ֆ. ԱԶԱՐԻԱՆ



Ա. ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆՑ

չբնաններում և հրդեհում հայ գիւղերը, գանազան անպատասխանատու խմբակներ վերջ չեն տալիս իրենց գրգռիչ ընթացքին և կամենում են պատակոտած առաջ բերել երկրի մէջ, առանց հաշուի առնելու, որ ամէն մի խլրտում առաջ կը բերէ անխնայելի ու պարենաւորման սուր տագնապ և կը զրկէ ժողովուրդը ապրուստի միջոցներից:

Պաղաքաղենք՛ր, Հայաստանը կարիք ունի հանգստի և համերաշխութեան. ո՛չ մի յուզում, ո՛չ մի խլրտում—ամէն ոք պէտք է գտնուի իր գործի և պաշտօնի գլխին: Զինուած պարլամենտից ստացած արտակարգ լիազօրութիւններով՝ կառավարութիւնը դիմում է ձեր քաղաքացիական դիտակցութեան և հրաւիրում ամենքիդ, հայ ժողովրդի զօրութեան այս ճգնաժամային վայրկեանին, համախմբուել կառավարութեան չուրջը, որի նպատակն է՝ Հայաստանի անկախութեան և ազատութեան պաշտպանութիւնն ու ներքին դեմոկրատիկ կարգերի ամրապնդումը: Այս նպատակներն իրագործելու համար կառավարութիւնը չի խնայի և ո՛չ մի ճիդ, և նա կը յաղթէ ձեզ հետ և ձեզ համար:

Նախարարապետ և արտաքին գործերի նախարար՝	*Հ. Օհանջանեան*
Ջօրական և ներքին գործերի նախարար՝	*Ռ. Տէր-Միհէսեան*
Դիւղատնտեսութեան և աչխատանքի նախարար՝	*Ս. Վրացեան*
Ֆինանսների և արդարադատութեան նախարար՝	*Ա. Փիլոսանդեան*
Հաղորդակցութեան նախարար՝	*Ա. Ջամալեան*
Հանրային կրթութեան և արուեստի նախարար՝	*Գ. Վազգէնեան*
Ինամատարութեան և վերաչինութեան նախարար՝	*Ս. Արարատեան*

Միևնոյն ժամանակ յայտարարուեց բոլոր դաչնակցականների ընդհանուր զօրաշարժ: Ամէն կողմ ուղարկուեցին դաչնակցական յայտնի գործիչներ լայն լիազօրութիւններով: Ամէն տեղ ակնհայտ կազմուել կամաւորական դնդեր: Ալեքսանդրապոլը վերագրաւելու համար կազմուեց առանձին մի զօրամաս, որի գլուխ դրուեց ժողովրդական խմբապետ Սեպուհը: Ալագուքամբը շաբաթան մէկ դրուեցին և կանոնաւոր զօրամասերը: Հիմնուեց արտակարգ դատարան, և, առհասարակ, երկիրը դրուեց արտակարգ վիճակի մէջ: Կառավարութիւնը յայտնաբերեց բացառիկ եռանդ և կարճ ժամանակում ստեղծեց հասարակական բարձր տրամադրութիւն:

Հասարակական կարծիքը ամբողջապէս վաւերացնում էր կառավարական քայլերը: Քաղաքական կուսակցութիւնները, պետական և տեղավարական հիմնարկութիւնները, հանրային կազմակերպութիւնները ու անհատ քաղաքացիները իրենց դնում էին կառավարութեան տրամադրութեան տակ: Նմանը չեղած ոգևորութիւն ու եռուզեռ էր տիրում մայրաքաղաքում ու գաւառներում: Հայ սոցիալ-դեմոկրատները Հայաստանի բանւորներին, գիւղացիներին և քաղաքացիներին ուղղած մայիս 14-ի կոչը հետևեալ մեծ էր արտայայտում այն օրերի հասարակական տրամադրութիւնը:

Պատահից ան, ինչ ամենից քիչ սպասելի էր և ամենից չատ դառապատելի:

Բոզուլ քաղաքական կոմեդիան վերածւեց Ալեքսանդրապոլի ողբերգութեան. իթլամական խարտեսիկ կոմունիզմից նետւեց տարիամօրքե հայկական բերդը, հայութեան որբանը:

Մի խումբ ատրահոգի բախտախնդիրներ յանգգնեցին բարձրացնել քաղաքացիական կուռի աբխնաշաղախ գլուխը, ապատամբել հայ ժողովրդի ինքնտրչուած կամքի դէմ և ճնշել հայ դեմոկրատիայի ներքին մի ուրոյն ճակատը:

Դաշնակցած բոլշևիզմի ու պահնախաձիգմը ծածկ գործեցին, որովհետև նրանց հոգևվաճառ ագենտներին յաջողուել էր անցամ ծնատատ երկիրը, աբխնաքաղաք ժողովուրդը, որքան ու գաղթականների տխուր հայրենիքը Մոսկուայի և Էջդրումի քաղաքագէտների դիւային ծրագրներին ենթարկելու փոքմէր անել:

Բանւորնե՛ր, ընկերնե՛ր և քաղաքացինե՛ր:

Ջրահապատ դնացքի մէջ պատսպարուած մի խումբ անորակելի ոճրագործներ՝ պարգևով ֆՈրհրդային Ռուսաստանին դբօսակը՝ ամենամեծ դաւը նիւթեցին հայ ժողովրդի ոչմ այն վայրկեանին, երբ նրա ֆիզիքական դոյութիւնը մահացու չափ վտանգուած է ողջ չրջապատից և երբ նրա քաղաքական բախտը որոշելու վերջին օրերն ենք ապրում: Հայ դաւաճանները իրենց խելագար արարքով օգնում են միայն արտաքին թշնամիներին— Քէ՛ Հայաստանը օդակող Քիւրք–Թաթարական սպառազէն բանակներին, և Քէ՛ Գոլսի քաղաքագէտներին:

Բանւորնե՛ր, ընկերնե՛ր և քաղաքացինե՛ր:

Ամէն մէկիդ սրբազան պարտականութիւնն է այս ծանր օրերին մեր ուժի ու եռանդի, չնորհքի և ընդունակութեան մաքսիմումը նէրքաքերել վտանգուած Հայրենիքի պաշտպանութեան գործին: Բոլոր նրանք, որոնց մէջ առկայծում է պատասխանատուութեան վառ զգացմունքը մի բոլոն դժբախտ ժողովրդի գոյութեան և նրա գերադանցօրէն արագր դատի համար, պէ՛տք է ոտքի նլնեն, որպէս ծառացած լմրտատութիւն, և ոչնակցեն Հայաստանի կառավարութեանը՝ բնի մէկ նեղդնուլ համար այն հայրենասաց ոճրագործներին ապատամբութիւնը, որոնք փորձում են փորփորել մեր դեմոկրատական իրաւակարգի հիմքերը և մոցնել քաղաքական–տնտեսական արշէն դատապարտած վարչաձևը:

Թո՛ղ կորչեն պետական ոճրագործները և բոլոր հակապետական տարրերը:

Կեցցէ՛ սոցիալիզմը և դեմոկրատիզմը Հայաստանում:

Հայաստանի Սոց.–Դեմ. Բանւ. Կուսակցութեան Երևանի Կոմիտէն:

Ժողովրդին յորդոր ուղղեց և Ամենայն Հայոց կաթուղիկոսը.

«Ընդա, որոնք վտանգ չեն տեսնում արևելքից և արևմուտքից, նոքա, որոնք չտեսնող են ձևանում, որ մեր տան մէջ մեր դէմ դաւեր են լարում՝ պայմեցնելու անկախ Հայաստանի դաղափարը, նոքա, որոնք չեն տեսնում Հայաստինի ծրագիրների քայլ առ քայլ և հետևողական իրագործումը, զո՛ռ են, Քէ ինչ պատասխանատուութիւն է դանդրանում նոցա հանդէպ պատմութեան առաջ: Այս րոպէիս, երբ ամենքիս պարտականութիւնն է համախմբուել ո՛չ միայն հայրենիքի պահպանութեան և վերաչինութեան գործի չուրջը, այլ, նամանաւանդ, հայ ժողովրդի ֆիզիքական գոյութիւնը պահպանելու դժուարին աչխատանքի չուրջը, ցաւալի է տեսնել նեղքին երկպառակութիւններ:

Մենք, ինչպես և մեր երջանկայիչատակ նախնիքները, որ աշխատանք ենք թափել տանեկան դատի համար լաւ օրերի յոյսի ակնկալութեամբ, չենք կարող անտարբեր մնալ այս նեղ րոպէներին, և երբ վտանգած ենք

ամենամեծ հայրենիքի միութեան գործը, բայց, նամանաւանդ, հայ ազգի ֆիզիքական գոյութեան հնձամամային գործը, իբր ընդհանրական հայրապետ, մեր սրբազան պարտքն ենք համարում այս ծանր, կասենք օրհասական րոպէներին հայրական խրատով դիմել բոլորին և զգաստութեան կոչ անել — հայ ժողովուրդ, համախմբի՛ր քո հայրենի հանրապետութեան պահպանութեան գործի չուրջը. դա է քո հայրենիքի փրկութեան միակ ճանապարհը.. Վտանգը և խիստ ծանր վտանգը քո դռանն է, հայ ժողովուրդ, գոյլ եղիր և պատմութեան առաջ ծանր պատասխանատուութեան բեռի տակ մի՛ ընկնիր»:

Նոյնքան վճռական են և Անկուսակցականների Միութեան, Հայ Ժողովրդական Կուսակցութեան և Հայ Ռամկավար Կուսակցութեան ու Հայաստանի Հորդրդի կոչերը — անվերապահ պատասխանատուութեան բոլոր ներկայացուցիչներին՝ սկսած ապստամբութեան և ներքին հրաւէր աշակցելու կառավարութեան՝ ճնշելու համար այդ ապստամբութիւնը: Անկուսակցականների Միութիւնը բոլոր իր անդամներին է հղում տակնուքնքի՝ կաշառած թրքական դրամագլխի, «հայրենիքի գաղտնի ժխտող չարագործներ», ագգի մատնիչներ և դաւաճաններ: «Մեզ՝ անկուսակցականներիս համար ո՛չ մի կասկած չկայ և կարող էլ չի լինել, որ Մելքոնեանները, Նուրիջանեանները, Մուսայէլեանները և նրանց ընկերները հայ ագգի դաւաճաններ են»: «Անկուսակցականների միութիւնը իր լիովին վստահութիւնն է յայտնում կառավարութեան և հաւատում է, որ վերջինս կանգ չի առնելու վճռական և կտրուկ միջոցներէ առաջ, որպէսզի ապագայում անհնար դարձնէ մեր մեծ ու փոքր վտանգների չար դաւերը»:

Ուշագրաւ էր ռամկավարների կոչը. «Մեր աւերակ և քանդուած հայրենիքի մէջ, ասած էր այնտեղ, հայ ժողովուրդը բնակիչով, մեզ կոտորող, մեր հայրենեաց լեռ ու ձոր, գետ ու վտակը հայ արիւնով ներկող ԻՔՔՔհետ կուսակցութիւնը, որ Նուբէ ու Խալիլ փաշաներու մեղսագով փոխագրած էր Ազրբէյճան, գառան ժողովը վրան առած՝ մի օր, յանկարծ, ետ դարձ մէջ յայտարարեց սովետական իշխանութիւնն և առաջին օրն իսկ իր նշանաւոր ուշիմատուութեամբ պահանջից հայկական հանրապետութենէն երեք օրէն յանձնել Ղարաբաղն ու Զանգեզուրը և իր գօրախմբերն արդէն շարժման մէջ դրաւ Հայաստանի վրայէն երբեմ մանալու. Մուսաֆա Քէմալ փաշայի հետ, որ մինչև այժմ կը չարունակէ ջարդել տասնեակ հազարաւոր հայեր Կիլիկիոյ մէջ, հակառակ մինչև իսկ ֆրանսական բանակի ցոյց ուած պաշտպանութեան:

Ներկայ և երկու այլերով կայըը միայն կարդ էր չտեսնել այս կեղծով հայկական հանրապետութեան ընդհանրապէս և Քիւրքօհայաստանին մասնաւորապէս սպառնացող նոր վտանգը. և, սակայն, գտնուեցան հայ անուն կրող մարդեր և հայ իրականութեան մէջ գործող, բայց հայ ոգիէն ու զգացումներուն խորթ խմբակներ, որոնք փոխանակ Հայաստանի տահմանները պաշտպանելու այդ վտանգին դէմ, կոպտակից յայտարարեցին գիրենք այդ հայասպան չարժման և Ազերհանգրպազրի ու Կարսի մէջ գիմելին եղբայրասպան կռիւ:

Ագդ խելագարները ո՛չ միայն չմտածեցին, որ այդ կերպով վերջին անթուժելի հարուածը կուտան լուծման օրերու մէջ գտնուող հայկական հարցին, այլ մինչև անգամ հոգ չըրին, որ երկրի սահմանները կը բանան և կը

հրաւիրեն տաճիկ–ազրբէյճանեան գառնագոլատ գայլերը, որպէսզի մնացեալ հայութեան դիակներու վրայէն ևրթան ու միանան մեր դարաւոր թշնամիին, ինվէրի ու Թալէաթի հարազատ յօրդոր Մուսթաֆա Քէմալին:

Տարակոյս չկայ, որ ամէն հայ մարդ, որ իր երակներու մէջ հայ արիւն կը կրէ և իր գլխուն մէջ փոքր ինչ խելք ունի, կը դատապարտէ այդպիսի խելառար չարժումը, և՛ առաւել քիւրթահայերս, որ անոր անմիջական հետևանքները կը կրենք: Այդ չարժումն ինչ տեսակ չարժառիթներ ալ ունեցած լինի, չի կրնար արդարանալ, և մենք մանաւորապէս պէտք է ծառանանք անոր դէմ և մեր բոլոր ուժերը ի սպաս դնենք կառավարութեանս՝ իր բնին մէջ խեղդելու գայն և չեղեցնելու իր ոճրապարտ նպատակէն:

Հայ Ռամկավար կուսակցութիւնը, մանաւանդ, որ տոգորւած է եղած մեչտ հայ ազգի կրած տառապանքներով, որ կնցած է այն ուղիին վրա, որ նախորդ բազմահազար նահատակներն իրենց արիւնով գծած են նորա առաջ, ամենէն աւելի իրաւունք ունի գայրոյթով մերժելու այդ հայրենադաւ ոճիրը, դատապարտելու անոր հեղինակները՝ միաժամանակ իր ուժերը տրամադրելով հայրենիքին սպառնացող նեռկայ վտանգին հանդէպ:

Բնա՛ւ չենք կասկածեր, որ այդպէս կը մտածեն նաև բոլոր մեր ընկերները և բոլոր անոնք, որ հայ անուն և հայ զգացում կը կրեն:

Կորչի՛ եղբայրադաւ և հայրենադաւ ոճիրը:

Կեցցէ՛ հայ ոգին:

Կեցցէ՛ Մխաջեալ և Անկախ Հայաստանը»:

Հայ ժողովրդական կուսակցութիւնն ևս, որ մինչև այդ չատ բուռն կերպով քննադատում էր կառավարութեան գործերը, մայիս 6ին մի նամակ ուղղեց նախարարապետին, որի մէջ յայտնում էր. թէ՝ «Հայ ժողովրդական կուսակցութեան կենտր. կոմիտէն միաձայն որոշեց հայ ժողովրդի ֆիզիքական գոյութեան և ազատութեան սպառնացող խոշոր վտանգի հանդէպ ցոյց տալ Հայաստանի կառավարութեան եռանդուն աջակցութիւն՝ պաշտպանելու իրաւակարգը երկրում և պաչտպանելու Մխաջեալ Հայաստանի անկախութիւնը ամէն տեսակ ոտնձգութիւններից»:

Այս ինքնարերաբար յայտարարութիւնները, ինչպէս նաև Հայաստանի բոլոր կողմերից տեղացող հակաբոլշևիկի հեռագիրները ցոյց էին տալիս, որ ժողովուրդն ու կառավարութիւնը ապրում ու զգում են միևնոյն ժամ: Եւ կառավարութիւնը՝ չնչաւոր երկրի բացարձակ վտահութեան վրա, անցաւ վճռական գործի:

Ջաղաքացիական կուիւ ու արիւնհեղութիւնից խուսափելու նպատակով՝ կառավարութիւնը փորձեց խաղաղ միջոցով կարգադրել խնդիրը: Վարչապետը մի հեռագիր ուղղեց Մուսաչլեանին և բացատրելով երկրի ծանր դրութիւնը ու ներքին ընդհարումներից ծագելիք աղէտը՝ առաջարկեց վերջ տալ ըմբոստութեան՝ խստանալով միաժամանակ, որ յանցաւորները կարժանանան ներման: Ռազմա–Յեղափոխական կոմիտէն, ի պատասխան այս դիմումի, ուղղեց մի հայհոյալից հեռագիր, որի մէջ ասում էր, թէ ինքն իրեն Հայաստանի կառավարութիւն յորջորջող մարմինը աւազակների և մարդասպանների մի խումբ է և որ Հայաստանի օրինաւոր կառավարու–



Ս. ԱՐԻՍՏԱԿԵՍԵԱՆ



Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ



ՍՈՒՐԲԻՆ ՄԱՂԱԽԻԱՆ

քիւնը Ալէքսանդրապոլի Ռազմա-Յեղափոխական կոմիտէն է, որին արդէն ճանաչել է ամբողջ երկիրը և որը պահանջում է երևանի կառավարութիւնից էլ անյապաղ ճանաչել իր իշխանութիւնը՝ սպառնալով, հակառակ պարագային, ընդդիմացողներին պատժել յեղափոխական ժամանակի օրէնքներով:

Կառավարութիւնը տեսնելով, որ բոլոր միւսներն անցան սպարդիւն, ապաստամբների դէմ չարժեց զինւած ուժեր: Կանոնաւոր զօրամասերին միացան ամէն կողմից հասնող կամաւորական խմբեր: Մայիս 13-ի լուսաբացին Ախի և Ալին կայարանների միջև, Մուսայէլեանի գլխաւորած գնացքը յարձակւեց կառավարական զօրքերի վրայ: Տեղի ունեցաւ տաք կռիւ, որի ընթացքում ապստամբներից վիրաւորւեց 6 հոգի, որոնց մէջ և Մուսայէլեանի օգնական սպայ Եւանդուլեանը: Զրահապատը չդիմացաւ և փախուստի դիմեց՝ ճանապարհի կամուրջները պայթեցնելու փորձեր անելով:

Այս անյաջող կռւից յետոյ Ռազմա-Յեղափոխական կոմիտէի ներքին գործոց կոմիսար Ա. Մելքոնեանը ուղիղ հեռագրաթելով դիմեց Երևան, և հետևեալ բնորոշ խօսակցութիւնը տեղի ունեցաւ նրա և ներքին գործոց նախարարի օգնական Ս. Թորոսեանի միջև.

Ա. Մելիոնեան. — Ես՝ բժ. Արտաշէս Մելքոնեանս առաջարկում եմ կարգադրել դադարեցնել ռազմական գործողութիւնները, որպէսզի կողմերը կարողանան խաղաղ հանդամանքներում համաձայնութեան գալ մի քանի ընդհանուր չատ կարևոր հարցերում:

Ս. Թորոսեան. — Մենք ձեզ կողմ չենք ճանաչում, այլ մի խումբ աւանտիւրիստներ, որոնք դաւաճանելով հայ ժողովրդին՝ խառնակութիւններ են սերմանում: Մենք գիտենք, որ ձեզ հետ չէ նաև Ալէքսանդրապոլի զօրքը: Ձեզ՝ մի խումբ բախտախնդիրներից հետ՝ վարելու ենք իրրև խռովարարների: Արդէն գիտենք, որ դուք կարգելել էք ու ձերոնք ընկած՝ խաղաղութեան մասին էք խօսում: Դուք, պարոն Մելքոնեան, իրրև պարլամենտի անդամ կրկնակի դաւաճանութիւն էք գործում և արժանի հատուցումը կը ստանաք: Ձեզ համար փրկութեան մի միջոց կայ — անմիջապէս լինել Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան և նրա զօութեան դէմքը:

Ա. Մելիոնեան. — Ես խօսում եմ իրրև մինորդ*) ձեր և Ալէքսանդրապոլի միջև, ուր յայտարարւած է սոլետական իշխանութիւն և որի կողմն են կարսի և Սարդարապատի զօրքերը: Դիւրացիական զանգւածները բռնած են քաղաքացիական կռւով, և ես ոյժ չունեմ, անգօր եմ անխուսափելի արիւնհեղութիւնների առաջն առնելու: Որպէսզի ընդհանուր յեղուդամբնեք և խուսափենք աւելորդ արիւնհեղութիւնից, անհրաժեշտ է, որ դադարեցւեն ռազմական գործողութիւնները և երկու կողմից ոյժ գործադրենք ելք գտնելու համար:

Ս. Թորոսեան. — Կարսից և Սարդարապատից մի չարք հետագիրներ ունենք. այնտեղ ամբողջ զօրքը Հայաստանի Հանրապետութեան կառավա-

*) Ա. Մելիոնեանը սուտ էր խօսում. «Ինչնկոյզ, գրում է Ե. Ամիրխանեանը իր «Մայիսեան Ապստամբութիւնը Հայաստանում» գրքում (109 էջ), Ալէքսանդրապոլ ուղարկեց իր երկու լիազոր անդամներին՝ ընկ.ընկ. Դ. Տէր-Մկրտչեանին և Ա. Մելիոնեանին՝ նոքա քննելու իրերի դրութիւնը տեղում և տանկցիա տալու իշխանութեան գրաւմանը, եթէ գա անհրաժեշտ լինէր»:

բութեան կողմն է և այդպէս էլ կը մնայ, որովհետև փոքրամասն հայ ժողովուրդը աւանդութիւնների յեսևից չի գնայ: Ինչ վերաբերում է մեր այն ասին, որ գիւղացիական դահլիճները բռնած են քաղաքացիական կուսով, պիտի ասեմ, որ հայ գիւղացին դատարկ բաներով գրաղուղ չէ: Մեր կողմից ոչ ոք մեզ չի լիազօրել միմիոդի դեր ստանձնելու, որովհետև մենք ո՛չ բանակցութիւններ ենք վարում բախտախնդիր մարդկանց հետ և ո՛չ էլ մեզ նման միկոյոգի կարիք ունինք. մեր իսկական ներկայացուցիչներին չուտով կը տեսնէք Ալէքսանդրապոլում: Եթէ հայ աբիւն է քաշւում, մենք գիտենք, թէ ում յանցանքի պատճառով է այդ»:

Եւ, յիրաւի, ապստամբների վիճակը լաւ չէր Ալէքսանդրապոլում: Շաբաթման սկզբին նրանց էր յարել և զորքի մի մասը: Սպայութիւնը՝ զօրքի ամբողջութիւնը վրդովելու և ներքին խռովարի պատճառ չտալու հաշւով՝ նոյնիսկ ճանաչել էր ռազմա–յեղափոխական կոմիտէի իշխանութիւնը: Բանակն իր կողմը գրաւելուց յետոյ՝ ռազմա–յեղափոխական կոմիտէն իր իշխանութիւնը տարածել էր և քաղաքի վրա, ուր հին պաշտօնեութիւնը յաջողացրել էր հեռացած և ներքին գործոց կոմիսար Մելքոնեանի կողմից նշանակուած էին նոր կոմիսարներ. անանաւորյ Գրիբոյեկի՝ ինժեներա–պաշտօնեան չտաքի պետ. Սիկորսկի՝ քնդանօթաձիգների կոմիսար. Ամատունի (հնչակեան)՝ քաղաքային միլիցիայի պետ. Լևոն Սարգսեան՝ պարենաւորման կոմիսար. կօշկերնկի՝ կապաշի գոտի պետ և այլն: Այդ կոմիսարները փաստօրէն ո՛չ մի ազդեցութեան չունէին, որովհետև քաղաքի ռազմաքաղաքական հէնց սկզբի օրերից քշնամական դիրք բռնեց դէպի ըմբոստները: Բազմաթիւ ժողովների մէջ քաղաքացիները դատապարտեցին խռովարարների ընթացքը և նոյնիսկ փորձեր արին գրաւելու կայարանը, բայց զրահատաւտի քնդանօթները արգելք եղան: Գաղաքացիների այս վերաբերմունքը անյարդարձաւ և զօրքի տրամադրութեան վրա: Հետզհետէ ամենքը տեսան, որ ապստամբները, իրօք, մի խումբ բախտախնդիրներ են, որոնց ոչնչն ու իշխանութիւնը զրահատաւտի սահմաններից դուրս չի տարածւում:

Ա. Մելքոնեանի փորձի վիժումից յետոյ ապստամբները Լ. Սարգսեանից ու Հ. Զոլախանից կազմած յատուկ պատիւրակութիւն ուղարկեցին կառավարական զօրամասի հրամանատարի մօտ: Պատւիրակութիւնը խնդրեց յապաղաձգումը գործադրել և իբրեն արտօնութիւն տալ գնալու Երևան՝ կառավարութեան հետ բանակցելու համար: Զօրամասի պետը, կառավարութեան հրահանգն ստանալուց յետոյ, յայտնեց, որ ինքը լիազօրութիւն ունի հարցը տեղն ու տեղը վճռելու և յապաղաձգումը չի կանխենթէ, սակայն, պատրաստ է հարցը առանց կուի լուծելու՝ պայմանով, որ ամենաուշը մինչև մայիսի 14–ի առաւօտեան ժամը 6 ռազմա–յեղափոխական կոմիտէն անձնատուր լինի և զրահապատ գնացքը յանձնէ անմնաս:

Մայիս 13–ի դիւերը ապստամբները Քողին զրահագնացքը և փախան՝ ամենք դէպի Ազրաբա՝ Թուրքերի մօտ, ամենք պահելով քաղաքամէ: Մայիս 14–ի առաւօտեան հանրապետական զօրքերը, առանց կուի, մտան քաղաք և խանդավառ ընդունելութիւնն զուան ազգաբնակութեան կողմից: «Վարդան

Ջօթավաթ-ի վրա բարձրացաւ հանրապետական դրօշը։ Բոլոր զօրամասերը միացան կառավարական զօրքերին։ Մ՛չ մի անկարգութիւն չպատահեց. միայն աստիճանի մի քանի հարւանդներով, փողոցում, սպանուց զօրավար Խաչատրեանը, որ անցել էր բոլշևիկների կողմը։ Նոյն օրն և ևթ ձերբակալուեցին փախստական կոմիսարներ՝ Մուսայէլեանը, Մելքոնեանը և ուրիշներ։ Ամէս Նազարիանեանին յօղուլեց ճողոպրել։ Ձերբակալուածներին յանձնեցին արտակարգ դատարանին։

Աւելի կարճ տևեց կարսի հոգեմտ-յեղափոխական կոմիտէի կեանքը։ Մայիս 10-ին Ռուսրդարանի անդամ Ն. Ադրալեանը զօրքի և հասարակութեան խուռն բազմութեան առաջ մի կուռ դասախօսութիւն կարդաց հեղինակ ժողովի մասին», որ հաւաքին տպաւորութիւն թողից ունկնդիրների վրա։ Յաջորդ օրը, ժողովուրդն ու զօրքը չրջապատեցին ատամ-գարաժը, ուր ամրացել էին բոլշևիկները, և պահանջեցին վերջ տալ ապստամբութեան։ Ապստամբները ապաստանեցին Ալէքսանդր Բ.-ի ամրոցը, որտեղից սկսեցին թնդանօթ պարպել քաղաքի վրա։ Մայիս 12-ին տեղի ունեցաւ հաշտութեան փոխութեան կոմիտէ», որ իր ձեռքն առաւ քաղաքի բոլշևիկեան իշխանութիւնը։ Հաշտութեան կոմիտէի ղեկավարութեամբ ժողովրդական բազմահազար բազմութիւնը «Մեր Հայրենիք» երգելով չարժուց դէպի ապստամբները, որոնք դիմադրելուին հրաժանային ու թնդանօթային կրակով։ Գազապատ ամբոխը խլեց բոլշևիկների զենքերն ու գինւած ինքնաշարը և առաւ մի չարք գերիներ։ Բոլշևիկները, որոնց թիւը մի քանի տասնեակից չէր անցնում, յամառ դիմադրութիւն ցոյց տուին՝ պահանջելով իրենց յանձնել քաղաքի և բերդի իշխանութիւնը։ Մայիս 13-ին, երբ Հայրենիքի Փրկութեան կոմիտէն պատրաստում էր վերջնական գրոհով գրաւել ամրութիւնը, պարզուց, որ ապստամբները գիշերը բեռնակիր ինքնաչարժով փախել են Ալէքսանդրապոլի ուղղութեամբ։ Իսկոյն հետապնդում կազմակերպուեց և Արդինա գիւղի կրպատցների մօտ տեղի ունեցաւ տաք կռիւ փախստականների և հետապնդողների միջև. բոլշևիկներից սպանուեցին 10 և ձերբակալուեցին 7 հոգի. միւսները կարողացան փախչել։ Ձերբակալուեցին նաև ռուս, Թուրք և յոյն ազգային խորհուրդների անդամները, որոնք իրենց միացնալ ժողովում որոշել էին և արձանագրութիւն կազմել բոլշևիկների հետ համագործակցելու մասին։ Ձերբակալուածները յանձնեցին արտակարգ դատարանին։

Ալէքսանդրապոլի և կարսի դէպքերը վճռական նշանակութիւն ունեցան և Սարդարապատի համար։ Երբ այնտեղի ապստամբները իմացան, որ կարսի չարժումը ճնշած է, փոքձեցին փախչել, բայց ձերբակալուեցին։ Ռազմարարների կողմը անցած գիւղերները «Մեր Հայրենիքը» երգելով գնացին և միացան կառավարական զօրքերին։ Ձերբակալուածները յանձնեցին արտակարգ դատարանին։

Նոյնը եղաւ վանանը և Նոր-Բայազէտի ըմբոստները։ Իշխանութիւնն իրենց ձեռքը առնելուց յետոյ՝ բոլշևիկները ակսեցին բռնութիւններ գործ

գնել հակառակ նկատած քաղաքացիների վերաբերմամբ, խանգեցին պետական գանձարանը, պահեստները և մասնաւոր քաղաքացիների բնակարանները: Ճգնաժրջման օրը քաղաքից հեռացած իշխանութիւնը, օգնական ուժեր ստանալով, մայիս 19-ին վերադարձաւ քաղաքը, և ազատ արձակեց բանտարկածներին: Կուի ժամանակ սպանուեցին 2 խոռվարարներ և վիրաւորուեցին 3: կառավարական զօրքերից սպանուեց 1 հոգի և վիրաւորուեց 2: Բռնուեց և պարագլուխ Սարուխանեանը, որը միւս ձերբակալուածների հետ յանձնուեց արտակարգ դատարանի:

Այսպիսով, երկու շաբաթուայ ընթացքում կառավարութիւնը ամբողջ երկրում վերջ տուեց ապստամբական շարժման: Հայաստանից փախած բոլշևիկները մեծ իրարանցում առաջ բերին Ադրբէյջանում. դիմումներ արին 11րդ բանակին, հեռագիրներ քաշեցին Մոսկուա՝ ջանալով ամենքին հաւատացնել, որ Հայաստանում կոմունիստների կոտորած է կատարւում և որ արդէն սպանած են հազարաւոր մարդիկ: Միաժամանակ, ադրբէյջանեան իշխանութեան օգնութեամբ Ղազախ չրջանում հաւաքուեցին հայ ու մահմետական փախստականներից խմբեր և պատրաստում էին յարձակուելու Հայաստանի վրա: Մայիս 21-ին, երբ ապստամբութիւնն արդէն ամէն տեղ համաքում էր ընկճուած, յանկարծ, Ղազախ կողմից, կարմիր զբօսկենտրով, առաջ շարժուեցին բոլշևիկեան ուժեր և առանց կուի մտան Իջևան: Եկողներին մեծացան և որոշ քանակութեամբ տեղացիներ: Զօրքը չդիմադրեց: Բոլշևիկները ձերբակալեցին ներքին գործոց նախարարի օգնական Սարգիս Մանասեանին, զօրքերի հրամանատար գօր. Բադդասարեանին, Իջևանի գաւառի ընդհանուր նահանգապետ Ն. Ջալէքեանին, Մ. Մարտիրոսեանին և ուրիշ պաշտօնեաներ ու սպաներ և աքսորեցին Բաքու: Ապա անցան Դիլիջան և առանց արգելքի հանդիպելու գրաւեցին քաղաքը: Սակայն, չուտով ժողովրդի հետ միասին, յարձակեցին Քէհամու վրա, որը խուճապով դիմեց փախուստի՝ Թողնելով սպանած իր պարագլուխ Ճաղորեանին: Այս աւերիչ կուսակցութիւնները բաց Թողին հետևեալ հաւաքական կոչը.

«Հայաստանի քաղաքացինե՛ր, Ալէքսանդրապոլի, Կարսի, Սարդարապատի, Նոր-Բայազետի խռովութիւններին հետևեց Դիլիջանի գաւառը: Ներքին ոճրագործ տարրերի պետական դաւաճանութեան յաջորդեց արտաքին ներօրինակ տարրերի անհանդուրժելի արշաւանքը դէպի մեր երկրի խորքերը:

Մեր հայրենիքի ներքին ու արտաքին քշնամիները միացած՝ դիւաբխիկ ծրագիրներ են որոճում Հայաստանի ազատութեան և անկախութեան դէմ: Հայ ժողովուրդը, որի ինքնորոշուած կամքի մարմնացումն է կազմում իր պետական անկախութիւնը, պիտի արթուն պահապանի նման փայփայի ու պաշտպանի իր այդքան Թանգ գնով նուաճած ազատութիւնն ու անկախութիւնը:

Թո՛ղ հայ քաջարի բանակը սուրբ ուխտի նրդումը տայ կազմ ու պատրաստ դիմադրութեան համար Հայաստանի անկախութիւնը բոլոր Թըշ-

Հ. Հ. ԲԱՆԱԿ



ՅՈՐ. Գ. ՂԱՐՊԱՆԵԱՆ
Հարիրդական փարթի Գլխաւ.



ՕՐ. ՄԵԼՔԻ-ՄԻՒՐԱՆԵԱՆ



Ա. ՇԱՀՆՈՒՐԵԱՆ
(Երեանի պարեկ.)



ՕԼԻՎԵՐ ԲԱԼԵԱՆԵԱՆ



ՆԻՐ. ՓԱՓԱՆ

Նամիների դէմ — ո՛վ, ո՛ր կողմից և ինչ անուն տակ ուզում են Թող լինեն նրանք։

Իսկ դու, Հա՛յ ժողովուրդ, մի սէրտ մի հոգի դարձած պէտք է քո ոյժն ու աշխատութիւնը չխնայես մեր քաջարի բանակին և մեր կառավարութեանը անչեղօրէն ազատ ու անկախ Հայաստանը մարմնացնելու գործում։

Կեցցէ՛ ազատ, անկախ և միացեալ Հայաստանը։

Կեցցէ՛ Հայաստանի դեմոկրատիկ հանրապետութիւնը։

Հայ ժողովրդ. կուսակց. Հայաստանի Կենտր. Կոմիտէ. Հայաստանի Սոց.–Դեմ. Բանւ. կուս. Երևանի Կոմիտէ. Հայ Ռամկավար կուսակցութեան Հայաստանի Հարիւրդ. Հայ Ազգ. Ընդհանրական Միութեան վարչութիւն։

Իշխան–Դիւլիջանի դէպքերը վերջին օղակն էին բոլշևիկների առաջ բերած ապստամբութիւնների չղթայի մէջ։

Ապստամբութեան հաւնէյարդարից յետոյ Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Նոր–Բայազէտում և Դիլիջանում կազմուեցին արտակարգ դատաւորներ, որոնց և յանձնուեց ձերբակալածների դատը։ Ընդհանուր առմամբ այս դատարաններըը գտնուեցին համբերատար ու զգոյշ և բացառիկ դէպքերում միայն հանեցին մահապատիժներ, որոնց ընդհանուր թիւը 10 չի անցնում։

Մայիսեան չարժումը վերջացաւ բոլշևիկների նախկինէն պարտութեամբ։ Այդ չարժումը Հայաստանի համար տուեց մի չարք ծանրակշիռ հետևանքներ, որոնք ահագին նշանակութիւն ունեցան յետագայ դէպքերի վրայ։ Եւ առաջին ու ամենից աւելի ճակատագրական հետևանքը պէտք է համարել հայկական բանակի բարոյալքումն ու քայքայումը։ Արդէն ըմբռնուելու դէպքերի պատմութիւնից էլ երևաց, որ չարժումը, ընդհանուր առմամբ, գիտուրական էր. բոլշևիկներին յաջողուել էր մուտք գործել զօրամասերի մէջ, իրենց կողմը քաշել գինուորների մի մասը և այսպէսով բաժանում ու քշտմութիւն մտցնել բանակի մէջ։ Գաղաքացիական կռիւների ընթացքին զօրքը կատ–կատը եղաւ. մի մասը դործօն աջակից էր բոլշևիկներին, մեսը՝ կուում էր նրանց դէմ. մի ահագին զանգուած էլ տատանում և էչդոթութիւն էր պահպանում։ Պետականութեան գաղափարը, որ առանց այն էլ ուժեղ չէր մեր նորաստեղծ ազգային բանակում, աւելի ևս քուլացաւ։

Բոլշևիկեան ապստամբութեան հաւչլյարդարը գուգադիպեց Մայիս 28–ին, անկախութեան տարեդարձին, որը տոնուեց արտակարգ հանդիսաւորութեամբ, ամբողջ Հայաստանում, բայց, մանաւանդ, Երևանում։

Քաղաքը գարդարուած էր առանձին չքեղութեամբ։ Ծորշրադրանքը, դիմացպիլի նոր չէնքը, քաղաքապետարանը, պետական հիմնարկութիւններն ու մասնաւոր տները քաղած էին ծառերի ոստեր ու ծաղիկներ, գորգերի ու գրօշակների մէջ։ Աբովեանի վրա կանգնած էր չքեղ յաղթական կամար։ Փողոցների ու չէնքերի գարդարանքը առանձնել էր ակոչ. Ա.

Թամանեանը իր օգնականներով: Կուսակցութիւնները բաց էին Քողել բոլ-
լևիկների պատասխանութիւնը դատափետող և Մխայեալ ու Անկախ Հայաս-
տանի անկախութիւնը խաղաղող Քառագլխեր:

Հայաստանի գանգատ կողմերից եկել էին բազմաթիւ պատգամաւո-
րութիւններ: Ժողովրդական կուսակցութեան կենտր. կոմիտէն Թիֆլիսից
Երևան էր ուղարկել Սամ. Յարութիւնեանին և Լէօնին՝ անկախութեան
հանդիսաւորութիւններին ներկայ գտնուելու համար: Մամանկացում էր և
Ամենայն Հայոց կաթուղիկոսը:

Աբհեսաակցական միութիւնների միութիւնը, դպրոցները, որքանոց-
ները, անհաշիւ բազմութիւն գիւղերից ու քաղաքից՝ վաղ առաւօտեանից
լեցրել էին փողոցները: Առաւօտեան հանրապետական մաղթանքից ու օրհ-
նանդէսից յետոյ տեղի ունեցաւ օրհասական երդումը. հետևակ չարքերը,
այրուձին, հրետանին՝ խլելով ներկաների ցնծագին ծափահարութիւնները:
Ապա անցան արհեստակցական միութիւնները իրենց դրօշակներով ու
նշաններով, բոյ–սկաուտները, աշակերտները, որբերը, գիւղացիական խմբ-
բերը: Մէջ ընդ մէջ չարժւում էին բեռնակիր ինքնաչարժներ դանազան
խորհրդանշաններով, Քրակորներ, գիւղական սայլեր, դուրգաններ, կեն-
դանի պատկերներ:

Մինչև ուշ գիշեր քաղաքը հրճւանքի մէջ էր: Երկոյեան՝ հրավառու-
թիւն: Ցերեկը գիմնազիայի նոր շէնքի ընդարձակ և ճաշակով զարդարած
սրահում տեղի ունեցաւ հրապարակային ժողով–համգէս, որին հրաւիրուած
էին օտար պետութեանց ներկայացուցիչները, կառավարութեան և խորհր-
դարանի անդամները, բարձր հրամանատարութիւնը, բազմաթիւ պատւիրա-
կութիւններ ու պետական–հասարակական գործիչներ: Երեկոյեան նոյն
սրահում կազմակերպուեց գրական–երաժշտական շքեղ երեկոյթ:

Փառահեղ հանդէսներ կատարուեցին և դասաւանդում: Ալէքսանդրապո-
լում, բազմաւազար ժողովուրդը, համբերութիւնները, կազմակերպուած
բանւորութիւնն ու գիւղացիութիւնը մեծ խանդավառութեամբ տօնեց ան-
կախութեան տարեդարձը: Քաղաքը ամբողջ գարդարուած էր եռագոյն
դրօշակներով, գորգերով, կանաչով ու պատշաճ նշանաբաններով: Հանդ
քաղաքը կայարանից, կտրելով քաղաքը, անցաւ կանգնեց քաղաքային
ինքնավարութեան առջև, ապա գիմից դէպի նահանգապետարանը, Հ.
Ց. Դաշնակցութեան ակումբը: Այստեղից չարժւեց կազաչի Գոստ, ուր
ազասում էր գինւորութիւնը: Այստեղ Գարեգին եպ–ը կատարեց հանդիսա-
ւոր մաղթանք, որից յետոյ տեղի ունեցան գօրահանդէս և բոյ–սկաուտական
խաղեր: Թափօրի ժամանակ ընդհանուր ուշադրութեան և խանգավառ
ծափերի առարկայ էր Մայր Հայաստանը խորհրդանշող ինքնաչարժը —
Հայաստանը ներկայացնող մի օրիորդ, սուրը ձեռքին կանգնած, կողքին՝
հրացանաւոր հայգուկ, մէկտեղ՝ կռանը ձեռքին մի զարբին՝ սալի առջև
դուրանը կոփելիս: Մայր Հայաստանի յետևից գնում էին գիւղացիներ՝
հերթ լուծ ցոյց դուրանը առջևից, հոռովելի երգով: Ապա հետևում էր

ջուխտականոցի սայլը՝ մանող ու գզող աչխատաւորուհիներով։ Երեկոյեան քաղաքը հրավառւած էր։ Ժողովրդի համար կազմակերպւած էին մրի դաստիօսութիւններ, շարժապատկերի ներկայացումներ, գրօսանք քաղաքային պարտէզում։

Նոյն խանդավառութիւնն ու հանդիսաւորութիւնը և վաղարշապատում։ Քաղաքը պճնազարդւած էր գոյնզգոյն։ Քաղաքի հրապարակում և ճեմարանի դրան առջև կանգնեցւած էին պատուոների կամարներ։ Երրկակայ գիւղերից ժողովուրդը խումբ-խումբ, դրօշակներով ու երգերով, լեցւել էր քաղաք։ Ջօրք, ժողովուրդ, բանւորներ, աչակերտներ, հիմնարկութեանց ներկայացուցիչներ խռնւում էին էջմիածնի բակում։ Հանդիսաւոր պատարագից ու հաերապետական մաղթանքից յետոյ եղան ողջոյններ ու ճառեր և կատարւեց գօրահանդէս։ Ճեռոյ քաղաքի զանազան մասերում տեղի ունեցան միխնգներ, չքերթ, ժողովրդական հանդկանիր ու հաչկերոյթ։ Երեկոյեան՝ հրավառութիւն։

Համաժողովրդական հանդկաններ կատարւեցին և կարսում, Նոր-Բայազետում, Դիլիջանում, Ղարանլուխում, Փարաքարում, Աբդահանում, Իգդիրում, Ջալալ-Օղլիում, Քեչիչքենդում — ամէն տեղ։ Երբե՛ք, մինչև այդ, Հայաստանի ժողովուրդը նման ուրախութիւն չէր յայտնաբերել, երբե՛ք «Մեր Հայրենիքը»-ը չէր հնչել այնպէս անկեղծ, լիաթոք ու խրոխտ։ Հայաստանի բոլոր ծայրերում, ամենքի բերանից լսւում էր —

Մեր Հայրենիք, ապա՛տ, ամնա՛խ,

Մեր թշնամուց ազատւած...

1920 ԹԻՒ ԱՄԱՌԸ

Բոլշեւիկեան չարժումը Ճնշելուց յետոյ, իրերի տրամաբանական թելադրանքով, կառավարութեան առջև նկաւ Քրքաքնակ վայրերի գրաւման հարցը: Մի չարք չրջաններ՝ Զանգիբասարում, Վեդիբասարում, Ջուլ, Կողբ և այլն — էլ չենք խօսում Շարուր–Նախիջեւանի մասին — մնում էին Հայաստանի իշխանութեան նկատմամբ ապստամբ վիճակում. ո՛չ միայն չէին ճանաչում նրան, այլ և անվերջ յարձակումներով, սպանութիւններով ու թալանով դժւարացնում էին Հայաստանի կազմակերպման և վերաշինութեան գործը: Շարուր–Նախիջեւանում իշխանութիւնը փաստօրէն անցել էր Աչդերբայի գինւորական գործակալ Խալիլ–բէյի ձեռքը: Սրա ազդեցութիւնը տարածւում էր և Վեդի բասարի ու Զանգի բասարի վրա, որոնք ամբացած էին ոչ միայն տեղական այլ և քիւրդ ակեաբներով: Զանգի բասարում փորած էին անառիկ դիրքեր: Իլխի–Ղորուղի գիւղում դրած էր Քեղամօք: Թագմադիտական կարևոր դիրքերը բռնած էին զօրամասերով ու գնդացքներով: Գլխաւոր կէտերը միացած էին իրար հետ հեռախօսով: Քիւրքիայից ստացում էր մեծ քանակութեամբ փամփուշտ ու ռազմամթերք: Զինւորական տեսակէտից, չատ լաւ կազմակերպած ու ամրացած էր և Բէյլիւք Վեդին: Այս բոլոր չրջանները միասին կազմում էին հարաւ–արևմտեան Ազրբէյջանը, ուր իշխանութիւնը խառն էր՝ քիւրք–ազրբէյջանեան:

Օգտւելով մայիսեան դէպքերից յետոյ ստեղծած ռազմական ու հոգեբանական նպաստաւոր դրութիւնից՝ կառավարութիւնը անցաւ գործի. յունիս 18–ին Զանգի բասարին ներկայացուց վերջնագիր՝ ճանաչելու հայաստանի իշխանութիւնը, զինաթափելու և հեռացնելու քիւրք–ազրբէյջանեան դործակալներին: Ջստանալով պատասխան՝ կառավարութիւնը հրամայեց Վաղարշապատի զօրամասին՝ դէնքի ուժով գրաւելու Զանգիբասարը: Եւ մի քանի օրում չրջանը գրաւեց:

Զօրամասի հրամանատար գնդ. Շահմազեանը այսպէս էր նկարագրում գինւորական գործողութիւնները.

«Ցունիս 19–ին Նորագիւղի զօրախումբը ճնշեց հակառակորդի դիրքերը Աղջա–Ղշլաղ–425 բարձունք–411 բարձունք ճակատի վրա և գրաւեց Հալի–Ջյլաղ գիւղը: Այսպիսով ողջ զանգիբասարեան դիրքերի բանալին թւում էր խոռվաթաղների ձեռքից, որով և Զանգիբասարի բախտը նախորոշւեց: Փաթաբարի զօրախումբը գրաւեց Գևոդիւմբրլը, Քէյալի և Արբաթ գիւղերը,



Ա. ՊՐՈՒԶՅԱՆ
Հեղափոխական գործիչ



Ս. ԱՐԱԼԵԶ-ՅՈՎՅԱՆ



Լ. ԱՐԵՐԱՆՅԱՆ
Հեղափոխական գործիչ-հետազոտող



Լ. ՀԱԼԱՖՈՎԱՅԱՆ
Պատմության մի[illegible] պրոֆ.



Ս. ՀԱԼԱԼՅԱՆ
Հեղափոխ. մի[illegible]



ԱՐՏ. ԱՏՈՎՅԱՆ
Հեղափոխ. մի[illegible]

Ղարխունի զօրամասը գրաւեց Թագա Ղարխուն գիւղը և ակտիւ գործողութիւններ վարեց Ջորան–Գեաբա և Շուլու–Մխմանդար գիւղերի դէմ։ Հակառակորդը մաքրեց երկաթուղագծից հիւսիս ընկած բոլոր գիւղերը, բացի Քաչափարուխ, Ղաքաղչլաղ, Շուլու–Մխմանդար և Ջորան–Գեաբա գիւղերից ու սկսեց փախչել դէպի հարաւ՝ երկաթուղագծի այն կողմը։ Ինձ յանձնուած զօրամասերին հրամայուեցի վերջնականապէս մաքրել խոսրովարսերին երկաթուղագծի հիւսիսային կողմը ընկած գիւղերից, իսկ յետոյ յարմարելել հարաւային գիւղերի վրայ։

Յունիս 20–ին մեր զօրամասերը չարունակեցին հետապնդել խուռվարարներին։ Յունիս 21–ի լուսաբացին, կարճ ու վճռական կուից յետոյ, գրաւեց Սաթաջլար գիւղը, որով և կատարուեց զօրամասին յանձնարարուած խնդիրը։ Սկսած յաղթութիւնն ընդլայնելով և եռանդուն կերպով հետապնդելով հակառակորդին՝ զօրաւիւնը կոտրելով թշնամու դիմադրութիւնը՝ գրաւեց Ռամազան Քէնդ գիւղը և ցրեց թաթար խուժանը։ Այսպիսով, Ջանգիբասարի չրջանը մխոգամայն մաքրուեց հանրապետական կառավարութեան անհնազանդ ազգաբնակութիւնից և վերջնականապէս միացաւ մեր առհասնեերին, չնայած որ Ջանգիբասարը երկու տարուայ ընթացքում կապակերպուեց տասնիւ սպանների և ենթասպաների ղեկավարութեամբ ու աչքի ընկնող գինուորական ոյժ էր ներկայացնում՝ ամենահամեստ հաչուով 4000–իդ ոչ պակաս տեղական մարտիկներ և 600—800 ասկեար, որ տեխնիկական տեսակէտից յաղող ամրացած էր, ուներ 3 Քնդանօթ, 8 գնդացիր և առատ փամփուչտ։*)

Հայկական զօրքերը գրաւեցին 1 Քնդանօթ, 2 գնդացիր, 40,000 փամփուչտ և առատ մթերք։

Ջանգիբասարի կռիւների ընթացքում սպանւածների մէջ էր և Ց. Քալաղեոնեիի սպայ որդին։

Ջանգիբասարի հետ միաժամանակ, յունիս 18–ին գինուորական զօրաժողովներ սկսուեցին և կարճ նահանգում՝ ամենահանգիստ գրաւման նպաստակով։ Հայկական զօրքերը զօր. Յովսէփեանի ընդհանուր ղեկավարութեան տակ և գնդ. Մելիմամեանի անմիջական հրամանատարութեամբ չարժեցին երեք ուղղութեամբ. ալ զօրամասը գնդ. Մազմանեանի գլխաւորութեամբ՝ Դորա Քիլիսէից, մէյլինը՝ գնդ. Շահբուդաղեանի հրամանատարութեամբ՝ Մերդենեկի մօտից և ալը՝ փոխ–գնդ. Նեստերովսկիի գլխաւորութեամբ՝ Բեկկէի կէրքերից։ Յունիս 19–ին ամբողջ ճակատը դիմից ընդհանուր յարձակման, և երկու օրւայ չամառ ու յաղող կուիւներից յետոյ, յունիս 21–ին, զօրամասերը միացան հանգերի արևմտեան մասում։ Հակառակորդը, հնարկ բէյի հրամանատարութեան տակ, պարտուած փախաւ՝ թողնելով հաչիւրին 2 արագաձիգ լեռնային Քնդանօթ, 4 մաքսիմ գնդացիր, աւելի քան 100,000 մոսինի փամփուչտ, լեռնային Քեղանօթ, 300 ռումբ, բազմաթիւ ձեռքի ռումբեր, փոներ, հարուստ պահեստներ՝ 1200 փութ հացահատիկ, 2000 մարդու պահածոյ միս, 50 փութ չաքար, 50փ. Քիսած հաց, 50 փութ պաքսիմատ, մեծ քանակութեամբ անասուններ և այլն և հարիւրաւոր սպանածներ, որոնց մէջ նաև Քիւրդ սպաներ։ Հայերի կո-

*) Վազաբարապատի զօրամասի հրամանատար զնդ. Ա. Շահմազեանի հրամանից։ Ճ՜ոռոխ, 1920թ. յունիս 27։

բուսան էր՝ 5 սպանած 22 վիրաւոր։ Գրեթէ մինչև Օլթի, ամբողջ տարածութիւնը անցաւ հայերի ձեռքը։

Զանգիբասարից յետոյ կազմակերպուեց և իրականացաւ նաև Բէոյիւք Վեզիի գրաւումը։ Այնտեղ Քշեմմին ունէր մօտ 3000 հոգի, 3 թնդանօթ, 9 գնդացիր և առատ փամփուշտ։ Ընդհանուր հրամանատար էր Քիւրք սպայ Մուստաֆա բէյը։

Հայերը հանեցին 26 վաշտ հետևակ, 7 հարիւրեակ ձիաւոր, 16 թնդանօթ, 1 զրահապնդեց, կամաւորական խմբեր։ Ընդհանուր հրամանատարն էր գօր. Շեյխովնիկեանը։

Կռիւները զարգացան հետևեալ ձևով*)։

«Յուլիս 10-ին երեկոյեան մեր զօրամասերը Համարլուից ու Նոր-Բայազէտից յարձակման դիմեցին Բէոյիւք-Վեզի գիւղը գրաւելու նպատակով։ Յուլիս 11-ին, Համարլուի ուղղութեամբ, յամառ կռիւներից յետոյ, գրաւեցին Կաթայեազ, Զէքդոման, Ալի Մամեդ, Եղեխլա, Կոթուզ Աղասի, Բէգլու և Ներքին Կարաթաղլար գիւղերը։ Բէոյիւք-Վեզիից հեռու մի վերաստուգութեան վրա՝ Գեաուր Ղալասի լերան մօտ մենք հանդիպեցինք Քուրքերի կողմից յուսահատ դիմադրութեան։ Նոր-Բայազէտի ուղղութեամբ, յուլ. 11-ի երեկոյեան, մենք գրաւեցինք Աղքիլիսա, Մաղիւկ, Գեոլ, Չիլդեն, Մոգիւղ, Չագէն, Գերմանիս, Խոխազ գիւղերը։ Մութն ընկնելուց յետոյ, երեկոյեան ժամը 9-ին, Գեաուր Ղալասի լերան կողմից Քուրքերը դիմեցին հակայարձակման, բայց շրջ գնդի հանդիպակաց գրաւով յետ չպրտեցին։ Նահանջողներին հետապնդելով՝ երկրորդ գունդը, տաք ուինամարտից յետոյ, գրաւեց Գեաուր Ղալասի սարը, ուր Քուրքերը թողեցին բազմաթիւ սպանուածներ և մի մաքսիմ գնդացիր։

Յուլ. 12-ին, առաւօտեան ժամը 5-ից 25 րոպէ անցած մեր զօրամասերը մտան Բէոյիւք-Վեզի։

Թուրքերը փախչում են Դաւալու Զինիքլիլի վրայով։

Բէոյիւք-Վեզիում հայերի ձեռքը անցաւ 1 թնդանօթ, մի քանի գնդացիր, ռումբ ու փամփուշտ, ուտելիք։ Նոյն օրը երեկոյեան գրաւեց Դաւալուն, ապա Գայլի Դրունքը, և վերականգնեց երկաթուղային հաղորդակցութիւնը Համարլուի հետ։ Մեծամասնակի զօրձողութիւններ էին կատարում և Դարալագեազից, և յուլ. 16-ի երեկոյեան մեր զօրքերը գրաւել էին արդէն Արաքս—Ազ-Ավմեզ գիւղ—Ղուչչի—Թեմուրչի—Բաշ-Նորաչէն—Ուչիա-Նորաչէն—Ախուր գիւղը։ Ամէն տեղ, ուր երևում էին հայերը, Քուրքերը թողնում և խուճապով փախչում էին։

Բէոյիւք-Վեզիի կռիւներում սպանուեցին 15 սպաներ ու զինուորներ, որոնց հանդիսաւոր թաղումը տեղի ունեցաւ Երևանում, յուլ. 13-ին։ Զանգիբասարի ու Բէոյիւք-Վեզիի մաքրագործումը աննկարագրելի ցնծութիւն առաջ բերեց Հայաստանի բոլոր կողմերում։


Յուլ. 16-ին, հայկական զօրքերի յառաջխաղացումը կանգնեցրեց, որովհետև Նախիջևանի Մահմեդական Ազգային Խորհուրդը պատգամաւո-

*) Հայաստանի Գլխ. Սպայակոյտի յուլ. 12 հաղորդագրութիւնը։

թուքիան էր ուղարկել Երևան՝ հաշտութեան խնդրանքով։ Կառավարութիւնը, զինաթափան նախաթաթի մէկոցով, ներկայացրեց խիստ ծանր պահանջներ. անպայման հնազանդութիւն, երկաթուղային ապահովութիւն, կառավարուն քեան յանձնել մեծ քանակութեամբ զէնք, ձի, մթերք, երկաթուղու երկու կողմը որոշ տարածութեան վրա մահմետականներ չթնակեցնել և այլն։ Գաղաժամաւորութիւնը յետ գնաց՝ զեկուցանելու համար Մոդ. Հորհրդին և այլևս չվերադարձաւ։ Ծուլ. 22–ին կռիւները վերսկսեցին։ Թուրքերը 3 օր յոյց տուին յուսահատ դիմադրութիւն։ Ծուլ. 25–ին մերոնք գրաւեցին Շահթախթը։ Թուրքերը փախան դէպի Մակու ու Վարակաստան՝ պարպելով ամբողջ չրջանը մինչև Նախիջևան։

Քիչ առաջ դրաւած էր և Սևանայ լճի արևելեան եզերքը, մաքրած էր Ղարադոյնլի ձորը։ Այս կռիւներում մեր կողմից տրւեցին ծանր զոհեր. սպանւածների մէջ էին խմբապետ Մուրադը, ուսանող Ց. Զարիֆեանը և ուրիշներ։

Ապրիլով, 1920թ. ամառը Հայաստանի Հանրապետութեան սահմանները փաստօրէն տարածւում էին Ղարաքադից սկսած մինչև Օլթիի ածխահանքերը։



Նոյն թափով առաջ էին գնում և ներքին աշխատանքները՝ կառավարչական և հիմնարարութեան տեսակէտով։

1920թ. ամառը Հայաստանը բաժանուած էր 4 նահանգապետութիւններ. 1) Աբարատեան՝ նահանգապետ նիրքին գործոց նախարարի օգնական Ս. Թորոսեան, օգնական՝ Լ. Ամիրխանեան, 2) Երիւանի՝ նահանգապետ Կ. Սասունի, 3) Վանանդի՝ Ստ. Ղորդանեան, 4) Սիւնեաց՝ Ս. Մելիք-Եօլչեան, իսկ նրա հրաժարականից յետոյ՝ Զ. Եօլեան: Նահանգները բժնեց հետեւեալ բաժանումի էին գաւառներէ: Վարչութիւնը կազմակերպած, հետզհետէ բարելաււում ու կատարելագործում էր, թէև մայրաքաղաքի շարժումները ու քրքական չրդնանների դէպքերը մեծապէս դժուարացնում էին կեանքի և պետական մեքենայի կարգաւորումը:

Այս դէպքերը խորապէս անդրադառնում էին և գաւառական ինքնավարութիւնների գործունէութեան, բայց, մանաւանդ, երկրի ելեմտական վիճակի վրա:

Ձիւն է, Զանգիբասարի և Շարուրի գրաւումը մեծարժէք հարստութիւններ տուեց կառավարութեան ձեռքը: Այսպէս, Շարուրի գրաւումից անմիջապէս յետոյ գիւղատնտեսական նախարարութեան վիճակագրական բաժինը այնտեղ ուղարկեց վիճակագիրներ՝ Բ. Իչխանեանի անձնական հսկողութեան տակ: Եւ թէև հաւաքած տեղեկութիւնները լրիւ չէին, բայց առաջած թիւերը հարստութեան մեծ պաշար էին ցոյց տալիս:

Շարուրում կար 70 գիւղ, որոնցից 6 հայկական և 1 ասորական. մնացեալը՝ քուրդ: Բնակիչների թիւը հաւասար էր 90 հազարի, որից հայերը, բացառութեամբ 30 ընտանիքի, որ էին քաշուած դեռ 1919-ի նահանջի ժամանակ:

1919թ. աշնանը և 20-ի գարնանը Շարուրում ցանուել էր 300,000 փութ ցորեն, 150,000փ. գարի, 50,000փ. չալթուկ (բրինձ), 4000փ. վարսակ, 1000փ. եգիպտացորեն, 500փ. կորեկ, 1000փ. սիսեռ, 1000փ. սեխ ու ձմերուկ, 200փ. լոբի, 200փ. սոխ, 20փ. ոսպ, ?փ. ծխախոտ — ընդամէնը՝ 507,927 փութ սերմացու:

Բերքը եղել է չափից աւելի առատ և մօտաւոր հաշուով սեխ ու ձմերուկ 10,000,000 փութ. ցորեն 3,500,000փ., գարի 1,500,000փ., կորեկ 20,000 փութ, վարսակ 20,000փ., եգիպտացորեն 25,000փ., սոխ 50,000փ., սիսեռ 25,000փ., լոբի 10,000փ., ոսպ 1,000փ., ծխախոտ 2,000փ., ընդամէնը 15,153,000 փութ: Այս թիւի վրա պէտք էր աւելացնել և չալթուկի բերքը, որ հաւաքած չլինելու պատճառով կարելի չէր չափորոշել, բայց որի քանակը շատ խոշոր էր: Պէտք էր աւելացնել և 500,000փ. տաճիւ, 80,000փ. խնձոր, 60,000փ. դեղձ, 25,000փ. տանձ և այլն:

Նման առատութիւն էր տիրում և Զանգիբասարում, ուր մեկայն բրնձի քանակը հաշււում էր մօտ 400,000 փութ:

Բայց այս հարստութեան մեծ մասը չմտաւ պետութեան պահեստները, այլ, զանազան ձևերով, անցաւ ժողովրդի ձեռքը, մասամբ գարձաւ չարաչահութեան նիւթ կամ փչացաւ: Կառավարութիւնը աշխատեց կազմակերպել լքուած հարստութիւնների օգտագործումը, գործի կանչեց հմուտ ու բարե-

խիղճ պաշտօնեաներ, բայց, ա՛յն ժամանակւայ պայմաններում, մասամբ միայն յաղողութիւն ունեցաւ։

Գետական օր աւուր ամող ծախսերը կառավարութիւնը հոգում էր քաղքատրամներով։ տպագրական մեքենան գործում էր կանոնաւոր և արագ։ ամսական տպւում էր 6—800 մէլիոն բուրլի։ Մինչև օգոստոս արդէն բաց էր թողնւած երկու մէլիարդ բուրլու հակական չէկ։ Լոնդոնում պատրաստւում էին հակական դրամանիշներ։ Շրջանառութեան մէջ էին և անդրկովկասեան բոնները։

Բնականաբար, դրամական այս հեղեղը մեծ չափով անդրազանում էր և երկրի առևտրա–արդիւնաբերական վիճակի և ապրուստի սղութեան վրա։ Մթերքների գները բարձրանում էին խելայեղ արագութեամբ։

կառավարութիւնը դրա դէմ պայքարում էր առևտրա–արդիւնաբերական կեանքի կազմակերպումով, ոսկու հիմնադրամի ստեղծումով, կօօպերատիների քաշաւերնով, մաքսերի ու հարկերի յաւելումով և փոխառութեան միջոցով։ Առևտրա–արդիւնաբերութեան գործերը կարգաւորում էր ելեմտական նախարարի օրնական՝ յատնի դրամատէր և հասարակական գործիչ Հ. Մելիք–Ազարեանը, ապա՝ Մ. Շաքիրեանը։ Ապառքի առևտուրը ղեկավարում էր Ազրանքաքսխութեան կոմիտէի միջոցով։ Փետր. 8–ից Երեւանում սկսեց գործել և Հայաստանի Առևտրա–Արդիւնաբերական Պալատը, որի նպատակն էր՝ զարկ տալ երկրի առևտրա–պդրիւնաբերական գործին և օտար երկրների համապատասխան պալատների միջոցով կապ ստեղծել արտասահմանի չուքանների հետ։ Պալատի նախագահն էր երևանցի յայտնի առևտրական և հասարակական գործիչ Ց. Մելիք–Ազարեանը։

Հարկային գործի ասպարէզում պէտք է արձանագրել յատկանուշական տուրքի սահմանումը յունիս 15–ին։ 1920թ. ընթացքում մտցւում էր յատկանուշական տուրք։ տարեկան մինչև 18,000ր. հասոյթ ունեցողները ազատւում էին տուրքից։ 18,000 բուրլուց աւելի հասոյթները ենթարկւում էին տուրքերի՝ հետևեալ համեմատութեամբ։ 18,000–ից մինչև 19,000ր. հասոյթ ունեցողը պիտի վճարէր 206ր., 28,000ից մինչև 29,000ր. ունեցողը՝ 556ր., 38,000–ից մինչև 40,000ր. ունեցողը՝ 1000ր., 58,000–ից մինչև 60,000ր. ունեցողը՝ 6,600ր., 100,000–ից մինչև 110,000ր. ունեցողը՝ 22,550 ր., 200,000–ից մինչև 210,000ր. ունեցողը՝ 56,550ր., 300,000–ից մինչև 310,000ր. ունեցողը՝ 94,550ր., 390,000–ից մինչև 400,000ր. ունեցողը՝ 140,000ր., 400,000–ից աւելի հասոյթ ունեցողներից իւրաքանչիւրը 10,000 բուրլուց պէտք է գանձւէր 6,100 բուրլի։

Այս թւերից երևում է այն սկզբունքը, որը հիմք էր դրւած Հայաստանի հարկային քաղաքականութեան. ինչքան քաղաքացու հասոյթը աւելանում էր, այնքան պետութեան ստացած տոկոսը պիտի բարձրանար։ Մի սկզբունք, որի համար պայքար են մղում դեռ ժամանակակից ռամկավարութեան առաջաւոր շարքերը։

Հայաստանի արդիւնաբերութեան և ելեմուտքի բաժնեւորման տեսակէտից, սակայն, վճռական դեր պիտի կատարէր Անկախութեան փոխառութիւնը, որի օրէնքը հրատարակւեց յունիս 10–ին: Օրէնքը ասում էր.

«1. Հայաստանի Հանրապետութեան արդիւնաբերական ուժերը և տնտեսութիւնը վերականգնելու և Հանրապետութեան Ընդհատակեայ գանձերի ֆոնդն ապահովելու նպատակով կնքել 20 միլիոն ամերիկեան դոլարի անանական գումարի պետական փոխառութիւն 6 տոկոսով: Փոխառութեան 75 տոկոսը յատկացնել վերոյիշեալ նպատակին, իսկ 25 տոկոսը գործադրել պետական այլ կարիքների համար»:

Փոխառութիւնը արւելու էր 10 տարով, Հայաստանում և արտասահմանում: Բաց էին թողնւելու 10, 25, 50, 100, 500 և 1000 դոլարնոց պարտատոմսեր, որոնք ազատ էին լինելու տուրքերից: Փոխառութիւնը ապահովւում էր Հայաստանի Հանրապետութեան ամբողջ գոյքով: Փոխառութեան գործի ղեկավար նշանակւեց Ա. Խատիսեանը, որը այդ աւանդութեամբ ուղարկւեց արտասահման:

Անկախութեան փոխառութիւնը անօրինակ խանդավառութիւն առաջ բերեց Հայաստանի և արտասահմանի հայկական բոլոր խաւերի մէջ: Քաղաքական կուսակցութիւններ, հասարակական կազմակերպութիւններ, մասնաւոր, անհատ գործիչներ — ամենքը ալեկոծեցին կառավարութեան, որ փոխառութիւնը ունենայ յաջող արդիւնք: «Միջկուսակցական Մարմինը հետեւեալ կուսակցութիւններին, — հետագրւում էին յունիս 21–ին Պատեհանին — Հայ Ժողովրդական կուսակցութեան, Հայաստանի Սոց.–Դեմոկրատ բանւորական կուսակցութեան, Հայ Ռամկավար կուսակցութեան և Անկուսակցականների Միութեան — գոնելով, որ Հայաստանի անկախութեան փոխառութիւնը 20 միլիոն դոլարի միանգամայն անհրաժեշտ է Հայաստանի ֆինանսական և տնտեսական դրութեան բարելաւման համար, ամէն կերպ պայմանաւորում է կառավարութիւնը այդ փոխառութեան իրականացման գործում, և դիմում է բոլոր հայերին՝ առանցարկելով եռանդուն մասնակցութիւն ցոյց տալ նրա տարածման մէջ: Լիազօրներ Հ. Ժ. կուս.՝ Տէր Յովհաննեան, Ստեփանեան, Հ. Ս.–Դ. բանւ. կուս.՝ Խլաթեան, Աճեմեան, Հ.Ռամկ. կուս.՝ Դարբինեան, Շահմուրատեան, Անկուս. Միութեան՝ Աբէլեան, Զաքարեանց»:

Փոխառութեան բացումը Երեւանում կատարւեց մեծ հանդիսաւորութեամբ, օգոստ. 1–ին: Բազմաթիւ անհատներ, հիմնարկութիւններ, հոգեւորականի և կառավարութեան անդամները տուին ու տուին արժանագրւելիքին որոշ գումարներ: Կաթուղիկոսը էջմիածնի կողմից արժանագրւեց 1 միլիոն րուբլի: Մի քանի ժամւայ մէջ հաւաքւեց 45 միլիոն րուբլի: Նոյն ոգեւորութեամբ արձանագրութիւնը տեղի ունեցաւ և գաւառներում: Արցախի մահմեդականութիւնը փոխառութեան մասնակցեց 50 միլիոն րուբլով, որը, սեպտ. 5–ին, գաւառապետ կոգիմովը անձամբ մտցրեց Կարսի պետական գանձարանը: Սեպտ. 5–ին արդէն Հայաստանին յատկացածը աւելիով ծածկւած էր, և կառավարութիւնը փակեց բաժանորդագրութիւնը Հայաստանի սահմաններում:

Նոյն օրը, օգոստ. 1-ին, անկախութեան փոխառութեան բացումը տեղի ունեցաւ և Բիթլիսում ու Բաթումում, նոյնպէս ժողովրդական խանդավառ տրամադրութեամբ: Բիթլիսում բոլոր հայ կազմակերպութիւնները մի խուցիկ-հոյ բաց Քոչին, փոխառութեան կամմակերպիչ մարմինը հրաւիրեալ մեծ ելոյթ ունեցաւ՝ բազմաթիւ հայ և օտար պողոտերի և գրծերի անուն աշխատակցութեամբ — Ճ. Թումանեան, Դ. Դեմիրչեան, Ա. Թաչեան, Ս. կանայեան, Ս. Մալխասեան, Ս. Էխտիկեան, Ռ. Ալան-Ալպատ, Ա. Գազովեան, Գ. Մելիք-Ղարագէոզեան, պրոֆ. Ա. Մանուէլով, Օ. Դրուֆենթըզ, Մ. Մանդելշտամ և այլն:

Ճուղիչ էր Ճովհ. Թումանեանի գրութիւնը.

«Մեր սերունդը էն սերունդն է, գրում էր նա, որ դեռ երէկ ազատ Հայաստան էր երազում:

Ազատ Հայաստան էին երազում ռուսահայը, տաճկահայը, պարսկահայը և բոլոր հեռաւոր գաղութները:

Ազատ Հայաստան էին երազում հայ ժողովրդի բոլոր խաւերը, առանց տեղի ու հասակի խտրութեան:

Ինչ ասես, որ չէր տայ գրեթէ ամէն մի հայ, միայն թէ աչքով տեսնէր ազատ Հայաստանը:

Ու, չանկարծ...

Աբդէն իրականութիւն է երէկւայ մեծ երազը. ազատ է Հայաստանը, ամբողջ ազատ-հզօր կռմից ճանաչուած ինքնուրոյն հանրապետութիւն է նա, իր հետաքրքրական գրօչակով կանգնած է միւս պետութիւնների հպքումն:

Բիթլիսի բաժանորդագրութիւնը ուժգ փայլուն արդիւնք:

Նոյնը եղաւ և Բաթումում, ուր Հայ կանանց Միութեան կողմից հիմք դրուեց և Ոսկու Ծոնդի:

Նոյն խանդավառութիւնն առաջ բերին Անկախութեան Փոխառութիւնն ու Ոսկու Ծոնդը և գաղութահայութեան մէջ՝ Պոլսում, Իզմիրում, Եգիպտոսում, Բալկանեան երկրներում, Պարսկաստանում: Փոխառութեան բաժանորդագրութիւնը հանդիսացաւ գաղութահայութեան, մանաւանդ աշխատաւոր խաւերի հայրենասիրութեան արտայայտութեան մէկ ակռի: Հայաստանի Հանրապետութիւնը ամէն տեղ արգէն առարկայ էր ոգևորութեան, պաշտամունքի ու գոհաբերութեան:

Եւ միայն փոխառութեամբ ու Ոսկու Ծոնդով չէր արտայայտւում գաղութներէն և Հայաստանի Հանրապետութեան փոխադարձ կերպ սիրոյ զգացումը: Հայաստանը դարձել էր ժողովրդական մի հզօր ոյժ, որ իրեն էր քաշում աշխարհիս բոլոր ծայրերում ապրող հայերի հոգին և նիւթական ու բարոյական աջակցութիւնը: Սև ծովի եզերքներից, Կեդրոնից, Անգլիայից, Ռումանիայից ու Բուլղարիայից, Պոլսից և Իզմիրից, Իտալիայից, Ֆրանսայից, Բելգիայից, Գանադայից, Մշացեաց-Նահանգներից, Հարաւային Ամերիկայից, Պարսկաստանից, Մէլգաւքից, Ջերուզէմից, Հնդկաստանից, Ճապոնիայից, Հեռաւոր Արևելքից, ձաւս կղզուց — ամէն, ամէն

կողմից նւէրներ էին հասնում ուղիղ Երևան կամ Փարիզի պատւիրակութեան՝ Հայաստանի համար: Եւ ինչե՞ր ասես չէին ուղարկւում — գինւորական հագուստ ու սարք, դեղօրայք, գրենական պիտոյքներ, ինքնաշարժ, սաւառնակներ, ուտելիք, հագնելիք, ամբողջ գրադարաններ, գրամեքենաներ, ծխախոտ, քինին, բժշկական գործիքներ, նկարներ, գործադարձեր... Սկսեցին Հայաստանին տնել մեծագումար կտակներ, նոր չէնքերի չինութեան խոստումներ, կազմել արդիւնաբերական խոշոր ծրագրեր:

Ցիւնք միայն մի քանիսը, պատահարար քաղած յիշողութիւնից. Եգիպտոսի գործարանատէր Մելքոնեանը ընդունեց Հայաստանի քաղաքացիութիւնը և իր ամբողջ հարստութիւնը—մի քանի միլիոն դոլար—կտակեց Հայաստանին: Հայաստանին նւիրեց իր փառաւոր տունը Թիֆլիսում — մէկ միլիոն դոլարի արժողութեամբ—յայտնի դրամատէր Ա.Մելիք-Ազարեանը*): Բազուի յայտնի դրամատէր Արշակ Ղուկասեանի թողած կտակը՝ մօտ 8 միլիոն րուբլու՝ փախցուեց Հայաստանին: Ստաւրոպոլի հայ դրամատէր Պողոսը իր ամբողջ հարստութիւնը — մօտ 25 միլիոն րուբլի — կտակեց Հայաստանի համալսարանին: Գ. Գիւլպէնկեանը խոստացել էր Հայաստանում կառուցել մի շարք պետական մեծ չէնքեր: Շ. Մելիքեանը պատրաստւում էր չինել Երևանում ժողովրդական Տուն: Գոլսի «Ժող. Ձայն» թերթը օգ. 20-ին հաղորդում էր, որ Հայ Ռամկ. Կուսակցութիւնը Եգիպտոսում որոշել էր Հայաստանին մատուցանել 50 օգնանաւ—«Համակամար Հայաստանի Օգտին Տօրմիղը»: Հ. Ը. Դաշնակցութիւնը Ամերիկայում ձեռնարկեց բանակի հանգանակութեան, որը տւեց աւելի քան կէս միլիոն դոլար. Երևան, բանակի համար, ուղարկւեց մեծ քանակութեամբ պաթեիմատ ու պահածոյ: Հայաստանի համալսարանին և Հանրային Գրադարանին նւիրւեցին մի շարք մեծարժէք գրադարաններ — Զոհրաբի, դր. Տաղտաբեանի, Գ. Ճակոբեանի, Կ. Կոստանեանի, Ը. Ճակոբեանի, բանաստեղծ Ա. Թաւրւեանի և այլն: Կարևոր գործ էր և «Մայրերուն երեսկրների գիտական արշաւախումբը», որը մի շարք մասնագէտների միջոցով նկարեր էր հաւաքում և ուսումնասիրում Հայաստանի տնտեսական հարստութիւնները: Այսպիսի օրինակներ դեռ կարելի է շատ բերել:

Եւ այս դեռ սկիզբն էր երկանց:

Կային, ի հարկէ, և վատ, չարաչահ տիպեր, որոնք աչքաւորում էին Հայաստանը չահագործել իրենց անձնական օգտին ու երբ հանդիպում էին կառավարութեան արգելքին, ամէն տեսակ սուտ ու զրպարտութիւններ էին տարածում Հայաստանի վարիչների մասին, մանաւանդ, յաճախ, հոլովելով նրանց ընկերվարական լինելը: Դրանց մասին էր գրում Դ. Աճառեանը իր Թուխաւոր տողերը, թէ՝

---

*) Այդ տուժը 1920թ., բոլոր օրինական ձևակերպութիւնները կատարելուց յետոյ, փախցնեցաց Հայաստանի Համրապետութեան Թիֆլիսի դիւ. ներկայացուցչութեան, որը պատրաստւում էր տեղափոխել նրա մէջ: Բոլշևիկների գալուց յետոյ, շատերի հետ այդ չէմմ էլ, բանտարկւեց և այժմ Հայաստանին չի պատկանում:

. «Հայ բուրժուազիան իմ աչքում դատապարտութեան արժանի տուրք է նրա համար, որ նա իր սուրբ ապագային արարքները քօղարկում է մատնածին պատճառաբանութիւններով վասն հայ վտանգաւոր սոցիալիստների և այլն: Սուտ է: Հայ Ձիմդիմովի գործն ոչ մի վտանգ չի սպառնում Հայաստանում, որովհետև բոլոր հայերը մեծ ու փոքր Ձիմդիմովներ են, սեփականութեան մոլի ֆանատիկոսներ: Եւ եթէ այնուամենայնիւ հայ Ձիմդիմովը չի բաբեհաճում քողնել Թիֆլիսն ու բացուն և իր այդ տատանումը պատճառաբանում է սոցիալիզմի վտանգով — դրա մէջ պիտի տեսնել սրբեցողի ծամածռութիւնները լիքը բաժակի առջև:

... Քող բուրժուազիան դայ և մասնակից դառնայ մեր պայքարին և ոչ թէ հետից հետու պահպղրէ, թէ՝ մարքսիզէ ասպաւէրը, որ ես բաբեհաճեմ ինձ՝ հայութեանը հարթատ հոգակելու և ոտք կոխելու նրա երկիրը: Բուրժուազիայի ո՛ր առաւելութեան համար պիտի տեղի ունենայ այդ նահանջը...

Նորից ու նորից կրկնում ենք, որ Հայաստանը պատկանում է բոլոր նրանց, որոնք անկեղծօրէն ցանկանում են ջրտնել նրա վրա և նպաստել նրա բարգաւաճմանը: Թէ որ տանջանաց կդրդէ լիցիմբ, ապա և փառաց հաղորդ լինելոց ևս — այսպէս պիտի նայի ինդրին հայ բուրժուազիան: Բայց ոչինչ չաթած, պինդ փակած իր գրպանի բերանը՝ նա պատռում է իր կոկորդը լոկ փառքի և իշխանութեան համար: Այս վերաբերմունքի համար նոյնիսկ քաջերը պիտի աղաղակեն, իսկ կենդանի մարդիկ՝ աւելի ևս:*)

Ձիշտ էր ասում Դ. Աճառեանը. «Հայ Ձիմդիմովի գործին ո՛չ մի վտանգ չէր սպառնում Հայաստանում»: Ընդհակառակը, իշխանութիւնը ամէն կերպ աջակցում էր, որ արտաքին նախաձեռնութիւնն ու դրամագլուխը մուտք գործեն Հայաստան, իրենց միջոցն ու կարողութիւնը նիւթեն երկրի վերաշինութեան գործին: Գուցէ, պահանջեածից էլ աւելի փութկոտութեամբ ու լայնախոհութեամբ ընդառաջ էր գնում մասնաւոր դրամագլխի ամէն դիմումին կամ առաջարկութեան: Այս տեսակ լայնախոհ վերաբերմունքի և չարաշահութեան մէկ օրինակ կարելի է համարել այն բազմաթիւ դիւրութիւնները և արտօնութիւնները, որ կառավարութիւնը տրամադրեց Մայլիեանի եղբայրներին Հայաստանի զանազան մասերում արդիւնաբերական ձեռնարկներ սկսելու համար: Մայլիեանները ստացան մի շարք ժենաչնորհներ — էլեկտրականացման, ապակու գործարանի — բայց և ո՛չ մէկ փորձ արին՝ որև է գործ կատարելու և իրենց անգործութիւնը դուրս արդարացնում էին նրանով, որ, իբր թէ, «ընկերվարական» կառավարութիւնը արգելքներ է յարուցանում մասնաւոր դրամագլխի առջև:

1920թ. ամառը հայ և օտար դրամատէրերի կողմից եղան մի շարք տնտեսական առաջարկութիւններ, որոնց մի մասին բնթացք էլ տուեց: Ցիլինգ գլխգլխական և չնչին մի քանի լուրջ ընկերութիւնների դիմումը Հայաստանում կաթնատնտեսական գործարանը, երկրագործական մեքենաների պահեստները և արհեստանոցները հիմնելու մասին: Հայ և Հայոն դրամատէրերի մի խումբ իր ներկայացուցիչն էր ուղարկել Երևան՝ էլեկտրաերկաթուղագծի մենաշնորհ ստանալու համար: Ենթադրւում էր չինել Երևան—Ալէնովկա—Դիլիջան—Աղստաֆա և Ալէնովկա—Նոր-Բայազէտ —

*) Դ. Աճառեան, «Առաջ Ժխանգրութեան», «Ժառաջ», 14 յունւ. 1920թ.:

Քեչէչ–Քենդ–Գորիս գիծը: Մի խումբ հայ գրամատէրեր ծրագրում էին վեղ–Քասաբի չրջանում հիմնել ցեմենտի և կրի գործարաններ: Մեկ ուրիշը՝ ատաղձի, չինքի փայտերէն մասերի գործարան Սարըղամիշում:

Ծունծխի վերջերին մի խումբ հայ և օտար դրամատէրերի կողմից Երևան եկաւ ինժ. Կ. Ս. Արղուբեան–Երկայնաթաղուկը՝ խնդրելու համար բաթում–Կարս–Սարդարապատ երկաթուղի անցկացնելու իրաւունքը: Հայերից յիշեալ խմբի մէջ մտնում էին Ռոստով–Նախիջևանցի ու Մոսկովցի յայտնի հայ դրամատէր ժամհարեանը, Կայսերեանը, Քիստեանը, Աբրամեանը և ուրիշներ:

Արդուբեանի ներկայացրած պայմանագրի էութիւնը հետեւեալն էր.— Ընկերութիւնը, սեփական միջոցներով, առանց կառավարական նպաստի, պէտք է կառուցանէր ելեքտրաշարժ երկաթուղի, որը պիտի սկսէր Բաթում–մից կամ Հայաստանին տուելիք որև է նաւահանգստից, անցնելու էր Ճորոխի ձախ ափով, ապա՝ Օլթի գետի հովտով, Փէնեաք գետի հովտով, Օլթիի ձախահանգերի մօտով, կարելու էր Կաթս–Սարդարապատ երկաթուղին Սելիմ կայարանի մօտ և անցնելով Զարաբխանա ոսկեհանքերի ու Ջրոռնեխի հանքերի և կաղզուանի ու Կողբի աղահանքերի մօտով՝ միանար էր Ալէքսանդրապոլ–Երևան երկաթուղագծին, մօտաւորապէս Սարդարապատ կայարանում:

Այսպիսով, բացուելու էր նոր ճանապարհ Սև ծովից դէպի Թաւրիզ, Երևանի վրայով, որը չուրջ 250 վերստով լինելու էր աւելի կարճ, քան Բաթում–Թիֆլիս–Ջուլֆա–Թաւրիզ երկաթուղին: Տնտեսական տեսակէտից ճանապարհը պիտի ունենար ահագին նշանակութիւն. պարսկա–եւրոպական քրանզիտը ամբողջապէս վրաստանից պիտի անցնէր Հայաստանին:

Ներկայացուած պայմանագրի համաձայն պէտք է երկու տարի ժամանակամիջոց տուէր հետախուզական աշխատանքների և երկաթուղագծի ու ելեկտրականութեան նախագծեր պատրաստելու համար: Ապա, չորս տարուայ ընթացքում, պէտք է լինէր ու շաբաթական մէկ գրէր երկաթուղին իր ամբողջ տարբով: Շարժել ոյժ ստանալու համար պէտք է օգտագործէին Ձորոխ, Աքաքս, Ախուրեան և Հրազդան գետերը, որոնցից ստացուելիք ելեկտրականութիւնը, երկաթուղուց զատ, պէտք է բաւնցնէր ուրիշ նպատակների համար էլ:

Պայմանագրի նախագծի համաձայն երկաթուղու ամբողջ հասոյթի 10%ը պէտք է տուէր պետութեան, ինչպէս նաև ելեկտրակայանների 15%ը: Ելեկտրական ոյժը վաճառուելու էր կիլոուատ–ժամը 4 ռուբլի կոպէկով, իսկ արդիւնաբերական, գիւղատնտեսական և այլ տեխնիկական կարիքների համար՝ 3կ.: Պայմանագիրը կնքելու էր 55 տարով: 30 տարի անցնելուց յետոյ կառավարութիւնը իրաւունք պիտի ունենար գնելու ամբողջ ձեռնարկութիւնը՝ երկաթուղին ու ելեկտրակայանները: Այդ պարագային, կառավարութիւնը պէտք է վճարէր մնացած տարիների կոնցեսիոներների տանուլտի օգուտի մէջինը: Պայմանագիրը ստորագրելիս ընկերութիւնը

պէտք է մտցնէր Հայաստանի զանձարանը 3 միլիոն ոսկի բուրլի, որը պէտք է ապահովէր մինաչեորհի բարեխիղճ իրագործումը։ Բացի այդ, ընկերութիւնը դնելու էր 4½ միլիոն ոսկի բուրլի գրաւ։ պայմանագրի հետևերի լուրջ խախտման դէպքում գրկւելու էր գրաւից։

Այս պայմանագիրը, հաղորդակցութեան նախարարութեան առաջարկութեամբ քննեց Հայաստանի Տնտեսական Ընկերութեան նիստերում և, ընդհանուր առմամբ, արժանացաւ գրական դնահատութեան։ Ճիշտ, խորհրդակցութեան նիւթ գարձաւ հաղորդակցութեան, եւլմտական և արդարադատութեան նախարարութեանց ու պետական վերահսկողութեան ներկայացուցիչների և մի չարք մասնագէտների խառն նիստերում, որից յետոյ, յունիս 29-ին, հաղորդակցութեան նախարարը նախագիծը ներկայացրեց նախաբարների խորհրդին ի հաստատութիւն։ Բաթում—Կարս երկաթուղագծի մասին կային և օտար առևտրականներ. կառավարութիւնը գնրաղաւում էր հայկական դրամագլուխը։ Բացի այդ, նա կամենում էր, որ բաժնեթղթերի կարևոր մէկ մասը տրւի պետութեան, որով վերջինս դառնալու էր երկաթուղու սեփականատէրերից մէկը։

Հայաստանի ժողովրդական տնտեսութեան մէջ աչքառու դեր էր խաղում և Ալեմ. Նախ. Աչխատանքի բաժանմունքը, որ ամբողջ երկիրը պատել էր արհեստանոցներով, գործարանների և աչխատանոցների ցանցով։ Ա. 1 օր. Բաժանմունքը ունէր հետևեալ ձեռնարկութիւնները. Երևանում՝ Ջուլհականոց (կտաւ), վերնաոդուստների բաժին, կաբուձևի արհեստանոց, փոխանագործարան, առաղաձագործարան։ Սարդարմէրլուում՝ տախտակի գործարան, Ջուլհականոց (կտաւ), առաղաձագործարան, փայտի չոր Թորման, որ պատրաստում էր սե ձիւթ, ածուխ, սոսինձ և այլն։ Ալեքսանդրապոլում՝ Ջուլհականոց (բրդեղէն), Շրջ. Ջուլհականոց (կտաւ, գուլպայ)։ Կարսում՝ Ջուլհականոց (բրդեղէն), կաչւեգործարան։ Խրխանծոում՝ կօչկակարանոց, Ջուլհականոց (կտաւ), Դիլիջանում՝ Ջուլհականոց (բրդեղէն), չինւածագործների արհեստանոց, կահկարասիքի արհեստանոց։ Նոր-Բայազետում՝ կօչկակարանոց, Ջուլհականոց (բրդեղէն)։ մանարան Բաշ-Ապարանում, Ջուլհականոց (բրդեղէն) Զալալ-Օղլիում, կօչկակարանոց Ղամարլուում, մանարան Սարդարապատում, բրուտանոց Իւվարում և այլն։ Կասւել, մահուդի, կօչկեղէնի մի ահագին մասը երկրում հոգացւում էր այս արհեստանոցներից։ որբանոցների և բանակի սպիտակեղէնը, վերայի հագուստը կարւում էին հայկական կտորներից։ Լուրջ յաջողութիւն ունէին, յատկապէս, կաչւեգործարանները։ Բաժանմունքը ձեռնարկել էր երկու մեծ գործարանների չինութեան գիտութեան վերջին յարմարութիւններով։ Բաժանմունքի գեկավարն էր Ակուենեանը։

Գեաական կարևոր գործօն էր և մայիս 8-ին հաստատւած ԷՀլիսաւոր ՀՀորատարապետի Վարչութիւնը Թեմ. Նախաբարութեան կից՝ ակադ. Ալ. Թամանեանի գեկավարութեան տակ։ Այս հիմնարկութիւնը լինելու էր Հայաստանի վերաչինութեան կենսորոնական ազդակը։ Ա. Թամանեանի հմուտ

և անձնէր դիկվարութեան տակ մի չարք մասնագէտներ*) կատարում էին նախապատրաստական աշխատանքներ. ուսումնասիրւում էին Հայաստանի չհետազոտուած մասերը, հաւաքւում նախնիքի, պատրաստւում վերաբերական ծրագրներ ու յատակագծներ: Ամառ. Թամանեանը կազմել էր Երևան քաղաքի բարեփոխած նոր յատակագիծը,**) պատրաստել էր տիպար գիւղերի, դպրոցների, հիւանդանոցների, ժողովրդական տների, պետական և հասարակական շէնքերի յատակագծեր, որոնք բոլորն էլ հիմքում ունէին հայկական ազգային ոճը: Վարչութիւնը սկսել էր կառուցանել Երևանի մանրաքանակի հիմնարկութեան շէնքը, հիմնական վերանորոգութեան էր ենթարկել քաղաքային առաջին հիւանդանոցը, կազմակերպել էր գալ աշրելու գործարան, Ախի շրջանում ձեռնարկել էր յուշարձանների հատաքման, ցուցակագրութեան և պահպանման գործին:

Նոյն ինամ. նախարարութեան կից գործում էր և Գլխաւոր բժշկա–Առողջապահական վարչութիւնը ինամ. նախարարի օգնական բժ. Ց. Տէր–Մկրտչեանի գլխաւորութեամբ: 1919Թ. սկզբին Հայաստանում կար միայն 9 հիւանդանոց 300 մահճակալով: Նոյն տարւայ վերջը արդէն գոյութիւն ունէր 30 հիւանդանոց 1.600 մահճակալով, 5 բժշկական, 5 բուժակի կայան: 1920Թ. դրանց վրա աւելացան մի չարք ուրիշ նոր հիւանդանոցներ ու կայաններ Երևանում, Ալէքսանդրապոլում, Կարսում, Զալալ–Օղլում և այլն: Կային պետական դեղատներ, որտեղից դեղ էր տրւում չքաւորներին ձրի, իսկ աշխատաւորներին 50% զեղչով: Երևանում կար կենտրոնական դեղապահեստ: Մալարիայի դէմ պայքարելու նպատակով Երևանի, Իգդիրի, Էջմիածնի, Հոռոմոսի, Ղամարլուի շրջաններում գործում էին բժշկական Քոռոլիկ խմբեր և այցելու հիւանդանոցներ: Սկսւել էին ջրանցքային աշխատանքներ Ղամարլուի ճահիճների չորացման համար: Երևանում կազմւել էր յատուկ մի մարմին—«Տրոպիկ Հետազոտութիւնների Ընկերակցութիւն»—որ ունէր տրոպիկական հիւանդանոց, կազմակերպեց «տրոպիկական ցուցահանդէս», հրատարակեց «Մալարիա» պարբերականը և նպատակ ունէր կռւել մալարիայի դէմ: Ցնտապային այս «Ընկերակցութիւն»–ը վերածւեց Տրոպիկական Ինստիտուտի:

Տնտեսական տնակէտից կարևոր աշխատանք էր կատարում և Գիւղատնտեսական ու Գնտական Գոյքերի Նախարարութեան մէջ: 1920 Քսի ամառը վերջացան Ս. Զաւարիչենի ջրային ընդարձակ հետազոտութիւնները: Եւ ակնկալուն հանքային լայն հետազոտութիւններ նախարարութեան հանքային բաժնի պետ Ս. Թուրեանի դիկավարութեամբ: Հրաւիրւեցին մի չարք հեղինակաւոր մասնագէտներ՝ ինժ. Կարապետեանը, ինժ. Ն. Տէր–Մկրտչեանը, ինժ. Մ. Տէր–Դաւթեանը և ուրիշներ, որոնցից կազմւած յանձնա–

*) Սրանց շարքին էր երիտասարդ երկրաբան Ալչվագեանը, որ Հայաստանի չհետազոտուած երկրերի լաւագոյն մասնագէտներից մէկն էր և որ այնքան անժամանակ մահացաւ մօտ երկու տարի առաջ:

**) Այս յատակագիծը, Թաւրիզում կատարած որոշ լրացուցմներով, յետագային ընդունւեց և այժմ ամբ է կոչւում հեռմիում:



Գ. ԲԱՐԱԼԵՑ
Անասնաբուժ Լաճեզ–Լոքից



Գ. ԳԱԶԱՆՃԵԱՆ
Ռեհասի գրչի բանբեր ուսուցչ



Ա. ՏԵՐ–ՀԱԿՈԲԵԱՆ
Վերջում Տ. Բարսեղ Տեռ–Հակոբ Քահ.ի



Ա. ՕՍԿՃԵԱՆ
Հոգի Տ. Բարսեղ Տեռ–Հակոբ Քահ.ի



Գ. ԵՐԳՈՒՆԵԱՆ
Ռեհասի Խնդրվեների պետ



Լ. ԽԱՉԻԿՅԱՆ
Ռեհասի տարի գործադրող

խմբերը այցելեցին կաղզուանի աղահանքերն ու փեննաքի ածխահանքերը և բերին մշակած դեկուցումներ աղի և ածուխի արտադրության և ածխացման մասին։ Ազն էլ, ածուխն էլ շահագործում էին կառավարության միջոցներով։ Բացի այդ, ինժ. Կարապետյանը գիտական-հետախուզական ճամբարդություն կատարեց Շերակում, Նոր-Բայազետում և Սևանի լճի շուրջը։ Մասնաւոր ուսումնասիրության ենթարկեցին ցեմենտի, չէչաքարի, հանքային ներկերի վայրերը։ Պիտի հետազոտէին նաև Սուրմալուի ոսկետեղերը, կաղզուանի գոնեները, Շարուր-Դարալագեազի արծաթ—արճճային հանքերը, տորֆի չրլաններըը, մի շարք չինարարական քարեր և այլն։ Ցավոքդող պատերազմական գործողությունները արգելք եղան ծրագրի մի մասի իրագործման։ Այդ գործողություններին նաև գոհ գնացին ինժ. Լ. Ռաֆայելյանը, ինժ. Միլիք-Ադվատյանը և տնխնիկ Մելքայէլեանը, որոնք գրաւած էին ածուխի արտադրությամբ։ Հանքերն արդէն տալիս էին օրական 5—6000 փութ ածուխ, որը կարս—Մերդինեկ ձիաքարշով փոխադրւում էր կարս՝ երկաթուղային կարիքների համար և մասամբ մեղմացնում վառելիքի սովը։ Ագրբէյջանը նաեւ չէր տալիս, և կառավարությունը դեռ մարդկային ձեռ էր դրած դնում երկաթուղիները կենդանի պահելու համար։

Ամառը Լեռնային բաժինը ձեռնարկեց հանքային հին օրէնքների փոփոխության և նոր օրէնքների հիմքը կազմում էր հողերի պետականացման ընդհանուր սկզբունքը։ Ըստ նոր օրէնադրության գետնի տակ գտնւող բոլոր տարատեսակները համարւում էին պետական սեփականություն։ Մասնաւոր սեփականատէրերը իրաւունք ունէին օգտւելու միայն գետնի երեսից։ Նախկին իշխանության օրով կնքւած բոլոր պայմանագրությունները, 6 ամսւայ ընթացքում, կորցնում էին իրենց ազդէցը։ Այդ անձանց իրաւունք էր տրւում կնքել նոր պայմանագրություններ։

Լեռնարդիւնաբերությունը գարգացնելու նպատակով կազմակերպւում էր յատուկ ընդունարան լեռնային բաժնի կողմից՝ հանքավայրեր գտնողների համար։ Հանք գտնողներին պիտի տրւէր վարձատրություն հետևեալ հաշւով. ոսկի և քանդագին քար գտնողներին՝ 1000—5000 րուբլի ոսկով. արծաթի, կապարի, նիկելի, ցինկի, արճճեի, բիսմուտի համար՝ 500—1000ր., ուրիշ հանքերի համար՝ 100—500ր., նաւթի, քաթածուխի համար՝ 300—3000ր. և այլն։ Օրինադիր մտցւեց նախաբարական խորհուրդ և ընդունւեց հիմնական դծերով։

Լեռնային բաժնին կից հիմնւեցաւ Հանքային Խորհուրդ նախաբարի նախագահության տակ։ Անդամներից կազմւեց Հանքային Տեխնիկական Ծանձաժողով՝ բաղկացած Լեռնային բաժնի վարիչ ինժ. Մ. Թուրնաուից, օգնական ինժ. Ա. Տէր-Գրիգորեանից, ինժ Մ. Տէր-Դաւթեանից, ինժ. Ն. Տէր-Միքայէլեանից և մէկ չրջանային ինժեներից։ Ծանձաժողովի նպատակն էր հանքային և արդիւնաբերական ուսումնասիրություններ կատարել երկրում։ Նոյեմբերին ծրագրւում էր հրաւիրել լեռնա-արդիւնաբերողների խորհրդակցություն, ապա՝ համագումար և այլն։

Հատուցման և կարևոր գործ էր և Հողային Ճատուկ կոմիտեների կազմակերպիչը հողային հարցի արագ լուծման համար: Կոմիտեները պիտի արձանագրէին և, տեղեկանալ ուժով, գիւղացիութեան պիտի բաշխէին մասնաւորապէս, եկեղեցական-վանական և լքեալ հողերը, ինչպէս նաև պիտի լուծէին գիւղացիների և գիւղերի միջև եղած հողային վէճերը: Երևանի գաւառի հողային յատուկ կոմիտէն — նախագահ՝ ե. Սարգսեան, անդամներ Լ. Զահրաբեան և հողային Ճակոբեանեան — մինչև օգոստոսի սկիզբը վերջացրեց աշխատանքները Ծաղկաձորի շրջանում, ուր պետական-նպաստ քրքջական 12 լքեալ գիւղերի 16,234 դես. հողերը: Գնդեվանք (Մխրճակա) գետի ալ ափի մացառապատ հողերը միացուեցին անտառին՝ ապահովելու համար վերջինիս անվտանգ աճումը: Անտառին միացաւ ընդամենը 11,233 դես.: Մնացած 5000 դեսեատինը բաժանուեց սակաւահող Ալափարս, Գումխ և Օղանլար գիւղերի միջև: Մաքրավանք, Բաթալչի և Ծարուխ խոտ սակաւահող գիւղերը որոշուեց տեղափոխել ուրիշ տեղ՝ լքեալ հողատարած գիւղերը: Լուծեց նաև մի շարք մէջիւրեան և գիւղմիլեան հողային վիճելի հարցեր և հաստատեց հողային վէճերով պատահած գիւղացիներին: Ծաղկաձորից յետոյ մարմինը անցաւ Կոտայքի շրջանը:

Էջմիածնի հողային կոմիտէն — նախագահ՝ Ց. Աբրահամեանց, անդամներ՝ Մկ. Սահակեանց և Աւ. Գոլոլեան—գործի սկսեց յուլ. 19-ին և տևեց համարեա ամբողջ գաւառի աշխատանքները, բացի Սարդարապատի շրջանից: Կոմիտէն առանձնապէս ուշադրութիւն դարձրեց հողագուրկ Ապարանի վրա, ուր հողը բաւական էր հազիւ 10—12,000 հագու, մինչդեռ տարում էր 25,000 մարդ: Կոմիտէն որոշեց Ապարանի գիւղացիութեան կէսը տեղափոխել Կարսի նահանգը, որի կլիման նման է Ապարանի կլիմային և ուր կային բաւական թուով լքեալ գիւղեր, ժամանակ յոյների հեռանալուց յետոյ: Տեղափոխող գիւղերի հողերը բաժանելու էին մնացող գիւղերին: Փոխադրելու ենթակայ գիւղերը ասել էին քրնդ համաձայնութիւնը: Աչտարակի շրջանի Բաթալչի, Քրքջլու, Նաթղուլու և Քեալչաքանդ լքեալ գիւղերի հողերը կոմիտէն տուց մօտակայ գիւղերին՝ պայմանով, որ Բաթալչի և Քրքջլուս գիւղերում Ապարանի նորաչէն, Աչլու և Ղարաբուլաղ գիւղերի հողագուրկ գիւղացիները հիմնեն նոր գիւղ: Արտաքին և մօտակայ լքեալ արօտատեղիները տուեցին հարևան գիւղերին: Լուծուց և եւս մի շրջանի լքեալ գիւղերի հարցը:

Նոր-Բայազէտի հողային յատուկ կոմիտէի կազմն էր՝ Մեր. Օղանեան՝ նախագահ, Մ. Էէր-Գէորգեան և Ե. Նազարեան՝ անդամներ: Կոմիտէն յաջողապէս լուծեց գաւառի բոլոր գիւղերը, տեղն ու տեղը ծանօթացաւ հողային յարաբերութիւնների վիճակին: Որոշեց գիւղացիութեան մի մասը փոխադրել ուրիշ տեղ և հողագուրկ գիւղացիութեան բաժանել լքեալ հարաւարևմտեան կողմը՝ Ելենովկայի և Նոր-Բայազէտի միջև գտնուղ էքինեք-քեանդ, Հաճի-Մուխան, Ազդերիս և այլ լքեալ գիւղերի հողերը, ինչպէս նաև Այրիվայի հարուստ արօտավայրերը և լճի հեւսիսային ափի լքեալ

գիւղերի հողերը: Այս վերջին չբլանում հայ բնակչութիւն ունէր և ոստիկան-քաղաքական նշանակութիւն: Ելենովկայի և մի շարք ուրիշ հողեր մացեցին պետական ֆոնդի մէջ:

Մեծ գաւառներում հողային յատուկ կոմիսիաները մասամբ կազմուած էին, բայց դեռ գործի չէին անցած. որով գաւառներում էլ չէին կազմուած հողային յատուկ կոմիսիաների գործունէութիւնը ղեկավարում էր ինքը՝ գիւղատնտեսական նախարարը պետական գոյքերի բաժնի վարիչ Գ. Կանդուրալովի գործակցութեամբ:

Գիւղատնտեսական նախարարութեան գործունէութիւնից յիշենք և պետական կոմիսատնտեսական օրինակելի ագարակի և պտղի–բոստանի կազմակերպումը Կարթլի չբլանի Գետրովկա գիւղում: Գործի ղեկավարութիւնը յանձնուած էր փորձուած կոմիսատնտես Դիլանեանին: Ագարակի համար ձեռք էին բերուած 300 ընտիր կովեր և անհրաժեշտ չէնքերն ու գործիքները: Գաւառապետը խանգարեց սկսած գործը:

Գաւառապետ Քոյլ չտուց աւարտել և էջմիածնի աուսի կառուցումը: Այդ նպատակով 23 միլիոն րուբլու վարկ էր բացուած և աշխատանքներն արդէն սկսած էին: Էջմիածնի աուսի աւարտումը վիճակուց խորհրդային իշխանութեան: Նոյն իշխանութիւնը գլուխ բերեց և Շիրակի աուսի չինութիւնը, որ նոյնպէս ծրագրուած ու ձեռնարկուած էր Հանրապետութեան օրով:

Չի կարելի լուսաբանել և Հայաստանի կօօպերացիայի վրայից, որ գործում էր արտակարգ թափով: Ծուլ: 1ը Հայաստանի կօօպերացիայի օրն էր, որ տեսուց չքեղ հանդիսաւորութեամբ: Այդ օր, Հայկօօպը — Հայաստանի կօօպերատիւների Միութիւնը — իր մէջ պարփակում էր 350 կօօպերատիւ ընկերութիւններ: Հայաստանի կօօպերացիան ունէր 95,000 անդամ: Եթէ հաշուենք, որ իւրաքանչիւր անդամի ընտանիքը, մէջին թուով, բաղկացած էր 4 հոգուց, ապա՝ Հայկօօպը պարունակում էր մօտ 400,000 մարդ: 1919 թուի ընթացքում Հայկօօպը հատաւարութիւնից ստացել էր փոխառութիւն 5 միլիոն րուբլի, բայց հաստատութեան մատակարարել էր 15,844,191 րուբլու մթերք և ապրանք: 1920–ին կառավարութիւնը տուեց՝ վարկ ու փոխառութիւն, 30 միլիոն րուբլի: Կառավարութեան աջակցութեամբ պետական մի առաքելութիւն ուղարկուեց Իսպանիա, որտեղից բերուեց խոշոր քանակութեամբ հաղուստեղէն և այլ կարգի ապրանքներ:

Աչքի առաջ ունենալով Հայկօօպի կարևոր տնտեսական գերը երկրում՝ կառավարութիւնը որոշեց թաց Քողնել նրան, իրրև փոխառութիւն, ևս 250 միլիոն րուբլի, մէկ տարի ժամանակով և տարեկան 6 տոկոսով: Այդ գրամով կատարելու էին գնումներ ներքին չուկայում, գնելու էին հում նիւթեր արտասահմանի հետ ապրանքափոխութիւնն անելու համար և գոյացնելու էին արդիւնաբերական ձեռնարկները:

Հայկօօպի պաշտօնաթերթ «Հայաստանի կօօպերատիւ» երկաբոթիթերը Դ. Աճառեանի խմբագրութեամբ, ունէր և լուրջ գրական-հասարակական բաժին:

Առ 1 յուլիս Հայաստանի վարչային կօօպերատիւների Միութիւնը — Հայվարկը, ունէր 23 անդամ ընկերութիւններ· 12,121 անդամով, 530,640ր· դրամագլխով· ընդունած աւանդը հասնում էր 1,142,812ր·: Փոխառութիւն էին կնքել 103,175ր· և անդամներին մինչև յունիս 1 փոխատուութիւն արել 815,350ր·: Ճիչեալ 23 ընկերութիւններից 10 հին գործող ընկերութիւններ էին, 11 վերաբացւած, իսկ 2 նոր հիմնւած: Այդ 23 ընկերութիւններին Հայվարկը 10,900,000ր· վարկ էր բաց արել, որից առ 1 յուլիս օգտւել էին 7 ընկերութիւնները՝ 1,500,000 րուբլոյ: Կառավարութիւնը Հայվարկին տրամադրել էր 40 միլիոն րուբլու վարկ: Հայվարկին ընդունում էր առանց ահմանափակման աւանդներ և ընթացիկ հաշիւներ ու անարգել վճարում էր ինչ դումար և պահանջւէր: Իր անդամ–ընկերութիւնների համար Հայվարկը տպագրել էր կանոնադրութիւն, մատեաններ, պատրաստել բլանկներ ու դիւանական պիտոյքներ և այլն:

Նոյն եռանդն ու կենդանութիւնը տեսնում ենք և կեանքի միւս ասպարէզներում: Ապրիլ 20–ի նիստում կառավարութիւնը որոշել էր կազմել մթերվարչական յանձնաժողով՝ արագացնելու համար կառավարական մի շարք գործառնութիւնների փոխանցումը զաւառական ինքնավարութիւններին: Յանձնաժողովի նախագահ էր նշանակւել ներքին գործոց նախարարութեան տեղական ինքնավարութիւնների և քաղաքային բաժնի վարիչ Հ· Մելքումեանը, անդամներ դիւղատնտեսական նախարարութիւնից՝ Ստ· Կամսարականը, աշխատանքի՝ Վ· Բաբայեանը, խնամատարութեան՝ Ռ· Քաջբերունին, հանրային կրթութեան՝ Գ· Մոսինեկեանը, արդարադատութեան՝ Բ·Ամիրխանեանը, հաղորդակցութեան՝ ինժ·Մելիք–Շահնազարեանը, ելեմտական՝ Գ· Զաքարեանը, Երևանի գաւառային ինքնավարութեան նախագահ Ծ· Թադևոսեանը: Մթերվարչական յանձնաժողովը մի շարք նիստերում մշակել էր այն պայմանները, որոնց հիման վրա գաւառային ինքնավարութիւններին պիտի փոխանցւէին կառավարական մի շարք իրաւունքներ ու հիմնարկութիւններ:

Մինչև յունիս 1 արդէն պետական բոլոր տարրական դպրոցները, բոլոր հիւանդանոցներն ու բժշկական կայանները, դիւղատնտեսական տեղական պահեստները, սերմանման մարմիններն ու գիւղատնտեսական կայանները, մթերքների և այլն փոխանցւած էին գաւառական ինքնավարութիւններին, որոնք հետզհետէ կարևոր տեղ էին գրաւում պետութեան կեանքում: Մանաւորապէս յաջող գործունէութիւն էին ցոյց տալիս Երևանի և Էջմիածնի գաւառական ինքնավարութիւնները:

Արդարադատութիւնը գարգանում էր անկասկած պայմաններում: Սովորական դատարանները չէին վերացւած, բայց դատերի մեծ մասը տեսնում էր արտակարգ դատարանների միջոցով: Մայիս 14–ից մինչև սեպտեմբերի սկիզբը Հայաստանում 234 քաղաքական բանտարկութիւններ էին կատարւել, որոնցից 120 հոգի ազատ էին արձակւել, 3 հոգի դատապարտւել մահապատժի և բանտերում մնում էին՝ 15 հոգի բանտարկութեան դատապարտւած,



1. ՅՈՒԼԻՈՍ ՄԱՐՏԻՆ
(Հանրապետության պաշտպան)



2. ՈՒԻԼՅԱՄ ՏԵՐՐԻ
(Ամերիկացի գրիչոն)



3. ՄԱՐՏԻՆ ԼՈՒԹԵՐԻ ԱՆՎԱՆԱԿՈՉ ՀԱՐԿԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ



4. ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԻՈՆ



5. ՖԵՐԴԻՆԱՆԴ ՄԱՂԵԼԱՆ
(Պրոր Նավ-Իսպանիայ Ցոլիս ուղարկած)

50՝ քննութեան տակ, 61 տեղափոխած դանագան բանտեր և 5՝ արտաքսուած Հայաստանէն: Արտակարգ դատարաններէն ոմանք չփոխուած են էչկոմ-ի հետ, որ բոլորովին ինքնուրոյն է: Արտ. դատարանը գուտ դատաստանական առեան էր, միայն պարզացած գործավարութեամբ և մահապատիժ իրաւունքով: Նրա դերն էր արագ դատավարութեամբ պայքարել պետական դաւաճանութեան և չարաշահութեան դէմ: Երեւանի արտ. դատարանի կազմն էր — Նախագահ՝ թժ. Ե. Տէր-Դաւթեան, անդամներ՝ Ա. Աբելեան և թժ. Ե. Մելիքեան, դատախազ՝ Ն. Թիւթիւնճեան: Մինչև յուլ. 15 Երեւանի արտակարգ դատարանը 41 հոգի արտաքսից Հանրապետութեան սահմաններից: Ալէքսանդրապոլի արտակարգ դատարանի նախագահն էր Գ. Վարչամեանը, դատախազ՝ թժ. Բ. Բաղդասարեանը: Արտակարգ դատարաններ կազմեցին և կարճում, Դիլիջանում, Նոր-Բայազետում: Բոլշեւիկները անհետքի լուրեր էին տարածում նրանց մասին: Յուլ. 6-ին Մոսկուայի ռադիօն հեռագրում էր ամենքին, ամէնքին, որ Երեւանի արտակարգ դատարանում դատած են 22 կոմունիստներ, որոնցից 2 հոգի դատապարտած է մահուան, 4 հոգի՝ ցմահ տաժանակիր աշխատանքների և որ, իբր թէ, դատավարութեան օրը տպարանական, երկաթուղային և այլ ձեռնարկութեանց բանուորները բողոքի գործադուլ են արել: Մոսկուայի մի ուրիշ ռադիօ հաղորդում էր, որ կարսի շրջանում դեղակահարած են 100-ից աւելի կոմունիստներ: Աւելորդ էլ ասել, որ երկուսն էլ չինծու էին:

Արտակարգ պայմաններում արդարադատութեան նախարարութիւնը դադրում էր երկրի դատաստանական գործի կարգաւորումից: Նախարարութեան կից գործում էր մանաւանդ ոմանց մի յանձնաժողով օրէնքների հայացման, նոր օրէնքների մշակման, դատաստանական բառակազմ ու բառարան խմբագրելու համար: Օգոստոս ամսին Հայաստանի ամբողջ դատաստանական գործը արդէն՝ վերից վար՝ ազգայնացած էր: Օգոստոս 18-ին Հանդիսաւոր կերպով բացուեց Կարսի Շրջանային Դատարանը՝ Հ. Մելքոմեանի նախագահութեամբ և կազմուեցան դատախազութեամբ, որով Հայաստանը ունենում էր երեք շրջանային դատարաններ—Երեւանի, Շիրակի և Կարսի:

Կրթական գործը առանձնապէս խոստմնալից ապագայ էր ցոյց տալիս: Որոշուել էր 1920—21 ուս. տարում բանալ 1500 տարրական դպրոց, հիմնական բարեփոխութեան ենթարկել միջնակարգ կրթութիւնը, բանալ մի չարք մանագիտական կրթարաններ: Փիւրքահայ, հատուածական դպրոցների դրութիւնը ինչած էր: Ըստ որում 21-ին կառավարութիւնը վճռեց երեսի փոխադրել համալսարանը, յատկացնել նրան նախկին Ուսուցչական Սեմինարիայի շէնքը, մշակել համալսարանի կանոնադրութիւնը, հրաւիրել նոր ուսուցչապետներ և այլն: Այդ նպատակով կազմուեց մի յանձնախումբ վարչապետից, հանրային կրթութեան ու խնամատարութեան նախարարներից և ակադ. Ա. Թամանեանից: Համալսարանը պիտի բացուէր Հոկտ. 16-ին, 4 բաժիններով՝ պատմա-լեզուաբանական, իրաւաբանական, բնագիտական և

Ֆիզիկամաթեմատիկական։ Ցաշրջ. տարեւանից պիտի բացէր և բժշկական բաժինը։ Մինչև հոկտ. 1 արձանագրուել էին 632 երկտեղ ուսանողներ, որոնցից 403 հոգին կամենում էին մտնել բնագիտական բաժինը, չատերը դեղագործական մասը։

Երեւոյթ բացուելու էր պետական երաժշտանոց, որի համար տեսուչ էր հրաւիրուում Մոսկուայի երաժշտանոցի նախկին տեսուչ, յայտնի երաժշտագէտ Խոլմով–Իվանովը, իսկ դասատուներ՝ ազատ արուեստագէտ Բարխաւդարեանը, Նշանեան երաժշտագէտ Սպենդիարեանը, Մելիքեանը և ուրիշներ։

Գնահատելու համար, Գոլոսով վախճանած գերասան Սեւումեանի առաջարկով, մտածուում էր հրաւիրել Մոսկուայի Գեղարուեստական Թատրոնի հմնադիրներից՝ հռչակաւոր ռեժիսոր Ֆ. Բօրիսեանին և հայ րնտի առաջնակարգ ուժերին։ 1920թ. ամառուայ ընթացքում գերասաններ Զարիֆեանը, Աբելեանը, Մայսուրեանը, ընտիր խմբով, Երեւանում տուին մի երկար շարք ներկայացումներ և ունեցան բացառիկ յաջողութիւն։ Թատրոնի պահանջը չատ մեծ էր։

Սեպտեմբերին Ալեքսանդրապոլում բացուելու էր ժողովրդական գեղարուեստի ուսումնարան, որի նպատակն էր լինելու արտայայտել ժողովրդական ստեղծագործութեան արժէքները՝ գորգագործութիւնը, ազգային մետաղների մշակոյթը, պղնձի, քարի մշակման գործը, ձեռարուեստի և նուրբ գործածքների մշակման գործը և այլն։ Դպրոցին կից լինելու էր տնայնագործական կոմբինէ գեղարուեստական–արդիւնաբերական քանգարանը, որի համար խնամ։ նախարարութեան աշխատանքի բաժինը արդէն ձեռք էր բերել 100–ից աւելի ընտիր գործեր, խազերտներ և ուրիշ գործածքներ։ Դպրոցի կազմակերպումը յանձնուած էր խնամ։ նախարարութեան աշխատանքի բաժնի վարիչ Ակունեանին։

Սեպտ. 27–ին Ալեքսանդրապոլում, մեծ հանդիսաւորութեամբ, բացուեց հաղորդակցութեան նախարարութեան տեխնիկական միջնակարգ դպրոցը ինժ. Շերմազանեանի տնօրինութեամբ։ Մի ամիս յետոյ, հոկտ. 25–ին, Երեւանում պիտի բացուէր երկրորդ տեխնիկական դպրոցը։

Կարսում բացուելու էր Առեւտրական Գիմնազիան։ Ընդհանուր վերաբացուելու էր ճեմարանը։ Երեւանում բացուելու էր միջնակարգ բժշկական վարժարան, Ուսուցչական Սեմինար և այլն։ Բացի այդ, Երեւանում և ուրիշ քաղաքներում կային բազմաթիւ մասնաւորական դպրոցներ ու դասընթացներ, ինչպէս ազգագրութեան, կար ու ձեւի, գորգագործութեան, գինետների, հաշուապահական, բժշկական, երկաթուղային, մանկավարժական, երգչախմբական, հայերէն և օտար լեզուների, ակառուսական և այլն։

Գործում էին և այլազան բնակութիւններ ու միութիւններ։ Հայաստանի Գրական Ընկերութիւնը, Հայաստանի Մարմնամարզական Ընկերութիւնը, Հայաստանի Ճեմելիական, Իրաւաբանական, Բժշկական, Ուսուցչական, Ուսանողական միութիւնները, Հրատարակչական Ընկերու-

քիմնը, Ջօրա–Տնեսական Ընկերութիւնը, Հայաստանի Շահմատիանների Ընկերութիւնը, «Գիւղացիի մարզական ակումբը Երևանում, Երիտասարդ գրագէտների «Պանդուխտ խումբը, Երևանի Հայուհեաց Միութիւնը, Հայաստանի Վաճառականական Ընկերութիւնը, Վաստուրականի Կանանց Միութիւնը, «Ինասասեր գրագարանը, 20–ի չափ Հայրենակցական ընկերութիւններ և այլն։

Հանքային կրթութեան և արհեստի նախարարութեան կից առնուեց Հայաստանի Հնութիւնների կոմիտէ, որի նպատակն էր պահել Հայաստանի հնութիւնները, թայլ չտալ, որ փչանան մարդկանց ձեռքով կամ բնական պատահարներից ու ժամանակի ազդեցութիւնից, փլչելու ենթակայ շէնքերին հասցնել անհրաժեշտական օգնութիւն, աչքի–լոյսի պատապարտում հնութիւնները նկարել, քանդակել և այլն։ Կոմիտէին էր վերապահուած նաև հսկողութիւնը պեղումների վրա կամ անմիջապէս պեղումներ կատարելը։

Հնութեանց Պահպանութեան Կոմիտէի կազմն էր. պրոֆեսորներ Թորեգին եպ. Ռոմսէվեան, ակադ. Ա. Թամանեան, Աշխարհիկ Մելիք–Թահմազեան։ Կոմիտէի հետազօտութեան ու պրպտումի առաջին առարկան եղան Անիի ամրոցները։ Ձգտարարպես Թ. Թորոմանեան դէկուցման հիման վրա գիւղատնտեսութեան նախարարութիւնը որոշեց Հնութեանց Պահպանութեան Կոմիտէին յատկացնել լքեալ Անի գիւղի հողերը, տրամադրեց տեղացուց, և այդ գիւղը զաթեաս Անիի հնութիւնների պահպանութեան կենտրոն։ Ձգտ. Թորոմանեանը հասատուեց այնտեղ։

1920թ. յուլիսին, Կոմիտէն կազմակերպեց գիտական մեծ արշաւանք, որին մասնակցեցին հարաւարպետներ Թորոմանեանն ու Ծէր–Մելքոչեանը, Հայ արուեստի քաղաքներ ուսս հարաւարպետ Գալէկինը, նկարիչ Ծղնչ Թադէոսեանը իր աշակերտներ Մկ. Մարդարեանի և Սար. Թարխարարեանի հետ, նկարիչ Տեղոյեան ամուսինները, «Գիւղարուեստ»–ի խմբագիր Գ. Լևոնեանը, լուսանկարիչ Վազ. Ծակոբեանը և ուրիշներ։ Արշաւախմբին մասնակցում էին և Կոմիտէի անդամներ Գարեգին Սպ–ը և Մելիք–Քայան–Թարեանը։

Արշաւախումբը իր աշխատանքների կենտրոն ընդունեց Անին, որտեղից աստիճանաբար պիտի տարածէր գէպի Կարս, Ալեքսանդրապոլ և Արարատեան դաշտ։ Այսպիսով, ամբողջ երկիրը հետազօտելուց յետոյ, պիտի կազմէր Հայաստանի հնագիտական քարտէսը։ Հետազօտութիւնները կատարում էին հնարաւորօք մշակուած ծրագրի համաձայն։ Ջուգընթացաբար հանում էին արձանագրներ, յատակագծեր, շէնքերի և արձէքարար տեղերի, խաչքարերի, արձանագրութիւն կրող քարերի ու շինքերի, քանդակների, պատկերների նկարները։ Հետաքրքրուած նիւթերը պիտի կենտրոնացուէին մայրաքաղաքի պետական թանգարանում, պիտի հիմնուէին տեղական թանգարաններ։ Հնագիտական հետազօտութիւնների տեսակէտից երկիրը բաժանուել էր մի քանի շրջանների, որոնք հետզհետէ պիտի ուսումնասիրուէին։

Օգոստոսի կէսերին, Անիւմ, նախագահութեամբ ակ.Ա.Թամանեանի, տեղի ունեցաւ խորհրդակցութիւն կոմիտէի և արշաւախմբի տեղ հասած անդամների՝ կատարելիք աշխատանքների մասին. մշակուեց հետագօտութիւնների գործադրական ծրագիրը, բաժանուեցին աշխատանքները և ամէն ոք անցաւ գործի: Մի խումբ՝ գլխաւորութեամբ Աշխարհէդ Մելիք-Քալանթարեանի և մասնակցութեամբ ճարտ. Ա. Գալկինի, ճարտ. Լ.Ճակոբեանի, լուսանկարիչ Վաղ.Ճակոբեանի, ուսանողուհիներ Ս.Մելիք-Քալանթարեանի, Վարս. Ճուխաճեանի ու Հեղ. Թառայեանի և ե. Ամիրեանի, Գ. Ճակոբեանի ու Մ. Պապայեանի մեկնեց Տիկոր, ուր աշխատեց մի ամիս, մինչև սեպտ. 18, պտտեց ծրագրած չրջանը — Անի—Արջու—Առիճ—Ալաման—Տիկոր—Ծղկոնք (Ախչ-Քիլիսա)—Ագարակ—Ջալալ—Պպկի—Նախճաւան—Բագարան—Արեն, որտեղից դուրս եկաւ Արագած կայարանը: Իր գիտական ճամբորդութեան ընթացքին խումբը հաւաքեց մեծ քանակութեամբ նիւթեր, կատարեց յուշարձանների մանրամասն չափագրութիւն, քաշեց բազմաթիւ լուսանկարներ, հանեց քանդակների էստամպաժներ, գտաւ մեծ թւով անյայտ արձանագրութիւններ: Բացի քրիստոնէական հնութիւններից, գլխաւորապէս ՃրդԼ Ղարերի, խումբը երևան բերեց ընդարձակ նաւարով և լաւ պահպանուած նախապատմական հնադրյն ժամանակների բնակութեանց և չինութեանց մնացորդներ: Միաժամանակ տեղերում ստեղծուեցին յատուկ մարմիններ՝ պահպանելու համար հնութիւնների պահպանութիւնը:

Անիւմ կատարուեցին և նկարչական աշխատանքներ՝ նկարիչներ Թարխարեանը և Մարգարեանը նկարեցին բազմաթիւ արժէքաւոր որմանկարներ:

Երկրորդ խումբը՝ առաջնորդութեամբ Գարեգին եպ.-ի և մասնակցութեամբ ճարտ. Եղիազարեանի և քանդակագործ Գեորգի մեկնեց Երևանից յուլ. 8-ին և վերադարձաւ 28-ին՝ ունենալով չատ յաջող աշխատանքներ:


Գատերազմը արգելք եղաւ այս աշխատանքներին էլ:

Կառավարութեան հոգածութեան առարկայ էր և Սևանայ լճի նաւարկութիւնը: Սեպտեմբերից սկսած լճի վրա սկսեց բանել առաջին չոգեմակոյկը: Մի քանի չաբաթ յետոյ սկսեց գործել «Աչուռ Երկաթ» «առագաստաւոր» մի արագաչարժ Քնդանօթով: Հիմք դրուեց մի աւելի մեծ չոգնաւի չինութեան: Սեպտ. 3-ին Շահբախթից Երևան բերուեց «Վեռորիցա Նիչաո» չոգնաւը, որ ուսաները տանում էին Վան և թողել էին կէս ճանապարհին: Նաւը վերանաւեց «Գեղանոյշ» և նոյնպէս պիտի փոխադրէր Սևան: Ենթադրւում էր Սևանի բոլոր եզերքները կապել նաւային հաղորդակցութեամբ և հետզհետէ գարդացնել նաւաշինութիւնը:

Սևանի նաւագնացութեան ոգին էին Խորհրդարանի անդամ Տիգրան Ամատունը — «Ծովակալ Սէյմուր» — և երիտասարդ ծովային սպայ Թումանեանը, որ այնպէս դաժանօրէն սպանուեց բոլշևիկների ձեռքով՝ բոլորովին անմեղ տեղը: Հօր՝ պրոֆ. Թումանեանի հետ եկել էր Բեսարաբիայից:



Ա. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ




Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ



ԱՍՏՂԻԿ Ա. ՊԱՐՈՆԵՍՅԱՆ



Հ. ՊԱՐՈՆԵՍՅԱՆ



Տ. ՏՈՒՄԱՆՅԱՆ



Հ. ՍՎԱՉՅԱՆՑ

Հայրը վարում էր դրամներքի տպագրության գործը, ինքը, պատանի հոգու ամբողջ եռանդով, նվիրվել էր հայկական նաւատորմիղին տեղեկագործման։ Քազաքականութեամբ չէր հետաքրքրւում, բայց, Հայաստանի խորհրդայնացումից յետոյ անմիջապէս, դարձաւ քաղաքական առաջին գոհը։

Ցուլիսին կառավարութիւնը հաստատեց ակադ. Ա. Թամանեանի կազմած և նկարիչ Կոջոյեանի գծած Հայաստանի պետական զինանշանի (դերբի) նախագիծը։ Զինանշանի կենտրոնում կար վահանաձև մի տարա-



ծութիւն՝ բաժանւած չորս մասի. իւրաքանչիւր մասում տեղաւորւած էր հին Հայաստանի չորս անկախ չրջաններից մէկի զինանշանը՝ Արտաչեսեան, Աբշակունեան, Բագրատունեան, Ռուբինեան։ Մէջտեղը դրւած էին մեծ և փոքր Մասիսները և նրանց վերև՝ Շ. Շ. տառերը։ Վահանի աջ ու ձախ կողմերը բռնել էին մի արծիւ և մի առիւծ, իսկ ներքևը՝ սուր, գրիչ, հասկեր և չղթայ։

Այս զինանշանը լուրջ առարկութիւններ առաջ բերեց Քչ կառավարութեան մէջ և Քչ դուրսը։ Ոմանք դժգոհ էին, ընդհանրապէս, զինանշանի գաղափարից ու ոգուց. վերարտայրում էր հին, անցած դարերի գաղափարները, չէր համապատասխանում նոր Հայաստանի պարզ, ռամկավար, յառաջդէմ ոգուն։ Ուրիշներ գտնում էին չատ ծանր, ահեղ, աշխարհակալական, միապետական ձգտումների արտայայտիչ։ Կային մարդիկ, որոնք նոյնիսկ պատմական ճշմարտութեան հակասող վտանգ էին գտնում զինանշանի մէջ, օրինակ, որ հայոց մէջ ընդունած չի եղել Երկգլխեան արծիւը, որ Տիգրան Մեծի Քաղի վրայի Քրւութիւնները նկել են ազատներ և ոչ արծիւներ և այլն։ Եւ, վերջապէս, զինանշանը չէր գոհացնում մարդկանց գեղագիտական պահանջներին, իր մէջ պարունակում էր չատ կենդանիներ. վատաբեալ գազանանոցն արխօսում էին ոմանք։

Բայց և այնպէս կառավարութիւնը հաստատեց ներկայացած նախագիծը, որովհետև պատմական կամ գիտագիտական ուսումնասիրութիւններ անելու ժամանակ չկար: Հաստատեց ժամանակաւոր կերպով, մինչև Սահմանադիր ժողով:

Յուլիս 5-ին հաստատուեց Հայաստանի քաղաքացիութեան հետեւեալ օրէնքը.

«1. Հայաստանի Հանրապետութեան քաղաքացի է ճանաչւում ամէն մի նախկին ռուսա և տաճկահպատակ, որը սոյն օրէնքի հրատարակման ժամանակ ապրում է Միացեալ Հայաստանի սահմաններում:

2. Միացեալ Հայաստանի սահմաններում ապրող նախկին ռուսա կամ տաճկահպատակներն իրաւունք ունեն սոյն օրէնքի հրատարակման օրից երեք ամսւայ ընթացքում, հրաժարուել Հայաստանի Հանրապետութեան հպատակութիւնն ընդունելուց, ինչպէս ներկայացնելով տեղական հաշտարար դատաւորին:

Ծանօթութիւն. 1. Հայկական ծագում ունեցող զինապարտ տղամարդիկ կարող են հրաժարուել չ. Հանրապետութեան հպատակութիւնն ընդունելուց միայն զինուորական ծառայութիւնը աւարտելուց և կամ նրանից ազատուելուց յետոյ:

2. Հպատակութիւնը ընդունելուց հրաժարուող անձինք պարտաւոր են հեռանալ Հայաստանի Հանրապետութեան սահմաններից: Հեռանալու ժամանակամիջոցը, կոյքերի լիկվիդացիայի կարգը, ինչպէս նաև այդ անձանց Հայաստանի սահմաններում մնալու թոյլտուութեան կանոնները, կորոշի յատուկ օրէնքով:

3. Հայաստանի Հանրապետութեան հպատակ են ճանաչւում հայկական ծագում ունեցող այն անձինք, որոնք ծնւած են Միացեալ Հայաստանի տերիտորիայում, բայց այժմ ապրում են Հայաստանի սահմաններից դուրս:

Ծանօթութիւն. 1. Ներքին Գործերի Նախարարի թոյլտուութեամբ Հայաստանի Հանրապետութեան հպատակութիւնը կարող են ընդունել նաև ոչ հայ ծագում ունեցող այն անձինք, որոնց ծնողները կամ իրենք ծնւել են կամ մշտական ապրած են եղել Միացեալ Հայաստանի սահմաններում, բայց սոյն օրէնքի հրատարակելու ժամանակ գտնւած են եղել Հայաստանի սահմաններից դուրս, եթէ այդպիսիները սոյն օրէնքի հրատարակումից հինգ տարւայ ընթացքում Ներքին Գործերի Նախարարութեան ներկայացնեն յայտարարութիւն իրենց հպատակ արձանագրելու մասին:

4. Բոլոր հայ ծագում ունեցող օտար պետութեանց հպատակները և կամ այդ պետութեանց քաղաքացիութիւն ձեռք բերողները իրաւունք ունեն իրենց և կամ իրենց ոչ չափահաս երեխաների անունից սոյն օրէնքի հրատարակումից հինգ տարւայ ընթացքում յայտարարելու իրենց Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն ընդունելու մասին՝ նեղմտրեելով այս տուիչ համապատասխան յայտարարութիւն երկու պետութիւնների ձեռնհաս հաստատութեանց»:

Հպատակութեան հարցը երկար բանակցութիւններ նրւէր գարձաւ և հայ-վրացական խորհրդաժողովում, որ 1920թ. ամսան էլ լարաձգեցաւ:

Վրացիները հակառակում էին, որ Վրաստանի հայ հին բնակիչները դառնան հայահպատակ։ Նոյն խորհրդաժողովում նորից քննուեց և լուծուեց ահաւոր խնդիրը։ այս անգամ վրացիները պահանջում էին Լոռին մինչև Սանահին, ամբողջ Ախալքալաքի գաւառը, Ապարան և Օլքի գաւառների արոյ մասերը։ Հայաստանի և Վրաստանի միջև կնքուեց դաւանական համաձայնութիւն և 1919 թուի քրանդիսի օրէնքը լրացուեց բացատրութեամբ, որով ռազմանիւթն էլ փոխադրելու էր ռուսական ապրանքների պայմանով։ Մինչև այդ վրացիները արգելքներ էին յարուցանում և, օրինակ, Հայաստանի համար Ղրիմից «Ֆինիկս» նաւով եկած 3 միլիոն փամփուշտը քոց Թոռին միայն 30%ը ստանալուց յետոյ։

Օգոստ. 2 Մորհրդարանի նիստում Հայաստանի ներքին չինարար աշխատանքը նկատ զարձաւ վարչապետի ընդարձակ զեկուցման։ Այդ նկատում, Սոց.–Յեղափ. հուսակցութեան Հայաստանի կազմակերպութիւնը յայտարարեց, որ ինքն այլևս ճանաչում է Հայաստանի անկախութիւնը։ Պատգամաւոր Ա. Յովհաննիսեանը արաւ հետևեալ յայտարարութիւնը։

«Մենք պատգամաւորութիւնը Եւրոպայում միշտ խօսում էր եւրոպական պետութիւնների մասին, իսկ այսօր քաղաքական պայմաններն այնպէս են դասաւորուած, որ ժամանակ է յայտարարել, թէ մեր պետութիւնը պիտի ապրի ինքն իր ուժով։ Այսօր, սակայն, ռուսական օրինակութեան նոյնպէս գործնական օգուտ չի տալիս մեր պետութեան։ Թէ Անգրկովկասում տեղիացած դրութեամբ և թէ իր ներկայ իդէոլոգիայով։ Եւ ես պարտք ունիմ յայտնելու այստեղ սոցիալիստ–յեղափոխական ֆրակցիայի կողմից, որ մենք կամ ենք այն համոզման, որ Անգրկովկասի դեմոկրատիան պիտի ապրի ինքն իրեն անկախ։ Իւրաքանչիւր ոյժ, որ դէմ կը դնայ այդ շահերին, կը դիտուի նոյնպէս թշնամի, և մենք դէմ պիտի գնանք նրանց։

Զգոյշ ու վարանոտ՝ հայ սոցիալիստ–յեղափոխականներն ևս դալիս էին կանգնելու Հայաստանի անկախութեան տեսակէտի վրայ, և Մորհրդարանը բուռն ծափերով ու բացականչութիւններով ողջունեց նրանց այդ քայլը։ Այսպիսով, այսուհետև Հայաստանի բոլոր քաղաքական հոսանքները, բացի բոլշևիկներից, կոդմակից էին անկախութեան։

Հայաստանի բնակիչներից ոչ պակաս խանդավառ Հայաստանի անկախութեամբ ոգևորւում էին և Հայաստանից դուրս գտնուղ հայերը, որոնցից չատերը բուռն կերպով ձգտում էին տեղափոխուել Հայաստան։ Կառավարութիւնը անհաւատ համախոհականներ ու գիմուղներ էր ստանում, պատգամաւորութիւններ ընդունում՝ Թուրքիայաստից, Հիւսիսային Կովկասից, Դոնի շրջանից, Մոսկուայից, Սև ծովի ևգերքներից, Բալկաններից, Միխայիլովկից, Պարսկաստանից, անգամ Աբիսինիայից, որոնք խնդրում էին փութացնել ներգաղթը։ Շատերը արտօնութեան էլ չէին սպասում։ վերադառնում էին իրենց գործերը, ծախում–ծախծխում ունեցածը և յուսալում Հայաստան։ Շատերին յաջողուեց հասնել, ոմանք մնացին ճանապարհին, չատ չատերի էլ իրենց տեղերում, ձեռներու պատրաստ վիճակի մէջ։ Երևանը հետզհետէ դառնում էր համահայկական քաղաք։ Մի ճամբորդ

հետևեալ ձևով էր նկարագրում իր առաջին տպաւորութիւնները Հայաստանի մայրաքաղաքից։

«Երբ մտնում էի երևանի ակումբը, տեսայ, որ իմ բոլոր ծանօթները հաւաքուից, Թիֆլիսից, Ռուսաստանից, բոլորը այնտեղ էին։ Տէր Աստուած, ո՞վ չկար այնտեղ... Կազմուել էր մի հասարակութիւն, որի անդամները հէնց նոր եկած, իրար գլխի քաֆուած՝ ուզում էին ստեղծել նոր մայրաքաղաքի բնակչութիւն, նոր պետութեան քաղաքացիութիւն։

Երազ է թւում այս բոլորը։

Բայց սա իրականութիւն է։ Հայաստանը կայ և պիտի լինի։

Երևան նկողը առաջին անգամ մի բան կը նկատէ, որ ոչ ոք պարապ չէ։ Ամէն մարդ բանի է, ամէն ոք չտապում է հոգածու հաւճնարով։ Զգետեմ, Հայաստանի աւերմո՞ւնքն է չատ և հայ ժողովուրդը ջանում է վերաշինել, թէ՞ հարիւրաւոր տարիների խանդաբիլ հանգամանքները վերանալուց յետոյ հայը մի հանգիստ սրտով եկել է իր ազատ տունը և իրեն տւել է մի մոլութեան, որ յատուկ է հային։ Լինել, վերաշինել հէնց միայն, կարծես, լինելու համար...

Ամբողջ ճամբան, որով եկայ Հայաստան և անցայ նրա մայրաքաղաքը, աւերի հետքեր էին և չինող ձեռքի արդիւնքներ։ Երևանի փողոցներում տեսնում ես այդ աշխատաւոր ժողովրդին։ Արևաո, խստաշէմ, տրեխաւոր, կարկատած, մտահոգ։ դա հայ գիւղացին է — գործի է գնում... Այժմ հայ գիւղացին հաց և պաշար ունի՝ արիւն-քրտնքի գնով ձեռք բերածդ։)*

Անկախութիւնը խօսք չէր այլևս, այլ իրական փաստ, որ վաւերացուեց և միջազգային իրաւական ճանաչումով։ Օգոստ. 10-ին ստորագրուեց Սևրի դաշնագիրը։ Հայաստանը դաշնակից կողմ էր։ Ստեղծւում էր Միացեալ Հայաստան։ Հայի նւիրական երազը իրականութիւն էր դառնում։

*Ա. Ահարոնեանը հետևեալ ձևով էր նկարագրում հպատմական անցքի նկարագիրը, կառավարութեան ուղարկած գեկուցման մէջ**)։*

«Ճաչից յետոյ, ժամը 4-ին, երկու սիմոթիլներով Փարիզից հասանք Սևր։ Ինձ ուղեկցում էին խորհրդականներ Ա.Խնֆիլեանը, բժ.Ե.Նէվրուզը և 2 քարտուղարներ։ Սևրի յախճապակու յայտնի գեղարուեստական գործարանի դլխաւոր դահլիճը պատրաստած էր Խաղաղութեան Համաժողովն ընդունելու համար։ Այդ դահլիճի ճակատի պատի տակ տեղ բռնեցին մեծ պետութեանց պատիրակները։ Աջ ու ձախ պատերի տակ երկու թևերով՝ փոքր դաշնակիցների տեղն էր։ Հայաստանը իր տեղն ունէր ձախ թևում, ռումինների և չեխոսլովակների կողքին, ուր և ես տեղ բռնեցի, մինչդեռ մեր խորհրդականներն ու քարտուղարները տեղատուեցին պատիրակների թիկնաթոռների յետևում, յատուկ պատրաստած աթոռների վրայ։ Իմ առջև, սեղանի վրայ, դրւած էր փոքրիկ քարտ, որի վրայ գրւած էր Plénipotentiaire d'Arménie։

Ժամը 4-ից անց էր, երբ գրեթէ նստած էին բոլոր պետութիւնների ներկայացուցիչները, ներս մտաւ Համաժողովի նախագահ պ. Ա. Միլլերան։ Բացակայում էին միայն Թիւրք պատւիրակները, որոնք սպասում էին վարի

---

*) «Ձախսաստուր», 22 հոկտ. 1920։

**) Հ.Հ.Պատւիրակութեան «Գործ» № 101, Ահարոնեանի 19 օգ. նամակը Հայաստանի արտ. գործոց նախարարին։

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՌԵՐԱՑԱՅԻՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ԳԵՂԱՐՎԵՍՏԸ



Ն. ՊԵՂԱՍԵԼԱՆ



Լ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



Ա. ՀԱԿՈԲՅԱՆ



Ս. ՓՈՂՈՍՅԱՆ

(Փարիզ. 2. 2. Պատ.)



Ա. ՂԱՐԻԲՅԱՆ

(2. 2. Փարիզի Ինտ.)



յաքուած։ Նախագահի նշանի վրա նրանց ներս բերին, և առաջնորդող պրոտոկոլուղը մուտքի առաջ կոչից բարձրաձայն՝ «Messieurs les Plénipotentiaires de l'Empire Ottoman!»։ Համաժողովը ոտքի կանգնեց ի նշան ողջոյնի։ Կարմիր ֆէէսերը գլուխներին, երկար բեռնեզոտ հագած՝ ներս մտան երեք Թիւրք պաուէրականները, գլխի ծեծուէմով ողջունեցին Համաժողովը և իրենց տեղերը գրաւեցին, յոյներից վեր։ Գեղեցիկ անմիջապէս յետոյ, ոտքի ելաւ պ. Ա. Միլլերան և ասաց հետեւեալը.

«Պարոննե՛ր, ես յայտարարում եմ. այս դաշնագիրը, որ պիտի ստորագրենք, միաեռամայն համապատասխան է երկու կողմերի ընդունածներն։

Ապա հրաւիրեց Թիւրքերին ստորագրել։ Ոտքի ելան Համդի փաշա, Ռեիզա Թեֆիկ բէյ և Ռաւիլ բէյ, վճռական քայլերով մօտեցան կլնտրոնի սեղանին, ուր դրած էր դաշնագիրը և իրար յետևից չորս-հինգ անգամ ստորագրեցին այն և գրիչը հագեցնով դնացին իրանց տեղերը։ Այնուհետև ստորագրեցին Անգլիայի, Ֆրանսայի, Իտալիայի և Ճապոնիայի ներկայացուցիչները և նրանցից անմիջապես վերջը հրաւիրեցին ինձ։ Այսպիսով, պատուիրեալների այրբենական անուանակարգի հնորհիւ Հայաստանը (Arménie) կրասեր դաշնակիցների մէջ ստորագրեց առաջինը... Ես ստորագրեցի երեք ակտ. 1) Թիւրքական դաշնագիրը. 2) Մեր երկրի փոքրամասնութիւնների վերաբերեալ դաշնագիրը Հայաստանի և մեծ պետութիւնների միջև և 3) Մի սրժանագրութիւն Հէյազի և Իւզո–Սլաւիայի բացակայութեան մասին*)։

---

*) Ակռի դաշնագրի մէջ Հայաստանին յատկացւած էր մի ամբողջ բաժին — բաժին VIz— 88—93 յօդուածները, որ առաջ նմի բերում ամբողջութեամբ։

«Յօդ. 88։ Թիւրքիան յայտարարում է, որ ինքը ճանաչում է Հայաստանը, ինչպես այդ արել են արդէն դաշնակից պետութիւնները, որպես ազատ և անկախ պետութիւն։

Յօդ. 89։ Թիւրքիան և Հայաստանը այլ և այլէ բարեր դաշնագրի կողմերը, համաձայնւում են Ա֊ռիթի։ Միաց։ Նահանգների նախագահի իրաւասքը վճռել յանձնել ամէնայն որոշումը Թիւրքիայի և Հայաստանի միջև երբեմնի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայէթներում և ընդունել նրա վճիռը, այլ և բոլոր այն միջոցները, որ կարող է նա հրամայել Հայաստանի դէպի ծով ելք ունենալու և յինչու ամէնայն կից գոնւող սահմանն որև է հողի զիջաքաժման մասին։

Յօդ. 90։ Այն պարագային, երբ սահմանի որոշումը 89րդ յօդւածի հիման վրա անհնար լինի հետևանքը, որ Հայաստանին յանձնէ յինչու նահանգների հողի ամբողջու֊ թիւնը կամ մէկ մասը, Թիւրքիան անյապաղ յայտարարում է, որ ինքը հրաժարւում է վճռի օրից ոնած բոլոր իրաւունքներից ու իրաւահրմնդրներից յանձնած հողի վրա։ Սոյն դաշնագրի այն կէտերը, որոնք կիրառելի են Թիւրքիայից անջատած հողերի վերաբեր֊ մամբ, այս վերջինից պիտի կիրառելին և այս հողի վերաբերմամբ։

Թիւրքիայի ելևէմտական պարտաւորութիւնների այն բաժինն ու բնոյթը, որ կրելու է Հայաստանը, յինչու նաև բաժինն ու բնոյթը այն իրաւունքների, որոնց վրա կարող է յինչել նա՝ իր պերիլիաութեան տակ ոնած հողի կապակցութեամբ, որոշելու են համաձայն առն դաշնագրի 8րդ մաս յօդ։ 241—244–ի (ելևէմտական դրութիւններ)։

Ցեռագրաց համաձայնութիւնները կը կարգադրեն, եթէ այդ անհրաժեշտ լինի, բոլոր այն հարցերը, որոնք կարգադրւած չեն լինի առն դաշնագրով և որոնք կարող կը լինեն առաջ գալ յինչու հողամասի յանձնումով։

Յօդ. 91։ Եթէ 89 յօդւածի մէկ կամ մի քանի մասը յանձնւի Հայաստանին, այն ժամանակ սահմանագծող յանձնաժողովը, որի կազմը կորոշի յետագային, կը կազմէ յերեքաց երեք անդամ յինչու յօդւածում նախատեսւած վճռից յետոյ։ Նպատակ ունենալով անդի ու տեղը գծել սահմանը Հայաստանի և Թիւրքիայի միջև, որոշների յարդի կը լինի համաձայն յինչու վճռի։

Յօդ. 92։ Հայաստանի սահմանները Ազգերէնաի և վրաստանի հետ համապատասխան կերպով կորոշւեն յանձագրւած պետութիւնների ընդհանուր համաձայնութեամբ։

Եթէ այս կամ այն գէպքում, երբ որդէն 89 յօդւածում նախատեսւած վճիռը տրւած

Օգոստ. 15–ին, դաշնագրերի ստորագրության առթիվ, հանդիսաւոր մաղթանք տեղի ունեցաւ Փարիզի եկեղեցում և ճաշից յետոյ, ժամը 4–ին, պաշտօնական ընդունելութիւն մեր գաղութական չինովնիկների մէջ: Շատ մեծ բազմութիւն հաւաքուել սպասելու համար համազգային մեծ օրը՝ ճառեր ու բանաստեղծութիւններ արտասանելուց, հայրենասիրական երգեր երգելուց և պատճ. Ազատ և Անկախ Միացեալ Հայաստանին»:

Սևրի դաշնագրի ստորագրութեան առթիւ ժողովներ ու հանդէսներ եղան և Հայաստանում, ուր նոյնպէս ճառեր ու բանաստեղծութիւններ արտասանուեցին և հայրենասիրական երգեր երգուեցին, բայց այնտեղ չուտով պիտի երգուէին և ուրիշ երգեր: Նշանները արդէն երևում էին...

լինի, չհետզրուտ պետութիւնները չկարողանան հանել, ընդհանուր համաձայնութեամբ, իրենց տհամաձայնների որոշման, վերջինս կարոլի գլխաւոր գաղափից պետութիւնների կողմից, որոնք միաժամանակ պէտք է հոգ տանեն անգործնեայ ազգ տեղում:

Թող. Հայաստանը ընդունում է, համաձայնելով մոցնել գաղնագրի մէջ գլխաւոր գաղափից պետութիւնների հետ՝ այն որոշումները, որ այդ պետութիւնները տհամաձայնութեան կը գանեն՝ պաշտպանելու համար Հայաստանում չուները այն բնակիչների, որոնք մինամասնութեան տարրերում են գեղով, լեզուով կամ կրօնով:

Հայաստանը համաձայնում է, հատատրակս, մոցնել գաղնագրի մէջ գլխաւոր գաղափից պետութիւնների հետ այն որոշումները, որ այդ պետութիւնները անհրաժեշտ կը գանեն՝ պաշտպանելու համար քրիստիան ազատութիւնը և արգաս խոտոտրգը ուրիշ տարերի առնութեան համար»:

ՀԱՑ — ԲՈԼՇԵՒԻԿԵԱՆ ՑԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ինչպէս տեսանք, խորհրդայնացումէն անմիջապէս յետոյ, Ադրբէյճանի Ճեղհոմը վերլնագիրը ուղարկեց Հայաստանին՝ պահանջելով դաւադրական Ղարաբաղի ու Զանգեզուրը: Դեռ պատասխանը չտացած, յունիս 1–ին Հայաստանի կառավարութիւնը տտացաւ մի ուրիշ վերնագիր, այս անգամ 11րդ զօրաբանակի հրամանատարութեան կողմէն: Վերնագիրը ատում էր·

«Հայաստանի և մեր բարեկամ Խորհրդային Ադրբէյճանի սահմաններում յարուցակում են պատերազմական գործողութիւնները Հայաստանի և Ադրբէյճանի միջև: Ռուսաստանի բանւորագիւղացիական կառավարութիւնը իր օրգանան պարքն է համարում բոլոր ուժերով օգնութեան հասնել Ադրբէյճանի հաշտ աշխատաւորութեան անունէ օգնութիւն խնդրող խորհրդային կառավարութեան, որպէսզի Ադրբէյճանում վերլնականապէս հաստատւի բանւորա-գիւղացիական կառավարութիւնը: Անգլիայի և Դաշնակցութիւն ու Մուսաւաթ կուսակցութիւնների գերդումով հայկական և ադրբէյճանան զօրքերի միջև ազգային հողի վրա տեղի ունեցող քշտմունքիւնները չահաչէտ են միայն ճնչած ժողովուրդների յաղթողների և Հայաստանի ու Ադրբէյճանի աշխատաւոր դատակարգերի չահագործողների համար: Ադրբէյճանի և Հայաստանի միջև եղած սահմանային բոլոր վիճելի հարցերը կարող են լուծւել միայն աշխատաւոր և ինքնորոշող ժողովուրդների կամքով: Խորհրդային Ադրբէյճանը չի կարող պաշտպանել և ո՛չ մի չովինիստական, ազգայնամոլ և յսրձակողական գործ: Ադրբէյճանում այլևս չի կարող գոյութիւն ունենալ միլլեդային քշտմանք: Ցանուն Ռուսաստանի Սոցիալիստական Դաշնակցական Խորհրդային Հանրապետութեան առաջարկում եմ Հայաստանի կառավարութեան անմիջապէս դադարեցնել ռազմական բոլոր գործողութիւնները Խորհրդային Ադրբէյճանում և իր զօրքերը դուրս հանել նրա սահմաններից: Այդ բանը պէտք է աւել ներկայ հեռագրի ստացումից յետոյ 24 ժամուայ ընթացքին: Մոյն պահանջի չգործադրութիւնը կը նկատւի իբրև մարտահրաւէր ուղղած Ռ·Մ·Դ·Խ·Հ·Հ·Ֆ·Հ·ի հասցէին: Առաջիկը կիրառութեան Ռուսաստանի կարմիր բանակի ուժերով, իսկ հետևանքների պատասխանատուները կրնկնի հայկական կառավարութեան վրա: Գովխաոնան ճակատի Յեղափոխական Բանակի Խորհուրդ—Օրջոնիկիձէ, Առաջին Բանակի Յեղափոխական Խորհուրդ — Ֆիբրով, Մէխոնոշին, Լեվանովսկի· 1 մայիս, 1920թ·»:

Գարգ էր, ուրեմն· Խորհրդ· Ադրբէյճանը Հայաստանի վերաբերմամբ անչեղ չարունակում էր մուսաւաթական Ադրբէյճանի քաղաքականութիւնը, իսկ Խորհրդային Ռուսաստանը ամէն կերպ ոչակցում էր նրան: Ինչ էր մնում անել Հայաստանին· — բողոքել: Եւ ահա սկսում է հեռագրական

բողոքների մի երկար շարք՝ Լենինին, Զինովևին, Օրջոնիկիձեին և ամենքին, ամենքին։ Իսկ մինչ այդ Ղարաբաղի ուղղությամբ շարժւում էին մեծ քանակութեամբ ուս և ապրէլեանցի զօրքեր։ Եւ երբ բոլշևիկեան ուժերը Ղարաբաղի ճակատում արդէն այնքան էին, որ կարելի էր սկսել վճռական գործողութեան, մայիս 21–ին Դրօի մօտ եկան Օրջոնիկիձեի ներկայացուցիչները Ս. Տէր-Դաւթեանը, Կադոյովը և Գեբեանին և յայտարարեցին, որ խորհրդային իշխանութիւնը որոշել է զբաւել Ղարաբաղը մինչև Հաքեարի գետը։ Դրօն բողոքեց՝ յայտնելով, որ նման հարցերի համար պէտք է դիմել Հայաստանի կառավարութեան, բայց տեղեակ եղաւ և, մայիս 26–ին, իր էքսպէդիցիոն զօրամասով հեռացաւ Ջանգեզուր։

Հայաստանի կառավարութիւնը վճռական բողոք ուղարկեց Մոսկւա, բայց այս էլ, միւս բոլոր բողոքների պէս, մնաց անհետևանք։

Հետևանք չունեցան և Հայաստանի ու Խորհրդային Ադրբէջանի միջև սկսած բանակցութիւնները։ Եզակաչրջումից անմիջապէս յետոյ ուրիշ ներկայացուցիչների հետ ձերբակալել էր և Հայաստանի դիւանագիտական ներկայացուցիչ Մ. Ցարուբիւնեանը՝ ներկայացուցչութեան բոլոր անդամների հետ միասին։ Ներկայացուցչութիւնը ժամանել էր Թալեան։ Այդ, ինչպէս և Հայաստանի ու Ադրբէջանի միջև վէճի առարկայ եղող հարցերը լուծելու նպատակով՝ սկսուեցին բանակցութիւններ Ադրբէջանի Եզեկոմի և Հայաստանի կառավարութեան միջև։ Բանակցութիւնները վարում էին Ադրբէջանի Եզեկոմի անդամ Հուսկինովը և Հայաստանի Թիֆլիսի դիւանագ. ներկայացուցիչ Տ. Բէգզադեանը։ Առաջարկւեց դումարել խորհրդաժողով—ադրբէջանցիք ուզում էին Բագւում, հայերը՝ Ղազախում։ Հայաստանի կողմից պատւիրակութեան անդամ նշանակւեին Մ. Ցարուբիւնեանը*), Տ. Բէգզադեանը, Ն. Ադբալեանը և Կ. Ղազազեանը։ Ադրբէջանի կողմից՝ Նախագահ Իբրահիմ Աբդուլով, անդամներ՝ Լոմինձէ և Մկիկեան։ Խորհրդաժողովի հետ կապւած խնդիրները, ինչպէս և Ադրբէջանի Երևանի ներկայացուցչութեան վիճակը կարգաւորելու համար, օգոստոս 14–ին, Երևան հկաւ Ադրբէջանի Եզեկոմի ներկայացուցիչ Դովլաթեանը քարտուղար Գասպարեանի և տուրհանդակ Մորթա Ֆաթալի հետ։ Աւելի չուտ լրտեսական մի խումբ էր այդ։ Ի հարկէ, այդ բանակցութիւններից էլ բան դուրս չեկաւ։ Ադրբէջանի վարիչները դիտմամբ դրութիւնը Թողնում էին անորոշ ու խճողւած, որպէսզի աւելի հեշտութեամբ իրականացնեն իրենց ժամանակաքանի ծրագրները»։ Նրանց գլանքն էր ինչ գնով և լինի կցել Ադրբէջանին Ղարաբաղ—Ջանգեզուր—Շարուր—Նախիջևանը։ Ադրբէջանցի բոլշևիկներն էլ, մուսաւաթականների և իթթիհատականների պէս, աչքաթող չէին Ադրբէջանը կապել էթնոպոխականց թիւրքիային, ինչպէս և թիւրքերը գլանք էին թափում Ադրբէջանը պահել իրենց ազդեցութեան տակ և օգտագործել իրենց քաղաքական նպատակների համար։ Հէնց Ադրբէջանի խորհրդայնացումը թիւրքերի դործն էր։ Հպարտացնելով Ադրբէջանը, թիւրքերը

*) Խորհրդաժողովի առթիւ Մ. Ցարուբիւնեանը արձակուեց բանտից։

առնում էին նրան բոլշևիկ-քեմալական ապագուքեթյան չրջանի մեջ և մի կողմից զարձնում համաթիւրքական գործունեութեան լծնարան հովկասում և Թուրքիստանում, միւս կողմից՝ հաղորդակցութեան ուղիղ ճանապարհ Մոսկուայի և Անդորայի միջև։

Բոլշևիկ-քեմալական գործակցութեան ուժեղացման տեսակէտից ահագին դեր կատարեց և արևելեան ժողովուրդների համազումարը Բագուում։ Այսպէս հաւաքեցին համիսլամական և համաթիւրքական չարժման ամենաբարեսիրտ գէմքերը՝ Էնվէր, Խալիլ փաշա, Ջեւդէթ Թալէաթ, Բէհաէդդին և ուրիշ շատ յարգարժանները։ Արևելեան ժողովուրդների համազումարը ոչ միայն միջոց եղաւ յեղափոխութեան քարոզութեան Արևելքում, այլ և նրա մէջ հիմք դրուց բոլշևիկ-քեմալական գործնական քաղաքականութեան Առաջաւոր Ասիայում և, մասնաւորապէս, Հայաստանի դէմ։ Կասկած չկայ, որ Բագուում գործնական ձև ստացաւ և պատերազմի խնդիրը Հայաստանի դէմ։ Ըստ կայացած համաձայնութեան, Հայաստանի խորհրդայնացման նպաստելու դիտաւորութեամբ, Քեւրքերը պիտի չարժէին Հայաստանի վրա միևնոյն Սարըղամիշ։

Բոլշևիկ—քեմալական—ապրիլեանան գործակցութեան մասին չատ նիւթեր կան հրապարակի վրա*) և հազիւ թէ կարիք լինի երկար վկայութիւններ բերելու, բայց մի երկու փաստ, այնուամենայնիւ, արժանապրենք. 1920թ. մարտ. 15-ին, էրզրումում, Ապրիլեանի դէմ։ Նախապարի օգնական գօր. Ալի Ղաա Շեֆիկեթի և Քիւրեան 15րդ բանակի հրամանատար Քեազիմ Կարաբեքիր փաշայի միջև։ Այդ համաձայնագիրը պիտի փոխարինէր 1919թ. նոյ. 29-ին, Փոլսում կնքուած, Քիւրք-ապրիլեանան դաշտի դաշնագիրը**)։ Ինչպէս և այս վերջինը, էրզրումի դաշնագիրն էլ իր մէջ մտնում ուղղակի էր Հայաստանի դէմ։

Այդ դաշնագրի 5րդ կէտը բառացի կերպով ասում էր. «Ապրիլեանի կառավարութիւնը խոստանում է չարունակել նպաստել Կորդը. Թուսաստանին և Վանատրիայի ու Թունգիայի իրաւունքների պաշտպանութեան կոմիտէին միջև մերձեցումն իրականացնելու։ Անհրաժեշտութեան դէպքում ինքն էլ է յարում այդ միութեան»։ Դրդ յօդուածը խօսում էր Հայաստանի մասին. «Վանատրիայի ու Թունգիայի իրաւունքների պաշտպանութեան կոմիտէն վճռականօրէն խոստանում է, որ այն դէպքում, երբ Հայաստանը յարձակում գործէ Ապրիլեանի վրա, և Ապրիլեանի կառավարութիւնը վճռականօրէն խոստանում է, որ այն դէպքում, երբ Քիւրքիայի արևելեան չրջանները կը տրուեն և կը միացնեն Հայաստանին, — այս երկու դէպքում էլ համաձայնութեան նկած երկու կողմերն էլ պաշտպանելու են միմեանց չահերը և գործելու են որպէս միացած բանակ»։

Այս համաձայնութեան տարի. Որ, որ Քեազիմ Կարաբեքիրը գրում էր իր մի նամակում. «Մեր, Ապրիլեանի և բոլշևիկների միջև կնքած պայմանների հիման վրա, մեծ Քիւ. մեր ոսմանների, բժիչկների և պաշտօնեաների դնացել են Ապրիլեան։ Բոլշևիկները մեզ առաջարկեցին անյապաղ պատե-

*) Հեծ Ազգաթայի 1926թ. դատավարութիւնների բաւական են հաստատելու համար, որ թիւրք-բոլշևիկեան գործակցութիւնը 1920թ. փաստ էր։

**) «Ժողովուրդ», 1920թ. յուլ. 12 Ն. 9. Երևան։

բազմական գործողություններ սկսել հայկական սահմաններուն վրա, հաշիւի դէմ, կիլիկիայի սահմաններուն՝ Ֆրանսացիներուն դէմ։ Դաղտնաբար կազմուած կանաչ բանակը՝ էնվէրի, Նուրիի և Խալիլի ղեկավարութեամբ պէտք է ապրիլի սկզբներին աշխատէ մտնել Բաքու։ Ապրիլեանների օրերուբը պէտք է ցոյց տան կեդրոնական դիմադրութիւն, որպէսզի կարողանան իրենց տրամադրութեան դնել հնարաւոր ուժերը։ Միանալով կանաչ բանակին՝ ապրիլեանների օրերուբը պէտք է ուրթի օրանն ընդհանրութեան Հայաստանի հետ և Անատոլիայում դանուող Քիւրթ օրերուբի հետ միասին անցնեն Հայաստանի սահմաններն ու սկսեն զինուորական գործողութիւններ Հայոց Հանրապետութեան դէմ։

Մի ուրիշ վկայութիւն։ յայտնի կոմունիստ Սուլթան Գալիեվը 1920թ. մայիսին գրում էր «Իզվեստիայ»-ում։ «Մեր կազմակերպութիւնը Դենիկինի Մոսկուայի վրա գործած յարձակման ժամանակ նրա թիկունքում առաջացրեց ապստամբութիւն և սպիտց կուի վճռական րոպէներին նրա բանակից մի քանի զօրամասեր ուղղել դէպի յետ՝ ճնշելու համար ապստամբութիւնը։ Այդ ձևով է աչխատել մեր կազմակերպութիւնը և բաթումի, կարսի, Արդահանի շրջաններում։ Ապրիլեանի բանակում աչխատող տաճկական սպաները դաղտնի քարոզութիւն էին անում միանալու Քորնիլովչին Ռուսաստանի հետ։

Բազաքական այդ դիծը մեր մեր կազմակերպութիւնն ունէր պարզորէն ցուցահանեց դաշնակիցների Գալիքը գրաւելուց և քրքական ազգային երեսփոխանական ժողովը ցրելուց յետոյ։ Բաքուի յեղաչրջումից սպիտ ու կէս առաջ աչխատող հասաւ Մուստաֆա Քեմալի յատուկ մի պատուիրակութիւնը յայտնելու համար, որ Անատոլուի ապստամբները ցանկանում են յարաբերութեան մէջ մտնել Խորհրդային Ռուսաստանի հետ և ատաչքիսով նրան կամ ուղարկել Անատոլու իրենց պատուիրակներին, կամ ընդունել իրենց առաքելութիւնը։

1926թ. փետր. 1-ին, Անդորայի անկախութեան տեսանի առթիւ, էրզրումի ըմբոստութեան դատավարութեան մէջուցին, ամբաստանեալներից մէկը՝ Հանգուտան կոչուած հարեւրապետ շքանչաստ Իսմայիլ Հքնտոն հետևեալ ուչագրաւ ցուցմունքը տուց։ Նա յայտնեց, որ «336»-ին Քեսպիճ կարաբեքիր փաչայի հրամանով գնաց Բաքու արևելեան ազգերի համաժողովին մասնակցելու համար։ Իր հետ ուրիշ ընկերներ էլ ունէր։ Բաքուում այդ մէջուցին դումարուած էր նաև մի կոմունիստական համաժողով։ Իրենց այդ համաժողովին մասնակցելուն լոկ իրքև խորհրդատուներ։ Համաժողովին մասնակցելուն նաև Մուստաֆա Սուբհի, Բէհհեդդին բէյները, էնվէր փաչան, Քեւրուբ Քաչէմբ բէյը։

Իր ցուցմունքները չարունակելով Իսմայիլ էֆ. ասաց. «Քեսպիճի կարաբեքիր փաչան իր բանակով կատարելապես դէպի համայնավարութիւն էր գնում։ Հասան կայմում գինուորներն ու սպաները միասին էին լուացում բաղնիքում և միասին էին հագնում։ Փոքր Ասիա համայնավարութեան նմանող մի չարժում առաջ բերելու։ Նրա գլուխն էր գտնւում Բէհհեդդին Շաքիրը։ Մի չարք զրագրներ էին ուղարկուել էրզրում։ բայց նրանք լաւ չէին։ չնորհիւ նրան չարուցանելու բնոյին ունէին։ Դրա վրա տեսնելիցինք Արիֆ և Շեւքրի բէյների հետ և որոչեցինք մեր չարաբերութիւնները թող նրանցից։ Այդ մէջուցին Քեսպիճ կարաբեքիր փաչան արդէն այնպիսի նահանջ էր արել համայնավարութիւնից, որ դուք անգամ կը զարմանայիք։ Այդ մէջուցին կազմուեց Ներհայանութեանց Գահպանական Ընկերութիւնը։ Մուստաֆա Սուբհին բաչում արդէն գլուխ էր բերել իր կազմակերպութիւնը, գինուորների

պատրաստել էր, նոյեմբեր կոմունիստներ անգամ նշանակել էր և մեր երկիրը պիտի գար։*)

Այս վանեբագրերը կասկած չեն թողնում, որ բոլշևիկների և Քեմբքերի միջև գոյություն ունէր լաւ սերտ բարեկամութիւն և գործակցութիւն։ 1920թ. ամառը Մոսկւա էր գնում Անդրանիկ մի մեծ պատւիրակութեան՝ Ռէգիբ Սամիի գլխաւորութեամբ։ Բագուի Կոմունիստը յուլիս 20–ին հաղորդում էր Ազատութիւից, թէ Մոսկւա անցաւ Քեմբքեական մի պատւիրակութիւն Ռեգիբ Սամի բէյի նախագահութեամբ։ Պատւիրակութեան ասելով Քեմբքեայում մեծ յարգանք ունի կոմունիստական շարժումը։ Ռեգիբ Սամի բէյը յայտնել է, որ իրենք գնում են Մոսկւա Երրորդ Ինտերնասիոնալի երկրորդ համագումարին մասնակցելու և խորհրդային իշխանութեան հետ կապեր հաստատելու նպատակով։

Միւս կողմից, Բագուն դառնում էր քեմալականների կարծեցեալ ազիտասյանքի կենտրոն։ Յուլիս 20–ին Մոսկւայից Բագու վերադարձաւ Յալիլ փաշան և մեծ հանդիսաւորութեամբ ընդունեց խորհրդային պետութեան կողմից։ Նա անմիջապէս ձեռնարկեց փոխադարձ բանակցութեան կազմակերպութեան։ Այդ բանակցի կենտրոն նշանակուեց Ղուսար աւանը, ուր տեղի էր ունենում կամաւորների արձակագրութիւնը, մարդանցն ու կազմակերպումը։ Խորհրդային իշխանութիւնը ազատում էր Յալիլ փաշային։ Հոգում էր բանակի ծախսը, հագուստը, զէնքն ու ռազմամթերքը և այլն։ Բանակի սպայակոյտի պետը խորհրդային գլխաւոր սպայակոյտի մի սպայ էր։ Թուրատեանի զանազան կողմերից՝ Ղրիմից, Կազանից, Ուֆայից, Թուրքեստանից խումբ-խումբ ուղարկւում էին մահմեդական երիտասարդներ և մտցւում բանակը։ Յալիլ փաշայի արժանագրութեան տակ էին և Սիբիրից վերադարձող Քեմբք գերիները, կարգապահութիւնը գնալով բանհամեմ չատ դաժան էր։ Զօրամասերը պատրաստւում էին արագութեամբ, այդ բանակով Յալիլ փաշան, Ղարաբաղի ու Զանգեզուրի վրայով, պիտի անցնէր Թուրքիա։

Այսպէս, մեզ ապրիլեանցիներն ու Քեմբքերը բացայայտ կերպով դաւեր էին լարում Հայաստանի դէմ, կոմունիստները, մանաւանդ հայ կոմունիստները, անտեղ ու մոլեգին պայքար էին մղում նոյն Հայաստանի դէմ։ Ահաւասիկ են և անորակելի այդ գաւերը։ Բոլշևիկները անվերջ գրում ու խօսում էին Հայաստանում տիրող հսկայական տեսուրեն մասին, տարածում էին չքնաղ և գրգռիչ տեղեկութիւններ, Հայաստանը ներկայացնում էին իբրև մի երկիր, ուր գահճեներն են քաշաւորում, ուր ամէն օր կոմունիստներէն գանգւածային սպանութիւններ են կատարւում։

Ապրիլեան խորհուրդների պատմութիւնը հետևեալ կերպով է տալիս 20–ի համարում կարդում ենք Հայաստանից Ազատամի հատած բոլշևիկեան մի պատւիրակութեան դիմումը 11րդ բանակին.

*) Անտեղակութեան հետ կապված «Մարմարա», 1926թ., թիւ 3։

«Ղ»ՂԵՐՆ՝Ր, ապրիլ 28–ին ռադիոն հաղորդեց մեզ այն ուրախալի լուրը, որ ազրբէյնանական բէյերի ու խաների հակայեղափոխական կառավարութիւնն ընկել է և իշխանութիւնը անցել է մեր կոմունիստ ընկերների ձեռքը: Այս ուրախալի լուրն իսկոյն տարածւեց ամբողջ Հայաստանում: Հէնց որ կատարւած դէպքը յայտնի դարձաւ Հայաստանի բանւորներին ու գիւղացիներին, նրանք սկսեցին պատրաստուել՝ քօթաշկիլու դաշնակների հակայեղափոխական կառավարութեան լուծը և մայիս 11–ին բարձրացրին ապստամբութեան կարմիր դրօշը: Զգալով կարմիր վտանգը՝ դաշնակները դիմեցին իրենց սովորական գէնքին ու պրովոկացիային: Նրանք տարածեցին, որ նոր Ազրբէյնանում իշխանութիւնը բոլշեւիկեան չէ և որ բացուել կարմիր յեղաշրջման լուրերը տարածում են տեղական հայ կոմունիստները, որը չի համապատասխանում իրականութեան: Նրանք պատնում էին, որ եթէ ապագայում թուրքերը հետևի բոլշեւիկներին, Ամերիկան Հայաստանին հաց չի տայ: Նրանք յորինեցին կեղծ նոտաներ, որոնք իբր թէ, Միւրդրային Ազրբէյնանի կողմից ուղղած են եղել Հայաստանին՝ նրա վրայով զօրք տեղափոխելու Տաճկաստանին օգնելու նպատակով: Բարեբախտաբար, այս պրովոկացիաները չջաւրը գիւղացիութեան ու գիւղերների հետ տապալեց Ազբաջանդրայում դաշնակների առաջի իշխանութիւնը և սկսեց առաջ յարձակուել Կարսի, Սարըղամիշի, Ղարաքլիսայի և Երևանի ուղղութեամբ:

Ի պատասխան դրան դաշնակները պատքերով առաջքայում բէյոլու–վեզիրների և Իդդրի, Սարըղամիշի ու Կարսի քիւրդերի հետ, որով գրաւեցին կարմիր գիւղերների ուշադրութիւնը, մինչև իրենց մասէֆրիաների 3000–ոց բանդայի ու կաշառած դէնիկինեան սպաների գլուխ անցած՝ քիկոնքեց յարձակուեցին կարմիր Ազբաջանդրայի փոքրաքիւ պահակախմբի վրա. Կոտորելով երկու հազար անպաշտպան բանւորներ ու գիւղացիներ՝ նրանք վերականգնեցին իրենց հակայեղափոխական իշխանութիւնը:

Դաշնակների ահաբեկման սխտեմը սոսկալի է. ամէն մի կոմունիստի տեղն ու տեղը խփում են: Շատ ընկերների վիճակը մեզ անյայտ է: Բայց դա չի ընկճել հայ պրոլետարիատի կամքը. նա պատրաստ է նորից ապստամբելու: Մենք ունկ ենք ձեզ հետ կապ հաստատելու: Հայաստանը ապատում է ուրս կարմիր օրօքերին, և երբ նրանք ոտք կը դնեն Հայաստանի հողի վրա, ո՛չ մի հայ գիւղը, նոյնիսկ դաշնակցական չի համարձակուի կրակել նրանց դէմ:

Դիլիջանի գաւառի ռազմա–յեղափոխական կոմիտէի անդամ Կոստան Այվազեան· տեղական կոմունիստական կուսակցութեան ներկայացուցիչ՝ Յակոբ Ցակոբեան:

Նոյն ՀԿոմունիստ–ի յունիս 20–ին հրատարակում էր հետևեալ դիմումը Հայաստանի կառավարութեան.

«Ազրբէյնանի կոմունիստական կուսակցութեան կենտրոնական կոմիտէին և Ռուհրդային Ազրբէյնանում գտնող Ռուսաստանի կարմիր զօրքերին յայտնի է, որ մեր կառավարութիւնը Հայաստանում այժմ խեղդում է բանւորների և գիւղացիների յարձումը: Կովկասեան հակայեղափոխական կառավարութիւններից ո՛չ մէկը իր բանւորների և գիւղացիների դէմ չի ցուցահանել այնպիսի դաժանութիւն, ինչպիսին գործադրում է մեր կառավարութիւնը Հայաստանում կոմունիստ գիւղացիների և բանւորների դէմ: Ճնշելով մասէֆրիաների գլխաւոր դահիճ Սեպուհի և գենիկինեան սպաների վրա՝ դուք Հայաստանի գիւղացիներին և բանւորներին օրէնքից դուրս

ՀՔ յայտարարել։ Զանգւածային գնդակահարութիւնները Ալէքսանդրապոլում, Կարսում, Սարըղամիշում և այլ վայրերում, յեղափոխական բանուորներին, գիւղացիներին և նրանց զեկավարներին անխնայ ձերբակալելը, ծեծելը, քարշելը — ա՛յս ամենը վրդովում է Ադրբէջանի պրոլետարիատի և Արեւելքի Ռուսաստանի կարմիր օրգերի յեղափոխական խիղճը։

Հայաստանի և Ղազախի գիւղացիներն իրենց ընտանիքներով փախչում են ձեր բաւիլօզուկների ձեռքից։ Ինչպէս փախչում էին մուսաւաթականների ձեռքից և ապաստան են գտնում Արեւելքի Ադրբէջանի յեղափոխական գիւղացիների մօտ։ Այդ ամենայնիւ ապացոյցն է, որ մուսաւաթականները ձեր զազափարական եղբայրներն են ու գինակիցները, և որ Հայաստանի գիւղացիներն ու բանուորները համերաշխ են Ադրբէջանի աշխատաւորների հետ դաշնակիցների և մուսաւաթականների դէմ կուռելու գործում։

Արեւելքի Ադրբէջանում ամենուրեք, Արեւելքի Ռուսաստանի կարմիր օրգի օգնութեամբ մենք անխնայ կերպով խեղդում ենք մուսաւաթականների հակայեղափոխութիւնը, իսկ ձեր կառավարութիւնը Հայաստանում խեղդում է բանուորների և գիւղացիների կոմունիստական յեղափոխութիւնը։ Դրանով դուք օգնում էք մուսաւաթականներին յեղափոխութեան դէմ կուռելու։

Մենք յայտնի է, որ ձեր կառավարութիւնը կարող չրջանում գնդակահարել է 300 հոգի։ Կարսում հակայեղափոխականների սրբրտնալը, Արփնում և Ախրաւեանի գլխաւորութեամբ, ձերբակալել է կոմունիստական կուսակցութեան անդամներին և գնդակահարել։ Դուք գնդակահարել էք Արփրը։ Հայաստանի Ռազմայեղափոխական կոմիտէի անդամ բժ. Մելքոնեանին, Կարսի յեղափոխական կոմիտէի անդամ ընկ. Ղուկասեանին, Նոր-Բայազէտի յեղ. կոմիտէի անդամ ընկ. Սարուխանեանին և մի շարք մեր ամենալաւ ընկերներին։ Ռուսաստանի կոմունիստական կուսակցութեան Հայաստանի ներկայացուցիչը և Հայաստանի Ռազմա-Յեղափոխական կոմիտէի Բաքուի ներկայացուցիչը՝ վրդոված այն դահճային անօրութիւնից, որ ցուցաբերում էք Հայաստանում մեր ընկերների նկատմամբ, որոշել է դիմել Մոսկւա, որտեղ անամօթաբար դիմել էք և դուք՝ ուղարկելով մեր ներկայացուցիչներին և միաժամանակ Հայաստանում անխնայ կոտորելով կոմունիստներին։ Մենք համոզած ենք, որ Արեւելքի Ռուսաստանը ձեռք կառնի բոլոր միջոցները՝ վերջ տալու ձեր արիւնոտ վարմունքին։

Առաջարկում ենք դադարել մեր ընկերներին ձերբակալել ու գնդակահարել, ազատել բոլոր ձերբակալուածներին և այդ ժամին յայտնել մեզ մեր ընկեր Սերգէյ Արկադիևիչ Վարդանեանի միջոցով։

Պատասխանի համար տալիս ենք երկու օր ժամանակ։ Եթէ չպատասխանեցիք, մենք կը համարենք, որ ուզում էք չարունակել նոյն քաղաքականութիւնը։

Ադրբէջանի կոմ. Կուս. Կենտր. Կոմիտէ՝ Նաձէչվիլի, Միկոյեան։ Ռուսաստանի կոմ. Կուս. ներկայացուցիչ՝ Կոստանեան։ Հայաստանի Ռազմայեղափոխական կոմիտէի ներկայացուցիչ՝ Ալիխ»։

Եւ մինչ մի կողմից Միկոյեանները ապատնալիքներ էին կարդում Հայաստանի կառավարութեան, մեւս կողմից, անշուշտ, բացուկ կոմունիստների ներքնշումով, Զիլերինը, յունիս 4-ին, հեռագրում էր Երեւան, թէ՝ «Լիակատար հաւատ տեղեկութիւնների համաձայն, Ալէքսանդրապոլում, Երեւանում, Սարըղամիշում, Կարսում և Հայաստանի այլ քաղաքներում հարիւրաւոր կոմունիստներ են ձերբակալուած։ Հայաստանի կառավարութիւնը Թոյլ է տալիս ինքնագլաստասան և գաղտնի գնդակահարում է կոմունիստա-

Ներքին։ Յատկապէս գնդակահարուած է ընկ. Միկոյեանը։ Ռուրբգային կառավարութիւնը մեծ վրդովմունքով իմացաւ Հայաստանի կոմունիստական շարժման գործիչների վերաբերմամբ գործադրուղ կամայականութիւնները մասին։

Մարզիկ խօսում էին հազարաւոր սպանուածների մասին, այն ինչ, ամբողջ բոլշեւիկեան շարժման ընթացքում բոլոր ձերբակալուած բոլշեւիկների թիւը Հայաստանում 234 էր, որոնցից 120 հոգին սպառ էին արձակուած և մահապատիժ էին դատապարտուած 3 հոգի։ Լուրեր էին տարածուում, որ գնդակահարուած է Միկոյեանը, մինչ Միկոյեանը Հայաստանի երես անգամ չէր տեսած։

Հայ բոլշեւիկների նման ընթացքն էր, որ անշահոդութեան մատնեց Հայաստանի Հանրապետութեան ու Ռուրբգային Ռուսաստանի միջև սկսած բանակցութիւնները։

«Հեսխսային կռվկասը խորհրդային իշխանութեան ձեռքը անցնելուց յետոյ Ռուրբգային Ռուսաստանի պատասխանատու ներկայացուցիչներից ոմանք, Հայաստանի հեսխսային ներկայացուցիչների միջոցով, քանիցս խորհուրդ էին տուել պաշտօնական բանակցութիւններ սկսել Մոսկուայի հետ՝ բաբեկամական գաչինք կնքելու նպատակով։ Հայաստանի կառավարութիւնը ինքն էլ գտում էր նման քայլի անհրաժեշտութիւնը, մանաւանդ, երբ կոմիքը բանակը մօտեցաւ Ադրբէջանին։ Ապրիլի վերջերին երեսնում կազմուեց մի պատեիրակութիւն — նախագահ՝ Լ. Շանթ, անդամներ՝ Հ. Տէրտէրեան և Լ. Զաքարեան, որին յանձնարարուեց անմիջապես մեկնել Մոսկուա խորհրդային իշխանութեան հետ, յանուն Հայաստանի, բանակցութիւններ վարելու և բաբեկամական գաչինք կնքելու նպատակով։ Պատեիրակութեան մուտքին հետևում հրահանգները. 1. Ռուրբգային Ռուսաստանը պէտք է ճանաչէ Հայաստանի անկախութիւնը՝ ընդունելով Հայաստանի սահմանները մասին և Ղարաքաղն ու Նիւխիասանը, 2. Ռուրբգային Ռուսաստանը, զոնէ սկզբունքով, պէտք է ընդունէ քիւրքահայ հողերի կցումը Հայաստանին, 3. Ռուրբգային Ռուսաստանը չպիտի միջամտէ Հայաստանի ներքին գործերին. չպիտի Հայաստանում կոմունիստական գործունէութիւն ցոյց տայ, 4. Ռուրբգային Ռուսաստանը պիտի թոյլ տայ, որ Հեսխսային կռվկասում և Ռուսաստանում գտնուղ հայ գաղթականները վերադառնան Հայաստան, և մի չարգ ուրիշ հարցեր։

Պատեիրակութիւնն անյապաղ մեկնեց Մոսկուա։ Այդ առթիւ, մայիս 4-ին վարչապետ Օհանջանեանը Զէյնէրինին քաչեց հետևեալ հեռագիրը։

«Բանաբրական, գինուրական ու գիւղագրական պատգամաւորների համառուսական երրորդ համագումարի որոշման համաձայն, որ յայտարարել է Հայաստանի ինքնորոշման ազատութիւնը, և հիմնուելով ժողովրդական կոմիսարների նախագահ Լենինի 1918թ. յուլ. 13 գեկրետի վրա՝ անկախ, միացեալ, գեմոկրատիկ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը առաջարկում է Ռուսաստանի բնակչական կառավարութեանը բանակցութիւնների մէջ մտնել նրա հետ երկու հանրապետութիւնների միջև պատգամաւորական յարաբերութիւններ հաստատելու համար՝ Հայաստանի Հանրա-

պետության անկախության ճանաչման և ինքնիշխանության հիմունքների վրա: Իմ կառավարության լիազորության պատրաստակամությունն արդեն մեր հանդիպումների ժամանակ է յքյւած բանակցությունները մեր կառավարության հետ վարելու համար. № 2740»:

Մայիս 17-ին Զեյներնը պատասխանեց. «Միջերկրային կառավարությունը սրանով յայտնում է իր համաձայնությունը կնքելու Հայաստանի կառավարության հետ պայմանագիր՝ երկու ժողովուրդների միջև բարեկամական յարաբերությունները հաստատելու նպատակով: Միջերկր. կառավարությունը պատրաստ է մեր պատվիրակներին, որոնք արդէն ճանապարհ են դէպի Մոսկա: Ձեր պատվիրակության Մոսկայից Երևան հաղորդակցությունն մէջ մտնելու տեխնիկական դժուարությունները վերացնելու նպատակով տրամադրելիք մեր ուղիղ հեռագրագիծը՝ Ռոստովի և Թիֆլիսի վրայով: Ներքում ենք այդ մասին նախօրօք համաձայնության գալ Վրաստանի կառավարության հետ: № 150»:

Թէ Մոսկայում այդ օրերին ինչ տրամադրություն էր տիրում հայերի և Հայաստանի նկատմամբ, ցոյց է տալիս Ղարաբաղի կոմիտէի ներկայացուցիչներ Ա. Երզնկեանի և Ս. Փիրումեանի զեկուցումը՝ տրված Թիֆլիսի «Մսխո» թերթում: «Պատերազմ Երզնկեանի ընդարձակ զեկուցումից յետոյ, գրում է թերթը, առանձնապես ուշագրաւ էր ռուսական չբոլշևիկեցուած ամենշեան այն բնորոշ տրամադրությունը, որ առաջացել էր նախքան հայկական պատերազմական Մոսկա մեկնելը, մերբ-քաղաքական պրովոկացիայի չնորհիւ՝ նպատակ ունենալով ժողովրդական մէջ պահել ռուսասատանի հասարակական կարծիքն ու նրա զինվոր չբոլշևիկները: Պատերազմները Մոսկա հասնելով՝ չւարած են մնում այն տների վրա, որոնցով կերակրվելիս են եղել ընթերցողների կառավարական օրգանները — «Իզվեստիան», «Պրաւդան» և այլ թերթեր:

Այդ լրագրական յօդուածներում չարունակ այն միտքն է ուրդծուել, թէ՝ Հայաստանը, Լենտատանի նման, դաշնակիցների գործերն է, թէ խնդրեիայնա գաշնակիցները հասարակա թէ ամէն օր Հայաստան են ներմուծում լեհերի չափ ռազմամթերք, զինագործական արհեստանոցներ, որոնք առանց դադար առնելու՝ ռազմամթերք են պատրաստում, թէ գործը փայլուն կերպով է դրւած և երկաթուղային ցանցի վրա աչքաստանը եռում է: Ամերոյի աշխարհի բուրժուաները հաւաքւել են Հայաստանում չահագործելու համար պրոլետարիատին և այնպիսի քաղաքականութիւն են մտցրել, որ ուղղած լինի սոցիալիստական Ադրբէջանի և սոցիալիստական Տաճկաստանի եղեռն ու կրակ աչքաստանը գանգուածների դէմ: Այդ երկու երկրների մուսուլման ժողովուրդները հանդիպատ չունեն հանգիստ փոխադրական հարցերի կառավարության հսկողութիւն օդերևոյթի նետեոդական յարձակումներից: Հայ հանդիպափոխականների ձեռքով ստեղծած Ղարաբաղի անցքերի ժամանակ մուսուլմանները ոչ թէ հայերը, այլ խորհրդային իշխանության մյուսական կողմնակից մուսուլման աչքաստուրութիւնը:

Այդ անպատկառ գործունէութիւնը մերկ, քաղցեց ու ցրտից մեռնող Հայաստանի դէմ վերջին տոքրիներս վարում էին կոմունիստական զինուած ամենից ծանրագնա Մոսկի փաշաները, կոպեկի թաթարները, որոնց արտօնեալ դերը ունէին Մոսկայի տղայոյն գործերի ժողովրդական կոմիսարիատում, և իրենց կոմունիստ անհատ Բագուի թաթարները:

Ինչ հասարակութիւնը, որ դեռ ցարական ժամանակներից անտեղեակ էր կովկասեան դործերից, յեղափոխության վերջին երեք տա-

բինեթում բոլորովին կորած լինելով Անդրկովկասից, սկսեց ուշի ջրի բան հասկանալ Անդրկովկասում տեղի ունեցած անցքերից, առաւել ևս Անդրկովկասի ծայրամաս Հայաստանից: Բացի դրանից, անհնարին դաղափար ունէին կացման և նրա դերի մասին, վերջին տարիներս, նոյնիսկ խորհրդային կառավարութեան պատասխանատու ներկայացուցիչները:

Ինչ վերաբերում է հայ կոմունիստներին, դրանց մի մասը Հայաստանից կտրուած լինելու պատճառով նոյնպես ոչ մի տեղեկութիւն չունէր Հայաստանի ու նրա ազգաբնակութեան ծանր կացութեան մասին, իսկ միւսներն էլ դէպի Դաշնակցութիւնը տածած ատելութիւնից կուրացած՝ դիտաւորեալ չափազանցրած միտումաւոր լուրեր էին տարածում ի վնաս հարազատ երկրի: Առանձնապէս այդ ուղղութեամբ ոյժ էին տալիս Բագուի, Վլադիկաւկազի, Ռոստովի և այլ պատահական քաղաքների հայ կոմունիստները: Գաւառականութիւնը տսիպւած էր չատ ժամանակ և աչքատանջ վտանել, որպէսզի ցրի Հայաստանի ու հայ ժողովրդի վրա հիւսած այդ ստերի ու բամբասանքների պատմութիւնը:

Հայերի և հայ կոմունիստների մէջ կարդացած մի չարք զեկուցումներից, տեղական քննութեւոմ տւած մի չարք յօդուածներից ու պատճառական զեկուցումներից յետոյ, պատւիրակութեան յայդուձց նպատակաւոր տրամադրութիւն ստեղծել Մոսկուայի հասարակական ու կառավարական շրջանների և բոլոր իսկական բոլոր այն բոլոր ստերի, որ այնքան անպատկառօրէն տարածել են կոմունիստ կոչւեցեալ թուրքերն ու Քաթարները՝ ռուս հասարակութիւնը մոլորեցնելու համար՝ նպատակ ունենալով ռուսական կարմիր բանակի օգնութեամբ իրագործել իրենց հակահայկական ծրագրները: Այդ ծրագրները իրագործելու համար, ինչպէս յայտնի է, Բագուի Քաթարները սկզբում խորհրդային իշխանութիւն մտցրին Բագուում. յայտարարելով իրենց բոլշևիկները՝ Մուլթանովներն ու նրանց ընկերները ռուսական կարմիր բանակի անան տակ իրենց Քաթարական ասկհարներից կազմած գնդեր մտցրին Ղարաբաղի խորքերը՝ ընաջիկնու համար հայ գիւղացիութիւնը, չարունակելով այն քաղաքականութիւնը, որ այնքան փայլուն կերպով սկսած էր նախ քան բոլշևիկների գալը մուսաւաթական կառավարութեան կողմից»,*)

*) Իսկ թէ Մոսկուայում երգնկեանն ու Փիրումեանը իրենք ի՞նչպես են ներկայացրել Հայաստանը կամ ի՞նչպէս կատարել իրենց վրա դրած պարտականութիւնը Ղարաբաղի վերաթաթրմամբ, երևում է «Մշակ»-ի № 14 և 16-ում տպւած «Ի՞նչպէս պաշտպանեցին Ղարաբաղի չահերը յօդուածից: Արտագրենք հետևեալ կտորը: «Մի-երկու ամիս առաջ Ղարաբաղի ճամբէն յանկարծակի է Ար. Երզնկեանին և Սիմ. Փիրումեանին գնալ Մոսկուա և պաշտպանել իսորհրդային կառավարութեան առաջ Ղարաբաղի հայութեան չահերը: Թէ ի՞նչպէս են կատարել Երզնկեանը և Փիրումեանը իրենց տւած յանձնարարութիւնը, ցոյց է տալիս նրանց կազմից խորհրդային իշխանութեան ներկայացած և Քաթրմանելու տրծակի զեկուցագիրը: Նրա մէջ՝ Երզնկեանը և Փիրումեանը խեղաթիւրելով պատմական փաստերը՝ կուչից դուրս են գալիս ապացուցելու, որ այս երկու-երեք տարուայ ընթացքում Ղարաբաղը կանչ է մեծամասնական գաղափարների համար, սպառել է մեծամասնականներին և ոչ թէ գլուխդրած որևէ թաթիկ տրիճնուրա Ազրբէջանից պատելու և Հայաստանին միանալու համար: Ազատագրական հետապրպրութեան և ուշադրութեան է գրաւում այդ զեկուցագրի մէջ տրամաբանած այն միտքը, թէ Ղարաբաղի հայ գիւղացիութիւնը իր մեծ համակրանքով, չէնչը մեռնելն պատրաստ է իր հոգն ու ինքնորոշման իրաւունքը ստանալով վտարեցրած դէպքում ունի ընդունելի միտում մանր բուրժուական Հայաստանին, քան բուրժուական-կուլտանատրական Ազրբէջանին»: Դուբս է գալիս, որ Ղարաբաղի հայ գիւղացիութեան համար լաւից է իր երկիրը Հայաստանին միացնելը...

Մոսկվա հասնելուց յետոյ, Հայաստանի պատերազմական վիճակը չեղեալ համարելու մասին Ձիլոյի հետ, և խոսքն սկսեցին բանակցութիւնները: Մայիս 31-ին Շահը ուղիղ հեռագրաթելով հաղորդում էր Երևան, թէ բանակցութիւնները արդէն սկսած են և ընթանում են յոյզով: Սորհրդային Ռուսաստանի կողմից բանակցում է ներկայացուցիչ Պատերազմական տեսուչ է նաև արտաքին գործերի կոմիսար Ձիլոյի հետ: Սորհրդային կառավարութիւնը չաքոմակ կրկնում է, թէ ինքը բնաւ ցանկութիւն չունի Հայաստանում խորհրդային կարգեր մտցնելու:

Բանակցութիւնները ընթացան չատ յոյզով: Սորհրդային պատերազմական Ռուսաստանի կողմից բանակցում է կարտիանը:

Այնուհետև, դէպքերն ստացան զարհուրելի ընթացք։ Բացուն հայ և ապրիլչեցի կոմունիստները պատրաստութիւն ուղտրիեցին Մոսկուա, պատհանիելու համար, որ խորհրդային իշխանութիւնը պայման չկնքի զբաղնակից Հայաստանի հետ։ Միւս կողմից, Ապրիլեանի Ցեղիմը 11րդ բանակի օգնութեամբ միլոցներ ձեռք առաւ՝ կանխելու համար Նախիջևանի գրաւումը հայերից։ Յուլ. 5-ին 11րդ բանակի մասերը մտան Գորիս և հետզհետէ առաջ անցան մինչև Դարալագեազի սահմանները։ Մի ժամուր գունդ չտացին Նախիջևան։ Օգոս. 1-ին Գրօի գօրամասը Դարալագեազից դիմեց հակայարձակման և յետ գրաւեց ամբողջ Զանգեզուրը։ Բոլշևիկները փական խաճապահար՝ անլուր վայրագութիւններ գործելով ճանապարհին։ Այդ դէպքերի ժամանակ էր, որ սպանեցին Վ. Խորէնին, Ա. Շերիմեանը, Սաքօն և բազմաթիւ ուրիշ տեղական գործիչներ։ Նոր ուժեր ստանալով՝ բոլշևիկները վերադարձան, նորից գրաւեցին Գորիսը և անցան հանքերի կողմը, ուր, երեք շաբաթուայ յամառ կռիւներից յետոյ, գրաւեցին ամբողջ Ղափանը։ Ազատ մնաց միայն Արևիքը։ Հայաստանի գօրքերը հետացան Զանգեզուրից։ Գ. Նժդեհը միայն մի խումբ մարտիկներով մնաց լեռներում։ Այսպէսով, Ղարաբաղ—Զանգեզուրը անցաւ խորհրդային իշխանութեան ձեռքը, և բոլշևիկ ու հայ զօրամասերի միջև կռիւներ սկսեցին Նախիջևանի ճակատում։

Յուլ. մէկին Զիչերինը հետագրից Հայաստանի կառավարութեան, որ առաջարկում է բանակցութիւնները տեղափոխել Երևան և այդ նպատակով Մոսկուայից մեկնում է ընկ. Լեզրանը։ Վարչապետ Օհանջանեանը պատասխանեց, որ ինքը դէմ չէ այդ առաջարկին, բայց բանակցութիւնները կարող են սկսուել Շանթի պատւիրակութեան վերաղալուց յետոյ։

Յուլ. 20-ին, Ալէք փաչայի ընկերակցութեամբ, Լեզրանը հասաւ Բագու և Ապրիլեանի կոմունիստների հետ խորհրդակցելուց յետոյ անցաւ Թիֆլիս, ուր, օգոստոսի սկզբին Զանգեզուրում, Նախիջևանում և Ղազախում տեղի ունեցող հայ-բոլշևիկեան կռիւները դադարեցնելու նպատակով դիմաւորեց խորհրդժողով Հայաստանի ներկայացուցիչներ՝ Ա. Ջամալեանի ու Ա. Բաբալեանի և Լեզրանի միջև և օգոս. 10-ին ստորագրուեց հաշտութեան համաձայնագիր, որով օգոստոս 10-ը ժամը 12-ից սկսած վերջ էին գտնում պատերազմական գործողութիւնները խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի միջև։ Հայաստանի գօրքերը գրաւելու էին Շահթախթի—Մոկ—Ալինաբերդ—Սուլթանբէգ և ապա Քիւկիից հետոյ և Բագաբլուից արեւելք անցնող գիծը, իսկ Ղազախ չըլնում՝ այն գիծը, որ բռնում էին մուխ 30-ին։ Խորհրդային Ռուսաստանի զօրքերը պիտի գրաւէին Ղարաբաղ, Զանգեզուր, Նախիջևան չըլնիները։ Այս գրաւումով չէր նախորոշում այդ գաւառների վերջնական պատկանելութիւնը։ այդ հարցը պիտի որոշէր Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի միջև կնքելիք դաշնագրով։

*Մինչև այդ դաշնագրի կնքումը Շահթախթ—Ջուլֆա երկաթուղին պետք բանեցնէր Հայաստանի երկաթուղային վարչութեան կողմից**):

Սեպտ. 14-ին վերադարձաւ Շանթի պատւիրակութիւնը, և միայն հոկտ. 11-ին երեկոյեան եկաւ Լեդրանը՝ պատւիրակութեան բոլոր անդամներով հետ: Նրա պատւիրակութիւնը բաղկացած էր 47 հոգուց, որոնց մէջ էին և Սահ. Տէր-Գաբրիէլեանը, Ալ. Ռուհանեանը: Հայաստանի կառավարութիւնը ցոյց տուեց նրան փայլուն ընդունելութիւն: Լեդրանին կայսրանում ողջունեցին գինւ. Նախ. օգնական զօր. Հաճկերեանցը, արտաքին գործոց նախ. օգնականը, Շանթի պատւիրակութեան անդամ Հ. Տէրտէրեանը և ուրիշներ: Երբ Լեդրանը դուրս եկաւ վագոնից, գինւորական երաժշտախումբը նուագից «Մարսելեզա»ն, և զօրքերը պատւի կեցան: Լեդրանը անցաւ զօրաշարքի առջևով և ողջունեց գինւորներին: Ու հանդիսաւորութեամբ անցաւ քաղաք և նոյն օրն և ևթ տեսակցութիւն ունեցաւ վարչապետ Հ. Օհանջանեանի հետ:

Յաջորդ օր տեսակցեցին բանակցութիւնները Լեդրանի և Շանթի մէջև:

Հոկտ. 13-ին Լեդրանը ներկայացրեց մի չարք պահանջներ, որոնցից գլխաւորներն էին 1) հրաժարւել Սևրի դաշնագրից, 2) թոյլ տալ խորհրդային զօրքերին, իրենց ռազմամթերքով, անցնել Հայաստանի երկաթուղիներով ու խնդրելիներով՝ մխանալու համար Մուսասպիա Քեմալի զօրքերին, դաշնակիցների դէմ կռւելու նպատակով, 3) ատհանավէնը Հայաստանի և հարևանների մէջև լուծել խորհրդային Ռուսաստանի միջնորդութեամբ:

Հայաստանի պատւիրակութիւնը վճռականապէս մերժեց ընդունել առաջին կէտը, իսկ մեւս բոլոր կէտերի վերաբերմամբ կայացաւ համաձայնութիւն և կազմւեց դաշնագրի նախագիծ, որով 1) Խորհրդ. Ռուսաստանը ճանաչում էր Հայաստանի անկախութիւնը և ներքին անձեռնմխելիութիւնը, Հայաստանի մէջ պիտի մտնէր և Զանգեզուրը, իսկ Ղաբաքաղի և Նախիջևանի վիճակը պիտի որոշւէր իրաւարարութեամբ: 2) Խորհրդ. Ռուսաստանը խոստն պէտք է միջամտէր՝ կասեցնելու համար պատւիրատու Հայաստանին և Քեւրքիայի մէջև. 1914թ. սահմանի վրա պէտք է ստեղծւէր չէզոք գօտի և

---

*) Յիշատոր է, որ օգ. 10-ի համաձայնութիւնը տեղի ունեցաւ Թիֆլիսի գաղնակից ներկայացուցիչների մէջ: Անգլիայի ներկայացուցիչ կոմսանոր Լիւիզ մեկնողում էր հայերին, որ Հայաստանը երես է դարձնում դաշնակիցներից և այլևս չպիտի կարողանայ օգուտ քրանց օգնութիւնից, իսկ Ֆրանսայի բարձր կոմիսար դը Մարտելը զգուշ էր, որ հայերը անցնում են դաշնակիցների բշնամիների բանակը: Դը Մարտելի դժգոհութիւնը մեծ էր և այն պատճառով, որ Հայաստանի կառավարութիւնը մերժել էր առնել Ֆրանսայի վաշխառուական պայմաններով զէնքերն ու ռազմամթերքը: Օգ. 31-ին նրանք գնաց կոմ. Լիւիզ, ուր ընդունեց համերաշխութեամբ, և կառավարութեան հետ դիտելով ու դատելով տեղն ու տեղը ծանօթանալով՝ համոզւեց, որ իր կասկածներն անիմի են: Նոյն ժամանակ Լիւիզ Հայաստանի կառավարութեան ներկայացրեց ամսնասկան պայմանագրի մի նախագիծ: Հայաստանի ժամանակավոր և երկաթուղիները Անգլիային յանձնելու իրաւասու և առաջարկից երեք օրւայ ընթացքում ստացարկել: Հայաստանի կառավարութիւնը մերժեց ստորագրել:

հայ-թիւրքական սահմանավէճը լուծուէր Մորհրդ. Ռուսաստանի բարեկամական միջամտութեամբ. 3) Հայաստանը համաձայնուում էր թոյլ տալ անցնելու իր ճանապարհներով ռուսական զօրքերին. Հայաստանի վրայով դէպի Թիւրքիա փոխադրուելիք դէնքի 30% ը պէտք է մնար Հայաստանում իբրև ինքնապաշտպանութեան միջոց. 4) Հայաստանն ընդունում էր Մորհրդ. Ռուսաստանի միջնորդութիւնը իր և հարևանների հողային վէճերը լուծելու համար. 5) Մորհրդ. Ռուսաստանը պէտք է վճարէր Հայաստանին երկու և կէս միլիոն ոսկի րուբլի, պէտք է բանար նաւթային ճանապարհը, տար երկրագործական գործիքներ, յանձնէր Մոսկուայում գտնուղ էջմիածնական գոյքերը, դիւրութիւններ տար Ռուսաստանի մի քանի կենտրոններում հաւաքուած հայ գրեհական և գեղարուեստական երկերը Հայաստան փոխադրելու, արտօնէր և աջակցէր հայ գաղթականների վերադարձին և այլն:

Համաձայնութիւնը երկուստէք կայացաւ, և Լեզրանը մեկնեց Բագու՝ ստանալու համար Մոսկուայի վերջնական հաւանութիւնը, որից յետոյ պիտի վերադառնար Երևան, ուր և պիտի ստորագրէր դաշնակցութեան և խաղաղութեան դաշնագիրը Մորհրդային Ռուսաստանի և Հայաստանի միջև: Գնաց — և այլևս դաշնագրի խօսքը չլսուեց:

ԳԼՈՒԽ ԺԶ.

ՊԱՏԵՐԱԶՄ ԵՒ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄ

Մինչ մի կողմից Թիւրքիան Ազրբէյճանի և բոլշևիկների մէջտղով օդակում էր Հայաստանը, միւս կողմից տենդագին պատրաստութիւններ էր տեսնում, որպէսզի դէնքի ուժով վերացնէ հայկական անկը։ Օլթիի ամէնահանգների գրաւումից յետոյ, Անգորայի կառավարութիւնը դիմեց Հայաստանի կառավարութեան՝ պահանջելով յետ քաշել հայկական զօրքերը։ Այդ առթիւ տեղի ունեցաւ գրագրութիւն Թիւրքիայի արտաքին գործոց կոմիսար Բեքիր Սամի բէյի և Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան մէջ։ Թիւրքիան խօսում էր Բրեստ–Լիտովսկի և Բաթումի դաշնագրերի լեզուով)։ *Հայաստանը Բաթումի անունն իսկ չէր ուզում լսել։*

Ամէնահանգերի գրաւումը, ի հարկէ, պատրւակ էր։ Թիւրքիան մէջուղներ էր փնտռում՝ ստիպելու համար հայերին, որ հրաժարւեն ներսիսեան մէջմասութիւնից և այն դաշնագրից, որ կազմած էր Սան–Րէմոյում և չուտով պիտի ստորագրւէր Սևրում։ Ընդհակառակը, հայերը հէնց ներսիսեան և այդ դաշնագրի հետ էին կապել իրենց յոյսերը և ոչ մի հաւատ չունէին դէպի անմիջական համաձայնութիւնը Թիւրքիայի հետ։ Այդ գիտէին Թիւրքերը և պատրաստւում էին՝ Սևրին հակադրել ներքին բռունցք։

Այս տեսակէտից պատմական արժէքաւոր վաւերագիր է Մուստաֆա Քեմալի ճառը, որ արտասանեց Ազգային Մեծ ժողովում՝ պատգամաւորների սրած հարցապնդումի վրայ. «Ինձնից», ասում էր Մուստաֆա Քեմալը, «մայիս 30–ին և յունիս 4–ին Արևելեան բանակի հրամանատարի կողմից հեռւեայ առաջարկներն էին եղած։ 1) Կարինում գտնւող մեր պատւիրակութեան չուտափոյթ մեկնումը դէպի Մոսկւա՝ Կաթոլ և Բաթումի համրով։ 2) Հայաստանում տեղի ունեցող խլամասկան կռիւների դադարեցումը։ Որովհետև հայերը նպատակ ունէին առաջին իսկ առիթով գրաւել Կարինը։ Բաթումի և Բրեստ–Լիտովսկի դաշնագրերով մեր բանակի տեղաշարժութիւնը հայկական բանակի դէմ արդէն ապահովւած լինելով՝ պէտք է, որ գրաւենք Սարդարամբէկի և Սողանլուղի կիրճերը։ Այս առաջարկութիւններից մանաւանդ վերջինը ծանրացրեց գործադրութիւնը յարմար նկատւեց և յունիս 6–ին հրաման տուեց, որպէսզի յարձակողականի համար պատրաստութիւն լինի։

*) Տե՛ս այս գրքի վերջին մասը։

Նոյն միջոցին Մոսկուայից վերադարձաւ մեր պատւիրակներից մէկը՝ հետը բերելով Քէյերինի նամակները՝ ուղարկւած նախարարներին և Պզշ. ժողովին: Այդ նամակներով յայտնւում էր, որ Գարսկաստանի, Հայաստանի և Թիւրքիայի սահմանների հարցը ռուս խորհրդային կառավարութեան միջամտութեամբ դիւանագիտական միջոցներով կարգադրել կարելի լինելով՝ ռուս կառավարութիւնը չէր ուզի մեր յարձակողականներով խնդիրը լուծել: Սակայն, մենք՝ նկատի ունենալով, որ երբէք նահանջներում (Կարս, Օլթի և Արդահան) մեր գործողութիւնները Հայաստանի դէմ յարձակողական չեն նշանակում, արդէն իսկ մեր տուած որոշումի մէջ որև է հակասութիւն չնկատեցինք և հրամայեցինք մեր արևելեան հրամանատարութեան, որ կարելի եղածին չափ չուտ և արագ կերպով չարունակէ յարձակողականը:

Մի քանի օր յետոյ, պաշտօնապէս հասած մի տեղեկութեան համաձայն, ռուս գործակալները Կարսի ճամբով այնտեղ պիտի գային: Կարսին հասնող մի ռուս գործակալ տեսակցութիւն ունեցաւ մեր պատւիրակութեան հետ. այդ տեսակցութենից անմիջապէս յետոյ ստիպած եղանք արգելել մեր յարձակողականները:

Բոլշեւիկները իրենց դրագրները իրականացնելու համար Քիւրդ ժողովրդի մեծ օգտակարութիւնը գնահատելով՝ մեր աջակցութեան դիմեցին: Նրանց առաջին ձեռնարկը եղաւ 10րդ և 11րդ զօրաբանակները կովկասեան ճակատ ղրկել: Այս բանակները դիւրութեամբ յաղթողին անցնել Հերեթան կովկաս և մտան Ագրբէյճան՝ ընդհատ մեր ընծայած դիւրութիւնների և առաջնորդութեան: Ագրբէյճանցիները մեծ հանդիսով դիմաւորեցին այդ զօրաբանակները: Այս բանակները մէկ կողմից Հայաստանի, միւս կողմից էլ Վրաստանի դէմ հարկ եղած դիւրութիւնի միջոցներին ձեռնարկեցին: Այս դէպքերը պատահեցին մայիսին, Եփ՛չո այն միջոցին, երբ բոլշեւիկները լեհական ճակատի վրա սկսեցին պարտուել և ստիպած էին իրենց ուժերի մեծ մասը դրկել լեհական ճակատ: Նորի փաստն, որ անդիլոյիներից կաշառուած էր; սկսեց բոլշեւիկների դէմ քարոզութիւններ կազմակերպել, այդ պատճառով բոլշեւիկները ստիպուած եղան Դանիակի քարոզիչներն բանտին:

Հայերը՝ կարմիր բանակների իրենց սահմաններից քաշւելուց օգուտ քաղելով՝ յունիսին Օլթիի և Ջանգելուրի ուղղութեամբ գինւորական գործողութիւնների ձեռնարկեցին: Մեր դիւանագիտական ներկայացուցիչների միջոցով երեսնամեայ ձեռնարկներ արին. միւս կողմից ամէն վայրկեան յարձակման պատրաստ մեր բանակներով մի կարգ միջոցներ ձեռք առին: Հայերը յաղթողին գրաւել Օլթիի ածխահանքերը, որովհետև մեր ուժերը այդ կողմերը անբաւարար էին անմիջապէս այդ յարձակողականը կատարելու: Սրա համար մեր բանակը ձախ կողմից սահմանն անցնելով՝ արշաւեցին Արաքս անցնող մեր ուժերի հետ միանալով՝ յաղթուեց բոլոր կողմերից էլ յառաջխաղացումը խափանել:

Օգոստոսի սկզբին հայերը գրաւապատնէշի միջոցով յաղթողին գրաւել մինչև Ջուլֆա երկաթուղագիծը: Այդ գծի վրա մեր փոքրաքանակ գինւորները միմիայն մի քանակի առնլն չեղմելու համար յետ քաշւելու հրամանն առացան: Մեր ուժերը քաշուած են Արաքսի հիւսիսային կողմը:

Այստեղից պարզ երևում է, որ դեռ յունիսին Քիւրքերը պատրաստւում էին յարձակուել Հայաստանի վրա: Վայրկեանը չատ էր յարմար: Ծուխաստանը կանդնեցրել էր արշաւանքը Իդմիրի ճակատում, և Վենիզելոսը փորձեր էր անում հաճախացողութեան գալու քեմալականների հետ: Ֆրան-

ան, Ֆրանկլէն Բուլոնի մէջտեղ, փնտռում էր քեմալականների բարեկամութիւնը՝ անգամ գնելիքին պարպելու գնով։ Իսալիան բացայայտ կերպով օգնում էր Անատոլուի ըմբոստներին։ Մեծ օգնութիւն էր ցոյց տալիս և Յունրդ. Ռուսաստանը. Զօրավարների բանակը, գրում էր օգոս. 16-ին Զեռագիր կաթոլիկները, իր քշումներին քաջալերելու և քանդելու չրջանում է գտնւում։ Մեր ժողովուրդը վխոյ պէտք է լինի և յունական բանակի փլուզումին։ Բացի այդ, 11րդ իսլամական բանակը (բոլշեվիկեան) հասել է մեզ օգնութեան. Նա անցել է մեր կովկասեան սահմանը։ Մեր դաշնակից բոլշեվիկները անընդհատ մասնակարարում են մեզ զէնք ու ռազմամթերք։ Գալով ինչ վատահ լինել, որ վատ օրերը մեզ համար անցել են սրտէնց։

Սակայն, մասամբ բոլշեվիկների ազդեցութեան տակ և մասամբ, յունական հակատի դէպքերի փոփոխութեան հետևանքով, այլ և այն պատճառով, որ Հայաստանի ձեռն ու ոտը փաստօրէն կապած էր Խորհրդային Ադրբէջանի և բոլշեվիկների կողմից, դուշ և ներքին հակամարտութիւններից դրգռած՝ Մուսաֆա Քեմալը վարանում էր վճռական գործողութիւնների անցնելու։ Ընդհակառակը, Զեռագիր կաթոլիկները պահանջում էր անյապաղ պատերազմ յայտարարել Հայաստանին։ Ըստ երևոյթին, այս հողի վրա սուր տարակարծութիւն կար մի[illegible]սական երկու սիտների միջև։ Այս տեսակէտից, չափից աւելի հետաքրքրական վաւերագիր է վենիբերի ազգային կատավարութեան ապահակոյտ պետ զնդ. Ըսմէքի» 1336[illegible]. (1920) օգոս.1 համարը՝ ուղղած ընդրեն զերագանցութեան 15րդ զօրաբաժնի և հայկական ճակատի հրամանատար Քեազիմ Զաբեքիրի փաշային։

«Ձերդ զերագանցութիւն, գրում էր Ըսմէքը, Ներկայացուցչական ժողովը Մուսաֆա փաշայի նախագահութեան տակ, ծանօթանալով Ձեր և Սեհհէդքեն բէյի Ազդային Մեծ ժողովին ներկայացրած հետևնքներին և գտնելով ամէն կողմերից գուրս մեր հայրենասիրական զգացմունքը, որ ապացուցած է մեր զոհերով էլ, յանձնարարեց ինձ միանգամ էլ հաղորդել մեզ հետևեալը։

Ներկայացուցչական ժողովը, հակառակ մեր վիճակի քուլութեան, այլ և ճնշուածների յանկարծական յարձակման, պահելով հաւատն ու զոհերութիւնները՝ չի բնկճում, որովհետև իրերի նման դրութիւնը նախատեսած էր գեռ էրզրումի խորհրդաժողովից և համապատասխան միջոցներ էլ ձեռք էին առնւած։

Դուք տեսնում էք պրպտութիւնից, մեր և բոլոր հրամանատարութեան միջև, որ այն դէպքերը, որոնք պիտի վճռեն մեր ժողովրդի և նոյնիսկ ամբողջ մահմետական աշխարհի և խալսմութեան ճակատագիրը, պիտի ունենան եւրոպական, այլ և վնտրոպական-ասիական նշանակութիւն։ Այդ երկիներում արիւնը չարունակում է հոսել այժմ էլ։ Թէպէտ բանակը գոհերի գնով պէտք է ապահովէ մեր ժողովրդի ազատութիւնը, որ խոստացել է նրան։

Իրերի այս վիճակում բոլոր հայրենասէրները, իմանալով մեր անվատ գործունէութեան ձգտումը՝ վհատւում են։ Դուք գտնւում էք ըստ ամենայնի մեր յոգեպանի և վատահութեան արժանի երկու զօրաբաժինների գլուխը։ Միևնոյն մեր քշնամիները, իրենց նզովյալ բարեկամների հետ, ապատում են մեր ուժերի պատակման և մեր միութեան խախտման. Նրանց ձգտումները ամէն մի երևոյթ այդ ուղղութեամբ։

Մենք յոյս ունենք, որ դուք, որ անձնական և պաշտօնի պատուով երդուել էք հաւատարիմ լինել Անատուլւի և Ռուսիայի պաշտպանութեան կոմիսէին և Ազգ-Մեծ ժողովին, որը ոչ այլ ինչ է եթէ ոչ այդ երկու հիմնարկութիւնների մուտքիւնը, թոյլ չէք տայ, որ այս դրութիւնը չարունակէ ապազայում էլ: Ինչ է հաւանական, որ Հայաստանը՝ զրաւուած լինելով մեր դաշնակից Ազրբէջանի կողմից, ընդունակ լինի յարձակելու մեր շրջանի վրա: Թալիլ փաշան, որ գտնում է Քուբք-ազրբէջանցոց ուժերի հրամանատարական կազմում, մեզ հանդատացնում է Մոսկուայից՝ հաւատիացնելով, որ Հայաստանը մեր սահմանների վրա յարձակելու դէպքում ապառնական ուժի կը հանդիպի իր քիկուն կողմում: Հետևաբար, հարկաւոր է որ մեր հրամանատարութեան տակ գտնուղ և Քուբք բանակի պահեստի մասեր կազմող զօրաժողովները, թողնելով մի դիւիզիա Հնարաւոր անակընկալների համար, օգոստ. 1-ին մեկնեն յունական ուժերի դէմ և կենտրոնանան ձեղ յատնի վայրերում: Ձեր չհնազանդելը այս հրամանին չատ անդարձալի ազդեցութիւն կունենայ յունական ուժերի դէմ վճռական կուիւ պատրաստող դինուորների վրա:

Այն նկատումները, որոնցով Դուք հիմնաւորում էք Ձեր անկատ ձգտումները, նկատի առնուած են Ազգային Մեծ ժողովի կողմից: Ձեր առարկութիւնը, թէ անհրաժեշտ է որոշ դինուորական չրջանակի մէջ մտցնել ոչ մի կարգապահութեան չենթարկուող ասազակների կազմակերպութեան գործերը, ժողովի կողմից հաւանութիւն է գտած և անհրաժեշտ կարգադրութիւններն այդ ուղղութեամբ արուած են յուլիս 16-ին: Մեծ Ազգային ժողովը վճռեց նոյնպէս, որ Սեւլէհդդին բէյը մնայ Սրսկազի զօրաբաժնի հրամանատար:

Այս պատմական վայրկեանին, երբ մենք չրնապատւած ենք վրէժխնդիր թշնամիներով, Ձեր վրա է ընկնում դրութեան ծանրութեան պատասխանատուութիւնը: Այդ ծանրութիւնը նմանը չունի պատմութեան մէջ և Ձեր ամբողջ յոյսը ժողովրդի ինքնապահպանութեան զգացուխի վրա է: Ձեր անկատ ձգտումների պատպանութեամբ, Դուք բաժան-բաժան կանէք մեր ուժերը և կարժանանաք ապառնալ սերունդների անէծքին:

Ջանի որ, Ձեր բացատրութիւնները նկատողութեան առնուած են ժողովի կողմից և մասնաւորապէս մի կէտ, որ Դուք չպիտի հրամարուէք գործելու մեզ հետ համերաչխութեամբ: Հակառակ պարագային, Ձեր անկատ քայլերը, որոնց արդարացում չկայ, կը դիտուին իբրև դաւաճանութիւն: Հաղորդում եմ Ձեզ նոյնպէս, որ բոլոր հրամանատարութիւնը Ձեզանից ապառում է հետագրական պատասխան երկու օրւայ ընթացքում»:)*

Այնուհետև ի՞նչ անցաւ-դարձաւ Անգորայի և Քեամիմ Կարաբեքիր փաշայի միջև: Այդ մասին պատմում էր Գոլոն «Ժուրնալ Դ'Օրիան» Բերլի Անգորայի Քղթակիցը, հոկտ. 19-ի համարում. «Ձեզ հետաքրքիր չյատնի չեն, գրում էր նա, այն պատրաստութիւնները, որոնք նախորդեցին Հայաստանի վրա յարձակում որոշման:

Էրզրումի 15րդ զօրաբաժնի հրամանատար Քեամիմ Կարաբեքիրը սեպտ. 7-ին հասաւ Անգորա: Հետևեալ օրը Մուստաֆա Քեմալի նախագահութեամբ գումարուեց գինուորական գերագոյն խորհուրդ, որին մասնակցեցին Ահմէդ Ճեվդի, Մուհէդդին Ալի Ֆուաղ, Նիհատ, Նուրէդդին զօրավարները և ապառելոյտի պետ Ջեմէլ բէյ:

---

*) Сводка Развѣд. Отд. Штаба Ком. Войсками Арменіи, 3 сент. 1920 г. № 21 (Приложеніе).



ՅՈՒ. Թ. ՆԱԶԱՐԵԹՅԱՆ



Ա. Բ. Ա



ՍԵՊՈՒՀ



ՅՈՒ. ՍԱԼԱՖՅԱՆ

Զօրավար Քևագիմ կարաբեքիրը զեկուցեց, թէ անհրաժեշտ է Հայաստանի դէմ ընդհանուր յարձակում դործել, քանի որ բոլշևիկները հետ յարաբերելու միակ գիծը հայերի կողմից թիւրքական հողերի վրա գործուղ ասպատակութիւնների պատճառով սպառնում է թիւրքերին ընդմիշտ կորել բոլշևիկներից:

Չինոլրական խորհուրդը դիմեց կարաբեքիրին հետևեալ հարցով. — ինչը ուրէ բաւական ոյժ և հաւատացած է, որ քեմալական բանակը կատարեալ յաղթութիւն կունենայ:

Քևագիմ կարաբեքիրի տրամադրութեան տակ գտնում է 4 դիվիզիա, որից երկուսը գտնում է Իմմիրի հրամանատարութեան ներքոյ: Այս դիվիզիաներից իւրաքանչիւրը կը լինի բաղկացած 8—9 հազար ամէնաբից, որոնց կաթնակեն նաև քիւրդ ու Քիւրք հրոսախմբերը: Թիւրքական հրետանին, ասում է կարաբեքիրը, չնայած որ լրիւ չէ, բայց կարող է բաւարարել արևելեան ճակատին:

Բայց և այնպէս, Մուստաֆա Քեմալը համար դեռ մնում էր մի մուք կէտ. Հայաստանի դէմ յարձակուելու դէպքում պէտք էր գիտնալ, թէ ի՞նչ դիրք կը բռնի Վրաստանը, որը իր տրամադրութեան տակ ունէր, ինչպէս յայտնի է, թէև փոքր, բայց լաւ կազմակերպուած բանակ: Այս առթիւ թոլոռովին ապահով լինելու համար Մուստաֆա Քեմալը ծանօթացրեց ռադիոյով դիմեց Բագու, ուր գտնում էր Թիւրքական պատերազմական Արևելեան Համագումարին մասնակցելու: Անհրաժեշտ պատրաստութիւններ տեսնելուց յետոյ Բագուից Անդորա ստացուեց հետևեալ լակոնական պատասխանը. «Ձմռնապարէր բաց է»: Իմմիր փաշան, որ այնտեղ էր գտնուած, յանձն առաւ հող պատրաստել Բագուում և աշխատեց ապրէլեանների-բոլշևիկեան չբլիանները այդ հարցին կողմնակից դարձնել: Միևս կողմից, համագումարի անդամ երկրագործութեան նախկին նախարար Իւսուֆ Քեմալ բէյը առանձնից մի գաղտնի առաքելութիւն Թիֆլիսում և Բագուից անցաւ Վրաստան:

Մի քանի օր յետոյ, քեմալական պատերազմարարները Իւսուֆ Քեմալ բէյի նախագահութեամբ, եկաւ Թիֆլիս և իջաւ «Օրիանո» հիւրանոցը, ուր նախօրօք սենեակներ էին պահուած այդ պատերազմարարների համար: Ճաշերգ օրը, Իւսուֆ Քեմալ բէյը ընդունեց Վրաստանի նախագահ փորդանիայի և յետոյ, անմիջապէս արտաքին գործոց նախարար Գևդեչկորիի կողմից: Տեսակցութիւնը տևեց մի ժամից աւելի, որից յետոյ նրան ճաշ տուեց Կովկասեան Ակումբում: Իւսուֆ Քեմալ բէյի պաշտօնը վերջացել էր յաջողութեամբ: Այդ պաշտօնը զուտ խորհրդակցական էր և շատ կարճ տևեց: Երկու օր անց, խորհրդային դեսպան ընկ. Կիրովի հետ վերջին անդամ տեսակցելուց յետոյ, մեկնեց:

Իմմիրի անմիջապէս իր 13 զօրաբաժնի գլուխն անցաւ և սեպտեմբեր 19ին դիմից դէպի սահման: Զօրքին յայտարարեց, թէ պատերազմը սկսած է: Գաւեթապահական գործողութիւնները յետաձգուեցին մինչև Քևագիմ կարաբեքիրի ինքնաչարժով հասնելը: Վերջինս, ճանապարհ ընկնելուց առաջ, ծանօթագիր ռադիոյով Բագու հաղորդեց իր ծրագիրը:

Բանակը պատրաստ էր գործողութիւններն սկսելու: Սեպտ. 23-ին դիմեցին յարձակման:

Ու խնայենք, գարշացող դէպքերը կէտ առ կէտ արդաբացրին «Ժուրնալ դ'Օրիան»-ի տեղեկութիւնները: Սեպտ. 11-ին, Հայաստանի պարապետի սպայակոյտը հաղորդում էր.

«Ոլքիկ ուղղութեամբ տեսա։ 9–ին, ժամը 14–ին, Թիւրքերը Քնդանո–Քալին կրակ բաց արին Վօսկուա սարի վրա։ Մեր հրետանին պատասխան ուաց։ Սեպտ. 10–ի գիշերը հակառակորդի մի մեծ խումբ մօտաւոր 5006 բաբթրութեան վրա և Ղարադաշ գիւղից երկու վերստի վրա գտնուղ մեր պահակախմբերին, բայց հրետանիի և գնդացրային կրակով յետ չպրաուեց։ Սեպտ. 10–ին, առաւ. ժամը 8–ին Թիւրքական երկու աւտառնայներ ռուիք գործեցին Սարգսմիլի ճակատի երկարութեամբ, և մեր–ամանակ Թիւրքերը հարդուսի մօտ Քնդանօքային կրակ բացին մեր գիրքերի վրա։ Մեր հրետանին պատասխանում էր։ Նոյն օրը ժամը 15–ին կրկին երեսփոխ Քշամու երկու աւտառնայներ։ Թիւրքերը հրացաններով կրակում էին մեր խրամատներին ուղղութեամբ Ինրօղլի Բաշ սարի վրա։

Սեպտ. 9–ին, ժամը 18 և 45 րոպէին, երկու օրուայ կռիւներից յետոյ, մերոնք գրաւեցին գոզը գիւղը և աղահանքերը։ Անդնած է մի լեռնային Քնդանօք, երկու հետախուսային գործիք և այլ ռազմական ասար։ Մեր կորուստները աննշան են։ Փերլու գիւղի մօտ, Քշամու հակագրոհը յետ վանելու ժամանակ, սպանուած է Սասունի ձիաւոր խմբերի պետ Մանուկը։

Սեպտ. 13–ին Թիւրքական խոյր ուժեր, անսպասելի կերպով, յաբ–ձակեցին Սարգսմիլի հայ զօրամասի ձախ թևի վրա, ետ դրեցին ճակատը և գրաւեցին Գրդ մարտոցի երկու բնական Քնդանօքներ։ Տեղի ունեցաւ կատաղի կռիւ հայկական Գրդ գնդի և Թիւրքերի միջև, ուր առաւելին յամառութիւնն ու քաջութիւնն ցոյց տուց տեղական Գանձարցիների դումարտակը։ Տաք և աքլնահնեղ կռիւներով մեր զօրամասերը նահանջեցին և տեսա. 14–ի առաւօտեան ամրացան Բեգլի–Ահմեդի գիրքերում։ Սակաւած եղաւ հաշտեցնել և կազդուրել զօրամասը (Երդ գունդ, գնդ. Շահրազրկանի) և գրաւել բնական գիրքերը։ Հետացաւ և կազդանի ագգրանակութիւնը։ Համամասն կռիւներ տեղի ունեցան և ուրիշ վայրերում, որոնց հետևանքով կարող հաւատար ատացաւ հետևեալ ընթացքը։ Ղարադաշ լեռ—Նոր Սեղիմի և Բեգլի Ահմեդի միջև գտնուղ բարձունքը—բեռնու գիւղ—Ազազատա լեռ։

Սեպտ. 23–ին, առանց պատերազմի յայտարարութեան, Թիւրքական բանակը դիմից ընդհանուր յարձակման Հայաստանի դէմ։ Սկսում էր հայ Թիւրքական պատերազմը։

Ինչպէս էին արդարացնում Թիւրքերն իրենց այդ յարձակումը։ Հոկտ. 28–ին Ռեզորայի կառավարութիւնը հրատարակեց հետևեալ հաղորդագրութիւնը։

«Ռուսական գործակալութիւնը պարտք է համարում համաշխարհային հանրային կարծիքին տալ հետևեալ լուսաբանութիւնները այն կռիւների մասին, որոնք վերջերս սկսեցին Կովկասում՝ միլլի ուժերի և հայ գաշնակ հրոսակախմբերի միջև։

Հայաստանի Հանրապետութեան կազմութիւնից ի վեր Երևանի կառավարութիւնը նպատակ է դրել բնակիչներու կամ սահմանը գազթել երկրում Հաստատուած Թուրքերին, որոնք Հանրապետութեան ամբողջ պատմաբանութեան կէսն են կազմում։ Ճամարօրէն ու կանոնաւոր ծրագրով հետապնդուած այս քաղաքականութեան նպատակն է եղել բնաջրմաքել ազգային հայրենիքը Թուրքերի մահով կամ փախստեայ Թափուր Թողնած տեղերում ներգաղթած հայերի հաստատումով։

Ըստ էության այն հանգամանքից, որ մահմեդական ազգաբնակությունը ամեր էր իր ժայրը լսելի գործելու առհմեդան ալեարկին՝ դաշնակները ամբողջ երկու տարի չթուլացնելին իրենց ատելան գործը։ Երևանի Մահմեդական Միությունն կազմած պաշտոնական վիճակագրությունների համաձայն, որ հաղորդագրած են և դաշնակից պետությունների գիվիան և Գուլի ներկայացուցիչներին, — այդ փաստաթղթերը սակայն պիտի գանան նրանց զգացմունքների մեջ — մինչև 1919թ. վերջը միայն Հայաստանը կազմող գաւառներում այրուել են 199 բրգական գիւղեր և նրանց 135,000-ի հասնող բնակիչները բնաջինջել են մեծ մասամբ և միայն մի փոքր մասին է յաջողուել ապաստան գանել Ապրբէյճանում, ուր Բազուի մուսաւաթական Ազրբէյճանի 260 միլիոն բուրլի վարկ է բւարկել նրանց կեանքերու համար։ Այդ գումարը կարող է որոշ գաղափար տալ դաշնակցական վարչապետների գործերի Քւի և Քւչառութեան մասին։

Դաշնակիները չյաւակնացան այդ բնաջինջումը կատարելով Հանրապետութեան սահմաններից ներս։ Հայկական հրոսախմբերը թափանցելին Ապրբէյճան և Ղարաբաղի գաւառում այրելին մօտ 50 թուրք գիւղեր՝ կոտորելով ամբողջ ազգաբնակութիւնը։ Այդ ոճիրները պաշտօնապէս հաղորդուեցին բոլոր դաշնակից պետութիւններին՝ Ապրբէյճանի կառավարութեան կողմից։

Այդ հետևողական բնաջինջման ծրագիրը գործադրուեց նաև Հանրապետութենից հաւաս դառնող չբէնեցիների։ Ցայտագրերով ինքնորոշման իրաւունքը, որ դաշնակից պետութիւնները իրանցից մէկի միայն իրենց պատասխանատուներին են թոյլ տալիս, կարծէ չբէնեում ապրող թուրքերը մերժելին ընդունել հայկական ներկայութիւնը։ Յօրինակ Ալամիանը(*) անցնում տարի հրատարակել ուսց մի վերջնագիր՝ հրամայելով նրանց 24 ժամուայ ընթացքում ընդունել այդ ներկայութիւնը։ Այդ՝ նախքան գիւղերի մեծ մասը այդ օրէնքն ծանօթանալու՝ տեղեկատուների միջոցների պակասութեան պատճառով՝ նիւթական ժամանակ ունենալու, հայերը ինքնաօքային հաւանութեամբ հրդեհելին ու քանդելին այդ գիւղերից մօտ 40-ը։

Շնորհիւ այն դէպքերի ու ոգեմոմիքների, որ Ամերիկայի և Եւրոպայի խմբերի ներկայացուցիչների քրիստոնէութեան անունով առաւօրէն տալիս են գալանակներին, այս վերջիններս կարողացան կոտրածներն ու քայքայները ծուալել մինչև օրամանեան սահմանները, և մեր ցեղակից ու կրօնակից եղբայրները սկսեցին հազարներով փախչել դէպի մեր երկիրը։ Մեր սահմանադիչային գաւառների բնակիչները՝ յուզած ու վրդոված այդ ամեն ոճիրներից՝ մի քանի ամիս առաջ արդէն որոշել էին օգնութեան հասնել իրենց եղբայրներին և միայն կառավարութեան ձեռք առած միջոցներն էին, որ այն ժամանակ արգելեցին թափրք միլլի ուժերին իրենց տալ հայ հրոսախմբերին։ Բայց օրանց՝ իրենց գործը լրացնելով սահմանի այն կողմը՝ յանգստութեամբ ունեցան անցնելու օսմանեան սահմանը և գործադրել իրենց ատելան մեծերը՝ այն նպատակով, որ նախապատ Վերջերի որօշումների տապատելով՝ տեղերն կատարած փաստ։ Ինչպես 24-ին մեր սահմանադիրների գերքերը, յանկարծ, յարմարած երեկին։ Մեր գործերը քննութեան յանձնուեց յետոյ՝ յաղթականորէն հետադիմեցին նրանց Սարդարաբադի չրջանում, որ բնակիչներ է բացատրելու թուրքերով։ Մեր մեջ ընկած փաստաթղթերը ապացուցում են, որ հայկական յարմարումը նախապատրաստած է եղել մեծ խնամքով և նպատակ է ունեցել էրզրումի գրաւումը։

Սահմանի մխս կողմը մեր եղբայրներին կոտորող և մեր խակ գիւղերին յուսալքում ու մահ բերող հայկական հրոսախմբերին հետապնդելը հանգիստում է օրինական պաշտպանութեան մի հանգամանք և մեր ազգի համար կենսական իրաւունք։ Թիւրք ժողովուրդը ո՛չ մի յարձակողական նպատակներ չի սնուցանում ո՛չ հայ ժողովրդի, ո՛չ էլ որև է այլ ժողովրդի նկատմամբ։ Թագիւոր արեան պատասխանատուութիւնը ընկնում է միմիայն հայերի և նրանց իշխերիալիստ պաշտպանների վրա, որոնք հետապնդում են թիւրք ազգը քայքայելու նպատակներ։

Դժուար չէր տեսնել, որ տւած բացատրութիւնները չէին համապատասխանում իրականութեան և որ թիւրքերի իսկական նպատակը Հայաստանի քայքայումն ու Սևրի դաշնագրի ոչնչացումն էր։ Թիւրքական յարձակողականը այդպէս էլ հասկացւեց ամենքի կողմից։ Հայկական բոլոր լրջիններն անխտիր, ամէն տեղ, յաստմով ընդունեցին պատերազմի լուրը։ Ընդհանուր վրդովմունք և դիմադրութեան վճռական կամքի արտայայտութիւն եղաւ կառավարութեան կոչը ժողովրդին։

Հայաստանի Հանրապետութեան.

Հարազատիններ՛ը, Հայաստանը նոր փորձութիւնների առաջ է կանգնած։ Տանիկ փաշաները չեն ուզում հանգիստ թողնել մեզ։ Նրանք ձգտում են քար ու քանդ անել մեր երկիրը, բնաջնջել հայ ժողովուրդը։

Սեպտեմբերի կէսերին կենտրոնանալով Մերդինեկի և Բարդուսի շրջաններում՝ տանիկ զօրքերը յարձակման դիմեցին։ Դաշտային աշխատանքների պատճառով մեր գիւղերների մի մասը էրենց տները ցրւած լինելով՝ մեր զօրամասերը, յամառ կուից յետոյ, ստիպւած եղան նահանջել և գրաւել ռազմավարական նոր դիր, որով ամրահանգների շրջանը անցաւ Քշտամու ձեռքը։

Սեպտ. 28-ի գիշերը տանիկները ուժեղ յարձակման դիմեցին Փննեակի և Բարդուսի հատւածներում։ Մեր զօրամասերը աստիկ դիմադրութիւն ցոյց տալով՝ ամրացան վերիշների բարձունքների վրա։ Նոյն տպատ. 28-ին տանիկական խոշոր ուժերը գրոհ տւին դէպի Կարաւրզան, որտեղից մեր զօրքերը քաշւեցին Մողանլուխ լեռնաշղթան։ Թշնամի՛ն դարձել, որ տանիկները անմիջական նպատակն է կտրել Սաբրդամիչ—Կարս երկաթուղին և ազատութիւնից զրկել Սաբրդամիչի և Կաղզւանի զօրքերն ու ժողովուրդը։ Անակնկալներից և զոհերից խուսափելու և աւելի յարմար դիրքեր գրաւելու նպատակով՝ մեր հրամանատարութիւնը տպատ. 29-ի գիշերը զատարկել է Սաբրդամիչն ու Կաղզւանը։

Ժողովուրդը նոյնպէս տեղափոխւել է անվնաս։ Նահանջը եղել է ռազմավարական նպատակներով, կանոնաւոր և առանց որև է կորուստի։ Մեր զօրքերի ոգին բարձր է։ Թշնամին հանդիպում է ամենաքուռն դիմադրութեան։ Կարսի և Այնքանդրապոլի շրջաններում սկսած է ուժեղ չարժում յօգուտ երկրի պաշտպանութեան։ Ամէն կողմից հասնում են կամաւորներ և վերադառնում են դասալիքները։ Դաշտային աշխատանքներով կլանւած ժողովուրդը ոտքի է կանգնում։

Հարազատիններ՛ը, տեղեկացնելով ձեզ այս մասին՝ Հանրապետութեան կառավարութիւնը յայտնում է, որ ինքը ձեռք է առնում ամէն միջոց՝ պետութեան անվտանգութիւնն ապահովելու համար և վստահ է, որ ձեզ

Քնեմին չուտով գուրս կը չպրտի մեր երկրից։ Այն ժողովուրդը, որ կարողացաւ ձեռք բերել իր ազատութիւնը, որ դեռ նոր ճչաց քոյլևկեան խռովութիւնները, թոյլ չի տայ, որ տաճկական փաշաներին յաղորդէ իրա-գործել իրենց դիւային ծրագրները։ Հայաստանի կառավարութիւնը, իր հետ ունենալով յեղափոխական ժողովրդի կամքն ու վստահութիւնը, կանէ այն, ինչ որ իրենից պահանջում է պատմական վայրկեանը։ Սակայն, ժողովուրդն ևս պէտք է լարէ իր բոլոր ուժերը։ Տաճիկ զօրքերի առաջ մէ՛կ անելիք է մնում միայն — յաղթել կամ մեռնել։ Մենք պէտք է յաղթենք։

Քաղաքացինե՛ր, որքան և աննպաստ լինեն պայմանները, թոդո՛ք մեր անձնական գործերը։ Ամէն ոք և ամէն ինչ պէ՛տք է յատկացուի Փրոնտին։ Ո՛չ մի դասալիք չպիտի մնայ Հայաստանում։ Ո՛չ մի երեսաւարդ չպիտի նստի տանը։ Ամէ՛ն ինչ զօրքի համար։ Գիւղացի, բանւոր, մտաւորական, պաշտօնեայ, արհեստաւոր, ուսանող, կանայք — բոլորը պէտք է նպաստէք մեր բանակին, որովհետև մի՛այն ամենքիս միահամուռ ջանքերով կը խոր-տակւի փաշաների գաբչիի բռնակալութիւնը, և Հայաստանը բոլորովին ազատ կը լինի տաճիկ չովինիստների մղձաւանջից։

Ոտքի՛, ժողովուրդ։

Կեցցէ՛ Մխալեան և Անկախ Հայաստանը։

Հայաստանի Հանրապետութեան Կառավարութիւն

Կառավարութեան կոչը անմիջապէս արձագանգ գտաւ բոլոր կողմե-րից։ Հրապարակային ժողովներ, բանաձեւեր, Քուռքիային լրագրական յօդւածներ. — ամենքը նեցուկ կանգնեցին կառավարութեան քիկունքում։ Իբրև նմոյշ, առայ բերենք Սոց.-Յեղափոխ. հուսակցութեան Հայաստանի հոմէխանէի հրատարակած կոչը հետև. չ-ին։

Կուռվ կը խլես fo իրաւունքը

Ընկերնե՛ր։ Տաճիկ փաշաները, քիւրդ ու Քիւրթ հորդաների գլուխն անցած, ներս են խուժել մեր երկիրը։ Բազմահազար Հայ դիւղացիներ Կաթսի շրջանից տեղահան են եղած ու կրկին գրկել են էզդքականի ցուպը։ Հայ դեմոկրատիայի հազիւ ապաքինած վէրքը դարձեալ նորոգւել է, և առատո-րէն հոսում է արիւնը նրա կրծքից։ Նորից մեր փիւդալական դոյութեան խնդիրն է դրած պատմութեան կշռաքաթի վրա։

Օրհասի այս ժամին Հայաստանի դեմոկրատիան մտացել է ժեռնակ ու աճօդնական։ Երկու տարուայ քաղաքական անկախ կեանքի ընթացքում մենք չկարողացանք ունենալ ղրսի ազնւական բարեկամներ, որոնց օգնութեան վրա կարողանայինք յոյս դնել վտանգի ժամին։ Չկան եւրոպական իմպերիալիստ-ները, մեր այդ հետաւոր բարեկամները...հաւկերոյթների ժամանակ։ Չկան բարեկամներ և մեր հաւատացեալների չարքերում։ Հայ դեմոկրատիան այսօր իր ուժերով է, որ պէտք է ապահովէ իր գոյութիւնը և յետ վանէ արիւնռուչ Քնեմուն։

Այսօրւայ յաղողութեան միակ պայմանը, ընկերներ, մեր դեմոկրա-տիայի բովանդակ ուժերի կազմակերպումն է հայրենիքի ինքնապաշպա-նութեան գործի շուրջը։

Հայ քաղաքական կեանքի ձևաւորման ու նրա սոցիալական բովանդակութեան չուրջը եղել են մեծ տարաձայնութիւններ մեր և հայաստանի դեկավար հասարակ մէջ, որի հետևանքով առեղծվել է ծանր ու գազրի մթնոլորտ միակուռ ու միակամ գործունէութեան համար:

Բայց վտանգն այսօր սպառնում է հայ բազմատանջ զինուորական ա՛լ միայն քաղաքական իդէալներին, այլ նաև նրա ֆիզիքական գոյութեան, և այդպիսի տրամադրութեան մէջ պէ՛տք է մոռանանք ամէն ինչ, պէ՛տք է բովանդակացուրկ դարձնենք մեր միտքն ու հոգին և ենթրնկնենք միայն և միայն մի գործի՝ ճակատի պաշտպանութեան:

Մեր կեանքի այս փլուզումի օրերին իւրաքանչիւր ազնիւ գործի արժէքը կրկնակի արժէք ունի: Եւ այդպիսի մի տրամադրութեան տակ ոչինչ կարևոր է գտնել առաջին չարքերում՝ քան անհապաղ կազմակերպելը և տալս դնելու հայրենիքի պաշտպանութեան գործին:

Դէպի՛ ճակատ, ընկերնե՛ր:

Դէպի՛ մեր իրաւունքների ընձեռումը՝ յաղթական կռուում:

Ոսոխավարների երեսին պատնէշներ «Հայաստանի Զայնը գրում էր. «Ամբողջ հայութիւնը, առանց տատանուելու տոքի պիտի կանգնի իր հրեղէն պաշտպանելու տասնեակ հազարաւոր նահատակներու արիւնով գնուած իր հայրենիքն ու ազատութիւնը: Պիտի վճռական ու վերջնական հարուած հասցնել մեր քշնամուն ու փուճացնել իր օրհասական մէջ ղազաքորէն գալարուող քշնամու մահը:

Այս վախճանին հայ ժողովուրդը պիտի հասնի միայն մի ճանապարհով՝ ոչի՛ դէմ-դէմ հակադրելով: Ասոր համար մենք ունենք ազգային հաւաքական ոյժ, կազմակերպուած բանակ: Պէտք է յոյս կտրել տրաքքին մէջողներէ և մէջամտութիւններէ, պէտք է յենել մեր սեփական հայ քաջերի բանակի վրա: Հայ ժողովուրդը գիտակ է իր գոյութեան տագանաստող վտանգին. պէտք է դիտակցի նոյնպէս և վստահի իր սեփական ուժերին— իր հերոս բանակին:

Այս է միակ հնարաւոր ճանապարհը:

Մեր վերնական փրկութիւնը այս ճակատագրական կուի յաղող ելքին կախում ունի:

Ուրեմն, յաղթութեան վստահութեամբ դէպի՛ ընդհանուր աշխատանք:

Բոլո՛ր պետնի ուժերու հաւաքումն ու կենտրոնացում ճակատի և թիկունքի համար:

Համերաշխութիւն կուսակցական շրջաններու մէջ:

Ժողովուրդը պետութեան հետ»:

Եւ, իրօք, համերաշխութիւնը Հայաստանում և հայկական բոլոր խաւերում կատարեալ էր: Ընդհանուր յուզումի և համերաշխութեան արտայայտութիւն էր և Թիֆլիսի հոյակապ բողոք-ցոյցը հոկտ. 6-ին. «Մօտաւորապէս 10,000 հոգի, հետաքրքրում էր կատարվորութեան Հայաստանի Թիֆլիսի դիւանագիտական ներկայացուցիչ Տ. Բէգզադեանը, կազմուած ազգութիւնից բոլոր խաւերից՝ այր, կին, բանւորներ, համքարներ և այլ կրքաներ դրօշակներով և մակագրութիւններով՝ եկան կանգնեցին հարց ներկայացուցչութեան չէնքի առջև: Հոծութիւնի ճառերից յետոյ, ինչ յանձնեցին միութեան որոշումը և խնդրեցին հաղորդել Հայաստանի կառավարութեան, որ միևնոյն ժամանակիցները բոլորն էլ պատրաստ են ոտքի կանգնելու

հայրենիքի պաշտպանության համար: Եհսրաբեր զրուցարժ դարձաս, իմ ճառի ժամանակ, երբ առաջարկեցի դիմադրելիները վերցնել ի յարգանս հայրենիքի պաշտպանության համար ընկածների հիշատակին, ցուցադրաբերն ինքնաբերաբար ծունկի իջան և գլուխները խոնարհեցին...

Բոլոր պետությունների ներկայացուցիչներին առնի միմիայնը կազմելուց յետոյ ծովածաւալ բազմությունը խունկ Աորհրդային Ռուսաստանի ներկայացուցչության առաջ: Ցուցումը հասաւ իր գազաթնակէտին: Արտասանեցին սուբ, յանգիժանական, հրակուռ ճառեր՝ ընդգիմ բոլշեւիկեան գործակցության: Խօսեցին սոցիալիստ-յեղափոխական Բարխանեանը, վրացահայց Ազգ.-Աորհրդի նախագահ Թոփչեանը, վրաց ժողովրդական դաւթիայի պետ Ջուղելին, «Աշխատաւոր»-ի խմբագիր Կ. Ղազազեանը: Մանաւորապէս ուժեղ էաւ արտասանից վերջինը, որ ելեկտրականացրեց ամէնքին:

«Ընկերնե՛ր, սկսեց նա, Մենք Արեւելքի յեղափոխական աշխատաւորության առաջնից եկել ենք այստեղ հարց տալու նրանց, ովքեր յանկարծ ունեն յեղափոխական անասնելու իրենց, մինչդեռ փաստօրէն գործը հակայեղափոխականների հետ են դաշնակցել: Ի՞նչ իրաւունքով կամ ո՞ր յեղափոխական ասանդի հիման վրա գալիս են նրանք մեր Արեւելքի աշխատաւորության դէրքերը Թուլացնելու, սոցիալիստական ո՞ր հասկացողութեամբ համագործակցում են մեր երկրի տէրող դասակարգի՝ խաների, բէգերի, փաշաների հետ: Մենք այսօր այստեղից բողոքում ենք, երբ յեղափոխականները նրանց դէմ, որոնք վարկաբեկում են յեղափոխութիւնը, գործը գործ կատարում մեր իրականութեան մէջ և հաբիւր հազարաւոր անմեղ հեռուների դահիճ էնվէր փաշաների, Թալէաթների ձեռք մենկում ու յեղափոխական կարմիր դրօշակով քողարկում:

Դէմ առ դէմ կանգնած՝ մենք ուզում ենք այս հարցը բոլշեւիկներին և ապատում ենք պատասխանի: Յեղափոխութիւնը վերածելով դիւանագիտութեան, սակարկելով ռազիկիզմը՝ այսօր նրանք Արեւելքում երեսն են դարձրել իրրև աշխատաւորութեան ընկերներ, իրրև բաբկամ տէրող դասակարգի: Մակայն, մօտ է այն օրը, երբ Արեւելքը կը բռնկի յեղափոխական հրդեհով, բայց ո՛չ մեր՝ Լենինի ու Թրոցկու, այլ մեր՝ տեղական յեղափոխականների ու հազարաւոր նահատակների չնորհիւ: Ապագայ պատմութիւնը և ապատ աշխատանքը կասկ իր խօսքը մեր այսօրւայ կատարած գործի համար»:

Գաղտնօրէն դուրս եկաւ խորհրդային ներկայացուցիչ Սաարկը՝ չրկապատած իւրայիններով և սկսեց խօսել: Նրա ամէն մի խօսքը ծանկում էր աուլցներով, վտրչէ-ներով, վրդովմունք ու բողոքի արտայայտութիւններով:

«Գուք ուզում էք գիտենալ, ասաց Նա, մեր վերաբերմունքը դէպի Հայաստանի ամէնաներում կատարուղ դէպքերը (Ձայներ՝ «մեծ գիտեմ, պատասխանեցէ՛ք, բէ ի՞նչ է ձեր արժէքը»): Ես կը պատասխանեմ: Ռուսաստանի բանւորգիւղացիական հանրապետութիւնը իր գոյութեան հէնց առաջին օրերից վճռեց ճանաչել ազգերի ինքնորոշումը, նոյնիսկ մինչև անջատում և անկախութիւն (Ձայներ՝ «դրանից խօսեք էին, իսկ գործո՞ւմ»): Մենք այդ իրաւունքը ճանաչեցինք ո՛չ միայն խօսքով, այլ և գործով (Ձայներ՝ «ամ՛ստ է, փաստերը»): Համեցէ՛ք փաստեր. մենք ճանաչեցինք Խաոնիկայի, Լիտա-

յի, Ֆինլանդիայի, Լեհաստանի անկախութիւնները (Ձայներ՝ «լաւ եանա–չեցիք, երբ ձեր ատամները ջարդեցին»)։ Ճանաչեցինք Վրաստանի անկա–խութիւնը։ Ճանաչել ենք, Ճանչում ենք և կը Ճանաչենք Հայաստանի անկախութիւնը, քանի որ այդպէս է ցանկանում հայ աշխատաւոր ժողո–վուրդը (Ձայներ՝ «Ինվերը կը նեղանայ», «ձեր դաշնակից Մուստաֆա Քեմալ փաշան էլ ձեզ պէս է ցանկանում և Ճանչում», «Իսկ Ղարաբաղը, Զանգեզուրը, Ղազախի դէպի՞ն»)։ Մէկը հուժկու ձայնով՝ «շատ մի խօսիր, Ղարաբա՛ղը տուր»)։ *Մեր քաղաքականութիւնը նզել է խաղաղու–թեան քաղաքականութիւն* (ծիծաղ, սուլոց, ձայներ՝ «ո՛ւտ է, ո՛ւտ է»)։ *Բացառութիւն ճակատներում մեր թափած արեան մեղքը մերը չէ* (Ձայներ՝ «ձե՛ր մեղքն է, մի օր կը պատասխանէք ռուս ժողովրդին այդ արեան համար»)։ *Այդ արիւնը ընկնում է Անատոլի վրա*։ (Ձայներ՝ «ո՛չ ձեր վրա, բոլշևիկների վրա, աւազակնե՛ր»)։ *Արևելքում մենք օգնում ենք և պաչ–պանում ենք Ճնշուած ազգերը ընդդէմ Անատոլի*։ *Մեզ համար թանգ են հայ աշխատաւոր գանգուածների չահերը* (Ձայներ՝ «ո՛ւտ է, մի՛ վիրաւորէք այդ ժողովրդին»)։ *Թանգ են և Պարսկաստանի, Հնդկաստանի և Ճամկաստանի աշխատաւորութեան չահերը* (Ձայներ՝ «ո՛չ, իսկ ձեզ համար էնվէր փաշաների ու բէգերի չահերը»)։ *Բայց Դաշնակցութիւնը իմպերիալիստների կողմն է բռնել և Հայաստանը դարձնում է գինք Անատոլի ձեռքին*։ (Ձայներ՝ «ո՛ւտ էք ասում, Դաշնակցութիւնը իմը հայ աշխատաւորութիւնն է»)։ *Հայ ժողովուրդը պէտք է ընտրի երկուսից մէկը՝ ցանկանում է լինել մե՞ղ հետ* (ձայներ՝ «հայ ժողովուրդը էնվէր չէ»), *թէ՞ տարուանկել հին քաղա–քականութիւնը։ Երկու ամիս առաջ մենք մեր միջնորդութիւնը առաջարկե–ցինք Հայաստանին և Ճամկաստանին*։ (Ձայներ՝ «ասուտ էք խօսում, ձեր միջնորդութիւնը արտայայտուեց Ղարաբաղում, Զանգեզուրում, Ղազախում, Նախիջևանում»)։ *Հայաստանը մինչև այսօր չի պատասխանել, իսկ Ճամ–կաստանը համաձայնեց* (սուլոցներ, «կորչի՛ե՛ս–ներ»)։ *Իմ կառավարութիւնը այսօր էլ նոյն վճռի վրա է։ Ահա իմ պատասխանը։*

Սուլոցների, անվերջ «կորչի՛ս–ների և սպառնական աղաղակների տարափի տակ Ստարկը Թողեց պատշգամբը, իսկ մխիթարը դեռ երկար չարունակուում էր խորհրդային ներկայացուցչութեան պատուհանների տակ։

Նոյն անվերապահ քննամանքով ընդունեցին պատերազմի լուրը և մրոց քաղաքական չրջանները, բացի ձայրայեղ ազգայնականներից, որոնք Քեմալի յարձակումը համարում էին յարմար ժամ լուծելու համար Լոռիի և Ախալքալաքի հարցերը։ «Ո՛ր Քեմալ փաշան Հայաստանը ասում է, դրում էր էրբ@օբաս»–ն (№ 2279), այլ ոչ ոքի համար գաղտնիք չէ։ Բայց մենք չէինք կարծում, որ կոմունիստները այն աստիճան կը տոբրանչին, որ իրենց ձեռքը կր մեկնէին այդ մարդուն — վերջին պատերազմի ընթացքում տարատեսակ մեկուսքներ հանդէս եկան իր մարտակերպերի համար և բոնա–կալութեամբ... Այսօր ռուսական իմպերիալիզմի մերկանալն ու Թուրքական հետ բարեկամանալը անվիճելի փաստ է... Ինչո՞վ կարելի է արդարացնել Քեմալի յարձակումը։ — միմիայն նրա վայրենի դիտաւորութիւններով։ Ինչպիսի՞ դրդապատճառներ են դրդի ժղում նրան.—միմիայն ատելութիւնը դէպի Հայաստանը։ «Թուրքերը նպատակ ունեն գալա–դութեամբ, գրում էր «Ռուբոչա»–ն, ամբողջ Հայաստանի վրայով միանալ բոլշևիկներին։ Հայ ժողովրդին, Հայաստանին անմիջապէս վտանգ է սպառ–նում։ Մենք պարտաւոր ենք հուժկու ձայն բարձրացնել հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան իրաւունքի համար... Եթէ Քեմալին յաղթուի



ՅՈՒՐ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ



ԿՈՉԸ ԻՐԱՎԻՐԱԿԱՆ



ՓԱՇԱՆՏԻ Ն. ԻՐԱՎԱԲԱՆՈՒԹԻՒՆ



ՊԱՐ. ՓԱՇԱՆՏԻՆԻ ՏԱՆԸ



Հ. ՊԵՏՈՒՆԻՆ



ՆԱՀԱՊԵՏ ՕՏԱՐԵԱՆՑ

իրագործել իր նրագիրը, այն ժամանակ Վրաստանը օգակւած կը լինի քհմնական–բոլշևիկեան ուժերուվ։ Նոյն կը ասում և ապ –ցեմ. վիա–քարքիձէ–ն. «Ընդհանուր վտանգը ինչպէս է Հայաստանին ու Վրաստանին լաքել բոլոր նեանդն ու պահպանել ազգային ազատութիւնը, որ մեր լաւագոյն զաւակների արիւնով է ձեռք բերւած։ Դաւադիր քշնամին վտնգելու համար մենք պիտւորական դաշինք պէտք է կապնք... Վրաստանի և Հայաստանի պիտւորական դաշինքի հարցը պէտք է մեր ընթացիկ քաղաքական հարցը դառնայ։ Նմանապէս և ասց –Ցեղ.«Միախառնւս Սաքմէչն. «Հայաստանի դէքախտութիւնը մեր՝ Վրաստանի դէքախտութիւնն է. քոնապետական բոնութիւնը միայն Հայաստանին հաւատեցնելու նպատակով չէ բարձրացած, այլ և Վրաստանի կուրծքը ջախջախելու համար է պինդ ատդւած։ Հայաստանի դէմ ուղղւած սուրը Վրաստանի ազատութեանն էլ է մահացու հաւատ սպառնում»։

Ընդհակառակը, Թիւրքերի յարձակումը Հայաստանի վրա անխան հրեւանք առալ բերնց բոլշևիկնների հարքերում։ Վրաստանի կոմիսար պաշտօնաքերը «կոմունիստ»–ը (հսկտ. 24), Թիւրքերի յառաջխազացման առքիւ գրում էր ցնծութեամբ. «Մնում է միայն ուրախանալ, որ դաշնակցական Հայաստանը գտնւում է այն դրահարող կովի դրութեան մէջ, որին Աատած եղիւրներ չի տւել»։ Բայոլ կոմունիստ–ը բուռն խմբագրականներ էր գրում ի նպաստ Մուստաֆա Քեմալի և ընդդէմ Հայաստանի։ Գակառ չէին մնում և հայ կոմունիստները. նրանք ևս չարունակում էին կատադի յարձակումները Հայաստանի վրա և աշխատում էին վարկաբեկել Հայաստանի կառավարութիւնը յաչս Միջհրդային Ռուսաստանի։ Այս տեսակէտից պերճախօս մարդկային վաւերաքիր է հետևեալ կոչը՝ ամբողջ աշխարհին, որ հրատարակւեց Բացոլ «կոմունիստ»–ի հոկտ. 8 համարում։

«Ընդրկովկասի ու ամբողջ աշխարհի բանւորներին և գիւղացիներին, կոմունիստական Ինտերնատիոնալին, Արհեստակցական Միութիւնների Միջազգային Միջհրդին և Գործունէութեան ու Գրգռազանդի Միջհրդին.

Այնկոտոդ Արևելքի սրտում, Անդրկովկասի ու ամբողջ աշխարհի բանւորագիւղացական յաչն գանգւածների համար աննկատելի կերպով, մի՛զազային խմբերի դործակալների — դաշնակների դործերի ատաղծկների կառավարութիւնը գեղակատարում է Հայաստանի յաւադոյն զաւակների — կոմունիստական կուսակցութեան և արհեստակցական միութեան անդամների։ Հայաստանի բանտերը լի են կոմունիստներով և ապատամբած բանւորներով ու գիւղացիներով։

Լաչն գանգւածների աչքում մնանցած, բայց ազգայնական պատւբազմների փորձով հմուտ ձեռնհասութիւնն կուսակցութիւնը՝ ժամանակաւոր յաղթութիւն տանելով ապատամբ բանւորա–գիւղացական դանգւածների վրա, բռնութիւններ գործ դնելով մահմեդական խաղաղ գանգւածների դէմ, այժմ հաչիւ է տեսնում Հայաստանի ապատամբած բանւորնրի ու գիւղացիների և նրանց դեկավարների՝ կոմունիստների հետ։

Հայաստանի կառավարութիւնը հաճեց նորից ու նորից տաքանալ արիւնով՝ այս անգամ կուելով նրանց դէմ, ովքեր ուղում էին բանւորա–գիւղացիական Հայաստանը խլել նրա արիւնոտ ձեռքերից, որպէսզի՝ հաղթրակից անեն նրան աչխատանքի և կապիտալի մէջև մղող մեծ կռիւն։ Հայաստանի մոտալ ու խոնաւ բանտերը, որոնք ոչ քիչ կեանքեր խլեցին արիւնալի ցաքի օրով, վերածւել են կառավարական տանձարների,

ուր մասնակիցները արխնալի խնդրանքը ևն ասրջում Հայաստանի կոմսոմոլի նախագահ: Հայաստանի ներսում կոմունիստական բանտարկյան չարժումը յաղթահարելով միայն դաշնակները կարողացան Հայաստանը վերածել իմպերիալիստների համար յուրայի մի յենարանի՝ Արևելքի յեղափոխության դեմ կռվելու համար:

Այն ժամանակ, երբ ամբողջ Արևելքը բռնված է ազատագրության բոցով, երբ Արևելքի ժողովուրդների համագումարը երկրորդում է արևելքյան ժողովուրդներին ուղղ կանգնելու կոմունիստական ինտերնասիոնալի դրօշակի տակ միլիոնային խմպերիալիզմի դեմ վերջին վճռական կռիվը մղելու համար, այդ ժամանակ Հայաստանի սպիտակ ասրագվայլերն կոռոպտությունը, հրով ու սրով չափելով ամբողջ յեղափոխական Հայաստանը, քաղաքներով բոլոր բանտարկյան արհաստակցական կազմակերպություններ, անդրև-ամերիկյան իմպերիալիստների հետ միասին նոր Գողգոթա է պատրաստում Արևելքի յեղափոխական գանգաձներին:

Սակայն, ո՛չ կոմունիստական չարժումը Հայաստանում, ո՛չ էլ, մանավանդ, Արևելքի ժողովուրդների յեղափոխական չարժումը ոչ մի բոպչ չեն կասեցնի իրենց յաղթական արչաւը: Ընդհակառակը, արհեստով զանհեների ձեռքով ընկած ընկերներ Ալլահվերդովի, Ղարբրշևսոյի, Ղուկասի և ուրիշ չատ չատերի մահը, տանջանակ ու հարեւրաւոր տարատեսակների մահացումը Հայաստանի խուլ ձորերում, լատագոյն ապացոյցն է, որ հետզհետէ Հայաստանը իր մէջ քաղցնում է ներքին յեղափոխական ոյժ, որ որոշ պատմական րոպէին ղարձնալ կուխ կը սկսի, որպէսզի երկրի երեսից վերացնէ պատուհասի ընթացքը հրով ու սրով կատնչել ձգտողներին:

Մենք ուխտել ենք տալիս Հայաստանի արխնաշամ եղած բանտարկիչ պաշտպանների՝ չեկիստների ատագակների խմբերի ջանգոզի պրովոկացիային, այլ չամաոօքն ու համերաշխությամբ հասաքել իրենց ցան ու ցիր եղած ուժերը իրենց դասակարգային մարտիկների չուրջ, արթուն ունկնդրել կոմունիստական կուսակցության ձայնին, որի լուսադյն անդամները իրենց հերոսական մահով բացին ազատագրման ճամբան:

Մենք դիմում ենք Ամերիկայի Ազրբէջանի բոլոր բանտարկյան կազմակերպություններին, կոմունիստական ինտերնասիոնալին, Գործունէության ու Պրոպագանդի Ամերիկյան Մերմերների միջազգային Ամերիկին՝ մեզ հետ միասին բողոքի ձայն բարձրացնելու Հայաստանում իշխող սոփոսալ սոերոր դէմ:

Թո՛ղ իմանան դեղին Ինտերնասիոնալի սոցիալ-դաւանանները, որ մեք Քիֆլիս եկան և արտագդ ընդունելության գնան իրենց բարեկամների — դաշնակների ու մենչևիկների կողմից, որ այդ երկրների երեւութական բարեյաջողության ու անդորրության պատճառը նրանում է, որ նրանք իրենց հետևողական ներքին քաղաքականությամբ, Հայաստանի խոնաւ բանտերում կալանաւորած հարեւրաւոր բանտարկյալների ու գիւղացիների տառապանքներով ու քաղցով:

Մա՛հ Հայաստանի բանտարկյալ ու գիւղացիների վրա բռնութիւն կատարողներին:

Կեցցէ՛ յեղափոխական Արևելքը:

Կեցցէ՛ Ինտերնասիոնալը:

Հայաստանի Կոմունիստ. Կուսակց. Կենտր. Կոմիտէ: Ազրբէջանի Արհեստ. Միութիւնների Խորհրդին կից գտնուող Արհեստակցական Միութիւնների Արևելեան Բիւրօ: Նախագահութիւն Ազրբէջանի Արհեստակցական Միութիւնների Խորհրդի:

Իսկ ի՞նչ վերաբերում ունէին դէպի Քիւրքական յարձակումը դաշնակիցները։ Դեռ օգոստ. 8-ին, Հայաստանի կառավարութիւնը չբաւարարուած յայտարար էր ուղղել բոլոր դաշնակից պետութիւնների կովկասեան ներկայացուցիչներին՝ ցոյց տալով, որ քեմալականները ձգտում են Հայաստանի վրայով միանալ բոլշեւիկների հետ և նրանց օգնութեամբ յարուցանել պարսկերը դաշնակիցների դէմ։ Հայաստանի կառավարութիւնը փաստերով հաստատել էր, որ բոլշեւիկները ու քեմալականները Ադրբէջանն ու Պարսկաստանը դարձրած են իրենց անմիջական գործունէութեան վայր և որ բոլշեւիկ համխալսական-համաթիւրքական ծովի մէջ միայն Հայաստանն է մնացել մի փոքրիկ օազիս, որը հեշտութեամբ ոտքի տակ կերթայ, եթէ դաշնակիցներից լուրջ օգնութիւն չստանայ։ Ոչ մի չօշափելի օգնութիւն չստացուեց դաշնակիցներից, եթէ հաշւենք Անգլիայի ծախած մէկ միլիոն ոսկու ռազմամթերքն ու զինուորական հագուստը։ Պատերազմը սկսելուց յետոյ, Հայաստանի կառավարութիւնը նորից դիմեց դաշնակիցներին։ Պատասխանը եղաւ նոյնը։ Համակրական խօսքեր և ոչ մի գործնական օգնութիւն։

Այսպիսի պայմաններում սկսուեց Քիւրք-հայկական պատերազմը։ Հայաստանը բաւիս բուն նշանակութեամբ մնացել էր մենակ։ Նա բոլորովին պատրաստ չէր այդ պատերազմին։ Դեռ նոր էր դուրս եկել Ներքին քաղաքական հոլւանների չրջանից։ Մայիսեան բոլշեւիկեան չարժումները կազմալուծել էին նրա բանակը։ Քիւրքական չրջանների նամման գործողութիւնները ստեպ նոյնը։ Համակրական խօսքեր և ոչ մի գործնական օգնութիւն։

Այսպիսի պայմաններում սկսուեց Քիւրք-հայկական պատերազմը։ Հայաստանը բաւիս բուն նշանակութեամբ մնացել էր մենակ։ Նա բոլորովին պատրաստ չէր այդ պատերազմին։ Դեռ նոր էր դուրս եկել Ներքին քաղաքական հոլւանների չրջանից։ Մայիսեան բոլշեւիկեան չարժումները կազմալուծել էին նրա բանակը։ Քիւրքական չրջանների նամման գործողութիւնները ստեպ և մուլացրել էին երկրի մարտական ուժերը։ Ադրբէջանը նաւթ չէր տալիս և Հայաստանի երկաթուղին հազիւ չուներ քարշուժ։ Բոլշեւիկեան յարձակումները Ղազախի, Բասարգեչարի, Դարալագեազի և Շարուրի չրջաններում անընդհատ լրկային վիճակի մէջ էին պահում Հայաստանը և ստիպում, որ հայկական զօրքերը մեծ ցրուած վիճակի մէջ։ Բացի այդ, ժողովուրդը գրգռած էր բերքը հաւաքելով։ անձրեւոտ եղանակի պատճառով հունձքը վերջացաւ ուշ և ամէն ոք չտապում էր կալսել ու պատրաստել իր ձմեռուայ պաշարը։ Զինուորական իշխանութիւնը ծոյլ էր տեսել, որ բանակի զինուորների մի մասը գնայ տուն գաշտային աշխատանքներ կատարելու համար։ Քիւրքերի ընդհանուր յարձակումը յանկարծակիի բերեց հայկական բաժր հրամանատարութեան։ Ամռող ճակատի վրայ, Սուրմալուից մինչև Օլքի, հայկական ուժերի թիւը վեց հազարը չէր անցնում, որից չուրջ 2500 Սուրմալուում, մնացածը՝ կազմի ճակատի վրայ։

Իսկ ի՞նչ ոյժ ունէին Քիւրքերը, Հայաստանի դէմ պատերազմը սկսելիս։ Համաձայն Հայաստանի սպարապետի սպայակոյտի հետախուզական բաժնի յուլիս 6 տեղեկութեան*) Քիւրքական բանակը Հայաստանի սահմանի վրայ հետևեալ կերպով էր դասաւորուած։ 15րդ կորպուս՝ հրամանատար Քեազիմ Կարաբեքիր փաշա։ Էրզրումում գտնուում էր 17րդ գունդը և 9րդ դիւիզիայի սպայակոյտը — հրամանատար՝ Ռուշտի բէյ։ Հասան Ղալայում գտնուում էր 28րդ գնդի կենտրոնը և չորս լեռնային թնդանօթ։ Թորթումում՝

*) Секретная сводка развед. отд. шт. ком войсками Армении 6 июля 1920 г. № 20

28րդ գնդի երկու գումարտակ. Բարգուսում՝ 28րդ գնդի մէկ գումարտակ և 20րդ գնդի մասեր. Մորսանում՝ 12րդ դիւիզիայի սպայակոյտը — հրամանատար Խալիլ բէյ. Զիւինում՝ 34րդ գունդը. Քեոփրիքէոյում՝ 35րդ գունդը. Ալաչկերտում՝ 36րդ գունդը: Օլմիի ուղղութեամբ չաթշում էր Խալիդ բէյի երրորդ դիւիզիան — 7, 8 և 11րդ գնդերը: Տրապիզոնի և Էրզրումի միջև նկատւած էին 31րդ դիւիզիայի մասերը: 11րդ դիւիզիայի կենտրոնը, ինչպէս և 18րդ գունդը՝ Բայազետում. 32րդ գունդը՝ Վանում. 30րդ գունդը՝ Բայազէտ–Արշաւում: Բացի այդ Մէրդենեկի չրջանում կային 1200 հոգի անկանոն կուռդներ. Օլմիում՝ 350 ժանդարմներ. Օլմիից դէպի հիւսիս՝ 1500 հոգինոց չէթա. Հասան–Ղալասում՝ 1600 կամաւորներ. Տրապիզոնում՝ 300 ժանդարմներ. Լազիստանում՝ լոյ կամաւորներ:

«Քանն»–ի դիւուրական Քրիստիգի ասելով, 1920թ. ամառւայ վերջը, արևելեան նահանգներում Քիւրքերն ունէին 3րդ, 13րդ և 15րդ կորպուսները ընդամէնը՝ 50.000 հետևակ, 2,600 այրուձի և 306 հին ձևի թնդանօթ: Ուրիշ դիւուրական հնդիկութիւններ Հայաստանի դէմ գործող Քիւրք բանակը ցոյց էին տալիս՝ 3րդ, 9րդ, 11րդ, 12րդ և խառն դիւիզիաները, երկու աշխրհքական գնդեր, մի բրիգադ այրուձի, այսպէս կոչւած ազգբնջնեան ձիաւոր հարիւրեակը, Քրքական և քրդական հրոսակախմբեր և այլն: Կանոնաւոր զօրքերի Քիւը հասնում էր 28.000–ի, որից 3.000 ձիաւոր: Զօրքը պարենաւորւած էր չատ լաւ, ունէր առատ ռազմամթերք, տաք հագուստ, որ ստանում էր իտալացիներից, Ֆրանսացիներից և Մորէրդ. Ռուսաստանից:

Նման անհաւասար պայմաններում սկսւեց պատերազմը: Հայաստանը լարեց իր բոլոր ուժերը: Մեպտ. 30–ին, կառավարութիւնը արտակարգ նիստում, երկրիը յայտարարեց դիւուրական դրութեան մէջ: Մինչև 35 տարեկանները գնդի տակ առաւ: Ինստ օրէնքներ սահմանեց դասալիքների դէմ: Զինւորական նախարարութեան տուն արտակարգ լիազօրութիւններ, նրան ենթարկեց երկաթուղիները, ոստիս–կայանները և փոխադրութեան միջոցները: Որոչեց, արագացնելու համար կառավարութեան գործունէութիւնը և չրջաններում հնդինակաւոր ներկայացուցիչներ ունենալու նպատակով, նախարարների մի մասին և մի չարք գործիչներ ռազմաճակատ և գաւառներ ուղարկել: Այնքանդրապոլ ուղարկւեցին Ա. Ջամալեանը և Գ. Ղազաթեանը, Կարս՝ Ս. Վրացեանը և Ա. Բարալեանը, Սուրմալու՝ Ս. Աբրահատեանը, Ղաղախ՝ Ա. Գիւլխանդանեանը, Նոր–Բայազետ՝ Ս. Մելիք–Եոլչեանը, Ալաշկարտ՝ Մորէրդարեանի անդամները՝ Բ. Տէր–Քաւոյեանը և Հ. Տէրտէրեանը: Կենտրոնում մնացին՝ Հ.Օհանիանեանը և Ռ.Տէր–Մինասեանը: կառավարութիւնը մի սրտառուչ կոչ ուղղեց ժողովրդին: Զինւորական նախարարի հրամանով Երևանի և Կարսի հրապարակներում կանգնեցրեց կախաղանները: կառավարութեան հետ միասին ամբողջ երկիրը ևս լարում էր իր ուժերը դիմադրելու համար իր Քշնամուն:

Արտաստամանեան հասարակութեան մէջ այն կարծիքն է տիրում, որ Քիւրքերը, առանց որևէ արգելքի հանդիպելու, յաղթեցին հայերին, որ

հայկական բանակը ոչ մի դիմադրութիւն ցոյց չտուեց: Այս կարծիքը արդիւնք է բացառապէս տպիտութեան: Ընդհակառակը, եթէ հայ բանակի մի մասը չգտնուեց իր կոչման բարձրութեան վրա, միւս մասը ցոյց տուց անձնազոհութեան, անվեհերութեան և հայրենասիրութեան աջառնելի օրինակներ: Հայ-Թուրքական վերջին պատերազմի պատմութիւնը, որը դեռ իր պատմաբանին է սպասում, կը բանայ մեր առիւծ չատ ուսանելի էջեր, որոնք Թուրքիան և անկազմակերպութեան կողքին ցոյց կը տան պետական գիտակցութեան և ռազմական կարողութեան չքեղ օրինակներ: Մասնաւորապէս բուռն կռիւներ տեղի ունեցան Սուրմալուի ճակատում. իրենց յարձակումը Թուրքերը սկսեցին երկու ուղղութեամբ: Գեազիմ Կարաբեքիրի ուժերի մի մասը չարժուց Կարսի ճակատում. միւս մասը՝ մի գիւղից հետևակ, մօտ 2,000 գիւրը խուժան, 8 Մնդանօք, միաւոր մասեր, ուղղուեցին դէպի Սուրմալու, բատ երևոյթին կամենալով արագ հարուածով գրաւել մինչև Աբաքա և հարուածի տակ առնել երևանը: Իգդիրի ճակատի ընդհանուր հրամանատար նշանակուեց Դրօն, որի ձեռքի տակ կային 9րդ գունդը — 1,200 հետևակ, 25 միաւոր, 16 գնդացիր, հրամանատար՝ գնդապետ Մուրաթբեյեան. 8րդ գունդը — 600 հետևակ, 40 միաւոր, 8 գնդացիր, հրամանատար՝ Տ. Բաղդասարեան. էքսպեդիցիոն զօրամասը — 5 վաշտ — 500 հետևակ, 16 բեռնակիր և 8 ձեռքի գնդացիր. Կուռօ Թարխանեանի այրուձին 260 միաւոր, 6 գնդացիր: Հոկտեմբեր 1-ին 8րդ գունդը փոխադրուեց Կարսի ճակատ, որ Սեպուհի բրիգադի մի մասն էր. դրա փոխարէն նոր լրացումներ եղան, որով ամբողջ Սուրմալուի զօրամասի թիւը հասաւ մինչև 2,000 հոգի: Զօրամասը չատ լաւ կազմակերպուած ու պարենաւորուած էր. բոլոր մասերը կապուած էին իրար և կենտրոնի հետ հեռախօսով. սերտ յարաբերութիւն էր ստեղծուած և զօրամասի ու ազգաբնակութեան, ինչպէս և նիզամեանի գաւառային ինքնավարութեան միջև: Այս վերջինս էր վարում Սուրմալուի զօրամասի պարենաւորման գործը. ինչպէս նաև չատ յաջողութեամբ կատարեց Սուրմալուի ազգաբնակութեան տեղափոխութիւնը:

Հոկտեմբեր 20-ից սկսած, Թուրքերը գործօն չարժումներ կատարեցին Սուրմալուի ճակատում: Նրանք յարձակեցին Կարաբուլաղ և Սոգիւլքի գիւղերի վրա: Հոկտ. 20-ի ամբողջ օրը տեղի ունեցան տաք կռիւներ. Քեղամօմիերը երկու կողմից որոտում էին անդադար: Քչնամու գնդացիները ուժերի ճնշման տակ մերոնք նահանջելցին մինչև Աբաքա. յաջորդ օրը դիմեցին հակայարձակման և չետ չպրտեցին Քչնամուն ծանր կորուստներ պատճառելով նրան: Մեր զոհերն էին սպանուած և վիրաւորը՝ երկու սպայ և 60 գինուոր: Հոկտ. 24-ից կատաղի կռիւներ սկսեցին Գիւլլուկ, Կարակալա, Վերին Զարուխչի, Դաշրուռնեի չրջանում: Վաղ լուսաբացին, մօտ մէկ գիւղից կազմուած ուժեր ու բազմաքիւ քրդական խմբեր յարձակման անցան Գիւլլուկ—Վերին Զարուխչի, Սուլքանաբաղ—Իգդիր, Դաշրուռնեա—Կարակոյնլու—Մարգաբա ուղղութեամբ: Արձևնահէղ կռիւներ տեղի ունեցան: Քչնամին բազմաքիւ անգամներ գիմեց գրոհի և միշտ չետ չպրտուեց: Թուրքերը առանց կանգ առնելու զոհերի առաջ, ձգտում էին, ինչ գնով էլ

լինի, գրաւել Սուրմալուն։ Հայերն էլ վճռել էին ամէն չառա մեռնել, բայց ամէն չառ և երեք օր չթուտնակ, առանց ընդմիջման, ամբողջ ճակատի վրա մղում էին արիւնահեղ կռիւները։ Ցեղ-ցեղ, ինչպէս Դալիգոզալի դիրքերում, որ պաշտպանում էր Կուռո Թաբախանակը, գիւղերների ու ապահերի յիսուն տոկոսը սպանուեց կամ վիրաւորուեց, բայց չնահանջեց։ Սալիմնաթաղի դիրքերում Քշնամին կուռում էր մի քանի հարիւր քայլ հեռաւորութիւնից։ Սպայութիւնը՝ գնդ. Խուդաթաչեան, Մամիկոնեան, Գալուստեան, Ռուխասեան, Թարվերդեան, Թարխանեան, Մակ-Մալիկեի, Թոփչեան, Աբգարեան, Գեորգեան, Դամբաքեան և ուրիշներ ցոյց ուին հերոսութեան փայլուն օրինակներ։ Առաջ բերինք մի օրինակ միայն։ Կուի երկրորդ օրը, Դրօի հրամանով, Քանաքեռից, բեռնատար ինքնաշարժներով, օգնութեան է հասնում Կուռո Թարխանեանը։ Մարդաթայում պարզուում է, որ խմուիչը բռնուած է Քշնամու կողմից։ առանց գնալու հնարաւորութիւն չկայ։ Առանց երկար մտածելու, Կուռոն դասաւորում է գիւղերին ինքնաշարժերի վրա, ինքը նստում է առաջին ինքնաշարժի վարիչի մօտ և չորս ինքնաշարժները, իրարից յիսուն քայլ հեռու, արագութեամբ քշել է տալիս խմուիչով, միաժամանակ, գնդացիրներից աստիճ կրակ բանալով ճանապարհի երկու կողմով։ Քշնամին յանկարծակիի է գալիս և ապրափոխար պահւում առաջներում։ Տալով ուր գիւղը վիրաւոր և գնդացիրային մասի պետ հերոս Մալիգիկին սպանուած՝ Կուռոն ճեղքում է Քշնամու շղթան և հասնում օգհասական դիմադրութիւն ցոյց ուող Դալիգոզալին օգնութեան։

Հոկտ. 26-ին մեր զօրամասերն անցան հակայարձակման։ Քշնամին բոլոր կէտերում, կատաղի դիմադրութիւնից յետոյ, բազմաթիւ դիակներ Թողնելով, դիմից խուճապային փախուստի։ Ու հետզհետէ հեռացաս Բարեգնեան լեռների միւս կողմը։ Երեկոյը, որ մի քանի օր ապրում էր Սուրմալուից հասնող Քղանաքիների որոտի տակ և սարսափահար սպասում էր ճակատամարտի ելքին, հանգիստ չունչ քաշեց։ Քշնամին այլևս Սուրմալուի ճակատում կենդանի գործունէութիւն ցոյց չտուեց։

Հոկտ. 26-ին մեր զօրամասերն անցան հակայարձակման։ Քշնամին բոլոր կէտերում, կատաղի դիմադրութիւնից յետոյ, բազմաթիւ դիակներ Թողնելով, դիմից խուճապային փախուստի։ Ու հետզհետէ հեռացաս Բարեգնեան լեռների միւս կողմը։ Երեկոյը, որ մի քանի օր ապրում էր Սուրմալուից հասնող Քղանաքիների որոտի տակ և սարսափահար սպասում էր ճակատամարտի ելքին, հանգիստ չունչ քաշեց։ Քշնամին այլևս Սուրմալուի ճակատում կենդանի գործունէութիւն ցոյց չտուեց։

Բոլորովին այլ ընթացք ստացան դէպքերը Կարսի ճակատում։ Այստեղ գործում էին զօրավար Ցովսէփեանի բրիգադը — առաջին գունդ՝ գնդ. Մազմանեան, 4րդ գունդ՝ գնդ. Մերիմանեան, 5րդ գունդ՝ գնդ. Շաղուեաղեան. Սեպտեմբերի բրիգադը. 7րդ գունդ՝ գնդ. Իշխանեան, 8րդ գունդ՝ փոխ. գնդ. Բաղդասարեան. Գնդ. Ղորղանեանի ձիաւոր բրիգադը և մի քանի կամաւորական խմբեր՝ Փիլոսի, Մուրատեանի, Սմբատի և այլն։ Կարսի ճակատում գործում էին սուսանականները և վլադատամարտ զրահագնացքը։ Կարսի բերդապետն էր՝ զօրավար Փերոմեանը, իսկ բերդի հրետանիի պետն էր բուլղար սպայ՝ գնդ. Բաքալչանովը։ Կարսի զօրամասերի ընդհանուր հրամանատարն էր՝ զօրավար Սիլիկեանը, սպայակոյտի պետ՝ գնդ. Վեքիլեանը։ Թէ բերդի և թէ դաշտային մասերը Թոյլ էին կազմակերպուած. գիւղորեների մեծ մասը նոր էր հաւաքուած և չէր մերւած գնդերում։ Սպանների և գիւղորեների փոխյարաբերութիւնը չատ մասերում մտերմական չէր։ Լաւ չէին և

գրօ· Փիքուէեանի ու գօր· Յովսէփեանի, ինչպէս նաև նահանգապետ Ղոր–ղանճեանի յարաբերութիւնները, որ անդրադառնում էր չրէպատի վրայ: Զօրքերի մի մասը լուսաց կէրպով գինած էր Անգլիայից նոր ստացած Մոս հրացաններով, որոնց վարժ չէր: Թիկունքը լաւ կազմակերպւած չէր և հակազօհական տարրերը՝ բոլշեվիկները կարողանում էին դժուարութիւններ առաջացնել, Աչտզէս, հոկտ· 2–ին, Կարթլոյ կայարանից եօթ վերստ հեռու, Շահնալար գիւղի մօտ, խորտակւեց ճակատը գինուորներ տանող գնացքը 14 վագոններ յարդուեցին, սպանուեց 12 և վիրաւորուեց 43 հոգի: Բոլշեվիկների գործն էր այդ:

Փոքձելու համար մեր զօրքերի մարտունակութիւնը, այլ և ռազմական ոգին բարձրացնելու նպատակով, բարձր հրամանատարութիւնը որոշեց ձեռնարկել ընդհանուր յարձակման: Ծանրոցների դէպքում ենթադրւում էր առաջ յարժւել: Յարձակումը յաղողութիւն չունեցաւ: Թշնամու ուժեղ դիմադրութեան հետևանքով մեր զօրամասերը նահանջեցին գրեթէ մինչև կէսը: Այնուհետև նախաձեռնութիւնն ամբողջապես անցաւ թշնքերի ձեռքը: Քայլ առ քայլ հետևելով մեզանց, հոկտ· 28–ին, նրանք գրաւեցին Վեղենջոյի բարձունքները: Ամբողջ հոկտ· 28–ին տաք կռիւներ տեղի ունեցան· Մարտա–նեանի զօրամասը ձգտում էր յետ խլել Վեղենջոյը: Այս կռիւներում երկու կողմերն էլ ունեցան ծանր կորուստներ· վիրաւորւեց հակառակ պետ գլխապետ Գեղունեան: Հոկտ· 29ին տեղի ունեցաւ զօրամասերի վերախմբում: Համաձայն որոշած հրամանի, հոկտ· 30–ի առաւօտեան, մեր զօրքերը պիտի անցնէին հակայարձակման Վեղենջոյը գրաւելու նպատակով: Սակայն առաջին գործը մեզանից կատարել հրամանը և տեղից չշարժւեց: Ցուսահատ և անգօր՝ գնդ· Մարմանեանը ամենքի աչքի առջև մատների երկու գնդակից սպանեց իրեն: Այս ևս չազդեց զօրքի տրամադրութեան վրա: Այդ միջոցին մեծ ուժով յարձակման դիմեցին Քիւրքերը· Սկսուեց խուճապային փախուստ: Մեր զօրքերի մի մասը և զրահագնացքը նահանջեցին դէպի Մարտ· Ժողովուրդը և զօրքի միւս մասը խուճապ դէպի կիրճ՝ Պրոխլադնոյէ գիւղ ուղղու–թեամբ: Մեր սաւառնակը Քոաւ Երևան: Կարսն ընկաւ Քշնամու ձեռքը: Գերի մնացին զօր·Փիքուէեանը, զօր·Աւարտանեանը, գնդ·Շադուրգեանը, գնդ· Վէքիլեանը, գնդ· Բաբաջանովը, փոխ–գնդ· Տէր–Աւագեանը, 30–ի չափ զանազան աստիճանի սպաներ և մօտ 3,000 զինուորներ· Նախապէս Ա· Բաթալեանը, փոխ–հանձնապետ Զալխոչեանը, քաղաքապետ Նէրսեսեան–նը և ազգաբնակութեան մեծ մասը: Եթէ օր առնիկահատ Քիւրքերը Քալաեե–ցին, բռնաբարեցին, սպանեցին և ամէն տեսակ վայրենութիւններ գործ դրին քաղաքում:

Նախապար Ա· Բաթալեանը, իրրև զէպքերի ականատես, զարհուրելի գոյներով է նկարագրում Քիւրքերի գործած վայրագութիւնները: Հայերը ենթարկւում էին կոտորածի, գեղեցիկ կանայք տարւում էին Հարճութեան, տղամարդիկ ջլւում էին Քիւրքերի ներքոյը: Ի մէջ այլոց, ցնցող տեսա–կութիւններ է տալիս նա բոլշեվիկների կատարած դերի մասին: «Մեր գերու–թեան հինգերորդ օրը, գրում է նա, մեզ այցելեցին չոբո հայեր՝ ուզելիցու–

Քեամբ մի քանի տաճիկ սպաների, գարդարած կարմիր լաթերով: Կաթսի հայ կոմունիստներն էին դրանք. պատում էին Հանրակացարանները և իրենց քշնամիներին մատնում տաճիկներին: Ելեկտրների անդամներ էին: Այնպէս էին հաւատացրել սրանց տաճիկ սպաները, որ իբր Քէ կարսը պիտի յանձնեն բոլշևիկեան իշխանութեան: Եւ ամէն կերպ փայփայում էին կոմունիստ տականձնիերին. փոխարէնը սրանք մատնութիւններ էի անում և ցոյց տալիս պահեստների տեղերը և անհրաժեշտ տեղեկութիւններ էին տալիս հայ զօրքի և երկրի վերաբերեալ»:

Իսկ Բագուի հայերէն «Կոմունիստ»-ը (№ 42) հետևեալ ձևով է նկարագրում քիւրքերի ընթացքը Կարսում.

«Հոկտ. 30-ին տաճկական զօրքերի առաջապահ մասերը չհանդիպելով ոչ մի դիմադրութեան հայկական զօրամասերի կողմից՝ գրաւեցին Կարսը: Մինչև քիւրքական զօրքերի մտնելը, հայկական զօրքերը խորը համոզուած էին, որ Կարսի վրա յարձակուող զօրքերը բոլշևիկներն են, որի պատճառով և նրանք դիմադրութիւն ցոյց չտուին տաճիկներին: Այդպիսի կարծիքի էր և Կարս քարոզչի աշխատաւոր ժողովուրդը, որը բացարձակապէս համոզուած էր, որ կարմիր դրօշակի տակ, յարձակում է կարմիր Տաճկաստանի յեղափոխական բանակը: Բայց քաղաք քաւիւած այդ զօրքերը չխնայեցին ո՛չ կանանց, ո՛չ երեխաներին և ո՛չ էլ ծերերին: Հինգ օրւայ ընթացքին արիւնռուշտ գինւորները և քիւրդերը խաղաղ ժողովրդի գլխին գործադրեցին իրենց բոլոր գազանութիւնները, որոնք վիր են մարդու երևակայութիւնից: Սպանում էին բացառապէս հայերին: Թալանում էին ամէնքին անխտիր:

Չէին խնայում նոյնիսկ կոմունիստներին, որոնք իրենց կոմունիստ լինելը ապացուցանող վկայականներ էին ներկայացնում: Տաճկական զազատնութիւնների զոհ գնացին Կարսում մօտաւոր 6,000 հայեր:

Մաբսաթէի կոտորածներին յաջորդեցին խորհրդային ձերբակալութիւնները հայերի մէջ: Ոտքից գլուխ մերկացնելով նրանց հարեւանների առաջ էին կարին և Սարդարաբադ աշխատելու: Ուղարկածները ցրտահար էին լինում և մեռնում քաղցից ու տանջանքից:

Միևնոյն ժամանակ սկսել էր թուրք գաղթականների չարժումը դէպի Կարսի շրջանը: Տեսողները սարսափով պատում էին, Քէ ինչպէս բազմաչաւար ամրոխը՝ ծերեր, կանայք, երեխաներ այդ ցրտին չարժւում էին դէպի Սարդարաբադ ու Կարս օր առաջ տեղաւորելու փախած հայերի գիւղերում և տներում:

Կարսի շրջանը դատարկուած էր արդէն հայերից. Կարս քաղաքը նոյնպէս: Բնակչականների համար ստեղծուել էր հնարաւորութիւն իրենց ծրագրի մի մասը իրագործելու: Տաճկական հրամանատարութիւնը աշխատում էր Կարսի շրջանը քրքացնել, որպէսզի հին կառավարութեան հետ կնքած պայմանի համաձայն, կազմուելիք հանրաքէէն յօգուտ իրեն վճռուի, իսկ առաջին խորհրդատուորդին կարենայ յայտարարել, որ Կարսի շրջանը քրքրնակ է»:

Կարսի գրաւման յաջորդ օրը, Քեւռիմ Կարաբեքիրը մի կոչ ուղղեց քաղաքի և շրջանի հայ ազգաբնակութեան, որի մէջ պատուիրում ամբողջ պատասխանատուութիւնը բարդում էր «պատիժներին» վրա և իրեն նուիրագործում էր իբրև բռիատնկութեան պաշտպան. ապա պահանջում էր, որ իշխանութեան յանձնուեն հայերի մօտ գտնուղ գէնքն ու ռազմամթերքը, սպաներին և զամէն տեսակ գործակալներին ու լրտեսներին»:

Այնուհետև զէպքերը զարգացան շատ արագ։ Կարսից յետոյ մեր զօրքերը համախմբուեցին Ղալչախչախի տակ, ուր նոյ. 4–ից սկսուեցին տաք կռիւներ վրա հասնող Քիւրքերի հետ։ Քշտամին աշխատում էր կտրել կիրճի բերանը և գերի առնել մեր զօրամասը։ Զգաստամարտ զրահագնացքի խումբը շարժուեցաւ և գնդացիրային սպառիչ կրակի ուժով Քիւրքերի դագաղը ճախողուեցան մատնեցին։ Մեծ կորուստ տալով, Քշտամին այլևս չհամարձակուեց առաջ շարժուել։ Ղալչախչախի կուռն ահագին բարդացում առաջ բերեց Ալէքսանդրապոլում։ Նահանգապետը միլիցիան առած հեռացաւ քաղաքից։ Քաղաքային ինքնավարութեան, երկաթուղային պաշտօնէութեան մեծ մասը փախաւ։ Քաղաքում գլուխ բարձրացրին անիշխանական տարրերը։ Բանտից արձակեցին բոլշևիկները, որոնք տեղեկեցին Ճեղկոտ և փորձեցին իրենց ձեռքն առնել իշխանութիւնը։ Նոյ. 5–ին նրանք բաց թողին մի թուրքի, որով կոչ էին անում ազգաբնակութեան մնալ քաղաքում։ Սակայն, Զամալեանի, Սեպուհի և մի շարք քաղաքացիների ձեռք առած միլիցիոների շնորհիւ յաջողուեց քաղաքի անդորրութիւնը վերականգնել։ Լ. Մարգսեանի նախադահութեամբ կազմուեց ժամանակաւոր մի մարմին քաղաքը կառավարելու համար։ Նոյ. 6–ին կառավարութիւնը լ. Մարգսեանին հանձնուեց քաղաքագլխի պաշտօնում և նրա տրամադրութեան տակ դրեց նիզական միլիցիաներ և միլիցեոներներ։ Միևնոյն ժամանակ որոշեց խնամ պատասխանատուութեան ենթարկել պետական, քաղաքային և հասարակական այն պաշտօնեաներին, որոնք հակառակ կառավարութեան նախօրօք տրուած հրահանգի, լքել էին դիրքերը և նուլմորթութեամբ փախել։

Կարգի անկումից յետոյ, համաբնակ միաժամանակ և Անդրանիկ և Հայաստանի կառավարութիւնները դիմեցին միմեանց հաշտութեան առաջարկով։ Նոյ. 6–ին, Բնակիմ կարաբեկիրը առաջարկեց զինադադարի հետևեալ պայմանները.

1. Այժմ Արփալէյից արևմուտք գտնուող հայ զօրամասերը Ալէքսանդրապոլը մաքրելով Արփալէյից առնուած 15 կիլոմետր դէպի արևելք պիտք է քաշուեն։

2. Ալէքսանդրապոլ քաղաքը չպիտի զրաւուի, միայն թէ բերդը և կայարանը մեր կողմից զինուորական զրաւման տակ պիտք է առնուեն։ Ալէքսանդրապոլում հանրային ապահովութիւնը, կարգի պահպանութեան տակ գտնուելը Ալէքսանդրապոլի բնակչութեան պիտք է յանձնուի։

3. Ի նկատի ունենալով, որ Ալէքսանդրապոլն ունի մեծ նշանակութիւն, որպես Քիվելիա—Երևան երկաթուղու միացման կէտ, արգելք չպիտք է լինել, որ Ալէքսանդրապոլի շրջանից, տանկի բանակի վատահութեան համար, զրաւի զօրամասերի կողմից։

4. Չինադադարի տևողութեան միլիցին՝ տանկական զօրքերի վրա ո՛չ մի կողմից և ո՛չ մի պատրուակի տակ յարձակում չպիտք է արած և կրակ չպիտք է բացուի։

5. Վերի յօդուածները վաղը (7 նոյ. 1920թ.), կէսօրից յետոյ, մինչև ժամը 5, ամբողջապես գործադրել և Արփալէյի արևմուտքը գտնուած հողամասը և Ալէքսանդրապոլը յիշած կէսօրից առաջ մինչև ժամը 10 ամբողջապես պարզել։

Հայաստանի կառավարությունը ընդունեց այս պայմանները, որոնք նոյ. 7–ին իրագործուեցին։ Հայկական զօրքերի մի մասը քաշուեց դէպի Ջաղուռ, մեւս մասը՝ դէպի Ագին։ Բայց յաջորդ օրը, նոյ. 8–ին, Թեոդիկ կաթողիկոսը, յանուն իր կառավարութեան ներկայացրեց հետեւեալ պահանջները։

«Զինադադարի պայմանները։ — *Մի տարի 24 ժամուայ ընթացքում Ալեքսանդրապոլում, բոլորովին զրահազերծելի վիճակի մէջ 2000 տրամաբանութեան հրացան, տարբեր և կենդանիներով միասին 20 հատ նաւեր և 40 հատ տրաքահարուած գնդացիր, երեք մարտկոց թնդանօթ, 4000 ըռմբ, 1000 անասելի հրացանային ռազմամթերք, 6000 թնդանօթի ռումբ, 2 չոգեշարժ մեքենայ և 50 վագոն պիտի յանձնէ մեզ։ Կանոնաւոր և անկանոն հայկական զինուրական ուժերը Արփաչայի ընթացքը—Ալադեզ կայարան—Ախտիկլի—Կալինա, Նալբանդ կայարան—Վարանցովկա գծից արեւելք պիտի քաշուին։ Այս գծից արեւմուտք գտնուղ երկաթուղագիծը չքանդուած և անվնաս պիտի թողուի։*

Երկրորդ՝ առ առաւելն 3 օրուայ ընթացքում դարձեալ հայկական կանոնաւոր և անկանոն զինուած ուժերը Սաւրմալու—Ազուքա կայարան—Ղեղիլլի—Ախթի—Ալագեղ լերան լանջը —Տանգեզմաղ—Նովո–Միխայլովկա—յորդանը—Շէյմուռ եալանգլը գծից արեւելք պիտի քաշուին։

Երրորդ՝ զինադադարի կեցուցից տեսիլքային յեսոյ Սանահին կայարանի և Ալեքսանդրապոլի մէջև երկաթուղագծի վրա ամէն տեսակ ռազմական պետերների փոխադրութիւնը պիտի կանգ առնի։ Այս փոխադրութիւնները սառուցելու համար Սանահին կայարանը և Ղարաքլիսէ մէկ–մէկ յանձնախմբեր պիտի ուղարկուին, և հայկական կառավարութիւնը վերոյիշեալ յանձնախմբերի անձնուիրելիութիւնը և Ալեքսանդրապոլի շրջանում գտնուղ զանազան հակառակ հրամանատարութեան հետ կանոնաւորապէս և ապահովապէս կապ ունենալը պիտի երաշխաւորի։

Չորրորդ՝ մինչ զինադադարի երրորդ օրը երեկոյեան, երկու կողմի պատերազմները հաչտութեան բանակցութիւններ սկսելու համար Ալեքսանդրապոլ պիտի դադարեն և այս ժամանակի ընթացքում եթէ առաջին և երկրորդ պայմանների բովանդակութիւնը իրագործուած է՝ խնդրոյ հաչտութեան բանակցութիւնները պիտի սկսուին։

Հինգերորդ՝ զինադադարի ժամանակի ընթացքում մեր զօրամասերը Ալեքսանդրապոլի շրջանում առաջին պայմանում յիշուած Արփաչայ հոսանք—Նալբանդ կայարան—Վարանցովկա գծից արեւելեան կողմը և մեւս շրջաններում երբեք գտնուած գծից առաջ չպիտի անցնեն։

Վեցերորդ՝ զինադադարի կեցուցից անմիջապէս յետոյ երկու կողմից քաղաքական գործողութիւնների վերջ պիտի տրուի։

Սոքա զինադադարի պայմաններք Ալեքսանդրապոլի շրջանում գտնող հայկական առաջնորդ մասերին յանձնելու ժամից գործադրութեան մէջ են մտնում և պայմանաժամը, ի վերջոյ, ևս կարճ զգայի, երկարաձգելու պայմանով, եօթ օր է։ № 2378։

Հայաստանի կառավարութիւնը ամենավճռական կերպով բողոքից այս պահանջների դէմ, նկատելով այդ, իբրև զինադադարի խախտում և որպէս

մեքենել նոր պահանջները: Ռուսը նորից անցավ դէնքին: Նոյեմբեր 11-ին վերսկսուեց պատերազմը, որը, սակայն, տևեց չատ կարճ: Նոյեմբեր 14-ին Քեւքերը յաջողուեցին Զալուտի մեր զօրամասի վրա: Կռիւները սկզբում նպաստաւոր էին մեզ համար, բայց Քշնամուն յաջողուեց Քիկուեաքցիներ չարժանալով ոչնչանալ Ղալքախէին, ուր գտնուում էր զօրամասի հետևողը, և սպառնալ երկաթուղագծին: Այդ պատճառով մեր զօրքերը հարկադրուեցին Համամլու: Տաք կռիւներ տեղի ունեցան և Ազիկի ճակատում, ուր ծանր վիրաւորուեցին Սմբատը և Նիկոլ Ոզոբաշեանը: Թուրքերին յաջողուց այստեղից էլ յետ մղել մեզանից: Վերջին կռիւներն էին սրանք:

Հայաստանի կառավարութեան գլխաւոր վրա կիջաւ նոր դիմադրութիւնը և նոյ. 22-ից Քեւքերին յանձնուեց նրանց պահանջները: Հայաստանի կառավարութիւնը մեծամասնակ դիմեց և Մոսկուայի միջնորդութեան: Ջինւորները զրաւեցին պատասխան տուեց և իր կողմից նշանակեց Բաքու Մշխանիքին մասնակցելու համար Հայ-Քեւքական բանակցութիւններին: Մեծամասնակ, Թիֆլիս ուղարկուեց Ա. Խատիսեանը՝ դիմելու համար գաշնակից Նիկոլայեւսկիներին: Խատիսեանը Երևանից մեկնեց նոյեմբերը 18-ին և հետո տարաբնդհատ նախաթարի կազմած հետևելու տեղեկագիրը:

Հայաստանը ունի չորս ճակատ, բոլորն էլ պատերազմական վիճակում — Կարս—Ալեքսանդրապոլի, Սուրմալուի, Նախիջևանի և Դիլիջան—Ղազախի:

Ինչպէ՞ս են բաժանուած դրանց մէջ Հայաստանի զինուորական ուժերը: Կարս—Ալեքսանդրապոլի ճակատում կանգնած են հետևեալ զօրամասերը. Խոսքը վերաբերում է կանոնաւոր զօրքերին և, յատկապէս, հետևեան զօրքերին: Այդտեղ են առաջին գունդը (Մազմանեան) — 1500 ուխտ, 4րդ գունդը (Մխիթարեանների) — 2000 ուխտ, 5րդ գունդը (Շաուրուշեան) — 700 ուխտ, 6րդ գնդի մի բաժանմունք — 700 ուխտ, 7րդ գնդի մի բաժանմունք (Իշխանեան—Գնդունի) — 800 ուխտ և 8րդ գունդը (Տիգր. Բադդասարեան) — 1500 ուխտ, ընդամենը՝ 7,200 ուխտ: Բացի դրանից կան նաև Սմբատի խմբերը:

Սուրմալուի ճակատում (Դրօթ ժօտ) կան՝ 9րդ գունդը — 2000 ուխտ, 8րդ գունդը (1 բաժանմունք) — 1000 ուխտ և 7րդ գունդը (մի բաժանմունք)—700 ուխտ, Ղարաքլայի առանձին զօրամասը (Կուռո) — 800 ուխտ, ընդամենը՝ 4500 ուխտ և փոքրիկ հզիչական զօրամաս:

Նախիջևանի ուղղութեամբ կանգնած են՝ 3րդ գունդը — 2000 ուխտ, 2րդ գունդը (երկու բաժանմունք) — 1000 ուխտ, ընդամենը՝ 3000 ուխտ:

Դիլիջան—Ղազախի ճակատում գտնում է 6րդ գունդը (Մանթաշեւ)— 2000 ուխտ:

Այս թւերի մէջ չեն մտնում հեծելազօրքը, հրետանին և յատուկ նշանակութիւն ունեցող մասերը, ինչպէս սապերներին և հետազօտական ջոկատները:

Այսպիսով, բոլոր չորս ուղղութիւնների վրա մենք ունենք ընդամենը 16,700 ուխտ, բացի դրանից, Ջանգեզուրում գտնում է 800 ուխտ, ուրեմն, վերոյիշեալի հետ՝ 17,500 ուխտ:

Երևանում պահեստում մնում է 10րդ գունդը (Հալապեանի) — 1500 ուխտ, ընդամենը, ուրեմն, 19,000 ուխտ:

Ընդունելով և միւս տեսակի զինքերը՝ 6000 հոգի — ուրեմն, գործող քանակում կանոնաւոր մարտական ուժը կան 25,000 հոգի:

Աւելացնելով դրանց վրա նաև Թիւրքում ծառայողներին, բեռնակիրներին, կառապաններին, սպայակոյտը, առողջապահական սպասաւորներին— ընդհանուր Թի 30 տոկոսը, կը ստանանք բանակի ամբողջ կազմը 34,000 հոգի, խմբերի հետ միասին—մօտ 40,000 հոգի:

Կանոնաւոր Թիւրքական ուժեր կարս—Ալէքսանդրապոլ ուղղութեան վրա պէտք է ընդունել 4 դիվիզիա, իւրաքանչիւրի մէջ 3000 հոգի, ընդամէնը 12,000: Սուրմալուի ուղղութեան վրա՝ 1 Թիւրքական դիվիզիա — 3000 հոգի, որը սպառնում է Երևանին: Նախիջևանի ուղղութեամբ՝ բոլշևիկեան ուժեր մօտ 2000 հոգի: Եւ Ղազախ—Դիլիջանի ուղղութեամբ՝ ազրբէջանցիք և բոլշևիկներ: Այդ կանոնաւոր զօրքերի Թիւը պէտք է, ընդհանուր առմամբ, հաշուել 20.000 ուժի:

Եթէ դրանց աւելացնենք ոչ–կանոնաւոր ժողովրդական ուժերը, քրդերին և Քշնամի զինուած ազգաբնակութիւնը, այդ դէպքում Քշնամու ուժերի Թիւը պէտք է որոշել բոլոր չորս ուղղութիւնների վրա ոչ պակաս 30,000 հոգուց: Ահա մրցակից կողմերի անկողմնապահ թւահամարը:

Սրա հետ միաժամանակ պէտք է ի նկատի ունենալ Հայաստանի մեկուսացած դրութիւնը, նաւթից, նաւահանգստից զուրկ լինելը, սրտաբեր աշխարհից կտրուած լինելը (որովհետև ամբողջ հաղորդակցութիւնը վրաստանի և Եւրոպայի հետ կախուած է մազից — երկաթուղային գծից, որը շուտով կտրուց): Թնդանօթի ռումբերի պաշարը վերջանում է: Ծրարները աւետանում են: Հայաստանը չդիմացում է երկաթէ օղակով: Գրաւուած և վտանգի ենթարկուած չրջաններից ազգաբնակութիւնը հաւաքւում է Հայաստանի սրտի մէջը:

Դաշնակիցները, սակայն, ոչինչ չունէին ասելիք: Անգլիայի ներկայացուցիչ Սուկսը մինչև որոշ պատասխան ուշ Ֆորէյն Օֆիսի կողմից: Անգլիան ոչնչով չի կարող օգնել: Հայերին ոչինչ չի մնում, բայց եթէ իրեն երկու չարեաց փորքագոյնը — հաշուել Խորհրդային Ռուսաստանի հետ:

Նոյ. 23–ին Ալէքսանդրապոլ մեկնեց Հայաստանի հաւատարար պատւիրակութիւնը — Ա. Խատիսեան (նախագահ), Ա. Թիւլխադեանեան, Ս. Ղորդանեան, Վ. Մինախորեան և այլն: Մի օր յետոյ այնտեղ գնաց և Բ. Մզէուեանին, որ Լէգրանի հետ եկել էր Երևան և խորհրդակցել կառավարութեան հետ իր առելիքների մասին: Թիւրքերը մերժեցին ընդունել Մզիվանեի մէջնորդութիւնը և նա Ալէքսանդրապոլում գրաւեց հակադաշնակցական ժողովներով ու ճառերով:

Հաշտութեան բանակցութիւնները սկսեցին Նոյեմբեր 25–ին: Իրեն նախապայման, հայերը յայտարարեցին, որ իրենք հրաժարւում են Սեւրի դաշնագրից: Պայմաններ իր նախագծով հայկական պատւիրակութիւնը պահանջում էր ամբողջ Ռուսահայաստանը, Վանի սանջակը, Բիթլիսի վիլայէթից մի կտոր, Մուշի սանջակը, Բայազետի սանջակը և Էջ դէպի ծով Բեռա նաւահանգստով: Թիւրք պատւիրակութիւնը մի ընդարձակ հակագեկուցումով հերքեց հայերի պահանջի իրաւացի լինելը, ցոյց տալով, որ Թիւրքահայաստանի յիշեալ մասերում հայերը երբեք մեծամասնութիւն



Ա. ՕՀԱՆՅԱՆ



Ա. ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



Ա. ԵՒՐՏԿՊՈՒՏԵԱՆՑ



ՊԱՐՈՆ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

չեն կազմել։ Եւ մի քանի օրւայ բանակցութիւններից յետոյ, դեկտ. 2-ի առաւօտեան, Ռեպգիտ Կաթաքքերը, վերջնագրի ձեւով ներկայացրեց հետեւեալ պայմանները.

«1. Թիւրքիայի Ազգային Մեծ Ժողովը պարտաւորւում է ճանաչել Հայաստանի անկախութիւնը հետեւեալ սահմաններում.

Ախալքալաքի գաւառի հարաւային մասից Ուչ-Քիլիսա սարը դէպի հարաւ մինչեւ Բաշ-Շորագեալ, մինչեւ Արփաչայ—Արփաչայի հոսանքը մինչեւ նրա խառնուելը Արաքսի հետ, Արաքս գետի հոսանքը մինչեւ Արաքս կայարանը, այստեղից դէպի Մարտիրոս մինչեւ Զայքենդ գիւղը։

2. Կաթսի նահանգը և Սուրմալուի համաւում են վիճելի մինչեւ երեք տարի, որի ընթացքում Հայոց կառավարութիւնը կարող է յայտարարել հանրաքւէ որոշելու համար վերջնական բախտը այդ նահանգների։ Հանրաքւէի ժամանակ պէտք է մտնէ այնտեղ խառն հայ-թիւրքական ժանդարմէրիա։

3. Հայերը հրաժարւում են Սեւրի դաշնագրից. յետ են կանչւում բոլոր այն կոմիտէները և ներկայացուցիչները, որոնք գործունէութիւն ունեն Եւրոպայում, չեն պահում Հայաստանում դաշնակիցների ոչ մի ներկայացուցիչ, մինչեւ որ Թիւրքիան հաստատութեան գալն չինքն նրանց հետ։

4. Հայաստանը իրաւունք ունի պահելու զօրաբանակ ոչ աւելի, քան 1,500 մարդ և դրան համապատասխան քանակով սպաներ, նաև անհրաժեշտ քանակութեամբ ժանդարմէրիա։ Երկիրը պաշտպանելու համար կարող են լինել ամրոցներ, որոնք կարող են գինւել միայն պաշտպանական ծանր թնդանօթներով։ Վերացւում է պարտադիր զօրահաւաքը։

5. Հայաստանի վրա յարձակման դէպքում Թիւրքիան պաշտպանում է Հայոց կառավարութեան պահանջմամբ և ասկզբում է Հայաստանին զօրքով։

6. Թիւրքիան և Հայաստանը փոխադարձաբար օգտւում են ազատ բանակութեամբ, ինչպէս երկաթուղիներով, այնպէս և բոլոր ճանապարհներով։

7. Երկու կողմերն էլ չեն վճարում պատերազմական ծախսեր։

8. Պայմանները կնքելուց յետոյ սկսում են աշխատել երկաթուղիները, վերադառնում են քաղաքացիական մասի գերիները, իսկ երբ սկսում են աշխատանքները Հայաստանի և Թիւրքիայի միջև սահմանները որոշելու, վերադառնում են բոլոր ռազմագերիները։

9. Հայաստանի կապած բոլոր պայմանները Թիւրքիայի դէմ համաձայնում են անվաւեր։

10. Բոլոր գաղթականները կարող են վերադառնալ իրենց տեղերը մի տարւայ ընթացքում՝ օգտւելով բոլոր քաղաքացիական իրաւունքներից, բացի այն գաղթականներից, որոնք գինւած դիմադրութիւն են ցոյց տւել իրենց կառավարութեան դէմ,

11. Հայերը Թիւրքիայում և Թիւրքերը Հայաստանում վայելում են հաւասար քաղաքացիական իրաւունքներ։

12. Դիւանագիտական, ինչպէս և հիւպատոսական յարաբերութիւնները, նոյնպէս և քաղաքացիների ազատ երթեւեկութիւնը երկու երկիրների միջև, պէտում է գաշնագրերը ստորագրելուց յետոյ, որից յետոյ վերսկսում են փոստային և հեռագրական հաղորդակցութիւնները Թիւրքիայի և Հայաստանի միջև։

13· Շաբաթը և նախիջևանը ժամանակաւորապէս օժտուած են ինքնավարութեամբ՝ պահելով Թիւրքիայի հովանաւորութեան տակ, մինչև որչափ նրանց բախտը:

14· Այս գաղնագիրը պէտք է ենթարկւի վաւերացման Հայաստանի Հանրհրապետի և Աշդարայի Ազգային Մեծ Ժողովի կողմից մի ամսւայ ընթացքում:

15· Թիւրքիան պարտաւորւում է Հայաստանի գրաււած հողամասերը դատարկել, երբ Հայաստանը կը սկսէ զօրացւում, և վերջնախոհեմէս կը գտնւի, երբ հայկական զօրքի քիւրը կը հասնի պատմութեան որոշած չափին:*)

Գաւաֆրախուբեան Ալէքսանդրապոլ մեկնելու հետ գուբերնեաց, երեսփոխում, կատարւեց կառավարական փոփոխութիւն: Հ. Օհանջանեանի գահկիրը հրաժարական ւեց և նրան յաջորդեց Ս. Վրացեանի նախարարութիւնը — վարչապետ և արտաքին գործոց նախարար Ս. Վրացեան, դիւանական նախարար Դրօ կանայեան, օգնական՝ զօրավար Թ. Հախվերդեան, արդարադատութեան՝ Ա. Խոնդկարեան, ելեմտական՝ Հ. Տէրտէրեան, օգնական՝ Գ.Զագիկեան, հանր. կրթութեան և արուեստի՝ Վ.Մինախորեան, գիւղատնտեսութեան՝ Ա. Ծովհաննիսեան, աշխատանքի վարչի՝ Վ. Բաբաջեան, ներքին և խնամատարութեան նախարարութիւնները մնում էին թաց: Կառավարութեան մէջ մանելու առաջարկ եղաւ և Հայաստանի սոց.-գեմ. բանւ. կուսակցութեան, ինչպէս և Բէֆլիսի «Աշխատաւոր»-ի չորրդ եղող գործիչներին — մերժելիք համարելով կացութիւնը չատ ծանր և անապատ: Ի պատիւ հայ սոց.-յեղափոխականների, Հայաստանի ամենատագնապալի վայրկեանին, նրանք կարողացան իրենց անձնական ու կուսակցական շահը ստորադասել հայ ժողովրդի բարիքին և հակառակ ակնհայտ դժւարութիւններին, մտան կառավարութեան մէջ:

Նոյ. 25-ին կառավարութիւնը հաստատւեց Հանրհրապետի կողմից և գեռ նոր էր անցել գործի, երբ Նոյ. 29-ին բարդութիւններ առաջ եկան Ղազախի ճակատում: հայ կամաւորականները Ադրբէջանի օգնութեամբ մտել էին Թիւնան: Իսկ Նոյ. 30-ին Լէգրանը կառավարութեան ներկայացրեց վերջնագիր, որով պահանջում էր խորհրդայնացնել Հայաստանը: Կառավարութեան ոչինչ չէր մնում, բայց եթէ տալ: Ճնշւած խորհրդարանական ֆրակցիայի որոշման վրա, կառավարութիւնը քանակցութեան մտաւ Լէգրանի հետ և գեկտ. 2-ին ստորագրւեց հետևեալ համաձայնութիւնը.

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ


Ռ·Ս·Ֆ·Ս·Հ· լիազօր ներկայացուցչութեան և Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան միջև:

2 գեկտ· 1920թ·, մի կողմից Ռ·Ս·Ֆ·Ս·Հ· լիազօր ներկայացուցիչ ընկ· Լեգրանը Ռ·Կ·Կ·Կ·-ի լիազօրութեամբ, և գէմից Նուբարեանի

*) Գայմանները գրի են առնւած Ա. Խատիսեանի կողմից:



1. ԻՍԱՀԱԿՅԱՆ



2. ՏԵՐՏԵՐՅԱՆ



3. ՏԱՇՅԱՆ
Պետք. նախ. տեղ.



4. ԲԱԲԱՅԱՆ
Ավիացիայի նախ. տեղակ.



5. ՏՈՒՄԱՆՅԱՆ
Նախ. կոմիտեի տարեց

խորհրդային կառավարության, և մինչ կողմից ընկերներ Դրօն և Տէբուէ–քեանը ի դէպս Հայաստանի Հանրապետության կառավարության՝ ինքնության համաձայնության հետևեալ մասին.

1· Հայաստանը յայտարարում է անկախ սոցիալիստական խորհըրդային հանրապետություն:

2· Մինչև Հայաստանի խորհուրդների համագումարի հրավիրումը կազմում է ժամանակաւոր Ռազմա–Յեղափոխական Կոմիտէ, որին կանցնի բովանդակ իշխանությունը Հայաստանում:

3· Ռուսաստանի խորհրդային կառավարությունը ընդունում է, որ Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության հողերի մէջ անվիճելի կերպով մտնում են՝ երեանի նահանգը իր բոլոր գաւառներով, Թաթի նահանգի մի մասը, որը գինուորական տեսակէտից կապահովէ երկաթուղու տիրապետությունը՝ Ջուլու–կայարանից Աբաքա–կայարանը, Դանձակի նահանգի Ջանգեզուր գաւառը և Ղազախի գաւառի մի մասը օգոստոս 10–ի համաձայնության սահմաններում, և Թիֆլիսի նահանգի այն մասերը, որոնք Հայաստանի տիրապետության տակ էին գտնուում մինչև 1920թ. սեպտ· 28:

4· Հայկական բանակի հրամանատարական կազմը չի ենթարկուում պատասխանատուության այն գործերի համար, որ կատարել է բանակի շարքերում մինչև Հայաստանում խորհրդային իշխանության յայտարարումը:

5· Դաշնակցության և ուրիշ սոցիալիստական կուսակցութիւնների (Ս·–Ց·, Ս·–Դ·) անդամները ոչ մի հալածանքի չպիտի ենթարկուին կուսակցության պատկանելու և կոմունիստական կուսակցության դէմ մղած կռիւներում ժանկցելու ու Խորհրդային Հայաստանի յայտարարութիւնից առաջ կատարած գործերի համար:

6· Ռազմա–Յեղափոխական Կոմիտէի մէջ մտնում են հինգ անդամներ կոմունիստական կուսակցության կողմից նշանակուած և երեու անդամ ձախ–դաշնակցականների խմբակից՝ համաձայնելով կոմունիստական կուսակցության հետ:

7· Ռուսաստանի խորհրդային կառավարութիւնը մեկնողներ է ձեռք առնում անվիճելի կենտրոնացնելու Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության պաշտպանության համար անհրաժեշտ զինուորական ուժեր:

8· Մոչն համաձայնագրերը ստորագրելուց յետոյ Հայաստանի հանրապետության կառավարութիւնը գալում է իշխանութիւնից: Իշխանութիւնը ժամանակաւոր կերպով, մինչև Ցեղափոխական Կոմիտէի գալը, անցնում է գործադրմանատուրության, որի գլուխն է նշանակում Դրօն, Ա·Մ·Տ·Ս·Հ· կողմից Հայաստանի գործադրմանատուրության կից կոմիտեալ է նշանակում ընկ· Մկրտիչ:

Պատրաստուած է երեու օրինակ:

Ռ·Ս·Տ·Ս·Հ· լիագոր ներկայացուցիչ՝ Լեգրան

Հայաստանի Հանրապետության կառավարության լիագօրութեամբ՝ Դրօ, Տէբուէքեան:

Նոյն դեպ· 2–ին, գիշերը, Ալեքսանդրապոլում, ստորագրուեց հայ քեռքական հաշտութեան պայմանագիրը:

Դեկտ· 3–ից Հայաստանը դարձաւ խորհրդային։ Դեկտ· 6–ին Երևան եկաւ Ցեղիոմբը, և Լեգրանի հետ կնքեցան համաձայնութիւնը յայտարարեց չեզոքել ու Հայաստանում հաստատուեց բռնութեան, թալանի, կամայականութեան և ահաբեկումի ռէժիմ։ Հ· Ց· Դաշնակցութիւնը յայտարարուեց օրէնքից դուրս։ «Հարկաւոր է գլխատել ու ֆիզիքապէս ոչնչացնել Դաշնակցութիւնը», գրում էր հայ կոմկուսի պաշտօնաթերթ «Կոմունիստը»։ Հայկական բանակը կազմալուծուեց։ Սպաները — 1500 հոգի զօր· նազարբէգեանի, Հախվերդեանի, Սիլիկեանի գլխաւորութեամբ, ձիւն ժմեռին, ոտքով, քշուեցին Ռուսաստան։ Աքսորուեց և Դրօն իր սպանութով։ Բանտերը լեցուեցին հազարաւոր բանտարկեալներով։ Հ· Օհանջանեան, Աւ· Սահակեան, Ց·Քալաշեանի, Լ· Շանթ, Ն· Ադրաւեան, Ար·Չիլինգարեան, Բ·Իշխանեան և շատ ու շատ ուրիշներ պատանդ առնուեցին։ Նրանց գլխին ամէն րոպէ կախուած էր մահը։ Փետր· 16 և 17–ի գիշերը, Երևանի բանտում գնդակահարուեցին աւելի քան յիսուն հոգի — Համազասպը, գնդ· Ղորդանեանը, Բանտր Սերգոն, Մաւիլեանը, ուսանող Գրիգորը և ուրիշներ։ Երկրի գանագան կողմերում բռնագրաւման պատրուակով կատարուում էին անասելի բռնութիւններ ու հարստահարութիւններ, սկսուեց մերձերների արտահանում դէպի Ազրբէյան։ Բոլշևիկեան խոստումներից չկատարուեց և ոչ մի բան։ Թիւրքը չհեռացաւ. Ալեքսանդրապոլից և խորհրդային ներկայացուցիչների աչքի առջև վայրագութիւններ էր գործում Շերակում։ Արտասահմանեան օժանդակութիւնը կտրուեց և Հայաստանը ընկաւ նոր սովի գիրկը։

Այս դրութիւնը աւելի ևս բարձրացրեց հայ ժողովրդի աչքին անկախութեան արժէքը և նման դրութեան հետևանքով էր, որ պայքից փետրուարեան համաժողովրդական ապստամբութիւնը*)։ Փետր· 18ին Հայաստանի մեծ մասը մաքրուած էր բոլշևիկներից։ Երկրի իշխանութեան գլուխ կանգնեց Հայաստանի Փոկութեան կոմիտէն։ Կազմեցին տեղական փոկութեան կոմիտէներ։ Շարժման մէջ դրուեցին երկրի բոլոր ռազմական ուժերը։ Եւ ժողովուրդը նմանը չտեսնուած վճռակամութեամբ, ամիսներ չարունակ, կարելի է ասել, առամիներով ու եղունգներով դիմադրեց խորհրդային մեծաքանակ ուժերի գրոհներին։ Բոլշևիկեան յարձակումները սաստկացան, մանաւանդ, Վրաստանի խորհրդայնացումից յետոյ, երբ, կարմիր բանակը խոշոր ուժեր չպրտեց դէպի Հայաստան։

Ապրիլ 2–ին, Հայրենիքի Փրկութեան կոմիտէի ուժերը Քողին Երևանը և Գուտլէի ու Մէլլիմորի վրայով անցան դէպի Լեռնահայաստան, ուր դեռ հոկտեմբերից սկսած տապալած էր խորհրդային իշխանութիւնը։ Միանալով տեղական ուժերին, Արարատեան դաշտից եկած մարտիկներն ու գործիչները մի քանի ամիս ևս չարունակեցին պայքարը բոլշևիկների դէմ՝ բարձր պահելով Հայաստանի անկախութեան դրօշը ու հետզհետէ, թշնամու ճնշման տակ տեղափոխեցին հիւրընկալ Պարսկաստան, ուր գտան եղբայրական վերաբերմունք Ատրպատականի հայ ժողովրդի կողմից։ Յուլիս 10–ին Հայաստանի

*) Տե՛ս, «Փետրուար 18»–ը, հրատարակութիւն Հ· Ց· Դ· Գրազայի ուսանողութեան։

ՓԵՏԵՐԲՈՒՐԳԱՀԱՅ ԱՊԱՏԱՒՐԱԲՈՒԹԻՒՆ



ԱՒԵՏԱՆԷՑ ԱԲԵՏԻՒՄԱՆ
Վաստակի առաքելական



ՊԱՐՈՒՏԱՒՈՑ ՀԱՒԱՏՔԻՆ
Պարտա Թորթոմեանեան



Ի ՄԱՐՏԻՐՈՍԱԿԱՆ
Մարտիրոսական տարիք պահու



ՅԱՐՈՒԹԵՑԻ ՀԱՒԱՏԻՍ
Օհաննէս Գերեզմանեան



ԵՒԱԹ
Մովսիսեան Կիրակոս



Ի ՓԱՒԱՐԱՆԵԱՑ
Երեսունի տարիքին



Ի ՏԷՐ-ԱՒԵԼԻՔԵԱՆՑ
Հարիւր Քրիստոսէ առաջ



Ա ՏԷՐ-ԱՒԳՈՍՏԵԱՆՑ
Հռոմէական Գայոս Կայսր

մաթեմֆնեթի ու գործիչների վերջին մասը և կառավարութիւնը անցան փոփոխյոյ Արջաքը՝ տանելով իրենց հետ Հայաստանի անկախութեան գրօշը, Հայաստանի պետականութեան գաղափարը։

Սկսուում էր անկախութեան պայքարի մի նոր շրջան։

*

Թիւրքերն ու բոլշևիկները հասան իրենց նպատակին. Սևրի դաշնագիրը գործաւ անպէտք թղթի կտոր։ Երկու տարի յետոյ, Լոզանում, հաւաքեցին Սևրի գերիդմանափորները։ Իմպերիալիստական չնաշխլերի ժողովին եկել էին աղերսելու և հայերը — Հ.Հ.Գաւէրիրակութիւնը յանձին Ա. Ահարոնեանի ու Ա. Խատիսեանի, Ազգ.Գաւէրիրակութեան նոր նախագահ Գ. Նոբատունեանը, բազմաթիւ հայասէրներ՝ գլխերացի Դը Մորգիէ, Քրաֆթ-Բոնար, ամերիկացիներ, անգլիացիներ, բելգիացիներ, ֆրանսացիներ, սկանդինաւցիներ։ Երկու հարիւր հազար ամերիկեան եկեղեցիներ, եւրոպայի մտաւորականութեան ընտրանին, աշխարհի առաջաւոր մտքերը դիմում արին։ Հայ ներկայացուցիչները գերմարդկային ճիգ թափեցին։ Ամէն ինչ անցաւ իզուր...

Թիւրքը մենակ չէր Լոզանում։ Նրա յետևը կանգնած էր Մուսուլան։ Վաճրդրային Ռուսաստանի ուրուականը սաւառնում էր Լոզանի խորհրդաժողովի կանաչ սեղանի վրա, յայտարարեց Չիչերինը, և հէնց նա էր, որ խանգարում էր մեծ պետութիւններին յարձակուել ու ճմլել փոքրիկ Թիւրքիան։) Խորհրդային Ռուսաստանը ոչ միայն չխանգարեց, այլ և օդնեց, որ Թիւրքիան յարձակուի ու ճմլէ փոքրիկ Հայաստանը։*

*Հայաստանն ու հայկական հարցը Լոզանում էլ սոսկ գործիք եղան մեծ պետութիւնների ձեռքին. անգլիացիների համար նա ազդու դէնք էր Մուսուլի խնդիրը կարգադրելու համար, ֆրանսացիների ձեռքին՝ կտրոնների ապահովութեան միջոց։ Ամպամ հանչահանդիսը և «Իդէալիստ» Ամերիկան հայկական մուրհակով փորձեց ապահովել իր նեղ, եսական չահերը և օգոս. 6-ին, Ուչքուսէ, բարեկամութեան դաշնադիր ստորագրեց Թիւրքիայի հետ**)։*

1923թ. յուլ. 24-ին ստորագրուեց Լոզանի դաշնագիրը։ Բեսատ—Լիտոզսկից յետոյ ամենախայտառակ դաշնագիրն էր այդ, որ ստորագրուում էր պետութիւնների միջև։ Դաշնակիցների յայտարարած սկզբունքներից և ո՛չ մէկը չէր պահպանուած։ Սևրի դաշնագրի և ո՛չ մի կէտ չէր մնացել։ Կատարեալ անձնատուութիւն դաշնակիցների կողմից։ Լոզանի դաշնագրում չէր յատկանշուում չկար և Հայաստանի ու հայկական հարցի մասին։ Կարծես Թէ հայկական խնդիր բնաւ գոյութիւն ունեցած չլինէր։ Զարմանք անտեսում, որ ահարկու ուժգնութեամբ հարուածեց ամենքին՝ բոլոր հայերին

---

*) «Заря Востока», 6 ноября, 1927г.

**) Այս գաղիազրի դէմ էր. որ Հայաստանի Աշխատաւորական Կոմիտէն Ռ. Քեռազեան ու Վ. Գարագաշեանի գեկավարութեամբ ուժգին պայքար մղեց և տապալեց Երեան. 1927թ. յուլ. 18-ին Տերակոյսը 50 Ռուբլի 34-ի դէմ մերժեց Երա վատրացումը։

անխտիր: Ոմանք, ինչպէս Ազգային Պատւիրակութիւնը, չմտած հաւատի դաւթութիւնից, անտրտունջ ու լուռ քաշւեցին քաղաքական առաքելից: Ուրիշներ—Հ. Հ. Պատւիրակութիւնը բաղդից ցասումով՝ պետութիւններին և Ազգերի Լիգային՝ յայտարարելով, որ Լոգանով հայկական հարցը չի փակւում, որ հայկական պահանջները չարունակում են մնալ իրենց ուժի մէջ, որ հայ ժողովուրդը կը չարունակէ պայքարել մինչև իր արդար գաթի վերջնական լուծումը: Այս նեղական մտայնութիւնը յայնօրէն թափանցեց և ժողովրդական զանգւածների մէջ, որը նոյնպէս բաժանւեց վհատւածների ու պայքարողների: Եւ, ասկայն, քանի ժամանակը անցնում է, այնքան աչքերև է դառնում, որ Լոգանը լոկ հանգրւան է հայկական հարցի դարգացման ճանապարհին և որ անհրաժեշտօրէն պիտի գայ մի նոր Սևր, որ վերջնականօրէն պիտի լուծէ հայկական խնդիրը՝ կեանքի կոչելով Անկախ և Միացեալ Հայաստանը — Հայաստանի Հանրապետութիւնը:



ՎԱՐՊԱԽԵՐՈՒՄՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՄԵՋ



ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆՆԵՐԸ ԲԱԼՇԱՅԻԿՆԵՐԻՑ ՀԱՆԴԵՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ
Հետաքրքրում՝ պետ. Կոմիսարիատի և ոստիկանության

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ՆԻՒԹԵՐ

ՀԱՑԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ԿԱՐԵՒՈՐ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Յունւ. 25–ին)

Յունւ. 25–ին, ցերեկւայ ժամը 12–ին, տեղի ունեցաւ խորհրդարանի հանդիսաւոր նիստը Հայաստանի անկախութեան ճանաչման առթիւ։ Ներկայ էին նախաթաթարական կազմը նախաթաթարական գլխաւորութեամբ, Անգլիայի, Ամերիկայի, Վրաստանի, Ադրբէյճանի ներկայացուցիչները, բարձրաստիճան զինուորականներ և հանդիսատեսների խուռն բազմութիւն։ Դահլիճը զարդարուած էր գորգերով։

Նախագահում է Ա. Սահակեան։

Նախագահ. — *Խորհրդարանի նախագահութիւնը տեղեկութիւն ստացաւ, որ Գերագոյն Խորհուրդը ճանաչել է Հայաստանի անկախութիւնը իր ներկայ սահմանների մէջ. այդ առթիւ անհրաժեշտ համարեց հրաւիրել արտակարգ նիստ. խօսքը պատկանում է նախաթաթարապետին։*

Նախաթաթարապետ Ա. Խատիսեան. — *Յարկելի պատգամաւորներ, Հայաստանի հանրապետութիւնը մտնում է իր պատմութեան նոր շրջանի մէջ. յունւար 23–ին անգլիական կառավարութեան պաշտօնական ներկայացուցչի կողմից ստացած հեռագիրը յայտնում է, որ Հայաստանի հանրապետութիւնը Գերագոյն Խորհրդի կողմից ճանաչուած է փաստօրէն. ասկայն, պարզ է ամենքիս համար, պարզ պիտի լինի ամբողջ աշխարհի համար, որ մենք մեր դատը լուծած կը համարենք այն ժամանակ, երբ ճանաչուի միացեալ Հայաստանի անկախութիւնը (ոգեւորիչ ծափահարութիւններ)։ Այնուամենայնիւ, ներկայ ակտը մեր արեւմտեան ճանապարհի վրա մենք համարում ենք մի կայան, որտեղից նոր ուժերով պիտի դիմենք մեր վերջնական հանգրւանը։ Անհրաժեշտ է այսօր մի քուռկիկ ակնարկ ձգել մեր անցեալ պատմութեան վրա ու ընդգծել, թէ ինչ ուղիներով հասանք ներկայ դրութեան։ Հայ ազատագրական չարժումը, որ ունի կէս դարի պատմութիւն, ընթացել է թէ դիւանագիտական աշխատանքների և թէ ժողովրդի ինքնագործունէութեան ճանապարհով և, որպէս վերջնական նպատակակէտ ու իդէալի պսակումն, ընդգրկել է միացեալ և անկախ Հայաստանի գաղափարը։ 50 տարի առաջ հրապարակի վրա էր միայն տահկահայ դատը. Տահկահայաստանում ծնունդ առաւ հայ ազատագրական չարժումը և առաջին անգամ տահկահայ խնդիրը դրուեց միկրոպոյին դիւանագիտութեան սեղանի վրա։*

1878 *թ. մարտ 3–ին Սան–Ստեֆանոյում ընդունուեց ռուսօրմների դրադիրը, իսկ 1878 թ. յուլիս 10–ին Բերլինի դաշնագրով նոր փոփոխութիւններ ենթարկուեց այն. տարիներ անցան, ոչ մի ռեֆորմ տեղի չունեցաւ և եւրոպական պետութեանց պահանջը 1880 թ. ապարդիւն անցաւ։ Տահկաստանը բոլոր միջոցներով աշխատում էր վերացնել ռեֆորմների խնդիրն ու օտարների միջամտութիւնը. դրա համար նա ընտրեց մի ճանապարհ՝ բնաջինջել հայ ժողովուրդը։*

1894 թ. տեղի ունեցաւ Սասունի կոտորածը, որ հայոց թաթերը գետին խլեց հայ ժողովրդից։ 1908—9թ. բռնկուեց տաճկական յեղափոխութիւնը, կարծելով թէ փոփոխութեան պիտի ենթարկուի նաև պետական կազմն ու քաղաքականութիւնը, հայ զեկավարները համաձայնութեան կնքի եկան երիտասարդ Թիւրքերի հետ միասին կուելու բռնապետութեան դէմ. դժբախտաբար, նրանց յոյսերը այս անգամ ևս չարդարացան, և իրրև պատասխան այդ համաձայնութեան, տեղի ունեցաւ Ադանայի և Կիլիկիայի մեծ կոտորը 1909թ.։ Տաճիկները անշեղ կերպով առնում էին իրենց գիծը, իսկ եւրոպական պետութիւնները ճօճանեցրից այն կողմը չէին անցնում։ Դրութիւնը մնում էր նոյնը և հայ գաղը զրպարտութեանց մի անսպառ նիւթ էր միայն, երբ 1913թ. Գոլտում մշակուեց նոր ռեֆորմների նախագիծը. ասկայն, 1914 թ. աշնանը բռնկուեց համաշխարհային պատերազմը, և դրանով վերջացաւ հայ գաղի գիւանագիտական չրջանը։ Այնուհետև հայ ժողովուրդը հանգիստ եկաւ անհոգ կազմակերպութեամբ՝ նախ ազգային խորհուրդների և ապա պետութեան ձևով ու այժմ նրա մի մասը ճանաչուած է Ֆերազոյի Մարշրի կողմից, ասում է նա արդէն ուրոյն պետական կազմակերպութիւն է միկոզգային կլինի և արժէք ունեցող։

Դիւանագիտական աշխատանքներին զուգահեռ ընթացել է և ժողովրդական ինքագործունէութիւնը՝ հայ յեղափոխական չարժումը. այդ չարժման զեկավարն ու իդէալների մարմնացումն է եղել Հ.Յ.Դաշնակցութիւնը, որ երեսուն տարիներից ի վեր պայքարել, կուել, մեռել ու ապրել է այդ գաղափարով ու նրա համար։ Նրա պատմութիւնը ամենահետաքրքիր բնդոգումների ու պայքարների գրւագներից է կազմած. իր կազմակերպած հայդուկային խմբերով հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը անվերջ կռիւ է մղել տաճիկ բռնապետութեան դէմ և նրա աչքատաւոր եղել է յոգնատ ալ միայն հայ, այլ և տաճիկ ժողովրդի։ Այդ չարժման մէջ իրենց տեղն ունեին հնչակեանները և ուրիշ չատ չատերը՝ անկամար ու անչայտ գործեր, որոնք լուռ մարտնչել են հայ ժողովրդի ազատագրութեան համար։ Դժուար է երևակայել այն մեծ զոհաբերութիւնը, որ ունել է հայը — պատմութեան մէջ դժուար է գտնել մի ժողովուրդ, որ միայն պատերազմի ընթացքում կորցրած լինի իր մի քառորդ մասը ու նաև դժուար է գտնել ուշադիրն, որ այլ բայոր գիտնականներին չկասկածի, որ ևս է մտածմ ունենալ պայքարելու և ապրելու։ 1914 թ. հայ ժողովրդը ամենայն ոգևորութեամբ պատերազմի դաշտ նետուեց ու կրկին տուեց բազմաթիւ զոհեր իր արդար գործի սեգանի վրա. մէկ ու կէս միլիոնից ասելի զոհ է ասել հայը իր պայքարների ընթացքում։ Բայց անասելման է նրա կենսունակութիւնը, բոլոր արհաւիրքներին դիմադրել ու չնուաս նա, այլ յաղթել։ այդ յաղթանակի տոնն է այսօր։

Այսօր հայ ազատագրական չարժումը մտնում է իր երրորդ՝ պետական կազմակերպութեան չրջանը. Հաշտասիրաբար ճանաչուած է տեկուս պետական օրգանիզմ, ասկայն, ոչ իր իսկական սահմաններով։ Դրա համար մենք գեռ ունենք անդուլ աչխատանք և ասելի կռիւ, որ պիտի տարի տեսնենք գով։ Այժմ, այս յաղթանակի օրը, արժէ, որ մենք յիշենք մեր մտածի անցեալը։ Գաղթարգմի գաւթ եկաւ հայը իրրև մի ազատասիրի ժողովուրդ։ Հայ գիտցողին, հայ գիտաւորը փոխ չունի եղեսին, կռուել ու մեռել է նա քաղքենը գէմքին, քայց նրա մէկ սեռնու ու հատատասուն մնացել է ու կայ հատատը։ դա է մեր ժողովրդի ասմանութիւնը, որ ասել է անմեռազոհութեան փաղանգ օրինակներ։ Ինչքո՞ն ենք պատասխան այս անկախութիւնը տատնուցու համար։ Եւրոպական պետութեանց չահերի հետ մէկտեղ իր գիտցողը ապ-




ՆԱՐԳԻԶ ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԼԱՐԵ-ԻՄԱՅԱՆԱՆ



Գ. ՄԱՐԿՈՍՅԱՆԸ



ՊՐՈՖԵՍՈՐ Ի. ՄԱՄՈՒՐ



Ա. ՄԱՐԿՈՍՅԱՆԸ

գերազանցել ամեն ինչ, որ արվել է մինչ այդ։ Ես համոզված եմ, որ մեր ժողովուրդը կկարողանա հաղթահարել բոլոր դժվարությունները, որոնք ծագել են պատերազմի հետևանքով։

Ես ուզում եմ հատուկ կանգ առնել Ղարաբաղի հարցի վրա։ Ինչպես հայտնի է, Ղարաբաղի ինքնավար մարզի բնակչության մեծ մասը հայեր են։ Ղարաբաղի հայ ժողովուրդը ոչ մի անգամ չի դադարել պայքարել իր ազգային իրավունքների համար։ Ղարաբաղի հարցը ներկայումս ամենասուր հարցերից մեկն է։ Ես կարծում եմ, որ Ղարաբաղի հարցը պետք է լուծել ժողովրդի կամքին համապատասխան։ Ղարաբաղի ժողովուրդը պետք է ինքը որոշի, թե ինչպես է ուզում կառուցել իր կյանքը։ Ղարաբաղի հարցի լուծումը պետք է հիմնված լինի ժողովրդավարության սկզբունքների վրա։

Ես ուզում եմ հատուկ կանգ առնել նաև Ղարաբաղի հարցի միջազգային կողմի վրա։ Ինչպես հայտնի է, Ղարաբաղի հարցը ներկայումս դարձել է միջազգային հարց։ Ղարաբաղի հարցի շուրջ ծավալվել է միջազգային լայն հասարակայնության ուշադրությունը։ Ղարաբաղի հարցի լուծման գործում մեծ դեր կարող է խաղալ միջազգային հասարակայնությունը։ Ես կարծում եմ, որ միջազգային հասարակայնությունը պետք է ակտիվ մասնակցություն ունենա Ղարաբաղի հարցի լուծման գործում։

Ես ուզում եմ հատուկ կանգ առնել նաև Ղարաբաղի հարցի միջազգային կողմի վրա։ Ինչպես հայտնի է, Ղարաբաղի հարցը ներկայումս դարձել է միջազգային հարց։ Ղարաբաղի հարցի շուրջ ծավալվել է միջազգային լայն հասարակայնության ուշադրությունը։ Ղարաբաղի հարցի լուծման գործում մեծ դեր կարող է խաղալ միջազգային հասարակայնությունը։ Ես կարծում եմ, որ միջազգային հասարակայնությունը պետք է ակտիվ մասնակցություն ունենա Ղարաբաղի հարցի լուծման գործում։

Ես ուզում եմ հատուկ կանգ առնել նաև Ղարաբաղի հարցի միջազգային կողմի վրա։ Ինչպես հայտնի է, Ղարաբաղի հարցը ներկայումս դարձել է միջազգային հարց։ Ղարաբաղի հարցի շուրջ ծավալվել է միջազգային լայն հասարակայնության ուշադրությունը։ Ղարաբաղի հարցի լուծման գործում մեծ դեր կարող է խաղալ միջազգային հասարակայնությունը։ Ես կարծում եմ, որ միջազգային հասարակայնությունը պետք է ակտիվ մասնակցություն ունենա Ղարաբաղի հարցի լուծման գործում։

Ժողովուրդը ցնծագին տօնում է մեր անկախութիւնը՝ թնդանօթներով, մաղթանքներով կամ ցոյցերով. ուրախ եմ յայտնելու, որ այդ ամենը կատարւում է առանց պաշտօնական ցուցմունքների, ինքնաբուխ կերպով: Պէտք է յիշատակեմ նաև, որ մեր բոլոր չրջաններից ստացած բազմաթիւ շնորհաւորական հեռագիրները վերջանում են այն ցանկութեամբ, որ ազատագրւած լինի նաև Տաճկահայաստանը:

Այս բոլոր ցնծութեան հետ մէկտեղ մենք ունենք նաև մեծ մտահոգութիւններ. անցնելիք ճանապարհը երկար է ու փշոտ և հէնց այդ թելադրում է մեզ հաւաքելու մեր բոլոր եռանդն ու կարողութիւնը վերջին քայլն անելու համար. վատահութիւն ունենալով դէպի մեծ դաշնակիցները, մենք չպիտի դադարենք հրահրել ժողովրդի ինքնագործունէութիւնը. պետութիւնները մի ակնթարթում կամ մի խօսքով չեն կազմակերպւում. անդուլ աշխատանք և հաւատ դէպի սեփական ուժերը, ահա թէ ինչ պիտի լինի մեր ապագայ անելիքը:

Մենք ապատւում ենք՝ վատահելով դաշնակիցներին ու հաւաքելով մեր ոյժն ու եռանդը սեփական աշխատանքի համար: Իսկ այսօր պէտք է տօնենք ու յիշենք այն զոհերին, որոնք իրենց արիւնով կերտեցին մեր ազատութիւնը. կառավարութիւնը ի նշան երախտագիտութեան դէպի ընկածները՝ որոշել է պետութեան վրա առնել նրանց զաւակների պահպանութեան հոգսը:

Այս մեծ ուրախութեանն ազատութիւնից զրկւած մարդկանց ևս մասնակից անելու համար կառավարութիւնը որոշել է յայտարարել ամնիստիա:

Ի վերջոյ, օգտւելով առիթից, պիտի յայտնեմ, որ պետութեան ամուր հաղորդակցութեան համար կառավարութիւնը պարտաւոր է ուժեղացնել նրա անտեսական հիմքերը. այդ նպատակով պիտի կատարի համահաւասկան ներքին փոխառութիւն, օրէնք, յոյս ունեմ, սիրով կընդառաջեն մեր հայրենակիցները քէ սահմանից դուրս և քէ այստեղ:

Մեր ներկայ վիճակը միտ բերելով՝ ես յիշում եմ Ֆրանսական մէկ տեսարան՝ 38 արձանների, որոնք ներկայացնում են Ֆրանսիայի քաղաքները: Դրանցից մէկը՝ Ստրասբուրգ քաղաքի արձանը պատած էր սև քողով, և նշան սգոյ. Ֆրանսացիք վճռել էին սև քօղի տակ պահել այդ արձանը այնքան ժամանակ, մինչև կազատագրւէր Էլզաս–Լօրէնը և կը միանար մայր երկրին: Այժմ կատարւած է նրանց իղձը, և Ստրասբուրգի արձանի սև քօղը հանւած է: Տաճկահայաստանը մեր Ստրասբուրգն է, և երբ նա կազատագրւի ու կը միանայ Հայաստանին, այն ժամանակ և կը վերանայ սուգն ու վիշտը մեր սրտերից:

Նախագահ· — Ողջունելով Հայաստանի անկախութեան ճանաչումը՝ մենք չենք կարող մոռանալ այն անթիւ զոհերին, որոնք իրենց մահով բերին այս ազատութիւնը. առաջարկում եմ յոտնկայս յարգել նրանց յիշատակը (դահլիճը լուռ ոտի է կանգնում): Այսօրուանից մենք նոր դաշաւրէնքի ենք մոտում. սկսում է խաղաղ աշխատանքի ու տնտեսագործութեան շրջան. յուսով եմ՝ հայ ժողովուրդը իր կենսունակութեամբ և տնտեսագործական կորովով կը կերտէ մի ամուր պետութիւն և բարօրութիւն Հայաստանի բոլոր ժողովուրդների. դրա հետ մէկտեղ նա կը հաւաքէ իր վերջին ճիգերը, հանձնելու վերջնական նպատակին՝ միացեալ Հայաստանի գաղափարի իրականացմանը: Տաճկահայաստանի դէմ կերտւած մէկ և մեր արդար գործի սրտով ներշնչւած՝ մենք ապատում ենք այն մեծ օրին, երբ այս երկրին կը միացւի նաև մեր հայրենիքի միւս կողքը՝ Տաճկահայաստանը. այդ օրը կը լինի իսկական մեծ և համաժողովրդական տօն:

Մեր անկախութեան և պետութեան ապահովութեան ամուր յենարանն է հայ բանակը, որ անձնազոհութեամբ կատարում է իր պարտքը հայրենիքի առաջ։ այս հանդիսաւոր օրը նրա սիրտը ևս լցուել է քերկրանքով ու նա պատրաստ է մեռնել ժողովրդի պատուոյ եւ անկախութեան համար։ ողջոյն հայ բանակին (բուռն ծափեր)։

Ողջունում եմ դաշնակից պետութեանց յանձինս ներկայացուցիչների Անգլիայի, Ամերիկայի, Ֆրանսայի, Իտալիայի, ողջոյն հերոսական Յունաստանին, (ծափահարութիւններ)։ *Ողջոյնի խօսք ունեմ ասելու ուրս մեծ ժողովրդին, մեր հարևան Վրաստանին ու Ազրբէյջանին* (ծափահարութիւններ)։

Փոխ-Նախագահ Լիւռն Շաոիթ. — *Լսեցինք հետագիրը։ Հայաստանը ժառանգ է անկախ ազգերու չարքը։ Ամենքս գիտենք հարց է ծագում՝ ինչպէս եղաւ այդ, ինչո՞ւ։ Առհասարակ, պատմական երևոյթներու ծագումն ու զարգացումը հիմնուած է երկու խոշոր գործօններու վրա։ առաջինը պատմական դէպքերու բնական հիւսքն է, պատմութեան խաղը։ երկրորդը՝ մեզ չբնապատող մեծ և հզօր ազգերու կամքը, կամ, ինչպէս կըսէ, անոնց քաղաքականութիւնն է։ Այս երկու գործօններն այնքան ուժեղ ազդեցութիւն են ունեցել մեր պատմութեան վրա, որ չատերուն կը թւի թէ ներկայ վիճակը արդիւնք է միայն այդ ուժերու։ սակայն, կայ մէկ ուրիշ, երրորդ գործօնը, որ միևնոյնուն հաւասար կամ, գուցէ աւելի չատ ազդեցութիւն ունեցած է մեր պատմութեան վրա։ այդ՝ ժողովրդական կամքն է, որ ես կուզեմ ընդգծել կրկնակի։*

Անկախութիւն ստեղծելու համար անհրաժեշտ է ժողովրդի կամքը, եթէ մենք այսօր նստած ենք այստեղ, ժողովրդի կամքն է այդպէս կամեցել, եթէ այսօր ճանաչել են մեր անկախութիւնը, ժողովրդի կամքն է ճանչցեալ ուել գայն։ Անկախ լինելու կամքն ու ձգտումը մեր ժողովրդին մէջ միշտ չէ եղել երբեք։ Եկաւ Քրքական Յոյնը, պատեց մեր ժողովրդին, բայց այդ Յովու մէջէն կղզիի նման վեր բարձրացող մեր բարձունքները՝ Զէյթունը, Սասունը, Ղարաբաղը կուել են միշտ։ Անկարող լինելով դիմադրել Քրքական Յոյնին՝ մեր ժողովուրդը փաթիչ դիւանագիտական միջոցներուն, որուն պատմութիւնը չատ հետաքրքրական կուգայ։ ան ձգտեց բերել Ռուսաստանը, որ պատահարի դէպքը տանձկական լուծէն։ Ռուսաստանը եկաւ, բայց մենք չապատագրուեցանք, որովհետև ազատութիւնը չեն տար, ազատութիւնը կը խլեն։ Հայ ժամուլը, գրականութիւնը սկզբից է վեր քարոզել է ազատութեան և անկախութեան գաղափարը, այդպէս է եղել մեր պարոցը, հայ հեղինակութիւնը, յանձինս Վարժապետեանի, Հայրիկի, Իպմիրլեանի։ Հասաւ ժամանակը, երբ խօսքից գործի պիտի անցնէր հայ ժողովուրդը։ 50-ական թուականներին սկսեցաւ յեղափոխական յարձակումը, որուն մասնակից եղան ժողովուրդին բոլոր խաւերը։ Սկսեց պատերազմը։ Հայ ժողովուրդը իր ողջ համակրանքով կապեցաւ դաշնակիցներուն, անկեղծ ու բաց յայտարարելով իր կամքը և այդ կամքի իրականացման համար տուեց վերջին զոհը։ Այսօր, երկար աշխատանքից յետոյ, մեր կամքով, մեր կուռվ ու արիւնով ստացանք այս պատուոյ թիւնը։ ուրախ ու չնորհակալ Գերագոյն Խորհրդին՝ չնորհակալ ենք Եւրոպայի ու Ամերիկայի ժողովուրդներուն ու խորհրդարաններուն, որոնք չատ աչխատեցան մեր դատի համար։

Այս պատուոյ թիւնը մեր կամքի վաւերացումն է պետութեանց կողմէն, բայց··· կրնաս է այդ վաւերացումը։ Շատերը կըսեն, ինչո՞ւ տխուր եմ։ ի՞նչպէս կարող եմ ուրախ լինել, օ՛, ի՞նչպէս կարող է ծիծաղել մէկ երեսս։ եթէ ծիծաղի էլ, դա ծիծաղ չի լինի, այլ ծամածռութիւն։ Տարին բոլորեցաւ, որ կըսեն Քէ խաղող է ամէն կողմ։ մեր երկիրը, սակայն, չխաղա-

զեցաւ, մենք կուժ մէջ ենք դեռ. թիւրքի, այո՛, միայն թիւրքի հետ, որ ամէնքը գանձ կը նկատէ մեր դէմ սահմանէն այն կողմ և այս կողմ: Նա նոր ազնաւանք է ակռէ՝ մահմետական գաղթականներ կը բնակեցնէ Տաճկահայաստանի մէջ, որպէսզի ատով ջոջ ասայ, թէ այնտեղ հայ գոյութիւն չունի, իսկ մեր ժողովուրդը՝ գաղթական, սոված ու մերկ՝ դեռ կը թափառի մասթևով՝ ո՞ր է արգասրութիւնը: Մերն է այն հողը և հայ կամքը կուզէ այն միացած տեսնել այս երկրին: Մերն է Տաճկահայաստանը: Այդ պիտի գիտնան ամէնքը և եթէ պէտք լինի վերադառնալ հին կուժի, մենք նորից նոր կը հաւաքենք մեր ուժերն ու կուժի կ՚լլենք մեր արդար իրաւունքը պաշտպանելու համար (բուռն ծափեր):

Դէպ մի լիմոնէն ուրիշ ժողովուրդ ունինք, որ կապրի սահմանին դուրս այլ սահմանեցնելու համար, մեր գաղթականութիւնը տարեցաւին ուժով կը ձգտէ դէպի իր հողը և հպիս կարելի կ՚լլայ կասեցնել անոր հոսանքը, և այդ ոչ միայն այստեղ, դուրսը՝ Ամերիկա, Եւրոպա բնակող հայերն անհամբեր կը սպասեն տեսնել իրենց հայրենիքն ազատ՝ գալու, ապրելու, վերաշինելու և առեղծագործելու:

Պէտք է լուծի այդ անհնազանդի բնական դասը և պէտք է ստեղծի Միացեալ և Անկախ Հայաստանը:

Ս. Վրացեան. — Ընկեր պատգամաւորներ, այն, ինչ որ կատարւում է այսօր, արդիւնք է մի քաղաքականութեան, որ չատ վաղուց է ակտած և որ հայկական հարց անունն է կրում:

Հայկական հարցը նորնչան հին է, որքան հին է հայ ժողովրդի ձգտումը քաղաքական ազատութեան: Սկզբում նա գերազանցապէս առարկայ էր արտաքին քաղաքականութեան. հայկական ազատագրութեան ուռկվքանները երազում էին Հայաստանի ազատութիւնը տեսնել դրսի ուժերի միջոցով: Մէկը փրկութիւնն էր հայցում Հիւսիսից, մէւսը՝ արեւմուտքից: Մատրակրութիւնն ու դիմադրութիւնն էր միայն այն դէնքը, որով կարծում էր ստանալ ազատութիւն: Բերլինի վհատողութիւն իր հոչակաւոր ճնշող յօդուածով նկատ վերջնականապէս խորտակելու այն երազական յոյսերը, որ հայ քաղաքական մտքի դեկավարները տածում էին դէպի եմպրպատ ու քաղաքական Եւրոպան: Այդ հիասթափութեան ամենապերճախօս արտայայտիչը Հանդիսացաւ հայ առաջին յեղափոխականը՝ Խրիմեան Հայրիկը, ձերկրքէ չերփեր դաղափարախօսը:

Երկրորդ շրջանը հայկական հարցի — հայ յեղափոխական շարժումն է: Հիասթափած վերոյիշեալ ու ձախմտոյ Եւրոպայից, հայ քաղաքական միտքը կ՚լայատր ուշադրութիւնը դարձնում է հայ ժողովրդի ներքին կազմակերպութեան ու դիմադրական ոգու բարձրացման վրա, այն համոզումով, որ միայն յեղափոխական ճանապարհով է հնարաւոր ձեռք բերել ազատութիւն. դրսի ուժերը օգնութեան կը դան այն ժամանակ միայն, երբ ժողովուրդն ինքը իր մարտական ընդդիմադիրով հարկադրել նրանց միջամտելու: Ահաւոր, ներքին կազմակերպութիւն, սեփական ուժի ամրացում ու յեղափոխական գործունէութիւն և յետոյ միայն արտաքին քաղաքականութիւն — ահա հոլիքը հայ յեղափոխական չարժման, որի գաղափարական ձևակերպողն ու գործնական դեկավարը եղաւ Հ. Յ. Դաշնակցութիւնը:

Հայկական հարցի պատմութիւնը վերջին երեսուն տարիների ընթացքում — դա խոկագէս Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւնն է: Դաշնակցութիւնը հայ քաղաքական դատի ներկայացուցիչը հանդիսացաւ գերազանցապէս: Մի կողմից նա դեկավարեց հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան գործը՝ պաշտպան դնելով ոչ միայն հայ ժողովրդի ֆիզիքական գոյութեան դէմ հանուած սպառնալիքների հետ, այլև ապահովելով նրա հոգևոր-կուլ-

ազատական գաղափարները։ Միևնույն ժամանակ նա իրականացրեց բազմաթիվ քաղաքական ակտեր, որոնց նպատակն էր չեզոքացնել հայկական հարցի լուծումը։

Իհարկե, հայկական հարցի էությունը վերջին չորեքտասնամյակում։ Ոչ միայն Դաշնակցությանն, այլև գրեթե ամբողջ հայ մտավորականությանն համար հայկական հարցի լուծումը ազգային ինքնավարությունից դենը չէր գնում։ Հայ ժողովուրդը իր ազգային զարգացման ու կուլտուրական–տնտեսական բարգավաճումը համարում էր կատարելապես ապահովված Թուրքիայի և Տաճկաստանի պետականությանն առնվազն իբրև ինքնավարություն պահանջելով։ Դաշնակցությունը փափագում էր տեսնել Իռանահայաստանը իբրև ֆեդերատիվ մաս ազատ Իռաստանի, իսկ Տաճկահայաստանը՝ նոյնպիսի կապերով կապած Օսմանյան պետությանն հետ։ Բացարձակապես անհիմն էր և սերնական ոտից և ատելի ագգայնականների մեղադրանքը, հայերի հասցեին, թե, իբր, սրանք ձգտում են անջատման։

Այս քաղաքական դաւանանքով էլ հայ ժողովուրդը մտաւ համայնաբնական պատերազմի մէջ՝ անցնելով դաշնակից պետությունների կողմը։ Համաշխարհական չաբժումը խանգարեց այս նպատակների իրագործմանը։ Եւ մենք չենք կարող ժուռանալ այս հանդիսաւոր ժամին հայաքաղաքական այն սխալը, որ վիճակեց հայ ժողովրդին գաշնակից պետությունների կողմից։ Հակառակ հայ ժողովրդի տված անհաչիլ զոհերի դաշնակիցների գասի օգտին, հակառակ եւրոպական դեմոկրատիայի և առաջադեմ գործիչների վճռական կամքի, հակառակ հրապարակով տված խոստումների՝ մեծ պետություններից ոմանք իրենց մէջ գաղտնի գաշինք կնքեցին, որով Հայաստանը բաժանում էր երկու մասի, մէկը տալում էր գաթական Իռաստանին, միւսը՝ Թրանսային։ Եւ միայն ռուսական մեծ յեղափոխութեանը խորտակեց այս բռնաւորական ծրագիրը, նպիրագործեց հայ յեղափոխական ժողովրդի գասը և հեղհեղուկ հասունացրեց Հայաստանի երկու հատուածների անկախութեան և միութեան գաղափարը։ Մի գաղափար, որ մես ս. արիւն տասում։ միայն վերջին երկու տարիների ընթացքին, յեղափոխութեան չնչի ազդեցութեան տակ, հայ ազատագրութեան հերոսական ճեղերի հետևանքով։ Այցելալ տարւայ մայիս 28–ի ակտը պաշտօնական հռչակումն էր այդ գաղափարի, և Փարիզի Գեղագոյն Արշերի նեթեայ ակտը նպիրագործումն ու վաւերացումն էր հայ ժողովրդի կամքի արտայայտութեան։ Հայաստանի հանրապետութեան իրական ճանաչումը ոչ այլ ինչ է, եթե ոչ ձևական հաստատումը միայն այն գաղափարի, որ արդէն արժատացած է բովանդակ հայ ժողովրդի գիտակցութեան մէջ և, իբրև ազատիսին, միանգամայն ողիունելի է։ Նա գեռ պահումը չէ մեր գործերի, բայց առաջին պաշտօնական քայլն է, որին անշրամնչորէն պէտք է յաջորդէ մեր ամբողջական գասի նպիրագործման ակտը։

Մեր ազատագրական պայքարի և Հ. Ց. Դաշնակցութեան գործունեութեան կենտրոնական առաքելն եղել է տաճկահայոց գասը. ամբողջ ուժերնիդ գասաքարակել ու կազմակերպել են այդ գասի վրա։ Մեր ճեղերի մեծագոյն բաժինը յատկացած է եղել տաճկահայկական նահանգին, և բնական է միանգամայն, որ ամենքս սպասում էինք առաջ տաճկահայկական խնդրի լուծումին և ապա Իռաստահայաստանի անկախութեան ճանաչման։ Սակայն, դէպքերի ընթացքը այլ հեռանդնքներ ուեց. բոլշևիկների հեղեղի առաջ պատաբ քայլելու մտահոգութեամբ եզրապես Տաճկաստանը իրագործ առաջ ռուսական խնդիրը և մի չարք ուրիշ պատճառներով հարցի հետ միասին նաև Իռաստահայաստանի հանդամանքերը։ Միանիկ թեպետ չի հետևում այն, որ տաճկահայկական խնդիրը անուլացության է մատնուել, և անհնարին

է մտահոգությունը այն մարդկանց, որոնք ինչ որ վատ նշաններ են տեսնում կատարվող դեպքերի մեջ: Ընդհակառակը, Կովկասեան Հայաստանին անկախությունը ճանաչումը ինքնին ապացոյց է տաճկահպակեական դասի նպաստաւոր լուծման, որովհետև անկարելի է երևակայել մի Հայաստան, որ կազմված լինի միայն ռուսական կամ միայն տաճկական Հայաստանից: Հայաստանը կամ պէտք է լինի մեծացեալ, ամբողջական՝ ազատ ելք ունենալով դէպի ծով, կամ նրա անկախութիւնը կը լինի լոկ անուանական և կը դառնայ պատճառ հայ աշխատաւորութեան գլխին: Ռուսահայաստանի անկախութեան ճանաչումից յետոյ, միացեալ Հայաստանի անկախութեան գոյութիւնը կարելի է համարել ապահովված, և վաղը, մես օր, երբ քննութեան առնւի տաճկական խնդիրը, անշուշտ, առաջին հերթին կը վաւերացւի նաև Տաճկահայաստանի անկախութեան ու երկու հաւասարների միութիւնը: Ձիշտ է, հայ ժողովուրդը խոստումներ և հիասթափութիւններ շատ է տեսել, բայց մեր դատողութիւնների հիմքը կազմում են ոչ թէ խոստումները, այլ իրական ուժերի փոխյարաբերութիւնն ու քաղաքական դէպքերի դասաւորութիւնը:

Կասկածամիտները ասում են, թէ կովկասեան պետութիւնների անկախութեան ճանաչումը յետին նպատակներ ունի, թէ մեծ պետութիւնները դրանով կամենում են բոլշևիկների դէմ հակաոյժ ստեղծել: Կարող է պատահել, չենք վիճում: Անշուշտ, պետութիւնները հայերի, վրացիների ու թաթարների գեղեցիկ աչքերի համար չէ, որ ճանաչում են նրանց անկախութիւնը. քաղաքականութեան մէջ, այո՛, ոչ թէ զգացմունքը, այլ շահն է դեր կատարողը: Ինչ ուզում են պետութիւնները մտածեն, բայց մի՛թէ դրանից նսեմանում է մեր անկախութեան արժէքը: Այո կամ այն ուանտիւրայի մէջ ընկնելը կամ չընկնելը ամենից առաջ մեզնից է կախված. բոլշևիկեան Ռուսաստանը մեզ համար նոյնպիսի արտաքին ոյժ է, որպիսի արտաքին ոյժ են և ուրիշ պետութիւնները, և մեր քաղաքական հաստատութիւնից է կախված մեր ապագայ արտաքին, ինչպէս և ներքին քաղաքականութիւնը: Հայ աշխատաւոր ժողովուրդը չատ է յոգնած ու քայքայված, և նա մի՛ տենչանք միայն ունի այսօր — հանգիստ ու խաղաղ կեանք, որպէսզի ի վիճակի լինի անդորր արտով անձնատուր լինել չհնարաւոր աշխատանքի: Կազմակերպուող Հայաստանը պէտք է լինի աշխատանքի ու ստեղծագործութեան երկիր: Հայ դէմոկրատիայի միակ փափագն է հնարաւորութիւն ունենալ կերտելու կուլտուրական ու անտնական բարիքներ և ամբողջ թափով մասնակցել քաղաքակրթի մարգոյեան յառաջադացումին: Նա ուզում է հաշտ ապրել բոլոր ժողովուրդների հետ. նա չի խառնւի ուրիշի գործին, բայց և թոյլ չի տայ, որ ուրիշը միջամտի իր գործին:

Ընկերնե՛ր, մենք հասել ենք վերջին հանգրուանին: Այն, ինչ որ հայ ժողովուրդը ձեռնարկել է իբրև անխոտոր կամք, սկսում է իրականանալ: Ազատ Հայաստանն այլևս փաստ է ո՛չ միայն մեզ, այլ և ուրիշների համար: Այն, ինչ որ հայ աշխատաւորութիւնը իր արեան գնով է նւաճել, ընդունւում ու հաստատում են նրանք, որոնց ձեռքին է գտնւում այսօր աշխարհի դեկը, և՝ ուեի՛ մեծ սիրով նրանք, որոնց պիտի անցնի վաղը պատմութեան դեկավարութիւնը: Ես ևթէ մինչև այժմ մեզնից պահանջւել է յեղափոխական եռանդ և անձնազոհութիւն, այսուհետև մենք պէտք է ցուցաբերենք քաղաքական հաստատութիւն ու պետական չհնարաւորութեան կարողութիւն: Կեանքը մեր առջև դնելու է նոր պահանջներ, և մեզնից է կախած մեծ չափով անկախ Հայաստանի բարիք կամ չարիք դառնալը հայ ժողովրդի համար: Ես ես հաւատում եմ, որ անկախ Հայաստանը չի փակւի նեղ պատեանի մէջ. հայ դէմոկրատիան հաւասար մէկ անդամը կը լինի համաչխարհային ազատ դէմոկրատիայի ընտանիքին: Հայաստանը կը լինի խնդապէս ազատ ու դէ-

մոլքատիկ և նրա սահմաններում հաւասար իրաւունքներ կը վայելեն նրա մէջ ապրող բոլոր ժողովուրդները։ Այն Հայաստանը, որ ստեղծուած է հայ աշխատաւորութեան ջանքերով, կարող է լինել միայն ազատութեան, լուսաւորութեան ու յառաջդիմութեան հայրենիք։

Կեցցէ՛ հայ աշխատաւոր ժողովուրդը։

Կեցցէ՛ ազատ և դեմոկրատիկ Հայաստանը։

Կեցցէ՛ աշխատաւորների միջազգային համերաշխութիւնը։

Վ. Միհնախորեան։ — (*տեղ.*) Սոցիալիստ-յեղափոխական ֆրակցիայի կողմից կարդում է մի յայտարարութիւն Հայաստանի անկախութեան ճանաչման առթիւ, մանանչելով, որ իրենց կուսակցութիւնը եռանդուն պայքար է մղում ժողովուրդների ինքնորոշման համար։ Միւս կողմից, ընդգծում է, որ տանկահայ դատի բաժանումը ռուսահայ դատից ամենամեծ դաւաճանութիւնն է հայ ժողովրդի հանդէպ*)։

Ադաթաքէկով։ — (*մուսլ.*) Հայ ժողովրդի դարաւոր ձգտումը պատւեց յաղթութեամբ։ Ճանաչեց նրա անկախութիւնը և նա այսօրւանից մտնում է կուլտուրական ժողովուրդների ընտանիքի մէջ, որպէս ուրոյն կազմակերպութիւն։ Ողջունելով այս ակտը՝ ես կուզէի մատնանշել, թէ որքան նշանակալից է այն անդրկովկասեան ժողովուրդների համերաշխութեան տեսակէտից։ այսուհետև պէտք է մի կողմ թողնել վէճերն ու չոլէն գաղափարները և խաղաղ աշխատանքի պիտի ծաղկի Անդրկովկասում, երբ ժողովուրդների համերաշխութեան հիման վրայ։ Միւս կողմից, մեր անկախութիւնը, ինչպէս և Վրաստանինն ու Ադրբէջանինը, չեն կարող լինել հաստատուն, մինչև այն չճանաչէն նաև Թուրաստանի կողմից։ մեր բոլոր աշխատանքը պէտք է տանենք այն ուղղութեամբ, որ փոխադարձ համաձայնութեամբ Թուրաստանն ևս հաստատէ այս ակտը։ Մաղթելով ամէն յաջողութիւն՝ ես կանչում եմ կեցցէ՛ անկախ Հայաստանը, կեցցէ՛ անդրկովկասեան ժողովուրդների եղբայրութիւնը։

Կ. Սասունի։ — (*դաշն.*) Արաբատեան աշխարհը իր գաւակներին ուղարկից մեր հայրենիքը՝ Տանկահայաստանը կուլտուրական ազատագրելու մեղ։ դէպքերն այնպէս դասաւորեցին, որ մենք քողինք մեր հայրենիքը, եկանք Արաբատեան աշխարհը և մեր գաւակներին ուղարկեցինք Սարդարապատ կուլտուրական ազատագրելու ժողովրդի օտարի լծից։

Մեր արիւնը խառնուեց ձերինին և արեան խառնուրդը վերացրեց մեր և ձեր միջև եղած սահմանները։ Այսօր բախտը ժպտում է Արաբատեան աշխարհին, ուր տեսնելուց ազատ Հայաստանի կորիզը։ Անահմար հայցմունքով ենք լսում այդ աւետիքը, որովհետև այժմ, ինչպէս գաղթական, մենք երկանիկ ենք, որ հարազատ հողի վրա ենք ու ոտքների տակ։ Մենք երբե՛ք չենք տիրում ու այդ արձանները չենք տեսնում։ սա առաջին մեծ դրդռն էր, որ կատարեց։ այնուհետև կը գայ միւսը՝ Տանկահայաստանի ազատագրումը։ Գաղթական զարձած ժողովուրդը, որ իր կրծքի տակ ունի մեծ փոթորիկ, զուսպ ու լուռ սպասում է իր պայքարի վախճանին։ Նա համոզուած է, որ կը գայ այդ օրը, կը յաղթանակէ արդարութիւնը և ինքը կրկին սափրւած չի լինի կուի դուրս գալ։ Իսկ եթէ չգայ այն արդարութիւնը, այն ժամանակ անահմանի կը լինի նրա ցաւերն ու անպատ՝ ուժը,

*) Ցաւում ենք, որ վ. Միհնախորեանի ճառը ի վիճակի չենք տալու բերելու ամբողջութեամբ։ Մեր ձեռքի տակ եղած ապրիւրի մէջ ճա սրւած է ա՛յսչափ։

քանի որ նա պէտք է երթայ իր հայրենիքը և եթէ պէտք լինի այդ բանի համար մեռնել, կը մեռնի (ծափահարութիւն)։

Ց. ԲՈՒԴԱՂԵԱՆ. — Կարդում է դաշնակցական ֆրակցիայի առաջարկած բանաձևը։

— Բանաձևն ընդունւում է 37 ձայնով 5-ի դէմ ձեռնպահութեամբ։

Ապա քարտուղարը կարդում է ցանկը ստացած բաժանութ. հեռագրերի։

Նիստը փակւում է ցերեկւայ ժամը 3-ին։

ՈՒԹՍՈՒՆԵՑԵՐՈՐԴ ՆԻՍՏ

(30 ապրիլի)

Նախագահում է Ա. Սահակեանը, քարտուղարը կարդում է նոր ստացած գրծերը։

Նախարարապետի զեկուցումը

Նախարարապետ Ա. Խատիսեանը. — Այսօր պատիւ ունեմ զեկուցման վերջին երեք չաբաթւայ ընթացքում տեղի ունեցած դէպքերի մասին։

Սան Ռեմօի խորհրդաժողովը ապրիլ 28-ին վերջացրել է իր աշխատանքները. դժբաղդաբար, կայացած վճիռների մասին մենք դեռ տեղեկութիւն չունենք. հաւանաբար ստացած լուրերը արդէն հրապարակած են մամուլում, այնպէս որ ես կարիք չեմ տեսնի դրա վրա ու կը զեկուցեմ մինչև այդ խորհրդաժողովը կատարած աշխատանքների մասին։

Հայաստանի հարցը. — Մարտ ամսւայ ընթացքին Լոնդոնում տեղի են ունեցել Դեպարդին հորհրդին փոխարինող և խորհրդակցական բնոյթ կրող՝ դաշնակից պետութիւնց ներկայացուցիչների ժողովները. յատուկ մի մասնաժողով դրաղւել է Հայաստանի հարցով և յատկապէս քննութեան է առել երեք խնդիր՝ սահմանների, դէպի ծով ելք ունենալու և Հայաստանի սահմաններում ապրող ժողովուրդների փոխյարաբերութեանց խնդիրները։ Բացատրութիւններ տւել են Ա. Ահարոնեան, Գ. Նաւասարդ, մէկ անգամ հրաւիրած է եղել Զաւէն պատրիարքը, իսկ Դոր-Ղաթամեանը, որպէս պետական ներկայացուցիչ, մասնակցել է բոլոր նիստերին։ Դժւար է ասել, թէ վերջնականապէս ինչ վճիռ է կայացել, սակայն, առաջին պարբ է, որ Հայաստանի սահմանների մէջ են մտնում Վանի վիլայէթին ստանց Հէքեարիի, Բիթլիսի վիլայէթը, Մշոյ սանջակը, Երզրումի վիլայէթը։ Տրապիզոնի վիլայէթի վերաբերմամբ վերջնական տեսակէտ դեռ չի մշակւած։ Եթէ մասնաժողովի վճիռը հաստատւի Սան Ռեմօում, ապա Հայաստանը կունենայ 220,000 քառ. վերստ տարածութիւն։

Դէպի ծով ելք ունենալու խնդրի վերաբերմամբ կայ երկու տեսակէտ. առաջինի կողմից Հայաստանի կենտրոնացման համար անհրաժեշտ է սեփական ելքը, երկրորդի, ընդհակառակը, պնդում է, որ նա բաքուից կարող է օգտւել։

Երրորդ խնդրի վերաբերմամբ մանրամասն զեկուցում է տւել Ա. Ահարոնեան՝ նկարագրելով Հայաստանի ժողովուրդների փոխյարաբեր-

քիւններէն։ Նա մասնակցել է, որ բոլոր արեւմտեան ուժերի ազդեցութեան տակ հայերի և քաղքենիների մէջ ծագած զգուռնութիւնից, այլ երեւոյթ նկատելի չէ։ Հայը ապրում է մեծ ազգերի հետ հաշտ ու համերաշխ։ Քաղաքների և հայերի անհամամասնութեան էլ ժամանակաւոր է, ընդդէմ է նա։ Երբ վերնականապէս Հայաստանը ճանաչի ժամերը, ինչպէս նաև Տաճկաստանի կողմից, քիւրմացութիւնները կը վերանան բոլորովին։

Մասնաժողովին զբաղեցրել է մի ուրիշ խնդիր ևս։ Հայաստանը առեղծուած է զէտերին պարզաններում։ այդ բանը ժառանգել է լորդ Բրըքդընը իր մի Տաուսի՝ ասելով, թէ չկայ ասելի դժուար բան, քան Հայաստանի առեղծուածը։ Մինչդեռ մեծ նորագոյժ պետութիւնները իրենց ժողովուրդներն ամփոփած ունեն իրենց սահմանների մէջ, Հայաստանի ժողովուրդը ցրուած է եղած ամէն կողմ։ Ահա այդ հարցն է զբաղեցրել մասնաժողովին, և նա մեր պատրաստութիւնից պահանջել է ուսումնասիր այն մասին, թէ հնարաւո՞ր է գնած սահմանների մէջ հայ տարրի մեծամասնութիւն կազմելը և թէ գաղթավայրերի հայերը հայրենիք կը վերադառնա՞ն։ Ի հարկէ, պատասխանները ուսումնասիր մանրամասն վիճակագրական տեղեկութիւններով ներկայացած են մասնաժողովին։

Մարտ 30–ին տեղի է ունեցել վերջին նիստը, ուր և պատրաստուել է զեկուցում Սան Ռեմօի խորհրդաժողովի համար։

Այդ ժամանակամիջոցում Ազգերի Դաշնակցութեան առաջարկած է եղել քննելու Հայաստանի մանդատի խնդիրը։ քնարկել է մի մասնաժողով, որ և զբաղուել է այդ հարցով։ Նրա կողմից մշակած է օկնւսպացիայի ծրագիրը։ Մասնաժողովին գլխաւորապէս զբաղեցրել է այն հարցը, թէ ով պէտք է վերցնի պատասխանատուութիւնը, քան որում հարցում է ուզուած մեր պատրաստութեան, թէ՝ նէ մի պետութիւն յանձն կառնի Հայաստանի հոգատարութիւնը, հայ ժողովուրդը սեփական ուժերով կարո՞ղ է նման պարտականութիւն վերցնել իր վրա։ Պատերազմիս վերջին պատասխանն է, որ նէ ոչ մէկը չդանւէ, ի հարկէ, հայ ժողովուրդը պատրաստ է իր ուժերով կազմակերպել իր պետութիւնը։ Ամերիկոյ միացեալ նահ իր ճառում մատնանշել է այդ հանգամանքը՝ ասելով, թէ հայը կենսունակ ժողովուրդ է, կարող է 40,000–անոց բանակ կազմակերպել, նաև թէ հայերը պէտք է ազատեն իրենց բախտը տնօրինելու սեփական ուժերով։

Սան Ռեմօի խորհրդաժողովը ապրիլ 28–ին վերջացրել է իր աշխատանքները։ Մայիս 10–ին Տաճկաստանի պատերազմերը Փարիզում պէտք է սառնան պայմանագիրը, որի վաւերացումից յետոյ կորոշւի նաև Հայաստանի բախտը։

Հետաքրքրական սահմանների վերաբերմամբ մեր տեսակէտն այն է, որ հարեւան հանրապետութիւնների հետ խաղաղ բանակցութիւն վարելով պէտք է վերջնական համաձայնութեան գանք։ Վրաստանի կողմից ընդունած է մեր տեսակէտը։ Ադրբէջանի հետ բանակցու բարդութիւն կայ, բայց, ցաւօք սրտի պէտք է մատնանշենք, որ նրա նախկին կառավարութիւնն քանած դիրքը Հայաստանի վերաբերմամբ վերացնում է բանակցութեան ամէն մի հնարաւորութիւն։ Նա յամառօրէն դնում էր իր սահմանների այնպէս, որ մէջ է առնում Հայաստանի մեծ մասը։ այդպիսի նախադիր չորրը ոչնչ բանակցութիւն վարել անկարող էինք։

Մեծերիան յարուցանում է հետաքրքրել մեր դատով։ ապրիլ 4–ին ամերիկեան անեսաց մերժել է վաւերացնել Վերսալի դաշնագիրը և Ազգերի Դաշնակցութեան կանոնագրութիւնը ու յայտնել է նախագահ Վիլսընին, որ պատերազմական դրութիւնը Գերմանիայի հետ վերացած է։ Դրանից յետոյ առաջարկել է մի բանաձև ճանաչելու Հայաստանի անկախութիւնը, որի

քննութեան միջոցին արտաքին գործոց նախարարը պնդել է, որ ճանաչումը ներկայումս միտք չունի, քանի որ չեն նշա՛ն սահմանները. սահմանների որոշումից յետոյ Ամերիկան կասի իր խօսքը: Դէպի ծով ելք ունենալու խնդրի վերաբերմամբ Ամերիկայի տեսակէտն այն է, որ Տրապիզոնը պէտք է լինի Հայաստանի նաւահանգիստը:

Խորհրդական կառավարութիւնը, որի կողմից սերտիլը ընդունելութեան է գտել մեր ներկայացուցիչ Մ. Վարանդեանցը, Հայաստանի տեղեկութիւնը վերաբերում է ամենայն համակրութեամբ. նա չահագրգռուած է Հայաստանի հետ տնտեսական և առևտրական կապեր հաստատելու, միաժամանակ խօսք է տուել Սան Ռէմօում պաշտպանել մեր դատը:


Ամենից քիչ տեղեկութիւններ ունենք Թրանսիայի մասին, որի վերաբերմունքը դէպի հայկական դատը, ահաւասիկ, սառն է, երևի այն պատճառաբանութեամբ, թէ անտեսապէս ինքը ևս քայքայուած է և, բացի այդ, հայկական պահանջները ներկայում են իր չահերին. նահանգային վերաբերմամբ այն տեսակէտն ունէն, որ բաժանուից պէտք է օգտուենք: Կարծում ենք, որ մայիսի ընթացքում չատ հետաքրքիր նորութիւններ պէտք է լսենք մեր հարցի մասին. պատերազմը դեռ ևս կը մնայ, մինչև վերջնական վճիռ ստանալը:

Մենք և մեր հարեւանները. — Ինչ վերաբերում է Վրաստանի և Ազրբէջանի հետ ունեցած մեր նեբերին յարաբերութիւններին, պատի. ունեմ յայտնելու, որ իրագործել ենք մեր տեսակէտը և հասել որոշ հետևանքների:

Ղարաբաղի և Զանգեզուրի դէպքերը յայտնի են ձեզ. հայ անպաշտպան գիւղացին, յուսահատելով ռազմամթերքը և կանոնաւոր զօրք, դուրս է եկել օրհասական կուի իր վրա յարձակողների դէմ և, բնականօրէն, չի կարողացել դիմադրել մինչև վերջը. դրա հետևանքը եղել է այն, որ թաթարները կողմից այրուել են լքած գիւղերը, Եւլախ-Շուչի ճանապարհի երկու կողմն ընկած հայկական գիւղերը մաքրուել են, Շուշու հայկական մասը աւերուել է հիմնովին. քաղաքում տեղի է ունեցել նաև ջարդ, որի ընթացքում հայերը սուել են 400–500 գոհ: Վերջին երեք չաբաթուայ ընթացքում Զանգեզուրի տերիտորիայի վրա ազրբէջանեան զօրքեր և բանդաներ չեն երևացել, այնուամենայնիւ, ժողովուրդը դեռ դիւրական պայմանների մէջ է ապրում:

Ապրիլ 10–ին Թիֆլիսի մեր պատւիրակութեան հետագրի համաձայն անդրկովկասեան խորհրդաժողովը որոշել է դադարեցնել կուիները ու յանձնաժողովներ ուղարկել դէպքերը տեղում քննելու: Վայախի յանձնաժողովն իր գործը վերջացրել է մի օրում և ապրիլ 14–ին վերադարձել Թիֆլիս: Ապրիլ 19–ին մի յանձնաժողով է ճանապարհւել Շուշի. 23–ին սապացած հետագրին ասում է, որ իրանք Եւլախ-Շուշի ճանապարհի վրա ոչ մի հայ չեն տեսել: Շուշում պատահել են մի քանի հոգու, որոնք պատապարած են եղել այս ու այն թաթարի մօտ: Երրորդ յանձնաժողովը, որ պիտի գնայ Շարուր-Նախիջևան, հասել է Երևան. նա դեռ դուրս չի եկել ճանապարհների փակ լինելու պատճառով. յանձնաժողովի թաթար անդամ Սուլթանովը գնացել է Դաւալու, ծանօթանալու ճանապարհի վիճակին, բայց դեռ չի վերադարձել:

Խորհրդաժողովը դեռ պաշտօնապէս գոյութիւն ունի, բայց նիստերն ընդհատուած են երեք օրով բագուում տեղի ունեցած յեղաշրջման հետևանքով: Ապրիլ 27–ի գիշերւայ ժամը 12–ին բոլշևիկները հասել են Բալախարի և վերջնագիր են ներկայացրել Ազրբէջանի կառավարութեան, իշխանութիւնը յանձնելու ռազմա-յեղափոխական կոմիտէին. խորհրդարանը 28–ին ընդունել է պահանջը և կատարել:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԻՈՒՆԵՐԻՆԵՐԸ

Կոմիտեն դեռ ևս պաշտոնական դիմում կամ յայտարարութիւն չէ արել Հարևան հանրապետութիւններին. ըստ երևոյթին, բագուն զբաւած է առանց դիմադրութեան, պաշտօնեաները մնում են իրենց տեղերում, արտաքին կեանքը նորմալ է, կառավարութեան և խորհրդարանի անդամներից ոչ մէկը ձերբակալուած չէ: Ինդիսի հաղորդագրութիւնից Ազրբէջանը ճանապարհ է անկախ խորհրդային իշխանութիւն. տեղիս ապրբէջանեան ներկայացուցչի առելով արտաքին յարաբերութիւնների հարցը կորոշէ մօտ օրերս· դաշնակից ներկայացուցիչների բագում մնալու կամ հեռանալու խնդիրն ևս կը վճռուի մօտ օրերս:

Բագուի զրաւումից առաջ ուղիղ հեռագրալարով ինձ հաղորդեցին, թէ Ազրբէջանը յայտարարում է, որ բոլշևիկները մօտենում են իր սահմաններին, բայց ինքը ոյժ չունի դիմադրելու, որովհետև զօրքերը զրաւած են Ղարաբաղում, ուսում Հայաստանի կառավարութիւնից երաչխաւորութիւն է պահանջում, որ զօրքերը յետ քաշելու դէպքում յարձակում չլինի· դիմում է արւած նաև Վրաստանին, որը պատասխանել է, թէ իր օգնութիւնն անմիջական լինել չի կարող: Մեր պատասխանն այդ հաղորդագրութեան արդէն հրատարակած է ամուսում, բայց նախ քան նրա տեղ հասնելը, ապրբէջանան զօրքերը քաշել են նախայոյից և ընդունել վերնադիրը:

Դէպի նոր կառավարութիւնը մեր վերաբերմունքն առայժմ չէզոք է· մի[նչ]ազգային օրէնքների համաձայն, յեղաշրջումից յետոյ, նրան պետութեան ներկայացուցիչը յետ չի կանչւում, նշանակում է նրա կողմից ընդունւում է նոր հաստատած պետականքը, և մենք հրահանգել ենք մեր ներկայացուցիչն յարունակել իր պարտականութիւնները, եթէ նրանց կողմից որևէ նոր առարկի չի լինի:

Սակայն, կարծում ենք, որ դրութիւնը այսպէս անորոշ յարունակել չի կարող· առաջին քայլը՝ խօսելու իր հարևանների հետ պէտք է անի Ազրբէջանը:

Ազրբէջանի յեղաշրջման հետ կապ ունի նաև այն հարցը, թէ մենք ի՞նչ վերաբերմունք ունենք դէպի Խորհրդային Ռուսաստանը: Մեր կարծիս տեսակէտն այն է, որ Հայաստանը չէզոք է հանդիպ Ռուսաստանի քաղաքական կոիւը և այդ կոիւը վարող ուժերը: Կառավարութեան ու հայ հասարակութեան կարծիքը արտայայտւել են բոլշևիկեան գործունէութեան ընդդէմ· հանդէս եկած մեկ մեկ երևոյթի վերաբերմամբ, այն է՝ տոհմա–բոլշևիկեան դաշնագրութեան, որ մեր աչքում նկատուում է Հայաստանի չահերի դէմ ուղղած մի քայլ: Երբ պարզաբանուեց այդ խնդիրը և հաստատուեց, որ Հայաստանում գործող մի քանի բոլշևիկներ աշխատում են հէնց այդ ուղղութեամբ, կառավարիչները հարկադրած նրան միջոցներ ձեռք առնել և առաջարկեց նրանց թողնել Հայաստանի սահմանները: Կարծուր եմ համարում նաև յայտնել, որ չատ բոլշևիկներ հակառակ են եղել վերոյիշեալ դաւադրութեան և նրան նպաստող գործունէութեան, յայտարարել են նրանք այդ մասին կառավարութեան, և կառավարութիւնը նրանց ոչ մի կերով չի անհանգստացրել: Բացի դրանից, մեր և բոլշևիկեան կազմակերպութեան միջև տեղի չէ ունեցել որևէ դէպք, և մենք մինչև օրս էլ մնացել ենք չէզոքի դիրքում:

Այնուամենայնիւ, չպէտք է անտեսել, որ բոլշևիկները են հանդիսանում Ռուսաստանի իրական ուժը· այդ փաստը մատնանշուում է մասնաւորապէս ներքոյիշեալ, ուր նկատուում է դէպի Ռուսաստանն ունեցած քաղաքականութեան բնոյթն: Ցրանսական խորհրդարանը յանձնարարել է կառավարութեան՝ բանակցութիւններ վարել Ռուսաստանի հետ· նոյն տեսակէտն է և Իտալիան· Ամերիկայի դիրքը յայտնի է ձեզ· այն, ինչ հետաքրք

չէր յուսաբերն, այժմ հնարաւոր է դառնում, և մեծ պետութիւնները մտածում են, կամ, գուցէ, ակսել են բանակցութիւններ վարել Թուրաստանի հետ թէ տնտեսական և թէ քաղաքական հարցերի վերաբերմամբ:

Հայաստանի կառավարութիւնն էս չի կարող անտեսել այն կարևոր և նշանակալից փաստը, որ այժմ դրսութիւն ունի Թուրաստանն իր իշխանութեամբ և որն արդէն մտել է Ազգերիվկաս: Հետաքրքրական է այժմէն իսկ պարզել, թէ ինչ վերաբերմունք ունի նա դէպի անդրիվուկասեան հանրապետութիւնները: Տեղեկութիւնները ասում են, որ Ադրբէյջանի տնկախութիւնը ըդունված է նրա կողմից, իսկ ինչ է վերաբերմունքը դէպի Հայաստանը: Հայաստանի կառավարութիւնն ունի հիմունքներ պնդելու, որ Խորհրդային Թուրաստանի կողմից ճանաչված է և պէտք է ճանաչէլի յետագայում և Հայաստանի անկախութիւնը. դա իրօք նորութիւն չէ, 1917 թ. դէկրետն ու համաձուսական համագումարի որոշումը հաստատում են այդ փաստը: Մենք հիմք չունենք տալու, թէ դէկրետն ու որոշումը կորցրել են իրենց ուժը. բացի այդ, մեր հնէպատմութիւնի գիտուցումները ցոյց են տալիս, որ Քոյլաբուում է իրենց չարունակելու գործը Հայկական դրօշակի տակ: Հայաստանի կառավարութիւնը երբեք դէմ չէ բանակցութիւններ սկսելու Խորհրդային Թուրաստանի հետ այն հիմունքներով, ինչ որ նախատեսուած են բոլշևիկեան դէկրետներում:

Երէկ երեկոյեան, ժամը 8-ին Թիֆլիսից տեղեկութիւն ստացանք, որ իրեն կարմիր անունող ինչ որ մի զօրամաս գրաւելով Ելիսաւէտ չարժուում է Ղարաբաղ և նպատակ ունի Ղարաբաղի ու Ջանգեզուրի վրայով անցնել Նախիջևան ու միանալ Տաճկաստանին: Կառավարութիւնն անմիջապէս հեռագրեց Բագու և Մոսկաս Չտելու, թէ ո՞ւմ է պատկանում այդ զօրամասը, ի՞նչ նպատակներ ունի և, վերջապէս, ի՞նչ միջոցներ են ձեռք առնում Քեւրիմացու թիւնները կանխելու համար:

Այն, ինչ որ կատարուում է այժմ Սան Ռեմոյում և Կովկասում, միանգամայն տարբեր են իրարից: Համաձայնեցնել, գոնել մի ճանապարհ Քէմալ փաշայի հետ է, այնուամենայնիվ կատարելիութիւն կայնված է հին տեսակէտի վրա, այն է՝ համակերպել իր քայլերը գլխաւոր նպատակի իրագործման՝ միացնել Հայաստանի պաշտպանման: Տաճկաստանի ամրոզջութեան համար ցոյց տրուած ամէն օժանդակութիւն հակկական դաշին միանգամ ևը նշանակէ, որովհետև առանց Տաճկահայաստանի չկայ՝ Հայաստան: Մեր անկախութիւնը, որ ճանաչուած է խորհրդային իշխանութեան կողմից և խորհրդաժողովի ցանկութիւնը՝ լինել ուժեղ, չեն խանգարում միմեանց և մեր գերագոյն գործումն է անկախ և ուժեղ Հայաստանի վրա տեսնել տնտեսական խաղաղութիւնը:

Վերջին երեք չաբաթւայ ընթացքում Հայաստանի ճակատներում հանգիստ է տիրել. Կարսի վերաբերմամբ տարաձայնութիւնը առայժմ են միանգամայն և հերքուած են հէնց իրենց՝ մահմետական ներկայացուցիչների կողմից:

Աւրուց թափով կատարուում է ներքին կազմակերպութեան գործը, որ գնում է երկու ուղղութեամբ. —

Նախապատրաստել ուժեր երկիրը գրաւելու համար և ուժեղացնել բանակը. վերջին նպատակով հասարակական կամ պետական հիմնարկութիւններից յետ են կանչուած բոլոր զինապարտները, որպեսի հանգամանքը հնարաւորութիւն ընձեռնէ մեզ ազատելու բաբեր տարրերի զինապարտներին և վերացնելու գօրքի մէջ եղած իրաւացի դժգոհութիւնը:

Դժուար դրութիւն է առեղծուել պարենաւորման տեսակէտից. մեր պաշարը չնչին է, այդ մասին պարոյ եմ համարում յայտարարել ձեզ: Գրա

գլխավոր պատճառներից մեկն այն է, որ սեբաստիան կոմիտեն հատկացրել 250,000 փունտ սեբաստու՝ մոտ 200,000 փունտ ալիւր բաշխելու Ժողովրդին։ Ըստ որում գլխավոր պատճառն է Թուխատեանից ալիւր չբերը և, վերջապես, երբորդ այն, որ Ամերիկայի ալիւր բերող նաւերը ուշացել են և յունիսի սկզբին հասել տեղ հասցնին։

Կարդացուեած է առաջին հերթին ապահովել զօրքի պաշարը, որ և կատարուած է մասամբ, սակայն որքանացներէն ու հիւանդանոցներէն և միւսյն մնացածը բաշխել քաղաքացիներուն, այդ պատճառով է, որ հացաբաժինը իջեցուած է քառորդ ֆունտի։

Պարենաւորման հարցերուն դէմ կուռելու համար ձեռնարկուած են մի-ջոցներ. այժմ մենք հետաքրքրութիւն ունենք բաշխումնամ գնելու բանական քանակութեամբ գարի, հետաքրքրութիւն ունենք նաև երկրից հանելու ցորեն և ալիւր։ Բացի այդ, որոշուած է լաբունակել սեբաստիան կոմիտեի գործունեութիւնը, որը այս անգամ հացահատիկներ պէտք է հաւաքի ոչ թէ ցանելու, այլ պարզ պարտաւորելու համար։

Ձկների կուրը բարձրացնելու հարցին կառավարութիւնը նկրել է հինգ նեռա, մշակել է 16 միլիոցներ, որոնց մէջ յկշատակելի են արտասահմանեան ծախսերի կրճատումն ու ներմուծուող ապրանքների քանակի կրճատումը, սակայն որոշուած է ամէն կերպ աշակցել հում նիւթերի արտահանութեան գործին՝ այդ նպատակի համար, աննից առաջ, տրամադրելով բաւարար վարկ վաճառներ։

Ընդհանուր գործունէութեան մէջ կառավարութեան ուշադրութեան գլխաւոր առարկայ են կազմում երեք խնդիրներ — Հայաստանի անկախութեան ճանաչումը, սահմանների լայնացումը և ներգաղթի կազմակերպումը։ Վերջինիս խնդիրների իրագործման համար կառավարութիւնը գործ է դնում իր բոլոր միջոցներ և ուժերը (բուռն ծափեր)։

Լ. Թաղէոսեան։ — Ձեկուցում է գիւղատնտեսութեան և պետական գոյքերի նախարարութեան երկրագործական բաժնի 1920 թ. նախահաշիւն առիպողական և յաւելեալ յօդուածների մասին։

Ընդհանուր յօդուածների քննութենից յետոյ, վերոյիշեալ նախարարութեան անունով բաց է անում 3.692,709 ր. վարկ։

Նիստը փակուում է դիւերեայ ժամը 10 և կէսին։

ՈՒԹՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՆԻՍՏ

(Մայիս 3-ի արտակարգ նիստը)

Նիստին ներկայ է կառավարութեան ամբողջ կազմը. ունկնդիրների ժամն ու պատշգամբը լիքն են խուռն բազմութեամբ։

Նախագահում է Ա. Սահակեան։ քարտուղարը կարդում է նոր ստացուած գործերը։

Արտաքին գործերի նախարարի հաղորդագրութիւնը

Մեր առաջին գործերի նախարար Հ. Օհանջանեան։ — Պարտաւոր պատշգամարդները, վերջին յարաբերական ընթացքում Մերձիրվեհատի մէջ հարուած հանրապետութիւններում, յատկապէս, Պղրբէյանում կատարուած են գէպքերը, որոնք առանձնապես հետաքրքրական են և անմիջականօրէն վերաբերում են մեր կենսական շահերին. այդ դէպքերի նկարագրութիւնն է, որ պէտք է անեմ այսօր։

Ինչպես գիտէք, Հիւսիսային Կովկասի գրաւումէն յետոյ բոլշեւիկները սկսեցին օրօքեր կենտրոնացնել մասամբ Վրաստանի, բայց գլխաւորապէս Ադրբէյճանի սահմաններուն վրա. Ադրբէյճանը կարծես ուշադրութիւն չէր դարձնում այդ երեւոյթի վրա և իր ամբողջ ուժերը՝ բաղկացած 10,000 կանոնաւոր օրօքից և 10,000 կամաւորներից՝ ուղարկել էր Ղարաբաղ, որոնք և գրաւած էին կոտորելով հայ խաղաղ ազգաբնակութիւնն ու աւերելով քաղաքներ ու գիւղեր, առանց ուշադրութիւն առնելու հիւսիսային սահմաններուն վրա երեւցող ուժերուն:

Ապրիլ 27–ին ադրբէյճանական 400 գինուորները նահանջում են Ծամամայից, և բոլշեւիկները, թուով 6000 հոգի, գրաւում են Ջալալօղը և զօհաւոպատճառներով առաջանում մինչև Բալաքեր: Ապրիլ 28–ին կատարւում է յեղաշրջումը. տեղական բոլշեւիկեան կազմակերպութեան ներկայացուցիչները վերջնագիր են տալիս կառավարութեան՝ իշխանութիւնը յանձնելու իրենց: Մարշդրաբանն ընդունում է վերջնագիրը և իշխանութիւնը յանձնում ռազմա–յեղափոխական կոմիտէին:

Նախքան յեղաշրջումը, Հայաստանի կառավարութիւնը դաշնակից պետութիւնից ներկայացուցիչներից ստացաւ հետեւեալ նօտան (կարդում է), որից պարզ երեւում է, թէ Ադրբէյճանի նախկին վարիչները ինչպիսի փորձեր են արել արդարացնելու իրենց թուլութիւնը հիւսիսային սահմանների վրա:

Ապրիլ 28–ի գիչերը Հայաստանի դիւանագիտական ներկայացուցչի պաշտօնատեղ թումանեանը հետեւեալ նօտը հաղորդեց մեզ թիֆլիսից, ուղիղ հետագրաթելով.

«Ադրբէյճան կառավարութիւնը տեղեկացրել է Անդրովկասի դաշնակից ներկայացուցիչներին, որ բոլշեւիկեան օրօքերը խախտել են իր սահմանները, և ցոյց է տւել խռովութիւններ վրանզը բաււում: Իբրև հետեւանք ադրբէյճանեան կառավարութեան խնդրանքի, որ արդարացում է հանդամանքներով, հրաւիրում ենք հայկական կառավարութիւնը՝ տալ անյապաղ նրաչխիքներ, որոնք թոյլ տային Ադրբէյճանի կառավարութեան իր սպառնալիքի ենթակայ սահմանը փոխադրել այն օրօքերը, որոնք այժմ գտնում են Ղարաբաղում և Հայաստանի սահմանակից ուրիչ վայրերում:

Կոմս դը–Մարտէլ, զնդ. Գաբբա. կոմենդդր Լիւֆ»:

Կառավարութիւնը այդ նօտային պատասխանից հետեւեալ ձեւով.

«Ի պատասխան ձեր ապր. 27–ի հետագրի, որով հրաւիրում էիք տալ Ադրբէյճանի կառավարութեան երաչխիքներ, որոնք թոյլ տան նրան իր օրօքերը Ղարաբաղից փոխադրել բոլշեւիկների դէմ կուիլու համար, հայկական կառավարութիւնը պատիւ ունի յայտարարելու հետեւեալը. փետր. 20–ից սկսած հայկական կառավարութիւնը ձեր անուն ուղղած իր բազմաթիւ յայտագրերով ժամանակիլ է այն ազդեցուցիչ հետեւանքները, որոնք առաջ պիտի գային ադրբէյճանեան կանոնաւոր օրօքերի և հրոսակմերքերի կենտրոնացումով Ղարաբաղում, որ արւում էր Ղարաբաղը գէնքի ուժով վերջնականօրէն դրաւելու նպատակով, հակառակ անցեալ տարւոյ օգ. 22–ի համաձայնութեան: Հայկական կառավարութիւնը, որ միչտ ձգտում է խաղաղ կենակցութեան դրացի հանրապետութիւնների հետ, բազմիցս դիմել է Ադրբէյճանի կառավարութեան և դաշնակիցների ներկայացուցիչներին՝ խնդրելով առաջ առնել Ղարաբաղի աբիւնհեղութեան, որը վերածւեց հայերի զանգւածային կոտորածի Ադրբէյճանի սահմաններում: Ո՛չ խաղաղասիրութեամբ տոգորւած յանձախի դիմումները, ո՛չ էլ, զէյթախտաբեր, դաշնակիցների կրկնակի նախազգուշացումները չկարողացան Ղարաբաղի

արհնալից դէպքերի առաջ առնել և Ադրբէջանի կառավարութիւնը հեռու պահել թիւրք գործակալների գծած ծրագրերից։

Երկար ժամանակից ի վեր նախապատրաստած յառաջխաղացումը Ղաբաքաղի վրա կատարեց, հայ ազգաբնակութիւնը ահագին գոհեր ուեց կորցրեն և միայն տեղական ուժերով կազմակերպած և սահմանափակ քանակութեամբ զէնքի տէր հայ գիւղացիները ստիպած էին դիմել ինքնապաշտպանութեան՝ ապահովելու համար իրենց ֆիզիքական գոյութիւնը։

Հայկական կառավարութիւնը այժմ էլ յայտարարում է, որ Ղարաքաղում հայկական կանոնաւոր զօրք չկայ բնաւ։ Կանգնած լինելով համաձայնութեան և բոլոր վիճելի հարցերը խաղաղութեամբ լուծելու տեսակէտի վրա, բոլոր զինւած ընդհարումները Հայաստանի Հանրապետութեան և նրա հարևանների քաղաքական ու տնտեսական չահերի համար նկատելով կործանարար՝ յայտարարում է, որ Ադրբէջանի նկատմամբ յարձակողական քայլերի դիմելու մտադիր չէ, ինչպէս որ այդ մասին քանիցս յայտարարել է Ք. դաշնակիցներին և Ք. խորհրդաժողովի անւան ուղարկած հեռագրերով։ Կառավարութիւնը յայտարարում է, որ Հայաստանի զօրքերը Ադրբէջանի սահմանից հողի վրա գրւած դիրքերից առաջ չեն չարժւի՝ Ադրբէջանի վրա յարձակուելու նպատակով։

Հայաստանի կառավարութիւնը այս խաղաղասիրութեան հետ միաժամանակ մեղադրանքն անհրաժեշտ է համարում Ղարաբաղի և Ադրբէջանի կից հողերի հայ ազգաբնակութեան ապահովութեան անհրաժեշտ երաշխիքը Ղարաբաղի, Նուխու, Շամախու, Արէշի, Զաքաթալայի և այլ տեղերում մինչև այժմ էլ Ադրբէջանի սահմաններում ապրող թիւրք փախստեների և ապաների կազմակերպած նման արիւնհեղութիւններին վերջ տալու համար։ Այդ երաշխիքները ձեզ հետ միասին կը մշակէ մեր պատգամաւորութիւնը, որ թիֆլիսում է»։

Ջնայած, որ մենք տեղեակ երաշխաւորութիւն, որ Հայաստանի կողմից ոչ մի յարձակում Ադրբէջանի վրա չի կարող լինել, այնուամենայնիւ, Ադրբէջանը իր զօրքերը չտարաւ Ղարաբաղից և չէր էլ կարող տանել, որովհետև ապրիլ 28–ին արդէն յայտարարած էր խորհրդային իշխանութիւն։

Ապրիլ 30–ին, Ադրբէջանի խորհրդային իշխանութեան կամ ռազմահեղափոխական կոմիտէի ներկայացուցիչներից մէկը՝ Համիդ Սուլթանով հաղորդում է իր մի բարեկամին, Թէ կարմիր զօրքը գրաւելով Ելւախը՝ չարժւում է Շուչի, Ղարաբաղի վրայով միանալու Տաճկաստանին և միաժամանակ յայտնում է, որ վրաստանն իրենց վախ չի ներշնչում, իսկ եթէ Հայաստանը դիմադրութիւն ցոյց տայ, Հարկաւորւած կը լինեն պատերազմ յայտարարել։

Այս հնարաւորը, որի պատճէնն ունենք մենք ձեռքի տակ, պարզ ցոյց է տալիս Ադրբէջանում տեղի ունեցած դէպքերի իսկական բնոյթը։ Կառավարութիւնը հարկ համարեց մի նօտայով դիմել Ադրբէջանի նոր կառավարութեան ներկայացուցիչ Նարիմանովին ու միաժամանակ Մորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի կոմիսար Քիչերինին՝ պարզելու Թէ ինչ է կատարւում իսկապէս։ Ահա այդ նօտան։

«Բագու, Ժողկոմխորհի Նախագահ Նարիման Նարիմանովին, պատճէն Հայաստանի ներկայացուցիչ Մ. Զաւրեաքեանին։ —

Երեան, 29 ապր։ — Ինչպէս ձեզ յայտնի է, դեռ Անդրկովկասեան Հանրապետութիւնների կազմակերպման սկզբից իսկ Ադրբէջանի Խորհուրդական կառավարութիւնը քանիցս փորձեց դէնքի ուժով խլել Հայկական Ղարաբաղը և Զանգեզուրը Հանուսայ դիւղացիական պատգամաւորների 8 համագումարների յայտարարած վճիռների։ Նոյն այդ կառավարու-

Քիւնը սոյն տարւոյ մարտ 23-ից հրի ու սրի մատնեց Ղարաբաղի հայ աշխատաւոր գիւղացութիւնը՝ տրքերով գիւղեր ու քաղաքներ, աչքաթնեզով խաղաղ ազգաբնակութիւնը, չնչաթելով կանանց ու երեխաներին։ Այդ գործերը տրքեր էլ Ղարաթաղում են և շարունակում են իրենց գործադրութիւնները գէշօքի ուժով յիշեալ չրջանի աշխատաւոր գիւղացութիւնը Ադրբէջանին ենթարկելու համար։

Մենք կառավարութեան հասած մանաւոր տեղեկութիւնների համաձայն, արգէն Հայաստանի սահմանները ռում գտնող ադրբէջանեան զօրքի կողմը լրացնելու համար շաբաթում են նոր պահեստի մարդ զօրքի անուն տակ։ Հայաստանի կառավարութիւնը հաստատացած լինելով, որ Ադրբէջանի բանւորա-գիւղացիական կառավարութիւնը, որ յայտարարել է ժողովուրդներին ազատ համարտայտութեան սկզբունքը, չի կարող ընթանալ մուսաւաթեական կառավարութեան ուղիով, մի կառավարութեան, որ մեր ժողովրդի և մեր կողմից ճանաչւած է Ադրբէջանեան հանրապետութեան աշխատաւոր ժողովրդի շահերի գաւաճան և չի յապաղի չտալ մեզնոցներ մեռք տանելու Ղարաթաղում և Զանգեզուրում տեղի ունեցող կռիւների գադարեցման և չբլանի չրջաններից ադրբէջանեան զօրքը յետ կանչելու համար։

№ 2686։ Արտաքին գործերի նախարար Հ։ Օհանջանեան։

Նօտաների հետևանքը մասին գեռ տեղեկութիւն չառած, մայիս 1-ին, առաւօտեան ժամը 7 և կէսին Ադրբէջանի նոր կառավարութեան կողմից ստացանք հետևեալ վերնագիրը։

Հայաստանի կառավարութեան , Բագու, ապրիլ 30։

Ադրբէջանի Սորհրդային Հանրապետութեան բանւորա-գիւղացիական կառավարութիւնը, յանձին յեղափոխական կոմիտէի, պահանջում է նաև՝ մեզքիլ մեր զօրքերից Ղարաթաղի և Զանգեզուրի հողը, երկրորդ՝ քաշել գէպի մեր սահմանները, երրորդ՝ դադարեցնել ազգամիջեան կոտորածը։ Հակառակ դէպքում, Ադրբէջանեան Սորհրդային Հանրապետութեան յեղափոխական կոմիտէն իրեն կը համարի պատերազմական դրութեան մէջ Հայաստանի Հանրապետութեան հետ։ Վերնագրի պատասխանի համար տրւում է երեք օր ժամանակ։ Ադրբէջանի Խորհրդ։ Հանր։ պատուիրի գործերի կոմիսար Հուսէյինով»։

Մի քանի ժամ յետոյ ստացւեց մի այլ վերնագիր, կովկասեան ճակատի յարձրդային ռազմա-յեղափոխական խորհրդի նախագահ Օրջոնիկիձէի և այլոց առորդրբերմամբ։

Հայկական կառավարութեան։ Պատճէն Ադրբէջանի Խորհրդային Հանրապետութեան Ցեղափոխական Կոմիտէից։ Մոսկուա՝ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահ Լենինին, արտաքին գործոց կոմիսար Չիչերինին, Կովկասեան ճակատի հրամանատար Սմիլգային։

Հայաստանի և մեզ բարեկամ ու դաշնակից Սորհրդային Ադրբէջանի սահմաններում չարունակում են գինւորական գործողութիւնները Ադրբէջանի և Հայաստանի միջև։ Ռուսական բանւորա-գիւղացիական կառավարութիւնն իր արբագան պարտքն է համարում բոլոր ուժերով օգնութեան գալ Ադրբէջանի համային աչխատաւորութեան անունից իրեն մեռք մեկնողներին, որոնք կամենում են վերջնականապէս ամրապնդել բանւորա-գիւղացիական իչխանութիւնն Ադրբէջանում։

Ադդային հողի վրա տեղի ունեցող թչնամանքը և անգթութիւնները ու դաչնակիցների և Դաչնակցութիւն ու Մուսաւաթ կուսակցութիւնների ագիտացիայով բորբոքւող գինւորական գործողութիւնները հայ–ադրբէջանական

գործքերի մեջև ձեռնաու են միայն ժողովուրդներին յաղթողներին և Հայաստանի ու Ադրբէյջանի ազնաուրաց զաուակներին հետմառ։ Հայաստանի և Ադրբէյջանի սահմաններին վերաբերեալ բոլոր վիճելի հարցերը կարող են լուծուել միայն աչխատաւորութեան և ինքնորոշուած ժողովուրդների կամքով։

Ներկայիս Ադրբէյջանը չի կարող տանել ո՛չ մի չովինիստական, ազգամոլ յարձակողական գործողութիւն, և ցեղային քշմամութեր տեղ չպիտի ունենայ Խորհրդային Ադրբէյջանում։

Թուաստանի Ընկերվարական Դաշնակցական Հանրապետութեան անունից առաջարկում եմ Հայաստանի կառավարութեան անմիջապէս դադարեցնել ամէն տեսակ պատերազմական գործողութիւն Ադրբէյջանի հետ և դադր հանել զօրքերը նրա սահմաններից։ Այդ պէտք է կատարուի 24 ժամուայ ընթացքում, ներկայ առաջարկութիւնն ստանալու օրից սկսած, և չկատարելը կը նկատուի որպէս մարտահրաւէր ուղղուած Թուս. Ընկերվ.— Խորհրդային Հանրապետութեան՝ Հայաստանի կառավարութեան կողմից։ Վերոյիշեալ առաջարկը կերազործուի ռուսական կողմից բանակի ուժերով։ Հետևանքների ամբողջ պատասխանատուութիւնն ընկնում է Հայաստանի կառավարութեան վրա։

Վակուսեան ճակատի Ռազմա–Յեղափոխական Կոմիտէի նախագահ **Օրջոնիկիձէ**։ Առաջին բանակի Ռազմա–Յեղափոխական խորհուրդ՝ կնիռով, Մախաձքից, Լեյնաղովսկի, Բագու. մայիս 1, 1920։

Թէպէտ, մէկզգալիօրէն, նման վերընթացները կարելի էր համարել չընդունուած, այնուամենայնիւ, Հայաստանի կառավարութիւնը պատասխանեց երկուսին էլ, որպէսզի ոչ մի կասկած չմնայ, թէ մենք որևէ միտք ունենք անհամաձայնութիւն կամ բաղխումներ առաջ բերել Հայաստանի ու Ադրբէյջանի միջև։

«Բագու. Ազրբէյջանի խորհրդային Հանրապետութեան արտաքին գործերի կոմիսարի պատասխանատու Հուսէյնովին։ պատուէրս Հայաստանի Վերիպատգարդիչ Մ. Յարությունեանին։ Մոսկուա, Լենինին, Չիչերինին և Վակուսեան ճակատի Ռազմա–Յեղափոխական խորհրդի նախագահ Օրջոնիկիձէին։

Երեան, 4 մայիսի. Ի պատասխան ստորի 30–ի մեր վերնագրի, որ մենք ստացանք մայիս 1–ին, Հայաստանի կառավարութեան անունից հաղորդում եմ հետևեալը։

Ստացուած նիստ առթիւ. Ադրբէյջանեան հողի վրա հայկական զօրք չէ եղել ու չկայ։ Ընդհակառակը, մեր իսկ մեծ զօրքով տասնամեայ մուսաւաթական կառավարութեան զօրքերը ու կազմակերպած բանդաները մինչև այժմ շարունակում են մնալ հայկական Ղարաբաղի չրիաններում ու դեռ ևս չեն ստացել հայ աչխատաւոր գիւղացիութեան կարդն էին անում և արդեօք Շուշի քաղաքի հայկական մասը ու բազմաթիւ գիւղեր։ Լիովին համաձայնելով վարիչ տան Հայկական Ռազմա–Յեղափոխական Խորհրդի նախագահ Օրջոնիկիձէի՝ մեր կողմից Թուաստանի խորհրդային իշխանութեան արած դիմումի հետևանքով մեզ ուղարկած վերնագրի մէջ արտայայտած հետ՝ մենք նոյն տրէ հարցի մասին յայտարարում ենք, որ Ադրբէյջանի և Հայաստանի միջև եղած սահմանային վէճերը պիտի լուծուեն աչխատաւորութեան կամքի համաձայն և որ Ղարաբաղի գիւղացիութիւնը ուրը համագումարներով արտայայտել է իր անկախ կամքը՝ լինելու Հայաստանի Հանրապետութեան կազմի մէջ։ Ինչ վերաբերում է Զանգեզուրին, պէտք է յայտնել, որ

Ագրբէյնը երբէք այդ հոդամասի վրա չի տարածւել և այդ պատճառով թէ՛ քրտական և թէ՛ փաստական ոչ մի հիմք չկայ Զանգեզուրը Ագրբէյնի հողամաս համարելու։ Զանգեզուրը, համաձայն իր գիւղացիութեան կամքի, կառավարւել է և այժմ էլ կառավարւում է իր խորհրդով և իրեն համարում է անբաժան մասը Հայաստանի հանրապետութեան։

Երկրորդ կէտ մասին։ Հայաստանի գօրքերը, ինչպէս կառավարութիւնը բազմիցս յայտարարել է, երբեք չեն անցել հարևան հանրապետութիւնների, ինչպէս նաև Ագրբէյնի սահմանները։

Երրորդ կէտ առթիւ։ Հայաստանի սահմաններում ազգաբնակութեան կոտորած չկայ, իսկ անցեալի ընդհարումներն առնչացել են մուսաւաթական կառավարութեան և տաճիկ գործակալների ձեռքով հայկական հողամասերի վրա և Հայաստանի հանրապետութեան դէմ կազմակերպած մահմեդական ապստամբութիւններով, և կառավարութիւնը պարտաւորւած է եղել ձեռք առնել նախազգուշական միջոցներ եկող պրովոկատորների դէմ։ Ընդհակառակը, Ղարաքաղի դէպքերի առթիւ Ագրբէյնի ամբողջ տեղեկութեան վրա հայերի զանգւածային կոտորածներ են տեղի ունեցել և այրւել են տասնեակ հայկական գիւղեր։

Լինելով կանգնած բոլոր վէճելի հարցերը խաղաղ միջոցներով լուծելու տեսակէտի վրա և հակառակելով պատերազմական գործողութիւններին, Հայաստանի կառավարութիւնը համաձայն է Ազգերի Լիգայի տեսակէտների վերաբերեալ կարծիքին և նոր ընդհարումների ծագման հնարաւորութիւնները վերացնելու նպատակով առաջարկում է ձեր կառավարութեան՝ առաջին — դադարեցնել բոլոր ռազմական գործողութիւնները, երկրորդ — սահմանների վերնական ճշտման և հարևան հանրապետութիւնների միջև բնականոն յարաբերութիւններ սահմանելու համար Հայաստանի կառավարութեան հետ սկսել բանակցութիւններ։ № 2724։ Հայաստանի արտաքին գործերի նախարար Հ։ Օհանջանեան»։

Այս պատասխաններից դուրս տեսնում էք, որ Հայաստանի հանրապետութեան կառավարութիւնը տոգորւած է գերազանց խաղաղասիրութեամբ, և նրա բուռն ցանկութիւնն է բոլոր վէճերը լուծել փոխադարձ համաձայնութեամբ։ Միաժամանակ, կանգնած լինելով ժողովուրդների ինքնորոշման բարձր սկզբունքի վրա՝ կառավարութիւնը պարտ է համարում յայտնել, որ նա հայ բոլշևիկով ժողովրդի վճռական կամքի համաձայն, պատրաստ է ամէն գնով պաշտպանելու Հայաստանի սահմաններն ու անկախութիւնը՝ ում կողմից էլ որ վտանգ սպառնայ նրան (ազմկալից ծափեր)։

Որոշարարներ միաձայնութեամբ որոշում է քննել պատգերի գործերի նախարարի զեկուցումը։ Զայն է խնդրում դաշնակցական պատգամաւոր Ս։ Թորոսեանը։

Հայաստանի ժողովրդի ներկայացուցիչներ, սոյն թւի ապրիլ 28-ին կովկասի կանցում բացւեց մի հետաքրքիր էջ, ասում է նա, սկսւեց պատմութեան մի նոր շրջան։ Ագրբէյնը, որ ազնւական-բէկական մի երկիր է, որ տաճկական օրինակ ցայտուն արտայայտիչն է, դարձել է կոմունիստ։

Ռուսական կոմունիզմը պատուդ է գարգացած արդիւնաբերութեան, նա բանւորութեան և գիւղացիութեան տիրապետութիւնն է Ռուսաստանում, Ագրբէյնը չունի ամենևին այդ նախապայմանները, նա դեռ չի ապատագրւել բէկական-խանական տիրապետութիւնից, բայց յայտարարել է իրեն կոմունիստ։ Սակայն, պատմութեան մէջ խոշոր թռիչքներ չեն կարող տեղի

ունենալ. եթէ էւօլիւցիան հող չէ պատրաստել, այդպիսի երեւոյթները պատմութեան մէջ միայն արկածի բնոյթ ունեն, և Ազրբէյջանը դիմից արկածախնդրութեան:

Իւրաքանչիւր մարդ, որ ծանօթ է հասարակական կեանքի պատմութեան, պէտք է լաւ գիտենայ, որ Ազրբէյջանում կատարւում է մի կեղծիք, և այսօր Հայաստանի խորհրդարանի պարտքը պիտի լինի պատռել դիմակն ու մերկացնել այդ կեղծիքը:

Գաղաժամտութիւնը, իր կոմունիստական կեանքի երեք օրը դեռ չապրած՝ Ազրբէյջանը անում է առաջին քայլը· պէտք էր սպասել, որ նա հանդէս կը գայ նոր նշանաբաններով, որ նա բոլոր միջոցներով կը ձգտի վերջ տալու արիւնհեղութիւններին, սակայն, դրանց փոխարէն, վերընագիր է ուղարկում Հայաստանին և կամենում է Ղարաբաղի ըմբոստ ժողովրդին իր ձեռքը ձգել, խանական տերապետութեան մէջ կեղեքելու և ճնշելու: Այս փաստն ինքնին մի փառաւոր ապացոյց է, որ Ազրբէյջանի նոր կառավարութիւնը երբէք կոմունիստական չէ, նա հին կառավարութեան հաբագատ դաւակն է ու նրա նպատակների մոլի հետապնդողը:

Ազրբէյջանի վերընագրին մենք ունենք միայն մէկ պատասխան — Ղարաբաղը և Զանգեզուրը, ունենալով հոծ հայութիւն, պէտք է միանան Հայաստանին (ազնիւլից ու երկարատև ծափահարութիւն): Հայաստանի կառավարութիւնը պէտք է ձեռք առնի բոլոր միջոցները, պահպանելու Հայաստանի անբաժան մասը կազմող Ղարաբաղն ու Զանգեզուրը (բուռն ծափեր):

Մենք առաջել ենք նաև երկրորդ վերընագիրը, այս անգամ արդէն Մոբրջաքին Ռուսաստանի ներկայացուցիչների կողմից: Նախ, կարևոր եմ համարում ժամանակել, որ Հայաստանի վիճակը խորհրդային կենսորոնքում չէ պատճառանում ջնջորէն և իմ խորին համոզմամբ այս վերընագիրը արգիլնք է Ազրբէյջանի կեղծ ինֆորմացիան:

Մես կողմից, մենք չենք կարող անտեսել, որ հայ ժողովուրդը կուլտուրական կապերով կապած է Ռուսաստանի հետ· այդ այդպէս լինելով հանդերձ, չենք կարող նոյնպես չյիշել, որ Ռուսաստանից ընդունած կուլտուրայի վրա հայ ժողովուրդը միշտ գրել է իր հանճարի, իր ստեղծագործութեան ուրոյն դրոշմը, որ ապացոյց է նրա կենսունակութեան ու անկախ կորովի:

Ցարգելով կուլտուրական կապը, մենք պարտ և որոշ պէտք է յայտարարենք սովետական Ռուսաստանին, որ հայ ժողովուրդը ազատ պիտի լինի, որ նրա ինքնորոշելու իրաւունքը անվիճելի է հէնց իր հոյակապ նշանաբանի համաձայն: Ես համոզուած եմ, Մոբրջային Ռուսաստանը այդ իրաւունքը խախտել չի կարող: Կոմունիստների Մոսկւայի համագումարը է լուր ալեաթրև յայտարարել է, որ խորհրդային իշխանութիւնը պէտք է ապաստարէ բոլոր ճնշուածներին ու նրանց ազատ զարգացման հնարաւորութիւն պիտի տայ: Յատկապէս հայ գործի նկատմամբ այդ նոյն խորհրդային իշխանութիւնը քէ յատուկ դէկրետով և քէ խորհուրդների երբորդ համագումարում որոշակի ըրկման վերաբերմունք ունի ցուցադրած· քէ այդ դէկրետով և քէ համագումարի որոշմամբ նա ճանաչել և ընդունել է անկախ Հայաստանի գոյութիւնը: Հայ ժողովրդի համար այժմ հասել է ժամը ազատութեան, և խորհրդային իշխանութիւնը պէտք է կատարէ իր խօսքը՝ ճանաչելով ու ամրապնդելով մեր ազատութիւնը:

Մենք կարող ենք բանակցութիւններ պահել Ռուսաստանի հետ, ամուր և անսասան կանգնած Հայաստանի անկախութեան տեսակէտի վրա (բուռն ծափեր)։ *Թէ՛ կառավարութիւնն ընթանալ այս ուղիով, ժողովուրդն ու օրօքը նրան օգնական կը լինեն* (երկարատև ծափահարութիւն)։

Անդադար ծափերի տակ ամբոխն է բաժանում պատգամաւոր Սեպուհը։

Վերջին դէպքերն ինձ համար չատ տարօրինակ են, ասում է նա, ապրիլ 28-ին Ազգբէչևանը առաջարկում է Հայաստանին յետ քաշել զօրքերը Ղարաբաղից՝ իր ուժերը բոլշևիկների դէմ տանելու համար և չորս ժամ յետոյ յայտարարում է խորհրդային իշխանութիւն։ Այս դէպքերը չատ նման են 1908 թ. դէպքերին, երբ Տաճկաստանը յայտարարեց սահմանադիր երկիր. այո՛, յայտարարեց, բայց և անմիջապէս կազմակերպեց Աղանայի չոմեռնամը Ադրը։

Այսօր, Ազրբէյջանը դաժան է խորհրդային և երկու օր չանցած սպառնում է մեզ — ինչո՞ւ, որպէսզի իր զօրքերը Հայաստանի վրայով միացնէ Տաճկաստանի «կարմիր» զօրքերին, այն Տաճկաստանին, ուր չկայ, չի եղել և չի կարող լինել «կարմիր» զօրք, այլ կայ միայն կարմիր սուլթան։

Այդպիսի սպառնալիքներ հայ ժողովուրդը չատ է տեսել. ես պահանջում եմ կառավարութիւնից ոչ մի ուշադրութիւն չդարձնել։ Դրանք խաղեր են՝ սարքած ազրբէյջանեան կարմիր դահիճների ձեռքով՝ հայ ժողովրդին թեքնիկիլու նպատակով։ Սակայն, եթե չեն հասնի իրենց նպատակին, քանի կանգնուն է մեր քաջարի բանակը։

Իմ զօրամասը այսօր ուղարկած հեռագրով խոստանում է կուռել մինչև վերջին մարդը և մի քիչ հող չզիջել քշեամուն (խանդավառ ծափեր)։ Ես յայտարարում եմ ձեզ, որ այդ ոգով ոգեորուած է մեր ամբողջ բանակը. յենւած նրա վրա՝ կառավարութիւնն անվերապահաբար պիտի առաջ տանի մեր հայրենիքի պաշտպանութեան գործը (բուռն ծափեր)։

Երկրորդ վերնագիրը ստացած է Խորհրդային Ռուսաստանի ներքին յարաբերութիւնների կողմից։ Մենք միշտ կարող ենք խօսել նրանց հետ, որովհետև ռուսական յեղափոխական բանակի ու յեղափոխական իշխանութիւնը մեզ համար բոլորովին այլ արժէք և այլ նշանակութիւն ունեն։ Սակայն, այն դէպքում ևս, կառավարութիւնը չպիտի ժռռանայ, որ ամէն բանակցութեան և ամէն համաձայնութեան նախապայմանն է Հայաստանի անկախութիւնը։ Ես, իբրև պետուրապան, ինձ հետ նաև հայ բանակը կոչուած ենք պաշտպանելու հայ հայրենիքի անկախութիւնը բոլոր վտանգների դէմ. դա է մեր գերագոյն պարտքը, և ինչ կառավարութիւնը երբեք չմոռանայ, որ հայ բանակը դիտէ կատարել իր պարտքը օրրութեամբ (երկարատև ծափեր)։

Լ. Թումանեան (*ոգեշունչ–ժողովրդական*)։ — Բաւական կատարուած կեղծիք համարելու հիմք չունենք. կատարել է յեղաշրջում. *մուսաւաթական* ոճրագործ դեկավարները հեռացել են ասպարէզից և իշխանութիւնն անցել է ռազմա–յեղափոխական կոմիտէի ձեռքը։ Դուցէ հին կառավարութիւնը յոյսեր ունի ապդելու նոր վարիչների վրա, բայց այդ տեղի ունենալ չի կարող, որովհետև Ենվերկոմսա է ինքնում ռուս յեղափոխական բանակը։

Ա. Շիրինեան (*դաշ.*)։ — Ճիշտ չէ, ասացէք Դաշտունի *մուսաւաթական* բանակը (ծափեր)։

Լ. Թումանեան. — Ո՛ւս բանակը, որ չի հեռանայ Ազրբէյջանից։ Այսօր հերթը հասել է նաև իմպերիալիստներին ծածկագրով հայտատանի *մուսաւաթին*՝ Դաշնակցութեան, այժմ նա պէտք է հեռանայ ասպարէզից։

Գ. Խալայեան (դաշ.). — Գոնէ լռեցէք, ամօ՛թ է ձեզ։

Լ. Թումանեան. — Այո՛, պէտք է հեռանայ նաև հայկական վիուսաւոր, եթէ չի ցանկանում, որ բոնի ուժով հեռացնեն նրան (ծիծաղ Դաշնակցութեան ֆրակցիայի կողմից)։

Ա. Ցոփանճիսեան (դաշ.). — Ահա երկու տարի է, ժուսաւոր կառավարութեան ձեռքով աքսաքամ է լինում հայ ժողովուրդը. դուք, պարոնայք էսէրներ, հերքեցէք, որ Տարիւռատր հայ տղաներ քայսաւած՝ չեն գտնում Դահնա գիւղում, հերքեցէք, որ Ճալէքի, Վարդանէն և ուրիշ չատ գիւղեր սրի չեն քաչուած, հերքեցէք, որ բազմաթիւ հայ կանայք ու աղջիկներ գերւած չեն ու բռնաբարւած, որ ասիւած չէ Շուչու հայկական մասը, որ չէ սրածւում Ղարաքաղի անմեղ ժողովուրդը։

Վատաժամատր Լ. Թումանեանը ողջունում է այժմ Ազրբէջանի խորհրդային, ես կասեմ խորհրդաւոր իշխանութիւնը. ես ձեզանից ուսել կարող էի ողջունել, ա՛յ Թումանեան, բայց ո՞ւր է նրա հրովարտակը, որ ազատ մեր գերիներին ու բռնաբարւած կանանց և աղջիկներին, ո՞ւր է նրանց կոչը համերաչխութեան։ Ռուսաստանի տեղ Նարիմանովին նատնեցիր չորս՞ս էութիւնը։

Դուք երեսով էք տալիս, որ մենք ծափահարել ենք էսպերխիստներին, բայց ո՞ւմ էինք ծափահարում դուք. մոռացիլ էք Մերքաթին (ծափեր), մոռացե՞լ էք, որ քանդում էինք Գեորգրադի ըրժուղները (բուռն ծափեր). դուք չէի՞ք, որ սկսեցիք քաղաքացիական կռիւը Ռուսաստանում և բոլշևիկներէ յաղթական արչուից ընկճւած դարձաք Քուլամորի, անկամ ու անճար։ Այսօր մեր կռիւն փրկելու համար խունկ էք ծխում Սորհրդային Ռուսաստանին, սակայն, ո՛ւր է մեր հերոսը՝ փառապանծ Ռերնսկին — Փարիզում դասեր է լսում խորհրդային իշխանութեան դէմ (աղմկալից ծափեր)։

Ողջունում էք այժմ Հիւսէյնովին, այն մարդուն, որ յայտարարում է, թէ կարմիր բանակը արչւում է հայ ժողովրդի վրա. գոնէ ամաչէք ժողովուրդ բառը գործածելուց։ Կարծում էք միամտաբար, թէ Ազրբէջանում, իրաք, յետգրչում կատարւեց. «Ուսաստանին այնքան անգո՛ր էր, որ այդպիսի հեչտութեամբ գիւղեց իշխանութիւնը։ Ասացէք խեղճի, ո՞րտեղ է անհնազանդութիւն, որ ենթադրում եմ, որ, այո՛, այդ կատաղութիւնն ունէլ վատթար է, քան նախկինը։ Ժամանակը վիրաբեր*) համարատութիւնը, որ պատրաստ է ամեն տեսակ նրանց կամքը — հրահրել համիսլամական շարժումը՝ մեզ մեկնելով բոլշևիկներին։

Ես գուք, Քուլամորի կուսակցութիւն, որ Ռուսաստանում գիւղացիութեան 80 տոկոսն ունէիք մեր յետևից, չկարողացաք կառավարութիւն սահմանել, այսօր յանդգնութիւն ունէք ասելու, թէ հասել է ժամը, որ Դաշնակցութիւնը հեռանայ իշխանութիւնից։ Մեր մտքով երբեք չանկացնէք, որ կարող էք մի օր երկրի գլուխ մեր մեռքը վերցնել (բուռն ծափեր)։

Աքսաքին գործոց նախարարի մեղմ տոնը Քող մեզ չդոյութիւն. այդ մեղմ տոնի յետևում կանգնած է հայ աչխատաւորութիւնն ու Դաշնակցութիւնը։

---

*) Խօսքը Ազրբէջանի վիրաբերական կուսակցութեան մասին է, որը պատրաստում էր խորհրդային իշխանութիւն յայտարարելու անկախ նուաչութիւնը՝ իսկ ժողովուրդների շահերի անտեսկծից։

Պարոնայք էսէրներ, ի վերջոյ հասկացէք, որ դուք չէք, որ պիտի մեզ կապէք Ռուսաստանի հետ. մենք ողջունում ենք Ժողովրդային Ռուսաստանը, եթէ նա ճանաչում է մեր անկախութիւնն ու ազատութիւնը (ծափեր):

Կառավարութեան համար թող պարզ լինէ, որ ոչ մի գնով, ոչ մի պարագայում իշխանութեան ծուլացում տեղի չպիտի ունենայ: Դուք, պարոնայք նախարարներ, ձեր խելքով, ձեր ամբողջ ուժով, հայ աշխատաւորութեան եւ Ժողովրդապետի հետ միասին պիտի ծեծէք բոլոր դիմերը, պիտի սպառէք բոլոր մէջոցները՝ փրկելու հայ ժողովրդի գոյութիւնն ու նրա հայրենիքի անկախութիւնը: Հայ աշխատաւորութեան վճռական և միահամուռ կամքն է լինել ազատ ու տէրել Մշացեալ և Անկախ Հայաստանում: (Երկարատև, որոտընդոստ ծափահարութիւն, որ կրկնւում է մի քանի անգամ):

Ա. Խոնդկարեան (սոց.-յեդ.). — Հին Ռուսաստանում մի թերթ կար՝ «Новое Время», որ ողջունում էր ամէն մի իշխանութիւն. այժմ «Դաշնակցութիւն»-ն է դարձել Ռուսաստանի նկատմամբ: Մենք էլ ենք քննադատում Ցարրէյնի կառավարութիւնը, բայց քննադատելով հանդերձ այդ կառավարութիւնը՝ պիտի խոստովանենք, որ ներկան աւելի լաւ է, քան հինը:

Վ. Նաւասարդեան (դաշ.). — Ինչո՞վ է լաւ:

Ա. Խոնդկարեան (սոց.-յեդ.). — Լաւ է հինց նրանով, որ հինը ունէր ցցած ժանիքներ...

Վ. Նաւասարդեան (դաշնակ.). — Իսկ նորը թաքնած ժանիքներ:

Ա. Խոնդկարեան (սոց.-յեդ.). — Իսկ ի՞նչ նորը ի՞նչ ունի, դեռ չգիտենք: Ամէնամեծնիւթ լաւ է ունենալ թաքնած ժանիքներ, քան ցցած (ծիծաղ դաշնակցականների կողմից): Պարզ է, որ Ժողովրդային Ռուսաստանը ազդել է և պէտք է ազդի այդ կառավարութեան վրա: Ի՞նչ պիտի լինի մեր դիրքը: Լաւ բան է, որ մարդ իր գլխի տէրն է և ունի ոյժ իր գլխի տէրը լինելու, բայց մենք ունե՞նք այդ հնարաւորութիւնը: Չպէտք է ընկնել ֆետիշների յետևից, չպէտք է մի իդէալ դնել և նրա համար կռիւ յարատեւել ամբողջ աշխարհին: Ի՞նչ անել ապա — համակերպուել, ահա իմ պատասխանը, համակերպուել, եթէ, իրօք, գալիս է Ժողովրդային իշխանութիւնը:

Վ. Խորենի (դաշ.). — Գալիս է Թիւրքիան և ոչ Ռուսաստանը, մի խեղաթիւրէք փաստերը:

Ա. Խոնդկարեան. — Բայց համակերպուել չի նշանակում, ի հարկէ, տալ ամէն ինչ: Մենք պէտք է աշխատենք ձեռք բերել մաքսիմումը, եթէ չյաջողուենք, պատրաստ պիտի լինենք դիմումների, մինչև մեր անկախութեան հրաժարումը: Հայ ժողովրդի ֆիզիքական գոյութիւնը ելակէտ ունենալով՝ մեզ մնում է մի բան — Հայաստանում ևս յայտարարել Ժողովրդային իշխանութիւն (բուռն ծիծաղ դաշնակցականների կողմից):

Հաղորդակցութեան նախարար Ա. Ջամալեան (դաշ.). — Պատգամ. Խոնդկարեանն ասաց, թէ Ռուսաստանում մի թերթ կար, որի գերն էր գովել ամէն իշխանութիւն. ես էլ ասում եմ, Հայաստանում կայ մի կուսակցութիւն, որի գերն է գովել ամէն տեսակ իշխանութիւն, որ գալիս է հեւասպառ:

Ցաւալի է արդէն, թէ էսէրները ի՞նչ յոյսեր էին կապում Բիչերախովի և Դնեպրկինի հետ. այսօր յայտնի դարձաւ մի ուրիշ բան ևս, այն, որ ռոցիալիստ յեղափոխականների կուսակցութիւնը Ժողովրդային իշխանութեան գլխին հազար տեսակ լուտանքներ թափելուց յետոյ սկսել է նոյն ոյդ

քչխանութեան երկրպագել: Իրա գլխաւոր պատճառն այն հոգեբանութիւնն է, թէ Հայաստանն անպայման պէտք է կապի Ռուսաստանի հետ, քէկուզ առաջան նաւած լինի այնտեղ, և որովհետև այսօր Ռուսաստանը մեզ հետ կապւում է Ազրբէյճանի վրայով, ուստի և ամենից առաջ Ազրբէյճանի կառավարութիւնն է, որ քննադատութեան է ենթարկւում մեր կողմից:

Նոր կառավարութեան ժամին պատգամաւոր Յոհաննիսեանն ասաց, թէ երբ գաւեշտ է կատարւում, այո՛, գաւեշտ է կատարւում և պարոնայք էսէրները լաւ պիտի գիտեան, որ գաւեշտն ունի վտանգաւոր է և էլ աւելի վտանգաւոր է մէջտեղը· քան ցցած ժամերը· փաստն եկաւ Հասատուրեան մեր առաջը:

Այդ կուսակցութիւներ, որի յոգուներից մէկն է ազգերի ինքնորոշումը, ամէն անգամ ոտնահարում է իր սկզբունքները, երբ խնդիրը վերաբերում է Հայաստանին: Փիլիսոփայական դատողութիւն են տալիս մեր ժողովրդի անկախանդ գարգացման մասին, առանց մտածելու, որ անկախութիւնն էլ այդ նպատակի հիմքերից մէկն է կազմում:

Գաւգամաւոր Թումանեանի տոնը հրապարակին է սազում, բայց ոչ խորհրդարանին· նա հարց է տալիս, թէ ի՞նչ ուղի իմպերիալիստները, ի հարկէ, լաւ իմանալով թէ ինչ ուղի:

Ես և Լիպարիտ Նազարեանը երբ Մոսկուայում բանակցում էինք Տրոցկու հետ, վերջինս մեզ ցոյց տուեց Եւրոպայի ճանապարհը, բայց ոչ եւրոպական դիմակրատիայի, այլ խորհուրդ տուեց դիմելու խաղերիալիստ կառավարութիւններին: Եւրոպան փրկեց մեր սովետական ժողովրդին, դուք այդ չատ լաւ գիտէք:

Այնուհետև նոյն այդ բարեմիտ էսէրները վտանգի ժամին խորհուրդ են տալիս կառավարութեանը հրաժարուել իշխանութիւնից· այս րոպէին եթէ կառավարութիւնն ունի մի պարտք, այդ այն է, որ թոյլ չտայ նման քննադատութիւնների պատակտելու ազգի միահամուռ կամքը (բուռն ու երկարատև ծափահարութիւններ):

Վ· Միհանխոլեան (սոց·-յեղ·)· — *Այստեղ յայտնեցին, թէ դաշնակից պետութիւնները մեզ հաց են տուել, բայց ինչո՞ւ, պարոնայք, մոռանում էք, որ այդ նոյն դաշնակիցները մեզնից արիւն են խլել: Համոզուեցէք և ընդունեցէք, վերջապէս, որ մեր քաղաքականութիւնը՝ կառուցած մնալ Եւրոպայի վերից···*

Վ· Նաւասարդեան (դաշ·)· — *Գուլտուրայի և ոչ Եւրոպայի:*

Վ· Միհանխոլեան (սոց·-յեղ·)· — *Այո՛, մեր այդ քաղաքականութիւնը, նորից եմ կրկնում, կորսաաթէր եղել է և կորսաաթէր էլ պիտի լինի հայ ժողովրդի համար: Մեզ մոսհոդողը տւեալ հանդամանքներում մեր ժողովրդի փիզիքական գոյութեան խնդիրն է միայն և այս տեսակէտից կարծում ենք, որ վերջ պիտի տալ կնճռոտ հարցերը հայ–թրքական մեծողերով վճռելու եղանակին և ամբողջովին պիտի յենւել յեղափոխական Ռուսաստանի վրա···*

Վ· Խորենի (դաշ·)· — *Բայց այդպիսի Ռուսաստան կա՞յ բազում արգելջ···*

Ա· Շերիմեան (դաշ·)· — *Ինչու չէ, ապա Մուլթանովը ի՞նչ է՝ Մուսաստա՞ն և փիքիհա՞ն հետ միասին (ծիծաղ):*

Վ· Միհանխոլեան (սոց·-յեղ·)· — *Պէտք է յենւել յեղափոխական Ռուսաստանի վրա, եղբայրական ձեռք մեկնել նրան, որովհետև այլ ճանապարհ մենք ձեզ ցոյց տալ չենք կարող:*

8. Բուդդիզմ (դաշ.). — Գնդում են, պարզապես պատրամաւորներ, քէ Ազգային Ժողովին խորհրդարանի իշխանութիւն է: Ինչո՞ւ չէ: Եթէ Լեռնա Թուխանեան կարող է Լեռն Թուխանեան դառնալ, ինչու Հաճիզ Մուլթանեան չի կարող կոմունիստ դառնալ (ընդհանուր ծիծաղ): Մեզ խորհուրդ են տալիս ներդրական ձեռք մեկնել Թուրաստանին, բայց հետաքրքրական է իմանալ, քէ այդ ե՞րբ է, որ մենք քշամական ձեռք ենք մեկնել այդ նոյն Թուրաստանին:

Մեր մեղքը չէ նաև այն, որ ունենք մի սրբութիւն սրբոց՝ անկախ Հայաստանի գազափարը (ծափեր):

Մեզ հետ չխօսեցին օտարները, նրանք լքում են մեզ: Ոչինչ, քող լքեն, մենք ունենք մեր հարաւասար՝ տանհայաց հառաջը, որ աբխնով միացաւ մեզ և որի հետ միասին մենք կարող կը լինենք պաշտպանել մեր սրբութիւն սրտոցը (ազմկալի ծափահարութիւն):

Էսէրները խօսում են ժողովրդի ապահովութեան մասին. ապա ի՞նչ է անում կառավարութիւնը, ի՞նչ է անում հայ ժողովրդի հարաւասարակշռ պատասխանը՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը, չէ՞ որ նրանք ապահովութեան գործն են գաբրնում իրենց անգուլ աշխատանքներով:

Ասում են նաև քէ հրաժարւելու իշխանութիւնից, բայց ո՞ւմ տանք երկրի զեկը, ո՞րն է այն ուժը, որ պիտի հուժկու բազուկներով վարէ մեր նաւը. կա՞յ այդ ուժը, պարոնայք էսէրներ: Հայ դեմոկրատիան վաղուց հանգէս է բերել իր վճռական կամքն ու յարի ուժը, յանձինս Հ. Յ. Դաշնակցութեան, որ այժմ երկրի զեկավարն է ու պիտի մնայ գալիք օրերին էլ (բուռն և ազմկալից ծափեր):

Վ. Նաւասարդեան (դաշ.). — Դիմում եմ ձեզ, պարոնայք պատգամաւորներ, և ձեզ հետ ժէկտեղ Հայաստանի բազմահազար քաղաքացիները, հայրենիքը վտանգի մէջ է: Հէնց այս րոպէին, երբ դուք քննութեան էք առնում հացի նօսրանները, քաւիւում է արիւնը հայ մարդու: Ղարաքաղի և Զանգեզուրի բարձունքներում: Ձկայ արդէն Բալլուխան՝ զարդը Խաչէնի, աւերուել է Շօշուն՝ գոհարը Վարանդայի, սրանուել են պատմական Գիւլիստանի չէն ու գեղեցիկ դիւղերը, չկայ անառիկ և հեքեաթային բերդն Ամգիկովկասի իր ողջ հայկական մասով՝ Շուշին, և, վերջապես, սքանչելի մէկ հառաջը հայ ժողովրդի. նա այսօր դտնւում է Քուրք-Քաբար եաբադանի տակ: Մ՚ւր է ձեր կամքը վճռական:

Հակառական բազմութիւն է արեւելքի ու արեւմուտքի. այդ բազմման մէջ երկու դերակատարներ՝ ռուսական բոլշեւիզմի և Քեռքեաիլի մասնաղեօքինեան ակնյայտ է, ակնյայտ է և այն, որ մեր հակառակ դերակատարը Քեռքեիան է, Քե՛ւրքեան, որ մեր ժողովրդի մի ամբողջ հառաջը գրեց հողի տակ:

Մեզ խոհականութեան և համակերպւելու դասեր են ուզում տալ՝ կարծելով, քէ այդ մասին մենք ոչինչ չգիտենք: Ո՛չ, այդ գիտենք քէ մենք և քէ մեր ողջ անցեալը: Հայ հասարակական զարգացման պատմութիւնն ընթացել ու դարձել է երկը ուժերի հզոր ազդեցութեան տակ: Այդ ուժերից մէկը համակերպատողների մեծաքիւ բանակն է եղել, որն ըմբռնացման և ընդվզումի սրբազան իրաւունքն այլոց վերապահելով՝ չարունակ իր միջն է ճկել ու չարունակ օրանուել: Ապա դեր է կատարել մեր կեանքում յրտնանքի, կատաստրների, դատաճանների ու կաշառածների փոքրաքիւ խումբակը, որը անդորձ հալածւել, հալածւում է ու պիտի հալածւի մեր միջից: Ե՛ւ, վերջապես, եղել է նաև մի ուրիշ բանակ, որը զարերի դատն փոքաբերից հնել է այն վերջնական և կուռ համոզման, որ հայ ժողովրդի մեծի փրկա-

Քիւնն իր խոկ կաղմակերպւած բազկի մէջ պիտի որոնել՝ խլուաձան ծովի մէջ։ Եւ այդ բացուկն էր մեռած, որ խլուաձի ամկնանոսում փրկեց հաճախական փոքրիկ մահուկին այն ժամանակ, երբ մեզնից շատ ուժեղ ազգեր Ասիայի պատմութեից ընդմիշտ և անհետ հեռացան։

Բայց մեքե՞ պաչքարելով մեզանից նաև չենք բանակցել։ Մեքե՞ հայ ժողովրդին աչքան է խելացնոր, որ գոհանալուսի մանի ամբողջ խոսք աչխատելի հետ։ Մեր պայքարի ամենադաժան ժամերին իսկ մենք բարեկամական ձեռք ենք մեզնել Թուրքիայեին և պիտի մեզնենք, քեչ փորձերը մեչտ եղել են ապարդիւն և ապարդիւն էլ, Հասանօրէն, դեռ պիտի մանն, որպեսզի հետեւ Թուրքիայի հետ լեզու գտնելու համար, նախ և առաչ, հզօր և յաղթական բազուկ պիտի գտնել։

Հ. Ց. Դաշնակցութիւնն այս քաղաքականութիւնեն է ահա ունեցել իր երեսնամեայ պատմութեան ընթացքում ամէն անգամ, երբ Հայաստանի և հայ ժողովրդի վրա սկսել է սաստանել Թուրքիայի ուրւականը։

Հայ ազատագրութեան պատմութիւնից մի էլ միայն մեզ պիտի յիշենեմ, որի հանդէպ ապագայ պատմագիրը կոյր հեացմունքի խօսք ունի ասելու, այլ բարոյա Զանգեզուրի Ազգային Ներկրի պատասխանն է հզօր Քրիստոնեայի ներկայացուցիչներին, երբ նրանք Բաքւի բրիտանական հրամանատարութեան կարգադրութեամբ ուզում էին զօրք մտցնել Զանգեզուր։

«Մենք գիտենք, պատասխանել յատուկ գրութեամբ Ազգային Ներհուրդը, — որ մեր յեսակից Քիւրք բանակն է գալիս Զանգեզուր, այդ պատճառով դուք միայն մեր դիակների վրայով կարող էք մեր երկրի սահմանները հոխել։ Քող որ ուչադրութեան, որ նաև Անգլիայի մեռքով հայ ժողովրդի արիւնը հոսեց, մենք մեզ կամովին մեր կեանքի ու հայրենիքը չենք յանձնիչ (ծանփեր)։ Այսպես էր Ղարաբաղի հայ դիւզացիութեան կամքն ու վճիռն Անգլիայի ժամանակ ու բնական է, որ այդպես պիտի լիներ նաև այսօր, երբ այդ հոգսաթաղ ժամերի արդէն զգոյշներէն զարձած Քիւրքիան է (ծանփեր)։ Բայց ամենից գաւեչտականն այն է, որ մեզ այսօր ռուսաստաց են անհանուժ։

Ի՞նչ էին ասում մեզ Ազրբէյճանն ու Վրաստանը ամէն օր, ամէն տեղ։ Հ. Ց. Դաշնակցութիւնը ռուսաէր է, ռուսաստանն է ուզում բերել Ազրբէյճան։ Այսօր Դաշնակցութիւնը դարձել է ռուսաստաց, իսկ Ազրբէյճանը՝ ռուսաէրը...

Չէ՞ զգում արդեօք, որ այս ծարր ու հեգնանք է պատմութեան հասցէին։

Դուք, պարոնայք հակառակորդներ, լաւ լսեցէք, մենք ոչ ռուսաստաց ենք և ոչ ռուսաէր, ոչ Քրքասէր ենք և ոչ Քրքաստաց։ մենք սիրում ենք հայ ժողովուրդը կոյր և մոլի սիրով, ամէն գնով պիտի պաչտպաննենք նրա գոյութիւնը և պատրաստ ենք բանակցելու ամենքի հետ, ով հաչտւում է հայ ժողովրդի գոյութեան և նրա հայրենիքի անկախութեան հետ (ծափահարութիւն)։

Տարիների քաղաքականութի՛ւն էք արդեօք որոշում դուք այսօր, երբ հայ ժողովրդի գոյութեան խնդիրն է դրւած հրապարակի վրա։ որոշեցէք ինչ կուզեք, բայց գիտցէք որ Ղարաբաղն ու Զանգեզուրը և այդպէս Հայաստանի ամէն մի հատւած դիտէ իր բախտը տեսրինել այնպես, ինչպես նրան իր առոդ բնագդն է հրահանգում։

Աատւածների, սրբութիւնների, դաղափարների ու դատաստանքների սրբապղծութիւնն է ամենուրեք։ Մ՛վ չէ վհատիլը այսօր։ տեսնել՝ և նուրբին, և Հայիլը, և Քեազիմը, և Հեմայը, և Սուլթանովը։ Գատաստանքի

ճանապարհին, յաճախ, խօսքերը ենթարկւում են խոր էւոլիւցիայի և մի բովանդակութիւնից մի բոլորովին այլ բովանդակութիւն ընդգրկում։ Այդ խօսքերից է մայրօրօս ժողովրդի մօտ նաև «красный» (կարմիր) խօսքը։ Մի ժամանակ նաև մայրօրօսը, երբ ուզում էր մէկին կարմիր անուանել, այդ ածականն էր գործածում, բայց վաղուց է, ինչ Ուկրաինայում «дурак» (յիմար) ասելու փոխարէն «красный» են ասում (ընդհանուր ծիծաղ)։ Ես այսօր չգիտեմ, թէ կարմիր ասելով ինչ պիտի հասկանայ, հաստատապէս գիտեմ միայն այն, որ այդ խօսքի տակ դաղափարական կոմունիստ չի թագնւած։

Մի քանի խօսք կուզէի ասել, մասնաւորապէս էսէրներին։ Որին է ձեր կարծիքներից ճշմարիտը, պարոնայք Էսէրներ։ այն, որ դուք արտայայտում էք գրսո՞ւմ, թէ՞ այն, որ մենք լսում ենք այստեղ։ Ամենայարգելի սոցիալիստ յեղափոխականը, որի նկարը կախած է ձեր ֆրակցիայի սենեակում, Դաշնակցութեան մոլի հակառակորդ է։ Աթաբէկեանը ձեր իսկ տպագրած վկայութեամբ ասել է. «երբեմն էլ ժխտական լինի մեր վերաբերմունքը դէպի Դաշնակցութիւնը, որքան էլ որ մեծ լինեն նրա մեղքերը հայ ժողովրդի առաջ, այնուամենայնիւ մենք չենք կարող չխոստովանել, որ նա ընդունակութիւն ունի անկէ դնելու հայ ժողովրդի գանգւածների գարկերակին, իսկ հայ ժողովրդական գարկերակը գերազանցապէս յեղափոխական է։ Եւ երբ ինքը Դաշնակցութիւնը կամենայ լինել ուժակիօն՝ յեղափոխական, հայ աշխատաւորական մասսաները կը խանգարեն դրան»։ Աթաբէկեանը յայտնում և յայտարարում էր, որ Դաշնակցութիւնը Մուսաւատ չէ, իսկ դուք այսօր խուժանավարօրէն այլ բան էք ասում։

Դուք այժմ ինչ որ ակնարկներ էք անում «հայ Քրքական» մեղադների մասին, բայց ինչո՞ւ աւելի անկեղծ չլինել և աւելի պարզ չխօսել։ Այնուհետ, դուք նկատի ունէք հայ Քրքական ընդհարումները, բայց չէ՞ որ դեռ մօտ 14 տարի առաջ ձեր իսկ կուսակցութեան կովկասեան ճիւղի ազգաբարեբեմբը այդ ընդհարումների մէջ Դաշնակցութիւնը բնաւ չէին մեղադրում։ Վերջապէս, ե՞րբ պիտի դադարէք երեք էսէրներդ երեք կարծիք ունենալուց։

Եւ ի՞նչ են ձեր այդ հառերը, պարոնայք էսէրներ, իշխանութի՞ւն էք ձգտում՝ խնդրում, դէմ չենք, բայց ով էլ ուզում է քող նստի այս օթեակում, միայն թէ օթեակում նստելուց առաջ նախ և առաջ ժողովրդի մէջ պէտք է նստի։ Մտէք ժողովրդի մէջ և ժողովրդի միջից նոր միայն բարձրացէք դէպի իշխանութիւնը (բուռն ծափեր)։

Բախտորոշ դէպքեր են կատարւում և մեր միակուռ, միակամ պայքարն է, որ պիտի դիմագրաւէ և փրկի մեր փոթորկած նաւը։ Մեր կառավարութեանը ասելու մի խօսք ունենք միայն — մեզ հետ է մաքառելդ հայութիւնը։ եղի՛ք աւելի ամրակուռ, աւելի համոզւած, որովհետև այլ դիր, քան դուք էք ընտրել, չկայ (երկարատև ազմկալից ծափեր)։

6. Բուդաղեանը դաշնակցական ֆրակցիայի կողմից առաջարկում է հետեւեալ բանաձեւը. «Լսելով արտաքին գործերի նախարարի զեկուցումը Ազրբէջանի կառավարութեան նօտայի և նրան ուղած պատասխանի մասին՝ խորհրդարանը հաւանութիւն է տալիս կառավարութեան ընթացքին ու միամժամանակ հրահանգում է նրան ձեռք առնել բոլոր միջոցները փրկելու հայ ժողովրդի գոյութիւնն ու ազատութիւնը»։

Բանաձեւն ընդունւում է 33 ձայնով։ Նիստը փակւում է դիչերւայ ժամը 12-ին։

ԳՈՒՆԻՍ 5–Ի ՆԻՍՏԸ

Նախագահում է Ա. Սահակեան։ Նիստին ներկայ է Նախարարական կազմը՝ նախարարապետ Հ. Օհանջանեանի գլխաւորութեամբ։ Ունկնդիրների մեծ ու պատշգամբը լեցուած է խուռն բազմութեամբ։ Նիստի ընթացքին խորհրդարան մուտ գործադրական անդրկովկասեան միասնայի նախագահ Դը Մարտէլը։

Նախագահ. — *Նիստը յայտարարելով բացուած՝ դիմում է խորհրդարանին հետեւեալ խօսքերով. «Ազգասէրների դաւաճէն մի[ք]ոցին խորհրդարանն ունեցաւ մի մեծ կորուստ՝ յանկին ամենից սիրած պատգամաւոր Հմայեակ Մանուկեանի. յարգենք նրա յիշատակը ոտքի կանգնելով» (դահլիճը յուզ ոտ[ի] է կանգնում)։*

Նախագահ. — *Խօսքը պատկանում է Նախարարապետին։*

Նախարարապետ Հ. Օհանջանեան. — *Պարոնայք պատգամաւորներ. Նախ քան երկրի վիճակի ու կառավարութեան գործունէութեան մասին տեղեկութիւններս տալը, ես կաւելտեմ մեզ մի ուրախ լուր. Հայաստանի հանրապետութիւնը, որ Հաշտութեան վեհաժողովի կողմից ճանաչուած էր միայն փաստօրէն, այժմ ճանաչուած է նաև իրաւօրէն (քուռն, երկարատեւ ծափեր)։ Մայիս 11–ին, այսինքն այն օրը, երբ Հաշտութեան պայմանագիրը յանձնուել է Տանկաստանին, վեհաժողովում, մեծ պետութեանց ներկայացուցիչների հետ, ներկայ է եղել նաև մեր հանրապետութեան պատուիրակ Ա. Ահարոնեանը, որ առորագրել է պայմանագրի տակ, որպէս ներկայացուցիչ իրաւազօր և անկախ հայկական պետութեան (քուռն ծափեր)։*

Մի ամիս առաջ առաջ, երբերի ամենածանր րոպէին դուք պատիւ սրբիք ինձ յանձնելու կառավարութեան դեկը։ Այդ ժամանակ Հայաստանն ալեկոծուած էր։ Ծայր էին առել զանազան խռովութիւններ երկրի ներսում, որոնց մեծ մասամբ ականատես եղաք անձամբ, իսկ մանրամասն նկարագրութիւնները կարդացիք կառավարական հաղորդագրութիւնների մէջ։ Երեւոյթի գլխաւոր պատճառների բացատրութիւնը չատ հեռու կը տանի մեզ։ Նոյնիսկ այսօր չպիտի կարողանանք էլտօրէն պարզաբանել նրանց էութիւնն ու բնոյթը։ Կառավարութիւնն արդէն ձեռնարկել է կազմելու մի յատկապէս յանձնաժողով՝ այդ ալեխառնուրդը վերապահելով նրան։ Բայց, այսօր իսկ, պարտ է ամենքի համար, որ Հայաստանն ապրում է տնտեսական ճգնաժամ՝ ամենամեծ տոիքն ընդհանուր դժգոհութիւնների։ Մի երկիր, որ ահա եօթ տարի է ապրում է պատերազմի արհաւիրքների տակ, որի ժողովրդի մեծագոյն մասը գաղթական է ու տեսական տնտեսութիւնից զուրկ, որ չունի արդիւնաբերութիւն և ըրամական կայուն արժէք, անխուսափելիօրէն պիտի ընկնէր տնտեսական ճգնաժամի մէջ և, դարձեալ անխուսափելիօրէն, պիտի ծայր առնէր այնտեղ ընդհանուր դժգոհութիւն, ինչ որ այժմ նաււլում է Հայաստանում։

Ժողովրդական զանգւածների այդ խուլ տրտունջը փորձեցին օգտագործել մի խումբ մարդիկ՝ բոլշևիկ անուն տակ։ Նրանք փորձեցին ժողովրդին ու զօրքին և խռովութիւններ առեղծելով՝ առաջ բերել պետական կարգի յեղաշրջում։ Նրանք ցանկացան Հայաստանում հաստատել խորհրդային իշխանութիւն։ Բայց, ինչպէս սպասելի էր, վհատեց նրանց ձեռքերն ու փորձը, որովհետև հայ ժողովուրդը, որքան էլ դժգոհ ներկայ դրութիւնից, համաստութիւն ունեցաւ ըմբռնելու, որ խռովութիւնները չեն

իրեն փրկողը· ժողովրդական առողջ բնազդը իր անկախութեան և ազատութեան, որ մեր պետութեան հիմնաքարն է, հանեց մեզ ծանր տագնապից։ Այդ բնազդը հայ ժողովրդին մղեց անձնազոհութեան, որի շնորհիւ և խնդութեան դասալքութեան փորձն ու պետութիւնը գերծ մնաց աւելի մեծ ցնցումներից։

Իր հետ ունենալով ժողովրդական այդ մեծ ուժը՝ կառավարութիւնը, մեր իսկ լիազօրութեամբ, ձեռնարկեց մի շարք միջոցների, թէ անմիջական կերպով չարժումը ճնշելու և թէ վերացնելու չարժման հիմնական պատճառները։ Անմիջական միջոց էր այն, որ խորհրդարանի անդամներն ու մտաւորական քաղաքացիները ցրուեցին գաւառները, ժողովրդի ու զօրքի մէջ, իրենց խօսքով պարզելու դրութիւնը։ Անհրաժեշտ եմ համարում չեշտել, որ մենք չատ բան պարտական ենք խորհրդարանի անդամներիդ այդ եռանդուն գործունէութեան։

Կատարուեցին մի քանի զօրական չարժումներ ցոյց տալու, որ կառավարութիւնը կանգ չի առնի ոչ մի միջոցի առաջ՝ ճնշելու այն չարժումը, որ ոտնահարում է ժողովրդի կամքը։ Թէ զօրքը և թէ կամաւոր մարտիկները գործում էին արագ ու կարուկ։ զօրական ուժերի ազդեցութիւնն այնքան մեծ էր, որ բանակը, գլուխ ունենալով զօրական նախարարին, ուղղակի էր դէպի խլտոումների վայրերը, ապստամբներն անմիջապէս հնազանդութիւն էին յայտնում, նոյնիսկ զօրքի տեղ հասնելուց առաջ։ այդ էր պատճառը, որ կարճ միջոցում, առանց արիւնհեղութեան, վերջացան խռովութիւնները։

Սակայն եղանք մի քանի չբնաններում յայտարարել գինւորական դրութիւն և կազմակերպել գինւորա-դաշտային ու արտակարգ դատարաններ, որոնց գործունէութիւնը դեռ չարունակւում է։

Մի քանի ձեռք առնուեցին երեսն հանելու խռովարարները։ այդ նպատակով կատարուեցին խոշոր ձերբակալութիւններ բոլոր չբնաններում, նաև մեր պաշտօնեաների մէջ։ Կառավարութիւնը համբերատարութեամբ ընդունել էր իր պետական պաշտօնների մէջ այնպիսի անձերի, որոնք իբր դաշնակցական հակառակորդներ կին՝ պայմանով, որ նրանք չմասնակցեն քաղաքական գործունէութեան։ Սակայն, չհաւատարմելով կառավարութեան հաւատն ու մոռանալով ուած խոստումը՝ նրանք դասանձնօրէն մտան խռովարարների չարքը։

Ճառով պէտք է ասեմ, որ խռովութեանց մասնակից էր նաև խորհրդարանի անդամներից մէկը՝ բժ. Արտաչէս Մելքոնեանը։ Նա ևևքանգրատութեամբ մեզ ապստամբներին, զբաղաս. ռազմա-յեղափոխական կոմիտէի անդամ և, իբր այդպիսին, մի չարք կազմակերպութիւններ արեց։ Կատարեալ ապացոյցներ նրա անձնամխիթարական քայլերի և միջոցների ձեռք առնու ձերբակալելու։ Այնպարակի մօտ ձերբակալուեց և երբ Երեան էր բերուում դասալքներին յանձնելու, Ճանապարհին փախուստի փորձ արեց ու պահակների ձեռքով սպանուեց։

Կառավարութեան ձեռք առած ընդհանուր միջոցներից ես պիտի յիշեմ դրանց հաց ներմուծելու աշխատանքը։ տնտեսական տագնապի գլխաւոր պատճառներից մէկն է հացի պակասը, որի առացման համար կառավարութիւնը ամէն ջանք գործ դրեց։ մի չարաբաղդ օրէնք հրատարակուեց երկրի հացը՝ կուսակցած մասնաւոր անձանց մօտ՝ հաւաքելու և չունեցողներին բաժանելու համար։

Բաբելաւից պետական պաշտօնէութեան ու բանակի նիւթական գրաւքիւնը, կազմակերպուածքն խօսափոխութիւնը, գրագրութիւնը, ակւանքնը, առաւելապէս երկաթուղային բանւորութեան համար։ Հոգացուեցին նաև Ծայրագաւառների տուր կարիքները, որոնց օգնութիւն հասցրինք քէ դրամով և քէ մթերքով։

Վերջին խլրտումները ցոյց տուին, որ պետական պաշտօնէութեան մէջ քոյլ է պետական հակացդուքիւնը, և նորնիսկ չատ չատերը միտնպատճառ գուրկ են դրանից։ Դրա պատճառներից մէկն այն է, որ պաշտօնէութեան մէջ տեղ են բռնել օտարազգի անձինք։ Այդ երեսոյթը վերացնելու համար, մի քանի ձեռք առնուեցին արագացնելու պետական հիմնարկութիւնների հայացումն ու ազգայնացումը։

Պակասւացիան, որ տեղական տագնապը ծնող պատճառներից մէկն է, հարկ եղած ուշադրութեան առնւեց և նրա դէմ կռւելու համար միջոցներ ձեռնարկուեցին։

Ընդհանուր դժգոհութեան պատճառներից մէկը կարելի է համարել նաև հոգագրկութիւնը։ Թէպէտ մենք ունէինք հոգային կոմիսէներ, բայց նրանց գործունէութիւնը որևէ արդիւնք չէ տւել։ կառավարութիւնն ընդունեց նոր օրէնք՝ հոգային խնդիրները չաւտով կարգաւորելու համար։

Բանակի կարիքները հոգալու և դժգոհութեանց առիթները վերացնելու համար ձեռնարկուեցին և գործադրութեան համապատասխան միջոցներ։

Ընդհանուր ֆինանսական կացութիւնը փրկելու համար հաստատուեցին 20 միլիոն դոլարի արտաքին և ներքին փոխառութեան օրէնքը՝ յանուն Հայաստանի անկախութեան։

Հայաստանում ծագած խռովութիւնները բացատական հետևանք պիտի ունենային և, մասամբ, ունեցան հայկական հարցի նկատմամբ՝ արտաքին ազեցութեամբ։ Ձիշտ այն օրը, երբ պետի յանձնւեր Տաճկաստանին հաստատութեան պայմանագիրը, նոյն ատան հակապետական յարձակումները մեր երկրի ներսում, իսկ դրանից առաջ, դեռ մայիս 6-ին, Գոլտից փարիզ խրած հեռագրով յայտնել էին, թէ Հայաստանն արդէն բնակնւել է խորհրդային իշխանութիւն ու բաժանւում է Թուրաստանի և Տաճկաստանի միջև։ Այս միտումաւոր լուրերի խնդական նպատակը պարզ է։ մեր հակառակորդները ցանկացել են դրանով վերացնել պայմանագրի դէմ Հայաստանին վերաբերող մասը։ Միջոցներ ձեռք առնւեցին, ի հարկէ, հերքելու սուտ լուրերը, որի համար և արտասահման առաքւեց մեր ընկերներից մէկը։

Բացատական հետևանքներից մէկն էլ կարող էր լինել բանակի քայքայումը, որ միանգամայն ձեռնտու էր մեզ օգնած թշնամիներին, սակայն, ուրախ եմ յայտնելու, որ ոչ միայն տեղի չունեցաւ այդ, այլ առաջնակից ուժի գոյաւս, ուժի աբերուն՝ զօրքը պատրաստ է դիմադրելու քէ ներքին խռովութիւններին և քէ արտաքին յարձակումները (երկպատուկ ծափեր)։ Մոլորւածները գղջացին ու միացան հաւատարիմ զօրքին։

Ինչ վերաբերում է արտաքին աշխարհին, պէտք է յայտնեմ, որ մայիս 11-ին ներկայացած հաշտութեան պայմանագրի համաձայն Տաճկաստանը պարտաւոր է ճանաչել Հայաստանի անկախութիւնը և ընդունել այն սահմանները, որ կը դնէ Վիլսոնը։ Թէպէտ պաշտօնապէս մեզ ոչինչ յայտնի չէ, բայց լրագրական տեղեկութիւններն ասում են, որ ամերիկեան անհատը հաւանութիւն չէ ունէ Վիլսոնի միջամտութեան։

Մեզ անհայ ընթացքում ոչ մի փոփոխութիւն չեն ենթարկւել մեր յարաբերութիւնները Ադրբէջանի հետ։ Ինչպէս դիտէք, մենք ուրիք համա-

ձայնութիւն Ղազախ քաղաքում բանակցութիւններ սկսելու, սակայն, նրանցից այդ առթիւ որևէ պատասխան չենք առացել ցայսօր:

Վրաստանի հետ մեր յարաբերութիւնները բարեկամական են:

Մեծ պետութիւնների վերաբերմամբ մեր քաղաքականութիւնը մնում է նոյնը:

Գարեկաստանի հետ չարունակւում են բարեկամական յարաբերութիւնները. մեր ներկայացուցիչ Ց. Արզուքեանին հրաւիրած է մշակել ընդհանուր համաձայնագիր երկու պետութիւնների միջև, որը ստանալուց յետոյ կը ներկայացնենք խորհրդարանի քննութեան:

Վերջում կարդում է այն բոլոր օրէնքների ու վարկերը, որ խորհրդարանի լիագօրութեամբ հաստատել ու բաց է արել նախարարների խորհուրդը:

Նախարարապետի ճառը ծածկւում է բուռն ծափահարութեամբ:

Որոշւում է քննութեան առնել նախարարապետի զեկուցումը, որից յետոյ աղմկալից, երկարատև ծափերի տակ ամբոխն է բարձրանում պատգամաւոր Ն. Ազրալեանը:

Ն. Ազրալեան. — Գարոնայք պատգամաւորներ, Հայաստանի հանրապետութեան նոր կառավարութիւնը հանդէս եկաւ արտակարգ պայմաններում: Այդ պայմաններից գլխաւորն այն էր, որ մեր հարեան տէրութիւններից մէկն ունեցաւ յանկարծական փոփոխութիւն, յայտարարեց իրեն մեծամասնական և անմիջապէս մի մարտահրաւէր ուղղեց Հայաստանի հանրապետութեան, որով զգացնել տւեց, թէ իր խնդիրը բոլորը փոխած չէ, թէ իր կերպարանքը ուրիշ բան է գուշակել տալիս:

Երկրորդ հանգամանքն այն էր, որ մեծամասնական չարժման ազգեցութիւնը տարածւեց նաև Հայաստանում և ինչ-ինչ մարդիկ զանազան վայրերում փորձեցին վարից առալ բերել նմանօրինակ փոփոխութիւն: Ես անհրաժեշտ եմ համարում մատնանշել այն վերաբերմունքը, որ ունէր կառավարութիւնն ու զեկավար կուսակցութիւնը հանդէպ մեծամասնականների:

Մեր երկիրը՝ հաւատարիմ ռահվիրայ կարգերին՝ գործով ցոյց տւեց, որ կուզ լինել այսատարան իրենց դաղափարի համար հայածանքի ենթարկւած մարդկանց. Դենիկինի յաղթութեանց հետևանքով հայածւած մեծամասնականները՝ հալածւելով նաև Վրաստանում՝ ապաստան գտան հայերի մօտ:

Կառավարութիւնը նրանց ընդունեց, գործի դրեց, ապրելու հնարաւորութիւն տրամադրեց, մինչև որ կը փոխւէին քաղաքական պայմանները և կարող կը լինէին վերադառնալ իրենց տեղերը: Սա մի տուրք էր, որ տալիս էր կառավարութիւնը, մի պարտք էր սա, որ հատուցանում էր զեկավար կուսակցութիւնը՝ դաղափարի համար հալածւածներին, որովհետև ինքն էլ յաճ էր հալածւել: Բացի այդ, հալածեալները մեծագոյն էին, նրանք չէին կարող Վրաստանում և դենիկինեան Ռուսաստանում յաւ վերաբերմունք գտնել: Բայց մենք ամենքս այն համոզման էինք, որ այս մարդիկ գալով այստեղ, ստանալով ապրուստ՝ իրենց հմտութիւնը կը գործադրեն իրենց ժողովրդի օգտին: Նրանք այդպէս էլ խօսք տւած էին. ասել էին, որ Հայաստանը իրենց համար մի կայան է, երբ կը պարզուն հանգամանքները, այստեղից կը հեռանան: Եւ ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, որովհետև նրանց համար պարզ էր, որ Հայաստանում տերում է մի կուսակցութիւն՝ ասելի հին և ասելի հմուտ, քան իրենցը:

Սակայն, այն հանգամանքը, որ հարևան Ադրբէյջանում յանկարծակի յեղաշրջում կատարուեց, պատճառ եղաւ նման փորձ կատարելու նաև Հայաստանում։

Մենք չատերի հետ խօսելով ցոյց էինք տալիս, որ Հայաստանի ղեկավար կուսակցութիւնը քոյլ չի տայ, որ նրանք այստեղ քաղաքական գործ խաղան, որ երբեք չմոռանան, թէ կարող են քաղաքական բնոյթ ունեցող գործի ձեռնարկել, բայց նրանք կարծեցին, թէ Հայաստանի ղեկավար կուսակցութիւնը մեռած է։ լինելով մտահոգ հայ ժողովրդի պաշտպանութեան խնդրով՝ չի հետևում նրանց քայլերին։ կարծեցին թէ նա կապացոյց է և չունի այն կորովը, որ հանդէս է բերել տասնեակ տարիների ընթացքում։ Մի ծանր հանգամանք նպաստեց նրանց յանդուգնութեանը։ Հայաստանի կառավարութիւնը՝ ցանկանալով օր առաջ մեր երկիրն ազատել օտար պետութեանց վարկաբեկիչ խնամակալութիւնից՝ իր հացի պայմանը փոխանակից տերտղուհի հետ։ Իրա հետևանքն եղաւ հացի ճգնաժամը և իբր արդիւնք վերջինիս՝ ժողովրդի խուլ դժգոհութիւնը։ Այս հանգամանքը նրանք համարեցին լաւ հող՝ ցանելու իրենց խռովութեան սերմերը։ Բայց որովհետև հասատ չունէին ժողովրդի մէջ և չունէին հետևորդներ, ընտրեցին կուսակ աշխոյհի միջոց, որ, թէպէտ, անարժէք էր ինքնին, բայց կարող էին ժամանակաւոր չափով առաջ բերել։ Նրանք դիմեցին ատի և խաբէութեան՝ տարածելով լուրեր, որ իբր թէ Լենինը 150,000 փութ ալիւր է ուղարկում Հայաստան, որ 10,000 մեծամասնական զօրքեր Նախախ վրայով գալիս են դէպի մեզ, որ մեր որբերը կուղարկուեն Կուբան՝ ինամելու Ռուսաստանի հաշուով և այլն, և այլն։ Այս ատերով նրանք աշխատեցին յուզել ժողովրդի միտքն ու պաթոտացնել դժգոհութեան հողը։

Իսկ ո՞վքեր էին այդ չարժման ղեկավարները։ Նրանց մէջ կային անարժէք, մարդկային արժանապատուութիւնից միանգամայն զուրկ մարդիկ՝ գողեր, ասպգակներ, վատնիչներ։ Ահա մեզ մի օրիորդ՝ կաթսի մեծամասնական՝ գող գեռ աշակերտական նստարանից, մի ինչ որ ապոյ Զէյնեան՝ թալանչի և վատնիչ գնդի դումարի, մի Տէր Գրիգորեան՝ գող ամերիկեան որբանոցային պահեստի։ Այսպէս՝ գողեր, ասպգակներ, սրիկաներ, և խաթեթաներ հաւաքուել էին այդ չարժման չուրջը՝ կարծելով, թէ նորից դէրքի կը տեղանան ու կը չարունակեն իրենց չահատակութիւնները։

Որովհետև անարժէք էր նրանց կուռ միջոցը, որովհետև ղեկավարների 90 տոկոսը պարզ գողեր էին, ուստի չարժումը վիժեց խայտառակ ձևով և պատգամաւորական ժողովը չի կարող համարուել գաղափարական և դէպի նա մենք կարող ենք միայն զգալ ու արհամարհանք տածել։ դա ոչինչ չարժում էր և գործով ապացուցեց իր ոչնչութիւնը։

Ամենից հետաքրքրականն այս չարժման վախճանի մէջ այն է, որ նրան վերջ տուեց հայոց ժողովուրդը։ զօրքն իր գլուխը կորցրած էր։ ոմանք դաւաճանեցին, ոմանք ատատնուում էին, ոմանք անտարբեր էին։ անպէտք դուրս եկաւ պաշտօնկութիւնը։ Միայն ժողովուրդն էր, որ ցուցահանեց առողջ բնագդ, առողջ ըմբռնում և առանց դէնքի ձնշեց խռովութիւնը։

Մեծ էր ժողովրդական ցասումը։ թէպէտ քոյլ են մեր հաղորդակցութեան միջոցները, թէպէտ չունենք, անգամ, քուղթ տպելու ամէն բնչ և տարածելու ժողովրդի մէջ, բորբոքելու միտքն ու պաշտառացնելու գիտակցութիւնը, բայց և այնպէս, զարմանալիօրէն միանեակ տածծման, միտեակ զգացման և կամքի մրութեան հետևանքով վերջ տուեց խայտառակութիւնեանը։

Այդ ցասումը զարմանալի ուժով երևան եկավ. Ավերածությունից վրա էին գնում զինվորները ամեն կողմից՝ գիշեր, անգին, հեծնել և հետևոնե՝ ձիչելու չարժումը, առաջ բերած Ազրբէջանին, Տաճկաստանին և Ռուսաստանին վաճառած մարդկանց ձեռքով։

Որքան ողորմելի էին չարժման հետևորդները, նույնքան և ատելի ողորմելի ու սուր էին զինվարները, և հայ ժողովուրդը, քէպէտ անտանական ճնշումների մէջ, ցույց ուեց, որ չի կարող հանդուրժել գոզերի ու սրիկաների գաւազրութիւնը։ Ժողովրդական այդ մեծ ցասումը բուռն արտայայտութիւնն էր նրա ցանկութեան՝ անկախ լինելու և վճռական կամքի՝ հաւատարիմ նրանց, ովքեր փորձ կանեն վտանգել իր անկախութիւնը (խոսնդավառ, դրոտալից ծափեր)։

Անհերքելի է, որ խորհուրդի զինվարները, ազգով հայ, յարաբերութեան մէջ էին Տաճկաստանի և Ազրբէջանի հետ. և Բոլոով իրենց սկզբունքների վրա՝ գոլիս էին հրով ու սրով ճնշելու ինքնորոշուած Հայաստանի անկախութիւնը։ Բայց հայ ժողովուրդն ուզում է լինել անկախ և բացի այդ, Միացեալ Հայաստանի անկախութիւնը պաշտպանում է նա բոլոր միջոցներով, բոլորի դէմ (խանդավառ, աղմկալից ծափեր)։ այդ փաստը մենք տեսանք։ Եթէ մենք այժմ կարծում էին, թէ այդ գաղափարները զինվար կուսակցութեան յղացումն են միայն, թո՛ղ այժմ տեսնեն, որ համայն ժողովրդի ցանկութիւնն է այդ և ոչ Յ. Դաշնակցութիւնը ճշմարիտ ձևակերպել է հայ ժողովրդի իղէալը։

Մենամանական չարժումը ունեցաւ բուռիչ հետևանքներ։ Նա բացեց մեր ռամկավար աչքերը։ չատերը պատրանքներ ռամկավարութեան տեսարանի բոլոր ակզրունքները, բայց չարժումը ցոյց ուեց, որ մեր երկրի օտար տարրերը հաշտուած չեն, չեն հաշտուի նաև յետագայում Հայաստանի անկախութեան մտքի հետ և ոչի ի բոլո պէտք է պատրաստին նրա դէմ։

Մենամանականները առաւելապէս յենվեցին այն տարրերի վրա, որոնք իրենց յետին նպատակներով դէմ էին մեր պետական կազմին. առաջին նպատակն այդ գաւադրիների չարքում կազմում էին ոուսները, որ այս գերազանցօրէն ռամկավար երկրում հանդիպանում են ազնականներ. հողեր ունեն աւելի, քան թէ կարող են մշակել, աւելորդ հողաբաժիններ տալիս են հայերին մշակելու՝ չահադրծելով աշխատանքն ու կլանելով արդիւնքը. և Հայաստանի կառավարութիւնը հանդուրժում էր դեռ այդ ազնականութիւնը, չէր դիպչում նրանց. բայց նրանք, իրենց ազնականութեան օրերը չամրած են տեսնում և միանում են դաւադիրներին։ Դուք գիտէք, որ ոուսական տիրապետութեան ժամանակ հայ գիւղացին իրաւունք չուներ խնդրու մէջտեղով տալլը քշելու, նրան Թոգած էր խնդրու մէկ եքթորդ մասը. այժմ յուզում են նրանք, երբ տեսնում են, որ հայը չէ թէ տեսնի, այլ իրենց հասարար օգտում է Հայաստանի խնդրներից։ Լսելով, որ կարծիր գործերը գալիս են Ազրբէջան՝ նրանք բոպէն յարմար գտան, տագնապներին, որպէսզի բերեն Ռուսաստանին և վերականգնեն իրենց արտօնութիւնները։

Թիւրք ժողովուրդն ևս հաշտուած չէ Հայաստանի անկախութեան հետ. եթէ վերջնում է այս երկրում ոուսների տիրապետութիւնը, ապա պիտի վերջնայ նաև հայի տիրապետութիւնն ու հաստատուի իրենցը։ Ինչպէս կարող են նրանք հանդուրժել տիրապետութիւնն այն հայի, որին մորդու տեղ չէին դնում և որին կոտորել գիտէին միայն։ Այս էր նրանց մտայնութիւնը, որ երբեք փոխուած չէ և փոխելու տրամադրութիւն ցոյց չի տալիս։

Ցոյներէն մտանակցութիւնը պատերազմական հետևանք է. դիւրը պիտի տան, և ահա մէկդմէ ազատելու գրանքը՝ ազատել հայերի սէրա-պետութենէն:

Օտարները չեն յօժարում հրաժարել սեփականի և արտօնեալ դասնալու մարդոցից: Նրանք ցանկութիւն ունեն ապրելու այստեղ անաչխատ, հայրենիքի պաշտպանական գործին անմասն, և միայն հայն է, որ պիտի առատապէս, պիտի տքնի ու արիւն թափէ՝ հայրենիքը և հայրենիքի մէջ այդ օտարների կեանքը պաշտպանելու համար. նրանց մտքից դեռ չեն դնացել մտքեռ տոքրեքութիւնները, հայը նրանց աչքում հալատակ լինելու. աբժանի մի ժողովուրդ է: Եթէ սա դեմոկրատական հանրապետութիւն է, ապա պիտի դիմազը պաշտպանէ այս երկիրը. եթէ ապրում են այստեղ, ապա պիտի մասնակցեն տատապանքին ու երկրի պաշտպանութեան գործին: Իսկ եթէ կան ժողովուրդներ, որոնք մեր տատապանքն ու մեր կռիւը համարում են անհարկութիւն, եթէ կան այնպիսիք, որ դեռ չեն հաշտւում հայաստանի անկախութեան հետ, ապա ճանապարհը բաց է, կարող են գնալ (ռպմիպայիք, բաւն ծպահեր): Պէտք է յայտարարել այդ անհրաժեշտորէն, որովհետև նման մտայնութեամբ ու վերաբերմունքով նրանք թշնամի են մեր թիկունքում: Հայ ժողովրդի գերագոյն գժբախտութիւնն այն է, որ նա ունեցել է բազմաթիւ ճակատներ. այսօր նրա գերագոյն խնդիրն է ունենալ մի ճակատ: Թիկունքում թշնամի ունենալու պատճառով է, որ մենք քողինք երգնկան, քողինք Կարինը, Ալէքսանդրապոլը:

Մենք կռւում ենք, կը կռւենք էլի տասը տարի, բայց մեր թիկունքում գործող չարեաց լինի՛ն և քող իմանան, որ մենք անողոք կերպով կը ջախջախենք այն բոլոր տարրերին, որոնք այսուհետև կը փորձեն թիկունքից գործել մեզ (ոթռտրնդաատ ծպահեր, խտնդաղատ գայլեր):

Մեհամասնական խաչագողութեան ոչնչացումը այս հոգեբանութեան արգիլքն էր, ուստի, ով կը լսի իմ խօսքերը, քող լսարմանայ: Ամենից առաջ մենք գիտենք մեր ժողովրդի տատապանքները: Ամենից աւելի մենք ենք լսել նրա հեծեծանքը, մեռնողների վերջին հառաչը, հազարաւոր այրերների ու որբերի աղիողորմ կանչը. այդ մենք գիտենք, տեսել ենք ու լսել, բայց պէտք է պարզ լինի մեզ համար մի տեսակէտ. արդեօք, եսասէր նման մենք պէտք է ծախե՞նք մեր անդրանիկութիւնը ոսպէ սպուրով: Կան խնամատարներ՝ իրենց քաղաքական համարող մարդիկ, որոնք կարծում են, թէ ազատութիւնը ծախել խնամատարին է կուչտ փորի գնով: Պարզ պիտի լինի մեզ համար, թէ արդէ՞ք որ դաստաբանները այսքան, պէտք է, որ մեր գաւակները մահանան քաղցից ու հանգիստ գոնեն ռամկի դաշտում: Ժողովուրդը արդէն պատասխանից այդ հարցերին, այժմ հերթը հասել է մտատրադանութեան, ու չեմ կասկածում, նա ևս պիտի ասէ թէ դիպաչատում է լինել մերկ, լինել քաղցած, բայց ազատ ու անկախ (երկարատև, խամդաղատ ծպահեր):

Ազգերի ազատութեան գաղափարը բարժանական հակազդեցութիւն չէ, ընդհակառակն են մի ջանի խնամատարներ. ազգերի ազատութիւնը կը նշանակէ աշխատանքի ազատագրութիւն; երբ մենք հպատակ էինք, մեր աշխատանքն էր հպատակ, ուստի ամէն մէկ ռամկավար պէտք է հասկանայ, որ Հայ ժողովրդին ազատելով ռուսական լծից՝ ազատած կը լինենք Հայ ժողովրդի աշխատանքը ռուս ժողովրդի չահագործումից: Իսկ երբ մենք պաշտպանում ենք մեր ազատութիւնը Թուստատանի գէմ, կուզ այն լինի բարբիկեան, ցարական, թէ ռամկավարական, կը նշանակէ պաշտպանում ենք Հայ ժողովրդի աշխատանքի ազատութիւնը:

Մեծ ազգերը փոքրերի հանդէպ դրամատէր են բանւորի հանդէպ. անհամատ բան է բանւորի չահի պաշտպանութիւնը թողնել դրամատէրերին: Անկախութիւնն ու ազատութիւնը այն միակ գէնքն է, որով հայ ժողովուրդն իր աչխատանքը կարող է պաշտպանել օտար ժողովրդի չահագործումից:

Եթէ մենք անկեղծ սոցիալիստներ ենք, ապա պիտի կռնգնենք Հայաստանի անկախութեան տեսակէտի վրա (ազմկալի ծափահարութիւն):

Հողային հարցերը, տնտեսական ճգնաժամն ու դժգոհութիւնը, ի հարկէ, անցողիկ են. այժմ կառավարութեան հիմնական նպատակը պիտի լինի հանել հայ ժողովրդին այս մութ գուբից դէպի լոյս աչխարհ, որ վերջանում է Բաքումում և Ջուլֆայում (ցնծալից, որոտագին ծափեր). *աչխատեց մենք ձնդ կը մեկնենք բարեկամ Պարսկաստանին և ազատ Եւրոպային: Թանի մենք մնանք ներկայ դուրի մէջ, դժգոհութիւններն անպակաս կը լինեն, իսկ դրա լուծումը ոչ քէ հրաժարելն է մեր ազատութիւնից և անկախութիւնից, ո՛չ քէ ձուլելն է մի մեծ պետութեան հետ, ո՛չ քէ պետական յեղաչրջումն է, այլ այն, որ մեր անկախութեան և ազատութեան գրօչը տնկենք Բաքումում և Ջուլֆայում* (երկարատև, ազմկալից ծափեր):

Վերջապէս, մենք պիտի ազատւենք օղակից, պիտի չունչ քաչենք ու ապրենք մարդավարի: Ու քանի որ մեծամասնական չարժումն էլ ունայի բարձրացրեց ժողովրդի տրամադրութիւնը ի նպաստ իր անկախութեան, քանի որ նա եկած է քաղաքական գիտակցութեան, կառավարութեան պարտականութիւնն է կազմակերպել, հզօրացնել նրա ուժերը և խորտակելով քաղաքական ասանուէրիտներին՝ հանել նրան լոյս աչխարհը:

Այս ամենից յետոյ, մեր կառավարութեան բոլոր ճնռնարկած միջոցները, անշուշտ ես, համարում եմ նպատակայարմար և քնում է, որ նա պէտք է չարունակէ իր գործը նոյն ուղղութեամբ:

Միաժամանակ, կառավարութիւնն այսուհետ վկայից, որ մեծամասնական չարժման հաչւեչարդարի ժամանակ խոչոր դեր խաղացին խորհրդարանական անդամները. դա բնական ընթացքն էր խորհրդարանի, ժողովրդի ընտրեալները վտանգի ժամին ժողովրդի մէջ պիտի լինէին: Բայց որովհետև դեռ հանդիստ չէ գտել հայ ժողովուրդը, դեռ լուծուած չէ չարաքաչտիկ հարկական հարցը, վտանգը դեռ կախուած է մեզ վրա ու ժողովուրդը իր հողի տերը չէ, մենք՝ ընտրեալներս՝ պիտի չարունակենք մնալ ժողովրդի մէջ, պիտի կազմակերպենք նրան՝ յաղթականօրէն դիմագրաւելու մեզ վրա եկող արհաւիրքները. չէ՞ որ հին գաչլերը դեռ դարանում են այս ու չէնքերի՝ մէկը հարաւից, միւսը հիւսիսից:

Թող ամէնքը չարունակեն իրենց գործը՝ կառավարութիւնը այսուհետ, պառդամատրները ժողովրդի մէջ. ես խորին հաւատ ունեմ, որ կանցնենք այս փոթորկութիւնները:

Դրան ապացոյց 1919 և 1920 թուականները. անցեալ տարի մենք ճահճումն էինք, այս տարի ապրում ենք, իսկ եկող տարի կը տեսնենք Հայաստան անվիճելի, միացեալ, անկախ և ազատ (ցնծագին, որոտընդոստ ծափահարութիւնների տակ պատգամաւորն իջնում է ամբիոնից. ծափահարութիւնները շարունակւում են երկար, որ վերջում փոխարինւում են խոնդավառ ցոյցերի):

Նախագահ. — *Պարոնայք պատգամաւորներ, այսօր մեր մէջ է գըտնւում ֆրանսական անդրծովեայն մեսիայի նախագահ Դր Մարտէլը: Նրա երեւոյն այս օրերում չատ նչանակալից է. ֆրանսական ներկայացու-*

ցիչն առաջին անգամ եկավ այն ժամանակ, երբ Հայ ժողովուրդը ցնծությամբ ոտնում էր իր անկախության երկրորդ տարեդարձը, և այժմ, երբ լուծում է Հայկական հարցը: Հայ ժողովուրդը համաշխարհային այս պատերազմի ընթացքում ու դեռ նրանից շատ առաջ տուել է բազում զոհեր յանուն ազատության և ազատության. այսօր նա, իբր փոքր դաշնակից, հանդիսանում ներկայացուցչի իրավունք ունի պահանջելու, որ իր դատը արդար լուծում գտնի: Հայկական հարցը դաշնակից պետությանց համար պատւի ու խղճի հարց է, և Հայ ժողովուրդը երբեք չէ Քերահասւտել, որ դաշնակիցները արդարությամբ և համաձայն խղճի Քելագրանքի կը լուծեն այս տառապեալ ժողովրդի դատը: Ազնի՜ւ գեղեցիկ, ազատասէր Ֆրանսայիս, յանձին իր ներկայացուցիչ Դը Մարտէլի:

Հորդրդարանը բուռն ծափահարությամբ ողջունում է Ֆրանսական ներկայացուցչին, որը չնորհակալութիւն յայտնելով՝ կարդում է հետեւեալ ճառը.

Պարոնայք, քանի որ ինձ վիճակուած է ներկայ լինել մեր խորհրդարանի այս նիստին, ծոյլ ունէք ներայրական ողջոյնը հաղորդել մեր Ֆրանսական ժողովրդի, որ միշտ ուշադիր է և չափազրուած այն միտքի հանդէպ, որ գործ են դնում ազգերը քաղաքակրթութեան և յառաջդիմութեան յաջաիս ծանր ու դժւարին ճանապարհով վեր մագլցելու գործում:

Պատերազմն եղաւ երկար ու դժւարին: Մեր Քշամին, երկար ժամանակով նախապատրաստուած, հակառակ նրան հասած անընդհատ հարւածներին, չէր ուզում գիջել: Համաշխարհային տերապետութիւն ստեղծելու խելագար վազքի մէջ՝ նա չուսումնասիրեց կոչ անել ամենավատ բնազդներին բոլոր նրանց, որոնց համար մեր քաղաքակրթութիւնը խորտակելը հերքեան մի խորհրդանշան դարձաւ:

Ուրախալով գոլսում է նպաստ փոքրամասնութիւնների մինչամտութեան հնաւանդ քաղաքականութիւնը՝ գերմանական իմպերիալիզմը չսասանուեց մեղադիր դառնալ Իւլամին, որի կամքին էր ծոդնում, առանց պայմանի, այնքան դաժանօրէն տանջած ժողովուրդներին:

Հայ ժողովուրդը 250,000 դիւնոր ուսւական ճակատն ուղարկելուց յետոյ, չսասանուեց ամրողջովին ոտքի կանգնել: Մենք ունէինք արդէն բազմաթիւ համաւորներ մեր օտար լեգիոնի մէջ. մենք տեսանք, Քէ ինչպէս հայկական մի լեգիոն քաղուքեամբ կուռւէ էր մեր գենւորների հետ կողք կողքի:

Գերմանական պարտութիւնից և խաղաղութեան դաշն կնքելուց յետոյ էլ համաշխարհային պատերազմը դեռ խպատ չէ վերջացած: Քիւրքը չէ ուզում ընդունել իր անյաղողութիւնները և փորձում է դեռ զուր ձիեզերով փրկուել իր անխուսափելի ճակատագրից:

Ձեր գենւորները գնդքը ձեռքին տսխւած էին միչտ պաչպանելի Հայաստանի հողը և պաչքարել նրա անկախութեան համար: Բայց վախճանը ժամ է, և Թիւրքիան անխուսափելի ճնշման տակ պիտի խոնարհի յաղթող դաշնակիցների որոչակի պատչայտած կամքի առաչ:

Շուտով մի պրչալոյս կը ծագի Հայաստանի համար, որը, վերջապես, պիտի յոգոնակաչ ամրանալ խաղաղ կեանքով և աչխատել իր գիւղերը վերաչինելու և մխիթարութիւն կոտրածեների փչացած և իրենց օճախներից վտարուած ազգաբնակութեան:

Մենք գործ է կատարած, պարոններ, և մինչև նպատակի իսպառ իրագործելը բարի ցանկութիւնները չաս չպիտի համարել: Իրականութիւնը արհամարհելով չէ, այլ ընդհակառակը նրա ճակատին չնչտակի նայելով

պիսի մտածելու. անպատկառ տեսական վիճաբանություններով չէ կարելի հասնել ապրանքի պրօբլէմի վճռին. կատարել, ապերազանց, բայց յամառ աշխատանքով նպատակին հասնելու երաշխիքն է մեծ բեռնատարը:

Հայաստանը, պարոններ, արդէն ցոյց է տուել իր կենսունակութեան ապացոյցները. ես յոյս ունեմ, որ մեր հայրենասիրական ջանքերը լաւագոյն պսակները կը յաղթահարեն:

Ցնծութեամբ, որ Հայաստանի սահմանները ազդրնկերով որոշուած են, իր աշխարհագրական վիճակը դեռ վերջնականապէս կազմաւորուած չէ:

Գաղթաշրջի ժամանակ բոլոր գաղնիկներէն ջանքը ուղղուած էր մեծնալ նպաստակին, պահանջում էր յուսոյ վճիռ:

Թէև խաղաղութեան հետ միասին, հակառակ նրա կայուն ու անդրադարձ հիմունքին, մենք տեսնում ենք երբեմն տատանումներ և գանազան չահերի տեսակէտից բղխող տարբերութիւններ, բայց դուք գիտէք, որ Ցրանսան մեր հետ ունի պայմանն է, որ երբէք իր բարեկամութեան մէջ չէ թերացել: Մեր ընդհանրական խորհրդի հովանու տակ դուք վստահ կարող էք լինել, որ դեմոկրատ Ցրանսան միշտ ջերմօրէն կը պաշտպանի հայ դեմոկրատիայի գաղը:

Կեցցէ Հայաստանը:

(Ցրաճառկում ձերիկայացուցչի ճառը ծածկուում է բուռն ծափահարութեամբ):

Ակնհայտ խօսք է տառնում պատգամաւոր Եր. Մաթեսաիտնանը. — Մի տարի առաջ այսօր, պարոնայք պատգամաւորներ, Թաղնում էինք խորհրդարանը ծանր մղձաւանջի տակ՝ խորհելով, թէ արդեօք պիտի կարողանանք դուրս գալ մեր երկրի համար առեղծուած նոր վտանգից: Այսօր եկել ենք այստեղ և լսում ենք կառավարութեան հաղորդագրութիւնը, որի համաձայն մեր կառավարութիւնը կարողացել է փրկել երկիրը այդ վտանգից, այս խորհրդարանի գործնական ակնկալութեամբ:

Ասել չէւնում վաստիգ և նրա դէմ ձեռք առնուած կարուկ միջոցների մասին, այդ նշանակում է հաչւելապարարը կատարել անցնող մի տարուայ համար և նոր գործի սկսել՝ այս անգամին ևս կառավարութեան տալով լրիւ ազատութիւն, նրա ձեռքերը ազատել կաչկանդումներից, քանի որ գտնում ենք, որ մեր երկիրը դեռ պէտք ունի անհրիչական, կարուկ և գործնական քայլերի:

Այդ վստահութիւնը յայտնելով կառավարութեան՝ չմոռանք, սակայն, այս խորհրդարանի իրաւունքն ու պարտականութիւնը. մի անգամ էլ անդրադառնալով անցեալին, վերլացող տարուայ իրադարձութիւնների իրական պատճառներին և այդ բոլորը նկատի ունենալով, կատարենք մեր պարտականութիւնը, պարտադրենք կառավարութեանը կատարելու մեր կամքն ու քննդրանքները, և այդ բոլորի գործադրութիւնները ձգտենք հասնել նրան, որի համար աշխատել ու գոհուել են անցեալում և որի իրականացման համար մենք եկել ենք այստեղ:

Գ. Նախարարապետը խօսեց ու մանրամասն տեղեկութիւններ տուաւ քրեից կատարուած մասին. նա կարդաց նաև այն օրինագծերն ու վարկերը, որոնք տահմանել են մարիս տարի ընթացքին կառավարութեան միջոցներով՝ զգուշանալով մեր հողից իրենց տրուած իրաւունքներից:

Բայց մի՞թէ այդ կարգադրութիւններով ու տահմանած օրինագծերով երբ և իցէ կառավարութիւնը խորհում է փրկել մեր հանրապետութիւնը քրեական տարածից, որը վերիվերոյ վտանգ տնատանեցաւ նախորդ ճատարտի հողից, Եթէ ես առաջարկում եմ վստահութիւն յայտնել կառավարութեան,

հենց գրանով ուզում եմ ապացուցանել, որ մեր կառավարությունը է վիճակի է իրականությունը տեսնել իր պարզությամբ: Դրա հետ մեկտեղ մենք պարտաւոր ենք ժամանակիչ անել նաև այն քնքուշքնքնիները, որոնք, դժբախտաբար, չարունակում են մնալ իրենց ամբողջությամբ:

Ես չեմ ուզում կանգ առնել մեր երկրի վարչական, քաղաքական, ֆինանսական նաև տնտեսական խնդիրների վրա, որոնք չօշափելուցին պատճառաբանված հազարդարդությունների մէջ: Բայց ես նախ ուզում էի մեր ուշադրությունը հրաւիրել այն պարտադրի վրա, որ այս ամբոխից մենք լսել ենք բազմաթիվ ու բազմատեսակ ճառեր, արտայայտած մտքեր, որոնք այսօրւայ իրողությունը նախատարատեսներն և որոնք դեռ չարունակում են գոյութիւն ունենալ և՛ խորհրդարանի, և՛ կառավարության, և՛ ընտանիքի, և՛ ժողովրդի մէջ: Այո՛, պատգամաւոր Աղբալեանը մեր երկրի որոշ մասերի մէջ նշան սպիտակութիւնը չէ տեսել, բայց ա՞վ փարձել լսել մի ճառագայթ, մի ազատ ճառագայթ ատելի այդ խաւար անկիւնները: Ամենից ցաւալին ու զարմանալին այն է, որ յաճախ գերի ու տեղի փոփոխութիւնը փոփոխութիւն է առաջացնում նաև մեր մտքերի, մեր գործերի մէջ:

Ուզում եմ ասել, որ մենք չունենք հետևողականութիւն մեր գործերի մէջ, որ մեր գաղափարներն ու գործերը իրար չեն չարունակում: Մենք յուզով ժողովում ենք մեր երկիրը, ձգտում ենք ապրել աւօրեայ կեանքով և ոչ մի անգամ մեր երկիրը, այսօրը և վաղը համաձայնեցնում ենք իրարու հետ:

Գ. Նախաբարեպահ և պատգամաւոր Աղբալեանի խոսքերի մէջ ցայտուն կերպով նկատելի էր մի պարագայ: Կարծէք քէ մենք մոռացել ենք մեր գաղաւոր Քնամին, որի գէմ, երկիր, ուզում էինք մեր ուժերն ու գէնքերը, իսկ այսօր քոլորովին այլ Քշնամի ենք տեսնում, որը գալիս է հետևոխոց, որի գէմ ծառանում ենք բոլորս միասին և մեր ամբողջ ուշադրությունը ուղղում գէպի հետևոխ: Վտանգաւոր է հետևոխը: գրա համար կասկած չկայ. բայց չմոռանանք հարաւը, որը նոյնպէս մեկտ մեր գառն պատրաստ կանգնած է: Ես ուզում եմ ասել, որ մենք ամենից առաջ հետևողականութիւն ունենալու ենք մեր բոլոր գործերի մէջ և իրար հետևոցնելու ենք մեր երկիրը, այսօրը և վաղը:

Երկրորդ պարագան, որի վրա ուզում էի կանգ առնել և մեր ուշադրությունը հրաւիրել, դա հետևոխի վտանգն է: Մենք առում ենք ռուսը: Մենք առում ենք չէ թէ այն ռուսը, որը իր երկրի ու ժողովրդի համար է գործում, ընդհակառակը, մենք առում ենք այն ռուսը, որը իր երկրի սահմաններից դուրս ձգտում է իր տիրապետությունը տարածել ուրիշների վրա և նրանց իրաւունքներին տէր դառնալ: Մենք առում ենք այս վերջին ռուսը, ինչ գոյնի կամ ձևի ներ լինի, բաւական է, որ մեր արտար ու տեփական իրաւունքին տէր է դնում:

Գ. Նախաբարապետը ոչ մի տեղամ ցոյց չտուաւ այն իրական ու նոր միջոցները, որոնցով նոր կառավարությունը հուսալու է այդ ռուսականությունը գէմ, որը երկրի ժառանգությունն է, որը չարունակում է գոյութիւն ունենալ այսօր՝ խորհրդարանից սկսած մինչև վերջին քաղաքացին, և որը, հաւատում եմ, դեռ գոյութիւն ունենալու է նաև վաղը: Ինչ ասաւ մեր կառավարությունը արժատապես վերնալու այդ ռուսականությունը — դժբախտաբար, ո՛. նախաբարապետը չտուաւ գրական փաստեր այդ ուղղությամբ:

Բայց քոլ ասէք նախ չօշափել այս հարցին խնդիրը: Աւելորդ, որ կառավարությունը օրինք է մշակել վերջնականապես կարգադրելու հողի խնդիրը, որը մեր երկրի ու մեր ժողովրդի ամենագաւառ խնդիրներից մեկն է և որի համար իրաւացիօրէն զբաղնում է մեր գիւղացիությունը: Բաւական

չէ օրինք սահմանել և դրանով ենթադրել հողի խնդիրը կարգադրված։ Մեր սահմաններում կայ մի բուռն ժողովուրդ, որը իսպառ զուրկ է հողից և որը ծանրանում է կառավարության վրա։ Ինչ արաս մեր կառավարությանը մի ափ հող, գլուխ դնելու մի տեղ, իր աշխատանքով ու քրտինքով ապրելու մի միջոց տրամադրելու այն ժողովրդին, որը այստեղ եկաւ և որը խոշոր գնր ունեցաւ վերջին յանդուգնությունների մէջ և որի կողքին, ըստ հանուր բանախօսի, գոյութիւն ունեն «հողի ազնւականներ», որոնք մեր քիկունքից խփում են մեզ։ Հողային խնդիրը մեր երկրի կենսական խնդիրներից մէկն է — կասկած չկայ, բայց այդ կենսական խնդիրը չդրծածենք միայն ընտրական պայքարին իբր առարկայ, ինչպես որ նկատում էր տեղական քերթողից մէկը անցեալ սեպտեմբեր ամսին։

Ես չեմոյ այս մեր պետականութիւնը հայ ոգով։ Ընդունում եմ, որ պէտք է նեւթական դիւրութիւններ տալ մեր պաշտօնեաներին ու բանակին, որպէսզի ի վիճակի լինեն աշխատելու։ Ընդունում եմ, որ անհրաժեշտ է մի քանիներ ձեռք առնել կուելու բոլոր նրանց դէմ, որոնք մեր հանրապետութիւնը վտանգում են, բայց պ. նախարարապետը ոչ մի անգամ անդրադարձաւ այն իրողութեան վրա — ռուսականութեան վրա, որը երկրի ժառանգութիւնն է, այսօր ապրում է և որի պատճառով, դժբախտաբար, ոչ մի անգամ պետի կարողանայ հայ ոգին ու միտքը ապրել ու ապրեցնել մեր պետութիւնը, մեր ինքնուրոյնութիւնը։ Ի՞նչ արաս կառավարութիւնը մեր բանակից վտարելու ռուս ոգին ու կարգերը։ Ի՞նչ արաս նոյն կառավարութիւնը պաշտօնեաներից վերջնականապէս վտարելու ռուս լեզուն և ռուսախօս պաշտօնեաներին։ Ինչո՞ւ մինչև հիմա մեր կառավարութիւնը հայերէնի չվերածեց մեր հետադրի ու հետախօսի, նամակների ու հասցէների լեզուն։

Ես գիտէք ի՞նչ։ Եթէ սխալ տեղեկութիւն չեն տուել ինձ, ընդհակառակը, մեր կառավարութիւնը որոշել է տարրական դպրոցների մէջ վերադնեցնել ռուսաց լեզուի դասաւանդութիւնը։ Ինչո՞ւ — բնաւ հասկանալ չեմ կարող և ոչ մի անգամ կարող ես հաշտւել։ Որպէս զի դրդապատճառը այդ վերադարձին, ինձ համար յայտնի չէ, բայց այդ բանական է ապացուցանելու այն ոգին, որը օտարինն է, որը ապրում է և վախենում եմ, որ մարի և՛ վաղը։

Գանի կայ այդ մտայնութիւնը, քանի դեռ ապրում է ռուսը այս խորհրդարանում, մեր կառավարութեան և ժողովրդի մէջ, այնքան ժամանակ վտանգուած է մեր հանրապետութիւնը։

Կարո՞ղ է մեզնից մէկը երաշխաւորել, որ յիշած պայմաններում ապրող մի ժողովուրդ, օտարի չնչով ու ոգով անւած մի կառավարութիւն կարող է երկար գոյութիւն ունենայ։ Ես լուրջ կասկածներ ունեմ և, չկենք է քաղցնել, ես վախենում եմ նոյնիսկ, որ չատերի սրտած ու երազած ռուսի ներկայութիւնը թուլացնի նոյն չատերի քևերը և նրանք վար դնեն իրենց դէնքերը, հիւանդից եկածին թշնամի չհամարելով մեր հանրապետութեան ու մեր անկախութեան։ Այդ լուրջ ու վտանգաւոր կասկածը չրջան է առնում այսօր ոմանց մէջ, որովհետև իրողութիւնը գալիս է այդ ասելու...

Իսկ ի՞նչ արաս կառավարութիւնը նախապատրաստելու և կուելու հէնց այդ վտանգի դէմ, որը գալիս է հիւսիսից և որի ներկայութիւնն այսօր մոռացնել է տալիս հարաւի մեր զարաւոր թշնամուն։ Ճաւ է ասել, որ կառավարութեան հաղորդագրութիւնը զրական փաստեր չուաւ այդ ուղղութեամբ։

Այսօր, երբ եկել ենք այստեղ, մեկ ամսավ արձակուրդից յետոյ, երկին վառահութիւն յայտնելու մեր կառավարութեան, երկին գնալու ժողովրդի մէջ, այդ բոլորից առաջ մենք պարտաւոր ենք այստեղ ասել ու կառավարութեան զգուշացնել, որպէսզի նա լինի հետևողական իր բոլոր գործերի մէջ, որ նա իրաւ համաձայնեցնի մեր երկին, այսօրն ու վաղը, և ապա պէտք է մեր կառավարութիւնը լաւ իմանայ, որ հիւսիսից ու հարաւից, արեւելքից կամ արեմուտքից բոլոր եկողները մեզ համար հաւասար թշնամիներ են, և՛ երբէք աշխատեն ոտնահարել մեր արիւնոտ անկախութիւնն ու մեր երկրի իրաւունքները (բուռն ծափահարութիւն)։

Հեկուցման քննութիւնը վերջանում է։ պատգ. Ա. Աբեղեանը դաշնակցական ֆրակցիայի կողմից առաջարկում է հետևեալ բանաձևը.

«Լսելով նախարարապետի զեկուցումը երկրի վիճակի մասին՝ մասնս 5-ից մինչև յունիս 3-ը, ինչպես նաև քննութեան առնելով խորհրդարանի կողմից արտակարգ լիազորութիւններով օժտուած կառավարութեան գործունէութիւնն ու մեռք առած կարուկ միջոցները՝ վերականգնելու երկրի խաղաղութիւնն ու ժողովրդի անդորրութիւնը, նաև ապահովելու մեր հայրենիքի սահմանները արտաքին թշնամիներից՝ խորհրդարանը տալիս է իր լիակատար հաւանութիւնն այդ ամենին, յիշեցնելով խրախուսում է այդ գործունէութիւնը և առաջարկում է կառավարութեան նոյն ուղիով անապրիք և անշեղ առալ ընթանալ այսուհետև։ Լսե»։

Բանաձևն ընդունեց բուռն ծափահարութիւններով։ դէմ ձայն տուեց էսէրական ֆրակցիան։

Գ. Վարշամեան. — Օրէնդրական յանձնաժողովի կողմից զեկուցում է խորհրդարանին մինչև 1920 թ. օգոստոս 1-ը արձակուրդ տալու օրինագծի մասին։ Յօդուածական քննութիւնից յետոյ օրինագիծն ընդունում է, որով խորհրդարանը առանում է արձակուրդ մինչև 1920 թ. օգոստոս 1-ը, արձակուրդի միջոցին ընթացիկ օրէնքներ հաստատելու իր իրաւունքը վերապահում է կառավարութեան և յանձնաժողով է նախագահութեան, անհրաժեշտ պարագային, հրաւիրել արտակարգ նիստ։

Նիստը փակւում է դիւերսյ ժամը 11-ին։

ՕԳՈՍՏՈՍ 2-Ի ՆԻՍՏԸ

Նիստը բացւում է երեկոյեան ժամը 7-ին։ Ներկայ են գաւառից նոր վերադարձած պատգամաւորները։ Դահլիճը լիքն է խուռն բազմութեամբ։

Նախագահում է փոխ-նախագահ Ա. Սահակեանը։

Օրակարգն է նախարարապետի զեկուցումը և խորհրդարանին նոր արձակուրդ տալու մասին մոտրած օրինագծի քննութիւնը։

Նախարարապետ և արտաքին գործերի նախարար Հ. Օհանջանեան. — (նախարարապետի ամբիոն երկար ընդունելեցաւ բուռն, ոտկակոչից և որոշ ընդդատ ծափահարութիւններով)։ Հայաստանի խորհրդարանի պատգամաւորնե՛ր. երեք ամիս անցաւ այն օրից, երբ դուք ինձ յանձնեցիք այս երկրի կառավարութիւնը։ Առաջին փորձուկից ամսավ մասին զեկուցումն ես տուել եմ ձեզ իր ժամանակին։ Այն ամենը, ինչ կատարուեց այս ամիսների ընթացքում — ունեցաւ ճակատագրական նշանակութիւն մեր պետութեան համար։ Մեր հանդապատութիւնը կանգնած էր կործանման վտանգի առաջ։ Բայց մեր ժողովրդի արիւնութիւնը կարողացաւ ինքն իրեն փրկել, և այդ ամենը փոքրութեան ամէն դարձաւ ժողովրդի և օրքի համար։

Հայ ժողովուրդը ցոյց տուց այնպիսի կենսունակութիւն և ինսնեռնեռ աշխատանք, որ եզակի է ոչ միայն մեր ժողովրդի պատմութեան մէջ, այլև աշխարհին պիտի համարել նաև ազգերի կեանքում: Մեր ժողովուրդը այդ ժամանակահատուածում կարողացաւ կատարել այնպիսի մի գործ, որն ուրիշ ժամանակներ տոքիների ընթացքում կատարել չէր կարող: Նա, գեռ նոր ազատուած սովից ու հիւանդութիւններից՝ լծուց քաղաքական աշխատանքի:

Այդ ամիսների ընթացքում կատարուած ընտրութիւն տուց 350 հոգուց փուճ սերմացու. բացի այդ քանակից ինքը ժողովուրդն էլ մի ուրիշ փթից աւել այդ 350,000 փթի վրա աւելացնելով՝ ցանեց և այժմ հնձում է: Նա ձգտում է տնտեսագէս և ֆինիլապէս անկախ դառնալ և անկախ ապրել:

Մեր ժողովրդի ծոցից դուրս եկած խորհրդարանի անդամները, դուրս գալով քաղաքից, ցրուեցին և անցան գաւառները՝ շեմչուին, Ղազախ, Ջանգիզուր, Ղարաքազ, Դարալագեազ, Նոր-Բայազէտ, Էջմիածին, Երիվան և այլ շրջաններ:

Այդ բախտորոշ օրերին մեծ և վճռական դեր կատարեցին Հայաստանի անկախութեան պլատֆորմի վրա կանգնած քաղաքական կուսակցութիւնները, մանաւանդ Հ. Յ. Դաշնակցութիւնը, որն իր բոլոր ուժերը ծօրելիցպէսյի ենթարկելով՝ տրամադրել Հայաստանի կառավարութեան: Մեր իրանահայութեան չորս կուսակցութիւնները՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը, Հ. Ժ. Դ. Բանւորական, ժողովրդական և Ռամկավար կուսակցութիւնները մեծ գործ են կատարել մեր պետականութեան ամրապնդելու գործում:

Բայց առաւել ևս մեր ժողովուրդը ցոյց տուց ոգեշոյզ: Մեր քանակը, որ նոր էր հանգստացել և գեռ նոր էր լրացրել ինքնապաշտպանութեան գործը, նա, այդ քաջերի գօրքը, գրաւուց մեր սահմանների բոլորտիքն ինքզրով և այդ արաս մեծ յաղթութեամբ, որ մինչև այժմ կատմներէն մէջ հզակի պիտի համարել: Վերջինս նա տարաս մի չարք յաղողութիւններ ապատամբ չրիաններէն վրա: Կուռ ընթացքում մէջից արուց բոլոր նրանց, որոնք կը ցանկանան ընդունել մեր քաղաքացիութիւնը, գան և հպատակութիւն յայտնեն, որով և կեանքի ապահովութիւն արուց: Ապագոյց դրան Ուլուխանլու. Խուրթ գիւղը, որն մենք հանձնարարեցինք և որն այժմ բարգաւաճ վիճակի մէջ է:

Մնացեալ դիւղերը՝ Զանգիբասարի և Վէդի-Բասարի չրիաններում, որոնք չցանկացան մնալ և լինել Հայաստանի քաղաքացիներ, ընկան մեր զօրքերի չեշտակի հարւածների տակ: Գիւլլի Դրունքը և Բիւլիւբ-Վէդին, ուր անցեալ տարի մենք կորուստներ ունեցանք, ընկան մէկը մեռած նուխց (քուռն ծպիներ և ցայլեր): Մեր զօրքը տարաս նաև ուրիշ երկու մեծ յաղթութիւն՝ Նադիրսւ և Օլքիի ճակատում:

Զաքախում Քշնամին մեր սահմաններից ներս էր խուժել, որի հետևանքով առաջացան հակապետական խլրտումներ, որոնք բոլորն էլ անյաղթելիան մասնակցեցին՝ առանալով արժանի հակահարւածներ խորհրդարանի անգամ և ժողովրդական հերոս Սեպուհի բանակի կողմից: Այս, ի հարկէ, փաշլուն ապացոյց է այն բանի, որ ժողովուրդն ինքն է իրեն պաշտպանում՝ ունենալով ամենալայն մասնակցութիւն (ծպիներ):

Մինչև Գիլլի Գրունքի հանձնելը մեր զօրքերը անարգել չարժւում էին: Այսուհետ մեր հրամանատարութեան ներկայացան ապատամբների պատերազմները և խնդրեցին հնարաւորութիւն տալ՝ Հայաստանի կառավարութեան հետ բանակցելու: Այդ հնարաւորութիւնը նրանց տուց և նրանք ամենաշատ կէտերով բերեցին մոտրաքողոք, ուր և բանակցութիւնները տեղի ունեցան: Այն պահանջները, որ մեր կառավարութիւնն առաջադրեց, շատ

էին նպատակ Քիւրդ պատէրխաններէն համար։ Թուլատրուած էր գաղթած ազգաբնակութեան վերադառնալ և վերաբնակել նախկին տեղերում, բացի ռազմավարական վայրերից։ Տրուած էր տեղական ինքնավարութիւն, զեմստուո, իրաւունք դատել քան իրենց ազգորոշիչներին, մասնակցել երեսփոխանների ընտրութիւններին, պահել սեփական վարչութիւն և այլն։ Դրա փոխարէն, որպէս պահանջ, նահանջել ազգ տերիտորիան Հայաստանի անդամ մաս՝ առալով որոշ քանակութեամբ դէնք, մի և որոշ տատկութիւններ, մեկնելի ժամանակ ապահովելով երկաթուղու գիծը մինչև Ջուլֆա։

Պատերազմները համաձայնից ընդունել չիչնալ պայմանները։ Սակայն, ազատորէ չբնութագրուած դաշնագիրների ազդեցութեան տակ, մերժում է բանակցութիւնների արդիւնքը։

Մեր զօրքերը առանց երկար սպասելու՝ մի ժամից յետոյ առաջ չարժուեցին դէպի Շահթախթ, որ և գրաւեցին՝ կորուստներ հասցնելով թշնամուն և ահագին կրօտատներ պատճառելով։ Այդ կռիւներին մասնակցում էր ապրիլեանների զօրքերի մի մասը, տոճկական սպաներ և կռնոնատոր դիւնտրներ, թնդանօթներով և գնդացիրներով։ Բայց մեր հետագիտրի արժանի քաջութի զօրքը, իր դեմ ուղարկուած ընկճել թշնամուն և յաղթել (երկաթուղ. և քարտ. ծախք)։

Այն ժամանակ Քիւրդերի կողմից եկաւ նոր պատւիրակութիւն։ Մենք չնախացրինք նախկին մեր պայմաններից, ոչ մի պահանջ չաւելացրինք, այլ ասելի բնկնացրինք՝ միայն մի ստիմանափակում դնելով, որ գաղթած ազգաբնակութիւնը չկարող վերադառնալ Շաթար և Վեզի–Քասար, մինչև նոր կարգադրութիւնն և նոր պայմաններ ստեղծելը։

Բանակցութիւնները տեւեցին 2–3 օր։ Այն ժամանակ, երբ ժողովրդի պատւիրակները համաձայնում էին ընդունել պայմանները, ժողովուրդը այս անգամ նոր ագիտացութեան է ենթարկուում՝ բոլշևիզմի, որի վրա և իրենց յոյսն էին դնել։

Այժմ մեր հանդէպ կանգնած են ոչ միայն տեղական կազմակերպած ուժերը, այլև հետու հիւսիսից եկած կարմիր Թուրաստանի և հետու հարաւից եկած նոյնպէս կարմիր — բայց ոչ խօսքերով, այլ արիւնով — կարմիր Յաճախականի քաւիրիւնները՝ երեքը իրար միացած, երեքը իրար դաշնակցած։

Մենք ոչ մի արգելքի առաջ կանգ չենք առնի ապահովելու մեր անխախտելիը նման համագործակցութեան դաւերից։ Եւ իրրև վստահ գրան, կարող եմ յայտարարել, որ մեր զօրամասերը Զանգեզուրում չեն են չպրանել մեր թշնամու ուժերին (բառն ծախք)։

Մեր վճռակը ռազմական յաջողութիւնների ապաթեզամբ մնում է նոյնը և մենք հաւատացած ենք, որ մեզ կը յաջողի ցնա մզել և ազատ լինել քէ ներքին և քէ արտաքին խռովարարներից (երկաթուղ. ծախք)։

Տանկական հակառակ, Օգթի և Կարսի չզիանում, մենք գրաւել ենք ամենահարուստ մի չզիան, որը մեզ ապրանքի անհրաժեշտ է։ Մենք գրաւել ենք Օգթի քարածուխի հարուստ հանքերը, Օգթի գործարանը (ծախք)։ Այդ հանքերի շնորհիւ մենք ի վիճակի կը լինենք վարել տնտեսապէս անկախ կեանք։ Մեր երկրագործին անհրաժեշտ է նաեւ։ Մարբէլներ վերին ամրակների բնութագրամ մեզ չի տալ ոչ մի կարիք նաեւ։ Այդ տեսակով մենք հնարաւորութիւն պիտի ունենանք ապահովելու և արհեստի դարձնելու մեր երկրագործութեան երկրորդութիւնը և արդիւնաբերութեան զարգացումը։

*Միաժամանակ այս փառատոնը յաղթութիւններին գուգընթաց կառավարութիւնը այս երկու ամսուայ ընթացքում յարատև աշխատանք է կատարել: Երկու ամսուայ ընթացքում նա ընդունել է 52 օրինագիծ, անց է կացրել 117 նախաձեռնութիւն, վարչ և ունեցել է չատ կարևոր որոշումներ**):

Կառավարութեան համար խոշոր մտահոգութեան պատճառ է հացի խնդիրը: Մեր երկրի բերքը մեր կարիքներին կը բաւարարէ 8–9 ամիս. մենք այս տարի կարող ենք հաւաքել մեր արտերից մինչև 7 միլիոն փութ ցորեն: Մեզ կը պակասի մօտ 3 միլիոն փութ հացահատիկ. ձեռք բերելու համար արդէն որոշ քայլեր ենք անում: Գնումների և այլ միջոցների շնորհիւ մենք, հաւանօրէն, կը կարողանանք առաջիկայ տարին առանց ճգնաժամի անցկացնել:

Կառավարութիւնը ուշադրութիւն է դարձրել մեր հարկային սիստեմը վերամշակելու վրա (այս խօսքի ժամանակ պարլամենտի ֆարտուղար Ա. Սամֆրատեանը նախարարապետին յանձնում է նոր ստացած հեռագիրը):

Նախարարապետ Հ. Օհանջանեանը, ընդհատելով իր զեկուցումը, կարդում է այդ հեռագիրը, որն աւետում է Դրօի հրամանատարութեան տակ մեր զօրքերի նոր յաղթանակի մասին. Զանգեզուրի ճակատում, կուից յետոյ, մեր զօրքերն առել են 12 գիւղ, 1 օթևօթիլ, գեղացիներ, բազմաթիւ հրացաններ, ահագին քանակութեամբ փամփուշտ և այլն: Տեղական ազգաբնակութիւնը և գիւղացիութիւնը մեր զօրքերին մխացած հետապնդում են փախչող թշնամուն (բուռն ազմկալից ծափեր):

Նախարարապետը չարունակում է իր ընդհատած զեկուցումը. —

Մեր հարկային սիստեմի վերամշակման համար կազմուել է յատուկ յանձնաժողով, որը նախապատրաստական աշխատանքներ է կատարում: Անկախ նրանից փոխառութեան վերաբերմամբ տեսած ժողովրդի գիտակից և խանդավառ վերաբերմունքը: Մեր պետական հաշուապահութիւնը նոր հիմքերի վրա է դրուում: Պետական գոյքերի հաւաքման և կանոնաւորման համար գործնական աշխատանքներ են կատարուում: Հողային հարցը լուծելու համար կազմուել են հողային կոմիտէներ: Այդ հողային կոմիտէները մեծ գործ կատարելիք: Ամէն մի գիւղ ապահովուած է հողային բաժիններով: Հայացման գործը արագացել է: Գործավարութիւնը արդէն հայերէն է տարուում, հայացուում է նաև պաշտօնէութիւնը: Հայաստանի համալսարանը Ալեքսանդրապոլից տեղափոխուում է Երևան: Բացի պատմա–լեզուաբանական ֆակուլտետից բացուում են նոր ֆակուլտէներ, ինչպէս օրինակ, բնագիտա–ֆիզիկա–մաթեմատիկական գիւղատնտեսական բժշկական և բժշկական ֆակուլտէներ:

Այնուհետև նախարարապետը իւսում է արդէն անցկացրած հացի ճգնաժամի վերաբերմամբ կառավարութեան ձեռք առած միջոցների մասին, որից յետոյ մանրամասնաբար տեղեկութիւններ է տալիս ամէն մի նախաբրութեան գործունէութեան մասին.

Ցիմնականում դրութիւնը բարւոքելու համար միջոցներ էին ձեռք առնուել: Ապրանքների ներածումը սահմանափակուեց և արտահանման պայմանները ու հնարաւորութիւնները ընդլայնուեցին: Արգելուեց մեծ քանակութեամբ մեր չէկերի արտահանման տանելը: Դրամական փոխադրութիւնների գործը կանոնաւորուեց և սոյն օգոստոս 15–ից դրամական փոխադրութիւններ կը կատարուեն նաև քաղաքացիների համար: Պետական էքսպեդիցիան ընդ–

---

*) Նախարարապետը թւում է գլխատրները դրանցից:

լայնում է: Մշակում է պրոգրեսիվ — եկամտային տուրք: Ալի մշակումը և արտահանումը զարգանում է: Շուտով կը կիջնի առևտրական գաշինք Գերմանիայի հետ և կարիք կը լինի Շախթախթում և Ջուլֆայում մաքսաներ բանալ:

Արդարադատութեան ասպարէզում հմմնել են արտակարգ դատարաններ և ուժեղ կոիւ է տարել չարաշահութեան դէմ: Արտակարգ դատարանները կը մնան մինչև բացարիկ պայմանների վերացումը: Մեր բոլոր դատաստանական հմմնարկութիւնների գրագրութիւնը և դատավարութիւնը հայացել են, Օրէնքների հայացման նախապատրաստական աշխատանքները վերջանում են: Բացել են չրջանային դատարաններ Կարսում և Ալեքսանդրապոլում: Բանակի տնտեսականը բաժանւում է, բանտերը ստեղծել են իրենց սեփական տնտեսութիւնները:

Երկրագործութեան նախարարութեան կողմից մեծ աշխատանքներ են քաշել մեր երկրի արտադրական կարողութիւնները բարձրացնելու համար: 350,000 փութ հացահատիկ է տրւել գիւղացիութեան ցանքերի համար: Բնութիւնն էլ օդնութեան եկաւ մեզ, և այժմ մեր գիւղացին փայլուն բերք է հնձում ու կալում: Գնել և տրւել են գիւղատնտեսական գործիքներ. կազմակերպւել է նաև խոտաքաղ: Նոր նւաճած վայրերի առատ բերքը հաւաքելու գործը դրւում է կանոնաւոր հմմերի վրա: Կամնատնտեսութեան, ժեղւարուծութեան, ձկնարուծութեան և ծխախոտագործութեան զարգացման նպատակով տրւել են նպաստներ, բացւել են ձկնարուծարաններ Սևանայ լճի ափին, արհեստական կերպով խլման, գնդարբունի և որսից բերած ձկների բազմացման համար, փեթակները տուրքից ազատած են: Ծաւել է 1500 դեսեատին բամբակ և 100 դեսեատին ծխախոտ: Հանքային հարստութիւնների ուսումնասիրութիւնն ամենաարագ կերպով առաջ է տարւում. մանաւանդ մեծ եռանդով ուսումնասիրւում են Օլթիի ածխահանքերը: Հրաւիրւել են Քէ Հայաստանում և Քէ դուրսն ապրող մասնագէտներ, որոնք արդէն գործի վրա են: Աշխատների պահպանումը յատուկ ուշադրութեան է արժանացել: Հողային հարցը լուծելու համար Էջմիածնի, Երևանի, Իջևանի, Դիլիջանի, Դարալեկեազի գաւառներում, Վայոց Ձորում կազմւել և բաւիսիող կերպով աշխատում են հողային յատուկ կոմիտէներ: Միայն մանաւանդ մարդկանց պակասութեան պատճառով մեւս գաւառներում առ այժմ այդ չի արւում:

Աշխատանքի նախարարութիւն· — *Մեր կառավարութեան հողն է եղել բարձր կեանք ստեղծել համայն բանւորութեան համար: Ուշադրութիւն է դարձւել նրանց պարենաւորման, կուլտուրական կարիքների բաւարարման վրա: Բանւորական հարաբերութիւնների համար բաց են արւած վարկեր, հմմնւել են գրադարան-ընթերցարաններ, ակումբներ: Բանւորների և աշխատաւորների կուլտուրական կարիքներին բաւարարութիւն տալու հնարաւորութիւններ ստեղծելու համար յատկացել է Ջանփոլատեանի Թատրոնի չենքը: Իսկ նրանց պարենաւորումը կազմակերպելու համար կռմվել է հնայթյթիվ մարմինը, որին և տրւել են գումարներ, և այդպիսով գործնական միջոցներ են ձեռք առնւել պետական, հասարակական և մասնաւոր հմմնարկութիւնների և ձեռնարկների աշխատաւորների պարենը ապահովելու համար:*

Ներմատարարութեան և վերաշինութեան նախարարութիւն· — *Սովը ժողովրդի՝ տալով մրի կամ չատ ածան գնով հաց, այլուր և այլ մթերքներ: Այժմ հունձի ժամանակ կամաց-կամաց այդ կերպի խնամքն էլ կը վերանում*

է։ Գաղթականությունը տեղատարվել է լքված և հողատար գիւղերում։ Երևանի, Ախալքալաքապատկ, Դիլիջանի և Դարալագեազի չրջաններում տեվողներ չկան։ Կարսի և Սուրմալուի չրջանում կան միայն մասամբ։ Այժմ գլխատոր ուշադրութիւն դարձուած է տարագիր հայութեան հաւաքման վրա։ Մի քանի տեղերում արդէն հաւաքված են 70,000-ի չափ հայրենիք վերադարձածներ, որոնց թիւը հասնում է 70,000-ի, հայրենիք վերադարձուած։ Վերադարձողների մի ժամանակ այդ խնդրում, ճիշտ է, արգելք էր հանդիսանում, բայց այժմ օժանդակում է մեզ։ Աշխատանք է հայթայթում կարիքաւորներին, որոնք այժմ աշխատում են պետական արհեստանոցներում։ Այդպիսիների թիւը հասնում է ութ հազարի։ Ընտանեացնութեան գործը դադարած է նոր հմտանքների վրա։

Հանրային կրթութեան նախարարութիւն։ — Բոլոր տարրական դպրոցների վարչութիւնը յանձնուել է քաղաքային և տեղավարական (զեմստւո) ինքնավարութիւններին, բացի Նոր-Բայազէտի, Կարսի և Սուրմալուի չրջաններից։ Ազգայնացումը, չատ չնչին բացառութեամբ, կատարուել է գրեթէ ամէն տեղ։ Ձեռնարկուել է դասագրքերի հրատարակութեան, որի համար բացուել է խոշոր վարկ։ Համապատասխ համար յատկացուել է տեմիաքրի չնչին։ Հրաւիրուել են և հրաւիրւում են պրոֆեսորներ և դասախօսներ։ Բացուել են պետական պահօնկութեան համար հայերէն գասընթացներ։ Համաձայնութեան է կնքւում ամերիկեան հետ որքերի կրթութեան գործը որոշակի ընդգծած հիմունքների վրա դնելու նպատակով։ Բացւում են երաժշտական դպրոցներ Երևանում և Ալեքսանդրապոլում։

Արտաքին գործերի նախարարութիւն։ — Մենք ստորագրել ենք Տաճկաստանին ներկայացած հաշուեվճռան պայմանագիրը մեր պետութիւնների հետ միասին։ Մեր ունեցած տեղեկութիւնների համաձայն, Տաճկաստանը պիտի ստորագրէր յուլիս 29-ին։ Դաշնագրով ստանալիւում է, որքէս իրաւարար Ամերիկայի նախագահ Վ. Վիլսոնը, որն արդէն ընդունել է այդ կոչումը։ Նա իր գործին կանցնի, երբ Տաճկաստանը ստորագրի հաշտարարեան պայմանները։

Մեր քաղաքական և տնտեսական պատւիրակութիւնները մեզ վստահեցնում են, որ եկը մեզ համար նպաստաւոր կը լինի։ Հայաստանի այժմեան հողամասին կը կցւեն չորս վիլայէթներ՝ Վանի, Բիթլիսի, Տրապիզոնի և Էրզրումի։ Եթէ Տրապիզոն քաղաքը, որպէս նաւահանգիստ, մեզ չտրւի, անչուշտ մեզ կը տրւի ուրիշ ելք դէպի Սև ծովը։

Բաթումի խնդիրը մեզ համար մեծ նշանակութիւն ունի։ Բաթումը իր չրջանով վերջերս յանձնուեց Վրաստանին՝ պայմանով, որ ապահովի ազատ քրանգիտ Հայաստանի համար։ Մեղ համար կենսական նշանակութիւն ունի սեփական տերիտորիայով ելք ունենալ դէպի Բաթում։

Այժմ կայ երկու Տաճկաստան՝ մէկը Պոլսում, մէնսը՝ յանձինս Մուստաֆա Քէմալի՝ Անդորայում, որին աջակցում է ազգային Մեծ Ժողովը, և որի նախարարները, կոմունիստական Ռուսաստանի օրինակին հետևելով, կռւում են կոմիտարներ։ Երբ մենք համաձայն տեղական պարբերութեան ցանկութիւնների, գրաւեցինք Օլթին և այդ չրջանում ամրանալով՝ խախ-խախ հաւանեցնը հասցրինք տանձիկ օրերերին, այն ժամանակ Բէկիր Սամի, Քէմալի թիւրքիայի արտաքին գործոց վարիչը, պնդց բանակցել Հայաստանի կառավարութեան հետ՝ մեր գործերը այդ չրջանից չետ քաշելու չուրը։ Նա, Բէկիր Սամին խօսում է Բրեստ-Լիտովսկի դաշնքի և Բաթումում ու Տրապիզոնում կնքուած հաշուեվճռան պայմանագրերի խախտման

ժամին, իսկ մյուս կողմից չի մոռանում յիշել հայ-քիւրքական զբաղեկցութեանց ժամին և յայտնում է, որ քիւրքը երբեք հայկն քշածով չէ և առաջարկում է Օլթիից յետ քաշել մեր հայկական զօրքերը և ապա սկսել բանակցութիւններ:

Վ. Նաւասարդեան (գաչ.)—Ոյնէ, հայկական բանակը կը բանակցի:

Նախարարապետ.— Մենք պատասխանեցինք, որ բարի դրացիական կապեր ստեղծելու համար չեն խօսում ոչ բռնութի, ոչ բաժանման և ոչ Տրապիզոնի դաշնագրերի անունից, որ բանակցելու համար պէտք է բոլորովին այլ լեզու գտնել, իսկ եթէ այդ լեզուն կամովին չի գտնուի, նրան գտնելը կը յաջողեցնի, այո՛, հայկական քաջարի բանակը (բուռն ծափեր):

Ահա ինչքիր Սամիի և մեր միջև փոխանակուած գրութիւնները:

Երևան. 2. Հանրապետութեան արտաքին գործոց նախարարութեան.

Հայաստանի կառավարութեան հիմնադիրից ի վեր մեր կառավարութիւնը նրա հետ պահպանել է բարեկամական յարաբերութիւններ և այդ յարաբերակից է իրեն համար վարքագիծ ընտրել: Նա այդ գործով էլ ցոյց է տուել հակառակ մեր յարունակական յարձակումներին: Ձեր գրութեան առիթ եղաւ Հոդամասերում գտնուող, բայց իր ինքնուրոյնութիւնը որոշող և միւսի ներքոյ չգտնուող խումբ ազգաբնակութեան դէմ միւսի կրկնուող յարձակումները և յարձակի մեր քաղաքացիներին հանդէպ մեր կառավարութիւնը բաւականացել է միայն բարեկամական ծանուցագրերով:

Մի քանի օրից ի վեր Օլթիի խումբ ժողովրդի հանդէպ մեր կանոնաւոր զօրամասերի կողմից յարուցնակուող պատերազմական գործողութիւնների մասին մեր արևելեան հակատի Ն. Գ. հրամանատար փաշայի կողմից երեք օր առաջ մեր դիմադրական ուժերի հրամանատարութեան տրուած բարեկամական ծանուցագիրը պատերազմական գործողութիւնները անմիջապես դադարեցնելու մասին մինչև այժմ առանց պատասխանի է մնացել և, ընդհակառակն, եղբայրական ի վեր Օլթիի վրա յարձակումը աւելի չաղացած ու ամրակացած է: Մեր ազգը իր ամբողջ ուժով փափագում է բարեկամական յարաբերութիւններ պահել հայ ցեղի հետ, հայկական չափերը քիւրքական հետ անհամապատասխան չեն, ընդհակառակը, կարելի է համաձայնեցնել և աւելի սերտ դարձնել: Եթէ դուք անկողմնակալօրէն գնահատէք, կը յուսամ թէ դուք ևս կը հաստատէք, որ մեր բռնած ընթացքը չի համապատասխանում մեր ազգային իսկական շահերին:

Համոզած ենք, որ անգլիացիները մշտապէս իրար հետ ապրելու սովորած երկու հարևան ցեղերը արիւնհեղութեան մղելով են զբաղուած: Մենք մեր կառավարութեան և ազգի համար բոլորովին վնասակար կը գտնենք, որ մեր ազգը անգլիացիների ձեռքը խաղալիք գառնայով՝ մեր կառավարութեան դէմ քիւնամութեան ձեռնարկի:

Ձեր պատասխանագրութիւնը Մոսկուայում ուս սովետական կառավարութեան հետ բանակցութիւններ է վարում. մենք էլ ուս սովետական ներկայութեան հետ քաղաքական յարաբերութիւնների ձեռնարկած լինելով՝ խոստովանին պատերազմին վերջ տալու կաշխատենք միանգամայն, ուստի մեր յարձակումը բացարձակապէս զարմանալի և ցաւալի մի երևոյթ է:

Ճարձակումների չարունակութեան ամբողջ պատասխանատուութիւնը ծանրանում է հայկական կառավարութեան վրա՝ այս անգամ էլ քիւրք ազգային կառավարութեան արտաքին գործերի նոմինատր հանգամանքով ես խնդրում

եմ Ձեր գնդապետությունից տալ հարկ եղած անհրաժեշտ հրամանները ձեր զորամասերին՝ վերջ դնելու համար թշնամական գործողություններին։

Սպասելով ձեր պատասխանին՝ խնդրում եմ ընդունել խորին յարգանացս հավաստիքը։

24 յունիսի 338 — *Թիւրք Մեծ Ազգային ժողովի*
1920 — *Արտաքին գործերի կոմիսար Բէքիր Սամի*

Այս նամակին մեր կողմից պատասխանեց հետևեալը։

Սարիգամիշ, գնդ. Միրիմանեանին։ *Խնդրում է ձեզ հայտնել ուղարկել օամանեան տասնևհինգերորդ զորաբանակի հրամանատար կարաքեքիր փաշայի մէջոցով հետևեալ հասցէին։*

Անգորա. Թիւրք Ազգային Մեծ ժողովի արտաքին գործերի վէճիլ Մեծ Բէքիր Սամիին։

Հայաստանի հանրապետությունը իր հիմնելու օրից իսկ ձգտել է և այժմ էլ ձգտում է ստեղծել բարի դրացիական փոխյարաբերություններ իր հարևանների հետ և խաղաղ համակեցություն տեղական բոլոր ժողովուրդների միջև։ Հայաստանում լոյալ մահմեդական բնակչությունը միշտ օգտվել է և օգտում է ներկայիս ևս պետության մեջ քաղաքացիների համահավասար իրավունքներից։ Սոյն հաստատուն քաղաքացիների կեանքն ու գոյքը միշտ պաշտպանում է Հայաստանի կառավարության կողմից ամէն տեսակ չարախտ փորձերի, ինչպէս նաև ազգակումների դէմ, որոնք մեծ մասամբ կատարում էին դրսից եկած ազգակային և խռովարար մուսուլման խմբերի կողմից։ Սրանք առաջ էին բերում խռովութիւն և անիշխանութիւն տեղական մուսուլման ապստամբականների խաղաղ կեանքի մէջ։

Հայ զօրքերի վերջին ռազմական գործողութիւնները Օլթիի շրջանում նպատակ ունէին ազատելու հայկական հողամասը անիշխանական տարերքից և երբեք ուղղուած չէին մահմեդական խաղաղ ազգաբնակութեան դէմ։ Օլթիի շրջանի վարչութիւնը այժմ նշանակուած է նոյն շրջանի մուսուլմաններից։

Հայ ազգը ի վաղուց անտի հիդ է թափում անկեղծօրէն մէկդի թողնել այս մոայլ անցեալը և ստեղծել բարի դրացիական յարաբերութիւններ Թիւրքիայի հետ։ Հայաստանի և Թիւրքիայի միջև բարի դրացիական փոխյարաբերութիւնների վերահաստատումը ամբողջովին կախուած է Թիւրք ղեկավարների ընթացքից, որոնք պէտք է մի անգամ ընդ միշտ ճանաչեն հայ ազգի իրաւունքները ամբողջական Հայաստանի սահմանների վերաբերմամբ և վերջ դնեն Հայաստանի Հանրապետութեան սահմանների դէմ ագէնտների գործունէութիւններին։

Ձեր Մեծ Ազգային համաժողովը Անգորայում հաստատեց Տաճկաստանի հայկական վիլայէթներում Հայաստանի անկախութեան իրաւունքը, և ահա դրանով Թիւրք ազգը ճանաչում է լիովին Հայաստանի օրինաւոր իրաւունքները յիշեալ սահմաններում, ապա, ուրեմն, հայ ազգը կունենայ հիմք Թիւրքիոյ և Հայաստանի միջև կանոնաւոր փոխյարաբերութիւններ հաստատելու։ Քարտուղար Տէր-Ճակոբեան։ 30 յունիսի 1920 թ.»։

Այս նամակին ի պատասխան ստացվեց հետևեալ հեռագիրը։

Տպագրած՝ Հայաստանի Հանրապետության Արտաքին Գործերի Նախարարության։

Ներածական

Ֆաշիստական Գերմանիան պատերազմ սանձազերծեց Եվրոպայում 1939 թվականի սեպտեմբերի 1-ին։ Սկսվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը։ Խորհրդային Միությունը, որ ամենից շատ էր տուժել ֆաշիզմից, ամենից շատ էր նպաստել նրա ջախջախմանը։ Խորհրդային Միության ժողովուրդները հերոսական պայքար մղեցին ֆաշիստական Գերմանիայի և նրա դաշնակիցների դեմ։ Խորհրդային Միության ժողովուրդների հաղթանակը ֆաշիզմի նկատմամբ նշանակալից ներդրում ունեցավ ամբողջ մարդկության ազատագրության գործում։

Վերջապես, երկկին խնդրում եմ ժամ առալ ձեր զօրամասերը յետ քաշել և հեռանալով մեր երկուսի միջեւ գոյութիւն ունեցող փաստական և իրաւական տեսակէտով դարձագրութեան մէջ եղող բաժումի դաշնագրին՝ բոլոր-զօրամ եմ կատարուած չարժումների դէմ և պատասխանատու եմ դառնում մուսաւաների ազգանախանձութեան կրած վնասների պատճառ եղողների։

Սպասելով մեր փոխադարձ շահերին համապատասխանող մի պատասխանի՝ խնդրում եմ ընդունէք իմ յարգանքս հաւատարիքը, եֆենդիմ։

Թիւրք Մեծ Ազգային Ժողովի Ներկայացուցիչ

Գործերի կոմիսար Բէքիր Սամի։

Սոյն հեռագիրը խակակոչի հետ ճիշտ է։

Կնիք 11-րդ զօրաբանակի և տեղագրութիւն։

Վարիչ-նախարար։ Գեղապետ Միրիմանեանին։ Ներկայ եմ սոյն հեռագիրը ականջկիզ ծանանեան տանն հինգերորդ զօրաբանակի հրամանատար կարաբեքիր փաշային միջոցով հանձնել հասցէին։

«Անգորա։ Թիւրք Ազգային Մեծ Ժողովի Գործերի վէրիկ մեծ։ Բէքիր Սամիին։

Առանց չօշափելու հարցի բնականոն կողմը այն տեսակէտից, որ Բրէստ-Լիտովսկի և Բաթումի դաշնագրերը կնքուած են տուրքանի կառավարութեան կողմից, որը ձեր կառավարութիւնը չի ճանաչում, պատիւ ունեմ պատասխանելու ձեր 8 յուլիս 36 թ. գրութեան։

Ինչպես Բրէստ-Լիտովսկի դաշնագիրը, որի մէջ Հայաստանը ոչ մի մասնակցութիւն չէ ունեցած և ոչ էլ ստորագրած է, նմանապէս Բաթումի դաշնագիրը, որը երկու կողմերի պարլամենտներից չէ հաստատուած, ոչ մի իրաւական ոյժ չեն կարող ունենալ Հայաստանի համար։

Այն հանգամանքը, որ Դուք իբր հիմք էք ընդունում Բրէստ-Լիտովսկի և Բաթումի դաշնագրերը, որոնք հիմնովին չեն ճանաչում կենսունակ Հայաստանի գոյութիւնը, ի մէնչ կաս զրկում է մեզ Ձեզ հետ համաձայնութեան գալու ամէն յոյսից, քանի դուք չպատնականէք դեկավարել գերման կայսրական և տուրքանական իմպէրիալիստական, հակայեղափոխական կառավարման ձգտումների վրա հիմնուած այդ դաշնագրերի տրամադրութեամբ, որոնք ծնուում են կառավարութեան և մէկ ազգային յարաբերութիւնների մէջ ազգերի ինքնորոշման, իրաւունքի և արդարութեան սկզբունքներ։

Անկեղծաբար ձգտելով ստեղծել բարի հարևանական յարաբերութիւններ Թիւրք և մեր ազգերի հետ, հայ ազգը այդ յարաբերութիւնների իրական հիմք և անհրաժեշտ նախապայման է համարում, որ երկու կողմերն էլ ճանաչեն չհակադրուած ազգերի պատմական, ազգագրական ու տնտեսական իրաւունքները։

Ցնծած իւրաքանչիւր ազգի այս օրինաւոր իրաւունքների վրա՝ հայ ազգը, բնականաբար, չի կարող հրաժարուել Տաճկաստանի հայկական նահանգների վրա ունեցած իր անվիճելի իրաւունքներից, որոնց ահմաններից, համաձայն դաշնակից պետութիւնց կողմից տրուած Տաճկաստանին յանձնած հայտարարութեան դաշնագրի, պիտի որոշուեն գերագոյն իրաւարարի՝ Ամերիկայի Միացեալ Նահանգների նախագահի կողմից։

Ցնծալով դաշնագիրը ստորագրող Հայաստանը մտադիր է հնազանդ հաւատարիմ մնալ գերագոյն հայտարարի որոշման, սպասելով դրան՝ նա

մասագիր չէ քաղաքի անվն նախկին ռուս-տաճկական սահմաններից անցնելու համար: Նամանավանդ, նա իրաւունք ունի յուսալ, որ Տաճկաստանը չպիտի միջամտի այն հարցերին, որոնք վերաբերում են Հայաստանի ներքին գործերին և այս տեսակէտից Ձեր պահանջը Օլթիի չբնակը, որը կազմում է Հայաստանի Հանրապետութեան անբաժանելի մասը, հայկական զօրամասերից մաքրելու մասին և չեչեսլ չբնակուած մեր ասկերականների յարձակողական շարժումները բոլորովին անբնական և անհիմնաւորելի են:

Հաւատարիմ իր խաղաղասիրութեան՝ հայ ազգը պատրաստ է երկաքաղաքել բարեկամութեան մեռք ամէն այն ազգին, որը՝ իր կողմից ճանաչում է վերոյիշեալ պատմական, ազգագրական, պետական օրինական իրաւունքները և ուրիշ ազգերի նրա հանդէպ ունեցած վերաբերմունից կախուած է հայ ազգի վերաբերմունքը դէպի այն վերջինները:

Ընդունեցէ՛ք յարգանքս հաւատարիմը:

Արտաքին Գործերի Քարտուղար՝ Տէր Ծաղիկեան:

28 յուլիսի 1919 թ. № 4515»:

Հայ-վրացական խորհրդաժողովը յարուցակում է իր աշխատանքները: Աքէն կ'գալ է դատական պարմանադիրը: Ագատօրէն գէնք փոխադրելու հարցերը ասացած է: Բայց տեղեկատուական հարցերի վերաբերմամբ մեր գրացին շատ մեծ անորոշներ ունի. նա պահանջում է մեզնից անգամ Սահակեանը, Աքրամեանը, Օլթին (բացակայութիւններ ու ծիծաղ տեղերից): Մենք յոյսեր ունենք, որ մեր բանակցութիւնները Վրաստանի հետ յաջողութեամբ կը վերջանան և գործերի բարեկամական և միաառնական կուսուրս, միաառնակ քննարկներ ունեցող ժողովուրդների իրաւ կը հաստատան: Ես ունեմ այդ հաւատը և կարծում եմ, որ նոյնը պիտի լինի նաև Վրաստանի հասարակութեան և ժողովրդի մէջ:

Պարկաստանի հետ ամենամտերիմ և բարեկամական կապն է պահպանուել: Մենք մեր դիւանագիտական ներկայացուցչից կացած ենք եղել և միայն չատ հեռուր հանապարհներով ենք կարողացել կապ պահպանել: Մեր դիւանագիտական ներկայացուցիչը քանակցութիւններ է վարել դաշն կապելու Պարկաստանի հետ, որ մօտ օրերս կը ստորագրէ: Մի քանի օրից մենք կապ կը հաստատնենք Պարկաստանի հետ Ջուլֆայի վրայով (ազմակից և երեսրատուն ծափեր):

Եւրոպայից մենք ստացանք իրական օժանդակութիւն, որի համար մենք պատրաստում ենք մեր երախտագիտութիւնը: Չէզոք պետութիւնները, Շվեյցարիան և Սկանդինաւեան պետութիւնները մեծ ուշադրութիւն են դարձնում մեր հանրապետութեան վրա: Նրանք հենց տարով բաց են անում մեզ խոշոր վարկեր, մեծ քանակութեամբ մթերքներ, կենդանիներ, գործիքներ, տրանսպորտի մէջոցներ դնելու համար: Այդ վարկերի բացումը յաջողացրել է մեր պատասխանատու պատերազմական:

Ներքին ճգնաժամը, թէև պատրաստականութեան յաղթեց մեզ հետ բանակցելու և խոսքերով շատ էարերացական արտադրութեան ցոյց տուց դէպի մեզ, բայց գործով և իրականում նա ոչ մի բանով չի տարբերուում Ադրբէջանից: Բոլոր երեսյթներն, բարերացակամ վերաբերմունքի մենք կը հանդիպենք միայն մեր փորձի մէջոցով (ազմակից ծափեր):

Ադրբէջանում, ուր կայ ասրասփելի հալածանք հայ տարրի դէմ, մասնաւորապէս գաղթականների հանդէպ, բանտարկուած են մօտ 2500 հոգի, որոնք ենթակայ են ամէն տեսակ բռնութիւնների ու գաժանութիւն-

Նեբի. անմեղ մարդկանց քմահաճօրէն գնդակահարելը սովորական երեւոյթ է դարձել։ Փորձեցինք համաձայնութեան գալ Ադրբէյանի հետ, բանակցութիւններ սկսեցինք, կոնֆերանս պիտի գումարէինք, բայց բանակցող արտակարգ լիազօր Հիւսէյնովը յանկարծակի Թիֆլիսից հեռաւ վրայով մեկնեց Մոսկւա...

Ա. Աբեղեան (դաշն.). — Գնացել է վիմունէիտներ բերելու (ծիծաղ տեղերից)։

Նախարարապետ. — Դուք կարդացիք լրագրներում, որ սովիետական Ռուսաստանը ցանկութիւն է յայտնել լինել իրաւարար Հայաստանի և Տաճկաստանի միջև, (վ. Նաւասարդեան տեղից մեզ վրա սիրահարւել են»)։

. . . . . .

Բայց նրանք խօսքից գործի են անցել։ Նրանց խօսքի և գործի մէջ մեծ տարբերութիւն կայ։ Մօսքով ամէն ինչ մեզ համար լաւ է, բայց գործով... Նրանք զրաւում են մեր տերիտորիայի անվիճելի մասերը՝ Զանգեզուրը, Ղարաբաղը և որպէսզի արիւնհեղութիւն չը լինի... տալիս են Ադրբէյանին։

Արդէն անկդոտ է դարձել, թէ Հայաստանի արտաքին գործերի նախարար Հ.Օհանջանեանը միայն նօտաներով է բողոքում... Մենք ցոյց կը տանք, որ հայ ժողովուրդը գիտէ բանակցել ոչ միայն խօսքով, այլ նաև գէնքով։ Ես Հաւատ ունեմ աւելի ապահովել մեր երկիրը նախ խօսքով և ապա միայն գէնքով՝ բանակցելով մեր դրացիների և խօսքով բաբեկամների հետ։ Վերջապէս պարզ է, որ Ռուսաստանը ձգտում է գրաւել Օլքի, կարս, Դարալագեազ։ Ես հաւատացած եմ, որ նման երազկոտութիւն յօդս կը ցնդի։ Մեր ժողովուրդը և բանակը ուրբ են կանգնել և մահուան գնով որոշել են ազատ ապրել։ (ընդունդնոստ ծափեր)։

Փ.-Նախագահ Ա.Սահակեանը յայտարարում է 10 րոպէ ընդմիջում։

Ընդմիջումից յետոյ, ժամը 9-ից 30 րոպէ անց, փոխ-նախագահը յայտարարում է նիստը վերաբացած։ Խորհրդարանը քւէարկութեամբ որոշում է քննութեան առնել նախարարապետի գեկուցումը։ Խօսք է առնում պատգամաւոր Ն. Ադրալեանը.—

Նախարարապետ Հ. Օհանջանեանի ընդարձակ և բազմակողմանի գեկուցումն իր բովանդակ ծաւալով քննութեան առնելու նպատակ չունեմ։ Զեկուցումից երևաց, որ խորհրդարանի բացման նախօրեակին մօտ էր հերթական խնդրի իրականացումը՝ Զուլֆա երկաթուղագծի բացումը Հայաստանից դէպի Պարսկաստան։ Մի չարաբաստիկ հանգամանք միայն խանգրեց կառավարութեանը անելու մեզ, Հայաստանի խորհրդարանին, այդ ընծան։ Բայց մենք հաւատացած ենք, որ այդ մօտ օրերի խնդիր լինելով՝ չուտով կիրագործէ։

Այս կարճ ժամանակայ ընթացքում չատ մեծ գործ է կատարել, մեր ռազմական ճակատները խոյր չափով կրճատուած են և սակաւաթիւ զօրքով պահպանել է մեր հայրենիքը, և նոյնիսկ տիրացել ենք մեր հայրենիքի անբաժան մասերին։ Կառավարութիւնը կարողացաւ ապացուցել, որ թաթարը մեզ համար վնասակար չէ։ Թաթարների այդ բազմութիւնն այլ ևս անթժէք է մեզ համար և մենք անհրաժեշտ պէտք է պատմական խնդիրները լուծենք։ Ներքին ուժերը յաղթահարուած են ընդմիշտ՝ յետագայ խնդիրների լուծմանը յաղողակ հանդելու համար։ Մօտ է այն օրը, երբ մեր հարևան Ադրբէյանը պիտի համոզւի, որ իր զարքած բոլոր խաղերն է գուբ են և

խաղաղությունը կը հաստատուի այն ժամանակ, երբ Գանձակում և Ակներանում դիրք կը բռնեն մեր զօրքերը և երբ մենք ամենալաւ բարեկամներ կը դառնանք և հայն ու թաթարը ամենից աւելի հաշտ ու բարեկամ կը լինեն ամէն տեսակէտից:

Մենք կը տիրանանք մեր իրաւունքին: Մենք չե՛նք ձգտել տիրանալ ուրիշների հարստութեան: Մեր բանակի դիւրութիւնը պիտի պաշտպանեն այս երկրի անկախութիւնը և զէնքի ուժով պիտի հաստատեն այս կառավարութեան իշխանութիւնը այնտեղ, ուր աւելի և ուր պակաս, որի մասին յայտարարել է այս կառավարութիւնը:

Մի նոր բաբեկամ է երևացել, որին չենք դիմել, բայց որն ուզում է զօռով իր բարեկամութիւնը կապել մեր վզին: Նա գրաւում է մեր հարևնների մի մասը արիւնհեղութեան վերջ տալու համար և կցում Ապրբէյջանին: Այս անգամ կուռ է ռուսների դէմ խորհրդային դիմակի տակ, որն աւելի զօրեղ է, քան հին կարգերը, նեղմիտ է և բթամիտ ու ոչինչ չի կարողանում ըմբռնել: Հին նման սա էլ իր գերեզմանն է փորում: Նա չի հասկանում, թէ ի՞նչ է ինքը մէկդարյան չափով: Նա չի կարողանում ըմբռնել, որ յաղթում է նա, ով գարգացած է մտաւորապէս և անտեսապէս:

Խորհրդային Ռուսաստանը, այդ ցնցոտին, մտքով, հոգով և հնութեամբ ազգատ այդ երկիրը ցանկանում է անցնել Հնդկաստան՝ օժանդակ ունենալով Մուսուպֆա Քէմալի ոգորմելի զօրքերը: Հոստատութիւնը կորցրած այդ երկիրը գալիս է ապատնալու մեզ, և մենք պարտաւորւած ջոյց կը տանք մեր կերպարանքը, յարգել կը տանք մեր ժողովրդի իրաւունքները, թէև նա այժմ էլ յարգում այդ և ցանկութիւն էլ ունի այն խորտակելու: Ննջեցեալ և դաժան՝ Խորհրդային Ռուսաստանը, քիւրթերի հետ միացած և գինակցած, այդ անկերպարան մարմինը յետագէմ է հին Ռուսաստանի նման: Նա գաշնակցել է Ճահկաստանի հետ: Սոցիալիզմը կապուել է կարմիր աբեան հետ: Ճնշուածէմ ուժն է, որ գալիս է առաջնակարգ կասեցնելու մեր յաղողութիւնը: Մենք ասյ, ինչպես նաև միւս ուժերի դէմ ևս կը պայքարենք: «Ռուս հմայքից ազատուենք»: Ռուսական սոցիալիզմի այդ ներկայացուցիչները ամենախաւարամիտ ներկայացուցիչներն են սոցիալիզմի: Նրանք հին Ռուսաստանի առաքինութիւններն ընդունել են նաագեցնելով, իսկ մոլութիւնը՝ անեցնելով: Մենք ամենածանր պայմանների մէջ ջոյց տուինք քիւրթին և թաթարին, որ այս հողը Հայաստան է և որ հայ ժողովուրդը ցանկանում է ազատ լինել: Այժմ մենք նոյնը ջոյց կը տանք նաև ռուսին: Մենք պէտք է բարձր յայտնենք ամենքին, որ բաբեկամ ենք այն ռուսին, որ կուվկասեան շղթայից այս կողմ չի անցնի և բաբեկամ ենք այն ռուսին, որ Հայաստանի սահմանից այս կողմ չի գալիս (բառն ծպտիտարութիւն):

Գիտենք, ամենայ ընթացքում մեր քշնամիները պիտի պատրաստուեն մեր հանդուռութիւնը խախտելու: Մեր քշնամիները նախանձում են, որ սոցիալիզմից նոր բարձրացած այս երկիրը ուժեղանում է: Մի անգամ ընդ միշտ պէտք է ապացուցենք, որ անառիկ է մեր երկիրը, գիտենք պաշտպանել մեր ազատութիւնը, մինչև համոզուեն, որ այս ժողովուրդը ազատ ապրել է ցանկանում, մինչև որ համոզուեն, որ այս երկիրը անկախ պէտք է լինի: Մեր իրաւունքի գիտակցությունը չենք կարող հանձել մեր նպատակին: Ուժով կարող ենք մեր անվիճելի իրաւունքը պաշտպանել: Մենք օժանդակիցներ Ճահկաստանի, այդ ոճիրների գարհուռելի բոյնի, կործանմանը: Նաև մեր ուժերի ժամանակցութեամբ կործանուեց ասիական միւս բռնակալ պետութիւնը՝ Նիկոլայ առաջինի և Նիկոլայ երկրորդի բռնակալ Ռուսաստանը: Նոյնպէս կը խորտակուեն Քլուռ ռուսական գլուխները: Հերթական հերթը է արևելեան և

հիւսիսային սահմանների վերջնական որոշումը: Եւ մեր անդամակցան բանակը ամբ կանի (ծափեր) և անհրաժեշտ է, որ յոյնդ կերպով հասցէ մինչև սահման վիրջը: Մենք ունենք հերթական խնդիրներ՝ ելք դէպի ծով և տնտեսական մեր նահանգների զարգացումը, եթէ միայն հիւսիսից և արևելքից ոչ մի վտանգ չսպառնայ (ծափեր):

Ա. Խոնդկարեան (սոց.-յեղ.). — Ստեղծած անորոշ պայմանները մեր քաղաքական կեանքի առաջարկին նոյնպէս անորոշ պայմաններ մեր խորհրդարանային կեանքի մէջ: Այս երկրորդ անգամն է, որ Հայաստանի խորհրդարանը բացւում է, բայց դուք կրկին տեսնում էք, որ օրակարգի 2-րդ խնդիրը նորից դառնալ հարցն է: Այս ամբողջ նեռը գրեթէ նւիրւում մեր քաղաքական կեանքի կազմաւորման խնդրին և դա ունի իր պարզ բացատրութիւնը: Տնտեսական կեանքը, ինչպէս իւրաքանչիւր ծնունդ, ծնւում է երկունքով ու ցաւով: Ռուսը քաղաքական կեանքերի ղեկավարները պարտքն է քեզնացնել այդ երկունքը: Երկու տարի է, որ մեր քաղաքական հեւսանգութիւնները չնեք են ծափում տեղծել այդ քաղաքական կեանքը: Երբ հայ քաղաքական կեանքի կենտրոնը հաստատւեց Երևանում, հայ սոց.-յեղ. Ֆրակցիան եկաւ այստեղ և կատարեց իր աշխատանքը: Երկու տարի է, որ օրգանական և փաստական աշխատանք են կատարել այստեղ՝ ելնելէնտ ունենալով հայ աշխատաւորութեան չափերը: Ի Քիւս այդ աշխատանքների, մենք յայտնած ենք մեր տեսակէտները Հայաստանի վերաբերմամբ: Ձեզ չատ լաւ յայտնի է, թէ ինչպէս տեղի ունեցաւ այդ քաղաքական կեանքը. կար մի անորոշութիւն մեր ապագայի նկատմամբ, որ մեր մտածուը պատրաստակամ է ասելական լաւ կերպով (Վ. Նաւասարդեան՝ տեղից. ջնայ խայտառակ կերպով):

Մեր պատգամաւորութիւնը Եւրոպայում մի քանի խօսում է եւրոպական պետութիւնների մասին. իսկ այսօր քաղաքական պայմանները այնպէս են դասաւորւած, որ ժամանակ է յայտարարել, թէ մեր պետութիւնը պիտի ապրի ինքն իր ուժով: Այսօր, ասկարի, ռուսական օրինակացիան նոյնպէս գործնական օգուտ չէ տալիս մեր պետութիւնը թէ Ազգերակովկասում տեղծած դրութեամբ և թէ իր նեղակաց իդեոլոգիայով: Եւ ես պատրաստ ունեմ յայտնելու այստեղ սոց.-յեղ. Ֆրակցիայի կողմից, որ մենք եկած ենք այն համոզմանը, որ Անդրկովկասի դեմոկրատիան պիտի ապրի ինքն իրեն անկախ (բուռն ծափեր, բացականչութիւններ. «վերջապէ՞ս»): Իւրաքանչիւր ոք, որ դէմ կը գնայ այդ չափերին, կը գնայ նոյնպէս քէմամբ, և մենք դէմ պիտի գնանք նրան (ծափեր): Բայց ոչ ամէն ոք, որ ասում է Միացեալ և Անկախ Հայաստան, կարող է ժամանակել մեր քաղաքական կեանքին: Մի քանի ամիս առաջ մենք յայտնեցինք, որ մեր կոալիցիոնը չէ թէ ընդդիմադիր է հայ քաղաքական կեանքին, այլ հայ քաղաքական կեանքի: Ես, իրը վերահասու մեր ճգնաժամի օրերին, նոյնն եմ հաստատում այժմ: Ձիչա է, փորձեր են եղել և նոյնիսկ բանաորհել են մեր ընկերներին, բայց մեր վերաբերմունքը նոյնն է մնացել, այսինքն՝ հայ ժողովրդի չափերը:

Աւտաքին և ներքին քաղաքական կեանքի մասին մեր Ֆրակցիայի տեսակէտը պարզ է եղել: Բրեստ-Լիտովսկի տզբ.-կոնֆերանսի մէջ որոշում կայացաց Հայաստանի ամբողջացման մասին, որին համաձայնեցինք և մենք: Նոյնն ենք ասում նաև հիմա:

Երկրորդ խդիրը տզբ.-ամբողջացման խնդիրն է: Հայաստանը պէտք է լինի հայաստանցիների համար: Ճնշդրտական պայմանները ցոյց են տալիս, որ Հայաստանում պիտի լինեն նոյնպէս այլազգիներ: Քիչամէն տարբերեն, ան-

քաւլա, պիտի գաղտնաբարեն, ինչպէս ուսուցիչը գաղտնարաւում է աշակերքին։

Մենք գանում ենք, որ մեր ընդհանրապէս գերը անհրաժեշտ է այսօրով։ Մենք մեր պիտի պահանջենք պարլամենտական կառավարութիւն՝ կազմած պարլամենտարիզմի հիմունքներով։ Պէտք է կազմել կաբինետ՝ ներքին բաղդատելի ուժերի հետ, որոնք կարող են օգնել մեզ՝ ֆինանսական խնդիրները լուծանելու։ Ամենամեծ արտաքին պարտականները յայտնի են հիմա։ Կը մնայ ներքին ֆինանսական կետերի եւ կանոնաւորել։

Ահա իմ անձնական դիտողութիւնները վարչապետի գեկուցման առթիւ։ Ես կրկնում եմ, որ խորհրդարանը պէտք է յարմարակից իր աշխատանքները։

Ց. Բուդագեան. — Դաշնակցական ֆրակցիայի կողմից կարդում է հետեւեալ բանաձեւը. —

«Լսելով կառավարութեան գեկուցումն երկրի դրութեան եւ կառավարութեան գործունէութեան մասին՝ խորհրդարանի դադարի ժամանակամիջոցում՝ խորհրդարանն իր հաւանութիւնն է տալիս այդ գործունէութեանը եւ հրահանգում է ոչ մի միջոց չխնայել, նոյն հունդով աշխատել ամրապնդել մեր երկրի դրութիւնը՝ ճանաչելով իբրեւ քչամէ բոլոր նրանց, որոնք խոչընդոտ կը հանդիսանան միացեալ եւ Անկախ Հայաստանի ստեղծելու գործում։

Խորհրդարանը մեկնում ժամանակ չի կարող լուծիչներ անցնել մեր քաղաքի բանակի վերջին ամիսներում կատարած հերոսական գործերի մասով եւ այդու իր պարտքն է համարում յղել նրան իր ջերմ ողջոյնները»։

Բանաձեւի ընթերցումն ընդունւում է բուռն ծափահարութեամբ։ Դրւում է քւեարկութեան եւ ստանում՝ կողմ 21, հակառակ ոչ մի եւ ձեռնպահ 2 մարդ։

Օրակարգի երկրորդ հարցը խորհրդարանին նոր արձակուրդ եւ լիազօրութիւնները կառավարութեան յանձնելու մասին՝ գեկուցում է օրէնսդրական յանձնաժողովի անդամ Գ. Քիւլէյեանը։ Օրինագիծն ընդունւում է եւ խորհրդարանին նոր արձակուրդ է տրւում մինչեւ հոկտ. 31-ը՝ պատւերով, որ ամառնայ դէպքում խորհրդարանի նիստ հրաւիրել։

ՆՈՑԵՄԲԵՐ 11-Ի ԱՐՏԱԿԱՐԳ ՆԻՍՏԸ

Նախագահում է Ց. Քալշագեանցին։

Նախաբարեկան օրինակում նստած է կառավարութիւնը։ Ունկնդիրները բաժանութեան ու պատշգամբը լցւած է խուռն բազմութեամբ։

Նախագահ. — Սրանից մի չորս տասը խորհրդարանը դադար տւեց իր աշխատանքներին՝ յանձնաբարելով նախագահութեանը կոքերապրյն գէպքերում հրաւիրել արտակարգ նիստ։ Վերջին օրերս տեղի ունեցան խոչոր եւ նշանակալից փոփոխութիւններ հանրապետութեան կեանքում, որոնց առթիւ անհրաժեշտ էր, որ խորհրդարանը լսելով կառավարութեան հաղորդագրութիւնը՝ տար իր խօսքը։ Նկատի առնելով այդ անհրաժեշտութիւնը՝ նախագահութիւնը հարկ համարից հրաւիրել արտակարգ նիստ։

Խօսքը պատկանում է կառավարութեան նախագահին։

Նախարարապետ Հ. Օհանջանեան. — Ծարգելի պատգամաւորնե՛ր. Ձի անցել մէկ չորս այն օրից, երբ ես գեկուցում տւի երկրի կացութեան մասին եւ խորհրդարանը որոշից դադարեցնել իր աշխատանքները։ Սակայն, տեսը, գրութիւնը փոխւած է այնքան, որ խորհրդարանն անվիճելիօրէն պիտի էքստրեմ լինի անց ու գարձին եւ պիտի առ իր վերջնական խօսքը։

Առաջին զեկուցումն ևս վերջացրի այն հաղորդագրությամբ, թէ ռազմական գործողութիւնները չարունակւում են և մեր զօրքերը մանակի յաջողութիւն են ունեցել: Յետագայում ռազմական գործողութիւնները այնպիսի ընթացք ստացան, որ հայկական բանակի հրամանատարութիւնը ստիպած եղաւ տանձիկ հրամանատարութեանը զինադադարի առաջարկ անելու. հակառակորդի կողմից այդ առաջարկն ընդունուեց: Ռազմական գործողութիւնների դադարումը չդադարեց պիտելու. նաև դիւանագիտական միջոցների. նախքան զինադադարի առաջարկ անելը՝ կառավարութիւնը նոյեմբ. 3-ին յատուկ գրութեամբ մէկ դիմում արեց Անգորայի կառավարութեանը՝ առաջարկելով բանակցութիւններ սկսել և վերջնական հաշտութիւն կնքել Տաճկաստանի և Հայաստանի միջև: Տարօրինակ զուգադիպութեամբ Անգորայի կառավարութիւնը մեզնից առաջ՝ նոյեմբ. 2-ին դիմում է եղել կատարած՝ միևնոյն մտքով, բայց կառավարութիւնը այդ գրութիւնը ուշ է ստացել:

Որպէսզի միանգամայն պարզուի մեր առաջ դիւանագիտական բանակցութեանց և զինադադարի ընթացքը, ես կը կարդամ այն բոլոր գրութիւններն ու հեռագիրները, որոնք փոխանակուել են Հայաստանի կառավարութեան և Անգորայի կառավարութեան ու տաճկական ուժերի հրամանատարութեան միջև:

Ահա, թէ ինչ է գրում մեզ Անգորայի կառավարութիւնը նոյեմ. 2-ին:

---

2 նոյեմբ. 1920 թ. Անգորա, № 263

Հայկական Հանրապետութեան Արտաքին Գործերի պ. Նախարարին

Երևան

Այժմ, երբ լիակատար յաղթութիւնը գալիս է պսակելու մեր արևելեան բանակի ջանքերը, Տաճկաստանի Ազգային Մեծ Ժողովն ուզում է կրկնել հայ ժողովրդին սրտէն առաջները իր սրած խաղաղութեան առաջարկը և նորից հաւաստիացնել, որ նա չի ձգտել անցեալում ոչնչացնել Հայաստանը, խլել նրանից իր անկախութիւնը կամ վտանգել դրան երբեմն նրա էքսուէնքները, սակայն, մենք կարծում ենք, որ պարտաւոր ենք պահանջել Հայաստանի կառավարութիւնից, որ նա նոյնպէս վարուի մեզ հետ և դադարի Արեւելեում բրիտանական իմպերիալիզմի խոնարհ գործիքը լինելուց: Մենք համոզուած ենք, որ թիւրք և հայ ժողովուրդների էքսաբու դէմ վարած երկարատև արիւնահեղ կռիւները՝ մինչև 1918 թուականը՝ գլխաւոր պատճառ են ունեցել յաւակնութիւնները ցարիզմի, որը ձգտում էր տարածել իր իշխանութիւնը Արևելեան Անատոլիայի վրա: Յաջորդ բեժիմի տապալումը առաջ բերեց հանգստութեան շրջան, ընդհուպ այն առանձնաշնորհման, որ ռուսական զօրքերի հեռանալուց յետոյ, Տաճկաստանը կարողացաւ պահել հայկական հրապարակների կատարած տնական ջարդերի հանդէպ:

Յաղագս այնքան ջանքերով վերականգնեցինք, նորից խախտուեց, երբ իմպերիալիստ Անգլիան յաղթանակելով՝ կամեցաւ պահել Միջագետքը և ձեռք դնել Փոքրկասեան ու Բաքւի նաւթաշատ շրջանի վրա:

Ցարիզմին Ծառայելուց յետոյ, Հայաստանն այս անգամ Անգլիայի նպատակներին Ծառայեց և մեր դէմ բաց արեց նոր զարհուրելի Քշամոութիւն, որ չարունակւում է դեռ ևս ի մեծ չահ Լոնդոնի ֆինանսիստների:

Թիւրք ժողովուրդը, որ գրեթէ մէկտեղ պաշտպանում է արևելքը արևմուտքի կապիտալիստների ընչաքաղցութեան դէմ, չէր կարող թոյլ տալ հայերին անընդհատ դաւադրել նրա կեանքի դէմ և նրա արևելեան գաւառների վրա յարձակումով փորձել ձեռք երկարացնելու. Միևնոյնժամանակ և պարտաւոր էր բրիտանական բանակներին՝ փշրելու համար ընդդիմադրութիւնը. Ահա՛ թէ ինչ պատճառներ են ստիպել նրան մտնել մի քիչ ապատարիւնը և անկախութիւնը:

Այս նկատումները և հայ գիւղերի անընդհատ յարձակումները էին, որ մեզ պարտաւորեցրին եռանդուն կերպով չարժուել մեր երկրի դէմ, բայց ցանկանալով արձանագրութեան վերջ տալու համար որևիցէ արիւրը ձեռքից չթափցնել՝ խնդրում ենք Երևանի կառավարութիւնից այս յայտագիրը նկատել որպէս խաղաղութեան վերջնական առաջարկ Թիւրքիոյ Մեծ Ազգային ժողովի կառավարութեան կողմից: Որպէսզի հաշտութիւնը կայանայ, բաւական է, որ Հայաստանը մեզ իրական երաշխիք տայ, թէ այսուհետև նա մեր դէմ որևիցէ յարձակողական գաղափար չի սնուցանելու և գործադրում է Արևելքում Անգլիայի կապիտալիստների առաջապահը լինելուց: Մենք պարտաւոր ենք հայ ժողովրդին մխիթարն տեսակ ապահովութիւններ տալ և խնդրում ենք այս մասին անմիջապէս սկսել խաղաղութեան բանակցութիւններ: Ցուսալով, որ մեր չափաւորութիւնը և մեր խաղաղասիրական դիտումները կատարելապէս պիտի գնահատուեն, խնդրում եմ, պ. նախարար, ընդունել ամենաբարձր յարգանքներս հաւաստիքը:

Արտաքին գործերի ժողովրդական կոմիսար՝ Ահմէդ Մուխտար

Ուրեմն, այս գրութիւնը գրելուց մէկ օր յետոյ, այսինքն՝ նոյեմբ. 3-ին Հայաստանի կառավարութիւնը Անգորա է ուղղել հետևեալ դիմումը:

Տաճկաստանի Ազգային Մեծ ժողովի կառավարութեանը Անգորայում

3 նոյեմբ. 1920 թ.

Տաճիկ և հայ ժողովուրդների բազմադարեան հարևան լինելը, Տաճկաստանի և Հայաստանի հանրապետութեան սահմանների ընդհանրութիւնը անպայման պահանջում են այդ պետութիւնների մէջ խաղաղ յարաբերութիւններ, որոնց համար հիմք պիտի ծառայեն փոխադարձ յարգանքը և իւրաքանչիւր երկրի կենսական չահերը: Իր բոլոր հարևանների հետ Հայաստանը ձգտում է այդպիսի յարաբերութիւնների և բոլորի հետ էլ դնելում է խաղաղ յարաբերութիւնների մէջ:

Հայաստանի կառավարութեան և ժողովրդին յայտնի է Ազգային Մեծ ժողովի յայտարարութիւններից, որ և տաճիկ ժողովուրդը և Ազգային Մեծ ժողովն ընդունելով ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը՝ միւս քաղաքակիրթ ժողովուրդների հետ ճանաչել են Հայաստանի Հանրապետութեան խաղաղ և անկախ գոյութեան իրաւունքը: Այդ բոլորն աչքի առաջ ունենալով՝ Հայաստանի ժողովրդի և կառավարութեան համար միանգամայն անհասկանալի և անպատեհ է մեր օրերի առաջխաղացումը դէպի Հայաստանի սահմանները, առանց բացատրելու պատճառները և նպատակները, նամանաւանդ, մեր կատեգորիկ յայտարարութիւնից յետոյ — չանցնել օսմանեան պետութեան սահմանները: Իրրև առաջխաղացման արդիւնք կատարուում է անօգուտ արիւնհեղութիւն:

Միանշանակ բաղխումը խաղաղ ճանապարհով լուծելու ցանկութեամբ, Հայաստանի կառավարութիւնը դեռ հոկտ. 8-ին իր լիագօրի միջոցով գրաւոր աչքառել է մեզ տաճիկ սահմանեան լրջութիւնները իմանալ ախած

արշաւանքի պատճառները և դանել փոխադարձ համաձայնութեան ուղիներ։ Այժմ նոյն գրացումներից զրկուած՝ Հայաստանի կառավարութիւնն անիմաստ դիմում է Ազգային Մեծ Ժողովին՝ գալ փոխադարձ համաձայնութեան և հանգուցալուծման ուղիի վրայ։

Հաստատած լինելով, որ տրտիւնի ճանապարհը կարող է և պիտի դանել, Հայաստանի կառավարութիւնը խնդրում է մեր կառավարութիւնը նշանակել մեր և մեր ներկայացուցիչների տեսակցութեան տեղն ու ժամանակը, որտեղ կարող պիտի լինեն պարզել ընդհարումների պատճառները և դանել խաղաղ համաձայնութեան ուղիները։

Սպասելով մեր պատասխանին՝ ընդունեցէք յարգանքներիս հաւաստիքը։

Արտաքին գործերի նախարար՝ Հ. Օհանջանեան

Առաջնորդւելով մխիթարեան ոգով ու տեսակէտներով՝ հայկական բանակի հրամանատարութիւնը նոյեմբ. 5-ին գինադադարի առաջարկ է արել։ Այդ առթիւ տաճկական բանակի հրամանատար պարբերգիր Քեազիմ փաշան գրում է մեզ հետեւեալը։

6 նոյեմբ. 1920 թ.

Ալեքսանդրապոլի հայ բանակի հրամանատարին

Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան Անգորայի Մեծ Ժողովի կառավարչական ուղղած հեռագիրը և արբունհեղութիւնից խուսափելու համար գործողութիւնների դադարեցնելու մասին մեր գրութիւնը այսօր (6 նոյեմբ.1920թ.) ժամը 9-ին ստացայ։ Կառավարութեանս ուղղուած հեռագիրը Անգորա հաղորդեցի։ Ի հարկէ, առանձին պատասխանը մեզ կը հաղորդեմ։

Ինչպէս որ մինչև այժմ հայ բանակին գրած հեռագիրներից հասկացուում է, փախուստով արբունհեղութիւնից խուսափել՝ մինչև այդ պատասխանի առացումը գործողութիւնները դադարեցնելու մեր առաջարկն ընդունած եմ։ Որպէսզի զօրամասերս ապահով լինեն, որ առաջարկը իրական է և անկեղծ և որպէսզի հաշտութեան պայմանների բանակցութեան ժամանակ մեր զօրքի հետքը ապահովւի, փոխադարձաբար հետևեալ պայմանների մեր կողմից ընդունելը և գործադրելը կատարելիմ։

1. Այժմ Արփաչայի արևմտեան գետնից հայ զօրամասերը Ալեքսանդրապոլը մաքրելով Արփաչայից առնուազն 15 կիլոմետր դէպի արևելք պիտք է քաշւեն։

2. Ալեքսանդրապոլ քաղաքը չպիտք զրաււի, միայն քէ բերդը և կայարանը մեր կողմից զինուորական զրաւման տակ պիտք է առնւեն։ Ալեքսանդրապոլում հանրային ապահովութիւնը, կարգի պահպանութեան տակ գտնւելը Ալեքսանդրապոլի բնակչութեան պիտք է յանձնարարւի։

3. Նկատի ունենալով, որ Ալեքսանդրապոլը մեծ նշանակութիւն ունի որպէս թիֆլիս երևան երկաթուղի միացման կէտ, Ալեքսանդրապոլի չուրջը սուս կիլոմետր տարածութեամբ չրջանը քէրբ բանակի վաստհութեան՝ զօրամասերի կողմից զրաւելուն արգելք չլինել։

4. Զինագադարի տևողութեան միջոցին, քէրբեքական բանակի զօրքերի վրա ոչ մի կողմից և ոչ մի պատրւակի տակ յարձակում չանել և կրակ չբանալ։

5· Վերևի յոլտաններդը վաղը (7 նոյեմբ· 1920 Թ·) կէսօրից յետոյ մինչև ժամը 5–ը ամբողջապէս գործադրել և Արփալեայի արեւմտեան գեղեակամ հոդամասերը և Ալեքսանդրապոլը յիշեալ օրը կէսօրից առաջ մինչև ժամը 10–ը ամբողջապէս պարպել:

Եթէ այս պայմանները չկատարուեն և 7 նոյեմբ· 1920 Թ· կէսօրից առաջ, մինչև ժամը 8–ը համաձայնութեան պատասխան չտրուի, պատերազմ պիտի լինեմ զինուորական գործողութիւնները չաբանակելու և սրանից առաջ եկած ներքինի և բարոյական պատասխանատուութիւնը, իբրև հայոց բանակի հրամանատարի, ձեզ պիտի պատկանի: Յայտնելով այս՝ կը մնամ՝

Արևելեան բանակի ընդհանուր հրամանատար՝ Ֆէրիդ Փեզիմ

Կարաբեհիր

Սոյն գրութեան մէջ առաջարկուած պայմանները կատարութեան կողմից ընդունելիցն և նշանակուած ժամին գործադրելիցն, որից յետոյ հարկ համարելինք Ադրարյի կառավարութեան ուղարկելու հետևեալ գրութիւնը·

Արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Ահմէդ Մուխտարին

8 նոյեմբ·, 1920 Թ·

Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը հաճոյքով ստացաւ սոյն նոյեմբեր ամսի 2–ի յայտագիրը, որով առաջարկւում է պաշտօնապէս սկսել խաղաղութեան բանակցութիւններ: Այս առաջարկն եկաւ հաստատելու իմ կառավարութեան կարծիքը, որն ինքն իսկ, ձեր առաջարկը ստանալուց առաջ, սոյն ամսի 3–ի իր յայտագրում յայտարարել է, թէ անվարձելու է կռիւը տևական համաձայնութեան, որ հիմնուած լինի երկու պետութիւնների փոխադարձ յարգանքի վրայ:

Այժմ տեղեկացած լինելով, որ ձեր կառավարութիւնը լիովին բաժանում է նրա կարծիքը՝ հանրապետութեան կառավարութիւնը պատրաստ է փութացնել իր պատուիրակութիւնը, որի անդամներն արդէն նշանակուել են, սկսելու համար խաղաղութեան բանակցութիւնները: Նկատի առնելով, որ իմ կառավարութիւնը տալիս է ամենաուր կարևորութիւն կիւրեղ և հայկական առաջնիկայ կոնֆերանսին, նա փափագում է, որ բանակցութիւնները տեղի ունենան Ալեքսանդրապոլում, որպէս մի այնպիսի տեղի, որի հետ որքան մեզ, նոյնքան և ձեզ համար դիւրին է կանոնաւորապէս հետագրական հաղորդակցութիւն ունենալ: Ուրիշից օգուտ՝ իմ կառավարութիւնը վստահացնում է ձեզ, որ կատարելապէս համաձայն է կինելու. Թիւրքիոյ Ազգային Մեծ ժողովի կառավարութեան հետ մի այնպիսի ակական խաղաղութիւն, որ համապատասխանէ երկու երկիրների կենսական կարիքներին, ապահովելիցնէ Հայաստանի հանրապետութեան կուլտուրական և արդիւնաբերական զարգացումը և կարողանայ ստեղծել փոխադարձ և սերտ բարեկամութեան մի հող՝ ծառայելու համար խաղաղութեան գործին Արևելքում յօդուտ մեր երկու ժողովուրդների: Իմ կառավարութիւնը իր պատասխանութիւնն է համարում ընդգծել այստեղ այն իրողութիւնը, որ նա մինչև գիրագասել է և գերագասում է իր ժողովրդի բարեկեցութիւնը և իր պետութեան չահերը, ինչպէս նաև իր դաշտւոր դրացիների, որոնց մէջ և Թիւրքիայի հետ հաստատուն և տևական բարեկամութեանց յարաբերութեան

հաստատելը, որ նա բնավ չէ ծառայել ցարիզմի շահերին և ոչ էլ որևէցէ իմպերիալիզմի: Այժմ Թիւրքիայից է կախված նրան տեսակէտն իրապէս և գործնականապէս ընդունել՝ մշակելու համար մեզ հետ դրւած հարցերի համապատասխան մի համաձայնութիւն:

Հայաստանի կառավարութիւնը չի զեկավարւում անցողական պայմաններով և ոչ օրւայ փոփոխական մթնոլորտով, այլ միայն բուռն ցանկութեամբ՝ ստեղծելու Տաճկաստանի հետ կայուն յարաբերութիւններ հաստատելու մի հող՝ մտալով հանդերձ կենտանակ մի պետութիւն:

Սպասելով ձեր անմիջական պատասխանին և ոգևորւած բուռն ցանկութեամբ լուծելու հնարաւոր չափով չուտ և կատարելապէս վաղուց հասունացած հայ–թիւրքական յարաբերութիւնների հարցը, խնդրում եմ պ. կոմիսար, ընդունել ամենաբարձր յարգանքներիս հաւաստիքը:

Արտաքին գործերի նախարար՝ Հ. Օհանջանեան

Այսպիսով, կարծես, բանակցութիւնները յայտ ընծայք էին ստանում և հաշտութեան հնարաւորութիւնը կարելի դառնում: Սակայն, նոյեմբեր 9–ին ստացանք մի նոր դիմում, որի բովանդակութիւնը հետևեալն է.

8 նոյեմբ., 1920 թ.

Հայկական բանակի հրամանատարութեան, հայկական

կառավարութեան

Հաշտութիւն խնդրելու առթիւ ուղարկած նոտան և ռազմական գործողութիւնները կանգնեցնելու մասին արած դիմումը Անգորայի իմ կառավարութեան յայտնելով, մինչև պատասխան ստացւելը աւելորդ արիւն չթափելու համար, փոխադարձաբար առաջարկած պայմանները (7 նոյեմբ. 1920 թ.) ձեր բանակի կողմից գործադրութեան անմիջապէս յետոյ, ռազմական գործողութիւնները դադարեցրի: Այս անգամ իմ կառավարութեան կողմից առաջարկած զինադադարի պայմանները ստորև նոյնութեամբ արտագրում եմ: Սոյն պայմանը ամբողջապէս գործադրելով՝ խնդրն հաշտութեան պատրիարքներին Ալեքսանդրապոլ ուղարկելը խնդրելով՝ յայտնում եմ յարգանքներս՝ Ֆէրիդ Քեազիմ Կարաքեխիր:

Զինադադարի պայմանները: Առաւօտ 24 ժամւայ ընթացքում Ալեքսանդրապոլում բոլորովին դործադրելի վիճակում 2000 արագաւազան հրացան, սարքով և կենդանիներով միասին 20 հատ ծանր և 40 հատ թնթիւ գնդացիր, երեք ժարտկոց թնդանօթ, 4000 ռումբ, 1000 անգուկ հրացանաձիգ ռազմամթերք, 6000 թնդանօթի ռումբ, երկու չոգեմէքենայ և 50 վագոն պիտի յանձնւի մեզ: Կանոնաւոր և անկանոն հայկական զինուորական ուժերը Արփաչայի ընթացքը — Ալաղեոզ կայարան, Կիմրիկլի — Կուլիքան, Նալբանդ կայարան — Վարանցովկա գծից արևելք պիտի ետ քաշւեն: այս գծից արևմուտք գտնւող երկաթուղագիծը չքանդւած և անվնաս պիտի յանձնւի:

Երկրորդ՝ առ առաւելն 3 օրւայ ընթացքում զարձեալ կանոնաւոր և անկանոն հայկական զինւած ուժերը Սուրմալու–Արաքս կայարան — Կիզիլ–չի, Աբէք—Ալաղեոզ լերան լանջը — Տանապէտզաք—Նովո–Միխայլովկա — Լոռիքենդ—Շերմուդ եալանդաղ գծից արևելք պիտի քաշւեն:

Երրորդ՝ զինադադարի կնքումից անմիջապէս յետոյ Սանահէն կայարանի և Ալեքսանդրապոլի միջև գծի վրա ամէն տեսակ ռազմական պիտոյքներ փոխադրութիւնը պիտի կանգ առնի: Այս փոխադրութիւնները տուեալ

լու համար Սանահին կայարանը և Ղարաքիլիսէ մէկ-մէկ յանձնախմբեր պիտի ուղարկէն և հայկական կառավարութիւնը վերոյիշեալ յանձնախմբերի անձնական խնդիրները և Ալէքսանդրապոլի չրջանում նրանց արևելեան ճակատի հրամանատարութեան հետ կանոնաւորապէս և ապահովապէս կապ ունենալը պիտի ապահովի:

Չորրորդ՝ մինչև գիշերադարձ 3րդ օրը, երեկոյեան երկու կողմի պատուիրակները հաշտութեան բանակցութիւնները սկսելու համար Ալէքսանդրապոլ պիտի գնան և այս ժամանակի ընթացքում, եթէ առաջին և երկրորդ պայմանների բովանդակութիւնը իրագործուած է, իսկոյն հաշտութեան բանակցութիւնները պիտի սկսուն:

Հինգերորդ՝ գիշերադարձ ժամանակի ընթացքում մեր զօրամասերը Ալէքսանդրապոլի չրջանում, առաջին պայմանում յիշուած Արփաչայ ընթացք նալչանդ կայարան վարանցովկա գծից արևելեան կողմը և միւս չրջաններում իրենց գտնուած գծից առաջ չպիտի անցնեն:

Վեցերորդ՝ գիշերադարձի կնքումից անմիջապէս յետոյ երկու կողմից քշնամական գործողութիւններին վերջ դրւի:

Սոյն գիշերադարձի պայմանները Ալէքսանդրապոլի չրջանում գտնուող հայկական առաքւոր մասերին յանձնելու ժամից գործադրութեան մէջ են մտնում և պայմանաժամը, ի վերոյ, եթէ կարճ գրացուի, երկարաձգելու պայմանով՝ հօր օր է: № 2378. իսկականի հետ ճիշտ է,

Ռեազիմ Կարաքեխիր

Ուրեմն, գիշերադարձի առաջին պայմանները մեր կողմից ընդունելուց և իրագործելուց յետոյ հակառակորդն առաջարկում է բոլորովին նոր պայմաններ, այս անգամ աւելի խիստ. ընդունել դրանց՝ նշանակում է յանձնուիլ հոգի կէսից աւելին գիշել քշնամուն, բանակը գիւղաքաղ անել, ի հարկէ, առանց երաշխիք ունենալու, որ մի քանի ժամ յետոյ նոր առաջարկներ չեն արւի:

Կառավարութիւնը որոշեց մերժել նոր առաջարկները՝ պնդելով գիշերադարձի նախկին պայմանների վրայ: Նոյեմբ. 10-ին հետևեալ գրութիւնն ուղարկեց Անգորա.

10 Նոյեմբ. 1920 թ.

Նկատի ունենալով մեր 2 Նոյեմբ. գրութեան խաղաղասէր ոգին՝ մեր հրամանատարութիւնն ընդունել է և ի կատար ածել ամսոյս 6-ի մեր առաջարկած գիւղադարձի պայմանները: Համաձայն մեր այդ նամակի և 8 Նոյեմբ. մեր նուազի բովանդակութեան, որով դուք առաջարկում էք խաղաղութեան պայմաններ և որոնց մենք ակզբունքով համաձայն ենք, ինչպէս նաև ըստ մեր կառավարութեան սրած առաջարկի, մենք արդէն նշանակել ենք մեր պատւիրակութիւնը: Նա պատրաստ է Ալէքսանդրապոլ մեկնելու՝ մշակելու մեր ներկայացուցիչների հետ պայմանները և կնքելու խաղաղութիւն:

Նկատի ունենալով այդ սկզբունքային համաձայնութիւնը և այն, որ մենք պատրաստ ենք անցնել խաղաղութեան բանակցութիւններին, որ գիշերադարձի պայմանները առաջարկել էք դուք ամսոս 6-ին մեր 554 գրութիւնով, ինչպէս այնպիսի պայմաններ, որոնք տալիս են մեզ բոլոր անհրաժեշտ երաշխիքները ապատօրէն առաջ տանելու բանակցութիւնները կոնֆերանսի ընթացքում, իմ կառավարութիւնը գտնում է, որ իր անկեղծօրէն հետապնդ-

գած նպատակը, որի հետ մեր պատւիրակութիւնները հաւաքւելու են Ալեքսանդրապոլում, դիմադրելով նոր պայմանները չի պահանջում: Մենք պատրաստ ենք կոնֆերանսի բացման թւականի մասին մեր պատասխանին:

Արտաքին գործոց նախարար՝ Հ. Օհանջանեան

Նոյն օրը Քեազիմ Կարաբեքիր փաշային առացանք հետեւեալ գրութիւնը.

10 նոյեմբր. 1920 թ.

Հաշտութեան բանակցութիւններ սկսելու համար իմ կառավարութեան առաջարկած դիմադրելի պայմանները և Ալեքսանդրապոլում գտնւող հայկական զօրքերի հրամանատարի արձն ընդունելու համար տրած դիմումին ի փոխանակ առաջարկած պայմանները Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործերի նախարարութիւնը միմեանց հետ չպիտի չփոթէ: Իմ բանակը Ալեքսանդրապոլի վրա յարձակուելու պատրաստ մի վիճակի մէջ էր, երբ մեր կառավարութեան հաշտութիւն խնդրելու և զօրավար Սիլիկեանի գործողութիւնները դադարեցնելու համար տրած առաջարկը առացայ և նրանց իմ կառավարութեան յայտնելով՝ ժամանակ իմ ռազմական դրութիւնը ապահովելու համար Ալեքսանդրապոլը գտատիւրով հայկական ուժերի միջև որոշ գիծ չեմ քաշելը զօրավար Սիլիկեանին առաջարկած էի:

Ընդունած այս առաջարկը դիմադրաւորի պայման կարծել և իմ կառավարութեան 8 նոյեմբր. 1920 թ. իմ միջոցով պաշտօնապէս հաղորդած քոյն դիմադրաւորի պայմանները որպէս մի նոր դիմադրաւոր ընդունել և նկատել, երեւակի կառավարութեան իրական հաշտութեան ցանկութեան մասին մեզ կասկածեցնում է:

Իմ կառավարութեան մէջ եղած անկեղծութիւնը դեռ հայկական կառավարութեան կողմից հաշտութիւն խնդրելու դիմումից առաջ հաշտութիւն առաջարկելու փաստով ապացուցւում է: Իմ կառավարութեան երկու կողմից չհաւերը ապահովող իրական մի հաշտութիւն կնքելու վերջնական կերպով որոշում ասած լինելով՝ 8 նոյեմբր. 1920 թ. դիմադրաւորի պայմանները առաջարկած է: Որովհետև այդ պայմանները տրուած պայմանաժամի ընթացքում մեր կառավարութեան կողմից չեն ընդունւել և գործադրւել և արդեպով հնարաւորութիւն չի եղել երկու կողմից պատւիրակների ներկայացում հաշտութեան բանակցութիւնները սկսելու, ցաւ ի սրտի ռազմական գործողութիւնների վերսկսելը յայտնելով, հաղորդում եմ յարգանքներս՝

Քեազիմ Կարաբեքիր:

Ի պատասխան այս գրութեան Հայաստանի կառավարութիւնը Քեազիմ Կարաբեքիր փաշային ուղարկեց մէկ քուղթ, հետեւեալ բովանդակութեամբ.

11 նոյեմբր. 1920 թ.

Ցորին ցաւով իմ կառավարութիւնը տեղեկացաւ, որ իր տեղեկ ձգտումը — երկու հարեան ժողովուրդների՝ Տաճկաստանի, Հայաստանի միջեւ յեղաշրջ արիւնհեղութեան վերջ դնել, որի համար նա ընդունեց և կատարեց ամեն նոյեմ. 6-ին առաջադրած դիմադրաւորի մեր պայմանները—բաւ երևոյթին կարելուն չափ չէ գնահատած մեզ գերազանցութեան կողմից: Իմ կառավարութիւնը չի կարող լցուել նաև այն բանի համար, որ մեր կողմից վերսկսած են ռազմական գործողութիւնները նախ քան մեր կառավարութիւնից մեր վերջին առաջարկի պատասխանի առացումը:

Իր կողմից ստիպած լինելով ձեռք առնել համապատասխան միջոցներ՝ իմ կառավարությունը չի կարցնում իր յոյսը, որ ձեր կառավարությունը ըմբռնում ցնալով Հայաստանի Հանրապետության կառավարության խաղաղասիրական ձգտումները՝ նրա հետ բանակցելու ժամանակ կը գտնէ այնպիսի հիմունքներ, որոնք ընդունելի կը լինեն միաժամանակ երկու կողմերի համար։

Ստանալով ձեր կառավարության պատասխանին՝ մեամ յարգանքներով տրամագրեն գործոց նախարար՝ Հ. Օհանջանեան։

Այսպիսով, ուրեմն, զինադադարի բանակցութիւնները անշուշտ ելք ունենան, որի հետևանքով և վերակուսեցին ռազմական գործողութիւնները։ Եթէ, նոյեմբ. 10-ին, մենք տուացանք Անգորայի կառավարութիւնից մէկ նոր հեռագիր՝ գրած նոյեմբ. 7-ին։ Շատ հետաքրքրական է այդ հեռագիրը, որովհետև նա դնում է մեր առջև Անգորայի կառավարութեան առաջարկած այն պայմանները, որոնք պիտի հաշտութեան հիմք ծառայեն։ Ահա նրա բովանդակութիւնը։

8 *Նոյեմբ. 1920թ. Անգորա.*

Հայկական Հանրապետութեան արտաքին գործերի նախարարութեան

Երևան.

Թիւրքիոյ Ազգային Մեծ ժողովը, նոյն օրւայ մէջ, առաջաւ ամսոյս 3-ին ձեր հաշտութեան առաջարկը (որը՝ ինչպէս երևում է, ճանապարհին խոչոտուած է նոյեմբ. 1-ին մեր տրած հաշտութեան առաջարկին), և մեք արևելեան հակառակ հրամանատարի քննութեանց ժամանակաւոր դադարի պայմանները ձեր զօրամասերի կողմից ընդունելու լուրը։ Այս առիթ պատրաստ ունենք հաղորդելու ձեր հաշտութեան համար ձեր հետևեալ պայմանները։

1. *Հայ-թիւրքական սահմանների հարցը վճռակատարական և հանրաքուէի պարզ կարգ է լինելու։ Համաձայն նախագահ Վիլսընի և թրչնեկների հայկական ինքնորոշման սկզբունքների, բոլոր վիճելի չբլանների ազգաբանական պարտը պիտի հրատիրեն որոշելու իրենց քաղաքական ապագան։ Նրանք կարող են առանց որևէ մէկից կախում ունենալու, վճռել իրենց անկախ պետութեան կազմը և կամ յայտնել, թէ երկու երկիրներից որին են կցում։ Ձեր ժողովրդի կատարեալ ազատութիւնը ապահովելու համար մենք ընդունում ենք, որ վիճելի չբլանների պահպանութիւնը լինի, մինչ այդ մեր երկիրների ռազմարշական մասերով։ Այդ հանրաքուէն լինելու է, ի հարկէ, որքան կարելի է չուտ։ Անգորայի կառավարութիւնը անկեղծ և խոր համոզմունք ունի, որ այս ձևի լուծումը բուն արդարութիւնն է և համապատասխան բոլոր մարդկութեան չահերին, որով նաև հայ և թիւրք ժողովուրդների, որոնք պարտ են վիճելի հողամասերում։ Սակայն, դէքանտաբար, մենք կարծում ենք, որ արևմտացի իմպերիալիստներին, մանաւանդ Անգլիային հաճելի լինելու համար Երևանի կառավարութիւնը տրամադիր է այլ ձևի լուծման, որը մեծ վիքատրանք է հասցնում Ազրիկայի և Ասիայի ժողովուրդների հանդէպ Արևմուտքի պաշտպանների կողմից քարոզած և ի գործ դրած քաղաքական վարդապետութիւններին։*

2. *Թիւրքիան յանձն է առնում իր տրամադրութեան տակ եղած բոլոր միջոցները տալ իր հարևաններին, որպէսզի նրանք կարողանան կատարեալ անկախութեան և ապահովութեան մէջ գոյատևել։*

3· Մենք մեր մկրտներով կօգնենք Հայաստանի պարենաւորման և երկրի մէջ տնտեսական բնականոն դրութեան վերահաստատման։

4· Երկու կողմերը յանձն կառնեն ազատ անցք տալ իրենց երկաթուղիներով և հաղորդակցութեան բոլոր ճանապարհներով միւս կողմին պատկանող անձերին և ապրանքներին և արգելք չեն յարուցանելու միւս կողմի և ծովի, ինչպէս նաև այլ ուրիշ երկրների միջև նման քանակի դէմ։

5· Թիւրքիան յանձն է առնում վերադարձնել իրենց օջախներում համաշխարհային պատերազմի պատճառով իրենց հողամասերից զաղթած հայերին և տալ նրանց ամենաքաղաքակրթած երկրներում ազգային փոքրամասնութեանց տրւած ամենալայն իրաւունքները։

6· Թիւրքիան պահանջում է, որ Հայաստանը տայ իր ապահովութեան համար պէտք եղած երաշխիքները։ Մեր պատւիրակները ապասում են մեր բանակցողներին Ալեքսանդրապոլում· վերջինները պէտք է ունենան իրենց հետ բանակցելու և հաշտութիւն ստորագրելու պէտք եղած լիազօրագրերը։

7· Հաշտութեան բանակցութեանց ընթացքում քշտմտութիւնները դադարեցնելու զինադադարի պայմանները ձեզ կը հաղորդուեն մեր արեւելեան ճակատի հրամանատարի կողմից։

Արտաքին գործոց ժողովրդակ· կոմիսար՝ Ահմէդ Մուխտար

Դուք տեսնում էք արդէն, թէ ինչպէս մեր հակառակորդի խօսքերն ու գործերը չեն համապատասխանում իրար· այն ժամանակ, երբ մենք ընդառաջ ենք գնում իրենց իսկ առաջարկած զինադադարի պայմաններին և անմիջապէս գործադրում, նրանք մէջ են բերում նոր պահանջներ, որոնց կատարումով Հայաստանը պիտի կիսէի, զինաթափւէի և ինքնապատասխանութեան ժամանակաւոր անընդունակ դառնայ։ Այդ բոլորի հետ նրանք չեն մոռանում ընդգծել, որ Հայաստանը Թիւրքիային ապահովութեան երաշխիքներ պիտի տայ, այդ նշանակում է, որ յետագայում ևս պիտի նոր պահանջներ դրւի, այս անգամ, դուշ, Հայաստանի ամրոցների ոչնչացման խնդիրը հրապարակ բերւի և հէնց այդ նպատակով էլ Անդրանիկ կառավարութիւնը չարժի իր բանակները Հայաստանի վրա։

Այսպիսով հայ ժողովուրդը կանգնած է նոյնը փորձութեան առջև։ Նա կամ պէտք է կուռ, կամ անխնայ մորթուռւի տաճիկների ձեռքով։ Կառավարութիւնը ապառնալով բոլոր խաղաղ մէրոցները՝ կրկին փարել է զէնքին, որովհետև երկրի ու ժողովրդի փրկութեան համար ուրիշ ելք չկայ (Ծաւփահարաբիւն)։

Ասում է պատ· Ալ· Խատիսեանը· — Լսելով նախարարապետի զեկուցումը և կառավարութեան քոնած ընթացքի՝ կուզէի իմ խօսքի ընթացքում կանդ առնել մէկ կարևոր խնդրի վրա։ Ամէն պատերազմ վերջանում է խաղաղութեան դաշինքով, բայց պէտք է գիտնալ, որ այդ խաղաղութիւնը միշտ միատեսակ չի լինում· խաղաղութիւն կայ, որ հանդէս է գալիս իբր պարտութեան հետևանք և տասնեակ տարիներ զգացնել է տալիս իր բացասական ազդեցութիւնը· կայ նաև խաղաղութիւն, որ գալիս է յաղթութեան յետևից ու բերում յաղթող ժողովրդին բարեկեցութիւն։ Եթէ այդ այդպէս է, ապա իւրաքանչիւր պատերազմող ժողովուրդ պէտք է դիմէ դէպի պատւաբեր խաղաղութիւն, պէտք է ձեռք բերէ մի դաշինք, որի հովանու տակ կարողանայ աշարգել ապրել ու զարգանալ· իսկ երբ խնդիրը վերաբերում է ՀԱՄԱՀԱՐՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ, ապա նա պիտի ունենայ կրկնակի ժառանգութիւն՝ հասնել պատւաբեր խաղաղութեան նկատմամբ տեսակէտներով և կնքել այնպիսի հաշտութիւն, որ անսասան լինի մեր երկրի գոյութեան հիմքը։

Այս իսկ տեսակէտով մօտենալով ներկայ պատերազմին՝ իւրաքանչիւր հայ քաղաքացի պիտի պատասխանէ այն մասնութիւնից, թէ քանակի է միայն, որ պիտի կուտ։ Այս պատերազմը ժողովրդական է, հետևապէս նրա մէջ մասնակցութիւն պիտի ունենան ամենքը, առանց նկատի առնելու թէ ռազմամակաւոյժն են նրանք թէ քիկոնքուժ։

Պատերազմի ժամանակ ժողովուրդները, ներկայ դէպքում նաև հայ ժողովուրդը, ասվոր են յոյս դնելու ոչ միայն իրենց ուժերի, այլ և դրսեցու, օտարի վրա։ Գիտէք, թէ հայ ժողովուրդը ինչքան օգնութեան կոչեր է ուղղել օտարին և յուսացել, թէ կարող են դրանք որև է արդիւնք տալ, թէպէտ նրա կոչերը մնացել են յաճախ անարձագանգ։ Այժմ գոնէ մենք պիտի հրամարուենք այդ սովորութիւնից, որովհետև քննելով պատաքին կացութիւնը՝ գալիս ենք այն եզրակացութեան, որ դրսից օգնութիւն հասնել չի կարող։ Փաստը հրապարակի վրա է։ երկու ամիս է արդէն, որ մենք կուիւ ենք ղէմում թշնամու դէմ, բայց ոչ մի տեղից օգնութեան կամ միջնամտութեան ձայն չլսեցինք։

Մենք պէտք է հրամարուենք ուրիշի դռները բախելուց, կրկնում եմ այդ, որովհետև եթէ անգամ ուրիշը ցանկանայ միջամտել, օգնել, ապա պարզ է, որ նրա օգնութիւնը ու միջամտութիւնը անչահաւէտ չէ, հետևաբար, աւելի ծանր կացութեան պատճառ կարող է դառնալ։

Մեզ չպէտք է յոյս ներշնչէ նաև այն հանգամանքը, որ կարող է կուիւը ժամանակաւորապէս դադարել։ չատ անգամ է պատահում այդ և չատ անգամ էլ տղայի անակնկալներով յղի։ Ահա մեր առջև են տաճիկները առաջարկած հաշտութեան պայմանները։ գոքա ասում են, թէ հայաստանը պիտի ձգուի, փոքրանայ, բայց թէ ո՞ր տարածութիւնն է, որի վրա մենք պիտի կարողանանք կանգ առնել հանգիստ, ցոյց չեն տալիս։ Նրանք կարող են մեր բոլոր երկրամասերը վիճելի դարձնել։ Ինչպէ ծով ելք են խոստանում, բայց ո՞ւմ երկրամասով — Տաճկաստանի, որ կարող է ամէն րոպէ փակել իր դռները։ Նրանք պահանջում են, որ մենք Տաճկաստանի ապահովութեան համար երաշխիքներ տանք — իշնպէ՞ս։ ի հարկէ, գինքաթի լինելով, այլապէս Տաճկաստանն իրեն կը յայտարարի անապահով վիճակի մէջ։

Ժողովրդի ներկայացուցիչները, որ նստած են այս բարձր հիմնարկութեան մէջ, չեն կարող հաւատալ տաճիկների հաշտութեան առաջարկին. նրանք պէտք է բարձրաձայն յայտարարեն, որ այդ չողոդուն խօսքերի տակ թաղնած են դաժան մտքեր, և նրանց ձայնը լսելի կը լինի ժողովրդին այս պատերից դուրս։

Անօր չեն մեր սեփական ուժերը։ բարեբախտաբար, մեծ չէ նաև մեր դէմ եկող հակառակորդի զօրութիւնը։ փոքր ինչ զգաստութիւն, փոքր ինչ ուժերի յարում և ահա կարող է բախտը յօգուտ մեզ տնօրինել։

Ժողովրդական այն հոսանքը, որ ձգտում է խաղաղութեան, այժմէն իսկ պէտք է գիտակցէ, որ ամէն խաղաղութիւն ձեռք է բերւում ուժով. խաղաղութիւնը պէտք է լինի պատւաբեր և պէտք է ամուր պահէ պետութեան կենսունակութեան հիմքերը։ Նա պէտք է պատրաստ լինի խզելու ամէն բանակցութիւն, որ սկսում է կամ սկսելու է իր իսկ ոչնչացման գնով։ Տաճիկները ուզում են մեզ գրկել հողից՝ մեզ ուզում են գինաթափ անել և ապա հաշտութեան բանակցութիւններ սկսել։ ո՞ր ժողովուրդն է, կամ ո՞ր հոսանքն է, որ սեփական ձեռքով իր գերեզմանը փորելու համաձայնութիւն կը տայ։

Ոչ ոք դէմ չէ հաշտութեան և խաղաղութեան, բայց, կրկնում եմ, ամէնքի նպատակը պիտի լինի ձեռք բերել պատւաւոր հաշտութիւն և նպատաւոր խաղաղութիւն։ Ճիշտ է, մենք կորցրել ենք մեր պետութեան կեսի-

ազ մասերը, բայց դա ժամանակատար երևույթ է։ Փաբիդն էլ պաշարեց, վաթչաստի անկումն էլ ժամալուտ էր. ամեն, ընդհուպ ժողովրդի գլխաս ազու և գիտակից հայրենասիրության՝ պատերազմի ընթացքը բոլորովին այլ կերպարանք ստացավ, և մայրաքաղաքներին սպասնացող քշնամին հաղթադրից հալտուքին խնդրել։

Գիտակցական ոգևորությունն ու զգաստությունը հետևանք է նոանգուն աշխատանքի և ես կարծում եմ, որ այդ աշխատանքը մեր ժողովրդին համար ուշացած չէ։ Ինձ չի սարսափեցնում կարսի անկումը, ինձ սարսափեցնում է ժողովրդական խաւերի մեջ նկատուղ անտարբեր վերաբերմունքը։ վերացնել այդ՝ մեր առաջին պարտքը պիտի լինի, լարուած աշխատանքի միջոցով զգաստացնել մեր հասարակությունը՝ կարևորագոյն խնդիրներից մեկը։ Դրա հետ մեկտեղ հասարակությունը պետք է հնարաւոր վիճակի մեջ պահել պատսպան ապարատը. չմոռանանք, որ յաճախ պատերազմի անյաջողությանն պատճառ են դառնում չատ հասարակ պակասներ։

ԵԹԷ մենք հասնենք ժողովրդի զգաստացման փափաքին ու ոյգպիսով պատերազմի մեջ նրա գիտակցական մասնակցությունը օգտագործենք, եԹԷ կառավարությունը բոլոր միջոցներով կարգաւորէ պետական ապրատն ու քիչուններ կազմակերպությունը խելացի հիմքերի վրա դնէ, ապա յաղթականը աներկբայելի է։ Ոդևունելով կառավարության ընթացքը՝ ես հայ ժողովրդին ոգևորության և զգաստացման կոչ եմ անում (ծափահարություն)։

Ա. Խանդկարեան (սոց.-յեղ.)։ — Նախարարապետի գեկուցումից յետոյ մենք կարող ենք ասել, որ մեզ համար այդ ամենը տագապալի չէր. չկայ քշնամիներից ոչ նրանը, ոչ խորամանկը, ոչ ինդոյսները, քշնամին քշնամի է, իսկ յաղթող քշնամին միշտ քնդլորում է իր կամքը։ Տաճիկները յաղթել են և այժմ ուզում են իրենց քաղը դնել հայաստանի վրա։ Ի պատասխան դրա էդրական Ֆրակցիայի կողմից մի բան ունեմ ասելու — հայտնել տագնիկների պայմաններին հայ ժողովուրդը չի կարող։ Սակայն, կուզ նպատակը պարզ պիտի լինի, մի բան, որ չտանց նախարարապետը. կուզում ենք մեռնե՞նք, Թէ՞ յաղթելու համար։ Հայ ժողովուրդը կուզում է յաղթելու համար միայն և եԹԷ այդ այդպէս է, ապա այսօր մենք պէտք է խոսենք այն միջոցների մասին, որոնց գործադրությամբ պիտի հաՀենք յաղթանակը։ Գաստերապետը քաղաքական օգթակիցի լարումն է։ Նրան կարող է գիմանալ միայն առողջ օրգանիզմը, ահա այն դասը, որ մենք պէտք է ստանանք այս պատերազմից։ Հայաստանի պետական օրգանիզմը հանգէպ հիւծող Տաճկաստանի դուրս եկաւ Թույլ և անառողջ։ Կառավարությունը պարտք ունէր այստեղ Քնելու յաղԹությանն համար ձեռք առնած միջոցները։ այդ չարաչ. նա, ուստի էդրական Ֆրակցիան իր կողմից պիտի առաջարկէ հիմնական միջոց պետական անառողջ օրգանիզմը բուժելու նախ և առաջ ու ապա, դրա միջոցով, յաղԹությանն դիմելու։ էդրական Ֆրակցիան կարծիքով բուժման ու յաղԹանակի հիմնաքարը դնելու համար անհրաժեշտ է վերակառուցել պետական մեխանիզմը սկզբից։ Խօսքս վերաբերում է Հայաստանի կառավարությանն։ Ցաւոսի է, Թէ ինչ պայմաններում Ծնունդ առաւ ներկայ կառավարությունը։ վերացել են այդ պայմանները, սակայն, կառավարությունը չարունակում է դեռ գոյություն ունենալ։ մեր հիմնական տարբերությունը մեկն այդ է։*

Քշնամին գալիս է ոպանելու ամեն մեկ հայի, ապա ուրեմն, Հայաստանը պէտք է ունենայ մի կառավարություն, որ կարողանայ գիմագրաւել այդ համաժողովրդական վտանգը։ կառավարությունը պիտի լինի համաժողովրդական, համապետական։

Կառավարության բնույթի փոփոխման գրական ազդեցությունը ժողովրդական զանգուածների վրա անկասկած է. այդ փոփոխությունը հոգեբանական այն նշանակությունը կունենայ, որ Հայաստանի զինապարտման կը գայ, քիչ ախտած է վերակազմությունը և կը սթափեի։

Ապա՝ մեր ախտաւոր երևոյթները բուժել կարող է միայն հզաւակազմ կառավարությունը, որովհետև նա է, որ նոր հոգեացքով պիտի տեսնի այդպիսից։

Կառավարության վերակազմության գուգընթաց տեղի պիտի ունենայ ժողովրդի վերակազմությունը. մենք ականատես եղանք այնպիսի իրադարձութեանց, որոնք միայն ամօթ պիտի բերեն մեր ժողովրդին. տեսանք այնպիսի թուլամորթութիւն, որ արհամարհանք պիտի առաջացնէ չառերի մէջ հանդէպ մեր ժողովրդի։

Սակայն, դա ժամանակաւոր երևոյթ է. պէտք է ընթանալ ուղիղ ճամբով, և ժողովուրդը կը դատապարտայ, իսկ դրան կարելի է հասնել երկու կերպ — դիտակից քաղաքացուն դնել իր դերքի վրա, անգիտակցին քարշ տալ դէպի այդ դերքը. ելաքանչիւր դիտակից քաղաքացի պիտի կատարէ կրկնակի աշխատանք. նա պիտի հանդէս գայ հայրենիքը պաշտպանելու և իր վեհից քարշ տալ փոքրոգիներին, անգիտակիցներին։

Կառավարության ու ժողովրդի վերակազմութեան մէկոցով մեայն հնարաւոր կը լինի փրկել երկիրը այս ծանր փորձութենից։

Հ. Սարգսեան (դաշն.). — Մանր ապրանքները մեզ համար բացառիկ երևոյթներ չեն, ասելի դժուարին պայմանների մէջ ենք եղել երբեմն. Տաճկաստանի դէմ մենք պայքարել ենք տասնեակ տարիներ, երբ դեռ պետութիւն չէինք, ու չգադարեց պայքարը այն օրից, երբ պետութիւն դարձանք։ Ցեխաման է այս պայքարը և յուսահատութեան ոչ մի հիմք չկայ. չկայ, ժամանակը, այժմ, երբ գրաստասցել է մեր ժողովուրդը ու նրա րոպէական վհատութիւնը տեղի է տալ բարձր ոգևորութեան։ Նման պայմաններում, մեր ժողովրդի մէջ նկատուող բարձր սրամտդրութիւնն ու գրաստացումը որոշ ուշադրութեան տակ դնելու այս օրերին կառավարութեան վերակազմութեան խոչընդոտ կը նշանակէ ընկնել հերձնակու փորձերի յետևից, կը նշանակէ կոտրել մասսայական ոգևորութեան թափը։ Ընդհակառակը, հէնց այժմս է, որ մենք պիտի խուսափենք դրան պայքարը կառավարութեան մէջ փոխադրելուց, հէնց այժմս է, որ մենք ամուր պիտի պահպանենք միասորը կառավարութիւնը, որովհետև յաղթանակ տանելու պայմաններից մէկը կառավարութեան մեկուսութիւնն է։

Միայն անհրաժեշտ է, որ կառավարութիւնը խիստ, քէկուզ, դաժան մէկոցներով պատժէ պատասխանատուներին, չանցապատներին։ Գրկնում եմ, ժողովուրդը գրաստացած է, նա արդէն դիտակցում է իրեն սպառնացող վտանգի մեծութիւնը և ելքէ կառավարութիւնը անելքի կերպով կարողացել ամենքին յետ մղել դէպի իր պատասխանատուները և խստութեամբ դատել անհացողներին, ապա այդ գրաստացումը կը լինի անկասկած ոգևորութիւնը բոլոր։ Լքման, յուսահատութեան մտքերով տարելու ոչ մի պատճառ չունենք։ Հայ ժողովուրդը՝ հորովի ու ապառասէր՝ չատ անգամ չնախընթաց հաբտածներ է հասցրել քշնամուն, այս անգամ ևս կը խորտակէ նրա ոյժը։

Հ. Տէրտէրեան (դաշն.). — Եթէ յաղթութիւն տանելու համար կառավարութիւնը խոչոր նշանակութիւն ունենաք, ապա պատ. Ռոճկարեանի առաջարկած ընդլրջը հետևութեամբ կը լուծուէր, բայց, իրապէս, նրա նշանակութիւնը մեծ չէ։ Գեղման գործադրութիւնը տակի է. կը յաղթէ նա, ով ամուր էղեր ունի։ Մեր անցուդարձութեան պատճառներից մէկն էլ

այն է, որ հայ ժողովուրդն ամուր ղեկը չունի. պէտք է միանգամ ընդմիշտ հասկանանք, որ այս պարտութիւնը հոգեբանական պարտութիւնէ է միայն, եթէ վերջիններէ ժողովրդին հոգեբանական այդ վիհերը, յաղթութեան մեծ գրաւական կունենանք:

Անյաջողութեան պատճառ է նաև այն, որ հայ ժողովրդի մէջ անկախ պետական կազմակերպութեան անհրաժեշտութիւնը խորապէս ըմբռնուած չէ. որքան որ ցաւալի է այդ, այնուամենայնիւ, չենք կարող այստեղ չյայտարարել: եթէ այդպէս չլիներ, այս օրը չէինք ընկնի:

Մէկ ուրիշ պատճառ էլ կայ անյաջողութեան, դա այն է, որ մենք հայ ոգով սնուած դիւրայանութիւն չունենք, պէտք է այդ էլ ասել հապարակով:

Ի հարկէ, թէեւով այս պատճառները, ես չեմ ուզում ապացուցել, որ կառավարութիւնը թերութիւններ չունի: Ամենայն վրա ոչ մի կառավարութիւն գերծ չէ գրանից, այնուամենայնիւ, էական չէ մի քանի պատճառներով: Նախ՝ ես կուզէի ըմբռնել, թէ ինչ ասել է համապատասխան կառավարութիւն. իմ հասկացողութեամբ դա պարլամենտական կառավարութիւնն է, այսինքն այն, ինչ որ գոյութիւն ունի ներկայումս. քանի գործում է խորհրդարանը, ոչ ոք իրաւունք չունի ոչ խորհրդարանական կառավարութիւն ստեղծելու: Ցաւոց՝ պայքարի ժամին նման առաջարկ անելը անժամանակ է, գուցէ և վտանգաւոր: Քննժամին պէտք նկատէ այդ իբր ներքին թուլութիւն և աւելի ոգեւորիչ, մանաւանդ որ անձնատուրութիւնների փոփոխութիւնը առանձին նշանակութիւն չպիտի ունենայ:

Ժողովրդի վերակազմութեան համար էակաների արած առաջարկը միանգամայն ընդունելի է. կառավարութիւնը պէտք է և պարտաւոր է վճռական, խիստ միջոցներով հետապնդել յանցապարտներին, պարտականութեան կոչել ամենքին՝ տիրող քմքութիւնը վանելու և թիկունքի ուժեղ կազմակերպութիւն առաջացնելու համար: Ինչ վերաբերում է առաջիկների առաջարկած պայմաններին, կարծէք պարզ է ամենքի համար, որ Մուստաֆա Քէմալը այդ առաջարկներով հայասատանի ոչնչացմանն է ձգտում: Հայտնի բան պայմաններն ընդունելուց յետոյ միանգամայն աւելորդ կը լինի բանակցութիւններ սկսելը, որովհետև նախօրօք պատրաստուած առաջարկներ կանեն և 24 ժամուայ ընթացքում կը հաղկադրեն մեզ ստորագրել: Մնում է երկու ելք. կամ առանց բանակցութիւն վարելու, առանց, անգամ, կարդալու ստորագրել նրանց առաջադրած պայմանների տակ, և կամ՝ կռուել:

Երբեք չեմ կարծում, որ խորհրդարանը դիմէ առաջին միջոցին. նա պիտի բացարձակօրէն մերժէ տաճիկների պայմանները ու կոչ անէ ժողովրդին հանելու իր վրայից ամօթի գրոյը: Հանելու դրան մենք հնարաւորութիւն ունենք, քննամին աւելի ուժեղ չէ մեզնից. այս պայքարի մէջ մեզ հետ է եւրոպական և ուռս դեմոկրատիայի համակրանքը: Ամենը գիտեն, որ Քէմալի նպատակն է բնաջնջել հայ ժողովուրդը, նրա համակիրներն էլ հասատում են այդ. գիտեն, որ հայը կուռւում է իր գոյութեան, չտանեք քէ ազատութեան, համար: Սրանք են այն գրգռիչ հանգամանքները, որ պիտի սթափեցնեն մեր ժողովրդին, ամբացնեն նրա ինքնավստահութիւնը, և համոզած եմ, հեռու չէ այն ժամը, երբ հայ ժողովուրդը՝ թօթափած իր ամօթաբեր քմքութիւնը, մի կամք դարձած՝ կուռի դուրս կը գայ և ինքն իր ձեռքով կազատագրէ իրեն (ծափահարութիւն):

ԲԱՆԱԶԵՒ

Յօսոդնեերի ձայները տպաւորւում յետոյ, Դաշնակցութեան Ֆրակցիան առաջարկում է հետեւեալ բանաձեւը.

«Խելով կառավարութեան հաղորդագրութիւնը և հաւանութիւն տալով նրա վերած քաղաքականութեանը՝ խորհրդարանը հրահանգում է լարել բոլոր ուժերը՝ ապահովելու համար երկրի պաշտպանութեան գործը: Միաժամանակ յանձնարարում է խորհրդարանի նախագահութեանը՝ կոչ անել ժողովրդին»:

Բանաձևն ընդունւում է երեք ձայնի ձեռնպահութեամբ:

ՆՈՑԵՄԲԵՐ 23-Ի ԱՐՏԱԿԱՐԳ ՆԻՍՏ

Նիստը բացւում է երեկոյեան ժամը 8-ին: Ներկայ են 35 պատգամաւորներ:

Նախագահում է Ցովի· Քաջազնունին:

Օրակարգը՝ կառավարութեան հրաժարականը և դրա հետ կապւած խնդիրները:

Նախագահ· — Հայաստանի խորհրդարանի պատգամաւորներ, նախագահութիւնը նախապատրաստ չէ· Օհանջանեանից ստացել է ներկայ կառավարութեան հրաժարականը, որ հետեւեալն է·

«23 նոյեմբ· 1920թ· Երեւան

Հայաստանի խորհրդարանի նախագահութեան

Մեծարգոյ պարոն Նախագահ,

Այսու պատիւ ունեմ խնդրելու ձեզ ներկայացնել Հայաստանի Հանրապետութեան պարլամենտին իմ և իմ նախագահութեան տակ եղած Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան հրաժարականը:

Նախարարապետ՝ Հ· Օհանջանեան»

Նախագահ· — *Ցանկանո՞ւմ է արդեօք նախարարապետը բերանացի կերպով, որևէ բան աւելացնել:*

Նախարարապետ Հ· Օհանջանեան· — *Հայաստանի խորհրդարանի յարգելի պատգամաւորներ, խորհրդարանի վերջին նիստից յետոյ անցել է 10–12 օր: Այդ ժամանակամիջոցում մեր կեանքում այնպիսի մեծ փոփոխութիւններ են առաջ եկել, որ կառավարութիւնը նորից դիմում է խորհրդարանին: Ցարիւոյ քչնամին մեզ առաջարկել էր զինադադարի այնպիսի պայմաններ, որոնց անհնար էր ընդունել և կուիը չաւունակւեց: Յետագայ դրութիւնը, որ ստեղծւեց ոսպմաճակատում, ցոյց տւեց, որ արեւնհեղութիւն անիմաստ է: Եւ մենք ստիպւած եղանք ընդունել զինադադարի պայմանները և անցնել հաշտութեան բանակցութիւններին: Ամսի 18-ին իրագործւեցին զինադադարի պայմանները: Վաղն երեկոյեան Ալեքսանդրապոլում հաշտութեան բանակցութիւնները պիտւում են պաշտօնապէս:*

Կառավարութիւնն առանց սպասելու խորհրդարանի նիստին, ընտրել և ուղարկել է հաշտութեան պատւիրակութիւնին հետեւեալ կազմով· Նախագահ՝ Ալ·Խատիսեան, անդամներ՝ Աբր·Գիւլխանդանեան և Սո·Ղորղանեան· որպէս խորհրդականներ մեկնել են խորհրդարանի անդամներ՝ Լ·Զաքարեան և Վ· Միխախրեան և մի շարք մասնագէտներ: Պատւիրակութիւնին Ալեքսանդրապոլ մեկնեց երեկ գիշեր, ուր Քչնամու պատւիրակները սպասում են նրանց: Թէ ի՞նչ վերաբեր կունենայ, դժւար է ասել:

Անցեալ անգամ ես այստեղ կարգացի մեր և հակառակորդի մեջև փոխանակած գրութիւնները, որոնց մէջ հոգատարութեան պայմանները կային շնչհանգամանք ցնդով: Այժմ լսում է նոր չրջան, քաղաքական ուժերի նոր սխուացիա, և որպէսզի Հայաստանի խորհրդարանը ազատ լինի ինքն իր վերաբերմունքը ցոյց տալու, իմ կառավարութիւնը ներկայացրեց իր հրաժարականը՝ ի նկատի ունենալով հանրապետութեան շահերը:

Գատգամաւոր Ս. Թորոսեան. — *Հայաստանի խորհրդարանի պատգամաւորներ, որանից վեց ամիս առաջ, մեր հանրապետութիւնը կանգնած էր ծանր օրերի առջև. մենք ընտրեցինք այժմ հետացող կառավարութիւնը: Այդ կառավարութիւնը պատով դուրս նկաւ մայիսեան դէպքերի ծանր րեռի տակից: Նա ուղիղ գծով տարաւ հանրապետութեան պաշտպանութեան գործը՝ համախմբելով գրա համար երկրի անհրաժեչտ ոյժը: Ամառայ վերջին դժւար սպասելի անցքեր տեղի ունեցան մեր հանրապետութեան սահմանների վրաս: Մենք գիտինք, որ Տաճկաստանը մի օր պիտի չարժւի մեզ վրա, վերջնական մի հարւած տալու համար: Գարգ չէր ասկայն, որ այդ կը կատարւի այդքան արագ և այդքան չուտ: Մուստաֆա Քէմալը, որ կարողացաւ իր ձեռքում կենտրոնացնել Տաճկաստանի դինական ամբողջ ոյժը, բաւական յաջողութիւններ ունեցաւ. նա յաղթանակեց:*

Մեր զօրքերի յաղթութիւնը պատճառ ունի հոգեբանական հիմք, և մենք հաւատացած ենք, որ դա չուտով և հեչտութեամբ կանգնի: Պէտք է լինենք ուեի գգաստ և վերաքննենք քաղաքական գրութիւնը: Ժողովուրդն ուզում է հաշուել թուրքերի հետ և դա կը լինի: Նա միչտ ցանկացել է հաչուել, միչտ պաչտպանելով ինքն իրեն՝ կուել է, սակայն, ոչ երբեք նոր նետումներ տեսնու նպատակով:

Այն կառավարութիւնը, որ վեց ամիս պաչքարել է և կարողացել է անվնաս դուրս բերել երկիրը և ժողովուրդը, այսօր, քաղաքական գրութեան մէջ գտնուողին պատճառով, պէտք է հեռանայ: Կառավարութեան փոփոխութիւնը անհրաժեչտաբար պէտք է կատարւի: Հ. Ց. Դաչնակցութեան Քրեգիչեան կառավարութեան հրաժարականը գնում է յարգելի և ընդունում է այն:

Գատգամաւոր Խանդկարեան. — *Խորհրդարանի վերջին նիստում մենք ասացինք, որ կառավարութիւնը պէտք է տայ իր հրաժարականը: Այդ հրաժարականը մենք ըմբռնում ենք այն ձևով, որ այսօրւանից կատարւում է պատմական մի փոփոխութիւն: Մենք ընդունում ենք կառավարութեան հրաժարականը: Կառավարութիւնը, անչուչտ, ունեցել է ախտներ, բայց այդ պիտի վերագրել ոչ կառավարութեան մէջ եղած անձերին, այլ տիրող պայմաններին: Մենք կատարած ենք, որ մեր քաղաքական կեանքը կը կարողանայ կարող ուժեր հրապարակ հանել մեր երկրի կառավարութեան համար:*

Նախագահը կարգում է Դաչնակցութեան Քրեգիչեի առաջարկած բանաձևը. «Խորհրդարանը լսելով նախարարապետի դեկուցումը կառավարութեան հրաժարականի մասին և պատգամաւորների ճառերը՝ յարգելի է համարում, ընդունում է հրաժարականը և անցնում նոր նախարարապետի ընտրութեանց»:

Առաջարկած բանաձևն անցնում է 34 ձայնով. ընդդէմ ոչ մի ձայն, ձեռնպահ մի ձայն:

Խորհրդարանը անցնում է նոր նախարարապետի ընտրութեան: Թեքնիկինով առաջարկւում են Քեչկնածուներ: Նախարարապետութեան համար Քեչկնածու է առաջարկւում Սիմոն Վրացեանը (նախկին գիւղտնտեսութեան, պետական գոյքերի և աշխատանքի նախարար):

Նախագահը Ս. Վրացեանից քւէարկութեան համաձայնութիւնն առանձին՝ առաջարկում է խորհրդարանին քւէատուփերով անցնել գաղտնի քւէարկութեան։ Քւէարկութեան արդիւնքը լինում է հետեւեալը. — Քւէարկած մինչ քւենածու Ս. Վրացեանը առանում է 34 ապիտակ քւէ, ոչ մի սև, ձեռնպահ մէկը։

Նախագահը յայտարարում է քւէարկութեան արդիւնքը, որ 34 ձայնով խորհրդարանը նախաբարեպահ է ընտրում Ս. Վրացեանին։ Պատգամաւորները կողմից ծափահարութեամբ ողջունում է նրա ընտրութիւնը։ Ապա է առում նորընտիր վարչապետ Ս. Վրացեանին։

Ս. Վրացեան. — Ես գիտակցում եմ, թէ քաղաքական այս ծանր պայմաններում խորհրդարանն ինչպիսի ծանր բեռ է դնում իմ ուսերին։ Իմ կոչումէլիք կառավարութեան կազմը յանդուգնութեան կունենայ, եթէ երկիրը և Հայաստանի գերագոյն օրէնսդրական մարմինը լինեն նրա հետ։ Ես հաստատացած եմ, որ մեր և երկրի ապագայութեամբ կը յանդուգն մեզ տագնապալի այս վիճակից դուրս գալ պատով։ Իմ կողմից ես խոստանում եմ թափել ամէն ճիգ և ոչինչ չխնայել մեր հանրապետութեան բարգաւաճման համար։ Ինդրում եմ 24 ժամ ժիլոց տալ՝ կառավարութեան կազմը մեզ ներկայացնելու համար։

Խորհրդարանը համաձայնութիւն է տալիս։ Նիստը յայտարարում է փակած՝ յաջորդ օրան Թողնելով հարցնակութիւնը։

Նիստը բացում է Նոյեմբ. 24-ի երեկոյեան ժամը 8-ից 10 րոպէ անց։

Նախագահում է Ծովի. Քաջազնունին։

Նախագահ. — Երկեայ արտակարգ նիստի հարցնակութիւնը յայտարարում եմ բացած։

Հայաստանի խորհրդարանի պատգամաւորներ, նախագահութիւնը նախաբարեպահ Ս. Վրացեանից այսօր առացել է կառավարութեան կազմի անանացուցակը։ Նոր կազմը հետևեալն է. նախագահ և արտաքին գործերի նախարար՝ Ս. Վրացեան, գինւորական նախարար՝ Դրաստամատ Կանայեան, Ֆինանսների՝ Համբարձում Տէրոէեան, Աշխատանքների՝ Աբրամ Տոնիկեան, գիւղատնտեսութեան, պետական գոյքերի և սխեմատների՝ Աբրահ Ծովհաննէսեան, հանրային կրթութեան և արուեստի՝ Վահան Միխայէլեան, Ներքին, ընտանաւորութեան և հաղորդակցութեան նախարարների պարտականութիւնն առայժմ ապատ են և ժամանակաւորապէս յանձնած են հետևեալ կերպ. Ներքին գործերի՝ ինքը նախարարապետը, ընտանաւորութեանը՝ Ֆինանսների նախարար Հ. Տէրոէեան և հաղորդակցութեանը՝ արդարադատութեան նախարար Աբր. Տոնկոքեան։

Կառավարութեան նոր կազմի յայտարարութիւնը ընդունւում է ծափահարութեամբ։

Նախարարապետ Ս. Վրացեանը կառավարութեան անունից անում է հետևեալ դեկլարացիան.

Տարապայման գժտութիւն ժամանակներում է կեանքի կոչւում նեղկոյ կառավարութիւնը։ Տաճիկ գինւած ուժերը գրաւել են մեր երկրի խոշոր մասը։ Ազգաբնակութիւնը գրաւած վայրերից տեղահան է եղած և գաղթական վիճակի մէջ անխնայ կոտորւում է գրտից և սովից։ Գինւորական ներքոյ կեանքի բնականոն ընթացքը խանգարած է։ Վարչական մեքենան թուլացած է մեծապէս, Ֆինանսական և հաղորդակցութեան միջոցները՝ քայքայուած, տրտրտացաւութիւնը՝ անհնարին վիճակում, պարէնի մուտքը գրեթէ կանգ է

առել, իակ ներքի աղբիւրները ցամաքում են արագութեամբ: Կայուն չէ և ժողովրդի հոգեկան դրութիւնը, որ իրեն սպառնացող ահաւոր վտանգի դէմ ոչ մի անկարող եղաւ բաւարար կամք և վճռականութիւն ցոյց տալ: Ու այսպէս, երկիրն ապրում է ներքին ծանր տագնապ, որ աւելի ևս սաստկանում է արտաքին դժբաղդութիւնների պատճառով:

Ի՞նչի պէտք է ձգտի այսպիսի հանգամանքներում նոր կառավարութիւնը:

Վերջին տարիների ընթացքում անգլիկովկասեան ժողովուրդներին հասած բոլոր աղէտների և դժբաղդութիւնների պատճառը աչքարհի հզօրների վարած իմպերիալիստական քաղաքականութիւնն է, որի հետևանքով անվերջ և արիւնահեղ կռիւների և ահեռաձգութիւնների քաոտերաթեմ է դարձել նաև Հայաստանը: Այդ քաղաքականութիւնը սպառել է Հայաստանի դիմադրատիայի չնչաբարական եռանդը: Այսպիսի քաղաքականութեան հետևանքներից մէկն է նաև վերջին պատերազմը իր բոլոր արհաւիրքներով: Ներկայ կառավարութեան առաջին և գլխաւոր նպատակն է լինելու հանել մեր երկիրը քաղաքական այս ջրպատոյտից և ազատել նրան օտար ուժերի քայքայիչ ազդեցութիւնից: Նա Հայաստանի պետական կառուցածքը խարխլելու և բոլոռանրբելու է ելնելով ոչ թէ օտարների սին և վտանգաւոր ներչնչումներից, այլ Հայաստանի դիմոկրատիայի իրական կարողութիւնից և հաւասան ժողովուրդների հետ խաղաղ համակեցութիւն ստեղծելու ցանկութիւնից:

Հայաստանի կառավարութիւնն ամուր ոտք դնելով այս հողի վրա՝ յոյս ունի, որ վերջին մեր քաղաքական կեանքը վրդովող այս պատերազմը կը վերջանայ հաշտութեամբ և մեր հարևան տանիկ ժողովրդի արդարացի իրաւունքների նոյնքան արդարացի բավարարմամբ: Մեր գործունէութեան նպատակն է լինելու անկեղծ հաշտութիւն Տաճկաստանի հետ և համերաշխութիւն ու խաղաղ համակեցութիւն բոլոր հարևանների հետ:

Այսու հանդերձ, մենք դիտակցում ենք, որ հասարակական ներկայ կարգերում, տարաբախտաբար, իշխողը դեռ ոչ թէ արդարութիւնն է, այլ ոյժը: Եւ պետական ամէն մի կազմաւորում իր գոյութեան և արդար իրաւունքների ապահովելու համար ստիպւած է ունենալ կազմակերպւած և սմուր ռազմական ոյժ: Ուստի և կառավարութեան գլխաւոր հոգսերից մէկը պիտի լինի երկրի ուժերի հաւաքումը և ժողովրդական կուռ բանակի կազմակերպումը: Այդ նպատակով մենք աշխատելու ենք առողջացնել զօրքի շարքերը և ուժեղացնել պետական գիտակցութիւնն և անձնազոհութեան ղգացումը բանակի մէջ: Նոյն նպատակով մենք մտածում ենք ազատել բանակն անվարժ և յոգնած տարրերից՝ զօրացրումն կատարելով բարձր հասակի զինուորների, որով աւելի բնական ընթացքի մէջ կը մտնի քիկուռքի կեանքը և զարկ կը տրւի երկրի տնտեսական զարգացմանը:

Դատնելով ամբողջ իշխանութիւնը աշխատաւոր ժողովրդին ակզբունքը՝ ներքին կեանքում, կառավարութիւնն ուժգնօրէն պայքարելու է պետութեան հիմքերը փորող բոլոր ուժերի և երևոյթների դէմ: Նա պէտք է աշխատի հաստատել երկրի ներսում ապրող բոլոր ցեղերի իրական հաւասարութիւն: Հայաստանը նրա սահմաններում ապրող բոլոր ժողովուրդների ոեփականութիւնն է կազմում: Կառավարութիւնը պիտի ձգտէ առողջացնել վարչական և դատաստանական խանգարւած մեքենան, բարկարգել հաղորդակցութեան միջոցները, կուռ ֆինանսական սուր տապալի դէմ, կրճատել պետական ծախսերը և նպաստելով երկրի արդիւնաբերական ուժերի զարգացման՝ ուժեղացնել տնտեսական բնթացքները և վերացնել ամէն տեսակի արտակարգ դրութիւն և երկիրը կառավարելու արտակարգ ձևերը:

Օրէնքի դիտակցութիւնը, որ այնպէս Քուլացել է մեզ մօտ, պէտք է ուժեղացնի, և յանցաւորները պէտք է պատժուեն անխնայ։ Գատերագմի արհաւիրքների արդիւնք բազմահազար գաղթականութեան վիճակը Թէքևացնելու և պարենաւորման սուր ճգնաժամը մեղմացնելու խնդիրը կառավարութեան լուրջ հոգածերից մէկը պէտք է լինի։

Այն ընկերային խնդիրների մասին մենք չենք խօսում այստեղ, որովհետև մեր նպատակն է ընդգծել ժամանակի հարցերը։ Ինչ ասել կուզէ, որ առաջին իսկ հնարաւոր դէպքում կառավարութիւնը կը զբաղի սոցիալական լուրջ բարենորոգումներով, և այստեղ կարիք չկայ բացատրելու բնոյթը այդ բարենորոգումների, որովհետև նրանք բղխելու են սոցիալիստներից կազմած կառավարութեան աշխարհահայեացքից։

Ապահովելով Հայաստանի աշխատաւոր ժողովրդի ոչով ուժերին և յենելով խորհրդարանի վստահութեան և աջակցութեան վրա՝ կառավարութիւնը կը լարէ իր բովանդակ ոյժը, որպէսզի հետոյ պահէ երկիրը արտաքին փորձերից և տայ ժողովրդին խաղաղութիւն և անարգել զարգացման հնարաւորութիւններ։

Մեր բուռն փափաքն է զարձնել ազատ և անկախ Հայաստանը ապահով և բարգաւաճ։

Դեկլարացիան ընդունւում է երկարատև ծափահարութեամբ։

Գատգամատը Ս. Թորոսեան։ — Հայաստանի խորհրդարանի պատգամաւորներ, Հայաստանի անկախութիւնը, որի համար երադել են տասնեակ տարիներ և զարեր շարունակ, կեանքի կոչուեց չատ ծանր օրերում, երբ աշխարհի հզօրները բաղխում էին, երբ կառավարութիւնը չէր կարող ուրոյն ճանապարհով գնալ։ Նորակազմ փոքր պետութիւնների, մանաւանդ մեծ ճանապարհների վրա ապրողների դրութիւնը չատ խախուտ էր։

Մեր ցանկութիւնները չեն իրագործել, որովհետև բաղխելով ուժեղների կամքի հետ՝ ջարդուում են։ Մեր հանրապետութեան հակին կառավարութիւնների ունեցել են սխալներ։ Սխալներ կունենայ նոր կառավարութիւնն էս։ Բայց այդ սխալները նման են նորածնունդի արարքներին։ Մեր հանրապետութիւնը նորածնունդ է՝ երկու և կէս տարեկան։ Նրա կեանքն առնչու նախօրեակին կատարւեց ռուսական մեծ յեղափոխութիւնը, երբ ամէն ոք լցուում էր նորաոր ցանկութիւններով և ձգտումներով։ Դեպերութիւնների նպատակը նորը և լաւը գտնելն էր, որ սակայն, չէր գտնուում։ Վերջին դէպքերը մեզ ապացուցեցին, որ մեր հանրապետական գործը որակով էլ ուրիշ բաբեր չի եղել, ինչպես քանակով։ Կառավարութեան դեկավարական լսելուց յետոյ անհրաժեշտ ենք համարում ասելու, որ նախ գործի լաւ մարզելը նպատակ դարձի, աշխատելով որակը մեծապես բարձրացնել։ Լայն ուշադրութիւն դարձնել տեղական ինքնավարութիւնների զարգացման և ուժեղացման վրա։ Արդարադատութիւնը և դատարանները ուժեղացնել՝ ստեղծելով իսկական ուժեղ դատարաններ, խստիւ պատժելով բոլոր յանցաւորներին և չարագործներին։ Ինամատարութիւնը, որ բարեկարգ վիճակում է եղել, աշխատել չքուացնել։ Հաղորդակցութեան վրա զարձնել ամենամեծ ուշադրութիւն։ գաղտնիք չէ, որ հաղորդակցութիւնը չատ Քոյլ է մեզանում։ Հաղորդակցութեան կանոնաւոր մէրոցներից է կախուած մեր ներքին բնականոն կեանքը։ Նորմալ հաչտութիւն կնքել Ադրբէջանի հետ, որի հետ կոչ կողքի վիճակած է մեզ ապրել, պահպանելով խաղաղութիւն և բարեկամական յարաբերութիւններ։ Հայաստանը՝ Հայաստանում ապրող ժողովուրդների հայրենիքը է. պէտք է ուժեղացնել ներքին համերաշխութիւնը։ Թէրքեցի հետ պէտք է

կնքել անկեղծ հաշտութիւն։ Ռուս ժողովրդի հետ մենք չենք եղել քշմամի և չենք ուզում լինել։ Նա պէտք է հաշուի մեր անկախ գոյութեան հետ, իսկ մեզ նա չարժէ մեր վրա անկախութիւնը ոչնչացնելու. նպատակով՝ մենք նրան զէնքով կը դիմաւորենք։ Մեզ պէտք է պատասխր հաշտութիւն բոլորի հետ։

Հայաստանը ստեղծել է հայ դիւզացիութիւնը և նրա մէջ ապրողները զիւղացիներ ու բանուորներ են։ Ժողովրդական կառավարութիւնը պէտք է ստեղծէ ընդհանուր կամք։

Մի մեծ պարտականութիւն ևս ունի կառավարութիւնը, պայքարել անտեսական ճգնաժամի դէմ չեզոքացնելով չհամագործումը։ Հ. Յ. Դաշնակցութեան ֆրակցիան վստահութիւն է յայտնում այս կառավարութեանը։

Պատգամաւոր Լ. Թումանեան. — *Մեր վերաբերմունքը այս կառավարութեան հանդէպ ըղխում է այն բանից, որ մենք ունել ենք նրան մեր երկու ներկայացուցիչները։ Կառավարութեան դէկլարացիան ընդհանուր գծերով մեր ֆրակցիային բաւարարում է։*

Մենք կուզինք իմանալ, թէ ի՞նչ նոր գծեր է մտցնում այս կառավարութիւնը եղած քաղաքականութեան մէջ։ Մեծ խոստումներ չի տալիս մեզ այս կառավարութիւնը. մենք ցանկանում ենք, որ այդ փոքր խոստումները լինէին անկեղծ։

Սոցիալիստ-Յեղափոխականների ֆրակցիան այս կառավարութեան խոստանում է իր աջակցութիւնը։

Նախագահը կարդում է Հ. Յ. Դաշնակցութեան ֆրակցիայի առաջարկած հետևեալ բանաձևը. վերջրդրանը լսելով նախարարապետի դէկլարացիան՝ հաւանութիւն է տալիս։

Ուրիշ բանաձևեր չկան։ Բանաձևը քւէարկւում է և ստանում կողմ 30 ձայն, դէմ՝ ոչ մի և ձեռնպահ՝ 2 ձայն։

Ժամը 9-ից 10 րոպէ անց նիստը յայտարարւում է փակւած։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՍՏԱՏԱԾ ՕՐԵՆՔՆԵՐԸ
1918—1919

Հայաստանի խորհուրդը իր գոյութեան ընթացքում, 1918թ. օգոստոս 1-ից մինչև 1919թ. յունիս 5, հաստատել է 116 օրէնք, որոնց մեծագոյն մասը վերաբերւում է օրւայ գործնական կեանքին՝ երկմտական խնդիր, պաշտպետական առնչ, առ ու հասմաքարակ, զոր ու զաղջական, կառավարական հիմնարկութիւնների կազմակերպում կամ բարեփոխում, հին իշխանութիւնից մնացած օրէնքների ու հիմնարկութիւնների հայւոյարդար և այլն և այլն։ Ընդհանուր բռնադատութիւնը բնորոշող կամ ընկերային, տնտեսական ու մշակութային բնդհանուր արժէք ունեցող օրէնքներ, համեմատաբար, հինչ կան։ Հայաստանի խորհրդի ընդունած օրէնքներն իրենց գոյը են տալիս, որ ևս, ասելի չատ, ապրել է ընթացիկ կեանքի չարիքներով, տարւել է օրը օրին ծնունդ տանող խնդիրներով և ժամանակ ու հնարատուրութիւն չի ունեցել գրաւելու պետական հիմնական աշխատանքով։

Հայաստանի խորհրդի հաստատած օրէնքները հրատարակած են առանձին հատորով)։ Այստեղ այդ հատորից առած ենք բերում, ժամանա-*

---

*) *Հայաստանի Խորհրդի Հաստատած Օրէնքները*, 1918—1919թ., մաս 1, երևան, 1919թ.

կազդական կարգավ, բայց այն օրէնքները, որոնք կամ ընդհանուր-պետական նշանակութիւն ունեն և կամ, ժամանակին, առարկայ են եղել առանձնապէս լուրջ ուշադրութեան և պայքարի հասարակական տարբեր խաւերի կողմից: Այդպիսիներից առաջին տեղն է զրաւում բանկային մենաշնորհին վերաբերող օրէնքը, որից և սկսում ենք:

1· Բանկերի մենաշնորհութեան մասին· — 1) Հայաստանի Հանրապետութեան տերիտորիայի վրա բանկերի առհասարակ յայտարարւում է պետութեան մենաշնորհ·

2) Այս օրէնքի հրատարակութեան օրից ստրկելում է բանկ ասուհանել Հայաստանի Հանրապետութեան տարածութիւնից:

3) Բանկերի վրա հատուկ տուրք կը տարածուի առանձին օրէնքով:

4) Բանկատէրը պարտաւոր է այս օրէնքի հրատարակութեան օրից երկու ամսուայ ընթացքում գրաւոր յայտարարութիւն տալ ակցիզային հարկերի վարչութեան, ո՞րտեղ և որքա՞ն բանկ ունի:

5) Ակցիզային վարչութեան վրա դրւում է պարտականութիւն հաւկի տակ առնել Հայ· Հանրապետութեան մէջ գտնուած ամբողջ բանկերը:

6) Այս օրէնքը խախտելու մէջ յանցաւորները ենթարկւում են դատաստանական կարգով հետևեալ պատիժներին· ա) տարածած ժամանակում գրաւոր յայտարարութիւն չտալու համար բանկերի քանակութեան և տեղի մասին գրամական տուգանքի մինչև տասն և հինգ հազար րուբլի, բ) բանկերը թաղցնելու համար, գաղտնի դնելու և վաճառելու համար և Հայաստանի տարածութիւնից արտահանելու համար բանտարկութիւն երեքից մինչև վեց ամիս, որի հետ միասին բանկերն էլ է գրաււում· Եթէ անհնար լինի բանկերը գրաւել, այդ դէպքում յանցաւորը բացի բանտարկութիւնից ենթարկւում է գրամական տուգանքի չորսուհազար բանկերի արժէքի չափով:

7) Ներկայ օրէնքը գործադրութեան է մտնում 1918թ· յունիսի 20–ից:

(Հաստատուած սեպտ· 11–ին 1918թ·)

Դպրոցների կառավարութեան մասին· — 1) Դպրոցը Հայաստանի Հանրապետութեան մէջ պետութեան մենաշնորհ չէ: Իւրաքանչիւր հասարակութիւն կամ համայնական կոզմակերպութիւն, խմբակցութիւն, ընկերակցութիւն, ինչպէս և առանձին անհատ, իրաւունք ունեն անարգել դպրոց բանալու և անկախօրէն վարելու ազգային միջոցներով:

2) Պետական դանձարանի նպաստաւորութիւնը չպէտք է նեղութ որևէս հիմք և նրան դպրոցները պետական կամ կառավարական համարելու կամ դարձնելու:

3) Մերձելի է դպրոցի պետականացման կարգը և գերադասելի է ազատ հասարակական դպրոցական սիստեմը:

4) Պետական դանձարանից նպաստ ստացող դպրոցներին կատարելութիւնը յանձնում է· ա) Հանրային կրթութեան մինիստրին և նրան կից Դպրոցական Գործերի Կոնֆերանսին, բ) տեղական ինքնավար մարմիններին, գ) դպրոցական շրջանային տեսուչներին, դ) դպրոցների մանկավարժական խորհրդներին, տեսուչներին, ուսուցիչներին և հոգաբարձութիւններին:

5) Հանրային կրթութեան մինիստրին կից, նրա նախագահութեամբ, խորհրդատվական մարմին կազմակերպւում է դպրոցական խորհրդակցութիւն, մինիստրի կողմից հրաւիրուած անձերից:

6) Դպրոցական խորհրդակցութեան քննութեան ենթարկուում են դպրոցական գործին վերաբերեալ օրինագծերը. այլ և այն բոլոր հարցերը, որ մինիստրը հարկ կը համարէ նրա քննութեանն առաջարկել:

Ծանօթ. — Հանրային կրթութեան մինիստրը իր օրէնսդրական առաջադրութիւնները մէջ է Հայաստանի Հորհրդին ներկայացնում է դպրոցական խորհրդակցութեան թէ մեծամասնութեան և թէ փոքրամասնութեան կարծիքերն ու եզրակացութիւնները:

7) Եթէ Հանրային կրթութեան Մինիստրը անկարող է ներկայ գտնուել դպրոցական խորհրդակցութեան նիստին, նախագահում է անդամներից մէկը՝ խորհրդակցութեան ընտրութեամբ:

(Հաստ. նեպտ. 11–ին 1918թ.)

Հայաստանի Հանրապետութեան Սինդրարամի և ճանապարհածախքի մասին. — 1) Հայաստանի Հորհրդի անդամներին սննդադրամ է տրուում պետական գանձարանից ամսական իննը հարիւր րուբլի, հաշուելով ամիսը 30 օր: Սննդադրամը վճարուում է երկու նուագ՝ իւրաքանչիւր ամսի 15–ին և վերջին:

2) Սննդադրամը տրուում է Հորհրդի անդամին պատգամաւորական լիազօրութիւններ ստանձնելու օրից սկսած մինչև այդ լիազօրութիւնների վերջանալը:

3) Հորհրդի անդամներին պետական գանձարանից հատուցուում է ճանապարհածախք իրենց բնակավայրից մինչև Երևան երկու անգամ միայն, առաջին՝ երբ նրանք գալիս են մասնակցելու Հորհրդի աշխատանքներին և երկրորդ՝ երբ վերջանում են նրանց պատգամաւորական լիազօրութիւնները: Ճանապարհածախքը հատուցուում է՝ իրօք կատարուած ծախքը: Հատուցվելիք ճանապարհածախքի գումարը որոշելիս հաշուի է առնուում միմիայն հայաստանի Հանրապետութեան սահմաններում արած ճանապարհածախքը:

4) Հորհրդի կարգադրութեամբ Երևանից դուրս որևէ յանձնարարութիւն կատարելիս՝ պատգամաւորը ստանում է պետական գանձարանից ամբողջ ճանապարհի ծախքը, այլ և օրապահիկ—օրական 20 րուբլի Հայաստանի Հանրապետութեան սահմաններում և օրական 30 րուբլի՝ արտասահմանում:

5) Հորհրդի անդամի մահուան դէպքում նրան հասանելիքը վճարուում է ընտանիքին. պատգամաւորի մահուան ամսի սննդադրամը վճարուում է ամբողջ ամսի հաշուով:

6) Հորհրդի անդամը չի կարող վարել որևէ այլ պետական և կամ վճարովի հասարակական պաշտօն:

7) Առանց յարդելի պատճառի (Հայաստանի Հորհրդի ներքին կանոնադրութեան 184 յօդ.) բացակայած Հորհրդի իւրաքանչիւր նիստի համար պատգամաւորը զրկուում է օրահաշուով սննդադրամից. այդ գումարը հանուում է պատգամաւորին հասանելիք սննդադրամից վճարման մօտակայ նամակում:

8) Հորհրդի նախագահին, բացի պատգամաւորական սննդադրամից, տրուում է պետական գանձարանից ամսական վեց հարիւր րուբլի ներկայացուցչութեան ծախքերի համար:

(Հաստ. նեպտ. 20–ին 1918թ.)

Օրենքները պահելու և հրատարակելու մասին· — Ի փոփոխումն, լրացումն և վերացումն պատշաճաւոր օրէնքների՝ սահմանել է·

1) Օրէնքների խնդիրները պահւում են Հայաստանի Մորմոնում· Օրէնքի խնդիրը համաքւում է նրա այն օրինակը, որը պարունակում է օրէնքի Հայաստանի Մորմոնի կողմից հաստատուած վերջնական բնագիրը և վաւերացած է Մորմոնի նախագահի և աւագ քարտուղարի ստորագրութիւններով·

2) Հայաստանի Մորմոնից հաստատուելուց յետոյ, օրէնքի պատճէնները, վաւերացած Մորմոնի աւագ քարտուղարից, Մորմոնի նախագահի կարգադրութեամբ ուղարկւում են «Օրէնքների Հաւաքածուի» տպագրելու և հրատարակելու·

3) «Օրէնքների Հաւաքածուի» տպագրութիւնն ու սրբագրութիւնը Հայաստանի Մորմոնի նախագահի վերին հսկողութեամբ դնդավարում է նրա Մորմոնի Դիւանի պատշաճաւոր պաշտօնեան, որը նշանակւում է նախագահից· «Օրէնքների Հաւաքածուի» համարների առաքումը ըստ պատկանելոյն կառավարութեան պարտականութիւնն է·

(Հաստ· տպտ· 24–իւ 1918թ·)

Կարիք ունեցող գաղթականների խնամատարութեան մասին· — Ծոդ· ա· Կարիք ունեցող գաղթականներին օգնութիւն է տրւում աշխատանքի միջոցով·

Մանօթ· — ա· Գաղթականին աշխատանք տալու անհնարինութեան կամ նրա աշխատանքի անընդունակութեան դէպքում նա ստանում է նպաստ·

Մանօթ· — բ· Աշխատանքից հրաժարւող գաղթականը զրկւում է պետական նպաստ ստանալու իրաւունքից·

Ծոդ· բ· Հայաստանի սահմաններում գտնուած պետական ազատ հողերը տրւում են գաղթականներին մշակելու·

Մանօթ· — Նոյն նպատակով գաղթականներին են տրւում լքուած և անտէր հողեր·

Ծոդ· գ· Գաղթական իւրաքանչիւր ընտանիքին հող տրւում է աշխատաւոր ձեռքերի թւի համեմատ·

Ծոդ· դ· Ամէնևին հող չեն ստանում արհեստներով և առեւտրով զբաղող, ինչպես և հող ունեցող գաղթականները·

Ծոդ· ե· Իւրաքանչիւր գոյք գաղթականին տրւում է մանրամասն ցուցակագրութեամբ· գոյքը փչացնելու համար գաղթականը ենթարկւում է օրէնական պատասխանատուութեան·

Ծոդ· զ· Հողից օգտւելու իրաւունք ստացած գաղթականը զրկւում է այդ իրաւունքից, եթէ նա մի ամսւայ ընթացքում չի գնում նշանակուած տեղը·

Ծոդ· է· Գաղթականի ինքնութիւնը որոշւում է ընդհանուր հիմունքներով·

(Հաստ· սեպտ· 28–իւ 1918թ·)

Կարիքաւոր գաղթականների համար ջուլհականոցներ բանալու մասին·—Ծոդ· 1) Կարիքաւոր գաղթականների, առաւելապէս կանանց համար, բանալ պետական ջուլհականոցներ·

Ծոդ· 2) Այդ նպատակով և համաձայն որանց հետ հաստատուած նախահաշիւի յատկացնել՝ 6,691,200ր· և մոնոպոլիզացիայի ենթարկուած բամբակից 85,700 փութ·

Նևհևևևևիւ· — I Հիմնական դրամագլուխ· —

1· 1500 դազգետահ 625–ական բուբլով	937,500 ք·
2· 20,000 ճախարակ 20–ական ք·	400,000 ք·
3· 60 տօլար 120–ական ք·	7,200 ք·
4· 1,200 մէլ 120–ական ք·	24,000 ք·
5· 500 խոզանակ 8–ական ք·	4,000 ք·
6· Անակնկալ ծախքեր	127,300 ք·
Ընդամենը	1,500,000 ք·

II· Աշխատավարձ (10 շաբաթւայ համար)

1· 1500 ջուլհակ 60–ական ք· շաբաթական	900,000 ք·
2· 20,000 մանող 15–ական ք· շաբաթ·	3,000,000 ք·
3· 800 գործաւոր	384,000 ք·
4· 15000 մասրաչինող	720,000 ք·
5· 150 քեւկապող	72,000 ք·
6· 30 հէւան	14,400 ք·
7· 30 ասպ չինող	14,400 ք·
8· 30 չափող և 60 մաքրող	43,200 ք·
9· 30 վարպետ և 30 օգնական	28,800 ք·
10·30 շուն անող	14,400 ք·
48–ական ք· շաբաթ·	
Ընդամենը	5,191,200 ք·
Գումար	6,691,200 ք·

(Հաստ· հանդ· 8–ին 1918 թ·)

Գաղթական որբերի խնամատարութեան և դաստիարակութեան մասին· — Յօդ· 1· Հայաստանի սահմաններում բոլոր գաղթական որբերի խնամատարութեան ու դաստիարակչութեան գործը պետութիւնը վերցնում է իր վրա, որի անմիջական վարումն յանձնւում է հանրային խնամատարութեան մինիստրին·

Ծանօթ· — Իւրաքանչիւր ինքնավարութեան մարմին, հասարակական կազմակերպութիւն ինչպէս և մասնաւոր անհատ իրաւունք ունեն բանալու ու պահելու որբանոց, բայց պետութեան հսկողութեան ներքոյ·

Յօդ· 2· Որբերին խնամելու և դաստիարակելու համար հիմնւում են անհրաժեշտ թւով որբանոցներ·

Յօդ· 3· Որբանոց ընդունւում են մինչև տասնհինգ տարեկան երեխաներ, որոնք զուրկ են ծնողներից կամ խնամակալներից·

Յօդ· 4· Որբանոցներում կարելի է միասին պահել երկու սեռի երեխաներ ոչ բարձր տասնվեցի տարեկանից·

Յօդ· 5· Տասնհինգ տարին լրացած որբերի համար իւրաքանչիւր որբանոցի վարչութիւն հայթայթում է համապատասխան աշխատանք·

Յօդ· 6· Հանրային խնամատարութեան Մինիստրութեան մէջ հիմնւում է յատուկ որբանոցային բաժին իր վարիչով·

Յօդ· 7· Այդ վարիչին կից նրա նախագահութեամբ կազմւում է խորհրդակցութիւն հանրային կրթութեան մինիստրի և հասարակական որբանոցների վարչութեան ներկայացուցիչներից խորհրդակցական ձայնով·

(Հաստ· հանդ· 11–ին 1918 թ·)

Հռդային առաձնին տուրքի մասին· — 1) 1918 թ· յունուարի 1–ից վերացնել Հայաստանի տերիտորիայում ամէն տեսակի հողերի վրա դրւած տուրքերը։

2) Ներկայ 1918թ· վերացւող հողային տուրքերի վճարողների վրա դնել առանձին տուրք հետեւեալ հիմունքներով՝

ա· Տուրքի չափը սահմանել 15% ա՛յն եկամուտից, որը կը ստացւի՝ եթէ վերցնենք կագեօննայա Պալատայի*) 1910թ· տւեալների հիման վրա հաշւած արդիւնքը և տասնապատիկենք այն, այսպէսով կը ստացւի՝ հաշւելւով տուրքի չափերը կւող թւերով՝ Էջմիածնի գաւառում 1,378,000 ր·, Երևանի գաւ· 962,000ր·, Դիլիջանի գաւառում՝ 354,000ր·, Նոր–Բայազետի գաւառում՝ 677,000ր· և Դարալագեազի գաւառում՝ 313,000ր·։

բ· Տուրքի գումարը, որ հասնում է՝ համաձայն կագեօննայա Պալատայի որոշման՝ իւրաքանչիւր գիւղին, մասնաւորւում է հարկատուների մէջ գիւղական ժողովների հասարակական վճիռների համաձայն և այն հիմունքներով, որ կընդունեն գիւղական ժողովները։

գ· Հարկային թերթերն ուղարկւում է կագեօննայա Պալատան Ֆինանսների մինիստրի կողմից սահմանւած ժամանակին։

դ· Անկանոն մանաւորման դէմ բողոքներ տրւում են հարկային թերթերի առաջադրւից յետոյ մի ամսւայ ընթացքում։

ե· Բողոքները չեն կասեցնում մանաւորման գործողութիւնները։

զ· Հարկը տրւում է գանձարանին մինաւոր դեկտ· 15–ից, որ օրից և հաշւում է տուգանքը՝ ամսական 3%։

է· Ֆինանսների Մինիստրին է վերապահւում պահանջնել հարկերի չափը մինչ հարկատուին կատարելապես հարկից ազատելը, եթէ ուշ գանգատների հիման վրա մանաւորումը նա կը գտնի անհրաժեշտ։

ը· Հողային հարկերի այն գումարները, որ մոգրւած են գանձարան 1918 թւի համար, հանւում են նոր առանձին հարկից։

3) Ի փոփոխումն եկամտային հարկերի կանոնագրութեան համապատասխան յօդւածներին՝ հարկատուների արդիւնքը որոշելու նպատակով չբաժանելիներին, ինչպէս և մասնաւորւում Հայաստանի տերիտորիայի վրա, բացի Երևան քաղաքից կատարում է հարկային տեսուչը։

4) Եկամտային հարկը տրւում է գանձարանին մինաւոր՝ դեկտ· 15–ին, որ օրից և վերցւում է սահմանւած տուգանքը։

5) Եկամտային հարկի վճարումից 1918թ· ազատւում են՝ բացի Երևան և Նոր–Բայազետ քաղաքներից՝ Հայաստանի տերիտորիայի մնացած բոլոր տեղերում հողի արդիւնքից հարկ վճարողները։

6) Եթէ Երևան և Նոր–Բայազետ քաղաքներից դուրս հարկային տեսուչները եկամտային հարկի են ենթարկել հողը և այլ աղբիւրների արդիւնքները, նոր հարկը հանւում է հարկային տեսուչների որոշած եկամտային հարկից։

Հատս· հակս· 25–ին 1918թ·

*) Ագրեսիական Պալատ։

Մենավաճառի ենթարկված բամբակի գների մասին։ — 1) Ներկայ տարւայ սեպտ։ 11–ին ընդունված բամբակի մենավաճառի օրէնքի հիման վրա կառավարութեան ձեռք բերելիք բամբակի փթի գինը սահմանել քառասուն և իննը ր։ յիսուն կոպէկ (49ր։ 50կ։)։

Ժամօր։ — 1։ Թէչեալ գինը համարել ֆրանկո–պետական պահեստ։

Ժամօր։ — 2։ Ջամամած բամբակի փթի գինը հաշւել վեց րուբլով պակաս։

Ժամօր։ — 3։ Ջամաքրած բամբակը ընդունւում է տէրոյ հաշւով այն մաքրելուց յետոյ։

Ժամօր։ — 4։ Բարդաններըը, տոպրակներն ու առհասարակ տարբեր բամբակի պատկանելիքներն են, ուստի դրանց համար առանձին վարձատրութիւն չի տրւում։

Նախկին ռուսական կայսրութեան օրէնքների գործադրման մասին Հայաստանի տերիտորիայի վրա։ — Հայաստանի Հանրապետութեան տերիտորիայի վրա գործադրւում են ժամանակաւորապէս նախկին ռուսական կայսրութեան օրէնքները, ժամանակաւոր կառավարութեան, Անդրկովկասեան կոմիսարիատի և Սէյմի ու Հայաստանի Ազգային Խորհրդի փոփոխութիւններով և լրացումներով։

(Հաստ։ դեկտ։ 6–ին 1918թ։)

Սենատի և դատաստանական ատեանի ներմուծման մասին Հայաստանի տերիտորիայի սահմաններում։ — Ծօդ։ 1։ Երևան քաղաքում բացւում է դատաստանական ատեան երկու դեպարտամենտներով՝ քաղաքացիական և քրէական։

Ծօդ։ 2։ Երևան քաղաքում բացւում է սենատ բաղկացած երկու վճռաբեկ դեպարտամենտներից՝ քաղաքացիական ու քրէական՝ որոշումները բեկանելու խնդիրների վերաքննութեան համար։

Ծօդ։ 3։ Սենատի երկու դեպարտամենտների ընդհանուր նիստը քննում է այն բոլոր միւս խնդիրները, որոնք ենթարկւում էին ռուսական կառավարչական սենատի միւս դեպարտամենտներում և ընդհանուր (միացեալ) նիստերին։

Ծօդ։ 4։ 1470–ը քաղաքացիական դատավարութեան կանոնադրութեան մէջ վերացւում են։

(Հաստ։ դեկտ։ 6–ին 1918թ։)

Հայաստանի Հանրապետութեան մէջ հաշտարար բաժանմունքների և ճննիչական մասերի վերակազմութեան և նորերի բացման մասին։ — Հայաստանի Հանրապետութեան մէջ հաստատւում են հետևեալ հաշտարար բաժանմունքները և քննիչական մասերը։ —

I. Երևան քաղաքում հաստատւում են երկու հաշտարար բաժանմունք և նոյնքան քննիչական մասեր։

1) Երևանի քաղաքային առաջին հաշտարար բաժանմունք և քննիչական մաս և

2) Քաղաքային երկրորդ հաշտարար բաժանմունք և քննիչական մաս։

II. Երևանի գաւառում հաստատւում են երեք հաշտարար բաժանմունք և նոյնքան քննիչական մասեր։

1)Ախտայի հաշտարար բաժանմունք և քննչական մաս Ներքին Ախտայ գիւղում։

2) Ղոխբուլաղի հաշտարար բաժանմունք և քննչական մաս, կենտրոն գնդունելով Երևան քաղաքը, և

3) Ղամաբլուի հաշտարար բաժանմունք և քննչական մաս Ղամաբլու գիւղում։

III. Խմխմածնի գաւառում հաստատւում են երեք հաշտարար բաժանմունք և նոյնքան քննչական մասեր.

1) Խմխմածնի հաշտարար բաժանմունք և քննչական մաս Վաղարշապատ գիւղում.

2) Ապարանի հաշտարար բաժանմունք և քննչական մաս Ալիքուշաք գիւղում և

3) Ղուրդուղուլի հաշտարար բաժանմունք և քննչական մաս Ղուրդուղուլի գիւղում։

IV. Սուրմալուի գաւառում հաստատւում են երկու հաշտարար բաժանմունք և նոյնքան քննչական մասեր։

1) Սուրմալուի հաշտարար բաժանմունք և քննչական մաս Իդդիր գիւղում և

2) Կողբի հաշտարար բաժանմունք և քննչական մաս Կողբ գիւղում։

V. Ղարաքիլիսայի գաւառում՝ Ղարաքիլիսայի հաշտարար բաժանմունք և քննչական մաս Մեծ Ղարաքիլիսա գիւղում։

VI. Դիլիջանի (Քարւանսարայի) գաւառում հաստատւում են երկու հաշտարար բաժանմունք և նոյնքան քննչական մասեր.

1) Դիլիջանի հաշտարար բաժանմունք քննչական մաս Դիլիջան գիւղում և

2) Քարւանսարայի հաշտարար բաժանմունք և քննչական մաս Քարւանսարա գիւղում։

VII. Լոռիի (Ջալալ–Օղլու) գաւառում՝ Լոռիի հաշտարար բաժանմունք և քննչական մաս Ջալալ–Օղլի գիւղում։

VIII. Նոր–Բայազէտի գաւառում հաստատւում են՝ մի հաշտարար բաժանմունք, մի քննչական մաս և մի քննիչ հաշտարար բաժանմունք.

1) Նոր–Բայազէտի հաշտարար բաժանմունք և քննչական մաս Նոր–Բայազէտ քաղաքում.

2) Բասարդեչարի քննչահաշտարար բաժանմունք Բասարդեչար գիւղում և

3) Ղարանլուղի քննչական մաս Ղարանլուղ գիւղում։

IX. Շարուրի գաւառում հաստատւում է մէկ հաշտարար բաժանմունք և մէկ քննչական մաս Բաշնորաշէն գիւղում։

X. Դարալագեազի գաւառում Դարալագեազի հաշտարար բաժանմունք և քննչական մաս Գէչէր–քեանդ գիւղում։

XI. Նախիջևանի գաւառում հաստատւում են երկու հաշտարար բաժանմունք և նոյնքան քննչական մասեր.

1) Նախիջևանի հաշտարար բաժանմունք և քննչական մաս Նախիջևան քաղաքում և

2) Օրդուբաթի հաշտարար բաժանմունք և քննչական մաս Օրդուբաթ քաղաքում։

XII. Քաղաքագլուխ դատաւորում հաստատւում են երկու հաշտարար բաժանմունք և նոյնքան քննչական մասեր.

1) Գորիսի հաշտարար բաժանմունք և քննչական մաս Գորիս քաղաքում և

2) Ղաթարի հաշտարար բաժանմունք և քննչական մաս Ղաթար գիւղում։

XIII. Ալէքսանդրապոլ դատաւորում հաստատւում են երկու քննչական մասեր.

1) Ալէքսանդրապոլի հաշտարար բաժանմունք և քննչական մաս Ալէքսանդրապոլ քաղաքում և

2) Ալէքսանդրապոլի գաւառական հաշտարար բաժանմունք և քննչական մաս, կենտրոն ընդունելով Ալէքսանդրապոլ քաղաքը։

Արդարադատութեան մինիստրին է վերապահւում հաշտարար բաժանմունքների և քննչական մասերի սահմանների որոշումն և փոփոխումն համաձայն դատաստանական հիմնարկութիւնների կանոնադրութեան 447 յօդուածի։

(Հաստ. դեկտ. 6-ին 1918թ.)

Երդւեալ տէնեակալների դատարանի ներմուծման մասին, Հայաստանի Հանրապետութեան տերիտորիայի վրա. — Յօդ. 1. Հայաստանի Հանրապետութեան տերիտորիայի սահմաններում մտնում է դատարան երդւեալ տէնեակալներով, քրէական դատավարութեան կանոնադրութեան հիման վրա։

Յօդ. 2. Քրէական դատաստանական կանոնադրութեան յօդ. 84, 87, 88, 97, 113, 437 և 450 վերացւում են։

Յօդ. 3. Դատաստանական կանոնադրութեան 81 յօդւածը ձևակերպել այսպէս. երդւեալ տէնեակալները ընտրւում են Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիներից՝ կէտ 1 վերացւում է, 2 և 4 կէտերը ձևակերպել այսպէս՝ 2 կէտը «երգագէտներ», 4 կէտը՝ «առնւազն 6 ամիս այն գաւառում ապրողներն, որտեղ կատարւում են երդւեալ տէնեակալների ընտրութիւնները»։

Յօդ. 4. Դատաստանական կանոնադրութեան 89 յօդւածը ձևակերպել այսպէս. «Հերթական ցուցակները կազմող յանձնաժողովը կազմւում է իւրաքանչիւր գաւառում և քաղաքի համար առանձին. բաղ որում. — կէտ 1) քաղաքներում քաղաքային ինքնավարութիւնները, կէտ 2) գաւառներում տեղական գաւառական գործադիր ինքնավարութիւնները, իսկ մինչ գործադիր հաստատումը — գաւառական կոմիսարները։

Յօդ. 5. Դատաստանական կանոնադրութեան 97րդ յօդւածը ձևակերպել այսպէս. «Հերթական ցուցակները կազմող յանձնաժողովը կազմւում է՝ քաղաքներում քաղաքագլխի կամ աստրսատի նախագահութեամբ իսկ գաւառներում գործադիրի ինքնավարութեան նախագահի (այն տեղերում, որտեղ գործադիր չկայ առայժմ — նախագահում է գաւառական կոմիսարը) ինքնավարութեան անդամի հաշտարար դատաւորների, դատախազի ընկերոջ, հարկային տեսչի, քննչի, միլիցիայի պետի և ընդհանրապէս այն բոլոր անձնաւորութիւններից, որոնց յարմար կը գտնի հրաւիրելու յանձնաժողովի նախագահը։

Նաեւ որ՝ յանձնաժողովի անդամների պարտաւորեցուցիչ քիւն է յիշեալ կազմից 5 մարդ։

Ծող. 6. Դատաստանական կանոնագրության 100–րդ յոդւածի 1 կէտը ձևակերպել այսպէս՝ Երևան քաղաքը իր գաւառով 750 մեմ. 3 կէտը՝ տաքի առթիւ համար գաւառներում չրջանային գաւառապետ նիստերը ոչ ուսել 4–ից՝ մասնակցությամբ երդուեալ տեղեկակալների իւրաքանչիւր այդպիսի չրջանում գէպքից — ընդամենը 260 անձ:

Ծող. 7. Դատաստանական կանոնագրության յոդւածի՝ 201[1], 201[2], 202, 204 համաձայնութեամբ, 205[1], 670, 1000, 1001, 1002, 1003, 1009, 1010, 1016, 1021, 1025, 1026, 1030, 1031, 1032, 1116, 1280[1] վերացում է:

(Հաստ. դեկտ. 6–ին 1918թ.)

1919թ. Ֆինանսական նախահաշիւների և պետական եկ ու մուտքի առաստակը կազմելու, ընդունելու և հաստատելու մասին. — 1) Իւրաքանչիւր մինիստրութեան եկ ու մուտքի նախահաշիւների նախագծերն ուղարկւում են ֆինանսական մինիստրութեան ոչ ուշ քան 1919թ. փետրուարի 1–ը:

2) Իւրաքանչիւր մինիստրութեան նախահաշիւ նախագիծը նախօրօք քննում է նախահաշիւները քննող միջվարչական յանձնաժողովը, որը կազմւում է այդ մինիստրութեան, ֆինանսական մինիստրութեան և պետական վերահսկողութեան ներկայացուցիչներից:

3) Ծանձնաժողովների անդամների քիւը որոշւում է յիշեալ վարչութիւնների համաձայնութեամբ:

4) Այն նախահաշւային ենթադրութիւնները, որոնց մասին տարաձայնութիւն չի յառնում նախահաշիւները քննող յանձնաժողովի մէջ, համարւում են հաստատութիւն գտած նախահաշւի նախագծի մէջ մուծելու համար:

5) Մնացած տարաձայնութիւնների մասին յիշեալ երեք վարչութիւնների ներկայացուցիչները զեկուցում են իրենց իշխանութիւններին: Եթէ վերջիններս չեն գայ համաձայնութեան, նախահաշւի նախագծին կցւում է նրանցից իւրաքանչիւրի եզրակացութիւնը:

6) Նախահաշւային յանձնաժողովի քննած նախահաշիւների նախագծերը տարաձայնութիւն առաջ բերող հարցերի մասին մտցած եզրակացութիւններն հետ միասին ուղարկւում են ֆինանսական մինիստրութեան մէջտղով մինիստրների խորհուրդը ոչ ուշ քան 1919թ. փետրուարի 20–ը:

7) Մինիստրների Խորհուրդը քննելով նախահաշիւների նախագիծը, լուծելով վիճելի հարցերը և նախագծին իր հաւանութիւնը տալով վերադարձնում է նրանց ֆինանսական մինիստրին՝ պետական եկ ու մուտքի տախտակի նախագիծը կազմելու համար:

8) Ֆինանսական մինիստրը մինիստրների խորհրդին ներկայացնում է պետական եկ ու մուտքի տախտակի նախագիծը ոչ ուշ քան 1919թ. մարտի 1–ը:

9) Մինիստրների խորհրդի կողմից հաւանութիւն գտած պետական եկ ու մուտքի տախտակի նախագիծը հրատարակւում է անմիջապէս և առաջիկայ Հոգեւոր Ժողովի քննութեան ոչ ուշ քան 1919թ. մարտի 20–ը:

Ծանօթագիր. Պետական եկ ու մուտքի տախտակի նախագծի հետ հրատարակւում է նաև նախընթաց 1918 թւի հաշուետուութիւնը:

10) Թոյլատրւում է Հայաստանի Հանրապետութեան բոլոր մինիստրութիւններին 1919 թւի յունուարի 1–ից մինչև մարտի 1–ը պետական ծախքերն անելիս՝ զեկավարւել նախընթաց 1918 թւի եզից նախահաշիւներով:

(Հաստ. յունուար 3–ին 1919թ.)

Հայաստանի Հանրապետութեան մէջ սահմանուած տօնական մասին։ — *ա) Սահմանւում են հետեւեալ տօները։*

Ընդհանուր պետական տօներ՝ նոր տարւայ ծննդեան և մկրտութեան, մեռելոցի, Տեառնընդառաջի, Վարդանանց և Բարեկենդան չաբաթ, Լուսաւորչի մուտն ի վիրապ, Զատկի երկուշաբթի և երեքշաբթի, Համբարձման, Թարգմանչաց և բոլոր կիրակի օրերը։

Ռուսների համար, բացի վերոյիշեալ ընդհանուր տօներից՝ Աստուածածնի, Վերափոխումն, Խաչվերացի, ծննդեան և նրա յաջորդ օրը, Նիկողայոս Հրաշագործի (9 մայիսի), Պօղոսի և Պետրոսի և Ցովհաննու Մկրտչի գլխատման օրերը։

Մահմեդականների համար Իմամ Հուսէյնի մահուան, նրա քառասուներորդ օրը, Մահմկդի մահուան, նրա ծննդեան, Ալիի ծննդեան, Գաբրիէլ հրեշտակապետաց Մահմեդի մարգարէական կոչումն յայտնելու, 12 իմամի ծննդեան, Ալիի վիրաւորելու և մահուան, Աստուծուց Մահմեդի Ղուրանը ղրկելու, Պարսից առաջին տօնի, Աբրահամի Իսրայէլին զոհաբերելու, Մահմեդի Ալիի, Քաաբի նշանակելու և Նովրուզ-Բայրամի երեք օրերը։

բ) Բոլոր հիմնարկութիւնները պիտի փակւին, բանուորները և ծառայողները ազատ պիտի լինին աշխատանքից, ամբողջ օրը ծննդեան, Ռուսական Մեծ Յեղափոխութեան (12 մարտի ն. տոմարով), Զատկի, մայիսի 1–ի, (Հայաստանի Հանրապետութեան պարլամենտի բացման օրը), երկու Քաղաքացիների, պետական հասարակական հիմնարկութիւնները պիտի փակւին կէս օրւայ ժամը 12–ին իսկ ուսեստի խանութները ժամը 4–ին։

Ծանօթ. Մահմեդականները փակում են առևտուր–արդիւնաբերական հիմնարկութիւնները կիրակի օրերը ժամը 12–ին, իսկ ուրբաթ օրը իրենց ցանկութեամբ ամբողջ օրը։

(Հաստ. յուն. 17–ին 1919թ.)

Լրացուցիչ օրէնք բամբակի մենավաճառի մասին։ — 1) *Ի լրումն 1918 թ. սեպտ. 11–ին և դեկտ. 3–ին հրատարակած օրէնքների՝ ֆինհանների մինիստրին վերապահել իրաւունք մինիոններ ասհմանել բամբակի օգտագործման և վաճառման վերաբերմամբ, ամէն անգամ պայմաններն ու գները որոշելով Մինիստրների Խորհրդի հաւանութեամբ։*

2) *Պետական գանձարանի մինիոններից ֆինհանների մինիստրի տրամադրութեան տակ դնել տասը միլիոն (10.000.000) ր. վճարելու համար բամբակատէրերին ձեռք բերւող բամբակի արժէքը՝ Հայաստանի Խորհրդի հաստատած մենավաճառային գնի համեմատ, ինչպէս և կատարելու բամբակ ընդունելու պահելու և փոխադրելու հետ կապւած վերադիր ծախսերը։*

(Հաստ. փետր. 7–ին 1919թ.)

Սերմացու և գիւղատնտեսական ինվենտար ձեռք բերելու նպատակով Հայաստանի Հանրապետութեան ազգաբնակութեանը դրամական ամենայոս փոխառութիւն տալու համար վարկ բանալու մասին։ — 1) *Պարենաւորման մինիստրութեան տրամադրութեան տակ դնել յիսուն միլիոն րուբլի սերմացու և ինվենտար պատրաստելու, ինչպէս նաև սերմանելու համար դրամական փոխառութիւն տալու նպատակով։*

2) *Ծանձնարարել պարենաւորման մինիստրին կազմակերպել ազգաբնակութեանց փոխառութիւն, հացահատիկներ և ինվենտար բաշխելու*

գործը յաւուրն ժամանակաւոր միջ–վարչական կոմիտէների միջոցով, որ կազմելու են Գաբեհաւորման, Քնամատութեան ու Ներքին Գործոց Մինիսթրութիւնների, Գօշպերատիւների Միութեան և Հայոց Գիւղատնտեսական Ընկերութեան ներկայացուցիչներից։

3) *Թոյլ տալ Մինիսթրների Խորհրդին հրատարակել կանոններ ապգաբնակութեան սերմացուի համար անտոկոս դրամական փոխառութիւն տալու և սերմացուով ու ինվենտարով ապգաբնակութեանը վերադարձ օգնութիւն ցոյց տալու վերաբերեալ։*

4) *Ժամանակաւոր կոմիտէների չտասների ծախքը հոգալ սերմացուի համար բացած վարկի դումարից։*

(Հաստ. մարտ 29–ին 1919թ.)

ՀԱՑԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ

ՀԱՍՏԱՏԱԾ ՕՐԵՆՔՆԵՐԸ 1919թ. օգ.—1920թ. նոյեմբ.

Հայաստանի Խորհրդարանի—Գարլամենտ—օրէնսդրական աշխատանքը եղել է բաւական ընդարձակ ու բազմակողմանի։ Նրա ընդունած օրէնքներն ու որոշումները տպւում էին Խորհրդարանի հրատարակած *«Օրէնքների Հաւաքածուի»*–ի մէջ, որը 1919թ. նոյեմբերից սկսած, լոյս էր տեսնում պարբերաբար։

1919թ. օգոստ. 1–ից մինչև 1920թ. մայիս 5, երբ Խորհրդարանը արձակուեց ստացաւ և այլևս օրէնսդրական աշխատանքի չկատարեց, ընդունել ու հաստատել են բազմաթիւ օրէնքներ ու որոշումներ։ Դժբախտաբար, մենք հնարաւորութիւն չունենք տալու ամբողջական վիճակագրական տեղեկութիւններ, բայց հետևեալ թւերն իսկ բաւական են ցոյց տալու համար, թէ որքան ուժեղ էր Խորհրդարանի գործունէութեան թափը՝ համեմատած Խորհրդի հետ։ 1919թ. օգոստ. 1–ից մինչև նոյն տարւայ դեկտեմբ. 31–ը Խորհրդարանը հաստատել է 117 օրէնք ու որոշում, 1920թ. յունե. 1–ից մինչև նոյն տարւայ ապր. 26–ը՝ 85 — ընդամենը 202 օրէնք և որոշում։ Նոյն ժամանակամիջոցում Խորհրդարանում լսել են բազմաթիւ յայտարարութիւններ կառավարական և Խորհրդարանական յանձնաժողովների կողմից։ Մասնաւորապէս լայն տեղ է տրւել զաւառներն ուղարկած Խորհրդարանական ընչնչ յանձնաժողովների զեկուցումներին, որոնք, մի տեսակ, երկրի ուսումնասիրութեան բեռոյթ են կրել։

Պետք է արձանագրել նաև, որ ընդունած օրէնքների և որոշումների խոշոր մասը վերաբերում է նախկին օրէնքների փոփոխութեան ու լրացման և նախահաշիւների հնութեան ու հաստատման։

Առաջ ենք բերում Հայաստանի Խորհրդարանի հաստատած կարեւոր օրէնքների մի մասը, առանց սպառած լինելու ամբողջ օրէնսդրական նիւթը։

1· Օրէնք Հայաստանի Հանրապետութեան մայրաքաղաքում Ազգագրական – Մարդաբանական Թանգարան–Դրադարան հիմնելու մասին։ — 1) *Հայաստանի Հանրապետութեան Մայրաքաղաքում հիմնւում է Ազգագրական–Մարդաբանական Թանգարան–Գրադարան։*

2) *Ազգագրական–Մարդաբանական Թանգարան–Գրադարանին է յանձնւում, իբրև պետական սեփականութիւն, «Հայոց Ազգագրական Ընկերութեան» չարժական և անչարժ ամբողջ գոյքը, համաձայն նրա ընդհանուր ժողովի որոշման։*

3) Թանգարանի-Գրադարանի վարիչը գործը յանձնում է Հայաստանի Ազգագրական-Մարդաբանական ընկերությանը, Հայաստանի Հանրապետության Հանրային կրթության և Արվեստի Նախարարի վերահսկողության տակ և նրա կողմից հաստատած առանձին կանոնագրությամբ։

(Հաստատված է 1919թ. մեպտ. 9-ին։)

2. Ֆինանսական նախահաշիվների և պետական եկամտագոյ կազմելու, ինչպես և հաստատելու մասին։ — 1) 1920թ. եկեմտական տարին հաշվել նոյն տարւոյ յունվարի մէկից։

2) Նախարարությունների և պետական վերահսկողության եկեմտագի նախահաշիվները նախագծերը միաժամանակ ուղարկում են Ֆինանսների նախարարության հօրն օրինակ և պետական վերահսկողության մի օրինակ 1919թ. նոյեմբեր 10-ից ոչ ուշ։

3) Պարլամենի և նրա դիւանի պահպանման համար բացած վարկերը մտցում են նախահաշվի մէջ նախագահության ներկայացրած գումարների համաձայն։

4) Իւրաքանչիւր նախարարության և պետական վերահսկողության նախահաշվի նախագիծը նախօրօք քննության է առնում նախահաշիվները քննող Միջկուսակցական Յանձնաժողովը, որ կազմւում է համապատասխան նախարարության, Ֆինանսների նախարարության և պետական վերահսկողության ներկայացուցիչներից։

5. Յանձնաժողովի անդամների թիւը որոշւում է յիշեալ վարչութիւնների համաձայնութեամբ։

6. Նախահաշիվները քննող միջկուսակցական յանձնաժողովի նախագահը նշանակւում է Ֆինանսների նախարարի կողմից։

7. Նախահաշվային այն ենթադրութիւնները, որոնց մասին տարաձայնութիւն չի ծագում նախահաշիվները քննող յանձնաժողովի մէջ, համարւում են հաւանութիւն գտած այդ նախարարության նախահաշվի նախագծի մէջ մուծելու համար։

8. Մագած տարաձայնութիւնների մասին յիշեած երեք վարչութիւնների ներկայացուցիչները զեկուցում են իրենց իշխանութիւններին։ Եթէ վերջիններս չեն համաձայնում, նրանցից իւրաքանչիւրը եզրակացութիւնը ներկայացնում է նախահաշվի նախագծին։

9. Նախահաշվային յանձնաժողովի քննած նախահաշիվների նախագծերը տարաձայնութիւն առաջ բերող հարցերի մասին մտցած եզրակացութիւնների հետ միասին ուղարկւում են Ֆինանսական նախարարության միջոցով Նախարարների Հորհրդին ոչ ուշ քան 1918թ. նոյեմբերի 20-ը։

10. Նախարարների Հորհուրդը քննելով նախահաշիվների նախագիծը և լուծելով վիճելի հարցերն ու նախագծին իր հաւանութիւնը տալով, 1919թ. դեկտեմբերի 1-ից ոչ ուշ, վերադարձնում է Ֆինանսների նախարարին պետական եկեմտացոյցի նախագիծը կազմելու համար։

11. Ֆինանսական նախարարը Նախարարների Հորհրդին է ներկայացնում պետական եկեմտացոյցը ոչ ուշ, քան 1919թ. դեկտեմբերի 15-ը։

12. Նախարարների Հորհրդի կողմից հաւանութիւն գտած պետական եկեմտացոյցի նախագիծը հրատարակւում է անվիճելիօրէն և ոչ ուշ, քան 1919թ. դեկտեմբերի 20-ը առաջարկւում Հայաստանի Պարլամենտի քննութեան։

13. Հայաստանի Պարլամենտի կողմից հաստատւելուց յետոյ պետական եկեմտացոյցը հրատարակւում է 10 օրւայ ընթացքում։

(Հաստատված է 1919թ. նոյեմբ. 17-ին)

Ցորեն հարիւր միլիոն բուդլու չէիր թաց թղթադրու մասին։ — Թալլաթրեալ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան թաց թուղթէր, պետական բանկի եղեռնեան բաժանմունքի ոչիկցուկիներ կամ այլ եռանպարկով, չորս հարիւր միլիոն բուդլու չէիր կամ այլ գրամանիշներ ասոնցմանէ ըսա կարելի։

(Հաստատուած է 1919թ. մայիս. 20–ին)

Բամբակի մենաշնորհութեան 1919թ. սեպտեմբեր 11–ի օրէնքի լրացման մասին։ — Ի լրացումն բամբակի մենաշնորհութեան 1919թ. սեպտեմբեր 11–ի օրէնքի՝ սահմանել.

1) Բոլոր բամբակատէրերը պարտաւոր են մինչեւ 1919թ. դեկտեմբերի 31–ը պետական մենաշնորհութեան պահեստներից որեւէ մէկին յանձնել իրենց ժոռ եղած ամբողջ բամբակը, հակառակ դէպքում չյանձնած բամբակը, որպէս ապօրինի թագցրուած, յարգունիս կը դրուի։

2) Ֆինանսների նախարարին իրաւունք է տրւում թագցրած բամբակը յայտնաբերողներին վարձատրել այդ բամբակի արժէքի երկու երրորդականի չափով՝ հաշուելով բամբակի փութը ժամանակ՝ —12թ. 50կ.. մաքքան, ոչ ժամանակ—42թ. 50կ. և հունդատուրի՝ —25թ.։

(Հաստատուած է 1919թ. մայիս. 25–ին)

«Ալյոզգինների Վարչութիւն» հիմնելու և այդ վարչութեան կարիքների համար 17·600 ր. վարկ բանալու մասին։ — 1) Հիմնել ներքին գործերի նախարարութեան կից առանձին «Ալյոզգինների Վարչութիւն» Հայաստանում ապրող ոչ հայ ցեղերի ուսումնասիրութեան համար, ենթարկելով այդ վարչութիւնը ամէնօրեայ ներքին գործերի նախարարին։

2) Բանալ ներքին գործոց նախարարութեան առան և ծօթ հազար վեց հարիւր բուբլու վարկ «Ալյոզգինների Վարչութեան» տոյն քիչ դեկտեմբերի մէկից մինչև 31–ը պահանջուղ ծախսերը հոգալու համար, համաձայն տոյն օրէնքին կցած նախահաշուի։

3) 1920թ. յունուար 1–ից այդ գումարը որպէս ամսական ծախք մտցնել պետական նախահաշուի մէջ ընդհանուր հիմունքներով։

(Հաստատուած է 1919թ. դեկտ. 5–ին)

Հայաստանի և Վրաստանի Հանրապետութիւնների՝ ապրանքների ազատ փոխադրութեան մասին՝ կնքուած դաշնագրի հաստատման մասին։ —

(Հաստատուած է 1919թ. մայիս. 11–ին)

Թիֆլիզ, 1919թ մայիսերի 3

Վրաստանի կառավարութիւնը՝ ներկայացած ի դէմս Ներքին գործերի և Ջօրական Նախարար Նոյ Վիսսարիոնովիչ Ռամիշվիլու և Վրաստանի Հանրապետութեան Հիմնադիր Ժողովի Փոխ–Նախագահ Սիմոն Դաւթեանովիչ Սպիրիդոնու մի կողմից և Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը՝ ի դէմս Մաքսերի Գլխավոր Վարչութեան Մամիկոնեանի և Հայաստանի Հանրապետութեան Գործադիր Մարմնի անդամ Սմբատ Յարութիւնեանի հաչատրեանի միւս կողմից, — ծանօթանալով լիազօրագիրների հետ և, գտնելով դրանք պահանջուած ձեւի և պատշաճ կարգի, ընդունեցին տոյն դաշնագրի առ այն, որ.

1. Հայաստանի երկաթուղիներով Հայաստանի վրայով Վրաստան, կամ Վրաստանից Հայաստանի սահմանները և վրաց երկաթուղիներով Վրաստանի վրայով Հայաստան կամ Հայաստանից Վրաստանի սահմանները փոխադրվող ապրանքների համար սահմանում է ազատ փոխադրութիւն, այսինքն փոխադրութիւն առանց մաքսի։

2. Սոյն դաշնագիրը կնքւում է երեք տարով, ըստ որում դաշնագրի հաստատման օրից մի տարի անցած՝ դաշնագիրը կնքող կողմերից իւրաքանչիւրը իրաւունք ունի յայտարարել վերաքննել դաշնագիրը և այս դէպքում՝ դաշնագիրն իր ոյժի մէջ մնում է այդ յայտարարութեան օրւանից սկսած վեց ամսւայ ընթացքում։ Եթէ այդ ժամանակամիջոցում կողմերը դաշնագրի վերաքննութեան մասին համաձայնութեան չգան — դաշնագիրը կորցնում է իր ոյժը։

3. Հաստատւած դաշնագրի փոխանակութիւնը կատարւելու է Թիֆլիսում երկու հաքաթւայ ընթացքում։

4. Ներկայ դաշնագիրը կազմւում է երկու օրինակ։

Վրաստանի Հանրապետութեան Ներքին Գործերի և Զօրական Նախարար Ն. ՌԱՄԻՇՎԻԼԻ

Հիմնադիր ժողովի Փոխ-Նախագահ Ս. ՄԱԻՎԱՆի

Ստեփան Գրիգորեան ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Հայաստանի Պարլամենտի անդամ Սմբատ Յարութիւնեան ՔԱԶԱՏՐԵԱՆ

Հայաստանի Հանրապետութեան Պարլամենտը՝ 1919թ. նոյեմբեր 11-ի նիստում, լսելով և քննութեան առնելով ներկայ դաշնագիրը, միաձայն որոշեց—Հաստատել սոյն դաշնագիրը ապրանքների ազատ փոխադրութեան մասին, որ կնքել են Վրաստանի և Հայաստանի Հանրապետութիւնների կառավարութիւնները Թիֆլիսում 1919թ. նոյեմբեր 3-ին։

(Հաստատւած է 1919թ. նոյեմբ. 11-ին)

Հայաստանի և Վրաստանի Հանրապետութիւնների՝ վիճելի խնդիրները հաւմաձայնութեամբ կամ պարտադիր իրաւարբի միջոցով լուծելու համար՝ կնքւած դաշնագրի հաստատման մասին. —

Թիֆլիզ, 1919թ. նոյեմբ. 3.

Վրաստանի կառավարութիւնը՝ ներկայացւած ի դէմս Ներքին Գործերի և Զօրական Նախարար Նոյ Վխսարիձեի, ՌԱՄԻՇՎԻԼԻՒ և Վրաստանի Հանրապետութեան Հիմնադիր ժողովի Փոխ-Նախագահ Սիմոն Գուրգենովիչ ՄԱՒՎԱՆՈՒ մի կողմից և Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը՝ ի դէմս Ստեփան Գրիգորեան ՄԱՄԻԿՈՆԵԱՆի և Հայաստանի Հանրապետութեան Պարլամենտի անդամ Սմբատ Յարութիւնեան ՔԱԶԱՏՐԵԱՆի միւս կողմից, ծանօթանալով լիազօրութիւնների հետ և, գտնելով դրանք պահանջւած ձևի ու պատշաճ կարգի, կնքեցին սոյն դաշնագիրն առ այն, որ

1· Դաշնագիրը կազմող Պետութիւնները՝ Հայաստանի և Վրաստանի Հանրապետութիւնները պարտաւորւում են իրանց մէջ գոյութիւն ունեցող, այլ և ծագելիք հնարաւոր բոլոր վէճերը լուծել համաձայնութեամբ, իսկ եթէ դա չկայանայ՝ պարտադիր իրաւաբեր միջոցով։

2· Վաւերացած սոյն դաշնագրի փոխանակութիւնը կատարւելու է Թիֆլիզում երկու չաբաթւայ ընթացքում։

3· Նեռկայ դաշնագիրը կազմւում է երկու օրինակ։

Վրաստանի Հանրապետութեան Նեռքին Գործերի և Զօրական

Նախարար Ն· Ռամիշվիլի

Հիմնադիր Ժողովի Փոխ–նախագահ Ս· Մդիվանի

Ստեփան Գրիգորեան Մամիկոնեան

Հայաստանի Գարլամենտի անդամ Սմբատ Յարութիւնեան

ԽԱԶԱՏՐԵԱՆ

Հայաստանի Հանրապետութեան Գարլամենտը 1919թ· նոյեմբեր 11–ի իր նիստում, լսելով և քննութեան առնելով ներկայ դաշնագիրը՝ միաձայն որոշեց — «Հաստատել սոյն դաշնագիրը, որ կնքել են Թիֆլիզում 1919 թ· նոյեմբեր 3–ին Վրաստանի և Հայաստանի Հանրապետութիւնների կառավարութիւնները՝ լուծելու Վրաստանի և Հայաստանի մէջ գոյութիւն ունեցող, այլ և հնարաւոր ծագելիք բոլոր վէճերը համաձայնութեամբ, իսկ եթէ այդպիսին չկայանայ — պարտադիր իրաւարբի միջոցով»։

(Հաստատուած է 1919թ· նոյեմբ· 11–ին)

Պետական լեզուի մասին· — 1) Հայաստանի Հանրապետութեան պետական լեզուն հայերէնն է և պարտադիր օրէնքի ու բոլոր պետական և հասարակական հաստատութիւնների մէջ։ Այլ լեզուների գործածութիւնը պետական ու հասարակական հիմնարկութիւնների մէջ սահմանւում է յատուկ օրէնքով։

2) Պետական և հասարակական հաստատութիւնները պարտաւոր են վեց ամսւայ ընթացքում հայերէնը դարձնել պետական գործավարութեան պաշտօնական լեզու։

(Հաստատուած է 1919թ· դեկտ· 26–ին)

Ձիւնորմների ռոճիկի մասին·—Ձիւնորհների ռոճիկը սոյն Քւի հոկտեմբ· 1–ից սահմանել ամսական ներկայ օրէնքին կցւած տախտակի համաձայն։

Տ Ա Խ

Իսկական, աքցեստպաքեա և կամաւոր գինուոր

(Օրէնք 114, հատուած

ՈՁԻԿ	ՔՍՏ	ԿՈՉՄԻ

ԿՈՉՈՒՄՆ	ԻՍԿԱԿԱՆ ՆԱՒԱՑՈՒԹ.				ԱՐՏԱՊԱՏ			
	Հին ոճիկ		Առաջարկեալ ոճիկ		Հին ոճիկ		Առաջարկեալ ոճիկ	
	Ր.	Կ.	Ր.	Կ.	Ր.	Կ.	Ր.	Կ.
1· Սոսկական գինուոր	60	—	100	—	—	—	—	
2· Փոխ ենթասպայ	61	50	103	—	375	—	525	
3· Վաչտի փոդպահաք	61	50	103	—	—	—	—	
4· Կրտսեր ենթասպայ	64	—	107	—	400	—	575	
5· Աւագ ենթասպայ	69	—	115	—	425	—	625	
6· Գնդի փոդպահաք	69	—	115	—	—	—	—	
7· Ձեէդ-ֆիզել	73	—	122	—	450	—	675	
8· Գոդդրապոբչիկ	103	—	172	—	500	—	700	
9· Գնդի դրամքեր	86	—	146	—				
10· Աւագ դրամքեր	69	—	115	—				
11· Կրտսեր ,,	60	—	100	—				
12· Աւագ սբհետատաւք	69	—	115	—				
13· Կրտսեր ,,	60	—	110	—				
14· Աւագ վիմագրեր	69	—	115	—				
15· Վիմագրեր օգնական	60	—	100	—				
16· Ձեէդչիներ Աւագ բժշկական	93	—	155	—				
17· ,, Կրտսեր ,,	80	—	133	—				
18· ,, Դեղատան	80	—	133	—				
19· ,, Վաչտի	69	—	115	—				
20· ,, Աւագ սեսաեարուժ	93	—	155	—				
21· ,, Կրտսեր ,,	80	—	133	—				
22· Հիւանդներէ վերակացու	69	—	115	—				
23· Զևոզ և կարող	69	—	115	—				
24· Նկէզեցու տպաւուրք	Քսա		կոչման					
25· Պահեստապահ	93	—	155	—				
26· Գնդապէր	86	—	146	—				

1919թ. գեկտ. 31
Երևան

Ա Կ

բի ստանձնելի ըստ կոչման և պաշտօնի

9 թ. օգոստոսի 30-ին)։

Ն				ՈՒՂԻԿ ԸՍՏ ՊԱՇՏՕՆԻ				
ԿԱՄՔԱՒՈՐ								
Հին տուրքի		Առաջարկեալ տուրքի		ՊԱՇՏՕՆԸ	Հին տուրք		Առաջարկեալ տուրքի	
ր.	կ.	ր.	կ.		ր.	կ.	ր.	կ.
0	—	400	—	1· Զոհապահ	2	—	6	—
25	—	425	—	2· Հնոտիքսուկ, հնոտիքսյց, գիտուց, նշանառու	2	—	6	—
–	—	—	—	3· Գահնոտապահ	3	—	9	—
0	—	475	—	4· Դատակատնէս	5	—	15	—
75	—	500	—	5· Ձեռնֆեսպետ	15	—	40	—
–	—	—	—	6· Շտֆիֆեբ	35	—	70	—
0	—	525	—	7· Շտֆիֆերի օգնական	15	—	40	—
50	—	550	—	8· Հնոտպրտական բաժնի ատաղ	10	—	25	—
				9· Հնոտպրտական հսկիչ, հնոտպրտական կոմյատանի պահ	5	—	15	—
				10· Հնոտպրտղ	3	—	9	—
				11· Գուժակի ատաղ	3	—	9	—
				12· Ատաղ անբծեղ հնոտպրտղ	50	—	100	—
				13· Կրտսեր ,, ,,	35	—	70	—
				14· Ատաղ ժեքճնամբք	50	—	100	—
				15· Կրտսեր ,,	35	—	70	—
				16· Ելեքտրական հարտարապետ	50	—	100	—
				17· Հնձաւոյծ	15	—	40	—
				18· Հրատանկատրիչ	15	—	40	—

Զօրական մասի պետական պաշտօնեաների ռոճիկի, օրապահիկի, քնա-
կարանի, վառելիքի և լոյսի վճարի մասին։— 1) *Սպաներէն ոտճիկը տոյն թուի*
հոկտեմբերի 1-էն սահմանել ամսականի ներկայ օրէնքին կցուած տախտակի
համաձայն։

2) *Զօրապարտ և կամավարժու պաշտօնեաներէն ոտճիկը տոյն թ. հոկ-*
տեմբերի 1-էն սահմանել ամսական համաձայն քաղաքացիական մասի պաշ-
տօնեաներին վերաբերող՝ 1919թ. դեկտեմ. 17-ի օրէնքին կցուած տախտակի։

Զօրական բժիշկներէն բացի դրանէն տալ նաև առանձին ոտճիկ՝ տոյն
օրէնքին կցուած տախտակի բ. և գ. սիւնեակներուն համաձայն, սակայն այն-
պէս, որ առաջնակը ոտճիկը ընդհանուր գումարը համապատասխան դասի
պաշտօնի սպայի ոտճիկէն աւելի չլինի։

3) *Զօրական մասի պաշտօնեաներէն տրուում է դիւանագիտական բաժին։*
Զօրապարտ և կամավարժու պաշտօնեաներէն ոտճիկէն հանուում է երեսից տուա-
ծած դիւանագիտական բաժինի արժէքը։

4) *Քաղաքացիական մասի պաշտօնեաներին վերաբերող տոյն թուի*
դեկտեմբերի 17-ի օրէնքի, 2,4 և 5-րդ յօդուածները տարածել զօրական մասի
պաշտօնեաների վերա։

(Հաստատուած է 1919թ. դեկտ. 29-ին)

ՄՊԱՇԵՐԻ ՔՈՉԻԿԻ ՑՈՒՑԱԿԸ

(օրէնք 115)

Հին ՔՈՉԻԿ	ՆՈՐ ՔՈՉԻԿ			
	Ըստ պաշտօնի		Ըստ աստիճանի	
	Դասերը	Ռուբլի	Աստիճաննեբը	Ռուբլի
Ե.	Բ.	Գ.	Դ.	Ե.
100	1	230		
200	2	460		
300	3	690		
400	4	940		
500	5	1150		
600	6	1380		
700	7	1610		
800	8	1840		
900	9	2070		
1000	10	2300		
1100	11	2530		
1300			պրապօրշչիկ	3000
1350			պօդպօրուչիկ	3100
1450			պօրուչիկ	3200
1500			շտաբս-կապիտան	3300
1600			կապիտան	3400
1700			պօդպօլկօվնիկ	3600
1800			պօլկօվնիկ	3800
2000			գեներալ-մայօր	4000
2100			գեներալ-լեյտենանտ	4200

1919թ. դեկտեմբեր 30-ին, Պետ.

Գետական վերահսկողության ընդհանուր կանոնների մասին. —

Ի փոփոխումն, լրացումն ու վերացումն գործող օրենքների ահա՝

1) Գետական վերահսկողությունը Գարլամենտի օրգանն է։ Գետական վերահսկիչը պատասխանատու է միայն Գարլամենտի առաջ։

2) Գետական վերահսկիչը իր գործառնությունների և իրաւասութեան չբլնամում անկախ է և գործում է վերահսկողության կանոնագրքի համաձայն, օգտւելով միաժամանակ նախարարներին հատուկ իրաւունքներով, քանց չմոնելով գետավարութեան կազմի մէջ։

3) Գետական եւնմամբ և ընդհանուր միջոցների պահպանման հարցերում վերահսկիչը պարտական է հսկել հատվաբչական հիմնարկութիւնները բոլոր գործողութիւններն ու հաշիւները օրինականութեան և կանոնաւորութեան տեսակէտից։

4) Գետական վերահսկողութեան պահանջները, որ բղխում են նրա իրաւասութիւնից, պարտադիր են պետական բոլոր հիմնարկութիւնների ու պաշտօնեաների համար։

5) Գետական վերահսկողութիւնը՝ ա. իր եզրակացութիւնն է տալիս Գարլամենտի հաստատութեան ներկայացող բոլոր նախահաշիւների, պետական եւնմից հաշւեցոյցի, նախահաշւից դուրս պահանջող լրացուցիչ ու արտակարգ վարկերի և ընդհանրապես ամէն մի տեսակի դանձրանայքի վճարումների վերա. բ. քննում է կատարութեան գործողութիւնները պետական մուտքի գանձման ու ծախքերի կատարման օրինականութեան և Գարլամենտի որոշումներին համապատասխան լինելու տեսակէտից. գ. տալիս է իր եզրակացութիւնը կառավարչական իշխանութեան տնտեսական գործառնութիւնների և ձեռնարկութիւնների նպատակայարմարութեան և տնտեսականութեան մասին. դ. ստուգում է իրեն հաշւետու բոլոր հիմնարկութիւնների տրամադրութեան տակ եղած դրամական և ընդհանրապես նիւթական միջոցների, ինչպէս և կառուցմունքների ու այլ գործողութիւնների հաշիւները. ե. հսկում է վարկերի ստորաբաժանումների և փոխանցումների կանոնաւորութեան վերա գանձարաններում ըստ բիւրեղային ստորաբաժանումների. զ. միջոցներ է առաջարկում պետական հաշւապահութեան և հաշւետւութեան կանոններն ու ձևերը կատարելագործելու համար։

6) Յօդւած 5-ում յիշատակած գործառնութիւնների իրագործելու համար՝ Գետական վերահսկիչը մտնում է նախնական, յետագայ և փաստական քննութիւնների։

7) Կատարելագործելով ներկայացնելով Գարլամենտին ֆինանսա-տնտեսական բնոյթի կրող օրինագծեր ու առաջարկութիւններ՝ պատասխանը է միաժամանակ դրանց պատճէններբ բոլոր յաւելուածներով հանդերձ՝—ուղարկել միաժամանակ նաև Գետական Վերահսկողութեան։

Ծանօթ. Գարլամենտի և Գետական Վերահսկողության նախահաշիւների ու հաշիւների ընթացքում են անմիջապես Գարլամենտի յանձնաժողովի վերաքննութեան։

8) Գետական Վերահսկիչը՝ բացի նախնական վերաքննութեան կանոններով սահմանուած լիազօրութիւններից՝ միաժամանակ իրաւունք ունի ուղեկցել գանձապետական վճարումներ կատարել, ֆինանսա-տնտեսական բնոյթ կրող պայմանագրեր կնքել և համաձայնութիւններ կապել, եթէ նկատի բացայայտ ապօրինութիւն և վնասակարութիւն՝ պետական շահերի տեսակէտից։

Ծանօթ. Սոյն յօդւածում նախատեսուած դէպքերում՝ համապատասխան նախարարը վճռելի խնդիրը կարող է մտցնել նախարարների Ժողովրդը, որի որոշումը համարւելու է վերջնական։

9) Վերահսկողության միջոցին ստացած տեղեկությունների ու եզրակացությունների հիման վրա՝ Գնահատական Վերահսկիչը եռամսյա ընդմիջումներով և նախքան Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանի գումարումը կազմում է Զեկուցագիր՝ Հանրապետության նախագահին, Ազգային ժողովին և Կառավարությանը:

Զեկուցագրում ներկայացվում են՝ ա. տեղեկություններ ֆինանսական տարվա ընթացքում կատարված ծախսերի և նախքան դրանց բյուջետային տարեկան հատկացումների մասին և բ. տեղեկություններ Հանրապետության պետական պարտքի չափի ու կառուցվածքի և դրա յուրացման կամ նպատակային օգտագործման մասին:

Զեկուցագրի կազմը հաստատում է Ազգային ժողովը՝ Գնահատական Վերահսկիչի առաջարկությամբ:

Զեկուցագրին կցված են Գնահատական Վերահսկիչի եզրակացությունները՝ Կառավարության գործողությունների և պետական հաշվի վերաբերյալ:

Զեկուցագրի և դրան կցված եզրակացությունների հրապարակման կարգը սահմանում է Ազգային ժողովը:

10) Գնահատական Վերահսկողության անձնական կազմը բաղկացած է Գնահատական Վերահսկիչից, Վերահսկողության գործերի Կառավարիչից, Վերահսկիչների մասնագետներից, Դիտանցակներից, Ավագ Վերահսկիչից, Վերահսկիչներից ու նրանց օգնականներից, հաշվետարից, քարտուղարից և գրասենյակային պաշտոնյաներից:

11) Գնահատական Վերահսկողության ղեկավարությունը պատկանում է Գնահատական Վերահսկիչին, որը ընտրվում է Ազգային ժողովի կողմից և որը միաժամանակ իրավունք ունի մասնակցել Նախարարների Խորհրդի բոլոր նիստերին խորհրդակցական ձայնով, իսկ Գնահատականի նիստերին այն բոլոր հիմունքներով, ինչ և նախարարները:

12) Գնահատական Վերահսկիչն իրավունք ունի՝—դուրս չգալով չուտանելով նախատեսված պաշտոնեաների թվի և նախահաշվով սահմանած ռոճիկների ու այլ գումարների սահմաններից՝—հիմնել իր պաշտոնեաների ուժով կազմից՝ նախարարությունների և Գլխավոր Վարչությունների կից և կամ գոյություն վարչերում ներկայացուցչություններ, որոնք, համաձայն Գնահատական Վերահսկիչի հրահանգների ու ցուցմունքների, հսկողություն են ունենալու առանձին վարչությունների կամ թե չէ միևնույն վարչում գործող մի քանի վարչությունների վրա:

13) Գնահատական Վերահսկողության գործերի Կառավարիչը անմիջական գործակիցն ու օգնականն է Գնահատական Վերահսկիչի և փոխարինում է նրան՝ վերջինիս բացակայության դեպքում, օգտագործելով Վերահսկիչի բոլոր իրավունքները, առանց, սակայն, իրավունք ունենալու մասնակցելու Նախարարների Խորհրդին:

14) Վերահսկողության մասի Վարիչը հետևում է վաւերագրային ու փաստական վերաքննություններ գործավարության և հսկում է դրանց օրինական, կանոնաւոր, յաղող և արագ կատարման վրա:

15) Դիտանցակները առանում է Գնահատական Վերահսկողության վարչական ու տնտեսական գործավարությունը, հանդիսանալով միաժամանակ Վերահսկողության Քարտուղարը:

16) Ավագ Վերաքննիչները՝—Վերաքննիչների ու որոնց օգնականների, այլ և հաշվետու պաշտոնեաների օգնությամբ կատարում են վերաքննության ամբողջ գործը և կազմում իրենց վերաքննած հաշվետվությունների վերաբերմամբ զեկուցումներ ու տեղեկագրեր:

Զեկուցագրի կազմը հաստատում է Ազգային ժողովը՝ Գնահատական Վերահսկիչի առաջարկությամբ:

Զեկուցագրին կցված են Գնահատական Վերահսկիչի եզրակացությունները՝ Կառավարության գործողությունների և պետական հաշվի վերաբերմամբ:

Զեկուցագրի և դրան կցված եզրակացությունների հրապարակման կարգը որոշում են Գնահատական Վերահսկիչի յատուկ հրահանգներով:

17) Գնահատական Վերահսկողության պաշտոնեաներին՝ իրենց պաշտոնի կատարման վերաբերող յանցանքների համար կատարողությունը չի կարող ինքնուրույն կերպով պատասխանատվության ենթարկել. այդ պաշտոնեաները պատասխանատու են միայն Գնահատական Վերահսկիչի և Դատական իշխանության հանդեպ: Դատական իշխանության կողմից քրեական հետապնդման յարուցելիս՝ անմիջապես տեղեկացնելու է Գնահատական Վերահսկիչին:

18) Գետական Վերահսկողութեան կից կազմւում է յատուկ Խորհուրդ, որի կազմը և իրաւասութիւնը որոշւելու է առանձին օրէնքով:

19) Սոյն օրէնքի հաստատմամբ վերացւում են համապատասխան գործող օրէնքներն ու կանոնները:

(Հաստատւած է 1919թ. դեկտ. 30-ին)

Գրագիտական և գրավարժական դասընթացների և ժողովրդական համալսարանների մասին. — 1) Ժողովրդի կրթութեանը նպաստելու համար հիմնւում են՝ ա. անգրագէտ հասակաւորների համար՝ գրագիտական դասընթացներ, բ. քեռավարժ հասակաւորների համար՝ գրավարժական դասընթացներ և գ. գրագէտ հասակաւորների համար՝ ժողովրդական համալսարաններ:

2) Գրագիտական և գրավարժական դասընթացներին աւանդւում է հայոց լեզու, գրութիւն և թւաբանութիւն՝ չաթաթն առնւազն չորս օր, ըստ դասերը վեց ժամ և վեց ամիս տեւողութեամբ: Ժողովրդական համալսարաններում աւանդւում են՝ ա. հայոց պատմութիւն, բ. հայոց գրականութիւն, գ. աշխարհագրութիւն, դ. քնագիտութիւն, ե. հասարակական գիտութիւններ, զ. քաղաքացիական ուսմունք և է. առողջապահութիւն՝—վեց ամիս տեւողութեամբ և չաթաթան երկու ժամ ամէն մի առարկայից:

3) Դասաւանդւելիք առարկաների ծաւալն ու ծրագիրը սահմանում է Հանրային կրթութեան և Արւեստի Նախարարութիւնը:

4) Դասընթացներն ու ժողովրդական համալսարանները ձրի են:

5) Գետական միջոցներով դասընթացներ բանալ կարող են՝ — ա. չրջանային տեսուչները, բ. զպրոցական հոգաբարձութիւնները կամ կոմիտէները, գ. տեղական ինքնավարութիւնները, դ. արհեստակցական միութիւնները և ե. բանւորական խորհուրդները:

Ցանօթ. Հանրային կրթութեան և Արւեստի Նախարարութիւնը դրամական օժանդակութիւն է ցոյց տալիս մասնաւոր նախաձեռնութեամբ բացւած ժողովրդական համալսարաններին, երբ նրանց գործունէութիւնը օգտակար է դտնում:

6) Ծօղւած 5-ի ա. և բ. կէտերում յիշւած դէպքերում դասընթացների պահպանութեան վարկերը բացւում են չրջանային տեսուչների անունով, որոնց առնւի համաձայն են դասընթացների վարիչները թէ ըստ գործունէութեան և թէ ըստ դրամականի, իսկ վերջին դէպքում՝ վարկը փոխանցւում է ինքնավարութիւններին, որոնք և համաձայն են նախարարութեան առնւի:

8) Դասընթացներին կարող են յաճախել ամէն ոք առանց կրօնի, ազգի և տեռի խտրութեան:

9) Դասընթացների և համալսարանների վարիչներին նշանակւում են չրջանային տեսուչները կամ ինքնավարութիւնները:

10) Միեւնոյն անձը կարող է միաժամանակ նոյն վայրի գրագիտական և գրավարժական դասընթացների և համալսարանի վարիչ լինել եւ առանձին երեք վարիչներին յատկացւած վարձատրութիւնը:

(Հաստատւած է 1920թ. յունւ. 5-ին)

Կանոնագիր Հայաստանի Կարմիր Խաչի Ընկերութեան. — 1) Կարմիր Խաչի Ընկերութիւնը գոնւում է Հայաստանի Կառավարութեան անմիջական հովանաւորութեան տակ:

2) Կարմիր Խաչի Ընկերությունն Հպատակն է՝ — ա) պատերազմի ժամանակ խնամել հարկերի հիանդ ու վիրաւոր զինուրականներին, ինչպէս և դաշնակից ու քաչամի զօրքերի բոլոր հիանդներին ու վիրաւորներին, որոնք կը գտնուն ընկերութեան գործունէութեան չրջանում; բ) Խաղաղ ժամանակ ընկերութիւնը իր հիմնարկութիւնների միջոցով ամէն տեսակ օգնութիւն է ցոյց տալիս հաշմանդամ զինուրականներին, օգնում է ընդհանուր ազէտներից վնասուածներին և օտար պետութիւնների իրաւ դէմ մղած պատերազմի ժամանակ օգնութեան է գալիս նրանց բանակներին:

3) Այդ նպատակներին հասնելու համար Ընկերութիւնը մչակում ու հաստատում է կանոններ ու հրահանգներ, բաց է անում հիւանդանոցներ, հանրակացարաններ զինուրեան քոյրերի համար, բժիչկ—առողջապահական դասընթացներ, մրերանոցներ և այլ հաստատութիւններ:

4) Ընկերութեան միջոցներն են կառավարութեան օժանդակութիւնը, տարեկան անդամավճարները, միանուագ նպատակները գրամով ու նիւթերով և ամէն տեսակ հանգանակութիւններ:

5) Ընկերութիւնը իրաւունք ունի ձեռք բերելու և վաճառելու ամէն կարգի չարժական ու անչարժ կալք:

Տաճօր. Անչարժ կալք ձեռք բերելու և վաճառելու իրաւունք ունեն Ընկերութեան բոլոր հիւղերի վարչութիւնները, միայն դրանց վարչութեան համաձայնութեամբ և Հայաստանի կարմիր Խաչի Ընկերութեան անունով:

6) Ընկերութեան և նրա բոլոր հաստատութիւնները ազատ են ամէն տեսակի պետական, քաղաքային և տեղական մաքսերից, հարկերից, տուրքերից այլ և պետային ու հեռագրական վճարումներից:

7) Ընկերութեան խորհրդանչանն է հաւասարաթեւայր կարմիր խաչ՝ ոսկեայ վրա, որը հաստատած է Ժընեվի կոնվենցիայում: Այդ խորհրդանչանը գործածելու իրաւունքը Հայաստանում պատկանում է միայն կարմիր Խաչի Ընկերութեան, որի գլխաւոր վարչութիւնը, սակայն, կարող է արտօնել կողմնակի անհատներին ու հիմնարկութիւններին օգտուելու. նրանից կարմիր Խաչի նպատակներին ծառայող ձեռնարկութիւնների մէջ: Այդ խորհրդանչանն է կրում Ընկերութեան կնիքն ու դրօշը, պահեստների, տրանսպորտների, հիւանդանոցների դրօչակները, ինչպէս և Ընկերութեան անդամների ու պաշտօնեաների ծաս թևակապը:

8) Ընկերութեան գործերի ընդհանուր ղեկավարն է գլխաւոր վարչութիւնը, որ գտնուում է Հայաստանի մայրաքաղաքում:

Տեղական գործերը վարում են տեղական վարչութիւնները: Գլխաւոր և տեղական վարչութիւնների բոլոր անդամները իրենց պարտականութիւնները կատարում են ձրի:

9) Գլխաւոր վարչութիւնը բաղկացած է ոչ պակաս քան 11 անդամից և 5 փոխանդամից: Վարչութիւնը իր միջից ընտրում է նախագահ եւ երկու օգնական:

Գլխաւոր վարչութիւնն է, որ ա) կնքում է պայմանագրեր, բ) պահպանէ է հանդիսանում և պաշտպանում ընկերութեան չահերը, գ) անում է անհրաժեչտ դիմումներ պետական, ինքնավարական և հասարակական հիմնարկութիւններին, դ) հաստատում է զինուրեան քոյրերի, սանիտարների, ապատարարների, հիւանդանոցների, որբանոցների և այլ նման հաստատութիւնների կանոնադրութիւնը, ե) հիմնում է ճիւղեր և հաստատում է վարչութիւնները և զ) գործադրում է ընդհանուր ժողովների որոշումները:

10) Գլխաւոր վարչութիւնն ունի իր կնիքը, իսկ տեղական վարչութիւնների ուսուցիչները՝ իրենց կնիքի օրինակները, որ հաստատեն նրանց:

11) Երբ տեղական ճիւղը դադարեցնում է իր գործունէութիւնը, իր բոլոր գործերը, չարժական և անշարժ կալքը անցնում է գլխաւոր վարչութեան: Այդ բոլորը կրկին յետ է տրւում նոյն ճիւղին, երբ վերջինս իր դադարման օրից երկու տարւայ ընթացքում վերակոչում է իր գործունէութիւնը: Հակառակ դէպքում նրա բոլոր կալքն ու դրամագլուխը մնում է գլխաւոր վարչութեան:

12) Գլխաւոր և տեղական վարչութիւնների գումարները բաժանւում են 4 կարգի. — ա) Ծախսերի գումար՝ Ընկերութեան ընթացիկ ծախսերի համար, բ) պահեստի դրամագլուխ, պատերազմի պէտքերի համար, գ) հաշմանդամ զինուորականներին նպաստի դրամագլուխ, դ) յատուկ նպատակների համար հաւաքւած կամ նւիրաբերած գումարներ: Վերջին կարգի գումարների չարքին են պատկանում դիւթութեան քոյրերի կենսաթոշակի համար յատկացւած գումարները:

Ծանօթ. Յատուկ նպատակների համար նւիրաբերած գումարները գործադրւում են նւիրողի կամքի համաձայն:

13) Գլխաւոր և տեղական վարչութիւնների գումարները պահւում են պետական գանձարանում, կամ նրա մի որևէ բաժանմունքում՝ ցպահանջ կամ ընթացիկ հաշւով:

Ընկերութեան և իր հիմնարկութիւններին պատկանող բոլոր դրամագլուխները հնարաւորութեան առաջին դէպքում, վերածւում են պետական տոկոսաթուղթերի և պահւում պետական բանկում կամ նրա բաժանմունքներից մէկում: Երբ մօտակայ տեղերում այդ բաժանմունքը չկայ, կամ որևէ դժւարութիւն կայ յիշեալ դրամագլուխները նրան յանձնելու, դրանք թւում են գլխաւոր վարչութեան, որ և այդ գումարները պետական արժէքուղթերի է վերածում և պահ տալիս պետական բանկին:

14) Տեղական վարչութիւնները բոլոր տեսակի դրամական եկամուտների 25%-ը, բացառութեամբ յատուկ նպատակի համար եղած նւէրների, ուղարկում են գլխաւոր վարչութեան, Ընկերութեան ընդհանուր ծախսերի համար, մնացած 75%-ից հանւում է վարչութեան տարեկան ծախսերը, իսկ մնացած գումարը, որի մէջ մտնում է նաև նախկաչւի մնացորդը, բաժանւում է չորս հաւասար մասերի, երկու մասը յատկացւում է պահեստի դրամագլխին պատերազմի պէտքերի համար, մի մասը՝ հաշմանդամ զինւորականների նպաստի դրամագլխին և մի մասը՝ ընդհանուր ազէտներից վնասւածների օգտին:

15) Ընդհանուր ժողովի դրադրմունքներն են.

ա) Հաստատել ընկերութեան, գլխաւոր վարչութեան և տեղական վարչութիւնների համար կանոնադրութիւն:

բ) Քննել գլխաւոր վարչութեան ընդհանուր հաշւետւութիւնը Ընկերութեան գործունէութեան և միջոցների մասին:

գ) Ստուգել գլխաւոր վարչութեան ելքի ու մուտքի գումարները և նրա հսկողութեան տակ գտնւած դրամագլուխները.

գ) Քննել և լուծումն առել այն խնդիրների, որ առաջարկում են գլխաւոր և տեղական վարչութիւնները.

դ) Ընտրել գլխաւոր վարչութիւն.

ե) Հաստատել անշարժ կայքեր գնելու կամ վաճառելու որոշումները.

է) Վաւերացնել գլխաւոր վարչութեան և Ընկերութեան բոլոր հիմնարկութիւնների նախահաշիւը:

16) Գաւառապետի վարչում գլխաւոր վարչութիւնը ունի.

ա) Ամէն մէկ գործող բանակում գլխաւոր լիազօր, և

բ) Շրջանային լիազօրներ, համապատասխան ռազմաճակատի զինուորական շրջանների թիւին:

Լիազօրները ընտրւում են գլխաւոր վարչութիւնից: Ոչ ռազմաճակատում գլխաւոր վարչութեան ծրագիրները իրականացնում են կամ տեղական հիմնարկութիւնները, կամ գլխաւոր վարչութեան ընտրած լիազօրների միջոցով:

17) Գլխաւոր լիազօրների տրամադրութեան տակ են դրւում գլխաւոր վարչութեան կողմից ուղարկուած սանիտարական խմբերը, դումարները և նիւթերը: Ոչ միայն կարմիր Խաչի խմբերը, այլ նաև միւս բոլոր սանիտարական խմբերը, ում կողմից էլ որ կազմած լինեն նրանք, հայրից՝ թէ սառարգելիներից, առանց բացառութեան ենթարկւում են գլխաւոր լիազօրին:

(Հաստատուած է 1920թ· մարտ 19-ին)

1920թ· բամբակի բերքը մենաշնորհից ազատելու մասին· — Բամբակի մենաշնորհը 1918թ· սեպտեմբերի 11-ի և դեկտեմբերի 3-ի ու 1919թ· նոյեմբերի 25-ի օրէնքների ոյժը չի տարածւում 1920թ· բամբակի բերքի վրայ:

(Հաստատուած է 1920թ· մարտ 22-ին)

Կանոնադրութիւն Հայաստանի Գետական Հանրապետի Գրադարանի· — 1) Հայաստանի Գետական Հանրապետի Գրադարանը հիմնւում է պետութեան մէջ գիտական գործունէութեան զարգացման և յատկապէս Հայաստանի ու Առաջաւոր Ասիայի հին ու նոր ժողովուրդների բարձրագոյնի ուսումնասիրութեանը նպաստելու համար:

2) Գրադարանը պահպանւում է պետութեան միջոցներով և մասնաւոր նուիրատուութիւններով: Բացի այն հրատարակութիւններից, որոնք ձեռք են բերում գրամով և հանւում են իրրեւ նէր, Գետական գրադարանն ստանում է երեք-երեք օրինակ այն բոլոր հրատարակութիւնների, որոնք լոյս են տեսնում Հայաստան աշխարհում:

Յանօթութիւն· —Այս հրատարակութիւնները գրադարանին հասցնելու պարտականութիւնն ընկնում է տպարանների վրայ:

3) Գետական Հանրապետի գրադարանը գտնւում է Հայաստանի Հանրապետի Կրթութեան և Արուեստի նախարարութեան իրաւասութեան տակ:

4) Գրադարանի գործունէութիւնը ղեկավարում է գրադարանի խորհուրդը, որի կազմի մէջ մտնում են միմեանց ներկայացուցիչ պետական համալսարանի իրաւաբանական ֆակուլտէտից, Գետական Ազգագրական-մարդաբանական Թանգարանի ներկայացուցիչը, գրադարանապետը և նրա աւագ օգնականը:

Յանօթութիւն·— Մինչեւ համալսարանի և Թանգարանի հիմնումը, քանի գրադարանապետից և նրա աւագ օգնականից, գրադարանի խորհրդին մասնակցում են Հանրային Կրթութեան նախարարութեան կողմից նշանակուած մինչեւ հինգ անձ,

5) Գրադարանապետը հաստատում է նախարաբներէ խորհրդից Հանրային կրթութեան և Արուեստի նախարարի առաջարկած թեկնածուներէ այն ցանկից, որ կազմում է գրադարանի խորհուրդը։

6) Գրադարանապետի աւագ օգնականին և օգնականներին ու քարտուղարին նշանակում է Հանրային կրթութեան նախարարը գրադարանապետի ներկայացրած թեկնածուներից։

Ծանօթութիւն.— Գրադարանապետի աւագ օգնական, օգնականների և քարտուղարի պաշտօն ստանձնել կարող են բարձրագոյն կրթութեան տէր կամ համապատասխան գիտական պատրաստութիւն ունեցող անձինք։

7) Գրադարանապետը, իր օգնականներն ու քարտուղարը միասին կազմում են գրադարանի վարչութիւնը, որը մշակում և լուծում է գրադարանի վարչական տնտեսական ընթացիկ հարցերը։

8) Խորհրդի և վարչութեան նախագահն է գրադարանապետը, իսկ նրա բացակայութեան դէպքում աւագ օգնականը։

9) Գրադարանից ոչ մի գիրք դուրս չի տրւում. գրքերից կարելի է օգտուել միայն գրադարանում։ Ձեռագրերից և հազուագիւտ գրքերից գրադարանում օգտուելու համար անհրաժեշտ է ստանալ յատուկ թոյլտուութիւն գրադարանապետից։

10) Գիտական Հանրային գրադարանի համար արտասահմանից նեղմուծուող գրքերը ազատ են մաքսից։

11) Գիտական Հանրային գրադարանը իրաւունք ունի պոստով յղելու առանց որև է վճարի բաց նամակներ, փակ նամակներ մինչև մէկ ֆունտ, փաթեթներ մինչեւ չորս ֆունտ և անձնահատ ծանրոցներ մինչև մէկ փութ։

12) Գիտական Հանրային գրադարանն ունի իր կնիքը այս վերտառութեամբ. «Հայաստանի Հանրային Գրադարան»։

13) Նախորդ տարւայ հաշւետուութիւնը և յաջորդ տարւայ նախահաշիւը կազմում է գրադարանի վարչութիւնը և Խորհրդի հաստատելուց յետոյ մատուցանում է Հանրային կրթութեան և Արուեստի նախարարին։

14) Գիտական Հանրային գրադարանը հրատարակում է տեղեկագրեր, ցրացուցակներ, և մատենագրութեան ու գրադարանագիտութեան հետ կապ ունեցող այլ աշխատութիւններ։

(Հաստատուած է 1920թ. մարտ 24–ին)

Հայաստանի Հեռագրական Գործակալութեան մասին։ — Ծոդ. 1) Հայաստանի Հեռագրական Գործակալութեան նպատակն է՝ հաղորդել Հայաստանի ներսը և արտաքսահման քաղաքական, տնտեսական, ֆինանսական եւ հասարակական հետաքրքրութիւն ներկայացնող տեղեկութիւններ։

Ծոդ. 2) Հայաստանի Հեռագրական Գործակալութիւնը գտնւում է Հայաստանի Կառավարութեան կից, գործում է Նախարարների Խորհրդի անմիջական հսկողութեան տակ և առաջնորդւում է նրա հրահանգներով։

Ծոդ. 3) Հայաստանի Հեռագրական Գործակալութեան վարչութիւնը գտնւում է Հայաստանի մայրաքաղաքում։

Ծոդ. 4) Հայաստանի Հեռագրական Գործակալութիւնը կարող է մայրաքաղաքից և երկրից դուրս ունենալ բաժանմունքներ կամ գործակալներ, որոնք հաստատւում են գործակալութեան վարչի կարողութեամբ։ Գործակալութիւնը կարող է անմիջապես համաձայնութեան մէջ մտնել ուրիշ հեռագրական գործակալութիւնների հետ՝ նրանցից տեղեկութիւններ ստանալու նպատակով։

Ծոդ. 5) Հայաստանի Հեռագրական Գործակալութեան գործերի ղեկավարութիւնը, ինչպէս նաև պաշտօնեաներ հրաւիրելն ու արձակելը, ասյատակիցներին վարձատրութիւն նշանակելը վերապահւում է գործակալութեան վարչին։

Ծոդ. 6) Գործակալութիւնն իրաւունք ունի պետական հեռագրով ամէն օր տալ մէկ մինչև 600 բառով հեռագիր մի հայաստանի սահմաններում և մի արտասահման։ Կարգադրիչ նստաշրջանում բառերի այդ քանակը կարող է կրկնապատկուել, եթէ գործակալութիւնը հաղորդում է կարգադրիչ նիստի հաշւետուութիւնը։

Ծոդ.7) Ծոդ.6-ում յիշած բառերի քանակից (600 բառ) աւելիի համար գործակալութիւնը վճարում է զեղչութիւն ունեցող հեռագրավճարի 50%։

Ծոդ. 8) Գործակալութեան թղթակիցների Հայաստանի գանազան մասերից գործակալութեան անունով ուղարկած հեռագիրները հեռագրատունը հաղորդում է մէկ։ Նոյնպէս մէկ են հաղորդում և գործակալութեան հեռագիրները իր բաժանմունքին և գործակալների անունով։ Նմանապէս եւ գործակալութեան փոստային առաքումները կատարւում են մէկ, համահասաւոր կառավարական առաքումներին։

Ծոդ. 9) Գործակալութիւնն իրաւունք ունի օրական երեք անգամ մէկ խօսել (ամէն անգամ 5 րոպէ) մի պետական և մի քաղաքային հեռախօսով։ Նշանակած ժամանակից աւելի խօսելու վճարում է արժէքի կէսը։

Ծոդ. 10) Գործակալութիւնն իր ստացած հեռագիրները մէկաբար ուղարկում է այն հիմնարկութիւններին և անձերին, որոնց ցուցակը ներկայացնում է Կարգադրիչ Նախագահութիւնը և Նախարարների Խորհուրդը։

Ծոդ. 11) Սկզբնւում է գործակալութեան հեռագրերի աքսաստատումը գործակալութեան բուլետենների լոյս տեսնելուց յետոյ, 48 ժամուայ ընթացքում։


Ծոդ.12) Սոյն օրէնքով վերացած է համաբերում Հայաստանի Խորհրդի կողմից 1918թ. դեկտ. 18-ին ընդունած օրէնքը «Հայաստանի Հանրապետութեան հեռագրական գործակալութիւն հիմնելու մասին»։


Ծոդ. 13) Սոյն օրէնքը իր ոյժի մէջ է մտնում Կարգադրիչ Նախագահութեան կողմից հրատարակման օրից։

(Հաստատած է 1920թ. ապր. 9-ին)

500 միլիոն րուբլու չէկեր կամ այլ դրամանիշներ բաց թողնելու մասին։ — 1) Յայտարարել Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան թոյլ թողնել Պետական բանկի նրբանեան բաժանմունքի աշխատութեամբ կամ այլ համապատասխան հինգ հարիւր միլիոն րուբլու չէկեր կամ այլ դրամանիշներ ստանձնելու, ըստ կարիքի։

2) Յանձնել Ֆինանսների Նախարարին վեց միլիոն րուբլու վարկ հինգ հարիւր միլիոն րուբլու չէկեր կամ այլ դրամանիշներ տպագրելու նախատեսը հաստատ. համար։









ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ Էջ

Գլուխ Ա. — Պատերազմը և հայ ժողովուրդը 3
Գլուխ Բ. — Օզախովի օրերը 15
Գլուխ Գ. — Արևմտահայոց գործերը 22
Գլուխ Դ. — Ռուսահայոց գործերը 29
Գլուխ Ե. — Պատերազմի և խաղաղության հարցը և ռազմանակատը խորհրդային յեղաշրջումից յետոյ 36
Գլուխ Զ. — Զինադադար և «Մուդրոսի» աշխատանքը կովկասում 46
Գլուխ Է. — Անդրկովկասեան Սեյմը և նորին անհամաձայնութիւնները 54
Գլուխ Ը. — Տրապիզոնի խորհրդաժողովը 60
Գլուխ Թ. — Հայ-թիւրքական պատերազմը 67
Գլուխ Ժ. — Տրապիզոնի բանակցութիւնների խզումը. Անդրկովկասը անկախ 77
Գլուխ ԺԱ. — Կարսից — Ղարաֆիլիսա 88
Գլուխ ԺԲ. — Դէպիերը Արարատեան դաշտում 100
Գլուխ ԺԳ. — Սարդարապատ — Բաշ-Ապարան 117
Գլուխ ԺԴ. — Անդրկովկասի հայհոյումը. — Անկախութիւններ . . . 124
Գլուխ ԺԵ. — Բագուի հերոսամարտը 135

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԳԼՈՒԽՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Գլուխ Ա. — Առաջին հայլեր 155
Գլուխ Բ. — «Ազգ և հասկ» միջից 168
Գլուխ Գ. — Հայ-վրացական սահմանավէճը 181
Գլուխ Դ. — Պատերազմ և հաշտութիւն 195
Գլուխ Ե. — Սահմանների ընդարձակումը 214
Գլուխ Զ. — Արևմտահայ երկրորդ համագումարը 228
Գլուխ Է. — Ազգային համագումար. կօալիցիայի խզումը 239

Գլուխ Ը. — Մահմեդական շարժումները. գնդապետ Հասկելը Հայաստանում 264
Գլուխ Թ. — Ղարաբաղի հարցը 280
Գլուխ Ժ. — Զանգեզուր — Դաղքաղ 295
Գլուխ ԺԱ. — Արտահին և ներքին վիճակը 311
Գլուխ ԺԲ. — 1920 թւի սկիզբը 327
Գլուխ ԺԳ. — Մայիսեան շարժումները 348
Գլուխ ԺԴ. — 1920 թւի ամառը 372
Գլուխ ԺԵ. — Հայ-բոլշևիկեան յարաբերութիւնները 399
Գլուխ ԺԶ. — Պատերազմ և խորհրդայնացում 413

ԵՐԲՈՐԴ ՄԱՍ.

ՆԻՒԹԵՐ

Հայաստանի խորհրդարան. Կարևոր նիստերի արձանագրութիւնները 448
Հայաստանի խորհրդի հաստատած օրէնքները 1918–1919 518
Հայաստանի խորհրդարանի հաստատած օրէնքները . . 529



Imp. de Navarre, 5, rue des Gobelins. Paris XIII.